

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ  
ՀՈԴՎԱԾՆԵՐ



Ա. ԷԶՄԻԱԾԻՆ - 2007

ՀՐԱՄԱՆԱՖ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է մեկենասությամբ՝

.....

ՀՏԴ 891.981.0

ԳՄԴ 83.3Ն

Ն 177

Հրատարակության պատրաստեց ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Խմբագիր՝ ՍԱԹԵՆԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

**ՀԱԿՈԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ**  
Ն 177 Ուսումնասիրություններ և հոդվածներ - Եջմիածին: Մայր Աթոռ Սուրբ  
Եջմիածին, 2007. 560 էջ:

Հատորն ընդգրկում է անվանի գրականագետ, մանկավարժ, բա-  
նասիրական գիտությունների դոկտոր Գրիգոր Հակոբյանի (1958-  
2005) ուսումնասիրություններն ու հոդվածները, որոնք նվիրված են  
հայ նոր և նորագույն գրականության պատմության և տեսության խն-  
դիրներին:

ԳՄԴ 83.3Ն

ISBN 978-99930-75-65-3

© Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին, 2007 թ.

## ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրիգոր Հակոբյանի (1958-2005) գիտական ժառանգության մի մասն ամփոփող այս ժողովածուն առաջին հերթին տուրք է այն մարդու և գիտնականի հիշատակին, որը, գուցեն մեր ժամանակների համար փոքր-ինչ տարօրինակ և արտասովոր եռամնով, իր ողջ կյանքը և ժամանակը նվիրեց հայ գրականության ուսումնասիրմանը: Եվ իրոք, դժվար է անկումային ժամանակներում լավատես լինել, և միշտ էլ հատուկենու են բնության պարզեցած այն անհատականությունները, որոնք խավարի մեջ վառ են պահում հուսուն ջամբ: Գրիգոր Հակոբյանն իրապես դրանցից մեկն էր: Ուսումնասիրելով նրա թողոնները՝ մենագրություններ, գիտական հոդվածներ, փորձագրություններ և գրախոսություններ, ելույթներ և հրապարակումներ, համոզվում ես, որ գիտնականի կյանքն անմնացորդ գործունեություն է եղել, անվերջ փնտրությունների և հայտնագործությունների, մշտապես նոր հանգրվաններ նվաճելու ուղի: Տեսական բարձր պատրաստվածությունը, հայ և համաշխարհային գրականության և գրականագիտական մտքի նորագույն արդյունքներին բաշածանոթ լինելը իրենց հստակ հետքն են թողել գիտնականի գրեթե բոլոր երկերում:

Հակոբյանի գրականագիտության բնորոշ առանձնահատկություններից մեկը հայ նոր գրականության բազում անձանոթ կամ նվազ հայտնի անունների և իրողությունների վերհանումներն են, որոնք ոչ թե սպիտակ էջերը լցնելու միտում ունեն, այլ բխում են գիտնականի՝ գրականության պատմություն եզրի նորովի ընկալումից և մեկնաբանությունից: Գրականության պատմությունը, ըստ Հակոբյանի, ոչ թե գոռողների և նրանց երկերի հիարահաջորդ թվարկումներով է ձևավորվում, այլ տվյալ շրջափուլում մշակութաբանական ընդհանուր միտումների եւ դրանց գրականացման ձևերի բացահայտմամբ: Սա է պատճառը, որ Գր. Հակոբյանի գրեթե բոլոր ուսումնասիրություններում գերիշխող է տեսական դատումների շերտը: Գիտնականն իր ուսումնասիրման առարկան է դարձնում գրական արտադրանքի ժանրապին-կառուցվածքային ձևերը՝ դրանց ծագումնաբանությունը, զարգացումն ու անկումը դարձնելով գրականության պատմության հենքը: Նման մոտեցման դեպքում ինքնին արժևորվում են թե՛ հանրահայտ, թե՛ ստվերում մնացած, թե՛ երկրորդական հեղինակների երկերը, քանի որ գրական վարպետության խնդիրը մտահոգում է բոլորին, իսկ ժամրագիտության և ժամրի պատմության մեջ ընդհանուր միտումների բացահայտումը հնարավորություն է ստեղծում առավելագույն ճշգրտությամբ սահմանել յուրաքանչյուր ստեղծագործության մշակութաբանական արժեքը: Սա իրապես նոր հայացք և մոտեցում էր, որ Գրիգոր Հակոբյանի բազում երկերում իր լիարժեք արտահայտությունն է գտել: Հիշենք, թեկուզ «Արևնատահայ նորավեպը. 1890-1910-ական թվականներ. Ժամրի պատմություն և տեսություն», «Թերթոն վեպի տեսություննը. Երվանդ Օտյան» մենագրությունները, «Վեպի ժամրի օշականյան մետատեսությունը» եւ այլ բազմաթիվ հայ դասական և արդի արձակին նվիրված գիտնականի հոդվածներն ու ուսումնասիրությունները:

Հատկապես մեծ է Գրիգոր Հակոբյանի վաստակը հայ դասական նորավեպի ուսումնասիրման խնդրում: Կենտրոնում ունենալով Գրիգոր Զոհրապի ստեղծագործությունը՝ գիտնականը նորավիպագրության մի ողջ դպրոց հայտնագործեց՝ բազմաթիվ նոր աճուններով և երկերով, որոնք սփոված էին 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ բազմաբղետ մասովի էջերում: Արձակի կարճ ձևերի բուռն զարգացումը 19-րդ դարավերջին վերջնականապես թոթափեց հայ գրականությունը ոչ գրական շերտերից (հրապարակախոսական, մանկավարժական, բարոյախոսական և այլն), գրական նոր դպրոցների (նատուրալիզմ, սիմվոլիզմ) սկզբունքային կարգախոսները իրացվում էին նոր սերնդի հայ գրողների կողմից, ուր արձակի կենտրոնական դեմքը Գրիգոր Զոհրապն էր: Ի դեա, Գրիգոր Զոհրապի ստեղծագործությանը էր նվիրված Գրիգոր Հակոբյանի թեկնածուական ատենախոսությունը («Գրիգոր Զոհրապի նորավեպերի պոետիկան»): Հակոբյանը, բացի «Արևմտահայ նորավեպը» հիմնարար աշխատությունից, բազմաթիվ հոդվածներ է նվիրել այդ սերնդի առանձին գրողների ստեղծագործությունների հատկապես այդ շերտի ուսումնասիրմանը («Քսաներորդ դարասկզբի հայ նորավեպի պատմությունից», «Գեղարվեստական փոքր արձակը «Արևելյան մամուլ»-ում (1880-1909)», «Նովելային ձևերի սկզբնավորումը Գրիգոր Զոհրապի պոետիկայում», «Աղետի և դիմակայության անդրադարձները արևմտահայ նորավիպագրության մեջ», «Ժամանակական դրսությունը արևմտահայ գեղարվեստական համակարգում», «Արշակ Չոպանյանը 1880-1890-ական թվականների արևմտահայ արձակի համակարգում», «Սուրբ ծնունդի և Կաղանդի անդրադարձները արևմտահայ նորավեպի գեղարվեստական համակարգում», «Վահան Թերելյանի նորավեպերը» և այլն):

Մեծարժեք են Հակոբյանի ուսումնասիրությունները, այսպես կոչված, «երկրորդային» գրականության՝ հուշագրությունների, առանձին գրողների նամակահաների ուսումնասիրման գործում: Պարենական մամուլում բազում հրապարակումներ և ուսումնասիրություններ ունի գիտնականը այս ուղղությամբ (տե՛ս Մատենագիտական ցանկը): Բացի ճանաչողական արժեքից, մեկնաբանության այս եղանակը (քնագիր-մեկնություն), ըստ Հակոբյանի, գրականգիտությունը դուրս է բերում ենթակայական դեգրումներից և առավելագույնս ապահովում է առարկայական դասումների շրջանը՝ դառնալով առավել արդյունավետ և ուսանելի: Հակոբյանի ուսումնասիրությունների բնորոշ ձևերից է սա, երբ բնագրի հրապարակումը ուղեկցվում է ծավալուն առաջարանով և գիտական ապարատով: Այս գործերի շաբթօն հատկապես կարևորվում են Զապել և Հրանտ Ասսատուրների նամակագրությանը, ինչպես նաև Երվանդ Օտյանի նորագոյուս հուշագրության («Անիծյալ տարիներ», 1914-1918. անձնական հիշատակներ) հայտնաբերումն ու հրապարակումը առանձին գրքերով: Այս առումով գիտնականը նոր շրջանի ականավոր գիտության ամենավառ ներկայացուցիչներից էր:

Գր. Հակոբյանի ժառանգության մեջ նշանակալի տեղ ունի սփյուռքահայ գրականության ուսումնասիրությունն ու ներկայացումը հայրենի ընթերցողին: Գիտնականը մեծ ու փոքր տասնյակ հոդվածներում և ակնարկներում անդրադարձել է սփյուռքահայ գրեթե բոլոր ականավոր գրողների ստեղծագործությանը (Ծահան Ծահնուր, Նիկողոս Սարաֆյան, Նշան Պեշիկթաշլյան, Հակոբ Օշական, Համատեղ, Հակոբ Կարապետ, Գրիգոր Պղլտյան եւ այլն): Հակոբ Օշականի ստեղծագործությանը նվիրված Հակոբյանի ուսումնասիրություններն, ըստ Էության,

սիյուռքահայ ականավոր գրողի և գրադատի, մանկավարժի և մտածողի գործունեության առաջին արժնորումներն են հայրենի գրաբանական դաշտում: Եվ սա պատահական չէ. գիտնականի բոլոր այդ հրապարակումներում ընդգծված է հայ գրականության ընդհանուր համապատկերի ստեղծման օշականյան փորձի վերակենդանացման կարևորությունը՝ հայրենիք-սիյուռք մշակութային միասնությունը վերականգնելու ճանապարհին:

Հակոբյանի ժառանգության մեջ նշանակալի տեղ ունեն արդի հայ գրականությանը, ժամանակակից գրական ընթացին նվիրված անդրադառները, որոնց գերաշին մասը գրված է 1991-1992 թթ., երբ գիտնականը վարում էր «Նորք» գրական հանդեսի գրաբնադատության բաժինը: Այս գրախոսությունները ոչ թե սուկական գրություններ են՝ արդի գրական ընթացքին հավուր պատշաճի արձագանքելու հիմար, այլ փոքրածավալ գիտական ուսումնասիրություններ, ուր արժեորվում է լուրաքանչյուր գոքի գրապատմական արժեք հայ գրականության ընդհանուր ենթաբնագրում: Այս հրապարակումների շարքում նշանակալի ծավալ ունեն սիյուռքի ժամանակակից գրականությանը նվիրված գրախոսությունները, որոնք տպագրվել են թե՛ հայրենի, թե սիյուռքի պարբերականներում:

Բացի գրականագիտական ուսումնասիրություններից Գր. Հակոբյանի ժառանգության մեջ նշանակալի տեղ ունեն նրա կազմած ուսումնական գիտաօժանդակ ձեռնարկներն ու անթոլոգիաները, որոնք, ցավոք, ցայծմ անտիպ են: Դրանց թվում խիստ արժեքավոր են «Արևմտահայ նորավեպի անթոլոգիան» և «Արևմտահայ և սիյուռքահայ գրականության անթոլոգիան», որոնք կազմված են հմուտ մանկավարժի և գիտնականի բանհմացությամբ և որոնց կարիքը խիստ զգալի է բուհական ուսուցման համակարգում: Հայ գրականություն դասավանդելով Գևորգյան հոգևոր ճեմարանում, Սևանի հոգևոր դպրանոցում և Վ. Բյուտովի անվան օտար լեզուների համալսարանում՝ գիտնականը քաջ գիտակցում էր արևմտահայ և հատկապես սիյուռքահայ գրականության մասին գիտելիքների պակասը լրացնելու անհրաժեշտությունը: Հակոբյանի՝ որպես մանկավարժի և դասախոսի հիշշատակը մշտապես վառ է թե՛ նրա ճեմարանական սաների և գործընկերների, թե՛ համալսարանական ուսանողության շրջանում:

Բացում ծրագրեր ուներ գիտնականը, բազում երազանքներ, որոնց առանցքը միայն և միայն հայ մշակույթն էր և արվեստը: Կյանքի վերջին շրջանում Հակոբյանը կազմում էր սիյուռքահայ գրականության դասավանդման գիտամեթոդական ուղեցուց և անթոլոգիա, որն անվարտ մնաց: Հեղինակը հասցրել է ամբողջացնել Կարպիս Շանճիկյանին, Զահրատին, Հակոբ Մնձուրուն, Շավարշ Նարդունուն, Մուշեղ Իշխանին, Անդրանիկ Ծառուկյանին, Վահե Օշականին, Իշխան Շինապաշտին նվիրված գլուխները՝ համապատասխան նախաբաններով և բնագրերով: Ընթացքի մեջ էր «Ժամանակ» օրաթերթի հիմնադիր, հրատարակիչ, առաջին խմբագիր, հրապարակախոս, նորավիպագիր, վիպասան, թատերգակ, թարգմանիչ, քրոնիկագիր, ազգային-հանրային գործիչ Քասիմի (Միսաք Գոչունյան) (1863-1913) նորավեպերի եւ պատկերների ընտրանու աշխատանքը: Հակոբյանն սկսել էր Ղևոնդ Մելոյանի ստեղծագործության ուսումնասիրության նախապատրաստական աշխատանքները, զուգահեռաբար սկսել և ավարտին էր հասցնելու «Դրվագներ XX դարակազրի արձակի ստեղծաբանական փիլիսոփայության եւ կենսափիլիսոփայության պատմությունից» հիմնարար աշխատությունը, որից մի հատված է պահպանվել նրա թողոններում և այլն: Գրականագիտա-

կան վիթխարի փորձառությունը դեռ նոր հորիզոններ էր նվաճելու՝ ընդլայնելով մեր պատկերացումներն ու գիտելիքները հայ գրականության, մեր ուսեցած իրական մտավոր հարստության սահմանների մասին: Եվ այդ ճանապարհին Գրիգոր Հակոբյանը անվերապահորեն առաջամարտիկ էր, իսկ նրա հեռացումը անվերականգնելի կորուստ, որը սակազն ապրված կյանքի խորհուրդ և պատգամ է մեզ համար, օրինակության արժանի ճանապարհ, գործի մեծության համեմատ համեստության տիպար...

\* \* \*

Սույն ժողովածուն կազմելիս Գր. Հակոբյանի ծավալուն ժառանգությունից ընտրված նյութերը դասակարգված են չորս բաժիններում՝ «Հայ դասական վիպագրություն», «Հայ դասական նորավեպի պատմություն և տեսություն», «Զանազան ուսումնասիրություններ և գրախոսություններ» և «Սփյուռքահայ գրականություն»: Բնագրերը հրատարակության պատրաստելիս ուղղել ենք միայն բացահայտ կետադրական և ուղղագրական վրեպներ: Հատորի վերջում զետեղել ենք Գրիգոր Հակոբյանի երկերի և հրապարակումների մատենագիտական համառոտված ցանկը:

ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

I

**ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ  
ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ**



## ՀԱՅՏՆԻՆ ԵՎ ՆՈՐԱՀԱՅՏԸ

### ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ<sup>1</sup>

**S**ակավին 1893-ին «Տարագ» հանդեսում Ալեքսանդր Շիրվանզադեն, անդրադառնալով Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Ապան Բալասի» վերնագրով բեմականացմանը, գրել է. ««Վերք Հայաստանի»-ն հայտնի է բոլոր հայերին, որ կարդալ գիտեն...»<sup>2</sup>: Գրողի այս նկատումը Վերքի հոգեւոր-մշակութային, ազգային-հանրային պատմական և իր ժամանակի հարացույցներում, կարող ենք անվարան հավելել՝ առհասարակ հայոց հոգեւոր-մշակութային համապատերում տիրապետող ներկայություն (ինչպես նաև դոնինանտ արձեք) լինելու առարկայական արձանագրությունն էր: Հայկական միջավայրը ներփակող ամբողջական համագրում ստեղծագործության բացարձակ հանրաճանաչության փաստումը:

Անշուշտ Աբովյանը և նրա գործի ու ստեղծման խտացում-այցեքարտ Վերքը հայության քաղաքակրթության նոր դարաշրջանի ամենահայտնի երևությն է: Շիրվանզադեի սահմանման հանգույն արձանագրությունն անպայմանորեն ներառում էր ո՛չ միայն այս անմահ ստեղծագործության ներփակ (իմանենա) պատմա-գործառական գերակատարությունը, այլ նաև Աբովյանի՝ իբրև մեծ լուսավորիչի, հանրագիտակի, մանկավարժի, գաղափարախոսի, մտածողի, ազգային-հանրային գործիչի, գեղագետի, նոր գրականության հիմնադիրի հանդամանքները: Ասել է թե՝ Շիրվանզադեի հիշատակված դիտարկում-սահմանումը Աբովյանի բացարձակ հանրաճանաչությունը, տիրապետող ներկայությունը լինելը, նրա կյանքն ու գործը որպես օրինակելիի, չափորոշիչավինի յուրօրինակ սիմվոլացումն էր հայ հանրության կողմից: Այն հիմնարար և ամբողջական «նախաձեր», ում կյանքի, գործունեության, ժառանգության վերաներկայացումը, վերակրկնությունը հոգեւոր-մշակութային, ազգային-հանրային դաշտերում ընթացք ապահովող անհրաժեշտ թելադրանք է:

Պատահական չէ, որ ետաբովյանական առաջին իսկ շրջափուլից (օրինակ՝ Նալբանդյան, Պուռյան, Ռուբենյան, Մուրմանյան, Խսահակյան) մինչև XX դար (օրինակ՝ Զարենց, Բակունց, Դեմիրճյան, Հակոբ Օշական), մինչև մեր օրեր Աբովյան և Վերք երեսույթների փորձընկալումը, աբովյանական գործի վերաներկայացումը և վերակրկնությունը (ինքնին հասկանալի է, որ վերաներկայացում-վերակրկնությունը աբովյանական ֆենոմենի կրավորական «նմանահանությունը» կամ նմանողությունը չէ, համենայն դեպք այդօրինակ իրողու-

1 Խաչատուր Աբովյան, «Վերք Հայաստանի. ողբ հայրենասիրի. պատմական վեպ բաժանեալ յերիս մասուն ի Խ. Ապովեանէ, Վերատեսչ արքունական համանգական ուսումնարանից՝ որ ի Տիկիս», բնագիրը հրատարակութեան պատրաստեց Գորգէն Գասպարեանը, առաջարանը և ծանօթազրութիւնները Պիոն Յակոբեանի, Երևան, Գրականութեան և արուեստի թանգարանի հրատարակչութիւն, 2004, 424 էջ:

2 «Վերք Հայաստանի»-ն բնմի վրա», տե՛ս Ալեքսանդր Շիրվանզադե, Երկերի ժողովածու տասը հաստորով, հատոր տասներորդ, Երևան, Հայպետհրատ 1962, էջ 181:

թյունները նկատի չունենք, այլ՝ իմացական-ստեղծաբանական-փիլիսոփայական-գեղագիտական փորձընկալումը) Հոգեոր-մշակութային, իմացական-մտածական, մտավորական դաշտերում արդիական է հրատապ:

Անշուշտ Ալեքսանդր Շիրվանզադեի սահմանման նմանվող արձանագրության մեջ պետք է նկատի ունենալ, որ առկա է նաև այն ելակետումը, թէ աբովյանական տարրողությամբ հայտնին, հանրածանոթը ցանկացած ժամանակի, շրջանի և յուրաքանչյուր աերնդի համար առերում է նորը, նորահայտը: Այս նորահայտով է ապահովագրում իր հայտնի լինելը:

Ասել է թե՝ աբովյանական երևույթն առհասարակ, Վերքն ի մասնավորի հայտնի էր և է, որովհետև անընդհատ ընթերցման-ըմբռնման-փորձընկալման, մեկնաբանման և արժեվորման տիրույթներում երևան էր բերում և բերում է նորը, ըստ այսմ՝ նորահայտ էր և է: Ահա և այս առումով Վերքի խնդրո առարկա հրատարակությունը հայտնի նորահայտ-աշման հերթական, միանգամից ասենք՝ արգասսավոր դրսեորումն է, սակայն նորահայտ՝ նաև ուղղակի, բառարանային իմաստով, ինչին սույն գրախոսության համապատասխան բաժնում դեռ կանդրադառնանք:

Մեկնելով ունեցած դերակատարությունից՝ Խաչատուր Աբովյանի ժառանգության գիտական հրատարակությունը և ուսումնասիրությունը միշտ արդիական, հրատապ և անհրաժեշտ գերակայություն է եղել և է հումանիտար մտքի համար: Բոլորովին պատահական չէ, որ այսօր ունենք գրեթե 150 տարվա աբովյանագիտություն՝ մեկնակետ ընդունելով 1858-ի Վերքի առաջին տպագրությունը (ճշգրտորեն՝ հարյուր քառասունութ տարվա): Շուրջ դար ու կես ժամանակահատվածում հրատարակվել և վերահրատարակվել են մեծանուն լուսավորիչի բազմաթիվ երկեր: Ճիշտ է, այսօր գրեթե անմատչելի և հազվագյուտ, սակայն լույս է տեսել Աբովյանի երկերի տասհատորյակը, ստեղծվել են հիմնարար ուսումնասիրություններ<sup>3</sup> նրա կյանքի, գործի, ժառանգության մասին: Թերեւ, առանց չափազանցնելու կարող ենք վկայել, որ Աբովյանը հայոց նոր և նորագույն գրականությունների ամենամեջբերված, հղված, վկայակոչված հեղինակն է, ըստ մեջբերումների գամիչի՝ միանձնյա առաջատարը:

Հայոց նոր գրականության հիմնադիրի, մեծանուն լուսավորիչի, հանրագիտակի, գրական, փիլիսոփայական, գեղագիտական, լեզվաբանական, բանասիրական, մանկավարժական, պատմագիտական, ազգագրական, բնագիտական ժառանգությունը, նրա կյանքն ու գործունեությունը վաղուց անտի քննության և ուսումնասիրության կիզակետում են: Կարելի է ասել Խաչատուր Աբովյանի կյանքն ու ժառանգությունը համակողմանիորեն, համապատկերային շրջանակով հետազոտվել է (անպայմանորեն երախտագիտությամբ պետք է հիշենք երջանկահիշատակ Պիռն Հակոբյանին), ըստ էության քննական անդրադարձման է ենթարկվել նրա կյանքի և ժառանգության ամբողջական համածիրը՝ կենսագրությունից (ուսումնառություն էջմիածնում, Թիֆլիսում, Դորպատում, մանկավարժական գործունեություն Թիֆլիսում ու Երևանում և այլն) մինչև հա-

3 Վերջին շրջանում Աբովյանին նվիրված ուսումնասիրություններից անպայմանորեն պետք է առանձնացնենք ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի «Վերք Հայաստանի» վեպի կառուցվածքը և հատկապես՝ «Վերք Հայաստանի» վեպի պուտիկան»:

բուստ և բազմազան ժառանգություն (մանկավարժական երկեր, գեղարվեստական գրականություն, գիտական ուսումնասիրություններ): Անշուշտ Աբովյանի կյանքը, գործունեությունը, ժառանգությունը հայագիտության համար անսպառ շտեմարան է, և նա վստահաբար միշտ լինելու է գիտական փորձընկալման տիրույթներում, ինչը նրա հանճարի, Սարինյանի դիպուկի բնութագրմամբ՝ «ազգային ոգու կերպարանք առած մարգարեի»<sup>4</sup> ստեղծման տարերքն է:

Այս խորքում գերակայելի է Խաչատուր Աբովյանի գրական ժառանգության դերակատարությունը: Գրականություն, որ հիմնադրեց և ուղենչեց Հայոց նոր գրականությունը, ազգային գրականության շրջարկում հաստատագրեց ժանրային համակարգը: Իսկ այդ շրջարկում էլ անբավելիորեն բացառիկ է «Վերք Հայաստանի» վեպի գրական-գեղարվեստական, ստեղծաբանական-մշակութարանական դերն ու հանձնառությունը հայոց գրականության պատմության նոր դարաշրջանի համար: Ստեղծագործություն, որով Դերենիկ Դեմիրճյանի խորիմաստ գիտարկմամբ՝ «Աբովյանը գտավ Աբովյանին «Վերք Հայաստանի»-ով, հայտնագործեց իրեն»<sup>5</sup>:

Իրապես, դեմիրճյանական գիտարկումը միանգամայն իրավացիորեն արձանագրում է այն ելակետը, թե Աբովյանի գործի և ստեղծագործության ստեղծաբանական, մշակութարանական, իմացական-գիտական փորձընկալումն ըստ էության նույնականացվում է Վերքի փորձընկալմամբ:

Հանրահայտ է և տեսաբանության, գրականության պատմագրության կողմից վաղուց անտի անքննելի աքսիոմի տարրողություն ստացած այն իրողությունը, որ Խաչատուր Աբովյանի գրական ժառանգության յուրաքանչյուր/ցանկացած արտահայտություն/երկ հայոց նոր գրականության պատմական հարացույցում առանձնանում է սկզբնադիրի գործառությամբ, մշակութարանական-ստեղծաբանական դաշտում նախադեպ ստեղծելու տարերքով, նախադեպի երկույթով, գեղարվեստական փոքր արձակ լինի (Հիշեցնենք օրինակ «Օվսաննա»-ն՝ նոր գրականության առաջին նորավեպը) թե գեղարվեստական օրագրություն, այսպես կոչված միջժանրային ձևեր (օրինակ՝ առակ, մանրադեպ): Թե պոեզիա (անկախ նախաբովյանական կամ աբովյանական ժամանակաշրջանում կիրարկումից, ինչպես է պոեզիայի պարագան՝ կլասիցիստական, սենտիմենտալ-ռոմանտիկական բանաստեղծությունների համապատկերում, Աբովյանի բանաստեղծությունը նշվածի տիրույթներում է, թեև հայոց կլասիցիստական, սենտիմենտալիստական-ռոմանտիկական, դիդակտիկ-լուսավորական բանաստեղծությունը մինչ Աբովյանն արդեն իր նախաքայլերն արել էր):

Հարահայտ և աքսիոմատիկ է «Վերք Հայաստանի» վեպի բացառիկ գերակատարությունը հայոց նոր գրականության հիմնադրման և սկզբնադրման մեջ: Վերքն իբրև մուտք, ելման կետ, սկիզբ գիտակցվել և իրավացիորեն ընկալվել է ստեղծագործության լույս ընծայումից ցարդ և՝ գրականության, և՝ թե տեսաբանության-քննադատության կողմից: Ասել կուզի՝ հայոց գրաբանական դաշտը, մեկնելով Վերքի կառուցաբանական-կազմաբանական, բառապատկե-

4 Նույն տեղում, «Վերք Հայաստանի» վեպի արետիկան», էջ 118:

5 «Խաչատուր Աբովյանի գրական ժամրերը», տե՛ս Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հատորը ուժերորդ, լրացուցիչ, Երևան, Հայպետհրատ 1963, էջ 220:

բային, գեղարվեստական-գեղագիտական, մշակութաբանական-քաղաքակրթական շրջարկներից առարկայաբար գիտակցել և գիտակցում է գրականության ժամանակի պատմական հոլովույթում ստեղծագործության հանձնառությունները: Իսկ յուրաքանչյուր սկզբնադիր, հիմնադիր երկ թելադրական է դարձնում ցանկացած (ամեն մի) ժամանակահատվածում գրողի, քննադատի, ընթերցողի, առհասարակ գրական դաշտի կողմից այդ ստեղծագործության սեփական փորձընկալումը: Հետևաբար այդօրինակ երկը անընդհատ մնում/լինում/դառնում է արդիական:

Վերքի գերակատարությամբ մուտք/սկիզբ անընդհատ գիտակցվում և փորձընկալվում է, սկզբնադիր լինելու, հիմնադիրի երեսույթը անընդհատ հայտնաբերվում և հաստատվում է, ըստ այսմ վերահայտնաբերվում և վերահաստատվում յուրաքանչյուր գրողի և ցանկացած գրական միջավայրի կողմից՝ անկախ նախորդների հաստատումների: Միայն այս ընթացքն անցնելուց հետո է այն վերակրնում իր հանձնառությունը: Իսկ հանրահայտ, աքսիոմատիկ իրողություն է, որ ցարդ Վերքը պահպանում է իր այս բացառիկ մասնահատկությունը: Հետևաբար Արովյանի այս ստեղծագործության փորձընկալում-ընթերցում-մեկնություններն իրենց ամբողջական համագրով մեր գրականության և տեսաբանության մշտամնա հաստատունն են, ինչը ուղղակիորեն պայմանավորված է Վերքի մշտամնա հաստատուն լինելու երեսույթով: Ունենք այս օրինաչափության բազմաթիվ գրապատմական և ժամանակակից վկայություններն ու հաստատումները<sup>6</sup>:

Ասել է թե՝ յուրաքանչյուր գրող, քննադատ, առհասարակ ընթերցողական դաշտի ցանկացած ներկայացուցիչ առարկայաբար ունի Վերքի սեփական (անհատական) փորձընկալման պահանջն ու փորձառությունը: Այդպես է եղել «Վերք Հայաստանի»-ով սկզբնավորված հայոց նոր գրականության պատմական բոլոր փուլերում Պռոշյան-Աղայանից մինչև Թումանյան-Խսահակյան, Վարուժան-Օշականից մինչև Զարենց-Բակունց, այդպես է ժամանակակից գրականության շրջանում:

Ավելին, ոչ միայն գրական-մշակութային, այլև մտավոր-իմացական դաշտի յուրաքանչյուր ներկայացուցիչ անցյալում և այժմ Վերքի գեղարվեստական, փիլիսոփայական, գեղագիտական, մշակութաբանական, ստեղծաբանական փորձընկալումը միանգամայն իրավացիորեն գիտակցում է որպես սեփական կայացման պարտադիր հրամայականներից մեկը:

Անշուշտ արդեն այս հանրահայտ իրողությունների գերհամառուս ուրվագրումը վկայում է ինդրո առարկա բնախաղեա գերհագեցվածությունը՝

<sup>6</sup> Օրինակ՝ Սղավաճի, Պողոսյանի կողմից Արովյանի ստեղծագործության փորձընկալմամբ ըստ էության հայոց նոր գրականության անիվը թափ առավ: Ավելին, Դեմիրճյանի նմանողությամբ երկրորդները, որ իրենք վեպի փորձընկալմամբ գտան իրենց: Վաղոց անտի գրականության պատմության կողմից արձանագրված, մեկնարաբանված իրողություն:

Ցանկանուն ենք ընթերցողի ուշաբրուժունը հրավիրել, որ Արովյանի խնդրու առարկա վեպով պայմանավորված ըստ էության նույն երևույթը նկատում ենք պայօտվա գրականության մեջ: Կուզեհնք վկայակոչել այսօտվա մեր արձակի ամենատաղանդապուր մեղմակի՝ Լուս և խչոյանի բանավոր մկատումները Արովյանի երևույթի և մասնավորապես Վերքի առիթով: Նրա հմտու և նուրբ դիտարկումները, որի ականջալուրն էինք, ըստ էության փորձընկալման նույն երևույթն են արձանագրում: Հար և նման էր բանաստեղծ Տիգրան Պասկիչյանի պարագան «Կենտրոն» հեռուստարարներության «Ուրվագիծ» շարքի հաղորդումներից մեկի ժամանակ ունեցած ելույթում:

նկատի ունենալով երկի բոլոր շրջարկները: Անշուշտ նաև «Վերք Հայաստանի»-ի նորմատիվ և գիտական ընթերցումները ենթադրում են գեղարվեստական-ստեղծագործական, իմացական փորձառության համապատասխան կուտակումներ: Միևնույն ժամանակ Վերքն ինքնին իբրև գեղարվեստական համակարգ ցուցանում է անընդհատական կուտակումներ՝ ընթերցող ցանկացած սուբյեկտի յուրաքանչյուր նոր ընթերցում հանգեցնում է ստեղծագործության ընկալման/ըմբռնման արմատականորեն նոր հանգրվանի: Այդպես է երկի նորմատիվ և գիտական ընթերցումների անցյալ ժամանակների, ներկայի, վստահաբար նաև ապագայի հոլովույթներում<sup>7</sup>:

Այսպիսով՝ հայ գրականության ամենահանրահայտ ստեղծագործությունը յուրաքանչյուր նոր (հերթական) ընթերցումով հանգում է նորահայտի, հայտնին փոխակերպում նորահայտի՝ դրսերելով հայտնի-նորահայտ-ի նաև այս համագիրը:

Հայոց նոր գրականությունը հիմնադրող-սկզբնադրող այս բացառիկ, կոթողային երկի ստեղծագործական պատմությունը նույնական բացառիկ, նշանակալի է հորինման, գրման, ստեղծագործական պատմությունների հարացույցում: Վերքի ստեղծագործական պատմության հիմնարար-ակադեմիական ուսումնասիրությունն այսօր չնորիչիվ վաստակաշատ արովյանագետ Պիոն Հակոբյանի մեր տեսաբանության սեփականությունն է: Հայտնի է, որ Խաչատուր Աբովյանը գրեթե երկու տասնամյակ (ըստ Հակոբյանի՝ «ավելի քան տասնհինգ տարրի»<sup>8</sup>) ստեղծագործական երևակայության տիրույթներում, տարբեր գործերի մեջ բնագրային անդրադարձումներով հղացել, բովանդակային և կառուցարանական որոնումներով և տարբերակներով նախապատրաստել և շարադրել է երկը: Աբովյանագիտությունը Վերքի ստեղծման ավարտը հասցնում է մինչև 1845-ը՝ միաժամանակ արձանագրելով, որ գրման հիմնական ժամանակահատվածը 1841-ի փետրվար-հոկտեմբեր ամիսներն են:

Ինքնին հասկանալի է այն իրողությունը, որ վեպի առաջին հրատարակությունից իսկ հայոց տեսաբանական միտքը պետք է սկսեր այս կոթողային ստեղծագործության մեկնաբանական վիթխարի համաձիր պարփակող քննաբանության շրջանը: Գրեթե 150 տարվա պատմություն ունեցող Վերքագիտությունը նշանակալի հանգրվաններ է ունեցել՝ սկսած Ստեփան Ռականի 1859-ին «Արևմուտք» հանդեսում ըստ էության առաջին անդրադարձից, մինչև Միքայել Նալբանդյան, ապա և Դերենիկ Դեմիրճյանի հույժ կարելոր «Խաչատուր Ա-

7 Ինքնին հասկանալի է, որ Վերքի ամբողջական (լիակատար) փորձընկալումը պարտադրում է լրջագույն պատրաստվածություն:

Վերք կարդալը առնվազն վերջին 50-70 տարիների ընթացքին կատարյալ փորձություն է դարձել հատկապես դարտցական-ուսանողական շրջանակներում: Ընթերցման «դմվարությունը» նշանակած կուտակումների ամպրով, շատ հաճան կուտակումների հախապատրաստության բացակայությամբ է պայմանավորված: Ստեղծագործության համառոտված-դյուրինացված տարբերակը, կարծում ենք, այս մնահոգությամբ էր Ժամանակին ստեղծվել, սակայն իրուն նախապատրաստությունը առկան մնացել, որովհետո միան երկի նախաձանորթացման հասկանալի մղումով ստեղծված դյուրինացված տարբերակը ագուցվում էր երկի արժեքանության-մեկնաբանության տարրունակ դաշտին: Իսկ դյուրինացված տարբերակից դուրս մնացած բնագրային շերտերը ստեղծագործության համարժեք ընկալումը և ըմբռնումը չեն ապահովում և արդյունքում վեաը մնում էր անհականալի:

8 Տե՛ս Վերքի վերջին հրատարակության Հակոբյանի «Խաչատուր Աբովյանը և նրա «Վերք Հայատանին» առաջաբանը, էջ 30:

բովյանի գրական ժամբերը» ուսումնասիրությունը, մինչև մեր օրերը՝ Սերգեյ Սարինյանի արդեն հիշատակված երկու հետազոտություններով, որտեղ ոչ միայն ուրվագրված, մեկնաբանված է վերքագիտության բոլոր կարևոր հանգրվանները, այլև առաջադրված վեպի մեկնաբանության նոր կոնցեպցիա<sup>9</sup>:

Վերքի հետազոտական արդիականության և հրատապության հրամայականը առարկայաբար ցուցանում է, որ հայ նոր գրականության այս կոթողային ստեղծագործությունը ոչ միայն իր գեղարվեստական-գեղագիտական, ստեղծաբանական-փիլիսոփայական շերտերով պարփակվում է զուտ գրականության տիրույթներում, այլև մատնանշում է մեր մշակութաբանական, քաղաքակրթային, կենսափիլիսոփայական ինքնությունը պայմանավորող ելակետային, հանգուցային, կարող ենք առանց վարանելու նշել նաև՝ հիմնատարրային տարերքը<sup>10</sup>:

Աբովյանագիտությունը (վերքագիտությունը) խնդրո առարկա շրջարկը պարփակող բոլոր իրողությունները քննել և մեկնաբանելու է և վստահ ենք, որ թե՛ այժմ և թե՛ ապագայում քննելու և մեկնաբանելու է, քանի որ Վերքն իր մասնահատկությամբ, ինչպես ասացինք, խթանում է անընհատականություն ինչպես ընթերցման, այնպես էլ մեկնաբանման-արժեկվորման տիրույթներում: Ասել է թե՝ այս ստեղծագործության ընթերցողական և գիտական փորձնկալումը հայտնին միշտ նորահայտի է հանգեցնում, առարկայաբար առաջադրում հայտնի/նորահայտի հրամայականը:

Արդ այս հրամայականը ևս մեկ անգամ բնդգծելու համար արագորեն ճեպագրենք հանրահայտ մի քանի իրողություններ ևս:

Վերքի հայկական ստեղծաբանական-մշակութաբանական, իմացական միջավայրում ֆենոմենալ հարակայությունը միանգամայն իրավացիորեն համանունացվել է «Սասնա ծոեր»-ի հետ: Աբովյանի ստեղծագործությունը նոր ժամանակների մեր էպոսն է, դյուցազներգությունը: Էպոսին, դյուցազներգությանը բնորոշ հսահակյանի բնութագրմամբ՝ «տարերային-տիտանային պեյզաժներով», բացառիկ բազմաձայնությամբ, սիմֆոնիզմով: Նոր գրականության համար համանվագայնության նախադեպի ամրագրմամբ, ինչը Վարպետը դիպուկ բնութագրել է իբրև «կոսմիկական երաժշտություն, օրատորիաներ»<sup>11</sup>:

Վերքը գիտակցվել ու գիտակցվում է իբրև նոր ժամանակների նարեկ, ասել է թե՝ որպես գրական աղոթամատյան, պատգամախոսություն: Պատահական չէ երկի հորենական գոյութենական-ստեղծաբանական տարերքը (կիրարկում ենք Տերունական աղոթքի համանունությամբ): Այս հորենական ստեղծաբանական

9 Սարինյանը Վերքի գեղարվեստական կառուցվածքը քննաբանում է իրեն դրույթի, հակադրույթի և համադրույթի միասնություն:

10 Պատահական չէ, որ օրինակ, Հակոբ Օշականը Վերքի պատմական առաքելությունը և ժամանակակից դերակատարությունը փաստելիս նշում է, որ ստեղծագործությունը «...ընթերցողը կրկնապես երախտաւորող, գրակամեն ալ դուրս սա վայելքին մատուցումով...» է առանձնանում: Տե՛ս Յակոբ Օշական, Համապատկեր արևմտաԲայ գրականութեան, չորրորդ հատոր, Երուսաղեմ, Տպարան Սրբոց Յակոբեան 1956, էջ 93:

11 «Այստեղ Հայաստան աշխարհն է իր տարերային-տիտանային պէտականերով, որոնք դարձել են բնապաշտական, կոսմիկական երաժշտութիւն, օրատորիաներ», – գրում է հասհակյանը: Մեջբերումն ըստ «Վերք Հայաստանի» խնդրո առարկա հրատարակության, էջ 49:

տարերքը, բնագրաստեղծ հիմունքը համասփռված է ստեղծագործության առաջաբանից՝ համրությունից ազատագրում վասն հոր, հորենական սկզբի ամբագրում որդիական սիրով, մինչև «Զանգի» վերջաբանը՝ հայր-ազգ նույնականություն, հորենական կոսմոսի հայտնաբերում, մահ/անմահություն վասն հոր:

Խաչատուր Աբովյանի այս անմահ ստեղծագործությունն իր ամենատարբեր համադրություններով<sup>12</sup> նոր գրականության համապատկերում գեղարվեստական համակարգի օրինակելի մոդել ստեղծեց:

Առաջին հայացքից կարող է տարօրինակ կամ, գուցե, պարագոքսալ հնչի, սակայն հարկ է ընդգծել, որ Վերքն իր կառուցաբանական-հղացական համագրով, բնագրաստեղծ հիմունքներով, պատկերային համակարգի գործառություններով, անգամ վերնագրային կազմաբանությամբ հայկական մողեռնի և պոստմոդեռնի կատարյալ արքետիպն է: Այս իրողությունը, հարև և նման հորենական սկզբունքի, կարծում ենք, մի առանձին ուսումնասիրության նյութ է: Նշենք սոսկ ժանրի սահմանների և ինքնացնող հատկանիշների ապակառուցումը ստեղծագործության շրջարկում, անթաքույց հարաբերականությունը (ռելատիվիզմը): Իրողություններ, որոնք մողեռն/պոստմոդեռնի գրականությանը բնորոշ երևույթներ են:

Վերքի հայտնատեսական առաքելություն/հերակատարությունը մեր գրականության, առհասարակ ստեղծումի, մշակութաբանական-իմացաբանական էպոխալ առումով նորի սկզբնադրման գործում վաղուց անտի փաստված է նաև գրականության նոր լեզվի հիմնադրման, սկզբնավորման հանգամանքով. «Փակ», «կարճ» լեզվի (Աբովյանի բնորոշումներից են երկի «Հառաջաբան»-ում) պատճենների հաղթահարմամբ: Աշակերտի համար անգամ հայտնի գրականության պատմության այն սահմանումը, թե Աբովյանը մեր նոր գրականության հիմնադիրն է, պայմանավորված է գրական, գեղարվեստական բնագիր ստեղծելիս նոր լեզվական կիրարկումով: Այս լեզվական կիրարկման բառի դրական տարրողությամբ մոգական դյութանքն էր, որ Աբովյանի սաներին, Դորպատի հայ ուսանողությանը, Վերքի առաջին հրատարակիչ Հովսեփ Գաբրիելյանին խթանեցին իրականացնելու վեպի առաջին տպագրությունը 1858-ին: Ահա և ստեղծագործության տպագրության գրեթե 150-ամյա պատմության<sup>13</sup> ընթացքում երկն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ<sup>14</sup>, սակայն աբովյանական հառաջիկա հոբելյաններին ընդառաջ<sup>15</sup> ստեղծագործության ներկա տպագրությունը ոչ միայն հասկանալի վերահրատարակություն է, այլև կարեոր երևույթ Վերքի, առհասարակ աբովյանագիտության պատմության մեջ:

12 Կառուցաբանական առողմով արևելյան և արևմտյան վիպագրական շերտերը կատարյալ մոնիլիտային սիմֆոնիզմի հասցած համադրությունների շրջանակը արովյանագիտությունը բազմից փաստել է՝ Դեռենիկ Դեմիրճյան, Սերգեյ Սարինյան:

13 Հիրավի մոտենում ենք Աբովյանի հոբելյանական շրջանին. 2008-ին «Վերք Հայաստանի» առաջին տպագրության 150 ամյակը, 2009-ին՝ գորոյի 200 ամյակը:

14 Այս մասին հանգանակութեան տեսն խնդրո առարկա հրատարակության «Մատենագիտական տեղեկութիւններ» (Եջ 420-422) բաժինը:

15 Ի դեպ, աբովյանական հոբելյանների սեմին ակտիվացել են մերձաբովյանական և մերձգիտական մոխանություններն ու դեմքերը: Զգիտես ինչու շրջանցելով ակադեմիական գիտությունը, ոմանք, կարծում ենք պատեհապաշտական նկատառություններից դրդված, ամեն շանք գործադրում

հրապես, ԳԱԹ-ի կողմից հրատարակած, Գուրգեն Գասպարյանի կողմից բնագիրը հրատարակության պատրաստած, Պիոն Հակոբյանի առաջաբանով, ծանոթագրություններով Վերքի սույն տպագրությունը ստեղծագործության հերթական հրատարակություն չէ, այլ նշանակալի, լուրջ հավելում աբովյանագիտության մեջ: Այստեղ արձանագրենք նաև ստեղծագործության բարձրորակ, շքեղ և բարձրաճաշակ տպագրությունը, ինչը, վստահաբար, պակաս կարելոր իրողություն չէ:

Վերքի ներկա հրատարակությունը բացվում է Գուրգեն Գասպարյանի ««Վէրք Հայաստանի»» վէպի ինքնագիրը որպէս աշխարհաբար գրական լեզուի արձանագրութիւն» խոսուն վերնագիրը ունեցող բնագրագիտական հետազոտություն-ներածականով, որին Հաջորդում է Պիոն Հակոբյանի «Խաչատուր Աբովեանը և նրա «Վէրք Հայաստանին» առաջաբանը: Ստեղծագործության բնագրից հետո իրեւ հավելված զետեղված է սիյուռքահայ բանաստեղծ, արձակագիր, հրապարակագիր, մանկավարժ, ազգային-հանրային գործիչ Հմայակ Շեմսի Վերքի «Հառաջաբան»-ի արևմտահայերեն փոխադրությունը, նրա հեղինակած «Մեծ ազգ՝ երեք մատեանով (ուրուագիծ)» հոդվածը, «Հառաջաբան»-ի անգլերեն թարգմանությունը, որ կատարել են Վահե Պալատունին և Զոն Ջերին: Հատորը փակվում է Պիոն Հակոբյանի հեղինակած ծանոթագրություններով, նրա (մասնակիորեն նաև Գուրգեն Գասպարյանի հավելումներով) կազմած բառարանով և մատենագիտական տեղեկություններով: Հավելենք նաև, որ այս շքեղաշուք հրատարակությունն իրականացվել է Հմայակ Շեմսի զարմիկ, ԱՄՆ Նյու Օոլինգի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր Վահե Պալատունու հովանավորությամբ, որին պետք է իրենց շնորհակալությունը հայտնեն նաև գրքի բոլոր ընթերցողները:

Գուրգեն Գասպարյանը, իր ներածական-ուսումնասիրության մեջ ամփոփելով Վերքի ձեռագրագիտական-բնագրագիտական քննությունը, իրեւ եղրակացություն գրում է. «Մենք հետեւ ենք Աբովեանի ինքնագրին՝ պահպանելով հեղինակի ուղղագրական բոլոր ձևերը, կէտաղրութիւնը, շարադրանքի կառոյցը՝ հնարաւորինս խուսափելով որևէ միջամտութիւնից: Այս առումով «Վէրքի» բնագիրը առաջին անգամ է լոյս տեսնում այնպէս, ինչպէս գրել է Աբովեանը»<sup>16</sup> (ընդգծումը մերն է՝ Գր. Հ.):

Են Աբովյանի 200-ամյակը տոմել 2005-ին, ոչ զոյլ չիմնավորված հայտարարություներ անելով, թե մեծանուն գրողը ծննդել է 1805-ին: Վաստակաշատ աբրունագետ Պիոն Հակոբյանը տակավին 1997-ին հրատարակած «Խաչատուր Աբովյանի կենացարության առեղծվածները» իր մեծանության «Ծննդյան թվականը» և «Վերստին Աբովյանի ծննդյան թվականի մասին» ուսումնափորձութերում (տե՛ս Բիշատակված մեծագրության 25-51 և 52-69-րդ էջերը) տակավին հայտնի փաստերի շրջանառությամբ Աբովյանի ծննդյան թվականը համարում է 1809-ը:

«Հորելենագագրությամբ» համակված համական համար համար էլ են ասում և գրում: Վերքի այս հրատարակության բնագիրը պատրաստած Գուրգեն Գասպարյանը տողերին հեղինակն պատմել է, որ դրանցից մեկը ԳԱԹ-ի իր աշխատասեղակում գիրքը թերթելիս, լսու երևույթին հրատարակության ավանդական ուղղագրությունից մենացելով, լրջորեն-զարմացած հարցորել է իրեւ՝ Աբովյանը արևմտահայերեն՝ գրել, Վերքի ձեռագիրը արևմտահայերեն՝ Ավելի լուրջ: Կարծում ենք գրող 200-ամյակի և Վերքի տպագրության 150-ամյակի հորելյաներին ընդառած հիմանակի կիմել հրատարկել գոնե մեծադիր ընտրանի Աբովյանի գրական ժառանգությունից, ինչպէս նաև Ֆրիդրիխ Պարրոտի «Ծանապարհորդություն դեպի Արարատ» ուղեգործություն-հուշագրությունը, որ գերմաներենից թարգմանել է Արա Սուաքելյանը: Գիրքը վաղուց պատրաստ է տպագրության և սպասում է հրատարակչին:

16 Տե՛ս ստեղծագործության ներկա հրատարակությունը, էջ 15:

Հետևաբար հարկ է փաստել, որ ստեղծագործության այս հրատարակությունն առաջին անգամ ընթերցողին, տեսաբանությանը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու, կարդալու և ուսումնասիրելու Վերքի միջամտությունների չենթարկված, առանց որևից միջամտության, անաղարտ<sup>17</sup> տարբերակը: Այսինքն հայտնի բնագիրն ըստ էության սույն տպագրությամբ նորահայտ բնագրի արժեք ունի: Ասել է թե ունենք երկի գիտական, ակադեմիական երկրորդ (հաշվի առնելով Աբովյանի երկերի ժողովածուի առաջին հրատարակությունը, ինչը նույնպես գիտական էր) ծզգրտված հրատարակությունը, ինչը անշափ կարեռ է հատկապես աբովյանագիտության, երկի հետազոտական շրջարկը ներփակող բոլոր աշխատանքների համար:

Անշուշտ աբովյանագիտությունը հսկայական աշխատանք է կատարել Աբովյանի ձեռագրերի, մասնավորապես Վերքի բնագրագիտական հետազոտության ասպարեզում: Շնորհիվ վաստակաշատ Պիոն Հակոբյանի՝ մանրազնին քննության են ենթարկվել վեպի տարբերակները, այսպես կոչված ստեղծագործության առաջին չափածո տարբերակը, նախագիրը, երկրորդ արձակ տարբերակը՝ երկի սեւագիրը, երրորդ վերջին տարբերակը՝ մաքրագիրը<sup>18</sup>: Իսկ այս հրատարակությունն ըստ էության ամփոփում-վերջնականացնում է Վերքի ձեռագրագիտական, բնագրագիտական քննաբանության համագիրը: Շրջանառության մեջ մտցնում միջանորդություններից զերծ, անաղարտ աբովյանական բնագիրը, հնարավորություն ընձեռում հետևելու աբովյանական բնագրի կառուցմանը, հեղմանը, Դեմիրճյանի բնութագրմամբ՝ հորդումին<sup>19</sup>:

Վերքի սկզբանիր գործառությունը նոր գրականության պատմության համապատկերում անշուշտ հանգրվայնանում է լեզվական հեղափոխությամբ և երից իրավացի էր Հակոբ Օշականը, երբ արձանագրում էր. «Նորութիւն էր իր գործը իբր ողի, ձգտում և արուեստի ըմբռնում, բայց մանաւանդ վճռական է անիկա շատ վճռական հարցի մը մէջ, որ լեզուական է այս անգամ»<sup>20</sup>:

Ահա և սույն հրատարակությամբ, Գուրգեն Գասպարյանի բնագրագիտական աշխատանքի շնորհիվ, կարելիություն է ստեղծվել «Այս երգեցիկ գրքի երգանման ձայնի»<sup>21</sup>-ն ըստ ամենայնի հետևելու:

Բնագիր պատրաստողը առաջնորդվելով աբովյանական բնագրի նույնական, անխաթար փոխանցմամբ (հրատարակության պատրաստելուն) ըստ վեպի ինքնագիր-մաքրագրի վերականգնել է բազմաթիվ հատվածներ արձակի, որոնք,

17 «Անաղարտ»-ը մեր շաբարդանքում բոլորովին արժնորդ նաշնակությամբ չենք կիրառում: Անշուշտ Վերքի բոլոր հաջող հրատարակությունները (հատկապես 1981-ին Պիոն Հակոբյանի աշխատավորացյամբ, «Ուսանողի գրադարան» մատենաշարով տպագրվածը), անկան տպագրության նպատակից (օրինակ՝ զուտ ուսուցողական, ճանաչողականից) հովժ կարևոր, շահեկան և օգտակար են եղել և՛ ներեցողական և թե՛ աբովյանագիտական շրջարկների համար:

18 Այս և Վերքի ստեղծագործական պատմության մանրամասն ուսումնասիրություն տե՛ս նրա «Խաչատոր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը» (Երևան, ՀՍՍՌ ԳԱ, հրատարակչություն, 1955) մենագրության մեջ:

19 Տե՛ս «Խաչատոր Աբովյանի գրական ժամրելը», Էջ 219:

20 Յակոբ Օշական, Զուգակշիր արևապահ և արևմտահար գրականութեան, Պեյրութ, Համագայլինի Վահե Սէթեան տպարան 1999, Էջ 92:

21 Եղիշե Զարենց, «Դեպի լառը Մասիս», Երկերի ժողովածու, Երևան ՀՍՍՀ ԳԱ, հրատարակչություն 1968, հատոր 4-րդ, Էջ 219:

օրինակ, այս տպագրությանը նախորդող հրատարակության մեջ չափածոյի էին տողատվել, վերականգնել է պարբերությունները, հավելել կազմողների զանցումները, հանել նույն կազմողների տարբեր տեսակի միջամտությունները, մեկնելով աբովյանական ուղղագրությունից և կետագրությունից՝ վերականգնել նաև սրանք: Ասել է թե բնագիրը կազմելիս, Գասպարյանն իբրև բնագրի և հրատարակված տարբերակի միջնորդ, իր միշնորդության առաքելությունը տեսել է բացառապես ինքնագրի մաքոր, անաղարտ փոխանցման մեջ: Այսպիսով՝ ևս մեկ անգամ կրկնենք՝ սույն հրատարակությամբ հայտնին դարձրել նորահայտ: Հենց այս, առաջին անգամ Վերքի բնագրի նույնական հրատարակությունն է խնդրո առարկա գրքի ամենակարեռը հանձնառությունը և միաժամանակ արժեքագործությունը:

Աշխարհաբարով գեղարվեստական գրականություն ստեղծելու լեզվական դրսերումների, արտահայտությունների, որոնումների ողջ գործընթացն, այսպիսով, իր բոլոր երեսակներով ակնդետ բացվում է ընթերցողի և հետազոտող առջև, ինչն էլ Գասպարյանին իր ձեռագրագիտական-բնագրագիտական հետոզության մեջ հետևյալ եղրակացության է հանգեցնում. «Փատօրէն «Վերք Հայաստանի» վեպը, լինելով աշխարհաբարի առաջին մեծածառալ գեղարտութական ստեղծագործութիւնը, ապացուցեց աշխարհաբարով գեղարտութական տեքստ ստեղծելու հնարաւորութիւնը»<sup>22</sup> (ընդգծումը՝ Գուլգեն Գասպարյանի):

Ահա այսպես, հետեւելով Վերքի բնագրին, նկատվում է, թե ինչպես է Աբովյանը խոսակցական լեզվից գոյափորել գրական լեզվի այն հիմքը, որ ետարովյանական շրջանում աշխարհաբարի հաստատման և բյուրեղացման հիմքն էր լինելու: Նկատում ենք բնագրի երկու շերտերի՝ «առավելագույն հաղորդակցելի» և «առավելագույն գեղարվեստական»<sup>23</sup>-ի պարզապես վիրտուոզ համադրությունն արտվյանական համագրում, նկատում չափածո հատվածների կառուցման ընդգծված պատճառականությունը<sup>24</sup>, կազմողի մեկնաբանություններով ամբողջապես պատկերացնում գրողի ուղղագրության, կետագրության մասնահատկությունները:

Գասպարյանն իր բնագրագիտական-ձեռագրագիտական ներածական-ուսումնասիրությունն ափարտում է Վերքի ինքնագրերի մանրամասն ներկայացում-նկարագրությամբ:

Իբրև ամփոփում-եղրակացություն կրկնենք, որ Վերքի սույն հրատարակությունը կարեռ և չափազանց շահեկան ձեռքբերում է:

22 Տե՛ս «Վերք Հայաստանի» Աերկա հրատարակությունը, Էջ 6:

23 Նույն տեղում, Էջ 8:

24 Գասպարյանն այս հանգամանքը իր Աերածական-ուսումնասիրության մեջ մեկնաբանում է կարելի մանրամասնություններով, տե՛ս Էջ 10-11:

## ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա.

Ազգային գաղափարաբանության, իմացական մտքի, մշակութաբանաւական-գեղագիտական պատմության համապատկերում 19-րդ դարի 70-90-ական թվականները հատկանշվում են Գրիգոր Արծրունի (1845-1892) երևույթով: Հայ հոգեոր պատմության հոլովույթում նա այն կիզակետն էր, որ պատմական բախտորոշ ժամանակաշրջանում ազգային իրականության մեջ վերջնականապես ձևավորեց և ամրագրեց ազատական թեր, դարձավ նոր մտայնության գաղափարախոս, կառուցողական ազդակներ հաղորդեց հայ հասարակական-քաղաքական կյանքին և վերջապես՝ հիմնադրեց և շուրջ քսան տարի (1871-1892) խմբագրեց նշանավոր «Մշակը» հայ հոգեոր իմացական կյանքի էութենական դրսեւորումներից մեկը:

Արծրունու երևույթականությունը (Փենոմենալիզմը) հատկանշվում է ոչ միայն ականավոր հրապարակախոս, տնտեսագետ, քաղաքականագետ, մշակութաբան, գեղագետ և քննադատ լինելու հանգամանքով, այլև մի ամբողջ ժամանակաշրջանի տիրապետող մտայնություններից մեկի անձնավորած կրողը լինելու իրողությամբ, երբ կյանքը, իրականության հասարակական-ընկերվարական հարաբերությունների բնույթը, պատմական հեռանկարի ուղղորդվածությունը գալիս հանգուցվում էին նրա անվանը: Հիշենք Շիրվանզադեի «Կյանքի բովից» հուշագրության ազատամիտի և պահպանողականի հանդիպման դրվագը. «Եղ չեղափ, հայ մարդը կամ մեկի կողմը պիտի լինի, կամ մյուսի, դրանից դուրս հավատ չկա: Ես քեզ խորհուրդ եմ տալիս Արծրունու բանակին դրվել: Արծրունին մեր ժամանակի մարդարեն է: Բաֆֆին էլ նրա կշտին»<sup>1</sup>: Ժամանակի մարդարեն լինելու հանգամանքի գիտակցությունը, այսպես կոչված «միջին հայի» տեսանկյամբ, մատնանշում է Արծրունու ընդհանրական բնույթը՝ ժամանակաշրջանի իմացական-հոգեոր կյանքի բոլոր դրսեւորումներում: Հենց սա էր, որ Շիրվանզադեին լիիրավ հնարավորություն էր ընձեռում նկատելու, թե ապագայում «որքան խիստ լինի քո քննադատը, նա չէ կարող քո երկար տարիների աշխատության մեջ չգտնել բուն գոհարը և իր արժանավոր տեղը տալ ազգի թանգարանում»<sup>2</sup>: Անշուշտ «ազգի թանգարանում» Արծրունու «գոհարը» ենթագրվում է հատկապես «Մշակի» էջերում լույս տեսած գրականությամբ, որը ազատական գաղափարաբանության ազդակներով էր պայմանավորված: Ի շարս հասարակական-քաղաքական, ընկերվարական, ազգային կյանքի բազում և բազմաբնույթ խնդիրների, որ Արծրունին և մշակականները (իրեւ հոսանք, մտայնություն) անդրադառնում, քարոզում ու ամրագրում էին ժողովրդի հոգեոր կյանքում, բնականաբար անմասն չէր մնում

1 Շիրվանզադե, ԵԺ, հատ. 5, 1961, էջ 103:

2 Շիրվանզադե, ԵԺ, հատ. 9, էջ 462:

մշակութաբանական դրսեորման բոլոր արտահայտությունները՝ գեղագիտություն, քննադատություն և իշարկե, գրականություն։ Այստեղ է, որ Արծրունու գաղափարաբան-հրապարակագիր երևութականությունը հայ գրականության պատմական ընթացքում գոյավորեց և ամրագրեց նոր ժամանակաշրջանի համար արտաքուստ պարագոքսալ գրական կենսոլորտ։ Տասնիններորդ դարի յոթանասունական թվականներից արդեն ընդնշմարվում էր հայ գրականության լիակատար ազատագրումը լրացական առարկայական տարբեր հայտանիշներից՝ այսպես կոչված օգտապաշտական նկրտումներով գրականությանը համակցած գիտական-հրապարակախոսական-քարոզարանային շերտերից։ Ազգային կյանքի հոգեոր զարթոնքը, մտքի կազմակերպվածության վերջնական ձևավորումը գրականությանը հնարավորություն էին ընձեռել բացառապես պարփակելու ինքնիշխան չափումներում և հանկարծ գաղափարաբանության պահպանողական և ազատական թեկրի բախումը գրականության պատմության կիզակետ է ներբերում «զառածման» հերթական դրսեորումը, երբ բանաստեղծությունն ու պատմվածքը, վեպն ու թատերգությունն ընդամենը այս կամ այն գաղափարաբանության ածանցյալներից են, դրանց զուտ գեղարվեստական փաստարկման փորձերից։ Սա էր Արծրունու ժամանակի գրական կենսոլորտի պարագոքսը, որի լինելիությունը պատճառաբանվում էր հրապարակագիր-գաղափարաբանի գեղագիտական հայեցությամբ։ Պատահական չէ, որ «Մշակի» արծրունիական քսանամյա ուղին հատկանշվում է «ածանցյալ» գրականությամբ՝ հետեղական ու սկզբունքային։ Արծրունու գաղափարների համակարգի գեներացիան գեղարվեստական գրականության տիրույթներում համընկավ Ռաֆֆու ստեղծագործական բյուրեղացմանը և «Մշակի» գրականությունը, նամանավանդ արձակը պայմանավորվեց հայ գրականության դասականի առկայությամբ։ Այս առումով և Արծրունու միջնորդավորված «Մշակի» դերը վիպաստեղծության, ժամրի հանգրվանային բյուրեղացման պարագային բարերար-արարողական էր, քանի որ բացարձակ գաղափարաբանության ջատագովների կառուցողական փոխգիծումը (բառի պատմահոգեբանական իմաստով՝ 1877-1878-ի ոռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի ամբողջական նյութականացումը՝ ազատական գաղափարաբանությանը հրապարակախոսության ասպարեզում միահեծանության հնարավորություններ էին ընձեռում) գիտակցված էր այն իրողությամբ, որ արվեստի հրամայականով գրականություն դարձած գաղափարները գերիմնդիրների իրականացման խորքին առավելագույն արդյունավետություն են հանդես բերում։ Այստեղ էր, որ Ռաֆֆի-Արծրունի գաղափարների և սկզբունքների համապատասխանությունը հայ վեպի պատմական հետագծում ունեցավ ժամրի վերջնական հաստատագրման ուժ, երբ Ռաֆֆին գրականության «զառածումը» խափանեց և «Մշակ» դարձավ ժամանակի վեպի օրենսդիր։ «Զալալեղինի» հրապարակումը ժամրի սահմաններ էր ներբերում բանարվեստի, կառուցվածքի լիակատար գրսեորում, գոյավորում էր վիպագրության չափանիշների նախադեպ։ Այս առումով «Մշակի» արձակը վեպի պատմության համապատկերում առարկայար կառուցողական-հանգրվանային էր ժամրի ձևաբանության, կիրարկումի, հնարավորությունների ողջ կարելիությունը գրական ընթացում ստեղծագոր-

ծական իրացումների առումներով։ Հայ վեպի պատմական պոետիկայում Արձրունու այս «միջնորդավոր» բարերարությունը (Արծրունի-Շաֆֆի հակասությունները, «բախումն») ու հեռացումը ժանրի պատմության համար կրավորական-պարագայական են) ոչ միայն ականավոր հրապարակագիր-գաղափարախոսի գրականության դերի և նշանակության՝ իր հայեցության և գաղափարների համակարգում, կարևորության ցուցանիշն է, այլև այն «գոհարը», որ նամատուցանել է հայ գրականությանը, մասնավորապես վիպագրությանը։

Գրիգոր Արծրունու գաղափարների ուղղորդվածությունն ու Շաֆֆու գրականության ոստումը «Մշակի» շուրջ ստեղծեցին գեղարվեստական արձակի ուրույն դպրոց՝ Գ. Չուբար, Ս. Եղիազարյանց, Հ. Տեր-Գրիգորյան, Գ. Պապյանն, այլք, որոնք, առավել կամ պակաս հաջողությամբ, և ազատականների գաղափարաբանի տեսակետներն ու սկզբունքներն էին փոխակերպում պատմվածքի, նորավեպի, վեպի և յուրօրինակ «մանրամասնում» էին Շաֆֆու հղացքները, նրա շուրջը բաղհյուսելով դասական էպիգոնության մի համաստեղություն<sup>3</sup>։ Այսպիսով, գժվար չէ փաստել, որ Գրիգոր Արծրունու գործունեությունը, «Մշակի» ելակետային սկզբունքներն ու մոտեցումները բարերար-կառուցողական էին գրականության, ի մասնավորի՝ գեղարվեստական արձակի համար, եթե սրան հավելենք նաև այն հանգամանքը, որ ազատականների գաղափարները ունիվերսալ էր իր բնույթով (Փրանսիական հնցիկոպեգիստների հայկական «տեղայնացրած» տեսակը), հոգեոր կյանքում անդրադարձումներում նրա գրչեց գրեթե ոչինչ չէր վրիպում, հրաշալի հրապարակախոս էր՝ գրելու անուրանալի ձիրքով, բանավիճողի և պամֆլետիստի ուրույն շնորհքով, ապա բնական է, որ չէր կարող զանցառել գրականությամբ զբաղվելու գայթակղությունը, ուրը, անշուշտ, պիտի խարսխվեր միայն ու միայն գրականության «զառածումի» տիրույթներում, իբրև հայ իմացական կյանքի երևույթներից մեկի շեղում, զարտուղություն։ Սակայն մինչ Արծրունու գրական ժառանգության, վիպագրության քննությունը անհրաժեշտ է համառոտ անդրադառնալ նրա տեսական-գեղագիտական ըմբռնումներին։ Անշուշտ խնդիրը տակավին 1890-ական թվականներից ամենայն մանրամասնությամբ անդրադարձվել և վերլուծվել է գրականագիտության կողմից, սակայն, կարծում եմ, տեղին է մեկ անգամ ևս հակիրճ անդրադառնալ գրանց, նամանավանդ, որ այն հնարավորություն է ընձեռում մեկնաբանելու նաև հեղինակի վեպի, պայմանական անվանենք, տեսության բացահայտմանը և սատարում է նրա գրական ժառանգության գաղափարների համակարգի իմացարբանական-աշխարհայցքային կերպի մեկնաբանությանը։

Ազգային հոգեոր պատմության, մշակութաբանական էութենության շատ ու շատ հիմերի նկատմամբ ունեցած քննական, ինքնատիպ «բացասաման» սկզբունքը տարածականացվել էր նաև գրականության վրա։ Այս պարագային առաջադրվել էր «Մենք գրականություն չունենք»<sup>4</sup> կտրուկ սահմանումը, որի մանրամասնումը նրան հնարավորություն էր ընձեռում նորոգության գերխն-

3 Սրանց մասին մանրամասն տե՛ս «Հայ նոր գրականության պատմության» երրորդ հատորի «Այլ արձակագիրներ» գլուխ։

4 Տե՛ս «Գրիգոր Արծրունու աշխատությունները», Թիֆլիս, 1904, հո. I, էջ 122։

գիրազափարի գեղարվեստական ուղղորդվածությունը մատնանշելուն, որը պիտի իրականանար հետևյալ պայմանների բավարարումով.

ա. – գրականությունը պիտի նորոգի ազգի բարքն ու վարքը,

բ. – ժողովրդի հոգեոր կենսոլորտում հաստատի նոր օգտապաշտական ուղղություն,

գ. – ոչ միայն ցույց տա, թե «մենք ինչ ենք եղել և ինչ ենք արել», այլև «թե մենք ինչ պետք է անենք» (նույն տեղում, էջ 141): Պատմական հեռանկարի տեսանկյունից ազատականության գաղափարախոսը հույժ կարևորում էր «ինտելեկտուալ գործոննը», որը նորոգության, ազգային գերխնդիրները լուծելու հիմնական ներուժն էր: Վիրջինս առարկայացնելու գործընթացում գրողը՝ «ժողովրդի մտավոր կյանքի հարկավորությունների և պահանջմունքների արտահայտություննը», (իր բնորոշումն է Գր. Հ.) առաքելություն ունի վերափոխելու, նորովի կազմակերպելու ազգային կյանքը, բարեշրջելու հասարակություննը: Սա էր այն ելակետային տեսանկյունը, որը, ըստ Արծրունու, պետք է դառնար գեղարվեստական ցանկացած ստեղծագործության հանկերգ:

Նրա գրապահտական հայեցությունը գրականությանը առաջադրում էր «անձնաքննական եղանակը», որը հատկապես վեպի ժանրում ըստ ամենայնի հնարավորություններ էր ընձեռում ընդգրկելու իրականության ողջ երփնագիրը, խարազանելու ընկերվարական-բարոյաբանական, էթնոհոգեբանական այն գրսելորումները, որոնք խոչընդոտում են համընդհանուր առաջընթացին, մատնանշելու արդիականացվելու կարելիությունները, պատասխանելու իրականությանը զբաղեցնող հարցերին: Եվ հենց իրականության կարեռագույն հանդույցների հարափոխության օպերատիվ արձագանքումը մի կողմից, ժամանակաշրջանում մտավորականի առաքելության և կոչման վերհանումը իբրև անանց իրողություն մյուս կողմից, Գրիգոր Արծրունուն ստիպում էին ժամանակ առ ժամանակ հրապարակախոս-գաղափարաբանի տարերքից անցում կատարելու դեպի գրականություն՝ հրապարակախոսական պատկերներից ու պատմվածքներից սկսելով, միջնորդավորելով վիպակով և կյանքի մայրամուտին, որը ժամանակագրությամբ համընկավ նաև ազգային-քաղաքական կյանքի, գաղափարաբանության նոր փուլին (կուսակցություններ, «Մշակի» ազատականության փոխաձևություն, տրոհում, վեպ): Գեղարվեստական արձակում այս փորձը անխառն «զառածված գրականություն» էր, որ, կարծես թե, Արծրունու հայեցության, գաղափարական համակարգի այլասացությունն էր: Եվ թե 1876-ին «Մշակում» տպագրած «Մի պատկեր» վերտառությամբ փոքր արձակ ստեղծագործությունը (անշուշտ «փոքր արձակ» գեղարվեստական երկ մեծ վերապահությամբ, քանի որ այն ըստ էության ընդամենը հրապարակախոսության կաղապարներից ազատ թուիչք էր, որը այս փաղանգի գործերում ամենագրականացրածն է), թե 1878-ին լույս տեսած «Այստեղ և այնտեղ» վեպի-կը և թե 1891-ին հրատարակած «Եվելինա» վեպը, այս երկուսը ևս «Մշակի» էջերում, «անձնաքննական սկզբունքի» կիրարկումներից էին՝ իրականության հարուցած կոնկրետ խնդիրների պատասխաններ, ազգային կյանքը ուղղորդելու մատնանշումներ: Եթե «Մի պատկերը» ըստ էության հայկական հարցի նկատմամբ Արծրունու տեսանկյունն էր ցուցանում, իսկ «Այստեղ և այնտեղը»

փաստորեն իրականացնում էր «խարազանող-այպանող» մշակական սկզբունքը՝ ազգային կյանքի հոռի դրսերումները բալասանելու նպատակամիտությամբ, ապա «Եվլինան» ուրվագրում էր մտավորականի այն կերպը, որ պիտի կողմնորոշիչ դառնար գերինդիրներն իրականացնելիս:

## Բ.

Տասնիններորդ դարի 70-80-ականների հայ վեպը մի կողմից լիովին ձևավորել և ամրագրել էր ժանրի կառույցների հարացույցը՝ արկածային, դիտակտիկ, պատմական, բարոյախոսական, գաղափարային-քարոզարանային, լուսավորական, ազգագրական-բարքագրական, ոստիկանական, այսպես կոչված հոգեբանական և այլն, մյուս կողմից՝ ձեռնամուխ էր եղել ներժանրային ցարդ չկիրառված ձերի և կաղապարների, գեղարվեստական-գեղագիտական նորագույն հայեցությունների և հանգանակների կիրարկմանը, նախաշեմին էր 19-րդ դարի 90-ական-20-ի սկզբի վեպի իրագործումը՝ ձևաբանությամբ, պոետիկայով, գաղափարների համակարգով:

Գրիգոր Արծրունու վիպագրությունը ժամանակագրորեն համընկավ հայ վեպի պատմության այս բուռն, կառուցողական շրջանին և, բնականաբար, այս պարագային առաջադրվում են մի շարք առարկայական հարցեր և խնդիրներ, ինչպես և որքանո՞վ էր նշանավոր գաղափարախոսի, քննադատի գեղարվեստական իրագործումները ներգրավում ժանրի հութենական հիմներին թե՛ իրեւ իրագործում և թե՛ ժանրի կերպի պատմական ընթացականությունը պայմանավորող իրողություն։ Հանրահայտ է, որ նրա տեսական-գեղագիտական աշխատություններում, մասնավորաբար՝ թատերգության առիթով (Սունդուկյան), հստակ սահմանվել և տարրորշվել են ինչպես գեղարվեստական տիպի կարգը, այնպես էլ գրական գպրոցների (վիպագաշտություն, իրապաշտություն) և սրա զուգահեռներում նաև՝ ոռմանտիկական և ռեալիստական վեպի մասնահատկությունները։ Ինքնաքնննության սկզբունքի ելակետայնությունը պարտադրում էր գեղարվեստական ստեղծագործության առհասարակ, և նամանավանդ վեպի, որ ազտական գաղափարաբանության տեսաբանի հայեցության համարնագրում իր գեղագիտական և հասարակական կարեոր նշանակության գործառնություններով գտնվում էր ժանրերի երանգապանակի բարձրակետում, արդիականության սկզբունքային գերարծեքայնությունը։ Վեպը, ժամանակակից վեպը կամ պետք է ազգային կյանքի կենսորութիւն (հասարակական, ընկերվարական, մշակութաբանական, գեղագիտական) ընձյուղի նոր գաղափարներ և կամ այլանի առաջընթացը խոչընդոտող, խաթարող իրողությունները։ Արծրունու տեսական-քննադատական համակարգի այս իմպերտիվը՝ «ժամանակակակից ոռմանը կամ գրգռում է նոր մտքեր կամ մտրակում է վնասակար երեսույթները» սահմանումով, թե՛ գրական ընթացի մեկնաբանության և արժեորման ելակետն էր, թե՛ ստեղծագործության չափանիշի որոշարկումը։ Պատահական չէ, որ «Մշակի» էջերում ամրագրվեց «նոր մտքեր գրգռող», «վնասակար երեսույթները մտրակող» գրականություն, որտեղ շատ հաճախ գեղարվեստա-

կանության կրավորականության գնով պահպանում և անկեզ էին պահում Արծրունու «իմպերատիվը»: Սա ներառում էր Հայկականության բոլոր դրսեռումներն անխստիր՝ ազգային-ազատագրական գործնթացի ուղղորդվածությունից մինչև կենցաղի նորոգություն, արդի աշխարհի հեռանկարային կշռույթներին ներդաշնակվելուց մինչև բարքերում ամբարված, ազատականների համար անհարիր, արքետիպների խմբագրում, քանդում և վերջապես՝ պահպանողականության դեմ պերմանենտ պայքար՝ գաղափարաբանական ու մշակութաբանական բոլոր կարելիություններով:

1877-1878 թվականները (ոռուս-թուրքական պատերազմ, Հայկական հարցի առկայություն) «Մշակի» և բնականաբար Արծրունու պարագային վճռական էին վեպի ընկալման, տեսության առումով: Նրա առաջարկած «իմպերատիվը» վերջնականապես փաստարկվեց և առկայվեց Ռաֆֆու «Ուկի աքաղաղով», ապա և «Ճալալեդդինով»: Նախ՝ առաջինի «Վնասակար երևույթների» պատկերագրումը, Հետո՝ երկրորդի «Նոր մտքերի գրգռումը» իրականացնող ստեղծաբանական կանգնումը հայ գրականության համապատկեր ներբերեցին ազգային կյանքի բարեփոխության հասունացած լինելու դոմինանտը, ընտրության առջև կանգնած գոյության և գոյաբանության խորքը, որին զուգադրվել էր Հայության պատմական հեռանկարում իր տեղն ունենալու բավականին բարդ, հանգուցված և խճողված խնդիրը՝ Հայկական հարցն իր բոլոր չափումներով: Թե՛ ազատականները, թե՛ պահպանողականները, հասարակական-մշակութային կյանքը կազմակերպող-համականչող բոլոր կողմերն առհասարակ գիտակցում էին այն օրախնդիր-ճակատագրական պրկումը, որից կը կել էր հայ իրականությունը և այդ վիճակից թոթափիկը արդեն զանցառում էր օրախնդրությունը՝ միտելով ապագա և հեռանկար: Բնականաբար անհնար էր, որ Արծրունու իմացական-ստեղծաբանական տարերքը անմասն մնար այս բախտորոշ կիզումի նույնիսկ գեղարվեստական անդրադարձումից: Արդյունքը 1878-ին «Մշակում» լույս տեսած «Այնտեղ և այստեղ»-ն էր՝ ազգային կենսոլորտի այն տարրի ներառումը գրականություն, որին էր վերապահված ապագայի և հեռանկարի գոյափորումն ու հաստատագրումը: Առաջին վիպական գրությանը հաջորդած ընդհատվածությունը, որ մեկ տասնամյակից ավելի տևեց, մատնանշում է Արծրունու վիպաստեղծության օրինաչափությունը: «Եվելինան» հար և նման «Այնտեղ և այստեղի» արդյունք էր ազգային կյանքի պրկման որակական նոր դրսեռումն: Հետևաբար, կարելի է եղարկացնել, որ Արծրունու՝ վեպի ժամանությունում առաջարձությունները արտածված են հայ իրականության հանգրվանային իրադարձություններին գեղարվեստական փաստարկում հանգուցելու նպատակամիտությամբ, որտեղ գեղարվեստական-գեղագիտական հայեցություններն ու սկզբունքները «անձնաքննություն», «մտրակող ուղղություն», «վեպի ժամանակակից կառույցի իրագործում», հանգանակները առկայվում էին, փաստորեն գործնականացնում տեսությունը:

1873 թվականի «Մշակի» ութ, ինը, տասը և տասնմեկերորդ համարներում լույս տեսավ Գրիգոր Արծրունու «Այնտեղ և այստեղ» ստեղծագործությունը, որ տպագրվել էր «Ուսանողական տպագրություններ» ենթավերնագրով: Տարիներ հետո Արծրունու համախոհ, գործընկեր և կենսագիր Լեոն այսպես է

ներկայացնում երկի ստեղծման և հրատարակման ագդակները. «Արձրունին էլ փորձել է իր ուժերը վիպագրության մեջ: Եվ ինչ: Լինելով իրեւ հրապարակախոս, վերին աստիճանի զգայուն դեպի կյանքի հարցերը, ըմբռնելով օրվա պահանջը և այդ պահանջին համապատասխանող խոսքի անհրաժեշտությունը, նա միանգամայն կորցնում է այդ հոտառությունը վիպագրության մեջ: Նույն 1878 թվականի սկզբում, երբ օդի մեջ այնքան խոշոր հարցեր էին զգացվում, երբ հայության ճակատագիրը, այնքան դառը հարվածների ենթարկվելուց հետո, կարծես, սկսում էր գտնել իր արդար վճիռը, Արձրունին «Մշակի» մեջ տպագրեց իր «Այնտեղ և այստեղ» վիպակը: Նյութը վերցրած էր ուսանողական կյանքից<sup>5</sup>: Դժվար չէ նկատել ականավոր պատմաբանի, Արձրունու գործունեության անմիջական վկայի փոքր-ինչ տարակուսանքն ու շփոթմունքը, որ ստիպված էր արձանագրել ուղղափառ գաղափարաբանի այսօրինակ «շեղումը», թեև «իրեւ վիպագրական փորձ՝ զա նույնիսկ նորություն էր մեր գրականության մեջ. առաջին անգամն էր մեզանում հրատարակվում մերկացնող վիպակ ուսանողական կյանքից: Բայց նյութը անծանոթ չէր, նորություն չէր կազմում, քանի որ «Մշակի» ընթերցողները տարիների ընթացքում տեսել էին Արձրունու խիստ հարձակումները գաղափարազուրկ ուսանողության վրա: Ինչ ասել կուզի, որ Արձրունին այդ գրվածքի մեջ հավատարիմ է իր հրապարակախոսությանը: Բայց զուտ մշակական անվանել «Այնտեղ և Այստեղ»-ը կարելի է միայն մի հայտնի չափով: Համենայն դեպս, ուսանողական բարոյականության և անբարոյականության հարցը մշակական ծրագրի մի մասնավոր, երկրորդական կողմն է: «Մշակի» խոշոր, աշագին գործը թուրքահայերի հարցն էր»<sup>6</sup>: Անկախ մատնանշած վերապահումներից, արդյոք Արձրունին շեղվել էր մշակականությունից, ասել է թե՝ իրենից: Այս ծրագրի, որ Լեոյի համատեքստում հավասարազոր է ազգային նորոգության գերխնդրի իրականացմանը, որն առաջարկել և քարոզում էր Արձրունին իր համախոհների հետ, մասնավոր կողմի գեղարվեստական իրացմամբ նա կրկին մոտենում էր «Մշակի» խոշոր, «ահագին» գործի առաքելությանը, այն ապավինությամբ, որ մշակականության ձգտումի իրագործողները՝ Ռաֆֆու «Վարդանները, Ալանները, Կարոնները, Սարհատները» հայ ուսանողությունից պիտի մերվեն և նրանց բարքերի դույզն-ինչ խոտորումն, անապականությունն անպայման պիտի այպանվի, ցուցանվի, բարոյական դատաստանի առջև դրվի: Արձրունին հասկանում էր, որ իր սերունդը, ամրագրած գաղափարաբանությունը իր գործն արդեն ավարտել էր՝ ազգային խնդրի միջազգայնացմամբ, Հայկական հարցի առկայությամբ: Հաջորդները պիտի հավելեն նրա մատնանշած իմացական հերկը նոր, համապատասխան ակուներով, որը սկսվում է բարքերից, բարոյական ու համակեցական անաղարտությունից: Սա էր «Այնտեղ և այստեղի» ստեղծաբանական գերակա ազգակը:

Ուսանողական կյանքի ընդհանրական երփնագիրը վիպաստեղծ տարածքում միշտ էլ եղել է կառուցողական հղացք հայ գրականության համապատ-

5 Լեո, «Գրիգոր Արծրունի», հատոր եղրորդ, «Ծրբերի ժողովածու», հատոր վեցերորդ, Երևան «Հայաստան» հրատարակչություն, 1987 թ., էջ 584:

6 Նույն տեղում:

կերում: Բնական գործընթաց, քանի որ ազգային մտավոր-իմացական ամբողջության գրականացումը պայմանավորվում էր նաև մեր իրականության այս կարևոր հատվածով: Գրիգոր Արծրունու «Այնտեղ ու այստեղը» փաստորեն, Ո. Պատկանյանի «Փառասերի» հետ հղացքի առաջին ստեղծագործական կիրարկումներից էին վեպի ժամանակագործում: Եվ թեպետ այս երկու ստեղծագործություններն էլ մեծ վերապահությամբ են տեղափորելի վեպի ձևաբանության և կառուցի սահմաններում, այնուհանդերձ իրերեւ վիպագրության կենսոլորտի նախակարապետներ քննելի են հայ դասական վեպի համապատկերում: Համենայն դեպս գրականության պատմության պայմանավորող ընթացականության խորքին դրանք ժամանի համար նախադեպեր էին:

Նշեցինք արդեն, որ «Այնտեղ և այստեղը» առաջին և արդ միակ անգամ լույս է տեսել 1878-ին «Մշակի» էջերում: Ստեղծագործության կառուցվածքը որոշակիորեն երկիրկված է՝ ձևաբանությամբ փոքր արձակ ստեղծագործություն, հղացքի պարագծով՝ վեպին հարիր հատկանիշների համակցություն՝ բազմապահայնությամբ, ընդգրկումով, ինքնավար կոլիզիաներով: Այս առումով ստեղծագործության ժամանակին պատկանելիությունը կարելի է «անցումային» համարել՝ վեպից փոքր արձակ և հակառակը: Ուշագրավ է «Այնտեղ և այստեղի» վերջաբանի նշագրությունը, որ, կարծես, երկի կառուցվածքային առանձնահատկությունն է հաստատագրում: «— Ուրեմն գրիր խնդրեմ մեր խոսսած նյութի վրա վիպասանության պես մի բան, (ընդգծումն իմն է՝ Գր. Հ.), որի մեջ հերոսներից մինը կը լինի մեր բարեկամ Սալիմյանց, իսկ մյուսը խեղճ Մարտքյանց: Հավատացնում եմ քեզ լավ դուրս կը գա...»<sup>7</sup>: Ակնհայտ է, որ գրողի ստեղծագործական գիտակցության մեջ նույնպես ժամանակին պատկանելիությունը հստակ տարրորոշված չէ, և «վիպասանության պես մի բանը» ենթարկում է վեպի և փոքր արձակի պոետիկայի «անցումային» կարգավիճակ: Եվ իրոք ուսանողության բարքագրության ամբողջական պատկերագրման հոսքերը ենթադրում են վեպի կառուցից, որը սակայն բնագրում անընդհատ կախակայվում է՝ կենտրոնանալով Սարուքյան/Սալիմյանց հակոտնյայության մանրամասներում, այս պարագային փոքր արձակի ձևաբանական դաշտի գերակայությունը աներկեա է, սակայն սա էլ իր հերթին մասնատվում է բազմաթիվ ինքնավար և ամբողջապես իրացված կոլիզիաների, կրկին կառուցվածք ներբերլով վեպի պոետիկա, և այսպես շարունակաբար: Պատահական չէ, որ միջժամանրային կազմաբանական անցումայնությունը միանշանակ է թե՛ ստեղծագործության կառուցվածքային միավորներում և թե՛ պերսոնաժների համակարգում: «Այնտեղ և այնտեղը» բաղկացած է տասնյոթ հատվածներից, որոնք ներդիր և ներփակ նորավեպեր են, ըստ այդմ համապատասխան գործառնություններով՝ ներդիրները «ինքնավար» պատումներով և կոլիզիաներով հանգուցում են ստեղծագործության ընդհանրական բարքագրության շղթանակը: Սալիմյանց-Նատալիա, Սարուքյանց-Լիզա պլանները, Սալիմյանցի և Սարուքյանցի կենսագրության շերտերը, ուսանողական կյանքի առօրեական մանրապատումները, կենցաղային զանազան նկարագրությունները, ներփակները՝ Լիզայի կոլի-

7 Գր. Արծրունի, «Այնտեղ և այստեղ», Մշակ, 1878 թ., թիվ 11: Հետպատությունները բնագրին կից փակագծերում, լրագրի համապատասխան համարի նշումներ:

զիայի հանգուցալուծումը, Սալիմյանցի, Մարուքյանցի գաղափարների բացարձակ հոսքը, պառավ տանտիրուհու և նրա գերդաստանի կենսագրության համառոտագրությունը և այլն: Պերսոնաժների համակարգում դրսևորման անընդհատ հապավումները, որոնք օշականյան բնութագրմամբ՝ առանձին մտայնություն և վեպի նյութ են, սկսովելով Սալիմյանց-Մարուքյանց բարոյաբանական բախման հանգույցում: Այս պարագային միանշանակ է, որ «Այնտեղ և այստեղի» բոլոր ստեղծաբանական սկիզբները մանրամասնում են բարոյական ընտրության գաղափարաբանություն:

Մոսկվայում ուսանող պատմողը պատահականորեն ծանոթանում է Հովհաննես Սալիմյանցի հետ, որը բազմաթիվ հայ ուսանողներից մեկն էր՝ փոքր ու մեծ հոգսերով, ուսանողական տարիների ընկերուհու պարտադիր ներկայությամբ: Սալիմյանցը պատմողին ծանոթացնում է բժշկականի ուսանող Սարգիս Մարուքյանցի հետ: Պատումային այս հանդարտ նախերգանքից հետո ստեղծագործության դիպաշարը բավականին բուռն է զարգանում: Ծանոթանալուց հետո Մարուքյանցը ամբողջ մեկ տարի խուսափում է պատմողի հետ մտերմանալուց: Այս ընթացքում Սալիմյանցը հաջողությամբ ավարտում է տարեշրջանը և փոխադրվում երրորդ կուրս, որի պատճառով էլ թիֆլիսաբնակ մեծահարուստ հայրը յուրօրինակ պարգևատրում է անում՝ մեծացնելով նրա թոշակը: Սալիմյանցն իր հոմանուհու հետ տեղափոխվում է ավելի բարեկեցիկ բնակարան: Սալիմյանցի տեղափոխվելուց հետո Մարուքյանցը անակնկալ այցելում է պատմողին՝ մտերմություն հաստատելու անթաքույց ցանկությամբ: Իր տարօրինակ պահաժամքը բացատրում է այն հանգամանքով, որ նախ՝ Սալիմյանցի կենսածկը, սկզբունքներն ու բարոյականությունը իր համար անընդունելի էր և չէր ուզում հետը որևէց շփում ունենալ, ապա՝ հայտնում է, թե ինքը Սալիմյանցի հոր որդեգիրն է և նրա միջոցներով է սովորում: Հանդիպումներից մեկի ժամանակ խոստովանում է, որ իրեն բժշկությունը բոլորովին չի հրապուրում և դա իր համար կատարյալ փորձություն է, ստիպված է ուսանել, որովհետև բարեգործ հարմար է գտել, որպեսզի ինքը բժիշկ դառնա: Պատմում է, թե իր հայրն ու Սալիմյանցի հայրը գործընկերներ են եղել և հոր մահից հետո նրա հայրը պարզապես գրպանել է իր ու մոր հասանելիքը, որից հետո ինքնակոչ խնամատար և բարեգործ է դարձել, քսանհինգ ուուրլի թոշակ նշանակել՝ պայմանով, որ միևնույն կուրսում երկու տարի չմնա, այլապես նպաստից կղրկի: Այս վիճակը՝ հորը կողոպտելը, մոր և իր ստորացումը, խորը հետք էր թողել նրա ինքնության ու հոգեբանության վրա, դարձել մուայլ, ինքնամփոփ, հոռետես: Այդ այցելությունից հետո Մարուքյանցը այլևս պատմողի մոտ չի երկում: Երկրորդ տարին էր, որ չէր կարողանում հաջորդ կուրս փոխադրվել և միայն Սալիմյանցի հորդորների չնորհիվ էր, որ բարերարից գումար էր ստանում, թեև վերջինս սպառնացել էր, եթե ևս մեկ անգամ անհաջողության մատնվի, այլևս կզրկվի օգնությունից: Մի օր էլ Սարգիսն անակնկալ տեղափոխվում է Մոսկվայի ետնախորշերից մեկը: Այդ հեռացման պատճառը անբարու և հարբեցող մթնոլորտն էր, տանտիկինը՝ մի պառավ անառակ, որդիները և դուստրը՝ Լիզավետա Խվանովան, որին Մարուքյանցը սիրահարվել էր, երեակայության մղումով՝ պարուրել իդեալական պատմուճանով: Իրականում Լի-

զան մոսկովյան շատ կանանց պես մեկ նպատակ ուներ՝ մի հարմար ամուսին որսալ և ազատվել այդ որջից: Դա բոլորը գիտեին, միայն իդեալստ Սարգիսը այն համառորեն չէր նկատում: Տնից հեռանալը Մարուքյանցին օգնեց, և նա վերջապես հաջորդ կուրս փոխադրվեց, սակայն շուտով իմացավ Լիգայի ամուսնության մասին, չհամակերպվեց այդ հարվածին, ծանր տարավ և չկարողացավ փոխադրվել չորրորդ կուրս: Սալիմյանցի հայրը նրան թոշակից զրկեց: Ընկերները որոշում են հանգանակությամբ նրան օգնել, բայց կտրականապես մերժում է: Մարուքյանցի առողջականը կտրուկ վատթարանում է, խելագարվում է, նրան հիվանդանոց են տեղափոխում: Մեկ ամսից վախճանվում է:

Սալիմյանցն ավարտում է համալսարանի իրավաբանական բաժինը: Նրա ընկերուհին, որ ուսանողական տարիներին նրան մի զավակ էր պարզեց և հանուն Սալիմյանցի համաձայնել երեխային մանկատուն հանձնել, զգայացունց տեսարաններ է ստեղծում, երբ հասկանամ է, որ Հովհաննեսը պատրաստվում է իրեն հանգիստ լքել: Պատմողը, որ ակամա այդ տեսարանի ականատեսն էր՝ տհաճությամբ հրաժեշտ է տալիս Սալիմյանցին: Մի քանի ամիս անց պատմողը նատաշային Սալիմյանցի ընկերուհուն հանդիպում է մի հավաքույթում, ուր վերջինս հարբած հայերեն երգեր էր երգում և հիշելով Սալիմյանցին լալիս ու անիծում իր բախտը: Երկու տարի անց, երբ պատմողը իր ուսանողական ընկերներից մեկի հետ վերջնականապես Թիֆլիս էր վերադարձել, փողոցում հանդիպում է Սալիմյանցին, որը վերջերս էր ամուսնացել մեծ դրամօժիտով մեկի հետ: Փաստաբան Սալիմյանցը մանկամարդ կնոջ հետ կառքից իջնում էր՝ իր ողջ տեսքով բարեկեցության և երջանկության խորհրդանիշ եղած: Դիպաշարային այս կառույցում է մանրամասն վում հայ ուսանողության ընդհանրական բարքագրությունը: «Մտրակող սկզբունքի» գաղափարախոսը բնականաբար նորմային չպիտի անդրադառնար՝ բնագրում պատմող, ուսանող Բ., սրանք ընդամենը խորք են, սևեռման առարկա էին նորմայի շեղումները՝ Սալիմյանց, Մարուքյանց, որոնց մտայնության հրապարակումը, հասարակական հնչեղություն հաղորդելը (այս պարագային «հրապարակախոսական սինդրոմը» ջարդում է գրագետի սկզբը) մոտեցնում է նշանավոր ազատականի գաղափարի ամրակայմանն ու գործնականությանը:

Ստեղծագործության գաղափարագրական առաջնայնությունը պայմանավորել է պոետիկայի մասնահատկությունները, բնագիրը կազմակերպող բաղկացուցիչների դրսելորումները, կերպարումի գործընթացը: Կազմաբանական տիրապետողները դիմանկարներն ու երկխոսություններն են, որոնք, ըստ էության, երկի գուգագիրը կենտրոնների՝ Սալիմյանցի և Մարուքյանցի գաղափարների համակարգերի լրացականացնող միջարկություններ են՝ ընթերագրված նորմայի տեսանկյունով այպանելու, քննադատելու, հարցումներին պատասխանելու, արժեկորելու հոսքերով: Հատկանշական է այն իրողությունը, որ Սալիմյանցը բնագրում բացահայտվում է բացառապես դիմանկարի տիրույթներում: Ահավասիկ՝ «Սալիմյանց պատկանում էր ուսանողների այն դասին, որոնք կարող են համարվել հարուստ ուսանողներ... Որպես մարդ Սալիմյանց պատկանում էր այն մարդիկների կարգին, որոնք նայում են կյանքի վրա բուն գործնական կետից: Այդ տեսակ մարդիկ գիտեն ապրել, գիտեն օգուտ քաղել կյանքից, նոքա

ապրում են ճիշդ կերպով, ամեն բան անում են իր ժամանակին, ամեն քայլ հաշված ունեն: ...Նա այն մարդիկների թվին էր պատկանում, որոնց մասին կարելի է ասել թե նոքա ապրել գիտեն, թե նոքա մարդ կը գառնան: Այդ տեսակ մարդիկ երեք չեն ուրախանում կյանքի մեջ, բայց և ոչինչ չէ կարող նրանց տիրեցնել: Նոքա ապրում են իրանց համար, և օգուտ են քաղում կյանքից այնքան, որքան հարկավոր է: Ոչինչ չէ կարող նրանց հափշտակել, ուրիշի կողմից ոչինչ չէ կարող նրանց վհատեցնել» (թիվ 8): Իսկ Մարուքյանցը՝ երկխոսությունների միջոցով: Այս պարագային արդեն Սալիմյանց-Մարուքյանց գաղափարաբանական հակոտնյայությունը, որ ստեղծագործության կիզակետն է, երևան է գալիս արդեն առարկայական նկարագրության սահմաններում: Հավասարակշիռ և հաշվենկատ Հովհաննեսին հակառակ, Սարգիսը հախուռն էր, արագ ինքնատիրապետումը կորցնող, նյարդային, գուտ իդեալիստ:

Սարուքյանց-Սալիմյանց հակոտնյայությունը տարածականացվում է այս երկու երիտասարդ ուսանողների կենսաձեկի, բարոյաբանության, արարքի և կեցության սկզբունքների, իրականության ըմբռնումների դրսերումներում՝ միտելով ստեղծագործության գաղափարների համակարգը: Սալիմյանցի ուսցինալիստական և դրապաշտական սկզբունքների բախումը Մարուքյանցի այսպես կոչված «գուեհիկ մատերիալիզմ» անտրոպոլոգիայի և շարժման բացարձակության փիլիսոփայական հայեցությանը, ընդ որում երկուսն էլ ծայրահեղ դրսերումներով, վեպի կառուցվածք են ներբերել յուրօրինակ գոյաբանական բանավեճ, որի տրամաբանությունը հանգեցնում է մեկի ֆիզիկական կործանմանը և մյուսի բարոյական ուժացմանը: Սա է Արծրունու ստեղծագործության էութենական ցուցադրանքը: Արգասավոր հրապարակախոս-ազատականը այս հանգույցում էր նկատում հայ հասարակական-իմացական կյանքին սպառնող վտանգը, ուրեմն և «մշակական այպանող բացասումի» տարերքով փորձում դրա դեմն առնել: Գաղափարաբանական հակոտնյայությունը, կոլիգիան «Այնտեղ և այստեղի» կառուցվածքում բյուրեղացնում է սիրո, զգացմունքի կենտրոնացումներում՝ վերջիվերջո դառնալով նաև կոլիգիաների հանգուցալում: Սարգիս Մարուքյանցի զգացմունքը Լիզավետա Խվանովնայի նկատմամբ բնույթով ծայրահեղ-Հիպերտրոֆիկ է, կյանքից անջրպետված, գերիղեալական: Այս «Միզանտրոպը» (Սալիմյանցի բնութագրումն է և բավականին առարկայական, քանի որ ինքն իրեն մենակեցության դատապարտած Սարգիսը հաղորդակցվում է՝ բառի գործունեական իմաստով, միմիայն իր «չստացված կյանքը» ցուցանելու առումով) բյուխներական ագնոստիկը, որ ավարտուն ինֆանտիլություն էր. «...Երկրագունուր, որի վրա մենք ապրում ենք ուրիշ բան չէ, եթե ոչ մի կաթիլ ջուր որի մեջ պտտում են ինֆուզորիաները, և հենց այդ կաթիլ ջուրը կը ցամաքի, նրա բոլոր բնակիչներն էլ կոչնչանան: Սրանից հետո արժե ապրել, դա խենդություն չէ. լավ չէ արդյոք իսկույն սպանել իրան... Այսպես ապրել հիմարություն է... մենք ուրեմն ուրիշ բան չենք եթե ոչ ողորմելի ինֆուզորիներ...» (թիվ 1), հանկարծ զգացմունքի շնորհիվ վերակենդանության նշաններ է ցույց տալիս: Սակայն վերակենդանության, գործունեության սուբյեկտը ֆիկցիա էր, խարկանք: Պատմողի, բարեկամ ուսանողների բազմաթիվ փաստարկումներն ու հորդորները արդյունք չեն տալիս:

Արծրունին կարծես թե մատնանշում է պարունակողի և պարունակյալի խաթարումը, դիսոնանսը: Մարուքյանցը գործունյա չէ, ոչինչ չի անում «կեղտոտ շրջանի մեջ հայտնված ծամարիտ ծաղիկի» (իր բնութագրումն է) ազատագրման համար: Ավելին, Լիզայի ենթադրյալ արարքը նրա հիվանդ, անդործունյա արժանապատվության, ինքնասիրության վերջնական պարտությունն էր: Ուշագրավ է, որ Մարգիս Մարուքյանցը «Էվելինայի» հերոսի «ձախողված» գուգադրությունն է: «Էվելինայի» ուսանողը գտնում է փրկության և ինքնահաղթահարման ուղին:

Հովհաննես Սալիմյանցի ծայրահեղ հաշվենկատությունը և ռացիոնալիզմը և նատալիայից ունեցած երեխային մանկատուն հանձնելիս և թե կնոջը լքելիս, Մարուքյանցի մահվան համար միայն Մարգիսին մեղադրելիս ավարտուն է դարձնում բարոյապես ուժացած անհատի իրողությունը: Դյուրինությամբ երեխա և կին լքող մտավորականը Արծրունու գերխնդիրներն իրականացնելու ոչ մի հույս չէր թողնում, ուստի անկումների երփնագիր ուրվագրելը նրա համար արդիական էր 70-ականների վերջի 80-ականների սկզբի հայ կյանքը ուղղորդելու համար:

«Այնտեղ ու այստեղի» հրատարակությունից տասներկու տարի անց Արծրունին կրկին անդրադարձավ նույն հղացքին՝ այս անգամ ծավալուն ստեղծագործությամբ: 1891 թվականին «Մշակում», այնուհետև առանձին գրքով, լույս տեսավ «Էվելինա» վեպը: Նշանավոր հրապարակախոս-ազատականության մրցակալի վերջին գեղարվեստական երկը: Երիտասարդությունը, որ Արծրունու հայեցության մեջ ազգային-պատմական հեռանկարի իմաստով միշտ էլ անկյունաքարային էր, գործունեության մայրամուտին, առավելաբար էր ընթերագրվում ազգային գերխնդիրները կարելիացնելու խորքին: Տակավին 1870-ականներին առաջադրած «Ընդհանուրի օգուտի մասին մտածողը իրավունք չունի մտածել և իր անձնական բախտավորության վրա» կամ «Մինչև անգամ մի կնոջ սրտի գրաված սերը պետք է գոհվի ընդհանրության օգուտի համար»<sup>8</sup> տիպի հանգանակները գործունեության ավարտական փուլում հատկապես բյուրեղացան, դարձան յուրօրինակ ուղերձ ու կտակ՝ ապագա իմացական կենսողութի համար, որի իրացման, հաստատագրման լավագույն ձևն անշուշտ գրականությունն էր, նամանավանդ վեպը: Իրողություն, որ հայ իրականության մեջ բազմիցս հաստատվել էր: Նամանավանդ հետահայաց հայացքը սեփական կենսագրության ելեէջներին գաղափարախոս-հրապարակախոսի ստեղծագործական երևակայության մեջ ամբողջացնում էին ազգային գործիչներն կերպը, որը պետք է նվիրաբերվեր հանուրի բարօրության համար: «Էվելինայի» գոյագորման համար պակաս կարեռ չէին նաև այն առարկայական իրողությունները, որոնք երևան էին եկել 19-րդ դարի 90-ականների սկզբներին: Արծրունին արգեն գիտակցում էր, որ Հայկական հարցը մեծ տերությունների խաղաքարտ է և այն հաղթաթուղթ դարձնելու համար անհրաժեշտ են անհատներ, որոնք կրագորելով ամենայն անձնական՝ կնվիրաբերվեն գերխնդրի իրականացմանը. հայ հասարակությունը հատուկ արտահայտված խարիզմատիկ

8 Մշակ, Թիֆլիս, 1875 թ., № 30:

բնույթով պետք է ունենար սեփական մեսիաները։ Հենց մեսիանիզմի անձնավորման և գործնականացման գործընթացն արագացնելուն էր նպատակառողջած «Եվելինան»։

Վեպի ստեղծագործական պատմության համապատկերում, կենտրոն հերոսների՝ հայ ուսանողի և Եվելինայի նախատիպերի հարցում առաջնային-կառուցողական են երկու շերտ։ ինքնակենսագրականը և գաղափարների համակարգում կնոջ հանդեպ ունեցած հայացքների բարեշրջությունը։ Նախ՝ նախատիպերի մասին։ Որ հայ ուսանողի կերպարում ամրագրված են գրողի կենսագրության բազմաթիվ փաստեր՝ աներկբա է։ Հանրահայտ է, որ Արծրունին հիվանդության պատճառով կիսատ է թողել ուսումնառությունը Պետերբուրգի համալսարանում։ Նիցցում բուժվելուց հետո ուսումը շարունակել է Ցյուրիխում և Ժնևում։ Այս աշխարհագրական անունների շրջագծում են տեղի ունենում ստեղծագործության իրադարձությունները<sup>9</sup>։

Եվելինայի նախատիպը եղել է Արծրունու ուսանողական շրջապատից, հետաքրքրական է նաև Շիրվանգաղեի տեղեկությունը Ն. Դ. Կոչեցյալ մի կնոջ մասին։ Հերքելով Իաֆֆու և նրա սիրային կապը «Կյանքի բովից» հուշագրության մեջ՝ նա գրում է. «Գրիգոր Արծրունին էր, որ Հավշտակվեց այդ կնոջով և գրեց «Եվելինա» անունով վեպը։ Ես ճանաչում էի այդ կնոջը. գեղեցիկ էր, բայց ոչ հրապուրիչ, գոնե իմ տեսակետից»<sup>10</sup>։ Կենսագրական շերտի առկայությունը փաստարկվում է նաև այն հանդամանքով, որ Արծրունին, կանխագալով մոտեցող մեկնումը, փաստորեն այլասացությամբ, սերունդներին էր թողնում իր անձնական դժվարին կյանքի «գաղտնիքը», դույզն-ինչ չափսուալով այդպիսի ընթացի համար, չշահարկելով ինքնանվիրաբերման գոյությունը։ Միանգամայն իրավացի է Լեռն, երբ Արծրունու գաղափարների համակարգում կնոջ հանդեպ ունեցած հայացքների բարեշրջությամբ է պատճառաբանում «Եվելինայի» լինելիությունը։ Գործունեության վերջին շրջանում Արծրունու հրապարակախոսության մեջ նկատվում են նոր երանգներ, որոնք բացակայում էին 70-80-ական թվականներին։ Այս համատեքստում Լեռն իրքև ազգակներ կարևորում է «Մշակի» էջերում ստեղծագործությանը նախորդած երկու գրություն՝ «Կնոջ բարոյականացնող ներգործությունը գրականության վրա» հրապարակախոսական առաջնորդողը և «Երազ» գործը։ Ամփոփելով իր նկատառումները՝ եղբակացնում է. «Իզուր են կարծում, – ասում էր Արծրունին, – որ ոգեւորվել կնոջ համակրությամբ կարող է միմիայն բանաստեղծը, նկարիչը վիպագրողը... Այդ համակրությամբ, թեև բոլորովին ուրիշ կերպ, կարող է ոգեւորվել և հրապարակագրողը և նույնիսկ քաղաքական գործիչը»։ Շեշտում է թե դա «...նախերգանք էր։ Անմիջապես դրանից հետո Արծրունին «Մշակի» մեջ տպագրեց և ապա առանձին գրքով հրատարակեց իր «Եվելինա» վեպիկը...»<sup>11</sup>։ «Եվելինայի» գույգ հրատարակությունները ժամանակի քննադատության կողմից միանշանակ չընդունվեցին, թեև ինչ-որ իմաստով համընկան Արծրունու գործունեության քսան հինգամյա

9 Այս մասին մանրամասն տե՛ս Լեոյի՝ Արծրունուն նվիրված ուսումնասիրության մեջ։

10 Ա. Շիրվանզադե, Երկերի ժողովածու տասը հատորով, Երևան, «Հայպետհրատ», 1961, հատոր 8-րդ, էջ 134։

11 Լեռ, Երկեր, հոդ. 6, էջ 696։

Հոբելյանի տոնակատարություններին: Զափազանցեցրած, փքուն գնահատականներ, ցնծալի, գրկաբաց ընդունելություն ազատական հոսանքի կողմից, միևնույն ժամանակ հավուր պատշաճի, ասկետական գնահատականներ պահպանողականների փաղանգից: Առաջնությունը անվերապահ պատկանում էր Լեոյին, որ հայ գրականության համար դարակազմիկ համարող այս ստեղծագործությանը անդրադարձավ քանից: Վեպի մյուս քննադատներն էլ հար և նման Լեոյի, բավարարվում էին միայն ստեղծագործության դիպաշարի մանրամասն շարադրմանը:

Վեպի կառուցվածքի ընդհանրական առանձնահատկություններին անդրադապնալիս հարկ է նախ սկսել վերնագրային լրատվությունից, ուր ժանրային պատկանելիության ուշագրավ ակնարկ կա: Ստեղծագործության ամբողջական վերնագիրն է՝ «Էվելինա». Հոգեբանական էտյուդ (հայերեն մի անտիպ ձեռագրից): Վերնագրի Էվելինա կազմաբանական միավորը տվյալ դեպքում ածանցյալ է, այն ժանրի պատմության մեջ վաղուց անտիպ գործող ամենաունիվերսալ մոդելներից է վերնագրերի կազմաբանական հարացույցում: Սակայն վերնագրային լրատվության մյուս բաղկացուցիչները մեկնաբանության կարիք ունեն: Այս պարագային կարեոր է Էտյուդ եղրի երկու գործառնությունները. առաջին՝ նատուրա/բնորդից, այսինքն՝ վավերական, իրական անհատից, «Էվելինայի» համակարգում՝ ինքնակենսագրական հատույթից արված ճեպագիրը իրեր ստեղծագործության գոյափորական ելակետ, երկրորդ՝ փոքր (ծավալային իմաստով) առանձին հարցի, խնդրի նվիրված ստեղծագործություն լինելու հանդամանքը: Երկրորդ գործառնությունը լիհակատար ամրագրված է՝ «Էվելինայի» կառուցվածքում, քանի որ վեպի կենտրոնացումը իրականանում է հենց սիրո այլագոյացումով: Երիտասարդ ուսանողի զգացմունքը փոխակերպվում է հանրությանը ծառայելու բացարձակ արժեքով: Այս տիրույթներում Արծրունու համար հույժ կարեոր էր անցման Հոգեբանությունը փաստարկելու իրողությունը, այդ իսկ պատճառով վերնագրային կազմաբանության մեջ Էտյուդ միավորը հանդուցվել է հոգեբանական ուղենիշով. պատահական չէ, որ անձնական ցավի արժեքների հաղթահարումը, վերախմաստավորումը վեպի կառուցվածքի գերակշռող մասն է (երիտասարդի հոգեբանական երկփեղկվածության, տվյալտանքների և տառապանքների մեթոդիկ նկարագրություններով, յումասովյան բալասանելու գործընթացի գերակայությամբ), որտեղ արդեն գործիչի կազմավորված կերպը կրողն է կարելցանքի, գիտարտության, մեծահոգության, վերջապես գերինդրի, առանց ներանձնական փորձառնության (ուշագրություն դարձրեք «փորձությունների շրջապտույտի» վիպաստեղծ արքետիպի արարողականությանը) անհնար է լինել «կոչեցյալ», նվիրաբերվել, դառնալ մեսիանիզմն ուղղորդող: Ինչ վերաբերում է հայերեն մի անտիպ ձեռագրից նշագրությանը, ապա հարկ է նշել, որ վեպի անթաքույց հիշատակարանային բնույթը (ընդհանրապես բնորոշ վեպ-քարոզարաններին համաշխարհային վիպագրության մեջ) ընթերցման խորքում գերակա է դարձնում ուղերձալանության հանգանակը, պատկերավոր ասած կարգա, ըմբռնիր և հետեւիր հերոսին, նամանավանդ, որ «անտիպ ձեռագիրը» իրականի, վավերականի և երևակայականի սահմանները տարտղնել է, իրադարձությունների մասնակիցներին (գործող անձանց) գե-

ըակոռող մեծամասնությամբ ծածկագրել՝ շվեդացի ծանոթը կ..., ֆրանսիացի հայտնի նկարիչի կինը՝ Դ..., նկարիչը՝ Մ..., ինքը հերոսը՝ անանուն, էվելինայի ազգանունը՝ Պ... և այլն: Այսինքն՝ թե՛ պատումը, թե՛ հերոսները մտացածին չեն, ընթերցողի ժամանակակիցներից են: Ուրեմն պիտի հավելենք, որ բացի նշվածից, հայերեն մի անտիպ ձեռագրից միավորը ընդգծում է նաև վավերականությունը, փաստագրություն լինելու իրողությունը: Վերնագրի կազմաբանության այս առարկայական լրատվությունը արդեն որոշակիցնում է վեպի ներժանրային առանձնահատկությունները, մատնանշում կառուցվածքային-ձեւաբանական մասնահատկությունները՝ վեպ-խոստովանություն, վեպ-ուղերձ, վեպ-ուղեցույց և վեպ-քարոզարան համակցության բանարվեստը: «Էվելինան» համակցել է ներժանրային դրսեւորումների թվարկած մատնանշումները: Այսպես՝ ուսանող-պատմողի տեսանկյամբ վեպը միտում է ձեւաբանական վեպ-խոստովանության կառույցը, գաղափարի ուղղորդվածությամբ և արխիտեկտոնիկայի սահմաններում գերակա լինելով վեպ-ուղեցույց/վեպ-քարոզարան-ի կառույցը: Հատկանշական է, որ ստեղծագործության երեսուներկու հատվածները գասդասվում են ոչ միայն իբրև պատումային միավորներ, այլ նաև իբրև այդ համակցության ներփակ դրսեւորումներ: Ըստ այդմ վեպի արխիտեկտոնիկան խարսխվում է այսպես կոչված ութ հիմերի (բլոկների) վրա. ա) մուտք-նախաբան, խոստովանություն-ուղերձի էքսպոզիցիա, նախադրություն, բ) երիտասարդ-էվելինա մերձեցման, մնեյան անցուղարձի քրոնիկայի և զգացմունքի գոյավորման ու փոխադարձության նկարագրություններ, գ) երիտասարդ-էվելինա հեռացման նախանշանների ամրագրում, դ) թումասովյան քարոզարանը, ե) կենտրոն-հերոսների հեռացումի ամբողջականացումը, զ) արժեքների փոխաձեռություն, հոգեկան կերտվածքի բալասանելու գործընթաց, է) վերափոխության փաստարկում, ը) զգացմունքի այլագոյացումն իբրև մեսիանիզմի գործնականացում:

Առողջությունը բարելավելու համար, լիակատար ապարանիվելու մտադրությամբ մի երիտասարդ պոլսեցի ուսանող բուժվում և հանգստանում է Նիցցայում: Այստեղ ծանոթանում է օտարազգի մտավորականների մի խմբի հետ ու մտերմանում: Այդ ըրջանակը նրան ծանոթացնում է մի չնորհալի և գեղեցիկ օրիորդի հետ, որը լավ դաշնակահար էր: Երիտասարդին անմիջապես գրավում են էվելինայի չնորհները: Շուտով ծանոթները պետք է ֆրանսիա մեկնեին, և երիտասարդը նրանց գնացքում որոշ ժամանակով ընկերակցում է: Պատմողն անցնում է Ցյուրիխ և շարունակում իր ուսումնառությունը, կարծում է, թե էվելինայի հետ հանդիպումը սոսոկ դիպաված էր իր կյանքում, սակայն նրանից անակնկալ նամակ է ստանում. «Հարցելի պարոն. գուցե գուլք մոռացել եք արդեն այն աղջկան, որի հետ պատահմամբ ծանոթացել էիք Նիցցայում... Այժմ ես եկա այստեղ աշնան երկու ամիսներն անցնելու և հանգստանալու իմ սովորական ծանր զեաղմունքներից, սակայն երկիրը և քաղաքը ինձ համար կատարելավես օտար են. բացի ձեզանից ես ոչ մի ծանոթ չունեմ այս քաղաքում: Գուցե կը համաձայնվեիք նվիրել ինձ ձեր թանկագին ժամանակի մի երկու ժամեր՝ իմ առաջնորդ լինելու այս քաղաքում... երջանիկ կը լինեի ձեզ տեսնելու, եթե ժամանակը ձեզ կը ներե գալ ինձ մոտ: Հնդունեցեք կանխապես իմ սրտագին չնորհակալություններս: Զեր էվելինա Պ.»:

«Նամակը կարդալուց հետո, չը գիտես ինչու, մի արտասովոր հուզմունք էր տիրել սրտիս... նա, այդ խեղճ սիրառ, կարծես մի արտակարգ անցքի էր սպասում (ընդգծումն իմն է՝ Գր. Հ.) կարծես գուշակում էր, թե կյանքիս մեջ գեռ չեղած մի արկած պիտի պատահեր...»<sup>12</sup>: Ըստ էության այս նամակը վեպի դիպաշարի զարգացման «շարժիչն» է, որ ուրվագրում է, թե երիտասարդների հանդիպումը ճակատագրով նախասահմանված էր, թե այս «արտակարգ անցքը» դառնալու է երիտասարդի գոյության, ապագայի, կյանքի նպատակի կառուցողական խթանը:

Բնականաբար երիտասարդն անմիջապես հանդիպում է էվելինային, նրա համար քաղաքի գեղատեսիլ փողոցներից մեկում հարմարավետ երեք սենյականոց բնակարան ապսպառում: Մեկ ամիս նրանք ամեն օր հանդիպում են: Ավելի են մտերմանում: Այցելություններից մեկի ժամանակ էվելինան հրաշալի նվազում է վագների ստեղծագործություններից մեկը: Ունկնդրելով մեղեղին՝ երիտասարդը, որ նոր-նոր էր ընթերցել Պրուդոնի երկասիրությունները, շատ քիչ բան էր ըմբռնել և այդ պատճառով փոքր-ինչ դառնացել, միանգամից համակվում է պայծառատեսությամբ: Մեղեդու ներքո խրթին իմացական և ընկերվարական նկատումները պարզ և հասկանալի են դառնում: Երիտասարդը սրա մեջ էվելինայի շնորհիվ ոգեշնչվածության խորհուրդ է տեսնում և ի նշան երախտագիտության՝ համբուրում օրիորդի ձեռքը: Այդ երեկոն նրանց ավելի է մտերմացնում, նամանավանդ համակրանքի և սիրո փոխադարձ վստահեցումից հետո: Հանդիպումները շարունակվում են. բազում զրույցների ընթացքում իրարավելի լավ են ճանաչում, ոգեգորգում են հայացքների և ընկալումների նույնականությամբ: Երիտասարդը էվելինային պատմում է, որ Պոլսի թերթերը սիրահոժար և անընդհատ տպագրում են իր ուղարկած նյութերը, խոստովանում, որ իր կոչումը հրապարակագրությունն է: Էվելինան ցանկանում է հայերեն սովորել: Մի քանի պարապմունքից հետո բավականին հաջողությունների է հասնում: Երիտասարդները երանությամբ են նայում ապագային՝ ինչպես ուսումնավարտելուց հետո կամուսնանան և որպիսի հրաշալի ու ներդաշնակ ընտանիք կկազմեն: Օրիորդի մեկնելուց հետո սկսվում է բուռն նամակագրություն, որը կամաց-կամաց նվազում է, դառնում հատուկենություն: Էվելինան էր նվազեցնում նամակների քանակը: Այս պահվածքը հերոսին թե՛ վշտացնում է, թե՛ հոգեկան տվյալտանքներ պատճառում և թե կասկածներ հարուցում: Վերջապես արձակուրդին նիցցա է վերագանուում: Խոռվայր հոգեվիճակին ավելի է մեծանում, իսկ կասկածները՝ խորանում, երբ հանդիպում է էվելինային, որը նրան շատ սառն ու քաղաքավարի է ընդունում, զանազան պատրվակներով հանդիպումները նվազագույնի հասցնում: Մեկ անգամ էվելինան երիտասարդին հաղորդում է, որ քաղաքում է նրա բարեկամ հովեկներից ուսու բանաստեղծ Յուլիա և նրան հրավիրում իր տանը կազմակերպելիք երեկոյին: Հավաքույթի ժամանակ օրիորդը նրան ծանոթացնում է Ժյուլ Անդոլի անունով իսպանացի նկարչի հետ, որը բատ պատմող հերոսի դիտարկումների, անտարբեր չէր էվելինայի հանդեպ: Նկարիչը երիտասարդին իր արվեստանոց է հրավիրում, որը

12 Գրիգոր Արծրունի, «Էվելինա», Թիֆլիս, Տպարան «Արտոր» Տ. Նազարյանի, 1891թ., Էջ 12-13: Հետապնդումները տեքստում, փակագծերի մեջ:

թողնում է ճոխ, պապղուն անձաշակության տպավորություն և առհասարակ պատմողը ներհակությամբ է ընդունում Անդոլիի սկզբունքներն ու ըմբռնումները թե՛ արվեստի և թե՛ կյանքի նկատմամբ։ Այստեղից խիստ գրգռված գուրս է գալիս և գնում Յումասովի մոտ, որը փարատում է նրա հոգեկան տվյալանքներն՝ ընդգելով, թե բաժանման և հեռացման դրաման կարելի է հաղթահարել՝ լծվելով հանուրին օգտակար լինելու առաքելությանը։ Երիտասարդը մի գրությամբ էվելինայից տեսակցություն է խնդրում, նամանավանդ մոտ ապագայում մեկնելու էր ուսումը շարունակելու։ Հանդիպում են։ Էվելինան նրան հասկացնում է, որ տեսլային, անրջային սպասումները երկուսին էլ դույզն-ինչ չեն պարտավորեցնում որեկից բանով։ Սա հեռացման վերջերգն էր։ Դուրս է գալիս օրիորդի մոտից, ողջ գիշեր անասելի ապրումներ է ունենում, կյանքը նրա համար կորցնում է իմաստը։ Առավոտյան հիշում է Յումասովի հրավերքի մասին, որ գտնվում էր իտալական մի գողտրիկ հովեկատեղիում։ Որոշում է այցելել բանաստեղծին՝ ծանր ապրումները փոքր-ինչ փարատելու նպատակով։ Առաջին իսկ օրվանից տեսնում է, թե Յումասովին ինչպես են բոլորը սիրում, քանի որ սատարում է կարոտյալներին, հոգսեր ունեցողներին։ Ինքն էլ խնամում է թոքախտով տառապող ինժեներին, որը նրան բավականին օգնում է հոգեպես։ Յումասովի զրույցները, անընդհատ ուրիշի ողբերգությանը, թշվառությանը կարեկցելը, բալասանման այս գործընթացը կամաց-կամաց դրական ազդեցություն են ունենում։ Հոգեպես լիովին բարվոքում է իր վիճակը և մեկնում ուսումը շարունակելու։ Էվելինայից ստացած բոլոր նամակներն ու թղթերը ոչնչացնում է, պահպանում է միայն նրա շատ հաջող լուսանկարներից մեկը։ Ուսումնառության վերջին երկու տարիները բավականին արագ են անցնում։ Ամբողջովին նվիրաբերվում է գիտությանը։ Հաջողությամբ հանձնում է ավարտական քննությունները, ստանում դոկտորի աստիճան, մեկնում հայրենիք։ Պուստը լրագիր է հրատարակում, ամբողջությամբ լծվում ազգապահպան հրապարակագրությանը։ Համբավը տարածվում է, անակնկալ էվելինայից նամակ է ստանում՝ հարաբերությունները վերընճյուղելու ակնարկներով, քաղաքավարությամբ մերժում է։ Այժմ էվելինան նրա համար ընդամենը զգացմունքի խորհրդանիշ էր (լուսանկարը գրասեղանի դիմացի պատին էր փակցրել), որը օգնում էր անթեղ պահել սիրո, նվիրումի սկիզբները։ Սա է վեպի գիպաշարը։ Հարկ է նշել, որ երիտասարդ-ուսանողի վերափոխության գործընթացի, գոյաբանական հանգրվանի, էվելինայի, առհասարակ պերսոնաժների և իրադարձությունների պատկերագրումը Արծրունին անընդհատ փորձում է մեկնաբանել, փաստարկել, հիմնավորել հոգեբանական պատճառաբանվածությամբ (աշխարհայացքի և իմացաբանական հայեցության «գեղարվեստական անդրադարձ»), պողիտիվիզմի և էքսպերիմենտալ հոգեբանության ուղղորդվածություն) և այս պատճառով վեպի կառուցվածքում շատ հաճախ առաջնայնություն են ստանում ապրումների, հոգեվիճակների և դատումների ծավալումները, երբեմն-երբեմն ձգվելով մինչև վեպ-ապրումի, վեպ-խոհի ձևաբանություն ու պոետիկա, որոնք այնուհանդերձ պարփակվում են «առաջադրված միտումի» հաստատագրման սահմաններում, ծառայում գաղափարի ծավալման տեքստային «տուտալ մոբիլիզացիային»։ Ահա այս պատճառով հոգեբանական սկեռումները

շատ հաճախ մնում են կախակայված, երբեմն անթաքույց ձախողված, իբրև ապրումի, խոհի գեղարվեստական իրազործում, սակայն միշտ ավարտուն են «առաջադրած միտումը» հանգուցելիս։ Պատումային մակարդակում հոգեբանական անցումները փաստարկելիս ուշագրավ են առարկայական իրողությունների և հոգեվիճակների զուգորդությունները։ Հուսահատ, այլևս ապրել չցանկացող երիտասարդը թումասովին այցելելիս ծովում փոթորիկի մեջ է ընկնում։ Տարերքն իր ահազնությամբ գուժում է ավարտ, վերջ, սակայն տախտակամածին կամավոր մնալով և հաղթահարելով այն, վերընձյուղվում է ապրելու խորհուրդը։ «Ափ իջնելուն պես ես քաղց զգացի։ Միթե կյանքը, ապրելու ցանկությունը այդքան շուտ կարող է վերադառնալ դեպի մի անկենդան դարձած մարդկային արարած, որը գեռ երեկ զգում էր իրան՝ մի շարժվող դիակ...» (69)։

Արդեն մատնանշել ենք, որ վեպի հերոսները ճեպագրային կերպարման են ենթարկվել. իրողություն, որը «Եվելինայի» ստեղծագործական կառուցվածքի բնույթային առանձնահատկությունն է։ Գործող անձինք ընդամենը գերակա հղացքը լրացականացնող գործառնություններ են, առանց կերպարի ինքնավարության որևիցե բաղկացուցիչի։ Նրանք այնքանով են մասնակցում գործողություններին, հանդես գալիս ինչ-ինչ նշագրություններով, որքանով պահանջում է վեպի գաղափարագրության լուսաբանությունը։ Այդ պատճառով էլ վեպի կառուցվածքում նրանք ընդամենը ուրվագծված են, իսկստ հպանցիկ։ Այս առումով բացառություն են իսպանացի նկարիչ Ժյուլ Անդոլին (մասսամբ) և անշուշտ, ոռու բանաստեղծ թումասովը։ Անդոլիի կերպարային մանրամասնումը վեպի կառուցվածքում երկու ուղղորդվածություն ունի։ Նախ՝ Եվելինային հրապուրող, ուսանողից «խող» մարդու կերպարը ենթագրում է համապատասխան փաստարկում բնագրային մակարդակում, նամանավանդ այն օրիորդի ինքնությունը լիակատարացնելու անուղղակի միջոց է, ապա՝ եսակենտրոն տեսակը, պերճանքի և կոկիկության մեջ ապրող մարդը, որը «մարմնացած ստություն և կեղծավորություն էր». ամեն բան հաշված, սառն կերպով նախամտածված էր նրա մեջ...» (36), ընթերագրում էր մի մտայնություն, բնույթ, որը հար պիտի բախվեր ուսանող/յումասովյան տեսակի հետ և այս հակագրականության զուգահեռում ցուցաներ բարոյաբանական արժեքների, կյանքի ըմբռնման և գոյության ընտրության ուղենիշը։ Ի տարբերություն Անդոլիի, ոռու բանաստեղծի սկզբունքներն ու կեցվածքը «նրա գեղեցիկ ու խելացի դեմքը, նրա ներդաշնակ ձայնը, որը կարծես սրտի խորքից էր բխում, նրա անսահման բարեսրտությունը, նրա տարօրինակ, սրտաշարժ, փոքր-ինչ պեսիմիստ փիլիսոփայական հայցքը կյանքի վրա, վերջապես նրա փորձառությունը կյանքի մեջ – այդ բոլորն իմ սրտում մեծ հավատ էր ներշնչում դեպի այդ մարդը» (32)։ Հատկանշական է, որ թումասովի կերպարը՝ հարակցած երիտասարդ ուսանողի կերպարին, վեպի գաղափարների համակարգի և գեղագիտության «ներբերողներից» են, անձնական տառապանքը հաղթահարած անհատականություն, որ բարեգթությամբ և կարեկցանքով փաստարկում է երջանկության, բարոյական հանգրվանի այն որակները, որոնք պիտի երիտասարդի հասարակական գործունեության համար ուղենիշ դառնան։

**Ստեղծագործության կենտրոն-հերոսների կերպը միանշանակ մատնանշում**

է մեսիանիզմի գաղափարագրության գերակայությունը։ Այս պարագային ուսանող/էվելինա զուգադրությունը ենթադրում է պարունակող-պարունակյալի հարաբերակցություն, որի փոխանցումը մեկ վիճակից մյուսին համարնագրում ունենում է ստեղծագործական փաստարկման դիմառնություն՝ մոտեցումից վերջնական տարանջատման հանգամանքը ամրագրելիս անձնականը «փոշիանում» է, պարպիում և նորմատիվ ենթադրական անապատի փոխարեն ստեղծվում է անանձնական օազիսի թանձրացականը. սա երիտասարդ սիրահարի (վերաբերական ապրումների) հոգեորդմացական ինվերսիան էր։ Բնականաբար այս պարագային էվելինայի հոսքը վեպի կառուցվածքում ոչ միայն նորօրյա մեսիայի կայացման դաշտն էր, այլև ինքնահաղթահարման փորձառությունը։ Վերջիվերջո էվելինան մնաց բավականին «երկրային», իսկ երիտասարդ ուսանողը այդ երկրայինը ոգեղենիկացրեց, ապա և իջեցրեց իրականություն որպես խորհրդանիշ։ Այս ֆեմինիստ օտարերկրութին (թափանցիկ հեղինակային ակնարկ՝ իմացական միտքը ուղղորդող հայ գործիչները առայժմ ոգեշնչվում են օտարներով), հրաշալի դաշնակահարը, կրթյալ և զարգացած անհատականությունը, որ «...գեղեցկութիւն էր այդ բառի բռն նշանակությամբ. դեմքի շատ նուրբ գծագրությունների ու երեսի մորթի սպիտակ գույնով» (5) երիտասարդ ինտելեկտուալի հոգեորդ խորքերը բացահայտելու հրաշալի ունակություն է ձեռք բերում։ Անձնափորվում է սերը, նվիրումը, առանց որի անհնար է գործել, իրականացնել նորոգության և ազատականության գերխնդիրները։ Նա ոգեշնչվածության հոսքն է, լույսի աղբույրը և հանկարծ բաժանում, անդառնալի հեռացում, սակայն առաքելությունը իրականացված է, «բացվել» են հոգեորդմացական կարելիությունները ու փորձությունը հաջողությամբ, թեև դժվար ու դիմադարձությամբ ընթացած, երիտասարդը պատրաստ է ազգային-հասարակական գործունեության։ Էվելինայի կորուսյալ սիրո տառապանքները հավելով օտարի ցավի և դժբախտությունների հաղորդակցվելու խորհրդին, ամրագրում են մեսիանիզմի մտայնությունը։ «Այո, ես երդիքում էի անցյալի հիշատակների սրբության անունով նվիրել իմ թույլ ուժերս իմ ազգի ծառայության, բարձր բռնել իմ ձեռքումս անխարդախ գաղափարների դրոշակը և կարողությանս չափ իմ իմացածն ու զգացածը իմ հայրենակիցների մեջ տարածել...» (95)։ Երդումից մինչև իրացում ընդամենը մեկ քայլ է, սակայն սրան նախորդում է երիտասարդի նախապատրաստության գործընթացը (տե՛ս 92-93-րդ էջերի երկխոսությունն իբրև դրա բյուրեղացում), հոգին բալասանելու ուղին։

Ժամանակի իմացական մտքի հանգանակները (օրինակ, Պրուդոնի «անտիթեկումը»), հասարակության համընդհանուր պատմությունն իբրև գաղափարների պայքար լինելու իրողությունը) արվեստի զուգադրության մեջ են (բնագրում Վագների երաժշտության ներքո) դառնում լիակատար, ուրեմն և գաղափարները պիտի հանգուցվեն ստեղծագործությամբ կիրարկվելու համար։ Իսկ հանուրին սատարելու, հասարակությանը օգնելու կոչումն ունենալու համար հարկ է անցնել մաքրագործության ճանապարհով, վերացարկվել անձնական ձախորդություններից ու տառապանքներից (թոքախտավոր ինժեների խնամքը, Յումասովի հետ մարդկային կարեկցանքի մասին մտասկեռումները)։ «Այն միտքը, որ տանջանքն ազնվացնում, մաքրում է մարդկանց, – հանկարծ միի-

թարեց ինձ... նույն բոպեին սիրտս լցվեց համ մի տեսակ եղբայրական համակը բությամբ, համ էլ անսահման երախտագիտական զգացմունքով...» (92): Եվ երբ հանդիպադրվում են ես-ից և դրսից եկած փորձությունն ու տառապանքը, ներդաշնակվում ու միասնականանում, ապա առանց վարանելու կարելի է նվիրաբերվել գերիսնդրի իրականացմանը: Սա էր Արծրունու հանգուցումը, որ իբրև հղացք և իրագործում «Էվելինա» վեպով նա պատգամում էր հայ իրականությանը:

## ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա.

Մատթեոս Մամուրյանը (1830-1901) նոր շրջանի հայ հոգևոր-մշակութաւ-բանական պատմության մեջ հատկանշվում է հանրագիտակային գործունեությամբ և ժառանգությամբ: Մտավորականի ընդգծված լուսավորչական (եղբը՝ եվրոպական հանրագիտակ-լուսավորիչների համանունությամբ) բնույթն առհասարակ պայմանավորել է նրա գիտական, ստեղծագործական հետաքրքրությունների ու դրսերումների շրջանակը՝ գրող և մանկավարժ, թարգմանիչ ու հրապարակախոս, խմբագիր և պատմաբան, տնտեսագետ ու քաղաքականագետ: Հանրահայտ է «Արևելյան մամուլի», որ 1871-ին նա հիմնադրեց Զմյուռնիայում և խմբագրեց մինչև կյանքի վերջը, վիթխարի կառուցողական դերը հոգևոր և հասարակական մտքի պատմության մեջ, վավերացված է նաև այն իրողությունը, թե որպիսի ազդակներ է տվել հանդեսը հայ գիտական ու մշակութաբանական կյանքին, փաստ է նաև, որ «Արևելյան մամուլի» ոգին էր գրագետը, հրապարակումների գերակշռող մեծամասնության հեղինակը, առաջադրված գաղափարների կանոնակարգողն ու կազմակերպողը:

Հայ գրականության պատմության համապատկերում ինչպես Մատթեոս Մամուրյանը, այնպես էլ «Արևելյան մամուլը», հատկապես էական նշանակություն են ունեցել նոր և նորագույն շրջանի գեղարվեստական արձակի զարդացման, մասնավորապես՝ վեպի ամրագրման գործում: Արձանագրենք սոսկ, որ հանդեսում տպագրվել են բազմաթիվ թարգմանական և ինքնուրույն ստեղծագործություններ, հայ ընթերցողին եվրոպական վեպին ծանոթացնելուն զուգահեռ գեղարվեստական ընթացում գոյագորել՝ վեպի ըմբռնման, ընկալման, տեսության, ընդհանրապես վեպի մշակույթի այնքան անհրաժեշտ գործնականացրած տարածություն: «Տարիներե ի վեր կը կարդայի «Արևելյան մամուլ»ը: Շահնուրի նամակներուն հետաքրքրությամբ կը հետևեի միշտ: Իր թարգմանած եվրոպական վիպասանությունները պատանեկությանս հաճելի ընթերցումները եղած էին: Իր քաղաքական, տնտեսական, ազգային հողվածներուն մեջ կը գտնեի տոկուն հրապարակագիր մը, հմուտ, խղճամիտ, ուղղադատ, ազատախոհ՝ բայց միշտ խոհական ու հեռատես: Համոզված էի, թե երկրին օգտակար ըլլալու անկեղծ տեսնչը կը ներշնչի զայն, և թե հառաջադիմության տարր մըն է ինք մեր գրականության մեջ», — տարիներ հետո այսպես է բնութագրում իր ժամանակացին Հրանտ Ասատուրը<sup>1</sup>: Հիրավի, Մամուրյանի թարգմանած տասնյակ վեպերը կրթել են գրագետների մի քանի սերունդ: Նրա քննադատական, գրականագիտական հոդվածներն ու գրությունները գործուն դեր են ունեցել գրական ընթացի, գեղարվեստական զարգացման ծիրում, սակայն, այնուհանդերձ,

1 Հրանտ Ասատուր, «Դիմաստուերներ», Կ. Պոլիս, 1921 թ., էջ 120-121:

գրողը հայ գրականության պատմության համապատկերում հատկանշվում է իրեւ վիպասան, նրա «Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» և «Սև լեռին մարդը» ստեղծագործությունները հայ վեպի պատմության մեջ կարևոր նշանակություն են ունեցել թե՛ ժանրի զարգացման, թե՛ բանարվեստի և թե առաջադրած գաղափարաբանության առումներով:

\* \* \*

Ժանրի պատմության ուսումնասիրության համար առարկայական անհրաժեշտություն է Մատթեոս Մամուրյանի վիպագրությունը գոյագորող և պայմանավորող խնդիրների անդրադարձը մի կողմից և մյուս կողմից՝ գրողի վեպի ըմբռնման ու տեսական հայացքների քննությունը: Այս պարագային էական նշանակություն է ունեցել գրագետի թարգմանական արգասավոր գործունեությունը, որը գերազանցապես կենտրոնացել է վիպասանության վրա: Տակավին 1854 թվականին Վոլտերի «Զատիկ»-ի, այնուհետև Նույն հեղինակի երկու պատմվածքների թարգմանություններից սկսած՝ Մամուրյանը, հետեւղականուրեն, մեկը մյուսի ետևից հայ ընթերցողին էր մատուցում համաշխարհային վիպագրության բազմաթիվ գործեր: Հատկանշական է այն իրողությունը, որ մինչ սեփական վեպերով հանդես գալը, գրագետը թարգմանել էր բազմաթիվ ստեղծագործություններ, իսկ «Անգլիական նամականին» և «Սև լեռին մարդը» գրելու տարիներին համատեղում էր վիպասանի և թարգմանիչի աշխատանքը, որն ապահովաբար բարերար ազգեցություն էր թողել գրական թե՛ մեկ, թե՛ մյուս գրուերման վրա: Ստեղծագործական աշխատանքի այս երկակիությունը ունենում էր նաև համապատասխան ներազգեցություն, և վեպերի լեզուն, կառուցվածքը, պոետիկական համակարգը, ընդհանրապես կազմաբանությունը ժանրի եվրոպական ստանդարտներին համապատասխանեցնելու ու, միաժամանակ, վեպի ազգային դպրոցի մասնահատկությունները բյուրեղացնելու առումներով: Վերջինս հատկապես կենտրոնանում և ամբողջանում էր վեպերի գաղափարների համակարգում, միաժամանակ համապատասխան փոխներթափանցումներով ամրագրում՝ ասենք արկածային (ավանտուրիստական) նամականի, լուսավորչական վեպերի հայկականացրած յուրօրինակ տարբերակներ:

Մամուրյանի վիպական թարգմանական ժառանգությունը կարեռովում է նաև այն հանգամանքով, որ գրական աշխարհաբարը դարձավ վեպի լեզու, փորձարկումով անցավ և բավականին դյուրացրեց թե իր և թե արևմտահայ ապագա վիպասանների գործը: Արժեորելով գրողին՝ Արփիար Արփիարյանը առանձնացնում էր այս հանգամանքը. «Մամուրյան իր թարգմանություններով հաջողեցավ այս աշխարհաբարը ժողովրդականացնելով: Հայացուց իր ընտրած գրքերը որպիսիք են «Վերթեր», «Հազար և մեկ գիշերներ», Տյուման, Էռժեն Այու, որոնք շատ ախորժելի եղան մեր ժողովրդին...»<sup>2</sup>: Հայ վեպի պատմության մեջ, ուրեմն, գրողի երախտիքը հատկանշվում է նաև սրանով, որը, հարկ է նշել, ըստ ամենայնի ընկալվել և գնահատվել է ժամանակակիցների կողմից<sup>3</sup>: Պակաս կարևոր չէ թարգմանած ստեղծագործությունների ընտրության սկզ-

2 Արփիար Արփիարյան, «Մամուրյան», Նոր կյանք, Լոնդոն, 1901, 3, փետրվարի 1, ԺԼ 26:

3 Բոլոր կենսագիրներն ու մամուրյանագետները անխտիր անդրադաել են այս երևույթին: Տե՛ս

**բունքը:** Մամուրյանը, որպես կանոն, նախընտրում էր այնպիսի վեպեր, որոնք բացի օգտապաշտական, լուսավորական գործառնություններից՝ ժողովրդին հետաքրքրաշարժ ուսուցողական ընթերցման հնարավորության ընձեռում, աղդային ընդհանուր բարեկրթությանը սատարող լրատվության ապահովում, հայրենի մշակույթի շրջանառության մեջ էին մտցնում գրական-գեղարվեստական այնպիսի հուշարձաններ, առանց որի քաղաքակրթության տվյալ մակարդակին լինելն անհնարին էր:

Գյոթեի «Վերթեր», էժեն Այուի «Փարիզի գաղտնիքները», Ալեքսանդր Դյումայի «Երեք հրացանակիրներ», «Քսան տարի անց», Ժյուլ Վեռնի «Աշխարհի շուրջը ութուուն օրում», «Խորհրդավոր կղզի», Սքոթի «Այվենչո», Վոլտերի այսպես կոչված փիլիսոփայական արձակ՝ ահա Մամուրյանի թարգմանությունների ոչ լրիվ ցանկը: Այս թվարկումն արդեն մատնանշում է գրագետի ժանրային հետաքրքրությունների շրջանակը: Նա միանշանակ նախընտրել է արկածային, պատմական և լուսավորչական վեպը, և պատահական չէ, որ հեղինակային ստեղծագործությունները նույնպես մատնանշված վեպերի կազմաբանության տիրույթներում են խարսխվում: Թարգմանական այս գործընթացը ինքնին ենթադրում է նաև հեղինակի վեպի ըմբռնման և տեսության ընկալումների և տեսանկյունների հանրագումարը, նամանավանդ որ դրանք վկայվել են տեսական դատումներով, հոդվածներով և գրություններով:

Մատթեոս Մամուրյանի վեպի տեսական խնդիրներին նվիրված կարծիքներն առաջին հայացքից ուսումնասիրվող խնդրի համար ունեն զուտ լրացական գործառնություններ և դիտելի են վեպի համարնագրում իբրև այսպես կոչված ածանցյալ վկայություններ, սակայն և «Անգլիական նամականի»-ի և «Սև լեռին մարդը» ստեղծագործությունների համարնագրական վերլուծությունը այս տեսանկյունով և թե մամուրյանական վեպի կառույցն ու հղացքն առհասարակ, ցույց են տալիս, որ գրագետի տեսական յուրաքանչյուր դրույթ և եզրակացություն իրենց գործնականությունն են ստացել խնդրո առարկա բնագրերում: Վեպին դիմելու հանգամանքը, իբրև ստեղծագործական հայեցություն և սկզբունք, Մամուրյանի համար ելակետային էր արդիականության չափանշումներով՝ թե որքանով է ժամանակակից և անհրաժեշտություն այդ ժանրով ստեղծագործելը. «Վեպը, – գրում է նա, – գրականության մեջ կարևոր տեղ մը բռնած է այսօր, և ծանրախոհ մարդիկ, գիտուն մարդիկ, մարդասեր մարդիկ գրական այդ ձևն ընտրած են ընկերական զանազան հոռի երևույթներն ի վեր հանելու, ստեղծ բարյոյական դաս մը տալու, դարման բերելու նպատակով»<sup>4</sup>: Հասարակական, ընկերվարական սոցիալական կյանքի, իրականության ներդաշնակության, կատարելության, բարոյական մաքրագործության համար վեպը ինքնատիպ համարդական գաղափարամիտություն և աշխարհայացք ունեցող Մամուրյանի համար, որի մոտ միակցվել էին գրապահտության, լուսավորչականության փիլիսոփայական-իմացացարբանական համակարգերի և ոռմանտիզմի գե-

Ա. Լուսինյան, «Կենսագրություն Մատթեոս Մամուրյանի», Փյունիկ, Գարիրեն 1899 թ., № 10, 11, 12, Հ. Ս. Երեմյան, «Մ. Մամուրյան», Բազմավեա, Վեճենտիկ, Ս. Ղազար 1911 թ., № 8, Արգոս, «Մամուրյանի դերը իբր հրապարակագիր և գրագետ», Մասիս, Կ. Պոյիս 1900 թ., № 2 և այլն:

4 «Վեպն ի Ֆրանսա», Արևելյան մամուլ, Զմյունիա, 1891 թ., № 3, ԺԸ 116:

դագիտության բազմաթիվ առաջադրույթներ, գարձել են հոգևոր կյանքի միակ դրսերումը, ուր զուգորդվել էին գիտությունն ու գեղարվեստը, դիդակտիկան և հանրությանը օգտակար լինելու հանգամանքները, և եթե սրան հավելենք ազգային հրատապ խնդիրներին անդրադառնալու, ապագա գործունեության կարելիությունները ընդնշմարելու, ժողովրդին ուղղություն տալու իրողությունները, ապա միանշանակ է այն, որ գրագետի համար վեպը պետք է լիներ հոգևոր կյանքի, գործունեության ամենաժամանակակից, արդիական կերպը, նամանավանդ, որ Մամուրյանի մատնանշած անհատական ներդաշնակությունը, հասարակական, ընկերային կատարսիսը լիովին համապատասխանում է վեպի, ասել է թե՝ գրականության, կատարսիսին: Եվ իրոք, գրողի վեպերի համակարգում կատարսիսը կայանում է, եթե անհատի, ես-ի ներդաշնակության, մաքրագործության ընթացը հանդիպադրվում և պայմանավորվում է հասարակական կյանքը, ազգային ճակատագիրն ներդաշնակելու, մաքրագործելու անհրաժեշտությամբ:

Հստ նրա վեպն անվերապահորեն պետք է բավարարի արդյունավետ ուղղության համապատասխանության պայմանները: Մրանք Մամուրյանը մանրամասնել է «Այլկենհո» վեպի թարգմանության առաջաբանում. «Կ'գտնվին նաև քանի մը նորատիպ վեպեր՝ որ դժբաղդորեն թե նյութի և թե ոճի կողմե չեն կրնար նոր արդյունավետ ուղղություն մը տալ մեր արդի գրականության»<sup>5</sup>: Ուրեմն ազգային վիպասանությունը պետք է ունենա արդյունավետ ուղղություն, քանի որ. «Մեզի հարմարագույն կթվի այն վիպական պատմություններն՝ որ Հոչակավոր գործ լինելե զատ՝ մեր վիճակին, մեր կենաց գեթ անուղղակի նկարագիրն ընծայեն և ի լավ անդը դիմելու մեզ գրգիռ և հրապույր տան» (Նույն տեղում): Պարզ ու մեկին է, որ եթե թարգմանական վեպերը պետք է բավարարեն այս պայմանները, ապա ազգային վիպասանությունը աներկեց պետք է գրականացնի մեր կյանքի նկարագիրը, ընթերցողին համապատասխան և պարտադիր արդյունավետ գրգիռ ու ազդակ հաղորդի: Հենց այս բանաձևումներն են, որ իրենց գործնական արտահայտություններն են ստացել Մամուրյանի վեպերում թե հայկական կյանքի նկարագրություն-արձանագրություններով և թե համապատասխան գաղափարների համակարգերով՝ վերջինս բացառապես իբրև «գրգիռ ու ազդակ»՝ ազգային կյանքի ներկան բարեփոխելու և ապագան կերտելու համար:

Բացի մատնանշած երկու պայմաններից Մամուրյանը կարևորում է նաև արդի վիպասանության համար պատմականության, մասնավորապես ազգային պատմությունը անընդհատ գեղարվեստական շրջանառության մեջ պահելու իրողությունը: Իր գրախոսություններից մեկում («Գրաբանություն», Ա. Տարերք բնական պատմության: Բնական, բարոյական և մտավորական դաստիարակություն: Թարգմ.՝ օր. Փ. Գեղրդյան Կարնեցի», Արևելյան մամուլ 1887 թ., № 3, էջ 86-90) նա տեղին է համարում այն դժգոհությունները, որ մեր վիպասանությունը հաճախ չի կենտրոնանում պատմության վրա, նամանավանդ որ այն, ըստ գրագետի, հակայական ուսուցողական, դաստիարակչական և կրթա-

5 «Վոլթը Սքոթ, Խվանոն, Հառաջաբան», Արևելյան մամուլ, 1871, 1, ԺԸ 37:

կան ներուժ ունի: Այս հանգամանքի գերակայելի լինելն է, որ Մամուրյանի վեպերը, հատկապես «Սև լեռին մարդը», կենտրոնացրել է պատմավիպասանության տիրույթներում և ընդհանրապես իր ստեղծագործություններում օգտագործել ցանկացած առիթ պատմական էքսկուրսներ կատարելու համար:

Գրողի տեսական դատումներում, սկսած 1880-ական թվականներից, հանկերգ է դառնուում ինքնուրուցյան վիպասանության զարգացման գաղափարը: Մամուրյանը, որ անցել էր (և այդ ընթացում էր) թարգմանությունների բովով, հրաշալի նկատում էր թերթոնային թարգմանական վեպերի հոսքի այն խոչընդուները, որոնք արգելակում էին իր ըմբռնմամբ ազգային, ինքնուրույն ստեղծագործությունների ամրագրմանը հայ գրական ընթացում: Պատահական չէ, որ բարձր գնահատելով Զիլինկիրյանի Հյուգոյի «Թշվառներ» վեպի թարգմանությունը, ընդգծում է. «Մեզի համար օտար վիպասանությանց թարգմանության ժամանակն անցած է: Ազգն ավելի հաստատուն, ավելի հիմնական մտային սնունդի պետք ունի: Պատճառ – գամնզի ժամանակիս ոգին, իր կրթական և ընկերական վիճակն այդ կը պահանջեն, վասնզի օտար լեզուներու ուսումն ավելի ծավալած է մեր մեջ, վասնզի ուրիշ մտավորական պետքեր կան գոհ ընելու, և եթե վիպագրությունն ամեն գրականության անհրաժեշտ մի ճյուղն է, այդ ճյուղը պետք է որ մշակվի ազգային գույներով, ազգային կենաց ճշմարիտ և բազմադիմի նկարագիրներով»<sup>6</sup>: Այսուհանդերձ Մամուրյանը գրողին պարագծած կաղապարներում չի տեղակայել՝ շատ լավ ըմբռնելով ստեղծագործական ազատության, գրագետի անհատականության պարագան: «Վիպասանության դաշտն այնքան ընդարձակ է որքան մարդկային կենաց բազմազան պայմանները: Մեն մի վիպասան կը քաղե այդ դաշտն ինչ նյութ որ իր դիտողության, իր երևակայության ու ճաշակին կհարմարի և իր գրչին ուժով անոր կենդանություն տալով կջամբե հասարակության: Ճարտար է այն գրիչն որ, առանց այս կամ այն դպրոցին մասնավորապես հետեւելու, նյութական և բարոյական աշխարհի ճշմարիտ և այլազան պատկերներն իրենց բնիկ գույներով կարտահայտե»<sup>7</sup>: Դատողությունը, նամանավանդ «ճարտար գրչի» սահմանումը ինքնատիպ բնութագրական է, որովհետև Մամուրյանն իր վեպերը կառուցում էր համագրական եղանակով՝ կիրարկելով վեպ-նամականու, պատմավիպասանության, արկածային, լուսավորչական-դիդակտիկ, սենտիմենտալ՝ վեպերի բաղկացուցիչներ, որոնք ստեղծագործությունների բնագրերում գոյացնում էին ոչ թե ինչ-որ տարտամ էկլեկտիզմ ժանրային կազմաբանության առումով, այլ միասնականանում էին, ընդհանրություն դառնում վեպերի գաղափարաբանության մակարդակում: Ի թիվս վեպի ըմբռնման, ընկալման, կառուցվածքի և բանարվեստի խնդիրների, գրողն իր տեսական գրություններում ու դատողություններում շարագրում է նաև վեպի սեփական հանգանակը. «Կան վեպեր որ ծնելն ու մեռնելը մեկ կընեն, կան որ քիչ մը ժամանակ կհուզեն ու կանցնին, կան նաև այնպիսիներ, որ կմնան: Առաջին տեսակին կպատկանին շահուակնկալությամբ, շողուն մակղիրով ու սնամեջ իմաստով՝ անհամ ու անլի վե-

6 «Թշվառներ», Արևելյան մամուլ, 1885 թ., № 1, Էջ 561-562:

7 «Նոր վեպ մը», Արևելյան մամուլ, 1892 թ., № 1, Էջ 18:

պերն, սրամիտ ընթերցողներ որսալու նպատակով հորինված. երկրորդին կվերաբերին անոնք որ վաղանցիկ և ստեալ մոլեկան զգացում կամ կիրք իբրև նյութ կընտրեն և անուս ու մոլորամիտ էակներու սիրտն ու երևակայությունը կվրդովեն՝ անբնական և պղտոր երեսույթներու նկարագրով. իսկ երրորդ տեսակն մարդկային այլազան կենաց բնական ու ճշգրիտ պատկերներ կնկարե միշտ արվեստն ու ճաշակն իրեն ուղեցույց բռնելով, և իմացական ու բարոյական հատուկ հանրային նպատակ մ'ունի, որ ամեն տեղ ու ամեն ժամանակ իր ներքին արժեքն անվթար կավահե, հետևապես հետաքրքրության հետ կգրգռե անընդհատ հոգփո ամենեն զդայուն ու նուրբ թելերը»<sup>8</sup>: Մամուրյանի վեպերը իր ստորաբաժնման երրորդ ճյուղին են պատկանում: Առաջադրած հանգանակը լիովին գործադրվել ու իրականացվել է «Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» և «Սև լեռին մարդը» ստեղծագործություններում:

## Բ.

19-րդ դարի երկրորդ կեսին Մատթեոս Մամուրյանը գտնվում էր յուրատեսակ վակուումում, որն, ի մասնավորի, առավելագույնս ընդգծվում էր նրա ստեղծագործական գործունեության մեջ: Հարկավոր էր կտրուկ, արմատական տեղաշարժ ու փոփոխություն, որպեսզի առարկայորեն հաղթահարվեր այդ գործությունը: Եվ ահա նրա բարերար Մկրտիչ Ճիգայիրլյան ամիրայի շնորհիվ, նա 1858 թվականին ուղեկորվում է Լոնդոն: Ճանապարհորդության պատճառը Անգլիայում ամիրայի գործերին հետևելն էր, սակայն Ճիգայիրլյանի հավատարմատարի Լոնդոնում հայտնվելը դարձավ գրողի համար կենսականորեն անհրաժեշտ ստեղծագործական գործուղում՝ վերջինիս բոլոր հետևանքներով: Ավելին՝ դա նշանավորեց հայ վեպի պատմության ուրույն դրսեորումներից մեկի գոյությունը, քանի որ այստեղ էր, որ հղացավ «Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» վեպը և գրվեցին առաջին գլուխները: 1960-ական թվականներին Զմյուռնիայի «Միություն» և Թիֆլիսի «Կոռնկ հայոց աշխարհին» հանդեսներում տպագրվեցին ստեղծագործության տասնվեց նամակությունները:

1860 թվականին իր հայրենի Զմյուռնիայում, նշանավոր հրատարակիչներ Տետեյան եղբայրների տպարանում վեպն ամբողջությամբ լույս տեսավ: Հայ գրական կյանքում ստեղծագործությունն անմիջապես աշխույժ հետաքրքրության առարկա դարձավ և բազմաթիվ արձագանքներ ունեցավ, որի պերճախոս վկայություններից է այն հանգամանքը, որ հաջորդ 1881 թվականին մասնակի շտկումներով «Անգլիական նամականին» երկրորդ անգամ հրատարակվեց: Վեպի՝ նման անհրաժեշտ ընթերցողական ու մշակութաբանական պահանջարկը, ոչ միայն ազգային վիպասանության հավուր պատշաճի ընդունելությամբ, զուտ գաղափարական խնդրագրությամբ էր բացատրվում, այլ նաև այն հան-

8 «Գրական զրուցներ, վեպ», Արևելյան մամուլ, 1896 թ., հոկտեմբերի 1, № 19, էջ 598-599:

գամանքով, որ իր և այլոց (Գր. Զիլինկիրյան, Մ. Նուպարյան, Ստ. Ոսկան, Հիւսարյան և այլն) թարգմանական գործունեության շնորհիվ, հայ գեղարվեստական ընթացում ամրագրվել էր համաշխարհային վիպասանության բազմաթիվ արժեքների մի ծիր, որը վեպի ընկալման ու մեկնաբանման գեղարվեստական չափանիշների տեսանկյուն և հայեցակետ էր մտցրել, որոնց արժեքայնության սահմաններով էին ընկալվում, գնահատվում ազգային վիպասանության դրսելորումները և միայն այս պարագային պահանջվող ներդաշնակությունը (պոետիկա-ազգային գաղափարաբանության համակցությունը լայն առումով) վերջնականապես ճշգրտում էր կոնկրետ վեպերի գեղարվեստական, գեղագիտական և պատմա-գործառնական տեղը թե՛ գրական ընթացի համապատասխան փուլում և թե՛ ժանրի պատմության ընդհանուր համապատկերում:

«Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» հայ վեպի պատմության մեջ առաջին զուտ նամակագրական (չպիստոլյար) ստեղծագործություններից է: Ժանրի այդօրինակ դասական դրսելորումներից, որ ըստ ամենայնի օգտագործել է նամակագրական վեպի պոետիկայի մասնահատկությունները, միաժամանակ զուգահեռելով ազգային մշակութաբանության, արձակի մետաժանրային բնույթի անհատականացված ստեղծագործական կիրառականությունները: Այս զուգահեռումն առհասարակ Մամուրյան վիպասանի դիմագծի տիրապետող հատկանիշներից է հայ վեպի պատմության համապատկերում: Վեպի պրոֆեսիոնալ թարգմանիչի և տեսաբանի հանդամանքը մի կողմից, հայ արձակի վիպային, էպիկական գեղարվեստական քննաբանական-ստեղծաբանական հիմնավոր իմացությունը մյուս կողմից, նրա բնագիրը կենտրոնացրել են հենց այդ մատնանշված զուգահեռականության կիզակետում: Փոխպայմանավորված հավասարակշռությունը ժամանակակից կենտրոնացրել մասնակից դրսելորումների ձևաբանության (մորֆոլոգիայի) գործնական իմացությունը (թարգմանություններ կատարելիս ստիպված էր վեպի կառուցվածքը կազմաքանդել) հարակցելով հայկական գեղարվեստական լուգուին, առանց դույզն-ինչ ծայրահեղությունների, նամանավանդ գայթակղիչ բազմաթիվ հանգամանքներ կային այս պարագային՝ եվրոպական նամակագրական վեպի (Դիգրո, Ռուսսո, Ստերն, Գյոթե, Շոդեր դը Լակլո) և գեռես հին ու միջնադարյան հայ գրականության թղթերի, ուղերձների և նամակների տիրույթները: Արդյունքում հայ վեպի պատմության մեջ ամրակայվեց նամակագրական նորագույն վեպի մշակույթն ու տեխնիկան, անշուշտ իր ժամանակի գրականության տարածքում՝ իբրև դիդակտիկ-լուսավորական վեպ-նամականի, որը սակայն հետագայում պիտի դառնար հայ վեպի պատմության ժանրային ընդունված դրսելորումներից: Հիշենք թեկուղ Սրբուհի Տյուսարի, Նար-Դոսի, Երվանդ Օտյանի նամակագրական վեպերը կամ այսպես կոչչված վեպ-նամականիները: Պատահական չէ, որ գրողի հիմնայիակին նվիրված հայ գրական կյանքի և մամուլի բազմաթիվ ու խայտաբղետ արձագանքներում հանկերգ էր դարձել այս հանգամանքը. «...գրեց Անգլիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը, որ հետո հրատարակեցավ մասսամբ կոռունկի մեջ, իսկ այժմ ամբողջն՝ որ կը կազմե զիրք մը, հրատարակված է, ուր հեղինակին ընտիր ճաշակը, գեղցիկ միտքը, վճիտ իմացականությունը, հղկուն ու ջղուտ ոճը, օգտավետ խոր-

հրդածությունը, ազգային հանկուցիչ պատկերները լուսի նման կը փայլին», – նշում է Ա. Լուսինյանը<sup>9</sup>:

Հեղինակն այս գործը նվիրել է Ծերենցին, որն էլ պատճառաբանում է «Հնածայականի» գոյությունն ինքնին, որը սակայն մամուրյանական վեպի գենեղիսի առնչությամբ կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունի: Երևույթը ոչ այնքան պատճառաբանվում է այն հանգամանքով, որ ականավոր գրագետը եղել է Մամուրյանի ուսուցիչը, երբ նա ուսանում էր Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, այլ այն փաստը, որ 1860-ին Պոլսում ստեղծված «Բարեգործական» ընկերության հիմնադիրներից էր, որ ընկերակցություն էր հայկական նոր գաղափարաբանությունը արմատավորելու, մշակութային և լուսավորական նորօրյա վերածննդի համար՝ հայ անհատին, այնուհետև հանրությանը այլասացության և բացահայտ միջոցներով գաղափարադարձի բերել պետականության գերխնդրով: Մի գերխնդիր, որ ներառնում էր հայ անհատի հատկականությունը կենտրոնացնել ազգային պատմությունն իրեւ կենսափորձ կրելու, լուսավորական գոյաբանության էույթներին հարիրության, բարձրակարգ կրթության, հավատքի հյուլեն ըմբռնելու որպես կենսունակ ամբողջություն դառնալու ապավեն, որ է պետականությունն՝ իր դարի ընկերային ու բարոյական չափանիշն իր մեջ կրող ես-ի ազատություն: Այսպիսով պետության վերակոչման հանգանակը բավականին սթափ էր, պատմական կարելիությունները առարկայական գնահատող: Հայի հատկականացված ես-ի ազատությունն ու պետականությունը հարակցում էին միմյանց, այս պարագային ևս պահպանելով հեղինակի փոխապայմանավորված հավասարակշռությունը: Պատահական չէ, որ այս գերխնդիրը Մամուրյանի գեղարվեստականացման խորհրդի համանունն է դառնում: Եվ Ծերենցի «քաջալերանքի» և «Հիշատակի» ակնարկները, որոնք վերաբերում էին վեպի առաջին գլուխներին ներգրավում էին ամենից առաջ մատնանշված գերխնդրի գեղարվեստական իրացմանը: Սա է վեպի հղացքի բյուրեղացման ու գոյավորման արտաբնագրային տիրույթը, որ նամականի-վեպում բնագրային դիմորոշում ստացավ և նաև պայմանավորեց նամակագրական վեպի համագրային (սինթետիկ) բնույթն իրեւ կառուցվածք, իրեւ բազմաշերտ համակցություն, հանգամանք, որ ժամանակակիցների կողմից առավելագույնս էր գնահատվում. «Հայու մը ճակատագրով, ուր հավասարապես ի հայտ կուգան բանսատեղի, պատմագետի և իմաստաների բազմադիմի կարողություններ և որ իր գրավոր երկասիրությանց գլուխ-գործոցը կրնա նկատվիլ, ցույց տվագ թմրած ընդարձացած սրտերու և բարփույն ու գեղեցիկին ճաշակը սրբագործեց»<sup>10</sup>:

«Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագրությունը վեպը հարում է նամականի-վեպերի գասական ձևաբանությունը: Միջուկը նամակագիր-հասցեատեր կառուցվածքային զուգագրությունն է, որը ստեղծագործության արխիտեկտոնիկայում ներառնում է նամականի-վեպը կազմակերպող գործառնական բոլոր միավորները՝ նամակի նախադրություն անմիջական կամ միջնորդավոր-

9 Փյունիկ, Գամիրն, 1890 թ., № 10, էջ 148:

10 Ա. Լուսինյան, «Պ. Մամուրյանի հիմնամյակը», Փյունիկ, 1899 թ., № 10, էջ 154:

ված, այսպես կոչված ուղերձային մասը, հիմք իր ածանցյալներով՝ այստեղ չեղոք նամակագրի շարադրանքի կցում կամ ներդիր նամակ, տեսանկյունային շեղումներ, նկարագրություններ, արտակառուցվածքային խոհեր, դատումներ, եղբափակում և վերջապես՝ հետգրություններ, իբրև դիպաշարի և սյուժեի ընթացակարգի լարումներ։ Սա ավելի բնորոշ է 90-ական թվականներից համաշխարհային վիպագրությանը հարգի նամականիշ-վեպերում։ Հուսավորական շեշտվածությամբ նամակային վեպերում, որպես կանոն, դրանց քանակը առավելագույն նվազության է հասցվում։ Պատահական չէ, որ հարյուր վեց նամակներից բաղկացած Մամուրյանի խնդրո առարկա վեպը միայն երկու հետգրություն ունի (ԺԴ և ԺԴ նամակները)։

Նամականիշ-վեպի նամակ-գլուխներն ունեն իրենց հիմնական և լրացուցիչ կենտրոնները, ինչպես որ ենթադրում է ժանրի ձևաբանությունը։ Հիմնականները նելսոն-Վուտ և Վուտ-Նելսոն նամակներն են, որոնցից հիսունմեկը նելսոնն է առաքել, քառասունը՝ Վուտը։ Լրացուցիչները հետեւալ տեսքն ունեն. տոքթոր Բեյնից Վուտին՝ 8, Լիլիից նելսոնին և հակառակը՝ 2, տոքթոր Բեյնից Լիլիին, Վուտից Բեյնին, Շայնտից Վուտին՝ մեկական։ Վեպ-նամականին չի ենթադրում նամակագիրների և հասցեատերերի մեծաքանակությունը, քանի որ կոմպոզիցիոն պատճառաբանվածությունը այդ գեպքում կխախտվի։ Բուն նամակի սահմաններում արդեն և՝ կոմպոզիցիոն, և թե սյուժետային ընդլայնությունը աներկբայելիորեն առկայված և դրսեորվելու բոլոր հնարավորություններն ունի։ Հատկանշական է, որ այս իրողությունը վեպում ուղղակիորեն ներազեկ է նամակների հասցեների հանդամանքի վրա նաև։ Ընդամենը մեկական նամակ է ուղարկված Տարոնից ու Մուշից, մնացյալ բոլորը՝ Կ. Պոլսից և Լոնդոնից են։

«Անգլիական նամականու» կառուցվածքին և ժանրային առանձնահատկություններին անդրադառնալիս պետք է արձանագրել, որ Մամուրյանը կիրառել է վեպ-նամականու բնորոշ ձևերից մեկը, որտեղ տիրապետողը սիրավեպն է (Նելսոն-Լիլի հարաբերությունների պլանը), որն ամբողջանում է թափառիկներին նվիրված վեպերի, ասպետական վեպի, արկածային (ավանտյուրիստական) վեպի, դիդակտիկ վեպի անթաքույց բաղկացուցիչներով և սրան գուգահեռ ընդհանուր քննաբանական համակարգով, որ մասին՝ ի տեղի։ Սիրավեպի ընտրությունը և մատնանշված բաղկացուցիչների գոյությունը ենթադրում են վեպ-նամականու դինամիկ, հարաշարժ տարբերակ, որտեղ փորձությունների արձանագրման հենքը վեպի այս տեսակի մշակույթի ընդհանուր նախապայմանն է, այն շրջանակը, ուր առաջադրվում են ծրագրային ու գաղափարամետ դրույթներ։ Օժանդակ բաղկացուցիչներն ընդգծում են էպիկական մժնոլորտը։ Բավարարվենք երկու օրինակով։ Տոքթոր Բեյնի դատավարության նկարագրությունները Վուտի նամակներում արկածային-դիդակտիկ վեպի բաղկացուցիչներն են շեշտում (տե՛ս նամակ ԾԵ), իսկ ԿԱ-ԿԹ նամակներում լեղի հսահեմի նենդության ու վհուկային բանսարկությունների վերջնական արդյունքը՝ իբրև ահավոր տառապանքներ և տփայտանքներ, նրա կյանքի հանդուցալուծման կանոնակարգված տեսք է ստացել, Շոդեր դը Լակլոյի «Վտանգավոր կապեր» հանրահայտ վեպին հար և նման։ Այս իմաստով պերճախոս է նելսոնի Կ. Պոլսի շրջա-

կայքում ծովային ճանապարհորդության և հատկապես փոթորիկի անզուգական նկարագրությունը<sup>11</sup>, որը միաժամանակ և սիրահարների հոգեվիճակների տարբացիկ փոփոխությունների այլասացություն է և դիպաշարի հանգուցալուձման հնարամիտ գեղարվեստական հնարանք:

Երկու խոսքով ներկայացնենք սիրավեպի դիպաշարը: Հանգամանքների բերումով հնդկահայ մեծահարուստ առևտրականը վաղաժամ մահանում է և իր վիթխարի ժառանգությունը հանձնում է իր միակ որդուն՝ Ներսեսին, որին խնամակալ է կարգվում հորեղբայրը: Սա փոխում է թե՛ իր անունը՝ դառնալով կոմս Իսահեմ, թե՛ տղայի՝ նրան Նելսոն անվանելով: Տեղափոխվում են Անգղիա: Նելսոն-Ներսեսը Քինկ անունով բարերարի չորհիվ հիմնավոր կրթություն է ստանում, դառնում ընտիր զինվորական: Մասնակցում է Լեհաստանի ազգային-ազատագրական պայքարին, որի նկարագրություններն ի գեղ արկածային և ասպետական վեպի պոետիկայի սկզբունքներով են իրացված: Վերադառնում է Անգղիա, մտերմանում կոմս Իսահեմի ընտանիքին, սիրահարվում նրանց դուստր Լիլի-Շուշանին: Ծնողներն արգելք են դառնում այդ սիրուն, և Նելսոնը ստիպված կրկն սկսում է աստանդականի, թափառիկի կյանքը: Դեռ ուսումնառության տարիներից հին մշակույթների ու քաղաքակրթությունների, հատկապես Հայաստանի նկատմամբ տածած հետաքրքրությունը նրան Կ.Պոլիս է տանում, որպեսզի, իրեն նվիրելով հայի պատմությանն ու արդի կյանքին մոտիկից ծանոթանալուն, փարատի իր վշտերը: Այս նախապատմությանը հաջորդում է բուն սիրավեպը: Իր բարեկամ Վուտին ուղղված և նրանից ստացված նամակներում տեղեկություններ է հաղորդում և ստանում Լիլիի կյանքի և իր առօրյայի մասին: Լիլին, խուսափելով պարտադրված ամուսնությունից, նախ՝ տնից, այնուհետև Անգղիայից փախչում է: Գալիս է Կ.Պոլիս, սիրահարներն իրար գտնում են: Որպեսզի օրինական ամուսնություն լինի կրկին Նելսոնի առջև է կանգնում իր անհայտ ծագումը պարզաբանելու թնջուկը, և Վուտը, հաղթահարելով տիկին Իսահեմի դավերն ու խարդավանքները, կարողանում է գտնել Նելսոնի հանելուկային բարերարին: Նելսոնի առեղծվածային կենսագրությունը բացահայտվում է: Պարզվում է, որ Լիլին Նելսոնի հորեղբոր դուստրն է: Բազմաթիվ արգելքներ հաղթահարած սիրահարներն իրենց հոգեկան ներդաշնակությունը փոխակերպում են այլ հարթության վրա՝ վիթխարի ժառանգությունը Տարոնի գավառում հողի և ժողովրդի բարօրության համար օգտագործելով:

Սա է սիրավեպի դիպաշարը, շուրջ քսանի հասնող գործող անձանց պահածքի ու գործողությունների շարժառիթներ, որոնցից սիրավեպի տարբեր կառուցվածքային միավորներում արարողական գործառնություններով են հան-

11 Ի դեպ, ծովի տարերքի Ակարագրությունը Մամուրյանին անշափ հոգեհարազատ էր: Գրողի «Հուշագրեր»-ում նման բազմաթիվ էջեր կան, որոնք ամենից առաջ առանձնանում են պատկերային համակարգով, ոճի պացիկությամբ: Պատահական չե, որ դրանք սկլուտրահայ գրող և գրականագետ Գրիգոր Օաթիզանը մեկտեղել է «Ամիս մը ծովուն վրա» պայմանական ընդհանուր խորագրի ներքո և, որպես հայոց լեզվի ու գրականության շունչն ու հմաքը ընդգծող, ընթերցման համար ցանկալի գրականություն, հրատարակե՛ դպրոցներուն ուսանելու համար: Տե՛ս Մատթեոս Մամուրյան, Ամիս մը ծովուն վրա, Բեյրութ, Հայաստանի եկեղեցվո քրիստոնեական դաստիարակության բաժանմունք, 1990 թ.:

գես գալիս բացի Նելսոն, Վուտ, Լիլի կենտրոններից, լեդի Իսահեմը, Տենտին (Լիլի նշանածը), տոքթոր Բեյնը, Քենինկը՝ Թուրքիայում Անգլիայի դեսպանը, Ֆոքսը և փաստաբան Հելվոքը:

«Անգլիական նամականի»-ի պատումը սիրավեպի դրսեորում ունենալով հանդերձ, նրան գերապատվություն չի տալիս, քանի որ պատումային տիրապետող այս շերտը վեպի սկզբում, միջնամասում ներդաշնակ զարգանում է մյուս շերտի հետ, որ Նելսոնի և Վուտի խորհրդածություններն են գերազանցապես Հայաստանի և Հայի առիթով: Ճիշտ է, երբեմն ընդմիջարկվում են Համբոնդհանուր պատմության, սոցիոլոգիայի, մշակույթի դատողություններով, որոնք սակայն սերտորեն առնչվում են առաջինին: Եթե ուրվագծենք պատումային մակարդակը, ապա այն կունենա հետեւյալ պատկերը. Նելսոնի ճամբորդությունը Կ. Պոլիս, Նելսոն-Լիլի Հարաբերությունների նախապատմությունը, Նելսոնի արկածների պատմությունը, Լիլիի նշանադրության հանդամանքներն ու փախուստը, Վուտի որոնումները Նելսոնի կենսագրությունը բացահայտելու կապակցությամբ, Նելսոն-Լիլի շղթայի ամբողջականացումը Հարակից բոլոր հանգամանքներով, պատումի քննաբանական-վերլուծական շերտն իբրև Հայաստանի և Հայ անհատի ըմբռնումների իմաստասիրության և գաղափարների համակարգ: Այսպիսին են պատումային մակարդակի դրսեորումները:

Վեպում, փաստորեն, համընդհանուր պատումը գոյավորվում է սիրավեպի և քննաբանական շերտերի գուգադրությամբ: Սկսած ԽԴ նամակից այն կենտրոնանում է սիրավեպի ամբողջականացման և հավաքագրման վրա, իսկ քննաբանական, գաղափարների համակարգի շերտը լրիվ հարակցվում դրան և գաղափարի ու անհատի միակցումն էլ հենց վերնագրում ամրագրված «Հայի ճակատագրի» ամբողջականացումն է, ես-ի գիտակցումը: Այս միակցումը խտացնում է վեպի գեղագիտական ռեակցիան: Միրավեպի հանգրվանը հավասարագրում է գաղափարների համակարգում արտածված առաջադրույթներին: Տիրապետողը հատկանության հաստատումն է: Երջանկության հասնելու գրավականը, նախասահմանված ճակատագրի անհատականացված գիտակցությունն է, վերադարձը շոշափելի, առարկայական հիմքերին:

«Անգլիական նամականի»-ի քննաբանական շերտի մեկնաբանման ելակետքանաձեր առաջադրում է Նելսոն՝ Վուտին ուղղված նամակներից մեկում. «Վեպ կհորինես բարեկամ, թե ոչ ծշմարիտ իրողություն կպատմես: Ես քանի միամիտ, դժբախտ և անհոգ եմ: Այդտեղ տարօրինակ բաներ կպատահին և ես անձանոթիս հետ կզբաղիմ կամ Հայերու վրա փիլիստիայելու կելնեն<sup>12</sup> (ընդգծումն իմն է – Գ. Հ.): «Հայերու վրա փիլիստիայելու կելնեմ» խոստովանանքը մատնանշում է Նելսոնի և Վուտի խորհրդածությունների շրջանակը, որն ունի Հայ ողին ու պատմությունը ուսումնասիրելու, ընդհանրացնելու, առաջ գնալու հեռանկարների նկատառումները: Իսկ ո՞րն է այս իրողության պատճառը: Նելսոնը հային մոտիկից ճանաչելու և տեսնելու հանգամանքը հետեւյալ ձեռով

12 Մատթեոս Մամուրյան, «Անգլիական նամականի կամ հայումը նակատագիրը», Երկեր, Երևան, «Հայաստան» հրատ., 1966 թ., էջ 193: Հետայսու վեպից բերված բոլոր քաղվածքները փակագծելում ենքստիճան կից:

Է խոստովանում Վուտին. «Հիրավի ոչ բախտ, ոչ փիլիսոփայական քար, ոչ ոսկեղմ և ոչ էրո մը գտնելու արշավեցի այս կողմերը։ Սակայն կվախնամ, որ անոնցմե ավելի դժվարագյուտ բան մը չդառնա փնտրածս, թեև պատմության մեջ սկիզբ և տեղ մ'ունի։ Հայկա թոռներ եկա աստ որոնելու, բարեկամ, ու թեև ինչպես Ասորեստանցիք, Քաղղեացիք, Հռոմայեցիք անհետ են եղեր ժամանակին բլատակներուն տակ, նույնպես հայերն ալ անոնց վիճակակից լինելնին կերևակայեմ, սակայն երբ Անվիա, քանի մը գրքի մեջ կենդանի հայու նշույլներ աչքս զարկին, հարցութիրձ ըրի և իմացա, որ մանավանդ Պոլիս գունդ գունդ կշարժին ու շատեր ալ շունչ կառնուն կտան եղեր։ Զարմանքս տարավ. վասնզի պատմությանց և Հայաստանի մեջ հայերուն մասունքը և ոսկորտիքը զննելու ատեննիս, անոնց հարությունը ով ներգործեց։ Եթե այս հարությունը ստույգ է, այնուհետև ուրիշ հարությանց ալ պիտի հավատամ» (60-61)։ Մատնաշված է մի հավաքականության հարատեսությունը, որ պատմության խաչուղիներում անընդհատ ընդդիմադրել է կորսոյան բազմաթիվ ուժերի և այն հանգամանքը, որ ի տարբերություն բազմաթիվ հին, սակայն կորսված՝ իբրև տեսակ և ամբողջություն, ժողովուրդների, նա դեռևս գոյություն ունի։ Այս պարագային ընդգծվում է հայի հարատեսության պատմական օրինաչափությունը։ Ճակատագրով նախասահմանված առաքելությունը, որը հարության հնարագորություն է ընձեռում։ Եվ ահա այդ վերակոչման, հարության միջոցներն ու ուղիները, դրա համան ճանապարհները դառնում են վեպի ձեաբանության էամասերից մեկը։ Նելսոնը և Վուտը իրենց նամակներում առաջադրում են բազմաթիվ ու բազմաբնույթ գրույթներ և հակադրույթներ, որոնց պատասխանները վեպի բնագրում գոյափորում են մատնանշված խնդիրների մեկնաբանության և արժեքավորման համագրությունը։ Գաղափարների համակարգի հակադրության սկզբունքը (թեզ-անտիթեզ-սինթեզ) ներառնում է պատմության և պատմությունը կրող սուբյեկտի փոխհարաբերությունների ամբողջ ուղղությունները։ Եվ այդ ընթացքում ձեավորվում և լիովին պատկերագրվում է հայի Մամուրյանի ժամանակաշրջանի, անցյալի և ապագայի ուղղվածության պատկերը, որը կրկին ու կրկին նպատակամիտում է ձեավորված, ազգային գիտակցություն ունեցող անհատի պատկերը ամրագրելուն։

«Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» վեպը, բնականաբար, իբրև ուսուցողական-լուսավորական հանգանակների հանրագումմար, պարփակում է գաղափարների համակարգի տարաբնույթ շերտեր և դրսեւորումներ, ուրոնք կենտրոնանում են փիլիսոփայության, մշակույթի, լուսավորության, բարոյաբանության, կրոնի ամենատարբեր խնդիրներին։ Ստեղծագործության մեջ ակնհայտ է արծարծված գաղափարների տասը շերտ։ Բնականաբար նպատակ չունենք ամենայն մանրամասնությամբ անդրադառնալ դրանց տառացիորեն բոլոր դրսեւորումներին։ Այնուհենդեռ կներկայացնենք ընդհանուր դրսեւորումները գրույթների ձեռով։ Ի՞նչն է Մամուրյանի նմանօրինակ խնդիրները շրջանառության մեջ մտցնելու, ուշադրությունը դրանց վրա բեկոնելու նախապատճառը։ Նամակներից մեկում Վուտը այսպես է պատասխանում այդ հարցին։ «Մեծ կարեռություն կտաս դու այն ազգին, որ կգլորի ու նորեն կկանգնի։ Այո, երբ վերջի կանգնումը առաջինին պես փառաւոր դառնա, ապա թե ոչ նույն ազգը

շատ կվնասի թե իր նախկին համբավին ու մեծությանը մասին և թե մեր համալրումին կողմեն։ Ուստի լավագույնը կսեպեմ, որ ազգ մը պարծանաց գագաթը հասնելեն ետև առոք փառոք կործանի։ Անդիմաղրելի պարագաներեն ստիպյալ՝ անհետ մարի, քան թե շքեղ անցյալե մ'ետևե անփույթ ու հաշմ թափառի ներկային մեջ, աղքատիկ ապրի ու ազգաց դուռը մուրա։ Վասնզի՝ հիները մեր աչքին իբրև դյուցագունք կերեխն, թեև նույն անվան ավելի արժանիներ կդտնվին այս պահուս մեր երկրին և ուրիշ տեղեր։ Ժամանակը խոշորացույց մ'է, որ քանի հեռանա, մեր երեակայության առջև հասարակ բաներու անգամ, խոշոր, այլուն ու խորհրդավոր գույն մը կ'ընծայե» (65)։ Հայ իրականության մեջ այս երկդիմի իրավիճակը չէր գոհացնում Մամուրյանի վեպի գաղափարակիրներին։ Անցյալի ետեռում կորնչելը ուժացման է տանում, և այս մտայնության դիմակայությունն են դառնում ստեղծագործության գաղափարական բոլոր շերտերն անխտիր։

Առաջին շերտը՝ անտրոպոլոգիական։ Գաղափարների համակարգի այս շերտում բնորոշվում են հայության ընդհանուր տիպի բազմաթիվ օրինաչափությունները իբրև խտացում տեսակի հական, կենսական մասնահատկությունները վեր հանելու և դրանք ընթերցողական մակարդակում առկայելու համար։ Այս շերտը հարակցված է դիդակտիկ լուսավորականին՝ ուսուցանելու, ճանաչելու, ուղղություն տալու, կրթելու առաջադրույթներին։ Մյուս շերտն իբրև անհատի ներդաշնակության և ժամանակակից դառնալու հանգրվանային փրկչություն, շեշտվում է նաև գործող անձանց պատրաստակամ դիտությանը, պատմա-մշակութաբանական դրսերումներին վերաբերող ընդարձակ միջարկություններում։

Պատմության էույթը, անցյալի ընթերցումը։ Առհասարակ պատմության կարգը և ի մասնավորի հայոց պատմությունը վեպի գաղափարաբանության միջուկն է։ Պատմությունն է հատկականությունը իմանալու և գիտակցելու միակ հնարավորությունը, իբրև մի ժամանակի, արդիականության հորձանուտում սեփական ճանապարհը գտնելու, նրա տիրույթներում գործելու ուղի։ Անցյալի մեկնությունը քննական, սթափ հայացքով է, ապամիթոսականացված, դեպքերի և իրադարձությունների կենսական շերտերի վերհանմամբ, որոնք պիտի սատարեն իր ժամանակակից հային՝ գերինդերը լուծելու համար. «Ես այնպես կկարծեմ, որ ժամանակը հասած է, որ հայ ժողովուրդն իր հին դրություն փոխե և ազգության հզոր հիմունքը չէ թե միայն խաչի այլ կարծյաց ազատության, լուսավոր հաստատության մեջ հաստատե, ապա թե ոչ շատ հարգի անդամներ պիտի կորուսե, և բռնակալության չըրածը քաղաքակրթությունն ու գիտությունը պիտի կատարեն», – շեշտում է Նելսոնը (173)։ Սրան է ուղղված պատմության գուգահեռական մոտեցումը՝ հայեր-հայաստան-անդլիացիներ-Անդլիա։ Սեփական անցյալի ժառանգորդության ինքնահատուկ ցանկությունը մբռնումը։ Հայոց պատմության ընթերցման «արդիականացված» դրսերումները։ Պատմության այս շերտին սերտորեն առնչվում է գաղափարների համակարգի հաջորդ՝ հարանց վարքի շերտը, իբրև մեկնություն և ապրելու կերպ։ Հայոց պատմագրությունը վեպի համակարգում հեղինակում է քերթողահայր Մովսես Խորենացու վարքն ու գործը, որպես ընդօրինակման և կիրառականու-

թյան հետևելու, բնականաբար իր ժամանակի խնդիրներից ածանցված, իրողություն: Քանզի Մովսես Խորենացու պատմությունը վկայված է գերինդրի տեսակետով: Պետականության և անհատի ներդաշնակ համակցության հանգանակով: Հար և նման Խորենացու «Հարանց վարքի» շերտում հիշատակության են արժանի Հայկ Նահապետի, Գագիկ Բագրատունու, Վաղարշակ թագավորի ընթերցումները: Այսպես՝ Հայկի մեկնաբանության մեջ, հատկականության ծագումնաբանության հիմքը համարում է Հայ ժողովրդի ազատության կոսմոգոնիկական, աստվածային տրվածքը. «Հայկ ազատասիրությունը գիտությամբ և ուսմամբ չստացավ՝ այլ բնութենե ուսավ, այլ իր հոգվույն մեջ գտավ, այլ իր մարդկային իրավանց մեջ տեսավ: Նա զգաց իր ծննդական իրավունքը, որ ոտից կոխան լինելու մոտ էր, նա հիշեց իր նախնյաց պարզ և անկախ կենսավարությունը, որ արդեն ապականելու վտանգին կդիմեր, և երբոր ինքը վսեմ մարդասիրութենե վառյալ՝ փորձ փորձեց, բայց անկարող եղավ» (116): Հենց ազատության ծննդական իրավունքին տեր կանգնելը, դա կարելիություն դարձնելն է կանխորոշում գաղափարների համակարգում պատմության ընթերցման շերտի առկայությունը: Ավելին՝ սրան են կոչված գաղափարների համակարգի այնպիսի շերտերը, ինչպիսիք են՝ ազգագրական-կենցաղագրականը, ես-ժամանակ շրջապտույտի և օտարում-վերադարձ համակարգի պատկերագրումները: Միայն այն պարագային է ես-ը գիտակցվում, երբ պատմությունը կրավորական ճանաչման, ուսումնառության շրջանակները հաղթահարում է, դառնում ներդրություն իրողություն: Երբ ես-ը գտնում է սեփական պատմության հետ միակցվելու, ամբողջանալու ներդաշնակ եզրը: Եվ պատճական չէ, որ այս հայեցակետի մեջ են ամրագրվում նաև կրոնի և հավատքի, կենցաղի և հոգեբանության ըմբռնման և ընտրության բոլոր հանգամանքները: Անհատ-ժողովուրդ ներդաշնակության տիրույթներում է կենտրոնանում դրանց օգտապաշտական, միտումնային ընթերցումները: Որոնք իրենց բնույթով վեպի կառուցվածքում գոյավորում են յուրօրինակ քարոզարան: Քարոզարան՝ անհատի և հայրենիքի ապագան կերտելու համար. «Արդ՝ եթե անհատի մ'ապառնին իր անցյալ և ներկա բարոյական վիճակին անդիտութենե կրնա կորնչիլ, որչափ ավելի ահոելի և քրեական մեղք կդործե ազգ մը (թող Արամագգեն կամ Հայկեն իջնե) եթե իր նվիրական կոչումը անտես առնե, միշտ օտարին աղի հացը ուտե, լեղի ջուրը ըմպե, և իր գլուխը անհոգ գերեզմանաց վրա զնելով՝ պառկի ու միանգամ ինքնինքին գալով՝ չհարցնե. Ես ով եմ, ուր կգտնվիմ և ուր կերթամ: Այս հարցմանց ճիշտ պատասխանը մինակ պատմությունը կարող է տալ: Այո, պատմությունը կարող է իմացընել, թե իր հայ ազգը ծներ է, ինչպես շատ դարեր ինքնագլուխ քայլեր է ՀԱսիա. ինչ պատճառավ թե գլուխ և թե հոգի կորուսեր է և այս ստորին աստիճանի մեջ ընկեր է. և որ միջոցավ նորեն կրնա կանգնիլ և իր առաջին քաղաքական վիճակին շավիղը գտնել: Ժողովուրդ մ'որ իր անցյալին և ապառնիեն զրկված է, երկոտանի անբանից դասակ մը կդառնա» (108): Քողազերծելով մտքի և ոգու հանդարտությունը, ինքնագոհությունը, գերինդիրը ետին պլան գցելու, ուրիշին թողնելու մտայնությունը՝ Սամուլյանը անընդհատ սրում է և բեեռում է գիտակցված գործելու, կարելիությունները վերընձյուղելու հանգամանքը: Այս առումով վեպն անխնա է մեր թերություննե-

ըի, անկատարությունների նկատմամբ։ Այն կանխատեսում է այն խոչընդուներն ու ետքնթաց տանող իրողությունները, որոնք պիտի արմատահանվեն։ Մամուրյանի կանխատեսումը ապագայի, արդիականության գերծզրիտ խտացումներ էլ է անում և փաստորեն ստեղծագործությունը յուրօրինակ վեպ-գուշակություն դարձնում։ Հետահայաց այս կանխատեսումը և գուշակությունները, որոնք այսօր էլ հրատապ ու արդիական են, խարսխվում է ազատության իրավունքի վերասահմանյալ տրվածքը իրականացնելու համոզմունքի և փստահության վրա։

«Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» վեպի գաղափարների համակարգի շերտերի թվարկումն ու քննությունը թերի կմնա, եթե չանդրադառնանք ևս մեկ դրսեորման։ Դա դիդակտիկ-լուսավորական վեպերին ներհատուկ մաքսիմների առկայությունն է, որոնք նպատակառուղղված են այս կամ այն գաղափարի, դատողության, իրադրության, հոգեվիճակի, գործողության ընդգծման, շեշտվածության և թանձրացման համար։ Օրինակ՝ սիրավեպի պատումային շերտում հաճախ շրջանառության մեջ են մտցվում հագեցած-ընդհանրական բանաձևումներ։ «Սիրո մեջ միջնորդությունը ստեալ մատնությամբ կլուծվի. միջնորդը քիչ քիչ սիրահարի պաշտոն կվարե և անոր տեղը կանցնի»։ Կամ բնութագրելով դարի դրապաշտական փորձարարական գիտությունները՝ գրում է. «...բժիշկը կերպ մը խոստովանահայր մ'է, որ կպարտավորվի շատ գաղտնիքներ իր ծոցը պահել»։ Արևելքի հոգեբանությանն ու մթնոլորտին անդրադառնալիս նկատում է. «Արևելքի մեջ, արդեն գիտես, մարդ ակամա բանաստեղծ կլինի և ստեալ առանց նպատակի...»։

Ստեղծագործության հրատարակումից տարիներ հետո, անդրադառնալով վեպի տեսությանը, Մամուրյանը հատկապես ընդգծում է. «Բայց ինչ են նպատակավոր վեպերն, եթե ոչ ասենք որ չէ թե լոկ մեկ տեղվո, մեկ որոշ ժամանակի, լոկ մեկ ժողովրդյան մ'այս կամ այն բարուց նկարագիրը կներկայացնեն, այլ մարդկային, միտքն ու սիրտն հուզող անձուկներ, ընկերային հարցեր ու հանելուկներ, հանրային խնդիրներ կբացատրեն ու կլուծեն իմաստափական և գիտական ոգկով և արդար ու օրինավոր զգացումներու կանոնավոր ուղղություն մը կտան»<sup>13</sup>։

«Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» հայ նամակագրական վեպի մնայուն արժեքներից է, որ ժամանք պատմության մեջ ունեցավ կարևոր նշանակություն թե՛ արծարծած գաղափարներով և թե՛ պոետիկական առանձնահատկություններով։

## ¶.

Մամուրյանի գեղարվեստական ժառանգության ամենաբնութագրական արտահայտությունն է «Սև լեռին մարդը» վեպը. այս ստեղծագործությամբ է, որ գրողը մատնանշեց վիպասանի իր հնարավորությունների սահմանները, կարելիությունները, ըստ ամենայնի ներկայացրեց գաղափարաբանական, գեղագի-

13 Ապապրամ, «Գրական գրուցներ», Արևելյան մամուլ, 1896 թ., № 19, էջ 600:

տական սկզբունքներն ու դավանանքը: Հայ ժողովրդի պատմության, հոգեբանության, ազգագրության քննական իմացությունը, ժամանակակից քաղաքակրթության զարգացման միտումներին անընդհատ հետևելու ու վերլուծելը, այս ծիրում ազգային կյանքը դիտելու, մեկնաբանելու շարունակական ընթացը, քաղաքականության ելեջների և խաղերի մեջ հայ ժողովրդի դիրքի և անհրաժեշտ գործունեության կերպը մատնանշելու նպատակներն ու ցանկությունները, պետականության վերակոչման գերխնդիրը գործնականացնելու մտավորականի, գրագետի և ազգային գործիչի առաջնային մղումը, իր ժողովրդին ժամանակակից, արդիական գարձնելու պատմական կենսունակությունն ընդգծող իրողության ապահովումը, ոչ հեռու անցյալի աշխարհաքաղաքական հեղաքեզումների գուգահեռներում (ոռուս-պարսկական, ոռուս-թուրքական պատերազմներ, ազգային սահմանադրություն, հոգեոր գարթոնք և այլն) հայության գոյավորված նոր պատմական, աշխարհաքաղաքական, հոգեբանական, սոցիալական վիճակի ընդհանրացումը և ապագայի մատնանշումը ստեղծագործական խառնարանում վեպի հղացքը ձեավորելու ազգակներն էին, որոնք 1860-ական թվականներին վերջնականապես բյուրեղացան, հստակվեցին և արդեն 1870-ականների սկզբներին պատրաստ էին և՛ իբրև կառույց, և իբրև գաղափար՝ վեպ դառնալու համար: Պետք էր պարզապես համապատասխան արտահայտման ձև, որ ենթադրեր առավելագույն լսարան, նամանավանդ եթե նկատի ունենանք, որ այս ստեղծագործությունը իր բնույթով ընդգծված գաղափարակիր, միտումնավոր, ոռմանտիկ, լուսավորչական, արկածային, պատմական, կատեխեղիսային վեպերի մի համադրություն է, ասել է թե՝ լիովին բավարարում էր մամուրյանական արդիական, ազգային վեպի հանգանակների պահանջները: 1871 թվականին Մամուրյանի կողմից հիմնած և փաստորեն հեղինակային հանդեսում՝ «Արևելյան մամուր»-ում, սկսվում է վեպի տպագրությունը: Պարբերականում հրատարակելու պարագան պայմանավորված էր ոչ միայն վեպի՝ առարկայաբար հնարավորության սահմաններում մեծ լսարան ապահովելու դրդապատճառից, այլև խորքում ուներ գաղափարաբանական միտվածք: Ստեղծագործության «ինչ է այս» առաջաբանում, ուր Հայր Թափառիկ անվանյալ վանականը հեղինակին է հանձնում վեպի ձեռագիրը, կարդում ենք. «Լուր չունիմ, հարեց նա տրտմագին իր տեղը դառնալով, հիմակ լրագիրներ շատ կան, իսկ ականջներ ու արդարություն խուլ են: Ես շատ հեռվեն կ'գամ: Արևելյան մանուին անունն ականջիս անուշ հնչեց. ամենքն Արևելուաք կ'պոռան, Արևմուտքեն լույս կ'սպասեն այսօր, թեև ես լավ ևս կը սիրեմ Արևելյան աշխարհն ու այն գրիչներն որ մեր թշվառ երկրին վրա խոսելու կ'ախորժին: Ճամբուս վրա էիր, Մամուրիդ անունը զիս բերավ՝ այն հուսով որ Հայաստանի պանդստին համար ամեն տուն ու սիրտ բաց են»<sup>14</sup>:

Ակնհայտ է, որ նալբանդյանական սկեռումը՝ Արևելքի աշխարհաքաղաքական հանգույցներում հայոց ապագան տեսնելը, Մամուրյանի պարագային ևս առաջնային էր, ընդ որում ոչ միայն հանդեսի գովազդն ընդգծելու, ազգային խնդիրների վրա համակ և հետեւղական կենարունացումների առումներով,

14 Մատթեոս Մամուրյան, Սև լեռին մարդը, Աթենք, Տպագրություն «Նոր օր», 1932 թ., Էջ 3: Հետայտու վեպից բերված բոլոր քաղվածքների էջերը տեքստին կից փակագծերում:

այլև՝ Արևմուտքի նկատմամբ ցուցաբերած հանրահայտ հակազդեցությամբ, որ փաստարկում էր պատմական և քաղաքական հայտնի իրադարձություններով և ազգային ապագան Արևելքի պարագծում տեսնելու հստակ գիտակցությամբ:

Շատ ստեղծագործությունների պես Մամուրյանի այս վեպն էլ դժբախտաբար քաղաքական շարժառիթների և գրաքննության պատճառով մնաց անավարտ: Շուրջ մեկ տասնամյակ՝ 1871-1881 թթ. նրան հաջողվեց «Արևելյան մամուլ»-ի էջերում տպագրել «Սև լեռին մարդը» վեպի գլուխները, սակայն բնույթով ընդգծված քաղաքական նկրտումներ ունեցող երկի հրատարակությունը 1881 թվականին արգելվեց: Գրողի որդին՝ Հրանտ Մամուրյանը, հետագայում վեպի առանձին հրատարակության մեջ կցեց մի «Վերջաբան», ուր, ի թիվս այլ հարցերի, պատմում է նաև ստեղծագործության տպագրման արգելքի, դադարեցման մանրամասները. «Հոս կը լրանա «Սև լեռին մարդը»ին երկրորդ մասը, վերջին և երրորդ մասը չէ լրացած որոշ պատճառներով»:

Գրաքննությունը վրա հասնելով հետզհետե կաշկանդած է գրական մարդուն գրիչը, որով վեպիս հեղինակը հարկադրած է դադարեցնելու անոր շարունակությունը, իսկ վեպին ուրվագիծը, անոր հարակից աշխարհագրական քարտեզները, ձեռքով գծագրված, վերջապես բոլոր հարկ եղած թուղթերը հոս հոն փոխադրելե ձանձրացած և հուսահատ ստիպվեցանք բոցերու հանձնել շատ կարևոր ձեռագիրներու և անձնական նամակներու հետ և միանգամ ընդմիշտ մղձավանջե մը ազատիլ» (341): Հրանտ Մամուրյանի այս վկայությունից հայտնի է դառնում ոչ միայն այն, որ վեպը պետք է ունենար հարուստ հեղինակային հավելված-ծանոթագրություններ, այլև՝ բաղկացած պիտի լիներ չորս մասից: Այնուհանդերձ, նշենք, որ ստեղծագործության պահպանված տարրերակն, անկախ պակաս բաղկացուցիչների, ամբողջական է:

Ներժանրային հարացույցում Մատթեոս Մամուրյանի «Սև լեռին մարդը» ստեղծագործության կերպը որոշարկելիս անպայմանորեն պետք է հաշվի առնել գրականության պատմության այն առարկայական խնդիրները, որոնք ծառայել էին հայ գրականության առջև: Ազգային-հոգեսոր կյանքն ու իրավիճակը հանրահայտ պատճառներով կանխորոշում էին մեր գրականության «մենտալիտետը», շատ հաճախ գեղարվեստական բնագիրն ներմուծելով արտագրական բազմաթիվ հանգամանքներ և գործառնություններ (օրվա քաղաքական, ազգային խնդիրների արտագրական անդրադարձ, մաքուր դիդակտիկա, ազգը կազմակերպելու ծրագրեր և հոչակագրեր, սեփական պատմությունը ժողովրդին մատուցանելու այլ եղանակ չունենալու պատճառով գիտական և ստեղծագործական քննության մեկտեղում, հրապարակախոսական այլասացություններ և այլն) և այս իրավիճակում բնականաբար, վիպասանությունը, որ գրականության ամենաբաց համակարգն է, չէր կարող անտեսել իրեն վերապահած-պարտադրած պահանջները: Համաեվրոպական գրական ընթացի զուգահեռներում հայ վեպը բնականաբար պիտի ունենար իր զարտուղությունները՝ չվկայելով անխառն արկածային (ավանտուրիստական), դիդակտիկ-լուսավորական, բարքագրային ստեղծագործություններ, նամանավանդ Խաչատուր Աբովյանի գեղարվեստական փորձը հայ գրականության համապատկերում ամրագրել էր ժանրային կերպով և բնույթով համագրական վեպի գործնականությունը, որ-

տեղ միահյուսվում ու միասնակականում են արկածային, պատմական, դիդակտիկ, վարքագրական, լուսավորչական, զգայացունց և այլ վեպերի բաղադրատարրերը։ Այս իմաստով՝ «Սև լեռին մարդը» համադրական ստեղծագործություն է՝ պատմական, արկածային, ճանապարհորդական, սիրային, լուսավորչական, դիդակտիկ, գոթական, գաղափարային վեպերին բնորոշ բաղկացուցիչներով և գործառնություններով, որոնք բնագրում անքակտելիորեն բաղչյուսված են և միջյանցով պատճառականցված։ «... բայց ինչ ծփուն ըմբռնում, — գրում է Մամուրյանը, — մանավանդ երբ հիշողություն ու երևակայություն չեն գործեր, երբ մեզ շրջապատող իրերն ու դեպքերն անտես ու անլույծ կ'մնան, երբ, ավելի պարզ խոսիմ, մարդ կ'նայի այլ չի տեսներ, կ'դիտե այլ չվերլուծեր, կ'հիանա այլ չխորհիր, կը գործե այլ չհիշեր»<sup>15</sup>։ Գրողի նմանօրինակ մոտեցումը, որ սկզբունքային էր, հանգամանալի կիրարկում է ունեցել վեպերի համակարգում։

«Սև լեռին մարդը» վեպի համադրականությունը պատճառաբանվում է նաև ստեղծագործության ընդգծված ժամանակաշրջանով՝ 1816-1828 թթ. ուսուպարսկական պատերազմ։ Հատկապես վերջին շրջանը և հաջորդող տարիները։ Ի դեպ, վեպի լրատվությունը ընձեռում է պատկերագրած ժամանակաշրջանի ճշգրիտ սահմանները որոշել։ Վերջին գլուխների իրադարձությունները տեղի են ունենում 1831 թվականին (տե՛ս գլուխ Փ., Էջ 303)։

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ ստեղծագործության կազմաբանությանը։ Վեպը բաղկացած է «ինչ է այս» վերտառությամբ առաջաբանից, երկու մասերից (ընդամենը 42 գլուխ, 29 առաջին մաս, 12-ը՝ երկրորդ) և վերջաբանից։ Վեպերին անպայման առաջաբան, ներածական կցելը Մամուրյանի նախասիրությունն է։ Այս պարագային համապատասխան հատվածը ստեղծագործության կառուցվածքի համար է երեք առումներով։ Նախ՝ վեպի խորհրդագորակածային, վեպ-այլասացություն (այսուել զուտ գործնական իմաստով՝ գրաքննությունը շրջանցելու հանրահայտ եղանակ) լինելու հանդամանքը։ «Արևելյան մամուլ»-ի խմբագրություն է գալիս թափառաշրջիկի տեսքով մի վանական և հեղինակին է հանձնում վեպի ձեռագիրը՝ այն փրկելով ոչնչացումից։ Դասական վիպասանության, հատկապես պատմական, արկածային վեպի բավականին տարածված կառույց։ Սակայն, ի տարբերություն եվրոպական համապատասխան բազմաթիվ վեպերի, Մամուրյանը մեծացրել է առաջաբանի գործառնական հագեցվածությունը և՝ վեպի գաղափարաբանության ուրվագրումով, և՝ համընդհանրուր հղացքի անթաքույց հեղինակային մեկնաբանությամբ։ այս երկուսն էլ այն առումներն են, որոնք «Սև լեռին մարդը» առաջաբանում վեպի կազմաբանության, կառուցվածքի համար շեշտում են իրենց էականությունը։ Ինքնին յուրահատուկ է վերջաբանի պարագան, որը թեև հեղինակային չէ, ինչպես արդեն նշել ենք, սակայն ըստ ամենայնի մերկած է վեպի կառուցվածքին՝ հատկապես ֆաբուլան, այուժետային ամբողջականությունը ապահովելու առումով և, իրավամբ, դիտելի է իրեւ ստեղծագործության թեև վերապահելի, սակայն ամբողջականացնող հատված։

15 «Արևելյան մամուլ», 1880 թ., 1, Էջ 427։

Արդ, համառոտ ներկայացնենք «Սև լեռին մարդ»-ի դիպաշարը: Վեպը սկսվում է Ռշտենց Զորայի նախապատմությամբ: Քարդաշցի այս երիտասարդը հայրենի գյուղից տեղափոխվում է Թավրիզ, զբաղվում վաճառականությամբ և մեծ հարստություն դիզում: Ռուս-պարսկական պատերազմի սկզբից զինվորագրվում է և իր ջոկատով մասնակցում կոիվներին: Նրա մասին կինն ու որդին երկար ժամանակ որեւէ տեղեկություն չեն ստանում: Ատոմից՝ Զորայի տնտեսից Նվարդը տեղեկանում է, թե նա կենդանի է և բանտարկված Բաղաբերդում: Կինը որոշում է ամեն գնով գնալ ամուսնու մոտ: Այդ ժամանակ պարսից շահի պաշտոնյաները հայտնում են, որ Զորայի՝ պարսիկների դեմ կովելու պատճառով նրա ընտանիքը պետք է քսանչորս ժամվա ընթացքում հեռանա երկրից, նրանց արտաքսում են: Նվարդը որդու՝ Դերենիկի և Ատոմի հետ վաճառելով ունեցած-չունեցածը, որոշում է մեկնել Հայաստան, Բաղաբերդ, գոնե Զորային մոտիկ պատսպարվելով՝ միմիթարվելու համար: Անցնում են Արաքս գետը, մտնում Հայաստան: Վեպում ամենայն մանրամասնությամբ նկարագրվում են Նվարդի, Ատոմի, Դերենիկի և նրանց ուղեկցող մարդկանց ճանապարհորդություններն ու զանազան արկածները: Հոգեւորական Ավագը Ագուլիսում նրանց հայտնում է, թե իրենց լրտեսում են, տեղեկացնում է Զորայի մասին: Մեղրիում նրանց կալանում են, իսկ բանտապետը փորձում է տիրանալ Նվարդին, սակայն Ատոմը նրան սպանում է, ագուլիսցի երիտասարդ Նուրիճանը ճիշտ ժամանակին է տեղ հասցնում Ավագի կողմից ուղարկված փաստաթղթերը և նրանց ազատ են արձակում: Շարունակվում է ընտանիքի ողիսականը. զանազան փորձություններ հաղթահարելով՝ նրանք գնում են դեպի իրենց նպատակը: Սաստիկ փոթորիկի և ուժեղ անձրեսի ժամանակ պատսպարվում են Անանուն ճգնավորի խցում, որը նախ մի դրվագ է հիշում Ատոմի երիտասարդությունից, թե ինչպես էր նա իր հայրենիքում ահ ու սարսափի մեջ պահում քուրդ ելուզակներին, ապա շահելով Զորայի կնոջ, տնտեսի և որդու վստահությունը, պատմում է իր կենսագրությունը: Անանուն՝ նույն ինքը Բաբկենը, գունդ է կազմում, այնուհետև բանակցում է Ավագի հետ, որպեսզի թե՛ ուստաների, թե՛ պարսիկների կողմից կովող հայերը կենտրոնանան բացառապես իրենց խնդիրների վրա: Հետեւելով հայրենիքն ազատագրելու ներսես Աշտարակեցու հորդորին՝ Բաբկենը, Զորան իրենց գնդերով մասնակցում են պատերազմին: Ամենայն մանրամասնությամբ նկարագրում է Երնջակի առումը, առհասարակ Զորայի և յորւսների զանազան ճակատամարտերն ու հերոսությունները: Զորան հավաքում է իր մարտական ընկերներին և արյան ուխտով երդվում են, որ հար ծառայելու են միմիայն հայրենիքի ազատության, անկախության գործին: Ներսեսը հանձնարարում է Զորային, որ նա մի խումբ քաջերով ամրանա Բաղաբերդում, որպեսզի եթե Ռուսիան չբավարարի հայոց պահանջները, ստիպեն քաղաքական գիծումների գնալ: Զորան իր մարտական ընկերների հետ գրավում է Բաղաբերդը, այն ամրացնում և դարձնում ըստ Էության անառիկ: Վեպի այս դրվագներում լիովին մանրամասնվում են Զորայի համախոհների և մարտական ընկերների հերոսական, անձնազոհ կերպարները: Պատերազմից անմիջապես հետո ոռուսական զորքերը տարբեր միջոցներով փորձում են ճնշել Բաղաբերդի պաշտպաններին և, ի վերջո, Զորային այնտեղ բանտելու

պայմանով, գրավում են անառիկ ամրոցը։ Զորան և նրա մարտական ընկեր Նուրեմբեր, որ վեպի եզրափակիչ հատվածներում, պարզվում է, վրացուհի էր և Այծեմնիկի, իր և Զորայի գտներ մայրը, Բաղաբերդում արգելափակվում են։ Բարկենը դառնում է ճգնավոր, Ավագը՝ Գողթան գավառի հոգեոր առաջնորդ, իսկ Նուրիճանը և Հերենցը մյուսների հետ անընդհատ կապի մեջ են լինում՝ մտմտալով Զորայի ազատությունը։ Բարկեն-Անանունի, Զորայի և համախոհների ոռւսպարսկական պատերազմի ժամանակ կատարած գործերի և դրան հաջորդող իրադարձությունների արձանագրությամբ ավարտվում է ստեղծագործության առաջին մասը։ Երկրորդ մասում վեպի դիմաշարք զարգանում է Զորային բանտից ազատելու մանրամասների կենտրոնացումներով։ Հնարամատությամբ, կաշառքով և ուժով հաջողվում է փրկել Զորային և, փաստորեն, ազատել Սիրի աքսորվելուց։ Զորան, որ դեռևս Բաղաբերդում ունեցել էր երկրորդ որդին՝ Վարուժանը, Ավագը բերդապետին ասել էր, թե Զորան մեծ հարստություն ունի և նրան մի խնամող կին է պետք, որպեսզի կարողանա կորզել գաղտնիքը և այսպիսով նվարդին նրա մոտ էր տարել, իր ընկերների հետ խոլոյ է տալիս հետապնդումներից և կտրում Հայաստանի սահմանը, սակայն քուրդ ավարառունների հետ բախվելու ժամանակ անհայտանում են Վարուժանն ու Նուրեմբեր։ Որոշում է ետ վերադառնալ և փնտրել նրանց։ Այսպես է ավարտվում վեպի երկրորդ մասը։ Հ. Մամուլյանի կցած վերջաբանից իմանում ենք, որ տարիներ հետո պարսկական և թուրքական սահմանագլխին մեծ համբավ է ձեռք բերում «երկու կառավարությանց թշնամի, քյուրդերու անհաշտ ոսով, խեղճերու ու հարստահարված հայ ժողովրդյան բարերար և բարեկամ հեղափոխական ավագակապետ մը, որու համբավը կը տարածվի ամբողջ Արարատի վրա»։ Այդ գործիչը, որին անվանում էին Սև լեռին մարդ, Վարուժանն էր։

Բնականաբար ստեղծագործության այսօրինակ դիմաշարային կառույցը ենթադրում է պերսոնաժնների կայուն համակարգ՝ վեպում գաղափարաբանությունը ապահովող կենտրոն-հերոսների հստակ գործառնություններով և սրանց սատարող, լրացականացնող կերպարային խորք։ Վեպի ժանրային առանձնահատկությունները պայմանավորել են պերսոնաժնների անվանացանկը ևս, ու ըստ յուրաքանչյուր բեկվածքի (պատմավեպ, ավանդուրիստական վեպ, վեպ-քարոզարան, լուսավորական վեպ և այլն) բնագրում ներկայացրել դրանք կրող առավել բնութագրական գործող անձիք։ պատմական՝ ներսես Աշտարակեցի, Պասկելիչ, Մաղաթյան, Մուրադ խան, Աբբաս Միրզա, ավանդուրիստական՝ Հայր Թափառիկ, Ագուլիսեցի անանուն օրիորդ, Իվանով բերդակալ, Բարթող ճգնավոր, քարոզարան՝ Գուրգամ և Հերենց, Ավագ, սիրավեպ՝ նուրեմ և այսպես շարունակ։ Երրորդենք, որ վեպի պերսոնաժնների համակարգը պայմանավորված է պատճառականացված ստեղծագործության գաղափարաբանությամբ, պատմության և արդիականության նկատմամբ ունեցած հեղինակային սկզբունքների հայեցությամբ, և այս իմաստով ստեղծագործության մեջ գործում են միայն այնքան կերպարներ, որքան անհրաժեշտ է գաղափարաբանությունը ամրագրելուն, չկան ժանրային առումով համանուն վեպերին ներհատուկ կերպարային խորքի «արձակություններ», մեծաքանակություն։ Արանից է ածանցվում, որ կենտրոն-հերոսները (Զորա, Ատոմ, Ավագ, Անա-

նույն-Բաբկեն, Գուրգամ, Նուրեմ, Նվարդ) անթաքույց գաղափարակիրներ են, իսկ մոտ քսանհինդի հասնող մյուս գործող անձինք լրացականացնում են սոսկ կենտրոնների գաղափարակիրներ լինելը: Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ այսօրինակ վեպերի միջին վիճակագրականի համեմատ պերսոնաժների համակարգը «Սև լեռին մարդ»-ում անհամեմատ նվազ է, ընդամենը երեսունչորս:

Վեպի պատումային մակարդակն իրականացվում է երկաստիճան սկզբունքով: Նախ՝ Դերենիկի (Զորայի որդու) պլանով, ապա՝ ԺԴ գլխից մինչեւ առաջին մասի ավարտը, Անանունի և հետո կրկին Դերենիկի պլանով: Վեպի պատումային կառուցվածքի գերակայող մասում (Դերենիկի պլանը) պատմողի տեսանկյունը առավելագույն չեզոքության է հասցված, հիմնականում շարադրվում է իրադարձությունների ընթացքն առանց որեիցե գնահատման կամ մեկնաբանման, իսկ եթե դրանք առկա են, ապա վերաբերվում են միմիայն պատումային այս կամ այն միավորի նկատմամբ ունեցած անհատական ապրումներին ու ընդհարումներին: Անանունի պարագային գուգորդվում են պատմողի տեսանկյունները և առարկայական արձանագրությունները: Սա ինքնին բնական է, քանի որ Անանուն-Բաբկենը վեպի կենտրոն-հերոսներից է, հիմնական գաղափարակիրներից, մյուս կողմից էլ նրա պլանով է ներկայացված ուռւսպարսկական պատերազմ-Հայաստան հարաբերությունների ողջ երփնագիրը և Զորայի կենսապատումը:

Համադրական ստեղծագործություն լինելու հանդամանքը հատկանշել է ընդհանրապես պատումի կերպը՝ խորհրդավոր վիճակների նկարագրություններ, անընդմեջ տարաբնույթ առեղծվածներ և գաղտնիքներ, փորձությունների և արկածների շարան, քաղաքական և պատմական էքսկուրսներ, լուսավորչական-քարոզային անխառն հատվածներ, սիրային, հոգեբանական կոլիզիաներ և այլն: Բավարարվենք սոսկ մեկ օրինակով: Զորային բանտից ազատելու նախապատմության մեջ վեպի պատումում կարեւոր նշանակություն է ձեռք բերում Բաղաբերդի մերձակայքում հայտնված առեղծվածային ուրվականի այուժետային գործառնությունը: Ավելորդ կասկածանքներից խուսափելու համար Նուրեմն այդ տեսքով թունել էր փորում, որպեսզի ազատեր Զորային: Բացի ընդգծված պոետիկական այլասացություն լինելուց, ուրվականի փոխարերական գործառնությունը (հայոց ազատությունը սաղմնային վիճակում է) ներառնում է ժանրի դինամիզմը, գաղափարների և իրադարձությունների բնագրային հավասարակշռությունը ապահովելուն: Վերջապես՝ վեպի պատումային համակարգի համար վճռորոշ կառուցողական նշանակություն ունեն կենտրոն-հերոսների անընդհատ երկվություններն ու դիեմները և իբրև անհատականության, ազգային կյանքի ապագայի, ազատության գոյագոր և թե այս կամ այն իրադարձության, գործողության ամրագրման իրողություն:

«Սև լեռին մարդը» վեպի գործողությունների առանցքը շարունակական գործողություններն են, որոնք բացի արկածային, ասպետական ժանրի ստեղծագործություններին ներհատուկ գործառնություններից ունեն նաև հստակորեն առաջադրված լուսավորչական, կատեխնիկային, քաղաքական-գաղափարաբանական գործառնություններ և առաջադրություններ: Կենտրոն-հերոսնե-

ըը, կերպարային խորքի գերակշռող մեծամասնությունը հար շարժման մեջ են, ճանապարհորդում են անցած պատերազմի գրեթե բոլոր թատերաբեմերով։ Մամուրյանն ամենայն մանրամասնությամբ յուրաքանչյուր տոպոնիմի համար ընդուրձակ պատմաաշխարհագրական լրատվություն է հաղորդում, իր տեսակի մեջ յուրօրինակ մի ուսուցում՝ մանրամասներով պատմության հերոսական և ողբերգական էջերը, դրանց պատճառներն ու ակունքները, արդիական վիճակը, ազգային բնույթի և հոգեբանության տեղաշարժերի և փոփոխությունների հանրագումարը։ Այս իմաստով «Սև լեռին մարդը» կրում է բաֆֆիական վեպերի պոետիկայի, հատկապես «Կայծերի» կառույցի, բնագիրը կազմակերպող բաղկացուցիչների ազգակները։

Վեպի պոետիկայում հար և նման սկզբունքներով են ամբողջանում բազմաթիվ դիմանկարները, բնանկարները, ճակատամարտերի, կոիվների նկարագրությունները։ Այս իմաստով հատկանշական է առաջին մասի տասնմեկերորդ գլուխը, որտեղ բնույթյան տարերքի նկարագրությունը գաղափարաբանությունն ամրակայելու անթաքույց նպատակամիտություն ունի։ Վերջապես՝ հերոսների հոգեվիճակի համապատասխանությունն ընդգծելու լրացական նշանակությունը։ «Վշտաբեկ ու մտահույզ կը սպասեինք, մեր աչքը միշտ Բաղաբերդ սե սարը հառած, որու վրա կը ծանրանար ահարկու արծվի մը ճիրաններն ու թերթը։ ...Այս մեր ծանր տրտության ու անձկության կարծես թե բնույթյունն ալ մասնակից կը գտնվեր։ Երրորդ օրն չծագեցավ մեզի համար արևն։ Արևելքի կողմն թուխ ու թանձր ամպ մը կը տեսնվեր որ ծավալելով ծածկեց Բաղաբերդի գագաթը մեր աչքեն» (277)։

Բնագրում կիրառելով բազմաթիվ խորհրդանիշներ՝ Մամուրյանը հարկ է համարում տալ նաև դրանց մեկնությունները՝ կերպարների խոսափողերով։ Այս պարագային ևս ավանդական խորհրդանիշները փոխակերպվում են հեղինակի գաղափարաբանությունն ընդգծող արդիական խտացումների։ Այսպես՝ վեպի համակարգում «խաչը» վկայված, ավանդական հավատքի, հոգեորականության, եկեղեցու խորհրդանիշից փոխանցվում է զենքի, պայքարի խորհրդանիշի՝ իբրև մեր հավատքի բնական, կենսունակ շարունակություն։ «Խորհրդավորն՝ խաչին պես այն սուրն է, որու արժեքը դեռևս չեն ճանչեր Հայերը, շարահարեց Անանուն։ Մեր ավագա անկախության գրավականն է այս, որու վրա ըստ կարգի պիտի խոսիմ» (108)։

Վեպում գեղարվեստական պատկերի կառուցման, բազմաթիվ աշխարհագրական տեղանունների և վայրերի նկարագրությունների առանձնահատկություններին անդրադառնալիս հարկ է նշել երկու հանգամանք։ Նախ՝ Մամուրյանի բոլոր դիմանկարները, բնանկարները, խորհրդանիշները հանգուցվում են կենտրոն-հերոսների կողմից գաղափարաբանության էութենական նկատառումներն ընդգծելուն, ապա՝ չնայած այն հանգամանքին, որ գրողն իր նկարագրած աշխարհագրական շատ անունների ծանոթ չի եղել, անձամբ չի տեսել և «կրնան սպրդած ըլլալ տեղագրական մանր վիպակներ» (341), սակայն «հմուտ ըլլալով Հայաստանի պատմության և աշխարհագրության, այնպիսի ոճով կը գրե, որ կարծես արդեն իսկ միջավայրը իրեն ծանոթ է։ Ու այդ ոճը՝ կը

պարտի իր գրական հմտության»<sup>16</sup>: Արձանագրենք նաև, որ ստեղծագործության լեզուն, ոճը ընդգծված պաթետիկ է, որը պայմանավորված էր նյութի ընտրությամբ:

Մատթեոս Մամուրյանի «Սև լեռին մարդը» հայ վեպի պատմության համապատկերում Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ից հետո երկրորդ ստեղծագործությունն է, որ անխառն կենտրոնացրել է 19-րդ դարի 20-ական թվականներից մինչև 30-ականների առաջին կեսի հայ ժողովրդի աշխարհաքաղաքական իրավիճակի վրա: Եթե Աբովյանի անզուգական վեպը հայ գրականության ժամանակակից այն թոփչքն է, որտեղ պատմականն ու արդիականը զուգադրվում էին, ապա Մամուրյանի պարագային պատմությունն ու արդիականությունը միակցվել էին, ուր ոչ հեռու անցյալի քաղաքական, ազգային կյանքի ճամանեմատ ավելի մեծ շրջանակ և ժամանակ, իրադարձություններն ու ազգային կենսոլորտն ընդհանրացնելու գործընթացը պայմանավորող լրատվության նոր որակ, ոչ հեռու անցյալի գեպերի շարունակության և հետևանքների ամբողջությանը ականատես լինելու հանգամանք: Փաստ է Բեովինի կոնգրեսը, կայսրությունների կեցվածքն ու քաղաքականությունը, ըստ իրենց շահերի՝ խաղարկումներն ու աճպարարությունները, ուստի բնական էր գրողի հակագլեցությունը, պատմության ստեղծագործական կենտրոնացումներում արդիականության ընդգծումը, հայ ընթերցողին այդ փորձի միջոցով թմբիրից թոթափելու նպատակամիտությունը, պատմական փորձը ապագայում ի բարին գործադրելու, ելքին հասնելու անթաքույց ձգտումը: «Թերեւս չգիտես որ հայերը վերջին պատերազմին մեջ միայն օտարին համար արյուն թափեցին», – բանաձեռում է Ատոմը: Մեծ քաղաքականության այն հանգամանքների մեջ, երբ հայության երկու հատվածներ հայտնվել էին պատերազմող երկու կողմերում (մի մասը Ռուսաստանի, մյուսը՝ Պարսկաստանի) և ի վերջո ազգային գերիսնդիրներն իրականացնելու հույսերն ի գերեւ էին ելել, իսկ ոռուս-թուրքական պատերազմի բարեպատեհ առիթից պարզապես չէին թույլատրել վերցնել իր հասանելիքը (Ներսեսին աքսորել էին և չկար հայոց մեջ այն համակարգող ուժը, որ քաղաքական գործոն դառնար ազգային խնդիրները հոգալու համար) Մամուրյանին մնում էր եղագացնել, թե այս պատերազմներն ու քաղաքական անցքերը հայերին վնասեցին, առկախեցին սեփական ճակատագիրն տնօրինելու, պետություն կերտելու գերիմնդիրը: Մամուրյանական շեշտագրումները «թե Պարսից, թե Ռուսաց կողմից Հայոց կրած տառապանքը», իսկ ենթաբնագրում միանշանակ նաև թուրքերի «երեսից»՝ հրատապ էին դարձնում ընտրության, եթի որոնումները՝ վեպին հաղորդելով անթաքույց քաղաքական-քարոզչական հնչերանգներ: Նամանավանդ որ օտար ուժերից կախվածությունը, նրանց հպատակ լինելը ազգային մենտալիտետում առաջացնում էին

16 Հ. Ս. Երեմյան, «Մատթեոս Մամուրյան», Բազմավեա, Վեճետիկ, Ս.Ղազար, 1911 թ., № 8, էջ 360):

միմյանց նկատմամբ անհանդուրժողականություն, կասկածանք. «Օտար վեհապետներու հպատակ հայեր իրարմե կ'կասկածին և իրենց շղթաներն անգետու կ'ամրապնդեն» (41): Այս հանգամանքը Մամուրյանի գաղափարաբանության համակարգում ազգային բնույթի ամենախոտելի, վտանգավոր արտահայտություններն են, ազատության գերխնդրի արգելափակոցներից, և որպեսզի դրանք չեղոքացվեն, գրողը առաջարդում է հայության բոլոր ուժերի մեկտեղման, միասնականացման հանգանակը՝ ազատություն ձեռք բերելու, անկախության համար: Ոչ հեռու անցյալի պատմության մեջ նա միանգամայն ճիշտ պատմահայեցությամբ նկատում և առանձնացնում է այն անհատին, որն այդ ընտրության գաղափարի մարմնավորումն էր: Դա Ներսես Աշտարակեցի կաթողիկոսն էր, որ բոլոր կարելիությունները գործադրել էր, ցուցանել հնարավոր եղանակները՝ ազգային իդաերն իրականացնելու գործում: Վեպի կառուցվածքում Ներսեսի այս գործառնությունն է Հական, հատկապես խոստովանական-մեկնողական այն շերտերը, որտեղ կաթողիկոսը խոսում է, փաստարկում իր գործունեության հաջողությունները, վրիպումները, մատնանշում այն առարկայական ձախողանքները, որոնք խոչընդունում են գերխնդիրը կայացնելուն: Այս հանգույցներում է Մամուրյանը կենտրոնանում Ներսեսի պատմական առաքելությանը, գրականացնում նրա անհատական ողբերգությունը: Ստեղծագործության մեջ Ներսեսը կենսունակ, գործող ընտրության կերպ ու միջոց է և Հեղինակի կողմից նրա՝ իբրև գաղափարակրի, համակողմանի ներկայացումը, պայմանավորվում էր պատմական փորձառության գերակոչությամբ, արդիականացմամբ (տե՛ս վեպի 160-163-րդ էջերը Հատկապես), այնպես որ տեղին էր գրողի սկեռումը այն անձնավորության շուրջ, նամանավանդ պետք է նշել, որ վեպի ամենաավարտուն, կայացած, հիմնավորված կերպարն է:

Ստեղծագործության կառուցվածքում պատմության և արդիականության միացումը, մեկտեղումն ու միասնականացումը, կրկին ու կրկին խարսխվելով ժողովրդի պատմական փորձառությանը, առանձնացնում է այն գաղափարը, թե հայության գերնպատակն է, անկախ քաղաքական տարբեր կողմնորոշումների, այս կամ այն պետության կազմի մեջ լինելու (տվյալ դեպքում գրագետը նկատի ունի Ծովասատանն ու Թուրքիան) իր գործունեությանը նպատակառուղել ազգային խնդիրներ լուծելուն՝ ապահովություն, բարեկեցություն և վերջաշես ազատություն ու պետականություն:

Ցուրաքանչյուր գերխնդիր, նամանավանդ, երբ մի ամբողջ ժողովրդի ապահան կենսունակության անհրաժեշտությունն է, ենթադրում է ինքնաճանաչման գործընթաց: Այս հայեցության մտահոգությամբ է, որ Մամուրյանը ստեղծագործության գաղափարաբանական համակարգում վկայում է հայի բնույթի մեկնությունը: Հայկականության ընդունված միթոսները և կաղապարները քննական հայացքով դիտելու, կանոնակարգված առասպելաբանությունները կոտրելու անթաքույց միտումները նկատելի են: Գրողը համարձակ ապամիթոսականացման է գնում, որովհետեւ ազգային քաղաքականության ձախողանքները փորձում է գտնել ոչ միայն դրսում, օտար ուժերի ոստայններում, այլև մեր մեջ, նա փորձում է պարզապես քանդել վաղնջական պատմության հերոսական հուշերում թաքնվելու սնապարծ կերպարը, ջանում է իր ժամանակակցին ցույց տալ

բացառապես իր մեղքով և պատճառով ստեղծված թշվառության ու անհեռանկարյանության գոյավիճակը։ Այս գործը պատճական թեմաներով գրված այն առաջին երկերից է, ուր դիմակայության, բարոյական նկարագրի, կենսագործարարող սկզբունքների գրականացմանը զուգահեռվել են թյուր հակումներն ու կրքերը, ընչափաղցությունը, ստրկական վիճակին համակերպության ընտելացումը։ Պատմության բազմաթիվ հերոսական էջերի հոսքը վեպի կառուցվածք սոսկ պարզունակ պատմություն-ապագա հակագրության եղանակ չէ, այլ նախ՝ հային իր ներդաշնակ գոյավիճակին, կենսոլորտին դարձի բերելու գերնպատակ, ու այս առումով «Աւ լեռին մարդը» ձեռք է բերում վեպ-դարձի, ազգին իդերի հանգանակի անխառն գործառնություններ։ «Մեր ապագան դեռևս մութ է, կը քալենք ճամբա մը որուն ելքը չգիտենք», – ասում է Ատոմը շինական Գուրգենին։ Ըստ էության պատմական հանրահայտ իրադարձություններից հետո, երբ թվում է, թե փակվել են բոլոր դռները, հայության համար ելք ու ճանապարհ չկա, Մամուրյանը վեպով ցուցանում էր ուղին՝ դիմակայության ազգային հատկանիշի հարություն, սեփական ուժերին ապավինելու և պետականության վերակերտելու հայության համընդհանուր կամք և այս գերխնդրի համար ազգային միասնականություն։ Սա է գրագետի պատմափիլիսոփայական էութենական կենտրոնացումը, որի գործնականությունը, կրողներն էին վեպի կենտրոն-հերոսները՝ Զորան և Ատոմը, Անանուն-Բաբեկնը ու Գուրգամը, Նուրեմն ու Հերենցը, Ավագը։ «Արդ՝ թեև պատմության այս չարաշուք դեպքերը մեզի համար դառն դասեր են, թեև ստրկության և թշվառության բաժակը մինչեւ մրուրը քամելով՝ ազատության արժեքը ճանչեր ենք, թեև դարավոր տառապանաց մեջ միության զորությունն ու հարգը փոքր ինչ գնահատելու վարժեր ենք, թեև արդեն այլ և այլ կոփիներուն մեջ ձեր արիության փորձերը ցույց տվին, որ մեկ հոգի, մեկ նպատակ ունիք, սակայն չմոռնանք նաև որ մեր նախահարց զավակներն ենք, և թերևս մեր արյան մեջ, մեր բնության մեջ, իբրև ցեղական ժառանգություն, դեռ կ'պահենք այն ազգավեր թերությունները, որոնց վրա այժմ կողբանք» (151) բանաձեռումից հետո կենտրոն-հերոսները (Հերենց) անցնում են նաև բարոյական մաքրագործում, գտնում են դավադիրներին դիմակայելու կերպը, որովհետև, ըստ Մամուրյանի, մեր բնույթի և պատմության ֆատալիստական հակոսնյա դավաճանությունը, հային հայի դեմ հանելու օտարների հնարները, ցանկացած առտնին և կենցաղային դժվարություն չեղոքացվում են ազգային գերինդիրը գործնականացնելու ընթացքում։ Վեպի կենտրոն-հերոսները, որ անխառն գաղափարակիրներ են, չենց սրա կրողներն են։

Վեպի ընդհանուր խնդրագրությունը պայմանավորել է գաղափարների համակարգի մտասեեռումը ստեղծագործական կառուցյի նախապատրաստական (պատումի ուրվագրումը, պատճական միջավայրի, գործող անձաց պոետիկական ծանուցման ընթաց, պատկերային համակարգի գործառնություններ և այլն) փուլում։ «Էհ, ըսավ, ես ծերացա, Երասխ, դու տակավին առույգ ես և կայտառ։ Ինչու համար արդյոք քու աղբյուրներու պես չեն բղխիր և հայ սրտերու մեջ հայրենյաց սիրո ակներ» (29)։ Ավագն է, որ Զորայի կնոջ ու որդու հետ մուտք է գործում Հայաստան։ Նրանք գալիս են անհատին ազատելու, վերադարձնելու ազատ ապրելու իրավունքը, որ վեպի գաղափարաբանական կիզա-

կետում դառնում է հայրենիքի ազատության կայացման ճանապարհի դոմինանտ: Բնականաբար, գերխնդիրը պիտի փաստարկվեր բոլոր չափումներով և դրսերումներով: Ազատ ապրելու, պետություն ստեղծելու մզումը ինքնանպատակ չէր և ի շարս պատմական, քաղաքական, ընկերվարական, հանրային բազմաթիվ իրողությունների Մամուրյանը շրջանառության մեջ է դնում նաև բնականն ու նախասահմանայինը՝ միևնույն է, անկախ անհատական բարեկեցիկությունից, բնությունն ու Աստված գենետիկ հիշողության մեջ կողավորել են նաև իր տարերքում ազատ ապրելու ազդակները, առանց որի բարեկեցությունը, անհատականությունը դրսերելու շրջանակը կախակայված է և թերի: Հայրենիքը պարտեզի հետ համեմատելու ալեգորիկ զուգահեռում առաջադրում է այն գաղափարը, որ այգու, պարտեզի նման ամեն օր հարկ է պարտիզպանի համբերությամբ, համառությամբ ոչ միայն այն սիրել «այլև ջրել, սրբել, կենդանի պահել...»: Քննարկելով դրան հասնելու կարելիությունները՝ մատնանշում է լուսավորության, ազգային ավանդներին վերադառնալու, բարեկրթության ճանապարհները<sup>17</sup>, ինչպես նաև դիմակայող ոգու անհրաժեշտությունը, որ վեպում կենտրոնանում է Զորայի և համախոների «արյան ուխտի» կոնցեպցիայով: Վերջիվերջո Բաղաբերդում ամրանալը ոչ թե գեղեցիկ մարտիրոսություն էր, այլ ժողովրդի զինական ոգին պահպանելու, ազատության ճանապարհը ցուցանելու իրողություն, և սա էր «արյան ուխտի» հիմնական խորհուրդը: Նամանավանդ պատմության փիլիսոփայության էութենական հանդամանքները Մամուրյանին բերում են այն պայծառատեսությանը, որ վազ թե ուշ կայսրություններն անհետանալու են պատմական թատերաբեմից (տե՛ս վեպի 164-165-րդ էջերը) և առանց դիմակայող, կազմակերպված սկիզբների ազգի ապագան անհեռանկարյային է:

Ստեղծագործության բազմաթիվ խորհրդանիշներում, Բաղաբերդի «Ազատության փոսի» պատկերներում, հայ եկեղեցու պատմական նոր առաքելության կենտրոնացումներում, երբ այն պայքարը ոգեշնչողն է արդեն, գոյավորվում են հայության ազատամարտի մամուրյանական կերպն ու միջոցները:

«Սև լեռին մարդը» հայ պատմավիպասանության, քաղաքական վեպի ժանրի բնութագարական դրսերումներից է:

17 Հար և Աման «Անգլիական նամականու»՝ Աշելով լեհականության օրինակը, պատմական փորձը:

## ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա.

Այ գրականության պատմության համապատկերում ութսունականների գրական սերնդի երևույթը պայմանավորել է 19-րդ դարի 80-90-ական թվականներին արևմտահայ գրական-գեղարվեստական կյանքում ռեալիզմի և նատուրալիզմի ստեղծագործական, գեղարվեստական, գեղագիտական և տեսական հաստատագրումը։ Գրական այս շարժումը, ի շարս գեղարվեստական ընթացի առաջարած առարկայական խնդիրների, ձեռնամուխ է եղել նաև համապատասխան վիպագրության ստեղծմանը։ Այս հանդամանքը նույնպես գրականության պատմության անհրաժեշտությունն էր, քանի որ տիրապետողը ընդհանրական կայացման համար վեպի համապատասխան դրսերումը պարտադիր էր։ Նախորդ տասնամյակներին առավելաբար թարգմանական, ինքնուրույն վեպերը անխառն ոռմանտիզմի, սենտիմենտալիզմի, լուսավորական ռեալիզմի ստեղծագործություններ էին՝ արկածային, պատմական, դիդակտիկ թեմաներով և մատնանշած ուղղությունների գեղագիտությամբ, գաղափարների համակարգով։

Հիսարյանի և Հայկունու, Տյուսաբի և Տեր Սարգսենցի, Մամուրյանի և Ծերենցի վիպագրությունը կառուցվածքով, գեղագիտական-գաղափարական համակարգով խարսխված էր ոռմանտիզմի, սենտիմենտալիզմի, լուսավորական ռեալիզմի բանարվեստին։ 80-ականներին շարունակվում էր ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական այդօրինակ գրականության հոսքը և, բնական էր, որ գրական նոր սերունդը պետք է փորձեր վիպագրության ասպարեզում ևս ուղենչել գեղարվեստական ընթացի կերպը։ Գրիգոր Զոհրապի «Անհետացած սերունդ մը» և Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպերը այն ստեղծագործություններն էին, որոնք, ըստ Էռլիթյան, արևմտահայ վիպագրությունը որակական տեղաշարժի և բնույթային փոփոխման ենթարկեցին, ժանրը հասցըին մի նոր հանգրվանի, որ գրականության պատմության մեջ հայտնի է ռեալիստական (իրապաշտական) և նատուրալիստական (բնապաշտական) վեպի ժամանակաշրջան։

Թե՛ կառուցվածքային-պոետիկական, թե՛ գեղագիտական-գեղարվեստական հղացքներով և իրագործումներով Զոհրապի և Կամսարականի վիպագրությունը նորույթ էր արևմտահայ գրական կյանքում։ Պատահական չէր գրանց հարուցած արդասավոր տեսական ու քննադատական անդրադարձը, ասուլիսներն ու բանավեճերը։ Ուշագրավ է, որ Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը» արդեն տպագրվելուն զուգահեռ, անմիջապես հայտնվել էր ութսունականների նախակարապետի և տեսաբաններից մեկի՝ Արփիար Արփիարյանի կիզակետում, որը ոգեսորված ստեղծագործության տպագրված հատվածներով, ըստ ամենայնի գնահատում է և շեշտում, թե «Կամսարական Տիգրան Պոլսո Ա-

բովյանը լինելու կոչումն ունի», սրան հավելելով Մարկոս Աղաբեկյանի կարծիքը. «Ի՞նչպես ժողովուրդի լեզուն, ժողովուրդի հոգին կը փայլի այդ վեպին մեջ. միայն թե շարունակեր ինչպես սկսած է»<sup>1</sup>:

Աբովյանի հետ համեմատելը Կամսարականի վեպի նորարարության, ինչպես նաև գեղագիտական-գեղարվեստական հանգրվանային գործառնության շեշտագրումն ուներ:

Կամսարականի վեպը իրապաշտ շարժման գործնական հիմնավոր հաստատագրումն էր, սերնդի մշակութաբանական և ստեղծաբանական կարելիությունների, հանգանակի էական արտահայտությունը: Վերջապես «Վարժապետին աղջիկը» ազատագրումն էր արևմտահայ վեպի պարագայական, «արտավիպային» (նախորդների լուսագորչական, գիտական, պատմական և այլ շերտերից, որտեղ վեպի կառուցվածքում զուգագրված էին գեղարվեստականն ու, ասենք, տնտեսագիտականը) բաղկացուցիչներից, առաջինն էր Զոհրապի «Անհետացած սերունդ մը»-ի հետ իրեւ անխառն, բյուրեղացած գեղարվեստական ստեղծագործություն՝ եվրոպական համապատասխան վիպասանության համարնագրի առումով:

Գրական շարժումը աներկեա կրում էր այն գիտակցությունը, որ գեղարվեստական ընթացում իր գոյությունը լիարժեք դարձնելու համար պետք է համապատասխան վիպագրություն ունենալ, քանի որ ժանրը գրական կյանքում բացարձակ առավելագույնի հնարավորություններ է ընձեռում: Պատահական չէ, որ վեպ գրելու փորձեր էին անում Արփիար Արփիարյանը, Լեռն Բաշալյանը, Հրանտ Ասատուրը, Գրիգոր Զոհրապն ու Տիգրան Կամսարականը:

Գրականության պատմության ընթացականությունը հաճախ պայմանավորվում է միջնորդավորված ազդակներով, որոնք շատ արագ դառնում են ստեղծագործական հղացքներ և ապա բյուրեղանալով՝ անցում կատարում գործնականության: Տիգրան Կամսարականի պարագային, ազգային վիպասանության (հատկապես Աբովյան, Պողյան) և Փրանսիական, մանավանդ Ալֆոնս Դողեի վեպերի ընթերցումը, «Վարժապետին աղջկա» ստեղծաբանական ազդակներն էին: Դողեի «Փոքրիկը», առանձնապես «Ճեկ» վեպը գրողի ստեղծագործական երևակայության մեջ վերջնականապես ծագրտեցին ստեղծագործության չափանիշները, դարձան գործնականության ելակետ: Հուզավառությունը, պայծառատեսությունն ու ոգևորությունը երիտասարդ գրողին չեն լքում մի քանի շաբաթ և «կը դիմեի, միամիտ ուրախությամբ մը, ձեռագիրներուս բարձացած դեզը, որուն վրա մարմարե presser-papier մը դրել էի հիմա, ինչպես քար մը զոր կը դնեն սահմանին վրա.— վեպս գրված էր արդեն»<sup>2</sup>: «Վարժապետին աղջիկը» պատրաստ էր, և Կամսարականը 1888 թվականի սկզբներին ձեռագիրը հանձնում է «Արևելք»-ի վարչությանը: Բնականաբար ժամանակակից կյանք արտացոլող ստեղծագործությունը թերթի վարչության անդամների մոտ բանավեճեր է առաջացնում. «Վարչական խորհրդի մեջ կարծիքները բաժնվելով որո-

1 Արփիար Արփիարյան, «Օրվան կյանքը», Արևելք, Կ. Պոլիս, 1888, հունիս 30:

2 Տիգրան Կամսարական, «Գրքի մը պատմությունը», «Ամենուն տարեցուցը», Կ. Պոլիս, 1923, Է 90:

շած էին որ ես իրավաբար ըլլամ ձեռագիրները կարդալով, – տարիներ հետո վերհիշում է Հրանտ Ասատուրը, – և կարծիքս հայտնեմ: Իրիկոն մը դրկեցին ինծի «Վարժապետին աղջկա» պատրաստ մասին ձեռագիրները: Կարդացի մեծ հաճույքով, և հետեւյալ օրն իսկ դարձուցի զանոնք ջերմապես հանձնարարելով որ հրատարակվի: Այս գործը իրապես արժանի էր քաջալերանքի»<sup>3</sup>: Եվ ահա 1888 թվականի ապրիլից «Արևելք» օրաթերթը սկսում է «Վարժապետին աղջիկը» վեպի տպագրությունն իբրև թերթոն: Ստեղծագործության լույս ընծայրմանը զուգընթաց առաջին էջերի հարուցած ընթերցողական կասկածներն ու սպասման լարվածությունը փոխակերպվում են համակրանքի, վեպի անվերապահ ընդունման: Նույն տարվա մեջ «Վարժապետին աղջիկը» ունենում է երկրորդ հրատարակությունը՝ այս անգամ առանձին գրքով: Վեպը քննադատության կողմից շատ լավ է ընդունվում: Երիտասարդ գրողի նորամուտը և առաջին իրապաշտական վեպերից մեկի մուտքը գնահատում և արժենորում են Հակոբ Պարոնյանը, Արփիար Արփիարյանը, Լևոն Բաշալյանը, Հակոբ Մեղավորը, Հրանտ Ասատուրը, Պերճ Պոռչյանը, այլոք<sup>4</sup>: Գերազանցապես դրական արձագանքները վկայում էին, որ ժանրի պատմական հետագծում երևան էր եկել նոր որակ, որը պիտի հատկանշեր հայ վեպի պոետիկան և գեղագիտությունը առաջիկա տասնամյակին:

## Բ.

Հիրավի «Վարժապետին աղջկա» ընդհանրական բնութագիրը հատկանշում էր վեպի նոր որակ և դրսեռում, որը պիտի խտանար Երուխանի «Ամիրային աղջիկը» ստեղծագործությամբ՝ իբրև արևմտահայ իրապաշտական վիպասանության սստում: Կամսարականի վեպը ուղենչեց ժամանակակից, արդիական կյանքը գրականացնող, բարքերն ու սովորությները գեղաձևող, օպերատիվ վեպի կառույցը: Այն միաժամանակ թե՛ սիրավեպ էր, թե՛ ոսմանտիկական սիրավեպերի պարողիա, թե՛ պոլսահայ կենսողը պատում՝ մարդկանցով, ճակատագրերով և փորձառությամբ և թե անհետացող անհատների, մտայնության գեղարվեստական իրագործում, թե՛ իրապաշտության հանգանակների ստեղծագործական հավաստում և թե ժանրի հնարավորությունների կիրառականության, արևմտահայ վիպասանության մեջ ցարդ չամրակայված դրսեռում: Բնականաբար վեպի առաջին թերթոնային հրատարակությունը իր աղդեցությունն է թողել ստեղծագործության ընդհանրական բնութագրի վրա: «Վարժապետին աղջիկը» նովելային վեպերի ըստ ամենայնի արտահայտություններից է, որտեղ սակայն ներդիր նորավեպերն իրենց կառուցվածքային ամ-

3 Հրանտ Ասատուր, «Դիմաստվերներ», Կ. Պոլիս, 1921, Էջ 254:

4 Տե՛ս Ա. Արփիարյան, «Օրվան կանքը: Մաֆֆի: Նոր վիպասանք և Տ. Կամսարական», Արևելք, Կ. Պոլիս, 1888, 18 հունիս, № 1338, Հ. Ասատուր, «Վարժապետին աղջիկը», Արևելք, 1888, 31 դեկտեմբեր, № 1500, Լ. Բաշալյան, «Գրական սուրբանդակ», Արևելք, 1889, 18 մարտ, № 1562, Պ. Պոռշյան, «Տ. Կամսարականի Վարժապետին աղջիկը», Մուրճ, Թիֆլիս, 1889, № 5, Էջ 790-793 և այլն:

բողջականությամբ, լոկալ «ինքնորոշվածությամբ» հանդերձ, ստեղծագործության համամասնությունը առավելագույնս վեր են հանում, շեշտում ընթերցման միասնականությունը: Այս արտաքուստ հակադարձ շարժումը (երբ ներդիր նորավեպերը փաստում են վեպի ամբողջականությունը, միասնական լինելը) «Վարժապետին աղջիկը» արևմտահայ վեպի համարնագրում դարձնում է առանձնահատուկ, քանի որ թերթոնային վիպասանությունը լայն առումով ժանրի նովելային զարտուղությունները բազմաթիվ դեպքերում ցցուն է դարձել (Զոհրապ, Արփիարյան, Միք. Կյուրցյան, Մ. Գոչոնյան, Ս. Դավթյան, Միպիլ, Ա. Անտոնյան, Մ. Սվաճյան և այլք): Կամսարականի ստեղծագործական, գրողական խառնվածքի անմիջական ազդեցությունն էր սա: Նրա փոքր արձակ ստեղծագործությունները նույնպես ընդգծված վեպային բևեռացումներ ունեն և ըստ երեսութին այս հանգամանքն էր էական, որ շարժման մասնակիցներից հատկապես նա պիտի շարժումը (իբրև գեղագիտություն և գրական փիլիսոփայություն) փաստարկեր վեպով: Վեպի գեղարվեստական և գեղագիտական, գաղափարաբանական լրատվությունն անպայմանորեն պիտի հայտնվեր քննադատության և տեսական մտքի կիզակետում: Առաջին իրապաշտ ստեղծագործություններից մեկն առիթ տվեց ուղղության տեսական-քննադատական ները բունողության: Մեր գրականագիտական միտքը բազմիցս և ամենայն մանրամասնությամբ անդրադարձել, մեկնաբանել է դա, ուստի նորից կրկնելու հարկ չկա: Շեշտենք սոսկ, որ «Վարժապետին աղջկա» շուրջ տեսական ու քննադատական գրություններում կրկին ու կրկին փաստարկվում էին իրապաշտության գեղագիտությունն ու պոետիկան, ռեալիստական և նատուրալիստական վեպերի «ներփակ» կարգավիճակները, գրական նոր սերնդի «ժողովրդային գրականության» հանգանակները: Կամսարականը վեպի առթած մի քանի յուրօրինակ ինքնադատականներով մասնակցեց այդ ասուլիսներին՝ այս անգամ արդեն տեսական հարթության վրա ներկայացնելով վեպի իր ըմբռնումն ու տեսանկյունը: Մի դեպքում՝ բանավիճելով Եղիա Տեմիրճիպաշյանի հետ<sup>5</sup>, Կամսարականը փաստում էր կերպավորման սկզբունքների իրապաշտական եղանակը<sup>6</sup> և իր ստեղծագործությունը որակում իբրև «իրական վեպ», մյուս դեպքում՝ պատասխանելով Բյուզանդ Քեչյանի հոդվածին՝ տարրողում «Վարժապետին աղջիկը» Էմիլ Զոլայի վիպական կառույցից և նատուրալիստական վեպից<sup>8</sup>: Վերջին իրողությունը մատնանշում է ոչ այնքան Կամսարականի կողմից նատուրալիզմի և նատուրալիստական վեպի անվերապահ ժխտականությունը, որքան «Վարժապետին աղջկա» կառույցի համապատասխանությունը Ստենդալ-դոդեկական վեպի կառույցին՝ քնախոսական-ֆիզիոդիական սկեռումների փոխարեն կենտրոնացում բարքերի և փորձառության վրա: Եվ իրոք, հար և նման Ստենդալի ու հատկապես Դողեի վիպագրության, Կամ-

5 Ե. Տեմիրճիպաշյան, «Տխոր իրականությունը: Նոր վեպի մը առիթով», Արևելք, 1888, ապրիլ 27, № 1294:

6 Տ. Կամսարական, «Ո՞ր է իրական վեպ», Արևելք, 1888, № 1297:

7 «Նամակ առ Մեծ Տ. Կամսարական», Արևելք, 1889, 27 հունիս, № 1661:

8 «Քեչյան Էֆենտիի վիպասիրությունը և իմ Զոլայականություն», Արևելք, 1889, 29 հունիս, № 1663:

սարականի վեպում ևս վիպական կենսոլորտը խարսխված է արարքների, հոգեվիճակների, բարքերի, անհատական հարաբերությունների, կոլիզիաների ընկերավարական-հասարակական հարթության վրա, դրանց բնախոսական-փիզիոլոգիական պատճառաբանվածությունը ընդամենը սատարողական խորք է, որպես կանոն ենթաբնագրային մակարդակում ընդնշմարված: Հարկ է նշել, որ Տիգրան Կամսարականի վեպի ըմբռնման և ընկալման հայացքները և տեսական ելակետները (օրինակ Շիրվանզադեի «Արամբի» վեպի մասին գրված հոդվածը)<sup>9</sup> «իրական վեպի»՝ այսինքն ռեալիստական վեպի կառույցի վերաշարադրումներ էին՝ բանաբաղված ֆրանսիական համապատասխան վիպագրությունից և քննադատությունից:

«Վարժապետին աղջիկը» արևմտահայ արձակում (Պարոնյանից հետո, որի պարագան ինքնահատուկ է) ապամիթոսականացրեց վեպի ժանրի ոռմանտիկական բնույթը՝ և՝ թեմայով, և՝ ժամանակով և թե հերոսներով: Պատմական դարակազմիկ ու ճակատագրական իրադարձությունների, հանրային և բարոյական առաքելություն կրող անհատների, տիտանական զգացմունքների փոխարեն վեպ է դառնում սովորական առօրյան, առտնին հոգսերը, արհեստավորի, վաճառականի, մտավորականի կյանքն ու բարքը: Վեպում ոռմանտիկ գրականության ուշագրավ պարողիան կա՝ Անդրանիկ Ֆեներճյանի բանաստեղծ լինելու իրողությունը պատկերագրելիս: Բարձր ոճը, գրաբարյան բառագանձի կիրառությունները, ճոռոմ ներբողյանները, խրթին հանգերը այլևս ընկալելի չէին նոր սերնդի համար, ավելին՝ զավեշտական էին, ու այդ գրականությունը անհետանում էր մշակութաբանական նույն խորքը կրող սերնդի հետ: Ընդդիմությունը ոռմանտիկական աշխարհներման, գոյաբանության, կենսոլորտի նկատմամբ ստեղծագործության ընդհանրական բնութագրի հանկերգն է: Փոխանցումը օնտոլոգիական մեկ վիճակից այլ վիճակի գոյագորում է անցման և երկիրկագածության կերպ, որ դառնում է կյանք, բարք, հարաբերություն և ճակատագիր: Կամսարականի անթաքույց ընդդիմությունը ոռմանտիզմի պոետիկայի և գեղագիտության նկատմամբ այնուհանդերձ վեպի կառուցվածքում լիակատար հաղթահարված, «ազատագրված» չէր: Տեղ-տեղ առկա են ոռմանտիզմի մնացուկները (օրինակ, Արամի և Գարեգինի արարքների գեղարվեստական պատճառաբանվածության վեպի մասին պատմամբ)՝ ինքնուրույն և թարգմանական եղած գրականությունը, պետք է վեպի կառուցվածքում ցուցաներ իր «ուեցիդիլները»: Այնուհանդերձ ստեղծագործության արդեն առաջին նախադասություններում իրականի կանխաշեշտումը դառնում է տիրապետող. «Անդրանիկ վարժապետին աչերը կշողային խանդավառ, իր դիմաց վրա որոշ կկարգացվեր անճառ գոհունակություն մը, զոր յուր գրչին գիտակցությունն ունեցող գրագետը կզգա. Հազիվ վարկյան մ'էր, որ ավարտեր էր Արարատյան Փնջիկի, այս էր յուր քերթվածին վերնագիրը, վերջին տողերն, որո ազդեցության ներքեւ էր այն պահուն: Բարձին վրայեն

9 Տե՛ս «Արամբի»-ն, Արևելք, 1889, 22 հունիս, № 1657:

առավ Մասիսն, օրաթերթն էր այն ատեն...»<sup>10</sup>: Եվ այսպես վեպի համարնագրում գրականությունն են դառնում օրվա մարդիկ՝ պատվելիներ, վաճառականներ, արհեստավորներ, մտավորականություն, առարկաների աշխարհը, հրատապ գաղափարները, Կ. Պոլսի և մերձակայքի ժամանակակից կշռույթները: Գործող անձանց հոգեբանությունը տրվածքից փոխակերպվում է մանրամասն կայացման բնագրային մակարդակում:

Վեպն իր կառուցվածքով և պոետիկայով հարում էր համաշխարհային և հայ գրականության մեջ ժանրի ամենատարածված, տիրապետող կաղապարներից՝ սիրավեպայինին, սակայն ժանրի պատմական համարնագրում այն նորույթ էր բարքերի վեպ լինելու իրողությամբ նաև, որը սիրավեպ կաղապարի հետ համակցված էր հանդես գալիս: Արդեն նշել ենք, որ «Վարժապետին աղջիկը» յուրօրինակ պարողիա էր ոռմանտիկ, սենտիմենտալ սիրավեպերի, և բնականաբար այդ իրողությունը ստեղծագործության ընդհանուր կառուցվածքի և պոետիկայի վրա թողել էր իր ազգեցությունը՝ թե՛ գործող անձանց, թե՛ կոլեգիայի գոյավորման և հանգուցալուծման և թե գաղափարների համակարգի, գեղագիտության և, անչուշտ, լեզվածական մակարդակներում: Ակնարկեցինք նաև, որ «Վարժապետին աղջիկա» կառույցը հարում է «նորավեպ-վեպ» տեսակին, երբ ստեղծագործությունն ըստ հության ներդիր նորավեպերի ամբողջություն է: Ըստ այդմ վեպի հիսուներեք գլուխներն էլ սյուժետային-դիպաշարային որոշ ինքնուրույնություն ունեն, ինչպես նաև ծավալով հավասարագոր են (19 էջից մինչև 27): Անշուշտ ստեղծագործության կառույցը պայմանավորված էր թերթոնային բնույթով նաև՝ յուրաքանչյուր հատված առավելագույն դինամիկ, լարված՝ թե՛ սյուժետային, թե՛ գեղագիտական-գաղափարագրական առումներով, որպեսզի պարտադրված միանվագ ընթերցումը թողնի ամբողջական տպավորություն: Վեպի կառուցվածքին բնորոշ է այսպես կոչված օբյեկտիվ պատումի կաղապարը, երբ հեղինակային միջարկությունները գրեթե բացակայում են: Կամսարականի պարագային օրինաչափ է հեղինակային միջարկությունների կիրառությունը միմիայն յուրաքանչյուր լոկալ հանգուցալուծման դեպքում իրեւ յուրօրինակ մուտք: Որպես կանոն, դրանք ընդնշմարող գործառնություններ ունեն: Այս իմաստով ուշագրավ է վեպի հանգուցալուծմը կազմակերպող մուտք-միջարկության լրատվությունը. «Մառախլապատ օր մ'էր. շարունակ և բարակ անձրև մը կեսպիշերեն սկսած էր ցեխ պատրաստել փողոցներուն մեջ և խոնավությամբ լեցնել օդը. շատ տիմուր օր մ'էր այդ օրը, չորեքշաբթի էր» (174): Այդ ճակատագրական օրին պիտի հաջորդի վեպի սիրո ողբերգական պատմության հանգուցալուծումը և այդ սիրո առանցքի շուրջ գտնվող մարդկանց ու ժամանակի էության վերհանումը: Պատահական չէ, որ ստեղծագործության դինամիկ, պրկված պատումը սկսած «Ա» գլխից փոքր-ինչ ձգձգվում է, հանդարտվում, որպեսզի առավելագույնս հիմնավորվի և փաստարկվի գատապարտվածության հղացքը, ֆեներճյանների և նահապետյանների ընտանեկան համապատկերով:

10 Տիգրան Կամսարական, «Վարժապետին առջիկը», Տ. Կամսարական, Տ. Զյույուրյան, Երկեր, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1989, Էջ 28: Հետայսու վեպից բերված բոլոր հղումները պահպատակությունից են, տեքստին կից, փակագծերում:

Ստեղծագործության կառուցվածքային դինամիզմն հատկապես ընդգծված է վեպի ժամանակի և տարածության մեջ: Սիրավեպը ոռմանտիկական և սենտիմենտալ նախորդների մտայնություն-կաղապարին հակառակ ազատազրված է հերոսների արեալի աշխարհագրական անեղբականությունից, տարիներ ու տասնամյակներ տևող փորձություններից: Ամեն ինչ անհամեմատ արագ է տեղի ունենում և Աստղիկի հինգ տարվա կյանքը՝ 18-23 տարեկան հասակը, որը ստեղծագործության ներառված ժամանակաշրջանն է, բավարար է Պոլսի հայության բարքագրությունը և մարդկանց գրականացնելու համար: Առկա հանգրվանին հասած կենտրոն-հերոսների պարագային ստեղծագործության կառուցվածքում գործում է «ժամանակային հետգրությունների» սկզբունքը, երբ վիպասանը սեղմ, ըստ էության դրույթների եղանակով արձանագրում է մինչ վեպի ժամանակ գործող անձանց կյանքի պատմությունը: Վեպում, օրինակ, այդպես է պատկերագրված Անդրանիկ Ֆեներճյանի մանկավարժական և ստեղծագործական գործունեությունը, Նահապետյանների ընտանիքի ձևավորման և բարգավաճման պատմությունը, Գարեգինի կյանքի մանրամասները և այլն: Այս սկզբունքը Դոդեկի վիպասանության բանարվեստի ուղղամետ արձագանքներից էր, որն ընդհանրապես բնորոշ էր Փրանսիական իրապաշտ վեպին:

«Վարժապետին աղջկա» կառուցվածքային, սյուժետային կենտրոնը Աստղիկ Ֆեներճյանի պլանն է, որ մասնավորված է Աստղիկ-Արամ, Աստղիկ-Գարեգին, Աստղիկ-Թորոս պեյ պլաններով: Այս սյուժետային մոդելները և սրանցով պատճառականացված կոլիզիաներն են ստեղծագործության հենքը: Վեպի մյուս բոլոր պլանները կա՛մ մատնանշածի ֆոնային ածանցյալներն են (Զարուհու պլանը, Արամ-Թորոս պեյ, Արամ-Պեռենիս, Ռողեթ, Աստղիկ-Հակոբիկ, Գարեգին-Անդրանիկ պլանները), կա՛մ ներփակ պլաններ՝ Անդրանիկ Ֆեներճյան, Գարեգին, Հակոբ աղա Նահապետյան, Թորոս պեյ: Հիմնական սյուժետային մոդելը սիրավեպն է Աստղիկ-Արամ-Գարեգին-Թորոս պեյ քառազրությամբ և համապատասխան կոլիզիաներով, Թորոս պեյ-Զարուհի, Արամ-Ռողեթ-Պեռենիս լրացյալներով: Ստեղծագործության մեջ ուրույն է Անդրանիկ Ֆեներճյանի սյուժետային մոդելը, այն ունի նաև ինքնավար, առանձին դրսեւորման կերպ՝ բանաստեղծ, մանկավարժ, որ վեպի կառուցվածքում արտածվում է Անդրանիկ Ֆեներճյան երեսութիւն իրեւ ընդհանրականություն: Բնագրում յուրաքանչյուր կոլիզիա ունի իր ձևավորման և պատճառաբանվածության նշագրումը: Բազմաթիվ օրինակներից մեկով սա փաստարկենք: Աստղիկը Նահապետյանների տանը առաջին անգամ տեսնում է Արամին. «Հյուրանոցին մեկ անկյունը Զարուհի կշարունակեր դեռ վայելուչ երիտասարդաց շարք մը ներկայացնել Աստղիկի, որ բնածին ու սիրուն համարձակությամբ անշփոթ խոսակցություն մը կ'ունենար անոնց հետ, և երբ երկու ժամ հետո աստիճան մ'ավելի մտերմացած էր այդ երիտասարդաց հետ, կ'ըսեր ինքնիրեն. «Ինչ անտեղի նախապաշարումներ ունեցած ենք սա բարձր դասակարգի երիտասարդներուն վրա, որք հասարակ մահկանացուներ են ահա»: Բայց Աստղիկ միևնույն տրամադրությամբ տողորված չէր անոնց ամենուն համար. «Հասարակ, այո, հասարակ մահկանացուներ էին զինքը շրջապատող բոլոր երիտասարդներն, այլ մին, որ ամենքը կ'արժեր, որ ուներ այդ հրապուրիչ ձևերն, այդ մագնիսական աչերն, Ա-

բամը տարբեր էր, շատ տարբեր»: Աստղիկ կիսուստովաներ զայս ինքնին» (78): Դժվար չէ նկատել կոլիզիաների, թեկուզ առայժմ հիպոտետիկ, երեք մակարդակները՝ «բարձր դասակարգի երիտասարդների» մասին կարծիքի հակադրականությունը Աստղիկի անհատականացած տեսանկյան հետ, երիտասարդների հակադրականությունը Արամին առանձնացնելիս և վերջապես այստեղ արդեն հաջորդ կոլիզիայի գոյափորման դրդապատճառը՝ երբ Աստղիկը նրա «ինկուբացիոն» հոգեվերլուծական, ապա մոր հետ զրուցելիս ամբողջականացնում է Գարեգինի հետ ամուսնանալու անհատական-ընկերային բախումը (տե՛ս էջ 96-97): Կամ թորոս պեյի պարագային, նրա ու Աստղիկի կոլիզիան, Զարուհու հետ ունեցած հարաբերակցությունների «բախումը», Անդրանիկ Ֆեներճյանի պլանում ուսուցիչ-բանաստեղծի հակադրականությունը իրականության հետ, Հակոբ աղա Նահապետյանի պարագային՝ աշխարհընկալման կոորդինատների անցումն իբրև ժամանակի, կյանքի բախում և այլն: Այսպիսով բազմաքանակ կոլիզիանների առկայությունը վեպի համաբնագրում ենթադրում է փոխներթափանցված այուժետային մողելների աղբյուրներ: Այս երեսույթը սատարում է նաև ներփակ պլանների հանգուցալուծմանը (Գարեգինի և Նահապետյանների տան հաշվետարի զրույցից ամբողջականանում է թե՛ Նահապետյանների գերդաստանի պատմությունը և թե Արամ-թորոս պեյ առանցքը):

Վեպի պատումի ընդհանուր դրամատիզմը շատ հաճախ ընդգծված թանձրացումներ է ունենում՝ տարաբախտ վարժապետը սկսել է հասկանալ, որ աղջիկը մահվան նախադուռին է. «Ախորժակը տեղն է, բայց անպատճառ բան մը ունի աղջիկը. դուն երեսին գույնեն մի խարվիր, հիվանդ է, հիվանդ, ասոր մեկ ճարը նայինք. գիշերները ջուրերուն մեջն է, կրցանի կոր. բժիշկ կ'ուզե, բժիշկ:

Պատասխան չտվավ վարժապետը, շատ տխուր դեմք մ'ուներ. նույն իրիկունն իսկ Գում Գափուի դրսի վարժարաննեն նամակ մ'էր առած, որով յուր պաշտոնանկությունը կծանուցանեին իրեն, յուր հաճախակի բացակայությանց պատճառով, և նույնպես ապրուստի միակ միջոցեն ալ կզրկվեր. մինչ արդեն պարտքով հոգացած էր յուր տնական ծաղքն, որ Աստղիկի վերադարձով գրեթե կրկնապատկված էր. «Բժիշկ, բայց գեղը, բայց միսր, ո՞վ պիտի հոգար». Հոգին պիտի տար ինք բժշկին, դեղագործին, բայց դրամի տեղ չէին առներ զայն...

Հառաչեց վարժապետն և ինք, որ յուր կնոջ մեկ բառին սպասած էր, յուր հրաժարեցուցման լուրն հաղորդելու, հանեց հոգաբարձության նամակն յուր գրպանեն, բարձին վրա նետեց սրտմայալ, գոչելով. «Մեկ ապրուստի միջոց մ'ունեի, այն ալ ձեռքես գնաց. բժիշկ բերենք, բայց ի՞նչով...» (189): Այս անհաղթահարելի թնջուկը Ֆեներճյանների փորձությունը առավելագույն խտացնում է, ստեղծագործության կոլիզիային հաղորդում սոցիալական, հասարակական, էմոնհոգեբանական, հանրային անհամեմատ ընդհանրական լրատվություն, որտեղ արդեն բուն Ֆեներճյանների «անհետանալու», կորսվելու, դատապարտվածության հանկերգը սոսկ մեկ, մասնավոր իրողություն է, թշվառ ճակատագիր, սակայն երբ թանձրացված է նաև բարեկեցիկ (նյութապես վերևի թնջուկները դյուրին հաղթահարող) ընտանիքի և անհատի «անհետացման», կորսվելու և դատապարտվածության իրողությանը, ապա ընդնշմարվում

Է տոտալ դատապարտվածության, «անհետացման» հանկերգը, որի բարքագրությունը, հոգեբանական-ընկերային, մարդաբանական, հասարակական և անհատային ազդակներն են Կամսարականի կիզակետում, ավելին՝ դատապարտվածության բնագանցությունն է վեպի ստեղծաբանական-գեղագիտական էռլթը (սուբստանցը) և ի շարս «Վարժապետին աղջկա» պրետիկական, դիպաշարային կառույցի նորամուտությանը արևմտահայ վեպի համապատկերում, այս բնագանցության ուրվագրումն էր, որ թե ընթերցման և թե վերլուծության մակարդակներում դարձան ընթացի սկեռումներից:

Վեպի պերսոնաժների համակարգը ժանրի դասական կառույցի սկզբունքներով է պայմանավորված՝ կենտրոն-հերոսներ և դրանց շուրջ մակաբերված կերպարային խորք զանազան սատարողական գործառնություններով. պատումային մակարդակը լրացականացնող՝ Արթաքի-Հարությունը (Աստղիկի հորեղբորորդին դիմակահանդեսի և ապահարզանի դրվագներում), Մարգար, Թագումային Աստղիկի սպասավորները, Գարեգին աղա՝ Նահապետյան դրամատան արկղակալը, բարքերը պատկերագրող, Մելքոն աղա, տեր Գրիգոր, տոքթոր Սեպուհ, տիկին Վարդուհի՝ կոլիզիան հանգուցալուծող և այլն: Ընդհանուր առմամբ վեպի ակտիվ պերսոնաժները շուրջ չորս տասնյակ են: Նմանօրինակ բազմաքանակությունը սիրավեպի կառույցում վկայակոչում է հեղինակի կողմից ժամանակակից կյանքի ընդգրկունության ձգտումը: Կերպարումի հիմնական եղանակը օբյեկտիվ-տեսանկյունայինն է, երբ դրվագվում է որևէ իցեւ գործող անձի առարկայական-տիրապետող հատկանիշները՝ զուգակցած կենտրոն-հերոսներից մեկի գնահատումով: Այս առումով օրինակ ընորոշ է Արամի հետեւյալ դատումը ժամանակակից կանանց մասին. «Բայց խենդ են այս աղջիկները, պեյ, անգամ մը որ սիրեն, այլևս ճշմարիտ փորձանք մ'է անոնց ձեռքեն խույս տալ ուզել. և ստուգիվ կարծես հրմարացած էր այն դիշեր. այնքան արտասվելել հետո, երբ այրած էի արդեն լուսանկարն՝ եկավ քովս նստիլ բազմոցին վրա, ձեռքերս յուր ափին մեջ առավ, տրորեց մատներս, և աղերսարկու ակնարկներ ուղղելով ինձ՝ կհարցներ. «Ախ, ստո՞ւյգ է, չե՞ս սիրեր զայն, Արամ, չես սիրեր զայն, այնպես չէ՞» (126): Աստղիկն է, որին արդեն հայտնի է դարձել Արամի անհավատարմությունը, և այս միջնորդագորված առարկայական-վերաբերողական արձանագրությունը ամբողջացնում է սիրող և մինչեւ վերջ դրա համար պայքարող կնոջ տիպը:

Կամսարականը կերպարումն իրականացնելիս շատ հաճախ դիմում է լակոնիզմների՝ կենտրոնանալով միայն այն հատկանիշների, արարքների վրա, որոնք վարժապետի գստեր նկատմամբ վերաբերություններ էին: Այսպես են գոյագորվել Վարդուհի՝ հանրմի (Արամի մոր), տիկին Սաթենիկի, Առաքել աղայի, Աղավնի հանրմի, Հռիփիսիմե տուտուի և այլոց կերպարները: Լակոնիզմն այնուհանդերձ բնագրում, որպես կանոն, ամբողջականացնում է դրվագային պերսոնը: Դիցուք՝ «Տիկին Սաթենիկ սակայն կատարելապես հաջողած էր յուր նյութած չարության մեջ. կհրճվեր, մտածելով թե որչափ ավելի Աստղիկ ինքոհնք անարժան ցույց տա սրահին, այնքան ավելի կնվազի նրա նկատմամբ Արամի համակրանքն, զոր միայն ինք կ'ուզեր վայելել» (133):

«Վարժապետին աղջիկը» վեպի դիպաշարը խարսխված է սիրավեպին բնո-

ըոշ առանցքի շուրջ՝ կին և մրցակից տղամարդիկ: Տվյալ գեպքում գործում է քառանդամ առանցքը՝ Աստղիկ-Արամ-Գարեգին-Թորոս պեյ, ընդումին սիրո զանազան գոյակցություններով և զրանց փոխակերպություններով. բնախոսական-պլատոնական(հոգևոր)-բնազանցական: Այս առանցքի ամենատարբեր վարիացիաները՝ Աստղիկ-Արամ երկկողմանի, Գարեգինի ու Թորոս պեյի անպատճախան, «անհաղորդ» սերերը ստեղծագործության կառուցվածքում համապատասխան դիպաշարային տեղաշարժերով՝ երկկողմանիությունից մինչև լիակատար խաթարում, միջանկյալ անանձնականությամբ (Աստղիկ-Արամ), անպատճախան լինելուց, անհաղորդությունից մինչև բնազանցական ներդաշնակություն (Աստղիկ-Գարեգին) և սիրո փորձության բարոյաբանական կերպը (Աստղիկ-Թորոս պեյ) ամբողջացնում են ստեղծագործության սիրո շարժման հզացքը: Նշենք նաև, որ դիպաշարային ընթացականությունը միջանկյալ հանգույցներով ուղենչում է իրադարձությունների զարգացման ընթացքը: Այս պոետիկական հնարանքը թանձրացնում է վեպի դիպաշարային լարվածությունը, միևնույն ժամանակ կարծես թե «պատճառաբանում» պատումի ուղղվածությունը: Այսպես՝ Անդրանիկ Ֆեներճյանը իր բանաստեղծությունների ժողովածուն հրատարակելու համար հովանավոր լինելու խնդրանքով դիմում է Գարեգին Արսենյանին, վերջինս ուսուցչի համար անակնկալ, սիրահոժար համաձայնում է և խնդրում նրա գստեր ձեռքը: Դիպաշարային այս հանգույցը բազմացյուղ ընթացականություն է հաղորդում վեպի պատումին՝ մի կողմից ստեղծագործության մեջ պատճառաբանում Գարեգինի և Աստղիկի հոգեկան վիճակը, նրանց ապրումների և մտորումների կենտրոնացումները, ապա դառնում ելակետ Ֆեներճյանների և Նահապետյանների ընտանիքներին խաչվելու, հանդիպադրվելու համար, որը ինքնին յուրօրինակ դիպաշարային հանգույց է Աստղիկի և Արամի հանդիպումը փաստարկելու և իրադարձությունների հետագա ընթացքը ուղղորդելու համար: Կամ Արամի հովանավոր դառնալու և Անդրանիկ Ֆեներճյանին դասեր տալու դիպաշարային հանգույցը, որը կենտրոնացնում է արդեն ստեղծագործության հիմնական կոլիզիան: Բազմաթիվ դրսերումներից արձանագրենք այս մեկը ևս. «Էհ, բարեբաղդաբար գաղիերեն կարդալ գիտեք, այնպես չէ՝, տիկին. ալ այս անգամ գեթ չպիտի ըսեք, թե զրպարտիչ մ'եմ. առեք, տիկին և պեյը, նույնհետայն զրպանեն հանելով առավոտն Արամի յուր քով մոռցած այցաբարտը, մատույց զայն Աստղիկին...» (121): Պեռնիսի նամակին ծանոթանալը Աստղիկին «ստիպում է» պասիվ հայեցողությունից անցնել արարքների և ըստ էության այս հանգամանքից, այս դիպաշարային հանգույցից վեպի պատումը մտնում է այսպես կոչված եղրափակիչ փուլ՝ սկսվում է դատապարտվածության հզացքի գեղարվեստական-գեղագիտական գործնականումը:

Արդ, ներկայացնենք վեպի դիպաշարը: Բանաստեղծ և երկարամյա ուսուցիչ Անդրանիկ Ֆեներճյանի նյութական վիճակն այնքան էլ բարվոք չէ՝ զանազան հոգաբարձուների հետ վիճաբանությունները, ոչ փայլուն գրագիտությունը, ոռմանտիկ բանաստեղծի չհասկացված լինելու կեցվածքը ընտանիքին սուղ դրության են մատնել, հազիկ ծայրը ծայրին են հասցնում, իսկ դուստրն արդեն տասնութ տարեկան է, որին անհրաժեշտ է նախապատրաստել կյանք մտնելու հա-

մար: Ֆեներճյանի միակ ապավինությունը բանաստեղծությունների ժողովածութի հրատարակությունն է Հովհաննավորի միջոցով, որի կանխակալված հասույթը վիճակը գույզն-ինչ կը արդիքի: Գարեգին Արսենյանը սիրահոժար համաձայնում է քերթվածների տպագրության ծախսերը հոգալ և միևնույն ժամանակ խնդրում է Աստղիկի ձեռքը:

Ֆեներճյանները և Արսենյանները վաղուցվա ծանոթներ էին, գնալ-գալ ունեին: Գարեգինը գեռ պարմանի հասակից համակրում էր Աստղիկին, որը կամաց-կամաց վեր էր ածվել սիրո: Անցել էր ութ տարի, քսաններեքամյա Գարեգինը հաջողակ և աշխատասեր վաճառական էր, պատանեկան զգացմունքը ավելի էր ամրագրվել, սակայն մտածում էր, թե գեղանի Աստղիկը իր համար չէ: Անդրանիկ Ֆեներճյանի անսպասելի առաջարկը նրա համար լավ առիթ էր և՝ համակրելի ընտանիքին աջակցելու և թե աղջկա ձեռքը խնդրելու համար: Անդրանիկը Գարեգինի հանձնարարական նամակով գնում է Նահապետյանների մեծահարուստ տուն՝ Հակոբ էֆենդու փոքրիկ զույգ աղջիկներին դասավանդելու համար: Հակոբի ավագ դուստրը՝ Զարուհին, որ դպրոցական տարիներից ճանաչում էր Աստղիկին և նրան համակրում, Անդրանիկին աղջկա հետ իրենց տուն է հրավիրում՝ հոր անվանակոչության երեկոյին մասնակցելու համար: Անդրանիկ Ֆեներճյանը որոշում է իր ապագա փեսացուին հրավերքի մասին հայտնել, նրանից թույլտվություն խնդրել Աստղիկին տանելու համար: Գարեգինը թեև ներքուստ ընդդիմանում է, սակայն չի արգելում:

Ֆեներճյանները գնում են Նահապետյանների տուն, ուր Աստղիկն առաջին անգամ հանդիպում է Արամին: Փոքր-ինչ հետամտելը բավական էր, որ Աստղիկը սիրահարվի: Արամն օրիորդին ամուսնության առաջարկություն է անում, այդ մասին հայտնում իր ամենամտերիմ ընկեր Թորոս պեյին, որը նրա ցանկությունը լուրջ չի ընդունում: Ինչեւ, Արամը համոզում է հորը, իսկ Թորոսս պեյի բազմաթիվ փաստարկները անուշադրության է մատնում: Կանչում է վարժապետին, նրան դրամ տալիս և խոստանում «Արարատյան փնջիկը» ոսկետառ հրատարակել և հայտնում, որ ինքը սիրում է Աստղիկին և ցանկանում է նրա հետ ամուսնանալ: Աստղիկը խոստովանում է մորը, որ համաձայնել էր Գարեգինի հետ ամուսնանալ միմիայն ծնողների վիճակն ամոքելու համար, իսկ Արամին ինքը սիրում է և կարծում է, որ իրենց ապագա ամուսնությունը «առանց հաշվի է» և ինքը երջանիկ կլինի: Վարժապետը Գարեգինին հայտնում է դստեր որոշման մասին, վերջինս զա բավականաչափ ծանր է տանում, կարեկցում է նաև Աստղիկին՝ իմանալով Արամի թեթևաբարո վարքի և կնամոլության մասին:

Ճոխ նշանադրությանը հաջորդում է շքեղ հարսանիքը: Երիտասարդ ամոլները մեղրալուսինը անց են կացնում Բրինբեքո կղզում: Արամը փաստորեն Աստղիկի ծնողներին արգելում է հանդիպել իրենց դստեր հետ: Շատ արագ Արամը դարձ է կատարում իր սովորական կենցաղին՝ թղթախաղ, հոմանուհիներ: Վերականգնում է իր կապը Պեռենիսի՝ մի հույն գերասանուհու հետ: Թորոս պեյը, որ սկզբից հմայված էր Աստղիկով և միակ մարդն էր, որը ելումուտ ուներ նրանց մոտ, մի կողմից Արամի մեջ բորբոքում է կյանքը վայելելու մղումը, մյուս կողմից՝ խորամանկ ակնարկներով ջանում ամուսնուն «սառեցնել»

կնոջից, իսկ ինքը ավելի ակնհայտ է սկսում դարպասել Աստղիկին: Արամը ցանկացած պատրվակով Աստղիկին կա՛մ մենակ է թողնում, կա՛մ թորոս պեյի հետ: Թորոսն ու Աստղիկը այգում զբունում էին, և երիտասարդ կինը հանդիմանում է նրան բաց ակնարկների համար, թորոսը ցույց է տալիս Պեռենիսի քարտը: Աստղիկն այդ անակնկալից շանթահարված՝ հոգեկան ահավոր տվայտանքներ է ունենում, որին հաջորդում են ողջ գիշեր տևած բացատրությունները: Արամին դժվարությամբ հաջողվում է հանդարտեցնել Աստղիկին: Նրանք տեղափոխվում են Բերա: Արամը հորից թաքցնելով թղթախաղի և հոմանուհու վրա մսխած մեծ գումարը՝ պատճառաբանում է, թե փողը Աստղիկի վրա է ծախսել: Այս հանգամանքը մի կողմից և Զարուհու բացահայտ թշնամանքը մյուս կողմից (Զարուհին, որ անտարբեր չեր թորոս պեյի նկատմամբ, լավ է հասկանում Աստղիկի «մեղավորությունը») տանը տարաբախտ կնոջ նկատմամբ անհանդուրժողականության և արհամարհանքի մթնոլորտ են ստեղծում, որից Աստղիկը նույնպես խիստ տառապում է, իսկ տան հերթական հավաքույթներից մեկի ժամանակ, երբ տիկին Սաթենիկին հաջողվում է նսեմացնել նրան (Աստղիկը հուզմունքից չի կարողանում դաշնամուրով ինչ-որ մանրանվագ կատարել) կնոջ մենությունը դառնում է անասելի:

Որպեսզի իր հսկայական գումարներ ծախսելու հանգամանքը հորից թաքցնի՝ Արամը Աստղիկի հետ առանձին տուն է վարձում: Թշվառ կինը բոլորովին մենակ է, ծնողներն իրեն տեսնելու իրավունքից զրկված են, ամուսինը օրն անց է կացնում կամ թղթախաղով կամ նոր հոմանուհու՝ Ռոզեթի հետ: Միակ լուսավոր կետը փոքրիկ Հակոբիկն է: Պեյը շարունակում է դարպասել, իսկ Զարուհին Պոլսով մեկ լուրեր է տարածում, թե Աստղիկը նրա սիրուհին է:

Արամը պարահանդես է գնում սիրուհու հետ, պեյը հորդորում է Աստղիկին իր հետ ծպտյալ նույնպես այնտեղ գնալ: Աստղիկը, որ տպավորված էր վերջերս դիտած մի ներկայացումով, երբ պարահանդեսում ծպտված կինը ընկնում է ամուսնու սիրուհու ոտքերը և այդպիսով կողակցին ընտանիք դարձի բերում, ցանկանում է նույն կերպ վարվել, և թորոսի հետ մեկնում է պարահանդես: Պեյն այստեղ կրկին ցանկանում է մտերմիկ հարաբերություններ ստեղծել, սակայն ոչինչ դուրս չի գալիս ու ստիպված առանձնանում է իր բազմաթիվ սիրուհիներից մեկի հետ: Աստղիկը նկատում է Արամին Ռոզեթի հետ, բայց նախնական մտադրությունն իրագործել չի համարձակվում: Պատահաբար հանդիպում է հորեղբորորդուն և իննդրում նրան, որպեսզի հորն իմաց տա, որ նա գա իրեն տեսության և պեյին գտնի՝ տուն ուղեկցելու համար: Արամը ստիպում է, որ Աստղիկը դիմակը հանի և երբ տեսնում է կնոջը, նրան տուն է տանում, հաշիվ պահանջում: Որքան էլ Աստղիկը խոստովանում է իրողությունը, ասում ճշմարտությունը՝ ամուսինը անհողղող է մնում: Պեյին իննդրում է ամուսնուն բան հասկացնել, սակայն վերջինս նախապայմաններ է մեջտեղ բերում, որոնք, բնականաբար, Աստղիկի կողմից մերժվում են:

Արամը Աստղիկին տնից վանդում է: Ֆեներճանների ընտանիքի համար սկսվում է տառապանքների և անլուծելի թնջուկների մի շրջան՝ Աստղիկի առողջական վիճակն արդեն խաթարված էր, Անդրանիկ Ֆեներճանը՝ գործազուրկ և պարտքերի մեջ թաղված: Ամբաստանություններն ու բամբասանքնե-

ըը տարածվում են ողջ քաղաքով, նույնիսկ թերթերը հոդվածներ են տպագրում երիտասարդ մոր անբարո վարքագծի մասին: Թշվառ վարժապետն իրեն դես ու դեն է նետում աղջկա պատիվը փրկելու համար: Արամը որոշում է կնունը երեխայից զրկել: Գարեգինի ջանքերը զուր են, դատական խորհուրդը որոշում է երեխային հանձնել հորը: Թշվառ կնոջ առողջական վիճակը գահավեժ է լինում, թոքախտի նշանները անթաքույց են: Երկնային մանանայի պես Գարեգինը ձեռք է մեկնում ֆեներճաններին՝ տալիս պարտքերը, հոգում բուժման և առողջարան գնալու ծախսերը: Այդ ընթացքում քայլայվում է նաև Նահապետյանների ընտանիքը՝ Արամը թղթախաղում հսկայական գումարներ է տանուլ տալիս և սնանկացնում Հակոբ աղային, Զարուհին փախչում է հոր գործափորներից մեկի հետ: Հակոբ աղան չի դիմանում այս նյութական ու բարոյական անկմանը, կաթվածահար է լինում, մահանում:

Աստղիկի վիճակը օրհասական է, նրա վերջին կամքը զավակին տեսնելն է, որ կրկին հաջողվում է Գարեգինի շնորհիվ: Երիտասարդ կինը վախճանվում է: Ահա «Վարժապետին աղջիկը» վեպի համառոտ դիպաշարը: Բնականաբար Աստղիկի կարճատև կյանքի առանցքին բաղհյուսվում են լոկալ պատումային միավորներ՝ Պոլսի բարքերն ուրվագրելու, ժամանակի իրերի ու գաղափարների կշռույթներն պատկերագրելու համար: Վեպի կառուցվածքում կիրառվել են պոետիկական զանազան սկզբունքներ և միջոցներ: Նախ՝ անհրաժեշտ է արձանագրել ստեղծագործության բնագիրը կազմակերպող տարրերի և բաղկացուցիչների համաշխափությունը, յուրաքանչյուր պոետիկական միավորի ճշգրիտ գործառնությունը: «Վարժապետին աղջիկը» հայ վեպի պատմության համաբնագրում առաջին հոգեբանական վեպերից էր՝ ժանրի Պոլ Բուրժե-Ալֆոնս Դուդե-ական իրապաշտության առումով, ուստի բնական էր, որ Կամսարականը հաճախ սկեռվում էր հոգեբանական անցումների պատճառաբանվածության վրա. ստեղծագործության ամեն մի հերոս անցնում է հոգեբանական քննության բովով, ոչինչ «անհասկանալի», «կտրուկ» փոխաձեռության չի ենթարկվում: Այս առումով բնորոշ է Աստղիկի հոգեվիճակի նկարագրությունը, երբ նրա կասկածները վերջնականապես փարատվում են, համոզվում է Արամի անհավատարմության վերաբերյալ (գլուխ իթ): Տեքստում մանկամարդ կնոջ հոգեվիճակի առարկայական նկարագրությունը շոշափելիացնում է հերոսի կողմից արդեն ընկալելի դատապարտվածությունը:

Արդեն անդրադարձել ենք հեղինակային տեսանկյան միջարկությունների գործառնություններին, ավելացնենք, որ այն լիակատար ակտիվություն ունի ստեղծագործության կոլիգիայի հանգուցալութումը պայմանավորող պարահանդեսի դրվագում (գլուխ իթ), երբ հեղինակային տեսանկյան միջոցով հաճախակի արձանագրվում են հոգեվիճակները, արարքները, մթնոլորտը: Առհասարակ «պարահանդեսային հանգույցը» բնորոշ է արևմտահայ 80-90-ական թվականների արձակին, իսկ առաջին իրապաշտական վեպերում (Զոհրապ, Կամսարական) պատումային մակարդակն ամբողջականացնելու հիմնական կենտրոններից է:

«Վարժապետին աղջկա» պոետիկական բնութագիրը թերի կլինի, եթե չնշվի այն իրողությունը, որ Կամսարականը գրեց ոչ միայն ժամանակակից կյանքի

մասին վեպ, այլ նաև ժամանակակից լեզվով գրված վեպ: Բանն այն է, որ ստեղծագործություն էր տեղափոխվել՝ Պոլսի լեզուն բոլոր դրսերումներով՝ հայկաբանների գրաբարախառն խոսվածքը, գործավորի և վաճառականի բարբառային և թուրքերենով համեմված ժարգոնը, սալոնի խոսվածքը՝ ֆրանսաբանություններով:

Վեպի կառուցվածքում հավասարակշռված կիրառություններ ունեն երկխոսություններն ու մենախոսությունները, արարքի, պահվածքի, վիճակի վավերացումները: Այս համամասնությունը նույնպես սատարում է ստեղծագործության ընդհանուր սահունությանը, վկայում երիտասարդ գրագետի վիպասան լինելու ձիրքի մասին: Հատկապես եթե սրան հավելենք դիմանկարների և պեղաժների բազմագործառնական կիրառությունները, ուր զանազան զուգորդություններով (հերոսի բնույթին առնչվող լրատվություն, հոգեբանությունը մակաբերող փաստ, իրադարձությունների առաջիկա սրումը նախապատրաստող մուտք և այլն) գոյավորում է պոետիկական միջոցների բավականին դիմամիկ օգտագործման շրջանակ: Այս համատեքստում չի կարելի չխոսել նաև կամսարականի կողմից դետալի պարզապես վարպետ կիրառությունների մասին, որոնք տրամադրություն ու մանավանդ հոգեվիճակ պատկերելիս դառնում են սպառիչ միջոցներ (հիշենք Աստղիկի շրջագգեստի նկարագրությունը, Արամենց տանը առաջին անգամ պարելու պահը և վերջապես՝ կառքի պարագան ամուսնանալու ժամանակ և նահապետյանների տնից վոնդվելու պատկերներում):

«Վարժապետին աղջիկը» վեպի գեղագիտական և գաղափարական համակարգի քննությունը գրականագիտության կողմից որպես կանոն խարսխվել է արժեքայնության մեթոդաբանության տիրույթներում՝ ելակետային համարելով ստեղծագործության սոցիալական և այսպես կոչված այպանող-քննադատական ուղղվածությունը: Որ Կամսարականի վեպը հարում է եվրոպական ուելիստական և նատուրալիստական սոցիալական վեպերի ծիրին (Մոպասան, Դոգե, Զոլա, Բուրժե), որևէ կամ տարակարձություն լինել չի կարող, սակայն հար և նման ելքուպական սոցիալական վեպին՝ բնույթի և տեսակի, անհատի և հասարակության գեղարվեստականացման պատճառաբանվածությունը ոչ միայն պայմանագործում են սոցիալականով, այլև բնախոսականով, հոգեբանության սոցիալական ըևեռացման պարագծից դուրս իրողություններով (գեն, բնագդ, ենթագիտակցական, անգիտակցական և այլն), թեսուֆիկ և բնազանցական տրվածքներով: Այս համարության մեկնաբանական ընթերցումի խորքն է, ըստ իս, վեր հանում Տիգրան Կամսարականի ստեղծագործության գեղագիտությունն ու գաղափարների համակարգը<sup>11</sup>, նամանավանդ որ հեղինակի ստեղծագործական նպատակագրումը սոցիալական, բարոյաբանական, հոգեբանական, անհատական, խառնվածքային տրվածքներից հանգուցված դատապարտվածության բնազանցության պատկերագրումն էր: Վերջին

11 Հակոբ Մարգարյանը իր «Տիգրան Կամսարական» ուսումնասիրության մեջ (Երևան, 1964 թ., Էջ 78-176) վեպի քննությունը կատարել է բացառապես սոցիալականի արժեքայնության մեջողաբանությամբ:

Հաշվով Ֆեներջյանների ընտանիքի կործանմանը զուգահեռվում է նաև նահապետյանների ընտանիքի կործանումը. դատապարտյալ էին ոչ միայն Աստղիկն ու ոռմանտիկ բանաստեղծ Անդրանիկ Ֆեներջյանը, այլև ապահով ու հարուստ Հակոբ աղան (ում ամուր սոցիալական ու հասարակական դիրքը կարծես թե բոլոր չափանիշներով անջրապետված էր փորձություններից), Արամը, Զարուհին, Գարեգինը (վեպի ենթաբնագրի պարագործսներից, որի արծարծումը սակայն ամբողջացնում է Վարժապետի աղջիկ գաղափարագրությունը), խմբագիրն ու գործափորը, այսինքն «անհետացող սերնդի» չետ զուգահեռ ոչ ևս է լինում բարքը, մտայնությունը, գոյաբանական կենսոլորտը: Ուրվագրվում են նոր բարքեր, մտայնություն և անհատականություններ (թորոս պեյ, տիկին Սաթենիկ), թեկուզ փոքրինչ ուղղագիծ՝ անհետացման դատապարտվածները կամա թե ակամա բախման մեջ են սրանց հետ (անկախ վերջինների հիպոտետիկ ինքնավարության) և կորսվում են ճակատագրեր, կյանքեր, ժամանակակիցները ականատես են լինում իրենց հետ ապրողի երկարատես նախամահին ու ավարտին. սա էր, որ «Վարժապետին աղջիկը» առաջին գլուխներից հետո դարձրեց ութսունականների բեստաելլերը, այս նախամահի և ավարտի տիրույթներում է ամրագրված Կամսարականի գեղագիտական հանդանակը: Այս համատեքստում սոցիալականի շեշտագրումը վեպի մեկնաբանության պարագային դառնում է իմաստ կրավորական, նամանավանդ որ վեպի գաղափարների համակարգում դա համադրված է նշված մյուս էութենական տրվածքների, իրողությունների հետ: Այս առումով ուշագրավ է Արամի և Աստղիկի նշանադրության լրատվությունը. «Նահապետյանք բավականացած էին «Պատրիարքարանի նշանով»: Այս բանը յուր պատճառն ուներ: Վարժապետին խղճուկ տնակը պատիվ չէր կրնար բերել յուր մեծահարուստ փեսացուին, ընդհակառակն, Արամ պիտի շիկներ, երբ «խոսքիապ»ի համար յուր բարեկամներն առներ տաներ անշուք տուն մը, որո մերկությունն այնքան տգեղ հակապատկեր մը պիտի ընծայեր յուրյանց պալատանման բնակարանին հետ: Վարժապետին ընտանիքը, մանավանդ Աստղիկ շատ գոհ էին եղած նահապետյանց այս կարգադրութենեն...» (103): Դժվար չէ նկատել միագիծ համաձայնողականությունը (սոսկ մեկ փաստ, որ դիպաշարային մակարդակում ամենաստարբեր և բազմազան դրսերումներ ունի), սակայն ինչպես այս մեկը, այնպես էլ մյուսները դատապարտված են, քանի որ փոխզիջումը բնավ չի ենթադրում բարքի, արվածքի, եսակենտրոնության միասնականությունն. Նահապետյանների և Ֆեներջյանների բնույթներն են տարբեր և գրանց բաղհյուսումը դառնում էր գաժան նախամահ, ողբերգական ավարտ այս բախման ժամանակի, առօրյայի, իրականության, փիլիսոփայության վերհանումն էր Կամսարականի նպատակամիտությունը, իր ժամանակակցին ընտրություն առթելու կարելիության մեջ էր պարփակված վեպի գեղագիտական հանդանակը:

Վեպի հերոսների պլանները կենտրոնանալով ամփոփագրում են Վարժապետի աղջիկ հղացքը, որ դրագետի ժամանակակից կյանքի գոյաբանության, բար-

քերի բևեռացումներում ամբողջացնում է անհետանալու, կորսվելու դատապարտվածության գաղափարաբանությունն ու բնազանցությունը: «Անոր վեպին մեջ գործող մարդերը, — զրում է Հակոբ Օշականը, — բոլորն ալ զրեթե անխտիր, կ'արտահայտեն լիություն մը, ամբողջություն մը որոնք վեպի տարողություննեն կ'անցնին: Զեմ ըսեր թե քսանամենի այդ տղան ընկերաբանի մը լրջությամբ հավաքած է իր մարդոց հորինիչ տարրերը: Բայց կը ծանրանամ մարդերը մեկ անգամով ընդգրկող միտքի իր կերպին որ իր նմանը չունի արևմտահայ վեպին մեջ»<sup>12</sup>: Այս տարողունակությամբ է պատճառաբանվում անհետացող սերնդի ամբողջական երփնագրի վերջանումը, ինչպես նաև նոր կշռույթների ընձյուղումը (Թորոս պետ, տիկին Սաթենիկ): Կենտրոն հերոսների հակոտյաներով հետևենք այդ ընթացին:

Ա) Անդրանիկ Ֆեներճյան-Հակոբ Նահապետյան: Այս զուգադրությունը անհետացող մտավորականի և գործի մարդու բևեռացումն է: Հակոբ Նահապետյանի պարագային խարխլվում են կենսական-բարոյաբանական բոլոր հիմերը: Պատրիարքավ հայեցողությունը, աշխարհնկալումը և ապրելու կերպը անընդհատ բախման մեջ է աշխարհի նոր կշռույթների հետ և նրա ֆիզիկական չգոյությունը ազգարարում է այդօրինակ հների վախճանը: Այս զուգադրության մեջ անհամեմատ ուշագրավ է բանաստեղծ, մանկավարժ, ազգային մտավորական Անդրանիկ Ֆեներճյանը: Խոմանտիկ բանաստեղծը, որ իր երևակայության տիրույթներում է արդեն ապրում, ստիպված է վերադառնալ իրականություն, որն արդեն պատվելիների, գրաբարախառն հայկաբանության և «Փնջիկ»-ների ժամանակը չէ: Օբյեկտիվորեն ֆեներճյանը սպառվել է այդ ժամանակի համար, և նա անցյալի կարոտախտով սեեոյալ, տարուքերումների մեջ է, չկա աշխատանք, հուսո դուռ. «Ժամ էր, որ Անդրանիկ Ֆեներճյան քիչ մը լրջաբար մտածեր յուր իսկական կարողության վրա»: Հարմարվելն ու ներդաշնակվելու փորձերը աղջկա ամուսնությամբ սրում են թնջուկները, և աղջկա կորուստը վերջապես ուսուցչին դատապարտվածության գիտակցության է բերում:

Բ) Արամ Նահապետյան-Գարեգին Արսենյան: Այս հակոտնյա զուգադրությունը ևս կենտրոնանում է անհետացող սերնդի գաղափարամիտությամբ: Եվ եթե Արամի գահավեժը վեպի կառուցվածքում ուղղամետ և միանշանակ է, ապա Գարեգինի փրկչակերպ-պաթետիկ և պարագորսալ դատապարտվածությունը (միակը, որ անցումային խառնակություններում և նորի ընձյուղման պարագային բարգավաճում է ապրում) ստեղծագործության մեջ յուրօրինակ գաղտնագրային ամբողջականացում է ունենում՝ վերածվելով զոհրապյան անդրշիրմյան սերը կրող մի տարատեսակի: Եվ իրոք Գարեգինի վեհանձն կեցվածքը, անձնազոհությունը Ֆեներճյանների ընտանիքը չեն փրկում կործանումից, դատապարտված է ինքնին Գարեգինը՝ անկախ արտաքին անտրուաժից, քանի որ նրա կեցվածքն ու բնույթը ընդգիմություն է նոր բարքերին և կշռույթներին, չունի կենսունակության հեռանկար, պատկերավոր ասած նրա տեսակը չի դիմանա մրցակցության նորաթուխ բարգավաճողների հետ, ահա

12 Հ. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հոտ. 5-րդ, Երևանադեմ, 1952, էջ 268:

թե ինչու նրան վերապահված է միայն նախամահվան մեջ գտնվող Աստղիկի համակրանքը, սիրո անդրշիրմային, անհետացած տեսակը:

Գ) Աստղիկ Ֆեներճյան-Զարուհի Նահապետյան: Այս գուգազրության մի եղբը (Աստղիկ), որի շուրջ բևեռանում է ստեղծագործության հղացքը, միանշանակ ընտրություն է կատարում՝ հավատարիմ մնալով անհետացող բարոյաբանությանը, հուզավառ-ռոմանտիկական տարերքին: Աստղիկը կամ պիտի հարմարվեր, կամ կրեր իր խաչը: Զարուհին Աստղիկի կոմպոզիսային տարբերակն է, որի փախուստը հոր գործափորի հետ, դատապարտվածության մասնահատուկ դրսերում էր, վեպի գաղափարների համակարգում խաթարված անհատի գոյափորման նշագրումը:

Կամսարականի վեպն ի շարս թվարկված անհետացած սերնդի ներկայացուցիչների, հայ վեպի համապատկեր է ներբերել մի անմոռանալի կերպար, մտայնություն՝ թորոս պեյին «յագոյական հանկերգի» անթաքույց գործառնությամբ: Այս նորօրյա Յագոյի կերպը ամենակենսունակն ու ապահովն է վեպի կենսոլորտում, որի բազմաթիվ բանսարկություններն ու խարդավանքները, բարոյական չարիքի հորդումները դույզն-ինչ չեն տատանում նրա վիճակը, չեն հանգեցնում պատիժի սահմանին: Սա է Կամսարականի գրականացրած ժամանակի, կյանքի պարագորսն ու անհեթեթությունը, և այդ աբսուրդի բավիղներում բարոյապես և ֆիզիկապես չուծանալու մտահոգությունն է վեպի գեղագիտական ձգտումը: Պատահական չէ, որ թորոս պեյն առաջինն է փաստարկում վարժապետի աղջիկ հղացքը՝ Աստղիկը պիտի գոհանա Արամի կինը լինելով և ամուսնու «արձակ» ապրելուն չպիտի խոչընդոտի: Այսինքն՝ վարժապետի դուստրը ավելին ակնկալելու իրավունք չունի, նա չի կարող հայցել մարդկային հարաբերությունների ներդաշնակություն: Նույն ելակետն է նահապետյանների ըմբռնումներում, շրջապատի ընդհանրացած կարծիքում: Աստղիկի լուռ հակազդեցությունը, այնուհետև անհամատեղելիության լիակատար ըմբռնումը վարժապետի աղջիկ բնորոշումը դարձնում են դատապարտվածության հոմանիշ, թեավոր արտահայտություն:

Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը», որ Հակոբ Օշականի դիպուկ բնութագրմամբ «մեր բարքերու շտեմարանն» էր, հայ վեպի պատմության մեջ իր ուղենշային բնույթով հանդրվանային նշանակություն ունեցավ 19-րդ դարի ութսունական թվականների գրական կյանքում:

## ՄԻՍԱՔ ԳՈՉՈՒՆՅԱՆԻ ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արեմտահայ գրականության համապատկերում, Զարթոնքի շարժումից սկսալ, եղել են գրագետ հատկանությամբ (գրական մշակ, գրականության մարդ), այս հասկացության մշակութաբանական-գեղարվեստական լիակատար ընդերքով, տարողությամբ, անուններ, որոնց ստեղծումն ու վկայությունն, առհասարակ գործն ու ժառանգությունը չեն պարփակվում սոսկ գրականության պատմության դինամիկան ու հետազիծը որոշարկող, առարկայականորեն այնքան անհրաժեշտ ուղեկցային հանձնառություններով, միայն գրապատմական գործառնություններով։ Այն նաև, կրկին առարկայաբար, գրականության պատմության, գեղարվեստական ընթացի մեկնաբանական պարագրկումներում ածանցում է գրականության պատմությունը պայմանավորող վկայություններ թե՛ ժանրային համակարգի, թե՛ ստեղծաբանական կենսոլորտը, հղացքային ընդգրկումը կարգավորողի և թե՛ գեղագիտական դաշտը գործականացնող՝ լեզվի ստեղծաբանական-գեղարվեստական նվաճումը ապահովագրողի, զուգորդություններում։ Ահա զրողի այսօրինակ կերպն է Քամիլը (Միսաք Գոչունյանը), և սա արտածվում է նրա գործի, հատկապես՝ գրական ժառանգության, հայոց գրականության պատմության նոր շրջանի մեկնաբանության խնդրադրությունից։

Խմբագիր, հրապարակագիր, թատերգագիր, քրոնիկագիր, վիպասան, նորավիպագիր, թարգմանիչ՝ ահա նրա ստեղծաբանական դաշտը պայմանավորող բաղադրատարրերի մեկ մասը միայն։ Հիրավի, գրողի ուրույն վեպերը, նորավեպերն ու մանրավեպերը, պատկերները 1880-ականների երկրորդ կեսից մինչև XX դ. տասական թվականները ժանրային համակարգ հաստատագրող իրողություններից էին, ազգային կյանքի ինչ-ինչ կշռությունների, կենսաթրթիռների գրականություն ներքերելն ու յուրովսանն վկայելը, ստեղծաբանական կենսուրութիւնից գրականացվող ենթակայի երգիծական կերպընկալումը, Պարոնյանի հանճարի<sup>2</sup> գրական-հավելող սպասավորումը՝ ըստ այս ընդգրկումը՝ Գեորգ Այվազյան-

1 Քասիմի կենացրությունից հայտնի է, որ հեղինակել է «Սնամկը» հայերեն և «Մեզարտա աիր իգտիվան» թուրքերեն թատրախաղերը։ Տե՛ս Թեոդիկ, Ամենուն տարեցուցը, Կ. Պոլիս, 1912, էջ 381։

2 «Կյանքի տեսարանների» թիֆլիսան հրատարակությունը կենսագիրների կողմից միմիալն նյութական հոգերով պատճեռաբանելն ըստ իս, իխան սահմանավակ է։ Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության թիվ 130 գիրը (Քասիմի ժողովածուն պահ ընկերությունն է լուս դաճայի) ցուցանում էր առանձնահատուկ կեցվածք արևելահայերի կողմից 1850-1890-ականների արևմտահայ երգիծական գրականության նկատմամբ։ Գոչունյանի գրքով հրատարակելը նրան արժնորելու ակրեալիս վկայությունն էր։ Պատահական չէ, որ ընկերության հրատարակություններում Պարոնյանի «Ազգային չոշեր»-ի և «Մեծապատիլ մոլուցկաններ»-ի կողքին տեղ է գտնվ գրա «Կյանքի տեսարաններ»-ը։ Այս առումով ևս մի կարևոր հավելում։ Գոչունյանի ժողովածուն բավականին երկար ժամանակ արևելահայ քննադատության դրադումներում էր։ Գործին անդրադառնել են Տ. Հովհաննելիսանը («Մատենագիտություն։ Քասիմ», Կյանքի տեսարաններ, Մշակ, 1898, փետրվար 16), Մ. Բերբերյանը («Գրականություն և կյանք», Լումա, 1904, թիվ 6, էջ 96-118), Ն. Աղբալյանը («Քասիմ. Կյանքի տեսարաններ», Մոլոճ, 1898 թ., թիվ 4, էջ 526-533)։

Ճանիկ Արամյան-Հարություն Ալփիար-Երվանդ Օտյան-Երվանդ Թոլայան-Տիգրան Ջյոկյուրյան-Տիրան Փափազյան-Արամ Անտոնյան-Միքայել Կյուրճյան-Առանձար երգիծազավեշտային գրականության պատմական ոստումի տիրույթներում, վերջապես՝ Նարեկի գոչունյանական թարգմանությունն, որն, ինքնին աշխարհաբարի անհրաժեշտ գեղարվեստական նվաճում լինելով, լեզվի ստեղծաբանական հնարավորությունների կայացում էր թե՛ իր երկերում կերտված, թե՛ շուրջ երեսնամյա ժամանակաշրջանի գեղարվեստական մետաքրում բրտացած:

Անշուշտ, գրականության պատմության արժեքաբանական տիրույթներում Քասիմի գեղարվեստական ժառանգությունը ո՛չ հանգրվան է, ո՛չ կիզակետ, սակայն հանգրվանն ու կիզակետը սատարող, պայմանավորող վկայություն, նամանավանդ՝ արձակի (վեպ, նորավեպ) և երգիծանքի կիրարկումներում։ Նախ այս հանգամանքն է արդիացնում և պատճառականացնում նրա գրականության ուսումնասիրության խնդրականությունը և հրատապությունը։ Առարկայական մեկնությունն այս պարագային միշտ նկատի է ունենում, որ նմանօրինակ դիտակետը հնարավորություն է ընձեռում տեսնել և վերհանել, վերլուծել Քասիմի գործի ազատումը արվեստի լուսանցքայնություննից, ինչն ինքնին նրա վիպագրության ներարժեքն է և հանգուցումը գրականության պատմության շարունակելի առաքելությանը։ Էական է դիտել, որ, թե՛ ժանրակերպությամբ, թե՛ հղացքային շրջագծով, Գոչունյանի ծավալուն, բազմազան և խայտաբղետ ժառանգության մեջ առանձնանում է վիպագրությունը, որ սույն գրության մեջ ներառում է ինչպես նրա վեպերը («Կարապետ», «Բախտախնդիրը», «Ժառանգորդը», «Կնճուտ հանգույց մը», «Ոսկիներու ճամբուն վրա», «Կրակին մեջեն», «Խորհրդավոր աղջիկը»), այնպես էլ գեղարվեստական փոքր արձակը, ընդ որում վեպերից՝ «Կարապետ», «Կրակին մեջեն», «Խորհրդավոր աղջիկը» ստեղծագործությունները, իսկ փոքր արձակից՝ «Կյանքի տեսարաններ» ժողովածուի նորավեպերը։ Ինչո՞ւ։ Առանձնացրած երկերը պարփակում են Քասիմի վիպագրության ուրույնությունը, տեսաիրացման հանգանակները, խտացնում նրա գրականության երգիծական գերակա անդրակերտությունը, առթում ինչպես ինտերտեքստուալ ընթերագրումների, այնպես էլ գենետիկական պոետիկայի խնդիրներ, միաժամանակ թանձրացականացնում բնագիրը կազմակերպող ձևաբանական սկզբունքների դրսերումները։ Հետեւաբար, անհրաժեշտություն է, մինչև համապատասխան տեղում մանրամասները, հակիրճ «բացել» «ուրույն, յուրահատուկ վիպագրություն» հիմնադրույթի տարրողությունը։

Հայ վեպի ինքնության, կառույցի և կազմաբանության հարացույցում գոչունյանական վիպագրությունը բնորոշվում է ուրույնությամբ, յուրահատուկությամբ հետեւալ հանգամանքներով։

առաջին՝ նրա ժանրով հեղինակած ստեղծագործություններն արխիտեկտոնիկ ընդգրկումով ունեն վիպայնության կերպ, լուծմունք՝ գիրկընդիսառնած վեպի, պատմվածքի, նորավեպի, պատկերի, ակնարկի, խոհագրության տարրերը, ըստ էության վեպի ժանրի «մաքուր», «անխառն» ձեն ու կաղապարը ավարտաբանված չէ,

երկրորդ՝ բնագրի նմանօրինակ միջանկալությունը, անցումայնությունը

պայմանավորել է վիպագրության էկեկտիզմը և՝ ձևաբանական և թե՛ բովանդակային պլաններում,

երրորդ՝ հեղինակի ստեղծաբանական գիտակցության մեջ ժանրային ինքնորոշման, սահմանների պատճեներն առհասարակ բացակայում են, որը ոչ թե հեղինակի իմացությունների արդյունք էր, միամտություն կլինի այսպես նշագրելը, այլ, այսպես կոչված «ժողովրդային գրականության» ընկալման և դրա իրացման հետևողական կերտողություն։ Պատահական չէ, որ նրա «Ճունեն ներս» ժողովածուի հրատարակիչն արձանագրում է. «Քասիմ մեր միակ գրողն է, որ ձեռնահասորեն պրատած ուսումնասիրած է ամեն դասակարգի ալ ընտանեկան, առեւտրական ներքին կյանքը և, վեպերու, հոգվածներու, պատմություններու ձևին տակ վերլուծած է բոլոր երեսութները այդ կյանքին»<sup>3</sup>։ Հրատարակիչը միանգամայն իրավացիորեն կիրարկում է «ձեռ» եզակիով, որովետև քասիմյան «ժողովրդային գրականության» համար հիմնականը վիպայնության կերտումն է, որտեղ ժամարի հութենականություն պայմանավորող բաղկացյալներն ընդամենը ստորոգելիներ են։ Իսկ «ժողովրդային գրականության» կենտրոնացման հարմարվողական դաշտն, այսպես կոչված, «ժողովրդային վիպասանությունն» է՝ թերթոն-վեպի կազմաբանական-իմաստային թելադրանքներով։ Հանրահանու բնագիրն անվերապահ իրականություն դարձնելու համար հարկ էր իրացնել վիպայնության արքետիպային հանձնառությունները՝ երկի տիրույթներում ընդելուզելով էպոսի, իրապատում, հրաշապատում հեքիաթների, վիպասանությունների, խայտարդես թափառող այուժեների գործառնական մասեր, անպայման արդիականացնելով, պատշաճեցնելով դասական վեպի կանոններին՝ զուգահեռաբար շրջանակելով ժամանակի հանրային-ազգային հրատապություն ունեցող իրողությունների հեղինակային բացահայտ (Հրապարակագրական պաթոսով) միջամտություն-տեսանկյունները<sup>4</sup>։

Հատկանշական է, որ Քասիմի վիպայնության կերպընկալումը և իրացումը արևմտահայ գրականության պատմության համապատկերում շարունակվեց<sup>5</sup> Բենիմին Եղիազարյանից, Արգամ Գոռունիից, Գրիգոր Սարաֆյանից մինչև Սմբատ Բյուրատ և Արմեն Շիտանյան։ Վիպայնության արդիակերտումն ընդհանրացված-բյուրեղացած է «Կարապետ (Վրեժինդիրը)»<sup>6</sup> վեպում, որտեղ Կարապետ-Սուլբեն Մրահոնյանի ոդիսականի դիպաշարային-կոմպոզիցիոն պատումն ընթերվում է բազմաթիվ և բազմապիսի կոլիզիաների (երբեմն հրաշապատում-մտացածին, ինչպես Վահրամի լոկալ «բարոյական դարձի», էթիենի մեռնելու, Կարապետի և Պոլ Շիսոնի հովերգական հարաբերությունների պա-

3 Տե՛ս Քասիմ, Տումեն Անրու, Կ. Պոլիս, Տպագր. Զ. Պերպէրեան, 1907։

4 «Կյանքի տեսարաններ» ժողովածովի «Վաճառականներու ճանձը» պատկերում առկա է Օրականագրության «տաճող» արքետիպի բացահայտ ցուցանությունը, որ բախսի, երջանկության փնտրությունը գեղարվեստականացնումն է՝ տիրապետող և վեպերում, և նորավեպերում։

5 Հանգամանք, որ արձանագրում էին արդեն ժամանակակիցները։ Օրինակ՝ Տիգրան Արփիարյանը գրում է. «Քասիմ ժողովրդային վիպասանության, թերթուն-վեպին ամխոնց մշակը ինքն ալ անշուշտ պիտի ունենա իր հետևորդները» (Մասիս, Կ. Պոլիս, 1904, թիվ 4)։

6 Վեպն առաջին անգամ լույս է տեսել «Բյուզանդիոն» օրաթերթում 1898-1899 թվականներին, ապա՝ առանձին գրքով, կրկին Կ. Պոլսում, 1910-ին։

բագային), էթիենի, Վահրամ Աբեժյանի, Լուիզ և Պոլ Շիսոնների, Վարդենի Գառնակերյանի, օրիորդ Ծավանի, այլոց պլաններում, միաժամանակ Պոլիս-Փարիզ-Պոլիս ընթացականությունը (ուշագրավ է փարիզյան ակնարկների գեղակտիկ-քարոզարանային շերտը) ցուցանում է վիպայնությանն ընդելուգվածքարքերի, բնավորությունների ուրվագրերը<sup>7</sup>:

«Ճողովրդային գրականություն. վիպայնության» իմպերատիվը՝ իբրև ստեղծաբանական գիտակցում-իրացում, ենթադրում է գեղարվեստականացման որոշարկված գեղագիտական-գեղաձևական հայեցություն, որը Գոչունյանի գրական ժառանգության մեջ համարժեքվում է կյանքի, իրականության ուղղագիծ փոխանցումով բնագրային մակարդակ՝ որպես վերջինիս ո՛չ արվեստական վկայություն, որովհետև գրագետի ընկալումներում դույզն-ինչ շեղումն իրականությունից խաթարում է գործողությունը, իրադարձությունը, դրամատուրգիան լայն առումով, ինչն, ըստ նրա, արվեստի գոյութենությունն է: Պատահական չէ, որ նախ՝ 1880-ականների վերջին 90-ականներին հեղինակած նորավեպերի, պատկերների, մանրավեպ-մանրագեպերի շարքը նա զետեղեց «Կյանքի տեսարաններ» ժողովածուում, որտեղ «տեսարան» կազմաբանական միավորն ամենից առաջ կյանքից բնագիր ներքերված ո՛չ արվեստական վկայության գործողությունը, իրադարձությունը, արարքն ընդգծող հանգանակի հոչակագրումն էր, որոշակիորեն իր ուսուցիչ Հակոբ Պարոնյանի «Իմ ձեռատերիս» գրականացման սկզբունքների (կյանքն իբրև թատրոն, գրամատուրգիա, գործողություն) ավանդույթի շարունակողը և ապա՝ վեպերի համարնագրում բանաձեռելը. «...ես կը կարծեմ, – հեղինակային հանգանակը նշագրում է «Խորհրդավոր աղջիկը» վեպի կենարոն-հերոսներից Անահիտը, – որ մարդիկ ո՛չափ գրական ըլլան, ա՛յնչափ պիտի փարին իրական կյանքը ներկայացնող պատկերներուն, քան թե մեկ քանի հեղինակներու խելապատակին մեջ ծագում առաջ վիպական դեպքերուն, որոնք թեև հետաքրքրությամբ կրնան կարդացվիլ և կամ իբր թատերախաղ ներկայացվին, բուռն ծափահարություններ կրնան խել հասարակութենեն, սակայն քաղցր ժամանցի մը հաճույքը ընծայելե զատ ո՛և է հետք չեն կրնար դրոշմել մարդուս մտքին վրա, այն գերազանց պատճառով, որ հեղինակին ներկայացուցած դեպքերն ու դեմքերը գոյություն չունին ու չեն կրնար ունենալ իրականության մէջ»<sup>8</sup>: Անշուշտ, «Ճողովրդային վիպայնությունը» ձևաբանական-իմաստային դաշտով ներքերում էր ժամանցի հոլովույթը գրականություն՝ Քասիմի վիպագրությունը որոշակիորեն ամրագրելով ժամանցային գրականության հանդերձում, սակայն դա կյանքից արտածված ժամանցն էր՝ ընթերցման տիրույթներում զուգահեռելով օգտապաշտական-ուտիլիտար գերակատարություններ: Այս գեղագիտական գերակայության յուրաքանչյուր շեղում գրագետի կողմից դիտվումընկալվում էր իբրև հակագրականություն, բնականաբար ունենում սարկաս-

7 Այս խորքին վեպի կառուցում առանձնանում է տեր Ամբակում՝ միջնորդ տեր պապաների ուշագույն պատճենի, որ, Վեցինազարյակի զորությամբ, կենանակերպերին հենվելով (տե՛ս վեպի 523, 551 էջերը), հարստացնում է քահանայի գեղարվեստական վկացությունը:

8 Միսաք Գոչունյան (Քասիմ), Խորիրդավոր աղջիկը. Կ. Պոլիս, 1896, էջ 148: Այս ստեղծագործությունը հեղինակը ձոնել է Եղբայր՝ Սարգիս Գոչունյանին:

տիկ հակագդեցություններ՝ ինչպես, օրինակ, «Դարեվերջիկ գրագետը» նորավեպում<sup>9</sup>:

«Ժողովրդային վիպայնության» տեսական հանգանակների գործնականացումն, իրացումն անպայմանորեն առաջադրում է երգիծագավեշտական կենսուլուտ, որովհետև «Անով է որ գոհացում կը գտնեն պարզ մարդոց կոկիծները, օրվան իրադարձություններուն մթին արձագանքները չեն զարգանար դեպի տուամա: Իրար հանգուրժելու ամենեն պարզ ու բնական միջոցն է անիկա»<sup>10</sup>: Սրանով են բացատրվում նաև Գոչունյանի ձեռնարկումների արգասավորությունն ու հաջողությունը, քանի որ, ինչպես «Մանզումեի» տալաքանակի սպառումը 1891-ին 500-ից 3500-ի հասցնելը, երբ Կարապետ Փանոսյանի կաթվածի պատճառով ինքը սկսեց խմբագրել թերթը, այնպես էլ «Բյուզանդիոն»-ի տպաքանակի ավելացումն իր չնորհիվ, ինչպես իրավացիորեն թուրյանի «Վրեժինդիր» վեպի անդրադարձին անմիջապես հաջորդող խմբագրական նոթում է արձանագրված<sup>11</sup>, պայմանավորված էր վեպ-թերթոնի ավանդույթով՝ դիդակտիկ-հրապարակագրական, ժամանցային-ուսուցողական, օպերատիկ արձագանքման<sup>12</sup> միաժամանակյա հատկականություններով:

Գոչունյանի գեղարվեստական ժառանգության քննաբեանության կիզակետում առաջնային է նրա ստեղծագործության կոմունիկատիվ ընդգրկուն դաշտի առկայության առաջադրությունը՝ ամենից շատ կարդացված լինելու, բնագիր-ընթերցող հարաբերակցության գերակտիվության պատճառականությամբ: Բանն այն է, որ սա «Ժողովրդային վիպայնության» ստեղծաբանական տիպի որոշարկիչ-նյութականացնող օրինաչափությունն է, որովհետև համարնագիրը գոյափորվում և խարսխվում է այն հայտանիշներով, որոնք ընթերցման հակադարձություններում ներբերում են և՛ ժամանցի հանրահաճո կիրարկումը, և թե՛ գոյության իմաստի երջանիկ հանդրվանին հասնելու ակնկալվող հանգուցումները: Պատահական չէ, որ «ամենից շատ կարդացվելիքի» ստեղծաբանական տիպը Քասիմի վիպագրության մեջ ավարտաբանվում է բազմապլան և բազմաշերտ խոչընդոտներն ու արգելապատճենները հաղթահարած «happy end»-ով, ավելին՝ բնագրային մակարդակում պարբերաբար ընդգծելով գոյութենության գերակա արքետիպի վիպայնացման իրողությունը: Այսպիսով՝ ըն-

9 Տե՛ս Քափին, Կյանքի տևարաններ, Թիֆլիս, 1897, էջ 72-73:

10 Հակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, Երուսաղեմ, 1956, հ. 4, էջ 76:

Որոշակիորեն Քափին վեպերում առկա են պարողանական վեպի ըմբռնման ուղղագիծ անդրադարձերը: Նկատի ունեն «Մեծապատիվ մուրացկաններ»-ի մուտքի վիպասանի ու վիպագրության քրնաստումների բնույթագրումը: Այսպես՝ «Խորիրդավայր աղջիկը» ստեղծագործությունում վեպի և իրականության բախումը իրեն երևակալականի նեգմանք (տե՛ս էջ 30, Անահիտի և Բրաբինի վիճաբանության դրվագը), Գողեփինի գնահատականը վեպի մասին «Կարապետում» (տե՛ս էջ 492):

11 Տե՛ս Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 1899, մայիս 25, թիվ 783:

12 Իր հիմնարդած և խմբագրած «Ժամանակ» օրաթերթում հրատարակած «Կրակիճ մեջեն» վեպում (տե՛ս Ժամանակ, Կ. Պոլիս, 1908, թիվ 1-27, 29, 32-44, 47-56, 1909, թիվ 57, 61-63, 75-76, 80, 82-101, 103-111, 113-119, 121-122, 124-126, 128), անդադառնալով 1894-1896-ի Աղետին, գրում է. «Այս միշտանկալ անոր համար որ՝ ԿՐԱԿԻՆ ՄԵԶԵՆ վեպ մը գրելու ու գոնե խիստ համառոտ կերպով սպանեանոցին վիճակը չմերկայացնել, մեծ պակաս մը պիտի ըլլար պատմության համար» (Ժամանակ, 1908, թիվ 14):

թերքման տիրույթներում բրտացվում է երջանկությանը մոտենալու, նվաճելու, այն քմայքից, տեսականից կենդանակերպելու կարելիությունները, երջանկության հասնելու ճանապարհին կյանք բեկող վթարները («Կարապետ», «Խորհրդավոր աղջիկը», «Կրակին մեջեն», «Խարված մայր մը» և այլն՝ այս գործնթացը կենտրոնացնելով միջադեպերի այնպիսի գրականացմամբ, որտեղ նորմատիվ, առտնին, սովորական փաստը դառնում է անկանխատեսելի, խորհրդավոր, գետեկտիվ, արկածային, պատնեշաշատ: Ինչպես, օրինակ, «Խորհրդավոր աղջիկը» վեպի տիրույթներում Հակոբ Կառիկյան-Անահիտ սիրո պատմությունը<sup>13</sup>:

Քասիմի վիպագրության զանգվածային ընդունելությունը, «ժողովրդայնությունը» պայմանավորվում են նաև ժանրի թերթոնային ընդութագրով, որ բացի նրա վիպագրության ձևաբանական-իմաստային մասնահատկություններից, ընտրանուն հանած ընթերցող բոլոր խավերի մշակութացման, գրականության հետ հանդիպաղը վելու և ներգործելու թերեւս միակ ընդունելի ձևն էր ժամանակի ընթերցողի համար: Օշականյան բնորոշմամբ՝ «լավագույն ուժեր սպառող» թերթոնը հանրամատչելի, ածանցյալ վեպի տարերքն էր (Երվանդ Օսյան, Սմբատ Բյուրաստ, Արմեն Շիտանյան):

Քասիմի «ժողովրդային վիպայնության» ստեղծաբանական տիպի ընդհանրություններն ելակետելիս անպայմանորեն հարկ է արձանագրել մեկ գերակայություն ևս՝ զավեշտի, հեգնության, երգիծման պարուրումը համարնագրում ինչպես ժողովրդական տարերքից ներբերված ձևերով ու լեզվական-ոճական տարրերով, այնպես էլ երգիծական գրականության պոետիկական միջոցներով:

Գոչունյանի վիպագրությունը, բացառապես խարսխվելով, այսպես կոչված, «լրագրային վեպի» տիրույթներում, բնականաբար, հատկանշվում է ժանրի թերթոնային իրացման կազմաբանությամբ և մասնահատկություններով: Թերթոն-վեպի պոետիկան ենթադրում է ժանրահղացքային հարացույցի հատկանիշների խստագույնս պահպանում, ինչն առարկայաբար կանխորշում է այսօրինակ վիպագրության բնույթը: Լստ էության՝ նրա վեպերը «ներդիր նորավեպերի» հանրագումար-ամբողջություններ են, որն առհասարակ գրագետի գեղարվեստական ժառանգության մեջ, հակադարձ կապի ստեղծանումով, փոքր արձակը բնորոշում է իբրև համառոտած վեպ: Այսպիսով՝ Գոչունյանի գրականության մեջ վեպն իր ներդիրայնությամբ ցուցանում է նորավեպի պոետիկական կերպը, իսկ նորավեպը՝ դեպի վեպ ակնդետ ձգտումը. ահա թե ինչու ես չեմ տարանջատում նրա վեպից փոքր արձակը, իսկ փոքր արձակից (նորավեպերից)՝ վեպը: Տեղին է Օշական՝ Երվանդ Օսյանի բնութագրման հիշատակությունը. «Վիպողը, Օսյանի մեջ, իրական է սակայն: Զայն կը գտնենք սակայն իր վիպակներուն մեջ»<sup>14</sup>: Առանց դույզն-ինչ վարանման սույն դիտարկումը տարածականացնելի է Գոչունյանի վիպագրությանը: Վեպերից և նորավեպերից մի քանի օրինակներով խնդրո առարկան մանրամասնենք: «Խորհր-

13 Այս վեպում առտնին-տպվորականի փոխակերպությունն անսովորի, «խենթացյալի» ունի հեղինակային անթաքուց նշագրություն: Տե՛ս Խորհրդապատճեն աղջիկը, Էջ 138:

14 Հակոբ Օշական, Համապատեր արևմտահայ գրականության, հ. 8, Անթիլիաս, 1980, Էջ 380:

դավոր աղջիկը» բաղկացած է չորս մասից<sup>15</sup>, որոնք իրենց հերթին տրոհված են գլուխների՝ առաջինը և երկրորդը՝ ութ, երրորդը՝ վեց, չորրորդը՝ երկու։ Ընդ ուրում ոչ միայն մասերն են իրենց արխիտեկտոնիկայով, կոմպոզիցիոն շրջանակով ներփակ (պատումի բինարայնությամբ), այլև՝ գլուխները։ Առաջին մասի գլուխները շուրջանակում են Շապուհ Վարդասերյանի, Հակոբ Կառիկյան-Անահիտ, Թադիկ-Մյունեվեր-Մարիամ, տոքթոր Ոսկի ներփակ պլանները, երկրորդինը՝ Հակոբիկ-Անահիտ (Մարիամ ածանցյալով) ներփակ, ավարտուն պլանը, երրորդը՝ Հակոբ-Նեմզար, իսկ չորրորդը՝ Շապուհ-Նեմզար՝ կրկին ներփակ պլաններով։ Նույնը՝ «Կրակին մեջեն» ստեղծագործության կառույցում, որի տասնմեկ գլուխները նույնպես ներփակ (բինարային պատումատիպով) պլաններ են՝ Նարդիկ-Միհրդատ, Արշակ, Գնունիի գործունեության, Միհրդատի բանտվելու և այլն։ Բոլորն էլ իրենց ձևաբանությամբ «ներդիր նորավեպեր» են։ Վեպի ներքին նորավիպագրականությունը երեան է գալիս ոչ միայն նորավեպի ժանրին բնորոշ պատումի պրկվածությամբ, սրբնթացությամբ, անսպասելի ավարտով, այլև կերպարումի պարագրկություններով՝ ֆրագմենտարայնություն, դրամատուրգիական կազմակերպող խորք և այլն։ Իսկ նորավեպերի տիրությներում, ինքնին հասկանալի է, որ նկատի ունեմ «Կյանքի տեսարաններ» ժողովածուն, աներկըս է ստեղծագործությունների՝ վեպի սահմաններ ձգտելը, ձգվելը։ Ուշագրավ է, որ գրագետի ստեղծագործական գիտակցության և իրացման բնագիր կազմակերպող այս առաջնահերթությունը վկայվել է «Դարեվերջիկ գրագետը» նորավեպում<sup>16</sup>, որտեղ չկայացած գրողի զվարթապատումը մատնանշում է վեպի նորավիպացման և նորավեպի վիպացման երթուղարձականությունը։ Գոչունյանի նորավեպերի, հատկապես «Թե ինչո՞ւ...»-ների շարքում, նորավեպից վեպին անցումայնությունը, ձգտումն անխուսափելիորեն պետք է ունենար ստեղծագործական «վթարներ»՝ մի գեպքում հրապարակագրական անհարկի շեղումներով («Թե ինչո՞ւ պետք չէ ընկճել»), այլ պարագային՝ կաղապարավորված, թույլ հանգուցումով («Թե ինչո՞ւ ամեն ժամասեր քրիստոնյա չէ»)։ Այդուհանդերձ, գոչունյանական «վիպայնությունը» վեպերում և նորավեպերում միասնականանում, համակարգվում է բարքերի վկայություններով՝ ամուսնություն, ուսումն, նահապետական-արդիական բախում, կրթություն, դաստիարակություն, առհասարակ կենցաղագրական համայնապատկեր։ Մի իսկական պոլսական պատկերահանդես՝ վաճառականներ, վարժապետներ, քահանաներ, արհեստագորներ, գրագիրներ, արվեստագետներ, «ալաքրանկա» երիտասարդություն, միջնորդ կանայք՝ ըստ էության հասարակության բոլոր խավերն ու շերտերը։

Քասիմի «Ճողովրդային վիպայնության» վեպ-նորավեպ փոխադարձությունը, ներթափանցությունը ենթադրում են ժանրային դասակարգության էլլեկտիզմ՝ արկածային (ավանտյուրիստական), դետեկտիվ, քարոզարանային,

15 Հարկ է նշել, որ «Խորհրդավոր աղջիկը» վեպի գրքային հրատարակությունն առկեցուն է բազմաթիվ վրիպակներով՝ անգամ գլուխները թվագրելիս։ Տե՛ս ստեղծագործության 187, 207, 307-րդ Էջերը։

16 Տե՛ս Կյանքի տեսարաններ, Էջ 67-68։ Նույնը նկատվում է նաև «Հարսի մը պատրանքը» ստեղծագործություն՝ պատումային մակարդակի մեխանիկական համառոտմամբ։

գաղտնիք վեպերի և նորավեպերի բաղադրատարրերով և անվերապահ մելոդրամատիկ հանկերգով։ Իսկ ցանկացած մելոդրամա չի կարող անմասն մնալ առեղծվածից, գաղտնիքից, որ թերթոնային վիպագրության ընթերցման մակարդակ ապահովագրող գլխավոր սկեռումն է ինտրիգի ոստումով գաղտնիքը, խորհրդավորությունը բացահայտելիս, ինչպես «Թե ի՞նչու ամեն ժամասեր քրիստոնյա չէ» նորավեպում, «Խորհրդավոր աղջիկը» վեպում՝ հաճախ հեղինակային միջարկություններով առավելագույնս ուժգնացնելով գաղտնիքը խորհրդավորի հանգամանքը՝ «Բայց այս ի՞նչ էնթրիկ էր, որ կը դառնար խորհրդավոր աղջկան շուրջ»<sup>17</sup> հարցումը մանրամասներով և լուծելով պատումային բոլոր մակարդակներում։

Ժամարային դասակարգության այս կատարյալ սքեթչի միասնականացումը Գոչունյանի վիպագրության մեջ օրինաչափում-կարգաբերվում է երգիծականությամբ՝ բախտինյան բնորոշման ուրույն գրոտեսկային ամբիվալենտությամբ ամփոփելով հնի և նորի, սկզբի ու ավարտի մետամորֆոզները։ Գրողի բնագրերում գրականացվող առարկայի և ենթակայի միկրոտիեզերքը հարաբերվում է մակրոտիեզերքի հետ՝ երգիծական ընկալում-իրացում զուգահեռականությամբ։ Ընկալում-իրացման զուգահեռականությունը բնագրում գոյավորվում է հատկապես երկխոսություններով<sup>18</sup>, որ վիպայնության, նամանավանդ գոչունյանական բնագիր կազմակերպող, էատարրն է «լոկալ» դիմանկարումի և հեղինակային զանազան ընդմիջարկումների (միջարկում-ակնարկ, միջարկում-հրապարակախոսություն, միջարկում-ստեղծագործության ընթացքը գնահատող, մեկնաբանող հեղինակային միջամտություն և այլն) համադրականությամբ։ Հարկ է նշել, որ թե՛ երկխոսությունը, թե՛ դիմանկարը բնագիրը կազմակերպող պոետիկական միջոցներում տիրապետող են ինչպես վեպերում («Կարապետ», «Կրակին մեջնե», «Խորհրդավոր աղջիկը», «Կնճուտ հանգույց մը»), այնպես էլ նորավեպերում («Թե ի՞նչու ամեն փեսացու անկեղծ չէ»<sup>19</sup>, «Ծվարած հայր մը», «Խարված մայր մը», «Վաճառականներու ճանճը», «Դարեկրջիկ գրագետը»):

17 Տե՛ս Խորհրդավոր աղջիկը, Էջ 234:

18 Երկխոսությունն առնասարակ արևմտահայ երգիծական գրականության (վիպագրության) հենքն է բնագիր գոյավորելիս, ինչը սկզբնավորել է Հակոբ Պարոցյանը։ «Վիպասան է դարձյալ իր սքանչելի dialogue-ովը, գրում է Օշականը.՝ որ թեև թատերական շնորհ, արագ, երգիծական ոլորտով վեպի մը մեջ անփոխարիթելի բարիք մըն է, ընթերցողը ամեն րոպե տիպարին մոտիկը պահող»։ Տե՛ս Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 4, Էջ 55:

19 Արավասիկ գրողի լուսագույն լոկալ դիմանկարներից, «Թե ի՞նչու ամեն փեսացու ամեղծ չէ» նորավեպից։ «Արտաշը վերջին ծայր շիք երիտասարդ մ'եր. երեսները ածելված, աեխերը ոլորված, մազերը սանտրված. հազուստները եթե ոչ արժեքի՝ գեթ մաքրության տեսակետով կրնային աչքի զարնել։ Տղա հասակեն մտած էր շուկա, և ալմբան փորձառություն ստացած կիմերու քմահանուքներուն մասին, որ ամենադժվարահամ հաճախորդներն իսկ կրնար թուվել, դյութել, համոզել և վերշապես բան մը ծախել անոնց. ձալնին մեջ ալմայիս շեշտեր, ձևերուն մեջ ալմայիսի կոտրութեր, ակնարկին մեջ ալմայիս հիացումներ կրնար ստեղծել, որ շատ անգամ մետաքսեն գնելու եկող հաճախորդին բրդեղեն, և բրդեղեն առնել մտադրողին բամբակեղեն կրնար ծախել, առանց երբեք զգացնելու դիմացինին իր ճարապիկ խարեւալությունները. բավական եր, որ ձեռքը ապրանք մ'ունենար ծախվելը երաշխավորված եր, և ինչ գնով – Աստված ողորմի» (Կյանքի տեսարաններ, Էջ 34-35):

Միսաք Գոչունյանի «ժողովրդային վիպայնությունն» իր ինքնությունը համապարփակում է երգիծականության անդրակերտությամբ: Էական է դիտել, որ Ցիցերոնից մինչև Շեքել և Շելլինգ, Ժան Պոլից մինչև Բերգասոն ու Բախտին երգիծական գեղարվեստական կերպընկալման և իրացման կարելիությունները համարում են սահմանափակ, մատնանշում, որ իր պարագայականության պատճառով «Երգիծանքը ազատություն մըն է միայն դեպքերուն հանդեպ»<sup>20</sup>: Աչա և Քասիմի վիպայնությունը (վեպերի, նորավեպերի ամբողջությունը), որ բացառապես գեղագիտության գրականացման կենտրոնացումն է, ենթադրում է ստեղծաբանական ինքնության երգիծական, հեղնական անդրակերտումը: Գրողի ստեղծագործության զավեշտականությունն առարկայաբար հնարավորություն էր ընձեռում ինչպես իրականության վերաստեղծման հակադարձականության արարողականությամբ, այնպես էլ ակտիվ ընկերվարական դիրքորոշումով՝ կյանքի վկայությունների զառածված փոխաձևումները սկեռելու: Աչա թե ինչու Գոչունյանի վիպագրությունն իր սքեթչային տարերքով բնագրում ներառնում է Ֆլաների Օ'Քոնորի մատնանշած կատակի, անեկդոտի, քնարական արձակ ուսպողի, ավելացնենք՝ մելոդրամատիկ դեպքի հաղորդում-գրառման մասնահատկությունները<sup>21</sup>: Մատնանշված համակցությունը բնագրային մակրդակում առթում է արևմտահայ (պղոսական) իրականության բարքագրությունը՝ երգիծական ինքնացնող կերտվածքով, որը ներառնում է ինչպես ազգային կենսողոտին ներհատուկ սովորույթների, կարծրատիպերի, բարոյական և ընկերային կյանքի, մարդկային նկարագրի հոռի դրսերումների հեգնանքն ու գեղարվեստական այպանումն, այնպես էլ առհասարակ մարդու տրվածքին բնորոշ զարտուղությունները, իրականության ինքնին հեգնանքի, զավեշտականի գեղարվեստական դիտարկումները: Այս պարագային գոչունյանական «ժողովրդային վիպայնությունը» բաղհյուսում է և՝ ազգային կյանքի նորոգությանը սատարելու, և թե՛ ժամանցով հոգսերը փոքր-ինչ թեժեացնելու և՝, անշուշտ, հումորով, սատիրայով ճանաչողության հայեցակարգը բարեփոխված հաստատագրելու նպատակամիտությունները: Այս խորքին վեպերի և նորավեպերի տիրույթներում կենտրոնանում են թե՛ օրփա թելադրանքով պայմանավորված խնդիրները, թե՛ ազգային կյանքի, այսպես կոչված, «ուղեկցային» իրողությունները՝ միտելով բնականություն-անբնականություն բախում՝ վկայված զավեշտականի անդրակերտմամբ (քաղքենիության ողջ երփնագիրը՝ օտարամոլություն, կծծիություն, տգիտություն, տխմարություն, տե՛ս, օրինակ, «Խարված մայր մը», «Շվարած հայր մը» նորավեպերը, «Խորհրդավոր աղջիկը», «Կարապետ» վեպերի համապատասխան հատվածները):

Ինքնին հասկանալի է, որ երգիծականությունը պետք է ունենար համապատասխան լեզվակերտում, և հարկ է շեշտել, որ երբեմն Քասիմը հաջող լուծումներ է գտել՝ ցուցանելով վարպետության օրինակները<sup>22</sup>: Հարկ է նաև արձանագ-

20 Հ. Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 4, էջ 39:

21 The process of fiction. Contemporary stories and criticism. University of Georgia, 1969, p. 1.

22 «Խարված մայր մը» նորավեպը սկսում է. «Աղջիկ մ՛ունիմ, որ յոթը տարին ի վեր տասնյութը տարեկան է» (Կյանքի տեսարաններ, էջ 3), «Հարսի մը պատրանք»-ում կողիզիայի երգիծական անակնկալայնությունը նախապատրատում է հետևյալ նշագրությամբ. «Օր մը պատահմամբ գա-

ըել, որ նա արևմտահայ երգիծական գրականություն է ներբերում, անշուշտ, ամրակայելով Հակոբ Պարոնյանի ավանդները, բազմաթիվ միջոցներ՝ նմանությունների և տարբերությունների կոմիզմ, պարողիա, կոմիկական հիպերբոլ, լիտոտա, ալոգիզմներ, բառախաղեր, պարագոքսներ, գործառնական ընդգրկուն դաշտ ունեցող սրամտություններ: Թեև, պետք է շեշտել, որ և՛ վեպերում, և՛ նորավեպերում երգիծական անդրակերտումն ապահովող վիճակի, բարքի, ապրումի, արարքի հիպերբորփացումն ավելի հաճախ ամբողջականանում է բառախաղերով և ալոգիզմներով<sup>23</sup>: Իրողություն, որ արևմտահայ երգիծական գրականության ավանդույթում նորմայի հանձնառություն է ունեցել: *Օրինակ՝ Միհրան Վարպետյանի, Հարություն Ալիքիարի ստեղծագործություններում*<sup>24</sup>:

Միսաք Գոչունյանի «ժողովրդային վիպայնությունն» ուշագրավ է նաև միջընագրային և ինտերեքստուալ ընթերագրումների առումով: Նիկոլ Աղբալյանը «Կյանքի տեսարաններ»-ին անդրադառնալիս գրում է. «Գրքից երևում է, որ հեղինակը մտած-դուրս եկած մարդ է. կարողանում է դիտել և շատ բան է դիտել. բայց կյանքը խորը չի ուսումնասիրել. նա տեսնում է երևոյթները, բայց ոչ երևոյթները շաղկապող ու զուգորդող իսկական պատճառները, – այնուհետև նշում է Քասիմի երգիծանքի պակասությունները (լուրջի և ծանրի խառնուրդ, երբեմն ծանր լեզու և այլն) ու եզրակացնում, – Պարոնյանի նման պարզ ու սրտաբաց հոգի չէ հեղինակը. նրա հոգին ավելի ծանրաշարժ է, ուստի և լեզուն ծանր է և ծաղրը մեծ ազդեցություն չի անում: Բայց անկասկած է մի իրողություն, որ և արձանագրում ենք. Քասիմը գրելու շնորհք ունի, թեև ոչ մեծ և ոչ փայլուն»<sup>25</sup>: Ի շարս գոչունյանական գրականության արժեռորում-գնահատությանը՝ Աղբալյանը մատնանշում է նրա ստեղծագործության պոետիկայի «գենետիկական ուղղորդվածության» իրողությունը, որ միազդորեն հանգուցվում է Հակոբ Պարոնյանին: Պատահական չէ, որ նրա ստեղծագործություններն առկեցուն են պարոնյանական ալյուգիաներով, ինչպես նաև հանճարեղ գրողին վկայակոչող հղումներով<sup>26</sup>: Իրողությունն ակնհայտ է նաև Գոչունյանի գրական ժառանգության միջընագրային տիրույթներում: Այսպես՝ «Խորհրդավոր աղջիկը» վեպի առաջին մասի երկրորդ գլխում (Էջ 19-24) նկատելի է «Թե ի՞նչու ամեն փեսացու անկեղծ չէ» նորավեպի ալյուգիան, իսկ «Վաճառականներու ճանճը» նորավեպում՝ «Խորհրդավոր աղջկա» ծագումնաբանական կողը:

Վաթ մը կոտրեցի, և կեսուր անչափ ուրախացավ, անչափ բարի հետևորչուներ համեց այս գավաթին կոտրվելեն, որ փոխանակ ձախավերության վրա ամշնալու՝ քիչ մնաց որ կեսրոշն ավելի հաճուքը պատճառելու համար երկրորդ մը ևս կոտրել փորձեն» (Յուլն տեղում, Էջ 127):

23 Բառախաղեր, ալոգիզմների շարամից հետեւ երկուսը: «Թաղիկ աղաղ վաթսուն տարեկան... երիտասարդ նըն է» (Խորհրդավոր աղջիկը, Էջ 63), «Օրն ի բուն կը հեղինակե, կ'ուստմնասիրէ, կը գուն, կը քերթեն – առանց սակազն մորթելու...» (Թե ի՞նչու գրագետին եղած վճարումը նպարավանակն չըլլար, Էջ 96):

24 *Տե՛ս Ս. Վարպետյանի «Պապիկ»* (Արևելյան մամուլ, 1894, Էջ 70-74, 103-106), «Զէ» (Յուլն տեղում, Էջ 236-241) ստեղծագործությունները, Հ. Ալիքիարի «Կանացի խոստվանանք» շարքը (Յուլն տեղում, 1903, Էջ 426-431, 450-457, 767-770), «Ժամանակականանք» շարքը (Յուլն տեղում, Էջ 548-551, 573) պատկերը:

25 Մոլոճ, Թիֆլիս, 1898, թիվ 4, Էջ 528-529:

26 *Տե՛ս Կյանքի տեսարաններ*, Էջ 100, 101, 125, 208, Խորհրդավոր աղջիկը, Էջ 64, 65:

Եթե Գոչունյանի բնագրի գոյավորման գործընթացում էական էր Հակոբ Պարոնյանի Փենոմենը, ապա արևմտահայ երգիծական գրականության ինտեր-ակստուալ ընթերագրումներում հեղինակի գործը դառնում էր մետաքնազիր կազմակերպող բաղադրիչ՝ միջնորդավորված՝ Տիրան Փափազյանի, Մելիք Պելիքճյանի, և՛ թե ուղղագիծ՝ երվանդ Թողայանի բնագրերի<sup>27</sup> տիրույթնե-րում:

27 Տե՛ս Տ. Փափազյանի «Օդափոխություն մը» պատկերը նրա «Տեսարան կամ Բուշատետրի հատ-վածներ» (Կ. Պոլիս, 1893) գրքում, Մ. Պելիքճյանի «Խոլավուզ կմիկը», «Հարսի լեզուն» նորա-վեպերը նրա «Ընկեցիկը» (Կ. Պոլիս, 1895) ժողովածուում և Ե. Թողայանի «Իտեալին ետևեն» (Կ. Պոլիս, 1910) վեպի 22-րդ և 35-րդ էջերը:

## ԳՐԻԳՈՐ ՍԱՐԱՖՅԱՆ

**Գ**րիգոր Սարաֆյանի գեղարվեստական ժառանգության սահմանները ձգվում են 1880-ական թվականներից մինչև 1920-ականների սկիզբը։ Շուրջ քառասուն տարվա ընթացքում այս հեղինակը գրել է չորս վեպ, սակայն ժամանակն ու ժամանակը «քայլքը», կառուցողական փոխաձեռության ընթացքը բոլորվին չեն ներազդել նրա վիպասանության վրա, այն միշտ տեղապտույտի մեջ է եղել՝ մնալով հայ վեպի 19-րդ դարի ութսունական թվականների ձեւաբանության և կառույցի սահմաններում։ Սարաֆյանը ժամանակը պատմության մեջ հանդիպող այն հեղինակներից է, որոնց մասին առանց վարանելու կարելի է օգտագործել «արբանյակ» բնորոշումը՝ էպիգոնության և ժանրակազմիչ բնույթի կիրարկման կրավորականության համարություն, որը հար պատվում է իր «մոլորակի» շուրջը՝ ենթարկվելով շարժման, դիրքի նրա օրենքներին, բայց դույզենինչ չանսալով վերջինիս բարեշրջությանը։ Արևմտահայ ութսունականների վեպի տարերքից արտածված նրա ստեղծագործությունը շուրջ քառասուն տարի անհաղորդակից մնաց ժամանի պատմական, գեղարվեստական-գեղագիտական, կառուցվածքային-ձևաբանական բարեշրջությանը։ Սարաֆյանի վեպը ժամանակ պատմական համապատկերում օրինաչափ արխայիզմներից է և իր այդպիսին՝ արձանագրելի։ Եթե 1883-ին հրատարակած «Թունավորիչ աղջիկը» սենտիմենտալ-արկածային վեպի եվրոպական մոդելի սոսկական փոխադրությունն էր, ապա հաջորդ ստեղծագործությունները Հակոբ Հաճյանի «Բերայի գիշերներ», Կարապետ Փաշայանի «Մարիա թե Հայկանուշ», Խորեն եպիսկոպոս Միհթարյանի «Արկածք Կատարինեի» և հատկապես Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպերի հղացքային-բանարվեստային կրկնաբանությունները՝ պատումային միենույն մոդելներով, կոլիզիաների նույնականությամբ, գեղագիտական առաջադրությունների հար և նման ամրագրմամբ։ Եվ այսպես՝ թե՛ 90-ական, թե՛ 20-րդ դարի տասական-քսանական թվականներին՝ միշտ մնալով 80-ականների վեպի փորձառնության տիրույթներում։ Վիպագրության այգօրինակ արխայիզմի փաստարկման ուշագրավ սկզբնաղբյուր է հեղինակի միակ տեսական դաստումը։ «Վեպերը առաջին ակնարկով կը նկատվին արվեստականապես հյուսված պատմություններ, բայց զանոնք ուշագրությամբ քննող մը հոն պիտի գտնե միշտ մեկե ավելի անցքեր ու դրվագներ՝ տեղի ունեցած նույնիսկ իր անձնական կյանքին մեջ, և որոնք օղակավորվելով պիտի հայթայթեն նյութը պատմության որուն տրված է վե՞ ներդաշնակ անունը։

Արդարեւ չէ կարելի հորինել վեպ մը՝ չըրած անհրաժեշտ հավելումներ, բայց երբ չկան հոն իրական կյանքի մեջ պատահելին անկարելի եղելություններ, ընթերցողը չպիտի տարվի երբեք կարծելու թե իրեն հրամցվածը մտացածին առասպել մըն է։ Ժամանակը ըմբռնման այս մեկնությունը հեղինակը զետեղել է 1921-ին հրատարակած «Ապերախտ գրագիրը» ստեղծագործության «Երկու խոսք» առաջաբանում։ Դժվար չէ նկատել 19-րդ դարի ութսունական թվական-

ների վիպագրության գերակա մտայնությունների և հանգանակների շեշտագրությունը և հատկապես ապահովապելացման իրողության կարևորությունն, որն արդեն շրջանի վիպագրության ու մանավանդ Զոհրապի և Կամսարականի գործերում վերջնականապես իրագործվել է իբրև ժանրի ընթացականության, բնույթի ուղենիշ։ Եվ Սարաֆյանի սույն տարփողումը ժանրի արխայիկ դրսերման առարկայական հատկանիշն է, իսկ դա սերտորեն գուգադրված է ժանրի «Ժամանցային» ընկալումներին (պատահական չէ, որ նրա ստեղծագործությունների թե՛ վերնագրային լրատվության մեջ, թե՛ ենթավերնագրերում, օրինակ «Ապերախտ գրագիրը», որն ունի «Հետաքրքրաշարժ վեպ պոլս. կյանքե» խորագիրը, ընդգծվում է արկածի, գաղտնիքի իրողությունը), վեպին վերապահելով «Փակ համակարգի» գործառնություններ, որն անշուշտ նույնպես ութսունական թվականների ժանրի հիմնական հատկանիշներից մեկն էր։

Դժբախտաբար Գրիգոր Սարաֆյանի կենսագրության մասին բավական աղոտ տեղեկություններ կան։ Դատելով վեպերի հրատարակությունների տասնամյա պարբերականությունից՝ նրա համար գրականությունը երկրորդական զբաղմունք է եղել։ Այսպես՝ 1883-ին հրատարակվել է նրա առաջին «Թունավորիչ աղջիկը» վեպը, տասը տարի անց՝ «Նվարդը», 1913-ին՝ «Մեղապարտ մորաքույրը» և 1921 թվականին՝ «Ապերախտ գրագիրը»։ Բոլոր ստեղծագործություններն էլ տպագրվել են Կոստանդնուպոլիսում։ Ի դեպ, վերջին վեպին կցված է հրատարակչության ազդագիրը, որը տեղեկացնում է, թե «Թունավորիչ աղջիկը» ստեղծագործության հեղինակն երկարատև ընդմիջումից հետո շուտով ընթերցողին է ներկայացնելու նոր «Հայ աղջկան մը ողիսականը» ծավալուն վեպը՝ քաղված հայ-հույն կյանքից։ Ամենայն հավանականությամբ Սարաֆյանը այս ստեղծագործությունը կամ չի հասցրել ավարտել և կամ՝ տպագրել։ Հայտնի է նաև, որ նա 1879-ին Կ. Պոլսում լույս է ընծայել «Մեթոտ շարադրության ըստ Լարուսի» երեսունվեց էջանոց գրքույկը, որը պարզապես թարգմանություն է։

Այն հանգամանքը, որ Սարաֆյանի վիպագրությունը ժանրի ութսունականների կերպի և բանարվեստի սոսկական տեղապտույտն է, վկայում են նաև նրա վեպերի շուրջ քննադատության հետևողական լուռներուն ու անտարբերությունը։ Ո՞չ 1890-ական և ո՞չ էլ 1910-ական թվականների պարբերականներում չհանդիպեցինք որևէ անդրադարձի։ Միակ բացառությունը եղիս Տեմիրճիպաշյանի հողվածն է «Թունավորիչ աղջկա» կապակցությամբ, գրված 1884-ին (տե՛ս Ե. Տեմիրճիպաշյան, «Մատենագիտական»), Գրական և իմաստասիրական շարժում, 1884 թ., էջ 225-229)։ Եղիսան այս գրության մեջ պարզապես Գրիգոր Զիլինկիրյանի «Ուղևորություն ի Պոլիս» երկի հետ համառոտ ներկայացրել է նաև Սարաֆյանի ստեղծագործությունը։ Վիպասանի առաջին «Թունավորիչ աղջիկը» երկը ցավոք Հայաստանի Հանրապետությունում չգտնվեց, և Հնարավորություն չունենք այս վեպին հանգամանորեն անդրադառնալու։ Հայտնի է միայն, որ սա Սարաֆյանի ամենածավալուն ստեղծագործությունն է՝ ավելի քան հինգ հարյուր էջ։ Վեպը բաղկացած է չորս մասից՝ «Երգչուհու մը սերը», «Լուիզի գաղտնիքը», «Հիմթիր արկածը» և «Ճերմակ դիմակով կինը»։ Կարելի է ենթադրել, որ սա ևս սիրավեպային պատումով սենտիմետալ-մելոդրամա-

տիկ ստեղծագործություն է, արկածների անվերջանալի շարանով, բանսարկություններով, և կոլիզիայի հանգուցալուծման ժամանակ՝ «խորհրդավորության» ծածկույթը բացելով։ Թվարկումն արդեն նշագրում է Սարաֆյանի վիպագրության ձևաբանական կառույցը՝ «վեպ-ժամանցի» հաստատուն գործառնություններով։ Հար և նման ուժսունականների վեպի, այստեղ ևս առկա է՝ ժանրի եվրոպական գրականության միևնույն դրսեորման համանունությամբ, զգացմունքի, տվյալ պարագային սիրո և դրա հակազդեցության կենտրոնացումը սենտիմենտալիզմի, ոռմանտիզմի և իրապաշտության գեղարվեստական կիրարկումների խուռներամ, էլլեկտիկ կցումներով։ Հերոսների ներաշխարհի, հոգեբանության գելլարատիվ արձանագրություններ, սիրո հավաստումների երկարաձիգ նկարագրություններ, իրադարձությունների ընթացակարգի «անըմբոնելի, խորհրդավոր» չերտեր՝ համեմված ժամանակաշրջանի տարտղնված խորքով և հակազդեցության բարոյական կերպի՝ բանսարկություն, մրցակցություն, նախանձ և այլն, անսպասելի հիվանդության ու մահվան պարտադիր ծրագրով։ Եվ արդյունքում «վեպ-ժամանցի» մի հարահոս, ուր ընդամենը հերոսների անունները և գործողությունների արեալը տեղափոխելով ընթերցողին է մատուցվում ստեղծագործությունների շարան, Գրիգոր Սարաֆյանի պարագային «վեպ-ժամանցի» այս սկզբունքը գործում է անխափան, նրա «սիրո և դրա հակազդեցության» մետաբնագիրը եթե «Նվարդ»-ում տեղայնացված է նախախնամության կողմից դատապարտվածության տիրույթներում, զգացմունքի կայացումն ի սկզբանե էր դատապարտված, և սա էր սիրո հակազդեցությունը, այն առեղծվածը (պատումային մակարդակի համապատասխան ցանուցիրությունը, որ ստիպում է «ժամանց-վեպերի» ընթերցումը), որի ապրիորի տրվածք լինելու իրողությունից մինչև վերջինիս հանգուցալուծումն է ստեղծագործության շրջանակը, ապա՝ «Մեղապարտ մորաքրոջ» և «Ապերախտ գրագիրը» վեպերում զգացմունքի հակազդեցությունը սեեւված է բարյաբանական կիզակետում՝ բանսարկություն, մրցակցություն, նախանձ, չկամություն։ Նշենք նաև, որ «Մեղապարտ մորաքրոջ» պարագային նկատելի է սեռայնության նախանշանների առկայությունը բնագրում։ Ավելորդ է նշել, որ այստեղ հեղինակային դիրքորոշումն ու գաղափարաբանությունը ընթերցողին «բարոյական խափանարարությունից» պատճենը միանշանակ սենտենցին է։

Սարաֆյանի ստեղծագործությունները հայ վեպի պատմության համատեքստում հատկանշվում են նաև իրենց ձևաբանական-կառուցվածքային «անցումայնությամբ», միջանկյալությամբ», նկատի ունենք վեպ-փոքր արձակ փոխաձեռների, անցումների, ընթերագրումների և պատկերավոր ասած՝ ժանրային պատկանելիության երթուղարձի իրողությունը։ «Թունավորիչ աղջիկն» է (դատելով ծավալից) միայն մաքուր, բացարձակ վեպ, մյուս երեք ստեղծագործությունները զետեղելի են ժանրային անցումների սահմանագծում։ Այս իմաստով հեղինակի ստեղծագործությունները տեսական որոշակի հետաքրքրություն են առաջացնում։ Ինչպես այդօրինակ գործերում, այնպես էլ Սարաֆյանի երկերում, գերիշխում են վեպի ու փոքր արձակի խուռներամ հատկանիշները։ Հարկ է նշել, որ անցումնային այս ժանրային կերպը ներհատուկ է հայ արձակին։ Հիշենք թեկուղ Ստեփան Ռոկանի, Կարապետ Փաշայանի, Մկրտիչ

**Թյությունջյանի, Լևոն Շանթի, Ռենի, Ղևոնդ Մելոյանի համապատասխան ստեղծագործությունները:**

«Նվարդը» նամակ-օրագրություն է, սիրո ճակատագրական հակագդեցության հղացքի մանրամասնմամբ: Նամականի-օրագրության կառուցվածքը, բնականաբար միտելով վիպական ծավալայնություն և ընդլայնում, բնագրում առկայել է զղերի հիվանդությունների, բնության նկարագրությունների կենտրոնացումներ, զանազան ենթապատռմային մակարդակներ, որոնք ենթադրում են հանգուցալուծում ու միասնականացում, սակայն ստեղծագործության մեջ դրանք կտրուկ ընդհատվում են, մնում առկաի և այս առումով պարփակվում ինքնանպատակայնության շրջապտույտում, ամբողջականանում է միմայն զգացմունքի՝ ճակատագրով դատապարտվածության հղացքը: Այստեղ է, որ «Նվարդ»-ի կառուցվածքը դրսերում է մատնանշած «անցումայնության» որակը:

Բժշկի խորհուրդով Հարման մեկնել էր մի հունական գյուղ՝ ապաքինման: Իր նամակ-օրագրություններում Պոլսի ընկերոջը պատմում է հրաշալի բնության, գյուղի մարդկանց և բարքերի մասին: Խոստովանում, որ մարմնի ցավերը դարձանելուց առավել՝ սրտի, հոգու ցավերն ապաքինելու կարիք ունի: Բազմաթիվ շրջագայություններից մեկի ժամանակ փառահեղ առանձնատուն է հայտնաբերում, որը նրան խիստ հետաքրքրում է: Պարզում է, որ այն ոմն մեծահարուստ պոլսեցու սեփականությունն է, որը գյուղում հայտնի է իր գթասրտությամբ ու բարեգործությամբ: Մտերմանում է տան սպասավորի հետ, սակայն թե՛ տան և թե՛ բնակիչների մասին միայն իմանում է, որ առանձնատունը կառուցվել է մեծահարուստի դստեր համար, որը տարօրինակ հիվանդությամբ է տառապում: Նվարդի մասին զանազան զրույցները, նրա իրերն ու հարկաբաժինը մանրազնին ուսումնասիրելը նպաստում են, որպեսզի Հարման օրիորդին չտեսած սիրահարվի: Շուտով գյուղ են գալիս Նվարդն ու մորաքույրը: Հարման հաճախ ընկերակցում է նրանց զբոսանքների ժամանակ: Արագ մտերմանում են: Խոստովանում են, որ միմյանց սիրում են: Այնուհետև դիպաշարի ընթացը կտրուկ փոփոխվում է, նամակ-օրագրությունները դադարում են: Ընկերներից մեկը գյուղ է գնում, և պարզվում է, որ Նվարդը սրընթաց հյուծախտից մահացել է, իսկ Հարման, որ վերջին օրերին աղջկա կողքից չէր հեռացել քայլ անգամ, իսենթացել էր և նրան հիմարանոց էին տեղափոխել: Սա է ծերծեքուն, մելոդրամատիկ ստեղծագործության պատումային առանցքը: Լուսանցքին են մնում Նվարդի նյարդային-հոգեկան ծանր վիճակի, մոր ողբերգական մահվան (դստեր ծնունդից հետո իրեն ժայռից ծովն էր նետել), հոր խորհրդավոր կեցվածքի մատնանշումները, իսկ Նվարդ-Հարման հարաբերությունների սենտիմետալ-զգայացունց կենտրոնացումն ընդամենը «դժբախտ սիրո» իրագործում էր, որ բավարարում էր ընթերցող մի որոշակի հատվածի պահանջները:

Հաջորդ՝ «Մեղապարտ մորաքույրը» և «Ապերախտ գրագիրը» ստեղծագործություններում զգացմունքի հակագդեցությունը տեղափոխված է բարոյական հարթություն՝ կենտրոնանալով նախանձի, բանսարկության մանրամասներում: Եթե «Ապերախտ գրագիրը» ուրվագրում է խարդավանքների միջոցով ուրիշ

ների կյանքը խաթարելու ուղին, ապա «Մեղապարտ մորաքույրը» վեպում իշարս բարոյաբանական խնդիրների, առկա են նաև «սեռայնության» նախանշաններ: Այս ստեղծագործությունը «Վարժապետին աղջիկը» վեպի բացահայտ նմանակումն է: Մորաքրոջ պատճառով Գոհարը Հակոբի նշանը հետ է տալիս և ամուսնանում հարուստ, անառակ թաղիկի հետ, որը շատ արագ կնոջից հիամթափվում է և շարունակում իր ցոփի կյանքը: Գոհարը անկողնում բռնացնում է մորաքրոջն ու ամուսնուն: Աղջիկն այս բարոյական հարվածից և վեներական ախտից (վարակվել է ամուսնուց) մահանում է:

Եթե բանսարկությունն ու քսությունը «Մեղապարտ մորաքրոջ» կառույցում հանգուցում են ողբերգական ավարտ, ապա «Ապերախտ գրագիրը» վեպում պատճվում են՝ առթելով «ժամանցային ստեղծագործությունների» երջանիկ հանգուցալուծման կերպը: Եղվարդն ու Լուսինեն միմյանց համակրում են, պատրաստվում են ամուսնանալ, սակայն տղայի վախճանված հոր գրագիրը՝ Զարեհ անունով, ոչ միայն գրպանում է Եղվարդի ժառանգությունը, այլև Լուսինեի մորը՝ տիկին Տիրուհուն զրպարտանքներով և իր հարստության մասին մտացածին պատմություններով ստիպում է նշանը հետ տալ: Վերջին պահին Եղվարդենց ընտանիքի հավատարիմ սպասավորը՝ Խաչոյենց Մանուկը բացահայտում է գրագրի քսությունները, իսկ երիտասարդ սիրահարները ըմբունում են իրենց երջանկությունը: Սա է ստեղծագործության դիպաշարը: Հարև և նման Սարաֆյանի մյուս ստեղծագործությունների, այստեղ ևս պաթետիկ-ծերծեքուն ոճն ու երկարաբանությունները «լցրել» են երկի ծավալը, որպեսզի ընթերցողին ամբողջական հնարավորություն ընձեռեն «վայելելու» փորձություններ անցած երջանկության սենտիմետալ-մելոդրամատիկ իրագործումը:

## ԳՈՅՉՈՒԹԵՆԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Նոթեր Երվանդ Օտյանի «Աճիծյալ տարիներ»-ի մասին)

Հայոց դասական գրականության մեծանուն դեմքերից մեկի, ժամանցային գրականության դասականի, ծիծաղի վարպետի, անզուգական պատմողի, հայերեն գրաբանական դաշտում ահա արդեն մեկ գարից ավելի ընթերցման ամենամեծ պահանջարկ ունեցող արվեստագետ երվանդ Օտյանի (1869-1926) հարատագույն և բազմաժամկետ ժառանգության մեջ առանձնակի է նրա հուշագրությունը: Առանձնակի՝ թե՛ քանակով, թե՛ գեղագիտական-գեղարվեստական և փաստակավերագրական ու վկայագրական տարրությամբ:

Գրական և խմբագրական ասպարեզ մտնելով 1890-ականների սկզբներին՝ Օտյանը մեր իրականության ճակատագրական, բախտորոշ ժամանակաշրջանի՝ 1890-1920-ական թվականների քաղաքական, հոգկոր-մշակությային պատմության գրեթե բոլոր իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը եղավ: Սեփական փորձառությամբ ու ճակատագրով անցավ 1894-1896-ի Աղետը, գրանով պայմանավորված մեծ տարագրությունը, առանցքային գերակատարներից մեկը եղավ արևմտահայ հատվածում 1908-1914-ի գրական համապատկերը հաստատողների մեջ, անցավ Եղեռնի Գողգոթայով, կրկին վերադարձավ Պոլիս՝ վերականգնելու, ավելի ծշգրիտ՝ վերստեղծելու արևմտահայ մշակութային, գրական կենսոլորտը, իբրև մնացորդաց սերնդի ներկայացուցիչ փորձեց լծվել սփյուռքյան մշակութային-գրական կյանքի գոյավորմանը:

Ճակատագրով վերապահված եղակի ականատեսն ու մասնակից լինելու այս երևույթը բնականաբար պետք է վկայագրվեր նաև հուշագրության տիրույթներում, հենց հուշագրության մեջ փոկագործելով այս աჩուելի ժամանակաշրջանի բազմաթիվ փաստեր, դեպքեր, դեմքեր, մտայնություններ և զգայնություններ: Ավելին, այսպես փրկագործելով նաև իրեն, որովհետեւ հարակա աղետների և տարագրության ու մահվան հաճախանքում վկայագրությունն էր չխենթանալչկորսվելու թերևս միակ պատճեցը: Այս իրողության դասական օրինակն ունենք՝ Կոմիտասի երևույթով, ունենք նաև սեփական փրկագործության ստեղծաբանական անհնարինության ողբերգությունն ու չընդհատվող (անընդհատական) սուգը Հակոբ Օշականի երևույթով:

Օտյանական հուշագրությունը միշտ անվերապահ արժեորման և գնահատանքի է արժանացել թե՛ նրա ժառանգությամբ խանդակառ մեծամասնության, թե՛ հատուկենտ վերապահների կողմից<sup>1</sup>: Անշուշտ, այս պարագային գորավոր

1 Խանդակառ մեծամասնության խնդիրը մեկնաբանելու կամ այդ մեծամասնությունից որևէ մեկին հիշատակելու կարիքը, կարծում եմ, հասկանալի պատճառմերով չկայ: Առանց չափազանցության բոլոր հրանք, ովքեր գեր մեկ տող են նվիրել Օտյանի 1890-1920-ականների գրական կյանքին, հիացական գնահատականների են արժանացրել հրանքագրությունը: Հատուկենտ վերա-

է վավերական վկայագրության հրամայականը, սակայն ուշագրավ է, որ վավերական վկայագրության տիրույթներում արձանագրվում է գրողական տաղանդի հրամայականը նաև: Այս՝ առաջին հայացքից «Հրամայական հուշագրությունը», կարծում եմ, միանգամայն իրավացի է, քանի որ Օտյանի հուշագրությունը (առհասարակ օտյանական հուշագրության ֆենոմենը) վավերագրություն-վկայագրության միջավայրում հանդես է բերում գեղարվեստական, վիպագրական տարերքի և արտահայտության անկասելի արձանագրություններ: Այս երկույթի բնութագրական օրինակները գտնում ենք «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրության մեջ:

«Երշվածության» երևույթը բացարձակապես բացակայում է «Անիծյալ տարիներ»-ում, որ հատակ առաջադրված է ապագեղարվեստականացնելու, ապավիպագրելու բնագրաստեղծ մարտավարությունը:

*Մեկնելով Օտյանի ստեղծագործական կյանքի խորապատկերից՝ անգամ առաջին հայացքից նկատելի է հետեւյալ օրինաչափությունը: Գրողն իր ստեղծագործական մեծ հեղումները (մասնավորապես վիպահեղման փուլերը<sup>2</sup>) գերազանցապես սկսել կամ զուգահեռել է հուշագրությամբ: Այսպես, եթե օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո Պոլսիս վերագառնալով՝ նա զուգահեռել է «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրությունն, օրինակ, «Ապայուլ Համիտ և Շերլոք Հոլմս», «Սալիհա հանըմ կամ բանակը բռնավորին դեմ», «Ես դրսեցի չեմ առներ» ծավալուն թերթոնների ստեղծման հետ, ապա 1918-ի նոյեմբերին դանտեական դժոխքի պարունակներն անցնելուց հետո կրկին Պոլսիս դառնալով՝ Օտյանը, մինչև մեծ վեպերին ձեռնամուխ լինելը, գրում է «Անիծյալ տարիներ»-ը: Սա անշուշտ վկայություն-վկայագրությամբ փրկագործվելու և փրկագործելու առաջնահերթությունն էր՝ պայմանագորված և գոյաբանական և թե՛ ստեղծաբանական ստորոգություններով, սա անշուշտ նաև որոշակի հաշվենիմակ էր, առանց որի իրականացման գրողի համար անկարելի էր անցումը գրականության: Սա ի՛ր և եղեռնը վերապրած սերնդի գոյութենական ողբերգության պատմությունն էր:*

Հետևաբար կարելի է եղրակացնել, որ օտյանական հուշագրությունը ստեղծագործելու անկարելի հաշվենիմակ էր շրջանցելու, դա հաղթահարելու մտանություն և կենսաձև է:

\* \* \*

*Երվանդ Օտյանի հուշագրությունը վաղուց անտի գրականագիտության խնդրական իրողություններից է: Բացառյալ «Անիծյալ տարիներ»-ի, գրողի հուշերի մասին ստեղծվել է պատկառելի գրականություն: Օտյանագիտությունը պահեցրի պիտի հիշատակեն Հակոբ Օշականին, որ գրականության պատմության մեջ «Երևանածող» ժամանցավին (թերթոնային) վիպագրության «խոտանումի մտավության» հաստատագրողն ու բյուրենացնողն էր:*

2 Վիպահեղման փուլերի մանրամասն ակնարկը, ընդհանրապես օտյանական վեպերի և հուշագրության միջգրային հարաբերակցության և առնչակցությունների քննությունը տե՛ս տողերին հետհնակի «Թերթոն վեպի տեսությունը. Երվանդ Օտյան» (Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 2002) մենագրության մեջ:

նը բարեխղճորեն անդրադարձել է գրողի հուշային ժառանգությանը, մանրամասն վերաներկայացրել, կարելի մեկնաբանություններ արել: «Արյունոտ հիշատակներ» (գրել է 1898-ին), «Տասներկու տարի Պուսեն գուլս (1896-1908)» (առաջին անգամ տպագրվել է 1912-1913-ին Պոլսի «Ժամանակ» օրաթերթում), «Գրական հիշատակներ» (առաջին անգամ լույս է տեսել «Ոստան»-ում 1920-ին), «Վերհիշումներ» (1924 թ.), «Տասնվեց տարի ետքը» (1925 թ.) հուշագրությունների՝ օտյանագետ Անուշավան Մակարյանի աշխատասիրությամբ Հայաստանում հրատարակությունները և գրանց տպագրությունը սփյուռքում՝ որոշ հուշերի վերահրատարակություններով, ծանոթ են ընթերցող հանրությանը, մասնագետներին:

Ցավոք, առարկայական և ենթակայական պատճառներով, ընթերցող հանրությանն ու մասնագետներին տակավին գրեթե անծանոթ, եթե չասենք անհայտ է մնացել Օտյանի հուշագրության ամենահանգուցային գործը՝ «Անիծյալ տարիներ. 1914-1919 (անձնական հիշատակներ)»-ը:

Ինչո՞ւ Օտյանի հուշագրության շրջարկում այս երկը որակեցի իբրև ամենահանգուցային: Նախ՝ մատների վրա կարող ենք հաշվել այն գրողներին, որոնք հրաշքով փրկվեցին<sup>3</sup> Եղեռնից, առավել ևս մեկ ձեռքի մատների վրա կարող ենք հաշվել նրանց, ովքեր բավականաչափ կենսական և գրողական էներգիա և ուժականություն ունեցան վկայագրելու Աղետը, ինչն ուղղակիորեն կրկին գժոխքով անցնելու համարժեքն էր: Ապա՝ թե՛ իր ծավալով, թե՛ ընդգրկումով, թե՛ տարողությամբ, թե՛ վկայագրման կերպով ու եղանակով Օտյանի սույն հուշագրությունն առանձնանում է Եղեռնի ականատեսների հուշերից<sup>4</sup> և մասնավորապես գրողների՝ Աղետի մասին հուշային առանցք ունեցող տարբեր վկայագրություններից: Իրապես, որոշակի օրինաչափություն ենք տեսնում փրկված արվեստագետների Եղեռնապատումներում: Կամ նրանց վկայագրություն-հուշագրություններում գեղարվեստականացման, գրականացման զորեղ մղումը Աղետը վկայագրելու գոմինանտն է դարձել, ինչի ամենաբնորոշ օրինակներն են Միքայել Շամտանճյանի «Հայ մտքին հարկը Եղեռնին»-ը<sup>5</sup>, Արամ Անտոնյանի «Այն սկ օրերուն»-ը, կամ՝ զուտ, անխառն փաստագրությունը,

3 «Փրկվել» բառը նաև Օտյանի պարագային գործածում ներ մեծ վերապահությամբ և սուկական ինասառվ: Վերապահությամբ և սուկական ինասառվ, քանի որ Աղետի և աքտորի հետևանքը գորոդի ֆիզիկական ուժերի գերարագ սպառումն էր: Անբավեկի հոգենկան արիություն և կամք ունեցող Օտյանը ցեղասպանության հետևանքներին ֆիզիկապես դիմակալեց ութ տարուց փոքրի համար վախճանվել է 1926-ի հոկտեմբերի 3-ին: Լարդի քաղցկեղն ընդամենը Աղետի «afthershock»-ն էր, ոչ թե անընդհատ ալկոհոլ գործածելու հետևանքը: Մնացորդաց սերնդի Եղեռնից ազատված բոլոր գորոդների, արվեստագետների համար «Փրկվել» ընդգծված հարաբերական երևույթ է, քանի որ զրանց հետագա ստեղծածում Աղետից փրկագործվելու տիրապետող գերբնագիրը մշակութաբանորեն և ստեղծաբանորեն ցուցանում է Եղեռնից չազատագրվելը, չփրկվելը: Այսինքն՝ զրանց ստեղծածում Եղեռնը հղացական/թովանդակային պլանում՝ ականայտ կամ քողարկված, միշտ առկա է:

4 Պարզապես Բիշեցնեմ այսօրինակ վկայություններից մի քանիս՝ Գրիգորիս Պալարյան, «Հայ Գողգոթան», Կարապետ Գաբրիկյան, «Եղեռնապատում», Սալիք, «Մեր խաչը», Վահան Միքայել, «1915-ը»:

5 Տե՛ս նրա հիշատակված գրքովը, Հալեպ, Տպարան «Նալիրի», 1947: Չամտանճյանի «Հայ մտքին հարկը Եղեռնին»-ը յուրօրինակ տրամախոտություն-խոհագրություն է, Եղեռն-աքտորի գեղարվեստական անդրադառնությամբ ուազմավարությամբ ստեղծված:

վավերափաստաթղթագրումը, ինչի օրինակելի բյուրեղացումն է անշուշտ Արամ Անտոնյանի «Մեծ ոճիրը»:

Ի տարբերություն շատերի, որոնց վկայություններում Աղետի գեղարվեստականացման, գրական ոճավորման ելակետումը պայմանավորել է Եղեռնի վկայագրության բնագրաստեղծումը, Օտյանը «Անիծյալ տարիներ»-ում իր երեքուկես տարվա աքսորի պատմությունը արձանագրել է «...ամենապարզ կերպով և նույնիսկ գրական շատ անխնամ ոճով մը»<sup>6</sup>: Սա եղել է հեղինակի գիտակցված ընտրությունը, քանի որ միայն այդ ձևով կարելի էր փրկագործել, այսինքն՝ պահպանել Աղետի եղելությունն ու պատմությունը և ըստ այդմ փրկվել, պատմել գոյութենական ողբերգությունը, վկայել Եղեռնի և աքսորի նույնականությունը. «...Ճշմարտապատում ըլլալ, ո՞չ մեկ իրողություն խեղաթյուրել, ո՞չ մեկ գեպք չափազանցել» (531): Պատահական չէ, որ հիշատակագրության վերջաբանում նա գրում է. «Եվ սակայն իրականությունը այնքան սարսափելի էր որ շատեր կարծեցին թե չափազանցություններ կային գրածիս մեջ: Անոնք որ տարագրության տառապանքը կրեցին և կրցան ապրիլ, անոնք կրնան վկայել թե երբեք չեմ այլայլած ճշմարտությունը» (531):

Օտյանական խնդրո առարկա վկայագրությունը ազդակեց և պայմանավորեց Եղեռնի մասին վիթխարի գեղարվեստական (վիպագրական) գաշտ:

Աչա այս, իր բնույթով եզակի վկայագրությունն է, որ այսօր կարելիություն ունենք ներկայացնել ընթերցողին, անշուշտ նաև տարբեր բնագավառների, մասնավորապես Եղեռնի խնդիրներով զբաղվող մասնագետներին:

Այս փոքրիկ առաջաբան-ուսումնասիրության (նոթերի) նպատակը միայն սույն վկայագրության խնդրադիր հիմնական իրողությունները փոքր-ինչ մանրամասնելն է, «Անիծյալ տարիներ»-ի բանասիրական շերտերի համառոտ քննությունը:

\* \* \*

Արդ, «Անիծյալ տարիներ» հուշագրության ստեղծման ազդակների, խթանիչների և հանդամանքների, ինչպես նաև գրման պատմության և երկի քննադատական-մեկնաբանական անդրադարձների մասին:

Աքսորից Պոլիս հասնելուն պես Օտյանն անմիջապես գնում է «Ժամանակ» օրաթերթի խմբագրություն: Ի՞նչ կնշանակի այս երեսույթը: Որ գրչեղբայրներին ու գործընկերներին տեսնելու, իր իսկ բառով՝ զահանդեցնող Աղետից Աստծո, ճակատագրի կամոք փրկված խլյակի հասկանալի առաջին մղումն էր՝ հնարավորինս արագ տեսնելու իր «Համբարության» փրկված մյուս խլյակներին և տեղեկանալու հավերժորեն մեկնածների մասին, ինքնին հասկանալի է և բնական: Սակայն սա աքսորյալ Օտյանի վերադարձից հետո առաջնահերթությունների սոսկական արտահայտություններից է, արտաքին հակադարձումը: Կարծում եմ՝ կա մեկ կարևոր հանդամանք: Անմիջապես խմբագրատուն մեկնելը Ե-

6 Երվանդ Օտյան, «Անիծյալ տարիներ. 1914-1919 (անձնական հիշատակներ)», Երևան, «Նախրի», 2004, էջ 531: Հետպատ հուշագրությունից բոլոր մեջքերումները սույն հրատարակությունից են՝ փակագծերի մեջ նշելով համապատասխան էջը:

ղեռնի աղետավոր դադարի պատճառով ստեղծագործական ավարտը հետաձգումի փոխաձևելն էր: Կորուսյալի վերագտնումը՝ ստեղծաբանական իմաստով: Ինքը վերջաբանում նշում է, թե երեսուն տարվա գրական-խմբագրական աշխատանքի արդյունքը երեքուկես տարվա աքսորով փոխատուցվեց: Այսինքն՝ աներևակայելի պայմաններում անդամ թերթ ու հանդես ստեղծած, գրականություն վկայագրած անհատը (ինչի բազմաթիվ օրինակները գտնում ենք «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրության տիրույթներում) հայտնվում է աղետավոր գաղարի պարունակներում, ինչը միայն և միայն գուժում է ստեղծաբանական ավարտ և լոկ բնագդային մղումով՝ կյանքի փիզիկական ինքնապահանում, այն, ինչ Գրիգոր Պըլտյանն իր «Անիծյալ տարիներ»-ին նվիրված գրության մեջ դիպուկ անվանում է «բուսական կյանք»: Բնականաբար այդ դադար-ավարտի պարունակներից ազատագրվելու միակ, եթե կուգեք, «նախնական/ծիսական» արարքը պետք է գառնար անմիջապես խմբագրությունում հայտնվելը, կարծես թե կիսատ մնացած թերթոնն ու օրվա քրոնիկը շարունակելը, ինչը բնորոշեցի իբրև ավարտի փոխաձևություն հետաձգումի: Իսկ հետաձգումից մինչև շարունակություն պետք է միջակային ներկայության հռչակագրով: Նկատի ունեմ Օտյանի համբավագոր «Ողջույն ձեզ»-ը: Եղեռնը անցածների, գոյութենական ողբերգության շրջանակում վերապրողների յուրօրինակ ուղերձախոսական պատգամը<sup>7</sup>: Եթե կուգեք՝ աքսորից հետո այս ուղերձախոսականը եղավ Օտյանի ստեղծաբանական և գոյաբանական կենսագործունեության հռչակագիրը. «Ողջո՞ւն քեզ Հայ ժողովուրդ, – մեռա՛, Ողջովն ձեզ Հայության մնացողիներ, – հեռվեն, շա՞ն հեռուներեն կու գամ:

Տեր-Զորեն կու գամ՝ որուն կամուրշեն երեք հարյուր հազար հայեր անցան և որոնցմենայսօր միմիան հազար հինգ հարյուր կիմեր ու որբ տղաք ողջ մնացին:

Կու գամ Օսմանիեն, որին տեղատարափ անձրևով մը վաթսուն հազար խարազանի հարվածներու տակ քշվեցան լեռն լեռ:

Կու գամ Բուզանդիեն դեպի Թարսոս տանող աղետալի ճամբայեն, ուր նորածին հայ մալակիկները եղևանիներու ներքն իրենց մայրենեն լրված, մեր աշքերուն առջև բորենիներուն շունչերու կեր կ'ըլլալին:

Կու գամ Հավելանի դեպի Տեր-Զոր երկարող այն անիծյալ անապատներեն, ուր տասնակ հազարներով հայեր, երեք տարի վրաններու տակ, կոտորվեցան տենդեն, թիֆուսն ու թանջրեն:

Կու գամ Մեախիլի վրաններեն, ուր անոթի ծնողքներ իրենց զավակները աճուրդի համեցին և ուր տասը տարեկան աղջիկներ վաթսուն փարայի վաճառվեցան:

Կու գամ Սուլիհայեն, ուր հարյուր հազարէ ավելի հայեր, բնաշինչ ըլլալու սպառնալիքն տակ, իրենց Աստվածը ուրացան:

Կու գամ Համայեն ու Հոմսեն, Մեսքենեն, Համմամեն, Միհատինեն, Էլ Պուսերայեն, Սուլյամինեն ու Գոնիայեն, ուր երեսուն քառասուն հազար հայ որբուկներ մայրի՛կ մայրի՛կ կը ճռվան թուրք բնակարաններու խաֆեսներուն ետևեն:

7 Հարկ է նշել, որ մեր Աղետի գրականության մեջ, եղեռնագրության բոլոր վկայություններում, գեղարվեստական թե վավերագրական, ուղերձային հատակ գործառնությամբ մուտքեր և առաջարկաներ ունենք, ինչի ավանդույթը Զապել Եսայանի «Ավերակներու մեջ»-ով է սկսվում: Տե՛ս նշված գործի «Յառաջաբան»-ը, Զ. Եսայան, Երևան, Ա. հատոր, Անթիլիս, 1987 թ., էջ 23-25: Տե՛ս նաև Գրիգորիս Շ. Վարդ. Պալարյան, «Հայ Գողգոթան. դրվագներ հայ մարտիրոսագրության» (Երևան, «Հայաստան», 1991) «Քեզի հայ ժողովուրդ» ներածական մասը (հատկապես՝ էջ 3-4):

Կու գամ եղեռնի այն դժոխային վայրերեն, որ Զոհրապներ, Ակնութիներ, Խաժակներ, Զարդարյաններ, Վարուժաններ, Քելեկյաններ, Սևակներ, Տաղավարյաններ – վերջապես ամբողջ ազգի մը ուղեղը ջարդ ու փշուր եղավ Շենկից խաներու և Լենկ Թիմուրներու արժանավոր հաջորդներուն ձեռքով:

Ողջո՞ւն ձեզ, Հայության խլակներ»:

Այս տասը պարբերությունից բաղկացած ուղերձը, կրկնեմ, «Անիծյալ տարիներ»-ի մուտք-ազդարությունն է, հստակ ծանուցումը: Ընթերցողը խնդրու առարկա հուշագրությունը կարգալիս անմիջապես կնկատի, որ ըստ էության այս «Ողջույնը» «Անիծյալ տարիներ»-ի համառոտ անոտացիան է:

Հավելեմ, որ բոլորովին պատահական չէ, որ «Ողջույն ձեզ»-ը արտատպվեց պոլսական (և ոչ միայն) բոլոր պարբերականներում, Եղեռնին նվիրված հուշամատյաններում, տարեգրքերում<sup>8</sup>:

Եվ այսպես, Պոլիս վերադառնալուն պես Օտյանն անմիջապես գնում է «Ժամանակ»-ի խմբագրություն: Նրա կյանքում պետք է սկսվեր վիպահեղումի երկրորդ արգասավոր շրջանը<sup>9</sup>, Աղետը պետք է հաղթահարվեր նոր թերթոն վեպերով, քրոնիկոններով, ակնարկներով: Սակայն կրկին գրականություն մուտք գործելու թերևս անհրաժեշտ նախապայմանն էր այդ նույն Աղետից փրկագործվելու, ստեղծաբանական միջավայրում կրկին հայտնվելու հրամայականը: Փրկագործություն, ինչն արտահայտվեց Եղեռնի անձնական հիշատակներով, հիշատակագրությամբ՝ «Անիծյալ տարիներ»-ի ստեղծումով:

Երվանդ Օտյանն անցնելով Աղետի և աքսորի գանտեսական պարունակները՝ 1918-ի նոյեմբերյան մի ցուրտ օր Պոլիս է վերադառնում և, կրկնեմ, անմիջապես «Ժամանակ»-ի խմբագրություն գնում: Մնացորդաց սերնդի այս անխոնջ մշակը, գրչի վիրտուոզն ընդամենը երկու ամսից մի փոքր ավելի ժամանակ հետո նշված օրաթերթում տպագրում է իր հուշագրությունը:

«Անիծյալ տարիներ»-ը «Ժամանակ»-ում լույս է տեսնում 1919 թվականի փետրվարի 6-ից (հին տոմարով՝ հունվարի 27-ից) մինչև սեպտեմբերի 25-ը (հին տոմարով՝ սեպտեմբերի 12-ը): Ասել է թե՝ Օտյանը Եղեռնի Գողգոթան անցնելուց անմիջապես հետո ձեռնամուի է եղել «Անիծյալ տարիներ»-ի ստեղծմանը: 1919-ի հունվարի 23-ին Արշակ Զոպանյանին հասցեագրած նամակում Օտյանը հայտնում է հուշագրության ստեղծման մասին.

8 «Օանթ» համեստում օրինակ «Վերապրողները» շարքի առաջին հոդվածներից մեկում «Վերապրոյ մը» ստորագրած Բեղինակը, անդրադանալով Օտյանին, գրում է. «Այսօր փողոցը տեսազնները, իր հավիտենական ժախտը՝ դեմքին վես: Բաց այդ ժախտը քրողակված էր տխրությունով մը, որ մտածել կուտաք: Քիչ մը կրոացած էին ուսերը, ճակատը կնճնուտած էր ու ճայվածքը տառապանքեն պետքած: Սակայն իր գոելու կորովը և մտքի թափանցկությունը սպառած չէին բնաւ ինչպես մեր տաղանավոր բարեկամը հաստատեց, իր առաջին գովածքին մեջ իսկ: «Ողջուն Ձեզը» հրատարակված «Ժամանակի» մեջ, քամի մը տողերով կ'արտահայտէ Օտյանի հոգեբանությունը»: Ապա հոդվածագիրը իր հոդվածագրությունը է «Ողջունի» ամբողջական բնագրի մեջբերմամբ: Տե՛ս «Օանթ», Կ. Պոլիս, 1918, № 3, Էջ 35: Թեղողիկի հոչակավոր «Հուշարձան նահատակ մտավորականության» հուշամատյանը բացվում է Օտյանի «Ողջունով»: Տե՛ս Աշվածի երևանյան նմանամիան հրատարակությունը (1990 թ.), Էջ 16:

9 Այս մասին տե՛ս տողերին Բեղինակի «Թերթոն վեպի տեսությունը. Երվանդ Օտյան» մեմագրության մեջ, Էջ 19-22:

## «Սիրելի Արշակ»

Ողջ եմ, երեքուկես տարվան ահռելի, աներևակայելի ոդիսականե մը ետքը։ Մինչև Տեր-Զոր, ավելի վար, Միջագետքի անապատը, էլ Պուսերա քշվեցա, Եփրատի ու Քոբարի մեջտեղը. Հո՛ն, ուր Եզեկիել իր տեսիլքները ունեցավ։ Զեմ գիտեր, թե պիտի կրնա՞մ պետք եղածին պես պատմել տեսածներս, բայց պիտի փորձեմ։ Ընդարձակ աշխատություն (ընդգծումն իմն է՝ Գր. Հ.) մը պիտի ըլլա ասիկա, թերևս մեկ քանի հատոր։ Հուսամ, որ գուն աղեկ ու հանգիստ ես. Հոս գրական հրապարակին վրա ամայությունն է, որ կը տիրե կամ ավելի գեշ բան մը, մեռելություն։ Գերեզմանապահի զգայնություն ունիմ»<sup>10</sup> (ընդգծումն իմն է՝ Գր. Հ.): Զուանյանին դրած նամակի խնդրո առարկա հատվածը հուշարկում է, որ Օտյանը «Ժամանակ»-ում «Անիծյալ տարիները» հրատարակել է գրելուն հընթացս, այսինքն՝ ինչ-ինչ մասեր գրել է հուշագրության տպագրության ընթացքում։ Հար և նման իր թերթոն վեպերի ջախջախիչ մեծամասնության ստեղծմանը։ Ինչևէ, սա էր օտյանական ստեղծման բնույթն ու տարերքը (մասնավորապես ժամանցային (թերթօն) վեպերի)։

Տվյալ պարագային հղումից ցանկանում եմ առանձնացնել «Ընդարձակ աշխատություն մը պիտի ըլլա ասիկա, թերևս մեկ քանի հատոր» ուշագրավ նախադասությունը։ Արդյոք ինչ նկատի ունի հեղինակը։ «Անիծյալ տարիներ»-ի ընդարձակ ծավա՞լը, թե՞ բազմահատոր ծրագրի պարագան։ Ցավ ի սիրտ, կարող ենք միայն վարկած(ներ) առաջադրել։ Դեռ կանդրադառնամ «Անիծյալ տարիներ»-ի միջգրային տարբերակներին, «մայր հուշագրությունից» արտածված այսպես կոչված բնագրային նոր «գոյացումներին»։ Այսինքն՝ այն հուշակնարկներին, որ Օտյանը գրել ու տպագրել է «Անիծյալ տարիներ»-ից առաջ և հետո, որոնք սակայն հուշագրության համագրի մասն են կազմում։

Մեկնելով բազմահատորի մասին ակնարկից և «Անիծյալ տարիներ»-ի ածանցյալ, առանձին գրված (ստեղծված) հատվածներից՝ կարո՞ղ ենք արդեօք մտորել նույն այդ բազմահատոր ծրագրի չիրականացման մասին, թե՞ հուշագրության ծավալն արդեն Օտյանի հիշատակագրական-վկայագրական գիտակցության մեջ լրումի էր հասցել բազմահատորի ստորոգելին և կամ բազմահատոր հիշատակագրության իրականացման անհնարինությունը։ Կարծում եմ այսօրինակ վարկած(ներ)ն ու հարցումները այդպես էլ անպատասխան և առկալ կմնան։ Հատկապես եթե նկատի ունենանք հուշագրությամբ «գերեզմանապահի զգայնության» հրամայականը։

«Ժամանակ» օրաթերթը, 1919-ի փետրվարի 6-ին ձեռնամուխ լինելով «Անիծյալ տարիներ»-ի թերթոնային հրատարակությանը, խմբագրության կողմից ծանուցում է. «Այս թերթոնին արտատպումի, գրքի ձևով հրատարակելու և կամ թարգմանելու իրավունքը վաճառված է փորագրիչ պ. Գ. Նազարեթյանի»<sup>11</sup>։ Այս ծանուցումը խմբագրությունը տպագրում է ներառյալ 6-րդ թերթո-

10 Տե՛ս Երվանդ Օտյան, Նամակներ, Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 1999, էջ 244։

11 Տե՛ս «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919 թ., փետրվար 6, Երվանդ Օտյան, «Անիծյալ տարիներ. 1914-1919 (անձնական հիշատակներ)», թերթոն թիվ 1։

նը, որից հետո այն դադարեցնում է: Հստ Գրիգոր Պըլտյանի՝ Օտյանը եղել է Նազարեթյանի սանահայրը<sup>12</sup>: Թե ինչո՞ւ է խմբագրությունը 6-րդ թերթոնից հետո դադարեցրել ազգ-ծանուցման տպագրությունը, արդյոք հուշագրությունը հետագայում կամ պարբերականներում և կամ առանձին գրքով տպագրվել է՝ ստույգ տեղեկություն չունենք: «Անիծյալ տարիներ»-ի հրատարակության հետ կապված իրողությունն ավելի խճճել է Հակոբ Սիրունին, որ Բուխարեստում հեղինակի հետ կազմել է նրա լույս տեսած գործերի մատենագիտությունը, որտեղ նշվել է, թե «Անիծյալ տարիներ»-ը տպագրվել է առանձին հատորով<sup>13</sup>: Հակոբած եմ կարծելու, որ հուշագրության գրքային հրատարակության պարագան չփոթության արդյունք է, քանի որ ոչ միայն Հայաստան, այլև ի սիյուռս գրադարաններում և մատենադարաններում փնտրտուքները որևէ դրական արդյունք չտվեցին:

«Անիծյալ տարիներ»-ի անդրադարձումների ջախջախիչ մեծամասնության մեջ հանդիպում ենք մի շարք թյուրիմացությունների, սիալների, և որ առավել կարեսը է՝ օտյանական «կորսված» հուշագրության այսպես կոչված «վերականգնողական» ջանքերի, որոնք գերազանցապես խարսխված են «Անիծյալ տարիներ»-ից արտածված հավելում-հուշակնարկներին, որոնք գրվել և լույս են տեսել խնդրո առարկա հիշատակներից չուտ կամ ուշ, մեծավ մասամբ թեոդիկի տարեցույցներում: «Վերականգնողական» մյուս շերտն էլ խարսխված է «Անիծյալ տարիներ»-ի կողմնակի վկայությունների հենքին:

Այն հանգամանքը, որ «Ժամանակ»-ի 1919-ի հավաքածուն առարկայական պատճառներով հիմնականում մատչելի չի եղել հետագոտողներին, պայմանավորել է հուշագրության տեսական-վերլուծական անդրադարձները: Սակայն ցանկանում եմ, մինչ այդ անդրադարձումների ակնարկը, կրկին ճեպով նկատել, որ Օտյանը «Անիծյալ տարիներ»-ից հետո կարծես թե ազատագրվեց ստեղծաբանական դադարի կաշկանդումներից, կրկին խուժեց թերթոն վեպի տիրույթներ: Արդեն 1919-ի նոյեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա հոկտեմբերի 2-ը Պոլսի «Վերջին լուր» օրաթերթում տպագրեց «Թիվ 17 խափիեն», ապա երկօրյա դադարից հետո նույն օրաթերթում սկսեց լույս ընծայել «Կանաչ հովանոցով կինը կամ նոր խաչագողներ»-ը (1920-ի հոկտեմբերի 4-ից մինչև 1921-ի հոկտեմբերի 22-ը):

\* \* \*

**«Ժամանակ» օրաթերթի 1919-ի ամբողջական հավաքածուի առարկայական անմատչելիությունը<sup>14</sup> ուղղակիորեն պայմանավորել է «Անիծյալ տարիներ»-ի**

12 Տե՛ս Գրիգոր Պըլտյան, «Ոդիսական կամ Ղազար», Յառաջ. Միտք և արվեստ, Փարիզ 2004 թ., ապրիլ 4, թիվ 302, Էջ 1: Գրիգոր Պըլտյանի այս ուսումնակիրության ծավալուն տարբերակը լուս է տեսնելու «Գրականագիտական հանդես»-ի 2004 թվականի երկրորդ համարում:

13 Տե՛ս Հակոբ Սիրունի, «Գիծեր Երվանդ Օտյանի կյանքեն», Հայրենիք, Բոստոն, 1927, թիվ 8, Էջ 49-50:

14 Որքան էլ պարադոքսալ և առնվազն տարօրինակ է, XX դարի տպագիր շատ արժեքներ նույնական արժանացնել են մեր մին ու միշնասդարյան ձեռագրերի պատմական հակատագրին: Այստիվան ֆրագմենտի ֆենոմենը մեր մշակութաբանական տարածքում պատմական առարկայական և բա-

Քննական-հետազոտական ճակատագիրը ողջ XX դարի ընթացքում:

Օտյանի ցեղասպանության շրջանի դանտեականը, աքսորի իրական ընթացքը հաճախ ընդելուզվել է աքսորի առասպելով, իսկ երբեմն՝ առասպելի գերակայությամբ: «Անիծյալ տարիներ»-ի «Կորստի», «Կորսված լինելու» ստորոգելին տեսական-քննադատական, հուշագրական բազմաթիվ անդրադարձումներում թելադրական են դարձրել Աղետի օտյանական վկայագրություն-հիշատակագրության՝ անվանենք՝ «վերականգնողական միջոցառումները»: «Վերականգնումի» հրամայականն ուղղակիորեն իր կնիքն է դրել գրողի աղետագրության մեկնաբանությունների վրա: Այս խորքին որոշակի ուղղորդող և սատարող/լրացնող գործառություններով են հետազոտվել նաև Օտյանի հիշատակագրության տարացրված այն վկայությունները, որոնք «Անիծյալ տարիներ»-ի ածանցյալներն են, գրվել են խորքո առարկա հուչերից առաջ կամ հետո, իբրև ներփակ մասնավորեցումներ:

Աչա և անիծյալ ժամանակների հիշատակագրության «կորսվածության» իրողությունը գրականագետների (մեծավ մասսամբ) և գրականագիտության (ըստ Էռլիթյան) համար լայն առողմով խնդրական է դարձրել մեկ բան՝ հնարավորության սահմաններում վերականգնել Եղեռնի շրջանի Օտյանի կյանքը գրողի մյուս բնագրերի օգնությամբ, այսպես կոչված կողմնակի աղբյուրներով վերստեղծել ցեղասպանության անիծյալ տարիները: Այսպես են վարվել գրեթե բոլոր օտյանագետները՝ Անուշավան Մակարյանից սկսած: Նրանք, որպես կանոն, «Անիծյալ տարիներ»-ի բնագիրը ձեռքի տակ չունենալու պատճառով զբաղվել են նշանակագրության միջոցառումներով»:

«Վերականգնողական միջոցառումների» հիմնական աղբյուրներն են եղել ետաքսորյան շրջանի Օտյանի տարացրված ներփակ հուշակնարկները՝ գերազանցապես տպագրված պոլսական մամուլում, ինչպես նշել եմ արդեն՝ հատկապես թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ներում, «Ժամանակ», «Շանթ» պարբերականներում<sup>15</sup>: Այստեղ համառոտակի նկատեմ, որ «Արամ Անտոնյան» և «Սահակ Մեսրոպ» հուշակնարկները կարծես թե «Անիծյալ տարիներ»-ի շրջարկը նախապատրաստող-ծրագրային տարբերակները լինեն, որոնք ծավալուն հիշատակագրության մեջ ընդարձակվել են, դարձել վկայագրության պատումային հոսքերից:

Անպայմանորեն պիտի առանձնացնենք թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ներում և «Շանթ»-ի էջերում լույս տեսած ոչ միայն Օտյանի գրությունները, այլ նաև գրողի աքսորի մասին մյուս արձագանքները, Արամ Անտոնյանի, ուրիշ վերապրածների դրվագային վկայությունները, որոնք հանգուցային դերա-

զում ենթակալական պատճառներով օրախնդիր է նաև ազժմ: «Ժամանակ»-ի 1919-ի ամբողջական (գրում եմ՝ ամբողջական, վերապահությամբ, քանի որ սովոր հավաքածուում պակասում է մեկ թիւ) հավաքածուն, որքան մեզ հապնդի է մեկ օրինակով այսօր կա միայն Վիեննայի Միհիթարյանների միհաքանության մատենադարանում: Ընորիկ այս օրինակի այսօր հնարավորություն ունենք իդականացնելու Օտյանի «Անիծյալ տարիներ»-ի հատորավիճ հրատարակությունը:

15 Պարզապես թվարկեմ տարացրված աղբյուրներից մի քանիսը՝ «Արշալուկին մայրը» (Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1916-1920, Ժ-ԺԴ տարի, Կ. Պոլիս, Տպագրություն Կ. Քեշիշյան որդի, 1920, էջ 65-67), «Վերապրողները». Ս. Արամ Անտոնյան», Շանթ, Կ. Պոլիս 1918, № 5, էջ 54-55, «Վերապրողները. Բ. Սահակ Մեսրոպ», Առվե տեղում, № 7, էջ 83:

կատարություն են ունեցել «վերականգնումի» գործում: Հիմնականում այսպես է սկզբանավորվել աքսորի իրական փաստագրությանը զուգահեռ աքսորի առասպելը, ինչը հավելվել է ցեղասպանության ժամանակային հեռացումին զուգընթաց:

«Անիծյալ տարիներ»-ի՝ ինչպես թերթոնային տպագրությանն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում, այնպես էլ ավելի ուշ շրջանում զարմանալիորեն քիչ և ժլատ են եղել հիշատակագրության անդրադարձները, եթե չենք հաշվում հավուր պատշաճի հպանցիկ/կարճառոտ գնահատական-արձագանքները: Այս առումով խիստ հետաքրքրական-տարակուսելի է Հակոբ Օշականի կեցվածքը: Հանրահայտ է օշականյան հերքող վերաբերմունքը մեր վիպագրության թերթոն արտահայտությունների, ժամանցային վիպագրության, այսպես կոչված «թեթև» գրականության հանդեպ: Թերթոն վեպի տեսությանը և, այս խորքին, Օտյանի վիպագրությանը նվիրված ուսումնասիրության մեջ ամենայն մանրամասնությամբ խնդրին արդեն անդրադարձել, կարելի մեկնաբանություններ արել եմ ըստ Օշականի՝ Օտյանի «չար աստղին տակը... թերթոնին»<sup>16</sup> ծնված լինելու մասին: Տվյալ պարագային օշականյան կեցվածքը բնութագրեցի իբրև հետաքրքրական-տարակուսելի՝ մեկնելով նրա՝ Օտյանի հուշագրություններին տրված գնահատականներից ու դատումներից: Այսպես, Օշականը հուշագիր Օտյանին անդրադառնալիս իբրև ելակետային հրամայական բանաձևում է. «Օտյանի տաղանդին երկրորդ արդար փառքը զինք կը գտնե հուշերու կալվածեն»<sup>17</sup>: Հետո այս հրամայականը տեղայնացնում է «Տասներկու տարի Պոլսեն դուրս»-ի տիրույթներում, ընդ որում լուրջ վերապահումներով (մասնավորապես Օտյանի՝ եղբոր մոտ՝ Հնդկաստան ճանապարհորդելուց հետո կրկին Եգիպտոսում հանգրվանելու դրվագներից մինչև Պոլիս վերադառնալու և եղբափակիչ հատվածները): Իսկ «Անիծյալ տարիներ»-ի առիթով բավականանում հստակ խուսափողական արագ ճեպով: Հետաքրքրական-տարակուսելին հենց օշականյան «խուսափումն» է խնդրո առարկա գործի մասին ծավալուն խոսք ասելուց՝ «Չունիմ տեղ ու միջոց հատորը վերլուծելու»<sup>18</sup>: Մանավանդ եթե նկատի ունենանք նրա ծայրագնա սկզբունքային վերաբերմունքը Աղետի վկայագրությունների առիթով: Խնդիրն իրապես ո՛չ այնքան առնվազն տարակուսելի և անընդունելի հետեւյալ դատաստանն է, թե «Օտյան ողբերգականին զգայնությունը չուներ», կամ՝ «Օտյանը չէր կրնար ըմբռնել աղետին ընդարձակությունը ու կը շարունակեր չհասկնալ, թե ի՞նչ է երբեմն մարդոց կուրծքին տակ բարախող բանին անունը»<sup>19</sup> և ոչ էլ վերապրողների ետեղեռնյան առաջին շրջանի տարբեր տեսակի վկայագրությունները «խոտանող» դաշտում զետեղելը, միայն Արամ Անտոնյանի «Այն սև օրերուն» գրքույկի առանձնացումը մյուսների «աժան» (Օշականի բառն է) գրականությունից. «Անտոնյան, ուրիշ Օտյան մը, իր անունը ընդմիշտ ազատագրող գլուխ-գործոց մը՝

16 Տե՛ս Հակոբ Օշական, Համապատկեր արևմտահայ գրականության, հատոր VIII, Անթիլիաս 1980, էջ 415:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, էջ 429:

19 Նույն տեղում, էջ 429, 430:

«Այն սև օրերուն»<sup>20</sup>: Հետաքրքրական-տարակուսելին, իրավամբ, օտյանական հուշագրությունից քառորդ դար հետո Օշականի բացահայտ խուսափումն է «Անիծյալ տարիներ»-ի մասին դատավճռից անդին գոնե «մեղադրականը» փաստարկելու, նամանավանդ երբ նկատի ենք ունենում խնդրո առարկա հիշատակագրություն-վկայագրության ընդգծված ողբերգական համապարուրվածությունը շրջարկը կազմակերպող բոլոր շերտերում:

Այնուհանդերձ օշականյան «խուսափումը» առնվազն տարօրինակ է: «Անիծյալ տարիներ»-ի առիթով Օտյանին Աղետը չըմբռնելու օշականյան դատավճռի պարագային միանգամայն իրավացի և տեղին է հնչում Գրիգոր Պլատյանի ամփոփումը. «Շատ բարի, կարելի է ըսել քննադատին, որ իր մենագրությունը (նկատի ունի «Համապատկեր»-ի համապատասխան հատվածը՝ Գր. Հ.) կը գրե աղետեն 25 տարի ետքը և անշուշտ զայն հասկնալու ժամանակը ունի...»<sup>21</sup>:

\* \* \*

Արդ, «կորսված» հիշատակագրության «վերականգնողական» միջոցառումների և հարակից խնդիրների շուրջ:

Ինչպես արդեն նկատեցի, զանազան առարկայական և ենթակայական պատճառներով Երվանդ Օտյանի «Անիծյալ տարիներ»-ը անմատչելի, հետևաբար նաև անձանոթ է մնացել օտյանագետների գերակշռող մեծամասնության համար: Որն էլ հասկանալի պատճառներով խթանել է այն իրողությանը, ինչը իրերե «կորսված» բնագրի «վերականգնողական միջոցառումներ» և ջանքեր բնութագրեցի: Եղեռնի և աքսորի հիշատակագրության չակերտավոր կորուստը խթանել է վերստեղծելու Օտյանի դանտեականը, վերականգնելու գրողի աքսորի «անհայտ» համապատկերը՝ մկայալ ամբողջական կենսագրությունից, ավարտած գրողի կյանքի և գործի ամենատարբեր խնդիրների լուսաբանության անհրաժեշտությամբ:

Ինչպես պետք է վարվեր այս պարագային օտյանագիտությունը: Ամենակարճ և արդյունավոր ճանապարհն անշուշտ Երվանդ Օտյանի այն հիշատակագրություններն ու անդրադարձներն էին, որոնք բնութագրեցի որպես «Անիծյալ տարիներ»-ից անջատված և տարացրված բնագրեր (Աղետի և աքսորի՝ խնդրո առարկա հուշերից առաջ և հետո գրված փոքրիկ հուշակնարկներ, որոնք «Անիծյալ տարիներ»-ի ածանյյալներ են): Սրանք դույզն-ինչ հնարավորություն էին ընձեռում վերականգնելու գրողի Գողգոթայի շրջանակը՝ աքսորի երթուղուց մինչև նույն այդ աքսորի տարբեր մանրամասներ, գեպքեր ու դեմքեր, տեղահանության ընթացքի զանազան մանրամասներ և այլն: Օտյանի աքսորի ականատեսների, որպես կանոն, փոքրիկ անդրադարձները, կամ գրողի կողմից հաղորդած ինչ-ինչ իրողությունների վերաշարադրանքները (կրկնեմ՝

20 Նույն տեղում, Էջ 429: Հատկանշական է, որ «Համապատկեր»-ի Անտոնյանի բաժնում Օշական ամբողջ գլուխ է հատկացրել «Այն սև օրերուն», որը համարում է Եղեռնին նվիրված «...գրականորեն միակ հաջող վկայութիւն»-ը (տե՛ս «Համապատկեր արևմտահայ գրականության», հատոր IX, Անթիլիաս 1980, Էջ 255): Հիրավի գրքությունը կան պարզապես հրաշալի էշեր և հատվածներ, ինչպես «Մայրերը», «Զո՞ր... չո՞ր» պատկերներում:

21 Տե՛ս «Ողիսև և Ղազար», Յառաջ. Միտք և արվեստ, Փարիզ 2004, թիվ 302, Էջ 1:

թեռղիկի «Ամենուն տարեցույց»-ներում, ետաքսորյան առաջին շրջանի պարբերականներում երբեմն-երբեմն հրապարակվող) նույնպես լրացուցիչ հնարավորություն էին ընձեռում վերականգնել գրողի աքսորի պատմությունը:

Ահա և օտյանագիտությունը գերազանցապես այսպես էր փորձում իրականացնել մատնանշված «վերականգնողական» միջոցառումները (ինչի ականատեսն ենք Օտյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված, օրինակ, Մակարյանի, Մանուկյանի մենագրություններում): Բնականաբար, այս պարագային աքսորի իրական պատմությունը հաճախակի ագուցվում էր երվանդ Օտյանի աքսորի առասպելին: Իսկ աքսորն առասպելանում էր տակավին գրողի վերադարձի օրերին: Այս իրողությունը ակնարկված է Օտյանի աքսորից վերադառնալուց հետո առաջին հարցազրույցներում և կամ գրողին ուղղված հորդորներում՝ հանդես գալ Աղետի վկայագրություններով: Այս խորքին խիստ ուշադրավ է Ալեքսանդր Շիրվանզադեի «Երվանդ Օտյան (իմ հիշողություններից)» հուշ-դիմանկարը, ուր գրողի աքսորի իրականությունն ու առասպելն ընդելուզված են հանդես գալիս և որտեղ աքսորի առասպելի գոյավորման ազդակը ուղղակիորեն արձանագրված է. «Ինձ հայտնի էր, որ Երվանդ Օտյանն էլ մյուս հայ մտավորականների հետ ձերբակալվել էր ու աքսորվել անապատի խորքերը: Ձերբակալման մասին տարիներ անցած ինձ պատմեց նկարիչ Փանոս Թերլեմեզյանը, որ իմ ժամանակ Կ. Պոլսումն էր: Այդ գեպքում էլ արտահայտվել էր Օտյանի ինքնուրույն բարոյականի նկարագիրը: Երբ սկսվում է հալածանքը հայերի գեմ, Օտյանը թաքնվում է մի շատ ապահով տեղ: Նա մնում է այնտեղ մի ամբողջ ամիս և գարմանում է, որ ինքը չի ձերբակալվել: «Ի՞նչու, մտածում է նա, մի՞թե ես դավաճան եմ իմ ազգի և բարեկամների գեմ»: Մի օր նա դուրս է գալիս թաքստոցից և զբոսնում է Բերայում: Նույն օրն Աեթ նա ձերբակալվում է:

Իհարկե ինձ համար հետաքրքրական էր գիտենալ նաև, թե ինչպես է նա մահից ազատվել: Բայց որովհետև նա ինքը չէր խոսում այդ մասին և հետո էլ չխոսեց մինչև վերջը, ես բարվոք համարեցի չքրքրել նրա տակավին չսպիացած վերքերը»<sup>22</sup>: Ինչպես մեջերված հատվածի, այնպես էլ Շիրվանզադեի կողմից Օտյանի ստույգ մահվանից փրկվելու, աքսորից ազատվելու և գերմանացիների մոտ աշխատելու հատվածի<sup>23</sup> համեմատությունները «Անիծյալ տարիներ»-ի համապատասխան հատվածների հետ ակնդետ երեան են բերում առնվազն զգալի «անճշտություններ», անհամապատասխանություններ, կամ այն, ինչ անվանեցի իրականի և առասպելականի (լեզենդայինի) մեկտեղման ընթացք: Արդեն այն հանգամանքը որ հընթացս Օտյանի աքսորը առասպելականացվում է, լեզենդ դառնում, երևում է թերլեմեզյանի, մյուսների կողմից Օտյանի աքսորի պատմասան լինելու հանգամանքով: Տվյալ պարագային ցանկանում եմ սակայն ուշադրությունը բևեռել ըստ իս խնդրական հետևյալ նախա-

22 Տե՛ս Ալեքսանդր Շիրվանզադե, Երկերի ժողովածու տասը հատորով, հատոր ութերրորդ, Երևան, Հայպետհրատ 1961, էջ 521:

23 Ընթերցողին կրկին հղում եմ Օտյանի մասին Շիրվանզադեի այս նույն հուշ-դիմանկարին: Տե՛ս նույն տեղում, էջ 521-524:

դասության վրա. «Բայց որովհետև նա ինքը չէր խոսում այդ մասին և հետո էլ չխոսեց մինչև վերջը, ես բարձր համարեցի չքրքրել նրա տակավին չսպիացած վերքերը»: Ահա և Օտյանի «լոռությունը» և ինքնին հասկանալի «վերքերը չքրքրելու» թարուն աքսորի առասպելի, լեգենդի հիմնական ազդակն էին, աքսորի իրականության և առասպելի գիրկընդիմառն հետագա ընթացքի հիմնական պայմանավորողը:

Արուեստագետ, արտիստ ու մտավորական Օտյանը չէր կարող այդպիսին չլինել Աղետի մեջ, ցեղասպան դժոխում, – ահավասիկ առասպելի, լեգենդի կազմաբանող-կազմակերպող էությունը: Այդ էության արտահայտության ձևը, ընթացքն անշուշտ չի համապատասխանում աքսորի իրականությանը, ինչը ընթեցողը կնկատի «Անիծյալ տարիներ»-ում, սակայն տվյալ պարագային էականն այն է, որ աքսորի առասպելը, լեգենդը միարժէքորեն փոխանցում է աքսորի պարունակներում հայտնված արվեստագետ, արտիստ, մտավորական Օտյանի էությունն ու նկարագիրը: Իսկ Օտյանի «լոռությունը», կարծում եմ, ինքնին հասկանալի իրողություն է, քանի որ միշտ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ գրողի «լոռությանը» նախորդել էր «Անիծյալ տարիներ» հիշատակագրություն-վկայագրությունը, որից հետո վերարծարծումը, վերադարձը նշանակում էր նույնությամբ ապրել և վերապրել աքսորի, ցեղասպանության զահանդեցնող կենսոլորտը:

Ինչպես ասացի, օտյանագիտությունը աքսորի «վերականգնման միջոցառումների» ժամանակ միանգամայն իրավացիորեն խարսխվել է «Անիծյալ տարիներ»-ից տարացրված բնագրերին և գրողի ժամանակակից, հիմնականում Աղետի ականատես գործնկերների վկայություններին: Վերջիններիս հիմնական աղբյուրներն են Թեոդիկի տարեցույցներում, «Շանթ», «Ժամանակ» պարբերականներում լույս տեսած օտյանական բնագրերը, Թեոդիկի, Արամ Անտոնյանի, մյուս ականատեսների և ժամանակակիցների վկայությունները<sup>24</sup>:

\* \* \*

Երվանդ Օտյանի «Անիծյալ տարիներ. անձնական հիշատակներ» հուշ-վկայագրությունն ըստ էության պարագրկում է եղեռնի ողջ համածիրը: Աղետի և աքսորի բոլոր արտահայտությունները՝ նախապատրաստությունից, աներևակայելի ողբերգության կանխատեսումից, ցեղասպանության սկզբից մինչև եղեռնի դժոխքի բազմադեմ ակնարկագրությունը, աքսորի և աքսորյալների գոյության և գոյակերպի կենսոլորտը, վերապրած-վերադարձողների գոյութենական հարակա ողբերգականությունը: Անցնել դժոխքի բոլոր պարունակներով, ողջ մնալ, այնուհետև հիշատակագրությամբ կրկին վերապրել դա, հիրավի նշանակում է անել այն, ինչ անհնարին է: Վերաներկայացնել և վկայագրել

24 Թեոդիկի վկայությունների կողքին անպայմանորեն այսուհետև նիշատակեմ Արամ Անտոնյանի կողմից «Մեծ ոճիր»-ում գետեղված Թայլեաթի նշանավոր ծածկագիր-հեռագիրը հայ խմբագրի մասին: Տե՛ս Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 146-147: Ինչն ամենայն մանրամասնութամբ վերապատմվել և մեջբերվել է Օտյանին նվիրված ուսումնասիրություններում: Հետաքրքրական մի փաստ է գրի առել աքսորի և ետաքսորյան շրջանի Օտյանի կյանքից Որութեն Օտյանն իր «Օտյանների գերդաստանը. պատմահասարակական փաստեր» գրքուկում: Տե՛ս Աշվածը, Երևան, «Լուս» հրատարակչություն, 1992, էջ 62-63:

գրեթե անհնարինը: Անբավելիորեն դժվար, գրեթե անհնարին երևույթ, քանի որ հուշագրելով ցավի ողջ տարողությունը<sup>25</sup> (Աղետն ու աքսորը) կրկին վերապրում է, դառնում գոյության ուղեկից, եթե չասենք՝ գերակա ներկայություն:

Ուրեմն Օտյանն անհծալ տարիների մշտամնա շուրջանակի մեջ էր: Այդ ներկայության տափնապից ազատագրվելու կարելիությունն էր գուցե հիշատակագրությունը, ինչը նաև ապրելու և գրելու հնարավորություն էր ընձեռում ետաղետյան շրջանում: Հիշատակագրելով՝ անպատճելիի վկայապատմում: Պատմել անպատճելին, այսպիսով վկայագրել Աղետի և աքսորի համագիրը: Այսպես փրկագործել, միևնույն ժամանակ փրկագործվելով վավերագրել Եղենը:

Այս վավերագրումը, ինչպես ասացի, ամբողջական է, համապատկերային, հետեաբար ստորև կիորձեմ մեկնաբանել այդ համապատկերի համագիրը կազմաբանող հիմնական շերտերը:

«Անիծյալ տարիներ»-ի հիշատակագիր/պատմասանը իր վկայագրությունն այնպես է կառուցել, որ անձնական, այսինքն՝ աքսորի ի՞ր անհատական փորձառության առանցքում կայացրել է ընույթով համադրական վկայապատում, «լսելի է դարձրել» եղեռնի բազմաթիվ դրվագներ, Աղետի համընդհանուր կերպն ու համապատկերը: Հետեւենք այս համապատկերային վկայագրության շերտերին:

Հուշագրության՝ կազմաբանական առումով հստակորեն տարորոշված նախագրության մեջ (առաջին երեք գլուխներում) Օտյանն առաջիկա Աղետի ահազանգի, գոյագրման իրոք որ ամբողջական պատկերն է վերստեղծում: Դեռ չեն սկսվել զանգվածային ձերբակալությունները, թշնամության բացահայտ ցույցերն ու սպառնալիքները, սակայն մթնոլորտի մեջ թւածող չարագուշակ սպասումը, ողբերգության կանխազգացողությունը համապարուրել է Պոլսի հայությանը. «Այդ միջոցներուն զրույց մը մեջտեղ ելաւ, որուն շատ հավատք ընծայեցինք:

Իբր թե սոտիկանությունը հայերու ցուցակներ կը պատրաստէ և այդ ցուցակներուն համեմատ շատեր պիտի աքսորվին:

— Վեց հազար հայերու ցուցակը պատրաստված է, — լուր կը բերեր մին:

— Ոչ, միայն երկու հազար հոգիի ցուցակ մը կա եղեր, — կը հավաստեր ուրիշ մը:

Օրերով այդ ցուցակին լուրը լսեցինք, բայց, ինչպես ըսի, առանց հավատք ընծայելու:

Սակայն բոլոր այդ զրույցները հետզհետե մտահոգության մթնոլորտ մը կը ստեղծեին մեր շուրջը:

25 Աղետի վկայություններում այս մեծագույն դժվարությունը միշտ եղել է խնդրական: Զապել Եսայանն «Ավերակներուն մեջ»-ում գրում է. «Արդարն, կարելի չե ըմբռնել և օգալ մեկ անգամեն ահավոր իրականությունը. աղիկա մարդկային երևակայության սահմանեն դուրս կը մնա. անոնք, որ ապրած են զայն՝ չեն կարող նաև պատմել իր ամբողջությանը մեջ. ամենքն այ կը թոթովեն, կը հասաւեն, կ'արտավեն ու կցկուր եղեցություններ կը Աերկայացնեն միավեն: (Զապել Եսայան, Երևան, Ա. հատոր, Էջ 32): Պատահական չէ, որ «Անիծյալ տարիներ»-ի տիրություններում լեզունոտիվային է վկայագրության «երևակայության սահմաններից դուրս»-ի պարագան:

*Օդին մեջ սպառնալիք մը կար»* (86): *Օտյանը ճեպով կետագծում է այդ սպառնալիքի ընդլայնվելը, ծավալվելը, սպառնալիքից Աղետի փոխակերպվելը:* Նա արդեն անձնական փորձառությամբ տեսել և ապրել էր Աղետը և ողբերգությունը՝ 1896-ի կոտորածները, Ադանայի ջարդերը<sup>26</sup>, երբ գիտակցորեն ու բնազդորեն զորաշարժի են ենթարկվում ինքնապաշտպանության, վտանգից ու մահվանից ազատագրվելու բոլոր սկիզբներն ու բնազդները:

Պատերազմի սկզբի քառսային իրարանցումը (անհոգ, թեթևամիտ վերաբերմունքից մինչև սարսափի և ողբերգության կանխագգացողություն) և այդ իրարանցման խորքում Աղետի և մղձավանջի օրեցօր շոշափելիացող ահազանգը, փութանակի ողբերգության մտահոգությունը նախանշում էին անիծալ ժամանակի դժոխայնությունը. «Զինվոր երթալու մղձավանջը՝ տարագրվելու սարսափիը, ուտեստեղեններու սղության մտահոգությունը, ապագային անստուգությունը միացած՝ բոլորովին կը դառնացնեին ամենուն կյանքը» (103): Պոլիսն արագորեն միսրճվում է պատերազմական եռքի մեջ, քաղաքի փողոցներից միանգամբ անհայտանում են թշնամի տերությունների լեզուներով մակագրությունները, լրտեսներն անմիջապես պատկան մարմիններին են հանձնում բոլոր նրանց, ովքեր անգամ լուռ համակրության նշույլ էին ցույց տալիս գերման-թուրք դաշնակցության հակառակորդներին: Սկսվում է հակահայկական աննախադեպ հիստերիան. ««Գարակյող» օր մը գրեց. «Եթե կ'ուզէք հասկնալ պատերազմին ընթացքը, հայերուն դեմքին նայեցե՞ք: Եթե հայերուն դեմքը կը խնդա՛ ըսել է որ ֆրանսիացիները և ուռսերը հաղթող են, իսկ եթե իրենց դեմքը տիսուր է վստահ եղիք որ գերմանացիներն են հաղթողը»<sup>27</sup> (86): Սա արդեն զանգվածային գիտակցության մեջ ցեղասպանության ամրագրումը և կայացումը վերջնականացնող միջոցառումներից էր, ուղղակի Աղետի և աքսորի սեմը, վիթխարի ողբերգության անշրջելիության դատավճիռը: Սկսվում են զանգվածային ձերբակալությունները, ինչին մեկը մյուսի ետևից հաջորդում են Աղետի և աքսորի ահուելի տեսարանները:

Անձնական փորձառությամբ ապրված և ամրագրված հիշատակագրություն/վկայագրությունն իր տեքստային արտահայտության մեջ («Անիծյալ տարիներ»-ի ողջ շրջարկով մեկ) ունի հանգուցային բառակապակցություն, ինչն ըստ էության այս վկայագրության առանցքն է, կողը, եթե կուզեք՝ անգամ հուշերի գրութենական (գրութենական՝ տվյալ պարագային եղածն ու ապրվածը, տեսածն ու լսածը գրանցելու իմաստով) գերակայությունը: Ահուելի տեսարան կողը հիշատակագրության համագրով մեկ ակտիվ հաճախականություն ունի: Եթե ոչ միայն իրու Աղետի և աքսորի կենսոլորտը փոխանցող իմաստային խտացում, խորհրդանող բնութագրական, այլև

26 Կիլիկիո աղետի ահազանցը հար և նման վկայագրությունն է ունեցել «Տասներկու տարի Պոլսեն դուրս»-ում. «Հետևյալ օր, կիրակի 5 մարտ, մեր այս սրտաստրով անձկության մեջ, սև ու ահուելի բոյթ մը կը սարսուացներ ամբողջ Պոլս հայությանը» (Ե. Օտյան, Երկեր, հատոր 4-րդ, էջ 504):

27 Հատկանշական է, որ նույն այս փաստը հիշատակում և նեշրերում է Գրիգորիս ծայրագույն վարդապետ Պալաքյանը. «... թուրք թերթերը ինչպես «Կարակյող» հեգնորեն կը գրեին, թե – օրվան պատերազմական հաջորդությունները կամ ձախորդությունները ինմանալու համար, Ձեզի հանդիպող առաջին հայուն երեսը նայեցեք, եթե ուրախ է, Որուսիան է հայթողը, եթե տրտում է, ուրեմն Գերմանիան է հայթողը»: Տե՛ս Գր. Ծ. Վարդ. Պալաքյան, «Հայ Գողգոթան», էջ 48:

որպես վկայագրությունը հնարավոր դարձնող խթան։ Արտահայտության յուրաքանչյուր կիրարկում վերահշատակագրում է Եղեռնի՝ իր բառով՝ զահանդեցնող դեպք, դրվագ, մանրամասն, ուրվագիր։ Ահոնի տեսարան կապակցությունը վերականգնում է, դիմավորում անցած դժոխքի պարունակների բոլոր մանրամասները, վկայագրությունը դարձնում համապատկերային։ Անգամ այն, ինչ Օտյանը կարծես թե «թողնում» է արտաքնագրային և ենթաքնագրային տիրույթներում։ Փրկագործում անհուսորեն կորավածը, անվերադաշտին վերադարձումի ենթարկում, կարծես թե սանձահարում անպատմելիության, վերականգնման ենթակա չլինելու հանգամանքները։ Հնդ որում, ինչպես ասացի արդեն, «Անիծյալ տարիներ»-ի ողջ համագրով, վկայագրության պատումային բոլոր շերտերում առաջին ձերբակալություններից մինչև խլյակների վերադարձ, այս վերադարձումի մեջ կրկին վկայագրելով ահոնի տեսարանի զարհուրանքը։

Օտյանն իր հիշատակագրություն/վկայագրության մեջ մտավորական, մշակության, հոգևորական և քաղաքական սերուցքի զանդանային ձերբակալությունները պարզապես ճեպով կետագծում է՝ ըստ էության իր հիշատակներում շոշափելիացնելով թե՝ անհատական, թե՝ հանուրին փոխանցված և գոյության կերպ դարձած սարսափը, փաստորեն վերականգնում սարսափի ահագնությունը՝ «Ազատամարտ»-ի խմբագրակազմի, թե քահանայի և բարձրաստիճան հոգևորականի, քաղաքական, թե գրական, մշակութային գործչի, առանցքային դերակատարի կամ համեստ մշակի պարագային։

«Հետո դարձյալ նոր անուններ։

— Համբարձում Համբարձումյանը, Ատոմ Յարձանյանը, Շավարշ Քրիսյանը, Տիգրան Զեռկյուրյանը, Մելքոն Կյուրյանը, Շահրիկյանը, Արիստակես Գասպարյանը, Գեղամ Բարսեղյանը, Ճանկյուղյանը...»

Ու սարսափը կ'սկսեր տիրել ամենուս վրա» (92):

Առհասարակ պետք է նկատի ունենալ, որ խնդրո առարկա հուշագրության պատումին բնորոշ է վկայագրության այս «թվարկային» հիշատակագրության կերպն ու եղանակը (ընդ որում ոչ միայն նշանավոր անձանց, այլև սովորական աքսորյալների և նահատակների պարագային)։

Թվարկել՝ ահոնի տեսարաններից փրկագործվելու համար, թվարկել՝ սեփական աքսորի համապատերը վկայելու համար՝ Աբիկ Մուպահյանի ձերբակալություն կլինի, թե Հակոբ Տեր-Հակոբյանին աքսորելու պարագա, Զոհրապի և Վարդգեսի նահատակության լուր, թե տակավին եվրոպա փախչելու կարելիության ուրվագրում։

\* \* \*

Հարկ է նշել, որ Աղետի ահությունը օտյանական հիշատակագրության մեջ բազում գագաթնակետեր է վկայագրել (անշուշտ եթե կարելի է այդպես բնորոշել, քանի որ Եղեռնի յուրաքանչյուր դրվագ մահվան և ոչնչացման, սպանդի հաճախանքի գագաթնակետ է)։ Սպանդի և ոչնչացման ահոնի տեսարանի տոնայնությունը «Անիծյալ տարիներ»-ում սկզբնագրել և որոշակի առումով պայմանավորել է հնչակյան գործիչների՝ պատերազմական ատյանի կողմից մահապատժի դատապարտման և կախաղանի միջոցով նահատակման դր-

**վագը:** Օտյանն այդ մասին իմանում է Սարգիս Գոչունյանից, որին Փարամազից, բժիշկ Պենսեի և մյուսների մահապատճի մանրամասները պատմել էր Մայր եկեղեցու կողմից մահապարտներին հաղորդություն տալու ուղարկված տեր Գալուստ քահանան: Օտյանը հետո բազմաթիվ մահերի, արյան հաճախանքի ականատեսն է լինելու, սակայն այս կողմնակի վկայագրությունը նրա հուշերում ոչ միայն չեզոքացնում է վկայաբերության կողմնակիության պարագան (Աղետն ու աքսորն ապրած-անցածների համար չի կողմնակի իրողություն, ուրիշի հետ կատարվածը կատարվել է իր հետ, ուրիշի տեսածի ականատեսն է եղել ինքը), այլև շեշտում ոոո *fiction*-ի, պատահածի և պատահարի, դեպքի (հավասար է՝ կատարվածին, ինչ տեսաբանության մեջ կիրառում են *happening* եզրով) հրամայականը: Իրողություն, ինչն Օտյանը հարկ է համարում իր հուշագրության փոքրիկ վերջաբանում հատուկ ընդգծել: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ պատահական չեմ համարում, որ հնչակյանների կախաղանը հիշատակում են եղեռնի գրեթե բոլոր համանման վկայագրություններում<sup>28</sup>:

Պատահական չէ, որ տեր Գալուստի կողմից պատմած բժիշկ Պենսեի մարդարեությունը՝ Պոլսին հառաջիկա հրով պատուհասելու և միմիայն թուրքերին անիրավ դատապարտության համար պատճելու մասին, նույնպես փոխանցվել է վավերական բազմաթիվ եղեռնապատումներում: Օտյանի վկայագրության մեջ՝ ականատեսի հաստատումով. «Յերեկը, ազգականն Արտավան Հովյանը տեսնելու համար Հանրային պարտքի վարչություն գացած էի ու հոն, ընդարձակ պարտեզին մեջ կը շրջեինք խոսակցելով, երբ, հանկարծ, մեր ուշագրությունը գրավեց թանձր մուլիք մը որ Ղալաթիո կողմէն դեպի երկինք կը բարձրանար:

Հրդեհ կար...

Արտավանին հաղորդեցի նույն առտուն, արշալույսին, կախաղան ելլող տոքթոր Պենսեի մարդարեությունը:

Ուրիշներ ալ եկած էին կրակը դիտելու: Սաստիկ հով մը կը փթեր նույն միջոցին ու ծուխը հետզհետե կը ծավալեր» (108)<sup>29</sup>:

«Անիծյալ տարիներ»-ում Օտյանը վկայագրել է պոլսական միջավայրում Աղետի և աքսորի ահագնացման, յուրաքանչյուր հայի գոյութենական ողբեր-

28 Օրինակ Զավեն Արքեպիսկոպոս Տեր Եղիայանը գրում է. «...պատերազմական ատյանի առջև դատվեան և մահվան դատապարտվեան և աննեցնե քանան կախաղան բարձրացան 1915 հունիսի 2/15-ին, Սովյան Պալազիտի հրապարակին վրա՝ առավոտուն շատ կանուխ: Առանց իմ զիտության Գում-Գարուի Տ. Գալուստ թիւն. Գիշերով... և կը տաճի... կախաղաններուն մոտ, որպես զի անոնց վերջին կամքը լսե և կորնական միմիարություն տա: Տ. Գալուստ թիւ. իր պարտականությունը կը կատարի և սպասեե հետո, մինչև անոնց կախաղան բարձրամասը, անոնց նարմիններուն կ'ընկերանան մինչև Էտիրնե-Գարուի գերեզմանատունը, որ կը թաղե զանոնք: Տ. Գալուստ թիւ. անկե ուղղակի կու գա Պատրիարքարան ինձի հաղորդելու համար եղելությունը որ տակավին լսած չէի: Տե՛ս Զավեն Արքեպիսկոպոս Տեր Եղիայան, Պատրիարքական հուշերս. Վավերագրեր և վկայություններ, Գամբրե, Տպարան նոր Աստղ, 1947, էջ 89:

29 Պենսեի խոսքը կախաղան բարձրանալուց առաջ առհասարակ նրա պահվածքը գրեթե նույնականորեն կրկնվել է Կիլիկիո արհավիրքի ժամանակ: Զավեն Եսայանը «Ավերակներուն մեջ»-ի «Կախաղանները» գլխում պատմում է կառափեարան բարձրացող աշուղ Գասապ Միսաքի մասին (տե՛ս Զ. Եսայան, Երկեր, Ա. Բատոր, էջ 112), որն ըստ Էռլիշան Պենսեի պես մահվան նախաւեմին հանդես է գալիս իրոն մարգարե-պատգամախոս: Աղետի ամենի տեսարանները տարժամանակյա վկայագրություններում բազմաթիվ նույնություններ են ցուցանում:

գությանը մոտենալու ողջ շառավիղը: Հիշատակագրության մեջ Դեր-Զորն իբրև Եղեռնի, մահվան արտահայտություն դառնում է դժոխքի անվանման հոմանիշ, նզովախոսություն: Օտյանը կարծես թե դանդաղ ընթացքով է մոտենում այդ ահութիւնի տեսարանին, հայտնվում այնտեղ, թեև Աղետի առաջին իսկ օրից «Տեր-Զորի չարաշուք անունը» (112) հայերի գոյակերպության «միահեծան» ներկայությունն էր: Դեր-Զորն իբրև ահութիւնի տեսարանների հավաքականություն հիշատակագրության մեջ վկայվում է «սեփիաթի» (առաքումների՝ աքսորի էտապների) առաջին դրվագներում՝ վկայագրելով մարդկության պատմության մեջ իր նախադեպը չունեցող Աղետի ահագնությունը. «Այսպես ուրեմն, կառավարությունը առանց ու է որոշ ամբաստանության, մեզ կը ձերբակալեր ու ոստիկանական հսկողությամբ կ'աքսորեր ու մենե կ'առներ ո՛չ թե միայն մեր ուղերության ծախքերը, — ինչ որ արդեն անլուր անիրավություն մըն էր, — այլ նաև ոստիկաններու ճամբու ծախքը և օրականները» (140):

Ահութիւնի տեսարանները վկայագրվում են հիշատակագրության պատումային գերակա կերպի՝ անընդհատական քելքի, աքսորի պարունակներով հարակա ընթացքի և շարժման, նզովյալ ճանապարհների շարունակական դրվագումներում: Պատահական չէ, որ բառացիորեն նոր վերադարձած աքսորյալների այս մարտիրոսական քելքի իրողությունը Եղեռնի առաջին անդրադարձումներում լեյտուտիվային է. «Քալե՛լ օրերով, անոթի, ծարավ. հոգնած և հուսահատ. չի գիտնալ թե ո՞ւր կը զիմե, ողջ պիտի մնա՞ թե ճամբան զոհ պիտի երթա անոպա վայրենի մը գնդակին: Քալե՛լ, քալե՛լ շարունակ, հույսը ունենալով իբրև ցուպ և իբրև մախաղ ունենալով՝ միայն տառապանքը»<sup>30</sup>: Այս ոչնչացնող քելքում պահպանել ապրելու կամքը, գոյատեել, շատ հաճախ նզովելով թե՛ ապրելու մզումը, թե՛ գոյատեելը. «Ահավոր ջարդեն վերապրողներ էին ասոնք, ոռոնք մեյ մեկ տեղացիի հետ ամուսնանալով իրենց կյանքը փրկած էին:

Գիտնալով որ հայեր ենք միջոցը կը գտնեին մեզի մոտենալուն և քանի մը բառ փսփսալու:

Այդ բառերը ընդհանրապես անեծքներ էին իրենց նոր ամուսիններուն ուղղված» (284): Սա նույնպես օտյանական հիշատակագրության անիջալության, գոյութենական ողբերգության համագիրը կազմաբանող ահութիւն տեսարանավկայման հանգուցային կիզակետերից է: Դեր-Զորը որպես Եղեռնի և Եղեռնագործության վկայագրական գերակայություն հուշագրության շրջարկում ականատես և ականջալուր Օտյանի ներփակ դրվագումներով ապահովում է Աղետի և աքսորի համապատկերը: Շատ հաճախ ահութիւնի գերաստիճանության խտացումներով, ինչպես օրինակ 13-14 տարեկան իզմիթցի հայ աղջնակի կուրանալու դրվագում (նրան կնության էր առել քառասուն տարեկան մի արաք և բարկության պահին բռունցքի այնպիսի հարված էր հասցրել գլխին, որ աղջիկը կորցրել էր տեսողությունը):

Երվանդ Օտյանի «Անիջալ տարիներ» հիշատակագրության մեջ ահութիւն տեսարանների համագրում ըստ էության ներկայացվում է ապրված, իրական դժոխայնությունը, վկայագրվում սեփական կյանքով և ճակատագրով իրագործ-

30 Տե՛ս «Վերապրողները», Ծանթ, Կ. Պոլիս 1918, № 3, էջ 35:

ված, դժոխքը: Հանգամանք, որ աքսորի «...հալածանքին մեջ, ապրիլը միակ հրամայականն է, ըսել կ'ուզեմ «բուսային» բայց զգաստ վերապրումը»<sup>31</sup>: Այս վերապրումը Եղեռնի ցանկացած վկայագրության տիրույթներում համանունացվում է ապրված դժոխքի հիշատակագրությամբ<sup>32</sup>: Նույնն է պարագան Երվանդ Օտյանի վկայագրության մեջ: Աչա թե ինչու «Անիծյալ տարիներ»-ի շրջարկում պարբերաբար, ըստ էության ցանկացած ահուելի տեսարանի դրվագման ժամանակ, այն ներկայացնել/փաստագրելիս առանձնակի, կարծես թե հատուկ Օտյանը նշագրում է դժոխքի և դժոխայնության իմաստային գերակայությունը: Այս ապրված դժոխքում հանցանքը «...պարզապես հայ» (428) լինելն է և, ի տարբերություն դժոխքից փրկագործվելու հրամայական ֆենոմենի, Եղեռնի ու աքսորի դժոխքից ազատման (դրախտ անցնելու) ճանապարհ չկա. «Քանի որ հայ եք ու անգամ մը դուրս ելած եք ձեր քաղաքեն, չեք կրնար այլևս հոն վերադառնալ» (452):

Այսօրինակ նշագրություններով առկեցուն է օտյանական հիշատակագրությունը, ինչը համագրում ողբերգության ահուելիությունը, «ներքին հրեշի» հետ անընդհատ հանդիպաղրվելը (այսպես է բնութագրում Այնթապլլ Մուսթաֆային՝ հայության դահիճներից մեկին) գերսասատկացման է հասցնում: Իրապես, ապրված դժոխքի, դժոխայնության կենսոլորտի փոխանցումը վկայագրությամբ պետք է իր հաստատումը գտնի միայն ու միայն այդ նույն դժոխքն անցածների հավաստումներով, քանզի դժոխքով չանցածների համար դա առնվազն անկարելի պատմություն է, հորինվածք: Եվ Օտյանն ամփոփում է դժոխքի և դժոխայնության գոյութենությունը իր «Եյուրին», հրաշքի նմանվող ելք/ազատագրումով: Առանձնակի նշում, որ հակառակ այն իրողության, որ շատերն իր հիշատակագրության մեջ չափազանցություններ և հորինվածքներ գտան, ինքը բարեբախտ աքսորյալ էր, որովհետև «Բազմանդամ ընտանիքներ էին որ դառնության ու թշվառության ծայրայեղություններ տեսան: Իրենց զավակներուն կամ ծնողքին մահը, ամայի ճամբաներուն վրա, իրենց աղջիկներուն առևանգումը կամ բոնաբարությունը իրենց աչքերուն դիմաց, վրաններու տակ, ավազակներու կողմել թալան, ոստիկաններու ձեռքով կողոպուտ, հիվանդություն, անոթություն, ծարավ, չարչարանքի ամբողջ ձևերը:

Ես, միս մինակ, միմիայն իմ անձս ունեե մտածելիք: ...ամեն տեղ, ծանոթ կամ անծանոթ համակիր մը որ անունս լսածին պես, կը փութար զիս հյուրընկալել ու ձեռքեն եկած օժանդակությունը ընել:

Երեք տարվան աքսորս փոխարինեց երեսուն տարվան գրական գործունեությունս» (532): «Վերջաբան»-ից մեջբերված սույն հատվածն ամբողջականա-

31 Գրիգոր Պելտյան, «Ոդիսան կամ Ղազար», Յառաջ. Միտք և արվեստ, թիվ 302, էջ 2:

32 Արամ Անտոնյանն, օդինակ, իրողությանը, կարծում են, ընդհանրական բացադրություն է տվել. «Եյուրին չեր կյանքը այդ պայմաններուն մեջ: Երեք տարի վերջ երբ այսօր կը մտաբերեմ այդ արհավիրքի օրերը, ինձի անամեկ կուգա որ վերադարձ մը կ'ընեմ դեպի դժոխք, – ո՞չ այն դժոխքը որուն սարսափները ավելի զարանդական դարձնելու համար կրոնական մատենագիրներ իրար գերազանցելու ճգնեցան և զոյ Տաճե երգեց, այլ ամիունապես ավելի ահավոր բան մը, որուն զարմութանքը ան՛ոք միայն պիտի գիտնան որ այդ դժոխքը ապրեցան և որոնք երբեք չպիտի կրնան նկարագրել զայն որովհետև մարդկացին բարբառը ամկարող է ասոր»: Տե՛ս Մեծ ոճիրը, էջ 78:

ցումն է տեսած և ապրած դժոխքի պարունակների, որոնք վկայագրված են հիշատակագրության վերընթաց էջերում:

Պատահական չէ, որ Օսյանը իր հիշատակները հաճախակի զուգահեռում է դանտեական դժոխքի հետ: Հիրավի դանտեական դժոխքի ամենասարսափելի պարունակների կենսոլորտն են առբերում Օսմանիերում 40-50 հազար հայ տարագիրների խոշտանգումների, օրական հարյուրավոր հիվանդների վախճանի, ել Պուսերայում ավազակերի և հրոսախմբերի կողմից լլկված ու թալանված հազարավորների, անվերջանալի թաղումների դրվագումները:

Այս առումով ցանկանում եմ դանտեական դժոխքի հետ զուգահեռի տարողությունը պարագրկելու համար հիշատակել Սեպիլում տեղի ունեցած արյան և մահվան հաճախանքի օտյանական դրվագումները: Գրողը, արձանագրելով, թե «Սեպիլ դժոխքի կայարանն էր հայերուն համար»<sup>33</sup> (204), աղբափոսի մեջ մեռնող կնոջ, երեխաներին սովամահությունից փրկելու համար արաբ կանանց վաճառելու պատկերներում վկայագրում է դանտեական դժոխքից զարհուրելի իրողություններ, իսկական արմագեղոնային տարեգրություն: Դժոխայնության ահուելի տեսարանները, թվում է, թե այլևս հնարավոր չէ ահազնացնել, սակայն աքսորի վերջում հրաշքով ողջ մնացած խլյակների կրկնաքսորի և ցեղասպան լինելու տագնապը և սպասումը ամբողջացնում է վավերական դժոխքը մինչև վերջին հայի Պոլսից Դեր-Զոր աքսորվելը:

Դանտեական դժոխքից ավելի զարհուրելի պատկերները, նույնքան զահանգեցնող որբան սեպիլյան ցնցող դրվագները, հիվանդության, ծեծի, համաճարակի, մանկանց վաճառքի, Ակման և սպանդի տեսարաններն իրենց դժոխային տարողությունն են ցուցանում նաև Աղետից հրաշքով ազատված աքսորյաների վերագարձի օտյանական վկայագրություններում: «տեսարանը կը հիշեցներ տեղահանության օրերը, միայն թե այժմ խե՞ղճ վերապրողները չունեին առաջին օրերու առողջ կերպարանքը»:

... Տիսո՛ւր տեսարան, ավելի տխուր քան առաջին օրերու բռնագաղթը, երբ տակավին մահվան մանգաղը չէր հնձած այնչա՛փ երիտասարդ կյանքեր և երբ ամեն մարդ ծրագրված ոճիրին ահազնությանը անտեղյակ, կը հուսար...

Հույսը կը շողար այդ օրերուն ամենուն աչքերուն մեծ, իսկ այժմ, վերագարձի այս պահուն հուսահատությունը դրոշմված էր ամենուն դեմքին վրա» (518): Այլևս վերապրողների գոյութենության մեջ Աղետի և աքսորի պարունակները մնալու են հավիտենականորեն: Սա էր նզովյալ ժամանակի չվերացող հետքը:

Պատահական չէ, որ հուչագրության համագիրը կազմաբանող/հիմնադրութային է դարձրել անիծյալ բնագրաստեղծ (վկայագրություն ապահովագրող) հրամայականը՝ վերնագրային բանաձևումից սկսյալ մինչև Աղետի և աքսորի դժոխքի համապատկերի վերափոխանցումը:

Անիծյալի մեծ հաճախականությունն այստեղ վկայագրում է կատարվածի համընդհանուր (տոտալ) նզովյալությունը՝ պատմաքաղաքական, բարոյական,

33 Ի դեպ, սեպիլյան դժոխքի գրականացված դրվագների շարքն ենք գտնում Արամ Անտոնյանի «Այն սև օրերուն» ժողովածովի «Բան չկա», «Մարդերը», «Վյանքի հոգնությունը» պատկերներում:

Հոգեբանական, հասարակական երևակայելի և աներևակայելի բոլոր չափորոշիչներով: Հայոց Գողգոթան իր բոլոր արտահայտություններով անիծյալ գոյակերպության այն համարժեքն է, ինչը այլևս հնարավոր չէ ապանզովել:

Այս անիծյալ/նզովյալ ոչնչացումից, կորստից փրկագործելու վկայագրական մեկ կարևոր սկզբունք էլ է որդեգրել Օտյանը «Անիծյալ տարիներ»-ում: Թվարկել, հականէ հանվանէ հիշել այսպես կոչված անվավեր այն տարագիրների և նահատակների անունները, որոնց հետ հանդիպել է աքսորի գժոխքի պարունակներում: Թեկուզ սոսկական թվարկումով վավերագրել նրանց անունները: Հուշագրությունն առլեցուն է այսօրինակ թվարկումներով, այստեղ սոսկ իբրև օրինակ հիշեցնեմ Համայի այսպես կոչված անվավեր աքսորյալների ու նահատակների (իզմիթցի, այնթապցի, աղանացի, կեսարացի տարագիրներ), էրեյլիի մերձակայքում աքսորյալների վրանաքնակ առօրյայի պարագաները:

\* \* \*

«Անիծյալ տարիներ»-ի համագրում Օտյանը պարբերաբար վկայում է Եղեռնի պետականորեն ծրագրված և նախապատրաստված լինելու մասին: Ընդ որում թե՛ Հուշագրության առաջին գլուխներում, թե՛ վարընթաց էջերում՝ աքսորի վայրերում թուրք պետական պաշտոններության հետ տարբեր առիթներով իր ունեցած խոսակցությունների ժամանակ: Ասվածի պերճախոս վկայությունն է կառավարության ընդունած օրենքներից մեկի ամբողջական մեջբերումը. «Երկու հոդվածե բաղկացած այս կարճ օրենքը մեկ ու կես միլիոն հայու մահվան վճիռն էր» (101), կամ իր և փաթթոցավորներից մեկի խոսակցությունն աքսորի ճանապարհին. «Տգետ գյուղացիի մը երևույթը ուներ և սակայն կարող էր զանազանել «Ազատամարտ»-ը «Ժամանակ»-են: Այս դեպքը մեկուսացյալ դեպք մը չէր և աքսորի կյանքիս մեջ շատ առիթներ ունեցա հաստատելու համար թե թուրքերը ավելի լավ ճանչցած էին մեր ներքին կյանքը՝ քան թե մենք իրենցը» (155):

Վկայաբերում է պետական պաշտօնյաների կողմից զանազան առիթներով հիշատակվող այն կարգադրությունը, ըստ որի՝ ներքին գործերի նախարարության հրամանով խստորեն արգելված էր հայերին Դեր-Զորի գավառից դուրս ենել՝ «...հու եկող հայը ա՛լ անդամ մըն ալ ոտքը դուրս չի կրնար դնել» (365), – ամփոփում է պետական հրահանքը պաշտօնյաներից մեկը: Պարբերաբար մեջբերում է ջարդերի և զանգվածային տեղահանության մեջ հայությանը մեղադրելու և ըստ այդմ օրինական գործողությունների պաճուճանք ապահովելու փոքր ու մեծ պաշտօնյաների վերին ատյանների հանձնարարությամբ սերտած բարբաջանքները, ինչը նրանք կրկնում էին ամեն առիթով:

Այսպիսով «Անիծյալ տարիներ»-ի շրջարկում վկայագրվում է Աղետի և աքսորի ամբողջական համապատկերը: Ըստ էության, Օտյանը բաց չի թողնում և ո՛չ մի մանրամասն, տարագրության ոչ մի դետալ՝ աքսորի ճանապարհներին ոտքով և կառքով քայլելիս, արաբների աղարակներում սովամահությունից խուսափելու համար տաժանակիր աշխատանքներ կատարելիս մինչև

զանագան հնարամիտ միջոցներով մեծ աշխարհից լուրեր ստանալը։ Փոքր ու մեծ ավազակների ու զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաների կողմից մինչև վերջին շապիկը թալանվելը, գժոխային պարունակներում չխելագարվելու փրկագործող հումորը, ծիծաղելին տեսնելու և ծիծաղելու կարողականությունը։ Վերջին պարագայի բնութագրման համար ցանկանում եմ ընթերցողի ուշադրությունը հրավիրել այն դրվագի վրա, երբ մի թշվառ պառավ բարեկամների խորհրդով իր հավին, առողջությունը վերականգնելու համար, ծովի մեջ է մխրճում և ոստիկանների կողմից ձերբակալվում և ամբաստանվում՝ այդ արարքով թշնամու մարտանավերին տեղեկություններ հաղորդելու մեղադրանքով։ Հիրավի պատերազմի շվեյկյան մակարդակի վկայագրություն<sup>34</sup>։ Եվ կամ բազմաթիվ խուզարկությունների և ձերբակալությունների ժամանակ անհեթեթության հասած ծայրագնա պսիխոզի ծիծաղելի արտահայտությունները, ինչպես օրինակ. «Համար գտնված միջոցիս շատ անգամ մեկ քանի բարեկամներ կը հավաքվեինք ու ժամանցի համար թուղթ կը խաղայինք։

Խաղին հաշիվները ընդհանրապես ես կը գրեի սև թուղթի կտորի մը վրա։ Խուզարկության ատեն այդ տեսակ թուղթ մըն ալ գտնվեցավ թվանշաններով լեցված։

Այդ թուղթին համար տեղեկագիրը կ'ըսեր թե ծածկագրության բանալի մըն էր հավանորեն!!!» (256)։

Քանիցս արձանագրվեց արդեն, որ երկանդ Օտյանն ըստ էության հիշատակագրել է Աղետի և աքսորի համապատկերը։ Համապատկերային վկայագրության կերպը թելադրական է դարձել հիշատակագրության կառուցվածքային տրոհությունը։ Այն բաղկացած է տասնհինգ գլխից և վերջաբանից։ Հարկ է արձանագրել, որ առաջին գլուխը՝ «Ընդհանուր պատերազմին ծագումը» որոշակի ներածական գործառություն ունի։ Բացի երեքից մյուս գլուխների վերնագրային կերպը ուղղակիորեն տեղանվանական նշագրություններ են<sup>35</sup>։ Ահավասիկ՝ «Անիծյալ տարիներ»-ի կառուցվածքային միավորների (գլուխների) վերնագրերը ըստ հերթագայության՝ «Ընդհանուր պատերազմին ծագումը», «Զարաշուք գիշերը», «Թաքստոցիս մեջ», «Անձկության օրեր», «Բանտարկություն և աքսոր», «Տարսոնի մեջ», «Հալեպի մեջ», «Համայի մեջ», «Հալեպեն Տեր-Զոր», «Էլ Պուսերա»», «Տեր-Զորի մեջ», «Տեր-Զորեն Հալեպ», «Հալեպի մեջ», «Սուլթանի մեջ», «Դեպի Պոլիս», «Վերջաբան»։

Արդ, արագ նշագրություններով ներկայացնեմ «Անիծյալ տարիներ»-ի գլուխների համառոտ բովանդակությունը։ «Ընդհանուր պատերազմին ծագումը» (գլուխ I). ամփոփ ուրվագրում է Առաջին աշխարհամարտի սկիզբը, իթթիչատականների նախապատրաստությունը պատերազմին, տնտեսական տագնապները, ազգային-քաղաքական գործիչների մտահոգությունը վերահաս պա-

34 «Անիծյալ տարիներ»-ում նմանօրինակ դրվագները շատ են, ինչպես, օրինակ, բանտային առողջականությունը, ոչլահավաքության, գողացված գումարը եւ վերցնելու պատկերներում։

35 «Տարսոնի մեջ» գլուխ Օտյանը նկարագրում է Օսմանիեում իր աքսորի մեկ դրվագը, քանի որ այնտեղ շատ քիչ է մնացել և արագ տեղափոխվել է, այդ պատճառով դա իբրև առանձին միավոր հուշագրության մեջ չի առանձնացրել։ Նույն է պարագան համանան մյուս դեպքերում։

տերագմում հայության ճակատագրի համար (Զոհրապ, Ոսկան Մարտիկյան), թրքաց ազգայնական տրամադրությունները, հայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքը: Ծավալում թորգոմի ներփակ պատումային հոսքը: «Զարաշուք գիշերը» (գլուխ II). ապրիլ 24-ի գանգվածային ձերբակալությունների անդրադարձը, իր տագնապները, թաքստոցում ապաստանելը: «Թաքստոցիս մեջ» (գլուխ III). թաքնվելու հանգամանքները, նոր ձերբակալությունների և առաջին աքսորյալների մասին հիշատակությունները: «Անձկության օրեր» (գլուխ IV). պատերազմի և հայերի հալածանքների վիճակով պայմանավորված գերպրկված վիճակի վկայագրությունը, հնչակյանների կախաղանի դրվագումը, թաքստոցից դուրս գալը և աշխատանքը «Ժամանակ»-ում վերսկսելը, տագնապները կապված Պողոս Նուբար փաշայի կենսագրության նոր հրատարակած գրքի առիթով: «Բանտարկություն և աքսոր» (գլուխ V). Կ. Պոլսում իր բանտարկության մանրամասները (ագուցած բժիշկ Քըլըճյանի ներփակ պատումային հոսքին), բանտարյան առօրյայի դրվագումները, աքսոր ուղարկելու հանգամանքները, աքսորի էտապի (սեփթիաթի) մանրամասները Գոնիայում, Էրեյլիում, Պողանտիում, Քյուլեկ Սթասիոնի հայ գաղթականների վրանաքաղաքի առօրյան: «Տարսոնի մեջ» (գլուխ VI). Էտապների դրվագումները, Շալվարճյան եղբայրների, Գարեգին վարդապետ Խաչատուրյանի, Արամ Անտոնյանի պատումային հոսքերը: «Հալեպի մեջ» (գլուխ VII). Պարոն հյուրանոցի տէր Մազլմյանների գործունեության անդրադաները, սեպիլյան դժոխքի նկարագրությունները, Հալեպում գեղերումները, Համա մեկնելու նախապատրաստությունը: «Համայի մեջ» (գլուխ VIII). տարագիրների առօրյան, Մարիձա Մուրյանի, Լևոն Մողյանի աքսորի ներփակ վկայագրությունները, հայերի բռնի իւլամանալու դրվագումները, իր և մորեղբոր ձերբակալությունը, բանտարկությունը և դեպի Հալեպ աքսորվելը: «Հալեպին Տեր-Զոր» (գլուխ IX). Հալեպի բանտարյան օրերի դրվագումը, աքսորի ընթացքը դեպի Դեր-Զոր, աղբահավաքի աշխատանքը Դեր-Զորում, Միատին, ապա դեպի Ել Պուսերա աքսորի ճանապարհի դրվագումները: «Ել Պուսերա» (գլուխ X). արաբների կյանքի և կենցաղի, բարքերի դրվագումը, իր փախուստը, վերադարձը, ստահակ և մատնիչ Սանթուռ օղլու վկայագրությունը, ընկերների զետ Դեր-Զոր փախուստը, աշխատանքը Դեր-Զորի գործատներից մեկում: «Տեր-Զորի մեջ» (գլուխ XI). Դեր-Զորի գինվորական աշխատանոցներում հայ աքսորյալների առօրյան, գերմանացիների մոտ թարգմանի պաշտոնով աշխատանքի անցնելու նկարագրությունները, իր նոր փախուստի նախապատրաստությունը: «Տեր-Զորեն Հալեպ» (գլուխ XII). փախուստի դրվագումները, Հալեպ հասնելը: «Հալեպի մեջ» (գլուխ XIII). Հալեպյան առօրյայի դրվագումները, հերթական ձերբակալության և հարցաքննությունների դրվագումները, Տարսոնում և Գոնիայում էտապի մանրամասները, Սուլթանիկ հասնելը: «Սուլթանիկի մեջ» (գլուխ XIV). աքսորի առօրյան, Էրեյլի մեկնելը: «Դեպի Պոլիս» (գլուխ XV). Պոլիս վերադառնալու նախապատրաստությունները, վերադարձը:

Ահա այս համապատկերային վկայագրության տիրութներում Օտյանը հիշատակագրում է իր և իր բախտակիցների, Գողգոթայի ճանապարհներին հանդիպագրված թուրք, արար պաշտօնյանների, քաղաքաբնակների և գյուղաբնակ-

**ների արմագեղոնային տարեգրությունը:**

Պատմում իր մասին, պատմում ուրիշների մասին, իր և մշուների անհծյալ ժամանակների վկայագրությունը համադրում:

Եղեռնի արհավիրքի մեջ Օտյանը հավատարիմ է մնում իր էությանը. «Երբ իմ ով ըլլալս իմացան և հասկցան թե ոստիկանական հսկողությամբ Գոնիա կը տարվիմ, առաջարկեցին զիս փախցնե:

— Քեզ հոս ապահով տեղ մը կը պահենք, — ըսին, — կե՛ր, խմե, քեյֆդ նայե:

— Ո՞չ, — պատասխանեցի, — չեմ ուզեր ինձի ընկերացող ոստիկանին գլուխը փորձանք բերել, մանավանդ որ խոսք տված եմ իրեն չփախչելու և այն ալ իմ այս խոստումիս համար ազատ թողած է զիս» (461): Այս պերճախոս վկայագրությունը ո՞չ կեցվածք է, ո՞չ իր այլությունն ընդգծելու իրողություն, սա Օտյան մարդու նկարագիրն է, որ դժոխքի պարունակներում անդամ դույզն-ինչ չի փոփոխվել: Հավանաբար սա էր, որ Օտյանին մահվան հաճախանքում ապրելու գորություն, չիննթանալու կարողականություն է առթել:

Ուրեմն հետևենք գրողի Գողգոթայի ճանապարհին:

\* \* \*

Դժոխսային ահուելի տեսարանների սեփական փորձառության վկայագրությունը «Անիծյալ տարիներ»-ի հուշապատումի առանցքն է, Աղետի և աքսորի պատումը հավաքագրող/միասնականացնող «Ճարտարապետումը»: Հուշագրության մեջ իրապես հեղինակը չի գործածում «ականատես», «վկա» եղբերը, ինչպես իրավացիորեն նկատում է Գրիգոր Պլայանը<sup>36</sup>, սակայն անկախ այն հանգամանքից, որ հուշագրությունը հեղինակը «չի սահմաներ... իբրև վկայագրություն... ի գործ կը գնե վկայագրության ամբողջ բանարվեստ մը»<sup>37</sup>:

Վկայագրություն/Հիշատակագրությունը սկզբնավորվում է Աղետի առաջին օրերի տագնապներից, թաքնվելուց, թաքստոցից դուրս գալուց, կրկին «Ժամանակ»-ում աշխատանքի անցնելուց, ծավալվում 1915-ի օգոստոսի 26-ի գիշերվանից Շիշլիի իր տանը ձերբակալվելուց մինչև 1918-ի նոյեմբեր 17-ը, երբ Օտյանը վերադարձավ աքսորից, կրկին հայտնվեց Կոստանդնուպոլսում:

Օտյանի ահուելի տեսարանների փորձառությունը սկսվում է այն պահից, երբ դիպվածով փողոցում հանդիպած ծանոթներից մեկն անկեղծորեն զարմանում է, որ նրան դեռ չեն ձերբակալել: Սկսվում է առաջին հետապնդումներից խուսափելու վկայություններից. «Ինք Պոլսո կողմը պիտի անցներ: Խնդրեցի իրմեռ ձեռագիրս «Ժամանակ»-ի խմբագրատուն հանձնե և միենույն ատեն հարցնե թե զիս փնտոռող եղա՞ծ է:

Ուշ ատեն եկավ և ըսավ.

— Աղեկ որ խմբագրատուն չես գացած, երկու անդամ քեզ հարցուցեր են:

— Ո՞վ...

— Ծպոյալ ոստիկաններ» (91): Շարունակվում թաքնվելու հիշատակագրումով՝ թաքստոցում տեսածի և ապրածի վկայագրությամբ:

36 Տե՛ս «Ողիսն կամ Ղազար», Յառաջ. Միտք և արվեստ, 2004, թիվ 302:

37 Նույն տեղում:

Ակնհայտ և գաղտնի հետապնդումների և որոնումների պարագան հիշատակագրության մեջ նախանշում է օտյանական աքսորի և տարագրության քրոնիկոնի հիմնական արտահայտություններից մեկը՝ անընդհատ զանազան հալածանքներից ձերբագատվելու փորձերի, ձերբագատվելու, ահոելի տեսարաններից խուսափելու միջոցների, անխուսափելին շրջանցելու վկայագրությունները:

Ինչպես յուրաքանչյուր հրաշքով վերապրած՝ ապրի 24-ին և հաջորդող օրերին Կոստանդնուպոլիսում ստույգ ձերբակալությունից խուսափելու, թաքնվելու և թաքստոցի մանրամասները (օրինակ՝ Հակոբ Օշականի, Շավարշ Միսաքյանի, Զապել Եսայանի), այնպես էլ Օտյանի թաքնվելու քրոնիկոնն առկեցուն է հիրավի վիպական, դրամատիկ և ողբերգական տարերքի գերպրկված ընթացքով: Օտյանն անմիջապես իբրև լավագույն և ապահով թաքստոց ընտրում է իր մտերմագույն ընկերներից մեկի՝ Կարապետ Տիրհեմճյանի տունը. «Միտքս ինկավ Կարապետ Տիրհեմճյանը մտերիմ բարեկամ մը որ կը բնակեր գերմանական գեսպանատան ետև գտնված տուն մը. Գապվթաշի զառիվարին վրա, թուրք թաղի մը մեջ: Նազարեթյան մարդ դրկեց և տպարան բերել տպավ Տիրհեմճյանը որուն հայտնեցինք դիտավորություննիս:

Թեեւ վտանգավոր բան մըն էր նույն միջոցին ինծի պես մեկը իր տունը հյուրընկալել, այսուհանդերձ բարեկամս բնավ չվարանեցաւ» (93): Այս անվարան արարքը պատահական չէ, որ ետաղետյան առաջին օրերին իսկ պետք է կրկին վերանդրադարձվեր՝ արդեն «Անիծյալ տարիներ»-ի համագրից դուրս, պետք է հանրության համար բացվեին նոր մանրամասներ: Թեոդիկը իր գրություններից մեկում վերավկայում է Կարապետ Տիրհեմճյանի արարքը<sup>38</sup>:

Թե՛ թաքստոցից անմիջապես դուրս գալուց հետո, թե՛ կրկին, ճիշտ է՝ կարճ ժամանակով, «Ժամանակ»-ում աշխատանքի անցնելու գրվագներում «Օտյանը վկայագրություն/Հուշագրության մեջ կենտրոնանում է իր ազատության մեջ լինելու պատահականության, պատկան մարմինների «մոռացկոտության» հանգամանքի վրա<sup>39</sup>, իրեն մոտեցող անխուսափելի արհավիրքի (Պողոս Նուպար Փաշայի մասին պատերազմական ատյանի որոշման և այս ազգային գործչին նվիրված իր գրքի հետ կապված դրվագումներում) և հայության արհավիրքի հանգամանքների վրա: Վերջին պարագան ըստ ամենայնի հիշատակագրված է

38 «Օտյան Երվանդ որ շնորհը տեղը երգիծաբաննին է պասօն – և վերապրող մը «Անիծյալ տարիներ»-ին շնորհիվ՝ ժամանակէ մը ի վեր իր տիպարն է Տեղծած՝ համանակ ԽԳՆՍՍ Ս.Ղ.Ա.ի, որուն հետ ունեցածն խսակցությունները «Կավոոց»-ի մեջ, և ամեն դուրս հիմա բուն իր տունը, բոլոր ներ կը կարդացվին աշքան հանուլքով: Օտեր հետաքրքիր եղած են սակայն՝ գիտնալու համար թե իրավ գոյություն ունի՞ համանուն ամա մը: Այս՝ կը պատասխանենք մենք և կը դմենք ահա իսկական կենդանագիրն ալ, բուն անվամբ Կարապետ Տիրհեմճյան, հվորկիացի շենշող մարդ մը՝ 48 տարու... Այս այն «Դգնատ աղա»-ն է որ 11 ապրիլ 1915-ի ամավոր գիշերեն 2 օր վերջ, իր սիրական Օտյանը... իր տուն տարած է, և անոր մասին կառավարության կողմն եղած հակառակ խիստ հետապնդություն՝ 21 օր պահած է զայն.....»: Տե՛ս Թեոդիկ, «Խվական Իգմատ աղան», Ամենուն տարեցուցը, 1916-1920, էջ 179-180:

39 Այսպես կոչված «մոռացկոտության» հանգամանքի մասին ունենք բազում վկայություններ: Ահավական դրանցից մեկը. «...Պողոս մեջ Ապրիլյան ձերբակալություններեն հետո սկսան փնտող մոռցվածներ ու ձերբակալվել: Այսպես ձերբակալվեցան և աքսորվեցան՝ Սարգիս Սվին, Բողոք Խաչատուրյան, Թեոդիկ, Երվանդ Օտյան, Աքիլ Մուսահենձյան....»: Տե՛ս Զավեն Արքեպիսկոպոս Տեր Եղիայան, Պատրիարքական հուշերս, էջ 167-168:

Զոհրապի և Ոսկան Մարտիկյանի հետ հպանցիկ հանդիպումների հատվածներում:

Աղետի առաջին օրերին Օտյանը թաքստոցում, թե թաքստոցից գուրս գալուց հետո ինչ-որ առումով տենդագինորեն փորձում էր կատարվելիքի էությունն ըստ ամենայնի ըմբռնել, դեռևս տարտամ ահազանգը և տագնապը որոշակիացնել: Աքսորի և տարագրության գոյութենական ողբերգությունը նրա համար արագ հստակվեց և Օտյանն անվարան ընդառաջ էր գնում ահուելի տեսարաններով առլեցուն իրականությանը. «Պապիկյան շատ ստիպեց որ իրենց տունը անցընեմ գոնք նույն գիշերը: Հակառակ իր ստիպումներուն ես համառեցա և գացի տունս պառկելու:

— Քանի որ բոլոր ծանոթներս ձերբակալեր են, թո՛ղ զիս ալ ձերբակալեն, — կը մտածեի» (91): Սա, անշուշտ գրողի նկարագրի արտահայտության և դրսերման հետ, անխուսափելիության հստակ գիտակցումն է և, եթե կուզեք, այդ անխուսափելիին ընդառաջ գնալով՝ ողբերգության մարտահրավերն ընդունելը. «Ես բոլորովին գտած էի պաղարյունությունս...

Գալով սպառնացող ապագա վտանգներուն անոնց վրա չէի մտածեր երբեք: Այդ օրը կ'ապրեի ու կյանքս վտանգի մեջ չէր և ասիկա բավական էր ինձի համար» (143): Ուրեմն աքսորի ժամանակ Օտյանն ապրում էր օրով, այդպես էր նաև այն բազում իրավիճակների ժամանակ, երբ կյանքը վտանգի մեջ էր, ավելին, երբ մեկ, իսկ շատ հաճախ նրան կես քայլ էր բաժանում մահվանից: Օրով ապրելու այս «մարտավարությունը» Աղետի գժոխային իրականության մեջ գտնվող անհատի համարենք կենսածեն էր, նզովյալ ժամանակի հորձանքում նզովյալ/անիջյալ չգառնալու թերևս միակ կարելիությունը: Գոյութենական ողբերգության այս կենսոլորտում է Օտյանը հիշատակագրում Աղետի և աքսորի պարունակները իրեն դրա կրող, մասնակից, իրեն անմիջական ներկա կամ կատարվածը ուրիշներից փոխանցող պատմասան, իրեն զոհ կամ նահատակության ականատես: Գոյութենական ողբերգությունը նրա հիշատակագրության մեջ հիրավի սիմֆոնիկ վկայագրությունն է՝ սեփական տարագրության դրվագումների առանցքով ծավալվող:

Այս ճակատագրով նախասահմանյալ նժդեհը (հիշենք, որ արդեն մեկ անգամ Օտյանն անցել էր տարագրության ողիսականով 1896-1908-ին՝ Հունաստան, Եգիպտոս, Ֆրանսիա, Անգլիա, Ավստրիա, Հնդկաստան) իր նոր նժդեհականով, ինչն այլևս նախկին տարագրության ողիսականին նման չէր<sup>40</sup>, իր վերադառնումի ողջ ընթացքում (աքսորի սկզբում, տարագրության ճանապարհներին) և կրկին մեկնակետին համեմել/դառնալու ժամանակ ցուցանում է «վերադարձության մեջ հիրավի սիմֆոնիկ վկայագրությունն է՝ սեփական տարագրության դրվագումների առանցքով ծավալվող».

40 Իր իրավան արժեքավոր ուսունակիրության մեջ Գրիգոր Պյուտանը Օտյանի աքսորը և առհասարակ «Անիջյալ տարիներ»-ը բնութագրում է իրևն ողիսական. «Ողիսական» մըն է ան, որուն թերություն տարագիր Ողիսւս-Օտյան՝ կը մեկնի Պոլսեն ու կը վերաբառնա Պոլիս»: (Յառաջ. Միտք և արվեստ, 2004, թիվ 302): Տարագիր Օտյանն ականա, լուրօրինակ Ողիսւս է, իսկ տարագրությունը արտեֆակտային ողիսական: Այնայիս Ողիսւս է ան ու ողիսական է աս, որ չունի ո՞չ իթամեջ տեսլականը, ո՞չ իրական իթաքէն, իսկ երա վերադարձը նույն ճակատագրով նախասահմանյալ անիջյալության շարունականությունն է: Պատահական չէ, որ հիշատակագրության մեջ նա քանից բացառում է անիջյալության մեկնակետին դառնալու հանգամանքը:

է նա, — ես Պոլսեն ալ, թուրքերեն ալ զզված եմ, կը նախընտրեմ արաբներուն մեջ երթալ» (164): Սա է հասկանալի դարձնում Օտյանի, կարելի է ասել՝ անվրդով կեցվածքը Դեր-Զոր աքսորվելու, տարագրության դժոխում ոչ թե մեկնակետ (Պոլիս/Իթաքե) վերադառնալու, այլ հեռու (Բաղդադ, Կիպրոս, Եգիպտոս) գնալ/պատսպարվելու չիրականացված ցանկության հանդամանքը: Ասել է թե՝ չի՞ք վերադարձ տուն: Վերադարձումն անհնարին վերադարձ էր, որ հույժընդգծում էր, կրկնում ահոնելի տեսարանների տոտալ կորուստները, կրկին իր խոսքով՝ զահանդեցնող ամայությունը, այն երևույթը, ինչ անվանում եմ գոյութենական ողբերգություն:

\* \* \*

Գողգոթայի ճանապարհներին տարագիր Օտյանը հանդիպել է բազմաթիվ դեմքերի, եղել բազում և բազմաբնույթ դեպքերի կամ անմիջական մասնակիցը և կամ՝ ականատեսը: Նրա տարագրության դրվագումներում հանդիպում ենք գոյութենական ողբերգության գրեթե բոլոր արարվածներին: «Անիծյալ տարիներ»-ում գրողը հիշատակագրում/պատմում է ահոնելի տեսարանների իր խայտարդետ ու բազմերանգ անընդհատական փորձությունները:

Նրան Աղետի պարունակներում վիճակված էր մե՛կ երվանդ Խաչատուրյան լինել (իբրև Գոնիայի առաջնորդ Գարեգին վարդապետ Խաչատուրյանի հորեղբայր), մե՛կ պարտիզակցի 52 տարեկան հյուսն Աստուք, մե՛կ հանդես գալ մահմեղական՝ Ազիզ Նուրի անվամբ, մե՛կ Սահակ օղլու Երվանդ (որպես Սահակ Մեսրոպի հորեղբայր): Աշխատել ավելածու-դռնապան-արտաքնոց մաքրող, կաղապարանոցում բանվոր, գերման զինվորականների մոտ թարգման: Հարակա լինել հալածական վիճակի մեջ, կյանքի և մահվան սահմանադիմղավանջի ու տարուբերումների տիրույթներում:

Օտյանի տարագրության խորապատկերում կան անուններ, որոնք ծայրագնա վտանգավոր վիճակի մեջ, ուղղակիորեն իրենց կյանքն ու քիչ թե շատ ապահով վիճակը հարվածի տակ դնելով, կամ նույն աքսորյալի կարգավիճակում լինելով, առանց դույշն-ինչ չափազանցության, հերոսական կեցվածքով սատարել, փրկել և օգնել են բազում տարագիրների:

Գրողն իր հիշատակագրության ամենատարբեր դրվագումներում առանձնահատուկ վկայագրում է նրանց վարքը Աղետի դժոխային հորձանքում: Ամենից առաջ այս մարդիկ են իրենց հերոսությամբ գոյութենական ողբերգությունը լցրել փրկագործությամբ, բարոյականությամբ, հույս հաղորդել, եթե կուզեր՝ դժոխում ապրելու իմաստն ու կամքը ապահովագրել:

Հիշենք թեկուղ Շալվարճյան եղբայրների դրվագումները: Ի շարս շատերի Երվանդ Օտյանը նույնպես վայելել է նրանց և նրանց զավակների Արամ և Արտաշես Շալվարճյանների «անգնահատելի օժանդակությունը» (178), օգնությունը թե՛ աքսորի սկզբում պատսպարվելով նրանց ալյուրի Փաբրիկայում, թե՛ աքսորի ավարտին՝ վերջին «սեվքիաթի» (էտապի, տեղափոխության) ժամանակ:

Հիշենք տարագրության ժամանակ գրողի այս կամ այն վայրում կացության արտոնության համար երաշխավորներին կամ երաշխավոր լինելու պատրաստակամություն հայտնած անձանց, ինչպես օրինակ էսկիշեհիրցի Արսեն քահա-

նային, որ Գոնիայի առաջնորդական տեղապահն էր<sup>41</sup>, «Անիծյալ տարիներ»-ի շրջարկում հանդիպած բազմաթիվ տիպար հոգեորականներից մեկը: Հոգեորականներ, որոնք եղեռնի ժամանակ իրենց հոտի գլուխն անցած առաջինները մարտիրոսացան, իրենց անձը ստորակայելով՝ ամեն ինչ արեցին գոնե ֆիզիկական ոչնչացումից պատսպարելու տարագիրներին: Այս խորքում անպայմանորեն պիտի առանձնացնեք Գարեգին վարդապետի<sup>42</sup> դրվագումների հոսքը հիշատակագրության մեջ:

Անձը փոքր-ինչ ապահովելու, իր ով լինելը թաքցնելու համար անվանափոխությունները (թաքցնելու, քանի որ աքսորի ժամանակ էլ Օտյանը ամենավերին ատյանների կողմից հետապնդվում էր, գտնվում զանազան տրամաչափի լրտեսների և գործակալների մշտամնա ուշագրության կիզակետում, ստիպված էր իր իսկությունը գաղտնի պահել), ուրիշի անվամբ հանդես գալու<sup>43</sup> դրվագումները սկսվում են Գարեգին վարդապետի հետ: Նրա հոժար կամքով գրողը դառնում է առաջնորդի հորեղբայր, ըստ այդմ ժամանակ շահում՝ խուսափելով շատ ու շատ փորձություններից:

Անպայմանորեն պետք է հիշատակենք Հալեպի «Օթել Պարոն»-ի սեփականատեր Հովհաննէս Մազլումյանին, երվանդ Օտյանին, բազմաթիվ տարագիրաքսորյալներին իր անգնահատելի ծառայություններով՝ քաջածանոթ համբավակոր Պարոնին<sup>44</sup>: Պարոն-Հովհաննէս Մազլումյանի գործադրած ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ Օտյանին մորեղբօր՝ Քերովք Ասլանյանի մոտ Համա փոխադրել, նամանավանդ որ Արփիար Արփիարյանի զարմիկ Փիլիկ Արփիարյանը նրան տեղեկացրել էր, «...թե ոստիկանության լրտեսները զիս կը փնտուն եղեք ո՛չ թե իբր Գարեգին վարդապետի հորեղբայրը, այլ իբրև երվանդ Օտյան «Ժամանակ»-ի խմբագիր:

41 Հետաքրքրական է, որ ետադեսան աստանական կյանքում Օտյանը կրկին երաշխավորի կարիք է ունեցել, այս անգամ 1925-ին Ալեքսանդրիայում հաստատվելու համար. «Այս հուսահատական կացության մեջ, համերժ, բարեկար, հրեշտակի մը պես, ինձ օգնության հասավ գափիռեանակ շնորհալի հայութի մը, օրիորդ Արտենուի Իրեքան, որ առաջ անցնելով ըստ պաշտոնային».

- Ես այս պարունակ երաշխավորն եմ:
- Գիտեք որ ծանր պատասխանատվություն մը կ'ատանձնեք օրիորդ:
- Հոգ չե, երաշխավոր եմ, – պատասխանեց օրիորդը դյուցազնաբար:

Տե՛ս «Տասմելց տարի ետքը» (Օտյան, Երևանի ժողովածու, հ. 4, էջ 532):

42 Հետագայում եպիկոպոս:

43 Ի դեպ, այս իրողությունը նույնական Օտյանի համար նորություն չէր: Անվանափոխության անհրաժեշտությանը նա բախվել էր տակապին իր առաջին տարագրության (1896-1908) ժամանակ. «Առաջին խորհրդադրը որ ինձ տվիմ՝ սա եղավ».

- Պետք է անուն փոխես:
- Ինչո՞ւ համար:
- Այստեղ սովորությունը այնպէս է, – պատասխանեցին խորհրդավոր ժպիտով մը:
- Ի վերջո հասկցա, որ լրտեսներն զգուշանալու համար այլ միջոցը ընտրած էին:

Տե՛ս «Տասմելցու տարի Պոլսեն դոլոս» (Օտյան, Եժ, հաստոր չորրորդ, էջ 90):

44 «Օթել Պարոն»-ի, մասնավորական Հովհաննես Մազլումյանի մասին հանգամանորեն տե՛ս Թոռոս Թորանյան, «Պատմություն Հալեպի «Օթել Պարոն»ի և Արմեն Մազլումյանի (Պարոն) նամականին», Պերով 1987: Գրքի «Երկու խոսք»-ում Թորանյանը գրում է. «Հեռու ափերն եկող հայր, կու զա տարբե՛ր զգացուներով, մանավանդ երբ իմացեր է թե անոր աստիճաններեն ելսէշեր է Գրիգոր Զոհրապ, Ուրֆայի ճամբուն վրա խոլխողվելու դրկվելեա առաջ, կամ մեր երկու մեծագույն երգիծաբաններեն մեկը՝ Երվանդ Օտյան» (Առյն տեղում, էջ 5):

Հայ լրտես մը իմ մասիս ժուռնալ մը տուեր է եղեր, որուն մեջ մանրամասն նկարագրված են եղեր հագուստներս և նույնիսկ կոշիկիս վրա գտնված կարկտանը» (217):

Աքսորի ընթացքում, երբ անդամ փոքրիկ հնարավորություն էր լինում «սեփք ըլլալու մղձավանջեն» ձերբազատվել (ինչպես օրինակ Համայում), Օտյան գրող-խմբագիրը շարունակում էր գրել. «Երբ ինքզինքս բավական ապահով գգացի, ժամանցի համար սկսա օրագրությունս գրել: Այսպես երեք տետրակ լեցուցած էի, որոնք խնամքով կը պահեի սենյակիս պատուհանին վերև գտնված խոռոչի մը մեջ» (226): Գերհամարձակ որոշում, որ իր իսկ բնորոշմամբ՝ հայտնի դառնալու պարագային կարող էր «...զիս Պատերազմական ատյանի միջոցավ կախաղան բարձրացնել» (245): Բարեբախտաբար մորեղբոր շնորհիվ ձերբակալություններից մեկի ժամանակ հաջողվում է ոչնչացնել այդ օրագրությունը, սակայն հավելում Աղետի ընթացքում գրողի անընդհատական կորուստների շղթան:

Աքսորի ընթացքում քիչ թե շատ տանելի օրերն ընդամենը դադարիկներ էին: Օտյանի Աղետի ընթացքը ձերբակալությունների, հարցաքննությունների, բանատից ոստիկանություն, ոստիկանությունից բանտ երթևեկի չդադարող շարան էր, աքսորի ճանապարհներին անընդհատ ահաբեկման և թալանի, բարոյական լլկման ենթարկվածի սադական ամենահամարձակ երևակայությունից անդին ձգվող դրվագներ:

Գոյութենական ողբերգության ցնցող վկայագրություններից է աղբահավաք աշխատելու դրվագը: Ընդամենը չորս օր տեսած աղբահավաքության պատկերը տարագրության ահոելիությունը վավերագրած ամենացնցող օրինակներից մեկն է եղեռնապատումի համապատկերում:

«Անիծյալ տարիներ»-ի շրջարկում ամենածավալուն վկայագրական հոսքերից է հեղինակի՝ գերմանացիների մոտ թարգմանիչ աշխատելու դրվագումները: Հուշագրության այս հատվածներն անգնահատելի աղբյուր են թե՛ տարագրության, թե՛ պատերազմի, թե՛ մայրամուտին մոտեցող կայսրության մանրամասների առումով:

Օտյանը հուշագրության մեջ ըստ ամենայնի վկայագրել է գոյութենական ողբերգության շրջանակի ողջ համածիրը, վերադարձումի «Հրաշալի ավարտի» անհնարինությունը. «Ուրիշ կայարանի մը մեջ... Հայ կաթոլիկ վարդապետ մը զիս փնտոեց գտավ:

Ինք այնպես լսած է եղեր թե Տեր-Զորի մեջ մեռած էի և երբ իմացեր է որ ողջ կը վերադառնամ, ուղեր է իր աչքերով ստուգել այդ լուրը:

Տեսակ մը Թովմաս առաքյալ» (525):

Դառնալ այնտեղից, որտեղից ընդհանրապես չեն վերադառնում, անցնել աքսորի դժոխալին ճանապարհը և կրկին հալտնվել դրա մեկնակետին՝ սա էր այլևս գոյության ներկայությունը, գոյություն, որ երբևէ չի վերջակետում անհծյալ ժամանակը, չի ավարտում ողբերգությունը:

\* \* \*

Երվանդ Օտյանի աքսորի երթուղու սոսկական արձանագրությունը միայն ցուցանում է գոյութենական ողբերգության իրապես համապատկերային բնույթը, Աղետի համընդգրկունությունը:

Աչափամիկ այդ անհօյալ երթուղին. Պոլիս-Գոնիա-Երելի-Պողանթի-Գավաքլը-Քյուլեկ Սթասիոն-Թարսուա/Տարսոն-Օսմանիե-Հասան Պեյլի-Իսլահի-Հալեպ-Մեպիլ-Շամ-Հալեպ-Շամա-Հալեպ-Մեսքենե-Համմամ-Զիպ-Նե-Թիպնե-Դեր-Զոր-Միատին-Էլ Պուսերա-Դեր-Զոր-Միատին-Էլ Պուսերա-Դեր-Զոր-Շմաթիա-Թիպնե-Մատեն-Մապքա-Համմամ-Ապու Հարար-Մեսքենե-Ասագ յուլ Տեքրե-Պլադ-Հալեպ-Իսլահի-Ենիճե-Տարսոն/Թարսուա-Ենիճե-Գոնիա-Եարմա-Սուլթանիե-Երելի-Գոնիա-Իզմիթ-Պոլիս: Անցնել այս հիրավի աներևակայելի տարագրությամբ, ապրել և վերապրել՝ առասպելական երեսությ է, ինքնին առասպելաբանություն, սակայն այնպիսի առասպել, որի մեջ ոչինչ չկա առասպել կոչվածի հորինվածքից, երևակայականից: Այն առասպել է՝ ամբողջությամբ կատարված, եղած լինելով, անգամ նվազագույն մասնիկի չափ հորինվածքով համեմված չլինելով, ավելին՝ եղածի, կատարվածի հապավումներով: Այս առումով ևս «Անիծյալ տարիներ»-ի վկայագրական արժեքն անբավելիորեն կարեռ: Այսպիսով Օտյանի հիշատակագրությունը Եղեռնը վերապրած մնացորդաց սերնդի ներկայացուցչի պատմությանը փոխանցած և՝ վավերագրություն է, և՝ փաստաթուղթ՝ այս հասկացության ամբողջական տարրողությամբ:

Օտյանի անձնական փորձառությունը Աղետի պարունակներում անընդհատական բանտարկությունների և աքսորից փախուստի դիմելու շարք է: Զերբակալություն ու բանտարկություն և փախուստ կամ փախուստի փորձ՝ աչասույն հիշատակագրության համագիրը կազմաբանող առանցքը: «Անիծյալ տարիներ»-ի շրջարկում հեղինակը հիշատակագրում/վկայագրում է բանտարկությունների վեց և աքսորից փախուստի դիմելու չորս պատումներ: Պատումներ, որոնք արդյունքում հուշարկում են նրա և ճակատագրով նրա հետ միասին եղածների Աղետի, աքսորի տարեգրությունը<sup>45</sup>:

Եվ այսպես, 1915-ի օգոստոս 25-ին մորեղբորը և հաջորդ առավոտյան հորագրողը՝ Եվգիմեն Օտյանին այցելելուց հետո. «Կարծես բնագղական գրգիռ մը կար ներս որ զիս կը մղեր երթալ ազգականներս տեսնելու» (115), Նշան Պապիկյան գրատուն, հետո խմբագրություն գնալուց հետո, օգոստոս 26-ի երեկոյան Օտյանը գնում է Շիշլի իր տուն և տառացիորեն ննջասենյակ մտնելու ժամանակ գրողին տանում են դեպի աքսորի պարունակներ: Սկսվում է ձերբակալությունների, հարցաքննությունների և տարբեր բանտերում խցարգելման շարանը: Որտեղ ասես որ չի բանտարկվում Օտյանը, ինչ պայմաններում ասես որ չի լինում, այս ու այն բանտում ում հետ ասես որ չի հանդիպում: Հուշագրության մեջ առկեցուն են թղթական բանտերի ու բանտարկյալների ուշագրավ,

45 Ի դեպ, «Անիծյալ տարիներ»-ի տարեգրության մասնահատուկ բնույթն ու տարերքը նույնակա սույն հիշատակագրության արժեքայնության կարևորագույն բաղադրատարրերից է:

կանվանեի դետալային մանրամասներ և նկարագրություններ, առանց չափազանցության՝ փորձագիտական մակարդակի<sup>46</sup>: Հարցաքննություններ՝ կարճառում և երկարատև, որոնց ընթացքում հիշատակագրվում են Աղետի և աքսորի բազմաթիվ և բազմաբնույթ փաստեր և իրողություններ:

Նույն է պարագան փախուստների հիշատակագրական/վկայագրական հոսքերում: Ինչպես վկայությունների պատումային մյուս դրվագումներում, այնպես էլ խնդրո առարկա այս չորս հոսքերում ըստ ամենայնի համապատկերված է Եղեռնի, աքսորի և տարագրության արմագեղոնային կենսոլորտը:

1915-ի սեպտեմբեր մեկին Օտյանը սկսեց իր անիջալ ճանապարհը աքսորի պարունակներով և այդ օրվանից անընդհատ կամ փախուստի փորձ էր կատարում և կամ փախուստի դիմում: Այս անընդհատական փախուստը գոյութենական ողբերգության շրջապտույտում նզովյալությունից չխենթանալու հրամայականով էր պայմանագործած:

Հատկապես ցանկանում եմ առանձնացնել երկրորդ փախուստի հոսքը (Էլ Պուսերայից դեպի Բաղդատ փախուստի փորձի նկարագրությունները), որը թերևս գրողի Գողգոթյաի գագաթնակետն է. «Աքսորանքիս մեջ առաջին անգամ ըլլալով, հուսահատությունն ու լքումը կը տիրեր վրաս: Կը մտածեի թե ուժասպառ հո՛ն, ցախաստանին մեջ պիտի մնամ ու ջագալներուն կեր ըլլամ և բարձրածայն «Ա՛լ կ'օգտե, ա՛լ կ'օգտե» կը պոռայի, խոսքս ուղղելով չեմ գիտեր ինչ անգորույն աստվածության մը» (313): Օտյանը ամենայն հավանականությամբ երեսակայության սահմաններից դուրս միայն իրեն հասու անդենական ուժով և կամքով հաղթահարեց այդ հուսահատությունն ու լքումը և 1918-ի մարտի 10-ի կիրակի գիշերն իր աքսորյալ ընկերների հետ ձեռնարկեց վերջին փախուստը:

Բանտարկություններից ու փախուստներից հետո, երբ դժոխքից ազատագրվելու այնքան բաղդալի «ինդուկտենցիա» վեսիքան (անցաթուղթը) վերջապես Օտյանը չէ թե ձեռք էր բերել, այլ իր հզոր նկարագրով նվաճել էր, վերջին, իր խոսքով՝ հանդուրգն գաղափարն է իրագործում՝ որբ մանուկներից մեկին «...հետս առնելու և Պոլիս բերելու» (511): 10-11 տարեկան իզմիթցի Հակոբը, ում ծնողները եղեռնամահ էին եղել, Օտյանի ընկերակցությամբ վերադառնում է դժոխքից: Այս փրկագործական խորհրդով Օտյանը դնում է գոյութենական ողբերգության իր վկայագրության կախման կետերը, հատուկ հոչակագրելով այս ողբերգության անհունությունն ու անսահմանությունը. «...հակառակ գլխիս անցած զանազան փորձանքներուն, ամենեն բարեթախտ տարագիրներեն մին եղա, մյուսները, այր թե կին, ինե շա՛տ ու շա՛տ ավելի տառապեցան ու չարչարվեցան» (531):

46 Արավասիկ դրանցից մեկը. «Երեք տարիեւ ի վեր շատ բանտերէ անցած էի, բաց երեք չէի տեսած այնքան զզվելի, այնքան գարշահոտ արգելարան մը որբան Սուլթանինի այդ բանուց: Գողմայի Սիստիքլին դրախտ մըն էր ասոր քով: Այդ մովթ ու փոքր ծակին մեջ խճողված էին քառասումն ավելի բանտարկալներ, ամենքն ալ գող, ավագակ, ոճրագործ և շատերը շղթայակապ, այնպես որ շղթաներու ձայնը կը լսվեր ամեն վայրկյան» (484):

\* \* \*

«Անիծյալ տարիներ»-ի համագրում անչափ կարևոր է (ինչն, ինչպես արդեն քանիցս արձանագրվել է, Օտյանի խնդրո առարկա գործի արժեքը այսօրինակ հուշագրություններում շահեկանորեն մատնանշում է) զոլոտենական ողբերգության այլակենտրոն վկայագրությունների պարագան: Այսինքն՝ Օտյանը Աղետի և աքսորի անձնական փորձառությանը գուգահեռ անձնական հուշերում պատմում/հիշատակագրում է իր հետ դժոխային պարունակներով անցածների, իր բախտակիցների գոլոտենական ողբերգությունը, դրվագում պատերազմի մեջ գտնվող կայսրության տարբեր տրամաչափի գործիչներից ու աստիճանավորներից, պաշտոնյաններից, կայսրության դաշնակիցներից (գերման զինվորականության հուշակնարկներն օրինակ), մինչև այդ նույն կայսրության տարբեր ազգությունների (արաբներ, քրդեր, չերքեզներ, եգիպտիներ, Հույներ, այլք) ներքին կյանքը, եթե կուզեք՝ բարքագրությունը՝ նզովյալ ժամանակներում: Ո՞չ այս և ո՞չ էլ վարընթաց էջերում խնդիրների լուսաբանության պարագային ցանկություն չունեմ վերապատմել այն, ինչ ընթերցողը կկարդա, պարզապես հարկ եմ համարում ընդգծել, որ նաև այս առումով գրողի հիշատակագրության վկայագրական արժեքը հույժ ընդգծվում է:

«Անիծյալ տարիներ»-ը իրապես ընկալվում և ըմբռնվում է իբրև Աղետի, աքսորի համապարփակ նվաճում: Ավելորդ է արձանագրել, թե ի՞նչ վիթխարի աղբյուրագիտական, մշակութաբանական, հոգեբանական, հասարակական-քաղաքական, իրավական նշանակություն ունի այս համապարփակությունը Եղեռնի վկայությունն-հուշապատումներում: Ընթերցողը օտյանական հիշատակագրության մեջ այսօրինակ բազմաթիվ վկայագրությունների կհանդիպի: Պարզապես ճեղով հիշատակեմ Համայում հայերին իսլամացնելու դրվագումը, ինչն իր հոգեբանական, բարոյական, անգամ կենսափիլիսոփայական լայնածիր արտահայտություններով ու դարձդարձումներով մեր ինքնության և պատմության կատարյալ մանրակերտն է: Իրողությունը փաստարկելու համար առանց ծավալուն մեկնաբանության երկու մեջբերում կատարեմ. «Տուներու մեջ խորհրդակցությունները կը շարունակվեին տենդային կերպով: Շամեն, Հոմսեն լուր կը հասներ թե հոն գտնվող հայերը սկսած են խմբովին կրոնափոխ ըլլալ ճնշումի ներքե:

Համայի մեջ երկու հոսանք կար, մեծամասնությունը կ'ուզեր գլուխը ազատելու համար ընդունիլ իսլամությունը, իսկ փոքրամասնությունը կ'ուզէր դիմադրել ճնշումին:

Բայց նույնիսկ իսլամանալու տրամադիրները շատ մեծ տագնապի մատնված էին, մանավանդ անոնք որ հասուն աղջիկներ ունեին: Կը վախնային որ այս կրոնափոխության հետևանքը պիտի ըլլար խառն ամուսնություններ, ինչ որ կը սարսափեցներ զիրենք» (231): Անգամ աքսորի մեջ կյանքը պահպանելու համար այս կեղծ իսլամանալու դրվագումներում մանրակերտվում է մեր պատմությունը, ինքնությունը: Ահավասիկ. «Ամենեն դժվար եղավ սամսոնցի կիներուն իսլամացումը: Ասոնք մինչև վերջին վայրկյանը մերժեցին հավատափոխ

ըլլալ և պատրաստակամություն հայտնեցին անապատը տարագրվելու:

... – Մենք եթե պիտի տաճկանայինք գոնե այսպեսով մեր ամուսինները ու զավակները կը փրկեինք, – կ'ըսեին, – անոնք իրենց կյանքը զոհեցին, որպեսզի մենք կրոնափոխ չըլլանք...» (234): Հիրավի XX դարում Եղիշեի մատյանի հանդույն վկայագրություն:

Եվ կամ աքսորի դարձին, ինչպես հեղինակն է բնութագրում իր «բարոյագիտական փոքրիկ դասի» դրվագը տարագրության ժամանակ անառակությամբ կյանքը պահպանած հայ կնոջը, որ ապրելու համար Գոնիայում գտնվող շատ հայ կանանց նման «Կա՛մ հանրատուն մը գացած և կա՛մ սիրահար մը առած նստած» էին: Այս «դասը» գոյութենական ողբերգությունը, անիծլալ ժամանակի նզովյալությունը, դրա անդարձությունը ցեղասպանություն տեսածների և ապրածների պարագային պարզապես գերաստիճանի է հասցնում. «– Ալ շատ ուշ է, – պատասխանեց թշվառ կինը, – բանը բանեն անցած է... երեք տարի այս կյանքը վարելես ետքը, ո՞վ կը նայի երեսս...: Տե՛ս, ես պանտրոմացի պատվավոր ընտանիքի աղջիկ մըն եմ, բայց հիմա չեմ համարձակիր տեղս դառնալ, որովհետև հիմա ամոթ կը զգամ իմ ազգականներուս և բարեկամներուս երեսը նայելու...» (522): Դժոխքն անցած մարդը պահպանել է բարոյականությունը, փրկագործում է բարոյականությունը՝ մնալով «զահանդեցնող» պարունակների տիրույթներում: Կա՞ արդյոք սա ըլջանցնող գոյութենական ողբերգության այլ դրսերում, հավանաբար՝ ո՞չ:

Աչա այսպես է Երվանդ Օսյանը «Անիծյալ տարիներ»-ում դրվագում Աղետը և Աղետի մարդկանց ու ժամանակը, հիշատակագրում/վկայագրում կատարված դժոխքի բոլոր գերակատարներին, ցուցանում դրա բազմադիմությունը՝ եղեռնամահ եղած և տարագրությունն ու աքսորը անցած, հրաշքով վերապրած ազգային-քաղաքական գործիչներ, մտավորականներ, հոգեորականներ<sup>47</sup>, հարյուրավոր անվավեր նահատակներ ու տարագիրներ, կայսրության թուրք և արաբ գործիչներ, պաշտոնյաներ, գահիծներ, ստահակներ, մատնիշդաշներ, արկածախնդիրներ, իրենց անձը վտանգի ենթարկող անձնազոհ հայ և օտարազգի մարդիկ, որոնք անգամ այդ գժոխայինն կենսոլորտում բոլոր պարագաներում պահպանեցին բարոյականություն, գութ, խիղճ:

Աղետի այլակենտրոն վկայագրությունների դրվագումներում հանդիպում ենք բազմաթիվ ինքնին հետաքրքրական փաստերի, մանրամասների, որոնց մասին այլ աղբյուրներից գրեթե ոչ մի հիշատակագրություն չունենք: Ինչպես օրինակ Ուկան Մարտիկյանի Պոլսից վերջնականապես հեռանալու դրվագումը և կամ Պիեռ Լոթիի հետ մենամարտած բուլղարահայ զինվորական թորգոմի

47 Օտյանի հիշատակագրության մեջ հակալական է զանազան դեմքերի վկայագրությունը: Ընթերցողը նրանց կիսամիայի «Անիծյալ տարիներ»-ի համագրով մենք: Համընդորկումը նշագրելու համար ստորև պարզապես թվարկեմ հուշագրության մեջ ակնարկված և այս կամ այն չափով դրվագված հոգևորականներին: Աղեքսանդր (հովան վարդապետ), քահանաներից՝ տեր Արսեն, Դպիրյան տեր Դավիթ, Թավության տեր Ներսես, տեր Վարդան, տեր Գալուստ, տեր Հարություն, տեր Հակոբ, Գարեգին վարդապետ, Հովհանն վարդապետ, Ստեփանեան եպիսկոպոս Հովհաննեան, պատվելի Գոռլյան, պատվելի Նոհուտյան, Գրիգորիս վարդապետ Պալաֆյան, Զավեն Պատրիարք, Մաղաքիս Օրմանյան, Կոմիտաս...

գաղտնի Պոլիս գալու, նաև Օտյանի աջակցությամբ կրկին անլեզալ հեռանալու և հայ կամավորական զորագնդերին միանալու մանրամասները։ Գարեգին վարդապետի՝ էնվերին ուղղած երկու հեռագիրների հետ կապված ուշագրավ մանրամասները, Շալվարճյան եղբայրների, «Պարոն օթել»-ի՝ Մազլումյանների պարզապես հերոսական գործունեության մանրամասները։

Աղետի և աքսորի այլակենտրոն վկայագրություններում ամենածավալունը Օտյանի հետ անմիջականորեն տարագրության պարունակներով անցած ընկերախմբի հիշատակագրության հոսքն է։ Գրողն ըստ էության ունեցել է նմանօրինակ երկու ընկերախմբմբ։ Աքսորի սկզբին՝ Սեպուհ Ակունին և Ներսես Զաքըրյանը, իսկ հետո (ավելի երկար ժամանակահատվածում, կարելի է ասել գրեթե աքսորի ողջ ընթացքին) մորեղբայրը՝ Քերոբե Ասլանյանը և Քեշիշյան Գեորգը կամ Քեշիչ օղլուն ու նրա ընտանիքը, Միքայել Մորճիկյանը։

Տարագրության պարունակներում, ինչպես արդեն ասացի, Օտյանը հանդիպել է շատ ու շատ մարդկանց, ներառյալ գործընկերներին։ «Անիծյալ տարիները»-ում հիշատակագրված են այդ հանդիպումները, դրվագված նրանց կողմից հեղինակին պատմած իրենց աքսորի անցքերից շատերը։ Պարզապես այստեղ թվարկեմ դրանցից մի քանիսը. Աբեկ Մուռահեաճյանի, Արամ Անտոնյանի<sup>48</sup>, Լևոն Մողյանի (հիշատակագրության այս շերտին գեռ կանդրադառնամ) տարագրության դրվագումներին։

«Անիծյալ տարիներ»-ի շրջարկում հիշատակագրվում են տարագրության տարբեր վայրերում, ճանապարհներին, բանտերում և ոստիկանատներում հեղինակին հանդիպած բազմաթիվ բախտախնդիրներ, հանցագործներ, արկածախնդիրներ, դափաճաններ և լրտեսներ։ Պարզապես ցնցող են մատնիչ/դափաճան Սանթուռ օղլի Արամի նկարագրի և արարքների վկայագրությունները։

Օտյանը հրաշալիորեն պատմում է նաև օտարազգի իր բախտակիցների տարագրության մանրամասները, ինչպես օրինակ Հույն երիտասարդ Անտոն Սավայի սրտառուչ պատմությունը, Հույն խմբագիր Ավրամիտեսի հետ անցկացրած օրերը։

Հիշատակագրության մեջ նա անթաքույց համակրանքով է խոսում այն արար պաշտոնյաների մասին, որոնք իրենց ջանքերն ու կարողականությունը օգտագործում էին մեղմելու համար տարագիր հայերի զրկանքները, օգնում նրանց սովորական չլինելու, պատսպարում՝ անապատի խորքերն ուղարկվելուց։ Այդօրինակ վկայություններից հիշենք Դեր-Չորի գինորական աշխատանոցի պաշտոնյա Սեիդ Համիդ պեյի, հարյուրապետ Ահմեդ Մուխթարի դրվագումները։

\* \* \*

«Անիծյալ տարիներ»-ի բնագրային կերպը կարելի է առանց վարանելու արձանագրել՝ անխառն, սկզբունքային վկայագրական է։ Պատմասանը հիշատակագ-

48 Օտյանը նոյնապես պատմում է Անտոնյանի՝ հրաշքով եղեռնամահ լինելուց փրկվելու նշանավոր պատմությունը։ Անտոնյանը Զամկորիից էտապի ժամանակ կառքից ընկնամ է և աջ ոտքը կոտրում, այդ պատճառով նրան տեղափոխում են Անկարա, հիվանդանոց և պայիստով նա խուսափում է սուսպահությունը։ Այս հիշատակագրությունը գտնում ենք Եղեռնին նվիրված շատ վկայություններում։ Օրինակ Պալաքանի մոտ (տե՛ս Հայ Գողգոթան, էջ 136):

ըում է Աղետի և աքսորի պատումը միմիայն այդ անհծալ ժամանակի ամենատարբեր կերպի վկայություններով՝ դրվագում<sup>49</sup>, արձանագրություն, կատարվածի առանց «գրական մշակման», ուղղակի փոխանցում:

Հայ գրականության ամենահմուտ պատմողն այս հուշագրության մեջ ցուցանում է վկայագրական պատմասանության իր շնորհը, անգերազանցելի վարպետությունը (տեխնիկան): Վավերագրական պատումը նույնքան դինամիկ է, ամբողջական, ինչպես իր թերթոն վեպերում: Հուշագրության արձանագրային կառուցման սկզբունքն իրացվում է երկխոսությունների շարքերով, «թողնել/դառնալու» եղանակի հաճախակի կրկնություններով՝ երբ պատմասանը վկայագրության մայրուղուց «Հեռանում» է» լրացուցիչ կամ կողմնակի դրվագներով, կամ լրացական գործառություն ունեցող հոսքերով: Այս պարագային պատահական չեն «Անիծյալ տարիներ»-ում «Դառնանք մեր պատմության» տիպի պարբերական նշագրությունները, կրկնություն/վերահիշեցումների, հավելումների հանգամանքը:

Ինչպես արդեն արձանագրել եմ սույն նոթերի մեջ «Անիծյալ տարիներ»-ը ունեցել է այլագոյացումներ, այսինքն՝ հիշատակագրության հավելումներ: Ընդ որում թե՛ խնդրո առարկա գործից առաջ, թե՛ հետո գրված: Այլագոյացումներ, որոնք օգնել են օտյանագիտությանը «վերականգնելու» հուշագրության «կորուստը»: Պատահական չէ, որ այս բնագրային այլագոյացումները շրջառվել են Օտյանի կյանքին և գործին նվիրված գրեթե բոլոր ուսումնասիրություններում և մենագրություններում:

«Անիծյալ տարիներ»-ի այսպես կոչված այլագոյացումները, կամ անվանենք Աղետի և աքսորի հավելյալ վկայագրությունները գերազանցապես լույս են տեսել թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ներում և «Շանթ» հանդեսում: Այսպես, «Ամենուն տարեցույց»-ի 1916-1920-ի հավաքածում<sup>50</sup> «Արշալույսին մայրը» վերտառությամբ լույս է տեսել «Անիծյալ տարիներ»-ի թերևս ամենանշանակալի հավելում/այլագոյացումը, որը հիշատակագրության «Տեր-Զորի մեջ» գլխից արտածված նշանակալի ներփակ դրվագում է: Ահավասիկ այն ամբողջությամբ. «Տեր Զոր կամ ավելի ճիշտ Տեր Էզզոր, կը գտնվի Եփրատի ձախ եզերքին վրա, Սուրբի հողամասին մեջ: Եփրատի աջ կողմը կը տարածի Միջագետքը: Ճիշտ Տեր Էզզորի դեմք, Եփրատի մեջ կը գտնվի բավական ընդարձակ կղզեակ մը, պարտեզներով ու տուներով: Երկու կամուրջներ այդ կղզյակը կը կապեն ցամաքին: Այսպես ուրեմն, քաղաքն Միջագետք անցնելու համար հարկ է նախ անցնիլ փոքր կամուրջն մը, հետո կղզյակն և ապա մեծ կամուրջն: Երկու կամուրջներուն գլուխը, կղզյակին կողմը կան պահականցներ, և սվինավոր ոստիկաններ միշտ կը հսկեն անցորդներուն վրա: Արաբները ազատորեն կերթնեն այդ կամուրջներն, բաց հայերուն բացարձակապես արգիշված է առանց վեսիքայի կամ մասնավոր արտոնությամբ անցնիլ մեծ կամուրջն:

Գերմանները երբ հանգրվան մը հաստատեցին Տեր Էզզորի մեջ, ուզեցին անմիջապես ամեն հեռագրի կալան մը ունենալ, և ստոր համար ընտրեցին Միջագետքի եզրը՝ մեծ կամուրջին մոտ տեղ մը, ավագուտ անապատին մեջ: Ես այդ միջոցներուն գերման հանգրվա-

49 Վկալագրության պատունատեղծ գերակալություններից են ալպես կոչված «լոկալ դրվագների» հոսքերը: Թվարկեմ դրանցից մի քանիսը՝ մտավորականների զանգվածային ձերբակալությունների, Զավեն Պատրիարքի, բժիշկ Պողոսյանի, Մարիցա Մարյանի, Լևոն Կոշկարյանի, Սահակ Մեսրոպի, արաք գնչուի հայ Կնոջ, Բարյուրապետ Կերմարդի հոսքերը:

50 Տես 65-67-րդ էջերը:

Աղ կը գտնվեի իբրև զինվոր և իբրև թարգման: Ինձի վիճակված էր ամեն օր, երբեմն օրը երկու անգամ, անթել հեռագիրի կայանը բերել դրկվելիք հեռագիրներու պատճենը: Բնականաբար անարգել կ'անցնեի կամուրջներն, քանի որ պահակ ոստիկանները կը ճանչնային զիս և զիտեհն պաշտոնական դիրքա: Անթել հեռագրի կայանին մոտ կը գտնվեին մեկ քանի արաբական վրաններ: Օր մը, երբ գործն ավարտած՝ կը վերադառնայի կայանն, այդ վրաններն կին մը դուրս ելավ և արագ քայլերով մոտեցավ ինձ:

— Դուն հայ ես, ամպես չե՞—, հարցուց հայերնեն:

— Այո՛,— պատասխաննեցի, — իսկ դուն ո՞ւր տեղացի ես:

— Խարբերդի եմ, — ըսավ կինը, — ամեն օր կը տեսնեմ քու հոս գալ երթալդ և դեմքեն գուշակեցի որ հայ ես... խնդիրը մը ունիմ, Աստուծո սիրում մի՛ մերժեր:

— Ըսե՛ տեսնենք...:

Եվ պատմեց: Հազարավորներու սովորական պատմությունն էր: Խարբերդին տեղահան եղած էին. ամուսինը ճամբան սպաննած, մանը զավակն ալ քյուրտերը հափշտակած: Հազիվ հաշողած էր երկու աղջիկները ազատել, որոնցմտ մին մնուած էր թիֆյուսե:

— Մեկ հատիկ աղջիկս մնացած էր քովս, — շարունակեց, — 12 տարեկան Արշալուս, աշխարհի մեջ իրմեն զատ ալ մեկը չունեի... ջարդեն հրաշքով ազատեցանք, միասին Մարտաթ կը գտնվեինք, հոսկէ 2-3 ժամ անդին. անդին մնացինք, ա'լ ճարս հատավ, աղջիկս առի եկա Տեր Զոր երթալու համար ուր կը հոսապի գործ մը գըտնել: Կամուրջեն անցա, երբ մյուս ծալքը հասա՞ ոստիկանները կասկածեցան, մեզի բռնեցին, հարցաքննեցին, և երբ տեսան որ հայ էի՛ աղջիկս ձեռքեն առին ու զիս ես դրկեցին... Աստուծո սիրում աղջիկս ազատե՞ այդ մարդոց ձեռքեն, իմ աղվոր հրեշտակս մի՛ ձգեր այդ հրեշմերուն քով...

Եվ խեղճ մայրը դատնորեն արցունք կը թափեր:

— Բաց ես ի՞մ կրմամ ընել, — կմկնացի հուզված ու շվարած:

— Դուն գերմանացիներուն հետ հարաբերություն ունիս. կը տեսնամ կոր, ամեն օր հոս կու զաս կ'երթաս, անոնց ձեռքով կրնաս քան մը ընել:

Թշվառ կինը ինձի կը վերագրեր կարողություն մը զոր չունեի, ափսո՞ս: Այսուհանդերձ քանի մը հոսատու խոսքեր ըրի և հեռացա քովն: Հետևյալ օր նորեն եկավ քովս:

— Գերմանացիները չեն ուզեր միջամտել, — ըսի, — սպասե՞ տեսմենք, ուրիշ հնարք մը կը մտածենք...:

— Բայց չեմ կրնար սպասել, — բացագանչեց, — այս արաբներուն քով կը ծառայեմ չոր հացի մը փոխարեն, և 1-2 օրեն վրանը պիտի քակեն ու մեկնին... ստիպված եմ կա՞մ հետերնին երթալ, կամ...:

Խոսքը չավարտեց:

Ի՞՞մ կրնայի ընել այս թշվառ կնոշ համար: Վերադարձիս պահակնոց մտա և հարցուցի թե 12 տարեկան Արշալուս ամուս աղջկան մը մասին տեղեկություն ունեի՞ն:

— Աստանկ աղջիկ չենք ճանչնար, — գոչեց ոստիկան մը կոշտությամբ:

— Ի՞՞մ պիտի ընես, — հարցուց ուրիշ մը, քիչ մը ավելի քաղաքավար:

— Իր մորենքայրն եմ, իմացա որ ձեր քովը կը գտնվի եղեր, կ'ուզեմ քովս առնել:

— Քեզի սիսալ տեղեկություն տվեր են, — պատասխանեց ոստիկանը:

Հետևյալ օրը ոստիկաններուն հետ ունեցած խոսակցությունն պատմեցի խարբերդի կնոշը: Տարտամորեն երես կը ճայեր, առանց կարծեն հասկնալու ըսածս: Մյուս օր երբ, ըստ սպիրության, զացի անթել հեռագրի կայանը, անհայտ եղած էին արաբական վրանները: Գերման սպան որուն հանձնեցի հեռագիրները աղճատ ֆրանսերենով մը ըսավ.

— Այս առտու կին մը ինքանքը գետը ձետեց ու խեղովեցավ. աշխատեցանք ազատելու, բայց ամկարելի եղավ. կամուրջին ճիշդ մեջտեղեն նետվեցավ, հո՞ն ուր ջուրը շատ խորէ և հորձանքը զորավոր:

— Ո՞վ էր այդ կինը, — հարցուցի հուզված ձայնով մը:

— Այս կինը որ քանի մը անգամ քեզի հետ տեսնվեցավ, ինչպես նշմարեցի հոսկե: Արշալուկին մայրն էր»:

«Ամենուն տարեցուց»-ի 1922-ի հավաքածուում «Տառապանքի մեջ սպեղանի»<sup>51</sup> վերտառությամբ Օտյանն ուշագրավ հավելում է արել հատկապես Մարտիրոս Շալվարճյանի վկայագրական հոսքում:

Հիշատակագրությունների այսպես կոչված այլագոյացում-վկայագրությունների շարքում անպայմանորեն պետք է առանձնացնել Արամ Անտոնյանին<sup>52</sup> և Սահակ Մեսրոպին նվիրված հավելումները, որոնք Օտյանը տպագրել է «Շանթ» հանդեսում<sup>53</sup>:

«Անիծյալ տարիներ»-ը, կարծում եմ, որոշակիորեն աղբյուրագիտական դերակատարություն է ունեցել Երվանդ Օտյանի վիպահեղման երկրորդ՝ 1918-1924 թվականներն ընդգրկող շրջանի համար: Վկայագրություն/Հիշատակագրության մի քանի հոսքեր ճյուղագորվել-ծավալվել են (անշուշտ վիպային փոխաձևության ենթարկվելուց հետո) նշված ժամանակահատվածում գրված թերթուններում ըստ այդմ պայմանագորելով խիստ յուրահատուկ միջդրային համադրություն<sup>54</sup> գրողի ժառանգության համապատկերում:

Այսպես, Ասսատուր Տեր-Մատթեոսյանի արկածախնդրական գործունեության դրվագումների հոսքը պայմանագորել է «Նոր Հարուստներ», «Թիվ 17 խաֆիեն», «Կանաչ Հովանոցով կինը», «Կավէ Հերոսներ կամ մեր ազգային ները» թերթուններում պատկերագրված արկածախնդիրների պատումային հոսքերը: Մատնիչներ և դավաճաններ Թագվոր Մանուելյանի, Զիայի և հատկապես Արշավիրի վկայագրական հոսքերն ըստ ամենայնի վիպայնացվել են «Թիվ 17 խաֆիեն», «Կանաչ Հովանոցով կինը», «Վրեմը», «Մատնիչը» ստեղծագործություններում:

Աքսորում Օտյանը վերջին ձերբակալության ժամանակ հանգրվանում է նաև 17 համարի սենյակում: «Երկու ժամեն ավելի տեսած էր հարցաքննությունը և Մեհմեկ Ալի ամբողջ երեսներ լեցուցած էր:

Հարցաքննությունս ստորագրել տվավ ինձի, հետո ոստիկան մը կանչեց և ըստ:

— Թիվ 17 սենեակը տար այս մարդը և հոն բանտարկե» (425): Ինձ թույլ եմ տալիս ենթադրել, որ 17-ի՝ իբրև չարագուշակ խորհրդանիշի ընտրությունը

51 Տե՛ս նշվածի 113-114-րդ էջերը:

52 Արամ Անտոնյանի պարագային անպայմանորեն պետք է հիշատակել 1917-ի ապրիլ 5-ի՝ Համայից Օտյանի Ազիզ Նորի ստորագրությամբ նրան ուղարկած նամակը, որ լուս է տեսել Փարիզում 1927-ին (տե՛ս «Ֆրանսահայ տարեգիրը», էջ 199-200, նաև՝ Երվանդ Օտյան, «Նամակներ», էջ 23-24: Ինչպես նաև Արտաշես Վանարյանի «Մեր տեսակցությունները. Երվանդ Օտյան» հոդվածի համապատասխան հատվածը («Շանթ», 1919, թիվ 16, էջ 188):

53 Տե՛ս «Վերապրողները. Արամ Անտոնյան», 1918, թիվ 5, էջ 55-57, «Վերապրողները. Սահման Մերուպ», 1918, թիվ 7, էջ 83-84:

54 Հարկ եմ համարում արձանագրել, որ միջգրային իրողությունների եզր հանդիպում նաև Օտյանի նախադեսուած ժառանգության, մասնավորապես «Մեր երեսփոխանները» դիմանկարների շարքի թետ: Այսպես, «Անհջայ տարիներ»-ի շրջարկում գտնում եզր հիշատակված շարքում զետեղված բազմաթիվ դիմանկարների ուշագրավ, պայմանականորեն անվանենք՝ շարդւնակությունները, ինչպես, օրինակ, Զոհրաբի, Հարություն Շահրիկյանի, Ներսես Օհաննանի, Ուկան Մարտիկյանի, Արիստակես Գասպարյանի, Պարգև Փափազյանի պարագային:

(Հիշեցնենք 17 թիվ-ծածկագրով հանդես եկած լրտես-դավաճանի պարագան «Թիվ 17 խափիեն» վեպում) ուղղակիորեն ազդակվել է «Անիծյալ տարիներ»-ից:

Վերջապես «Անիծյալ տարիներ»-ի և վիպագրության միջգրային ընթերռումների պարագային անպայմանորեն պետք է արձանագրել հուշագրության վկայագրությունների մի շարքի վիպայնացրած փոխաձեռությունները «Ընկեր Փանջունի»-ի «Փանջունին տարագրության մեջ» բաժնում՝ ինչպես Օտյանի՝ դեպի Սինծեր լեռ եղիդիների մոտ փախուստի, Անտոնյանի տարագրության մանրամասների և իհարկե Լևոն Մողյանի վկայագրական հուքի (հատկապես լաստով փախուստի փորձի, հալածանքներից խուսափելու, ուտելիքի փնտրտուքի դրվագումները) ներհղումները վեպի համագրում:

## ՀԱՅ ՎԵՊԻ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԵՎ ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԸ

Սույն գրությունը ստորոգելի է օշականյան ընթերցումների կենսոլորտում, հար և նման այն բոլոր ուսումնասիրությունների, որոնք առկայի ված են կամ կախակայված, որովհետև Հակոբ Օշականի բնագիրը (հիմա և հետայսու՝ վեպը) դիմորոշում է գրականագիտական մի հսկայական ժամանակաշրջանի ճակատագիր՝ անկախ օշականամենտ կամ օշականախույս լինելուց, գրականության պատմության մեջ սրբացվելուց կամ հերձվածողի բանդագուշանքից, հպանցիկ անդրադարձից կամ անտեսումից, քանի որ հայ գրականության պատմության առարկայական բնույթի համասերից է այն, 20-րդ դարի գրականության բյուրեղացումներից և, եթե գրապատմական աքսիոմ է, թե Օշականի գեղարվեստական ժառանգությունը ներառնում է նորագույն շրջանի հայ գրականության ժանրային, հղացքային, գեղագիտական, ոճական ողջ երփնագիրը, բնույթով այցեքարտային է, հանրագիտարանային՝ թումանյանի, Զարենցի համանունությամբ, ապա միանշանակ է արդի գրականագիտական մտքի կողմից օշականյան բնագրին ներընկալման, վերլուծական հանդիպադրման հրատապությունը՝ վերջապես թոթափվելով գեղարվեստական երկի վերլուծության արժեքայնության մեթոդաբանության ենթակայությունից ու ենթակարգությունից և բենովելով բնագրի, գրական երևույթի և գրականության պատմության գոյաբանությունը ներզորոց մեկնաբանության տիրույթներում։ Տվյալ գեպքում հետազոտական տեսանկյունը հանգուցվում է 20-րդ դարի հայ գրականության պատմության կայացման և ընթերցման շրջանակում՝ ի մասնավորի հայ վեպի ձևաբանության և Հակոբ Օշականի վիպագրության խնդիրներին, ուր տեսական-մեթոդաբանական ելակետային հանգամանքներ ունեն հետեւյալ իրողություն-հարցագրումները՝ առաջին՝ 20-րդ դարի հայ վեպի ձևաբանության (համաժամանակյա և տարժամանակյա) կազմակերպող-հատկանշային տեսակն ու Օշականի «արտեֆակտային» հանգուցը, 2-րդ՝ Օշականի վեպի՝ իրեկ տեսակային վիպասանության հակագդեցություն, 3-րդ՝ Օշականի վիպագրության կենտրոնացումն՝ որպես արևմտահայ-սփյուռքահայ վեպի տեխնիկայից հայաստանյայց վեպի կառուցողականություն, 4-րդ՝ վեպի օշականյան կառուցյն իրեկ 20-րդ դարի հայ գրականության օջախ-կենտրոններից, 5-րդ՝ Հակոբ Օշականի վեպի ձևաբանության հարցացույցն՝ իրեկ 20-րդ դարի հայ գրականության ուսումնասիրության կողմնորոշչիչներից։

20-րդ դարի հայ վեպի ձևաբանության (համաժամանակյա և տարժամանակյա) կազմակերպող-հատկանշային տեսակն ու Օշականի վեպի «արտեֆակտային» հանգուցը: – Մինչ 1928 թվականը (այդ թվին լույս տեսավ Օշականի առաջին՝ «Ծակ պտուկը» վեպը) ազգային վիպասանությունը պարփակված էր ձևաբանական մի տարողունակ մողելի մեջ՝ Աբովյան-Մամուրյան-Պոռշյան, Ծերենց-Րաֆֆի-Կամսարական-Շիրվանզադե-Նար-Դոս, Երուխան-Զապել Եսայան, Զիփթե-Մարաֆ-Երվանդ Օտյան առանցքների շուրջ: Մնացյալ բոլոր անունները, ստեղծ-

ված բոլոր վեպերը այս առանցքների գոյացումներից են՝ ժամանակադրական նախորդություններով և հաջորդություններով, կանոնագրվել ու ամրագրվել էր և ցարդ շարունակվում է կազմակերպող-հատկանշային միևնույն տեսակի գոյությունը՝ ներժանրային համակարգով, ազգային վիպասանությունը պայմանավորող տարրերի բավարար քանակությամբ: Բացակայում էր, պարզապես գոյություն չուներ որևէ ստեղծագործություն, որ սկզբունքորեն զարտուղվեր վեպի հայկական տաղանդի կանխորոշած հունից՝ թե՛ իբրև ոճ, թե լեզու, թե՛ հղացք և թե՛ որպես իրագործում, և այս վիպական, վիպաստեղծ ուժանյութի պայմանըն էր Զարենցի «Երկիր Նաիրի»-ն, որ միանշանակ 1921-1924 թվականները հայ վեպի համար դարձեց Հանգրվանային: Վիպագրության պատմական հաջորդականության և բարեշրջության միտումները չէին կանխատեսում արմատական շրջադարձ, նույն ամբարձման և բյուրեղացման ընթացքն էր՝ վեպի հայկական մշակույթի նույնական պտույտը՝ պատմական և ժամանակակից, ավանտյուրիստական և անթաքույց գաղափարամետ-դիդակտիկ, կենցաղագրական և բարքագրական, ընկերային ու խոհական: Հայ կյանքն ու սկիզբը հատվածական և ընտրողականություն անցած՝ նայած կոնկրետ վեպի հղացքի, հեղինակի գեղագիտության և փորձառության: Եվ ահա տառացիորեն վեց տարին հայ վեպի պատմության մեջ արմատագործեցին առաջին և առայժմ միակ շեղումն ու զարտուղությունը: Գրվեցին օշականյան վեպերը, որոնք իրենց ընույթով, ձևաբանությամբ «արտեֆակտային» են հայ գրականության պատմության մեջ: Ցարդ գոյություն չուներ գրականության այդօրինակ արտահայտություն՝ հայ ոգին, ես-ը, հայ մարդը՝ ժամանակով, շրջապատով, իր մենությամբ և բազմաձայնությամբ և կյանք դարձած հակոտնյաներով (թուրքը, ջարդը), իր հեղափոխությամբ, մտավորականով, գրագետով և սա բոլորովին նոր բանարվեստով ու կառույցով, հղացքի ու կենտրոնացումների այնպիսի համակարգով, որ հայ վեպի ավանդույթում պարզապես գաղտնագրային, ինկուբացիոն շրջանում էին գտնվում: Հետո էր, որ պետք է Օշականը գրեր իր հոչակավոր «Օշականի մասին» կամ «Վկայություն» հատորը՝ գայթակղություն դառնալով բոլոր հետագոտղների համար՝ իր վեպն իրենով բացարելու, փաստարկելու մղումը մինչև այսօր այնուհանդերձ չհաղթահարված թողնելով: Ես հիմա բանաքաղություններ չեմ անում, որովհետև հետեւյալ հանգամանքների, նկատառումների առկայությունը Օշականի վեպի «արտեֆակտային» հանգույցը անբեկանելիորեն ապացուցում են. ա) հայ վեպի գենետիկայում Օշականի վեպի ձևաբանության կրող դաշտն ամայի էր, նախորդներից իբրև բնագրի կազմակերպող բաղկացուցիչ, կառուցվածք ոչինչ չէր վերցնել, բ) 20-րդ դարի համաշխարհային վիպասանության համապատկերում նախակարապետ է՝ ստեղծագործական մոդելի առումով, գ) իրականացրել է հայ կյանքի հոգեբանության, փորձառության և պատմության զուգորդումը: Ուրեմն պիտի՝ մեկնաբանվի այս «արտեֆակտը»: Անվերապահ. քանի որ անպատկերացնելի է հայ գրականությունն առանց «Մնացորդաց»-ի, «Հարյուր մեկ տարվան»-ի և «Եռանկյուն»-ու: Մեկնաբանման ելակետային դրույթներից, կարծում եմ, առաջարկելի է հետեւյալը. Հակոբ Օշականի վեպը հայ արձակի ամբարած փորձի ներդաշնակ կուահումն էր և իրականացումը՝ իբրև հայ մշակույթի, պատմության, կյանքի գեղարվեստական վկա-

յություն: «Արտեֆակտային» վիպասանության կրողը լինելու գգացողությունը, գիտակցությունը և մարդկային ու գրողական դրամատիզմն ու վիճակի ողբերգականությունը ամենից առաջ վերապահված էր իրեն՝ հեղինակին, և այն «արտավիպային» լրատվությանը, որը, սակայն, սատարում է մատնանշված խնդիրների գույզն-ինչ լուսաբանման ու փաստարկմանը: Դա նախ՝ վարպետի, այսպես կոչված, տարօրինակ, ծայրահեղ և «խենթ», «անհավասարակշիռ» դատումներին ու կարծիքներին է վերաբերում, որ այնքան չարչրկվել և համարնագրից դուրս դարձել է Օշականին այպանելու և անհարկի բացառիկացնելու պատրվակ:

Օշականի վեպն իբրև տեսակային վիպասանության հակագեցություն: – 1945-1946-ին տոնվեց Օշականի գրական ու մանկավարժական գործունեության 40-ամյա հորելյանը, տոնվեց դիմադարձությամբ, մեր ազգային մենթալիտետին ընորոշ կուպաշտությամբ և կուպանդությամբ: Պատճա՞ռը: Գրել էր, թե «Վարդանանք»-ը ընդամենը բառակույտ է. «Հատորը իր առաջին հիսուն էջերուն, կապար դարձավ ձեռքերուս մեջ և աչքերս մերժեցին այդ բառակույտը»: Ստեփան Զորյանի «Պապ թագավոր»-ը նույնպես խոտանել էր: Աչ և ահյակ սկսվեց հավատաքննության հանկերգը թե՛ սփյուռք, թե՛ Հայաստան. «Օշական հակահայաստանյան տարր մըն է» («Միություն», 1946 թ., 7 ապրիլի), «Օշական հայ ժողովրդի ուխտյալ թշնամին է» («Արև», 1946 թ., 13 ապրիլի), ամբաստանություններ, մոռանալու կոչեր, Սովետական Հայաստանի արդարադատության նախարար Գառնիկ Ղազարյանը, կարծես թե ամփոփելով, դատավճիռ էր կարդում. «Որքան շուտ մաքրվեն Օշականները, այնքան լավ հայրենիքի համար» («Բագին», 1984 թ., թիվ 1-2, էջ 23): Իսկ արևմտահայ և սփյուռքահայ կյանքի՝ ու մշակույթի՝ Զէ՞ որ Օշականը խիստ, դաժան գնահատականներ է տվել Մամուրյանին, Տյուսաբին, Զիփթե-Սարաֆին, Շահան Շահնուրին, Համաստեղին, Կոստան Զարյանին ու Լևոն Շանթին: Դիտավորյալ թվարկեցինք այն հեղինակներին, որոնց վիպագրությունն Օշականը սկզբունքորեն չէր ընդունում: Առհասարակ վերապահ էր հայ (նամանավանդ արևմտահայ) վեպի նկատմամբ, և իրողությունը պարփակել օշականյան տարօրինակ, «խենթ» ծայրահեղությունների, անհավասարակշիռ խառնվածքի, շեղումների պատճառաբանություններում առնվազն անարդարացի է: Գրականության պատմության համար էականը, սկզբունքայինը, ելակետայինը Օշականի կարծիքների պատճառաբանվածության վերծանումը պիտի լինի՝ նամանավանդ միշտ հիշելով, որ այս մտավորականը ազգային գրականությունը համարում էր «հայ կյանքի ոսկյա երազը»: Խորհելու տեղիք են տալիս Օշականի այսօրինակ դատումները, հատկապես եթե նկատի ունենանք, որ նրա վիպասանությունը գրական ժառանգության մեկ չորրորդ մասն է կազմում, տասը մեծադիր հատոր. Վահե Օշականի հաշվումներով՝ մեկ միլիոն 100.000 բառ: Վեց տարվա ընթացքում՝ 1928-1934-ին, գրեց «Մնացորդաց» և սրանից կրավորված «Մաթիկ Մելիքխանյանց»-ը, «Հարյուր մեկ տարվան» վիպաշարերը կամ ցիկլերը, «Եռանկյունի» շարքից «Սահակ Պարգևյանը», Կոմիտասին ու արևելահայ նշանավոր դերասանին նվիրված վեպերը և «Մնացորդաց»-ի վերջին՝ «Դժոխվ» վեպը, ավա՞ղ, չհասցրեց: Ինչպես վեպերը, այնպես էլ նրա տեսակետներն ու

կարծիքները դիմելի են իբրև տեսակային վիպասանության հակագդեցություն։ Առանց այս իրողությունը հաշվի առնելու անհնար է 20-րդ դարի հայ վիպագրության պատմության ուսումնասիրությունը։ Հակոբ Օշականն իր վեպի բնույթով հակագդեցության մեջ էր տեսակային վիպասանության հետ, այդ բախումը, ստեղծագործական բանավեճն ու իր մողելի կայացումն ու կարելիությունը հայ վեպի ձևաբանություն բերեցին վեպի բոլորովին նոր տիպ և վերջնականապես ինչպես քերթվածում հայ գրականությունը դարձրեցին ժամանակակից, ներկայանալի համաշխարհային գրականության չափումներում։ Մի իրողություն ևս. Օշականի վեպերը փարատեցին հայ վեպի սեռուման (պսիխոանալիզ, գիտակցական-ենթագիտակցական-անդիտակցական հոսք, պոստմոդեռնիզմի պոետիկա և այլն) անհնարինության առասպելը։ Ինչո՞վ և ինչպե՞ս էր արտահայտվում տեսակային վիպասանության հակագդեցությունը։ Վեպը կազմակերպող բոլոր տարրերով և գործառնություններով։ Կառուցվածք, պատում, կենտրոնացման շրջանակ, ոճ, լեզվի պոետիկական-իմաստային դաշտ։

Օշականի վիպագրության կենտրոնացում՝ որպես արևմտահայ-սիյուռքահայ վեպի տեխնիկալից Հայաստանաց վեաի կառուցողականություն։ – Դեռևս «Մեհյան»-ի ջերում կոչած «Հայաստանյայց գրականության» հանգանակն իր լրումն ստացավ գրողի վեպերով, և այս առումով, կարծում եմ, էական է ընդնշմարել միակցման այն պատմական հետագիծը, որ առկա է արևմտահայ-սիյուռքահայ վեպի տեխնիկայից և ընդգրկումից հայաստանյայց վեպի կառուցողականության ընթաց։ Հիրավի, արևմտահայ դասական վիպասանության մեջ (ներառյալ նաև պատմավիպասանության այն բեկվածքը, որ արտացոլում է ոռուահայություն և թուրքահայություն իրողությունների նոր պատմության հանդերձը) տիրապետող է հայ կյանքի ներփակ-հատվածական գրականացումը, համահայկականությունը ընդամենը տեսլական է, լավագույն դեպքում՝ արտաքրային խորք, սիյուռքի վեպի տեխնիկայում կամ իսպառ բացակայում է և կամ կրկին պատահական-հատվածական ներկրում է միջնորդային-մեկնաբանման, «դրսային» չափագրումներ՝ օրինակ, նշան Պեշիկթաշլյանի «Սադայելին պոչին տակ և շուրքին» վեպը։ Օշականն իր վեպերի կառուցվածքում անբաղադրելի դարձրեց բոլոր հատվածները, գտավ նրանց միակցման հանգույցները՝ «Մնացորդաց», «Հաճի Մուրադ», «Մաթիկ Մելիքխանյանց», «Սահակ Պարգևյան»՝ Պոլիս-գավառ-սիյուռք-կովկասահայություն-Հայաստան աշխարհագրությամբ, հայ կյանք-հայ հեղափոխություն-խոնարհներ-բարքեր-մտավորականություն-քաղաքագետներ անդրադարձների պատկերագրումներով, 1890-1910-ական թվականների մեր իրականության բազմաձայն գրականացումներով։ Մինչ Օշականը հայ վեպը չէր համել այսօրինակ ընդհանրացման, հայ կյանքի վիպագրման այս տեխնիկային։ Սա վարպետին հնարավորություն ընձեռեց պատկերագրելու շուրջ քանակին գրականության գեղարվեստական պատմությունը, հայ կյանքի փիլիսոփայությունը։ Մի հանգամանք, անպայմանորեն 20-րդ դարի համաշխարհային վեպի ձևաբանության տիրույթներում ամրագրված, որ հայ վեպի պատմության մեջ իբրև հղացք և իրագործում ցարդեղակի է։ Հայաստանյայց վեպի կառուցողականությունը 20-րդ դարի հայ գրականության պատմության ուսումնասիրության համար նաև մատնանշում է

կուահումների և կանխատեսումների մի շղթա արդի գրական ընթացքի մասնաշատկությունների, մեկնաբանության համար:

Վեաի օշականյան կառուցն՝ իբրև 20-րդ դարի հայ գրականության համադրային օշախ-կենտրոններից: – Ինչո՞վ է Հակոբ Օշականի վեպը հայ գրականության համադրական կենտրոններից մեկը: Ոչ ոք վարպետի նման չէր սրբագործել կյանքը և փորձառությունը և այն փոխաձևել գրականություն, ինչպես նա: Ճիշտ հանճարեղ իռանդացու պես. սա է նախ՝ Օշական-Ձեյմս Ջոյս Հոգեհարազատության ակունքը և ապա միայն վիպաստեղծության ընդհանրությունները, «Ողիսկասի» անկյունաքարային լինելու Օշականի շեշտագրումների աղբյուրը:

Օշականի գեղարվեստական աշխարհի չափագրումները, հայ կյանքի ստեղծագործական ներընկալումների անսահմանությունը գուգահեռելի են Հովհաննես Թումանյանի գործի հետ միմիայն՝ իբրև հայ գրականության համադրականության արտահայտությունն. Օշականի վեպերի համակարգը իրականացրեց առաջին հայացքից անհնարին, անիրագործելի գրականացում՝ ազգային ցավի արժեքի, նորագույն պատմության թնջուկների համապատկերի, ջարդի բարդույթի էգոցենտրիկ և էժնոհոգերանական գեղարվեստական կերպը, ընդգծենք՝ գեղարվեստականը, որ հայ արձակի համար արվեստի լիակատար ազատագրում էր:

Եվ պիտի համաձայննենք և ընդունենք, որ թյուրքականության վիպաստեղծ հղացքը և բազմապլան իրագործումները ստերեոտիպերը քանդելու, կոտրելու կեցվածք ու իրագործում չէին և ոչ էլ «Հերեատիկոսություն» հայկականության, հայ գրականության նկատմամբ: Պարզապես հայ կյանքի համադրությունն ընդգրկող գրականությունը չէր կարող անմասն մնալ թուրքիզմի ներկայությունից և այդ ներկայությունն է ցուցանում Հակոբ Օշականը, հայ կյանքի մի էական ներթափանցման էույթն են վեր հանում Սյուլեյման Էֆենտին ու Էտհեմ Պեյր, հաճի Ալպտուլլահը, բոլորը, ընդհանրապես թուրք անհատն ու մտայնությունը՝ սոցիալական, կենսաբանական, հոգեբանական, բնագանցական, պատմական, կենցաղագրական ողջ երփներանդով: Յուլյուզ տվեք մի այլ գրականություն, բնագիր, որ այդքան տարողունակ, հիմնարար անդրադարձներ թուրքն ու թուրքականությունը՝ 20-րդ դարի հայ պատմության, մշակույթի ամենակարևոր, վճռական ներկայություններից մեկը: Զեք գտնի:

Պարզապես թվարկենք ու անցնենք օշականյան խոնարհների վիպային ոստումը, հայի կոսմոգոնիայի կենդանագիրը, երրորդենք «Սահակ Պարգևայան»-ի հանգամանքը, երբ վեպ է դառնում Հոգեկոր-մտավորական կենսագրությունը:

Հակոբ Օշականի վեաի ձևաբանության հարացուցն՝ իբրև 20-րդ դարի հայ գրականության ուսումնակրության կողմնորոշչներից: – «Ով վեպը արևմտահայ գրականության: Դուն չես նմանիր ուրիշ ժողովուրդներու մոտ ք անունը կրող գրական սեռին, ուր արվեստագետը թուղթին համձնելու իր ցավերը իր շուրջը կը գտնե հատ-հատ, իր ներսը շատ-շատ, սանկ սեռավիճակ ակուներէ ծլող կամ հոն հանող: Դուն վեան ես ալն ժողովուրդին, որ զգաց ինչ որ ուրիշներուն տրված է զգալ, զգայարանքներու ճամբաներեն, բայց ասպեցավ մնայուն մահվան, տիրական զրկանքին, ամեն րոպէ իր հոգիին վրա առկան սարսափին ճիրաններուն մնչ ու արևը, ցորենը, գիւղին, ծեթը, մարդերու միսը դիակներու վերացած ծամեց ու ծամեց, երբ իր քրտինքին գիւնովը իր այլազգ դրացիները այդ ամենը կը փոխանակեին հաշտ, հեշտ, քաղցր գիւնովության...

Ո՞վ մեր վեպը: Դուն նման ես քիչ մը մեր հին գրականության միակ բարգավաճ սեղին.-մեր պատմագրության, որ իր հազարավոր էջերուն մեջ գրած է սա արյունին քերթվածը, սա գերության տախտակները, սա անհուն ու անսպառ ողբերգությունը, ինչպես իմ ցեղին իմաստի, երազի, երկնքի բոլոր տուրքերը: Ամա թե ինչու սա հատորները այնքան քիչ կը թվին, երբ կը բաղդատեմ զանոնք իմ ներսա մթերված ապրումներուն, մտածումներուն ահավոր լեռներուն... «Մնացորդաց»-ի հազարավոր էջերը շուրջ իսկ չեն իմ պատանության քանի մը տարիները զարնող զգացումներուն... Այդ է պատճառը, որ դրվագումը ունի ինքնաբերաբար...», — գրում է «Մաթիկ Մելիքխանյանց» վեպում՝ անմիջապես փաստարկելով իր վեպերի համակարգին բնորոշ, գերակա անհատի, ես-ի ընդհատակյա, գաղտնագրային (իր նախասիրած եղրով *underground*-ի) բնույթի մանրամասները: Օշականի վեպի ձևաբանությունը, պոետիկան խարսխված է այս հենքին, երբ մեկ պահը, ապրումը, խոհը, փորձությունը տարածականացվում են իրեւ անվերջ-վերջավորի, կյանք-մահվան, բարդույթների և հոգեվիճակների մանրազնին գեղարվեստական արձանագրում (20-րդ դարի վեպի տեխնիկային բնորոշ՝ Պրուստ, Մուզիլ): Հանգամանք, որ եթե 20-րդ դարի հայ վիպագրության մեջ առհասարակ հատվածական է, ներուժի հնարավորությունները մատնանշող, ապա Օշականի վեպում կայացած մտայնություն է և կողմնորոշիչ դարի գրականության պատմության ուսումնասիրության համար:

Օշականագիտության մեջ արդեն իմ ավագ և երախտիք ունեցող գործընկերների կողմից (Վահե Օշական, Գրիգոր Պղմոյան և մանավանդ Մարկ Նշանյան. առանձնացնենք փիլիսոփա և մշակութաբան Մարկ Նշանյանի շնորհակալ աշխատանքը) բավականաչափ հետազոտվել են անգիտակցականի, սեռի և դրա զառածման խնդիրները Հակոբ Օշականի վեպերի համակարգում: Ինձ թույլ եմ տալիս մեկ, սակայն, ըստ իս, էական հավելում կատարել: Օշականի բնագրերում առկա է փոխանցումը, փոխաձեռումը ֆրոյդյան եսակենտրոն անգիտակցականի և յունգյան կոլեկտիվ անգիտակցականի գեղարվեստական սկեռմանը («Հաճի Ապտուլլահ» վեպի կոսմոսը), որը սեռի ու նախամահի օշականյան բնագրի արքետիպային-կազմակերպող հիմքերի մեկնաբանությունն անհամեմատ ընդլայնում է և այս իմաստով ևս 20-րդ դարի հայ գրականության ուսումնասիրության համար կողմնորոշչային նշանակություն ունի:

**Մեթոդաբանական այս հանգամանքի առումով ելակետային է Օշականի վեպերի շարքերի կամ ցիկլերի պարագան՝ իրեւ ամբողջություն, ընդհանրություն՝ վեպից վեպ սերտածումներով, մի ստեղծագործությունից մի այլի՝ հեղինակային հղումներով:**

Վերջապես, 20-րդ դարի հայ գրականության ուսումնասիրության կողմնորոշիչներից են օշականյան վեպում ամբարված ժանրի նոր կերպի ստեղծագործական հաստատագրումները, ուղենիշները թե՛ այսպես կոչված մոգական իրապաշտության («Սոլելյաման էֆենտի», «Հաճի Ապտուլլահ»). Համեմատի՛ր Մարկես-Ֆուենտես-Կորտասասարյան վեպի մշակույթի հետ), թե՛ պոստավանտյուրիստական վեպի պոետիկայի («Հաճի Մուրադ», «Մաթիկ Մելիքխանյանց») հետ:

## ՀԱՂԹԱԲԱՆ ՀԵՐՔՈՒՄ

(Քննադատության միստերիան)

Հակոբ Օշականի գրական ժառանգության, ստեղծումի իմացական, մշակութաբանական անդրադարձները, իրավամբ, հայոց հոգեոր կյանքի փորձություններից են, որոնց յուրաքանչյուր ընկալում-ընթերցում-ընդհանուրացում թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա պարագրկումներում առաջադրել և առաջադրում են հակոտնյա, բախումնային դիտանկյուններ, հայեցություններ։ Նամանավանդ՝ քըննադատությունը, և պատահական չէ, որ «Վկայություն» հատորի «Քննադատը» գլուխը Օշականը սկսում է մշակութաբանական կենսոլորտի այս կիզակետման արձանագրությամբ. «Եթե վիպող, թատերագիր Օշականը չէ իջած ժողովուրդին, քննադատ Օշական մը գրական մեր հրապարակին վրա իրական գայթակղություն մըն է, այս բառին տակ դնելով ինչ որ մեր մեջ առաջ կը բերե բուռն հակագդեցություններ, ընկալյալ օրենքներու զանցառումնեն, նոր, խնդրական, բոլորովին ինքնաբույս սկզբունքներու սպասեն ծնունդ առնող»<sup>1</sup>: Օշականի ցանկացած քննադատական գրություն, հոգված, գրախոսություն և ուսումնասիրություն, զարտուղված քննաբանության հայկական «սրբացված» կաղապարներից, գրական ընթացի, հոգեոր-իմացական կյանքի «գայթակղություն» էր՝ հարուցած բանավեճերով և կամ՝ լրությամբ, անտեսումով։ Ընթերցման և մեկնության խնդրագիր կերպը անցնում էր նոր ժամանակների Արքիարյան-Արտաշես Հարությունյան-Շիրվանզադե-ական վերլուծության մտայնային կաղապարներից, Զոպամյանի քննադատության բնույթի ուշագրավ խմբագրում և ուղղորդում արվեստի ազատագրյալ տարածքներ, որտեղ գրական կյանքի տեղատվությունը անմիջապես փոխակերպվում էր մակընթացության, առանց սխալվելու բարդույթից վարանման («սխալվելու բարդույթը» քննադատության և քննադատի երկիրկիված ստեղծումի և ինքնության արարողական տարուն է՝)՝ մտային-իմացաբանական ճահճացումը կամ գրա փանգը յուրատեսակ «բնապահպանական» պատնեշումով։ Այս խորքին տեղին է օշականյան հարցումը. «Եթե կան, թիվով քիչ մարդեր, որոնք հանդուրժելու համար այս գայթակղությունը երբեմն կը լրջանան, իրենք իրենց հարցնելու թե ի՞նչ են շարժառիթները Օշականի մը քննադատական կեցվածքին (ընդգծումն իմն՝ Գր. Հ.) ու կը մտածեն առնվազն պաղարյուն ու քիչիկ մըն ալ զիջող մտայնությամբ, լեզեն է թիվը անոնց, որոնք միակտուր կը մերժեն թե՛ գործը, թե՛ շարժառիթները ու կը ստեղծեն տրտում պատկերը ամբոխային ապրումներու»<sup>2</sup>: Այս հարցումն ըստ էության օշականյան քննադատության, գրադատության և տեսական մտքի կողմից այնքան չարչրկ-

1 Հակոբ Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականության», հա. 10-րդ, Ամթիլիաս, 1982 թ., էջ 294:

2 Նույն տեղում:

ված «Օշականի մեթոդի» փնտրտուքի, մեկնաբանության բանալին է: Գտնել, «բացել» շարժառիթները, չընկրկելով «էպատաճային» խայծերից («Հարթենք», «Վկայություն մը», «Զուգակշիռ արևմտահայ և արևելահայ գրականությանց» և այլն): Ահա, այս առումով Հակոբ Օշականի քննադատության և՝ գենալոգիան դաշտի և թե ինքնության ընկալման, ընդհանրական պատկերման, ճանաչողության համար առաջնային է նրա «Գրականության համար» գրությունը, որտեղ, ըստ էության, պարփակված է, բյուրեղացած նրա քննադատության կերպի, մեթոդի ըմբռնումները, ցուցանված են գրադատության գերակա սկզբունքների, կիրարկման ստեղծաբանական շարժառիթները: Առհասարակ «Գրականության համար»-ը, որը զարմանալիորեն ցարդ օշականագիտության մեջ մնացել է իրեկ «Հիմնական երթուղիներից դուրս տարածք» յուրահատուկ է նաև գրողի ժառանգության մեջ ունեցած դերակատարությամբ: Ուղերձայնությամբ, պատգամախոսական գործառնություններով այն սատարում է այս «գայթակղելի» քննադատության հիմերը նկատելու, իմանալու գործին:

Օշականի կյանքի և գործունենության տարեգրության մեջ կիպրոսյան շրջանը (1926-1934 թվականներ) հատկանշվում է վիպաստեղծ արարողականությամբ. 1928-1929-ին գրեց «Ծակպտուկը», 1931-ին ավարտել էր «Մնացորդաց»-ի մեծ մասը, ստեղծվում էին «Հաճի Մուրատ»-ը, «Հաճի Ապտուլլահը», «Այուկեյմեն էֆենդի»-ն, «Մաթիկ Մելիքիսանյան»-ը, «Մահակ Պարգևյան»-ը: Հայ վեպի պատմության մեջ անհնարին էր նման երկրորդ օրինակը գտնել, երբ ութնամյա շրջանը ոչ միայն այսքան արգասավոր լիներ, այլև ժանրի ստեղծաբանական պարագծում պայմանավորեր և հատկանշեր վեպի ձևաբանական-հղացքային տիպը ամբողջ դարաշրջանի համար: Բնականաբար ստեղծագործական այսօրինակ «մոլեգին» տեմպը Օշականի գրողական ինքնության գիտակցական և ենթաշխարհային շերտերում պիտի ունենար վեպերի ընթերցման հակագարձականության (վերլուծության և մեկնության) կանխատեսումները և, ի շարս շրջանում ստեղծված թատերգության, գրականագիտական տարբեր ուսումնասիրությունների, գրությունների, նա անպայմանորեն հրապարակ պիտի հաներ քննադատության ընկալման, բնույթի և մեթոդի իր պատգամախոսությունը, ուղերձը՝ սահմանում-բանաձեւերի հարացույցով և գրանց սկզբունքային, կատեգորիկ մանրամասնումներով: Մյուս կողմից՝ քննադատական-գրականագիտական հսկայական գործը ոչ միայն ուրվագրել և նախապատրաստել էր «Համապատկեր»-ի կանգնումը, այլև անհրաժեշտություն էր դարձրել քննադատության օշականյան տեսության, յուրովի «հանգանակի» շրջանառության մեջ մացնելը. «Ինչո՞ւ այս անպատճիւնատու գիրքերը վերջին մի քանի մը տարիներու ընթացքին՝ նվիրված մեր գրողներու պաշտամունքին երբ տասը տարի կա որ մեզի իրական հազիվ քանի մը գիրք եկած ըլլա»<sup>3</sup>: Հարցումը շրջանակում է Օշականի ակնհայտ գժգոհությունը գրականագիտության, քննադատության կերպից, առաջադրում է չափանիշի հիմնայնությունը, ներառում՝ քննադատության սահմանման, ըմբռնման, մեթոդաբանության ի՛ր

3 «Գրականության համար», «Զվարդնոց», Փարիզ, 1929 թ., №№ 6-7, էջ 284: Հետայսու գրությունից բերված բոլոր հոդումները տեքստում, փակագծերի մեջ:

պարագրկումները, կենտրոնացնում որ միայն իր գրության խնդրագրությունը, այլև քննադատության խնդրահարույց երկույթ լինելու հանդամանքը<sup>4</sup>: Սա էր «Գրականության համար» գրության ստեղծման շարժառիթներից մեկը: Օշականի տագնապը հավուր պատշաճի քննադատական գործերից, որոնք աջ ու աջակ հեղեղել էին հայ իմացականությունը և այս վտանգից պատնեշումը գրության կառուցողական ազդակներից էր: «Ուրիշներ հատորը կը կապեն հատորին ետևեն (թիվը երբեմն տասը կանցնի), բոլորն ալ գրագետներու գործին ու կյանքին նվիրված: Կը կարդաք: Բայց երբ կավարտեք, կը զարմանաք որ ոչինչով ավելցած եք: Ու կը ստիպիիք միսիթարպիկ մեջբերումներուն շահովը միայն: Մնացյալը, ինչ որ քննադատին անձնական բաժինը պիտի կազմեր և որուն վայելումին համար ճամբար էինք ինկած, խոտ է դժբախտաբար: Մի կարծեք թե ջրհեղեղեն կը խոսիմ: Տիպարը ամեն տեղ է հիմա» (360): Հար և նման իր վեպերի կենսոլորտի, այս գրության մեջ Օշականը գյուտում էր քննադատության և քննադատի զուգադիրը՝ ուրացում-հաստատում, սկիզբ-վերջ, գոյ-անգո հարաբերակցությամբ, առկայացնելով ի՞ր համար խոտելին, մերժողականը, միաժամանակ՝ հարություն տալով քննադատի, քննադատության գրական կերպը, այս զուգահեռներում ամբողջականացնելով քննադատության տեսության և մեթոդաբանության շրջադիմը: Գրության այս շարժառիթը հարակցվում էր Աղետից հետո իմացական-մշակութաբանական ուղղորդվածությանը մեզանում: Աղետը, հայոց ազգային-քաղաքական ռեալությունները (Առաջին Հանրապետության ծնունդ և անկում, Սփյուռք, սփյուռքացում, Խորհրդային Հայաստան, ըստ այսմ՝ գաղափարաբանությունների խուռներամ «գեղագիտակ», պատմական հեռանկարի պրկված, բախումնային վիճակներ) քննադատությանն իր զանազան այլասացություններով գերիշխող էին զարձրել, որի պարունակներում հաճախակի էին ստերեոտիպային տեղապտույտները, շահարկումները, ակնհայտ և քողարկված զառածումները, հայ իրականության առարկայականորեն առաջադրած հարցումների պատասխանելու անկարողությունները, որոնց ակունքն, ըստ Օշականի, քննադատության ոչ միայն թյուր պատկերացումն էր, այլ նաև ըստ նրա «իիքնին թյուրականությունը»: Ահա ևս մի կարևոր շարժառիթ, գերակա ազդակ գրության լինելիության խորքին: Բնական էր, որ Օշականը մեկընդմիշտ պատասխանելու էր, գտնելու էր «բանադրված շրջանակից» ազատագրվելու եղանակներն ու ճանապարհները, նամանավանդ որ այդ արարով միանգամից լուծվում էին երեք հրատապ խնդիրներ. քննադատության առաքելության դյուրինացումը՝ իրողություն, որ հասունացել էր թե՛ մնացորդաց մշակութաբանական գիտակցության և արարքների, թե՛ նորերի մեջ. «Գեղարվեստական գործի մը քննադատությունը շատ անդամ ավելի դժվար է քան այդ երկին արտադրությունը»<sup>5</sup>, – 1929-ին գրում է Շահան Շահնուրը՝ Օշակա-

4 Պատահական չէ, որ Օշականի քննադատությունը, մասնավորապես առվա գրությունը քննելիս, գորոդի մեթոդը փաստելիս Գրիգոր Պղլտյանը խնդրականացման իրողությամբ է բացատրում օշականան հարակա բախտումը քննադատության հետ, նրա ժխտումի, մերժման սկզբունքավճառությունը: Տե՛ս Արա «Հ. Օշական՝ քննադատ» հոդվածը («Բագին», Բելուս, 1984 թ., հունվար-փետրվար, էջ 109-110):

5 Յ. Շահնուր, «Սիրտ արտի», Փարիզ, Մատենաշար «Յառաջ», 1995 թ., էջ 39:

նի պես փաստելով ավանդված ու կիրարկելի քննադատության կերպը: Իսկ «Գրականության համար»-ը ոչ միայն «Մենք»-ի սերնդի հետ բավականին ինքնատիպ բանավեճով ապացուցում էր, որ սկսյալ «Մեհյան»-ից նաև քննադատությամբ էին բերել «գոհար մը... հոգիին անգիտակից խորերեն»<sup>6</sup>, այլև այդ արդյունքի վկայությունն էին առթում ըստ էության՝ գրական կյանքի համար ներառելով կողմնորոշչի հանձնառություններ: Փաստորեն Հակոբ Օշականը «Գրականության համար» գրությամբ մատուցանում էր, իրենով մեզանում հաստատագրված, «այլընտրանքային քննադատության» տեսությունը:

Այս ազդակներով և շարժառիթներով է պայմանագործած «Գրականության համար» գրության գոյությունը: Այն առաջին անգամ լույս է տեսել Հրանտ Բալույանի խմբագրած «Զվարթնոց» գրականության և գեղարվեստի պարբերաթերթում 1929-1930 թվականներին, Փարիզում (1929 թ., №№ 6-7, էջ 282-286, 1930 թ., № 8, էջ 359-363, № 9, էջ 397-401, № 10, էջ 435-439):

Ինչո՞ւ Օշականը այս պարբերականը ընտրեց «Գրականության համար»-ի տպագրության համար: Բննիամիշ Թաշյանի հետ ունեցած իր գրույցներում «Զվարթնոց»-ը նա համարում է. «...բեմ մը, որ հայտնաբեր էր, իր կատարյալ ազատությանը մեջ, պատերազմի սերունդը», որոնք «...«Մենք»-ին մեջ արդեն կը դառնան ուշագրավ», ապա թերթը իր մշակույթով, արծարծումներով «արժեք մըն» էր և «իր հետաքրքրությանը մեջ... անիկա քիչ մը միամիտ, թերևս քիչ մը բուռն»<sup>7</sup> էր: Բնականաբար պարբերականի նախընտրությունը, պայմանագործած իր գրության տեսական, ուղերձայնային-պատգամախոսական գերակատարություններով, ինչպես նաև «Զվարթնոց»-ի «արժեք» լինելու հանդամանքով, ամենահարմարն էր:

«Գրականության համար»-ը գուտ հետազոտական նկատառումներով կարելի է բաժանել չորս մասերի, նամանագանդ, որ գրությունն ինքը ներքին տրոհությամբ, ասես, բաղկացած է չորս մասից կամ հատվածից (խմբագրությունը այս հանգամանքը հաշվի առնելով է, որ բնագիրը տպագրել է նույնքան հատվածներով), որոնք ունեն այսպես կոչված ներփակ ինքնավարություն՝ հարցադրումներով, կենտրոնացման տարրողությամբ: Ըստ էության հատվածներից կամ մասերից յուրաքանչյուրը ներդիր կառույց է իր ամբողջական «միկրոարխիտեկտոնիկայով», որը միաժամանակ ապահովում է գրության կոմպոզիցիոն-կառուցվածքային ամբողջությունը:

«Գրականության համար»-ի ժանրային կերպը, ոճական ուղղորդությունը Հ. Օշականի գեղարվեստական համակարգում որոշագրվել էր տակավին 1920-ա-

6 «Մենք»-ականների լնդիմությունն օրինակ նախորդների պարագային շրջանակում էր նաև նրանց վելուծական քննադատական գործը: Սարաֆյանը նույնականացնան արարության մեջ տեսնում «ունալմամիտ գրականությունը» քննադատության համապատասխանությունը պիտի ունենար: Այդ պատճառով է, որ «Բողիին բոլոր ծալքերը» բացող անկերծությունը, որ գրականության գերխնդիրն է, առկախ մնաց. «Մեհիլամի օրերեն սկզբալ խենթություն»-ը կը շրջի մեր արլաւ մեջ: Բայց զանց քարոզողները իրենք իսկ չկրցան գոհար մը բերել հոգիին անգիտակից խորերեն»,-նշագրում «Մենք» հոդվածում (Ն. Սարաֆյան, «Տեսարանները, մարդիկ և ես», Երևան, Մատենաշար «երկ», 1994 թ., էջ 29):

7 Տե՛ս «Մայրիներու շուքին տակ», Բեյրութ, էջ 93-94:

կան թվականներին «Խորհուրդներու մեջյանը» և «Կայսերական հաղթերգություն» ժողովածուներով, որտեղ բնագրի կառուցման տպավորապաշտական սկզբունքները ոչ միայն դրսելորում էին օշականյան ստեղծումի հնարավորությունների նոր արտահայտություններ, այլև դառնում նրա պոետիկայի այս մասնահատկության մեկնակետը։ Այն հետագային շարունակվեց՝ տարածականացվելով նաև քննադատության ասպարեզում։ Պատահական չէ, որ «Գրականության համար»-ը ներառնում է «Անդղին կտուցին տակ» գրության ալյուգիաները։ «Անդամ մը իր գործիքները – ժանիքները պիտի ըսեին ավելի ճշգրիտ գրողներ – ճարելեն հետո, անիկա հոգն ունի միայն ու միայն փոխվելիք տեղին ու վանվելիք ձանձրությին» (283)։ Եթե «Գրականության համար»-ում «ժանիքների» մետաֆորով շրջանակվում է քննադատության մամուլային ավերումները, գրականության մեկնության, քննադատության զառածումները, ապա նույնը արդեն «անդղի կտուցի» մետաֆորով շրջանակվում է «Անդղին կտուցին տակ»-ի մեջ<sup>8</sup>։ Քննադատության ածանցյալ ության, «Հերքման և բացասման» տեսություններից խուսափող Օշականը, պիտի տեսականացներ և ընդհանրականացներ հենց տպավորապաշտական կիրարկումով, որովհետև այն վերացնում էր բոլոր կաշկանդումները, զսպանակները, հնարավորություն ընձեռում օրենքներից անդին «Հերքել» քննադատության երկույթի «օրենսդրական» բնույթը։ «Տպավորապաշտ քննադատությունը օրենքներ չունի որոնցմով սպառնա։ Մեր տպավորությունները մենք մեր ապրանքները կը դավանինք»<sup>9</sup>։ Այսօրինակ քննադատությունը, որ «նորմատիվ», գիտական քննադատության հակոտնյան է. «...փոխանակ իր շետը դնելու անհատներու կենդանագրումին, կը սիրե երկույթներու, բարեխառնություններու, ճաշակի և ոճի հարցերու շուրջը դանդաղիլ»<sup>10</sup>։ Սա արդեն գերակայելի է դարձնում գրականության մասին գրականություն ստեղծելը և այստեղ է, որ «Գրականության համար»-ի ժամանակակից կերպություն յուրաքանչյուր հետազոտող ստիլված է արձանագրելու, որ այն փորձագրության, գրականության և քննադատության տարրերի (քննադատությունը՝ երկույթի ըմբռնման քրեստոմատիկ տիրույթներում) գիրկընդիմառնում է, համագրականություն, որտեղ ժանրային որևէ ձևի կայուն, հստակ սահմանները տարտղնամատիկ ժանրային է մատնանշած շերտերից ցանկացածի, նույնիսկ վերլուծական նպատակամիտությամբ, տարանջատումը։

8 Տե՛ս օրինակ այդ խորագրով լուս տեսած գործերից 1932-ին Փարիզի «Կլանք և արվեստ»-ում տպագրվածը (Էջ 144-145)։ Պատահական չէ, որ այն ունի «Գրականության համար» ենթավերնագիրը։

9 Հ. Օշական, «Համապատկեր...», հու. 10-րդ, էջ 320։

10 Նույն տեղում, էջ 312։ Այս շարքում, բացի «Գրականության համար», «Անգին կտուցին տակ» գործերից, Օշականը զետեղում է 1908-1944 թթ. ընկած այլ գործեր ևս՝ «Սերմնացան», «Ես ինձի», «Վկայություններ», «Մոոցված բաներ»։ Միանշանակ ակնարկելով քննադատության տպավորապաշտական եղանակի իր մշտաման և նետնողական նախապիրությունը։ Թեև օշականան երկերի մի շարք մատնագրություններում թվարկված գործերը զետեղված են «Տպավորապաշտ էշեր» ավելի ընդհանուր շարքի տակ (օրինակ՝ «Նոր գիր», Նյու Յորք, 1946 թ., №№ 3-4, էջ 226, «Սիոն», Երրուստին, 1983 թ., № 12, էջ 273)։ Նկատի էր առնվում դրամց խնդրադրության շրջանակը, որը բացի զուտ քննադատական հարցերից ընդգրկում էր նաև մշակութաբանական, պատմական, ազգաբանական, ընկերային, քաղաքական հարցեր։

*Օշականի տպավորապաշտական քննադատությունը մոնիստական մեթոդաբանության հակազդեցությունն ու պատճեցումն էր, քննադատական արարումի պլյուրալիստական սկզբունքի կիրարկում՝ բարքագրական վկայությամբ, գեղարվեստական երկի խիստ որոշակի «երկրորդմամբ»՝ ստեղծաբանական ավարտաբանությունով<sup>11</sup>: Այս մտահոգությամբ է պատճառականացվում այն իրողությունը, որ նրա համակարգում քննադատությունը համարժեքվում է ստեղծագործությանը, գրականություն արարելուն, վիպումին. «Վեպ թե վերլուծում, վեպը իբրև վերլուծում, վերլուծումը իբրև վեպ՝ բռնված են գրողական արարքի տարօրինակ, երկդիմորեն հարուստ տարազով մը»<sup>12</sup>: Օշականի համար քննադատությունը գրական տեքստ է, ստեղծագործելու եղանակ, բացարձակապես «Էկոցենտրիկ» երևույթ, ուր ընդելուզվում են բնական և հուզական ենթաշխարհային, զգայնությունների ոլորտներից բխող ազդակները: «Եկեղեցի մը քարե երգ մըն է, ինչպես մագաղաթ մը՝ դեղնած, հանգստացած հոգի մը: Քննադատը պաշտոնը ունի այդ երգին յուրաքանչյուր բջիջը տարրալուծելու, հասնելու համար գերազույն խկության, որմե կերպարանք մըն է այդ եկեղեցին»<sup>13</sup>, – սահմանում է նա: Իսկ «յուրաքանչյուր բջիջ տարրալուծելու»-ն «նորմատիվ» քննադատությունը հասու չէ առարկայաբար, ուստի օշականյան վերապահությունները իր համակարգում արդարացվում են և ըստ ամենայնի գործում: Պակաս կարևոր չէ նրա «կյանքի մեթոդի» գերակայությունը թե՛ գրական, թե՛ քննադատական, վերլուծական ժառանգության մեջ: Եթե գրականությունը կյանքի վերահայտնությունն է, վերագտնումը, ապա քննադատությունը այդ վերահայտնության հայացքն է, փորձարկումը կյանքի վերագտնումով՝ անկախ դպրոցների և հանդանակների, զանազան տեսությունների, քանի որ դրանք ինքնին կաշկանդում են, «զսպում» գրականության և քննադատության մեջ կյանքի լիակատար և ազատ դրսեորումը: Այստեղից էլ Օշականի վերապահությունը թե՛ քննադատության գիտական մեթոդների և թե՛ վերլուծական զանազան դպրոցների նկատմամբ. «Ես քննադատ մը չեմ: Իմ ժողովուրդի խորագույն իրականության խուզարկու բանվոր մը: Այդ խորագույն իրականությունը կը փնտրեմ, փնտրեցի այդ ժողովուրդի մեջի հասած ամեն ողջ ու մեռած փշրանքի մեջ: Հասկնալի էր որ գրական գործերը, այդ ջանքիս մեջ, ինծի գային իբր ամենեն բարձր վավերագրերը: Ահա իմ քննական հետաքրքրությանց արտադրումը», – 1947-ի ապրիլի 27-ին գրում է Հ. Ավագյանին<sup>14</sup>: Օշականի տպավորապաշտ քննադատության միակ չափանիշը կյանքի վարդապետությունն է և ըստ այսմ «Գրականության համար»-ի համաբնագրում քննադատության մերժում/հաստատում շղթան պայմանագրվում է դրանով. «Դժբախտությունը հոն է որ հիմա նորույթ եղող գրականությամբ երանգավոր կենսագրականներ տեղը անցնին գործերու վերլուծումին ու թափանցումին ու*

11 Այս իրողության քննությունը տե՛ս Մ'արկ Նշանյանի «Քննադատությունը և սրբազնության փորձընկալումը» ուսումնասիրության մեջ («Կալք» գրականության տարեգիրք, Փարիզ, 1993 թ., Էջ 67-85):

12 Գր. Պըլտյան, «Հ. Օշականը քննադատ» Էջ 111:

13 «Մ'արիներու շուքին տակ», Էջ 127:

14 «Նոր գիր», 1948 թ., № 1, Էջ 10:

գոհանանք կյանքին տեղ լուսանկարներ, շատ շատ կենդանագիրներ վրձինելով» (436): Քննադատության «ուրացումը» Օշականի այս գրության մեջ պատճառաբանվում է կյանքի իբրև բացարձակ ստեղծումի մեկնության փոխակերպության անկարողությամբ, որը բնորոշում է «դեպի գրականությանը» ներգործելու «պարտադիր զառածում» (363)՝ ամփոփելով «Հեղափոխությունը քննադատությունն է գործի վերածված» (397), իսկ յուրաքանչյուր հեղափոխություն քանդում և աղճատում է: Բնականաբար գրականության ոչնչացմանը ուղղորդված այդ գործնականությունը պիտի մերժվեր, որովհետև ստեղծումի ավիրումը կյանքի կորուստ էր: Ուստի քննադատությունը գրականության «հեղափոխությունն» է անթաքույց «հակագրական» կարելիություններով ու դերակատարություններով, որը պատճեշում է «գտնել շրջանը, մտայնությունը, հոգին, տաղանդին տեսակարար կշիռը»<sup>15</sup>, և այդ հեղափոխություններից խուսափելու համար Օշականը բրտացնում է ինքնատիպ «բարեշրջական» քննադատության կերպ՝ պատգամախոսելով «...բանաձև մը միայն:- Ամփոփվին ու խորանան» (439): Ամփոփվելու և խորանալու այլընտրանքը «փոխանցման քննադատությունն» է, այսինքն՝ ստեղծման քանդումը. «Վասնզի աշխարհի բոլոր հեղափոխությունները չեն փրկեր միջակությունը» (398), որը «ուրանում» էր նախկինում, «ուրանում» է հիմա՝ նամանավանդ խարսխվելով հեղափոխության պարարտ հողին: Այստեղ է Օշականը նկատում այդօրինակ քննադատության փոխանցումը, գնում գիտակցված «մթագնումների» և վերապահությունների արևելահայ ածուի հանդեպ, հատկապես այնտեղ գտնելով «մերժողական քննադատության» ակունքն ու դաշտը, որ սոցուեալիզմի հանգանակներով և իրացումներով ավելի էր կարծրացել<sup>16</sup>: Բնականաբար «Ամեն գինով գիտակերևալու այս մոլությունը, էջերով փաստելու, պատմելու փաստաբանությունը» (400) պիտի բացասվեր, մերժվեր և անընդհատ «Գրականության համար»-ի կառույցում զուգորդեր «իրական քննադատության» սեփական ըմբռնումին՝ ազատությանը, որ համարժեքվում է արվեստի հրամայականին: Օշականը «ազատության անունով» արվեստի շահարկումները ընկալում է իբրև «հայկական ողբերգություն» և այս երկիրեկման հոգեւոր-արարողական կեղեքումից պոկվելու հանձնառությամբ է պայմանավորված «Գրականության համար»-ի բնույթն ու ուղղությունը՝ քննադատության կերպի ուրացում և իրավ քննադատության հաստատում, ավարտ/սկզբի շարունակական հոսքի յուրահատուկ միստերի, ստեղծումի քննադատության վկայման գերպրկված իրացում:

Հարկ է նշել, որ ի տարբերություն Ն. Օշականի քննադատական, գրականագիտական, վերլուծական ժառանգության մյուս գործերի «Գրականության համար»-ը օշականագիտության մեջ շատ քիչ է անդրադարձվել, բացառյալ Գրի-

15 Ն. Օշական, «Համապատկեր...», հտ. 10-րդ, էջ 303:

16 Այդ վերապահությունները արևելահայ քննադատության հանդես, որը հաստատում էր «ամենան տափակ, անարծաթ, հինավորց չափեր, արվեստի գործերը կշռելու համար» («Համապատկեր...», հտ. 10-րդ, էջ 310), այս գործում հասցնում են «մթագնումի»՝ մերժելով Ե. Զարենցի գործը բոլորեքյանությամբ: Ժամանակ էր պետք, որպեսզի գործականության «ջարդից» հետո Օշականը վերանայեր իր տեսակետը և նույն Զարենցին շներժեր ամբողջությամբ (տե՛ս օդինակ «Ծգնավոր իր խուցին մեջ» երկխոսությունը՝ «Մաղրիներու շուքին տակ» էջ 110):

գոր Պըլտյանի «Հ. Օշականը քննադատ» շահեկան ուսումնասիրության: Գրության առաջին արձագանքներից է Գաբրիել Մենեկչյանի 1930 թվականին գրած «Գրական և լեզվական գիտողություններ» խորագրով հոդվածներից մեկը, որտեղ, ի շարս այլազան հարցերի, բանասերը անդրադառնում է նաև «Գրականության համար»-ին<sup>17</sup>: Ըստ էության Մենեկչյանի հոդվածը պատասխանէր գրության մեջ Մշիթարյանների քննադատության բացասմանը: Բանասերը Օշականին վերագրում էր «...անտարբերություն, չըսելու համար՝ անդգածություն, մեր հայրենի ոգիին հանդեպ: Արդ, «Զվարթնոց»-ի նշմարը ճիշդ հակառակ թեզն է, որ կը պաշտպանե: Հոն խորունկ գուրգուրանք կա մեր անցյալեն ամեն արտահայտության վրա»<sup>18</sup>: «Գրականության համար»-ի հաջորդ անդրադարձը «Սիոն»-ի բացառիկում<sup>19</sup> զետեղված «Օշական երեկ և այսօր» խմբագրականն է, որտեղ վերաշարադրվում է «Գրականության համար»-ի հիմնադրույթը՝ գրողի քննադատության մասնահատկություններին անդրադառնալիս:

Եվ, ինչպես արձանագրվեց, Օշականի այս գրության մանրամասն և համապարփակ քննությունը գտնում ենք Գրիգոր Պըլտյանի նշված ուսումնասիրության մեջ, որտեղ, քննադատության օշականյան հերքման շրջագծում, հեղինակն առաջադրում է և փաստարկում քննադատության ժխտական գոյակցություն, բնազդ լինելու իրողությունը: Նա քննադատության բացասումը գիտարկում է «Հարթենք» շարքից մինչև «Վկայությունն մը» գրությունը, այս հետագծում մանրամասներով Օշականի գրության խնդրագրությունը, քննադատության բացասումը մեկնում այն ըմբռնումով, որ «կենսառութերի նվազման» գործընթացը քննադատության մերժումի հիմնական դրդիչներից է, սփյուռքացման ֆենոմենի, ընդհանրապես Սփյուռքի գոյության արդասիքն է: Պատահական չէ, որ «Համապատկերի» «Վկայությունն» հատորում Սփյուռքի գրականության մեծագույն չարիքը Օշականը համարում էր գրականության համատարած «քննադատականացումը». «Շատ են պատճառները, որ Սփյուռքը չունենա գրականություն: Բայց մեծագույններեն մեկը քննադատի հմայքը կը նկատեմ»<sup>20</sup>:

Հակոբ Օշականի «Գրականության համար» տպավորապաշտական գրության կիզակետը գրականության բացարձակ շահի մտահոգությունն է, անխոտոր նախանձախնդրություննը և, սրանք խաթարող իրողությունների ու հանգամանքների մերժումը. այս տիրույթներում են պարագրկվում գրության մեջ առկայված բոլոր հարցերն ու խնդիրները, քննադատության բացասումը: Հատկանշական է, որ գրականության հերթական պատմեշման ժամանակ, գրականության զառածման ռեցիդիվը բացասելիս, նիկողոս Սարաֆյանը հիշում է Օշականին. «Օշական, երբ գրականության դաս կուտար մեղի, օր մը, երեսուն տարիներ առաջ, ընդհատեց ընթերցումը մեր ընկերներեն մեկուն, և պուաց

17 Տե՛ս «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1930 թ., №№ 11-12, էջ 732-738:

18 «Սարդիներու շուրին տակ», էջ 25:

19 «Սիոն», Երուսաղեմ, 1983 թ., № 12, էջ 268-269:

20 «Համապատկեր....», հիտ. 10-րդ, էջ 369:

բարկությամբ. «Ճառ չեմ ուզեր, տղա՛... նստե տեղդ...»: Այս խոսքը կայծակի պես զարկավ մեզի (բարեխախտաբար): Օշական կարհամարհեր ճառը գրականությունը ճառի կը վերածեին: Դեմ էր հոետորության, որուն մեջ աժան գրականություն կը տեսներ»<sup>21</sup>: Գրականության ճառի փոխակերպությունը, չարչրկումը, պարզունակացումը նա տեսնում էր քննադատության այն կիրարկումներում, որոնք մեզանում մտայնություն էին դարձել:

Հենց քննադատություն էր այն «էժան գրականությունը», «ճառը», որը պարուրում էր ստեղծումը ախտահարույց ոստայններով: Ահա թե ինչու «Գրականության համար»-ի պարագրկումները ներառնում են ոչ միայն այդ «հիվանդության հարուցիչները», այլև՝ դրա ավերումների արդյունքներն են ցուցանում: Եվ եթե գրության ընդհանուր խնդրադրության մեջ քննադատության բացասումն ու բացասաման փաստարկումը իրականացվում է վերլուծության տարտղնմամբ օրագրության և հրապարակագրության բավիրներում, ի հաշիվ արվեստի ազատության՝ զանազան զսպաշապիկների առկայության ցուցանությամբ (սպեկուլյատիվ «գիտնականություն», Աղետի ընկալման և ընդգրկման կամ շահարկում, կամ անտեսում, ստեղծաբանության փոխարկելիություն՝ վերաշարադրանքով և այլն), ապա ավերումների արդյունքները վեր են հանում գրականության պատմության, առհասարակ մշակութաբանական մեծ շառավիղ ունեցող խորապատկերի վկայությամբ:

Արդ, փորձեմ համառոտ բնութագրել գրության պարագրկումները պայմանավորող բաղադրատարրերը, ինչպես նաև գրականության պատմությանը, մշակութաբանությանը վերաբերող ընդհանրական ամփոփումները:

Ա. – Քննադատության հերթումը լրագրականության և հրապարակագրության պարագրկումներում –

Քննադատության հիմնական կերպը, որ մեզանում գոյություն ունի և խաթարում է գրականությունը, ըստ «Գրականության համար»-ի հիմնագրույթի, պարբերականներում առլեցուն «լրագրական քննադատությունն» է և վերլուծական բոնադատումը հրապարակախոսության մեջ. «Թերթ հիմնելու մոլության հետ նույն գիծի եկող այս աղանդափոր եռանդը անհանգիստ կընե մանավանդ մեր բանի ու բառի ասպետները, որոնք իրենց խանդին համար քիչ գտնելով ընկերաբանական, քաղաքական ֆետիշ բառով մը՝ հասարակագիտական բանախոսությունները, վսեմ գոհարերումը կընեն իրենց ուժերուն, սպասարկելով՝ «բանին քարոզության», ու կընծայաբերեն «իրենց ովասանը» մեր գրականության (285)<sup>22</sup>: «Քննադատը, ամեն տեղ, բայց մասնավորաբար մեր մեջ, կը նույնանա, զայն գերազանցելու չափ, հրապարակագիր տիտղոսված մյուս փորձանքին հետ» (383): Հոբելյանների առիթով գրված զանազան հողվածներն ու գրախոսականները, մամուլի տեմպն առհասարակ՝ որ դեմ է արվեստի ներսուղ-

21 «Տեսարանները, մարդիկ և ես», Էջ 204:

22 Հետաքրքրական է, որ գրական նոր սերունդը նույնական բացասաւմ էր մամուլային գրականությունը՝ քննադատությունը. «Պետք չէ զայթակղիլ, որովհետև ամեն հայերն թերթի մեջ գրականության մասին խոտղ կա:- Գրում է Օահնուրը 1932-ին «Մենք» հոդվածում:- Գրականության մասին փշող կա: Հաշող կա: Ծարադրել գիտցողը գիրք վերլուծելու կելլեն...» («Սիրտ սրտի», Էջ 67):

ման, «հանդարտ» բյուրեղացման հանձնակատարությանը, գրականության մասին դատելու և «ձեռքի հետ գրելու» նորմը, օրաթերթի կարիքների և կոնյունկտուրայի համար ժխտումներն ու տարփողումները, հավուր պատշաճի անդրադարձները մի կողմից և գրականության մոտենալու արհեստավարժության չգոյությունը, քննադատության մեջ ստեղծումը կրավորելը, գրականության շահի անտեսումը այն վարանումն էր, որ առկայացնում է քննադատության հերքումը: Օրաթերթն ու հրապարակախոսությունը կլլում են<sup>23</sup> գրականության կենսաթրթիռները, գոյութենությունը, տարտամում ճառի, քարոզի մեջ՝ շղարշելով արվեստի կյանքից ներքերած զգայնությունները, բարքերը, հեքն ընդհանրապես:

Բ. – Քննադատության հերքումը խորհրդանակ գրականության պարագրկումներում –

Արևմտահայ գրականության, Սփյուռքի մշակութաբանական տարածքում հերքումնային քննադատությունը ամփոփագրելուց հետո Օշականը հայացքը հառում է արևելահայ իրականությանը, մասնավորապես խորհրդահայ գրականությանը այն ակնկալիքով, որ այստեղ կգտնի իրավ քննադատությունը, վերլուծության և ստեղծումի այն համադրությը, որի նախանձախնդիրն է «Գրականության համար» գրության մեջ և չնայած համամիտ է «...իրեն ուրանալու համար բոլոր մշակումները, օրենքները, վերջապես ինչ որ գիրքերը կը սորվեցնեն, իրենց անտաղանդ ընկերներուն» (397), սակայն կրկին ժխտում է այնպիսի քննադատությունն ու գրականությունը, որ դյուրամատչելի լինելու համար ծանծաղում է ու տափակաբանում: Սակայն, հարկ է միանշանակ արձանագրել, որ այս պարագային Հակոբ Օշականը խոտորման հուզավառության մեջ, որ բնական է գրապատմական հանրահայտ իրողությունների և ստեղծագործությունների համար, վրիպում է Եղիշե Զարենցի «Երկիր Նաիրի»-ի մասին կարծիք հայտնելիս<sup>24</sup>: Հավանաբար գնահատականի ժամանակ ներագրել է չարենցյան ձախությունների այն էպիգոնական նմանակումները, որոնք խաթարում էին ամբողջ գրական-գեղարվեստական գործընթացը: Այնուհանդերձ, միանշանակ է, որ Օշականի «Կյանքի», իրականության անսպառ հանքերի» պեղման չափանիշը լիովին իրացգած էր «Երկիր Նաիրի»-ում, որ այս վեպը «Գրականության համար»-ի խորհրդի վավերացում էր: Բացառյալ այս իրողությունը, օշականյան «ուժերի վատնումի» տեսանողությունը նաև խորհրդահայ քննադատության շրջագծում միանշանակ է, իսկ սա արդեն չի կարող լինել պատահականություն, ուրեմն խնդիրը քննադատության նորմատիվ-ընդունելի կիրարկումներում է, քննադատության բնույթի հերքման և պատնեշման մեջ, մանավանդ հար և նման մտայնությունը բնորոշ է հայոց գրականության մյուս գերակա գրսելորմանը՝ Մխիթարյանների ստեղծումին:

Գ. – Քննադատության հերքումը Մխիթարյան գրականության պարագրկումներում –

23 Պատահական չէ, որ Օշականը խոստովանում է, թե հոդվածներն ու գրախոտպաթյունները նրա համար «բարեկամական թամկագին կապերու» տանջանք ու զիջումներ են եղել: Տե՛ս «Մարիներու շուքին տակ», էջ 26-27:

24 Ինձ համար դա Օշականի հետ անհաշտության, բախման միակ եզրն է:

*Միմիթարյանների* վերլուծական-քննադատական գործունեության մեջ արժելորելով բանասիրականը *Օշականը* ցավով փաստում է իմացական արդյունքի բացակայությունը. «Քննադատության նվիրված այս նոթերուն շարքին կարելի չէ չարտահայտվիլ Վիեննական Միմիթարյաններու մասին որ վերջին դարուն, փորձեց մեր մեջ մատենագիտական-բանասիրական հիմերու վրա ընդարձակ մեկնողական շարժում մը: Հարյուրամյա այդ փորձառության արդյունքը դժբախտաբար կշիռ չունի մեր իմացական կյանքին վրա, այնչափով որքան որ սպասելի էր այդքան լուրջ բռնված ու ամուր բազուկներով հետապնդված ձեռնարկ մը: Ոչ մե՛կ առարկություն աշխատանքի ըմբռնումի մասին, ու մանավանդ այն բաժնին՝ որ բնագիրները կուսումնասիրե» (435): *Մյուս պարագկումների* հերքմանն հար և նման այստեղ ևս նա տեսնում էր գրականության արարքի՝ ստեղծման կրավորումը, պարագայականությունը, «գրական իրողությունը նվաճելու» կամ բացակայությունը և կամ՝ փոխակերպությունը գրականությունից անդին, ստեղծման բնույթից դուրս տարրերով:

Բնականաբար քննադատության հերքման այսօրինակ շառավիղը պիտի առթեր գրականության պատմության, մշակութաբանության ամփոփում-ընդհանրացումների «Գրականության համար»-ի կառուցվածքում: Բացասումը, «Ուրացումը» շրջանակելով առարկայի ինքնին ժխտումի տարելրում: Հայ գրականությունը համարելով (թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ) «...մեր ժողովուրդի պատմության ազնվագույն փաստերը»<sup>25</sup>, ելակետում է. «Դիտելի է որ մեր մեջ քիչ շատ շեշտ, ինքնություն, ամբողջական դիմագիծ ներկայացնող երկու շարժում, մեր վիպականությունն (romantisme) ու իրապաշտությունը (realisme), երևան եկած ու իրենց լրումին են գացած առանց տարագներու և հանգանակներու նպաստին, նույնիսկ գոյության» (283): Այս պարագային *Օշականը* կրկին ընդգծում է ստեղծման, գրական արարքի գերակայությունը, արդեն գեղարվեստական-մշակութաբանական գենոտիպի, պատմական բնույթի խորհուրդով: Քննադատության ածանցյալությունը փաստարկում է «էապես անկումի երկույթ» լինելու հանգամանքով՝ նամանավանդ կենտրոնախույս, այսինքն՝ «օրկանիք միութենե զուրկ» հայ գրականության համար:

Հակոբ *Օշականի* «Գրականության համար» գրության համատեքստում քննադատության «ուրացմամբ» առկայում է անհատական, ինքնատիպ օշականյան ըմբռնումներում և հայեցության մեջ անկրկնելի, «էտալոնային» քննադատության կերպ: Նախ՝ «ուրացման», հերքումի մակարդակը: Գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանությունը ըստ օշականյան խնդրագրության հերքելի, «ուրացվող» իրողություն է, հետևաբար քննադատությունը ինքնին ստեղծաբանական ուժերի վատնում է: Այն իբրև «Տարտղնումի, տկարության այլապես զորավոր ազդակ մը՝ մեր ինքնին վտիտ գրականության համար...» (282): Մեր իմացական-հոգեկոր ստեղծումի ընդամենը «վավերական մակաբույծն է», որը գրականություն է ներքերում ոչ միայն հրապարակագրության արտագրական հանձնառությունները, այլև... «միշտ իր կոնակը տված է քաղաքական կուսակցության...» (359), իսկ այդօրինակ քննադատությունը օ-

25 «Համապատկեր...», հտ. 1-ին, Երուսաղեմ, 1945 թ., էջ 1:

շականյան պարագրկումներում մերժելի է, անընդունելի, այն ըստ էռթյան «...կը սկսի վերջե մը, ավարտե մը, մահվանե մը, որուն նշանն ու սկիզբն է նույն ատեն»<sup>26</sup>:

«Գրականության համար»-ը խոտելի քննադատության առկայումներում միաժամանակ ուրվագրում է դրա փոխակերպությունը, այնուհետև այն որակի հաստատագրումը, որ պիտի մոտեցնի գրականությանն ու քննադատությանը: Դա նախ քննադատության պատճեցումն է կեցվածքային գիտնականությունից, ապա՝ «...տենդենցիոզին ու դեկրետով բռնադրվածին...» (399) և վերջապես՝ գոյավորի ստեղծումի ազատությունը առանց ընթերցողի քիմքին հագուրդ տալու մտահոգության, իր գործում սրբազնացնելով արվեստը:

Պատահական չէ, որ իրեն նվիրված «Համապատկեր»-ի հատորում քննադատի և քննադատության հիմնական առաքելությունը, անելիքը համարում էր «Ամենեն առաջ փնտրել այդ բառերուն ետին մարդ մը: Ասիկա անոր համար, վասնզի մեր բառերը շատ անգամ չեզոք, անկնիք հավաքումներ, բառարանեն չոր-չոր հանված ու քովե քով գրված»: Եվ որովհետև բառերը ոչ այլ ինչ են, եթե ոչ «...քարացած հուզում մը, սառած սարսուռ...» (435), ապա դրանց «խոշտանգումը» («Բառերը կը վարձատրեն երբ խոշտանգենք զիրենք» (435) այն հաղթաբան՝ այսինքն՝ գորավոր խոսքն է, որ հերքումը համանունացնում է յուրօրինակ միստերիայի, որի տիրույթներում «մեռնող» և ապա «հառնող» քննադատությունը փաստում է իր միակ նախանձախնդրությունը՝ վկայությունը գրականության համար:

26 Գր. Պըլտյան, «Հ. Օշականը քննադատ», «Բագին», 1984 թ., մարտ, Էջ 52: «Համապատկեր...», հատ. 10-րդ, Էջ 321:

## ԸՆԹԵՐՑՄԱՆ ՆԵՐՓԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այ գրականության կենսոլորտը պատկերացնելի չէ նաև առանց Հակոբ Օշական արևմտահայ գրականության անխտիր բոլոր երեսույթների, մտայնությունների, շրջանների պատմագեղարվեստական հանդրվանների, անունների, հոսանքների, գեղագիտական հանգանակների, տեսական զանազան խնդիրների ուսումնասիրությունների, մեկնությունների ծիրում։ Գրականագիտական ընթերցումի ցանկացած անջրպետում Հակոբ Օշականից դատապարտված է, ձախողանք է, որովհետև հնարավոր չէ քննարկվող առարկայից, պատմությունից զանցառել ոգու կենսագրությունը, բնույթի հանրագիտարանը, իսկ վարպետի «Համապատկեր արևմտահայ գրականության» բազմահատուրը հայ գրականության ոգու կենսագրությունն է, բնույթի հանրագիտարանը։ Արևմտահայ գրականության պատմության այս գրքերի գիրքը, մատյանների մատյանը բնականաբար առթում է ընթերցման առարկայական կարելիությունների անվերջավորություն՝ ոգու կենսագրության և բնույթի հանրագիտարանի իմացական ազդակներին ներգործելու, գրականության պատմությանը մոտենալու, միասնականացվելու համար։

Այս գրականագիտական-քննադատական պարբերական արծարծումները «Համապատկերի» շուրջ միշտ հրատապ են։ Եվ իրոք, ամեն վերլուծական հանդիպադրում արևմտահայ գրականության պատմության գրքերի գրքի հետ ներբերում է մշակութաբանական կառուցողական տեղեկատվություն, որի տիրույթներում, ամենատարբեր տեսանկյուններից ու հայեցակետերից դիտված և քննված, վեր են հանվում, լուսաբանվում ու մեկնաբանվում են «Համապատկերի» բազմաթիվ էջեր, որոնք ինքնին պատմությանը ներդաշնակվելու եղակի հնարավորություն են։

«Համապատկերը» միշտ էլ եղել է տեսաբանների և գրադատների տեսադաշտում, սակայն վերջին երկու տասնամյակներին, հատկապես Գրիգոր Պլատյանի և Մարկ Նշանյանի հիմնարար ուսումնասիրություններով, ինչպես այս, այնպես էլ առհասարակ վարպետի քննադատական-վերլուծական ժառանգությունը իրավամբ դարձել են վերլուծական մտքի կիրակետ<sup>1</sup>։ Քննության առարկա են դարձել թե՛ «Համապատկերի» մեթոդը, բնույթի բազմազան հարցերն ու խնդիրները և թե՛ գրքերի գրքում ամբարված տարբեր մասնավոր, «տեղային» իրողություններ։ «Համապատկերը» դիտվել է զանազան գուգահեռներում<sup>2</sup>,

1 Պետք է առանձնահատուկ նշել Գրիգոր Պլատյանի «Հ. Օշական՝ քննադատ» ուսումնասիրությունը, որի մեկ հատվածը զետեղված է «Բագին» հանդեսի՝ Օշականի 100-ամյակին նվիրված համարում (Բագին, 1984 թ., թիվ 1-2, թիվ 3)։ Վարպետի քննադատության, տեսական հայացքների շահեկան վերլուծություններից են Մարկ Նշանյանի «Վեպը և արդիական սկզբունքները» (Բագին, 1984 թ., թիվ 1-2, էջ 93-105), «Գրական կանգնումը» (Կամ, Փարիզ-Բոստոն-Ցուրնուոն, 1986 թ., թիվ 3-4, էջ 195-243), «Քննադատությունը և սրբազնության փորձնակալումը» (Կամք, թիվ 3, Փարիզ-Երևան, 1993 թ., էջ 67-85) ուսումնասիրությունները։

2 Օդիանա՝ Հ. Մանուկյանի «Վիպական տարրը օշականյան «Համապատկեր»-ին» գրությունը։ Տե՛ս Բագին, 1984 թ., թիվ 1-2, էջ 139-145։

առնչությունների մեջ: «Համապատկերի» ընթերցման առարկայական հնարավորությունները արևմտահայ գրականության ողջ ընթացքը լիակատար պատկերացնելու կարելիություն են ընձեռում, քանի որ այնտեղ ընդհանրացրած հանգրվանային առաջադրություններն արդյունք են գրական կյանքի տեսակի, բնույթի, հայ գրականագիտական մտքի համար եղակի սահմանում-վավերացումների: Բնականաբար այս իրողությունը ենթադրում է «Համապատկերի» մեկնաբանության անպարագծելի հնարավորություններ: Ցարդ տեսության կիզակետում է եղել ընթերցումի «ընդհանուր» եղանակը՝ «Համապատկերն» ամբողջությամբ: Եվ կամ «մասնավորը» որևէց հատոր կամ հատորներ ներառող մի շրջանի ամբողջական պատմական հետագիծը: Մինչ հիմա գրականագիտությունը շրջանցել է «Համապատկերի» ընթերցում-մեկնության ներփակ եղանակը:

Հարկ է նշել, որ ներփակ վերլուծության, մեկնաբանության սկզբունքները միանշանակ կիրառելի են ոչ միայն գեղարվեստական ստեղծագործությունների քննության ժամանակ, այլև՝ տեսական, քննադատական գործերին անդրադառնալիս: Նամանավանդ, երբ գործ ենք ունենում «Համապատկերի» տիպի հիմնարար, «բազմաձայն» աշխատության հետ. «Նոր տարագներ, իմաստասիրական կասկածելի րօստուաներ չեմ առաջարկեր դատելու համար արևմտահայ գրականությունը: Բայց կը մերժեմ աժան, արագ, հաստ, տափակ ընդհանրացումներուն ալ պորտաբույծ արհամարհանքը: Արևմտահայ գրականությունը մտայնությանց շատ սրտառուչ հանդես մըն է ամեն լուրջ պրատողի: Մտայնություններն են՝ 1. գարթոնքի սերունդին բոլոր առաջադրությունները, 2. սահմանադրական պայքարները, 3. Միթիարյան ազգայնականությունը, 4. իրապաշտներու գրական կեցվածքը, 5. հեղափոխական հռետորությունը, 6. ժողովրդապաշտ ճգտումները մեր մեծ գրողներուն, 7. արվեստի հզոր հակումներու հեշտանքը մեր Արվեստագետ սերունդին, անոր նրբացյոււ ճգտումները, 8. գավառիկ գրականությունը փառաբանող իմացական ճակատումը, 9. հայ հոգին ազատագրելու ավելի ծախ որոնումները, – բոլոր այս ու այն կերպով հաստատելի՝ այս ժողովուրդին բազմադարյան գրական ոգորումներուն մեջ, երբեմն ոգիով ինքզինքը հայտնաբերող, երբեմն ձեռվ, երբեմն լեզվական մտահոգություններով, երբեմն աշխարհին ընդլայնումովը», – առաջադրում է «Համապատկերի» «Սուլաքում» վարպետը<sup>3</sup>: Մատնանշած մտայնություններից յուրաքանչյուրը ենթադրում է ներփակ ուսումնասիրությունների հսկայաբանակ տարբերակներ՝ օշականյան արծարծումների, կենտրոնացումների վերհանումից մինչև հեղինակների, գործերի քննության մասնահատկությունների ըմբռնում, ընկալում: Հավելենք մատնանշածին, որ «Համապատկերի» հիմնարար բնույթը ներառում է նաև արևմտահայ գրականության պատմության մեջ գրական դպրոցների, ուղղությունների, հոսանքների, գեղագիտական հայեցությունների, ժանրերի տեսության մասին վիթխարի լրատվություն: Դրանցից ցանկացած

3 Հակոբ Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականության», Երուաղեմ, 1945 թ., հտ. 1-ին, էջ 3: Հետապնդու «Համապատկերից» բերված բոլոր հոդումները բնագրին կից փակագծերում, հոդմենական թվանշաններով նշված են հատորը, արաբականու՝ էջը:

ներփակ ընթերցումն ըստ ամենայնի առաջադրում է ներդաշնակ և ամբողջական տեսությունների մի համակարգ՝ սկզբունքային, անխոտոր, պատճառականացված և փաստարկված գրապատմական համապատասխան հոսքի ամբողջական երփնագրով։ Այնպես որ «Համապատկերի» ներփակ ընթերցումը մոտեցնում է «...արտահանել այդ եղանակին ենթատողը, անոր ենթագիր գրականության տեսությունը, ինչ որ համարժեք է Օշականի գրության հիմերու քննության»<sup>4</sup>։ Երկու խոսք «Համապատկերում» ամբարված տեսությունների-սկզբունքային/հետևողական-համակարգային կերպի մասին։ Դժբախտաբար, գրական շատ որոշակի շրջանակներում տարիներ շարունակ թևածում է այն թյուր մտայնությունը, թե իբր Հակոբ Օշականի «Համապատկերը» հախուռն ու խուռներամ է, քառային, անհամակարգ, հակասական և վայրիվերումներով ինչպես առանձին գրագետների բնությագրման, այնպես էլ տեսական խնդիրների արծարծումների ժամանակ։ Եթե Հայաստանի գրադատի և գրագետի այսօրինակ գնահատումները կեղծ գիտականությունն ու «ակադեմիզմը» աներկա շղարշելու ձևերն էին, ապա սփյուռքի մտավորականի նույն կեցվածքը մի կողմից՝ երևանյան քննադատների «Հավատաքննիչային» հանկերգի մատակարարը, մյուս կողմից՝ տարտղնված մտքի ավանդական բարդութիւն հերթական գրսկորումը։ Մտայնության բնորոշ արտահայտություններից է Անելի ներքոբերյալ դատումը՝ թվագրված 1984-ի հոկտեմբեր 26-ին։ «Նույն հեղինակի մասին երբեմն գովք, ուրիշ ատեն պարսագ։ Ես այդ հակասությունները այսպես կը բացատրեմ.՝ Օշականի միտքը տոպրակ մըն է ուր կը նետեր կյանքեն ու ընթերցումներեն ինչ որ գար, առանց կարգի և կանոնի։ Անպետ բաներ չկային անոնց մեջ, բայց առանց մեթոդի և կարգավոր մտածողության, կը հավաքվեին այնտեղ, և երբ առիթը ներկայանար, ձեռքը կը նետեր այդ տոպրակին մեջ ու կը բռներ ինչ որ գար, և որովհետև հեղինակի մը դրական մեկ երեսը կու գար օր մը, և ուրիշ օր մըն ալ անոր բացասական երեսներեն մեկը, անհարիության տպավորությունը կը ստեղծվեր ունկնդիրներուն մեջ։ Բայց ամբողջությամբ և հիմնապես բացասական գրագետ մը հանկարծ դրական արժեքի չեր գար երեք։ Մտքի այս «տոպրակությունը» եթե այսպես ըսենք, հետեւանք էր ինքնաշխատությամբ ձեռք բերված հմտության, առանց մտային տեսիլքին և բարձրագույն մեթոդիկ ուսման։ Ինք գիտեր ասիկա և Մելքոնյանի իր աշակերտները կը պատմին թե մաթեմատիկի ուսուցիչն ինչպես ու երկրաչափության խնդիրներ կառներ և կը լուծեր իր ուղեղը կանոնավորելու համար»<sup>5</sup>։ Դիտավորյալ ենք ծանրանում վերը բերվածին, որովհետև Օշականի, մասնավորապես նրա քննադատության և «Համապատկերի» ընկալումների ու գնահատումների շրջանակում նմանօրինակ դատողությունները վարպետի սպեկուլյատիվ մեկնաբանության հանկերգն են։ Դժվար չէ նկատել այդ դատումների

4 Գրիգոր Պելտյան, «Հ. Օշական՝ քննադատ» էջ 110:

5 Անել, «Հակոբ Օշական. Մարդը, Ուսուցիչը, Քննադատը», էջ 23։ Իսկ երկրաչափության խնդիրների լուծումները ընդամենը ֆենոմենալ հիշողության հասկանալի մարզանքներ եին։ Վկա՝ հուշագրությունները, նամանավանդ՝ գործը։ Այս պարագային իրողությունը գիտական մակարդակից փոխանցվում է բարյական հարթություն՝ այս մարդկանց խղճին թողնելով փաստերի հարմարեցման մտավարժանքները։

Հետևյալ ստեղծութիպերը՝ «լավ քննադատ էր, բայց տեսակետներն ու սկզբունքները հեղինակուկ էին, անհետևողական», «գրականության արհեստավարժ պատմաբան էր, սակայն, նայած տրամադրության, միևնույն երևոյթին կարող էր բեեռային բնորոշումներ տալ», «հմուտ տեսաբան էր, բայց չուներ համակարգ» և այլն: Գրականության տեսաբան և պատմաբան, քննադատ Զակոք Օշականին այս վերագրումները հանգուցողները հարկ է մեկընդմիշտ նկատի ունենան հետևյալ իրողություններն ու նկատառումները.

ա) իրենց իսկ «մեթոդաբանության» նախանձախնդրությունից ելնելով՝ չպետք է դատողություններով այդքան հակասական լինել և «անհետևողական, վայրիկերո, անսկզբունք», «տոպարակային միտք» ունեցող գրադատի ժառանգությունը արժեսորեն դրական: Այս պարագային, հետեւելով իրենց տրամաբանությանը, բնական հարց է ծագում՝ ե՞րբ է ճիշտ Օշականը՝ գրողին, մտայնությանը, գեղարվեստական շարժմանը այպանելի՞ս, թե՞ գովերգելիս, և ինչո՞ւ է օշականյան քննադատությունը և տեսական խնդիրների արծարծումները դիտում «սև-սպիտակ», «լավ-վատ» տիրացուական արժեքայնության բավիղներում, արդյո՞ք «Համապատկերը», տեսական-քննադատական բազմաթիվ գրությունները այդ արժեքայնության հատույթում են, ու եթե վերապահ չեք օշականյան այն պոստուլատին, որ վերլուծությունը գրականության պատմությունը պետք է ազատագրի հայ քննադատության իմացականությունը, մի՞թե այն ազատագրվել է կիրարկում՝ Օշականի տեսական-քննադատական ժառանգության հակասականությամբ,

բ) առանց համարաբանների և «բարձրագույն մեթոդիկ ուսման»՝ «ինքնաշխատությամբ ձեռք բերված հմտությունը» հետևողական սկզբունքի և համակարգի գոյության վավերացումն է, որովհետև նրա տեսական-քննադատական յուրաքանչյուր դատում սրբագործված էր միմիայն հայ գրականության շահերով, իսկ մեր մշակութաբանական տարածքում նման կենսակերպն ու պահպաժը բացառապես հերոսություն է. հարկ կա՞ այս մասին տարածվելու,

գ) նման գովաբանականները գրական կյանքին բնորոշ «օշականաֆորիայի» թաքնված, գաղտնագրային սինդրոմներից են, որ բնական է, ում շատ է արված, նա պիտի հար ունենա «խաթարող հակոտնյան», որպեսզի ամեն անդամ այն չեղոքացնելով՝ ընդգծի, ցուցանի իր խորքն ու արված գործի անեղրականությունը,

դ) պետք է վարպետի տեսական-քննադատական ժառանգությունը դիտել, ուսումնասիրել միասնական ընթերցումով,

ե) ապակինտրոն համակարգը չի նշանակում դրա չգոյություն, բացակայություն, ավելին՝ մատնանշում է գրականության պատմության և տեսական խնդիրների արծարծումների ներդաշնակ և հետեւողական համադրություն:

Բավարարվենք այսքանով, նամանավանդ՝ «Համապատկերի» ներփակ ընթերցման այս փորձը, կարծում եմ, հաստատագրում է իրողությունը:

Երրորդենք, որ «Համապատկերը» զանագան ինքնավար, ներփակ խնդիրների շտեմարան է և զուտ հետազոտական նկատառումներով դրանցից որևէ մեկի տարանջատումն ու անկախ ընթերցումը հանգեցնում է մի ավարտուն, «ներդիր» ուսումնասիրության: Այս առումով, ըստ իս, կարեոր և սկզբունքա-

յին են ժամրերի տեսության ինքնավար, ներփակ հոսքերը «Համապատկերի» համարնագրում: Ինչո՞ւ կարեոր և սկզբունքային: Ամրագրված տեսակետ գոյություն ունի, ըստ որի Օշական գրականության պատմաբանի և տեսաբանի (խարսխված հատկապես «Համապատկերին») տպավորապաշտական քննադատությունը կամ գրականությունը է գրականագիտական ինչ-ինչ կարգերի, հասկացությունների, հատկապես ժամրերի, ժամրային հանդերձների պայմանագրող-հատկանշող-կազմաբանական մասնահատկությունները, առհասարակ ժամրակազմությունը, ժամրի տեսության հատկանիշները գիտում իբրև գրականության ածանցյալներ՝ այդ ինդիրների ընթերցումմեկնաբանությունները թողնելով կամ ուսումնասիրությունների, վերլուծությունների լուսանցքներին, կամ՝ հպանցիկ ճեպագրերին: Ընդհանրապես «Համապատկերի» իմացաբանական-գեղագիտական ուղղորդության, մեթոդի և տեսակի ընթերագրումների շրջանակը տարրունակ ինդիր է և սույն գրության սահմաններից գուրս, ուստի չմանրամասնվելով փաստենք, որ վարպետի «Համապատկերը» չէր կարող ընթերցման պարագծի մեջ չներառնել բախտինյան բնօրշմամբ «գրականության հիշողությունը»՝ ժամրը իր տեսությամբ, գոյաբանությամբ, որը համարնագրում ունի ընդհանրապես համապարհային քննադատությունների սփոված պատմությունով մեկ: Այս ապակենարուն տեսությունների առկայությունը «Համապատկերի» կառուցվածքում ոչ միայն եզակի, բացառիկ երևոյթ է գրականագիտության ասպարեզում, այլ նաև ժամրերի տեսության կաղապարների ազատագրում ընդհանրապես համաշխարհային քննադատության մեջ: «Համապատկերի» վեպի, թատրոնության, քերթողական ժամրերի, փոքր արձակի (նորավեպ, վիպակ, պատմվածք) ապակենարուն տեսությունները տակավին անդրադարձված չեն գրադատության գուգահեռներում:

Նորավեպի տեսության ելակետը հետեւյալ առաջադրությունն է. «Նորավեպը գրական կտոր մըն է և ատենով իսկ ենթակա գիրքերու օրենսդրության մեծ ցուցմունքներուն» (V, 163): Եվ «Համապատկերի» կառուցվածքում նա սկզբունքորեն բացում է ժամրի «օրենսդրության ցուցմունքները»՝ գոյավորելով ամրակուռ և համապարփակ տեսական կառույց: Սակայն հարկ է, մինչ օշականյան նորավեպի տեսության ընթերցումն, անդրադառնալ «Համապատկերի» կառուցվածքում ընդհանրապես տեսությունների բեկուացման, հավաքականության հարցերին:

Որ Օշականին էր ի վերուստ վերապահված ստեղծելու արևմտահայ գրականության պատմության գրքերի գիրքը, ընդնշմարփում է գեռևս 1909 թվականին, երբ վարպետը կ. Պոլսի «Ազգակ» շաբաթաթերթում ստորագրեց իր առաջին՝ «Վրթանես Փափազյան և իր «Պատմվածքներ թյուրքահայ կյանքից»-ը» քննադատականը<sup>6</sup>, այնուհետև «Ազատամարտի» գրական հավելվածում, «Հայ գրականություն» հանդեսում, «Մեջյանի» էջերում (անդուգական «Հարթենք» շարքը), «Նավասարդում», «Ոստանում», «Բարձրավանքում» և սփյուռքի գրեթե բոլոր պարբերականներում («Արև», «Հուսաբեր», «Հառաջ», «Հայրենիք», «Նայիրի», «Սիոն», «Կյանք և արվեստ», «Հայաստա-

6 Տե՛ս Ազգակ, Կ. Պոլիս, 1909 թ., թիվ 41:

նի կոչնակ» և այլն) հրապարակած և՝ ընդգրկումներով, և՝ ծավալով վիթխարի վերլուծական նյութը փաստորեն «Համապատկերի» գոյացման ներուժն էին: Պակաս կարևոր չէր նաև վարպետի իրավացի ընդդիմությունը 20-30-ական թվականների քննադատության հանդեպ, որ ճապաղ և ծեքծեքուն կաղապարներով, «գիտունության» կեցվածքով հեղեղել էր գրական կյանքը: «Ինձի պես շատերու ուշադրության առարկա դարձած ըլլալու է նորությունը որ քսան մը տարիներե ի վեր կը դիտվի մեր մեջ, քիչ մը ամեն կողմ. ու կը հետևի մեր գաղթականության հոսանքին: Թերթ հիմնելու մոլության հետ նույն գիծի եկող այս աղանդավոր եռանդը անհանդիստ կընե մանավանդ մեր բանի ու բառի ասպետները որոնք իրենց խանդին համար քիչ գտնելով ընկերաբանական, քաղաքական, ֆետիշ բառով մը՝ հասարակագիտական բանախոսությունները, վսեմ զոհաբերումը կընեն իրենց ուժերուն, սպասարկելով՝ «բանին քարոզության», ու կընծայաբերեն «իրենց ովանը», մեր գրականության: Անոնք կը խոսին, բեմե բեմ ու քաղաքե քաղաք, մեր գրագետներուն վրա, անդիմադրելի լրջությամբ: Ու անփոխարինելի է իրենց պարզամտությունը, առանց զույգ տարակույսի մը ստվերին որ քիչ մը խոռվք նետեր իրենց միապաղաղ տգիտության:

Ասիկա այսպես էր Պոլիս, սկսելով Եսայան սաներու սարքած ասուլիսներեն որոնց մեջ ականավոր ու չականավոր մարդիկ իրենց գիտցածեն և չգիտցածեն բաժին կը հանեին հասարակության: Ու ոչ ոք մտածեց առնվազն այն անտեղության վրա որուն նմույշը կու տային տարրական մշակույթով քերթողներ երբ փոխանակ ստեղծելու՝ քննելու և դատելու կելլեին:

Ասիկա այսպես է և այսօր: Նյու-Յորքեն Փարիզ, մինչև Ֆրանսային համեստ մեկ գյուղաքաղաքը»<sup>7</sup>: Այս մտայնությունը Օշականի համար կարևորագույն և հրատապ մտահոգություն էր, քանդումի և տարտղնումի անցումը պատճենու, քննադատությունը ազատագրելու գերխնդիրը հասունանում էր, և 1938-1944-ին իրագործված «Համապատկերը» պիտի վերջապես հայ իրականությանը ներկայացներ արևմտահայ գրականության «լոգոսի» խտացումը: ««Համապատկերը» դատարան մը չէ իմ մտքին մեջ, ոչ ալ լվացարան մը: Հոն մարդոց չափ, բայց ավելի լրջությամբ մտայնություններն ու ապրումները կը նախասիրեմ պատկերել» (X, 3): Պատկերագրումների նախասիրություններում հստակորեն առկա են անխառն տեսական կենտրոնացումները, որտեղ «կյանքի մեթոդը» (իր բնութագրումն է) «կենսային ուժերու» խսկական կարգ մը կը պարտադրե, կը տնօրինենք»<sup>8</sup>: Խակ տեսությունները հայ կյանքի «Ուկյա երազի» (հայ գրականության վարպետի բնութագրումը) պատմության համակարգում հստակորեն տարրոշվում են մեկնաբանության պարագծերով, որտեղ միանշանակ է մտայնությունների և վկայությունների սահմաններում տեսական առաջադրությունների ինքնավարությունը: Նամանավանդ, որ դրանք ժանրերի սահմանման, կազմաբանության և բնույթի ըմբռնումներում ենթադրում են կազմակերպող-հատկանշային դրսեորումներ:

Նոր ժամանակաշրջանի նորավեպի սկզբան ելակետային հատկանիշներից

7 Հակոբ Օշական, «Գրականության համար», Զվարթնոց, 1929 թ., դեկտեմբեր, էջ 285:

8 Գրիգոր Պոլտյան, «Հ. Օշական՝ քննադատ», էջ 110:

մեկի՝ հոգեբանական դաշտի կիրարկման մեկնարկայնությունը Օշականը գիտում է գրականության պատմության մտայնությունների համարնագրում: «Մշտապես անբավական, չըսելու համար աղքատ իր ժամանակը, իր արքենի ջիղերը և ասոնց կապված բյուրազգի զգայնությունները, իր շփումներուն, հարաբերությանց տարապայման ընդարձակությունը կը միանան իր նորավեպերուն մեջ, տալու համար անոնց՝ փայլ մը, ճշգրտություն մը, կատարելություն մը (achevé) որոնց չեն հասած իր սերունդին այլապես արժեքավոր ժառանգությունները: Խոր հոգեբանության այն դաշտը որուն նախազգացումը կը թելադրեն մեզի Վարժապետին Աղջիկը, Աղջկան մը Սիրտը (գեթ իր պոլսական մասին մեջ) բայց կը մնան հոդ, ըսել կուգեմ չեն նվաճեր այդ հրաշախառն հոգեկանությունը, պեղումի բացվեցան Զոհրապի գրիչով, նեղ ու փոքր ածուներու վրայով: Իրմե վերջը Զապել Եսայան, Երուխան պիտի ընդարձակեին թեքնիքը, համանելու համար գեղեցիկ արդյունքներու: Բայց իրեն գրչակիցներեն ոչ մեկը չէ տված մեզի, գեթ տարրական չափու մը վրա, մեր հոգեբանության քանի մը ալքերը պատկերող գրվագներ» (V, 158): Այսպիսով, խնդրի համար ելակետային մտայնության սահմանումը հիմք է տալիս տեսական հանգուցման ներգորությունը ընդգծելուն: Հոգեբանության պեղման առաջադրությունը արևմտահայ նորավեպի կառույցում 19-րդ դարի 80-ական թվականներից գոյագորեց ժանրի հղացքային-ձևաբանական դրսերումների հսկայական հնարավորություններ՝ օրիորդ Մենիկից մինչև Լեռն Շաթրյան, Կարապետ Ռոկանից՝ Մերուժան Պարսամյան: Նորավիպագրության գեղարվեստական իրագործումների այս արտահայտությունը 1880-1910-ական թվականների ժանրի տիրապետող մտայնություններից էր, և օշականյան սույն սահմանումը «Համապատկերի» շարակարգում ձեռոք է բերում տեսական ելակետային արձանագրության գործառնություն: «Համապատկերի» համապատասխան մտայնությունների փաղանգում զուգահեռաբար ելակետայնություն ունեն ոչ միայն ընդհանուր բնույթի խնդիրները, այլև զուտ ժանրակազմական հարցերը: Այսպես՝ Թղկատինցու պարագային վարպետը սահմանում է. «Թղկատինցիի վիպակը մեր մեջ առանձին կաղապար մըն է» (VII, 116), իսկ Կամսարականի նորավիպագրության բնութագրման ժամանակ մատնանշում. «Համբավավոր Կարոն, Մերկիկը ուրիշ բան չեն եթե ոչ այդ մարդոց խորհրդանշած կյանքը նույնիսկ» (V, 279): Եթե Թղկատինցու պարագային մատնանշվում է արևմտահայ նորավեպի ժանրակազմական եղակի ուրույնության մասին, որ «Վաղվան գրականության» հանգանակը, գեղագիտությունը կրողների ժառանգության մեջ գոյագորեց նորավեպի առանձնահատուկ կերպ՝ Մալկարացի Կարո, Վահան Հարությունյան, Գեղամ Տեր-Կարապետյան, Հմայակ Նարլյան, Կարապետ Տողրամաճյան, Ռուբեն Զարդարյան, այլք (Հրանդի պարագան այս հարացույցում փոխանցումային է), որ Թղկատինցու փոքր արձակում իրացվեց հանգրվանային կատարելությամբ, ապա կամսարականյան «Հակազդեցությունը» ամփոփագրում է արևմտահայ նորավեպի տիրապետող մտայնություններից խոհագրություն-դի-

մանկարների շարքը՝ Զապել Եսայան, Ենովք Արմեն, Տիգրան Արփիարյան, Օննիկ Չիֆթե-Սարաֆ, Վահան Մեշտուտճյան, այլք:

«Համապատկերում» տեսությունները անվերապահորեն զուգորդվում են համապատասխան վկայություններով՝ ամբողջացնելով դրույթներն ու փաստարկները: Ի դեպ, տեսական վկայությունների՝ առաջին հայացքից «խուռներամ», «ցիր ու ցան» տեղակայումները «Համապատկերի» կառուցվածքում պատճառաբանվում են այն հանգամանքով, որ յուրաքանչյուր դրսեորում համարնագրում միտում է արծարծումի, խնդրի, վերջապես արևմտահայ գրականության պատմության ընթերցման կոնկրետ և ընդհանուր վերլուծության: Այստեղ է, որ գրքերի գրքի ներփակ ընթերցումն առարկայական հնարավորություն է ընձեռում շոշափելիացնել պատմության մեջ ամբարված «զուտ» տեսությունների հոսքը: Երկու օրինակով փորձենք փաստարկել այս մասնահատկությունը ևս:

Սիպիլի նորավիպագրության անդրադարձներում ժանրի հսկայածավալ դրսեորումներից արտածվում են ժամանակաշրջանի, կյանքի հոգեվիճակների, ապրումների վկայությունները. «Իրապաշտ մեր վիպակը թերևս իր գեղեցկությունը կը պարտի այն հանգամանքին, որուն համեմատ անիկա կը կազմվի գրեթե անձնական ապրումներով: Քառասուն տարին բաժնեցեք քսան վիպակի վրա (Կնոջ Հոգիներ) ու դու կունենաք անհրաժեշտ ժամանակը որպեսզի գրագետին ջիղերը հանդիպումը ընեն իր հերոսներուն խորագույն տարրերուն» (V, 403): Եվ այս խորքին Վահրամ Սվաճյանի նորավիպագրությանը տրված գնահատականը՝ «...Պ. Վ. Սվաճյան որուն նորավեպերը թումած կը մնան ժամանակի գովեստին ներքեւ» (V, 480), նկատելի է դարձնում օշականյան վկայությունների տիրույթներում տարժամանակյա արժեքայնության տեսական հիմնավորումը: Մարի և Վահրամ Սվաճյանների նորավեպերը թե՛ քանակով, թե՛ անդրադարձումների շրջանակով 19-րդ դարի 90-20-րդ դարի տասական թվականներին գրական ընթացում անընդհատ ուշադրության կենտրոնում էին<sup>9</sup>: Պոլսի և Զմյուռնիայի, Կահիրեի և Ալեքսանդրիայի, Լոնդոնի, Բուստոնի պարբերականներն ու հանդեսները հեղեղված էին նրանց նորավեպերով: Արևմտահայ կյանքի օպերատիվ անդրադարձումներից մինչև գոյության հավիտենական արժեքները ճեպագրած՝ նրանց նորավեպերն, անպայման կառուցվածքային-բանարվեստային հաջող օրինակներով, այնուշանդերձ իրենց բնույթով լուսանցքային էին, մոտավոր թե՛ կարեկցանքը ոգեկոչող պատկերներում, թե՛ արվեստիրականություն բախումը ներբերող կառույցներում<sup>10</sup> և թե՛ աղետի պատկերագրումներում<sup>11</sup>: Նորավիպագրության այս կառույցն Օշականի տեսության

9 Ժամանակի քննադատականներում, զանազան ասույսներում և Մարի Սվաճյանը, և Վահրամ Սվաճյանը գնահատվում էին իրեն նորավեպի արիթետավարժ, հմտութելինականը (տե՛ս օրինակ «Տիկն Սվաճյանի նորավեպը» հոդվածը «Հայաստանի Կոչմակ» շաբաթաթերթում, Բուստոն, 1903 թ., թիվ 158, էջ 1259): Նրանց համարումը խամրեց ստեղծագործական մայրամուտին զուգընթաց:

10 Նկատի ունենք Մարի Սվաճյանի «Մանուշակի թաղարը» (Հայրենիք, Կ. Պոլիս, 1894 թ., թիվ 1000), Վահրամ Սվաճյանի «Հին անոր» (Հայրենիք, 1895 թ., թիվ 1207) ստեղծագործությունները, որոնք մատնանշված իրողությունների լավագույն դրսերումներից են:

11 «Աղետի» անդրադարձներից նշենք Մարի Սվաճյանի «Արյունը» և Վահրամ Սվաճյանի «Վարժուհին», որոնք 1898-ին լուս են տեսել «Նոր կրաքում» (թիվ 3, էջ 34-35, թիվ 23, էջ 354-355):

«կյանքի մեթոդում» չուներ վկայության ներուժը, ուստի բնական էր, որ սրանք և այդօրինակ դրսեորումները պետք է դուրս մնային վարպետի տեսադաշտից:

«Համապատկերի» կառուցվածքում զանազան ինքնավար տեսական համակարգերը բնութագրվում են բևեռացումներով՝ այս պարագային մատնանշելով արևմտահայ գրականության պատմության շրջագծում կամ դրանց կիրարկումների արժեքային բնագծերը, կամ եթե ժանրային ներփակ խնդիր է, դրանց հանգրվանայնությունը գրականության ընդհանուր կալվածում. «Այսօր կասկածե դուրս է արժեքը որ մեր նորավեպը կը բարձրացնե, կը զատե արևմտահայ գրական ընդհանուր վաստակեն իբր բացառիկ նվաճում մը, մեր քերթողության լավագույն իրացումներուն հետ կազմելու համար այդ գրականության փառքը» (V, 133): Տեսության բևեռացումները ժանրաքննության ժամանակ առաջադրում են նաև հղացքային-թեմատիկ այն տիրապետող սևեռումները, որոնք կոնկրետ ժանրի դրսեորման գերակա ձևերից են:

Գրականության պատմաբանի տեսական ամենահաս հայացքից չի վրիպում բևեռացումների որևէ «զարտուղություն», որն, ի դեպ, օշականյան տեսական կառուցների խորատեսության ըստ ամենայնի հաղթարշավն է: Թլկատինցու փոքր արձակի կապակցությամբ նկատում է, որ դրանք «...լայնորեն կը զարտուղին դարձյալ պոլսական կաղապարեն: Անոնք քիչիկ մը գունավորված քրոնիկներ են նույն չնորհներով, նույն ոգիով գրված, նույն արվեստով: Պոլսական կաղապարին քաջավարժ մեր ճաշակը բավական կը վարանի այս կարգի կտորները ճշգելու մեջ, սեռի տեսակետեն: Եթե իբրև գործադրություն (executio) անոնք տկար կողմեր ունին, անոնց աշխարհը, մթնոլորտը, անոնցմով սևեռված բարքերուն, տագնապներուն տարողությունը այնքան թանկ է, որ շուտով կը հանդուրժենք այդ այլայլումներուն ու կը սիրենք» (VII, 92)<sup>12</sup>: Որ թլկատինցին ու քիչ անց Ռութեն Զարդարյանը հայ գրականության մեջ գոյավորեցին նորավեպի ուրույն «զարտուղի» կառույց, որը պայմանավորեց ժանրի նորագույն դրսեորումների հսկայական դաշտ ի սփյուռք և Հայաստան, այսօր արդեն տեսական-պատմական ամենատարբեր գրություններում, ուսումնասիրություններում մեկնակետային է:

Տեսությունների բյուրեղացման պարագծում «Համապատկերի» կառուցում հայ քննադատության մեջ առաջին անգամ առնչությունների խնդիրները լուսաբանվում են միանգամայն նոր հայեցակետերով, գրականության պատմությունը ազատագրելով կցորդային բարդույթներից: Նորավեպի տեսության մեջ մասնավորապես Օշականն էր, որ ժանրի արևմտահայ դրսեորման և ֆրանսիական նորավիպագրության հարաբերակցությունները ուղենչեց հետագոտական այնպիսի կտրվածքում, որտեղ, «Հայ Մոպասան», «Հայոց Բուրժե» տարտղնված գնահատումները փոխարինվեցին առնչությունների ազգեցություն-հակազդեցություն զուգադիր քննության իրական և հիմնավոր հիմքին. «Ըսել թե Զոհապ կը մնա հպատակ Մոպասանյան թեքնիքին, կը նշանակե ըսել թե կյանքին

12 Նույնն է մատնանշում Ռութեն Զարդարյանի պարագային. «Զարդարյանի վիպակները կը տարբերին արևմտահայ իրապաշտներուն մոտ համբավի հասած տիպարեն, նորավեպեն» (VII, 307):

գեմ կենալու կերպերը իրարու նման են երկու գրողներուն ալ մոտք: Կ'ըլլամ կարճ սակայն, հաստատելու համար որ Արևմտահայ Գրականության խորքին վրա ֆրանսական ազգեցություն մը գրեթե ձրի տարագ մըն է երբ զայն ուղենք սահմանել մեր իմացական ու զգացական ոռմանթիզմին, մեր խանդին ու հրայրքին, մեզի շատ սիրելի քանի մը գիրքերու վրա, — հայրենասիրություն, արդարության ծարավ, պաշտամունք, համամարդկային երազներ, բոլորն ալ աս ու ան չափով հասկնալի, իրավ, փաստված՝ մեր պատմության քառուղիներուն» (I, 94-95):

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Հակոբ Օշականի «Համապատկերի» կառուցվածքում տեսություններն իրենց բնույթով համագրական են ու համապարփակ: Այդպիսին է գրքերի գրքում զետեղված նորավեպի տեսությունը՝ նույնպես ապակենտրոն և առավելաբար պատճառաբանված ժանրի՝ արևմտահայ գրականության պատմության մեջ ունեցած առարկայական գործառնություններով և բնույթի խնդրագրությամբ: Քանակի և իրացումների (հղացքային, գեղագիտական) յուրօրինակ «միահեծանությունը» գրական ընթացում առավելագույնս ընդգծում է ժանրի տեսության ապակենտրոնությունը վարպետի համակարգում, նամանավանդ, եթե նկատի ունենանք նաև այն իրողությունը, որ փոքր արձակը, նորավեպը թարգմանական, փոխադրության և ինքնուրույն երակներով Զարթոնքի սերնդից արևմտահայ գրականության «արձակունակ» դաշտում դրսերգում էին և՝ «անկախ ու ինքնորոշված» չափագրումներով, և՝ «անցումային» կերպով (վեպի, վիպագրության առնչություններում) և թե՛ պայմանավորում «լրագրային գրականության» բնույթը: Ուրեմն նորավեպի ձգտումն ինքնին գրականության պատմության համարնագրում ապակենտրոնացված էր, և տեսության նույնականությունը առավելաբար ապահովում էր ժանրի ընթերցման ընդհանրականությունը: Պատահական չէ, որ վարպետը նորավեպի ոստումի շրջանի (իրապաշտներ) քննության ժամանակ, որ, բնական է, նաև ժանրի տեսության գերհագեցումն է «Համապատկերի» համարնագրում, անընդհատ շեշտում է նորավեպի՝ իբրև «օրվա բառ» լինելու իրողությունը՝ ընթերցման պարագծում ակնարկելով նաև դրա («օրվա բառի») արտաժամանակյա ներուժը. «Խաչատուր Միսաքյան անունով մարդ մը, Պոլիս, խոր իր հիացումին մեջն իսկ Բագրատունիին, պիտի գտնե կերպը Արևմտահայ Գրական հղացքը ոչ թե լիհակատար հանգամանքներով իրագործելու, այլ այդ հղացքը ազատագրելու Միթթարյաններուն հմայքեն: Անիկա չուներ ո՛չ պատրաստությունը, ո՛չ տաղանդը, ո՛չ միջոցները Վենետիկին աբբաներուն: Բայց 1860-ին (Սոֆիան կ'ենթագրեմ այդ թվականներու ձնունդ) կը գըե լեզվով մը, ոգվով մը որոնք 1880-ը կը թելագրեն արդեն» (I, 85-86): «Համապատկերը» վեր է հանում ժամանակային այն սահմանները՝ 1860-ական թվականներից սկսած, երբ ժանրի գոյությունն ընդհանրապես և տեսական «հանդերձումը» դառնում են գրականության պատմության սկեռումներից<sup>13</sup>: Նամանավանդ «Սոֆիայի» առիթով շեշտում է, թե

13 Պատահական չէ, որ Խաչատուր Միսաքյանի պատեղագործությունը իրապաշտ շարժման ուշադիրական կենտրոնում է եղել: Դեռևս շարժման Ակգրին արևմտահայ նորավեպի «բնօրուսներից» «Մասիս» հանդեսն առաջին անգամ տպագրեց «Սոֆիայից» մի հատված («Մասիս», 1893 թ., էջ 341-342): Ստեղծագործությունը գրեթե բոլոր նորավեպագիրների ուշադիրության կենտրոնում

այդ գործում «...վիպասան մը չիկա, այլ տարօրինակ, գժվար տարագելի գրաւգետ մը» (I, 153): Ապակենտրոն տեսության ընդհանրականությունը նախ հատկանշվում է նորավեպի տեսական գրույթների, ընկալման և ընթերցման ելակետային «աբսոլյուտիզմով», ժանրի սահմանման, մեկնաբանման սկզբունքային հետեղականությամբ: *Օշականի* համար ժանրի տեսական գննումների ելակետը գրականության պատմության այն փուլն է, որտեղ նորավեպը վերջնականապես ձեռք է բերել իր հանգրվանայնությունը. «Կազմված ու իր կատարելությունը գտած է մեր պատմվածքը, այն օրերու բառով նորավեպը, իրապաշտներու գործունեության ամենեն մաքուր հաղթանակը: Թե հայ (արևմտա) վեպը պակասավոր է ցեղային ստորոգելիներե, կենցաղային կնիքե, կարծ՝ գրականություն մը արդարացնող քանի մը մեծ նմույշներե (ժողովրդական կյանքի պատկերացում, տիպարներ, մտայնություններ տախտակող կերպընկալություն և ուրիշներ), արևմտահայ նորավեպը, իր ծավալին փոքրության հակառակ՝ մեր կյանքին որոշ գոտիները (zonas) կրնանք նվաճած նկատել: Մեծ գիծերով Պոլիս մը կա Զոհրապի փոքր վիպակներուն մեջ: Արփիարյան մտայնություններ սկեռած է իր վիպակներով: Սիպիլի Կնոջ Հոգիները հայ կիներու փունջ մը ըլլալու չափ գործ մըն է, ուր սկեռած են հայ մոր քանի մը անմաշ գիծերը: Ու ասիկա այսպես իրապաշտներեն յուրաքանչյուրին ալ համար» (VI, 7): Ուրեմն միմիայն գրականությամբ կյանքը նվաճելու պայմանով է որևէց ժանր «Համապատկերի» կառույցում մեկնաբանվում տեսական հատույթով, և պատահական չէ, որ իրապաշտների շարժման պատմական հետագիծը քննարկելիս անընդհատ երևան են գալիս նորավեպի տեսական առաջադրությունները: Այս պարագային հարկ է շեշտել նաև վարպետի այն ելակետային գրույթը, ըստ որի այն ժանրերն են պատմության կիրարկման մեջ տեսություն ենթադրում, որոնք հատակ կազմակերպված ուղղության, հոսանքի արդասիքն են, իսկ իրապաշտները «...մեր մեջ կուտան առաջին անգամ կազմակերպված, իր ըրածին գիտակցող գրական փառանքը, գպրոցը, իրենցմեն վերջ ալ չերեցող» (I, 16):

«Համապատկերի» կառուցվածքով մեկ ցիր ու ցան ելակետային գրույթները, լինելով ինքնին ներգաշնակ և ամփոփ մի համակարգ, ըստ ամենայնի հաստատում են Գրիգոր Պլատյանի այն գրույթը, թե «Օշականի գրությունը նույնքան համակարգ կը բանի, որքան որևէ մեկ այլ գրություն»<sup>14</sup>: Այս առումով նորավեպի օշականյան տեսության ելակետային իրացումներից կարեռագույնը Զոհրապի առընչությամբ արված հետեւյալ նկատումն է. «Նորավեպի իշխանը փառքի տիտղոս մը միայն չէ, այլ նույն ատեն վկայություն մը: Անշուշտ անոնք որ բանաձևը գտան ու գործածեցին առաջին անգամ, անդիտակցաբար այցված էին անոր մեջ ողջունելու ծշմարիտ վիպասանը որ պարագաներու ճնշումին տակ կը զոհեր շատ բան իր կարելիություններեն, ենթարկվելու համար մեր գրականության երկու մեծ բռնություններուն: Ատոնցմեն առաջինը ժամանակն էր ու չէ, որ մեր բոլոր գրողները պահեց իր երկար կապանքին տակ: Տեղությունը արվեստի գործին համար այն է ինչ որ է արևը պտուղին համար: Ու

Եր՝ Արփիարյան եղբայրներից մինչև Հրանտ Ասատրյան, Արշակ Չոպանյան, որն էլ 1904-ին ամբողջությամբ հրատարակեց այս գործը: *Տե՛ս Անահիտ, Փարիզ, 1904 թ., թիվ 1-3, 6-7 և թիվ 8:*

<sup>14</sup> Բագին, 1984 թ., թիվ 1-2, էջ 111:

չեմ խորանար հասկնալու համար թե ինչո՞ւ մեր գրականության մեջ քիչ շատ տանելի գերազանցության կը հասնին առավելապես այն սեռերը ուր տեղության հարց մը գոյություն չունի: Մեր քնարերգությունը, նորավեպը կ'իյնան այս հաջողանքին տակ: Ատոնցմեն երկրորդը մեր քաղաքական ճակատագիրն է» (V, 153): Այս սահմանումը, նորավեպի ձևաբանական-գեղագիտական բանաձևում այն մեկնակետն է, որից անդին ժանրի տեսական հանդերձի բաղադրատարրերը մեկ առ մեկ «բացվում» են, մանրամասնվում՝ առթելով «Համապատկերում» նորավեպի տեսության միասնականացման հզորությունը:

Առաջին հայացքից «Համապատկերի» կառուցվածքում նորավեպի տեսությունը կարեն թե բազմաթիվ կրկնություններ է անում ժանրի բնույթը որոշարկելիս, սակայն համարնագրի ուշադիր ընթերցումը վկայում է, որ գրանք ոչ թե, այսպես կոչված, «նորմատիվ» կրկնություններ են (որևէ գրույթի, սկզբունքի, սահմանման, նկարագրության անընդհատ առկայումներ՝ միտված ուսումնասիրության դիրակտիկ-գործառնական մտահոգություններից), այլ ժանրի պատմական կոնկրետ հատվածների պարագծում, գեղարվեստական-գեղագիտական մտայնություններից ցանկացածի խորքում նորավեպի բնույթային կենտրոնացման ամփոփագրություններ: Այս պարագային Օշականի տեսությունները հիմնովին տարբերվում են անխառն տեսական ուսումնասիրություններից, քանի որ ժանրի կազմության և կառուցվածքի, բանարվեստի և հղացքային հարացույցի էամասերը գեղարվեստական շարժման յուրաքանչյուր դրսեղորման մեջ ներառնում են նաև այդ շարժման, մտայնության ստեղծաբանական էույթները: Եվ իրապաշտության շրջանակում առաջադրած տեսական հիմնադրույթներն, օրինակ, որ ընդհանրապես բնորոշ են ժանրի պատմական կերպին արևմտահայ գրականության պատմության ողջ ընթացքում, արվեստագետ սերնդի ընթերցումների կիզակետում տեսական միևնույն հիմնադրույթի տառացի «կրկնությամբ» արդեն այս համատեքստում հավելագրում են ստեղծաբանական էույթների կազմակերպող տարբերը: Այստեղ է, որ Օշականի նորավեպի տեսությունը ենթադրում է գործնական վիթխարի հնարավորություններ:

Վարպետը ժանրի տեսությունը հանդերձել է ուրույն մուտքով, ուր մատնանշել է թե՛ նորավեպի ծագումնաբանական դաշտի, թե՛ ժանրի փուլերի պարբերացման և թե՛ գրականության պատմության մեջ դրա գոյության պատճառների մասնահատկությունները. «Նորավեպը տառացի արտահայտությունն է Փրանսացիներուն Nouvelleին, առաջին անգամ կարծես գործածված Մասիսի հին խմբագրապետեն (Կ. Յուլիան): Զոհրապեն առաջ անիկա սանկ ու նանկ քանի մը էջնոց պատմություն մըն է, սրտառուչ հյուսքով, տխուր կամ զվարթ վախճանով մը, առավելապես թարգմանածո: Լրագրին ընդհանրացումը, ուսմանթիք մեծ գործերու հայացումը անոր ճամբա կը հարդարեն: 1885-են առաջ քիչ են ինքնագիրները: Անկե հետո Ալֆոնս Դողեով և Մոպասանով անոր թափանցումը մեր մեջ կը զարդանա, հավանաբար նպաստ գտնելով քանի մը բացառիկ պայմաններե – գրաքննություն՝ որ կ'արգիլե մեծ վաստակը – ասպարեզի պակաս՝ որ մեր գրողները կը պարտազը պատահական ճիգի և արդյունքի – գրականության հացքին իսկ նկարագիրը՝ որ կը շփոթվի մեր մեջ իմացական բովանդակ գործունեությանց հետ» (V, 151): Բնականաբար այսօրինակ ներածու-

թյունից հետո ենթագրելի է ժամը սահմանումը, որ վարպետը «Համապատկերի» կառուցվածքում տալիս է մի քանի առիթներով՝ գրեթե նույնությամբ՝ նորավեպի սահմանման բյուրեղացումը զետեղելով «Արվեստագետ սերունդ» հատվածում. «Նորավեպը, թատերական փոքր կառույց մըն է որուն մեջ տիրական է արագությունը գործողության» (VI, 255): Սա մի կողմից իր մեջ կրում է ժամը տեսության նախորդած հսկայական բարերար շրջանի ամբարումները՝ գերմանական վիպապաշտ դպրոցից ու գեղագիտությունից սկսած (Շլեգել, Ժան Պոլ, Գյոթե, Տիկ, Հոֆման) մինչև ամերիկյան «short story»-ի անդրադարձները (Պո, Հոթորն, Հարթ, Զ. Ջեյմս), իր ապրած ժամանակաշրջանի տեսական կառույցները (նամանավանդ ուսուական «Զեւական» դպրոցի՝ Տոմաշևսկի, Շկովսկի, Պետրովսկի, Էյխենբաում, որոնց ծանօթ չլինելը Օշականի տեսական մտքի անհունության և խորատեսության վկայությունն է) հասնում մինչև մեր օրերը՝ ֆրանսագիր ու անգլիագիր տեսաբանների ժամանակակից հետազոտություններում:

Վարպետի նորավեպի տեսությունը «Համապատկերի» կառուցվածքում չէր կարող անմասն մնալ այնպիսի կարևորագույն խնդրից, ինչպիսին նորավեպվեպ զուգագրությունն է՝ փոքր արձակից վեպի անցման, վեպի գոյագորման առնչությունները նամանավանդ: Օշականի տեսական համակարգում առկա է մի կողմից՝ այս ժամըրերի հստակ, բացարձակ ինքնուրույնության իրողությունը, մյուս կողմից՝ «կյանքին ամբողջական քոլորիտովը» (VII, 308) պայմանավորված ժամըրակազմական մոտեցում-հեռացումը. «...գրողի երկու մեծապես տարբեր տիպարներ են վիպողն ու նորավիպագիրը: Քիչ անգամ երկուքն ալ կը նույնանան մեկ անձի վրա: Անշուշտ ամեն նորավիպագիր potentiellement վիպող մըն է նույն ատեն: Բայց հակառակը ճիշտ չէ միշտ» (V, 152):

Օշականի նորավեպի տեսության շրջանակում անընդհատ ընդգծվում է մի կարևոր և բնութագրական իրողություն, որ ընդհանրապես բնորոշ է ժամըրի արևմտահայ փաղանգի պատմությանն ու տեսությանը: Դա «նորավեպ» եղրի հոմանիշների կիրառությունն է: Վիպակ, պատմվածք, պատկեր անվանումները հար և նման փոքր արձակով հեղինակած արևմտահայ գրագետների և քննադատության Օշականի տեսական հայեցություններում նույնպես լիակատար նույնական են և տարբերակված չեն իբրև առանձին ժամըրեր: Զոհրապի պարագային օրինակն ինքնին պերճախոս է: Վարպետն իբրև «նորավեպ» հասկացության հոմանիշ կիրառում է «վիպակ» բառը՝ «Ըսի թե իր գործին կերպոնական մասը, իր վիպակները, կուգար իր զգայարանքներեն» (V, 145): «Անիկա արտադրած է մեր առաջին իրավաշտ վեպը և իր կնիքը գրած մեր վիպակին վրա, տիրական ու անջնջելի» (V, 148): Եվ այսպես Տիգրան Կամսարականի ու Լեռն Բաշալյանի<sup>15</sup>, Միպիլի ու Արշակ Չոպանյանի, Երուխանի ու Հրանտ Ա-

15 Արտաքուստ միակ բացառությունը Լ. Բաշալյանի նորավիպագրությունը բնութագրելիս է. «Անոր գրականությունը կը բաղկանա պատմվածքներե, պատկերներե, տպավորապաշտ էջերե, քննադատական հշմարներե, քրոնիկներե, նորավեպներե, այս բառերեն յուրաքանչյուրին տպով ճշգրիտ, վճիտ դիմագծություն» (V, 87): Առաջին հայացքից թվում է, թե Օշականը տարբերակում է, ստորաբաժնում, սակայն այս ընդմշմարումը վերաբերում է Բաշալյանի ոճին, որն, ի դեպ, հաստատվում է գրողի քննության վարդեթաց էջերում:

սատուրի, Ռուբեն Զարդարյանի, Թլկատինցու, այլոց նորավիպագրությանն անդրադառնալիս Համաբնագրում մերթ օգտագործում է վիպակը, մերթ պատկերը, երբեմն պատմվածքը, կրկին երրորդենք, իբրև նորավեպի հոմանիշներ։ Այնուհանդերձ այս խորքին իբրև գրական կյանքի տիրապետող արտահյատություն՝ «Համապատկերի» համաբնագրում «նորավեպն» ունի «բախտավոր» բնութագրականը։ Վարպետը քանից շեշտում է դա. «Վիպակը, պատմվածքը, նոր ու բախտավոր բառով մը՝ նորավեպը...» (V, 429):

Նորավեպի տեսության կիզակետում հանգուցվում է ժանրի քննության ասպարեզում կարեոր «պատմում» հասկացության առաջադրումն ու հիմնավորումը։ Գրականագիտության մեջ սա թե՛ իբրև տեսական հղացք և թե՛ իրադրում առաջինն էր, ըստ էության նորավիպագրության բնույթի ամփոփագրությունը. «Երուխանի մոտ վիպող տաղանդը կը ներկայանա իր գույգ կողմերով։ Ան ամենեն կատարյալ պատմողն է, երբ այս վերադիրը ուղենք տեսնել Անտոն Չեխովի, Մովսեսանի անունին կապված վիպելու մանր եղանակին» (VII, 203)։ Ընդհանրապես հետեւելով Օշականի նորավեպի տեսությանը՝ նկատում ենք հստակորեն տարրորշած երկու բևեռացում՝ պայմանականորեն անվանենք «Թլկատինցու հոսք» և «Երուխանի հոսք», առաջինում բյուրեղանում է ժանրի, այսպես կոչված, բնատոհմիկ «զարտուղությունը»՝ ընդհանրացնելով աղևմտահայ նորավեպի դրսկորման մայր երակը, երկրորդում՝ «զոհրապյան տաղավարի» (Զոհրապ, Բաշալյան, Կամսարական, Տ. Արփիարյան, Մ. Պարսամյան, Սիմիլ, Զ. Եսայան, Լ. Շաթրյան, Թեոդիկ, Ե. Օտյան, Արտ. Յարճանյան, Ա. Անտոնյան, Հ. Ալփիար, Զիփթե-Սարաֆ, այլք) համադրությունը, տարերքի ընդհանրականությունը։ Եվ պատահական չէ, որ Երուխանի պարագային է վարպետը մանրամասնում «պատմում» հասկացությունը. «Մեր մեջ քիչեր գիտեն, թե վեպի այս երկու կերպերը անջատ կաղապարներ են։ Թե մեկուն համար պահանջելի առաքինությունները առնվազն ավելորդ արժանիքներ կը դառնան, փոխադարձաբար։ Թե ճշմարիտ պատմողը (conteur) միշտ մեծ արվեստագետ մըն է, կարելի չափով զերծ երրորդական, չորրորդական կարողություններե, որոնք վիպասանը կը պայմանավորեն, հաճախ արվեստի օտար նկատողություններու ցանց մը պարտադրելով անոր տաղանդին։ Պատմումը, ավելի նախնական, ավելի բանաստեղծական, ավելի կենդանի, պարզ, արագ, շարժուն, փոփոխուն, հին դյուցազնավեպերուն արդիացած, արձակված ձևն է ավելի, քան թե համառոտություն այն պրկագին, մանավանդ, խորը լարվածքին, որով վիպասանը կը դնե ինքովնքը իր աշխարհին դեմ։ Այս ամփոփ գիծերը մեր գրականության համար ալ կը մնան իրենց ուժին և իմաստին մեջ» (VII, 203):

Նորավեպի տեսության առկայումը ցուցանում է «Համապատկերի» ընդհանուր առանձնահատկություններից գեղարվեստական ստեղծագործությունների կոնկրետ վերլուծությունների ուրույնությունը։ Վարպետը, որպես կանոն, չի ծանրաբնաւում առանձին ստեղծագործությունների մանրամասն, ծավալուն ընթերցումներին, մատնանշում է այն շերտերը, որոնք սեղուում են շրջանի մտայնությունների և զգայնությունների մասնահատկությունները։ Այս իմաստով նրա վերլուծությունները տեսության յուրօրինակ տողանցումներ են։ Նորավի-

պագրության հսկայական ժառանգությունից մի քանիսի հիշատակություններով և համապատասխան մեկնաբանություններով (Զոհրապ՝ «Թեֆարիկ», «Փոստալ», Բաշալյան՝ «Սյուզենիի վարպետը», Հրանդ՝ «Բարի ճանապարհ», Երուխան՝ «Քարիտեզը», «Չուկին փոխարեն», Ռ. Որբերյան՝ «Ֆանին ու ես» և այլն) ընդհանրացնում է ժանրի բնույթն ու կառույցը. «...ուր քիչ բան կը պատահի, մարդերը կը քալեն, աղոտ հոգիներով ու հանդարտ լրջությամբ, դեպի սովորականեն քիչ վեր ճակատագիրը, կյանքին միջինեն հարդարված մեր բուրին» (VII, 212):

«Գրականության համար» գրության մեջ վարպետը մատնանշում էր մեր քննադատության այն մտայնությունը, որ խոչընդուռում էր գրականության իմացական ընդհանրացմանը. «Մեր մեջ քննադատին կարծիքները որբերու կը նմանին: Չունի զանոնք պաշտպանելու գիտակցությունը: Ու անոնք իրենց անփույթ կյանքը կ'ապրին իրենց գիրե վարշամակներուն մեջ: Երբեմն հոբելյանի մը ծիրանին կու գա այժմեռություն հագցնելու անոնց: Բայց դժբախտությունը կը շարունակե տեղել: Վասնզի գաղափարները հոբելյանեն չեն ազդվիր»<sup>16</sup>: «Համապատկերը», մասնավորապես գրքերի գրքում վկայված տեսությունները վերջնականապես գրականության պատմության ընթերցումը ազատագրեցին այլազան խոչընդուռներից՝ հայ գրադատությանը բևեռելով ստեղծագործական լիցքեր և ազդակներ պարունակող հանգրվանում:

---

16 Զվարթնոց, 1930 թ., թիվ 8, էջ 359:

## ՎԵՊԻ ԺԱՆՐԻ ՕՇԱԿԱՆՅԱՆ ՄԵՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

### Ա.

**Ժ**անրի մետատեսություն հասկացությունը արդի տեսաբանական-քննադատական ուսումնասիրություններում կիրարկվում է՝ ցուցանելով ժանրագիտության, ժանրային տեսությունների նորաստեղծումը, հետազոտումը, վերլուծումը է ինքնին տեսությունները կամ դրանց շրջարկը<sup>1</sup>:

Հակոբ Օշականի ժառանգության մեջ ժանրերի ներփակ և ներդիր անդրադարձները գոյավորում են տեսությունների ապակենտրոն հոսքեր, որոնք վեպի և նորավեպի, բանաստեղծության և թատերգության, քննադատական-վերլուծական գրության, հոդվածի և փորձագրության պարագրկումներից անցնում են և ընթերում դրանց հավաքական պատկերը։ Առհասարակ ստեղծաբանական իբրև գերբնագիր ըմբռնել-ընդունելու հանգամանքը օշականյան ժառանգության մեջ պարբերաբար ընդգծվում է։ Այսպես՝ «Սյուլեյման էֆենտու» շրջարկում գրքերի (գերբնագիր) առբերությունը ընթերցման տիրույթներին է պատեհում ընդելուզվելու այն «...երկրաշարժին, որ մեր հոգին խավերը հիմն ի վեր կը կը և մեզ կը թաղե զղարշին տակը մեր երազներուն»<sup>2</sup>։ Այս հիմնավորումից անմասն չէ ո՛չ վերլուծություն-գրադատության, ո՛չ ինքնին ժանրային, ո՛չ էլ ժանրատեսությունների գերբնագիրը։ Բանաստեղծության, նորավեպի և վեպի գերբնագրերը զուգահեռաբար ստեղծանում են ժանրերի մետատեսություններ, որոնք Օշականի բնագրերում անցնում են այս ժանրերի տեսությունների քննաբանություն-մեկնաբանությամբ։

Օշականյան ստեղծագործության համակարգում ապակենտրոն ժանրային մետատեսությունները առկայիվում են զուգաբանական սկզբունքով՝ գեղարվեստական բնագրերից և տեսական-վերլուծական գրություններից։ Համադրելով ինչպես իր ժառանգության տիրույթներում տարասփուլած ժանրի սեփական ընկալում-ըմբռնման, հղացքի լրատվությունը, այնպես էլ տեսական մտքի մասին եղած վկայությունների (քննադատական-գեղարվեստական) տեսաբանությունը։

«Համապատկեր արևմտահայ գրականության» ներածականում ժանրը փոխարկելով սեռի. «Վեպ, թատրոն, քերթված, քրոնիկ-քննադատական վերլուծումներ – այսինքն արևմտահայ գրականության հիմնավոր սեռերը ևս փորձեր եմ...»<sup>3</sup> (ուշագրություն դարձնել, որ չի գրում արձակ կամ էակական, այլ

1 Բացի մետատեսությունից արդի գրականագիտությունը կիրարկում է մետագրականություն, մետաքննադատություն հասկացությունները։

2 Տէ՛ս Հ. Օշական, «Հարյուր մեկ տարվան» (Սյուլեյման էֆենտի), Անթիլիաս, 1996, էջ 271-272, 378։

3 Հ. Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականության», հիմ. 1, էջ 3։ Այսուհետ «Համապատկերից» բոլոր հղումները բնագրում, փակագծերի մեջ, հոդմեական թվով՝ հատորը, արաբականը՝ էջը։

վեա), – ըստ էության հերքում է ժանրը՝ վեպը տարողելով վիպայնություն հասկացության նորագոյացմամբ։ Միաժամանակ «գրական իրողությունը նվաճելու (I, 6) առաջադրությունը կիրարկելիս արձանագրում է «Հաճի Մուրատում»։ «Վերլուծումը չի հասնիր բեհեզ և գաղջ ճնշումներու պարագրումին»<sup>4</sup>, – այսինքն վեպի ի՞ր ակնկալած դրսեորմանը։ Այսպիսով՝ ժանրի «մերժումը» դարձդարձում է ունենում օշականյան ստեղծանումի համակարգում, որը նրա մետատեսությունների մասնահատկությունն է։

Ժանրի ստեղծագործություններում և վերլուծականներում ձգվող միաժամանակյա «ուրացում-հաստատումների» հարացույցը, որն արդյունքում գոյավորում և ինքնացնում է ժանրատեսության օշականյան բնույթը, պարագրկում է հայոց դասական և ի՞ր ժամանակակից, ինչպես նաև եվրոպական վիպագրության դրսեորումները, ընդհանրապես փորձն ու ժանրատեսությունը։ Մասնավորապես այսօրինակ բնույթը ունի և՛ վեպի մետատեսության ստեղծանումը և թե՛ այս ժանրի «անխառն», «բացարձակ», «մաքուր» տեսաքննությունը Օշականի ստեղծագործության համակարգում։

Վեպի տեսության գերբնագիրն ամբողջականանում է «Ծակ-Պտուկը», «Մնացորդաց», «Մաթիկ Մելիքխանյան», «Սահակ Պարգևյան», «Կյանքին պես» վեպերի, «Հարյուր մեկ տարվան» վիպաշարի, «Համապատկեր արևմտահայ գրականության», «Վկայություններ», «Մեր վիպասանները» շարքերի, բազմաթիվ փորձագրությունների, հոդվածների, վերլուծականների, նամակների մեջ տարասփոված ժանրի տեսության միջգրութենական ստեղծանումով։ Այս գերբնագրի շրջագծում է միայն ու միայն ամբողջականանում վեպի օշականյան ընդհանրացված գեղագիտությունը։ Սույն գրությունը համանության եզրեր ունի Ռոնալդ Շլայֆերի, Բախտինի, Յակոբսոնի և Բենիամինի վեպի տեսություններին նվիրված ուսումնասիրությանը<sup>5</sup>, որտեղ, ըստ էության վերհանվում է ժանրի մետատեսության «բազմակենտրոն» արտահայտությունը։ Տվյալ գեպքում գործ ունենք «միակենտրոն» դրսեորման հետ, որի «ցանուցիր» տեսաբանական վկայություն-հոսքերը, հաճախ ընդելուզված կրոչեական «ժանրագանցումի» յուրօրինակ շերտերով, տեսությունը վիպացնում են, վեպը՝ դարձնում տեսություն։ Պատահական չէ, որ տակապին 1911-ին Արշակ Զոպանյանին հասցեագրած նամակում արժեորում էր նրա քննադատությունը որպես «բարախուն գրականություն»<sup>6</sup>։

Օշականի գեղարվեստական համակարգում ժանրատեսության ցանկացած հետազոտական տեսանկյուն առարկայաբար հաշվի պիտի առնի ներփխածելության, միջբնագրային անցումների հանգամանքը։ «Կեդրոնականնեն ներս՝ Ֆլոբերը մեր աստվածն էր և Օշական՝ իր մարգարեն», – հիշում է Լեոն-Զավեն Սյուլրմելյանը<sup>7</sup>։ Դասական վիպագրության ամենահետեղողական գեղագիտությունը ստեղծանողին համանունացնելը պայմանագործած էր ինչպես

4 «Հարյուր մեկ տարվան» (Հաճի Մուրատ), էջ 72:

5 Տե՛ս «Вопросы литературы», Москва, 1997 г., №№ 3-4, стр. 77-100.

6 Հ. Օշական, Նամակամի, Ա. Բատոր, Բեյրութ, 1988, էջ 13:

7 Տե՛ս «Նոր գիր», Նյու Յորք, 1951, թիվ 1, էջ 48:

Հայոց վեպի պատմատեսության, այնպես էլ առհասարակ ժանրաքննության օշականյան դերակատարության առաջնայնությունն ընդգծելու գրականության պատմության և տեսության համար առարկայական հատկականությամբ։ Հերավի իրեն չհամարելով տեսաբան, ավելին՝ աջ ու աջակ հերքելով տեսությունները, Օշականը մեր գրաբանական դաշտում վեպի ժանրի մետատեսության ստեղծանողներից էր։ Կրավորելով ժանրի կազմաբանական հատարրերը՝ միաժամանակ ամփոփագրում է հայ դասական վեպի ժանրային ինքնությունը, գեղագիտությունը. «...մինչև Առաջին Մեծ պատերազմը հայ վեպը գտած է իր ճարտարապետությունը, նկարագիրը, դեմքը, անոնց արևելահայերուն մոտ շեշտապես ժողովրդապաշտ, հայրենանվեր, մեր մոտ՝ զբոսապաշտ, թերթոնախորժ, քիչ անգամ արվեստավոր, ավելի շատ արվեստակալ» (X, 102):

Ժանրի «ժխտում-հաստատման» մետատեսություն ստեղծանող ելակետումը խարսխվում է վեպի «շեղումների», որ է «էջ մը ցատկելով» թերթոնական նախապաշտարվածության՝ վեպ-ժամանցի ձևաբանական-հզացքային ողջ շարքի «հերքմանը» և նույն «էջ մը ցատկելը» անկարելի դարձնող վեպի «հաստատումի» տեսություններին<sup>8</sup>:

Վեպի շրջարկն օշականյան համակարգում, ժանրի կազմաբանական տեսություններին զուգաբանված, որոշադրում է պատմատեսության միջգրութենական խստագույնս պատճառականացրած ամբողջություն։ Այսպես, օրինակ, ոռմանտիզմի պատմական ակնարկը «Համապատկերի»<sup>9</sup> տիրույթներում հարակցված է այս ուղղության վեպի տեսության ակնարկով, որի բաղադրատարրերը «բացվում» ընդլայնվում են կոնկրետ հեղինակներին նվիրված գլուխներում, վեպերի համարնագրերում։ Ինչպես Ռաֆֆու «Կայծերի» պարագան «Հաճի Մուրատում»։ «Գլխուն գնովը ըրավ այդ ճամբորգությունը, որուն կը փափաքեր գեռ դպրոցի սեղաններեն, արգելված երգերը իր շինած երգարաններուն մեջ օրինակած պահուն երազելով անոնց հեղինակներուն, մեծ-մեծ մարդեր, որոնց մարմինը ազգին ցավովը կոնծած էր ըլլալու։ Ծպտված էր անիկա։ Առանց «Կայծեր» կարդացած ըլլալու»<sup>10</sup>:

Տեսությունների վերաբրումն օշականյան համակարգում ներբերում է ինքնացված մետատեսություն, որտեղ կիզակետվում է կյանքի նվաճման գերակայությունը։ Կյանքի անսպառությունը, լիակատար անզետեղելիությունը՝ արվեստագետի դրաման է. «Իրավ որ դժբախտ արվեստ մըն է գրելը»<sup>11</sup>, – ամփոփում է «Հաճի Ապտուլլահում»։ Հետեւաբար վիպագրումի կայացումը պայմանավորված է «անտարազելի կյանքի» նվաճմամբ՝ «սպիտակ թղթի» (գրականության, վիպագրության) պարագրկումներում։

Այսպիսով՝ վեպի մետատեսությունը ներբերում է ժանրի քննաբանության

8 Ինքնադասականուն զուգաբանությունն օրինակում է մետրոյն, շոգեկառքի, զանազան գործերի ընդմիջումներին դրույթին կլենի վեպերի և «հակառակ սովորության ու փափաքի»՝ «Էջ մը ցատկելու» անկարելիությունը առկայացնող վեպերի հանգամանքով։ Տե՛ս Համապատկեր, հիտ. 10, էջ 162:

9 Տե՛ս Համապատկեր..., հիտ. 2, էջ 12-17:

10 Հաճի Մուրատ, էջ 36:

11 Հաճի Ապտուլլահ, էջ 136:

ներփակ, ինքնավար հոսքեր՝ պայմանավորող-հատկանշող-կազմաբանական մասնահատկություններով, ժանրակազմության խնդրագրությամբ, առհասարակ ժանրինքնությունը, վեպի ձևաբանական-հղացքային բնույթը ցուցանող մեկնություններով, հայ դասական վեպի պատմատեսությամբ, թերթոնայնության, վիպաշարի անդրադարձներով, վեպ-վիպայնություն, պատմասանություն-պատմում հարաբերակցության հարցերի արծարծումներով:

## Բ.

Վեպի մետատեսության միջգրութենական գերենագրում ամենածավալուն, ընդգրկուն դրսեորում-լրատվությունը առկայացնում է ժանրի ինքնության, գեղագիտության, ընկալում-ըմբռումների, սահմանների մաքուր, անխառն, «բացարձակ» քննաբանության-մեկնության հոսքը: Ընդումին, ինչպես մյուս ժանրերի պարագային, այստեղ ևս ինքնին ժանրի երեւութականությունը խարսխված է ժանրագիտակցության, ժանրաըմբռնման եռյակ հիմերին. ա) ժանրն իբրև գրականության հիշողություն, բ) ժանրն իբրև սոցիալ-մշակութային կենսոլորտի ստորոգելի, գ) ժանրն իբրև ընթերցողի և գրողի պայմանավորվածության արդյունք (այսպես կոչված «կոնվենցիոնալ սկզբունք»): «Վեպն ալ ունի իր պահանջները», – նշագրում է «Սահակ Պարգևանի» շրջարկում<sup>12</sup>: Պահանջների ապակենտրոն վկայությունները տարասփոված են ողջ ժառանգության տիրույթներում և եռաբեկո բնույթ ունեն՝ «Հերքում-մերժում», «Հաստատում», «Ժանրի սեփական հղացք»: Այս ընդհանրության մեջ է մեկտեղվում-միասնականանում օշականյան վեպի տեսությունն ու վիպագրությունը, քանի որ միշտ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ վեպի տեսաբան Օշականը, ժանրագետը նույնքան վիպագիր է ժանրատեսության շրջանակում, որքան տեսաբան է վիպագրումի պարագրկումներում<sup>13</sup>:

Վեպի ժանրինքնության, գեղագիտության, բնույթի ելակետումը վեպն իբրև կյանքի անդրափոխանցում կազմաբանական առաջադրությունն ու կիրարկումն է: Գրականությունն առհասարակ կյանքի անդրափոխանցումն է, ինչն ինքնին անխուսափելիորեն բերում է նույն այդ կյանքի ստեղծաբանորեն նվաճումի կորուստներ (ահա թե ինչու գրելը գժեախտություն է). «Ինչ համեմատությամբ որ իրարմե կը տարբերին միսերուն մարմարը և թուղթը, նույն համեմատությամբ իրարմե հեռու բաներ են հաճախ մարդկային կսկիծ մը ու ասիկա թուղթին սկեռելու հավակնող... քերթված մը» (I, 4): Տարբերության գուգաչեռներում վեպի ժանրը առարկայականորեն այն մերձակետն է, որ հնարավո-

12 Սահակ Պարգևան, էջ 369:

13 Տեղին է հիշատակել Մարկ Նշանյան՝ Որբունու վիպագրությանը նվիրված հետևյալ նկատումը. «...Մյուս գրության (texte) հետ շփման մեջ մտնելով, անոր հետ խաղալով, որոնում մըն է գրության և ընթերցումի նոր գործողության...»: Տե՛ս Արա «Վեպ, սեռականություն և ժամանակ» հոդվածը, Բագին, 1973, թիվ 6, էջ 56:

Օշականի պարագային «գրության և ընթերցումի նոր գործողությունը» տեսության վիպագրումով և վեպի տեսահրացմամբ գոլավորում է բնագրի առերած «մյուս գրությունը»:

ըություն է ընձեռում կյանքի գեղարվեստական անդրափոխանցմամբ նվաճել այն: Ինքնության, բնույթի այս ելակետումից խոտորումը միանշանակորեն ու միազգծորեն հանգում է ժխտման, չերպումի, անտեսման, վերապահման: Կյանքը նվաճելու, անդրափոխանցելու գերակատարությունն առաջնային, կարևորագույն կազմակերպող-կենսագործունեական սկիզբն է: Վեպի և վիպասանի հանգուցային ներքախումը, ներպրկվածությունը գրութենական տենդում՝ կյանքի այլակերպության պատնեշումն է. «Պետք է քալել այսքան արագ, չնմանելու գնով կյանքին, որ «կը մանե շատ բարակ», ինչպես կ'ըսե ժողովրդական առած մը, ու տալ մարդու մը օրերը մեծ-մեծ գիծերով», – գրում է «Հաճի Ապտուլլահում»<sup>14</sup>: Կյանքի նվաճումը կյանում է միմիայն արվեստագետի և իրականության խորհուրդ առքերող դաշնությամբ և այս պարագային է, որ ժանրի բնույթն անցնում է «գիրքերու հորինվածքից» և «արյուն է, գույն է, հողի բխում մըն է, ասոնց պես ինքնահող, անտաղ, աններդաշնակ» (IV, 16-17), – այսինքն՝ գերակայությունը ո՛չ թե ժանրի տեխնոլոգիայի, պոետիկական բաղկացյալների առկայացումներն են, այլ կյանքին հարազրվելու, այն փոխանցելու, անցնելու վեպի բնույթային տարերքին հարազատությունը, ինչն, ըստ էության ժանրի գեղագիտության օշականյան միջուկն է, կենտրոնը, որ ավարտաբանում է «Կյանքի պես» վեպի «մաքուր» տեսական սահմանումներում<sup>15</sup>: Այս առումով, ժանրինքնության ինդիրներին անդրադառնալիս, օրինակ, Պոռշյանի վիպագրությունը, որ ժանրի պոետիկայի զառածում է, շեղում, արժեռում-կարևորում է. «Պոռշյանցի վեպերուն մեջ փրկված կյանքը չնորհ մըն է այս ժողովուրդին համար» (IV, 513), իսկ ձևաբանական չափագրումներն ըստ ամենայնի պահպանած վիպումը համարում է լուսանցքային, նահանջումի, սպառումի արտահայտություն: Այս պատճառականությամբ է կարևորվում այնպիսի երկ, ինչպիսին վեպի պատմատեսության մեջ ածանցյալ Արշակ Զոպանյանի «Թուղթի փառքն» է, քանի որ Վահան-Վերմին-Արամ եռանկյունու արքետիպային սիրո պատմությունը արևմտահայ վիպագրության մեջ սկեռում է արվեստ-կյանք հարաբերակցության, թղթի և թղթե փառքերից անդրափոխանցման կարելիությունները գեպի կյանք:

Վեպի ինքնացնող բնույթը օշականյան գերբնագրում խարսխվում է տեսական առաջադրություն-թելագրանքների հերքման, հաստատումի և վեպի տեսական պարագրկումի «նորաներարարումի» հարակցությամբ: Ժանրատեսության ցանկացած ստեղծաբանական կիրարկում եթե հասու չէ «...պարզ մարդ մը նվաճել... վեպին իբրև հերոս» (IV, 463), ապա այն դուրս է ժանրի օշականյան տեսաստեղծանումից, անկախ այն հանգամանքից, թե ինչ ծավալընդգրկումով է կառուցում բնագիրը: Այս խորքին Մատթեոս Մամուրյան-Քասիմ-Լեոն Շանթ-Սմբատ Բյուրատ-յան ժանրակերպությունը, թեև ձևաբանական հարացույցի ժանրադիմագիծը որոշարկող այնպիսի միավորների առքերությանը, որպիսիք են վեպ-նամականին, օգտապաշտական, արկածախնդրային վեպի կառուցյաները, այդուհանդերձ օշականյան մետատեսության ժանրինքնությունը

14 Հարյուր մեկ տարվան, Էջ 115:

15 Տե՛սօրինակ «Կյանքին պես» վեպի 24, 51-րդ էջերի հեղինակալին տեսական միջարկությունները:

պայմանավորող «հերքման» բևեռում են՝ մամուրյանական «ստեպ բարոյական դաս մը տալու, դարման բերելու...»<sup>16</sup> նպատակաբանությամբ, եվրոպական վեպի սոսկ կաղապարումով (ինչպես սահմանում է Վալտեր Աքոթի «Այվենհո» վեպի առաջաբանում)<sup>17</sup>, պատմականության գեղարվեստական անդրադարձումի չարչը կումով, վիպասանական դաշտի հեղհեղուկությամբ, երբ խարիսլվում են «նյութական և բարոյական աշխարհի ճշմարիտ և այլազան պատկերների»<sup>18</sup> արտահայտությունները: Այսինքն՝ անդրափոխանցման մեջ տարտղնվում է կյանքի գեղարվեստական համարժեքումը: Պատմության և արդիականության բաղհյուսման արհեստականությունը, Գոչույանի բարոյախոսական-ժամանցային վիպագրության ծավալուն դրսելորումները (Նիկոլ Աղքալյանի դիպուկ բնութագրմամբ՝ շատ բան դիտելու, սակայն կյանքը խոր չուսումնասիրած)<sup>19</sup>, բյուրատյան «պաւեդողյուցագնապատումի» տեղապտույտը, շանթյան «քարոզ նավարկելու խանդը» (I, 104), ըստ օշականյան ժանրավարբննման «միջին ընթեցողներու» «միջին ճաշակի» (I, 104) պահանջմունքները բավարարող ածանցյալություններ են, իսկ վեպը ինքնացվում է, այդպիսին է միայն ու միայն որևէ պահանջի անդինության, «օտարացման» մեջ: Պատկերավոր ասած, երբ կյանքը անդրափոխանցվում է՝ ցուցանելով վեպում իր մեծագույն խորհուրդը, բնագրում բրտացնում կյանքի առերրության կենսոլորտը, գրաբանական արարով կյանքի հետ մրցակցությունը՝ հանուն կյանքի:

Ժանրինքնության «հաստատումի» բևեռը խարսխվում է հատկապես այս իրողություններին: Խաչատուր Աբովյանի, ընդհանրապես արևելահայ վեպի տեսությանն անդրադառնալիս եզրակացնում է. «Վերք Հայաստանի հակառակ իր ծանր ոռմանթիզմին, բավական քաղցր, իրավ հանդես մը կը բերե բարքերե, ընթեցողը կրկնապես երախտավորող: Գրականեն ալ դուրս սա վայելքին մանրացումովը: Իբր ստեղծում այնքան տկլոր, անբավական արևելահայ վեպը, իր փրկած բարքերու մթերքովը մեծահանդես վաստակ մըն է այսօր իմ նկատառմանս մեջ» (IV, 93): «Հաստատումի» իմպերատիվը հար ու նման գործառնություն ունի ժանրային ինքնությունը կազմակերպող ձևաբանական-կառուցվածքային խնդրագրության պարագային: Այսպես՝ Ծերենցի պատմավիպասանության խորքին ելակետում է պատմավեպի տեսության համար ներժանրային այս դրսեռման արևմտահայ գրականության մեջ համապատասխան «զգայարանքի» (IV, 457) առերրությունը:

Ժանրինքնության քննաբանությունը հանգում է վեպի բնույթային երկվությանը՝ հատկապես հայոց վիպագրության պատմատեսական շրջանակում: Բնույթային երկվությունը, երկիֆեղկվածությունը դրսելորվում է ազդեցություն-հակազդեցությունների ձևով: Մի կողմից այն հանգամանքը, որ անկախ վերջնական արդյունքից, վիպումի արարքը միշտ ստեղծաբանական «անբավարարվածություն» է թողնում գրողի մոտ, ինչը վերջիվերջո գրութենական դինամիկան ապահովագրողն է, մյուս կողմից այսպես կոչված «միջին ընթեցող-

16 Մ. Մամուրյան, «Վեպն ի Ֆրանսիա», «Արևելյան մամուլ», Զմյուտնիա, 1891, թիվ 3, էջ 116:

17 Նովն տեղում, 1871, թիվ 1, էջ 37:

18 Նովն տեղում, «Նոր վեպ մը», 1891, թիվ 1, էջ 13:

19 Տե՛ս Մուրա, Թիֆլիս, 1898, թիվ 4, էջ 528-529:

ների պահանջմունքների բավարարման» բաղկուսումը դա անցնելու կարելիություններին: Երևույթը մանրամասնում է Խաչատուր Միսաքյանի «Սոփիա», Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհի», Մամուլյանի «Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» վեպերի օրինակով: Մի կողմից թարգմանական փորձը, Փրանսիական վեպի ներբեռումը, մյուս կողմից՝ այդ փորձի բացակայությունը սեփական գործերում, որ հանգում է «տարօրինակ, դժվար տարապելի գրագետի» (I, 153) սահմանմանը Միսաքյանի պարագային, ինչը ազդեցություն-հակագդեցության միակողմանի պատվաստման արդյունք էր: Մամուլյանը «Անգլիական նամականին» լցնում է ուսուցողական-լուսավորչական վեպին բնորոշ հանգանակներով, որոնք կրկին ներքնագրային տիրույթներում չունեն հակագդումի էտատարերը, ինչը, բնականաբար, օշականյան մետատեսության մեջ հանգրվանում է «Հերքումի» տիրույթներում:

Վեպի մետատեսության միասնականացնող-կարգաբերող ելակետումը ժանրինքնությունը պայմանավորող «իրավության» գեղագիտությունն է, ինչը օշականյան գերենագրում անընդհատ շրջապատմ և մանրամասնվում է: «Մաթիկ Մելիքսանյան» վեպի առաջաբանում շեշտում է. «Վիպասանը, մեր օրերուն, զվարճացնող մը չէ: Ան ունի այդ հասարակ դերեն վեր հավակնություններ: Առողջության են աշխարհներու ճարտարապետում մը (Պալզաք). Հոգիներու առարկայացում մը (Տությունսկի): ընկերություններու բնական պատմություն մը (Զոլա). Կորսված երկրամասերու վերագյուտ մը (Մարսել Փրուստ)»<sup>20</sup>, «Համապատկերում» արձանագրում. «Մեր վեպը պիտի ըլլար մեր իրավ ժողովուրդը, և ոչ թե հատվածական նմույշներու հանդես մը այդ ժողովուրդեն» (IV, 12): Ինքնությունը կարգաբերող «իրավության գեղագիտությունը» ենթագրում է, որ վեպի կիզակետումը դիպաշարից փոխանցվում է հերոսին, գործողությունից՝ անհատին, իսկ կյանքի գեղարվեստական փոխաձևությունը հայտնաբերում է իրականության մինուրոտն ու կենսուրորտը: Այս պարագրկումներում է օշականյան ժանրատեսությունը վերհանում վեպի ինքնությունը կազմաբանող շերտերը: Կյանքի անդրափոխանցումը ինքնացվում է վեպով, երբ ապահովագրվում է իրականության մինուրոտն ու կենսուրորտը: Այս պարագրկումներում է օշականյան ժանրատեսությունը վերհանում վեպի ինքնությունը կազմաբանող շերտերը: Կյանքի անդրափոխանցումը ինքնացվում է վեպով, երբ ապահովագրվում է իրականության լիակատարված հոսքով ստեղծագործություն, շարժումով և ժամանակի քրոնոտիպի ամբողջական կիրարկման դաշտով. «Մեր մտապատկերները, – գրում է «Ծակ-Պտուկում», – իրենց անկանոն խուժումովը կը ստեղծեն մեր մտքին կաթը, որուն չենք անդրադառնար մինչև որ շարժումը չմիջամտե ու միջոցին կամ ժամանակին մեջ չտեղափոք ատոնք»<sup>21</sup>: Այս «անկանոն խուժման» կարգաբերում-ներդաշնակությունն է կազմաբանում ինքնացումը, երբ վեպը առկայացնում է անդրատեսություն՝ նվաճելով ժամանակը, որը «...կը պահէ կենդանությունը քանի մը սերունդի ախորժակներուն ընդմեջն» (IV, 131), ստեղծագործությամբ առերելով կյանքի բոլոր տարագները. «Վեպ մը կ'արժե ոչ թե իր ձգտումներով – որոնք հասարակաց են բոլոր ընկերային հարցերով հետաքրքրողներուն, գրագետ կամ ոչ – այլ այդ ձգտումները կետադրող կյանքին իսկ նվաճումովը, որ այս անդամ այլապես բարդ գոր-

20 Բագին, 1974, թիվ 8, էջ 2:

21 «Ծակ-Պտուկը», էջ 9: Ժամանակի ինքնացումը կազմաբանող մանրամասնումը տե՛ս Պըլտյանի «Վեպին հղացքը» ուսումնասիրությունում, էջ 249:

ծողություն մը՝ կը պահանջե առնվազն տաղանդ» (V, 48): Հստ օշականյան մետատեսության սա հույժ պատասխանատու արարք է, պատահական չէ, որ Երվանդ Օսյանի հսկայական վիպագրության անդրադարձումներում նա ըստ էության տեսնում է միայն ժանրինքնության զառածումներ, իսկ ասենք Զոպանյանի նույն «Թուղթի փառքը» արժենորում արևմտահայ վեպ ինքնացող կազմաբանական շերտերի ներբերման առկայությամբ:

Վեպի մետատեսության օշականյան ստեղծանումը առարկայացնում է ժանրի ձևաբանական, հղացքային հարացույցի մեծ ընդգրկունություն ունեցող համակարգ: Ձևաբանության, հղացքի, այսպես կոչված, բովանդակային պլանի որևէ խնդիր գրեթե դուրս չի մնում մետատեսության դաշտից:

Ժանրի հղացքա-ձևաբանական տեսաբանության ելակետումը կյանքի գեղարվեստական ընդլայնումի վկայությունն է,— որքանով դա ստեղծաբանորեն վավերացված է վեպում, այնքանով այն ժանրի կայացում է, հանդրվան ու բարձրակետ. «Պետք չկա մեծաբարբառ հայտարարելու որ վեպը պայմանավոր է կյանքին հասակովը: «Մեծ ձուկ մեծ ծովին մեջ» ըսեր է մեր ժողովուրդը: Ու այդ մեծ ծովը չէր մեր կյանքը» (VI, 62): Հետևաբար կյանքի տարողությամբ է պայմանավորված ժանրի ընդլայնում-հասակումը: Միմիայն այս պարագային են ըստ ամենայնի հիմնավոր, ստեղծաբանորեն պատճառականացված դրսեորդում ձևաբանական կամ հղացքային կաղապարներն ու թելադրանքները: Մյուս կողմից, եթե ընդլայնումը բախման մեջ է առարկայաբար այն կյանքի հետ, որ չուներ հասակում (ինչը նշանակում է հայոց գրաբանական դաշտում վեպի իրացնելու անասելի գժվարություն), ապա «նավարկումը» գեպի մեծ ծով ուղղողութելը իրականալի է միմիայն խորքը, անդինությունը նվաճելով: Սա է հայոց վեպի պատմատեսության գնահատություն-մեկնությունների չափանիշը. «Ու քիչեր գիտեն թե արվեստագետի մը բախտը խորության չնորհե մը կախված ըլլալուն չափ, պարտական է լայնության ալ հարկադրանքին» (VI, 263): Այսպես է կյանքի ընդլայնված վկայությունը Շիրվանզաղեկի «անկանգնելի միջակությամբ», «ծեքծեքուն ծանծաղությամբ», «թերթոնական առաքինությունների» խնկարկումով, Շաֆֆու «քարոզներու հեղեղով» (VI, 263) բախվում տեղությանն ու խորությանը և այնուհանդերձ վերապահությամբ՝ արժենորվում կյանքի օվկիանոս մտնելու, նավարկելու ջանքով: Իսկ եթե լայնությունը դաշնավորվում է «կյանք մը պարզելու քաղցր եղանակին» (VI, 280),— ապա, ինչպես նկատում է Զապել Եսայանի «Վերջին բաժակի» առիթով, դա վեպի ակնկալած արտահայտությունն է: Վերջինս (կյանքը պարզելը) իրականության, անհատի, կենսոլորտի «ջիղերու վկայությունն» (VI, 261) է, ինչը ժանրին բերում է ընդլայնումի թե՛ ներքին, թե՛ արտաքին ոլորտների վերջնականացում-ավարտաբանվածությունը՝ նվաճելով մեկ տողանոց մարդու կյանքի հազարավոր կետերը (Սահակ Պարգևյան): Վեպի արժեքաբանական բարձրակետում գտնվող Պարոնյանն ու Եսայանը, Կամսարականն ու Երուխանը կյանքի ընդլայնումը սոսկ չեն ժանրացնում համարժեք պատմասանությամբ, այլ այն «վարում են»<sup>22</sup>, որը հենց իրականության խորքային գեղարվեստականացման հա-

22 «Հաճի Ապտուլլարի» համարնագրում ցուցանում է ինչպես «վարման» գերակայությունը, այնպես ել դրանից շեղումների ձախավերությունները: Տե՛ս էջ 148-149:

մարժեքումն է: Հայոց դասական վեպի պատմատեսության պարագրկումներում ժանրի ներբախումային հատկականությունը՝ «գրչի երկու խաղով պարուղող» և «թուղթին վրա պառկող»<sup>23</sup> (Հյուգո, Սյուլ, Դյումա, Սանդ, Եվրոպական թերթոնային վիպագրությունն առհասարակ) իրացումներով, իբրև ստեղծաբանական արարք, ելակետում անտեսել է, չի մոտեցել Բալզակ-Ստենդալ-Դուտուսկի-Պրուստ-Ջոյս-յան տեսաիրացմանը<sup>24</sup>:

Կյանքի ընդլայնման-հասակումի վիպաստեղծ առաջնահերթությունը օշականյան ժանրի մետատեսության մեջ ընդելուզում, փոխկապակցում է ժամանակային հարակցության մեջ առաջադրում է իրականություն-երևակայություն գուգաբանության ստեղծաբանական մղիչի կերպը: «Երևակայությունը շարժումներու գծագրություն մը կը նշմարե, խավարին մեջ ուրվագծված կայծակե մը լուսավոր, բայց տկար է մարդերու իրականությունը փրկելու հարցին մեջ»<sup>25</sup>: Այս հանգույցում է հատկանշվում վիպումի հիմնական չափանիշը՝ գտնել, վերհանել «իրավ բառը», որ արտօնված «քանի մը տողի» սահմաններում «դպիլ ու անցնիլ» կանխապահումի, «վիպելու դժբախտ բան լինելու» ինքնին կաշկանդումներից անցնի, մոտենա կյանքի անեղրականությանը, ստեղծանի վիպային համարժեքումը, – ինչպես ուրվագծում է «Ծակ-Պտուկը», «Հաճի Ապառուլլահ» և «Սյուլեյման էֆենտի» վեպերի միջգրութենական միջակություններում<sup>26</sup>: Ուրշակի առումով ժանրատեսության հղացքա-ձևաբանական այս թելագրանքը պայմանավորված էր այսպես կոչված «հոգեկոր վեպի» ընկալման-ըմբռնման հանգամանքով: Ժանրի այն որակի և կիրարկման՝ ինչը նվաճում է կյանքի ուգերեր կենսոլորտը, ինչն իր հերթին ենթադրում է ժանրի համադրականությունը, «սինթետիկ վեպի» կազմաբանությունը: Այս պարագային տևողության կանգնումը դառնում է ժանրի համադրականությունն ապահովագրող հիմքը: Վիպել իրականության, ապրումի, զգայնության, վիճակի, հոգեբանության և հոգեխառնության, բարքի այն պահը, որն իր տարողումով անցնում է կոնկրետ պահը, ապրումը, զգայությունն ու վիճակը, հատկականացնում է կյանքն ու կենսոլորտը: Սա էր օշականյան «խոր վեպերու» տեսությունը<sup>27</sup> (ինչին դեռ կանդրագառնամ), հոգու խուզարկումի ժանրագերակատարությունը (ահա թե ինչու՝ հղացքաձևաբանական հարացույցում «հոգեոր վեպի» առանձնացումը), այլապես՝ «տեսողությունը տարտամում է ու կըլլա գեպք»<sup>28</sup>, որը ժանրի «հերքման շերտի» տիրույթներում է, ուր ըստ Օշականի ժանրաձևաբանության, դրսերումները կրավորական են, դուրս վեպի ի՛ր գեղագիտության, տեսության նպատակաբանությունից:

Այսուհանդերձ վեպի «անխառն», «բացարձակ» տեսությունների հուքը Հակոբ Օշականի ստեղծագործության համակարգում առարկայաբար անմասն

23 Մնացորդաց, Բու. Ա. Անթիլիաս, 1988, էջ 324:

24 Տե՛ս Համապատկեր, Բու. 10, էջ 9-10, Սահմակ Պարգևան, էջ 65:

25 Մաթիկ Մելիքսանյան, էջ 35:

26 Տե՛ս ԾՊ 229, ՀԱ, 110, ՍԷ 404:

27 Մայրիներու շուրին տակ, էջ 23-24:

28 Հաճի Մուրատ, էջ 93:

չէր կարող մնալ ժանրի ձևաբանական արծարծումներից, քննություններից, քանի որ մի կողմից հայոց և համաշխարհային վիպագրության պատմատեսությունը և մեկնությունների շրջանակը, մյուս կողմից ժանրի տեսության սեփական ստեղծանումի ընթացականությունը թելադրում էին ներժանրային կաղապարների, արխիտեկտոնիկ-կոմպոզիցիոն, քրոնոտոպային խնդիրների հանդեպ վերաբերմունք-դիտակետ։ Հարկ է նշել, որ ներժանրային կառույցներին անդրադառնալիս հատկապես կենտրոնացել ու մանրամասնել է սիրավեպի՝ պատմական պոետիկայի խորքով, արկածային, ոստիկանական-դետեկտիվ, ժամանցային, բարոյախոսական, գաղափարագրական, հոգեբանական վիպագրությանը, վեպ-օրագրություն, վեպ-նամականի կառույցներին և իհարկե պատմավեպին։ Այսօրինակ մոտեցումն ինքնին հասկանալի է, որովհետեւ հայ վիպագրության պարագրկումը պայմանավորող-հատկանշողը ժանրի ձևաբանական հարացույցի խնդրո առարկա արտահայտություններն են։ Ինքնության տեսաիրացումների պես այստեղ ևս «հերքում-հաստատում» զուգաբանությունը ձևաբանության խնդրագրության մեկնության դիտակետն է, մեթոդաբանությունը որոշակիորեն։

Հայ դասական վեպի պատմության համապատկերում սիրավեպի ներժանրային կաղապարն իր բազմաթիվ տարեկաններով Հիսարյանից մինչև Բենիամինի Եղիազարյան և Մարի Սվաճյան՝ հերոսների առաջին հանդիպման, սիրո ընձյուղման, պատնեշների հաղթահարման կամ չհաղթահարման կամ սիրո հովվերգական սյուտեի, քրոնոտոպների կիրարկումներով ըստ օշականյան մետատեսության՝ գերազանցությամբ ունեցել է ածանցյալ գերակատարություններ, ելլոպական համապատասխան կաղափարի սոսկական փոխագրություններ, առանց վեպն ինքնացնող էատարերի (կյանքի նվաճում, բարք և զգայնություն, խորք, հոգեբանություն և այլն)։ Վեպի այս տեսակը վերապահելով մեծավ մասսամբ ժամանցայնության տիրույթներում, ինչպես ոստիկանական-դետեկտիվ, արկածային, պատմական վեպերի պարագային։ Նմանօրինակ իրացումներում սիրավեպի կազմաբանական բոլոր միավորները դուրս են մնում իրականության, ժամանակի, իրադարձության շրջանակից, հատկանշվում են, ինչպես Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհի» վեպի օրինակով է նկատում։ «...իրողությանց ալեկոծ շրջումներով, բռնաբարումներով» (I, 224), – ապրումի փոխարեն քարոզով, իրականության թելադրանքով պայմանավորված հակազդեցությունների փոխարեն կեղծ, մտացածին պատնեշումներով։ Աչաթե ինչու սիրավեպի ժամանցային կառույցը «Հերքման, մերժումի» դաշտում է (Հիսարյան, Տյուսաբ, Մամուլյան, Երվանդ Օայան և այլք)։ Հաստատագրումը տեսնում է իրապաշտների գեղարվեստական համակարգում՝ Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը», Զոհրապի «Անհետացած սերունդ մը» և հատկապես Երուխանի «Ամիրային աղջիկը» ստեղծագործություններով, որոնց համաբնագրերում ներժանրային կառույցը համակցվում էր բարքագրությամբ, բարքերի վեպի բաղադրատարրերով։ Առհասարակ օշականյան մետատեսության համակարգում ժամանցային վիպագրության՝ ոստիկանական-դետեկտիվ, արկածային վեպերի, անվերապահ ժխտումը, «հերքումը» պայմանավորված էր «Վեպը կյանքով է դիմավոր» ելակետումից շեղմամբ, ինչ շուրջ մանրամասն-

վել է Բենիամին Նուրիկյանին 1944-ի հուլիս 25-ին հասցեագրած նամակում<sup>29</sup>: Ներժանրային այս կառույցներին բնորոշ դիպվածի, առեղջվածի, գաղտնիքի, արկածի արտաքին մակարդակում սկեռումները տարտղնում են վեպերի խորքը, տարողումը, — ահա թե ինչու օրինակ Երվանդ Օտյանի արկածային, ոստիկանական վեպերի շարքը չէր ընդունում: «Ապոու Համիտ և Շերոք Հորմս», «Սալիշա հանրմ կամ բանակը բռնավորին դեմ», «Թիվ 17 խափեն», «Ես դրսեցի չեմ առներ»՝ առեղջված-խորդավորի, ոճիրների, հետապնդումների բավականին լարված, դինամիկ վիպումով այնուհանդերձ՝ քանզի դրանք ոչ միայն «կյանքով դիմավորված» չէին, այլև չէին հայտնաբերում և վիպանվաճում նույն արկածի, ոճիրի ընդերքը, ներքին մակարդակը: Ահա թե ինչու «Սյուլեյման էֆենտիի» համարնագրում պարբերաբար կրկնում է «Երկար է թվումը անոր արկածներուն ու պետք է կարճ ըլլալը»<sup>30</sup> միտքը, քանի որ «ժամանցային վիպագրության» նորմատիվ կիրարկումը ժանրի նահանջի, «ուժերի վատնումի» արտահայտություն էր համարում:

Պատմավեպի ներժանրային կառույցի տեսությունը օշականյան գերբնագրում արժեկում-մեկնաբանվում է հետեւյալ ելակետումով. «Վեպը մեզի կուտա ազատություններ, արձակություններ, պատմական հարազատություն չեղծանելու գինով, մեր տիպարները ենթարկելով այն կարգի խորացումներու, ընդլայնումներու, խոչորացումներու որոնք մեզի ներեին իրենց ընդմեջեն խորհրդագնիշ տախտակներ, մտապատկերներ թելադրել մեզի» (IV, 461): Ուրեմն, «Պատմական վեպի գգայարանքով» պայմանավորված վիպումի ազատությունն ու արձակությունը եթե չի բավարարում ժամանակի և անհատների (հերոսների) իրականության կենսոլորտը, ապա այդօրինակ իրացումները տեսականուրեն «Հերքվում» են: Այս չափանիշում է Օշականը դիտարկում պատմավիպասանության Մամուրյան-Ծերենց-Ռաֆֆի-Մուրացան-Դեմիրճյան-Զորյան-Նշան Պեշիկթաշլյան-ական կիրարկումները: Եվ եթե որոշակի վերապահումներով «Հմտության» (պատմական փաստերի լիակատար տիրապետումի) և «Կյանքի գգայարանքի» (պատմությունը ստեղծագործությամբ կենդանակերպելու, կենսապորելու) արարողական հատկանիշներ նկատում է Ծերենցի, Ռաֆֆու, Մուրացանի պատմավիպասանության մեջ, ապա՝ Մամուրյանի «Սև լերին մարդը», Դեմիրճյանի «Վարդանանքը», Զորյանի «Պապ թագավորը», Նշան Պեշիկթաշլյանի «Սիրոննա», «Խաբբի» ստեղծագործություններում անտեսում է ներժանրային կառույցի նահանջն ու այլափոխությունը: Մամուրյանի «Սև լերին մարդը» ստեղծագործության տիրություններում պատմական վեպին բռնակցած արկածային, ճանապարհորդական, սիրային, լուսավորչական, դիդակտիկ, գաղղափարային վեպերի տարրեր փոշիացնում են «պատմական գգայարանքի» առաջադրությունը: «Պապ թագավորում», «Վարդանանքում» նկատում է վրիպման գիմնական պատճառը՝ ո՞չ Զորյանը, ո՞չ Դեմիրճյանը վիպասանի տարերք չունեին, «Սիրոննա», «Խաբբին» հրաշավեպերն ընդամենը «իրականության փախուստի գեղեցիկ դիմակներ են»<sup>31</sup>: Զմանրամասնվելով, հատկապես Զորյա-

29 Տե՛ս Հ. Օշական, Նամականի, Էջ 21:

30 Հարյուր մեկ տարվան, Էջ 298:

31 Տե՛ս Մարիմերու շուքին տակ, Էջ 39:

նի և Դեմիրճյանի պատմավեպերի առփթով «Նայիրիում» 1946-ին տպագրված օշականյան դիտումների չուրջ<sup>32</sup>, որոնք այնքան դաժանորեն շահարկվեցին մերձգրական միջակությունների կողմից, պարզապես արձանագրեմ, որ այս դեպքում էլ Օշականի նկատումը արդիական է՝ վկան հայ գրաբանական դաշտին ոչինչ չհավելող պատմավեպերի անվերջանալի շարանը:

Հայոց դասական վեպի պատմատեսության մեջ Օշականը իրավացիորեն առանձնացնում է այսպես կոչված ուսուցանող-բարոյախոսական, գաղափարագրական ներժանրային կառուցը: Զեաբանական այս միավորի գնահատանքը ելնում է այն հանգամանքից, թե որքանով են վեպի կառուցվածք ներբերված փիլիսոփայական, սոցիալական ընդհանրացումները, դիդակտիկ, գաղափարաբանական առաջադրությունները դառնում գեղարվեստական անտրոհելի հյուսվածք, ինչպես են «վերացական իրողությունները» դառնում «մարդու պատումին»<sup>33</sup>: Այս հարաբերակցության տիրույթներում է արժեորում գաղափարական վեպը Սրբուհի Տյուսաբից մինչև Լեռն Շանթ: Ամփոփում է, որ «Գաղափար աղալու», «գործի, գործողության փոխարեն խոսքի, խոսակցության հեղեղը» այս կառուցյի կազմաբանական հիմքն են: Հար և նման է վեպորագրության, վեպ-նամականու տեսությունները, որտեղ կարեւորվում է ոչ միայն գաղափարի փոխակերպությունը վիպումի, այլև նամակի և օրագրի յուրաքանչյուր տող հոգու գեղարվեստական անդրադարձում դարձնելը: Այս չափանիշի խորքով է դիտարկվում Մամուրյանի, Տյուսաբի ստեղծագործությունները, Տիգրան Զյոկյուրյանի «Վանքը»: Առհասարակ «Հոգու անդրադարձման» վիպաստեղծ հանգանակը տարածականացվում է ժանրի ձևաբանական հարացույցի բոլոր միավորների վրա անխտիր: Բնականաբար այս հանգամանքը մեկնակետային գործառնություն ունի հոգեբանական վեպի ներժանրային կառուցյի տեսաբանություններում: «Իմ իրավունքս է վեպ մը իր ուսերուն վրա կրող մարդեն հոգեբանական հարազատություն միշտ պահանջել» (IV, 462), ինչը վերջիվերջո կյանքի ընդլայնում-հասակումի վիպայնական համարժեքումն է: Այս տիրույթներում է հետևում Չոպանյանի «Թուղթի փառքից» մինչև Սիպիլի «Աղջկան մը սիրտը», Զապել Եսայանի հոգեբանական վեպերի ներբերած տեսական հանձնառություններին: Էսական է դիտել, որ վեպի պատմատեսության շրջարկում «հաստատումի» դիտանկյունը առավելապես խարսխված է հոգեբանական վեպի իրացումներում՝ Կամսարական «Վարժապետին աղջիկը», Երուխան «Ամիրային աղջիկը», Եսայան «Վերջին բաժակը», քանզի մատնանշած ստեղծագործությունները ներբերել են վավերատիպ անձնավորությունների համապատկեր, հոգեբանության և հոգեխառնությունների վիպարարողական տեսողություն, երբ պատահարը անցնում է իր սոսկական գերակատարությունից, բնագրային մակարդակում ընդլայնվում-կերպարվորվում իրականության լիակատար-ավարտաբանված վկայության, հեղում՝ ներաշխարհ-արտաշխարհ փոխներթափանցումների հուրով պայմանավորված անհատի կյանքի, գոյության մետամորֆոզները՝ հոգեբանական վեպը հարստացնելով ժամրի, այսպես

32 Տե՛ս «Օշականը կը դատե Հայրենի բերքի քառասամյա վաստակին ուժովը» հոդվածը, Նայիրի, 1946, թիվ Զ, էջ 280, Նամականի, էջ 87:

33 Սյովելման Եֆենտի, էջ 280:

կոչված, վերլուծական կառույցի հատկականություններով՝ կրքերի ներքին պայքարի, «անդնդային հոգեվիճակների» (VI, 277) գրականացմամբ<sup>34</sup>:

Ցանկացած ձևաբանական կառույց ժանրի մետատեսության պարագրկումներում հաստատագրվում է, եթե բավարարում է ժանրի ինքնացնող գոյութենականությունը պայմանավորող անհատի, բարքերի նվաճման և վիպումի ազատությունը վկայող հանձնառությունները: Վեպը արթեք է, կայացած է, եթե առերում է «անձեր ապրեցնելու հիմնական չնորհը» (VI, 37) (Պարոնյան, Կամսարական, Զոհրապ, Երուխան, Եսայան), կենդանագրում դրանց, վկայում մարդու կենսուղին, այսպիսով անհատի վիպասեռման տիպարային առաջնահերթությունը ժանրը հանգուցում են անհատի վիպագրման «լիությամբ, ամբողջությամբ» (V, 270), առարկայացնում աշխարհային-ենթաշխարհային պատճառարանվածությունը, որը «...որքան ընդարձակ է (ու մի շփոթեք ասիկա դարձյալ ծավալին հետ), այնքան թանկագին է մեզի իր վկայություն» (X, 130): Նախ սրանով է բացատրվում օրինակ Զիֆթե Սարաֆի (Միամիտի մը արկածները), Սմբատ Բյուրատի (Ելտըզե Սասուն), Արմեն Շիտանյանի (Թիապարտը) վիպագրության «մերժումը» կամ լուսանցքայնությունը ժանրի տեսության գերբնագրում: Դասական, հատկապես իրապաշտական-բնապաշտական, վեպի պատճառտեսության մեջ բարքերի կիզակետումը (գեղարվեստական սկեռում-նվաճումը) ժանրի պարագրկումներում, ըստ Օշականի, կազմաբանական նշանակություն ունի: Դա ճշմարիտ վեպի այն հանգանակն է, «որու հպատակության կը պարտինք արեելահայ վեպը գրեթե ամբողջովին ու արևմտահայ կարելի վեպը» (VI, 267), Շիրվանգաղեի, Նար-Դոսի վեպերի պոետիկական վիթարները փրկվում են «բարքը կազմող ամենեն բարձր որակով» (X, 149), որը վեպին հնարավորություն է ընձեռում գլխագրելու կյանքը (Պարոնյան, Եսայան, Երուխան) շրջանի վկայությամբ, իսկ Օտյանի վեպերը «...մեր կյանքին ոչ մեկ կողմը կը նվաճեն» (VI, 81): Պատահական չէ, որ «Ամիրային աղջիկը» իրապաշտ շրջանի բարձրակետն ու անգերազանցելի իրացումն է համարում. «Զունինք ուրիշ հատոր մը, ուր երեք քառորդ դարու կյանքի մը ըլլային վերաբերված այսքան առատ մթերք մը, այսքան հատկանշական տախտակներ (որոնցմեն ոմանք իր մոտ փրկված) մեր բարքերեն» (VII, 218): Ահա թե ինչու տեսական դատումներում վեպի դինամիզմի հետևողական պահանջի հանգամանքը միշտ նահանջում է բարքերի պարագային. «Այս պատմությունը, բարքերի պատկեր մը ըլլալով ամենեն շատ չեմ կարծեր, որ ծանրաբեռնվի, երբ քանի մը կարգեր իյնան ամփոփ վերլուծումի, իրենց շատ ընդհանուր գիծերով», – դրում է «Սյուլեյման էֆենտիում»<sup>35</sup>: Ահա թե ինչու ընդհանուր առմամբ վերապահ լինելով նորերի վիպագրության հանդեպ նշան Պեշիկթաշլյանի «Ընկեր Շահազարը» արթեռում է, որովհետև այն «...գրեթե բարքի վեպ մըն է»<sup>36</sup>:

Թե՛ անհատի, թե՛ բարքի սկեռումն առանց վիպումի ազատության անհրա-

34 Հետաքրքրական է այն իրողությունը, որ մատնանշածը տեսական «մաքուր» անդրադառն է ունեցել «Մաթիկ Մելիքխանյան», «Սահակ Պարգևան» և «Մացորդաց» վեպերի տիրութեարում: Տէ՛ս համապատասխանաբար 13, 329, 294-195-րդ (Բն. Բ) էջերը:

35 Հարյուր մեկ տարվան, էջ 255:

36 Տէ՛ս Մայրիներու շուքին տակ, էջ 41:

ժեշտ, սակայն ոչ բավարար պայմաններ են ժանրի մետատեսության մեջ: Վիպումի ազատությունը դուրս է պոետիկական-ձևաբանական թելադրանքների «բռնություններից», այսինքն՝ արխիտեկտոնիկ-կոմպոզիցիոն թելադրանքներին տեղի տալուց, երբ ժանրի տեխնոլոգիայի ներքո տարտղնվում է կյանքի հասակումը, դանդաղում է գործողությունը: Նկատի ունի հատկապես ներուլութիւնի գործողությունը: Այս իրողությամբ է բացատրվում նաև Օշականի տեսաբանական դաշտում Դոստուսկու, Պրուստի և Զոյսի վիպագրության օրինակելիությունը, որոնք անցնում է աղթահարում են ժանրի «կամավոր կարգապահության» (VII, 289) պատճենները, բնագիրը հանգրվանում վիպումի այնպիսի ազատության մեջ, որտեղ «աշավոր տրամաբանության մը փոթորիկով, ոռուս վիպասանը իմացական, բարոյական մեծ հարցեր կը ձգե առջեր ու ասոնց հետ ընթերցողը, ատեն չձգելով ասոր րոպե մը անդրադառնալ: Գաղիացի վիպասանը այդ զառածումով ամբողջ անցյալ, կորած աշխարհ մը պիտի կառուցանե... Իրանտացի վիպողը մեր կտոր-կտոր Հոգիին մասերը պիտի խաղա» (X, 226): Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ օշականյան մետատեսության համակարգում վիպումի ազատության թելադրականությունը չի նշանակում արխիտեկտոնիկ-կոմպոզիցիոն պլանի անտեսում: «Վիպասանը ճարտարապետ մըն է»<sup>37</sup>, – զանազան առիթներով շեշտում է նա, ինչը ենթադրում է, թե ժանրի կառուցան անդրադարձվում էին: Ժանրի «ճարտարապետությունը» անվերապահուեն պետք է անցնի գրողի հությամբ, կարեորը ոչ թե ժանրի արխիտեկտոնիկ պահանջների, տեխնոլոգիայի, թեկուզ լավ ուսանած, ապահովումն է բնագրային մակարդակում, այլ դրա հարադրությունը գրողական խառնվածքին, տարերքին, այս երկուսի պարագային է, որ ժանրի արխիտեկտոնիկ-կոմպոզիցիոն թելադրանքները չեն դառնում ինքնանպատակ, ժամանցային, այլապես երկը նմանվում է Օտյանի «Թաղականին կնիկը» վեպի ինքնադատականի հետևյալ նկատումին՝ մի արձանի, որ խոշոր իրան ունի և բարակ ոտքեր:

1927-ի հունվարի 12-ին Նիկողոս Սարաֆյանին հասցեագրած նամակում Օշականը ժանրի արխիտեկտոնիկային անդրադառնալիս կարեորում է վեպի կառուցման, «ճարտարապետության» խնդիրները, ստեղծագործությունից պահանջելով. «Խնամք, մարդերու, գետինի, մթնոլորտի, զգայնության, գաղափարի», – ինչը պայմանավորում է «տեսիլքի, վիճակի, սևեռումների, մանրամասնության խուզարկումներու հարատևությունը»<sup>38</sup>: Ժանրի արխիտեկտոնիկ-կոմպոզիցիոն խնդրագրության պարագրկումներում ստեղծանում է «ծանր վեպի» տեսությունը (իրացրած սեփական վիպագրությամբ), ինչը գոյավորվում է բնագիր կազմակերպող հետևյալ հանգամանքներով. 1. ընդարձակություն, որ սոսկ ծավալաընդգրկումը չէ, ծավալը մեծացնելը ավելորդ երկարաբանություններով ի հաշիվ կյանքի, ներաշխարհի ընդլայնման, «գործողության ներքին ծավալման», – ինչպես նշագրում է «Մնացորդացում»<sup>39</sup>, 2. թելադրակա-

37 Նույն տեղում, Էջ 37:

38 Կամ, Փարիզ-Բուտոն-Տորոնտո, 1986, թիվ 3-4, Էջ 135-136:

39 Մնացորդաց, հոդ. Գ, Էջ 68:

նություն, երբ կոմպոզիցիոն միավորները, դիպաշարային ներփակ-ներդիր պլանները միասնականանում են, ընդհանրականանում. «ամեն մաս կը թելադրե մեկ և նույն ոճը» (X, 186): Այս հանգամանքը բաղչյուսվում է ժամրի «հստակության» առաջադրությանը, ինչը առքերում է կոմպոզիցիոն-արխիտեկտոնիկ երրորդ՝ «ծանր վեպի» կազմաբանության համար էական հանգամանքը՝ բոլոր տարրերի համամասնություն, ներդաշնակություն: «Ծանր վեպը» հանձնառում է նաև լեզվի վիպայնացման նորակերտումի իրողությանը<sup>40</sup>, այս պարագային կրկին կենսառութերի-կենսոլորտի վիպման նպատակաբանությունը այն է, երբ «նախադասության օրինական անսովորությունները» առքերում են «աշխարհի խորությունը» (I, 89):

Ժանրի մետատեսության օշականյան ստեղծանումը ինքնության, կազմաբանության, ձևաբանության խնդրագրությունը, վեպի գոյութենությունը հանգեցնում է վիպագրության անբավականության հայեցությանը. վեպն անբավարար է, չի հերիքում իր առթած կարելիություններով, գեղարվեստական, կառուցվածքային չափազանցություններով, հանձնառություններով վկայելու կենսոլորտը բոլորեքյանությամբ: Հետևաբար «Ի՞նչ է վեպը» հարցումը գրողի համակարգում գտնում է վերջականացրած (տեսությամբ և ստեղծագործությամբ իրացրած) պատասխանը. «Վեպը կյանքն է: Ու եթե մեր տարիքը սահման մը ունի, սահման չունին մեր օրական ապրումները: Մեկը ժամվան մը մեջ տասն անգամ ավելի շատ, խոր, խիտ կապրի, քան մյուսը, որ ութսուն տարիներ շալակած գերեզման շտկելու ատեն ոչինչ ունի գինքը ետին դարձնող»<sup>41</sup>, – վեպը կյանքի, կենսոլորտի, ապրումի անդրատեղությունն է, վերժամանակայնությունը ստեղծագործության մեջ: «Կյանքը պատմելու ապրանք չէ»<sup>42</sup>, այլ նույն այդ կյանքի նվաճումը: Կյանքի գաղտնիքի առքերությունը իբրև վեպ ժամրի անդրակաղապարումն է, անցումը ձևաբանության նորմայից, ահա թե ինչու իր վեպի համակարգում «հարյուրավոր էջերի անբավականությունը» հանկերգ է (Սահակ Պարգևյան, Հաճի Մուրատ, Հաճի Ապտուլլահ, Սյուլեյման էֆենտի):

## Գ.

Վեպի տեսաբանության Հակոբ Օշականի միջրութենական համակարգը ներբերում է այնպիսի խնդիրների անդրադարձներ, որպիսիք են թերթոնային վիպագրության քննաբանությունը, վիպաշարի (ցիկլիկ վեպերի) վերլուծությունը, որ, հարկ է նշել, մեզանում խնդրի առաջին տեսական ընկալման փորձն է, վեպ-վիպայնություն, պատմում-պատմասանություն հարաբերակցության հարցերը:

Եվրոպական թերթոնային, հիմնականում ժամանցային, միջին ընթերցողին հասցեագրված, բուլվարային վեպի սոսկական պատճենումը մեզանում, ըստ օ-

40 Վեպի տիրույթներում կյանքը նվաճելու համար բարը և «...մեղմ է հուզումնեն գրեթե քրտնած», և՝ «միս, շարժուն ու թափանցող», Ծակ-Պտուկը, էջ 237:

41 Մայրիներու շուքին տակ, էջ 16-17:

42 Հաճի Ապտուլլահ, էջ 106:

շականյան տեսության, հաստատագրեց ժամրի այնպիսի կիրարկում, որ կամ ընդհանրապես, կամ չնչին առնչակցություններ ունի գրողի կողմից տարբերակած (ի հակակշիռ այս գրակորման տարբերակած) «իրավ վիպագրության» հետ: Մեր գրականության պատմական առումով առարկայական պատճառականություն ունեցող լրագրային ընթացքն էլ մյուս կողմից պարարտ հող էր վեպի զառածված կերպի թե՛քանակով, թե՛ընդգրկումով ուռճացման հետ: Այս իրողությունները «մեր գրականության ընկալչությունը» դարձրել էին այնպիսին, որ «...չէր կրնար հաշտվիլ թերթոնեն դուրս ուրիշ կերպարանքով լայնաշունչ ստեղծագործություններու» (X, 104-105): Վեպի այս կերպը «հերքման» տիրություններում է, այսին՝ դուրս է ժանրապատկանելության ընկալումներից: Թերթոն վեպը ընդամենը մարդկանց «կը պտտեցնե իրադարձությանց պարունակով» (IV, 41), – այն պարզապես ուժերի սպառում էր<sup>43</sup>, հայոց վեպի ձախավերությունը: Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Օշականը լուրջ վերապահություններ ուներ Ծերենցի, Տյուսաբի, Սիպիլի, Օտյանի, առհասարակ ժխտական էր Մարի Սվաճյանի, Արմեն Շիտանյանի, Սմբատ Բյուրասի, Միսաք Գոչունյանի, Մատթեոս Մամուրյանի հանդեպ, որն, ի գեպ, թեև գիտակցում էր թերթոնի վտանգները ազգային վիպագրության հեռանկարում, սակայն այդպես էլ ստեղծագործությամբ չկարողացավ այն հաղթահարել<sup>44</sup>: Եթե, օրինակ, արժելորելով Օտյանի գործը (հատկապես նորավեպերը, պատկերները, «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրությունը), ժխտում էր նրա ժառանգության «տիրական կողմը՝ թերթոնը» (IV, 183), ապա ասենք Միսաք Գոչունյանի «Կարապետ», «Բախտախնդիրը», «Խորհրդավոր աղջիկը», «Կրակին մեջեն», մյուս թերթոն վեպերը, որոնք սքեթչ են, թողնում է վեպի տեսաբանության լուսանցքներին: Ժանրային զառածման պատճեշումը «ծանր վեպի» հետ նաև վիպաշարերի (վիպացիկերի) առկայությունն է: Պատահական չէ, որ վեպի տեսության Օշականի գերբնագրում այն ունեցել է իր անդրադարձը: Այս պարագային ինչպես «Մնացորդաց», «Մաթիկ Մելիքիանյան» դիլոգիայով, այնպես էլ վիպաշարի տեսության անխառն ցուցունությամբ Օշականը Շահնուրի, Որբունու հետ ավանդադիրներից էր հայ վեպի պատմության համապատկերում: Հստ օշականյան տեսության՝ վիպաշարի նպատակաբանությունը «...վիպային իրադարձության հետզհետե ընդարձակվիլը, ծանրաբեռնվիլը, հորդումն է»<sup>45</sup>: Պարբերաբար դիմում է Բալզակի, Զոլայի, Պրուստի փորձին: «Կյանքին պես» վեպում գրում է. «Պահ մը փորձվեցա մեծ Վարպետին հանդեպ սերես նվաճված իմ շարքը ենթատիտղոսել «Մարդկային տուամա»<sup>46</sup>, կամ «Մահակ Պարգևանում» արձանագրում. «Վեպերու այս եռյակը, եռանկարը,

43 Թերթուն վեպի ժխտումն առկա է վեպերի «տեսական շրջարկում» նաև: Տե՛ս օրինակ՝ «Այուղյան էֆենտի» Էջ 327:

44 Մամուրյանը, որ անցել է և անցնում էր թարգմանությունների բովով, Ակատում էր թերթունային վեպերի այն խոչընդոտները, որոնք արգելակում էին ժամրի լիարժեք կայացմանը. «Մեզի համար օտար վիպասանությանց թարգմանության ժամանակն անցած է...», Ս.րնելյան մամուլ, 1885, թիվ 1, Էջ 561-562:

45 Տե՛ս Մաթիկ Մելիքիսանյան, Նախաբան, Բագին, 1974, թիվ 8, Էջ 1:

46 Կյանքին պես, Էջ 5:

կը ձգտի այդ սկսած քայքայումը արձանագրել, արվեստի քանի մը ճամբաներու վրայով»<sup>47</sup>:

Ժամանակակից առաջնային գուգահեռներում Օշականը անդրադառնում է վեպ-վիպայնություն-պատմում-պատմասանության հարաբերակցությանը, վեպի պատումային մակարդակի մասնահատկություններին: Կուզեի հիշատակել Գրիգոր Պլոտյանի «Վեպին հղացքը» շահեկան ուսումնասիրությունը, որտեղ նշված խնդիրները մեկնաբանվել են: Համառոտ նկատեմ, որ ժամանակակից այս հարաբերակցությանը անդրադառնում է և՛ փոքր արձակ-վեպ սահմաների խնդրին և թե՛ «վիպայնություն» հղացքով ուրվագրում ժամանցման, ժամանականության պայմանական մակարդակը լիակատար վկայված է, եթե արդիականացնում է հին դյուցազնավեպերի արագ, շարժուն, փոփոխուն պատումը, հարակցում դա «դրվագ մը սևեռելու» կարողականությանը (VI, 203-204), գիպաշարային մակարդակը սոսկական արձանագրումից փոխակերպում է կյանքի պատկերագրման պատմումի: Միմիայն այս պարագային են արժեկուլ ստեղծագործության «թեքնիքը, զարգացման չնորհը, ոգեղեն մթնոլորտը, իմացական հարցերու հանդեպ խոր ընկալչությունը» (VII, 292), բրտացնում պատմումի հիմնական զսպանակը՝ ոգին: Այսպիսով՝ ժամանի օշականյան պարագրկումներում վեպը փոխաձևվում է վիպայնության, պատումը, պատմասանությունը՝ պատմումի, ինչ իր վերջին «կյանքին պես» վեպի տիրույթներում ստեղծանում է հեքիաթի նորագոյացման տեսությունը. «Այս վեպին հեղինակը ձեզ այսպես կանխապատրաստելե վերջ ձեզի կը ձգե գայն, իբրև ազատություն, ներկա գիրքեն ու հաջորդներեն – որոնց թիվը հստակ չէ անշուշտ, բայց կը տանջե վաղածանոթ կաղապարներու, չափերու ձեր վարժությունները «ձեր ուզած մասերը որակելու հեքիաթ». Սակայն փույթն ունի նույն ատեն ձեզի թելադրելու ուրիշ ալ կարևոր իրողություն մը. – թե ինչ որ պիտի գտնաք այս շարքին մեջ, «կյանքն է» ավելի քան իրավ»<sup>48</sup>: Նման ընթացականությունը ունի վեպի ժամանցման երևույթը օշականյան համակարգում:

Ինչպես իր տարողությամբ բացառիկ ինքնադատականը (Համապատկերի ժամանակը), այնպես էլ հսկայական ժառանգության մեջ միջգրութենական ամբողջություն կազմող վեպի ժամանակասությունը ազդակված էր «բարդ ոճաբան», «դժվար կարդացվող» հեղինակ լինելու հանդամանքով և, ո՞վ գիտե, հավանաբար հիսուն տարի հետո միայն հասկացվելու մարգարենությունն ու պայծառատեսությունն է առթել վեպի տեսաիրացումը, որն այսօր Հայաստան և ի սկյուռս լրջագույն ուսումնասիրության և քննության կիզակետ է, հարակա արդիական: Վեպն իբրև «ճերմակ թղթի փորձություն», «ամեն հնարավորություն ներկայացնող սրբազն ձեռնարկ» (X, 146) տեսաբանող և ստեղծանող Հակոբ Օշականին գնահատելիս, արևորելիս այսօր էլ ժամանակակից է Վազգեն Շուշանյանի դիտումը. «Օշական սորվեցուցած է նաև մեզի, մենք, որ վարպետ չենք ճանչնար, կատաղությամբ ու առանց ընկրկումի կռվիլ հանուն գե-

47 Սահմակ Պարգևան, Էջ 92:

48 Կյանքին պես, Էջ 2:

ղեցիկին, տապալելու սուտ աստվածները ու հայհոյել կավատներուն: *Օշական* մեր անմիջական երեցն է: Ան է որ պետք է առջևեն քայլե: Գլուխը բարձր՝ մեծ հաղթանակին համար: Ուսերը բեռնավոր՝ բանաստեղծության անփոխարինելի հարստությամբ: Կեցցե *Օշական»:*

Այսօր, կես դար նրա ֆիզիկական մեկնումից հետո, նա կրկին հայ գրականության ուղեցույց երեցն է, այդպես է լինելու հարյուր տարի հետո, միշտ:

## ԹԵՐԹՈՆ ՎԵՊԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ

Ներածության փոխարեն

Ա լսումնասիրությունը նվիրված է հայոց «ժամանցային վիպագրության» տեսությանը: Ցարդ ժանրի այս արտահայտության տեսությունն ու պոետիկան մեր գրականագիտությունը չի ուսումնասիրել: Վեպի պատմության ամենատարբեր խնդիրներին, այս կամ այն վիպասանին նվիրված մենագրություններում և հողվածներում քննարկվել են թերթոն վեպի ինքնությանը, կազմաբանությանը վերաբերվող ինչ-ինչ հարցեր, խնդիրներ, սակայն առաջին անգամ է, որ փորձ է կատարվում թերթոն վեպն ուսումնասիրել ամբողջությամբ, հետազոտել «ժամանցային վիպագրությունն» իր գրականությաման ամենակարևոր պատմական ժամանակաշրջանում, վեր հանել ստեղծագործական-ստեղծաբանական, գեղարվեստական-գեղագիտական օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Թերթոն վեպի տեսությունը նաև առարկայական հնարավորություն է ընձեռում լրացնել գրականության ամենաազատ ձևի, ինչպես վեպն են բնութագրում բազմաթիվ գրողներ ու տեսաբաններ, ժանրային պատկերի քննությունը:

Երվանդ Օտյանի վիպագրությունն այս ուսումնասիրության առանցքն է, քանի որ ժանրի պատմական համապատկերում գրողի ստեղծագործությամբ թերթոն վեպը բյուրեղացավ, ունեցավ հանգրվանային արժեքներ: Էական է այս առումով այն օրինաչափությունը, որ նկատում ենք Օտյանի վիպագրության արժեարժումների և մեկնաբանությունների մեջ: Ե՛վ Հեղինակի ժամանակակիցներն իրենց հուշերում, դիմանկարներում, հողվածներում, և՝ քննադատությունն ու գրականագիտությունը միաբերան արձանագրում են գրողի բացառիկ ժողովականությունը, «ամենին շատ կարգացուած հեղինակ»<sup>1</sup> լինելը, իր վիպագրությամբ բոլորին՝ և՝ «թղթով կշտացողներին», և՝ «անոնց, որ գիրերուն ետին բան կը փնտուին»<sup>2</sup> բավարարելը, և նույն համերաշխությամբ արձանագրում, թե Օտյանը «խանգարել է ինքն իրեն՝ ընկնելով գեղին լրագրության և գորշ վիպագրության մեջ»<sup>3</sup>, թե նրա տաղանդը «վաստակելու համար ստիպված» սպառվել է լրագրության մեջ, իսկ «լրագիրը խոշոր մտքի ուտիծն է»<sup>4</sup>:

Ընդհանրացնելով օտյանագիտության գնահատականները՝ կարող ենք արձանագրել, որ դրանք ենթատեքստում ակնբախորեն «արդարացման հնչե-

1 Տե՛ս Արշակ Ալպոյանեամ, «Անհետացող դեմքեր. Երուանդ Օտյան», «Արև», Կամիրե, 1926, հոկտեմբեր 6:

2 Տե՛ս Յակոբ Սիրումի, «Գիծեր Երուանդ Օտյանի կեաճքէն», «Հայրենիք», Բոստոն, 1927, յունիս, № 8, էջ 45:

3 Վահան Թոռովկենց, «Երվանդ Օտյան», Երկեր Երեք գրքով, Երևան, «Նախրի» հրատ., գիրք 3-րդ, էջ 479:

4 Տե՛ս Ալեքսանդր Շիրվանզադե, «Օտար վալորերում», Երկերի ժողովածու տաս հատորով, Երևան, Հայպետհրատ, 1961 թ., հատոր 9-րդ, էջ 205:

ըանգ» ունեն: Կարծում ենք, Շիրվանզադեն իր հուշերում երվանդ Օտյանի հետ ունեցած շատ կարևոր երկխոսություն է մեջբերում. «— Ո՞ր աշխատանքն է ձեզ համար ավելի գուրեկան՝ տա՞ն, թե՞ խմբագրատան», — հարցնում է Շիրվանզադեն: Օտյանը պատասխանում է. «— Լրագրական աշխատանքը ես համարում եմ ներկարարություն, տան աշխատանքը՝ նկարչություն: Հարկավ, նկարեն ավելի հաճելի է, քան ներկելը, բայց և բյուր անդամ դժվար»<sup>5</sup>: Այս երկխոսության մեջ Օտյանն ակնհայտորեն ակնարկում է իր ստեղծագործական կերպի գիտակցված ընտրության մասին, որը պայմանավորված էր արվեստագետի խառնվածքով: Հետևաբար, անկախ պատճառաբանությունների, «արդարացման հնչերանգը» պարագայական է, քանի որ արժելորում-մեկնաբանություններում ենթակայորեն անտեսվում է գրողի անհատականության հրամայականը: Մյուս կողմից՝ հեղինակի թերթոն վեպերը հետազոտական անդրադարձի են ենթարկվում այլ հարթության մեջ, ինչը թելադրում է արժելորման և մեկնաբանման՝ թերթոնագրությանը («ժամանցային վիպագրությանը») անհարիր չափորոշիչներ: Արդյունքում թե՛ Օտյանի վեպի ջատագովականները և թե՛ այսպես կոչված «բացասող» գնահատականները մեծավ մասամբ ենթակայական կարծրատիպերի արտահայտություններ են:

Այնինչ Օտյանի վեպը պիտի հետազոտել իր տարերքում՝ «ժամանցային վիպագրության», ասել է թե՝ թերթոն վեպի դաշտում: Մեր խորին համոզմամբ՝ միմիայն այդ դաշտում է հնարավոր ըստ ամենայնի ուսումնասիրել գրողի՝ վեպի ժանրով ստեղծված ժառանգությունը:

Այսպիսով, նկատի ունենալով այն իրողությունը, որ թե՛ ծավալով, թե՛ ընդգրկումով, թե՛ արժեքով օտյանական թերթոն վեպը մեր գրականության պատմության մեջ «ժամանցային վիպագրության» բյուրեղացումն ու հանգրվանն է, մենագրության առանցքը դարձրել ենք Օտյանի համապատասխան ստեղծագործությունները և նրանց խորքին ուսումնասիրել թերթոն վեպի կազմաբանության, ինքնության, ձևաբանության, բնագրաստեղծ ընթացքի, գեղագիտության հիմնախնդիրները:

Հստ կարելվույն ուսումնասիրվել է նաև ծիծաղի խնդիրը Օտյանի թերթոն վեպի գեղարվեստական համակարգում:

## ԹԵՐԹՈՆ ՎԵՊԻ ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

### Ա.

Հայոց դասական վիպագրության պատմական համապատկերում ամենակենսունակ դրսևորումներից մեկը թերթոն (թերթոնային) վեպն է, որը «ժամանցային (Փորմուլյար) գրականության» ժանրային տիրապետող արտահայտությունն է եղել ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության մեջ:

Անհրաժեշտ ենք համարում անմիջապես նշել, որ հակված ենք թերթոն, թերթոնային հոմանիշ եղբերից կիրարկել թերթոնը, քանի որ թերթոնայինը կարող է

5 Ալ. Շիրվանզադե, «Երվանդ Օտյանը», Երկերի ժողովածու տաս հատորով, Երևան, Հայպետհրատ, 1961 թ., հատոր 8-րդ, էջ 526:

թյուրիմացությունների տեղիք տալ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բազմաթիվ վեպեր ունեցել են թերթոնային (լրագրային, հանդեսային) հրատարակություններ, սակայն ինքնությամբ թերթոն վեպեր չեն:

Հայոց թերթոն վեպի խտացումն ու հանգրվանն անշուշտ երփանդ Օտյանի ստեղծագործությունն է: Նրա շուրջ կես դար ընդգրկող գրական, խմբագրական, հրապարակախոսական, թարգմանական ժառանգությունն ու գործունեությունն ահա արդեն մոտ մեկ հարյուրամյակ հայոց գրականության պատմագրության ընթերցման և մեկնաբանության առարկա է: Հազիվ թե գտնենք մեկ ուրիշ հեղինակ, որի ժառանգությունը լինի ընթերցողական և տեսականքնադատական ծայրաբեռնային դրսեւումների մշտամնա ուշադրության կենտրոնում, բավարարի գեղագիտական տարբեր, հաճախ միմյանցից արմատականորեն հեռու ընկալումներին և ըմբռնումներին, գրական տարբեր ճաշակ ունեցող ընթերցողական շրջանակներին: Այս իրողությունն անշուշտ պայմանավորված է Օտյանի ժառանգության ծավալով, մեր գրականության պատմական համապատկերում բացառիկ բեղունությամբ. գրականության անդաստանում «...ամենին շատ մելան սպառած մարդերէն մէկը»<sup>6</sup> լինելով: Սակայն ժառանգության վիթխարի ծավալն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է գրականության պատմության մեջ բացառիկ գերակատարություն և նշանակություն ունենալու համար: Զամաշխարհային և հայ գրականությունների մեջ ծավալով վիթխարի ժառանգություն ստեղծած բազմաթիվ գրողներ կան, որոնք զետեղելի են այս բացառիկ վերագիրի չափորոշչների և ըմբռնումների մեջ (Եթեն Սյուր, Ալեքսանդր Դյումա, Զեյզ, Շելդրոն, Սմբատ Բյուրատ, Արմեն Շիտանյան, Միսաք Գոչունյան), սակայն նրանց գնահատության, մեկնաբանության պարագային քչերի համար կարող ենք հավելել օշականյան դիտարկման շարունակությունը, որը Օտյանի առիթով է գրվել. «Մէկը նոյն ատեն այն բացառիկ գրական խառնուածքներէն, որոնք քանի մը սերունդի հետ կարենալ ըլլալու ճկունութիւնը մեղքի չեն վերածեր...»<sup>7</sup>: Տվյալ գեղքում ճկունության հանգամանքի շեշտագրումը ոչ միայն բացառիկության փաստարկումներից է, այլև Օտյանի հսկայածավալ գրական ժառանգությունից այն մասնաբաժնի վերհանումը, ինչն առարկայական հնարավորություն է ընձեռում գրողին առանձնացնելու «մելան սպառածների» փաղանգից: Անշուշտ դա գրողի վիպագրությունն է:

Հարկ է անմիջապես արձանագրել, որ երվանդ Օտյանի գրական ժառանգության, գեղարվեստական համակարգի համապատկերում վիպագրությունը կիրարկվում է գործառական երկու շրջարկներով, ուստի անհրաժեշտ է նախ անդրադառնալ և բացատրել դրանք: Նեղ առումով վիպագրություն հասկացությունն այստեղ գործածում ենք Օտյանի թե՛ վեպերը, թե՛ ժանրային անցումային ձևերը (օրինակ՝ այսպես կոչված վիպակները) նկատի ունենալով, իսկ լայն առումով գործածում ենք՝ նկատի ունենալով ընդհանրապես արձակ հորինման այն շերտերը, որոնք իրենց կազմաբանական և բովանդակային որակներով և արտահայտություններով ընթերվում են վեպի ժանրի ձևաբանությա-

6 Տես Յակոբ Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականութեան», հատոր VIII, Անթիլիաս, 1980, էջ 359:

7 Նույն տեղում:

**նը:** Այս պարագային նկատի ունենք Օտյանի հուշագրությունը, (համեմատե՛ «Տասներկու տարի Պոլսեն գուրս»-ը), նորավեպերի, ակնարկների, պատկերների, ֆելիետոնների, դիմանկարների, նամակների այն կազմաբանական շերտերը, որոնք մի կողմից ուղղակիորեն օտյանական վեպի մետաբնագրի բաղկացուցիչ տարրերից են, մյուս կողմից՝ ինչպես վիպագրության ծագումնաբանական, այնպես էլ միջգրութենական դաշտերի պայմանագորողները:

Ուսումնասարկությունը հարկ ենք համարում սկսել առաջին հայացքից ժամանակավեպ թվացող հարցումից. քանի՞ վեպ է գրել Երվանդ Օտյանը: Հարցումն իրապես կարող է ժամանակավեպ թվալ, քանի որ, ինչպես արդեն արձանագրեցինք, գրողի ստեղծագործությանը հայոց գրականագիտությունը բազմիցս անդրադարձել է: Բավական է նշել, որ միայն 1990-ական թվականներին լույս են տեսել գրողի կյանքին ու ժառանգությանը նվիրված երկու մենագրություն, հոդվածների, հուշերի և դիմանկարների մեկ ժողովածու, օտյանապաշտ բարերարի միջոցներով լույս են տեսել հեղինակի երկու վեպ, նամականի, ակնարկների և ֆելիետոնների ժողովածու<sup>8</sup>: Այսինքն՝ ականատեսն ենք մեր գրական-մշակութային կյանքում նմանօրինակը չունեցող «օտյանական բումի»: Եվ թվում էր, թե օտյանագիտության համար այս ակնհայտ խնդրական հարցումը, իբրև գրողի վիպագրության քննության սկիզբը, «բումի» օրերին իր պատասխանը պիտի ստանար գոնե լույս տեսած վեպերին կըցված առաջաբան-ներում կամ երկու խոսքերում: Սակայն օտյանագիտությունը հարցումը կրկին առկախ է թողել: Իհարկե, հաշվի ենք առնում այն բնույթով ուրույն և եզակի հանդամանքը, որ հայոց դասական գրականության ամենահանրահաճ, կարդացված հեղինակներից մեկի ժառանգությունը տակավին մեկտեղված չէ ոչ միայն հրատարակության առումով, այլև ցարդ ըստ էության հայտնի չէ, կամ չգիտենք Երվանդ Օտյանի բոլոր ստեղծագործությունների թիվը, հրատարակության տեղը, պահպանված թե կորսված լինելը: Ի դեպ, դա չգիտեին ո՛չ հեղինակը, ո՛չ նրա գործն առաջինն ուսումնասիրող ժամանակակիցներն ու գործներները: Դրա պերճախոս վկայությունն է Հակոբ Սիրունու «Գիծեր երրուանդ Օտեանի կեանքն» գրությունը, որը գրողի կենսագրության և ժառանգության թերևս միակ ճշգրիտ վագերագիրն է, քանի որ նույն Սիրունու հորդորով Օտյանը պատմել, իսկ ինքն էլ նոթագրել է նրա կյանքի ընթացքի հիմնական հանդրվանները, և միակ անգամ նաև հեղինակի ձեռամբ կազմվել է ժառանգության մատենագիտությունը: Անգամ ինքն Օտյանը վերապահ է այդ մատենագիտությունը լիակատար համարել: Այդ վերապահությունը բազում պատճառներ ունի. վիթխարի ծավալ՝ հետևաբար բոլորը հիշելու համարյա ան-

8 Նկատի ունենք Սարիբեկ Մանուկյանի և Սամվել Մուրադյանի աշխատությունները (Վ. Մանուկյան, «Երվանդ Օտյան. կյանքը, հրապարակախոսությունը, գեղարվեատական վաստակը», Երևան, «Գիտություն» հրատ., 1997 թ., Վ. Մուրադյան «Երվանդ Օտյան. կյանքը և գործը», Երևան, «Հայագիտակ», 1996 թ.), «Երվանդ Օտյանի հիշատակին» (Երևան, «Արեգ» հրատ., 1994 թ.,) հոդվածների, հուշերի նամակների ժողովածուն, «Մեր երեսփոխանները. մեր ազգային ժողովը» (աշխատասիրութեամբ Գէորգ Տէր-Վարդանեանի), Երևան, «Մագաղաթ» հրատ., 1999 թ., «Վերնատումնեա», Երևան, ԳԱՄԹ հրատ., 1999 թ., դիմանկարների, ակնարկների և ֆելիետունների ժողովածուները, «Հայ տիաբորան», Երևան, ԳԱՄԹ հրատ., 1999 թ., «Խամացարների ակնարկների ժողովածուները» Երևան, ԳԱՄԹ հրատ., հտ. Ա, 2000 թ., հտ. Բ, 2001 թ., հտ. Գ, 2001 թ., վեպերը:

Հնարինություն, գործերը չգրանցելու, նույնիսկ մեկ օրինակ մոտը չպահելու, մատենագիտություն չկազմելու սովորություն, նժդեհական կյանք, Աղետ, տարագրությունների անընդհատականություն և հասկանալի պատճառներով եղած օրինակի կամ օրինակների կորուստ, մամուլի այս կամ այն համարի, թվերի տարբեր պատճառներով անդառնալի կորուստներ, ցիրուցան եղած և տարբեր տեղերում միայն մեկ օրինակով պահպանված ու ըստ այդմ անմատչելի գործեր և այլն: Ահա, ցավի սիրտ, առարկայական պատճառներ, որոնք Օտյանի ժառանգության ուսումնասիրությունների համապատկերում միշտ արձանագրվում են: Այս կամ այն ժանրին անդրադառնալիս, որպես կանոն, միշտ կարելի մատենագիտական ցանկ է ներկայացվում՝ նկատի ունենալով ամբողջականը կազմելու առարկայական գժվարությունները, եթե չասենք անհնարինությունը:

Նույնն է վեպի պարագան: Համեմատելով Օտյանի վեպերի մատենագիտական ցանկն ըստ Միրունու<sup>9</sup>, Օշականի, Անուշավան Մակարյանի, Սարիբեկ Մանուկյանի և Սամվել Մուրադյանի ուսումնասիրությունների՝ անհամապատասխանություններ ենք նկատում, որոնք կարելի է դասակարգման հնֆարկել:

Անհամապատասխանություններ, որոնք պայմանավորված են այն հանգամանքով, որ առանց որևէ մեկնաբանության, պատճառաբանության, վեպի ժանրային սահմանները «ելևէջումների» են ենթարկվել: Հետևաբար, սրանից մեկնելով, ժանրով ստեղծված գործերի քանակը տատանվում է: Այս պարագային գործել է հետազոտողի՝ որևէ երկի ժանրային պատկանելության ենթակայական գիրքորշումը: Ասենք հետազոտողներից մեկի գրքում մի ստեղծագործություն վեպի ցանկում է, մեկ ուրիշն այդ նույն գործը վիպակների կամ փոքր արձակ երկերի կամ էլ գիմանկարների ցանկում է գետեղում:

Անհամապատասխանություններ, որոնք պայմանավորված են զուտ փաստական անտեսումներով, միալներով, բացթողումներով: Համապատասխան տեղերում այս անհամապատասխանություններին դեռ կանդրադառնանք: Այստեղ պարզապես մի քանի օրինակներ բերենք Օտյանի վեպերի մատենագիտական ցանկերի անհամապատասխանություններն ավելի շոշափելի ներկայացնելու համար: Սարիբեկ Մանուկյանը «Հայ տիսաբորան» վեպի իր «Երուանդ Օտեանի կարապի երգը» վերտառությամբ առաջաբանում, թվարկելով 1918-1926 թվականներին գրված վեպերը, գրում է «...մամուլում տպագրեց քառահատոր «Թիվ 17 խաֆիեն»... «Հնկեր Բ. Փանջունի տարագրության մեջ»...»<sup>10</sup>: Ստացվում է, որ «Թիվ 17 խաֆիեն» կառուցվածքով բաղկացած է չորս հատորից, նախ՝ լույս է տեսել գրքով, ապա՝ տպագրվել մամուլում: Այնինչ վեպն իրերև թերթոն լույս է տեսել նախ մամուլում, իսկ հատորների տրոհությունը կատարել են հրատարակիչները՝ ելնելով տպագրական նպատակահարմարությունից<sup>11</sup>, և ինքնին հասկանալի է, որ ըստ հատորների տրոհությունը պարագայական է: Մյուս գեպքում՝ գրողի վեպերի թիվն հավելվել է մեկով, այնինչ

9 Անշուշտ Սիրունու պարագային պետք է միշտ նկատի ունենանք, որ նա ընդամենը Օտյանի «խոսափողն» է՝ նոթագրել է գրողի ասածները, կամ ներկայացրել գրողի կողմից կազմված ցամկը:

10 Տե՛ս Երուանդ Օտեան, «Հայ տիսաբորան», 1999, Էջ 6:

11 Ի դեպ, այս նույն վեպի երևանյան հրատարակությունը, կրկին ելնելով գուտ տպագրական-հրատարակչական նպատակահարմարությունից, լույս է ընծայվել երեք հատորով:

«Հնկեր Բ. Փանջունի տարագրության մեջ»-ը Օտյանի հանրահայտ ստեղծագործության կառուցվածքային մի միավորն է: Սամվել Մուրագյանը գրողին նվիրված մենագրության մեջ «Միքել սիրարկածը» մտցնում է 1919-1922 թվականներին գրված վեպերի ցանկում<sup>12</sup>, այնինչ ստեղծագործությունն առաջին անգամ լույս է տեսել 1906-ին:

Օտյանի կենսագրությունից հայտնի է, որ 1922-ին, Պոլսից հեռանալով (այս անգամ՝ ընդմիշտ), Օտյանը երկու տարի անցկացնում է Բուխարեստում, գրեթե ողջ ժամանակը Հակոբ Սիրունու հետ լինելով: Ահա դրա արդյունքն են Սիրունու նոթագրումները, որոնք վերաբերվում են գրողի կյանքին, խմբագրական գործունեությանը, գործածած կեղծանուններին, սիրած հեղինակներին, այլ, չափազանց հետաքրքիր խնդիրների: Սիրունին օգնում է երկերի մատենագիտության պատրաստմանը, որի համար «Բաւական օրեր պէտք եղան, որպէսզի միասին կազմենք իր երկերուն ցանկը»<sup>13</sup>: Հարկ է ուշագրություն դարձնել Սիրունու այս նախադասությանը: Ինքնին հասկանալի է, որ ցանկը կազմելիս լուրջ դժվարության պիտի հանդիպեին նախընթաց քառասուն տարվա բեղմնավոր ստեղծագործական աշխատանքը հիշելու, մեկտեղելու, աղբյուրները ճշգրտելու (վերևում արդեն մատնանշած պատճառներով), սակայն ուշագրավն այն է, որ հեղինակի հետ համատեղ կազմված ցուցակում ոչ միայն անճշտություններ կան, այլև այն ամբողջական չէ: Անշուշտ տվյալ պարագային նկատի ունենք ցանկի ստեղծման ժամանակը: Պարզ է, որ ցանկում չէր կարող լինել «Հայ տիասբորան»: Ինչեցից, Օտյանը և Սիրունին ցանկում ընդգրկել են ընդհանուր առմամբ երեսունհինգ ստեղծագործություն՝ բաժանված վեպերի և վիպակների<sup>14</sup>: Արդեն այդ բաժանումը խիստ պարագայական է, ինչի մասին վերևում խոսեցինք ժամը որոշարկման անհամապատասխանություններն արձանագրելիս: Այդուհանդերձ, եթե այս երեսունհինգ անունից հանենք անխառն փոքր արձակ ստեղծագործությունները, «Ազգային երեսփոխանները» դիմանկարները, նույն գործի երկակի հաշվումները, ինչպես, օրինակ, «Սիրունորդ տեր պապան», որը ցանկում իբրև առանձին միավոր տեղ է գտել նաև «Գործ եփող մը» վերնագրով, թողնենք այսպես կոչված անցումային ձեռքը, ունենում ենք քսանհինգ անուն: Սրան գումարենք «Հայ տիասբորան»՝ ընդամենը քսանվեց անուն: Երվանդ Օտյանի վեպերի հաջորդ մատենագիտական ցանկը գտնում ենք Հակոբ Օշականի «Համապատկերում», որը նույնպես թերի է, թեև այստեղ հանդիպում ենք ներժանրային դասակարգման առաջին փորձին, ինչը նույնպես անկատար է և ճշգրտման կարիք ունի: Այսպես, եթե Օտյան-Սիրունի ցուցակի պես միացնենք վեպերն ու անցումային ձեռքը, զանց առնենք տարբեր վերնագրերով, սակայն նույն ստեղծագործությունն առանձին միավոր համարելը, ինչպես «Սիրունորդ տեր պապան» («Գործ եփող մը»), «Դատաստանական խորհրդի առջելը» («Տոքթոր Վարդան»), նույն ստեղծագործության մասերն առանձին վեպեր համարելը, ինչպես «Հնկեր Բ. Փանջունին», Օ-

12 Տե՛ս Սամվել Մուրադյան, «Երվանդ Օտյան...», էջ 64:

13 Յ. Ռ. Սիրունի, «Գիծեր Երուանդ Օտեանի կեանքն», «Հայունիք», Բոստոն, 1927, № 8, էջ 48:

14 Տե՛ս նույն տեղում, էջ 49-50:

շականի մատենագիտական ցանկը ներփակում է քսանչորս անուն<sup>15</sup>: Թերի է և ճշգրտման կարիք ունի Օտյանի վեպերի օշականյան ներժանրային, ձևաբանական դասակարգումը: Նախ՝ տարբերակում է թերթոն վեպերը որպես գրողի ժանրով ստեղծված գործերի մի առանձին խումբ, այնինչ Օտյանի բոլոր վեպերն էլ այդպիսին են, ապա երգիծավեպերի մեջ զետեղում միայն «Ընկեր Փանջունին»՝ արոհած առանձին ստեղծագործությունների՝ «Ծապլվար», «Ընկեր Փանջունի Վասպուրականի մեջ» մասերը<sup>16</sup>: Արձանագրենք, որ Օտյան-Սիրունու, Օշականի ցուցակներին հար և նման են Մակարյանի, Մուրադյանի, մասսամբ Մանուկյանի (մասսամբ, որովհետև օտյանագիտության մեջ Մանուկյանի բերած ցանկը համեմատաբար ամբողջականն է) կողմից կազմածները: Ասենք, որ նրանք իրենց մենագրություններում հատուկ մատենագիտական ցանկեր չեն կազմել, սակայն տարբեր առիթներով ժանրով հեղինակած գործերի թվարկումների ժամանակ չեն խուսափել փաստական և ժանրային բնութագրման նույն անճշտություններից, ինչ Օտյանը, Սիրունին և Օշականը: Արդ, մեկնելով նախորդների կազմած ցանկերից, փորձենք ներկայացնել Օտյանի վեպի ամբողջական մատենագիտական ցանկը, ըստ այդմ պատասխանելով այն հարցումին, թե այս ժանրով, ի վերջո, քանի՞ ստեղծագործություն է հեղինակել գրողը:

Երվանդ Օտյանը խնդրու առարկա ժանրով, ներառյալ անցումային ձևերը, գրել է քսանինը ստեղծագործություն: Արձանագրենք, որ «անցումային ձևերի» տակ մեկտեղված են այն ստեղծագործությունները, տարածված եզրով այն վիպակները, որոնք իրենց ձևաբանական-բովանդակային հատկանիշների հարացույցով ավելի մոտ են վեպին, քան փոքր արձակին, հետևաբար ուսումնասիրվում են գրողի վիպագրության շրջարկում: Այդօրինակ ստեղծագործություններն Օտյանի համապատասխան ժառանգության մեջ յոթն են: Վարում բերվող ցանկում այդպիսի ստեղծագործությունների դիմաց նշում ենք՝ «անցումային ձև»: Որոշ վեպերի առաջին տպագրության տարեթիվն ենք միայն նշում:

### Երվանդ Օտյանի վեպերի ցանկ

1. 1895 թ. Գործ եփող մը, Յովնը 1920 թ. Միջնորդ տէր պապան
2. 1900-1901 թ. Գործի մարդիկն
3. 1901 թ. Պրոպագանդիստը
4. 1905 թ. Ազգային բարերարը, անցումային ձև
5. 1906 թ. Միքէի սիրակածը, Յովնը 1920 թ.
6. 1910 թ. Շողուարիաթ և լճակ. անցումային ձև
7. 1910 թ. Ըստանիք, պատիւ, բարոյական
8. 1911 թ. Ապտիւ Համիտ և Շերլոք Հոլմս
9. 1912 թ. Սալիհա հանրմ կամ բանակը բոնաւորին դէմ
10. 1912 թ. Պատերազմ և... խաղաղութիւն
11. 1913 թ. Ես դրսեցի չեմ առներ
12. 1913 թ. Ընկեր Բ. Փանջունի

15 Տե՛ս Յակոբ Օշական, «Համապատկեր...», հու. VIII, Անթիլիաս, 1979 թ., էջ 376, 369-370:  
16 Նույն տեղում, էջ 369:

13. 1914 թ. Վաճառականի մը նամակները
14. 1915 թ. Թաղականին կգիշը, նույնը 1921 թ.
15. 1919 թ. Նոր հարուստներ
16. 1919 թ. Թիր 17 խափիէն
17. 1920 թ. Վրէժը, անցումալին ձև
18. 1920 թ. Լուս Շարթեան. խորհը և խորհողը, անցումալին ձև
19. 1920 թ. Շեպընթաց նորածինը, անցումալին ձև
20. 1920 թ. Չաքըր Ավրամ, անցումալին ձև
21. 1920 թ. Կանաչ հովանոցով կիմը
22. 1921 թ. Դատաստանական խորհրդի առջև, նույնը 1925 թ. Տոքթոր Վարդան
23. 1921 թ. Կաւե ներուսմեր կամ մեր ազգայինները
24. 1921 թ. Տաբիթա կամ նոր աղջիկներ
25. 1922 թ. Մարգարտէ մանեակ
26. 1922 թ. Մատնիչը
27. Վարպետ Պողիկարպու, անցումալին ձև (այս և հաջորդ ատեղծագործության առաջին տպագրության տարեթվերը չկարողացանք պարզել՝ ճշգրիտ տեղեկությունների բացակայության պատճառով)
28. Հայ կուլտուրականները
29. 1924 թ. Հայ տիասբորան:

**Երվանդ Օտյանի վիպագրությանն անդրադառնալիս թե՛ ժամանակակիցները, թե՛ հետագայի հետազոտողները միաբերան առանձնացնում են «վճիտ ոճը», «բառերուն իրական արժէքը», «պատմելու և խօսեցնել տալու ճարտարութիւնը»<sup>17</sup>: Այս հատկանիշները Օտյանի վիպագրության ժողովրդականությունը պայմանավորող թերևս ամենաէական պատճառներն են, սակայն անմիջապես նկատենք նաև, որ գրանք թերթոն վեպի կազմաբանության հիմքն են: Այն հանդամանքը, որ արևմտահայ թերթոն վեպի տիրույթներում ժամանակակիցներն ու հետագա սերունդներն առաջնությունը վերապահում էին Օտյանին, վկայում է, որ գրականության պատմության, գրական գործընթացի մեջ, թերկուզ ենթակայորեն, թերթոն վեպի բյուրեղացումն ու բարձրակետը համանունացվում էր գրողի ստեղծագործությամբ: Ինչո՞ւ: Տվյալ պարագային ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն իրողության վրա, որ ունենալով թերթոն վեպի հարուստ մշակույթ, պատկառելի քանակություն ընթերցողական և մեկնաբանական մակարդակներում՝ կար և կա այն հրամայականը (իմպերատիվը), որ Օտյանի թերթոն վեպը ժանրի այդ գրսելորման բարձրակետն է, բյուրեղացումը: Ընդսմին այդ իմպերատիվը գրականության պատմության մեջ հաճախ արձանագրվել է իբրև անքննելի, ինքնին տրվածք, և վիպասանի ցանկացած ստեղծագործություն անմիջապես՝ տպագրման պահից, զընթացս ընկալվել ու ըմբռնվել է իբրև այդպիսին: Ե՞րբ Օտյանը հասավ սրան: Հասկանալի է, որ ընթերցողական և մեկնաբանական մակարդակներում գործի հանդեպ այսօրինակ «կարծրատիպ» ստեղծելը թիկունքին որոշակի վաստակ պիտի ունենա: Օտյանի վեպը սակայն իր համար բրտացրեց այդ իմպերատիվը միանդամից,**

17 Տե՛ս «Արև», Կահիրե, 1926, Ապրիլի 20: Բաշալյանի այս բնութագրումները բնորոշ են ինչպես գրողի ժամանակակիցներին, այնպես էլ հետագայում Օտյանին բնութագրած բոլոր գրողներին, գրադաստներին, գրասերներին:

թեև, ինչպես վարը կտեսնենք, նրա ստեղծագործական կյանքում առկա է վիպահեղումի երկու շրջան: Ընդ որում այդ շրջանները չեն ներփակում նրա անցած գրական-ստեղծագործական կյանքի ողջ ժամանակագրությունը: Բանն այն է, որ գրողն այս առումով անցել է «գաղտնի», «ինկուբացիոն» նախապատրաստական շրջան: Մինչ առաջին թերթոն վեպի երեան գալը Օտյանը ընթերցողական և քննադատական շրջանակներում հայտնի էր իր պատկերներով, ակնարկներով, նորավեպերով, պատմական հանրամատչելի փորձագրություններով, ֆրանսիական զանգվածային թերթոն վեպերի թարգմանություններով, դիմանկարային ուրվագրումներով: Հավելենք նաև արդեն այդ ժամանակ որոշ ստեղծագործություններում դրսեւորվող ծիծաղի զանազան միջոցների կիրարկումները, պատմելու՝ բնությունից օժտված չնորհը, տարբեր ընթերցողների «ջիղը բռնելու» կարողությունը, մարդկանց զբաղեցնելու, մի պահ իրենց հոգսը մոռանալ տալու հմտությունը՝ պատկերը գրեթե կամբողջանա: Նույն 1880-ականների վերջերին և 1890-ականների սկզբներին արևմտահայ պարբերականները առկեցուն էին ինքնուրույն և թարգմանական թերթոն վեպերով, հետաքրքրաշարժ և հանրամատչելի պատմական փորձագրություններով, նորավեպերով, պատկերներով, դիմանկարներով, զավեշտական բազմաբնույթ ու բազմատեսակ գրություններով, որոնք եթե զուգահեռենք ու համեմատենք Օտյանի ստեղծումի հետ, ապա ո՞չ որպակով, ո՞չ քանակով չէին զիջում, իսկ երբեմն գերազանցում էին: Սակայն մեկ տարբերություն ենք նկատում: Տարբերություն, որը Օտյանին ջրբաժանում է մյուսներից: Բանն այն է, որ միայն Օտյանն էր պատմելու չնորհը, զբաղեցնելու ճկունությունը, ընթերցողական ամբողջ դաշտին բավարարելու պայմանները համալիր և ելնելով պահանջից՝ ճշգրիտ չափաբաժիններով ապահովում իր երկերով, որոնք նրան միշտ հաջողեցնում էին «բռնելու ընթերցողի ջիղը»: Սա անշուշտ չի նշանակում, որ դրանք շրջանի գրական ընթացքի համար «Էտալոնային» էին: Բոլորովին: Օրինակ, նրա պատումի կերպը, դիմանկարումի սկզբունքները, իր հետ գրական ուղի անցած որոշ գրողների հետ համեմատած, անկատար են, անմիջապես նկատելի են դարձնում իրենց վիթարները, սակայն միշտ այն չափաբաժնով են, որն էլ նրան առանձնացնում է իրեւ անզուգական պատմողի, զբաղեցնողի: Աչա թե ինչու 1895-ին, երբ լույս տեսավ գրողի առաջին թերթոն վեպը, գրական-գեղարվեստական դաշտին նախապատրաստած Օտյանն անմիջապես դիտվեց, ընկալվեց իրեւ ժանրի այս դրսեւորման բարձրակետն ապահովող հեղինակ:

Երվանդ Օտյանի կենսագրությունից հայտնի է, որ նա ունեցել է վիպահեղումի երկու փուլ, որոնց ընթացքում ստեղծել է իր վեպերի բացարձակ մեծամասնությունը: Դրանք են՝ 1909-1914 և 1918-1924 թվականները: Օտյանագիտությունն այս իրողությունը բազմիցս արձանագրել է, սակայն նախորդ հետագոտողներից որևէ մեկի մոտ չենք հանդիպում այն հարցումի պատասխանը, թե ինչո՞ւ և ինչո՞վ էին պայմանավորված այդ փուլերը: Փորձենք դրանց պատասխանել: Երկու փուլերն էլ մեր ժողովրդի պատմական ճակատագրում հանրահայտ պատճառներով բախտորոշ շրջաններ էին: 1909-1914 թվականները համիլյան աղետն ու մղձավանջը հաջորդող ժամանակաշրջանն էին՝ քաղաքական, հոգևոր-մշակութային, ազգային կյանքի նորոգության, մեր գոյության,

պատմության ողբերգական-դրամատիկ, տրագիկոմիկական հաղթանակների ու նահանջների գերարագ դարձարձումներով։ Մթնոլորտի մեջ թանձրանում էր ազգային գերխնդիրների լուծման տեսլականը, հոգեվարքից ու մահվան, ավերի տեսիլներից ու ներկայությունից հույսի ջահերի լույսը, համատարած վտարանդիությունից հետո հայրենի հրավերի իրականացումը։ Մշակութային դիտանկյունով հաղթահարելու անհրաժեշտությունը կար բռնապետության ձախավերությունների՝ համիդյան ոեժիմի սաղական դժոխքի կենսոլորտն իր արյան հաճախանքով, վարչական մեքենայի փծունությամբ, անբարո բարքերով, մատնության, կաշառակերության երևակայության բոլոր սահմաններն անցնող քառոսվ։ Մշակույթը պիտի անդրադառնար այդ դարաշրջանի աղետին, մարդկային ճակատագրերի ողբերգությանը, անհատի բարյական ընտրությանը, հեղափոխությամբ պայմանավորված անոմալիաներին, երբ հերոսը հակահերոս է դառնում, երբ իդեալիստ երազողը կորսվում է արագ հարմարվողների բազմության մեջ, երբ երեկվա գաղափարականը դառնում է պատեհապաշտ, հեղափոխականը՝ հակահեղափոխական, լրտեսը՝ ազգային գործիչ, մատնիչը՝ հավատաքննիչ։ Մի խոսքով՝ մակաբույժների վիթխարի պատկերահանդես։ Դեռ երեկ տասներկու տարի վտարանդիության մեջ անցկացրած Օտյանը, տարիների ողիսականի փորձառությանը հավելելով գրողական վարպետությունը, բնականաբար վիպահեղումի շրջան պետք է ապրեր։ Դրա հսկայական պահանջարկ կար, ընդ որում այդ պահանջարկը բավականին մեծ շառավիղ ուներ։ Ո՞վ պիտի միաժամանակ իրեն տար տակավին երեկ եղած ու դեռևս այսօր շարունակվող իրականութան վեպը, որը միաժամանակ պիտի լիներ վեպ-քրոնիկ, քաղաքական վեպ, գետեկտիվ, արկածային վեպ, բարքերի վեպ, ոստիկանավեպ, մարտավեպ, վեպ-սարսափ, երգիծավեպ, մելոդրամ-վեպ, թրիլեր։ Մ. Պարսամյանի «Ապայուղ Համիտ և Շերլոք Հոլմս» վեպի առիթով գրված գրախոսությունը կարծես հանրագումարի է բերում Օտյանի վիպահեղման առաջին փուլը. «Այս վէպը որ իբրև թերթօն հրատարակուել սկսած օրէն իսկ անօրինակ յաջողութիւն մը գտած է և թարգմանուած է թուրքերէնի, Փրանսերէնի և յունարէնի, կը պատկերացնէ Համիդեան բռնակալութեան վերջին շրջանի դէպքերը, վիպային ամենահետաքրքրական դրուագներով ու միանգամայն պատմական ձգութեամբ։

Ծանօթ տաղանդաւոր հեղինակը, որուն բոլոր գործերն ալ միշտ մեծ ընդունելութեան արժանացած են, իր այս արկածալից մեծ վէպովը առաջնակարգ տեղ մը կը գրավէ մեր գրչի վարպետներուն քով»<sup>18</sup>. Պարսամյանը իր խոսքում կարևորում է նաև օտար, հատկապես թուրք ընթերցողների կողմից, ստեղծագործության աննախընթաց ընդունելությունը<sup>19</sup>. Սա նույնպես ինքնին հասկանալի էր։ «Ապայուղ Համիտը...», «Ալիհա հանըմը...» թուրքիայի բոլոր հպատակների թերթունը պիտի դառնար՝ պայմանավորված թեմայով և բովանդակությամբ։

Վիպահեղումի երկրորդ փուլը (1918-1924 թվականներ) նույնպես համընկնում է մեր ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջանին։ Մեծ եղեռն և Առաջին աշխարհամարտ, մնացորդաց սերնդի, Սփյուռքի առկայություն։ Եվ Օ-

18 Տե՛ս «Ծանօթ», Կ. Պոլիս, 1912, № 19:

19 Նույն տեղում։

տյանի կողմից այս իրադարձությունների օպերատիվ մշակութային անդրադարձ, վիպում: Դեր-Զորից հրաշքով վըրկված գրողը Աղետը պիտի հաղթահարեր միմիայն ստեղծագործական վերածնունդով: Իսկ նրա վեպերը պահպանել էին իրենց ծայրահեղ պահանջարկը: Եղեռնն անցած ժողովրդի համար թերթունները հիանալի relax էին: Դրանք յուրովսանն աջակցում էին 1918-1922 թվականներին Պոլսի գրական-մշակութային կյանքի վերստեղծմանը, իսկ քեմալականների Պոլսի մուտք գործելուց հետո՝ 1922-1924-ին, սփյուռքյան մշակութային-գրական կյանքի գոյացմանը: Այս առումով ուշագրավ են Գառնիկ Ստեփանյանի հուշերը Օտյանի մասին: Գաղթական դարձած, որբ մնացած պատանին պատմում է, թե ինչպես օտար ափերում ապաստանած բոլոր հայերի պես իր նմաններն Օտյանի թերթոն վեպերը ձեռքից ձեռք էին փոխանցում՝ անհամբեր սպասելով այս կամ այն ստեղծագործության շարունակությանը, նոր վեպերի. «Նրա վիպագրական գործունեության ամենաբեղուն շրջանը եղել է 1918-1923 թվականները, երբ ուղիղ հինգ տարի, բայց հարյուրավոր երգիծական քրոնիկներից, Պոլսի «Վերջին լուր» թերթի 4-րդ էջի թերթոնի բաժինը նա էր զբաղեցրել, այնտեղ տպագրելով բազմահատոր և ստվարածավալ մի շարք վեպերո... Իմ Կահիրենում եղած ժամանակ խոսվում էր նաև նրա մի այլ մեծ վեպի մասին՝ «Սիրանույշի արկածները արտասահմանի մեջ», չեմ հիշում գրել էր, թե լոկ ծրագիր էր»<sup>20</sup>:

Ահա այս վիպահեղումի երկու փուլերում Օտյանը ստեղծեց իր թերթոն վեպերի ջախջախիչ մեծամասնությունը: Էական է դիտել, որ Օտյանի ստեղծագործությունը ոչ միայն թերթոն վեպի հանգրվանային արտահայտությունն է մեր նոր գրականության պատմության մեջ, այլև, վիպասանի շնորհիվ, առհասարակ վեպի ժամանում հարստացավ մի շարք ներժանրային ձևերով, ինչպիսիք են վեպ-երկնոսությունը, քաղաքական վեպը, վեպ-քրոնիկը, վավերագրական վեպը, մարտավեպը, դետեկտիվ-ոստիկանական վեպը:

Արդ համառոտ ուրվագրով հետևենք վեպերի ստեղծման պատմությանը: 1895-ին Կ. Պոլսի «Հայրենիք» օրաթերթում, որտեղ Օտյանը սկսել է իր գրական գործունեությունը, լույս է տեսնում գրականության պատմության մեջ ավելի գործածական վերնագրով<sup>21</sup> «Միջնորդ տեր պապան» վեպի առաջին տարբերակը՝ «Գործ եփող մը» թերթոնը: 1920-ին վեպը որոշ վերափոխություններով (հավելել է «Երգիծական վեպ» խորագիրը, ընդարձակել երկրորդ մասը, հանել գլուխների վերնագրերը)<sup>22</sup> և «Միջնորդ տեր պապան» վերնագրով վերահատարակել է: Առաջին տարագրության ժամանակ (1896-1912) 1900-ին Փարիզում, Առշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսում, սկսում է տպագրել

20 Գառնիկ Ստեփանյան «Հուշեր Երվանդ Օտյանի մասին» («Երվանդ Օտյանի հիշատակին», էջ 139): ԻԱՀ վերաբերվում է «Սիրանույշի արկածները արտասահմանի մեջ» վեպին, ապա հայտնի է, որ Եգիպտոսում հայ գրել է իր վերջին՝ «Հայ տիհաբորան» վեպը, որին զուգահեռ և որից հետո «Արկի» համար թերթոն վեպեր է թարգմանել: Հավանաբար Ստեփանյանի հիշատակածն այդպես էլ մնացել է իրեն չիրականացված ծրագիր:

21 Տես «Հայրենիք», 1895, թիվ 1179-1256:

22 Այս մասին տե՛ս Անուշավան Մակարյանի՝ գրողի հինգիատորյակի համապատասխան ծանոթագրությունները:

«Գործի մարդիկ» վեպը, ինչը, սակայն, Զոպանյանի հետ ունեցած տարածայնության պատճառով (Զոպանյանը, Հնչյակյանների նոր թեին միացած, արշավանք էր սկսել Արփիար Արփիարյանի գեմ, ինչը Օտյանի հետ բախման պատճառ է դառնում) ընդհատվում է և այդպես էլ կիսատ մնում: 1901-ին Օտյանը տպագրում է «Պրոպագանդիստը» վեպը, 1905-ին «Ազգային բարերարը»<sup>23</sup>, որը վերահրատարակել է 1914-ին: 1906-ին «Ազատ խոսքում» լույս է տեսնում «Միքել սիրարկածը», որը հեղինակն այնուհետև երեք անգամ վերահրատարակում է (1909-ին՝ «Խարազանում», 1913-ին՝ «Շուշանում», 1920-ին՝ առանձին գրքով): 1910-ին լույս են տեսնում «Ճողուարիսթ և Ընկ.», «Ընտանիք, պատիվ, բարոյական» վեպերը: Տակավին 1909-ին «Բյուզանդիոնում» լույս էր տեսել «Փանջունիի» «Առաքելություն ի Շապլվարի» մի քանի նամակները, 1911-ին, 1914-ին և 1923-ին լույս տեսան ստեղծագործության մյուս մասերը: 1911-ին «Արևելք» օրաթերթում սկսում է լույս տեսնել «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմսը», իսկ 1912-ին «Բյուզանդիոնում»՝ «Սալիհա Հանըմ կամ բանակը բռնավորին գեմը»: Նույն թվականին «Շանթում» առաջին անգամ տպագրվում է «Պատերազմ և... խաղաղությունը»: 1913-ին լույս է տեսնում «Ես գրսեցի չեմ առներ» վեպը, 1914-ին՝ «Վաճառականի մը նամակները»: 1915-ին լույս է տեսնում «Թաղականին կնիկը», որը կրճատ տարբերակով վերահրատարակվում է 1921-ին: «Վերջին լուր» օրաթերթում 1919-ի մարտի 24-ից սկսվում է լույս տեսնել «Նոր հարուստները», որի տպագրությունն ավարտվում է նույն տարվա հոկտեմբերի 4-ին: Նույն օրաթերթում 1919-1920 թվականներին տպագրվում է «Թիվ 17 խաֆիեն», միաժամանակ 1920-ին առաջին անգամ լույս են տեսնում «Վրեժը», «Լևոն Շաթրյան. խմողն ու խորհուրդը», «Ճեպընթաց նորածինը», «Զաքըր Ավրամ» ստեղծագործությունները: 1920-1921 թվականներին «Վերջին լուր»-ում լույս է տեսնում «Կանաչ հովանոցով կինը»: 1921-ին հրատարակում է «Դատաստանական խորհրդի առջև» վեպը, որը 1925-ին վերահրատարակվում է «Տոքթոր Վարդան» վերնագրով: 1921-1922-ին կրկին «Վերջին լուր» օրաթերթում տպագրում է «Կավե հերոսներ կամ Մեր Ազգային ճինները», որին հաջորդում են «Տարիթա կամ նոր աղջիկները», «Վարպետ Պողիկարպոսը»: «Ժամանակում» 1922-ին տպագրում է «Մարգարտե մանյակը», նույն թվականին առանձին գրքով «Մատնիչը», 1924-ին «Շավիղում» տպագրվում է «Հայ կուլտուրականները» և վերջապես՝ 1924-1925-ին «Արևում», վերջին վեպը՝ «Հայ տիասրորան»:

Երվանդ Օտյանի գրականությունը թե՛ ժամանակակիցների, թե՛ հետագա սերունդների կողմէց միշտ էլ ուշագրության կենտրոնում է եղել: Նրա կյանքի ու գրական ժառանգության մասին գրվել են հարյուրավոր հոդվածներ ու գրախոսություններ, դիմանակարներ և հուշեր, լույս են տեսել մենագրություններ: Սիրունի և Օշական, Թողթովենց և Շիրվանզադե, Միքայել Կյուրծյան ու Լևոն Բաշալյան, Արշակ Զոպանյան և Վահան Թեքեյան, Շահան Շահնուր և Սիմոն Սիմոնյան, Արսեն Տերտերյան, Մինաս Թյոլոլյան, Անուշավան Մակարյան, Սարիբեկ Մանուկյան, Լևոն Հախվերդյան, Սամվել Մուրադյան՝ ահա օտյանագետ-

23 Տե՛ս «Ծիրակ», Ալեքսանդրիա, 1905, №№ 1-4:

ների ոչ լրիվ ցանկը: Բնականաբար, գրողի կյանքի և գործի ամենատարբեր անդրադարձումներում վերլուծվել ու մեկնաբանվել են նրա վիպագրության բազմաթիվ խնդիրներ: Օտյանագիտությունը հիմնականում քննել ու արժեուրել է այս ժանրով ստեղծված երկերը, փորձել է որոշակի դասակարգման ենթարկել դրանք, մատնանշել հիմնական առանձնահատկությունները, հայոց վեպի շրջարկում նրանց գերը, տեղը: Հստ էության կատարվել է ստեղծագործությունների մեծ մասի նախնական ընթերցումը՝ վեպերի ստեղծման պատմություն, դիպաշարերի վերաշարադրում, քննադատական կարծիքների ակնարկ, երկերի կազմաբանության, ստեղծագործությունների գեղարվեստական համակարգերի վերլուծություններ և այլն: Այս պարագային, անշուշտ, երևան են եկել հետազոտական որոշ կարծրատիպեր, որոնք փոխանցվել են հոդվածից հոդված, ուսումնասիրությունից ուսումնասիրություն, մենագրությունից մենագրություն՝ ժանրի քննաբանությանն առթելով վերանայման և վերընթերցման ենթակա բազմաթիվ խնդիրներ:

Զնայած գրողի ժառանգության ուսումնասիրությունների, հետազոտությունների մեծաքանակությանը՝ օտյանագիտությունը աչքի է ընկնում գրողի ժառանգության քննության պարագործսալ անհամամասնությամբ: Ինչո՞ւ պարագործսալ անհամամասնությամբ: Բանն այն է, որ Օտյանի վիպագրությունը նրա վաստակի ծավալային ամենամեծ դրսելորումն է, ինչը, ի դեպ, փաստում են բոլոր օտյանագետները, սակայն մենագրություններում, ուսումնասիրություններում, գրողի գեղարվեստական համակարգին, պոետիկային նվիրված զանազան հետազոտություններում վեպի քընությունն անհամեմատ փոքր տեղ է գրավում, քան փոքր արձակի, դիմանկարների, խմբագրական գործունեության, երգիծանքի քննությունը: Հետազոտական անհամամասնությունը բազմաթիվ կարծրատիպեր է պայմանագորել: Օրինակ՝ գրեթե լուսանցքային են մնացել գրողի ստվարածավալ վեպերը («Նոր հարուստներ», «Կանաչ հովանոցով կինը», «Կավե հերոսներ»), խիստ հպանցիկ են անդրադարձվել որոշ գործեր («Ապայուղ Համիտ...», «Սալիհա Հանըմ...», «Դատաստանական խորհրդի առջ»): Եթե ընդհանրացնենք, ապա պետք է նշենք, որ հետազոտողները որպես կանոն կենտրոնացել ու մանրամասնել են «Միջնորդ տեր պապան», «Ընտանիք պատիվ, բարոյականը» և «Ընկեր Փանջունին»:

Գրողի վիպագրության անդրադարձումներում նկատում ենք նաև փաստական որոշ անձշտություններ<sup>24</sup>: Հաճախ հանդիպում ենք Օտյանի և մյուս դասականների անհարկի հակադրություն-համեմատություններ՝ Օտյանին գնահատելու, նրա վիպագրությունն արժեորելու համար: Այս շարքի կարծրատիպերում ամենացցունը Պարոնյան-Օտյան տարածված զուգահեռն է, դրան մրցակցության հանգամանք հաղորդելը, ջանքը Օտյանին Պարոնյանին համարժեք երգիծաբան համարելը կամ Պարոնյանից վերադասելը: Որ Օտյանի ոչ միայն ծիծաղի համակարգը, այլև վիպման շատ կարեոր էատարեր ուղղակիութեն ավանդվել են Պարոնյանի ստեղծագործական փորձից, իսկ որոշ դեպքե-

24 Սամվել Մուրադյանն օրինակ իր ուսումնասիրության մեջ գրում է, թե Օտյանը «Կանաչ հովանոցով կինը» վերնագրով վեպ չի գրել (տե՛ս Ս. Մուրադյան, «Երվանդ Օտյան...», էջ 235):

ըում՝ ընդլայնվել ու բյուրեղացել, գրականության պատմության համար վավերական իրողություն է, սակայն նույնական զուգահեռի մեջ դնելն ու ըստ այդմ այս հեղինակներին անդրադառնալիս «մրցակցության ֆոն» ստեղծելն իրապես պարզունակ մոտեցում է: Պարոնյանն ու Օտյանը իրենց գեղարվեստական համակարգերով տարբեր, ծայրաբեռային դրսերումներ են: Օտյանի երգիծական ստեղծագործությունների առկայությունը չի ընձեռում և չի կարող ընձեռել ստեղծաբանական, գեղարվեստական համակարգերի այնպիսի նույնականություն, որ առիթ տա այնպիսի զուգահեռման, ինչը գտնում ենք օտյանագիտության մեջ: Երգիծական պոետիկական միջոցների, ծիծաղի կաղապարների կիրարկումը չի նշանակում նույնականություն: Այո՛, կան տիպաբանական ընդհանրություններ, գործառական, կազմաբանական միջոցների համընկնումներ (ինչը բնական է՝ պայմանավորված ծիծաղի փիլիսոփայական-իմացաբանական, գեղագիտական բնույթով), սակայն դրանք բոլորովին այլ հարթության վրա են գտնվում<sup>25</sup>: Կուաչե՞լ էր օտյանագիտությունն այս իրողությունը: Անպայման: Նկատի ունենք Հակոբ Օշականին: Սակայն Օշականը նույնպես երևոյթը ծայրահեղացրել էր՝ այս անգամ «Պարոնյանի դատը պաշտպանելով» և արդյունքում չխուսափել այդ անհարկի զուգահեռ-հակադրականությունից: «Համապատկեր արևմտահայ գրականութեան» Պարոնյանին նվիրված բաժնում<sup>26</sup> հանդիպում ենք Օտյանի առիթով միակողմանի, անարդարացի բնութագրումների (հատկապես գրողի նկարագրին վերաբերող), որոնք ստվերում են Օտյանի և Պարոնյանի նույնական չլինելու մեթոդաբանական ելակետը: Արդյունքում խնդիրը կրկին կաղապարագորվում է Օտյան-Պարոնյան մակերեսային զուգահեռում: Ճիշտ է, նկատի պետք է ունենանք նաև այն հանգամանքը, որ Օտյանին նվիրված «Համապատկերի» բաժնում<sup>27</sup> Օշականը վերանայում է Պարոնյանի առիթով Օտյանի հասցեին ասված անհավասարակշիռ, անարդարացի որակումները (կրկնենք՝ նկարագրին վերաբերվող). «Զուգակշիռ մը չըրի, դասական եղանակով, վասնզի կը խորհիմ, թէ բնական չէ գիրքերու օրէնքները փոխագրել կենդանի իրականութիւններու ծոցը, ու գտնել կարծել բաներ, որոնք խնդրական են առնուազն»<sup>28</sup>: Սա հրաշալի: Ի վերջո, «Համապատկերի» բնույթն այնպիսին է, որ արևմտահայ գրականության այս յուրօրինակ վեպում կարգաբերվում են հեղինակի կողմից հարուցված բազմաթիվ խնդրական իրողություններ: Սակայն Օշականի կողմից սրված, երբեմն ճակատումի հասցրած Պարոնյան-Օտյան զուգահեռի խնդրականությունը փոխանցվեց հետագա հետազոտողներին, որոնք Օշականի «Պարոնյանի ջատագովականին» հակադրեցին «Օտյանի ջատագովականը»: Այս պարագային գործում էր և՝ կուսակցական կոնյունկտուրայով պայմանավորված «հերքումների» շարքը (օրինակ, դաշնակցական Մինաս Թյոլոլյանը Օտյանին անդրադառնալիս), և՝ քաղաքա-

25 Խնդրի քննությունը տե՛ս սույն մենագրության «Ծիծաղը Օտյանի թերթոն վեպի համակարգում» բաժնում:

26 Տե՛ս Յակոբ Օշական, «Համապատկեր...», հատոր IV, Երուսաղեմ, 1956 թ., էջ 15-36, հատկապես՝ 31-33-րդ էջերը:

27 Տե՛ս Յ. Օշական, «Համապատկեր...», հատ. VIII, էջ 359-449:

28 Նույն տեղում, էջ 449:

կան կոնյունկտուրայով պայմանավորված գրական երկի մեկնաբանության դարձարձումները, որոնք գրականության հետ որևէ կապ չունեին (օրինակ, բազմաչարչար Փանջունիի կուսակցական պատկանելության որոնումները հայոց քաղաքական դաշտում) և թե՛ հետազոտական կոնյունկտուրան, երբ հետազոտողներն իրենց հեղինակի հանդեպ տածած բուռն սերն արտահայտում էին զուգահեռի մեկ կողմի ստորակայմամբ: Այսպես, Ս. Մուրադյանը բանավիճում է Օշականի հետ վերջինիս այն պնդման առիթով, որ Օտյան-վիպասանի ներուժում բալզակյան տարերքը չի ընդլայնվել, փոխարենը ծավալվել է դյումայական վիպագրման կերպն ու կազմաբանությունը: Այո՛, Օշականի այդ գիտարկումը խիստ ենթակայական ու պարագայական է ինքնին, քանի որ որևէ վիպասանի ստեղծաբանական կերպը կախված չէ մեկ այլ գրողի ցանկությունից, ստեղծաբանական գերակայություններից՝ անկախ արժեքայնության: Սակայն չպետք է մոռանալ Օշականի «իրավ վիպագրության» ստեղծագործական-գեղարվեստական չափորոշիչները, որոնք օպողիցիայի մեջ էին այսպես կոչված դյումայական վիպագրության ավանդույթի և իրացման հետ: Կարծում ենք, որ դյումայական տարերքի մատնանշումը չի նշանակում վիպագրության խնդրո առարկա որակի խոտանում: Հետեւելով գրականագետի մըտքին՝ պարզվում է, որ վիպագրության դյումայական տարերքը բացասական, նահանջային, ստորակայելի իրողություն է, և Օտյանը Բալզակի հանգույն չի վիպել, որովհետև չուներ վերջինիս «...Հզոր հայրենիքն ու կենսական պայմանները, նրա միջավայրը, նյութականից, քաղաքական պարտադրանքներից անկախ և ազատ ստեղծագործելու հնարավորությունները», չուներ «դժբախտ հայ գրող լինելու մարտիրոսությունը, ա՛յն հավիտենական ցավը, այն տափնապալի մտահոգությունները, որ կեղեքել են հայ գրողներին բոլոր դարերում՝ Խորենացուց սկսած մինչև Հրանտ Մաթելոյան»<sup>29</sup>: Ուրեմն ստացվում է, որ դյումայական վիպման կերպը պայմանավորված է պատմական մարտիրոսությամբ և ազատ ստեղծագործելու հնարավորությունների բացակայությամբ: Արձանագրենք, որ հայ ոչ մի դասական գրող չի տառապել ստեղծագործական ազատության բռնադատման բարդույթով, որքան էլ այդ ազատության արտաքին, արտաստեղծագործական և արտագրական կաշկանդումները եղել են: Հետո Դյուման պատմական մարտիրոսացման կրող չէր և Բալզակի պես ու Բալզակի չափ ազատ ստեղծագործող էր: Սակայն սա կարծես կուահում է գրականագետը ու շարունակում: «Բալզա՞կն է կրել Օտյանի տարագրության շրջանի տառապանքներն ու զըրկանքները, աչքով տեսել իր ժողովրդի բնաջնջման ծրագրի գործադրումը, չորս տարի տևած ստույգ մահվան սպառնալիքը, թե՞ Դյուման կամ եվրոպական ու համաշխարհային մեծ գրողներից որևէ մեկը»<sup>30</sup>: Այսուհետև զարդացնում է այն տեսակետը, թե Օտյանը դյումայական վեպեր էր գրում իր ժողովրդի տառապանքները, իր մահվան ստույգ սպառնալիքը տեսնելով, հակառակ պարագային բալզակյան վեպեր կգրեր. «Հայությանը պարտադրված անբնական կյանքի թելադրանքով էր Օտյանը բալզակյան բարձրունքներից իջել

29 Ս. Մուրադյան, «Երվանդ Օտյան...», էջ 216:

30 Նույն տեղում:

Դյումայի՝ Հ. Օշականի համար անընդունելի մակարդակին և գրում էր նախ և առաջ հայ ընթերցողի համար, որովհետև ամենից առաջ նա՛ էր իր գրողական ասելիքի հասցեատերը»<sup>31</sup>: Հայ ընթերցողը, ինչպես ցանկացած ազգության ընթերցող, անկախ իր պատմական ճակատագրի, ընկալունակ է թե՛ դյումայական, թե՛ բալզակյան վիպման կերպերին և անբնական կյանքի պատճառով չէ դյումայական վեպեր կարդում: Ֆրանսիացիները դյումայական վիպագրությունը նույնպե՞ս անբնական կյանքի պատճառով էին ընթերցում:

Օտյանի վեպի ժամանակին իրացումների տարերգը, բնույթը հենց այսպես կոչված դյումայական վեպն է, այսինքն՝ թերթոն վեպը:

## Բ.

Երվանդ Օտյանի՝ մամուլում տարասփուփած հսկայական քանակությամբ հոդվածների, քրոնիկների, ակնարկների վրա հապանցիկ ակնարկը հետաքրքիր իշողություն է մատնանշում: Նախ՝ անհամեմատ քիչ են քննադատական, մատենախոսական հոդվածները, իսկ այդ սակավ գրություններում՝ է՛լ ավելի քիչ՝ վեպի ժամանակին նվիրված տեսական և քննադատական անդրադարձումները՝ գրախոսության թե անխառն տեսական դատումների, հայացքների, ընկալումների, ըմբռնումների շարադրանքի ձևով: Կարծում ենք, բեղմնավոր գրողի այսօրինակ սակավապետությունը կարելի է բացատրել երկու հանգամանքով: Նախ՝ նախասիրության հարց է: Օտյանը, հատկապես ստեղծագործական կյանքի առաջին շրջանում (նկատի ունենք գրական երախայրիքից մինչև տարագրությունից հետո 1908-ին Կոստանդնավոլիս վերադառնալը) գրել է բազմաթիվ պատմական ուսումնասիրություններ, փորձագրություններ, ինչը, ինչպես ինքն է վկայել, իր սիրելի զբաղումներից էր: Իսկ տարբեր գրախոսություններում և քրոնիկներում վեպի ժամանակին նվիրված անդրադարձներն ավելի շուտ պատահականություն էին: Ապա և՝ 1908-1925 թվականներին ժամանի մասին «մաքուր», «անխառն» դատումների, տեսակետների ժամանակ չէր մնում, քանի որ գրողը պարզապես ֆիզիկապես հնարավորություն չուներ խմբագրական աշխատանքի, ֆելիետոն, դիմանկար ու ակնարկ, մի քանի պարբերականների համար զուգահեռաբար թերթոն վեպեր գրելու, թարգմանություններ կատարելու հետ միասին հանդես գալ տեսական-վերլուծական հիմնավոր ելույթներով:

Հետաքրքիր է դիտարկել մեկ օրինաչափություն: Վեպի ժամանակուղ տարբեր գրություններով (վիպասանի դիմանկար, գրախոսություն, մատենախոսություն) հանդես է եկել 1893-1903 թվականներին, որից հետո նրա ժառանգության մեջ չենք հանդիպում ինդրոպ առարկա բնույթի և ոչ մի նյութի: Իսկ նշված տասնամյակի ընթացքին հաշվեցինք ընդամենը չորս հրապարակում, որոնք հիմնականում (բացի Ծերենցի դիմանկարից)<sup>32</sup> թերթոն վեպերի գրախոսական-մատենախոսականներ են: Դրանք են՝ Մառիան Տատամյանի «Երիտասարդ աղջիկ մը», Բենիամին Եղիազարյանի «Լուծալ սեր» և Արշակ Ալթունյանի «Աղ-

31 Նույն տեղում:

32 Տե՛ս Երուանդ Օտեան, «Յովսեփ Շիշմանեան», «Մասիս», 1893, յունիս 26, № 3997:

քատին պատիվը» թերթոն վեպերի ծանուցող-արժեկորող գրախոսականները, որտեղ վեպի մասին Օտյանի տեսական ըմբռնումները և ընկալումները, հայեցակետերը գրեթե բացակայում են<sup>33</sup>:

Կարծում ենք՝ տեսական դատումների սակավությունը պայմանավորված էր այն իրողությամբ, որ Երվանդ Օտյանը միանգամայն իրավացիորեն այն համոզմանն էր, որ ինքը ստեղծում է թերթոն վեպի այն կառուցյը, ժանրի գրսկորման այն տարբերակները, որոնք, հատկապես թարգմանական, մանավանդ ֆրանսիական վեպի չնորհիվ, վաղուց անտի քաջածանոթ են ընթերցողին և հեղինակի համոզմամբ լրացուցիչ մեկնաբանությունների, սեփական տեսակետների և մոտեցումների լուսաբանության հարկը չեն ստեղծում։ Պակաս կարեւոր չէր գրական շուկայի պահանջարկը։ Ընթերցողական շրջանակները, առանց չափազանցության, Օտյանից ամեն օր նոր վեպ էին պահանջում և ակնկալում, նրանց ուշադրությունը թերթոն վեպի ինտրիկից անդին ոչինչ չէր ուզում կարդալ, ոչնչի մասին մտածել։

Վեպի ժանրի մասին տեսական ընկալումներ և ըմբռնումներ երևան հանող գատումներ և կարծիքներ գտնում ենք Օտյանի վեպերի, հուշագրության, նամակների մեջ։

Այս խորքին ելակետային նշանակություն ունի Հակոբ Սիրունու շնորհիվ մեզ հասած, Օտյանի ժառանգության մեջ իր բնույթով եղակի ինքնադատականը։ Եղակի, քանի որ նրա ժամանակակիցներն ու մտերիմները միաբերան արձանագրում էին, որ գրողը չէր սիրում իր գործերի մասին խոսել։ Այդուհանդեռձ, Սիրունուն Հաջողվում է ստանալ Օտյանի կարծիքներն իր ժառանգության մասին և գրողը «...սրտաբաց եղաւ ու անկեղծ, իր տեսակ մը ինքնադատաստանին մէջ»<sup>34</sup>։ Այդ ինքնադատականում գրողն անդրադառնում է իր ժառանգությանը, գրելու եղանակին, ինքնությանը, նկարագրին, այլ իրողությունների (օրինակ՝ կարծիքներ է Հայտնում որոշ երգիծաբանների մասին)։ Անդրադառնալով վիպագրությանը՝ խոստովանում է. «Վէպերս, — ըսաւ, — րամփիսած (ընդգծումն իմն է — Գր. Հ.) են յաճախ։ Անոնք գրուած են օրը օրին, շատ անգամ տեղ լեցնելու համար։ Անոնք գրուած են որպէսզի կարդացուին ու թերթ քշել տան։ Անոնք, ներողութիւն, իմ փիճերս (ընդգծումը հեղինակինն է) են»<sup>35</sup>։ Փորձենք մեկնաբանել վիպասանի այս գնահատականը, որը, կարծում ենք, կարեւոր է ժանրի ընկալման և ըմբռնման օտյանական մոդելը հասկանալու համար։ Օտյանն իր վեպերը րամփիսած, ասել է թե՝ բառերի լեցունություն, բառերի գերհագեցվածություն համարելով՝ բնութագրում է առհասարակ թերթոն վեպի ինքնությունը։ Թերթոն վեպը բառերի լեցունություն է, որովհետև պիտի ապահովի ընթերցման ժամանցային կերպը և ըստ այդմ պարբերականի հաջողությունը, — ահա թե ինչու են կարդացվելու և թերթ քշել տալու հրամայականները ինքնադատականի մեջ։ Այս հանգամանքի պերճախոս լուսաբանու-

33 Համապատասխանաբար տես «Երիտասարդ աղջիկ մը» («Հայրենիք», 1893, № 616), «Բրոնիկ» («Հայրենիք», 1894, № 720) և «Գրականութեան պատիւլ կամ Արշակ Մ. Ալթունեանի մատը» («Ազատ խօսք», Ալեքսանդրիա, 1903, ապրիլ, տեսոր 10-րդ):

34 «Հայրենիք», 1927, թիվ 9, էջ 37:

35 Նույն տեղում։

թյունն է գրողի «Գրական հիշատակների» հետևյալ վկայությունը. «Հայրենիքի հաջողության մեկ գլխավոր պատճառն էր իր թերթոնները, որոնց ընտրությունն ու թարգմանությունը հանձնված էր Պետրոս Ատրունիի որ միանգամայն թերթին վարչական պաշտոնյան էր:

Զոհարապի մեկ անավարտ մնացած վեպը, «Նարդիկ», Գր. Արծրունիի «Էվելինան», Արշակ Զոպանյանի «Թուղթին փառքը», Լևոն Սեղբոսյանի ազգային կյանքե քաղած մեկ վեպը, որոնք իբրև թերթոն երևացած են «Հայրենիքի» մեջ, այնքան ընդունելություն չեն գտած, որքան Ժյուլ Մառիի և ասոր նման ֆրանսացի վիպասաններու սիրային, տրամադրքական և արկածախնդրական վեպեր:

Պ. Ատրունի զանոնք կը հայացներ, հստակ ու ճկուն աշխարհաբարով մը և այնպիսի արագությամբ մը կը թարգմաներ որ դիտողին զարմանք կը պատճառեր»<sup>36</sup>: Ուրեմն թերթոնի բնույթն է րամփիսաժ-ությունը՝ ճկուն, պարզ լեզվով, ստեղծումի արագությամբ և նաև ներքին զբաղեցնող-պրկող ինտրիգով: Նույն այդ վկայության շարունակության մեջ Օտյանը պատմում է, թե ինչպես մի անգամ, թերթոններից մեկի հերոսների ճակատագրով անհամբեր ընթերցողներից մեկը խմբագրություն է այցելում և ցանկանում իմանալ, թե հերոսն ու հերոսուհին միմյանց հետ ամուսնանալո՞ւ են: Շատ է զարմանում՝ իմանալով, որ Բաշալյանը թերթոն չի ընթերցում, իսկ թարգմանիչ Ատրունին նույնպես չգիտեր, «որովհետև ինքն ալ չէր գիտեր իր թարգմանած թերթոնին ինչպես վերջանալը»<sup>37</sup>: Թերթոն վեպի ինքնությունն է հետևաբար բառերի այնպիսի լեցունությունը, ինչը Հնարավորություն է ընձեռում ապահովել օրվա համար նախատեսված ընթերցողական ինտրիգը, ըստ այդմ հաճախ իրենք վիպագիրներն էլ ժանրի այս կերպին ձեռնամուխ լինելիս, երկի ավարտը չգիտեին, ոչ միայն այն պատճառով, որ գրում էին օրը օրին թերթոնին վերապահված պարբերականի ծավալի սահմաններում, այլև՝ թերթոն վեպն ինքը կարծես «տանում էր» ավարտին, հանգուցալուծմանը և երկը գրել-ավարտելն ու հետո հրատարակելը բոլորովին պարտադիր չէր: Սակայն րամփիսաժը դյուրին բան չէր, ենթադրում էր ոչ միայն հստակ լեզու, այլև պատմելու, ընդ որում համապատասխան ձևով պատմելու կարողություն: Օտյանը «Տասներկու տարի Պոլսեն գուրս»-ում հիշում է Գրիգոր Սարաֆյանի «Լրաբերը», որին «...ակնաբույժները...նյութապես կօժանդակեին, որովհետև շատ կը նպաստեր տեսողության խանգարման»<sup>38</sup>: Ինչն, ի դեպ, ոչ միայն տպագրական վատ որակի, այլ նաև ընթերցողի րամփիսաժով չգոհացման պատճառով չէր:

Օտյանն իր վեպերը այդ նույն վկայության մեջ անվանում է փիճերս: Այստեղ, անշուշտ, նկատի ունի այն հանգամանքը, որ դրանք անխնամ, անփույթ,

36 Տե՛ս Ե. Օտյան, «Երկերի ժողովածու չորս հատորով», հատոր IV, Երևան, Հայպետհրատ, 1962 թ., էջ 35:

37 Նույն տեղում, էջ 36: Տեսնել նաև ընթերցողական արձագանքները՝ կապված Միքայել Կյուրմանի «Մարտիկ աղայի» հետ, որոնք Օտյանը պատմում է «Տասներկու տարի Պոլսեն գուրս»-ում: Այստեղ ևս գործում է ընթերցողական հակագրեցության նույն մեխանիզմը (նույն տեղում, էջ 133-135):

38 Նույն տեղում, էջ 372:

Երբեք հեղինակային խմբագրական միջամտությունների չարժանացած ստեղծագործություններ են, այսպես կոչված արվեստագետի «Փոլկլորը»։ Այս բնութագրականը նույնպես ժամրի ընկալման և ըմբռնման ընդհանրացնող շերտ է պարունակում։ Բանն այն է, որ իր կազմաբանությամբ, բնույթով թերթոն վեպը «փիճ» է՝ համեմատած դասական վեպի կազմաբանության և բնույթի հետ։ Թերթոն վեպն իր գոյագորմամբ ու ստեղծաբանական շրջարկով պատահական, անփույթ, «ինքնագլուխ», «վայրենի ու նախնական» երեսույթ է։ Այս «ընկեցիկային» գոյակերպությունը պայմանավորում է գրականության մեջ թերթոն վեպի ինքնահաստատման ծայրահեղ համառությունը, հրապարակում գտնվելու համար որևէ միջոցից չխորշելու կարողականությունը, զանգվածին հարմարվելու կարողություն ունենալու տարերքը։ Այս մասին դեռ մանրամասն կխոսենք, այժմ սոսկ նշենք այն հանգամանքը, որ Օտյանն իր ինքնադատականում ըստ ամենայնի որակել է ոչ միայն իր, այլև ընդհանրապես թերթոն վեպի կերպի, բնույթի հիմնական պայմանավորող հատկանիշներից մեկը<sup>39</sup>։

Երվանդ Օտյանի վիպագրության շրջարկում ներառված այն անցումային ձևերը, որոնք իրենց կազմաբանությամբ, բնույթով հար և նման են հեղինակի թերթոն վեպերին, և հարացուցային բազմաթիվ հատկանիշներով նույնական են, բնութագրվում են վերում արձանագրված հատկանիշներով։ Նկատի ունենք այսպես կոչված վիպակները։ «Այսպես կոչված» ենք անվանում, քանի որ իմաստային-ձևաբանական հատկանիշների հարացուցով վիպակն առանձին ժանր չէ։ Իսկ վիպակ եղը փոքր վեպ եղը հոմանիշն է։ Օտյանն իրավացիորեն ինքնադատականի մեջ ժանրային տարրերակում չի դնում «Ազգային բարերարը», «Ճողուարիսթ և ընկ.», «Վրեժը», «Լեռն Շաթրյան...», «Ճեպընթաց նորածինը», «Զաքըր Ավրամ», «Վարպետ Պողիկարպոս» և ծավալով մեծ թերթոն վեպերի միջև։ Սրա վկայությունը գտնում ենք գրողի և Միրունու համատեղ կազմած վեպերի մատենացանկում։ Ասել է թե՝ գրողի ընկալումներում և ըմբռնումներում սրանք ժանրային նույնական իրողություններ են։ Արդարե, թվարկված ստեղծագործությունները գտնվում են կազմաբանական-ձևաբանական հատկանիշների միենույն տիրույթներում։ Դրանք գրված են թերթն «առաջ քշելու», «Րամիլիսամի» միենույն սկզբունքներով։ Իրենց կարգավիճակով նույն միավորներն են, ինչ, օրինակ, «Ես գուրսեցի չեմ առները» կամ «Նոր հարուստները...»։ Նրանք օտյանական թերթոն վեպի գերբնագրի մասն են կազմում և մյուս ստեղծագործությունների հետ լիարժեք և առարկայական հնարավորություն ընձեռում օտյանական թերթոն վեպի ունիվերսալ մոդելը ուսումնասիրելու։

Երվանդ Օտյանի թերթոն վեպի ուսումնասիրության համաձիրում կարծում ենք առաջնային են մի քանի ինդրական իրողությունների վերհանումն ու մեկ-

39 Պատահական չէ, որ Արփիար Արփիարյանին գրած նամակներից մեկում խորք ավարտում է այսպես։ «Հակառակ շանքիս, չափազանց լուրջ եղաւ այս նամակս, կը ներես հարկաւ, մարդ երեմն, մանաւանդ առանձնութեան մէշ, այսպէս մելամաղձոտ վայրկեաններ կդումնալ և պէտք կը զգա իր սիրոց բանալու մտերիմի մը առաջ, աւա՞ն, կեանքը վեպ մը չէ» (Երուանդ Օտյան, «Նամակներ», Երևան, ԳԱԱթ հրատ., 1999 թ., էջ 71)։ Նկատի ունի այն իրողությունը, որ թերթոն վեպերի հանգույն գրած իր շատ նամակներից սա տարբերվում է, քանի որ այս անգամ վեպ չի գրում։

նաբանությունը, որոնք գրողի՝ այս ժանրով հեղինակած ստեղծագործությունների քննության ժամանակ ելակետային են:

Բոլոր իմաստներով հարուստ և խայտաբղետ վիպագրության բնույթը (և՝ քանակով, և՝ որակական հատկանիշներով՝ վեպի բազմաթիվ տարբերակների առկայություն հայոց վիպագրության դաշտում, թերթոն վեպի բյուրեղացում, այսպես կոչված երգիծավեպերի հոսք և մեր գրական ընթացքի համար դա նորմայի վերածելու իրողություն և այլն), կազմաբանությունն ամբողջությամբ ուսումնասիրելու, ընդհանրական պատկերն առկայացնելու համար հարկ է սկսել Օտյանի գեղարվեստական համակարգում ժանրի ունիվերսալ մոդելի վերհանումից: Ինչը ենթադրում է անդրադառնալ ինչպես օտյանական վիպագրության գոյագորման ընթացքում ծագումնաբանական կողերին և հիմքերին, այնպես էլ թերթոնի կազմաբանական, կառուցվածքային հիմնական չափորոշիչներին, ունիվերսալ մոդելի հիմնական բաղկացուցիչներին և տարրերին, ծիծաղի վիպաստեղծ շրջարկի արարողական միջոցներին և միավորներին:

Պետք է միշտ նկատի ունենանք այն հանգամանքը, որ թերթոն վեպն այս ժանրի թերևս միակ այն դրսեղորումն է, որն ունի կայուն և անփոփոխ կազմաբանական, իմաստային, ձևաբանական հատկանիշներ: Թերթոն վեպի շրջարկում գործում են նույնական կաղապարներ ու կառուցյաներ: Ասել է թե՝ թերթոն վեպն է առարկայաբար մոտենում վեպի ժանրի ունիվերսալ մոդելին: Չպետք է մոռանալ, որ վեպի ժանրն ամենաղեկար դասակարգման ենթարկվող, պատմական համապատերում անընդհատ փոփոխվող, «ինքնակառուցվող», գրողի կողմից «դժվար կառավարվող», իսկ երեմն «անկառավարելի» ժանրն է: Իսկ ժանրային ունիվերսալ մոդելին կամ առավելագույն կառուցյան հասնելը յուրաքանչյուր վիպագրի ստեղծաբանական հիմնական նպատակն է եղել և է պիկարոյական վիպագրությունից սկսյալ մինչև մերօրյա պոստմոդեռնիստական և «ժանրի սահմանները քայլայող», «ընույթով և կառուցյով ուղարկված» ստեղծագործությունները: Միանգամայն ճիշտ է ֆրանսիացի վիպագրի և տեսաբան Ալբեր Թիբոտեն, երբ գրում է, թե «իւրաքանչիւր վէպ կը պահանջէ նուազագոյն կառոյց մը, և սակայն ոչ մէկ վէպի մէջ կարելի չէ եղած իրագործել կառոյցի առաւելագոյնը»<sup>40</sup>: Սակայն իրավացի չէ, երբ արձանագրում է կառուցյի առավելագույն արտահայտության անհնարինությունը: Այդպիսին համաշխարհային վիպագրության մեջ թերթոն վեպն է ներժանրային բոլոր կաղապարներով (դետեկտիվ, արկածային վեպեր, մելոդրամատիկ սիրավեպեր, էրոտիկ վեպեր, թրիլերներ): Մի խոսքով՝ թերթոն վեպն իր ներժանրային բոլոր դրսեղորումներով, որոնք զետեղում ենք «ժամանցային գրականություն» անվան տակ: Եվ իրապես, «ժամանցային» կամ այսօրվա եզրաբանությամբ «զանգվածային» գրականությունը, վիպագրությունը և՛ գրաբանական դաշտը, և թե՝ ընթերցողական դաշտը ապահովում է վեպի որոշարկված ունիվերսալ մոդելով, ինչն մշակութաբան, գեղարվեստական ձևերի տեսաբան կավելտիին հնարավորություն է ընձեռում, քննելով ժամանակակից «զանգվածային» վի-

40 Մեջբերումն ըստ Նուապար Զարխուտյանի «Վէպին սահմանները» հոդվածի: Տե՛ս «Բագին», Պէտքական 1964, № 5, էջ 47:

պագրությունը, եզրակացնել, թե անկախ արվեստի որոշ գաղափարախոսների մշակույթի, գրականության ստանդարտացման ցածր գնահատականից, ստանդարտացումը, այսինքն՝ ունիվերսալ մոդելը «...կարելի համարել ողջ գրականության էությունը», քանի որ կառույցի ստանդարտացված կաղապարները «գրողին և ընթերցողին ընդհանուր գետին (ասել է թե՝ հիմք – Գր. Հ.) են տալիս: Առանց ստանդարտացման որոշակի չափաքանակի գեղարվեստական հաղորդակցությունը անհնարին կլիներ: Սակայն բոլորի կողմից հաստատագրված, ընդունված կառուցվածքները (նկատի ունի կառույցները, մոդելները – Գր. Հ) հատկապես կարևոր են ֆորմուլյար գրականության ստեղծման համար, դրանք համապատասխանում են ընթերցողների, գրողների և նրանց միջնորդների շահերին»<sup>41</sup>: Դիտելի է, որ Կավելտին «գանդվածային» վիպագրության, գրականության փոխարեն կիրարկում է «ֆորմուլյար» վիպագրություն, գրականություն եզրը: Այս «ֆորմուլյար» գրականության մեջ քննաբանելով Ժորժ Սիմենոնի, Ֆրեներիկ Ֆոստի, Զոն Կիզիի գետեկտիվ, արդի սիրային բազմազան թերթոն վեպեր, տարբեր տեսակի քաղաքական, արկածախնդրական, «սև վեպի հանգույն» մարտավեպեր, թրիլերներ: Նա ֆորմուլացման համար էական է համարում ընթերցող-գրող-այս երկուսի միջնորդ (նկատի ունի հրատարակչին) հաղորդակցական ընդհանուր մակարդակի առավելագույն դրսելորումը: Հետեւաբար կարող ենք եզրակացնել, որ «ժամանցային, զանգվածային» վիպագրության կամ արդիական եզրով՝ «ֆորմուլյար» գրականության էությունը, հիմքը ունիվերսալ մոդելն է: Նո՞ր է սա վիպագրության պատմական համապատկերում, պայմանավորված է միայն ժամանակակից «զանգվածային» արվեստով։ Անշուշտ՝ ո՞չ։ Համաշխարհային գրականության պատմության մեջ Կավելտիի «ֆորմուլյար գրականության» նախորդը «ժամանցային գրականությունն» էր, որի բյուրեղացված արտահայտությունը թերթոն վեպն էր։ Դյումա և Գոչունյան, Լեֆրի և Գրիգոր Սարաֆյան, Սյու և Օտյան ստեղծում էին հաստատագրված, բոլորի կողմից ընդունված կառույցներ (ունիվերսալ մոդելներ), որոնք գրող-ընթերցողներանց միջնորդ (տվյալ դեպքում պարբերականներ) հաղորդակցությունը դարձնում էին առավելագույն սերտ և անմիջական։

Արդեն մատնանշեցինք, որ վեպի ժանրային ինքնությունը պայմանավորող հատկանիշներն ու բաղկացուցիչները մեծ դժվարությամբ են դասակարգման ենթարկվում, ինչը պայմանավորված է այս ժանրի բնույթով։ Տեղին է հիշատակել Ֆրիդրիխ Շլեդելի հետեւյալ բանաձեռնությունը. «Վեպն ամենանախնական, յուրօրինակ, ոռմանտիկական պոեզիայի (այսինքն՝ գրականության – Գր. Հ.) կատարյալ ձևն է, որը հին, դասական գրականություններից, ուր ժանրերը խստորեն բաժանված են, տարբերվում է հենց այդ բոլոր ձևերի միախառնումով»<sup>42</sup>: Շլեդելը, Սերվանտեսի և Բոկաչչոյի փորձից ելնելով, իբրև եզրակացություն վեպը համարում է «ամենայն ինչ ընդգրկող կոմպոզիցիա»<sup>43</sup> նկատի ունենալով ժանրի ինքնությանը բնորոշ թե՛ նախնականությունը, թե՛ կազմաբանական

41 Տե՛ս **Ջ. Կաթելտի**, “Изучения литературных формул”, (“Новое литературное обозрение”, Москва, 1996 г., № 22, с. 38).

42 Տե՛ս **Х. Шлегель**, “Эстетика европейской литературы”, (“Эстетика, философия, критика”, том 2, Москва, Изд. “Искусство”, 1983 г., с. 100).

անընդհատ ինքնանորոգությունը, թե՛ ժանրային ջրբաժանի պարագայականությունը։ Շլեզելը ելնում էր այն հանգամանքից, որ առաջին անգամ ռոմանտիկական վիպագրության տիրույթներում իբրև ստեղծաբանական-կազմաբանական միավորներ միախառնվեցին ժանրի պատմական նախորդ շրջանների բազմաթիվ բաղկացուցիչներ՝ սկսած անտիկ շրջանի վիպման հայտանիշներից մինչև նախառոմանտիկական շրջանի վիպագրության հայտանիշները (ասպետական, պիկարոյական վեպ, գոթական վեպ, այսպես կոչված «գալանտ» վիպագրություն (բարոկկոյի շրջանի), զգացմունքների հեղման վիպագրություն, դիդակտիկ վեպ և այլն)։ Այդ բաղկացուցիչներն «ամենայն ինչ ընդգրկող կոմպոզիցիա» էին ներկայացնում՝ վեպի բանարվեստում բոլորովին առկախելով «ֆորմուլացումը», «ունիվերսալ մոդելը»։ Ժանրն այդ գերընդգրկման դեռ «տարերային» վիճակում էր, որտեղ կառույցի ներքին կանոնակարգումը էական չէր, սակայն հենց ռոմանտիզմի վիպագրության շրջանում՝ շատ կարճ ժամանակի ընթացքում, սկսվում է ունիվերսալ մոդելի գոյավորման և հաստատագրման ընթացքը՝ կոմպոզիցիոն «տարտղնումը»։ Հստակ կառույցի վերափոխելով (Սկոտ, Մետյուրին, Շատորիան, Հյուկո, Մյուսե, Լակլո, Լերմոնտով, Շերենց, Բաֆֆի): Միաժամանակ փորձ է արվում իրականացնել տակավին Արթուր Շոպենհաուերի կողմից առաջադրած հրամայականը՝ ստեղծագործության մեջ արտաքին աշխարհի նկարագրություններին հավասարակշռել ներքին աշխարհի նկարագրությունները, քանի որ արտաքին գործողությունների առատությունը վատ, անհաջող վեպի դրսելորում է, վեպն այն ժամանակ է բարձրարվեստ, երբ նկարագրում է ներքին կյանքը, աշխարհը և կարողանում է ներդաշնակել դրանք անգամ արկածներով, արկածախնդրությամբ առլեցուն վեպերում<sup>43</sup>։ Դա համաշխարհային վիպագրության պատմության մեջ բյուրեղացավ, հանգրվանի հասավ թերթոն վեպով։ Անշուշտ, այս կարգաբերման գործընթացը պիտի զիջեր «տարերային, ամենայն ինչ ընդգրկող կոմպոզիցիայի» առերած բազմաթիվ իրողություններ, ըստ այդմ խոտորելով մեծ վեպը (այսինքն՝ բալզակյան կամ դուտուսկիհական վեպը, ասել է թե՝ ժանրի դասական դրսելորումը) պայմանավորող օշականյան բնութագրմամբ «կեանքին հասակից» և պիտի ցուցաներ ժանրի «առաջնակարգ անձնաւորութեանց տագնապը և երկրորդական անձնաւորութեանց յաջողուածքը...»<sup>45</sup>։ Այսինքն՝ մեզանում բալզակյան-դուտուսկիհական վեպի անհաջողության կողքին դյումայական վեպի հաջողությունը, ինչը, որքան էլ արժենորման համակարգում խարսխվի մերժումի և բացասման տիրույթներում, նույն Օսյանի ժառանգությունը, վիպագրությունը մեկնաբանելիս, առարկայաբար արձանագրում է վեպի ժանրի մեջ ունիվերսալ մոդելի գոյությունը։ Եթ այս պարագային դրա մերժումը կամ հերքումն առհասարակ վեպի ունիվերսալ մոդելին սուբյեկտիվ վերաբերվելու արտահայտություն է, իսկ գրականության, ժանրի պատմության համար ընդամենը արձանագրելի իրողություն, այլ ոչ թե նույն պատմության և տեսության գերակայություն։

43 Նույն տեղում, էջ 101:

44 Այս մասին մանրամասն տե՛ս *Արթուր Շոպենհաուերի* «Parerga» գործում (II. 228):

45 Յ. Օշական, «Համապատկեր...», հա. IV, էջ 62, 66-67:

*Օտյանի վիպագրությունը*, ինչպես բնորոշ է ժամանքի ունիվերսալ մոդելին, ծագումնաբանական դաշտում ունի գերիշխող կողեր: Խնդիրն համակողմանիուրեն լուսաբանելու համար անհրաժեշտ է անդրագառնալ տեսության մեջ վաղուց անտի հաստատագրված մի իրողության: Ինչպես ժամանքի պատմական պոետիկայի, այնպես էլ տարբեր խնդիրների քննության ժամանակ հետազոտողները կիրառում են romance և novel եզրերը: Romance-ը՝ ժամանքի անտիկ, միջնադարյան, ինչպես նաև անհավանական, արկածային, պատմությունների համար, իսկ novel-ը՝ ժամանակակից վեպի համար՝ այս երկուսի մեջ կազմաբանական-իմաստային տարբերակումներ մտցնելով: Դժվար չէ կուահել, որ տեսաբանների այս տարբերակումը ջրբաժանում է «ժամանցային», զանգվածային» վեպը ժանրի մյուս (անվանենք էլիտար, «լուրջ») դրսեորումներից: Նշենք նաև, որ ժանրի ունիվերսալ մոդելն ըստ ամենայնի դրսեորգում է romance-ից ածանցված վեպերում:

Աչա և Երվանդ Օտյանի վիպագրության ծագումնաբանական դաշտում գերիշխողը, եթե չասենք բացարձակը, romance-ի ծագումնաբանական կողերն են՝ հար և նման համաշխարհային «ժամանցային» վիպագրության: Վեպի ժամանքի պատմության ծագումնաբանական դաշտում առկա են այսպես կոչված երկու բնօրրաններ՝ ուշ հունական, որը զարգանում էր նաև Բյուզանդիայում (II-XII դարեր), և եվրոպական (Հիմնականում ֆրանսիական և իսպանական, XII-XV դարեր): Եվրոպական բնօրրանում ժամանք ենթարկվում է որոշակի կանոնակարգման, ինչպես օրինակ ասպետական, պիկարոյական վեպերի պարագային: Եվ այս հիմքի վրա XVII-XVIII դարերում եվրոպական (ֆրանսիական, անգլիական, գերմանական) վեպը, ամբարելով ժամանքի նախորդ փուլերի փորձը, կրելով դրանց ծագումնաբանական կողերը, գոյափորում է նոր ծագումնաբանական դաշտ՝ դասական վիպագրության համար: Հենց XVII-XVIII դարերի վիպագրությունն է ըստ էության այն մեկնակետը, հիմքը, որից սկզբնավորվում է դասական վեպի կառույցը՝ իր բազմաթիվ դրսեորումներով և արտահայտություններով: Այս շրջանում է տեղի ունենում novel-ի և romance-ի կազմաբանության, ծագումնաբանական կողերի ամրագրումները ժամանքի իրացումներում և ըստ այդմ ջրբաժանում վեպի տեսակները: Պատմական այս գործընթացում մեզ հետաքրքրող վիպագրության գոյափորման ծագումնաբանական դաշտում արարողական են բարոկկոյի վեպերի կազմաբանական-ստեղծաբանական կողերը, որոնք անցան թերթոն (ժամանցային) վեպին, դարձան ժամանքի այդ արտահայտության ինքնության էատարրերը: Այսպես, բարոկկոյական վեպի այնպիսի կազմաբանական էատարրեր, ինչպիսիք են բնագրի գոյափորման ավանդուրիստական-արկածային բնույթը, իրադարձությունների անսովորությունն ու անակնակալությունը, հանցագործությունների, մարդկային վարքի և կեցության ցանկացած շեղումների առկեցունությունը ուղղակիորեն փոխանցվեցին թերթոն վեպին՝ անշուշտ ենթարկվելով ժամանակի թելադրանքներով պայմանագորգած ձևափոխությունների:

«ժամանցային» վիպագրության ծագումնաբանական դաշտում բացի պիկարոյական վեպի կազմաբանական կողերից, արարողական դերակատարություն ունեն նաև գոթական կամ «սև», «սարսափի» վեպերը (պակաս, քան պի-

կարոյական վիպագրության հոսքից եկածը): Հընթացս մեկ անգամ ևս կրկնենք, որ այս դեպքում էլ գործ ունենք romance-ի ստեղծանող ելակետերի հետ: Այսպես՝ արկածախնդրական-արկածային իրադարձությունների անսովորություններին, անակնկալներին, շեղումներին և հանցագործություններին հավելվեցին խորհրդավորությունը, անընդհատ նժղեհականությունը, գաղտնիքները և դիպվածները, էրոտիկական պատկերները, կերպարների տիպաժային-գործառական դետերմինացիան, փորձությունները և այլն: Հորացիո Ուոլպոլի «Օտրանտյան դոյակը» վեպով սկզբնադրված և արդեն Լյուիսի (հատկապես նրա «Վանականը» վեպի), Վալտեր Աքորդի և Զարլզ Մետյուրինի վիպագրությամբ բյուրեղացած «սև», «սարսափի» և «գոթական» վիպագրության այս արարողական-կազմաբանական սկզբունքները դարձան թերթոն, իսկ մեր օրերում զանգվածային կամ ֆորմուլյար վիպագրության այն ծագումնաբանական կոդերը, որոնք ցարդ կիրարկում են, երբեմն օրինակելի արտահայտություններ ստանալով, ինչպես օրինակ Ումբերտո Էկոյի «Վարդի անունը» հռչակավոր ստեղծագործության մեջ: «Սև», «սարսափի» կամ «գոթական» վիպագրությունը ժամրի տիրույթներում միակ արտահայտությունն է, դրսեորումը, որ ըստ ամենայնի պահպանում է իր կառուցվածքային-կազմաբանական միասնությունը: Ասել է թե՝ վեպի պատմական գործընթացում այն ստեղծաբանական տիպն է, որն ունի ունիվերսալ մողել, ուստի բնականաբար «ժամանցային» վիպագրությունն իր գենեզիսում արդեն ներկրում էր դա իբրև ստեղծաբանական ելակետ, գրաբանական իմպերատիվ:

Այսպիսով romance-ի ինքնությունը կազմող իրադարձությունների անսովորությունը, անակնկալությունը, փորձությունը, արկածն ու արկածախնդրությունը, ինչը տեսաբաններին առիթ է ընձեռել, նկատի ունենալով իրադարձությունների, արարքների, կերպարների արտասովորությունը, նորմայից «շեղումները», վեպի այս տիպը բնութագրել իբրև «Հերոսական Փաբուլա»<sup>46</sup>, փոխանցվեցին թերթոն վեպին որպես հիմք, ինքնության էատարը: Այս իրողությունն է ցուցահանում նաև հայկական թերթոն վեպը:

Օտյանի վեպը արկածների, արկածախնդրության, անակնկալների, հանցագործությունների, անընդհատ նժղեհականության, գաղտնիքի և սարսափի, հետապնդումների ու փորձությունների հսկայական գեղադիտակ է՝ բարոկկոյական, «սև», «սարսափի», «գոթական» վիպագրությունից արտածված ծագումնաբանական դաշտով, դրանց կազմաբանական կողերի ամենատարբեր կիրարկումներով: «Գոթական» վեպին մասնահատուկ բացահայտ պայմանականությամբ, ինտրիգի չդադարող սաստկացումով, նորմայից շեղված հերոսներով, իրականի և իլյուզիայի փոխներթափանցումներով՝ անշուշտ արդիականացրած, պատշաճեցրած իր ժամանակի «ժամանցային» վեպին:

Ունիվերսալ մողելը թերթոն վեպի «ժամանցային հիշողությունն է», արխետիպերի (նախաձևերի) այն համակցությունը, որը ժանրի այսօրինակ կառույցներում որպես կանոն կարելի է խմբավորել հետեւյալ ձևերով.

ա) արկածային-արկածախնդրական նախաձևեր,

46 Տե՛ս՝ Reeve C., «Progress of romance», New York, 1931, p. 111.

- բ) սիրո պատմությունների նախաձևեր,  
 գ) գաղտնիի, արտասովորի, անակնկալի նախաձևեր,  
 դ) մելոդրամտիկ տարերքի նախաձևեր,  
 ե) փորձությունների և նժդեհականության նախաձևեր,  
 զ) ծիծաղի կաղապարների նախաձևեր:

Դժվար չէ նկատել, որ ինչպես համաշխարհային «ժամանցային վիպագրության», այնպես էլ հայոց «ժամանցային» վեպի բոլոր ներժանրային կաղապարները՝ գետեկտիվ-վեպ, արկածային-արկածախնդրական վեպ, մարտավեպ, սոցիալական մելոդրամ (սա հաճախ ընդելուզված է ծիծաղի տարրերով), ոստիկանական վեպ, վեպ-թրիլեր (սարսափի վեպ) իրենց բազմաթիվ տարբերակներով (օրինակ՝ քաղաքական-ուստիկանական, վեպ-ժամանակագրության տիպ և այլն) խարսխված են այս նախաձևերին, որոնք թերթոն վեպի կազմաբանական կողերն են:

Պատկերն ամբողջացնելու համար այս խորքում հարկ է անդրադառնալ թերթոն վեպի կազմաբանության, կառուցման համընդհանուր սկզբունքներին, չափորոշիչներին:

Վեպի պատմության և տեսության հետազոտողն արձանագրում է մի պարագայությալ իրողություն: Գրականության պատմաբանն ուսումնասիրում է Շատոբրիանի գործերը, իսկ հանրությունը ընթերցում էր նրա ժամանակակից Դյուկրե-Դյումենիլի թերթոն վեպերը: Դրանցից մեկը XIX դարի սկզբներին լույս էր տեսել ավելի քան մեկ միլիոն երկու հիսուն հազար տպաքանակով<sup>47</sup>: Նույն էր Սյուլի, Դյումայի, Պոնտոն դյու-Տերրայի, Պիեր Բենուայի «ժամանցային» կամ թերթոն վեպերի պարագային: Այս հեղինակները, իրենց ժամանակի չափանիշներով, աննկարագրելի տպաքանակներ և ընթերցողական դաշտ ունեին, իսկ տեսական միտքն ու քննադատությունը զբաղվում էր և զբաղվում է Ստենդալի, Բալզակի, Ֆուբերի, Բուրժեի վիպագրությամբ: Հայոց գրաբանական միտքը կենտրոնացել է Երուխանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի վեպերին, սակայն իրենց ժամանակի համար ֆանտաստիկ տպաքանակներով լույս էին տեսնում Միսաք Գոչունյանի, Սմբատ Բյուրատի, Արմեն Շիտանյանի, Երվանդ Օտյանի թերթոն վեպերը: Ավելին, մեր նոր գրականության պատմության մեջ բացառիկ փաստի ենք հանդիպում: Օտյանի թերթոն վեպերը, ինչպես ասում են, գեռ թանաքը չչորացած, թարգմանվում էին օտար լեզուներով (թուրքերեն, ֆրանսերեն, հունարեն): Եվ կրկին ունենում ժամանակի համար հսկայական տպաքանակ, ընթերցողական մեծ դաշտ: Արդյոք այս երևույթը կարելի<sup>48</sup> է գրականության պատմության, ժամանի պատմության պարագայութամարել: Նույն իրողությունը նկատում ենք ժամանի արդի (XX դարի 20-30-ական թվականներից սկսյալ) պատմության համապատկերում: Համեմատենք, օրինակ, Ֆլեմինգի, Շելդընի վեպերը, ասենք, Մուզիլի, Ֆոլկների ստեղծագործությունների հետ: Ինքնին հասկանալի է, որ երկու դեպքերում էլ երևույթը մեկնաբանելիս իրեւ ելակետ հաշվի պիտի առնենք «ժամանցային», «զանգվածային» մշակույթի հրամայականներն իրենց սոցիալական, պատմական, մշա-

47 Տե՛ս Բ. Գրիգոր, “Теория романа”, Москва, 1927 г., с. 19:

կութաբանական ստորոգելիներով։ Սակայն, կարծում ենք, այս «պարագոքսի» ընկալման և մեկնաբանման համար է ական է նաև «ժամանցային» գրականության, ասել է թե՝ թերթոն վեպի ինքնության «արտաժամանակային» (այսինքն՝ բոլոր ժամանակաշրջանների համար անփոփոխ) հարմարվողականությունը, ինչը հնարավորություն է ընձեռում անընդհատ մեծ, եթե չասենք ամենամեծ ընթերցողական դաշտ ապահովել, լինել ամենազանգվածայինը։ Հետեւաբար, թերթոն վեպի կազմաբանության հիմնական սկզբունքը այս հարմարվողականությունն է, ինչն արագ կողմնօրոշվելու հատկություն ունի։ Ընթերցող հանրությանը գրավում է մելոդրամատիկ-կենցաղագրական վեպը («Միջնորդ տեր պապա», «Տոքթոր Լևոն», «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Նոր հարուստներ», «Միքեթ սիրարկածը»), մելոդրամը և արկածային-դետեկտիվ վեպը («Ես դուրսեցի չեմ առներ», «Մեր ազգայինճիները»), մարտավեպը, քաղաքական-արկածախնդրական-ստատիկանական վեպը («Թիվ 17 խաֆիեն», «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմս», «Կանաչ հովանոցով կինը»)։ Սակայն այս շրջարկում խիստ տեղին է հետեւյալ հարցումը։ Իսկ ի՞նչ, Շատորբիանի, Հյուգոյի, Բուրժեի, Երուխանի, Շիրվանզադեի վեպերում, օրինակ, չկա՞ն դետեկտիվ և մելոդրամատիկ, արկածախնդրական, ֆանտաստիկ և նժդեհական վիպաշերտեր։ Անշուշտ կան։ Ավելին, Մետյուրինի, Գոգոլի, Դոստոևսկու վիպագրության մեջ, օրինակ, դրանք ստեղծագործությունը կազմակերպող գերակա տարրեր են, սակայն դրանք ընդամենը ֆոն են, շերտ և ոչ բոլորովին ինքնություն։ Իսկ երվանդ Օտյանի վեպն ամբողջովին և միայն արկածի, մելոդրամի, թրիլերի, արկածախնդրության, սարսափի, գաղտնիքի, դետեկտիվի, նժդեհականության մթնոլորտ և կենսուրություն է։ Եվ եթե Դոստոևսկու, Շատորբիանի, Երուխանի վեպերի կազմաբանական համակցության մեջ դետեկտիվն ու արկածախնդրությունը հարմարվում են ստեղծագործությունների գեղագիտությանը, գաղափարների համակարգին, ինքնությանը, ապա այդ նույն դետեկտիվը, արկածախնդրությունը Սյուի, Բենուայի, Գոչունյանի, Բյուրատի, Օտյանի վիպագրության կազմաբանության առանցքն են, ինքնությունը։ Եվ այս պարագային կրավորական են այն վերապահությունները, որ օտյանական վեպը ընդարձակ ծավալի պատճառով տկարացման է ենթարկվել, կամ որ իբրև հեղինակ նա բացակայում է իր վեպերից<sup>48</sup>։ Բանն այն է, որ նմանօրինակ մեկնաբանություններում իբրև զուգակշռության եղլ ընդունվում է բալզակյան-դոստոևսկիի կական վեպը, ինչը ժանրի բոլորովին այլ ինքնության, կազմաբանության արտահայտություն է։ Իսկ այդ նույն ծավալային ընդարձակությունը (ինչն ինքնին համեմատելի չէ, զուգակշռելի չէ նույն Բալզակի, Դոստոևսկու ծավալային ընդարձակության հետ) և հեղինակի բացակայությունը «ժամանցային» («Փորմուլյար») վիպագրության ինքնության ելակետային սկզբունքներից է։ Հետեւաբար, արժեկորման-մեկնաբանման ժամանակ հետազոտողին ամենից առաջ պետք է հետաքրքրի, թե որքանո՞վ է վիպասանին հաջողել հեղինակի բացակայությունը, չգոյությունն անդամ։ Ահա այս հանդամանքը նկատի ունենալով ենք արձանագրում նաև, որ օտյանա-

48 Հակոբ Օշականն է մատնանշում այս իրողություններն իբրև Օտյանի վեպի թերություններ ու ձախավերություններ։ Տե՛ս «Համապատկեր...», հոդ. VIII, էջ 361, 366։

կան թերթոն վեպը, ժանրի այս տեսակի բյուրեղացումն է մեզանում, քանի որ գուգակշուկով Գոչունյանի, Սվաճյանի, Եղիազարյանի, Գրիգոր Սարաֆյանի, Բյուրատի, Շիտանյանի թերթոն վեպի հետ, նկատում ենք մատնանշած իրողությունների առավելագույն որակն Օտյանի ստեղծագործություններում:

Թերթոն վեպի կազմաբանության հիմնական սկզբունքներից ելակետային են, բախտինյան բնորոշումից օգտվելով, մշտական մեծությունները վեպի բանաձևում<sup>49</sup>, ինչը նախընտրում ենք հաստատուններ կոչել: Այս և թերթոն վեպի կազմաբանական հաստատուններն են հերոսն ու իրադարձություն/ինտրիգը:

Թերթոն վեպում հերոսի կազմաբանական հաստատունի ջախջախիչ կիրարկում ունեցող ձեր հեղինակի կողմից ուղղակի բնութագրումն է: Ժամանցային վիպագրության համար սա խիստ կարևոր է, որովհետև ընթերցողին տեքստի հետ գուգահեռ «աշխատելու» առիթ գրեթե չի տալիս, պատրաստի հրամցվում է, ըստ ամենայնի պարզ և կարճ, առանց իրադարձությունների, ինտրիգի ծիրը «թուլացնող» նկարագրությունների, ենթատեքստի, հոգեբանական ներսուղումների, կիսատոնների: Հաջորդ տարածուն ձեր հերոսի հաստատունի այսպես կոչված կողմնակի բնութագրումն է: Հեղինակը հերոսին կերտում է նրան բնութագրող իրադարձությունների, գործողությունների միջոցով: Այս պարագային էլ բացակայում են հերոսի բնույթի՝ դասական վեպի համար նորմատիվ նկարագրությունները (բնավորություն, խառնվածք, ներաշխարհ, գիտակցական հոսք և այլն): Ընդսմին թերթոն վեպում կենտրոնացումը բեեռացած է իրադարձությունների, գործողությունների, ինտրիգի վրա: Հերոսի և իրադարձության/ինտրիգի հաստատունը թերթոն վեպի շրջարկում և՛ ներփակ և՛ թե փոխներթափանցված են հանդես գալիս՝ միշտ տարրալուծված գործողության, իրադարձության մեջ, որոնք ընթերցողին հաճախ կեղծ ուղիների լաբիրինթոսով են տանում, երբեմն՝ անակընկալ լինում, երբեմն՝ խարսխվում թյուրիմացությունների վրա: Այսպիսով, անընդհատ պահպանում ընթերցման լարվածությունը, հետաքրքրաշարժությունը, առհասարակ գործողությունների ինտրիգը: «Ինտրիգայնությունը» նույնպես թերթոն վեպի կառուցման հիմնական սկզբունքներից է<sup>50</sup>: Օտյանի թերթոն վեպի տիրույթներում, օրինակ, «Ապայուլ Համիտ և Շերլոք Հոլմսի» Մաք Լայնը, որ նույն Շերլոք Հոլմսի ուշագրավ ալյուզիան է, իր գիտողականությամբ, անալիտիկ-գետուկտիվ մտածողությամբ, ընդհանրացնելու կարողությամբ, վերլուծական մտքի բացառիկությամբ իր բոլոր կարողությունները երևան է հանում միայն իրադարձությունների, գործողությունների մեջ, ինտրիգի սահմաններում: Առանց ծավալուն խոհերի, վերլուծությունների: Իրադարձությունների հորձանուտում, հընթացս, որոգայթների,

49 Բախտինն իր «Դաստիարակչական վեպը և նրա նշանակությունը ուղալիզմի պատմության մեջ» ուսումնաափրության մեջ սահմանում է. «Հերոսը վեպի բանաձևի մշտական մեծությունն է...»: (Տե՛ս նրա «Էստետիկա և լուսագործության տարրերը» ուսումնաափրությունների ժողովածուն, Մոսկվա, Իզդ. «Искусство», 1986 թ., էջ 211):

50 Հետաքրքի է արձանագրել, որ «ժամանցային» վեպի շատ հեղինական և տեսաբաններ ինտրիգը, հետաքրքաշարժությունը պայմանավորում են ոչ վեպի շրջարկում հեղինակային գիտակցության անընդհատ խաղով, այլ իրադարձության ինքնին հետաքրքաշարժությամբ, ինտրիգով: Տե՛ս, օրինակ, Ո. Բեմենտի «Խնչակ» նման գրվում վեպերը փորձագրությունը («Պисатели Англии о литературе», Մոսկվա, Իզդ. «Прогресс», 1981 թ., ս. 249):

արկածների փախուստների, հետապնդումների չդադարող հորձանքում (այս-  
տեղ Հիշենք նաև «Նոր հարուստների» Գաբիկին, Ագապիկին, կարող ենք Հիշա-  
տակել նրա վիպագրության գրեթե բոլոր հերոսներին):

Երվանդ Օտյանի թերթոն վեպի հերոսների ինքնության խնդիրը ևս մեթո-  
դաբանական ելակետ է՝ նրա ժանրի քընությանը ձեռնամուխ լինելիս: Առանց  
վերեւում մեկնաբանած հաստատունները հաշվի առնելու, առանց նկատի ունե-  
նալու, որ օտյանական թերթոն վեպի հերոսները գործողությանը, իրադարձությանը,  
ինտրիգին ածանցված կամ դրանց հետ համակցված գործառություններ են, նրանց քն-  
նությունը նույն դաշտում, ինչ Շիրվանզադեի, Նար-Դոսի, Զոհրապի հերոսնե-  
րի քննությունը բերում է հետազոտական, մեկնաբանական փակուղու: Այս-  
պես, Օտյանի վիպական կերպարները տրոհվել են ըստ դրական-բացասական  
հերոսների, վեպի և վիպակի կերպարների, ինչն առհասարակ քննություն չի  
բռնում: Գործառությունը չի կարող դրական կամ բացասական լինել անդամ  
հետազոտողի կողմից բարոյական նկարագրի, գաղափարաբանության բովան-  
դակություն հաղորդելու առումով: Էլ չենք խոսում այն մասին, որ կերպարնե-  
րի նմանօրինակ դասակարգությունը ժամանակավորեպ է: Նույնն է պարագան  
վիպակ-վեպ տրոհության դեպքում: Ի՞նչ տարբերություն, օրինակ, Աստիկ  
Մարկոսյանի և Սեդրակի միջև (Սեդրակը «Մատնիչ» վեպից է, այս ստեղծագոր-  
ծությունը ոմանք վիպակ են անվանում), կամ անցումային ձևերի հերոսներից  
ցանկացածի միջև: Նույն փակուղին է, երբ օտյանական հերոսներին մեկնաբա-  
նում և արժեկորում են Շիրվանզադեի, Նար-Դոսի, Զոհրապի հերոսների հան-  
գույն: Նման մոտեցմամբ հեռանում ենք թերթոն վեպից, ժանրի չափորոշիչնե-  
րով պայմանավորված իրողություններից՝ արհեստականորեն երևույթը տեղա-  
փոխելով բոլորովին ուրիշ հարթություն, ինչն էլ զանազան թյուրիմացություն-  
ների տեղիք է տալիս: Թերթոն վեպի հերոսներն ըստ ամենայնի դրսերվում են  
անընդհատ գործողության, իրադարձության, ինտրիգի մեջ լինելով: Հանգա-  
մանք, որ պայմանավորված է թերթոն վեպի կառուցման, գործողության, ար-  
տաքին և ներքին աշխարհների, վիպական իրադարձությունների միկրո և մակ-  
րոկենսոլորտի չափորոշիչներով: Արձանագրենք, որ օտյանական վեպի բոլոր  
միջնորդ կանայք և քահանաները, պչրուհիները, զանազան տրամաչափի ար-  
կածախնդիրները, մատնիչները, խաչագողերը, իդեալիստ ասպետները, հա-  
րուստները, առևտրականներն ու քաղաքական գործիչները, դրամանենդներն  
ու այդպես էլ գաղտնի մնացած խորհրդավոր անձնավորությունները ուղղորդ-  
ված են թերթոնի մեջ իրադարձության, ինտրիգի անընդհատականությունն ա-  
պահովելուն: Հար և նման պատումի կերպին և ընթացքին (օրինակ, դիպածի  
ստեղծագործությունն առաջ «տանող» գերակայությունը), որը Պարոնյանի  
սկզբնագրմամբ («Մեծապատիկ մուրացկաններ») նրա վեպում ծավալվում է  
հաճախ այլ տեղից ժամանած փեսացուի հարսնացու գտնելու և իր հետ տանե-  
լու, ապահարզանի առիթով տարբեր դատաստանական խորհուրդների գործո-  
ղությունների (կրկին Պարոնյանի սկզբնադրած՝ «Պաղտասար ախպար») մողել-  
ներով, իրադարձության, գործողության անդադար դինամիզմով, լրտեսություն-  
մատնություն, դավ-վրեմինադրություն, արկած-ավանտյուրա-նժդեհականություն-փոր-  
ձություն մոդելներով և կազմաբանական չափորոշիչներով:

Թերթոն վեպի կազմաբանության, կառուցման հիմնական-համընդհանուր սկզբունքներին և չափորոշիչներին անդրադառնալիս հարկ է երկու խոսքով անդրադառնալ ժանրի այս արտահայտության վերնագրերի խնդրին: Ումբերտո Էկոն, անդրադառնալով վերնագրի կազմաբանության և իմաստաբանության խնդրներին, նախ արձանագրում է, որ «Հեղինակը չպետք է մեկնաբանի իր ստեղծագործությունը», ապա հավելում, որ «Վերնագիրը ցավոք արդեն մեկնաբանության բանալի է»<sup>51</sup>: Անշուշտ նկատի ունի հեղինակի կողմից իր ստեղծագործության մեկնաբանությունն առթող բանալին: Ահա այդօրինակ մեկնաբանական «բանալին» խիստ հարիր է հատկապես թերթոն վեպին, «Ժամանցային», «Պանդվածային» («Փորմուլյար») վիպագրությանը: Որպես կանոն, թերթոն վեպերի վերնագրերը բեեռում են ընթերցողի ուշագրությունը արկածի, արկածախնդրության, նժեհականության, գաղտնիքի, գետեկտիվի վրա: Եվ իրոք, «Թափառական հրեա», «Վրեժիննդիրը», «Փարիզի գաղտնիքները», «Մատնիչը», «Դատաստանական խորհրդի առջև», «Սալիհա հանըմ կամ բանակը բոնավորին դեմ», – շարքը կարելի է շարունակել բազմաթիվ օրինակներով:

Կազմաբանության համընդհանուր սկզբունքների և չափորոշիչների անդրադառներում անհրաժեշտ է արձանագրել այն հանդամանքը, որ թերթոն վեպի ունիվերսալ նոդելի ստեղծաբանական տարերքը բավականին ներռունակ է ծիծառին: Ավելին, ծիծառի բազմաթիվ էատարրեր խիստ ներդաշնակ են թերթոն վեպի ինքնությանը, ինչպես պատումի սրբնթացությունը, «թյուրիմացությունների շքերթը», կայուն գործառությունների համակարգը (գրության կոմիզմ, վիճակի կոմիզմ, խոսքի կոմիզմ, ալոգիզմներ, չափազանցություններ, լիտոտաներ և այլն), իրադարձության, դեպքի, գործողության անընդհատականությունը ստեղծագործության կառուցվածքում: Մեզանում այսպես կոչված երգիծավեպի սկզբնավորումը պարտական է թերթոն վեպին<sup>52</sup>: Օտյանագիտության մեջ այս գեպքում էլ կրկին գործել է այն սկզբունքը, ըստ որի էմպիրիկ մակարդակում զանազանվել են երգիծական միջոցները և տիպերը, որոնք կրկին ենթարկվել են դրական-բացասական զուգաբանության՝ այս անգամ սաստկացման ու նվազեցման ամպլիտուդով: Ծիծառի գրականության շրջարկում հերոս եղրի փոխարեն նախընտրելի է տիպ եղրը, քանի որ տեսաբանությունը առաջնորդվում է այն քրեստոմատիկ հանդամանքով, որ երգիծական գրականության մեջ հերոսները կայուն, «մաքուր» գործառություններ են (բարության, վեհանձնության, միամտության, կծիծության, ալարկոտության, հիմարության, շատակերության, վեհերոտության և այլն, և այլն), կամ գործառությունների համագորությունները: Ֆալստաֆը, Փանջունին, Միքեն, Գարգանյուան, Սանչո Պանսան, Շվեյկը, Տարտարենը, օրինակ, «բացասական», «Հիմնականում բացասական», «դրական», թե՞ «կատարելատիվ հերոսներ» են: Ինչեւ, կարծում ենք, և՛ դասակարգությունը, և՛ այդ դասակարգության ամպլիտուդը Օտյանի վե-

51 Տե՛ս Ս. Էկօ, “Имя розы”, Москва, Изд. “Нижняя палата”, 1989 г., с. 248:

52 Պարոնյանի «Մեծապատիվ մոլուցկաններից» հետո, թեև ունենք բազմաթիվ արձակ երգիծական եռկեր, սակայն Օտյանի «Գործ եկող մը»-ով («Միշնորդ տեր պապայի» առաջին տարբերակը) և հատկապես Միքայել Կյուրանյանի «Մարտիկ աղայով» ու Օտյանի համապատասխան մյուս գործերով մեզանում սկզբեց երգիծավեպի բուռն ընթացքը:

պագրության համակարգում նույնպես արմատական վերանայման կարիք և վերընթերցման անհրաժեշտություն ունեն:

Դասական վեպի պատմական համապատկերում (Նկատի ունենք XIX դարի-XX դարասկզբի վիպագրությունը, ի դեպ, դարասկիզբը որոշակի վերապահությամբ, քանի որ ժամանական, «կանոնացված» կերպը սկսել էր իր «քայքայման» գործընթացը՝ գեղադանսի, քիչ ավելի ուշ՝ մողեռնիզմի և «նոր վեպի» իրացումներում) թերթոն վեպի ունիվերսալ նոդելը խարսխվում է «փորձության վեպերի» կազմաբանությանը<sup>53</sup>: Ինչը բնական է, քանի որ տակավին 1841-ին, օրինակ, Էդգար Պոյի «Սպանություն Մորգ փողոցում» ստեղծագործությամբ սկզբնադրված դետեկտիվ-ստիլիզական վեպերը, մարտավեպերն իրենց կազմաբանությամբ հենվում էին «Փորձության վեպի» տարրերին ու բաղկացյալներին: Պատահական չէ, որ թերթոն վեպի վիճակագրության մեջ «Փորձության վեպից» արտածված ստեղծագործությունները մի քանի անգամ գերազանցում են մյուս իրացումներին: «Փորձության վեպի» արկածի, արկածախնդիրների տիրապետությունը ներժանացնելու բոլոր կաղապարներում: Լինի քրեավեպ թե թրիեր, քաղաքական-արկածային վեպ թե մելոդրամ, նամականի-վեպ թե տարբեր կաղապարների համադրական դրսերում: Օտյանն իր վիպագրությամբ ըստ էության գործնականացնում էր ժան-ժակ Ռուսսոյի այն ասույթը, ըստ որի ժամանցային վեպերը հանրահաճ անհրաժեշտություն են՝ իրենց հանկարծակիությամբ, հանելուկներով ու գաղտնիքներով, հետապնդումներով, իրադարձությունների անսպասելի դարձարձումներով, ծիծաղով:

\* \* \*

Ժանրագիտության համապատկերում վեպի պատմատեսությանն անդրադառնալիս տեսաբանները ժամանը բնութագրելիս հաճախ կիրարկում են «ազատ ձև (Փորմա)» հասկացությունը: Նկատի են ունենում այն հանգամանքը, որ վեպի ժամանը, մյուս ժանրերի հետ համեմատած, դրսերում գրեթե անսպառ եղանակներ ունեն: Նկատի են ունենում նաև այն հանգամանքը, որ վեպի ցանկացած դասակարգում, եթե չասենք անհնարին, ապա անբավելի դժվար է՝ անկախ դասակարգման մեթոդաբանությունից, սկզբունքներից: «Ազատ ձև» հասկացությունը տեսաբանները կիրարկում են ոչ միայն ժանրի արդիական կերպի քննության ժամանակ, այլ նաև վեպի պատմության դասական շրջանին (XVIII դարավերջ-XIX դար) անդրադառնալիս: Այս «ազատ ձևի» հրամայականն այդուհանդերձ հնարավորություն է ընձեռում ժանրը ենթարկելու ամենաստարբեր դասակարգումների, որտեղ միավորների սահմանները ուղյատիվ են, օրինակ՝ «վեպ համայնապատկեր», «Հոմոցենտրիկ վեպ», «վեպ փորձագրու-

53 Ի դեպ, «Փորձության վեպերն» իրենց կազմաբանությամբ XIX դարի ժամանի գերակշռող նոդելն էին՝ Ստենդալ, Բալզակ, Դոստոևսկի: Այս մասին տես՝ Բախտիկի հիշատակված ուսումնասիրության մեջ («Эстетика словесного творчества», с. 206):

թյուն», «վեպ վավերագիր», «վեպ մանրանկար» և այլն։ Դժվար չէ նկատել, որ արդիական վեպի այս և սրա նման բազմաթիվ այլ դասակարգումներ, ինքնին պայմանական-հարաբերական լինելով, այնուամենայնիվ դասակարգման են ենթարկում վեպի ներժանրային կաղապարները։ Ինչո՞ւ հատկապես ներժանրային կաղապարները։ Բանն այն է, որ վեպի ժամանրային ինքնության մեջ պարփակված բաղադրատարրերի համակարգում ամենականոնակարգվածը հենց ներժանրային կաղապարներն են, որոնք ժամրի պատմական համապատկերում գոյագորել և ստեղծաբանորեն ամրագրել են համեմատականորեն կայուն հատկանիշների համակարգ, ինչը առարկայական հնարագորություն է ընձեռում առավել ընդգրկուն, հստակ դասակարգումների՝ մորֆոլոգիական և սեմանտիկական հարացուցային միավորների որոշարկված համակարգով։

Այս խորքին հույժ կարեոր է արձանագրել այն հանգամանքը, որ վեպի ժանրի դասակարգումն ըստ ներժանրային կաղապարների լիարժեք գործում է դասական վեպի պատմական փուլում (այսուեղ կրկին նշենք, որ դասական վեպ ասելով՝ նկատի ունենք XVIII դարավերջի-XIX վիպագրությունը)։ Ինչն ինքնին հասկանալի է, քանի որ ժամրի ստեղծաբանական կենսագործունեության այդ փուլը վեպի պատմության ամենաբեղուն և արդասավոր շրջանն է։ Բնականաբար դրանցից անմասն չէր նաև «ժամանցային», թերթոն վեպը։ Ավելին, արձանագրելի է այն օրինաչափությունը, որ ժանրի պատմական համապատկերում թերթոն վեպն է ներժանրային կառուցների, կաղապարների առավել ավարտուն, ամբողջական, բյուրեղացած արտահայտություններ ունեցել։ Ասել է թե՝ ժանրի դասակարգումն ըստ ամենայնի իրականացվել է թերթոն վեպի տիրույթներում։ Սա ժանրի պատմական գործընթացում նույնպես օրինաչափ երևույթ է, քանի որ, ինչպես արդեն նկատեցինք, թերթոն վեպն իր գենետիկական դաշտով ու կողերով, կազմաբանությամբ և ստեղծաբանական գերակա էատարրերով խարսխվում է romance-ին, որտեղ գործում են հստակ, անխախտ (ոչ պայմանական-հարաբերական) բնագիրը կազմակերպող սեմանտիկական և մորֆոլոգիական մոդելներ։

Վեպի ներժանրային կաղապարների տարբաժանումը, անկախ այն հանգամանքից, թե ո՞ր շրջանի վիպագրությունն է դասակարգման ենթարկվում՝ դասական, թե արդի, իրականացվում է հետեւյալ երեք սկզբունքներով, մեթոդաբանական կողմնորոշիչներով։

ա) ձևական,

բ) իմաստային,

գ) ձևական-իմաստային։

Այսինքն՝ վեպը ներժանրային կաղապարների է դասակարգվում ըստ ձևական կամ իմաստային, կամ այս երկուսի համակցության հարացուցային այնպիսի միավորների հանրագումարով, որոնք պայմանավորում են հատկանշում են այս կամ այն ներժանրային կաղապարը։ Բնականաբար դասակարգման այս երեք սկզբունքները գործում են նաև «ժամանցային», թերթոն վեպի համակարգում։ Եվ ինչպես դասական վեպի շրջարկում, այնպես էլ «զանգվածային» վիպագրության (թերթոն վեպի) մեջ դասակարգման ամենատարածված սկզբունքը երրորդն է՝ ձևական-իմաստայինը։

Իրողությունը մեկնաբանելու համար դիտարկենք թերթոն վեպի ներժանրային երկու կաղապար, օրինակ՝ «արկածային վեպը» և «պատմավեպը»: Էսական է դիտել, որ «արկածային վեպ» ներժանրային կաղապարը թե՛ գեղարվեստական իրացումներում և թե՛ տեսության մեջ ընկալվում և կիրարկվում է լայն և նեղ առումներով: Լայն առումով «արկածային վեպի» շրջարկը ներառում է իրականության, գոյության ամբողջական վիպումը: Դասական վեպի անվանի հեղինակներից և տեսաբաններից Հենրի Ջեյմսն իր «Արձակի արվեստը» տեսական փորձագրության մեջ արձանագրում է, որ, ի վերջո, արձակ հորինման (անշուշտ գեղարվեստական հորինման) ցանկացած ակտ ներառում, ընդգրկում է արկածը, անգամ նշված փորձագրության ստեղծումը նա համարում է արկածային գրականության փաստ, հակադրվում Բեզանտին, որը, մեկնելով «արկածային վեպի» նորմատիվ, ավանդույթի ուժ ստացած ընկալումից և ըմբռնումից (այսինքն՝ «արկածային վեպը» նեղ առումով) տարբերակում է «վեպ առանց արկածի, արկածայնության» կաղապարը: Ջեյմսը փաստորեն այդ տարբաժանումը չի ընդունում ընդգծելով, որ հոգեբանության վիպումը, հոգեբանական վեպն ըստ էության «արկածային վեպի» հանդրվանային արտահայտությունն է<sup>54</sup>: Իրապես, լայն առումով «արկածային վեպի» ներժանրային կառույցի տակ կարող ենք ընդգրկել համաշխարհային և հայ վիպագրության գրեթե ողջ ժառանգությունը, քանի որ իմացաբանական, գոյաբանական, ընդհանրապես փիլիսոփայական տարրությամբ ամենայն ինչ արկած է:

Նեղ առումով «արկածային վեպն» ընդգրկում է այն ստեղծագործությունները, որտեղ արկածն ինքնին երկի կազմաբանական հիմքն է, կենտրոնը, բնագրաստեղծ գերակայությունը, ինչից ածանցվում են վեպի գեղարվեստական համակարգը կազմակերպող մյուս տարրերը (օրինակ՝ հասարակական, ազգագրական, հոգեբանական, ենթագիտական և այլն): Նեղ առումով «արկածային վեպը» ներժանրային այն կաղապարն է, որը ժանրի պատմության մեջ ամրագրվել է պիկարոյական վեպերից և նորմա դարձել «ժամանցային» («Փորմուլյար») գրականության տիրույթներում: Թերթոն վեպի կառույցում, իբրև ներժանրային կաղապար հանդես է գալիս «արկածային վեպի» այս նորմատիվ, այսինքն՝ նեղ առումով կիրարկված կերպը: Ավելին, կարող ենք կտրական լինել և եղրակացնել, որ ժանրի XIX-XX դարերի պատմական համապատկերում «արկածային վեպը» միայն ու միայն թերթոն վեպի կերպով է դրսելորվել:

Իրողությունն առավել ցցուն ու բնութագրական է «պատմավեպ» ներժանրային կաղապարի պարագային, ինչը նույնպես ժանրի պատմական համապատկերում առթում է զուգահեռ երկու արտահայտություն: Դասական վիպագրության շրջարկում, օգտվելով Ումբերտո Էկոյի տարբերակումից, կարող ենք առանձնացնել «պատմավեպ» կաղապարի երկու կառույց՝ Դյումայի պատմավեպերի հանդույն «սուսերի ու թիկնոցի պատմավեպ», որի համար կարևոր են, որ գործողությունները «այժմ, հիմա» չեն կատարվում, պատմությունն ընդամենը ֆոն է, և «պատմավեպ» դասական իմաստով՝ պատմականությամբ, գեմ-

54 Տե՛ս Henry James, «The art of fiction», «The theory of the American novel», edited with an introduction George Perkins, 1970 by Holt, Rinehartand Winston, p. 193.

քերի, դեպքերի, իրադարձությունների պատմության գեղարվեստական ընկալմամբ ու անդրադարձով, պատմափիլիսոփայությամբ<sup>55</sup>: Թերթոն վեպի շրջարկում որպես կանոն գործում է «պատմավեպի» «թիկնոցի և սուսերի վեպերի» տարբերակը:

Ինչպես արդեն ասացինք, թերթոն վեպի ներժանրային շատ կաղապարներ սկզբնավորվել ու ձևավորվել են *romance*-ի գանազան տարատեսակներից: Այսպես, «գորթական վեպը», այսպես կոչված «սև վեպը» (ասենք՝ Ուոլպոլի, Աննա Ռադկլիֆի, նկատի ունենք հատկապես նրա «Ուոլֆյան գաղտնիքներ» ստեղծագործությունը, Լյուիսի համապատասխան գործերը) թերթոն վեպի այնպիսի ներժանրային կաղապարների սկզբնադիրն են, ինչպիսիք են «դետեկտիվ վեպը», «քրեական-ոստիկանական վեպը», «թրիլերային վեպը»: Ներժանրային կաղապարներ, որոնք թերթոն վեպի շրջարկում բավականին մեծ տարածում ունեն: Մեզանում Միսաք Գոչունյանի և Հատկապես Երվանդ Օտյանի ստեղծագործություններով գրանք մուտք գործեցին հայ վիպագրություն, ժանրի հայերեն արտահայտություններում դարձան նորմա: «Սև վեպից» արտածված ներժանրային կաղապարներում ոճիրների, սարսափ-իրադարձությունների, սարսափ-արարքների հարահոսը, պատկերավոր ասած «արյան հաճախանքը» վիպումի միջուկն է: Ինչպես նկատում ենք, ներժանրային այս կաղապարը գասակարգվում է թե՛ ձևական (պատումի պրկվածություն, իրադարձության ռեալորտաժային արձանագրություններ և այլն) և թե՛ իմաստային հատկանիշներով (օրինակ, տարբեր ոճիրների խառնադիտակ ու ըստ այդմ պերսոնաժների բնավորության, խառնվածքի առանձնահատկություններ):

Թերթոն վեպի ներժանրային կաղապարների մի շարք էլ սկզբնավորվել է «թափառումների վեպերից» և «փորձությունների վեպերից»: «Արկածային», «արկածախնդրական», որոշ առումով «բարքերի վեպի» ներժանրային կաղապարները արտածվում են մատնանշված «թափառումների» և «փորձությունների» վիպագրությունից, դրանց կազմաբանական էատարերի նույնական գործառություններով: Օրինակ՝ գիշերվա արկածախնդրական գործառությունը, պայքարի, ճակատումի գործառությունները, զանազան ներհակությունների գործառությունները և այլն:

Այսպիսով թերթոն վեպը մի կողմից առեքում էր *romance*-ով պայմանավորված ներժանրային կաղապարներ՝ «դետեկտիվ», «արկածային», «արկածախնդրական» վեպեր, «մարտավեպ», «թրիլեր», մյուս կողմից novel-ով պայմանավորված ներժանրային կաղապարներ՝ «պատմավեպ», «բարքերի վեպ», «խարակտերների վեպ», «հոգեբանական վեպ», «սոցիալական վեպ»<sup>56</sup>:

Ասել է թե՝ իր կազմաբանությամբ թերթոն վեպը բաց համակարգ է, որը հնարավոր է դարձնում ժանրի փաստորեն բոլոր ներժանրային կաղապարների իրացումը: Թերթոն վեպի այսօրինակ ունիվերսալիզմը գրական-գեղարվեստական գործընթացում միշտ կենսունակ լինելու պերճախոս վկայությունն է, որը

55 Տե՛ս Յ. Էկօ, “Исторический роман”, (“Имя розы”), с. 464-466:

56 Romance-ով և novel-ով պայմանվորված մերժանրապին կառուցների ու կաղապարների մասին տե՛ս ‘A handbook to literature’, New York, Macmillan Publishing company, p. 338-342.

պայմանավորված է նաև մշտատել ընթերցողական պահանջարկի երկույթով։ Եվ հենց կազմաբանորեն բաց համակարգ լինելը, ունիվերսալիզմն ու ընթերցողական պահանջարկն են պայմանավորում ցիկլիկ վեպերի (վիպաշարերի) առատությունը։ Անգամ փոքրիկ վիճակագրությունը ցուցանում է, որ վիպաշարերի առկայությամբ թերթոն վեպը մի քանի անգամ գերազանցում է ժանրի մյուս արտահայտություններին ու դրսեռորումներին։ Այս պարագային անշուշտ գործում է նաև «զանգվածային արվեստին» բնորոշ սերիալների ֆենոմենը, ինչին դեռ կանդրադառնանք։

Վերադառնալով թերթոն վեպի ներժանրային կաղապարներին՝ արձանագրենք նաև, որ դրանք շատ հաճախ հանդես են գալիս փոխներթափանցված, սինթետիկ կերպով։ Այսպես օրինակ, Երվանդ Օտյանի շատ վեպերի կազմաբանության մեջ առկա են և՝ արկածային, և՝ արկածախնդրական, և՝ մարտավեպի, և՝ բարքագրական ներժանրային կաղապարներ։

«Ժամանցային» վիպագրությունը, թերթոն վեպն իր ներժանրային կաղապարները ստեղծելիս կիրարկում է դիպաշարերի խիստ հստակ, կանոնիկ, «բանաձևային» տիպեր։ «Ճորմուլաներ», որոնք, իբրև պատումի տիպ, հետևողականորեն բացվում են ստեղծագործության շրջարկում։ Օրինակ, «մարտավեպ», «դետեկտիվ-սոստիկանական վեպ» ստեղծելիս թերթոն վեպի հեղինակը անխարիսար հետևեռմ է այն «բանաձևին», որը ապահովում է պատումի ժամանցային հետաքրքրաշարժությունը։ «Բանաձևեր» հարստացնում իր ժամանակին բնորոշ խորհրդանշներով, կերպարներով, ընդհանրապես իր ժամանակաշրջանի կենսոլորտի տարրերով։ Այսպես, Երվանդ Օտյանն իր «քաղաքական-դետեկտիվ-մարտավեպերում» («Ապայուլ Համիտ և Շերլոք Լուկս», «Սալիհա հանըմ...», «Թիվ 17 խափիեն») ժանրի այս կաղապարների պատումային «բանաձև» դիմավորում, լրցնում է, օրինակ, գործակալական-լրտեսական ցանցի իր ժամանակի համար խիստ բնորոշ տարրերով, խորհրդանշական գերակատարություն ունեցող հերոս-գործառությամբ և հերոս-գործառության հետ վիպական շրջարկում հարաբերվող ու այդ հարաբերությամբ պայմանավորված կերպարներով։ Բնականաբար, թերթոն վեպի ներժանրային բոլոր կաղապարներին բնորոշ այս հանգամանքը պայմանավորում է կարծրատիպ (ստերիոտիպ) բնավորություններ/կերպարներ և իրադարձություններ, որոնց մենք ավելի հակված ենք գործառական բնավորություններ/կերպարներ և իրադարձություններ բնութագրել։ Ասել է թե՝ սրանք նույնպես ստեղծաբանական բնույթով «բանաձևային» են։

Ինչպես առհասարակ թերթոն վեպում, այնպես էլ Օտյանի համապատասխան ստեղծագործություններում որպես կանոն ընթերցողական հետաքրքրության, ընդհանրապես ժամանցայնության հրամայականն ապահովելու համար այս կարծրատիպերը, գործառությունները (հատկապես կերպարներ/բնավորությունները) երբեմն հարստանում են հակագիր կարծրատիպերի, գործառությունների տարրերով։ Օրինակ, խաբեբան հանկարծ ազնիվի գործառական տարրեր է «վերցնում», կծծին՝ շոայլի, անբարոն՝ բարոյականի, արկածախնդիրը՝ սկզբունքայինի և այլն։ Այս հանկարծակի հակադարձականությունը պայմանավորում է պատումի գրավչությունը՝ հասկացության ողջ տարողությամբ

(ժամանց, ընթերցումով իրականությունից «կտրվելու, հանգըստանալու» հանդամանք, հետաքրքրաշարժություն և այլն): Սա նաև յուրաքանչյուր ստեղծագործության շրջարկում կազմաբանական անընդհատական վերակառուցում է ապահովում, ինչը վիպագրության այս արտահայտության համար խիստ կարևոր է, քանի որ հնարավորություն է ընձեռում տարբեր ժանրային ձևերի գրեթե անխոչընդոտ ներխուժումներ ներժանրային կաղապարների մեջ, ինչը վերջ ի վերջո թերթոն վեպի տարբեր կաղապարները դարձնում է խիստ շարժունակ, մոբիլ: Եվ ըստ այդմ տարտղնում Գոնկուր եղբայրների դասական վեպի այն սահմանումը, թե «պատմությունը տեղի ունեցած վեպն է, իսկ վեպն այն պատմությունը, որ կարող է տեղի ունենալ»: Աչա և թերթոն վեպը շարժունակության, մոբիլության չնորհիվ տեղի ունեցած պատմության և այն պատմության սահմանները, որ կարող է հնարավոր է տեղի ունենալ, դարձնում է հարաբերական: Փանջունին, Միքեն, Աստիկ Մարկոսյանը, տեր Բարթողը, Յանսեքոն<sup>57</sup> այդ եղած և հիպոտետիկ պատմությունների մեջ են, որոնք այնքան շարժունակ և մոբիլ են, ինչը գրեթե անհնարին է դարձնում զանազանել «չերտերը»: Սա է գրավչության անընդհատական վերակառուցումը թերթոն վեպի ներժանրային բոլոր կաղապարներում:

Հնդհանրապես իրողությունը կարող ենք բնութագրել իբրև հստակ արտահայտված զուգահեռականություն, ինչը թերթոն վեպի ցանկացած ներժանրային կաղապարի համար պարտադիր է: Օտյանի «վեպ գաղտնիքն» ու «բարքերի վեպը», «մարտավեպն» ու «արկածախնդրական վեպը», առհասարակ բոլոր ներժանրային կաղապարները խարսխված են այս զուգահեռականության վրա: Ինչը թերթոն վեպի հեղինակին «խաղի» (Շկլովսկու խոսքն է)<sup>58</sup> հնարավորություն է ընձեռում, որը ընթերցման գրավչության պայմանավորողներից է:

Հայոց թերթոն վեպի պատմության մեջ երփանդ Օտյանն ամրագրեց ներժանրային բազմաթիվ կաղապարներ՝ բնականաբար լինելով նաև շատերի հիմնադիրը մեզանում: Այնպիսի կաղապարներ, ինչպիսիք են «քաղաքական-ստիկանական վեպ», «մարտավեպ», «արկածախնդրական-բարքագրական վեպ» կաղապարներն իրենց տարբերակներով Օտյանի չնորհիվ հայկական թերթոն վեպի համար դարձան նորմա: Վիպասանի ներժանրային կաղապարները նույնպես դասակարգում ենք ըստ վերը արձանագրված երեք եղանակների՝ ձևական, իմաստային, ձևական-իմաստային: Թեև հարկ է նշել, որ Օտյանի ներժանրային կաղապարների գերակշռող մեծամասնությունը ենթարկվում է ձևական-իմաստային դասակարգման:

Օտյանի ներժանրային կաղապարներին բնորոշ է սինթետիզմը, երբ միևնույն ստեղծագործության շրջարկում հանդիս են գալիս, ասենք, արկածային, արկածախնդրական, դետեկտիվ, բարքագրական, մելոդրամատիկ և այլ կաղապարների չափորոշիչներ: Սակայն այդ չափորոշիչները ստեղծագործության շրջար-

57 1899-ի հոկտեմբերի քսանմեկին Արշակ Չոպանյանին հասցեագրած համակում նշում է, որ Յանեսքոյից վլեծը պետք է լուծի «...եր զինքը Ալարտագրեն թերթի մը մեջ ներկարողեն»: («Արևմտահայ գոյող մերի համականի, Էջ 178): Իսկ «լուծումքը» Յանեսքոյի եղած պատմության և հնարավոր պատմության տարտղման հետ:

58 Տե՛ս **Виктор Шкловский**, “О теории прозы”, М-Л, Изд. “ руг”, с. 112:

կում առանձին և «ինքնաբավ» չեն, այլ փոխներթափանցած ու սերտաճած են միջանց: Դրանք համադրություն են կազմում: Օրինակ, «դետեկտիվի» կոմպոզիցիոն հատակագծում ներառնում են «արկածախնդրական» կամ «մարտավեպի» կոմպոզիցիոն հատակագծի տարրեր, կամ «սիրավեպի», «մելոդրամի», «բարքերի վեպի» բաղկացուցիչներ, որոնք ըստ ամենայնի տարրալուծվում են «դետեկտիվի» կաղապարում, համադրվում այդ կաղապարին: Այս պարագային անշուշտ գործում է նաև թերթոն վեպի ինքնուժյանը բնորոշ սքեթչի երևոյթը: Արձանագրենք, որ օտյանական թերթոն վեպի ներժանրային կաղապարների դասակարգման ժամանակ ձևական-իմաստային եղանակի գերակշռությունը պայմանավորված է նաև ստեղծագործությունների կազմաբանությանը բնորոշ այս սինթետիզմով:

Արդ անդրագառնանք Օտյանի վիպագրության ներժանրային կաղապարների հարացույցին: Գրողի վիպագրության մեջ առկա են հետեւյալ ներժանրային կաղապարները. բարքերի վեպ՝ «մելոդրամի», «սիրավեպի» հանդերձով («Միջնորդ տեր պապան», «Գործի մարդիկ», «Պրոպագանդիստը» (այսպես կոչված «քաղաքական վեպի» հանդերձով), «Միքել սիրարկածը», «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Վաճառականի մը նամակները», «Թաղականին կինը» («քաղաքական վեպի» հանդերձով), «Նոր հարուստներ», «Լևոն Շաթրյան...», «Ճեպլիթաց նորածինը», «Դատաստանական խորհրդի առջե»), արկածալին-արկածախնդրական վեպ, դետեկտիվ-ոստիկանական-քաղաքական վեպ, մարտավեպ-թրիլեր՝ «մելոդրամի», «սիրավեպի», «նժդեհական», «գաղտնիք» վեպերի հանդերձով («Ապտյուլ Համբատ և Շերլոք Հոլմս», «Սալիհա հանըմ կամ բանակը բոնավորին դեմ», «Թիվ 17 խաֆիեն», «Վրեմը», «Կանաչ հովանոցով կինը», «Կավե հերոսներ...» («քարքարական վեպի» հանդերձով), «Տարիթա», «Մատնիչը», «Հայ տիասրորան»): Ինչպես երևում է, ներժանրային կաղապարները դասակարգելիս կիրարկեցինք ձևական-իմաստային եղանակը: Հստակորեն նկատելի է կաղապարների սինթետիզմը, ինչն ակնհայտ է հատկապես «Ընկեր Փանջունի», «Ճողովապրիսթ և ընկ.», «Զաքը Ավրամ», «Ես դուրսեցի չեմ առներ», «Նոր հարուստներ...» թերթոն վեպերում: Օտյանի ներժանրային կաղապարների մեջ առանձին խումբ են կազմում այսպես կոչված երգիծավեպերը՝ «Տոքթ. Վարդան», «Միջնորդ տեր պապան», «Ազգային բարերարը», «Պրոպագանդիստը», «Ընկեր Բ. Փանջունին», «Միքել սիրարկածը», «Ճեպլիթաց նորածինը», «Պատերազմ և... խաղաղությունը»:

Զուտ ձևական հատկանիշներով հարացուցային միավոր են կազմում նամականի-վեպերը՝ «Վաճառականի մը նամակները», «Պատերազմ և... խաղաղությունը», մասսամբ «Ընկեր Փանջունին», «Երկիխոսություն (դիալոգ) վեպերը»՝ «Դատաստանական խորհրդի առջե», «Միջնորդ տեր պապան»:

Օտյանի թերթոն վեպի ներժանրային կաղապարները ոչ միայն բազմազան են, այլև միմյանց փոխներթափանցված: «Վեպ քրոնիկոնին» («Նոր հարուստներ», «Կավե հերոսներ», «Կանաչ հովանոցով կինը», «Թիվ 17 խաֆիեն») ագուցված են «դետեկտիվի», «վեպ գաղտնիքի», «մարտավեպի», «սիրավեպի», «բարքերի վեպի», «արկածախնդրական վեպի» հայտանիշներ: Ստեղծագործության շրջարկում, կախված երկի կառուցվածքում ունեցած կոնկրետ և լոկալ

նպատակից, դրանցից որևէ մեկը երբեմն դառնում է առաջնային, երբեմն՝ ետին պլան մղվում: Հստ այդմ ապահովելով թերթոն վեպի ինքնությանը ներհատուկ ժամանցայնությունը, հետաքրքրաշարժությունը, դինամիզմը, սրբնթացությունը, պատումի լարվածությունը, ինտրիգը:

Փոքր-ինչ մանրամասնենք «վեպ փորձություններից», «վեպ գաղտնիքից» ծագումնաբանորեն սերած «արկածային», «արկածախնդրական», «դետեկտիվ», «ոստիկանական», «մարտավեպերի» պարագան:

Երվանդ Օտյանի թերթոն վեպի կաղապարներից «մարտավեպում», «վեպ քրոնիկում», «դետեկտիվ-քաղաքական-արկածային վեպում» ելակետային է վիպական այնպիսի կենսոլորտը, որը զառածում է գոյության, իրականության ընականոն ընթացքից, սովորական հարաբերություններից ու կյանքից: Այդ կենսոլորտն անպայմանորեն անընդհատ վկայում է բացառիկություն: Բացառիկ են թե՛ հերոսները, թե՛ դեպքերը, իրադարձությունները, թե՛ կյանքի ու գոյության շրջադարձները, հեղաբեկումները: «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմս», «Կանաչ հովանոցով կինը», «Թիվ 17 խափիեն», «Մատնիչը» վեպերը օրինակ, իրենց հերոսներով, իրադարձություններով ըստ էության զառածում, շեղում են կյանքի սովորական ընթացքից, սովորական կենսագրությունից<sup>59</sup>: Նույն է պարագան «քրեական», «թրիլեր» վեպերում, թեև այս կաղապարների գեղքում սկզբնադիրը «վեպ գաղտնիք», «գոյթական», «սև» վեպերն են: Ներժանրային այս կաղապարները «...սկսվում են այնտեղից, որտեղից սկսվում է կյանքի բնականոն սոցիալական և կենսագրական ընթացքից շեղումը, ավարտվում են այնտեղ, որտեղ կյանքը վիրստին բնականոն հունի մեջ է մտնում»<sup>60</sup>: Աչա և այդ գոյության ու կենսագրության զառածումը առարկայորեն ենթագրում է գաղտնիքներ, փնտրատուքներ, խոչընդոտներ, թյուր ուղիներով բազմիցս երթուղարձվելու ընթացք, հընթացս «ներփակ» խորիների լուծումներ, որոնք և՛ հերոսին, և՛ իրադարձություններին բնականոն վիճակից անընդհատ շեղումների մեջ են պահում: Արկածի, արկածախնդրության, դետեկտիվի, նժդեհականության, խոչընդոտների անկանսատեալիությունը և՛ պատումի, և՛ կերպարների մակարդակում ներժանրային կաղապարների համադրական դրսեորման գերակա հատկանիշներից են: Իսկ անկանսատեալին անպայմանորեն ներառում է իոացիոնալիզմի որոշակի չափաբաժին, ինչը հատկապես Օտյանի երգիծական թերթոն վեպերում կազմաբանական հիմնային գործառություն ունի:

Արկածային-արկածախնդրական, նժդեհական, դետեկտիվ կառույցների համադրական արտահայտություններում կոմպոզիցիոն շրջանակը որպես կանոն ստեղծվում է «ի՞նչ է պատահում հետո» հարցումի պարբերականությամբ՝ իրեւթե՛ պատումը «առաջ տանող» և թե՛ տիպաֆ-գործառությունները պայմանավորող: «ի՞նչ է պատահում հետո» հարցումը պայմանավորում է նաև պոետիկական զանազան միջոցների ուղղվածությունը: Ինչպես, ասենք, պեյզաժը «Ապտյուլ Համիտ...», «Սալիհա Հանը...» երկգրության մեջ: Համիդի պալատի, կառավարական հաստատությունների (հատկապես գաղտնի ոստիկանության),

59 Բայստինը նշված զառածումը համարում է «վեպ փորձությունների» սյուժեի կազմաբանական գերականություն: (Տե՛ս “Эстетика словесного творчества”, с. 203):

60 Նույն տեղում, 204:

Պոլսի արվարձանների ընդարձակ-մանրամասն, արձանագրային նկարագրությունները նպատակառողջված են «ի՞նչ է պատահում հետո» հարցումի ընդլայնմանը, որպեսզի կարգալու ժամանակ ընթերցողը լուսանկարչական հստակություններն ու կերպարները, իրականության ողջ արտաքին անտրուաժը։ Ներժանարային այս համադրական կաղապարներում հերոս-գործառություններն առընթերում են երկու խումբ՝ բարոյական ու մարդկային վսեմ հատկանիշներով, դրական սկիզբներով կերպարներ (բարի, քաջ, վեհանձն, ասպետական, հնարամիտ, իդեալիստ և այլն) և չարագործներ ու չարիքի մարմնավորումներ (նենդ, հաշվենկատ, կծիծի, ագահ, փոքրոգի, դավաճան և այլն)։ Գործում է այն նույն կարծրատիպերի սկզբունքը, ինչին արդեն թերթոն վեպի կազմաբանության, ինքնության քննության ժամանակ անդրադարձանք։ Հարկ է հավելել նաև, որ օտյանական թերթոն վեպի «արկածային-արկածախնդրական», «դետեկտիվ», «ոստիկանանական», «մարտավեպի» կաղապարներում գերակայելի է պատումի հետահայաց սկզբունքը (կրկին նույն կարծրատիպեն է գործում), ինչն առհասարակ բնորոշ է թերթոն վեպի կազմաբանությանը։ Իրադարձությունը, գործողությունը ներկայացներուց, արձանագրելուց հետո պատումային մակարդակը վերաբառնում է անցյալի նկարագրություններին և ըստ այսմ այդ հետահայացի օգնությամբ «բացում» կերպարները, ստեղծագործության ամենատարբեր դիպաշարային պլանները։

Առհասարակ «ժամանցային վիպագրության» շրջարկում դետեկտիվի, արկածախնդրականի կառուցների գերակայությունը պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ «...հաղթանակում է ինտելեկտուալ, սոցիալական, իրավական և բարոյական նորմը, իսկ չարիքը, այսինքն՝ ոչ նորմալը ոչնչանում է», այլ նաև այն հանգամանքով, որ դետեկտիվ-արկածախնդրական կառուցներն ըստ էության «...կուահումի պատմություն» են, ինչպես միանգամայն իրավացիորեն բանաձեռում է Ումբերտո Էկոն իր «Դետեկտիվի մետաֆիզիկան» փորձագրության մեջ<sup>61</sup>։ Ահա թե ինչու վիպագրության այս կերպը ընթերցման տիրույթներում զանգվածային է, նախապատվելի, քանի որ առթում է գաղտնիքի կուահման անընդհատականություն, հայտնին շատ հաճախ ներկայացնում է իբրև անհայտ, և այդ անհայտը կուահելու հնարավորություն ընձեռում, ինչպես Օտյանի ցիկլիկ վեպերում («Ապայուլ Համիտ...»/«Սալիհա Հանըմ...»), «Թիվ 17...»/«Կանաչ Հովանոցով...»)։ «Քաղաքական», «քրոնիկոնային», «արկածային», «արկածախնդրական», «ոստիկանական-դետեկտիվ» վեպերում, «մարտավեպում» ընթերցման դաշտին քաջածանոթ իրադարձությունները (օրինակ՝ համիդյան ուեժիմի հոգեվարք, ազգային-քաղաքական կյանքի ընթացք, Աղետ, Սփյուռքի գոյավորում) ներկայանում են այնպիսի կերպերով, ուր հայտնին առքերում է բազմաթիվ անհայտներ, ըստ էության հայտնին փոխաձեկում է անհայտի (օրինակ՝ քաղաքական պայքարի, հատուկ ծառայությունների, հետապնդումների, լրտեսների կենտրոնացումներ-մանրամասնումներ)։ Թերթոն վեպում ամենատարբեր պլաններով հարակա առկայանում է

61 Տե՛ս Ս. Էկօ, “Имя розы”, с. 454:

գաղտնիքը, ինչը ընթերցման դաշտում պահանջում է անընդհատական կռահում: Այսպիսով ապահովում և՝ ժամանցը, և՝ հետաքրքրաշարժությունը և թե՛ ընթերցողի կողմից ստեղծագործության հանդեպ տածած անբավելի հետաքրքրությունը: «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմս», «Սալիհա հանըմ կամ բանակը բոնավորին դեմ», «Ես գուրսեցի չեմ առներ» վեպերի շրջարկում, օրինակ, հարեմի, Համիդի ու եմիտի, լրտես-խափիեների, գաղտնի ծառայություններ հավաքագրված մատնիչ-գործակալների<sup>62</sup> վավերականին համարժեք վկայությունները, ինչպես է առհասարակ քաղաքական-արկածախնդրական, դետեկտիվ մարտավեճրում Օտյանից մինչև Գրեհեմ Գրին, Շելդըն և Սուվորով, իրենց գաղտնազերծում-մանրամասնումի գործառություններով, ընթերցման դաշտում անընդհատ կռահման ակտ ապահովելով, իրադարձությունների, դեպքերի ու դեմքերի «խոհանոցը» նկարագրելով ներհատուկ են միայն ու միայն «զանգվածային», թերթոն վեպին: Հանդամանք, որ հետազոտողը անվերապահուեն հաշվի պիտի առնի, այլապես նույնականությունը դասական վեպի հետ առարկայաբար մեկնաբանական փակուղու է հանգեցնում: Դասական պատմավեպի չափորոշիչներով, օրինակ, «Հայ տիասբորայի» լրտես Մաքսուտի, «Ապտյուլ Համիտի» Հագդիի, Զիայի կերպարները մեկնաբանելի չեն<sup>63</sup>:

Ինչպես «պատմական», «արկածային», «արկածախնդրական», «դետեկտիվ» «մարտավեճերի» համարքական կաղապարներում, այնպես էլ ներժանրային մյուս կաղապարներում («բարքագրական», այսպես կոչված երգիծավեպերի) ձեւաբանությամբ տարածունը «երկխոսական (դիալոգիկ)» և «նամակային (էպիստոլյար)» վեպերն են: Երկխոսական սկզբունքը թերթոն վեպի համար, ինչպես գրում է Օշականը, «անփոխարինելի բարիք մըն է»<sup>64</sup>: Երկխոսությունը թերթոն վեպի ինքնության դրամատուրգիական տարերքի կազմաբանական հիմքն է, ուստի պատահական չէ, որ Օտյանի թերթոններում հաճախ դա ձեւաբանական ամենատարածուն արտահայտությունն է և հանդես է գալիս իր մաքուր դրսեորումներով:

«Վեպ նամակագրություն» կաղապարը նույնպես իր մաքուր, անխառն և մյուս տարրերի հետ համագրված (որպես կանոն գերակա) արտահայտություններով «ժամանցային» վիպագրության նախասիրած դրամեորումներից է, քանի որ նամակների ձեռվ հրամցված արկածը, գաղտնիքը, պատահարը, ինտրիգը, ժան Պոլի դիպուկ բնութագրմամբ, վեպի կառուցյում ստանում են դրամատուրգիական որակ՝ առկայացնելով դրամատուրգիական վեպը<sup>65</sup>: Պատահական չէ, որ հայոց թերթոն վեպի համապատկերում ներժանրային այս կաղապարը շատ տարածված էր:

62 Ուշագրավ վավերական վկայություններ ենք գտնում թվարկված շարքի մասին Գուրգեն Յաղիջյանի «Ապտիկ Համիտ Բ. Կարմիր սովորանը» ուսումնասիրության մեջ. տե՛ս նշված աշխատությունը, Պէյութ, Տպ. Անան, Էջ 68, 69, 121, 322-323, 331: Համեմատելով Օտյանի վեպերում համապատասխան վկայությունների հետ՝ նկատում ենք ըստ էության նույն վավերականությունը:

63 Այդ փակուղին նկատելի է Օտյանի վեպերին նվիրված գրեթե բոլոր ուսումնասիրություններում, ինչին, օրինակ, անդամադել է Ս. Մանուկյան իր մենագրության մեջ: Տե՛ս Ս. Մանուկյան, «Երվանդ Օտյան», Էջ 214-215:

64 Յ. Օշական, «Համապատկեր...», հոդ. IV, Էջ 55:

65 Տե՛ս Հան-Պոլե, «Приготовительная школа эстетики», Москва, Изд. “Искусство”, 1981 г., с. 254, 257: Կառուցյալ, կաղապարի ծագումնաբանական դաշտի մասին տե՛ս նաև M. Разумовская,

## Գ.

Թերթոնը առաջացել է ֆրանսերեն *feuille* բառից, որը նշանակում է «թերթիկ, թոռւցիկ»: Այստեղից էլ՝ *feuilleton*-ը: 1800 թ. հունվարի 28-ին փարիզյան «Ժուլիանալ դե դեբա» թերթում լրացուցիչ թերթիկ է հավելվում, որտեղ որպես կանոն տպագրվում են զանազան հայտարարություններ, գրախոսություններ և թատերախոսություններ, տարբեր «...ապաքաղաքական և ոչ պաշտոնական նյութեր»<sup>66</sup>: Շատ արագ ընդլայնվում է թերթոնի գործառական դաշտը՝ Եթեն Սյուի «Թափառական հրեա» և Ալեքսանդր Դյումա-Հոր «Երեք հրացանակիրներ» ստեղծագործությունները ժամրի պատմության մեջ սկզբնավորում են թերթոն վեպը: Ժամրի այս գրսերում՝ ներհատուկ կազմաբանությամբ, ձևաբանական-հղացքային չափորոշիչներով, զարգանում է երկրաչափական պրոցրեսիայով՝ սկզբնադրելով «Ժամանցային» գրականությունը: Ֆրանսիական գրական միջավայրից անմիջապես անցնում է եվրոպական մյուս գրականություններ, արագորեն ներխուժում հայոց գրականության արևմտահայ դաշտը ֆրանսիական գրականության ցանկացած արտահայտություն օպերատիվորեն սեփականում էր՝ դրան հաղորդելով ազգային կերպարանք): Մեզանում նույնպես սկսվում է «Ժամանցային» գրականության բուռն ընթացքը: Թերթոն վեպը դառնում է ժամրի գերակա եղանակներից մեկը:

Շփոթություններից խուսափելու համար հարկավոր է ուշադրություն դարձնել մեկ իրողության վրա: Հայոց գրականության դաշտում թերթոնի տեսքով (այսինքն՝ լրագրային, ամսագրային տարբերակով) հրատարակվել են բազմաթիվ հեղինակների վեպեր (Պոռչյան, Ռաֆֆի, Նար-Դոս, Կամսարական, Երուխան և այլն), որոնք իրենց կազմաբանությամբ, բնույթով թերթոն վեպեր չեն, «Ժամանցային» գրականության ատահայտություններ չեն: Այսօրինակ ստեղծագործությունների լրագրային, ամսագրային տպագրության հանգամանքները նույնական չեն թերթոն վեպերի տպագրական հանգամանքներին: Տպագրական հանգամանքի մատնանշումը, անշուշտ, տվյալ դեպքում վիպագրության հիշյալ երկու եղանակների համար տարբերակիչ հատկանիշ է: Օրինակ՝ Ռաֆֆու «Սամվելի» կամ Երուխանի «Ամիրայի աղջկա»՝ թերթոնի ձևով լույսընծայման հանգամանքը պայմանավորված չէ այս վեպերի կազմաբանությամբ, ձևաբանական-հղացքային չափորոշիչներով: Այդ վեպերը կարող էին նաև լրագրային տարբերակով լույս չընծայվել: Ստեղծագործության գեղարվեստական համակարգը դրանով չի պայմանավորված: Իսկ Միսաք Գոչունյանի, Գրիգոր Սարաֆյանի, Երվանդ Օսյանի վեպերը պարտադիր և ուղղակի պայմանավորված են

“Аббат А. Блан: “Письмо некоего француза о способах правления, политике и нравах англичан и французов”, (“Зарубежная мемуарная и эпистолярная литература”, Ленинград, Изд. “Ленинградского университета”, 1987 г., с. 99-107):

66 Տե՛ս ԼЕС, с. 465:

գրանով, քանի որ իրենց կազմաբանությամբ, ձևաբանական-հղացքային չափորոշիչներով և հայտանիշներով լրագրային, ամսագրային (մամուլային) են: Անկախ այն հանդամանքից, որ լույս են տեսել առանձին հատորներով, գրքերով (այսպես է Երվանդ Օտյանի, Սմբատ Բյուրատի, Արմեն Շիտանյանի, Միսաք Գոչունյանի բազմաթիվ թերթոն վեպերի պարագային): Ինչո՞ւ: Որովհետև թերթոն վեպի կազմաբանությունն ու ինքնությունը գենետիկորեն մամուլային են: Համենայնդեպ՝ «Ժամանցային» գրականության դասական շրջանում (XIX դար-XX դարասկիզբ): Արդի «զանգվածային» արվեստը (կինո՝ սերիալներ, ժամանակակից շոուների և սքեթչների կաղապարներ, որոնք ունեն ներքին դիպաշարային միասնություն) իրենց կազմաբանության մեջ դա պահպանել է իրեւ «արքետիպային հիշողություն»:

Հայոց դասական գրականության պատմական շրջարկում «Ժամանցային» գրականության տիրապետող արտահայտությունը թերթոն վեպն է: Ժանրի այս դրսերում ապահովում էր ընթերցողական մակարդակի ժամանցը: Սոցիալական, հոգեբանական ամենատարբեր թնջուկներից, վիճակներից ընթերցողին «տարանջատելու» կարողականությունը, ընթերցող հանրության ցանկության ընդամենը, պահանջարկին հագուրդ տալը, շուկայի պահանջարկն ապահովագրելը պայմանավորում էր «Ժամանցային» գրականությունը: Վիպասանն ընդամենը հետևում էր այդ շուկայի օրենքներին՝ դույզն-ինչ չշեղվելով գրա պահանջներից ու թելագրանքներից: Վիպասանի գործը միմիայն համապատասխան կաղապար ստեղծելն էր: Կաղապարից ցանկացած շեղում դուրս էր գալիս «Ժամանցային» գրականության տիրույթներից: Թերթոն վեպի հեղինակն ուժեղ էր այնքանով, որքանով կարողանում էր չշեղվել այդ շուկայի (պահանջարկի) թելագրանքներից, որքանով կարողանում էր կաղապարը «մաքուր» պահել: Ուշագրավ է Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» ստեղծագործության երկրորդ պարբերության հետեւյալ նշանավոր միջարկությունը. «Կը տեսնե՞ք որչափ պարզությամբ սկսած: Պատմությունն հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար չըսի, թե նույն օրն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կուգար, թե խուռն բազմություն մը հետաքրքրությամբ դեպի զալաթիռ հրապարակը կը վագեր, թե ոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն. խոսքեր, որովք վիպասաններն կ'սկսին միշտ իրենց վեպերը»<sup>67</sup>: Այս հեղինակային նշանավոր միջարկությունը ոչ միայն ոռմանտիկական վիպագրության օպողիցիան է, ինչը քանից արձանագրել է գրականագիտությունը, այլ նաև՝ թերթոն վեպի օպողիցիան: Կարծում ենք՝ Պարոնյանի այս միջարկությունը պայմանավորված էր նաև վեպի 1880-ին պրակ առ պրակ (թերթոնի նման) տպագրությունը ընթերցողին բացատրելու հանգամանքով, որպեսզի այն չնույնացվի թերթոն վեպին, չընկալվի նրա պես: Ահա և «Փորմուլային», կաղապարային ինտրիգի բացասումը հեղինակային միջարկությամբ մեկ անգամ ևս ստեղծագործության սկզբում հայտարարագրում է կառուցյի ոչ թերթոն վեպ լինելը:

67 Հ. Պարոնյան, ԵԺ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, հրատ., 1964 թ., հո. III, էջ 7:

Անշուշտ թերթոն վեպը «գրականության ճգնաժամի, քայլայման վեպն է»<sup>68</sup>, ինչպես բնութագրում են «զանգվածային գրականության» որոշ հետազոտողներ, քանի որ նրա գերակատարությունը միայն ու միայն զանգվածի ժամանցն ապահովելն է: Սակայն հարկ է ճշգրտել, որ «ֆորմուլյար գրականությունը», այսինքն՝ «գրականության ճգնաժամի, քայլայման վեպը» իր կոմունիկատիվ դաշտով մշակութային կյանքում միշտ զուգահեռ ընթացք է ունեցել և ունի թե՛ էլիտար գրականության, թե՛ «նորմատիվ» գրականության հետ: Պատահական չէ, որ թերթոն վեպը սկզբնավորումից ի վեր հետազոտական, ընկալման և արժեկորման մշտամնա կիզակետում է գտնվում: Նույնը նաև մեր քննադատական, տեսական զուգահեռումներում: Թեեւ հարկ է նշել, որ թերթոն վեպը մեզանում ավելի շատ ենթարկվել է արժեքաբանական քննության: Հաճախ «ժամանցային» գրականություն-«նորմատիվ» գրականություն զուգադրության մեջ պարփակվել են դեղաբարատիվ մերժմամբ կամ ստորակայմամբ՝ հօգուտ երկրորդի: Հավանաբար սրանով պետք է բացատրել այն իրողությունը, որ մեր գրականագիտական միտքը հիմնականում սահմանափակվել է հպանցիկ անդրագարձներով կամ, ենելով գեղագիտական-գեղարվեստական չափանիշի արժեքայնությունից, «Հերքմամբ»: Նույնն է պարագան երվանդ Օտյանի համապատասխան ստեղծագործությունների վերլուծության և մեկնաբանության առումով: Թերթոն վեպն իբրև «ժամանցային» գրականության ենթակա (սուբյեկտ) պարփակվել է միմիայն ընդհանուր արժեկորումների սահմաններում, առանց այդ «ֆորմուլաների» քըննության: Երվանդ Օտյանի մասին ստեղծված ծավալով պատկառելի գրականության մեջ անմիջապես աչքի է գարնում հետազոտական անհամամասնություն: Թվում է, թե օտյանագիտությունը, ենելով ծավալից, պիտի բավականաչափ ուշագրություն դարձներ վիպագրությանը, սակայն հակառակ պատկերն ենք տեսնում: Ինչո՞ւ: Զէ՞ որ «Քիչ վէպ այնքան ճարտար կառույցը մը կը պարզէ ընթերցողին, որքան թափառական հրեան, կամ Գաղտնիք Բարիզուն, կամ Երեք հրացանակիրները»: Արդյոք այդ ճարտար կառույցը պե՞տք է սահմանափակվեր միայն հպանցիկ արժեկորմամբ, քանի որ այդ ճարտար կառույցից «...գրականութեան լուրջ պատմութիւն մը կ'ամչնայ այդ գիրքերը յիշելէ»<sup>69</sup>: Ահա «Հերքման», անտեսման անդրադարձի խտացումներից մեկը: «Ժամանցային» գրականությունը լուսանցքային, «անլուրջ» գրականություն է: «Միջնորդ Տէր պապան, թաղականին կնիքը, թիւ 17 խաֆիէն, յիշելու համար Օտեանին ծաւալուն աշխարհները, գիրքեր են որոնք մեր կեանքին ոչ մէկ կողմը կը նուանեն: Անոնց ստեղծած հաճոյքը կը ցնդի օրուան մէջ ու հետ»<sup>70</sup>: Սակայն ինչպէ՞ս և ինչո՞ւ է ստեղծվել օրվա հաճուքը: Տեսությունն այս հարցումներին անհաղորդ է մնացել: Զէ՞ որ «օրվա գրական հոչակը վայելող» (օշականյան բնութագրումներից է Զիֆթե Սարաֆի «Միամիտի մը արկածները» վեպի առիթով<sup>71</sup>) թերթունները հերքող դատումներում մատնանշվում է

68 Թերթոն վեպը «գրականության ճգնաժամի և քայլայման վեպն» է համարում օդինակ Ա. Ռեյտրլատը: Տե՛ս «Новое литературное обозрение», 1997, № 25, 99-110.

69 Յ. Օշական, «Համապատկեր...», հտ. IV, էջ 52:

70 Նույն տեղում, էջ 81:

71 Յ. Օշական, «Համապատկեր...», հտ. VII, էջ 188:

բալզակյան տաղանդն ու դյումայական իրացումը, վիպասանի անխարիսար չնորհը<sup>72</sup>, այն հանգամանքը, որ «Զկրցաւ չէզոքացնել Շիտանեաններու, Սմբատ Բիւրատներու փառքը, բայց այդ փառքը վերականգնելու համար նոր արկածախնդրութիւնները անկարելի դարձուց, ժամանակ ու տեղ չթողլով այս մարդոց աճումին: Իր թերթօնները միահեծան կ'իշխէին, ի վնաս մեր վէպին անշուշտ, բայց յօդուտ նոյն այդ վէպին ծաղրանկարումին»<sup>73</sup>: Ասել է թե՝ Օտյանի թերթոն վեպերը ժանրի այս արտահայտության ինքնության բյուրեղացումն ու բարձրակետն են, հանգրվանը: Հարցումները պատասխան չեն ստացել, իսկ պատասխանի անհրաժեշտությունն ավելի քան զգացվում է, քանի որ «մեր գրականության ընկալչությունը» դարձրել էին այնպիսին, որ «...չէր կրնար հաշտուիլ թերթօնէն դուրս ուրիշ կերպարանքով լայնաշունչ ստեղծագործութիւններու»<sup>74</sup>: Վերջիվերջո Օշականը գրում էր արևմտահայ գրականության վեպը (նկատի ունենք «Համապատկեր արևմտահայ գրականությունը»), ստեղծել էր «իրավ վիպագրության» իր իմպերատիվը, ինչը ենթադրում էր արժեկորման որոշարկված համակարգ: Յուրաքանչյուր շեղում դրանից, բնականաբար, պիտի հայտնվեր «Հերքման» մակարդակում: Կարող էր լինել Օտյանի հանդեպ արդար և անարդար, իրավացի ու ոչ: Դրանք այս պարագային էական չեն: Հատկապես այն դեպքում, երբ օտյանագիտությունն իր ջանքերը ընդամենը նվիրում է Օտյանին Օշականից պաշտպանելուն: Սահմանափակվելով միայն հայտարարություններով, թե Օտյանը տաղանդավոր գրող է: Կարծես թե նույն Օշականը չէ գրողին համարում հայոց գրականության լավագույն պատմողը: Անտեսվում են Օշականի թերթոն վեպի և Երվանդ Օտյանի առկիթով արված բազմաթիվ նկատումներն ու մեկնաբանությունները, որոնք բավականաչափ նյութ են տալիս թե՝ «ժամանցային» վիպագրությունը, թե՝ գրողի համապատասխան ստեղծագործությունները մեկնաբանելու համար:

Փորձենք լրացնել տեսության, քննադատության բացը: Թերթոն վեպը, որ «ժամանցային գրականության» բյուրեղացումն ու ընդհանրական արտահայտությունն է թե՝ տեսական անդրադարձումներում և թե՝ ստեղծաբանական իրացումներում, կենտրոնանում էր մեզանում «ժողովրդային վիպայնություն» ելակետային հրամայականին (Երվանդ Օտյան, Երվանդ Թոլայան, Սարի Սվաճյան, Գրիգոր Սարաֆյան, Միսաք Գոչունյան, այլք)<sup>75</sup>, բնագիր ներբերելով գործողությունը, արարքը, որոնք կյանքից արտածում էին ժամանցայնությունը, ինչը «...մարդերը կը պտտցնէ իրադարձութեանց պարունակով...»<sup>76</sup>: Այս իրադարձությունների պարունակը ընթերցողական դաշտին հիանալի ծանոթ է: Թերթոնի շրջարկում իսպառ բացակայում են ենթաբնագրային շերտեր, ամեն ինչ ուղղագիծ է՝ խոչընդոտներ, արգելապատնեշներ և դրանց հաղթահարում: Ժամանցն ապահովագրելու համար գրողն անշեղորեն պիտի իրականացներ այս

72 Յ. Օշական, «Համապատկեր...», հտ. VIII, էջ 368:

73 Նույն տեղում, էջ 371:

74 Յ. Օշական, «Համապատկեր...», հտ. X, էջ 104-105:

75 Այս մասին հանգամանդրեն տես մեր «Միսաք Գոչունյանի վիպագրությունը» հոդվածում («Լրաբեր հասարակական գիտությունների», 1999, № 1, էջ 133-154):

76 Յ. Օշական, «Համապատկեր...», հտ. IV, էջ 41:

ստեղծաբանական սկզբունքը։ Պատահական չէ, որ Օտյանի վեպի համարնագրում իրադարձությունների անվերջանալի, առանց դադարի հոսք է, դրանք անընդհատական են, ինչը ժամանցի ապահովման հիմնական դոմինանտն է։ Այս իրողությունը պայմանավորում է պերսոնաժների անմիջական և ինտենսիվ ապրումներ, տրամադրություններ, մտածումներ, գործողություններ։ Արդարեւ, օտյանական թերթոն վեպի գործող անձինք միանգամից ցուցանում են իրենց ապրումները, տրամադրությունները, մտածումները, դրանք անմիջապես դարձնում գործողություն։ Նրանց բնորոշ չեն ապրումների, զգացումների, մտածումների երկարատև «ինկուբացիոն շրջանը», «հոգեհատակի սեեռումները»։ Թերթոն վեպի ինքնության այս հատկականությունն ուղղակիորեն պայմանավորում է նրա դրամատորգիականությունը (նույնն է պարագան արդի «Փորմուլյար արվեստի» հիմնական դրսերումներից մեկի մեջ՝ սերիաներում)։ Իսկ դրամատորգիականությունը առավելագույնս դրսերվում է դիալոգներով, աշա թե ինչով է բացատրվում օտյանական թերթոն վեպերի մեջ դրանց գերազանցությունը։

Երվանդ Օտյանի թերթոն վեպին բնորոշ է դիպաշարային ժամանցայնությունը։ Ավելին, դա թերթոն վեպի ինքնության միջուկն է։ Այն ընթերցման դաշտի համար ապահովագրում է առանց դադարի և հետաձգման բազմաթիվ իրադարձությունների հետևելը, ապրումների, տրամադրությունների դարձդարձումները։ Դիպաշարային ժամանցայնությունը դյուրին կլելի է, որովհետև խարսխված է միայն ու միայն մեկ մակարդակի, մեկ «աշխարհի» վրա, որն է գործողությունը։ Պատահական չէ, որ «Պատերազմ և... խաղաղության» շրջարկում Մարտքեի, Հովնանի և Սիմոնի տարբերակումը պայմանավորվում է նախասիրած մամուլի ընթերցումով։ «Բյուզանդիոնի» թերթոնների դիպաշարերն իր ընթերցողին դարձնում են պրագմատիկ, «Ժամանակի» դիպաշարերը՝ զգայացունց, «Ազատամարտինը»՝ քաղաքականապես գործույնյա՛<sup>77</sup>։ Իրապես, «Բյուզանդիոնի» թերթոն վեպերը ուտիլիտար պրագմատիզմի տարփողման ընդհանրությունն ունեին, «Ժամանակի» թերթոնները՝ հիմնականում ամենտարբեր համադրություններով մելոդրամներ էին։ Դիպաշարային ժամանցայնությունը, բնականաբար, պայմանավորում էր թերթոն վեպերի պատումի կերպը, որը, ի տարբերություն «նորմատիվ» վեպի ավելի «...կենդանի, պարզ, արագ, շարժուն, փոփոխուն...» է<sup>78</sup>։ Աչա թե ինչով հայոց դասական վեպի պատմության մեջ երվանդ Օտյանին իրավամբ վերապահված էր լավագուն պատմողի տիտղոսը։

Հարկ է նշել, որ թերթոն վեպը կառուցվածքային-կազմաբանական առումով հարում է «ներդիր վեպերի» կամ «նովելային վեպերի» տիպին։ Սա բնական երևույթ է, քանի որ թերթոն վեպն ինքնությամբ «լրագրային» («մամուլային») վեպ է, որի կոմպոզիցիոն հատակագիծը նախընտրում է «ներդիր նորավեպեր»։ Զուգահեռ գործողությունների առատությունը նույնպես թերթոն վեպի ինքնության հատկանիշներից է։

77 Տե՛ս Ե. Օտեան, ԵԺ, հտ. IV, էջ 546։

78 Յ. Օշական, «Համապատկեր...», հտ. IV, էջ 203։

\* \* \*

Երվանդ Օտյանի հիրավի հսկայածավալ թերթոն վեպերը, ոչ միայն իր կյանքի ընթացքում, այլև ցարդ կազմում են «...գրական հրապարակին ամենէն ընթացիկ ապրանքը»<sup>79</sup>: Անշուշտ, ժամանակի ընթացքում ընթերցողական հետաքրքրության ելեէջումներ են ունեցել, սակայն դրանք միանշանակորեն «ժամանցային» գրականության խտացում և հանգրվան են: Պարագայական են այն բոլոր գնահատականներն ու կարծիքները, որոնք օտյանական թերթոն վեպը փորձում են արժելորել, մեկնաբանել «Փորմուլյար» գրականության պարագրկումներից դուրս, «Նորմատիվ» վիպագրության չափանիշներով: Ինքն Օտյանը «Շանթ» հանդեսի հարցարանի «ինչ որ պիտի ուզէի ըլլալ» հարցումին պատասխանել է՝ «Սրբագրուած Երուանդ Օտեան մը»<sup>80</sup>: Եթե այս ինքնադատականը տարածենք (ինչն անշուշտ տարածելի է) նրա թերթոն վեպի վրա, ապա միևնույն է, պիտի արձանագրենք մտայնություն դարձած կարծիքի պարագայականությունը: Այդ «սրբագրություններն» ընդունելի չեն ո՛չ ստեղծագործությունների արժեքը մեծացնելու մտահոգությամբ պայմանավորված հեղինակային խմբագրումների, շտկումների գեպքում, ո՛չ անդամ ստեղծագործություններում հերոսների անվանումների շփոթությունների, դիպաշարային թյուրիմացությունների գեպքում: Բանն այն է, որ «սրբագրված», այսինքն՝ «նորմատիվ» վեպի գեղարվեստական-գեղագիտական պահանջներին և չափորոշիչներին հարմարեցված ստեղծագործությունն արդեն «ժամանցային գրականության» սուբյեկտ չէ, թերթոն վեպ չէ: Հանդամանք, որ օտյանական վեպը մեկնաբանելիս ելակետային նշանակություն ունի: Այս հանդամանքը երբ հաշվի չենք առնում, ապա նրա «ամենէն ձախողվէպի» աննախադեպ մասսայականությունը, «շքեղ մուտք, լաւ կազմաւորուած դերակատարներու խումբ, լաւ առաջնորդուած վիպային շահեկանութիւն»<sup>81</sup> ունենալը դառնում են կրավորական և անհասկանալի: Հետեւաբար, նրա վաստակը հարկ է արժելորել ու մեկնաբանել «ժամանցային գրականության» կոորդինատների համակարգում, թերթոն վեպի կազմաբանական դաշտում: Ժանրի նորմատիվ դրսելորման չափորոշիչներով ցանկացած փոխակերպություն ու պահանջ հանգեցնում է նոնսենսի: Օտյանագիտությունը հաճախ է ընկել այս «ծուղակը»՝ նրա թերթոն վեպերը փորձելով արժելորել, մեկնաբանել «նորմատիվ» վիպագրության դաշտում (Մկրտիչ Պարսամյան, Սիրունի, Օշական, Մակարյան, Մանուկյան, Մուրադյան, այլք):

Եթե օշականյան նկատումներում Օտյանի վիպագրության արժելորումը «նորմատիվ» վիպագրության դաշտում «հերքվում է»՝ վերհանելով թերթոն վեպի ինքնության և կազմաբանության բազմաթիվ շահեկան նկատումներ<sup>82</sup>, ա-

79 Յ. Օշական, «Համապատկեր...», հն. VIII, էջ 376:

80 «Ծանր», Կ. Պոլիս 1913, № 48, էջ 363:

81 Յ. Օշական, «Համապատկեր...», հն. VIII, էջ 378, 379:

82 Օշականի մի շարք նկատառումներին արդեն անդրադանք, հավելենք նրա նկատումները թերթուն վեպի «Անդրադանք» բնույթի, գործող անձանց գործառական բնույթի, ստեղծագործությունների կոմպոզիցիոն շրջանակի առանձնահատկությունների մասին: Տե՛ս նույն տեղում, էջ 382-385:

պա մյուս բոլոր օտյանագետների դատումներում հեղինակը գերազանցապես «գնահատվում» է «նորմատիվ» վիպագրության արժեկուման սանդղակով: Թերթոն վեպի հերոսները նույնականացվում են «նորմատիվ» վեպի հերոսներին՝ այնտեղ փնտրելով այնպիսի հատկանիշներ (հոգեհատակի սկեռում, գիտակցության հոսք, բնագրային մակարդակում հերոսի գոյութենության հետագիծ, սոցիալական դետերմինացիա և այլն), որոնք ներհատուկ են ոչ ժամանցային գրականությանը, ըստ այդմ արժեկութելով, գնահատելով գրողի վաստակը: Եթե անտեսվում է թերթոնի ինքնությամբ պայմանագործած ստեղծագործության հերոսի զոտ գործառություն լինելու հրամայականը, ապա բանը հասնում է շփոթության: «Պատերազմ և... խաղաղություն» ստեղծագործության Սիմոնին և Հովհաննին, որոնք սոսկ թյուրիմացությունների շրջանակի գործառություններ են (գրականության պատմության մեջ առանց փոփոխության կիրարկված Բոկաչչոյից, Շեքսպիրից ու Մոլիերից մինչև Պարոնյան ու Սունդուկյան, Լիկոկ և Նշան Պեշիկթաշլյան), վերագրը կում է «...նրանց կյանքի մի շրջանի պատկերի մեջ... արտացոլված թրքական պետության՝ զորակոչ կազմակերպելու և զենքի անվարժ երիտասարդներին ուղարկած իրողությունը...»<sup>83</sup>: Այս ու նմանօրինակ բազմաթիվ կարծիքներ, որոնք ջանում են անպայման Օտյանի թերթոնին հաղորդել իրականության պատմական, սոցիալական, հոգեբանական վկայությունների «գերբովանդակություն», անտեսում են, որ թերթոնը կիրարկում է սոցիալականի, պատմականի բոլորովին այլ որակ՝ սոցիալականը, պատմականը ապաստիալականացնելով, ապապատմականացնելով, կարելով վավերականությունից: Խնդրո առարկա ստեղծագործության մեջ, կարծում ենք, գործում է ծայրաբեռուային իրողությունների նույնականացման սկզբունքը, ինչը «ժամանցային» գրականության մեջ ամրագրվում է կենցաղային հայտնի նախաձեռից մեկի՝ «Փեսա-զոքանչ ներհակության» միջոցով: «Փեսա-զոքանչ հակամարտությունը», բախումը համարժեքվում է պատերազմին: Ստեղծագործության մեջ Բալկանյան պատերազմն ընդամենը ֆոն է, որը կարելի է փոխել առանց ստեղծագործության էությունը փոխելու: Ահա այս նկատառումից ելնելով ենք նշում նաև, որ թերթոնում տեղի է ունենում ապաստիալականացում և ապապատմականացում:

Նույնն է պարագան Օտյանի թերթոն վեպի հերոսներին դրական-բացասական տրոհությամբ որակելիս և մեկնաբանելիս: Այդօրինակ տրոհությունն ու քննությունը խաթարում է պարունակող-պարունակյալ հարաբերակցությունը՝ խնդրի ուսումնասիրությունը տեղափոխում այլ հարթություն: Կրկնենք՝ թերթոն վեպի ուսումնասիրությունը «նորմատիվ» վիպագրության դաշտ է տեղափոխվում:

Եվս մեկ հանգամանքի մասին: Օտյանագիտությունը ոչ միայն քիչ տեղ է հատկացրել թերթոն վեպերի քննությանը, դրանք մեկնաբանել ու արժեկութել «նորմատիվ» վիպագրության դաշտում, այլև չափազանցված գնահատականներ տվել ստեղծագործություններին: «Թիվ 17 խափիեն», օրինակ, Աղետը բացահայտող գեղարվեստական մեծարժեք ստեղծագործություն, բացառիկ

83 Ս. Մուրադյան, «Երվանդ Օտյան...», Էջ 221:

երևույթ է համարվել մեր գրականության պատմության մեջ: Որ ստեղծագործությունը թերթոն վեպի բարձրարժեք արտահայտություն է, անվիճելի է, սակայն այս վեպը ո՛չ նպատակ, ո՛չ էլ ուղղորդվածություն է ունեցել վկայելու Աղետի պատմական, մարդկային, հոգեբանական, քաղաքական, սոցիալական, ազգային, մշակութաբանական կենսոլորտը: Այն ընդամենը «արկածային-արկածախնդրական», «քաղաքական-դետեկտիվ մարտավեպ» է:

Մեկնելով վերը մատնանշած հանգամանքներից՝ ավելորդ չենք համարում անդրադառնալ թերթոն վեպի մի քանի ընդհանրական սկզբունքների ևս:

Այն հանգամանքը, որ օտյանագիտությունը երբեմն հիպերտրոֆիկ գնահատականներ է տվել թերթոն վեպին, ինչպես տեսանք «Թիվ 17 խափիեն» ստեղծագործության առիթով, պայմանագործված էր նրանով, որ հետազոտողները հաշվի չէին առնում «ժամանցային վիպագրության» մեկ կարևոր հատկանիշ: «Ժամանցային» գրականությունը, թերթոն վեպը վավերականը պարտադիր ենթարկում է իր ինքնությամբ թելադրված մասնահատկություններին՝ ժամանց, հետապնդում, արկած, գաղտնիք, և այլն, – ամեն ինչ կենտրոնացնելով միայն ու միայն ընթերցումը հաճելի, զբաղեցնող ակտ դարձնելուն, ինչը հակոտնյա է «նորմատիվ» վեպի իրականության գեղարվեստական վկայությանը: Սա անշուշտ չի նշանակում, որ երվանդ Օտյանի թերթոնների շրջարկում իրականության գեղարվեստական վկայությունը (վավերական գործող անձինք, պատմական, քաղաքական իրադարձություններ), սահմանափակվում է միայն վավերական գործող անձանց անունները, պատմական, քաղաքական իրադարձությունների նշանները կիրառելով: Անշուշտ՝ ո՛չ: Ընդհակառակը, non fictionի սկզբունքը թերթոն վեպի զանգվածայնության, ժամանցայնության պայմանագորողներից է: Թերևս չենք գտնի հայոց վիպագրության պատմության մեջ այնքան վավերական անուններ և վավերական իրադարձությունների նշաններ, որքան Օտյանի ստեղծագործության մեջ: Ինչը «ժամանցային գրականության» համար բնական երևույթ է, քանի որ թերթոնը պետք է հանդես բերի ընթերցողին հանրահայտ և վավերական պատմական, հասարակական-քաղաքական, մշակութային, հոգևոր դեմքեր, հանրահայտ և վավերական իրադարձություններ, ընթերցողի գոյակերպությունը պայմանագորող ճակատագրական իրադարձություններ, անցքեր: Ինչն հիանալի իրականացրել է Օտյանը: Նրա պերսոնաժների ջախջախիչ մեծամասնությունը (ազգային, հոգևորական, մշակութային, քաղաքական դեմքեր, թրքական միջավայրի անուններ՝ սուլթանից մինչև Հետին ոստիկան, տարբեր տրամաչափի լրբանեներ, արկածախնդիրներ, վաճառականներ, թեթևաբարոր կանայք և այլն) վավերական անուններ են, իրադարձություններն ու անցքերը վավերական իրադարձություններ և անցքեր են՝ պետական հեղաշրջման նախապատրաստությունից մինչև նախապետյան, աղետյան և հետաղետյան կյանք: Սակայն այդ ամենն ի տարբերություն «նորմատիվ», ոչ Փորմուլյար վիպագրության՝ ուղղորդված է ժամանցը ապահովագրելուն, ահա այս պատճառով էինք նաև արձանագրում, որ թերթոնի կառույցում տեղի է ունենում որոշակի ապապատմականացում և ապատցիալականացում: Ասել է թե թերթոն վեպի շրջարկում իրականը, վավերականը նպատակառուղիված են ժամանցն ապահովելուն, իսկ ժամանցն էութենորեն ապապա-

մական, ապասոցիալական է, այլապես ժամանց չէ:

Այս խորքին խիստ ուշագրավ են Օտյանի «Մեր երեսփոխանները» դիմանկարների շարքի և վեպի միջդրութենական առնչությունները: Եթե դիմանկարներում նրա վեպերի շատ գործող անձինք (Զոհրապ, Շահրիկյան, Վարդգես, Սարգիս Սվին, Վահան Թեքեյան, Վուամյան, Արամյան) իբրև կերպար ըստ ամենայնի բացահայտված են, այսինքն՝ դիտելի են «նորմատիվ» գրականության կերպավորման տիրույթներում, ինչպես օրինակ Հարություն Շահրիկյանի դոն կիխոտյան, կամ Վարդգեսի հախուռնության<sup>84</sup> նկարագրում վերհանվում է նրանց մարդկային ողջ խորքն ու տարողությունը, ապա թերթոն վեպերի համարնագրում նրանք ընդամենը ժամանցն ապահովող գործառություններ են և ոչ ավելին: Թերթոնի ընթերցողին հետաքրքրում է միմիայն այս անձանց դերակատարությունը ժամանցի պարագրկումներում՝ լինի տակավին անհայտ լրտեսին վնասազերծելը, պատկան մարմիններում հանդես գալը, հետապնդումը, թե փորձությունը: Նույնը նրա նամակներում հիշատակված բազմաթիվ անունների և իրադարձությունների դեպքում: Այսպես օրինակ, 1896-ին Արփիար Արփիարյանին հասցեագրած նամակներում Օտյանը հիշատակում է բազմաթիվ գեմքեր ու դեպքեր (օրինակ, Պոլսից իր փախուստի հանգամանքները, լրտեսների, զեղափոխականների)<sup>85</sup>, որոնք հանդես են գալիս նրա թերթոն վեպերում՝ կրկին ժամանցն ապահովող գործառություններով միայն:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ թերթոնի շրջարկում non fictionի սկզբունքը զուտ ժամանցայնությունն ապահովագրող երեսույթ է: Վավերական գործող անձինք, իրադարձությունները ժամանցն ուղղորդող դերակատարություն ունեն: Մեկ օրինակ բերենք «Նոր հարուստներ» վեպից. «Գասպար Էֆինտի հաւատարիմ ընթերցող Բիւզանդիոնի, այսպէս գոց ըրած էր անգղիերէն մէկ քանի ասացւածքներ, Բիւզանդ Քէչեանի խմբագրականներէն քաղուած, զորս կը գործածէր երբեմն յարմար և յաճախ անյարմար կերպով»<sup>86</sup>:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև թերթոն վեպի ստեղծումի եղանակին, ինչը «նորմատիվ» վիպագրության ստեղծման եղանակից նույնպես արմատականորեն տարբերվում է և իր հերթին պայմանավորում ոչ միայն «ժամանցային» և «լուրջ» վիպագրությունների հակոտնյա լինելը, այլև կողմնակիորեն փաստարկում վերեռում բերված մեր տեսակետները թերթոն վեպի հերոսի և իրադարձության մասին: Հետազոտողները, Հակոբ Սիրունուց սկսյալ, միաբերան մատնանշում են Օտյանի «անփութությունը». «Ու կը գրէր առանց նօթի, մտքին մէջ միայն շինած յատակագիծը: Նոյնիսկ յաճախ այդպէս կը գրէր երկար վէպերն ալ, մանաւանդ անոնք զորս օրին կուտար իբր թերթօն, երբեմն մոռնալով նոյնիսկ նախապէս գրածը: Կը պատահէր յաճախ, որ ամիսներ անցնելէն յետոյ կը շփոթէր իր հերոսները, անոնց ողջ կամ

84 Ե. Օտեան, «Մեր երեսփոխանները», էջ 24-25, 28:

85 Տե՛ս, օրինակ, Ե. Օտեան, «Նամակներ», էջ 36, 38:

86 Տե՛ս «Վերջին լուր», Կ. Պոլսի 1919, № 1572: Ուղղորդող դերակատարության ուշագրավ անդրադաների ենք հանդիպում «Տասներկու տարի Պոլսեն դուրս»-ում: Օրինակ՝ «Գործի նարդիկ» վեպի ընդհատման պատճառների հատվածում: (Օտյան, Ե՛ֆ, հտ. IV, էջ 213):

*մեռած ըլլալը»<sup>87</sup>: «Հիշողության կորուստների» այս արտահայտություններն ի տարբերություն «նորմատիվ» վիպագրության, թերթոն վեպի համար կրավորական են, քանի որ չեն խաթարում, սասանում թերթոնի կազմաբանությունը:*

Էականը կազմաբանական շեղում չանելն էր, այս դեպքում լիովին կարելի էր ապավինել նաև հիշողության, մըտքի մեջ ամրագրված հատակագծին, հատկապես եթե նկատի ենք ունենում, որ խոսքը Օտյանի պես նուրբ տեխնիկա ունեցող թերթոնագրին է վերաբերում: Օտյանի վիպագրության շրջարկում «Հիշողության ոչ մի կորուստ» չի խաթարել թերթոնի հությունը, տառացիորեն բոլոր «չփոթությունները» կրավորական են: Այսպես օրինակ՝ «Տոքթոր Լևոն» («Դատաստանական խորհրդի առջև») վեպի ֆինալում Աննան Վերգինի դուստր է դառնում, երբ վեպում Աննան Վերգինի քույրն էր<sup>88</sup>: Այս թերթոնային «Հիշողության կորուստ», սակայն, դույշն-ինչ ազդեցություն չի թողնում ստեղծագործության ինքնության, կոլիզիայի, ինտրիգի, առհասարակ ժամանցայնությունն ապահովագրելու վրա:

Թերթոն վեպին բնորոշ են այսպես կոչված մայր իրադարձությանը, հիմնական պատմությանն ագուցվող լրացրուցիչ, միջանկյալ դեպքերի պատումային շերտերի մեծ հաճախականությունը, դիպվածով շրջառման մեջ մտնող նամակների, տարբեր փաստաթղթերի «պատումաստեղծ տանողները», հերոսների հատկանիշների հեղինակային թվարկման սկզբունքը, ինչից հետո գործող անձը դրսելովում է միայն թվարկած հատկանիշների պարագրկումներում («Թիվ 17 խափիեն», «Հայ տիասրորան», «Կանաչ հովանոցով կինը», առհասարակ ավելի գործածական թերթոն ցիկլիկ վեպերում) և անշուշտ որպես կանոն բոլոր գործերում առկա վերջաբանները ամփոփող-հավաքագրող գործառություններով:

Օտյանի ստեղծագործությունների, հուշագրության, նամակների, հոդվածների շրջարկում, թեև քիչ, սակայն հանդիպում ենք թերթոնին առնչվող որոշ սկզբունքների: Դրանց գերակշռող մեծամասնությունը վերաբերվում են այս կամ այն ստեղծագործության հրատարակության պատմությանը: Այսպես է, օրինակ, «Գործի մարդիկ» և «Պրոպագանդիստը» վեպերի պարագային<sup>89</sup> 1900 և 1901 թվականներին Արփիար Արփիարյանին հասցեագրած մի քանի նամակներում:

Ինչպես արդենք նկատել ենք, Օտյանը չափազանց ժլատ է իր սկզբունքները անխառն հրապարակելիս: Ավելի շատ դրանք տարրալուծված են նրա ստեղծագործություններում: «Ինչ երևակայութիւն, նստած տեղդ վէ՞պ կը շինես, — «Նոր հարուստներ» վեպի հերոսներից Արամը հարցնում է Անժելին, — կ'երևայ որ կարդացած թերթօններդ միտքդ պղտորեր են» (Անժելը Արամի ամուսնության մեջ խորհրդավոր, գաղտնի բան էր տեսնում): Եվ կամ նույն Արամը, դի-

87 Տե՛ս «Հայրենակը», Բուտոն, № 9, էջ 43: Սմբատ Դավթյանը գրում է. «Ժամանակի համար օրը օրին կը հասցնէ «Ես դորսեցի չեմ առներ» վէալը, որուն թելը շատոնց կորսնցուցած է» («Մեր երեսփոխանները», էջ 164):

88 Տե՛ս «Տք. Վարդան», էջ 190-191:

89 Տե՛ս Ե. Օտեան, «Նամակներ», էջ 147, 148, 149, 153, 154: «Մեր երեսփոխանները» դիմանելկարների շաբթում Օննիկ Չիքթե-Սարաֆի «Միամիտի մը արևածները» վեպին անդրադանալին («Մեր երեսփոխանները», էջ 99) կրկին սահմանափակվում է միայն գործի ընդհանուր արժեկումով:

մելով՝ Անժելին, ասում է. «Կատարեալ թերթօնագիր մը դարձեր ես, գիտե՞ս, ըստ խնդալով: – Ի՞նչու համար, – հարցուց Անժէլ: – Պատմութիւնը ամենէն հետաքրքրական կէտին կը կտրես և կ'ըսես «շարունակութիւնը վաղը»<sup>90</sup>: Այս հերոսների երկխոսությամբ արտահայտված անխառն հեղինակային տեսակետը և այն, թե թերթոն վեպը «...պէտք է հետաքրքրական ըլլայ, բարոյալից, զբոսալի, քիչ մը թեթև, երբեմն ծանր ու միանգամայն գրական: Դէպէերը պէտք է արագ-արագ իրարու հաջորդեն, ինչպէս սինէմայի մէջ, երկար նկարագրութիւններ պէտք է չըլլան, ոչ ալ խորհրդածութիւններ: Միշտ պէտք է խօսակցութիւն տեղի ունենայ, որպէսզի ընթերցողը չճանձրանայ: Ջանալու է, որ վեպը վրան բաց չըլլայ, թէկ շատ գոցն ալ հաճելի չէ»<sup>91</sup>, – ըստ ամենայնի գործնականացվել են նրա համապատասխան ստեղծագործություններում:

Մինչև Կոստանդնապոլսից առաջին տարագրությունը Օտյանը գրել և հրատարակել էր «Գործ եփող մը» («Միջնորդ տեր պապան») վեպը, ինչը թերթունագրության բավականին լուրջ հայտ էր: Տասներկու տարվա ողիսականի շրջանում նա ստեղծում է ընդամենը չորս վեպ («Գործի մարդիկ», «Պրոպագանդիստը», «Ազգային բարերարը», «Միքել սիրարկածը»), այս վերջինն ըստ էության առանց փոփոխությունների հրատարակում է նաև 1920-ին): Համապատասխան բաժնում արդեն անդրադարձել ենք վեպի հեղման տարիների ստեղծաբանական, կենսագրական իրողություններին, ուստի հարկ չենք համարում կրկնել: Այստեղ չենք խոսում պատմական իրողություններով պայմանավորված հանգամանքների մասին: Դրանց օտյանագիտությունը բավականին մանրամասն անդրադարձել է՝ փախուստ Պոլսից, թափառումներ Եվրոպայով, Աֆրիկայով ու Ասիայով, հանապազօրյա հացի մտահոգություն: Հաշվի պիտի առնենք նաև այն իրողությունը, որ այդ ժամանակահատվածը խըմբագրական-հրապարակագրական և փոքր արձակի հեղման շրջանն էր: Պարզապես ցանկանում ենք ուշագրություն բևեռել այն հանգամանքի վրա, որ առաջին վեպից հետո զգալի ընդմիջումը անհրաժեշտաբար ենթադրում էր թե՛ կազմաբանությամբ, թե՛ իմաստաբանական ուղղորդվածությամբ և հղացքով կամրջող, ասել է թե՛ նույնական ստեղծագործություն: Ահա և Օտյանը ձեռնամուխ է լինում ըստ էության «Գործ եփող մը»-ի տարբերակի ստեղծմանը՝ «Գործի մարդիկ» թերթունով: Հարկ է ուշագրություն դարձնել վերնագրային լրատվության մեջ գործ միավորի կրկնությանը:

«Ազգային բարերարը» «բարբերի վեպ» է, ինչը «ժամանցային վիպագրության» նախասիրած կաղապարներից է՝ սիրային եռանկյունու մելոդրամատիկ բազմադիտակի պարտադիր առկայությամբ, ամուսնության ինդրի երեկք չժուլացող հանգամանքով: Դրանք արդյունքում առենքում են գործ անողների և գործի կենսոլորտ, գործարարության ֆենոմենի ներկայացման բացառիկ և ընդգրկուն դաշտ, իր ելևէջումներով ու դարձդարձումներով, չդադարող ինտրիգներով և կոլիզիաներով: Հետեաբար, գործի թերթունայնացումը զանգվածային հետաքրքրության և ընկալումի սուբյեկտ է ինքնին:

90 «Վերջին լուր», 1919, № 516:

91 «Արև», Կաթիրն, 1926, հուլիս 12:

Վեպը սկսել է լույս տեսել 1900-1901 թվականներին<sup>92</sup> Արշակ Զոպանյանի «Անահիտ» հանդեսում: Սակայն ստեղծագործության տապագրությունը դադարում է Օտյան-Զոպանյան հայտնի ներհակության պատճառով, որը կապված էր Արփիար Արփիարյանի դեմ «այնքան տգեղ, այնքան անհարկի ու անիրավ»<sup>93</sup> պայքարով: Այդպես էլ ստեղծագործությունն անավարտ մնաց: Անշուշտ հետագայում Օտյանը չանդրադարձավ այս թերթոն վեպին, քանի որ ձեռնամուխ էր եղել «Գործ եփող մը» վեպի երկրորդ՝ «Միջնորդ տեր պապան» վերջինիս տարբերակին, իսկ «Գործի մարդիկը» ըստ էության վերջինիս տարբերակն էր: Ապա և՝ իր թերթոններում շարունակում էր «բարքերի վեպի» հոսքն ուրիշ ստեղծագործություններով («Ընտանիք, պատիվ, բարոյական», «Կավե հերոսներ», «Նոր հարուստներ»): Վերջապես հարկ է նկատի ունենալ նաև, որ նա պարզապես ժամանակ չուներ կրկին «Ազգային բարերարին» վերադառնալու և գործն ավարտելու, քանի որ զբաղված էր նոր թերթոններ ստեղծելով: Այս ստեղծագործությանն այլևս չանդրադառնալը բացատրելի է նաև այն հանգամանքով, որ հեղինակային գիտակցության մեջ առկա էր նշված նույնականությունից նմանակնան անցնելու հասկանալի մտահոգությունը: Մյուս կողմից՝ թերթոնագրության շրջարկում «Գործի մարդիկը» կատարել էր իր թերթս միակ կամրջող գերակատարությունը: Այս խորքին Օտյանի «Անահիտին» աշխատակցելուց հրաժարվելը թերթս ածանցյալ իրողություն կարելի է համարել:

Վեպն ունի «Պոլական բարքեր» ենթավերնագիրը, ինչը գելլարատիվ ցուցանում է «Բարքերի վեպ» լինելու հանգամանքը: Իսկ թերթոն վեպի տիրույթներում բարքագրությունը բնականաբար պետք է կենտրոնանա զանգվածի համար ամենահետաքրքրաշարժ ամուսնության ինտրիգներով առլեցուն պատմություններին: Ամուսնությունն իր բազմաթիվ արկածային, խոչընդոտային տարրություններով, բախումներով, կենցաղային, մարդկային տիպի օպոզիցիաներով, մելոդրամի արտահայտություններով բրտացնում է գործն ու գործի մարդկանց: Հարուստ ու ապահով մարդկանց ինտիմ կյանքի խոհանոցը, որը ընթերցողին պարզում է, թե հարուստները նույնպես վշտանում են (ինչպես է արդի սերիալներում, գործում են ինքնության նույնական կողերը, հիշենք «Հարուստները նույնպես լաց են լինում» սերիալը): Սա մելոդրամատիկ «բարքերի վեպի» զանգվածայնության կարևորագույն նախապայման է՝ անկախ գործի մարդկանց (սովորական մարդկանց) մելոդրամի առկայությունից: Տվյալ պարագային Օտյանը նմանատիպ կաղապարներին բնորոշ «իդեալական-հովվերգական» շերտը չի վիպել, ինչն էլ պայմանավորում է վեպի հստակ այպանող պաթոսը: Եվ ահա կերմերյանների ընտանիքի ֆոնին, որոնք գործի մարդիկ են, խարսխվում է ամուսնության ինտրիգը: Սաթենիկ կերմերյանի ամուսնության հանգամանքը առբերում է Սաթենիկ/Սարբարյան Մարտիրոս աղա-Մելիք-ղուկաս Կորկոտյանց եռանկյունին: Սաթե-

92 Տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1900, №№ 6-12, 1901, №№ 3-5:

93 Ե. Օտյան, Եժ, հո. IV, էջ 213:

նիկը, որ իր հոր՝ Մարկոս էֆենտիի ինքնության ուղղագիծ շարունակությունն է, ամուսնությունը դիտում է իբրև նյութական հնարավորությունները հավելու միջոց։ Ինչպես օտյանական բոլոր «բարքերի վեպերում», այստեղ ևս մատնանշած եռանկյունին հանդիպադրվում է միջնորդների զուգագրությանը՝ Արսեն Կուլյան-տեր Մկրտիչ քահանա։ Ահա և այս միջնորդներն ապահովագրում են ամուսնության ինտրիգը։ Կուլյանն իբրև Սարբերքյանի և տեր Մկրտիչը թշվառ Կորկուտյանցի ներկայացուցիչներ առքերում են բազմաթիվ արգելքներ (մեկ կողմը մյուս կողմի համար) և այդ արգելքների հաղթահարումներ (կրկին փոխադարձաբար)։ Փոխադարձաբար հարուցած արգելքների և այդ արգելքների հաղթահարումների ընթացքում թերթոն վեպի բոլոր գործող անձինք երևան են հանում իրենց կերպարային գործառությունները։ Կուտակելու մարմաջով համակված Մարկոսի պլանը, որ ամբողջանում է նրա հարուստ դառնալու ներփակ հետահայաց պատմությամբ և Սարբերքյանի գործի մարդ, կարողության տեր լինելու պլաններն իրենց կերպարային և դիպաշարային կայուն գործառություններով՝ խաբեության, կըծծիության, հնարամտության, կեղծավորության, հասարակության մեջ փայլելու սաստիկ մղումի, հակառակորդներին չեղոքացնելու ժամանակ անխտրական միջոցների կիրառման, միավորվում են Արսեն Կուլյանի պլանին։ Կուլյանի տիպաժն իր ներուժային հատկանիշներով բացվելու է Օտյանի հետագա թերթոններում։ Նա արկածախնդիր-հնարամիտ-ազգային գործիչի-մտավորականի «նախաձեռն» է թերթոնների համակարգում, որ գրողի ստեղծագործություններում պետք է դառնատարածուն գործառություններից մեկը։ Եվ բնական է, որ նա առավելություն պիտի ունենա թերթոնի շրջարկում տարածուն մյուս գործառությունից՝ ավագերեց տեր Մկրտչից, որը օտյանական միջնորդ տեր պապաների բնորոշ արտահայտություններից է։ Ամուսնության գործի մրցակցությունում տեր Մարկոսը պիտի պարտություն կրեր Կուլյանից, անգամ թշվառ ուսուցիչ Կորկուտյանին իբրև Խամսայի մելիքների ժառանգ և նավթահանքերի տեր խաղի մեջ մտցնելու պարագային (Կուլյանն արդեն նորօրյա մեծահարուստ Սարբերքյանի մորը հաջողեցնում է իբրև ընչազուրկի հուղարկավորել և իր պատրոնին ազատել ծախսերից)։ Սա ամուսնության դրամայի ուշագրավ և կանխորոշող դրսեռումն է։ Թերթոնի շրջարկում գործնականանում է ամուսնության շուրջ Կուլյան-Սարբերքյան և տեր Մկրտիչ-Կորկուտյանց մրցակցությունը, իսկ եռանկյունին օդակող Սաթենիկ Մերկերյանը հոր պես պասիվ հայեցող է։ Ահավասիկ սա է պատճառը, որ թերթոն «բարքերի վեպերին» բնորոշ է սարկաստիկ պաթոսը<sup>94</sup>։ Այս անավարտ ստեղծագործության մեջ մի կողմից շարունակվում են տակավին «Գործ եփող մը»-ի կանխագծած կառույցի, ինտրիգի դրսեռումները, մյուս կողմից դրանք ավելի են ընդլայնվում, բյուրեղանում՝ հայոց թերթոն վեպի համապատկերում դառնալով հիմնական կաղապարներից մեկը (Երվանդ Օտյանից, Երվանդ Թոլայանից մինչև Անտոն Կղնունի)։

94 Ուշագրավ է Սաթենիկի «Միգամածներու կազմությունը արեգակնային դրության վրա» ավարտաճանի նուտքը, որ ողջ վեպի սարկաստիկ-հեգնող պաթոսի լեկտոնտիվն է։ Տե՛ս Ե. Օտյան, «Երկեր», էջ 481-482։

*Օտյանի առաջին տարագրությունն ուշարժան է նրա թերթոն վեպերի մյուս կարևոր կազմաբանական հղացքի գոյավորման առումով։ Նկատի ունենք լրտես-մատնիչ հղացքը, որը նրա ինչպես ցիլիկ, այնպես էլ առանձին թերթոն վեպերի գերակշռող մեծամասնության առանցքն է։ Այս հղացքով են ստեղծվել նրա բոլոր «դետեկտիվ-արկածային», «քաղաքական-ոստիկանական մարտավեպերը»։ Արքիար Արքիարյանի և Լևոն Բաշալյանի՝ Լոնդոնում հրատարակվող «Նոր Կյանք» հանդեսում լույս է տեսնում «Վրեմք», որը մատնություն-մատնիչ-հատուցում-վրիծառու հղացքի առաջին կիրարկումն էր։ Այստեղ ուրվագրվում են հետապնդումների, յուրօրինակ հետաքննության թերթոնային պատումային մոդելներ (Արշակի, Գարեգինի պլաններում)։ Ավրամի տիպաժով հաստատագրվում է մատնիչ-լրտեսների գործառական դաշտը, որ այս տեսակի հետագա ստեղծագործություններում պիտի ընդլայնվի, ընդգրկի գործունեական դաշտ։*

1905-ին Օտյանը գրում է «Ազգային բարերարը», որն ունի «Երգիծական վեպ ազգային կյանք» ենթավերնագիրը։ Անմիջապես արձանագրենք, որ ստեղծագործությանն անդրադառնում ենք այս և ոչ թե «Ծիծաղը Երվանդ Օտյանի թերթոն վեպի համակարգում» բաժնում, քանի որ այն բացահայտորեն «Թաղականին կնիկը» վեպի համառոտած տարբերակն է՝ թե՛ դիպաշարով, թե՛ ինտրիգով, թե՛ թեմատիկ-հղացքային ուղղողդությամբ՝ (երեսփոխանական աթոռակոիվ, ազգային-քաղաքական ակումբների գործունեություն, ազգային ու հանրային զբաղումներ՝ սեփական շահերի և կարիքների համար, հակոտնյախմբեր և անհատներ, սրանց բախումը, պայքարը և այլն)<sup>95</sup>։ Միրունու հետ զրույցներում Օտյանը «Ազգային բարերարը» համարում էր իր հաջողված թերթոններից մեկը։ Ամենայն հավանականությամբ հեղինակային այդ դիրքորոշումն է խթանել թերթոնի ծավալմանը «Թաղականին կնիկը» վեպի տեսքով։ Սահակ էֆենտի Կաչուտերյանի «կեղծ հայ բարերարի», առանց որևէ գործի բարերար հռչակվածի (ինչպես ինքն է բնորոշում Միքայել Կյուրծյանին հասցեագրած նամակում)՝<sup>96</sup> տիպաժը հրաշալի հնարավորություն էր ընձեռում թերթոնի համակարգում ներկայացնելու այն ազգային գործիչների կենսոլորտը, որոնց համար ազգային-քաղաքական կյանքի մեջ լինելը անհատական բիզնես էր։ Այս պարագային բարերարությունը փոխակերպվում է բարերարություն չանելու, հասարակական գործիչ լինելը՝ գործիչ չլինելու։ Այսինքն՝ տեղի է ունենում իրողության իմաստային շրջում։ Եվ ահա այս լյարդի և ստամոքսի հիվանդություններից հալածյալ Կաչուտերյանը Պոլսից Մ. գյուղ փոխագրվելով, այստեղ ազգային-հասարակական բուռն գործունեություն ծավալելով

95 Ս. Մանուկյանն իր ուսումնասիրության մեջ «Ազգային բարերարի» և որոշ վեպերի դիպաշարը ծավալուն մեջբերումներով վերաշարադրել է։ Կարծում ենք, որ դա ավելորդ ծանրաբեռնել է գիրքը (Յուզնն է նաև նյուու օտյանագետների մեջագրություններում), քանի որ խնդրու առարկա գործը մատչելի է այսօրվա ընթերցողին։ Այնուանեներձ, հղում ենք գրականագետին, որը նաև շրջանառության մեջ է մտցրել «Ազգային բարերարին» առնչվող աղբյուրներ՝ մասնավորապես Օտյանի համակը Միք. Կոլոճյանի, «Ազատ բեմի» խմբագրական ծանուցամբ և այլն։ (Ս. Մանուկյան «Երկանդ Օտյան...», էջ 79-89)։

96 «Ազատ բեմ», 1905, դեկտեմբեր 31:

շրջում է բարերարության խորհուրդը, պատուհասում այն՝ բարերարություն չանելով։ Հստ էության ըընտրված՝ թաղական «ընտրվելով» Կաչուտերյանը սկսում է բարերարության իմիտացիայի չդադարող հոպք։ Այս իմիտացիոն շրջարկի մեջ է Մ.-ի ողջ հասարակական ազգային կյանքը՝ 56 ծուխ հաշվող գյուղակը յոթ հակոտնյա կուսակցություններով, նախկին ուսուցիչ Նշանով, Արթին աղայով, հաճի Ագրիպասով, ծերունի Օհան աղայով, Հարմա Արայանով։ Վերջիվերջո Մ. գյուղն իր մարդկանցով, հոգսերով ու մտահոգություններով տարրալուծվում է այդ շրջման մեջ։ Գյուղի կյանքն իր բոլոր դրսերումներով դառնում է իմիտացիա։ Վասն շահի իմիտացիա՝ քաղաքական գործունեության, իմիտացիա՝ տեղական ինքնակառավարման, իմիտացիա՝ բարեգործության, եկեղեցասիրության, փոխօգնության։ Եվ այս խորքում պարուն Նշանի սկզբունքայնությունը, օրինակ, հար և նման Կաչուտերյանի բարերարության, իմաստային շրջման է ենթարկվում, դառնում անսկզբունքայնություն։ Գյուղի բոլոր ինստիտուտները՝ եկեղեցի, դպրոց, այդ իմիտացիայի մեջ կորցնում են իրենց իմաստը։ Տարին մեկ անգամ ոչ բարեգործի դամբարանի մոտ աշակերտների աղոթքը այդ իմիտացիոն կենսոլորտի ավարտաքանությունն է։

«Գործ եփող մը», «Գործի մարդիկ» և «Ազգային բարերարը» վեպերի ձևաբանական-հղացքային դաշտը ընդլայնվեց 1910-ին հեղինակած «Ընտանիք, պատիվ, բարոյական» թերթունում, որը «բարբերի վեպի» կաղապարը հարստացրեց սիրային մելոդրամի տարրերով։ Այս ստեղծագործությունն առաջին ծավալուն թերթոն վեպն է (բաղկացած է տասնվեց գլուխներից ու վերջաբանից)։ «Ընտանիք, պատիվ, բարոյական»-ում դիպաշարը խարսխված է գոյության արժեքային համակարգը պարագրկող ընտանիքի, պատվի և բարոյականի ըմբռնումների հակոտնյա, ճակատող արտահայտությունների հենքին։ Եթե զուկաս էֆենտի կելկիթյանի կենսագործնեությունն այդ արժեքների էությունը փոխաձեւում է դրանց մերժմամբ (կարելի է այսպես անվանել՝ ընտանիքի, պատվի ու բարոյականի ապակառուցմամբ), ինչպես «Ազգային բարերարի» շրջարկում բարեգործության ապակառուցումը, ապա Գարեգինի դիպաշարային դաշտը ներբերում է արժեքային այդ համակարգի պահպանման, դրա կենսական ճշմարտության հանգամանքը։ Բարբերի այս ճակատման խորքին թերթոն վիպում է ներփակ սիրո պատմություններ, բարոյականի ընկալման ու ջատագովականի ծայրագնա դրսերումներ։ զուկաս էֆենտի կելկիթյանը՝ համբավագոր թաղային, մեծահարուստ, հասարակության կողմից բարոյականության տիպարը խտացնող, իր գործունեության առանցքի շուրջ է կենտրոնացնում պատվի, ընտանիքի ու բարոյականի դարձարձումների, փոխաձեւությունների կոլիգիաների ընթացքը։ Նա իմաստային շրջման է ենթարկում ազգի «Երեք հիմերը»՝ եկեղեցին, գերեզմանոցը ու ընտանեկան պատիվը։ Պայմանավորում, այնուհետև հատկանշում Գարեգին-Սաթենիկի, Լևոն Կոկիկյան-Ռոզիկի կելկիթյան (սրան հարակցած Աբգար Սմսարյանի, նրա դուստր Հերմինեի, տեր Միքիաս ավագ քահանայի, Լևոնի մոր՝ տիկին Անթառամի դիպաշարային գործառությունները՝ ամուսնության դիպաշարային կաղապարում) պլանները։

Բարոյականի մետամորֆոզները թերթոնաստեղծ մողել են։ Ֆորմուլա, որը ապահովագրում է ստեղծագործության ինտրիգի ընթացքը։ Բարոյականի մե-

տամորֆոզը սկզբնաղբավելով զուկաս-Սաթենիկ ներհակությամբ և զուկաս-Երանիկ Ամիսյան հարաբերություններով (Հիշեցնենք, որ Երանիկը զուկասի քենին էր, որ գտնվում էր սոցիալական անմիտթար վիճակում և իր քրոջ ամուսնու հոմանուհին էր), Կելկիթյանի սեռական մտահոգվածության պատումային շերտի սաստկացումներով (Շուշանիկի հետ կապված պլանը, անառականոցում դանակահարպելը և վախճանը) վիպագրում է իրապես «Ընտանիքի, Պատիվի և Բարոյականի անջնջելի կոթող մը»<sup>97</sup> բազմաթիվ դարձդարձումներով ու շրջադարձներով։ Դուստրերի հետ հարաբերություններում խստակենցաղ Կելկիթյանը, որ Ռոզիկին ամուսնացնել պատրաստվելիս բարոյական հավատաքննության էր ենթարկում Լեռն Կոկիլյանի տոհմածառը, հմուտ աճպարարի նման կարողանում է Գարեգինին բարոյական աբստրուկցիայի ենթարկել։ Ճիշտ է, թերթոնում, մեկնելով մելոդրամի ոսկյա կանոնից, այդ բարոյական աբստրուկցիայի մասնակիցները (Հաճի Թումբին օրինակ) պիտի միանան անմեղ զոհին՝ (Գարեգին) հակադարձելու և արդարության հաղթանակն ապահովելու համար։

Թերթոնի շրջարկում, սակայն, մետամորֆոզները լրացվում են նաև պատումային ներփակ ուրիշ միավորներով։ Միջնորդ քահանայի կոորդինացիայով ամբողջանում է Լեռն-Ռոզիկ պլանը՝ այս ամուսնությանը նախորդած բազմաթիվ պատնեշների, մրցակցության և արգելքների ընթացքով, որին զուգահեռվում է Սաթենիկ-Գարեգին ամուսնության պատմությունը։ Այսպիսով թերթոն վեպի շրջարկում ամբողջանում են բարոյականի մետամորֆոզները ապահովագրող, միմյանց նկատմամբ ներհակ կերպարներ-գործառությունները։ մի կողմում՝ զուկաս, Միքիաս, Երանիկ, Աբգար Սմսարյան, Անթառամ, մյուս կողմում՝ Գարեգին, Սաթենիկ, Սերգիս, Հաճի Թումբիկ։ Այս միմյանց ներհակ կերպարներ-գործառությունները վեպի շրջարկում անընդհատ միմյանց են բախում բարոյականի ընկալումն ու կենսակերպությունը, ստեղծագործության շրջարկում հընթացս ուրվագրելով տարբեր թաղականների, խմբագիրների, միջնորդների, լյումպեն տարբերի, որոնք իրենց հերթին այդ բախումը, օպոզիցիան հարստացնում են դրսերման նորանոր երանգներով։

Երվանդ Օսյանի բարբերի վեպի խտացումն անշուշտ «Թաղականին կնիկն» է, որը ներժանրային կաղապարների ուշագրավ համադրություն է։ Ստեղծագործությունը «բարբերի վեպին» հարակցել է քաղաքական վիպագրության շերտ։ Այն ըստ էության «բարբագրական-քաղաքական վեպ» է։ Այս ստեղծագործության կառույցում փանչունիականության ոեցեպտիվ-ոեմինիսցենցային դաշտը ցուցահանում է օտյանական թերթոն վեպի գերբնագրի հիմնական հոսքերից մեկը։

Սիրունու հետ զրույցներում հեղինակը առանձնացնում է ստեղծագործությունը։ «Լաւագոյնը անոնցմէ, ըստ իս Թաղականին Կնիկն է, բայց ոչ հատորով տպուածը։ Լմնցած չէր տակաւին թերթոնը երբ աքսորուեցայ։ Վերադարձիս, երկու հրատարակիչներ՝ Ազնաւոր և Բուլատ՝ ուզեցին հատորով տպել։ Ակսաւտպուիլ։ Կէսը տպուելէ յետոյ միայն եկան խնդրելու, որ մնացեալը կրծատեմ։

97 Ե. Օսյան, «Երկեր», Էջ 233։

Արձան մըն է ան, որ խոշոր իրան մը ունի և պօտիկ ոտքեր» (ընդգծումն իմն է – Գր. Հ.)<sup>98</sup>: Օտյանի այս ինքնադատականը վերաբերվում է թերթոնի տեխնոլոգիայի չափազանց հետաքրքրական ևս մի առանձնահատկության: Արդեն արձանագրել ենք, որ թերթոն վեպերի ստեղծաբանական մասնահատկություններից է հորինման հընթացս կերպը: Վեպը դեռ չափարտված՝ սկսում է լույս տեսնել, և հեղինակը տպագրությանը զուգահեռ չարունակում է այն, կամ վեպը ստեղծվում է մաս առ մաս, հատված առ հատված՝ ըստ թերթոնի տպագրության պարբերականության: Այս հանգամանքով է պատճառաբանվում այսպես կոչված հեղինակային «սխալների», «հիշողության կորուստների» իրողությունը: «Թաղականին կնիկը» վեպում Գարեգին Կրիկյանը դառնում է Գարեգին Մարգարյան<sup>99</sup>, ինչն էլ պայմանագորել է նրա բնութագրման տառացի կրկնությանը, կամ Թորգոմի հանրագրության դրվագի կրկնությանը: Սակայն միշտ պետք է նկատի ունենանք այն ելակետային իրողությունը, որ թերթոնի ինքնությունը ենթադրում ու թերապրում է և՛ կրկնություններ, և՛ այսպես կոչված ձգձգվածություն: Բանն այն է, որ պատումային մակարդակն իր բազմապլան ընթացքով (նույն «Թաղականին կնիկը» թերթոնում) ստիպում է վերադարձումներ կատարել: Այդ կրկնությունները ստեղծագործության այս կամ այն դրվագը ընթերցողին վերհիշեցնելու, այս կամ այն կերպարն ու պատումային պլանը վերաակտիվացնելու համար են: Աչա ինչու են թերթոնագիրները նախասիրում «հիշեցման» պատումային կերպը: Մեկ օրինակ բերենք. «Ընթերցողները կը հիշեն անշուշտ, որ Սամիկյան Հաճի Հակոբ աղայի գրագիրը՝ պարուն Գարեգին կիրակի օր մը թողուցինք Գատը-գյուղի շոգենավին մեջ, Հոգեկան խոռվյալ վիճակի մը մեջ:

Այժմ թողով Վարչության երկու պատվիրակները, որ իրենց տեղեկագիրը պատրաստեն հանդարտ մտքով, դառնանք մեր երիտասարդին և տեսնենք, թե ինչ եղավ իր կացությունը»<sup>100</sup>: Այս թողել-դառնալու պատումաստեղծ ընթացքը (այսինքն՝ հիշեցման, հետևաբար «կրկնության» և «ձգձգվածության») բնորոշ է օտյանական թերթոն վեպին, իսկ այս ստեղծագործության մեջ պատումի մայրուղին է:

Վեպի երկրորդ հրատարակությունն ունի ուշարժան «Երկու խոսք». «Այս վեպը, ժամանակակից ազգային կյանքե քաղված, առաջին անգամ իբրև թերթոն հրատարակված է «Ժամանակ» օրաթերթի մեջ: Հիվանդության պատճառով պահ մը ընդհատվելե ետքը, կրկին շարունակված է և երկրորդ անգամ ընդհատված է 1915 ապրիլ 11, ձերբակալություններե ետքը, երբ ստիպվեցա ամիսի մը չափ ծածկված մնալ, հետո վերստին շարունակված է մինչև բանտարկության և աքսորիս օրը և այսպես մնացած է անավարտ»: Նշում է, որ ընթերցողը հետաքրքրությամբ էր կարդում ստեղծագործությունը, և վեպի տիպարները ծանոթ, վավերական դեմքեր են, երկու խոսքն ավարտում է ասելով, թե՝ «...Թաղականին կնիկը հրապարակ կելլե խնամքով սրբագրված վիճակի մեջ»<sup>101</sup>:

98 «Հայրենիք», Բոստոն, 1927, № 9, էջ 38:

99 Տե՛ս Ե. Օտյան, «Երկեր», էջ 379:

100 Նույն տեղում, էջ 292:

101 Նույն տեղում, էջ 234:

Այսպիսով, գործ ունենք միակ վեպի հետ, որին հեղինակը հետագային անդրադարձել է, սրբագրել ու խմբագրել: Սա կարևոր իրողություն է, քանի որ անգամ հեղինակի սրբագրական-խմբագրական միջամտությունից հետո անփոփոխ են մնացել այսպես կոչված թյուրիմացությունները, հիշողության խաթարումները, «կրկնաբանություններն» ու «ձգձգվածությունները»: Հետևաբար հստակ է, որ դրանք չեն փոփոխվել ոչ թե սովորական անուշադրության, անփութության պատճառով, այլ որ թերթոնի ինքնության էատարրեր են: Ասել է թե՝ թերթոն վեպը պետք է ունենա հիշեցումներ, վերադարձումներ պատումային պլաններում, հերոսների գործառությային դաշտի դրսեորումներում, իսկ անունների, ազգանունների շփոթությունը, որ հակված ենք ներբնագրային մակարդակում անունների տարբերակներ անվանել, թերթոնի կազմաբանությունը, պերսոնաժի գործառությունը ոչ մի փոփոխության չեն ենթարկում: Այսպես որ, մեկնելով վեպի ստեղծաբանական-կազմաբանական կերպից և ընթերցման հանձնառությունից, Օտյանը բոլորովին հարկ չուներ Բալզակի նման հերոսների, պատումային դրվագների քարտարան պահելով:

Հար և նման մյուս ծավալուն թերթոն վեպերին՝ «Թաղականին կնիկը» տրոհված է ներփակ ավարտունություն ունեցող հատված-գլուխների և միավորողամբողջականացնող վերջաբանի: Ժամկոչ Վարդանն իբրև ստեղծագործության կոլիզիայի և առանցքային ինտրիգի ելակետ՝ ընտրություններով պայմանավորված կենսոլորտ է ապահովում, ինչի շուրջ հավաքագրվում են քաղաքական պայքարի, բարոյական կերպի խայտաբղետ դրվագներ, որոնք ստեղծագործության շրջարկում միասնականանում են ընտրությամբ («Մարգարյան» և «Պողոսյան» կուսակցությունների ներհակությունը, Շաղիկի ամուսնական անհավատարմությունը, Գարեգինի, մյուսյուր թորգոմի, «Պայքար» լսարանի և «Շանթ» ակումբի հակամարտությունը և այլն): Հստ էության «Թաղականին կնիկը» ընտրություններ կոչվող ֆենոմենի թերթոնն է: Ընտրությունը պայմանավորում է գոյության ընթացքն առանձին մի թաղում, որը ընթերցման դաշտում առերրում է մեր (ընթերցողի) թաղի գոյակերպությունը, այսպիսով ընտրվողների և ընտրողների հակազդեցությունների հսկայական շրջանակով դառնում անբավելի հաճելի ժամանց՝ միմյանց գեմ որոգայթներ, մեկմեկու սնանկացնել, ահաբեկել, միմյանց հոգեկան անդորրը խաթարել, իրար գնելու հաջող ու անհաջող փորձեր: Այսօրինակ կենսոլորտում ինքնահաստատվելու վիթխարի դաշտ է ստեղծվում՝ գլխապտույտ կարիերաներ, գահավեժ անկումներ: Ընտրության տեխնոլոգիաների վեպը «ժամանցային գրականության» պարագրկումներում հույժ հրատապ էր և է (պատահական չէ, որ արդի «Փորմուլյար» մշակույթում՝ կինո թե գրականություն, սա շատ տարածված է), քանի որ բարքագրությունն ընդելուզում է քաղաքականությանը՝ «քաղաքական վեպի» կայուն շրջարկ ու կառույց ստեղծելով:

Մարգար է ֆենտի Սասանյանի և թաղական խորհրդի ատենապետ Պողոս է-ֆենտիի շուրջ համախմբված «Մարգարյան» և «Պողոսյան» կուսակցությունների պայքարը վիպում է ընտրաբաշվի ֆենոմենը: Թաքնված ու ակնհայտ հավակնությունները գաղափարագերծում, ապամիջականացնում են ազգային կյանքի գործուն մասնակցության ողջ ընթացքը («ազգայիննի» լինելն հավա-

սարագոր է միայն վաստակի, հարստանալու, գոյության պայքարում հաստատվելու): Օտյանական շատ թերթոնների նման այստեղ ևս կանանց մրցակցությունն ուղղորդող գերակատարություն ունի: Նվարդ-Շաղիկ մրցակցությունը ուղղորդում է ընտրարշավի վիպումը: Կանանց նպատակասլաց գործունեության տիրույթներում թաղականները խուժում են արարքների, իրադարձությունների դաշտ, ակտիվացնում Ռաֆիկ, Մանուկ աղաներին, լիարժեք ինքնարտահայտման դաշտ ապահովագրում Սափորյանի, Ծրաբյանի հանգույն վարչության պատգամավորներին, մյուսոյւ թորգոմի տիպաժի մտավորական, կրթական գործիչներին: Թերթոնի շրջարկում այս թաղականները, արհեստավորները, պահպանողականներն ու ազատականները, պոտենցիալ փեսացուներն ու հարսնացուները, խմբագիրներն ու գործիչները, հոգեոր դասի ներկայացուցիչները ինքնադրսեռվում են իրեն ընտրական տեխնոլոգիաների բազկացուցիչներ, հարմարվում ընտրության ընթացքին: Բոլոր միջանձնային հարաբերությունները, հոգեբանական վիճակները, խառնվածքներն ու բնավորությունները, պատեհապաշտությունը, հաշվենկատությունը, հնարամտությունը, անզորությունը ընտրության արձագանքներն են, որոնք հաճախ ստեղծագործության շրջարկում հանդես են գալիս հիպերտրոֆիկ պատկերներով:

Անշուշտ, «Թաղականին կնիկը» ստեղծագործության մեջ ընտրության վիպումը փանջունիականության ուեմինիսցենցով թերթոնը դարձնում է բաց համակարգ, քանի որ տակավին «Հեղափոխության մակարույժները» շարքով և «Ընկեր Բ. Փանջունիով» սկզբնաղբած ազգային-քաղաքական-հեղափոխական գործիչների գերբնագիրն այստեղ գտնում է շարունակություն: Գործիչը, հերոսը, հեղափոխականը գործում է ընտրական տեխնոլոգիաների հարցույցում: Կայծունիի և Սուսերյանցի շուրջ համախմբված «Պայքարի» և «Շանթի» անդամները ընտրապայքարում ցուցանում են սկզբունքի, գաղափարի, գործի և գործիչ լինելու, հեղափոխության շրջանակը՝ անսկզբունքայնություն, անդադապարություն, հակահեղափոխություն, փծուն Փրազ ու եղկություն: Թշվառ ժամկոչ Վարդանը կոչնակում է ազգային-հասարակական, ընտանեկան կյանքի եղկությունը:

Ինչպես արդեն արձանագրել ենք, ետեղեռնյան շրջանը երվանդ Օտյանի համար վիպահեղումի արգասավոր շրջափուլ էր: Ցիկլիկ վեպեր, վիթխարի ծավալ ունեցող թերթոններ: Թերթոննագրության այս ժամանակաշրջանը բնութագրական է նաև այն հանգամանքով, որ նա ստեղծում է համաղբական կառույցներ՝ մեկ ստեղծագործության (բնականաբար նաև ցիկլի) տիրույթներում մեկտեղելով ժամըային տարբեր կաղապարներ: Նրա այս շրջանի թերթոն վեպերն արկածային, արկածախնդրական, նժղեհական, բարքերի, դետեկտիվների, քաղաքական և այլ կառույցների համադրություններ են, որոնք նաև ի հաշիվ այս հանգամանքի՝ առավելագույն մասսայականություն էին վայելում:

Այս շրջանի ուշագրավ թերթոններից է «Նոր հարուստներ (Պոլսահայ ժամանակակից բարքեր)» վեպը, որ լույս է տեսել Կոստանդնապոլսի «Վերջին լուր» օրաթերթում 1919 թ.<sup>102</sup>: Ի դեպ, նշենք, որ այս օրաթերթի թերթոնային

102 Տե՛ս «Վերջին լուր», 1919, 24 մարտ, № 1528-4 հոկտեմբեր, № 1690:

բաժինը հիմնականում վերապահված էր Երվանդ Օտյանին: Մի հանգամանք, ինչը հասկանալի է դարձնում «Վերջին լուրի»՝ իր ժամանակի համար բավականին մեծ տպաքանակ ունենալը: Թեև ստեղծագործության ենթախորագրում հեղինակը նշագրել է «բարքերի վեպ», սակայն ստեղծագործությունն ըստ էության պատկանում է թերթոնի համադրական կառուցյին: Առաջին աշխարհամարտի ավարտի և հետպատերազմյան շրջանի բարքագրության առանցքին ընդելուզվել են «քաղաքական-արկածային», «արկածախնդրական», «նժեհական», «մելոդրամատիկ» վեպերի բազմաթիվ տարրեր: Վեպի շրջարկում գործում են բազմաթիվ դիպաշարային պլաններ, որոնք ագուցված են մեկմեկությամարտկանց, քաղաքական անցքերի և գործիչների հսկայական խորապատկեր, 1916-1918 թվականների վավերական դեպքեր և դեմքեր:

Թերթոնաստեղծ Հրամայականը պատերազմի՝ իրու հարստության աղբյուրի և հետպատերազմական «հրաբխային, ժայթքող» կենսուրության վիպումն է: Հիրավի, իր սոցիալ-հասարակական, հոգեբանական, բնագանցական էութենականությամբ դա էներգիայի ծայրագնա վիճակ է, երբ պրկվում են և՛ հասարակական-քաղաքական երևույթները, և՛ մարդկային գոյութենությունը պայմանավորող արտահայտությունները: Մարդկային ու անհատական կեցության բարոյական կանոնները և նորմերը անխարիսար շեղվում են, պարականոնվում են համակեցության «խաղի կանոնները», դավերն ու ծուղակները, սրընթաց վերելքներն ու անկումները, որոգայթներն ու միմյանցից հաշիվ մաքրելը, նպատակին հասնելու միջոցների և արարքների անխորականությունը դառնում են ամենօրյա հաճախանք: Մեկ օրվա տիրույթներում տարուբերվում է մարդկային ճակատագիրը՝ ծայրահեղ հարստությունից մինչև ծայրահեղ թշվառություն: Գոյությունը դառնում է բախտախաղ, բախտախաղյին առօրյա: Ահա թե ինչու այդ կենսոլորտն առկեցուն է բախտախնդիրներով ու արկածախնդիրներով: Գոյությունն ինքնին ծայրագնա ներհակ է: Ահա ինչու թերթոնն անընդհատական որոգայթների հյուսուում է, մատնության ու վրեմինդրության զուգահեռ ընթացականություն, արկած, փախուստ, հետապնդում, որոգայթ, դավ՝ իրենց դիպաշարային լուծմունքներով: Այս համադրության մեջ գոյավորվում և հանգուցալուծվում են սիրային եռանկյունիներ, ապահարզանի պատմություններ, նորանոր ոլորտներին տիրելու պայքարներ: Ահավասիկ «Նոր հարուստների» ընդգրկումը: Բնականաբար այսօրինակ ընդգրկուն դաշտը ենթադրում է պերսոնաֆ-գործառությունների և դիպաշարային պլանների ընդգրկուն դաշտ: Թվարկենք մի քանի կարեորները: Թորոս Պիլմեզյան-Անժել դիպաշարային պլանը (նորահարուստ պարոնը Էսայան վարժարանն ավարտած օրիորդին ինչպես է դարձնում պոռնիկ), Անժել-Արամ Կերյան դիպաշարային գիծը (Էսայանում Անժելի ընկերն էր վերջինս ու սիրում էր օրիորդին և ըստ էության դառնում է նրա կավատը), Գասպար Կելկիթյանի պլանը՝ Գասպար-Անժել հարաբերություններ, կնոջից՝ Ագամիից ամուսնալուծություն, փաստաբան Նշան Տերտելյանի տարբեր տրամաչափի շահատակությունների պլանը (Հընթացս արձանագրենք, որ այս կերպար-գործառությունը նույնականությամբ կրկնվում է

«Մեր ազգային ճիները կամ կավե հերոսներ» վեպի շրջարկում), Անժելի կողմից նոր հարուստներին ցանցելու պատմությունները, Շավարշ Կերունիի (թերթոնում նա այսպես կոչված հեղինակային «մոռացկոտության, անփութության» պատճառով հետագայում<sup>103</sup> դառնում է Առկերունի) արկածախնդրությունների, շառատանության, դյուրին վաստակելու պլանը, Արամ-Էռժեն սիրավեպն ու ամուսնությունը, աքսորից Հակոբի, Արմենակի փախուստի դրվագները, Շավարշի մատնիչ դառնալու դիպաշարային հատվածը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նոր հարուստները», հար և նման երվանդ Օտյանի մի շարք վեպերին, այսօր մատչելի չէ ընթերցող հանրությանը, նպատակահարմար ենք գտնում համառոտ ներկայացնել ստեղծագործության դիպաշարը: Հավելենք միայն, որ ստեղծագործությունը բաղկացած է քսան գլուխներից և վերջաբանից, որը, ինչպես այն բոլոր թերթոններում, որտեղ առկա է կառուցվածքային այս միավորը, դիպաշարային պլանները հավաքագրող-ավարտաբանող դերակատարություն ունի:

Գասպար Կելկիթյանը պատերազմի շնորհիվ միանգամից հարստացել է (գերման գորքերի ինտենդանտությանը կաշառելով՝ հաջողեցրել առևտրական այնպիսի գործարքներ, որոնք նրան անմիջապես գերչահույթներ են բերել) և վայելում է այդ հարստությունը՝ սիրային բուռն արկածներով: Թորոս Պիլմեղյանի միջոցով ծանոթանում է Անժելի հետ: Վերջինս դառնում է նրա հոմանուշին: Գարիկ Զախարյանն ամեն գնով կրկին հարստանալու մարմաջով է համակված: Նպատակին համեմ դամար բուռն գործունեություն է ծավալում: Պառմին վարձով սենյակ է տրամադրում, ըստ էության իր քըռջ աղջիկ էոժենին հանձնում այս գերմանացի սպային, որպեսզի նրա միջոցով կարողանա դյուրին վերահարստանալ: Բնականաբար այս իրողությունը Պոլսով մեկ բամբասանքների ալիք է բարձրացնում, ինչը շատ է ուրախացնում Գարիկի մրցակից Գասպարին: Այն բանից հետո, երբ վերջինս հրաժարվում է Զախարյանին վերադարձնել 800 սուկի պարտքը, Գարիկը որոշում է վրեժխնդիր լինել և մի միջնորդ ու կավատ կնոջ միջոցով, որի անունը Վարդառ է (ի գեպ, միջնորդ կանանց գործառության բնութագրական դրսեսորումներից մեկը օտյանական թերթոն վեպերի շրջարկում), Կելկիթյանի կնոջը՝ Ագապի հանրմին, տեղեկացնում է ամուսնու և Անժելի կապի մասին: Անժելը հրաշալի օգտագործում է Գարիկի և Գասպարի հակամարտությունը և Արամի շնորհիվ նրանցից դրամ է շորթում: Գասպարն Արամից վրեժխնդիր լինելու համար նրան ամբաստանում է իրեկ քաղաքական անբարեհույսի: Արամին ձերբակալում են, սակայն հնարամիտ Անժելը կարողանում է Գարիկի օգնությամբ Արամին ազատել: Շավարշ Կերունին (Առկերունին) Սերգիս Կամկարյանից խաբեռությամբ դրամ է կորզում՝ վերջինիս բանակից ազատելու պատրվակով: Սակայն թոռը բժշկին հանձնում է միայն կեսը, ապա Արամին առաջարկում է իբրև վրեժխնդրություն Գասպարին շանտաժել և նրանից հսկայական գումար շորթել: Իսկ Ագապին ընտանեկան ամենօրյա սկանդալների պատճառով որոշում է ամուսնալուծվել: Վարձում է փաստաբան Նշան Տերտերյանին, որն սկսում է հաջողությամբ իրագործել «փող

103 Թիվ 1557-ից սկսած:

պոկելու» գործընթացը: Գասպարի սպասուհի և հոմանուհի Արշալույսին 500 ոսկի տալով՝ Գաբրիկը նրան համոզում է դառնալ գերման հազարապետ Կեր-հարդի սիրուհին, որպեսզի այս միջոցով նոր հարստության աղբյուրներ գտնի: Այս ընթացքին նա Արամին համոզում է 7000 ոսկով ամուսնանալ էոժենի հետ, որը հղիացել էր Պառմից, իսկ Անժելը կարողանում է Կերհարդի խողովակով գումարներ հայթայթել՝ ամեն անգամ Գաբրիկից պահանջելով ու ստանալով իր բաժնեմասը: Գաբրիկ-Գասպար հակամարտությունը շարունակվում է փոփոխական հաջողություններով: Այս հակամարտության մեջ ներքաշելով բազմաթիվ անձանց՝ խմբագիրներ, ազգային ժողովի երեսփոխաններ, հոգեորականներ, տարբեր տրամաչափի բախտախնդիրներ ու արկածախնդիրներ: Ահա և Գասպարն իր լոկալ պարտություններից մեկից հետո Գաբրիկին ու Արամին պատմում է Շավարշ Կերունիի շահատակությունների մասին, և երբ վերջիններս նրան վոնդում են, Շավարշը գտնում է նոր հարուստի՝ Եփրեմ էֆենտուն, ու սկսում նրանից դրամ կորզել՝ ի մասնավորի բեմադրելով Եփրեմի որդի Հակոբիկին աքսորից ազատելու գործողությունը: Իսկ Հակոբին ընկերոջ հետ հաջողվում է փախուստի դիմել Սիրիայից ու բազում խոչընդուներ հաղթահարելով՝ Պոլիս վերադառնալ: Անժելին որպես հարուստ փեսացու ներկայանալով՝ խաչագող Մարտիկը կարողանում է մեծ գումար վաստակել: Գաբրիկը ու Գասպարը հաշտվում են, քանի որ գերմանացիները հեռացել էին և համատեղ սկսում են համագործակցել թուրք սպաների հետ՝ հարստության նոր խողովակներ գտնելով: Շավարշը իր արկածախնդիրը ընկերների հետ շարունակում է շահատակությունները, սակայն խցարգելվում է ու բանտից ազատվելու համար սկսում է մատնություններ անել: Բազում արկածներից հետո ի վերջո հաջողվում է չեղորացնել Շավարշին ու Գրիգորին: Գասպարը ընտանիքին լքում ու իր սպասուհի Արշալույսի հետ փախչում է Եվրոպա:

Ահա այս հարատե ու ամեն գնով հարստանալու շրջանակում, հանուն հարստության գործողությունների, արարքների անխտրական միջավայրում Օտյանը ստեղծում է հրաբխալին ժամանակների թերթոն վեպը:

Բարքերի վիպումի թերթոնային համագրությունները (համագրություն՝ արկածախնդրական, մելոդրամատիկ ներժանրային կաղապարների առումով) 1920-1922 թվականներին շարունակվեց «Զաքըր Ավրամ» անցումային ձևով ու հատկապես «Կավե հերոսներ կամ մեր ազգային ճիշճիները» վեպով<sup>104</sup>: Այս ստեղծագործությունը «բարքերի թերթոնի» վերջնականացումն ու ավարտն է Երվանդ Օտյանի վիպագրության համակարգում: Պատահական չէ, որ վեպն իր գիպաշարային ուղղվածությամբ ըստ էության «Թաղականին կնիկը», «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Նոր հարուստներ» վեպերի մետաղիպաշարի ընդհանրացված պատճենումն է: Այս հանգամանքով է պատճառաբանվում այն իրողությունը, որ Օտյանի ժամանակակիցը «Կավե հերոսները» համարում է շատ արժեքավոր «...և պիտի ափսոսալ, որ մինչեւ այժմ մնացել է թերթի էջերում»<sup>105</sup>: Ստեղծագործությունն ունի «Արդիական մեծ վէպ պոլսահայ կեան-

104 Տե՛ս «Վերջին լուր», 1921, 1922 թվականներ:

105 Գառնիկ Ստեփանյան, «Հուշեր Երվանդ Օտյանի մասին» («Ե. Օտյանի հիշատակին», էջ 139):

քէ» ենթավերնագիրը։ Ծագալուն վեպի նշագրությունը ոչ միայն թերթոնի հանդեպ եղած պահանջարկի մեծացումն էր, ընթերցողին անհրաժեշտ նախապատճենությունը, այլ նաև «բարքերի վեպի» հեղինակային մետաղիպաշարի հուշումը։ Ստեղծագործությամբ ականատեսն ենք ոչ միայն հեղինակի ներժամանրային այս կաղապարով ստեղծված գործերի դիպաշարերի ընդհանրացումավարտաբանությանը, այլ նաև պերսոնաֆ-գործառությունների ընդհանրացված պատճենմանը թերթոնի միջգրային պարագրկումներում։ Ավելին, «Կավե հերոսները...» և «Թիվ 17 խափիեն» այն գործերն են, որոնք ուղղակիորեն ապահովագրում են հեղինակի ժառանգության գերբնագրի արտահայտություններից մեկը։ Նկատի ունենք ազգային-հասարակական գործիչների գեղարվեստական դիմանկարները, որոնք շարունակվում ու փոխլրացվում են «Մեր երեսփոխանները» շարքով ու խնդրո առարկա վեպերով։ Ազգային, հասարական-քաղաքական գործիչի վիպումը դիմանկարներով ու թերթոն վեպերով Օտյանի գեղարվեստական համակարգում ստեղծում է մի գերբնագիր՝ անցնելով ժանրային, միջամանրային սահմանները։ Ազգային գործիչի պատմությունը ամբողջականանում է վեպի, դիմանկարի, արձակի փոքր ձևերի գերբնագրում։ Այս գերբնագրի ավարտաբանության համար թերթոն վեպի շրջարկում սիրավեպերի, ամուսնության կողիզիաների, միջնորդ կանանց բանսարկությունների, դավերի, խայտաբղետ քսությունների ու զրապարտությունների, «Մեծապատիկ մուրացկանների» տարբեր ռեմինիսցենցների, ապականության, «փարայով ամեն բան ընելու»<sup>106</sup>, Փանջունու և փանջունիականության կրկնօրինակ Շատախսոսունու գործառությունների, ընտրությունների և ընտրարշավի տեխնոլոգիաների բնագրաստեղծ տարերքը պայմանավորում է ստեղծագործության դիպաշարի պլաններն ու խնդրիզը։

Քանի որ վեպի դիպաշարը նույնությամբ կրկնում է օտյանական «բարքերի» (համադրական) թերթոնների կառույցը, նպատակահարմար չենք գտնում այն մանրամասնությամբ վերարտադրել։ Սոսկ արձանագրենք, որ Վահան-Մաննիկ նախապատճառատվող ամուսնությունը դառնում է հասարակության բավականին մեծ շրջանակի մրցակցության, ներհակության, բախման և պայքարի առանցք։ Այս ֆոնին ուշագրավ են ազգային քաղաքական խորհրդի բուռն քննարկումները՝ կապված Վահանի ու հատկապես Մաննիկի ու Վահանի մրցակից արկածախնդիր ժյուլի արարքների հետ։ Այս քննարկումների ուղղվածությունը, ազգայինների շահերով պայմանավորված պահպանի դարձարձումներն ու արմատական փոփոխությունները թերթոն վեպի շրջարկը հարստացնում են ներփակ դիպաշարային պլաններով (ինչպես օրինակ «Փետուրի» խմբագիր Շարայանի, Տիրանի ամուսնալուծության, դատաստանական խորհրդի դրվագները, կովկասահայ բախտախնդիր Նիկոլ Շահշամփուրյանի, Մանկասարյանների ընտանիքի գործունեությունը և այլն)։ Այսպիսով ընդհանրանում ու բյուրեղանում է պոլսական «բարքերի վեպը»։

Վիպահեղման այս փուլում երվանդ Օտյանի գրած ոչ բոլոր վեպերն են, ցավոք, այսօր մատչելի։ Առարկայական պատճեններով մենք չգտանք «Տաբի-

106 Տե՛ս «Վերջին լուր», 1922, № 2431:

թա», «Մարգարտե մանյակ» և «Հայ կուլտուրականները», քանի որ, ցավի սիրտ, պարբերականների հավաքածուները Հայաստանում ամբողջությամբ չկան: Պակասում են բազմաթիվ համարներ, կամ ընդհանրապես չկան մեզ մոտ (ինչպես «Մարգարտե մանյակը»): Սակայն մատչելի են 1922-1925 թվականների նրա երկու վեպերը՝ «Մատնիչը», «Հայ տիասբորան», որոնք մեզ հնարավորություն են առթում արձանագրելու, որ Օտյանն ըստ էության, առանց որևէ խոտորման, էական հավելման շարունակում և կրկնում էր իր թերթոն վեպերի կառույցները:

Հեղափոխությունը, հեղափոխականությունը և հեղափոխականները օտյանական «քաղաքական դետեկտիվ», «արկածային», «մարտավեպերի» հիմնական առանցքներից է՝ թերթոնների շրջարկում հաճախ ընթերված լրտեսների, մատնիչների և մատնության ու դավաճանության առանցքին: Կարող ենք առանց դույզնինչ վերապահության արձանագրել, որ երվանդ Օտյանի մետարնագրի մյուս գերակայությունը հեղափոխականություն-մատնություն գուգահեռն է, որը թերթոնից թերթոն է անցնում, հյուսում է նմանատիպ բազմաթիվ կողեղիաներ, պերսոնաժ-գործառություններ: Ահա և Միքայել Կյուրծյանին 1909-ի հուլիսի 24-ին հասցեագրած նամակում Օտյանը ի շարս այլ հարցերի գրում է. «Ես կը փափաքէի, որ «Շիրակը» գոնէ քանի մը ամիս ևս շարունակուի, տեսնելու համար, թէ սա սկսած վէպիս մէջէն ինչպէ՞ս պիտի ելլամ»<sup>107</sup>: Վիպասանը նկատի ուներ «Մատնիչ» ստեղծագործությունը, որ այդպես էլ «Շիրակում» անվարտ մնաց: Հեղինակը կրկին ձեռնամուխ եղավ վեպին՝ 1922-ին այն ամբողջությամբ տպագրելով<sup>108</sup>:

Այս թերթոնի առանցքը մատնիչին քողազերծելու հոսքն է և Սեդրակի դիպաշարային պլանով՝ մատնիչ դառնալու հանգամանքների վիպումը (ծանր, դաժան մանկություն, նյութական նեղություններ և անձկություն, փառատենչություն, նախանձ, նարդիկի կողմից մերժված սեր ու նրան տիրելու սևեռուն գաղափար): Հեղափոխական Տրդատը ձերբակալվում է և իմացածը հայտնում: Արամը որոշում է, որ Սմբատի բնակարանից ցրվեն՝ հանձնարելով Սմբատին ու Խևուկին հետախուզել, սակայն տունը շրջապատված էր: Արամի խումբը կապկում է Կարապետին և հույն Քաթինային երկու ոսկի տալիս ու խոհանոցից պարտեզ անցնելով փախչում: Երբ ոստիկանները ներս են մտնում ու նրանց չեն գտնում, սպառնում են, և Կարապետն ամեն ինչ պատմում է: Կարապետին ու Քաթինային ձերբակալում են: Արամը իուլանդացի տիկին Տիրքի տանը պատսպարվել էր ու մտմտում էր, թե արդյոք մատնիչն իրենց խմբից էր: Գալիս է Խևուկը ու նրան հայտնում, որ խմբի մյուս անդամներից Տիրանը, Սմբատը և աղջիկները ապահով տեղերում են: Արամը նրան հանձնարարում է, որ ընկերներին զգուշացնի մի քանի օր «աներեւութ» լինել, երբ Խևուկը դուրս է գալիս, նրան ձերբակալում են:

Այնուհետև գործողությունների մեջ է մտնում Երկայն Մարտիկը: Նկարագրվում են նրա հեղափոխական դառնալու հանդամանքները: Ահա և վեր-

107 Ե. Օտեան, «Նամակներ», Էջ 201:

108 Տե՛ս Ե. Օտեան, «Մատնիչը. վէպ ազգային յեղափոխական կեանքն», Կ. Պոլիս, 1922 թ.:

ջինս Նարդիկին հայտնում է, որ շուտով Սիմոնին ազատելու են: Հանդիպում է Սեղրակին, նրան պատմում (նրանք վաղուցվա ընկերներ էին) առաջիկա գործողության մասին, սակայն Սեղրակի պահվածքը նրան տարօրինակ է թվում և որոշում է ծածուկ հետևել վերջինիս: Այնուհետև դիպաշարը կենտրոնանում է Սեղրակի մատնություններին, որոնց պատճառով ձախողվում է գործողությունը: Հեղափոխական ընկերների կասկածներն ավելի են ահագնանում: Վերջին վերջո ոստիկանությունը նրա մատնությամբ ձերբակալում է հեղափոխական երիտասարդներին: Սեղրակը Նարդիկին փորձում է համոզել փախչել Պոլսից, սակայն օրիորդը, որ վերջնականապես համոզվել էր, թե իր ընկերների գժբախտության պատճառը Սեղրակի մատնությունն էր, ատրճանակով սպանում է նրան՝ վրեժինդիր լինելով իր սիրած մարդու, գաղափարի ու գործի համար: Ինչպես մյուս թերթոն վեպերում, հանգուցալուծումն իրականացվում է մատնիչի ու մատնության պարտադիր հատուցմամբ:

Երվանդ Օտյանը Կահիրեկի «Արև» օրաթերթում 1924-ի հոկտեմբերից մինչև հաջորդ տարվա հոկտեմբերը տպագրեց իր վերջին «Հայ տիասբորան. ժամանակակից աստանդական կեանքէ» վեպը<sup>109</sup>: 1924-ի սեպտեմբերի 18-ին Արշակ Ալպյանցիանին հասցեագրած նամակում Օտյանը գրում է. «Թերթօնի մասին պատրաստ եմ ձեզի գոհացնելու՝ ձեր վճարումի պայմաններուն համեմատ: Արդէն ճիշտ ձեր ուղածին պէս վէպ մը ծրագրած էի, թէև տակաւին չեմ սկսած գրել, բայց հիմակ, անմիջապէս, պիտի սկսկիմ աշխատութիւն և կը յուսամ, որ մինչև տասը օր ձեզի բաւականաչափ ձեռագիր կրնամ հասցնել:

Ծանուցումը կրնաք ընել երբոր ուգէք: Վէպին անունը պիտի ըլլայ «Հայ Տիասբորան». Ժամանակակից վէս հայ հալածական կեանքէ, որուն գլխաւոր գրուագները տեղի պիտի ունենան Պոլսի, Պուլկարիա, Ցունաստան, Ռումանիա, Եգիպտոս և Սուրբիա: Միայն թէ բաւական երկարաշունչ բան մը պիտի ըլլայ... բայց կը կարծեմ, որ հետաքրքրութեամբ պիտի կարդացուի»<sup>110</sup>: Ինչպես նկատում ենք, Օտյանը հալածական կյանքն խորագիրը փոխարինել է աստանդական կյանքեռով, ինչը միանդամայն արդարացված որոշում էր, քանի որ թերթոնի արկածային, արկածախնդրական-նժդեհական կառույցում հարակցելով իր նախասիրած «սիրավեպի», «բարքերի», «քաղաքական մարտավեպի» տարրերը՝ վիպասանը արկածախնդիրների, բախտախնդիրների, կենցաղագրության, անընդհատ արկածների ու խոչընդուների կենսոլորտում առկայացնում է անընդհատ շարժման մեջ գտնվող հավաքականության թերթոնը: Այս անընդհատ շարժումը, տեղափոխությունը (անկախ պարտադրված կամ կամավոր լինելու հանգամանքից) «ժամանցային գրականության», թերթոն վեպի բարերար դաշտ էր, քանի որ տեղափոխությունն ինքնին ինտրիգային էություն ունի (պերսոնաժների ճակատագրերի, գեպքերի, իրադարձությունների դարձդարձումների առումով նաև): Ահա և Օտյանը, ստեղծագործության շրջարկում օգտագործելով իր նախորդ թերթոնների բազում դրսերումներ, վկայում է հարակա շարժման

109 Ինչպես Աշել ենք, ստեղծագործությունը 1999-ին առանձին հատորով լուս է տեսել Երևանում ԳԱԹ հրատարակչության կողմից և պայոր մատչելի է ընթերցողին:

110 Տե՛ս Ե. Օտեամ, «Նամակներ», էջ 20:

մեջ գտնվող գոյակերպությունը (պատահական չէ, որ «Հայ տիասքորայում» գտնում ենք «Տոքտոր Լևոն», «Կանաչ հովանոցով կինը», «Թաղականին կնիկը», «Նոր հարուստներ», «Ես դուրսեցի չեմ առներ» վեպերի դիպաշարային պլանների, գործառություն-պերսոնաժների բազմաթիվ հեղինակային ռեմինիսցենցներ): Թերթոն վեպի ինտրիկի շրջարկն ամբողջացնում են Շավարշ Մուկենցի (արկածախնդիր, «Ազգային ճիշտ» գործառություններով), Մըգմըզյան թագփոր էֆենտիի, «Լապտեր» թերթի տնօրեն Արշամ Պերճյանի, Նվարդ-Տիրան հարաբերությունների, Զապելի, Տիկին Թաթիկյան-Գասպար, Ամբրոսիոս էֆենտիներ հարաբերակցության, սփյուռքյան բարեգործական ձեռնարկումների Փոնին ծանոթություններ հաստատելու, բամբասանքների, կենցաղային դավերի, հպանցիկ սիրաբանությունների ներփակ դիպաշարերը։ Նծդեհական կառույցն հատկապես ըստ ամենայնի դրսեռորդում է Արշակի հայաստանյան ողիսականի պլանով, ինչն իր յուրօրինակ ստեղծաբանական տարբերակն է ունեցել նշան Պեշիկթաշլյանի «Սադայելին պոչին ու շուրբին տակ» վեպի Տոմպազյանի հայաստանյան արկածներում։

Թերթոն վեպի շրջարկում որոշարկված դիպաշարային պլան է Աղետի վկայությունը, ինչը ուղղակիորեն կամ միջնորդավորված ներթափանցված է բոլոր պերսոնաժ-գործառությունների պատմություններին։ Այս համընդհանուր բարոյալքման, արկածախնդրության և ուժացման, մակաբուծային գոյության շրջանակում թերթոնը զուգահեռում է նաև Գարեգինի դիպաշարային պլանը, որ մելոդրամատիկ հանկերգով վիպասանի «իդեալի» տեսլականն է։

\* \* \*

Ժանրի «Ժամանցային» արտահայտությունները հարուստ են ոչ միայն ներժանրային բազմաթիվ կաղապարներով, այլև վիպաշարերով (ցիկլերով)։ Այս պարագային անշուշտ գործում են միևնույն «թերթոնայնության» ինքնացնող ձևական և իմաստային հայտանիշները։ Իրականության վիպման ծավալաժամանակային մեծ ընդգրկունությունը, կոլիզիաների և ինտրիկների անընդհատականությունը, ընթերցման տիրույթներում զբաղեցնող-հետաքրքրաշարժ գերակատարությունն առարկայորեն ապահովություն են բնագրի ծավալման անսահմանափակություն (ինչն ի դեպ թերթոն վեպերի և կինոյի սերիալների պարագային անվանվում է «Ճգճգվածություն», «Կրկնություն»), ինչը բարերար դաշտ է պայմանափորում թերթոն վեպերի շրջարկում վիպաշարերի առկայության համար։

Նորմատիվ վիպաշարերին հար և նման թերթոն վիպաշարերում ստեղծագործությունից ստեղծագործություն են անցնում պերսոնաժներ, դիպաշարային պլաններ։ Վիպաշարի յուրաքանչյուր ստեղծագործություն ներփակ ավարտունություն ունենալով՝ միաժամանակ կրում է իրականության այս կամ այն դրսեռման այնպիսի տարրեր, որոնք հնարավորություն են ընձեռում վիպելու այդ իրականության, իրադարձության ինչ-ինչ նոր կողմերը, իրողությունները, հարաբերությունները, կամ դրանց շարունակությունը։ Եթե նորմատիվ վիպա-

շարերում այս կամ այն ժամանակաշրջանի հասարակական, ընկերային, քաղաքական, մարդկային (անհատական) գոյության գեղարվեստական վկայությունը պայմանավորում էր այսպես կոչված վեպ-էպովեաների գոյությունը (Հյուգո, Բալզակ, Զոլա և այլն), ապա թերթոն վիպաշարերը ընդգծված «վեպ-համայնապատկերներ» են՝ որևիցե ժամանակաշրջանի պատմական-քաղաքական, ընկերային վկայությունները կենտրոնացնելով դրանց արկածային, դետեկտիվ կամ ասենք մելոդրամատիկ արտահայտություններին: Ասել է թե՝ ժամանցի տիրույթներում: Այս պատճառով է, որ թերթոն վիպաշարերում նույնպես առանցքային են գործողությունը, իրադարձությունը, խոչընդոտը, արկածը, արկածախնդրությունը, չենք գտնում հերոսների հոգեբանական-սոցիալական փաստարկումներ և ընդայնումներ, գոյության գեղարվեստական ընդհանրացումներ, ինչպես է նորմատիվ ցիլիերում: «Վեպ-համայնապատկերը» գերազանցապես «ընթանում» է երկխոսություններով, դիպաշարային արտակարգ պրկվածությամբ, այնպիսի դրվագներով ու իրադարձություններով, որոնք ինքնին բախումնային են, ինտրիգային են՝ բազում խոչընդոտներով ու դրանց հաղթահարումներով: Գործող անձինք այստեղ նույնպես զուտ գործառություններ են: Այսպես, Օտյանի թերթոն վիպաշարերում պատմական ժամանակաշրջանն իր հասարակական, քաղաքական, ընկերային, մարդկային արտահայտություններով վիպվում է իբրև արկած, արկածախնդրություն, դետեկտիվ, մելոդրամ: Համիզյան ոեժիմի օրհասի և երիտթուրքական հեղափոխության նախապատրաստության շրջանը նրա «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմս», «Սալիհա Հանըմ կամ բանակը բռնավորին» երկգրության ու սրան ընթերվող «Ես դուրսեցի չեմ առներ» ստեղծագործության մեջ կենտրոնանում է ժամանակաշրջանի արկածային-արկածախնդրական զուգահեռներում և ըստ այդմ գործող անձանց պարփակում արկածային-արկածախնդրական գործառությունների տիրույթներում: Նույն է պարագան «Թիվ 17 խաֆիեն» և «Կանաչ հովանոցով կինը» երկգրության մեջ: Եղեռնին անմիջականորեն նախորդող ազգային-քաղաքական իրականությունը, թրքական պետության քաղաքական ձեռնարկումների երփնագիրը, ինչպես նաև Աղետի և հետաղետյան իրադարձությունները կենտրոնացված են արկածային-արկածախնդրական, դետեկտիվ տիրույթներում, նույնը նաև հերոսների պարագային:

Հետևաբար, թերթոն վիպաշարերում ժամանակաշրջանի էպովեան արտահայտվում է ժամանակաշրջանի հասարակական, պատմական, ընկերային, քաղաքական համայնապատկերի արկածայնությամբ, արկածախնդրությամբ, դետեկտիվով: Սա ժամանցային վիպաշարերի ինքնության առանցքն է, բնագրաստեղծ պայմանավորողը: Այս օրինաչափությունը ներհատուկ է նաև մեզանում ստեղծված թերթոն վիպաշարերին: Գոչունյանի 1896-1898 թվականներին նվիրված ցիլը, Սմբատ Բյուրատի, Արմեն Շիտանյանի հայոց հայդուկային շարժման, ազգային հեղափոխության, թրքական իրականության համապատկերը ներկայացնում են իբրև արկածային, արկածախնդրական, դետեկտիվ տիրույթներում, դեպքերի համապատկեր:

Հարկ է շեշտել, որ ինչպես թերթոն վիպագրության մյուս արտահայտություններում, թերթոն վիպաշարերի պարագային ևս Օտյանը հանգրվանի

հասցրեց ժամը ի այս գրսեորումը՝ երևան բերելով պատմողի, կոլիզիաների անընդհատականությունը ապահովագրողի, դիպաշարային դինամիզմի, պերսոնած-գործառություններ ստեղծողի և պատկերագրողի, վավերականի ժամանցային գրսեորումն իրականացնողի անուրանալի որակներ:

Երվանդ Օսյանի ստեղծագործական կյանքի վիպահեղման երկու ժամանակաշրջաններն էլ հատկանշվում են վիպաշարերի ստեղծմամբ: 1911-1913 թվականներին նա գրում է «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմս», «Սալիհա Հանըմ կամ բանակը բռնավորին դեմ» դիլոգիան և սրանց հետ օրգանապես կապված «Ես դուրսեցի չեմ առներ» թերթոնները:

Թերթոն վիպաշարերի լույս ընծայումը ժամանցային գրականության մեջ ընթերցողական հետաքրքրության առումով գերազանցեց բոլոր սպասելիքները: «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմսը» անմիջապես դարձավ բեստսելլեր<sup>111</sup>: Հընթացս մի քանի տապարությունների արժանացավ և, որ հայոց դասական վեպի պատմության մեջ եղակի դեպք է, անմիջապես թարգմանվեց թուրքերեն: Վերջին պարագան ուշագրավ է ոչ միայն «Ժամանցային» գրականության հանդեպ տածած միջազգային հետաքրքրությամբ ու պահանջարկով (պատահական չէ, որ այս վիպաշարը թարգմանվել է նաև ֆրանսերեն), այլ նաև ոչ վաղ անցյալի իրականությանը քաղաքական գետեկտիվի միջոցով ևս մեկ անգամ հանդիպագրվելու, համիլյան ուժիմի գաղտնի ծալքերին հետևելու հանգամանքով: Նույն է պարագան վիպաշարի երկրորդ՝ «Սալիհա Հանըմ կամ բանակը բռնավորին դեմ» վեպի դեպքում<sup>112</sup>: Համիլյան կառավարման վերջին շրջանի, եղիտթուրքերի հեղափոխության նախապատրաստման միջավայրն անշուշտ պիտի լրացականացվեր նաև զուտ հայկական միջավայրի այդ կենսոլորտի վիպմամբ, ուստի պատահական չէ, որ ցիկլն ամբողջանում է 1913-ին գրված «Ես դուրսեցի չեմ առներ» վեպով, ինչն ըստ էության ամբողջականացնում և ավարտաբանում է այս վիպաշարի բովանդակային դաշտը, որը, կրկնենք, նախաճեղափոխական թրքական պետության հասարակական-քաղաքական, ընկերային միջավայրի համայնապատկերն է, կայսրության քաղաքական վերափոխության նախօրյակի թերթոննայնացումը:

«Ապտյուլ Համիտ...ը» և «Սալիհա Հանըմն...» ունեն ենթախորագրեր: Համապատասխանաբար «Ժամանակակից պատմական վեպ» և «վեպ օսմանյան հեղափոխական կյանքե», որոնք օտյանագիտությունը ըմբռնել և մեկնաբանել է ընդգծված ուղղակի, «Ճակատային»: Վիպաշարը գետեկտիվ ու արժեորվել է դասական պատմավիպասանության չափորոշիչներով, և ըստ էության անտեսվել է վիպաշարի կազմաբանական ու գեղարվեստական ինքնությունը: Իրականում վիպաշարը «քաղաքական գետեկտիվ» է «մարտավեպի», «արկածախնդրական» և «թրիլերային» վեպերի տարրերով: Ե՛վ ցիկլի առանցքը, և՝ արժեքն որոշարկելիս հետազոտողը պետք է նկատի ունենա այն հանդամանքը, թե որքանով է հեղինակին հաջողել ոճիր-հանցագործություն-հետաքննություն-բա-

111 Վեպը նախ լույս է տեսել Կ. Պոլսի «Արևելք» օրաթերթում 1911-ին, ապա՝ առանձին հատորով:

112 Ստեղծագործությունն առաջին անգամ լույս է տեսել 1912-ին «Բյուզանդիոն» օրաթերթում, ապա նոյն տարվա մեջ առանձին հրատարակությամբ:

ցահայտում-հատուցում և հեղափոխություն-հեղափոխականներ-հակահեղափոխություն-հակահեղափոխականներ (առկա ռեժիմ), ճակատում, հետապնդում-խցարգելում-թաքստոց-փախուստ, խուզարկու-լըրտես-գործակալ-շարքի օպոզիցիա (գործիչներ, գաղափարականներ, արկածախնդիրներ, լյումպեն տարր և այլն) առանցքների վիպումը, ընդ որում այս առանցքների ամենատարբեր կոնֆիգուրացիաներով։ Այս պարագային Մաք Լայնի՝ Համիդի հույժ գաղտնի հրավիրած և հույժ գաղտնի գործող հռչակավոր գործակալի, որ օգտագործելով գաղտնի խուզարկուների հզոր ցանցը, պիտի չեղոքացներ հեղափոխականներին ու հեղափոխականությունը, կերպարային դինամիկան, երբ ապաքաղաքական խուզարկուն ի մոտո տեսնելով թուրքական իրականությունը, կրավորում է հսկայական հոնորարը (անսացել էր Համիտի առաջարկությանը այդ գումարի ակնկալիքով, որպեսզի իրականացներ իր կյանքի տեսլականը) հակվում և օժանդակում է հեղափոխականներին ու հեղափոխականությանը, ահագնացնում է «դետեկտիվ-թրիլերային-սստիկանական մարտավեպի» էֆեկտը։ Միաժամանակ վիպաշարում ապահովագրում «ժամանցային գրականության» գեղարվեստական-գեղագիտական հրամայականը չարի հատուցմամբ և արդարության հաղթանակով։

«Քաղաքական դետեկտիվի», «թրիլերային-սստիկանավեպի» արտակարգ զանգվածայնությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ իրականությունը, վավերականը համարժեքվում է խորհրդավորին, գաղտնիքին։ Պատահական չէ, որ ստեղծագործության նախադրության մեջ այս իրողությունը շեշտվում է Սատրպի և Ալի Օսմանի շուրջերով, երբ թերթի թարգմանիչը և խմբագիրն անդրադառնում են Պոլիսը ցնցած զարհուրելի սպանությանը. «-Եղբայր, քու երեակայությունդ բորբոքեր է և ինքնիրենդ խորհրդավոր վեպ մը կը շինես կոր, ըսավ խմբագիրը թեթևորեն ժպտելով։- Զէ, բարեկամ, պատասխանեց մյուսը, վեպ չէ, այլ բուն իսկ իրականությունը»<sup>113</sup>:

Թե՛ խնդրո առարկա թերթոն վեպի և թե՛ վիպաշարի բովանդակային պլանի բնութագրման համար կարևոր նշանակություն ունի հեղինակային հետևյալ նշագրումը. «Ապայուղ Համիտ մեծ սիրահար մըն էր զգայացունց եղեռնությանց ու սստիկանական շահատակությանց նվիրված վեպերու, որոնց թարգմանության համար հատուկ թե թուրք և թե հայ թարգմանիչներ ուներ», - այնուհետև նշում է մի շարք Քրանսիացի թերթոնագիրների, որոնց ժառանգության հիմնական մասը «դետեկտիվ», «սստիկանական մարտավեպերն ու թրիլերներն» են և ամփոփում, - «Վերջերս սակայն նոր հեղինակ մը զինքը բոլորովին հմայեր էր։ Այդ հեղինակն էր անգլիացի Քոնան Տոյլ գնդապետը, որուն աշխարհահռչակ Շերլոք Հոլմսի արկածալից շահատակությունները, որոնց ամենքն ալ խորհրդավոր ոճիրներու շուրջ կը դառնան, տարօրինակ կերպով զինքը շահագրգռած էին»<sup>114</sup>: Ահա և իրականության ինտրիգի լուծմունքի համար Հոլմս-Լայնի առկայությունը դիպաշարի անընդհատական հետապնդումները, սպանությունները, վրեմինդրությունները, թաքստոցները, լրտեսումները, աք-

113 Տե՛ս Ե. Օսյան, Եֆ, հտ. II, էջ 10:

114 Նույն տեղում, էջ 98:

սորները, հալածական թափառումները, բանտարկություններն ու ձերբակալությունները, փախուստները, կաշառքները, ելտըզի ներքին թաքուն կյանքի գաղտնազերծումները ընթերցման տիրույթներում հավասարազոր են դարձնում վավերականն ու վիպականը: Ահավասիկ վիպաշարի բեստական ցանցը, ընդհատակյա գործունեությունը, համիդյան ռեժիմի կասկածի, մատնության, ահաբեկման, սարսափի, կաշառակերության մթնոլորտը: Հիրավի թրիլերային գոյակերպություն, որտեղ Մաք Լայնի՝ Շերլոք Հոլմսի հանգույն դիտողականությունը, անալիտիկ-դեղուկտիվ մտածողությունը, ընդհանրացնելու կարողությունը այն օղակն է, որը հանգույցում է դիպաշարային բոլոր (ներառյալ ներփակ ավարտուն) պլանները, կողիզիաներն ու լոկալ ինտրիգները, հանդես եկած վավերական ու երևակայական պերսոնաժներին՝ ներքգործնախարար Շեֆիք փաշա, Աբդուլ Համիդ, Մեհմեդ փաշա (Համիդի վստահելին), Զիա, Սալիհա, Իզզեթ (Համիդի քարտուղարը), Արիֆ, Սամի, լրտեսներ, գործակալներ, Համիդի հարեմից կանայք՝ Տիլարա, Պելքիս և այլք:

Ստեղծագործության առանցքն ահաբեկչությամբ Համիդին պատուհասելն ու համիդյան ռեժիմի տապալումն է: Խորհրդավոր իրադարձությունների, հետապնդումների, լրտեսումների դիպաշարային «տանող շարժիչով»: Թերթոնի շրջարկում իրադարձությունների մանրամասնման հետահայացի սկզբունքով: Պերսոնաժ գործառությունների միմյանց ճակատող խմբերը, որոնցից մեկի մեջ մեկտեղված են «Բոլոր բոնակալության զոհերը, բոլոր արդարության և ազատության ծարավի հոգիները, բոլոր ճշմարիտ մարդիկ»<sup>115</sup>, իսկ սրանց դիմակայում է բոնակալության մեքենան՝ ռեժիմի բյուրոկրատիա, լրտեսներ-գործակալներ, սրանց հետ իրենց շահերից ելնելով համագործակցողներ: Այս ճակատող պերսոնաժ-գործառությունների զուգահեռում գործում են պատեհապաշտներ, խաչագողեր, արկածախնդիրներ, որոնց համար ցանկացած հեղաքեկում հրաշալի առիթ է գործելու, ըստ ամենայնի ինքնարտահայտվելու: Այս իրողությամբ է, որ «քաղաքական դետեկտիվ-մարտավեպի» շրջարկը հարակցվում է «արկածախնդրական վեպի» բաղադրիչներով և վիպաշարը «ժամանցային գրականության» հարացույցում դարձնում արտակարգ հագեցած, հանրահաճում:

«Ապայուլ Համիտ և Շերլոք Հոլմսի» կառույցում ահաբեկչական չղաղարող գործողությունների ընթացքը շարունակվում է վիպաշարի հաջորդ՝ «Սալիհա հանըմ կամ բանակը բոնավորի դեմ» ստեղծագործության մեջ, որի ինտրիգը պայմանավորում են նախորդ վեպի միևնույն պերսոնաժ-գործառությունները (Սատրգ, Սալիհա, Աբդուլ Համիդ, Արիֆ, Մեհմեդ):

Այս թերթոն երկգործությանն անմիջապես հաջորդեց (թե՛ ժամանակագրորեն՝ 1913 թ. և թե՛ հղացքային-բովանդակային դաշտի նույնականությամբ) վիպաշարին ուղղակիորեն ընթերվող երրորդ վեպը՝ «Ես դուրսեցի չեմ առներ», որը «քաղաքական դետեկտիվի» ու «մարտավեպի» տարրերով իրբե առանցք ունի համիդյան հոգեվարքի և հետհեղափոխական առաջին շրջանի կենցաղի, բար-

115 Նույն տեղում, էջ 280:

**Քերի վիպումը:** Այս ստեղծագործության (ի դեպ օտյանական ժանրի արտահայտություններում ամենածավալուններից մեկը)<sup>116</sup> կառույցում գործում են երկգրությանը ներհատուկ և նույնական հետապնդում-փախուստների, անվերջանալի հարցաքննությունների, ծուղակների և դրանց զանազան ձևերով թոթափումների, վարչական մեքենայի համատարած բարոյալքության (կաշառակերություն, պատեհապաշտություն, նենգություն, ստորաքարշություն և այլն) հեղափոխականների և հեղափոխականության դիպաշարային կառույցները և այդ կառույցները պայմանավորող կերպարային գործառությունները: «Ես դուրսեցի չեմ առներ» թերթոնը վիպաշարում բարքերի, կենցաղագրության տիրույթներում կենտրոնացել է նաև լուսաբան, լրտեսության, դրանց հակազդման կոլիգիաներին: Այստեղ, սակայն, հայկական միջավայրի գերակայությամբ: Նյույորքաբնակ Հովհաննես Կորեկյանի ամուսնության առաքելությամբ Պոլիս ժամանելն ու գործունենությունը, նրա ապագա հարսանյաց հանգամանքները, Զապելի շուրջը կատարվող իրադարձությունները թերթոնի շրջարկում շարունակում են վիպաշարի լրտեսության վիպումը՝ հընթացս դիպաշարի մեջ մտցնելով դրամաշորթների և խաչագողերի, միջնորդ տեր պապաների և կանանց, հայ հեղափոխականների պատումային պլանները (Թորոս պեյի, Բարսեղի կալանքի, Թորոս-Լևոն, Մարտիկ-Զարուհի, Էդվարդ-Զարուհի հարաբերակցությունների, Վահանի բանտարկության և այլն): Այս պարագային ևս մելոդրամին ներհյուսված է առեղծվածային-խորհրդավորի թերթոնաստեղծ վիպումը: Կոլիգիաների ընդլայման գործընթացում դիպածների կառուցողական գերակայությունը, սիրային եռանկյունների առկայությունը (Զարուհի-Հովհաննես-Վահան, Զարուհի-Հովհաննես-Շավարշ):

Այսպիսով «Ապայուղ Համիտ և Շերլոք Հոլմս», «Սալիհա հանըմ կամ բանակը բոնավորին դեմ» երկգրությունը «Ես դուրսեցի չեմ առներ» թերթոն վեպով ավարտաբանում է համիդյան կառավարման վերջին և հետհամիդյան ժամանակաշրջանի սկզբի թերթոն վիպաշարը: «Քաղաքական-արկածախնդրական» վիպաշարի այս կառույցն Օտյանը մեկ անգամ ևս թերթոնի վերածեց՝ այս անգամ Առաջին աշխարհամարտի և եղեռնի ու հետեղեռնյան շրջանի կենսոլորտին նվիրված իր վերջին վիպաշարով:

Երվանդ Օտյանի կենսագրության պոլսական վերջին շրջանում, 1919-1922 թվականներին Օտյանը ստեղծում է իր երկրորդ վիպաշարը՝ «Թիվ 17 խաֆիեն» և «Կանաչ Հովանոցով կինը կամ նոր խաչագողներ» երկգրությունը: Շարքի առաջին վեպը լույս է տեսել «Վերջին լուրի» 1919-ի նոյեմբերի մեկից մինչև հաջորդ տարվա հոկտեմբերի երկուսը: Երկօրյա դադարից հետո նույն օրաթերթում գրողը հրատարակել է հաջորդ ստեղծագործությունը՝ 1920-ի հոկտեմբերի 4-ից մինչև 1921-ի հոկտեմբերի 22-ը:

Այն իրողությունը, որ երկգրության մաս կազմող վեպերից «Թիվ 17 խա-

116 Վեպը բաղկացած է երկու մասից և վերջաբանից: Ստեղծագործության մեծ ծավալով են բացատրվում «թերթոնավիճակ անփոխությունները», այս պարագային՝ հերոսների անունների և ազգանունների շփոխություններով, փոփոխություններով: Այսպես՝ Մարիկանը դարձել է Մարտիկան, Նազիկյանը՝ Նիկողոսյան, Լազարո՞ւ՞ն և այլն:

ֆիեն» երեք անգամ ունեցել է առանձին հրատարակություններ<sup>117</sup>, իսկ «Կանաչ հովանոցով կինը» չի հրատարակվել, բացատրելի է այն հանգամանքով, որ առաջինն իր կառույցով, ուղղությամբ, դիպաշարով անմիջականորեն նվիրված է Մեծ եղեռնին նախորդող ազգային կյանքին, թուրքական պետական մեքենայի շահատակություններին (զանգվածային ձերբակալությունների վաղօրոք մշակված ծրագրի իրագործում, հրաշքով փրկված, թաքնված խլյակների հետապնդում և այլն), եղեռնյան շրջանին, աքսորի, ընդհանրապես պատերազմական շրջանի ազգային-քաղաքական իրականության համապատկերային իրադարձություններին: «Թիվ 17 խաֆիեն» իր վավերական պերսոնաֆներով ու իրադարձություններով ապահովագրում էր «քաղաքական-արկածային» թերթոնի բոլոր չափորոշիչները: Որոշակի առումով այն ազգային պատմության հանգուցային էպոփիայի օպերատիվ վավերական-վիպային անդրադարձն էր, ինչը, բնականաբար, չէր կարող պարփակվել միայն մեկ տպագրությամբ: Էպոփիայի օպերատիվ արձագանքը ենթադրում էր հսկայական ընթերցողական պահանջարկ, իսկ շարքի երկրորդ վեպն «արկածային-արկածախնդրական մարտավեպի» ընդգծված կառույց ունի: Մի կողմից այդօրինակ թերթոնների անընդհատականությունը «ժամանցային» գրականության ընդգրկումներում, մյուս կողմից՝ առաջին ստեղծագործության հետ համեմատած, վավերական շերտի սակավությունը հասկանալի են դարձնում երկգրության տիրույթներում «Կանաչ հովանոցով կինը» միավորի ընթերցողական պահանջարկի կրավորականությունը:

Երկգրության առաջին միավորը հայոց վեպի պատմության մեջ առաջին ստեղծագործությունն է, որ անդրադառնում է Աղետի ժամանակաշրջանին: Հետեաբար XX դարի հայ վեպի առանցքային արտահայտություններից մեկը գրականության պատմության շրջարկում նորամուտն իրացրել է «ժամանցային գրականության» տիրույթներում: «Թիվ 17 խաֆիեն» իր արկածային-քաղաքական դետեկտիվի շրջարկում թերթոննագրել է դարաշրջանի ազգային պատմության էույթը (սուբստանցը) Վերջ-շարունակելիություն կողիգիայի, ինտրիգի վիպումով: Վերջը քաղաքական, պատմական այն շրջանակն է իր ածանցյալներով (լրտեսներ, մատնիչներ, գործակալական ցանց և այլն), որը իրականացնում է Աղետը, շարունակելիությունը՝ ազգային կենսոլորտն ու իրականությունը ընդգրկող ուժերն ու դրսորումները (ազգային ժողովի երեսփոխաններ, մշակութային-հոգևոր դեմքեր, հեղափոխականներ և այլն), որոնք իրենց գոյակերպությամբ պատճենում և չեղոքացնում են վերացումը: Հետեաբար քաղաքական դետեկտիվի շրջարկում երևան է գալիս գոյակերպությունների պայքարի և հակագուման թերթոնը բոլոր դիմացարային պլաններում (17 ծածկագրով գործակալի առաջ բերած իրարանցման, արկածախնդիր-դավաճան Աստիկ Մարկոսյանի թիվ 17 լրտեսի, լրտես-մատնիչներ Արշակ Ալլյանի, Արշավիր Յասյանի, Արթինի, հեղափոխականներ Տրդատի, Սիսակի, Վահեի, Վահանի, ազգային և մշակութային գործիչների, թրքական քաղաքական-վարչական գործիչների և այլ դրվագներում): Ստեղծագործության կազմաբանական տիպը դիմանկարների և երկխոսությունների ընդելուզված հանգամանքով է պայմանավորված:

117 1938-ին Կարիրենում, 1957-ին Բեկրութում և 2000-2001-ին Երևանում:

Խիստ ուշագրավ են կուսակցական գզվոտոցների, ձերբակալությունների ու բանտարկությունների (օրինակ Աբիկ Մուղահաճյանի, Շավարշ Միսաքյանի) աքսորի ողիսականի բազմապլան կենտրոնացումները։ Երկդրության այս առաջին միավորում ստեղծագործության ինտրիգը միավորող օղակներից է գործակալ-լրտես-մատնիչների մետապատմությունը։

Վիպաշարի հանգուցային պերսոնաժ-գործառություններից է Էլիզ Մալյանը, նույն ինքը՝ Լյուսին, որը հանգուցող գերակատարություն ունի երկդրության մեջ։ «Կանաչ հովանոցով կինը» վեպի շրջարկում էլիզ-Լյուսիի և Ռուբեն Կոկիլյան-Բերկրուհի ընտանիքի պատմության առանցքների շուրջ կրկին երևան են գալիս «Թիվ 17-ի...» բազմաթիվ հերոսներ և պատումային-դիպաշարային առանցքներ, ինչպես հանրահայտ լրտես-դպավաճան Արթինը, Վահանը, Արամը, Տրդատը, գործողությունների մեջ են մտնում հին ու նոր բազմաթիվ քաղաքական, մշակութային անձնավորություններ (Ավետիս Ահարոնյան, Խատիսյան և այլոք, Թալյաթ, Էնվեր, Զեմալ, սրանց թուրքիայից գերմանական սուզանավով ճողովրելու պլանը, դաշնակիցների մուտք Պոլիս) բախտախնդիրներ ու խաչագողեր (Հույն Սավան, խաղատան սեփականատեր Տիրանը)։ Երկդրությունն ավարտվում է Պոլսից Լյուսիի վերջնական մեկնումով, Փարիզում ամուսնանալով (Ժորժի հետ), այնտեղ հաստատվելով, Տիրանի անփառունակ վախճանով (Հույն երկու արկածախնդիրներ՝ Տոթորաքին և Ալեքսին նրան խեղդամահ են անում, գրպանում 6000 ոսկին), իսկ Ռուբենը երեխաններին ու կնոջը Ֆրանսիայով տեղափոխում է Շվեյցարիա այն մտադրությամբ, որպեսզի վերադառնա Պոլիս, ավարտի գործերը և ինքն էլ ընդմիշտ լրի այդ քաղաքը։

Այսպիսով ավարտաբանվում են վիպաշարի դիպաշարային բոլոր պլանները, հանգուցալուծվում կողիզիանները՝ մեր թերթոն վեպի համապատկերում բյուրեղացնելով «քաղաքական-արկածախնդրական» կաղապարը։

\* \* \*

Երվանդ Օտյանի թերթոն վեպերի համակարգը ցուցանում է մեկ բնորոշ առանձնահատկություն ևս՝ միջզրութենական, միջվիպային ընդհանրություններ։ Վեպի ժանրով գրված նրա ստեղծագործությունները «ստեղծում» են թերթոնի գերբնագիր, որտեղ յուրաքանչյուր վեպ մյուսի շարունակությունն ու լրացումն է։ Տարբեր հղացքների վիպումը, որը ստեղծագործությունից ստեղծագործություն է փոխանցվում (օրինակ՝ մատնության վիպումը, բարեգործության վիպումը, հեղափոխական գործիչի վիպումը) վկայում է այն իրողությունը, որ վիպասաններն իրենց «բոլոր գրքերում (այսինքն՝ վեպերում – Գր. Հ.) խոսում են ուրիշ գրքերի մասին (ասել է թե՝ վեպերի – Գր. Հ.), թե ցանկացած պատմություն արդեն պատմված պատմության վերաշարադրանքն է»<sup>118</sup>։ Այս իրողությունն ըստ ամենայնի վերհանում է գրողի ժառանգության առանցքային ստեղծաբանական եղանակն իբրև բնագրաստեղծ սուբստանց և ունիվերսալիա։

Հարկ է նշել, որ թերթոն վեպերի համակարգում միջգրային ընդհանրու-

118 Յ. Էկօ, “Имя розы”, с. 437:

թյունները, միջվիպային ընթերումները, որոնք «ստեղծում» և ապահովում են ժամրի գերբնագիրը, միաժամանակ ագուցվում են ժառանգության մյուս դրսերումներին, այսպիսով «ստեղծելով» ավելի մեծ շրջանակ ընդգրկող գերբնագիր՝ ներառելով գրողի հուշագրությունը, դիմանկարները, նամակները, փոքր արձակը։ Միաժամանակ այս վերջիններն ըստ էության անդրափոխվում են՝ դառնալով վեպի գերբնագրի «բաղադրյալներ»։

Օտյանի գրական ժառանգության պարագային այս իրողությունները բնութագրում ենք վիպակնություն եզրով։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ թերթոն վեպի կազմաբանական բնույթն անմիջականորեն պայմանավորել է գրողի ժառանգության բոլոր դրսերումները՝ փոքր արձակ ու դիմանկար, հուշագրություն ու թատերգություն, նամակ և փորձագրություն։

Ի դեպ, այս իրողությունը բնորոշ է առհասարակ արևմտահայ թերթոն վեպին։ Նույնն է պարագան Միսաք Գոչույանի, Գրիգոր Սարաֆյանի, Սմբատ Բյուրատի ժառանգություններում։ Հետևաբար կարող ենք արձանագրել, որ թերթոն վեպի ժանրակազմիչ, բնագրաստեղծ չափորոշիչները բնագրատեղծ են ժառանգության մնացյալ դրսերումներում։ Նրանց գրական ժառանգությունը գոյագրում է վիպայնության առանցքով<sup>119</sup>։

Երվանդ Օտյանի թերթոն վեպերի շրջարկում միջգրային ընդհանրությունները խարսխվում են երկու շերտերում՝ կառուցվածքային և հղացքային։ Ժանրի գերբնագիրը կառուցվածքային շերտում «ստեղծվում» և ապահովագրվում է թերթոնի կառույցի և կառուցման նույնական միջոցների համատարածում։ Ընդամենը ստեղծագործությունից ստեղծագործություն են փոխանցվում թերթոնի ներժանրային այս կամ այն կաղապարի չափորոշիչները, որոնք միաժամանակ վիպագրության շրջարկում ապահովագրում են համապատասխան գերբնագրեր։ Ասենք, «արկածային-արկածախնդրականը» իր տարբեր արտահայտություններում գոյագրում է իր գերբնագիրը, «բարքագրական թերթոնները»՝ իրենցը, «դետեկտիվ-մարտավեպերը»՝ իրենցը, «թերթոն երգիծավեպերը»՝ իրենց գերբնագրերը։

Օտյանի «ժամանցային վիպագրության» մեջ հիմնական հղացքային միջգրային ընդհանրություններն են մատնության, լրտեսության, արկածախնդրության, բախտախնդրության, բարեգործության (փոխաձևությունների դաշտով), գործիչի և համարակական-քաղաքական գործունեության (ազգային, հեղափոխական, մտավորական) հղացքները։ Պատահական չէ, որ նրա գերբնագիրը պարագրկող այս հղացքները վերջին «Հայ տիհասբորան» ստեղծագործության մեջ ըստ էության կրկնում են նախորդ թերթոններում շրջանառված բոլոր հղացքները՝ արկածախնդրություն և արկածախնդիրներ, լրտեսություն, մատնություն և խափիե-

119 XX դարի գրականության համապատերում այս իրողությունն առավել ալեահայտ սկսեց գործել արդիական (մոդեռնիստական) վեպի այնպիսի ներկապացուցիչների երկերում, ինչպիսիք են Մուգիլը, Կաֆկան, Յունգերը, Ժիլը, Ֆրիշը։ Պատահական չէ, որ նրանց ժառանգության ամենատարբեր արտահայտություններում հետազոտողները վիպակնությունը դիտարկում են իբրև բնագրատեղծ տուրատանց, ունիվերսալիա։ Տե՛ս, օրինակ, այս հեղինակների օրագրությունների քննությանը նվիրված բաժինը “Сцепление жанров” ուսումնակրության մեջ (“Жанровое разнообразие современной прозы Запада”, с. 38):

ներ, առտանին, ընտանեկան կյանք և միջնորդներ, զանազան խաչագողեր, քաղաքականություն, մտավորականություն և խմբագիրներ, քաղաքական-ազգային գործիչներ և այլն: Այս թերթոնում բացահայտ են, օրինակ, «Տոքթոր Վարդանի», «Թիվ 17 խափիեի», «Մեր ազգային ճիների», «Մատնիչի», «Նոր հարուստների», «Ընկեր Փանջունիի», «Ճեղափոխության մակաբույժների», «Պրոպագանդիստի» հղացքներն ու դրանց այուժետային նույնական դրսեորումները: Մեկնելով Օտյանի կենսագրությունից կարող ենք տեսակետ հայտնել, որ անբուժելի հիվանդությամբ տառապող հեղինակը, որ գիտեր իր մոտալուտ վախճանի մասին, կարծես թե «Հայ տիհաբորայի» շրջարկում ևս մեկ անգամ շրջանառու էր դարձնում իր թերթոն վեպի գերբնագիրը՝ յուրահատուկ պատգամ ուղղելով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ երվանդ Օտյանի նամակները, դիմանկարները, փոքր արձակը, հուշագրությունն իբրև վիպակնության բնագրաստեղծ սուբստանց, ունիվերսալիս, ուղղակիորեն ընթերվում են թերթոնների գերբնագրին: Այսպես, գրողի նամակներում գտնում ենք բազմաթիվ հղացքներ, դիպաշարեր, որոնք փոխանցվել են թերթոն վեպերին, միաժամանակ նամակները թերթոն վեպերի հետ պարփակվում են նույնական գերբնագրում: Կարծես թե թերթոնը շարունակելով նամակում, իսկ նամակը՝ թերթոնում<sup>120</sup>: Նույնն է պարագան Օտյանի դիմանկարների գեպքում: «Մեր երեսփոխանները» դիմանկարների շարքի բազմաթիվ ներփակ միավորներ (առանձին դիմանկարներ) ուղղակիորեն անդրակերտափել են «Թիվ 17 խափիեն» թերթոն վեպի շրջարկում երեան հանելով միջգրային նույնականություն, միաժամանակ ապահովագրելով գերբնագիրը: Նկատի ունենք Գրիգոր Զոհրապի, Հարություն Շահրիկյանի, Վարդգեսի, Հարություն Ճանկյուղյանի (այս դիմանկարը գերբնագիր է կազմում նաև «Հեղափոխության մակաբույժները» շարքի և «Ընկեր Փանջունիի» հետ), Նազարեթ Տաղավարյանի, Օննիկ Զիգթե-Սարաֆի, Ժագ Սայապալյանի, Օննիկ Դերձակյանի, Վահան Թեքեյանի դիմանկարները<sup>121</sup>:

Օտյանական թերթոն վեպի գերբնագրի շրջարկում հատկապես կարևոր գերակատարություն ունի վիպասանի հուշագրությունը, որտեղ վիպայնության բնագրաստեղծ սուբստանցն առանձնանում է «Տասներկու տարի Կ. Պոլսեն դուրս» երկով: Էական է դիտել, որ այս հուշագրությունը միջգրային ընդհանրություններ ունի հատկապես գրողի նամակների հետ: Օտյանի (կրկին Արփիար Արփիարյանին, Միքայել Կյուրծյանին և Արշակ Զոպանյանին հասցեագրած) որոշ նամակներ «Տասներկու տարվա...» հետ վիպումի նույնական գաշտ են կազմում<sup>122</sup>: Այսպիսով, մեկնելով օտյանական գեղարվեստական արձակի համակարգից, ի մասնավորի թերթոն վեպի շրջարկից, կարող ենք եղրակացնել, որ վեպի ժամրի ատրոֆիան (ձևախեղումը), ինչը հատկապես բնորոշ է XX դա-

120 Տե՛ս, օրինակ, Արփիար Արփիարյանին հասցեագրած զրա նամակները, որտեղ առկա են նման շարունակությունները՝ ընթերված «Պրոպագանդիստի», «Հայ տիհաբորայի», «Տասներկու տարի Պոլսեն դուրսի», այլ երկերի հետ:

121 Տե՛ս «Մեր երեսփոխանները», էջ 20, 22, 24-25, 28, 30, 35, 36-38, 83, 99, 101-103, 108, 115, 128-129, 146, 149:

122 Տե՛ս Ե. Օտյան, «Նամակներ» էջ 27-29, 181-182, 222, 234:

ըի առհասարակ բոլոր ժանրային արտահայտություններին, գրողի արձակի տիրույթներում պայմանավորում է այնպիսի գերբնագիր, որտեղ նույնական գերկառուցի տարրեր են թե՛ վեպը, թե՛ փոքր արձակը, թե՛ նամակը, թե՛ օրագիրը, թե՛ հուշը, թե՛ դիմանկարը։ Արձակի հորինման, ձևաբանական ու իմաստաբանական դաշտերը վիպայնության կանգնումով են միավորվում, դառնում գերբնագիր։ Իբրև ավանդույթի հաստատում՝ այս իրողությունը Օտյանին է հայոց գրականության պատմության համապատկերում։ Վիպայնությունը պայմանավորում է նաև գերբնագրի ձևաբանական (դիպաշարային, կոմպոզիցիոն) և հղացքային միասնականությունը, ինչը նույնպես մեզանում ավանդույթ է դարձել երվանդ Օտյանի գրական ժառանգությամբ։

Օտյանական արձակին բնորոշ վիպայնությունը պայմանավորել է թերթոն վեպի («Ժամանցային գրականության») խտացումը հայ գրականության պատմության մեջ։ Այն միաժամանակ պայմանավորել է ժանրային տիրույթների, սահմանների ու ինքնության ատրոֆիան՝ գոյավորելով արդի արձակ հորինմանը բնորոշ այն ձևերն ու ինքնությունը, որ մենք հակված ենք կոչել ապաժանրային ձևեր բնորոշումով՝ նկատի ունենալով թե՛ կանոնիկ ժանրերի ապակառուցումը և թե՛ դրանց «նորագույն սինկրետիզմը»։

Վիպայնության խորքում արարողական գերակայություն ունեն անշուշտ հուշագրությունն ու օրագրությունը։ Համաշխարհային գրականության մեջ սկզբնագիր էր ժան-ժակ Ռուսայի «Խոստովանությունը»<sup>123</sup>։ Այս ստեղծագործության շրջարկում մի կողմից հուշագրությունը փոխաձեկվել է վեպի, մյուս կողմից՝ ապահովել Ռուսայի ժառանգության գերբնագրի ձևաբանական և հղացքային միասնականությունը։ «Ժամանցային» գրականության, հատկապես թերթոն վեպի պարագրկումներում ընթացքն անհամեմատ արագ է տեղի ունենում, քանի որ կազմաբանական ավարտուն գործառություններն ու մողելները փոխանցվում են ստեղծագործությունից ստեղծագործություն (վեպն ըստ էության թերթոնագիրների համար հաճախ ընկալվում և իրացվում էր որպես «պարապ վախտի խաղալիք», «թեթև» զբաղմունք) ժանրից ժանր՝ հընթաց հիմնովին տարտղնելով իրականն ու հորինածը, վավերականն ու երեակայականը (fiction-ն ու factioնը)<sup>124</sup>։

Ինքնին հասկանալի է, որ հուշագրությունն ինքնակենսագրության անկապտելի բաղկացյալներից է։ Բախտինն իր «Դաստիարակչական վեպը և նրա նշանակությունը ռեալիզմի պատմության մեջ» ուսումնասիրության մեջ ժանրի «կենսագրական կառույցի» հետևյալ տարատեսակներն է առանձնացնում՝ զին, նախի ձև՝ հաջողություն-անհաջողություն կառույցով, խոստովանական ձև՝ կենսագրություն-խոստովանանք կառույցով և վարքագրական ձև։ Իբրև սրանց

123 Ռուսայի «Խոստովանության» մասին խնդրի առումով հետաքրքիր քննություն ենք գտնում «Сцепление жанров» ուսումնասիրության մեջ։ (Տե՛ս «Жанровое разнообразие современной прозы Запада», Էջ 4-16)։

124 Ժանրի անօլիագիր եղբարանության մեջ իբրև վեպի հոմանիշ կիրառում են fiction եզրը, իսկ հուշագրության, օրագրության համար իբրև ընդհանրական հասկացություն factioնը կամ՝ non fictionը։ Թե՛ ժանրի ասորովիան, թե՛ վիպայնության երևությը պայմանավորված է հենց fictionի և factioնի հիմնովին տարտղնումով։

հիմքին ձևավորված կարեոր տարատեսակ մատնանշում է XVIII դարում ձևավորված ընտանեկան-կենսագրական վեպը<sup>125</sup>: Երվանդ Օտյանի «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրություն-ինքնակենսագրականը ներառում է և՝ նախ, և՝ վարքագրական ձևերը՝ ամենատարբեր կառույցներով: Ավելին, ընթերցման տիրույթներում բնագիր-ընթերցող համաձայնությունը կենսագրությում է հուշի, կենսագրության՝ իբրև վեպի իրացմամբ: Օտյանի անհատական կենսագրությունը փոխաձևվում է սոցիալական պատմության՝ հուշագրության շրջարկում ենթարկվելով վեպի կանոններին: Օտյան-անհատի վարքագրություն-տարագրության ողիսականը, որը ներառում է 1896-1898-ի Աղետը, ազգայինքաղաքական ինստիտուտները (կուսակցություններ և կուսակցական պայքար, գաղթ-գաղութներ, հասարակական կյանք, մշակութային գործունեություն և այլն) գեղարվեստականի և վավերականի սիմբիոզ վիպում է: Սա անշուշտ հայոց նոր արձակի պատմության մեջ բոլորովին նոր որակ ու արտահայտություն էր, ինչն էլ առիթ է տվել Օտյանի գրականության մեջ նկատելու «առանձին ու սեպհական յղացք», որը դուրս է «արևմտահայ ծանօթ գրական կաղապարներէն»<sup>126</sup> և գրողի լավագույն վեպն է, քանի որ այստեղ ըստ ամենայնի առկայվել է վիպայնության թեթևությունը, անփութությունը, հասարակությունը<sup>127</sup>: Պատահական չէ, որ ինքնադատականում Օտյանը երբ «Հեղափոխության մակարույժները» համարում է «յաջողածներ... վէպերուս մէջ»<sup>128</sup>, ոչ թե «վեպ» ասելով նկատի ունի շարքի ժամրային պատկանելությունը, այլ վիպայնության հանդամանքը:

«Տասներկու տարի Պոլսեն դուրսը» իր «Եղիպտահայ երևելիներ»<sup>129</sup> դիմանկարներ ներփակող գլխով օտյանական ժառանգության գերբնագրի մասն է կազմում՝ սկսած Պոլսից իր փախուստի վիպումով (փոխկապակցված նամակների շրջարկին) և ավարտված Պոլիս վերադարձով ու փաթոցավորների զանգվածային խժութությունների նկարագրություններով: Այս ինքնակենսագրություն-վարքագրություն-հուշագրության շրջարկում ենք գտնում օտյանական վիպումի այնպիսի բարձրակետեր, որպիսիք են Յանեսքոյի պատումը, Փրկության բանակի դիպաշարը, ստեղծագործության կառույցով մեկ տարասիւմը Արփիար Արփիարյանի վարքագրական շերտը:

125 Տե՛ս **М. Бахтина**, «Эстетика словесного творчества», с. 206-207:

126 Յ. Օշական, «Համապատկեր...», Բառ. VIII, էջ 436:

127 Օշականը արձակ հորինման պահեղումները, ասել է թէ՝ ժամերի, ժամերի կազմաքանդումը համարում է «Պարոնյանի «Անդերլո»» ամփոփելով. «Երանի թէ հարիւրապատիկ ունենային անոնցմէ իր ընկերները ու ըլլապին փրկած իր ժամանակէն ամել տապ անգամ աւելի քիչ, ես սիրով այդուի տպի իրենց արձակությունը: Ժամանակը կնաշխատի ի հաշի Պարոնեանին ու ի վնաս Թուրքեանին» («Համապատկեր...», Բառ. IV, էջ 71):

128 Տե՛ս «Հայրենիք», 1927, № 9, էջ 37:

129 Ինչն ամհասկանապի պատճառներով տեղ չի գտել գործի երևանական հրատարակության մեջ (տե՛ս Ե. Օտյան, Եժ, Բառ. IV):

## ԾԻԾԱՂԸ ԵՐՎԱՆԴԻ ՕՏՅԱՆԻ ԹԵՐԹՈՆ ՎԵՊԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ա.

«Ժամանցային» գրականությունը ընդգծված հակվածություն ունի ծիծաղի հանդեպ: Նկատի ունենք ծիծաղն իբրև գեղագիտական, ստեղծաբանական և ստեղծագործական կերպ, համակարգ: Միջադաշտի հակվածությունը հատկապես նկատելի է թերթոն վեպերում: Պատահական չէ, որ թերթոնագրության վիճակագրությունը ցուցանում է երգիծական ստեղծագործությունների (թերթոն երգիծավեպերի) մեծաքանակություն: Այդօրինակ միտումն ինքնին հասկանալի է, քանի որ ծիծաղի ֆենոմենն առհասարակ ժամանցայնության էական պայմանավորողներից, եթե չասենք հրամայականներից մեկն է: Հստ Հերբերտ Սպենսերի տեսության, այն ուղղակիորեն կապված է բանականության (ուղեղի աշխատանքի) ծայրագնա գրգուման և այդ գրգուման վերջնասահմանների հետ (հար և նման արցունքի՝ (լացի) թե՛ ֆիզիոգիական, թե՛ «իմացաբանական» առումներով):<sup>130</sup> Սպենսերի ծիծաղի և արցունքի (լացի) տեսության այս հիմնային նկատառումը թերթոն վեպի կազմաբանության, ինքնության էատարրերից է, քանի որ ընթերցման ծայրագնա գրգուվածությունն ու դրա սահմանային տիրույթներում հանգրվանումն է ապահովում ժամանցայնությունը: Հետևաբար, բնական է այն իրողությունը, որ ինչպես եվրոպական, այնպես էլ հայկական թերթոն վիպագրության մեջ իբրև գեղագիտական, ստեղծագործական, ստեղծագործական կերպ, համակարգ, ծիծաղը բավական տարածուն է:

Այս խորքին կարևոր ենք համարում փոքր-ինչ մեկնաբանել գրականագիտության, առհասարակ գեղագիտության մեջ կիրարկվող ծիծաղ և երգիծանք եղբարը: Հաճախ ենք հանդիպում այս հասկացությունների հոմանիշային կիրառմանը գրականագիտական զանազան ուսումնասիրություններում, ինչը, կարծում ենք, հասկացությունների շփոթ է ստեղծում: Բանն այն է, որ ծիծաղը գեղագիտական, ստեղծագործական, ստեղծաբանական կերպ է, ֆենոմեն, իսկ երգիծանքը այդ ֆենոմենի մասնահատուկ դրսեւորումներից մեկը, ինչպես, օրինակ, հումորը, գրոտեսկը, պարողիան: Մեկնելով այս հանգամանքից՝ ճշգրիտ չէ Պարոնյանին, Օտյանին, Գոչունյանին, Թոլայանին, Ալփիարին, Նշան Պեշիկթաշլյանին երգիծաբաններ կամ երգիծական գրականության ներկայացուցիչներ կոչելը, քանի որ եթե Պարոնյանի, Թոլայանի, Ալփիարի պարագային երգիծաբան ընութագրումը նկատի է ունենում այն հանգամանքը, որ նրանց գրական ժառանգությունը պարփակված է միայն ծիծաղի տիրույթներում, ապա երգիծական գրականությունը Օտյանի, Գոչունյանի, Նշան Պեշիկթաշլյանի ժառանգության մեջ դրսեւորումն է միայն: Ավելի մանրամասն այս իրողության մասին կխոսենք Պարոնյան-Օտյան առնչություններին, զուգահեռներին անդրագառնալիս:

Հաճախ թերթոն վեպի շրջարկում ծիծաղի գեղագիտությամբ հեղինակած

130 Տե՛ս Հերբերտ Սպենսեր, “Слезы, смех и грациозность”, С.-Петербург, 1898 թ., с. 4:

բոլոր ստեղծագործությունները բնութագրվում են որպես «երգիծավեպեր՝ նկատի ունենալով թերթոնի կառուցյում և՝ երգիծանքի, և՝ հումորի և թե՛ առհասարակ ծիծաղի այլ մասնահատուկ արտահայտությունների դոմինանտությունը։ Այսինչ, ըստ վիճակագրական տըվյալների, բացի «երգիծական վեպերից», թերթոն վեպերի շրջարկում առլեցուն են «թերթոն-պարողիաները», «գրոտեսկային վեպերը», բացառապես անեկդոտի և հումորի հենքին խարսխված ստեղծագործությունները։ Հասկացությունների բավականին քմահաճ կիրարկումը բանը հասցնում է թյուրիմացությունների։ Երբեմն ոչ միայն անհարկի նույնականացվում են ծիծաղն ու երգիծանքը, այլև հաճախ դիտարկվում իբրև ժանր։ Այսպես օրինակ, Լեռն Հախվերդյանն «Ընկեր Փանջունու» առիթով գրում է. «Երգիծաբանությունն (ակնհայտ է, որ նկատի ունի թե՛ ծիծաղը, թե՛ երգիծանքը – Գր. Հ.), ինչպես ամեն մի գրական ժանր, իր օրենքն ունի, և այդ օրենքը կյանքի ինչ-ինչ երկույթների քննադատությունն է՝ ծաղրի, ծիծաղի, հեղնանքի, հումորի միջոցներով»<sup>131</sup>: Նախ՝ ծիծաղն իր արտահայտման եղանակներով (հեղնանք, հումոր, պարողիա, գրոտեսկ և այլն) ոչ թե ժանր է, այլ իրականության գեղագիտական, գեղարվեստական, ստեղծագործական արտացոլման եղանակ, և ապա՝ ծիծաղի «օրենքը» սոսկ կյանքի, իրականության տարբեր երկույթների քննադատությունը չէ, այլ ծիծաղին ներհատուկ միջոցներով ու արտահայտություններով գոյության վերստեղծումը։

Այսպիսով, երբ խոսում ենք թերթոն վեպի շրջարկում ծիծաղի արտահայտությունների մասին, նկատի ենք ունենում ընդհանրապես ծիծաղի գեղագիտությամբ, ստեղծաբանական եղանակով հեղինակած երկերը։ Լինեն դրանք «երգիծավեպեր» թե «պարողիա վեպեր», «վեպ իրոնիաներ» թե անեկդոտիկ-հումորային պատումներ։

Ինչպես արձանագրեցինք, հայոց «ժամանցային գրականության», թերթոն վեպի համապատկերում այսօրինակ ստեղծագործությունները բավականաչափ մեծ տեղ են գրավում, որի խտացումը և հանդրվանը երվանդ Օտյանի համապատասխան ստեղծագործություններն են։

Թերթոն վեպի ինքնությունն առարկայաբար հնարավորությունն է ընձեռում ծիծաղի ամենատարբեր արտահայտությունների դրսելորմանը։ Արդեն թերթոնի ժամանցային բնույթը ընդգծված հարմարվողականություն ունի ծիծաղ առաջացնող լեզվական կաղապարների, ծիծաղի տարբեր եղանակների և միջոցների համար (պարողիա, բառախաղեր, լեզվական «թյուրիմացությունների» հոսք, ընդհանրապես խոսքի կոմիզմ, երգիծանք, գրոտեսկ, ալողիա, դրության կոմիզմ, «թյուրիմացությունների շըահանդես» և այլն)։ Ժամանցայնության հրամայականներից մեկը ծիծաղ առաջացնելն է, ընդ որում ծիծաղի տարածել արտահայտություններ (հաճախ միևնույն ստեղծագործության մեջ այդ արտահայտությունների համադրությամբ՝ իրոնիա, սատիրա, բառախաղ և պարողիա, հումոր և ալողիա՝ միմյանց փոխներթափանցված կամ սերտաճած)։ Թերթոնի ընթերցողական զանդվածայնությունը պայմանավորված է նաև այս հանգամանքով։ Ընթերցողական հսկայական պահանջարկը պատկերավոր ասած պայ-

131 Ե. Օտյան, «Ընկեր Բ. Փանջունի», Երևան, «Հայաստան» հրատ., 1989 թ., Էջ 9:

մանավորում էր այն նավապետին, որն առաջնորդում էր «Հիմարների նավը»: Արդարեւ, թերթոնագիր վիպասանը նմանվում է Սեբաստիան Բրանտի նավապետին, որը, թեև տիմարների ու հիմարության պատկերասրահ ստեղծելու գժվարությանը, «առանձնահատուկ տաղանդի» շնորհիվ նավարկության է տանում, ասել է թե՝ պատկերագրում է «Հիմարների նավը»<sup>132</sup>:

Հետևաբար, թերթոն վեպն իր ժամանցայնությունը պայմանավորում է նաև ծիծաղի կերտումով: Ծիծաղի ֆենոմենով է նաև պայմանավորված այն իրողությունը, որ թերթոն վիպագրության ինքնությունը հստակ ընդգծված սքեթչային տարերք ունի: Հայոց թերթոն վեպի ծիծաղի գենեալոգիան ուղղակիորեն կապված է Հակոբ Պարոնյանի ժառանգությանը: Ավելին, պարոնյանական ծիծաղի գեղարվեստական համակարգը ուղղակիորեն ընդլայնվել և ծավալվել է երգիծական թերթոններում՝ Երվանդ Թոլայանի, Միսաք Գոչունյանի, Երվանդ Օսյանի համապատասխան ստեղծագործություններով: Այսպես օրինակ, միայն «Մեծապատիվ մուրացկանները» Օտյանի ծիծաղի սկզբունքներով կերտված խմբագիրների, տարբեր միջնորդների, արկածախնդիրների, թեթևաբարոնների, ֆանֆարոնների, տիմարների, կծինների ծագումնաբանական ակունքն է, շատ երգիծական թերթոն վեպերի գիպաշարերի հիմքը (օրինակ՝ Թոլայանի «Իտեալին ետևեն», Օտյանի «Տոքթոր Վարդան», «Միջնորդ տեր պապան»)<sup>133</sup> ստեղծագործությունների):

Ծիծաղին թերթոն վեպի արտակարգ հարմարվողականությունը պայմանավորված է նաև երկուսի ինքնությունը կազմակերպող մասնահատկություններով: Թերթոնի ինքնությանը, ինչպես արդեն արձանագրել ենք, բնորոշ է ընդգծված համաձայնությունը ընթերցման դաշտի (ընթերցողի) հետ: Ժամանցայնությունը ապահովագրվում է նաև այս համաձայնությամբ, երբ վեպն ընթանում է բացառապես այդ համաձայնության շրջանակներում: Նույնն է պարագան ծիծաղի գեղագում: Ծիծաղի փիլիսոփայության, գեղագիտության խոշորագույն տեսաբան Անրի Բերգսոնն իր հիմնարար ուսումնասիրության մեջ իբրև ինքնության էտապը կարևորում է համաձայնությունը. «Որքան էլ որ ծիծաղն անկեղծ է, այն միշտ պարունակում է (թաքցնում է – Գր. Հ.) համաձայնության իմաստը, ես կասեի անգամ գրեթե դափարությունը՝ ծիծաղող իրական կամ երևակայական ուրիշ մարդկանց հետ»<sup>134</sup>: Առարկայորեն ծիծաղը «ժամանցային գրականության» հիմնական գերակայություններից է<sup>135</sup>: Անչափ կարևոր է նաև Բերգսոնի այն նկատումը, թե ծիծաղն անհամատելելի է հոգեկան տագնապների, տվյալանքների հետ<sup>136</sup>: Այս հանգամանքն ըստ ամենայնի կիրառելի է նաև «ժամանցային գրականության», թերթոն վեպի պարագային: Հիրավի,

132 Տե՛ս **Себастиан Брант**, “Корабль дураков”, Москва, Изд. “Худ. Литература”, 1984 ր., с. 24:

133 Այսպես օրինակ «Միջնորդ տեր պապան» թերթոնի կոլիգիան «Մեծապատիվ մուրացկանների» 11-րդ և 12-րդ գլուխների բացահայտ ուժի միջնորդներն է: Տե՛ս Հ. Պարոնյան, Եժ, հո. III, էջ 92-97:

134 **Анри Бергсон**, “Смех”, Москва, Изд. “Искусство”, 1992 ր., с. 13.

135 Այստեղ ավելորդ չէ արձանագրել Բերգսոնի ընդիմանական նկատմանը, թե ծիծաղը պետք է համապատասխան մարդկան համատեղ կյանքի պահանջմունքներին և պետք է հասարակական նշանակություն ունենա : (Տե՛ս Բույն տեղում, էջ 14):

136 Տե՛ս Բույն տեղում, էջ 115:

թերթոն վեպն իբրև ժամանցը պայմանավորող ստեղծագործական սուբստանց, անհամատելի է հոգեկան տագնապների, տվյալտանքների հետ՝ անկախ մելոդրամատիկ պատումների այն հոսքերից, որտեղ օղակվում են ողբերգականն ու երգիծականը: Տվյալ դեպքում նկատի պետք է ունենանք նաև այն հանգամանքը, որ «երգիծանքը (ասել է թե ծիծաղը – Գր. Հ) ազատութիւն մըն է միայն դէպքերուն հանդէպ»<sup>137</sup>, իսկ դեպքի, իրադարձության անընդհատական դարձարձումները ընթերցող-թերթոնագիր համաձայնության առանցքն են:

Մեկնելով վերը նշածից՝ կարող ենք եզրակացնել, որ ծիծաղն իբրև «համապարփակ արարք»<sup>138</sup> երգանդ Օսյանի թերթոններում առթում էր ստեղծագործական հսկայական տարածք՝ ծիծաղին բնորոշ դիպաշարային, տիպաժային արքետիպերով, ծիծաղի միջոցների բազմաքանակ գործառությունների առկայությամբ: Պակաս կարեոր չեն նաև գրողի անհատականությամբ պայմանավորված հանգամանքները: Օսյանն իր հոգեկերտվածքով հեգնող էր, որը Ռիչարդ Ռորտիի բնութագրած հեգնողի նման միշտ և հետևողականորեն տատամսումների, կասկածանքների շրջանակում է, և ոչինչ չի կարող ո՛չ հաստատել, ո՛չ էլ ցրել նրա տատամսումներն ու կասկածանքները<sup>139</sup>: Իսկ հոգեկերտվածքով հեգնող անհատականության համար<sup>140</sup> ծիծաղը բացարձակ ազատությունն է, ինչին ձգտում է յուրաքանչյուր արվեստագիտ: Հավանաբար այս հանգամանքով է պայմանավորված այն իրողությունը, որ անգամ նրանք, ովքեր մեծ վերապահությամբ էին ընդունում օտյանական թերթոնները, անկախ այն իրողությունից, որ դրանք արժեկորում էին «նորմատիվ, դասական» վեպի չափորոշիչներով, անվերապահ էին նրա թերթոն երգիծավեպերը գնահատելիս, ինչպես Հակոբ Օշականը<sup>141</sup>:

## Բ.

**Ծիծաղի տեսությունը** (փիլիսոփայությունը, գեղագիտությունը, ստեղծաբանական կիրարկման արտահայտություններն ու կաղապարները, պատկերագրման-արտահայտման միջոցները) հումանիտար մտքի, մշակութաբանության և գեղագիտության կողմից վաղուց անտի եղել է ուշադրության կենտրոնում: Այս մասին անտիկ շրջանից մինչև մեր օրերը ստեղծվել է վիթխարի գրականություն: **Ծիծաղի** (երգիծանքի) քննաբանության համապատկերում անպայմանորեն պիտի առանձնացնենք գերմանական դասական փիլիսոփայու-

137 Յ. Օշական, «Համապատկեր...», հտ. IV, էջ 39:

138 Նույն տեղում, էջ 119: Օշականը «համապարփակ արարք» է համարում հեգնանքը և հեգնելը, ինչը թե՛ տվյալ դեպքում, թե՛ օտյանական շրջարկում կիրարկվում է իրին ծիծաղի հոմանիշ:

139 Ռորտիմ իր “Случайность. Ирония и солидарность” (Москва, РХО, 1996 г.) ուսումնասիրության մեջ հեգնողին բնութագրում է “Ирония и теория” բաժնում (տե՛ս նշված աշխատությունը 103-104-րդ էջերը):

140 Երբ մի առիթով Օտյանին հարցնում են ստեղծագործական առանձնահատկությունների, գրելու սկզբունքների մասին, նա պատասխանում է, թե գրում է «...լուրջ բաներու մասին թեթևորեն, իսկ թեթև բաներու մասին լրջորեն»: Տե՛ս «Պայքար», Բոստոն 1961, էջ 104, Ս. Մուրադյան «Երվանդ Օտյան...», էջ 77:

141 Տե՛ս Յ. Օշական, «Համապատկեր...», հտ. VIII, էջ 362:

թյան (Կանտ, Հեգել), ոռմանտիզմի տեսաբանների (Շելինգ, Ժան-Պոլ, Նովալիս), կյանքի փիլիսոփայության (Շոպենհաուսեր), դրավաշտության (Սպենսեր), Անրի Բերգասոնի, Զիգմունդ Ֆրեյդի, Միխայլ Բախտինի, Վլադիմիր Պրոպալի հիմնարար ուսումնասիրությունները, որտեղ ըստ էության հետազոտվել են ծիծաղի (երգիծանքի) փիլիսոփայական, գեղագիտական, բնախոսական, հոգեբանական, բնագանցական բոլոր էատարերը, դասակարգվել, բնութագրվել և վերլուծվել է ծիծաղի արտահայտչական միջոցների ամբողջական շրջանակը: Անշուշտ այդ հիմնարար աշխատություններում և բազում այլ ուսումնասիրություններում հետազոտական ամենատարբեր դիտանկյուններով և մեթոդաբանությամբ մեկնաբանվել են թե՛ համաշխարհային երգիծական գրականություննը և թե՛ ծիծաղի փիլիսոփայությանն ու գեղագիտությանը ընթերվող գրեթե բոլոր քիչ թե շատ նշանակալի գրական հուշարձանները: Ծիծաղի տեսության (գեղագիտության, փիլիսոփայության) ամփոփ, սակայն տարողունակ պատմությունը, մեթոդաբանական մոտեցումների քննական անդրադարձը հիմնաւուի է ներկայացրել Պրոպալի «Կոմիզմի և ծիծաղի խնդիրները» արժեքավոր ուսումնասիրության մեջ<sup>142</sup>: Համանման ակնարկ ունի նաև լեհ գեղագետ Բոգդան Զեմիրոկը երգիծանքին նվիրված իր ուսումնասիրության մեջ<sup>143</sup>: Թե՛ Պրոպալը, թե՛ Զեմիրոկը, մեկնելով նախորդ հսկայական նյութից, երգիծականի ֆենոմենը (բոլոր դրսերումներով՝ հումոր, կատակ, երգիծանք, գրոտեսկ, հեգնանք և այլն) ուղղակիորեն դիտարկում են իբրև ծիծաղի տեսություն: Նրանք իբրև ծիծաղի տեսություն են դիտարկում Արխտոտելի, Հոբսի, Ստենդալի հայեցությունները երգիծանքի մասին, «դեգրադացիայի տեսությունը» (Բեյն), «հակադրության տեսությունը» (Կանտի հայեցությամբ պայմանավորված թեոդոր Լիպսի աշխատությունները), «հակասությունների տեսությունը» (Շոպենհաուսեր, Հեգել, վերջինիս ծիծաղի (երգիծանքի) հայեցակարգում մեզ հետաքրքրող խնդիրի քննության տեսակետից ուշարձան են փիլիսոփայի դիտարկումները հեգնական (իրոնիկ) գոյակերպության և հեգնանքի՝ իբրև ստեղծաբանական արարողականության մասին<sup>144</sup>, որոնք ուղղակիորեն առնչվում են «ժամանցային» գրականության և մասնավորաբար՝ թերթոն վեպի հետ, որոնց երգիծական արտահայտությունների մեծ մասը պարուղիաներ են, ասել է թե՝ ստեղծաբանորեն խարսխված են հեգնանքի (իրոնիայի) հենքին: Հեգելի հետեւյալ նկատումը, թե հեգնականը ամենայն մեծի և գերազանցի ինքնառչնչացումն է<sup>145</sup>, երգիծական թերթոն վեպերի հիմնական բնագրաստեղծ պայմանավորողներից է: Մեզ համար երգիծական թերթոն վեպի քննության պարագային ելակետային են «նորմայից շեղումների տեսություննը», «հանդիպադրվող մոտիվների տեսությունները» (Գրոս, Բերգասոն, վերջինիս «Ծիծաղ» ուսումնասիրության<sup>146</sup> «Կարծրացվածության»(կօտհոստե) տեսությունը), Փրոյդյան

142 Տե՛ս **B. Пропп**, “Проблемы комизма и смеха”, Москва, Изд. “Искусство”, 1976 թ.: Խնդրուառկան շարադրված է նրա մենագրության առաջին «Փոքր-ինչ մեթոդաբանության մասին, գլխում (Էջ 5-13):

143 Տե՛ս **Б. Дземидов**, “О комическом”, Москва, Изд. “Прогресс”, 1974 թ.:

144 Տե՛ս **Гегель**, “Эстетика”, Москва, Изд. “Искусство”, 1968 թ., թ. 1, с. 71-74:

145 Նույն տեղում, Էջ 73:

146 Բերգասոնի այս աշխատությունը ավելի հայտնի է «Ծիծաղը կյանքում և բեմում» վերնագրով:

տեսությունը և այլն: Ծիծաղի ֆրոյդյան տեսության շրջարկում, նկատի ունենք «Արամտությունը և նրա հարաբերակցությունն անդիտակցականի հետ» ուսումնասիրությունը<sup>147</sup>, երգիծական թերթոն վեպի ուսումնասիրության համար նույնպես մեթոդաբանական նշանակություն ունեն, հատկապես՝ սրամտությունների (սրախոսությունների) մասին նկատումները: Այսպես, սրամտության (սրախոսության) ֆրոյդյան տեսությունը էութենական է համարում հոգեկան ընթացքներից հաճույք ստանալու հանգամանքը<sup>148</sup>: Իրողությունն, որ երգիծական թերթոն վեպերի ժամանցայնության հրամայականն ապահովագրելու գորավոր եղանակներից մեկն է: Ընթերցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ սրամտության (սրախոսության) փոխաձևում հոգեկան գործնթացի, ինչն էլ ապահովագրում է հաճույք կլլելը: Ընդ որում սրամտությունը (սրախոսությունը) իր բոլոր տարբերակներով (այսպես կոչված «թշնամական», «սկաբրեզային» (անպարկեցած), միտումնավոր՝ ցույց տալով մերկացնող, ցինիկ, սկեպտիկ միտումներ և այլն) երգիծական թերթուններում և մասնավորապես Երվանդ Օտյանի «Ժամանցային վիպագրության» «մշտական ներկայություններից» է: Ծիծաղի ֆրոյդյան տեսությունը (դրա արտահայտություններից հատկապես մանրամասնում է հումորը) երգիծական արվեստը քննաբանելիս բնականաբար հանդում է այն ենթագրելի եղանակացությանը, որ կոմիզմը (կոմուսը) խարսխված է պատկերացումների հակադրության վրա: Հանգամանք, որ նույնպես «երգիծական թերթոն վեպի» արարողական էատարրերից է:

Ծիծաղի փիլիսոփայության, գեղագիտության պատմական համապատկերում ինչպես տեսական խնդիրների, այնպես էլ երգիծական արտացոլման միջոցների և եղանակների ուսումնասիրության ասպարեզում հանգրվանային են գերմանական ռոմանտիզմի և մասնավորապես ժան-Պոլի (Ռիխտերի) տեսությունները:

Երգիծական արտահայտչամիջոցների, ձևերի և եղանակների առանձնացումը, դասակարգումն ու բնութագրումները երգիծական գրականության համար, անկախ գրական հոսանքներից ու ուղղություններից, առհասարակ կայուն ունիվերսալիստներ են: Նույնական, օրինակ, Ապոլելի, Էրազմ Ռոտերդամցու, Սեբաստիան Բրանտի, Բոկաչչոյի, Սերվանտեսի, Շեքսպիրի, Լուի դե Վեդայի, Ռաբլեի, Ստերնի, Մոլիերի, Դոդեի, Թեքերեյի, Գոդոլի, Սալտիկով Շչեդրինի, Մարկ Տվենի, Հակոբ Պարոնյանի, Գեորգ Այվազյանի, Վահան Փափազյանի, Առանձարի, Ալփիարի, Թոթովենցի, Բակունցի, Բերնարդ Շոուի, Լիկոլի, Վուդի Ալենի, Էլիաս Կանետտիի, Նշան Պեշիկթաշլյանի ստեղծագործությունների համար: Գերմանական ռոմանտիզմների ծիծաղի և ծիծաղելիի սահմանումները, համակարգված և բնութագրված տարրերը գործում են համաշխարհային երգիծական գրականության անխտիր բոլոր գրսեռորումներում: «Ժամանցային գրականության» մեջ բնագրաստեղծ գերակատարություն ունեն ժան-Պոլի կոմիզից վերհանած կաղապարները, պարողիայի տեսական նկատառումները մարդկանց, իրերի և առարկաների անդրափոխության և մետա-

147 Տե՛ս Յ. Փրեյծ, “Избранные”, Москва, Изд. “Внешториздат”, 1990 թ., с. 243-369:

148 Նույն տեղում, էջ 249:

մորֆոզների, էպիկական կոմուսի, ծիծաղի և ծաղրի հարաբերակցության և փոխներթափանցման, պատկերավոր սրամտության, բառախաղերի մասին<sup>149</sup>:

Ծիծաղի տեսությունն անդրադարձել և դասակարգել է երգիծական տիպաժների ամբողջական պատկերասրահը՝ ժլատ, տխմար, փառատենչ, խորամանկ, խաչագող, քմայքոտ, «Հակագործիչ», հնարամիտ, պատեհապաշտ, ֆիզիկական, կազմախոսական չափորոշիչներով տիպաժներ և այլն: Թվարկեցինք այն տիպաժներին, որոնք «Ժամանցային գրականության» մեջ վիճակագրական տեսանկյունից ամենաշատ հանդիպողներն են, իսկ Օտյանի թերթոն վեպերում տիպաժների ողջ պատկերասրահը: Այստեղ բոլորովին նպատակ չունենք անդամ ուրվագրով անդրադառնալ ծիծաղի տեսության պատմությանը: Այս հպանցիկ ակնարկում մեզ հետաքրքրողը ծիծաղի տեսության հիմնական, կարելի է ասել այն սկզբունքային խնդիրներն ու իրողություններն են, որոնց ընթերումները «Ժամանցային գրականության», թերթոն վեպի հետ երգիծական թերթոն վեպի համար ստեղծաբանական առանցք և խթան են հանդիսացել:

Այս առումով ևս մեկ նկատառում: Կարծում ենք, որ թերթոն վեպերի շրջարկում «երգիծավեպերի» մեծաքանակության պայմանավորող կարեւոր հանդամանքներից է այն, որ ծիծաղն ինքնին «Փորմալացված» երևույթ է, ունի հըստակ կաղապարներ (կառուցվածքային և իմաստային անփոփոխ գործառություններ, կերպար-կաղապարներ), որոնք թերթոնի համար առավել նպատակահարմար են ու կիրառելի: Պատահական չէ, որ Օտյանի թերթոն վեպերում «երգիծավեպերը» կազմում են գրեթե կեսը, նույնն է պարագան ընդհանրապես հայոց թերթոն վեպում:

Ծիծաղի բազմաթիվ, սակայն խորքի մեջ նույնական սահմանումներում, որպես կանոն, ընդգծվում է ծիծաղի (առհասարակ ծիծաղի բոլոր ձևերի) թողած անսպասելիության էֆեկտը: Այսպես օրինակ, Սեմուիկը Քոլրիջը գրում է. «Ընդհանուր առմամբ հումորը (նկատի ունի առհասարակ ծիծաղը – Գր. Հ.) մտքերի և պատկերների գարմանալի կապ է, որն անսպասելիության էֆեկտ է թողնում ու ըստ այդմ հաճույքը պատճառում»<sup>150</sup>: Երգիծական թերթոն վեպերի ժամանցայնության դերակատարությունն ամենից առաջ պայմանավորված է սրանով: Անսպասելիության հրամայականն է ապահովագրում ընթերցման, իբրև հաճելի ակտի, հաճույքի պարագան: Հայոց երգիծական թերթոն վեպերի, ի մասնավորի Օտյանի երգիծական թերթոն վեպերի առանցքը, ծիծաղի բնագրաստեղծ ընթացքը խարսխված է անսպասելիության վրա: Անկախ գեղագետների կողմից տարբերակված ծիծաղի բնույթից և տեսակներից (երգիծանք, հումոր, հեգնանք, կատակ, զավեշտ, գրուեսկ, ուրախ ծիծաղ, արցունքի ծիծաղ, այլպանող ծիծաղ, բազմանշանակ ծիծաղ, անառիթ ծիծաղ, նախվ ծիծաղ, վեհերուտ ծիծաղ և այլն): Տակավին Լեսսինգն իր «Համբուրգյան գրամատուրգիայում» տարբերակում էր ծիծաղեն ու ծիծաղեցներ՝ իբրև ստեղծաբանական հայեցություններ, ծիծաղի ստեղծումի առանձին մոդելներ: Ահա և ենելով այս

149 Տե՛ս օրինակ՝ **Жан-Поль**, “Приготовительная школа эстетики”, Москва, Изд. “Искусство”, 1981 թ., с. 158-162, 184-205:

150 Տե՛ս **С. Колъридж**, “Избранные труды”, Москва, Изд. “Искусство”, 1987 թ., с. 231:

տարբերակումից՝ պետք է արձանագրել, որ ժամանցային գրականության համար գերակայելին (եթե չասենք Հիմնականը) ծիծաղեցնելն է: Այս իրողությունը բնորոշ է Երվանդ Օտյանի թերթոններին: Անգամ այն գեպքերում, երբ թեկուզ տարտամ, խստագույնս քողարկված երևան է գալիս հեղինակային ծիծաղը, ապա այն չի դառնում ո՛չ բնագրաստեղծ հանգամանք, ո՛չ առավել ևս ստեղծագործության գեղագիտական դիտանկյուն, այն ընդամենը ծիծաղեցնելը պայմանավորող լրացուցիչ միջոց է:

Անշուշտ, հայոց թերթոնագրությունը և հատկապես Երվանդ Օտյանը իրենց խնդրո առարկա ժառանգության մեջ մի կողմից շարունակում էին տակավին Հակոբ Պարոնյանի կողմից բյուրեղացրած ծիծաղի ավանդույթները (չպետք է մոռանալ, որ Պարոնյանը ոչ միայն մեզանում ծիծաղի ֆենոմենը հաստատագրեց իրեւ գեղարվեստական-ստեղծագործական նորմա, այլև, ըստ էության, հաստատագրեց ծիծաղի ազգային կերպը), մյուս կողմից՝ հարստացնում էին ծիծաղի ազգային տարբերակը՝ հատկապես ծիծաղեցնելու գեղարվեստական-ստեղծագործական ասպարեզում: Այստեղ հսկայական է Երվանդ Օտյանի գերակատարությունը: Հենց ծիծաղեցնելու հրամայականն էր, որ հայոց երգիծական թերթոնագրությանը և հատկապես Երվանդ Օտյանին հնարավորություն էր ընձեռում ծիծաղի ինքնությանը բնորոշ, բնույթային սահմանափակությունը, բախտինյան բնորոշմամբ՝ «մասնակի և մասնավոր աշխարհահայեցության ձևի»<sup>151</sup> առարկայական սահմանափակություններն ըստ կարելվույն շրջանցել: Տվյալ դեպքում նկատի ունենք հատկապես «Միջնորդ տեր պապան», «Դատաստանական խորհուրդի առջև», «Վաճառականի մը նամակները», «Պրոպագանդիստը» թերթոնները:

Ծիծաղի տեսության և «ժամանցային գրականության», Երվանդ Օտյանի թերթոն վեպերի ընթերումների անդրագարձում հարկ ենք համարում շեշտել նաև այն իրողությունը, որ հայոց թերթոնագրության համակարգում ծիծաղի ֆենոմենը հանդես է գալիս ոչ միայն այդ նույն տեսությունների կողմից մատնանշված «բացասական» գործառույթներով, այլ «գրական» (տվյալ պարագային՝ զբաղեցնող, հոգսերը թոթափեցնող, իրականության թնջուկներից որոշ ժամանակով տարանջատող) գործառույթներով<sup>152</sup>:

Ինչպես հայոց երգիծական թերթոն վեպերի, այնպես էլ Օտյանի խնդրո առարկա ստեղծագործությունների համապատկերում բնագրաստեղծ, առհասարակ ծիծաղը գոյափորող ու պայմանավորող հատարը է պարողիան: Ավելին, Օտյանի երգիծական թերթոնների գերակշռող մեծամասնությունը ստեղծվել է պարողիայի կազմաբանությամբ («Պատերազմ և... խաղաղություն», «Միքել սիրարկածը», «Ճողուազրիսթ և ընկ.», «Ճեղքընթաց նորածինը», «Լևոն Շամբըցյան. խմողը և խորհուրդ», «Ընկեր Բ. Փանջունի»): Բերգսոնն իր նշանավոր աշխատության մեջ գրում է, որ կատակերգականը (ընդհանրապես ծիծաղը) «սկսվում է այնտեղից, որտեղից ուրիշ (մեկ այլ) մարդու անհատականությու-

151 Տե՛ս **М. Бахтина**, “Творчество Хрансуса Рабле и народная культура средневековья и Ренессанса”, Москва, Изд. “Худ. Литература”, 1984 г., с. 78:

152 Այս դեպքում թերթոն վեպի ծիծաղը նմանության եզրեր ունի ունեսանալի ծիծաղի գործառույթներին: (Տե՛ս օրինակ՝ Բախտինի ուսումնասիրությունը, էջ 83):

նը դադարում է մեզ հուզել...»: Սրանով է պայմանավորում ծիծաղի ամբիվալությունը (երկակիությունը): Ծիծաղն ամբողջովին չի պատկանում ո՛չ արվեստին և ո՛չ իրականությանը, գտնվում է յուրօրինակ միջանկյալ գիրքում<sup>153</sup>: Ամբիվալությունը բնույթային հատկանիշ է նաև «ժամանցային գրականության», թերթոն վեպերի համար, ինչը նույնպես ծիծաղի ֆենոմենի ուղղակի ընթերումների վկայությունն է մեզ հետաքրքրող գրականության հետ:

Երվանդ Օտյանի ժառանգության, մասնավորաբար թերթոն վեպերի գեղարվեստական համակարգում ծիծաղի խնդիրներին անդրադառնալիս, «երգիծավեպերը» մեկնաբանելիս առարկայական անհրաժեշտություն է առաջանում նաև խոսել խնդրի շուրջ մեզ հասած նրա ուղղակի և անուղղակի (հուշագիրների, նրա գործի մասին ժամանակակիցների առաջին անդրադարձների) նկատումներին, դատումներին և ինքնադատականներին: Ահա այս առումով կրկին պիտի հետեւնք Հակոբ Միրունու «Գիծեր երուանդ Օտեանի կեանքէն» ակնարկին, իբրև ամենահավաստի և հեղինակային ինքնադատականի համարժեք վկայության: Միրունին գրում է. «Օտեանը երգիծաբան էր, բայց երբեք չէր սիրեր երգիծական գիրքերը», նախընտրում էր լուրջ երկերն ու փորձագրությունները (պատմական, իմաստասիրական գործեր, Ուրնանի գրականության հանգույն հուշարձաններ), սկզբունքորեն չէր ընթերցում հայ կամ օտար երգիծաբանների ստեղծագործությունները, թեև քաջտեղյակ էր գրանց և ուներ հըստակ տեսակետներ<sup>154</sup>, բայց նախընտրում էր Ֆրանսին «անուշ հեգնութիւններու», «սկեպտիկ ժախտի», «խորհրդավոր քըմծիծաղի» համար<sup>155</sup>: Ամենայն հավանականությամբ Ֆրանսին բնութագրող մակղիքները Օտյանին են, նամանավանդ որ խիստ բնորոշ են նրա լեզվին: Ուշարժան է, որ անուշ հեգնությունը, ակեպտիկ ծպիտը և խորհրդավոր քննիչական երգիծանքի, առհասարակ ծիծաղի ինքնացնող տարերքն են: Ահա թե ինչու է Ֆրանսը հոգեհարազատ նրան: Գործում են նույն ստեղծաբանական չափորոշիչներն ու դիտանկյունները: Ահա թե ինչու էր Հակոբ Օշականը կշտամբում Օտյանին՝ նրա ժառանգության մեջ գերազանցապես «չոչնչացնող» հեգնությունը, ժպիտը և քմծիծաղը համարելով բոլորի հետ «բարեկամ լինելու» «պատեհապաշտություն», անտեսելով այն հանգամանքը, որ «բոլորի հետ բարեկամ լինելու» ծիծաղի կերպը ուղղակիորեն համարժեք է «բոլորի հետ բարեկամ չլինելու» ծիծաղի կերպին: Հետեւաբար «Հերքման» դաշտում թողնելով ծիծաղի այդօրինակ կերպը: Եթե նկատի ունենանք հեղինակային այն դիտարկումը, թե ինքը երբեք մտահոգված չի եղել հաճելի լինել, ընդհակառակը՝ ջանացել է միշտ անհաճութիւնում՝ «օճառէ պղպջակներէ՝ շինուած համբաւներու, գողութեամբ պարկեցտացած ազնուաշուքերու, բողութեամբ կուսացած պատիւներու, ունայնութեան վրա կառուցուած արժանիքներու»-ն, ապա պետք է արձանագրենք օշականյան գնահատության սուբյեկտիվիզմը: Ճիշտ է, հարկ ենք համարում անմիջապես

153 Տե՛ս **Անրի Բերեսոն**, «Смех», с. 85, 86, 106.

154 Այսպես օրինակ Վահան Փափազյանը (Լիլա) համարում է. «...միշակ, կամ ավելի ճիշտ ըսելու համար, գումարիկ կարողության տեղ զավեշտագիր մըմ էր, որուն թերթը շատ չեր տարբերիր ալժն Պոլստ մեջ լուս տեսնող երգիծաբերերեն» (Եժ. հո. IV, էջ 300):

155 «Հայրեմիք», 1927, № 8, էջ 48-49:

վերապահել, որ այս պաթուն ավելի բնորոշ է գրողի ոչ երգիծական թերթուն-ներին:

Արփիար Արփիարյանին հասցեագրած նամակներից մեկում *Օտյանը* գրում է. «Ատեն-ատեն մելամաղձիկ բաներ գրելու պէտք կը զգամ կոր բոլորովին չվայրենանալու համար»<sup>156</sup>: Կարծում ենք՝ նույնպես կարեոր խոստովանություն է, ինչն ինքնադատականի արժեք ունի *Օտյանի* գրողական խառնվածքը որոշակելու համար:

Զարմանալիորեն *Պարոնյան-Օտյան* նույնականությունը տարփողող օտյանագետները անտեսում են գրողի այս նկատումը: Ակներևաբար *Օտյանը* ակենարկում է ժամանցային երգիծական տեքստերի հոսքը՝ ընդգծելով հանապազօրյա զբաղմունք դարձած կանխորոշյալ կաղապարների տաղտկալիությունը: Ահա և դրանից պարբերական տարանջատումն այն կատալիզատորն էր, որ գրողին օգնում էր երգիծանքը (ժիծաղը) չնմանեցնել գրական ընթացքում այնքան տարածված զառածումներին, որոնք բոլորովին շքագերծում էին ծիծառն ու երգիծանքը՝ դրանք անասելիորեն գոեհկացնելով, պարզունակացնելով:

Ի դեպ, օտյանագիտությունը հաճախ պարզունակ է ընկալել և մեկնաբանել գրողի ծիծաղը: Երգիծական ժառանգությունն ուղղակիորեն և միագծորեն դիտարկելով այլանող ծիծաղի սոցիալական և քաղաքական ընդգրկումներում: Այսինչ օտյանական ծիծաղը ո՛չ ճակատային ուղղագիծ է, ո՛չ էլ միակողմանի: Այս խորքին այնպիսի նրբազգաց և խորագետ արվեստագետի և գեղագետի խիստ հետաքրքրական արձագանքն ենք գտնում, ինչպիսին Տիրան Զրաբյանն է: Միքայել Կյուրծյանին հասցեագրած 1904 թվականի հունվարի 23-ի նամակում նա մասնավորապես գրում է. «Այդ օրէն ետքը *Օտեանը scene* մը գրած էր թերթի մը մէջ. պզտիկ comedieի պէս բան մը՝ որուն մէջ Տիրան անունով և ապուշցած մէկը կար կարծեմ: Այդ օրէն ի վեր նեղացած եմ *Օտեանէն*. (՝) – Գնաց եկաւ տէ Տիրա՞ն դրաւ իր մարդուն անունը, զիս տեսնելէն անմիջապէս ետքը: Կարծես թէ իմ լուակեցութիւնս, նոյն իսկ աննշան կէս մեկուսութիւնս քաղինոյին մէջ պատճառ եղած էր այդպիսի տիպարի մը երեւակայելուն: Այսուհանդերձ գիտեմ, կամ կ'երեւակայեմ թէ համով ընկեր մըն է, քեզի արժանի, և մանաւանդ... սքանչելի գրագէտ մը»<sup>157</sup>: Ահավասիկ «բոլորի հետ լինելով» «բոլորի հետ չլինելու» վկայություն: Սակայն տվյալ պարագային ո՛չ դա, ո՛չ էլ այն հանգամանքը, որ օտյանական ծիծաղը «մաքուր ամբիվալության» բյուրեղացում է, այնքան էական չէ, որքան բավականին քմահաճ Զրաբյանի կատեգորիկ գնահատականը: Զրաբյանի կողմից շատ քչերն են արժանացել «սքանչելի գրագետ» որակմանը, ինչը համակրանքի պարզ դրսմորում չէ միայն, այլ նրա երգիծական գրականության տիտղոսավորում:

Ծիծաղի ամենատարբեր արտահայտություններն ու գըրսեորումները *Օտյանի* թերթոն վեպի գեղարվեստական համակարգում ընդհանրապես (թե՝ ներփակ գրսմորումներով և թե՝ «երգիծավեպերով») գրողի ստեղծաբանական տարերքում հեղինակի անհատականության ելակետային ցուցիչներից է, քան-

156 Ե. *Օտեան*, «Նամակներ», էջ 125:

157 Տես ԳԱԹ, *Տիրան Զրաբյանի ֆոնդ*, թիվ 10:

զի ծիծաղը (հումորի զգացումը, սրամտության շնորհը) «...ոգու արտահայտություն է»<sup>158</sup>, աստվածատուր տրվածք: Թերթոնագրի ինքնության հատկականություն, ինչն էլ առարկայական հնարավորություն է ընձեռում գրաբանական արարքը ուղղորդել արկածախնդրության, արկածի և հումորի միմյանց ընդուլեզված տիրույթներ: Իրականության վիպումը համապարուրել հեգնանքով՝ նրբենի, «թեթև» հեգնանքով, իսկ երեմն՝ հեգնանքի ընդգծված սաստկացումով: Իրականության հեգնանքով (չչփոթել ոռմանտիկական հեգնանքի հետ) համապարուրումն առհասարակ «ժամանցային գրականության» հիմնական բնագրաստեղծ ազդակներից է, որը թերթոն վեպի տիրույթներում իր կազմաբանական ճկունության շնորհիվ հանդես է գալիս գրեթե բոլոր ներժանրային կաղապարներում: Թերթոն վեպն իր կազմաբանությամբ չի սահմանափակում ծիծաղի արտահայտությունները՝ կենտրոնանալով ո՛չ ծիծաղի օբյեկտի և ո՛չ էլ սուբյեկտի, այլ որպես կանոն՝ այս երկուսի փոխապակցության վրա (թե՛ կանույան լարված սպասումով պայմանավորված ծիծաղի աֆեկտի հանգուցալուծմամբ, թե՛ շոպենհաուերյան անսպասելի անհամապատասխանության երևան դալով և թե՛ ծիծաղի ֆենոմենի անակնկալությամբ):

Օտյանի թերթոն վեպերում ծիծաղի տարերքն է, որ առարկայացնում է «...կուսակցական հերձուածողի մը, իմացական սովիեստի մը, գործողութեան ինքնախաբ ասպետի մը, միշտ գործի վրայ երևալու հետամուտ ու կողմնակալութեան հզօր կիրքերով պեղուած մենագարի...»-ն: Օշականյան այս դիտարկումը սկսվում է «Այս մարդուն մէջ կ'ապրէք կորիզը»<sup>159</sup> արտահայտությամբ, ինչը որոշ օտյանագետների թյուրիմացությունների տեղիք է տվել, որոնք Օտյանին նվիրված «Համապատկերի» համապատասխան գլխի «Մարդը և գործը» բաժնի սույն մեջբերումը վերագրել են Օտյան անձնավորությանը: Այնինչ խոսքը գործին է վերաբերվում, ինչի մանրամասնումն ի դեպ գտնում ենք գրողին նվիրված բաժնի «Երգիծողը» գլխում: Այստեղ մի ուշագրավ արտահայտություն ևս կա: Օշականը գրում է. «Երգիծավէպ բառ մըն ալ ստեղծելու հարկին տակն էր ան»<sup>160</sup>: Անկախ արժեկորումից (Օշականը, ինչպես արդեն արձանագրել ենք, վերապահ էր ընդհանրապես թերթոնագրության, «ժամանցային գրականության» հանդեպ) այստեղ արձանագրվում է ծիծաղի գեղագիտությամբ ու բանարվեստով ստեղծված թերթոնների՝ հայոց վեպի պատմության մեջ ավանդույթի հաստատագրման մասին: Այս հանգամանքն է խթանել Պարոնյանի առիթով արված ծավալուն գուգահեռին, որտեղ ի շարս Արփիար Արփիարյանի, Սուրեն Պարթևյանի, Միքայել Կյուրծյանի, Քասիմի և այլոց, ծավալուն տեղ է հատկացրել նաև Երվանդ Օտյանին<sup>161</sup>: Երվանդ Օտյանի թերթոն երգիծավեպը գրուեսկի, պարողիայի (սրան խիստ սերտ ծաղրանկարի) և բառախաղի տիրապետող սկզբունքների վրա է խարսխված, ինչն էլ հետագայում հայոց «ժամանցային» գրականության մեջ «Երգիծավեպերի» հիմնական մոդել դարձավ:

158 Տե՛ս Քոլրիշի նշանակած ուսումնասիրությունը, Էջ 235:

159 Տե՛ս Յ. Օշական, «Համապատկեր...», հոդ. VIII, Էջ 371:

160 Նույն տեղում, Էջ 387:

161 Նույն տեղում, հոդ. IV, Էջ 179-188:

Ինչպես Երվանդ Օտյանի, այնպես էլ Հայոց երգիծական թերթոն վեպերի շրջարկում գրոտեսկի զանազան գործառությունները ընդգրկում են բավականին տարածուն թեմատիկ-հզարքային շրջանակ՝ հոգեբանական կարծրատիպերից մինչև բնավորություններ, կենցաղային, հասարակական, բարքագրական միջավայրից մինչև քաղաքական կենսոլորտ: Թերթոնի շրջարկում ըստ ամենայնի գործում է գրոտեսկի «Նվազեցման» բախտինյան սկզբունքը<sup>162</sup>, երբ յուրաքանչյուր իդեալական, ոգեգենիկ, վեհ երեսույթ, գաղափար, սկզբունք փոխաձեվում է. իդեալականը դառնում է ֆարս ու անտիհիդեալ, հերոսականը՝ հակահերոսական, ոգեգենիկը՝ մերկանտիլ, գաղափարն՝ անդադափարություն, սկզբունքը՝ անսկզբունքայնություն և այլն: Սերն այդ «Նվազեցման» սկզբունքով, օրինակ, փոխակերպվում է «Միքել սիրարկածում», «Ճեպընթաց նորածինում», իդեալականը՝ անտիհիդեալականի «Պատերազմ և... խաղաղությունում», «Վաճառականի մը նամակներում», ոգեգենիկը՝ մերկանտիլի «Դատաստանական խորհրդի առջելում», հերոսականը՝ հակահերոսականի «Պրոպագանդիստում», «Ճողուպրիսթ և ընկերությունում»: Ըստ այդմ գրոտեսկի մոդելը թերթոն վեպերում պայմանավորում է հերոսի (բնավորության, հոգեբանության, մտայնության կրողի) գրոտեսկային տիպը՝ տարբեր տիպի և տրամաչափերի միջնորդներ, գործարաններ, բախտախնդիրներ, պճնամոլներ, կծծիներ, ագահներ, կնամոլներ, ստախոսներ, գործիչներ, հեղափոխականներ և այլն: Ընդսմին «Նվազեցման» սկզբունքն ու գրոտեսկային տիպամբն ու տիպաժայնությունը ապահովագրում են «գրոտեսկային իրականությունը»: Իրողություն, որ խիստ կարեղը է «Ժամանցային» գրականության, թերթոն վեպի համար: Երգիծական թերթոններում գրոտեսկային տիպամբներն ու «Նվազեցման» սկզբունքով պայմանավորված երեսույթները պարտադիր գործում են գրոտեսկային աշխարհում: Իրականությունը թերթոն վեպում առաջնահարուստ է: Հենց սա է ապահովագրում ժամանցայնությունը, սրանով է երգիծական թերթոնը տարբերվում գասական երգիծական վեպից, որտեղ որպես կանոն և՝ «Նվազեցումը», և՝ գրոտեսկային կերպարները գործում են ուսալ, «կանոնիկ» աշխարհում, իրականությունում: Գրոտեսկային են Օտյանի բոլոր երգիծավեպերի միջավայրերն ու աշխարհները՝ «Միջնորդ տեր պապան» թե «Լեռն Շաթրյան», «Տոքթոր Վարդան» թե «Ընկեր Փանջունի»<sup>163</sup>: Օտյանական այս ավանդույթը փոխանցվեց Հայոց XX դարի երգիծավեպերին: Նկատի ունենք Նշան Պեշիկթաշլյանի, Վահան Թոթովինցի և Ակսել Բակունցի «քաղաքական երգիծավեպերը» («Ընկեր Փարոս», «Ընկեր Շահազար», «Սաղայելին պոչին ու շուքին տակ», «Դոկտոր Բուրբնյան», «Որդի որոտման»):

Ինչպես օտյանական թերթոն երգիծավեպերի, այնպես էլ ծիծաղի գեղագիտությամբ ստեղծված հայոց թերթոնագրության համար պարողիան և սրան սերտորեն մոտ ծաղրանկարը բնագրաստեղծ գերակայություններից են: Օտյանի թերթոն երգիծավեպերում պարողիայի են ենթարկվում ազգային կյանքը, կենցաղը ընդգրկող գրեթե բոլոր արտահայտությունները, ծաղրանկարվում են

162 Տե՛ս **Մ. Եռուսի**, “Եվրոպա Խրանչա Բանու...”, ս. 26:

163 Օրինակ, «Ընկեր Փանջունու» շրջարկում տոտալ խելամեղության մոտիվը: Դա հնարավոր է միավան ու միավան գրոտեսկային միջավայրում, աշխարհում, կենալորտի մեջ:

Հեղափոխությունն ու հեղափոխականությունը, հերոսն ու գործիչը:

Երվանդ Օտյանի թերթոն երգիծավեպերի քննությունն առարկայաբար պահանջում է անդրադառնալ նրա և Հակոբ Պարոնյանի զուգահեռին՝ նկատի ունենալով ծիծաղի գեղագիտությունն ու ստեղծաբանական տարերքն ու ընկալումները, ստեղծագործական սկզբունքները։ Ի շարս Օտյանի ժառանգության ընդհանուր խնդիրների քննության՝ Պարոնյան-Օտյան զուգահեռին առնչվող խնդրագրությունն էական է նաև գրողի թերթոն վեպերի ուսումնասիրության և մեկնաբանության համար։

Պարոնյան-Օտյան զուգահեռը նոր չէ օտյանագիտության մեջ։ Գրողի առաջին իսկ ստեղծագործությունների քննադատական արձարծումներում այն երևան է եկել։ Գերազանցապես այն հանկերգով, թե Օտյանը Պարոնյանի արժանի հետնորդն է, հայոց երգիծական գրականության երկրորդ խոշոր ներկայացուցիչը։ Հիմնականում այսպիսի և նմանօրինակ դիտանկյունն է օտյանագիտության մեջ դարձել կարծրատիպ և փոխանցվել հետազոտողների սերունդներին։

Մի կողմից Հակոբ Պարոնյան-Երվանդ Օտյան զուգահեռի այդօրինակ ըմբռնումը, ծիծաղի գեղագիտության, երգիծական գրականության համապատկերում Պարոնյան-Օտյան տանդեմի նույնականության դոմինանտ մեթոդաբանությունը, մյուս կողմից որոշ օտյանագետների գործադրած ճիգերը՝ նույնական դաշտում Օտյանի առավելությունը, «կարևորությունը», առաջնայնությունը փաստարկելու համար, մեր կարծիքով, ամրագրել են հետազոտական մի կարծրատիպ, ինչը վերանայման անհրաժեշտություն ունի, հատկապես եթե նկատի ունենանք նաև այն հանդամանքը, որ այդ դիտանկյունն ըստ էության խարսխված է սուբյեկտիվ համակրանքի, այլ ոչ թե հեղինակների գեղագիտության, գրական ժառանգության, ստեղծագործական բնույթի առարկայական հետազոտության վրա։

Խնդրի լուսաբանության համածիրում կարեսոր է Սիրունու հետեւյալ վկայությունը. «Անկեղծ ըլլալու համար ըսեմ, թէ Պարոնեանով չսկսայ (խոսքը վերաբերում է երգիծաբանների և երգիծաբանության մասին Երվանդ Օտյանին տրված Սիրունու հարցումներին – Գր. Հ.): Ուրիշներու մասին սկսայ նախ հարցնել ու կամաց կամաց Պարոնեանին բերի։ Անոր համար այս զգուշութիւնը, որովհետեւ կը վախնայի, որ Օտեանի մէջ համեստութիւնն ու անկեղծութիւնը պայքարի մտած պիտի դժուարացնէն պատասխանները։

«Բառին իրական առումովը երգիծաբան մը չէ Պարոնեանը, ըստ Օտեան։ Պարոնեանի եթէ ոչ ստեղծած, գոնէ զարգացուցած սեռը մեր մէջ զաւեշտագրութիւնն է։ Իրմէ առաջ ալ եղան զաւեշտագիրներ, ինչպէս Սվաճեան, բայց անոնց ամենուն վարպետը հանդիսացաւ Պարոնեան, որովհետեւ ամենէն աւելի կատարելագործուածը եղաւ։ Ան իր նախորդներէն առաւելութիւն մըն ալ ունեցաւ, – փիլիսոփայութիւնը...»։

Անշուշտ Պարոնեան մեծ եղաւ իր ժամանակին, բայց երւանդ Օտեան անգերազանցելի մնաց։ Մեր մեծագոյն երգիծաբանն է ան, թէև Պարոնեանով ոգեռուածներ դեռ կը տատամասին այդ գերազանցութիւնը ճանչնալու։ Մանաւանդ ուսումնայերը միշտ Պարոնեանով խանդավառուած կը մնան։

«Ի՞նչու ոռւսահայերը, — կը հարցնեմ Օտեանի, — աւելի Պարոնեանը կը ճանչնան ու կը սիրեն: Որովհետև, — կը պատասխանէ Օտեան՝ կատակի զարնելով, Պարոնեանը առաւելապէս թրքահայ ու մանաւանդ պոլսահայ թիփերն է որ կը ծաղրէ, իսկ ես ոռւսահայ տիպարներն ալ»»<sup>164</sup>: Միջանկյալ նկատենք, որ նրա «թերթոն երգիծավեպերի» մեջ ծաղրանկարված, գրոտեսկի հասցված ազգային գործիչների, հեղափոխականների պատկերասրահում արևելահայերը բավականին շատ են: Սակայն տվյալ պարագային էական է այն հանգամանքը, որ Օտյանն իր և Պարոնյանի ստեղծագործությունը, գրողական անհատականությունը, ստեղծաբանական բնույթն իրավացիորեն տարբերակում է, նույնական չի համարում, ինչը ցավավիրեն վրիպել է օտյանագիտության տեսադաշտից: Իսկ Պարոնյան-Օտյան զուգահեռում սուբյեկտիվ համակրանքով առաջնայնության նախադեպը ստեղծել է Միրունին՝ անտեսելով տարբեր բնույթների, անհատականությունների հանգամանքը:

Հակոբ Օշականը «Համապատկերի» շրջարկում, հատկապես Պարոնյանին նվիրված բաժնում, բավականին ծավալուն զուգակշռել է Պարոնյան-Օտյան խնդիրը: Պարագորքալն այն է, որ այդ խիստ արժեքավոր զուգակշռության մեջ Օշականն ըստ էության իր դիտարկումներով փաստարկում է Պարոնյանի և Օտյանի ստեղծաբանական բնույթի, ծիծաղի գեղագիտության տարբերությունը, սակայն չի խուսափում զուգահեռի միավորներից մեկի սուբյեկտիվ նախապատվությունից: Հարկ է նշել սակայն, որ օշականյան շրջարկում միանգամայն արդարացի է և առարկայական Պարոնյանի ֆենոմենի բացառիկության ընդգծումը հայոց գրականության պատմության մեջ: «Մարդիկ կը սոսկային Պարոնեանի գրիչին տակ իյնալէ, մինչ կը վարձատրէին Օտեանը զիրենք հեղնած ըլլալուն համար», — գրում է Օշականը այդ զուգակշռի մեջ<sup>165</sup>: Սա նրանց ծիծաղի տարբերության ջրաքանակն է, միաժամանակ ծիծաղի (երգիծանքի) ժամանցային բնույթի ցուցահանումն ու հերքումը<sup>166</sup>: Օշականն իրավացիորեն նկատում է Օտյան-Պարոնյան զուգահեռում Օտյանին վերապահված չափազանցված գնահատականները, որոնք իներցիայի ուժով ցարդ շարունակվում են<sup>167</sup>:

Խնդրի մեթոդաբանության համար կարևոր ելակետ է Սերգեյ Սարինյանի «Պարոնյանի ծիծաղի փիլիսոփայությունը» ձավալով փոքր, սակայն խիստ շահեկան ուսումնասիրությունը<sup>168</sup>, որը ոչ միայն հետազոտական միանգամայն նոր մոտեցում է երևան բերում Պարոնյանի գեղագիտության, ստեղծագործական բնույթի, գեղարվեստական համակարգի ուսումնասիրության ասպարեզում (ինչպես, օրինակ, Պարոնյանի միջուկիզմի մեկնաբանություններում), այլև տեսականորեն ամրագրում է Պարոնյանի գրականության և գեղագիտության էությունն իրեւ «կատարյալ և ինքնաբավ» «գեղարվեստական մի աշ-

164 «Հայրենիք», 1927, № 9, էջ 38:

165 Յ. Օշական, «Համապատկեր...», հոդ. IV, էջ 27:

166 Նույն է պարագան նաև նրա «...Երուանդ Օտեան, ալեքան շնական, ալեքան ապարարոյ, ալեքան շուկալ» արտահայտության, ինչը սխալ է ընկալվել օտյանագետների կողմից: Օշականյան դատունում «ապարարոն», «շնականը» վերաբերվում է «ժամանցային գրականությանը»:

167 Տե՛ս, օրինակ, Ս. Մուրադյան, «Ե. Օտյան...», էջ 55:

168 Տե՛ս «Լիաբեր հասարակական գիտությունների», 1993, № 4, էջ 39-58:

իսարհ»<sup>169</sup>, որն ամբողջությամբ խարսխված է ծիծաղի փիլիսոփիայական, ստեղծաբանական ֆենոմենին, որտեղ ծիծաղը գոյաբանական բացարձակ է: Երվանդ Օտյանի ժառանգության, թերթոն վեպերի շրջարկում ծիծաղը գեղագիտության, գեղարվեստական համակարգի ընդամենը մեկ արտահայտությունն է: Հետևաբար, ինչպես նրա ստեղծումի մյուս դրսերումների, այնպես էլ թերթոն վեպերի մեկնաբանություններում, Պարոնյան-Օտյան զուգահեռին անդրադառնալիս անհրաժեշտ է հաշվի առնել այս իրողությունը:

\* \* \*

Հայոց երգիծական թերթոն վեպերն իրենց թեմատիկ-հղացքային ընդգրկումներով բաժանվում են երկու մեծ խմբերի՝ ա) «բարքերի» երգիծական թերթոններ, բ) հեղափոխական-քաղաքական իրականությունն ու խնդիրներն անդրադառող թերթոններ (խմբերն իրենց հերթին ունեն բազմաթիվ տարբերակներ): Հարկ է նշել, որ եթե «բարքերի» երգիծական թերթոն վեպերը մեր «ժամանցային գրականության» մեջ առկա էին մինչ երվանդ Օտյանի ստեղծագործությունները (Գոչունյան, Գրիգոր Սարաֆյան), ապա «հեղափոխական-քաղաքական» թերթոն վեպերն գեղարվեստական ընթացի համար ըստ էության նորմա դարձան Օտյանի շնորհիվ: Թե՛ «բարքերի», թե՛ «հեղափոխական-քաղաքական» երգիծական թերթոն վեպերում գործում են ունիվերսալ սկզբունքներ, որոնք պայմանավորում են այսօրինակ ստեղծագործությունների գեղագիտությունը, կոմպոզիցիոն շրջանակը, դիպաշարի մողելային գործառությունները, գրամատուրգիականությունը, կերպարումը:

Երգիծական թերթոն վեպերի կազմաբանական և գեղագիտական բնագրաստեղծ սուբստանցը ապամոնտաժումն է: Ապամոնտաժման են ենթարկվում կենցաղի, բարքերի նորմերը, միջանձնային կապերն ու հարաբերությունները, բարոյական ըմբռնումներն ու կանոնները, հոգեբանական կաղապարները, մարդկային որակներն ու հատկությունները, հասարակության համակեցության հիմերը, իրականությունն իր պատմությամբ, ժամանակով, հեղափոխական և ազգային կյանքն իր կենսոլորտով: Այս ապամոնտաժումը թելադրում է իրականության, պատմության, ժամանակի կենսոլորտի բոլոր տարրերի ապամիֆականացում: Բարքը երգիծական թերթոններում խոտորված է դրսերպվում: Նույնն է պարագան պատկերագրվող միջանձնային կապերի և հարաբերությունների, մարդկային որակների ու հատկությունների դեպքում: Միաժամանակ երգիծական թերթոնների հերոսը ապահերոսանում է, կամ հակահերոսանում: Այսինքն՝ թերթոնը հերոսի (այս կամ այն հատկությունը, հոգեբանությունը, գաղափարը, սոցիալական տիպը կրող տիպաժ-գործառության) ապահերոսացումը կամ հակահերոսացումն է:

Երգիծական թերթոն վեպերի ինքնության տարբերակիչ հատկանիշն է (տարբերակիչ՝ նորմատիվ երգիծական վիպագրությունից) ծիծաղեցնելը, ընդ

169 Նույն տեղում, էջ 39:

որում՝ այսպես կոչված «բարի ծիծաղի» գեղագիտությունը։ Օրինակ՝ գրոտեսկը, պարոդիան, ծաղրանկարն իրենց ուղղորդվածությամբ ընթերցման տիրույթներում պարտադիր ապահովագրում են ընթերցողի տարանջատվածությունը, անհաղորդությունը<sup>170</sup> ծիծաղի սուբյեկտից։ Այսպես է գոյավորվում կենսահաստատ, կենսանորոգ ծիծաղը, ինչը «ժամանցային երգիծական վիպագրության» թե՛ ստեղծաբանական նպատակաբանությունն է, թե՛ վախճանակետը։

Երվանդ Օսյանի երգիծական թերթոն վեպերում գործում են միևնույն ներժանրային կառույցներն ու կաղապարներն, ինչ մյուս թերթոն ստեղծագործություններում՝ «բարքերի», «արկածային-արկածախնդրական», «սիրավեպի» կաղապարները, որոնք իրենց կազմաբանության մեջ ներհյուսում են նաև այլ կառույցների մասնատարերը։ Այս կաղապարներում են լիակատար արտահայտվում ծիծաղի ստեղծաբանական ձևերը՝ կոմիկական իրադրությունները, խոսքի կոմիկական արտահայտություններն ու կոմիկական բնավորությունները։

Անդրադառնալով երգիծական վեպի ձևաբանությանը՝ ժանրի տեսաբաններից Դիբելիուսը, որը վեպի տեսության համապատկերում ընդհանրացնելով գրականագիտության փորձը, ներկայացրել է ժանրի «ունիվերսալ տիպը», նույնպես առանձնացնում է վերևում արձանագրված ստեղծաբանական ձևերը<sup>171</sup>, մանրամասնում կոմիկական բնավորությունները՝ տարբերակելով նաիվմիակողմանի տիպաժների (արանց բնորոշ է մեկ հատկանիշ, ինչը ցանկացած ներժանրային կաղապարում, դիպաշարային շրջարկում հանդես է գալիս նույնականությամբ), կոմիկական հակասականությամբ ներհատուկ տիպաժների (արանց բնորոշ է այն, որ իրենց ցույց են տալիս այնպիսին, ինչպիսին իրականում չեն)։ Այս օրինաչափությունը բնորոշ է նաև թերթոն երգիծավեպերին։ Այսպես, Օսյանի երգիծավեպերը արձանագրված ստեղծաբանական ձևերի հետևողական կիրարկումներն են։ Կոմիկական բնավորություններին բնորոշ է մատնանշված տարբերակվածությունը։ Այդ երեք հիմերի համադրությամբ է ապահովագրվում ծիծաղի էֆեկտը և՝ բնագրային և թե՛ ընթերցողական մակարդակներում։ Մի գեպքում՝ իրեւ գրոտեսկ («Լևոն Շաթրյան», «Վաճառականի մը նամակները»), մի գեպքում՝ իրեւ պարողիա և ծաղրանկար («Միջնորդ տեր պապան», «Ճեղքընթաց նորածինը»), «Պրոպագանդիստը») ավելի հաճախ՝ իրեւ այդ միջոցների համադրություն, ինչպես «Դատաստանական խորհուրդի առջե», «Հնկեր Փանջունի» ստեղծագործություններում։ Հնդ որում Օսյանի երգիծական թերթոններում կիրարկվում են գրոտեսկի, պարողիայի և ծաղրանկարի զանազան տարատեսակները։ Ինչպես չափազանցությունը, ապածաղրանկարումը, նվազեցումը, օրինակելի երևույթների, արժեքների գեղագրացիան, գուեհկացումը, հիպերտրոֆիկ հակաղրականությունը, տեսքի, վարքի, ապրումի, արարքի, իրականի և մտացածինի ձևային ու բովանդակային անհամապատասխանությունը, բանական նորմերի ձևախեղումը, ալոգիզմն ու պրակսեոլո-

170 Անգամ վշտի ծիծաղի գեղարվեստական իրացումներում երգիծական թերթոն վեպերը հետևում են տարանջատվածության, անհաղորդության սկզբունքին։

171 **В. Дибелиус**, “Морфология романа” (“Проблемы литературной формы”, Ленинград, Изд. “Academia”, 1928 г., с. 129-130).

գիական (այսինքն՝ բացահայտ ապարդյուն, աննպատակ գործունեությունը), չափանիշների խախտումը:

Օտյանի թերթոն երգիծավեպերում կիրարկվում են ծիծաղի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են նմանությունների, տարբերությունների, արարքների, վիճակների կոմիզմը, այսպես կոչված «հիմարացման շրջանակը», երբ դիպաշարը վերհանում է թյուրիմացությունների, խաբեությունների, ստախոսությունների, ընդհանրապես ըլեֆի տարբեր արտահայտությունների անընդհատական կոնֆլիկտը, մրցակցությունը: Ասել է թե՝ երգիծական թերթոն վեպերն իրենց զինանոցում ունեն ծիծաղի այն բոլոր միջոցները, ձևերն ու արտահայտությունները, որոնք առհասարակ երգիծական գրականության համար «նախաձեային» դերակատարություն ունեն (ինչպես նույն «թյուրիմացությունների շքահանդեսը», «երկու տիրոջ ծառայի հանգամանքը»), կրկնությունը (նույնական իրադարձությունների, վիճակների պարբերական կրկնությունները գոյության, կյանքի փոփոխվող հոլովույթում), ինքերսիան (երբ փոխվում են մարդկանց և իրադարձությունների դիրքերը, վիճակները՝ դառնում հակառակ կողմի, իրադարձության, վիճակի կրողը): Բնականաբար նույնն է նաև ծիծաղի խոսքային միջոցների պարագային՝ բառախաղեր, տարբեր տիպի սրախոսություններ և սրամտություններ, անհեթեթ երկխոսություններ, պարագոքսալդարձվածներ և այլն:

Անդրադառնալով երգիծական տիպաժների խնդրին՝ հարկ է արձանագրել, որ ինչպես երգիծական թերթոնագրությունում, այնպես էլ երգանդ Օտյանի համապատասխան ստեղծագործություններում գրանք ծիծաղի ստեղծաբանական շրջարկին բնորոշ տիպերն ու գործառություններն են, որոնք ներածվել են տակավին անտիկ երգիծական գրականությունից և անցել ստեղծագործական երկար ճանապարհ: Այնպիսի գործառություններ, ինչպես մարդուն կենդանու, իրի հետ համանունացումը, երբ այս կամ այն կենդանու կամ իրի հետ արտաքին, ձևական նմանությունը կամ բովանդակային անալոգը դառնում է տիպի, բնավորության, մտայնության երգիծական կերպավորման ելակետ, կամ մասնագիտության, զբաղումի պարողիան, ծաղրանկարումը, ուրիշի նմանակումն ու ընդօրինակումը նույնպես Օտյանի երգիծական թերթոն վեպերի տիպաժգործառությունների, տիպաժ-բնավորությունների, տիպաժ-հոգեբանությունների կերպարման ելակետներն են: Պարտադիր բոլոր արտահայտություններում գործում է թերգսոնի այն սահմանումը, թե կոմիզական պերսոնաժը «սովորաբար այնքանով է ծիծաղելի, որքանով ինքը չի գիտակցում այդպիսին լինելը»<sup>172</sup>: Երգիծական տիպաժների կերպարման ժամանակ կարևոր է «իսամաճիկային» սկզբունքը: Սա կոնկրետ ստեղծագործության կոնկրետ խնդրագրությամբ պայմանավորված այն գործառությունն է (շատակերություն, կծիկություն, ստախոսություն, կնամոլություն, հերոսանալու կեցվածք, փառատենչություն և այլն), ինչը թերթոնագիրը ուղղորդում և ներկայացնում է: Պերսոնաժն ընդամենը խամաճիկ է և ոչ ավելին, նա չունի գործող անձին բնորոշ «ինքնուրույն գործելակերպի ճկունությունը»:

172 Տե՛ս **Անրի Բերցոն**, «Ծմեխ», с. 19:

Պատահական չէ, որ Օսյանի բոլոր թերթոն վեպերում գործող անձանց անունների բառարանում գերակշռողը ուղղորդող, բնութագրող, գործառական անուններն են, ինչպես՝ Կերմերյան, Կուլյան, Կորկուայանց, Սարըթըլքյան («Գործի մարդիկ»), Կելկիթյան, Սասանյան, Կայծունի, Կոկիկյան, Սուսերյանց, Քյութուկյան, Սափորյան, Ծրարյան («Թաղականին կնիկը»), Կերյան, Զախշախյան, Առկերունի, Կամկարյան («Նոր հարուստներ»), Շատախոսունի, Շահշամփուրյան («Կավե հերոսներ»), Մըզմըզյան, Սկամպիլյան, Թաթիկյան («Հայ տիսբորան») և այլն: Դժվար չէ կերպարների անձնանունների բառարանում նկատել իրի, երկույթի, մտայնության, բնավորության, հոգեբանության պարուղիայի, գրոտեսկի գործառությունները:

Երվանդ Օսյանի թե՛ «բարքերի» երգիծավեպերում և թե՛ «քաղաքական (հեղափոխական)» երգիծավեպերում ծիծաղը վիճակների, իրադրությունների և մտայնություն կրող տիպաժների փոխապայմանավորվածությամբ և համադրությամբ է հանդես գալիս, և ստեղծաբառական կոնկրետ խնդրից ածանցված, թերթունների շրջարկում առաջնային գործառություն է ստանում դրանցից մեկը:

Բարքերի երգիծական թերթոնացումը իրականացվում է խաղի սկզբունքով: Կյանքը փոխաձևվում է իրադրության, վիճակի խաղի, ինչն անմիջականորեն փոխանցվում ընթերցողին և ուղղակիորեն պայմանավորում ժամանցայնությունը, քանի որ այն ընթերցման տիրույթներում ապահովագրում է կյանքի, գոյության ամենատարբեր դրսելորումների տեսլական (երկութական) համարժեքը: Այս «ինքնախաբեռության» շրջանակն անշափ կարեոր է բարքերի երգիծական թերթունների բնագրաստեղծ ընթացքի և ընթերցողական մակարդակի ներազգեցության ապահովագրման համար:

Դիտարկենք նմանօրինակ քրեստոմատիկ թերթուններից մեկը: Երվանդ Թուլյանի «Խտեալին ետևեն»<sup>173</sup> ստեղծագործությունը հայոց «ժամանցային վիպագրության» համար նորմատիվ սեր-ամուսնություն-ընտանիք (սրանց սերտորեն հարող արտահայտություններով՝ սիրահարություն, միջնորդություն, դրամօժիտի հանգամանք) կաղապարի վրա է կառուցված, որտեղ իդեալի փնտրատքը մտայնություն կրող տիպաժ-գործառություններին (Թովմաս Զըգցըզյան, Էռմեն, Սիրարփի, Զիզի, Նվարդ, Արտեմիս, Վերմին) դնում է տարբեր իրադրությունների և վիճակների մեջ: Զըգցըզյանի իդեալի (տվյալ պարագային՝ իդեալ կնոջ) փնտրատքը, գոյությունը, կյանքը թերթունում փոխաձևվում է խաղի: Դիպաշարը սկզբունքորեն իդեալն ապահուելացնում է, գարձնում տեսլական, գոյավորվում է «ինքնախաբեռության» շրջանակ, ինչը թե՛ թերթունի բնագրաստեղծ ընթացքն է և թե՛ ընթերցողական դաշտի ներազգման հանգամանքը: Զըգցըզյանը այդ կանանց մեջ իդեալը դարձնում է տեսլական, իսկ կանայք Զըգցըզյանի ապահուելականության մեջ բրտացնում են իդեալը, ինչը նույնպես տեսլական է: Արդյունքում գոյավորվում է կյանքը, իրականությունը խաղի վերածելու իրողությունը: Այս խաղն էլ ընթերցողական մակարդակում ժամանցայնության, ծիծաղի դոմինանտն է: Նույնն է պարագան երվանդ

173 Տե՛ս Ե. Թօլայեան, «Խտեալին ետևեն (Երգիծավեպ Բերապի բարքերէն)», Կ. Պոլիս, Տպարան նշան Պապիկեան, 1910 թ.:

*Օտյանի երգիծական թերթոն վեպերում:* Ամուսնության խնդիրը առաջադրում է միջնորդների մրցակցություն-խաղ («Միջնորդ տեր պապան»): Այս ստեղծագործությունը ժամանակագրորեն առաջին երգիծական թերթոն վեպն է՝ կազմաբանությամբ այսպես կոչված «վեպ-երկխոսություն» կամ «դրամատուրգիական վեպ», այն սակավ գործերից մեկը, որին իր ստեղծագործական կյանքի ընթացքում Օտյանը երկու անգամ է անդրադարձել (չշփոթել, օրինակ, «Դատաստանական խորհուրդի առջև»-ի երկրորդ հրատարակության հետ, «Տոքթոր Լևոն» վերնագրով, որը, ինչպես արձանագրել ենք, թերթոնի սոսկական վերահրատարակությունն է): 1895-ին «Գործ եփող մը» վերնագրով հրատարակելուց հետո թերթոնը հեղինակային զգալի վերանայման է ենթարկվել՝ «Երգիծական վեպ» ենթավերնագրի հավելում, գլուխների վերնագրերի կրծառում, դիպաշարային ներփակի հոսքերի, կերպարների հավելում<sup>174</sup>:

«Միջնորդ տեր պապան» ստեղծագործության մեջ բարքերի երգիծավիպումը խարսխված է ամուսնական միջնորդությամբ զբաղվողների մրցակցության և հակամարտության (տեր Բարսեղ-Նեմզար Հանը) խորքին՝ ընդգրկելով կենցաղի և կենցաղավարության կենսոլորտի բազմաթիվ արտահայտություններ՝ ընտանեկան կյանք ու միջավայր, հաշվենկատ ամուսնությունն ապահովելու համար մրցակցություն՝ բամբասանքների, մամուլով հակառակ կողմին ապակողմուշելու, վարկաբեկելու, զանազան խոչընդուներ առաջացնելու միջոցներով: Այս հակամարտությունն իր շրջանակի մեջ է ներառնում տարբեր խավերի ներկայացուցիչների, պարոնյանական մեծապատիվ մուրացկանների ու ազգային ջոջերի, նորօրյա կոկետների, գենդիների ու պչըռուչիների, ագաճների, տիմարների, հնարամիտների, խաբեաների, իրականությունից առհասարակ կտրված զյուրահավատների և միամիտների, ինֆանտիների ու ֆանֆարոնների մի ամբողջական պատկերասրահ: Մայրաքաղաքյի-գավառացի քաղքենիական մրցակցություն, թյուրիմացությունների և սխալների վրա խարսխված իրադարձությունների ու վիճակների անվերջավոր շարան, խոչընդուների հյուսք, որտեղ աներկբա են պարոնյանական գեղարվեստական համակարգի ալյուգիաներն ու ռեմինիսցենցները («Մեծապատիվ մուրացկաններ», «Երկու տերով ծառա մը», «Ատամնաբույժն արևելյան», «Քաղաքավարության վնասները»): Ստեղծագործության շրջարկում ծիծաղը իրականության ապակառուցումն է խաղի միջոցով, իլյուզիայի համատարածումը: Իրականության, ապարումի, հոգեբանության, զգացումի ապակառուցումն իրեւ խաղ բնորոշ է «բարքերի» երգիծական այն թերթոններում, որոնք ըստ էության սիրո, սիրավեպերի ծաղրանկար են («Ճեպընթաց նորածինը»): Այս իմաստով ուշագրագործերից է «Միքեի սիրարկածը» (այս թերթոնը, ինչպես արդեն արձանագրել ենք, Օտյանը հրատարակել է երկու անգամ, այստեղ հանդիպում ենք թերթոններին բնորոշ հեղինակային «անփութության» օրինակի, Սրբուչի անունով հերոսուչիներից մեկը ստեղծագործության վերջին հատվածներում Զարուհի է դարձել): Միքեի սիրահարության պատմությունը սիրո օպոզիցիա է ըստ էության, հակագարձականություն, ինչը տվյալ դեպքում, ծիծաղի գոյավորման և

174 Հեղինակային խմբագրումների նաև Ա. Մակարյան, «Երվանդ Օտյան...», էջ 66, Ա. Մանուկյան, «Երվանդ Օտյան...», էջ 24-25:

ժամանցայնության գերակայությունն է: Ի դեպ, օտյանական ծիծաղին բնորոշ այս հակադարձականության, շրջման սկզբունքը ուղղակի տեսական հիմնավորում է ստացել ստեղծագործության հերոսներից լրագրող Տիրանի շուրջերով. «—Եղբայր, երգիծական գրուածքներու մէջ միշտ այսպէս է, ըսել ուզածիդ հակառակը կը գրես, փոխանակ դէմ գրելու՝ չափազանց կը գովես և արդիւնքը ջախջախիչ կ'ըլլայ... այս վայրկեանիս Սարգիս էֆ. ջախջախուած մարդ մըն է, բուն երգիծաբանութիւնը այս է»<sup>175</sup>:

Այս նույն շրջման սկզբունքն է գործում «Պատերազմ և... խաղաղություն» և «Վաճառականի մը նամակները կամ մարդ ըլլալու արվեստը» թերթոններում: Առաջին ստեղծագործությունը Տոլստոյի հանրահայտ վեպի պարողիան է: Հովնան և Սիմոն եղբայրների նամակագրությամբ թիկունքը, կենցաղը, ընտանեկան հարաբերությունները համանունացվում են պատերազմին, իսկ ուազմաճակատը, մարտը, պատերազմական առօրյան՝ խաղաղությանը: Ասել է թե՝ ծիծաղը թերթոնում ապահովագրվում է իրողությունների փոխետեղելիությամբ, մատնանշած շրջման սկզբունքով: Նույն է պարագան «Վաճառականի նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը» թերթոնում, որը գերազանցապես հոր (Գողմայի)՝ որդուն (Միհրանին) հղած նամակներով շրջման է ենթարկում «Կատարյալ մարդու» ընկալումը, ըմբռնումը: «Կատարյալ մարդու» պարամետրերը (օրինակ՝ ազնվություն, սկզբունքայնություն, շիտակություն, բարոյականություն և այլն) ապակառուցման են ենթարկվում Գողմայի հորդորակ-նամակներով:

«Բարքերի» երգիծական վերջին թերթոնում՝ «Դատաստանական խորհուրդի առջև կամ թերայի գայթակղությունները», որ 1925-ին լույս է տեսել առանձին հատորով՝ «Տքթ. Վարդան» վերտառությամբ<sup>176</sup>, ծիծաղի բնագրաստեղծ գոյավորողները այսօրինակ ստեղծագործությունների համար ավանդական հղացքների վրա են խարսխված՝ ամուսնական անհավատարմություն, շահամոլություն, քաղքենի նկրտումներ և մտայնություն, ինչը ապահովում է այլասերված ընտանեկան կյանքի, ամուսնության գրոտեսկը (Աննային ամուսնացնելու դիպաշարը, Աննա-Վարդան-Կարկամյան հարաբերությունների պատումը, Մաննիկ-Հրանտ սիրավեպը և այլն):

Արևմտահայ արձակի պատմական համապատկերում քաղաքական (հեղափոխական) երգիծանքը հսկայական խթանիչներ ստացավ հատկապես 1896-1898 թվականների Աղետով և 1908-ի հեղափոխությամբ պայմանավորված պատմական, մշակութային, էթնոհոգեբանական իրադարձություններից ու արտահայտություններից: Ազգային ինքնության դրսերումների այս բացառիկ ժամանակաշրջանում, որտեղ զուգահեռաբար պրկված և սահմանային դըրսեռուրումներով հանդես էին գալիս ազգային գոյութենությունը պարագրկող բոլոր էտարրերը՝ կենսունակությունը պահպանող ուժերի և միջոցառումների հավաքական զորաշարժ և զուտ ինքնապահպանման բնագդով պայմանավորված՝ ցանկացած զնով փրկվելու բարոյական ու հոգեբանական անկումներ, վեհանձ-

175 Տե՛ս «Միքէի սիրարկածը», Կ. Պոլիս, Տպագրութիւն Օ. Յովհաննէսեան, 1920, էջ 28:

176 Տե՛ս Երուանդ Օտեամ, «Տքթ. Վարդան», Կ. Պոլիս, Տպագր. Մ. Տէր-Սահակեան, 1925 թ.:

նություն, անանձնականություն և փոքրոգություն ու հոգեկան եղկություն, հերոսականություն, գաղափարականություն և հարմարվողականություն, պատեհապաշտություն: Այն ժամանակաշրջանում, երբ հեղափոխականն ու հեղափոխությունը, քաղաքական կամքն ու վսեմ գաղափարը, հերոսն ու գաղափարականը գերարագությամբ փոխակերպվում էին հակահեղափոխականի ու ռեակցիայի, կամքի ոչնչացման ու գաղափարի նսեմացման, հակահերոսի, տարբեր տիպի ու տրամաչափի արկածախնդիր մակաբույծների, պղրտաքույծների մշակութային կյանքում բնականաբար պիտի ստանային իրենց հակադարձումը: Իսկ այդ հակադարձման ամենառունիվերսալ եղանակը ծիծաղն էր: Ինչն էլ իր հերթին գեղարվեստական, բարոյաբանական օպոզիցիան արտահայտելու ամենաօպտիմալ և ընդգրկուն կերպն էր: Ուստի բնական է, որ գեղարվեստական իրացումներում դա պիտի հանդես գար մերթ ապամիջականացմամբ, մերթ տոտալ ապակառուցմամբ՝ հիմնականում պարողիայի ու գրոտեսկի ձևերով: Ահա այս իրողություններով է պայմանագործած արձակի անթաքույց հակումը ծիծաղի ստեղծաբանական իրացումների հանդեպ, երգիծական գրականության վերածնունդն ընդհանրապես: Բնականաբար, «ժամանցային» գրականությունը չէր կարող անմասն մնալ այդ ընթացքից: Անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել նաև «ժամանցային» գրականության, թերթոն վեպերի ինքնությանը բնորոշ «սթրեսագերծելու» գերակատարությունը, ինչը նպաստել է «հեղափոխական» երգիծական թերթոն վեպերի աշխուժացմանը:

Ինչպես արևմտահայ արձակը, այնպես էլ թերթոնագրությունը քաղաքական (հեղափոխական) երգիծանքի երկու հիմնական ուղղությամբ հանդես եկավ: Այսպես կոչված «արտաքին կենտրոնացմամբ», որտեղ ծիծաղի սուբյեկտ էին դառնում թրքական կառավարությունը, պետությունը, բռնակալության վարչամեքենան, աշխարհաքաղաքական խաղերն ու տեխնոլոգիաները: Երկրորդ ուղղությունը այսպես կոչված «ներքին կենտրոնացմամբ» արտահայտություններն էին, որտեղ ծիծաղի սուբյեկտ էին դառնում ազգային-քաղաքական ինստիտուտները՝ կուսակցություններ, ազգային-քաղաքական գործիչներ: Առաջինը լավագույնս արտահայտվեց Առանձարի նորագեպերում, իսկ երկրորդը՝ Վահան Թեքեյանի, Տիգրան Զյոկյուրյանի, Երվանդ Օսյանի փոքր արձակում<sup>177</sup> և վերջինիս թերթոն երգիծավեպերում:

Ավելին, Օսյանի համապատասխան փոքր արձակ գործերը («Հեղափոխության մակարույնները» շարքը) և թերթոն վեպերը ապամիջացման, ապակառուցման, գրոտեսկի և պարողիայի կաղապարներով, տիպաժ-գործառությունների հարացույցով ոչ միայն ժամանակաշրջանի այսօրինակ ստեղծագործությունների կողմնորոշիչներն էին և ուղղագիծ արտահայտություններ էին ունենում այլ հեղինակների մոտ<sup>178</sup>, այլև ուղղագծորեն շարունակվեցին հաջորդ տասնամյակներին: Հստ էության եղան «քաղաքական (հեղափոխական)» եր-

177 Տողերիս հեղինակն այդ ստեղծագործություններին անդրադարձել է արևմտահայ Առորավեպին Ավիրված ուսումնասիրության մեջ: Տե՛ս Գր. Հակոբյան, «Արևմտահայ Առորավեպը. 1880 և 1910-ական թվականները. Ժամանակակից պատմություն և տեսություն», Էջ 170-171:

178 Այսպես, օտյանական «հակամերուս» գեղագիտական-ստեղծագործական մոդելն ուղղակիրուն կիրարկվել է Տիգրան Զյոկյուրյանի «Հերոսը» ստեղծագործության մեջ: Տե՛ս «Ոստան», Կ. Պոլիս, 1911, Էջ 177-813:

գիծավեպի միակ դրսեռման եղանակը XX դարի հայ գրականության մեջ: Օտյանն իր թերթոններում հաղթահարեց ազգային-քաղաքական կյանքի, հեղափոխականի և հեղափոխականության տարուները: Ընդամին թերթոնի տիրույթներ ներբերելով ծիծաղի «ոչնչացնող» կերպու արտահայտություն, ծիծաղի այնպիսի ազրեսիվ եղանակ, որն ըստ ամենայնի սթրեսազերծում էր ու այդպիսով կատարում իր ժամանցային գերակատարությունը:

Երգիծական թերթոն վեպերի այս խմբում ևս գրողի ծիծաղի տիրապետող արտահայտչական եղանակը պարողիան և գրոտեսկն են, որոնք ընդգրկում են բոլոր հղացքներն ու տիպաժ գործառությունները, պատումն ու կերպարումը: Հարկ է շեշտել, որ Օտյանի թերթոնները հայոց վեպի մեջ ամրագրեցին «գրոտեսկային վեպի» ներժանրային կաղապարը, ինչը հետագայում կիրարկեցին Նշան Պեշիկթաշլյանը, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը, Սմբատ Փանոսյանը, Սիմոն Սիմոնյանը, Գետիկ Հերկելյանը: Գրողի թերթոններում անհամատեղելի սկիզբների ընդելուզումը, պարագորսալ համագրությունները ստեղծեցին գրոտեսկային, պարողիկ հսկայական դաշտ: Ինչն ի դեպ միւնույն հաջողությամբ գործում էր ոչ միայն թերթոն վեպերում, այլև փոքր արձակում, դիմանկարներում («Մեր երեսփոխանները»), մանրապատումներում, քրոնիկոններում («Մեր ազգային ժողովը», «Վերնատուննեն»):

«Հեղափոխության մակաբույժները» նորավեպերի շարքը և «Պրոպագանդիստը» թերթոն երգիծավեպը քաղաքական (հեղափոխական) կենսոլորտի, քաղաքական գործիչի գրոտեսկային-պարողիկ դաշտի կայացման առաջին անդրադարձներն էին, որոնց հանգրվանային որակը, բյուրեղացումը պիտի դառնար «Ընկեր Փանջունին»:

«Պրոպագանդիստի» շրջարկում առաջին անգամ ապակառուցման ենթարկվեց հեղափոխությունն ու հեղափոխականությունը, իսկ ուսուցիչ Աշոտի տիպաժ-գործառությունը ուրվագրում էր Փանջունուն: «Պատուհաս» հորջորջված հեղափոխական խմբի գործունենությունը և Արգար Կուլտամյանցի տիպաժը (նա հայրենիքի ազատագրության համար ժողոված գումարը գրպանեց և անհայտացավ) վերևում արձանագրված օպողիցիայի վկայությունն էին, տաքուները շրջանցելու, գաղափարի, սկզբունքի, հերոսության պատրանազերծումը, տոտալ արկածախնդրության, հակահերոսության և հակահերոսականության վկայությունը:

«Ընկեր Բ. Փանջունի» ստեղծագործության, Փանջունու տիպաժի գոյավորման ընթացքը սերտորեն առնչվում է «Հեղափոխության մակաբույժները» շարքին («Արտասահմանյան գործիչը», «Խմբագիրը», «Որ մենք հերոս...», «Նախկին գործիչը», «Կեղծ լրտեսը», «Անվագեր հերոսներ», «Հակահեղափոխականը»), որը գրվել և առաջին անգամ լույս է տեսել 1898-1899 թվականներին, իսկ 1910-ին գրողն այս շարքը վերահատարակել է: «Հեղափոխության մակաբույժները» շարքի՝ որպես «Ընկեր Փանջունու» հղացքի, պատումային շրջանակի, տիպաժների գործառությունների ստեղծագրանական սկզբնաղբյուր լինելու հանգամանքը արձանագրվել է օսյանագիտության կողմից<sup>179</sup>: «Ընկեր Փան-

179 Մասնավորապես շարքի հերոսների վավերական նախատիպերին անդրադառն են Անուշա-

ջունին» «Մեր երեսփոխանները» դիմանկարների շարքի հետ երևան է հանում օտյանական գերբնագրերից մեկը<sup>180:</sup>

Շարքի և վեպի հետազոտողները բազմաթիվ էջեր են նվիրել որոշելու համար, թե Փանջունին և փանջունիականությունը կոնկրետ ո՞ր կուսակցության գեղարվեստական անդրադարձն է՝ անտեսելով օտյանական քաղաքական (հեղափոխական) երգիծային թերթոնների ստեղծաբանական ելակետումը։ Օտյանը ծիծաղի տիրույթներում ընդգրկում էր ոչ թե կոնկրետ կուսակցությունների և կուսակցականների, այլ ընդհանրապես կուսակցությունն ու կուսակցականին։ Կակայանցն ու Վարդհոգյանը, Զաքեսոս ու Միհաքը Փանջունու, Սարսափունու տիպաժ-գործառությունների առաջին վկայություններն էին, որոնք պիտի վեպի շրջարկում ընդլայնվեին, այնուհետև թողթովենցի, Նշան Պեշիկթաշլյանի երգիծավեպերում դառնային Բուրբոնյան ու Փարոս, Շահազար և Տոմպազյան։ Ասել է թե՝ «Ընկեր Փանջունին» միջգրային կապեր պայմանավորող գենետիկական օղակ է մեզանում։

«Ընկեր Բ. Փանջունի» եռագրությունը թերթոն վեպի պատմության մեջ ուշարժան է իր ստեղծագործական պատմությամբ։ Օտյանագիտությունը բավական մանրամասն և բարեխղճությամբ անդրադարձել է դրան։ Գրողի ժառանգությունից այս ստեղծագործությունն ամենամեծ արձագանքն է ունեցել։ Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է այն իրողությունը, որ «Ընկ. Փանջունի ի Ծապլվարն» աննախադեպ հաջողությունից հետո, ընթերցողական դաշտի պահանջով, կարելի ասել՝ պարտադրանքով, շարունակվեց «Ընկ. Փանջունի ի Վասպուրական» և «Ընկ. Փանջունի տարագրության մեջ»։ Իմ աշխարհահայացքները» միավորներով։ «Բայց պէտք է ըսեմ, — գրում է Հեղինակը, — որ առաջին գիրքը աւելի յաջողած է քան երկրորդը։ Ու բնական է այդպէս ալ պիտի ըլլար։ «Առաքելութիւն մը ի Ծապլվար»ին տիպարները քաղած եմ անձամբ ճանչցած մարդոցս դիմագծութենէն, այսինքն՝ զանոնք ուսումնասիրած եմ քսան տարի մը։ «Ընկեր Փանջունի ի Վասպուրական»ը, ընդհակառակը ինծի պատմուած թիփերն են, իմ լսածներս»<sup>181:</sup> Խնդիրն այստեղ ոչ այնքան եռագրության երկրորդ և երրորդ մասերում փանջունիականության ֆենոմենի ստեղծաբանական իրացման կորդինատների փոփոխությանն է վերաբերում, որքան այն իրողությանը, որ Փանջունին Վասպուրականում և տարագրության մեջ, անկախ եռագրության ձևաբանական կառույցի նույնականության (գերազանցական նամականու կաղապարով), գործառությունների համանման շրջարկի ծապլվարյան գոյութենությունից այլանում է։ Վերհանում բավականին պարագայական բազմադիմություն, ինչի ընթացքն արդեն օտարացում է ծապլվարյան գոյութենությունից։ Պատահական չէ, որ գրականագիտության մեջ արձա-

Վաճ Մակարյանն ու Սամվել Մուրադյանը։ Տե՛ս օրինակ՝ Վերջինիս Օտյանին նվիրված մենագրության 125-133-րդ, 135-րդ, 139-րդ էջերը։

180 «Ընկեր Փանջունին» միջգրային ակնհայտ կապեր ունի «Տասներկու տարի Պոլսեն դուրս»-ի հետ, իսկ «Մեր երեսփոխանները» շարքի Հարություն Ծամկուլյանի, Սարգիս Սվինի, Համբարձում Պոլաճյանի, Հմալակ Սրամյանցի դիմանմկարները «Հեղափոխության մակարուցմերը» շարքի և վեպի հետ ստեղծում են մեկ գերբնագիր։

181 Տե՛ս «Հայրենիք», 1927, № 9, էջ 37։

նազրվել է, թե ստեղծագործության հաջորդ մասերում Փանջունին «...ոչինչ ունի 1910-ի հերոսն, անունին զատ»<sup>182</sup>: Պատահական չէ նաև, որ Փանջունու մեջ նկատվել է և՝ Դոն Քիշոտը, և՝ Տարտարենը, և՝ Պիկվիկը<sup>183</sup>, ինչը մատնանշված այլացման առարկայական վկայությունն է: Այս խորքում նկատում ենք ոչ պատահական մի օրինաչափություն: Անկախ Փանջունու և փանջունիականության տիրույթների ընդլայնումից՝ օտյանագիտության առարկայական արձանագրությունների տեսական միտքը իր մեկնաբանություններում և արժելորումներում խարսխվում է ծավալվարյան շրջարկում, ըստ էության կողմնակիրեն ցուցանելով մյուս մասերում Փանջունու և փանջունիականության այլացումը:

Փանջունու վարքագրությունը գործիչի, հերոսի, գաղափարականի գրոտեսկային-պարողիկ բյուրեղացումն է: Գործիչի, հերոսի, գաղափարականի էության դեգրադացիան ամբողջանում է վեպի մյուս տիպաժ-գործառություններով: Այդ դեգրադացված կենսոլորտը միայն Փանջունու «վաստակը» չէ, փանջունիականությունը հանուր տրվածք է, նստած է բոլորի մեջ, հանուրն է ընդունում փանջունիականության գոյությունը, միաժամանակ այն «...ունիվերսալ ծիծաղն է, ուղղած ամեն ինչի և բոլորի գեմ»<sup>184</sup>: Սրանով է բացատրվում այն իրողությունը, որ Փանջունին և փանջունիականությունն անվերապահորեն ընդունվեցին ոչ միայն ընթերցողական և մտավորական շրջանակներում, այլև քաղաքական ու կուսակցական: Փանջունին տարբերակների և alter ego-ների հսկայական ներուժով և փանջունիականությունն իր գոյաբանական ու տիեզերական անվախճանությամբ մեր գրականության պատմության մշտական ներկայությունները դարձան, շարունակվեցին (Հովնաթան Մարչ, Փարավոն Սեմ Անտոն, հշխան Արշակունի, Շահազար, Փարոս, գոկտոր Բուրբոնյան) և շարունակվելու են նրա վարքագրությունների նորանոր շարանով:

182 Յ. Օշական, «Համապատկեր...», հո. VIII, էջ 391:

183 Հիշենք թեկուզ Միքայել Կյուրճյանի, Ծահան Ծահնուրի այդօրինակ կարծիքները: Տե՛ս «Երվանդ Օսյանի հիշատակին», էջ 12-16, 32-33:

184 Մ. Բախտին, “Творчество Франсуа Рабле...”, с. 17.

## ՊԱՏՄԱՎԵՊԻ «ՈՉՆՉԱՑՈՒՄ» ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՊՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հաստ Լևոն Խեչոյանի  
«Արշակ արքա. Դրաստամատ Աերքինի» ստեղծագործության

Հալաստանյան արդի գրականության համապատկերում, դժբախտաբար, մինչև վերջերս բացակայում էր ան քրեստոնմատիկ իրողությունը, թե դասական վեպի կառուցքը վաղուց անտի իրեն ապառել է, իատկանական պատմավեպինը, և ժամանակն է ժամանակի «ոչնչացմամբ» ապրեցնելու գրականությունը: Սակայն գեղարվեստական բնագրի ընթերցման և ընկալման հայկական վիճապաշտ-զգալացունց հիմքուն և՝ ստեղծաբանական, և՝ գեղագիտական տիրուպյներում միսված են լավագույն դեպքուն Ծերենց-Ռաֆֆի-Մամուրյան-Պոռշյան-Մուրացան-ական պատմավիճապանության բավիրյան ժերմաքավ թմբիրում գոհանապար, արդեն կես դարից ավել, Դերենիկ Դեմիրճյանի ու Ստեփան Զորյանի թերեւ ձեռամբ, արտադրվում են գործեր, որոնք դուրս են ոչ միայն գրականության պարագրումից, այլև հայոց կենաոլորտի «ոսկա երազի» գրականության, բրածոյացումն են: Ընթերցման քիմքը գոհացնելու համար որքան է չարչըկվել 4-5-րդ դարերի մեր պատմության գոյութենության երփնագիրը, ինչքան են սկսովել՝ նորույթն ապահովելու պահանջով, զարմանապիրեն զանցառելով, որ վեպի գենետիկ էնվիթի բաղկացյալ «նորաբանությունը» բոլորովին տարեր է 20-րդ դարի ժամանակաշինությունից, որ գեղագիտությունից, որ անհրաժեշտ է փլուզել, քակել Ռաֆֆու կառուցքը (ընդդիմախոսներիս հղում եմ Խոսե Օրտեգա-ի-Գաստեսի արդի վեպի տեսությանը նվիրված գրությունները):

**Վ**աղամեռիկ Վարդան Գրիգորյանն այս մտայնության պատճեշումի նախաքայլերն արեց, որոնք, ցավոք, առկախ մնացին: Եվ աչա 1994-ին Լևոն Խեչոյանը լույս ընծայեց «Արշակ արքա. Դրաստամատ ներքինի» պատմավեպը, որը նախ՝ բնութագրական է մատնանշած «ոչնչացման» թանձրացականացմամբ ու իրացումով: «Արկածախնդիր» մտայնությունն հայ գրականության ավանդված սրբախոսության պարագրկումներում, ուր անմիջապես տեսանելի են համընդհանուր ընդգուռմն ու չհամարված մնալու տրագիկոմիզմը, մեր տեսաբանության «ժողովրդական-ընդունելի» թևի ագրեսիվ ու «գիտական» արձագանքները, վերջապես ամենակարևորը՝ ստեղծաբանական նահանջի հարակա տագնապը:

Լևոնն այս վեպի համար իբրև բնաբան կիրարկել է Ագուրի այն խոստովանությունը, որտեղ կենտրոնանում է գեղեցիկ գնալու և գեղեցիկ ընթացքի էույթը (Առակաց, լ. 29, 30), և թե ինչպես է գոյավորվում այդ ճանապարհը: Ընթացքը մանրամասնվում է ստեղծագործության մեջ՝ իբրև պատմություն, ճակատագիր ու ինքնություն, և այս պարագային համատեղագրվում է նույն Ագուրի խոստովանություններից ևս մեկը. «Ազգ կա, որ իր աչքին մաքուր է երկում, բայց իր աղքեցը չէ մաքրված» (Առակաց, լ. 12). և աչա վեպի կառույցում նյութականանում է գեղեցիկ ընթացքի տարանջատումը սեփական կեղծից, ու հենց դա է հայկական պատմավիպասանության «ոչնչացումը», որը

**ստեղծագործությունն անպայմանորեն դարձնում է նշանակալի այսօրվա գրական պրոցեսում:**

Այս աղբի ու կեղտի տեսանողությունն արդեն, ի տարբերություն դասական կառույցի, արտաքին չէ, և ճանապարհը նույնպես (Դրաստամատի, Ֆարուխի արխիտեկտոնիկ դարձումը, պտույտը վեպի կառուցվածքում), զուտ Անուշ բերդ արքային այցելելու, արքայի հետ լինելու, արքայի հետ մեռնելու արարքով արքային ապրեցնելու, հարատեելու և ըստ այսմ՝ գրական պատգամախոսության հանգանակի ամրագրումը չէ, այլ՝ ներքին ինքնաբախումը՝ վասն մաքրագործության. ոգերեր, բնազանցական, անհատական, ազգաբանական, այսինքն՝ մտքի արգասապորության պրկում, ստեղծումի հեռանկարայնություն։ Աղբը սոսկ արտաքին կոլիզիաներն աշխարհաքաղաքական խայտաբղետ բախումներն ու դրանց արդյունքները չեն, պատմական ժամանակաշրջանի հանգուցումը չէ, իսկ լույսը՝ միայն դիմակայությունն ու հակազդեցությունը։ Այս երկուսը համադրված են, փոխներթափանցած, յուրաքանչյուր պարագային ու դրվագում սեփական կեղտը նկատելու, այն մաքրելու գերլարումով ընթանալու համապատկեր է առանց վերջնական գնահատանքների և մեկնությունների։

Անշուշտ, ընդհանրականության մեջ այս նկատառումները ենթադրում են ծավալում ու առավել փաստարկում, սակայն տվյալ գեպքում ստիպված եմ բավարարվել պատմավեպի ինքնաբախման, ժանրի «ոչնչացման» առաջադրությունը մատնանշելով ցույց տալ դրականությունը ապրեցնող իրողությունը, որ առկա է Լեռնի այս ստեղծագործության մեջ, ուստի գերհամառոտ ներկայացնեմ գլխավոր դրույթները։

Ա. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԻՐԱՑՄԱՆ ՆՈՐԱԴԱՐՁՈՒՄԸ. Հանրահայտ է, որ ցանկացած պատմավեպ, եթե ժամանցային որկորի հագուրդ տալու համար չէ ստեղծված, ապա, պարտադիր, գրված է պատմական հեղաբեկումների, անցումային, բախտորոշ շրջանների ժամանակ, կենսական հարացույցի առարկայական հարցադրումներին պատասխանելու մտահոգությամբ (գոնե հայոց գրականությունում), ու այս պարագային անխուսափելիորեն կիզակետվում է գեղարվեստական բնագրի ծրագրայնությունը (գրական և արտագրական ընդգրկումն այս պարագային կրավորական է)։ Մեր պատմավեպի բնույթային ծրագրայնությունը, որպես կանոն, միշտ առթել է պատասխան, գրվել է որեկցե պատասխանի համար։ Հստ համապատասխան պատմական կոնտեքստների՝ պատասխան էին Բաֆֆու և Մամուրյանի, Ծերենցի ու Մուրացանի, Զորյանի, Դեմիրճյանի ստեղծագործությունները։ Հայաստանյան խորհրդային և պոստխորհրդային շրջանի պատմավիպասանությունը ստեղծվել է բացառապես ամենատարբեր հարցումների և խնդիրների պատասխանելու նպատակամիտությամբ։ Խեչոյանի վեպը գրվել է պատասխանելու պարագրկումից դուրս, անդին, այսինքն՝ «Արշակ արքա. Դրաստամատ ներքինի»-ն չի պատասխանում որեկցե հարցի և խնդրի, անպատասխան ստեղծագործություն է, հարցումի մետաբնագիր է։ Եվ հենց սա է ծրագրային իրացումի նորագործությունը հայաստանյան արձակի պոետիկայում։ Անկախության ու պետականության գոյութենու-

թյունն ինքնին, ներքին դիմադարձությամբ, ներփակ բնազանցականությամբ և հոգեխառնությունների մեջ, յուրօրինակ «Փիզիոլոգիայով», հակացուցիչներով և ընկալումների պարագրկությամբ, էութենական այս երկու հիմերի բախումներով, որտեղ պետականության գերակայությունը հանգուցվում, բաղհյուսվում է էգոցենտրիկ անանձնական շարժումով, գործող անձանց և գաղափարների համակարգը՝ անխտիր բոլոր միավորներով ու շերտերով, այս իրողության դիտանկյուն ու փաստարկումն են՝ վեպի կառույցում ներբերելով գոյակերպության և պատմության գերակատարության հանգրվանություն՝ պետականության համարժեքումը անհատական ազատության և անհատական մենակության հետ:

Բ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՍՏԵՂԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Պատմությունը, կենսագրությունը պարագայական ծշմարտությունները տարփողելիս, նրա իմաստը և գերակատարության (յասպերսյան համանունությամբ) խորհուրդը ըմբռնելու և սեփական պահպանը ուղղորդելու համար անընդհատ առկայացնում են նույն այդ պատմության զուգահեռ ստեղծաբանությունը, որ տիեզերական կարգ է, հար ու նման Դրաստամատի անսահման միայնակության փուլ մտնելուն, որ Արշակին անմնացորդ նվիրվելու փաստումն է. «Իր այսօրը կորցնող ժողովուրդը իր ապագան պահանջելու իրավունք չունի, մի լքեք ժամանակը, մի լքեք ակնթարթը, որ պատմություն պիտի դառնա», Զունակ եպիսկոպոսի այս բանաձևամբ պատմության ստեղծաբանությունը դառնում է վեպի սկզբում. լքում է կիրքը, առօրյան, ներաշխարհը, ամեն ինչ, միայն ինքն իրեն վերագտնելու իրողությունը, որ հին ու նոր աստվածների գաշնության միակ եղբն է, կենտրոնանում է պետականությամբ, ավելին՝ սա է հայոց պատմության արարողական հյուկեն: Այստեղ է Լեռնը կենտրոնացնում տեքստի անխտիր բոլոր բաղադրատարրերը (կերպարային խորք, կոլիզիաներ, միստերիաների մեկնություններ), աղբյուրագիտական ահռելի աշխատանքի գնահատության և օգտագործման ներուժը:

Գ. ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ. Նախորդից ածանցյալ, բայց ոչ երբեք կրավորական, որովհետև Արշակ արքայի ժամանակների վեպը, որ նաև Դրաստամատ ներքինու ժամանակների վեպ է, միաժամանակ առասպելականացրած պատմության ապամիթոսականացում է, նույն այդ պատմության դիցականացում: Ինչո՞ւ: Նախ՝ անբաղադրելի եղելությունը (միթոս-պատմություն) վկայություն է. պատահական չէ, որ վեպի պատումը բացառապես իրացված է վաղակատարով՝ իբրև վավերագիր, վավերաթուղթ, իսկ իրադարձությանն անմիջապես հաջորդող առասպելը (Փառանձեմի, Վարդան Նահապետի, Վարսենիկի «տեղային» կոլիզիաներ)՝ իբրև եղելության այլագոյացում, միասնականացած են, ապա՝ դիցերը և Աստված զուգորդում են կենսագրության ու ինքնության վկայաբանությունը, և հետո միթոսն՝ իբրև պատմության ֆրագմենտ, կանոնակարգում է պատմության մատնանշած զուգահեռական ընթացակարգը: Այս առումով Լեռնի վեպը ենթադրելի է դարձնում հայաստանյան գրականության մեջ «մոգական» իրագործումի նոր հղացքներ:

Դ. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳՐԿՈՒՄԸ. Աս, ինչպես արդեն ասացի, անընդհատ պրկված, վիճահարույցության կեռմաններում, երկվության մեջ, սակայն բոլորի մոտ ամրագրված, անկախ ենթակայական դիտանկյունի, տրամագծային հակագրականության: Վեպի բոլոր պերսոնաժներն են փորձում դա պարագրկել՝ որպես ինքնություն, իբրև գոյության «միաբնակություն», ընդհուածություն Աստծո ու թագավորի հարաբերակցության մեջ առաջնայնության հարցը, Նազովեցու սիրո պես է հողի, երկրի էութենականությունը, ու այս առումով ստեղծագործությունը հայաստանյան պատմավիպասանության մեջ ներբերում է՝

Ե. ԱՆՁՐՊԵՏՈՒՄ ՏԱԲՈՒՆԵՐԻՑ, Գեղագիտական, հոգեբանական, ավանդական, ստեղծագործական: Այսինքն՝ տեղի է ունենում ժանրի ազատ ոչնչացում՝ դույլն-ինչ «չթաքցնելով» աղբը, կաղապարավորների կողմից բանդագուշանքի ենթարկելի ապասրբացումը (Պապի պլան, Փառանձեմի պլան, Ներսես Մեծի պլան, Տիրանի պլան) ողջ համատեքստում՝ «ընդոծին պատկերներ»-ի տեսանողությամբ:

Զ. ԱՆՏԻՊԱՏՄԱՎԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՁՅՈՒՂՈՒՄԸ. Բառը կիարառում են պասական պատմավեպին օպոզիցիայի համանունությամբ, այստեղ արդեն ստեղծագործության պոետիկական-արխիտեկտոնիկ ամբողջությունը դրվագված է ներփակ և ներդիր մասերի, որոնցից յուրաքանչյուրն ըստ էության բաց համակարգ է, բնագրային անվերջավորություն՝ շարունակելիության ու ընդհատության միասնական կազմաբանությամբ և ձևաբանությամբ: Ո՛չ պերսոնաժների շարքը և ո՛չ դիպակած խուռներամություն, քառսի հետագիծը կոմպոզիցիոն շրջանակում կենտրոնացված է արքայի աքսորի (աքսորի պատմության մանրամասնումն՝ իբրև տեքստի գերակայություն) և Արշակավանի մեկնության շուրջ, իսկ Դրաստամատի ու Ֆարուխի ճանապարհորդությունը, ուղևորությունը գեպի Անուշ բերդ բնագրում շարունակելիության շոշափելիացումն է, պատմական մաքրագործության էսթետիզիացիան: Գործող անձանց պատկերագրումներում (Արշակ, Շապուհ, Դրաստամատ, Ներսես, Վարսենիկ, Փառանձեմ, Տիրան, Տիրիթ, Գնել, Պապ, Օլիմպիա, բերդի կառավարիչ, այլք) անհատականացումն ու ոճականացումը պարփակված է նրանց գիտակցության, ոգեխառնության ու Աստծո թելագությամբ կատարված արարքների հոսքերի ներքին արձանագրություններում՝ համագրված արտաքին խոսքի (մոնոլոգներ, դիալոգներ, խոհաբանություններ և պատումային լուծումներն ապահովող նշագրություններ)՝ դրանց սատարող գործառնություններին: Անտիպատմավիպասանության միակ զարտուղությունը թերևս ժամանակային ափսեսուարի ունական համապատասխանացումների երկարավատումներն ու պեղանտային գրանցումներն են, որոնք նախաբնագրային պատրաստության ոեցիդիվային արձագանքներն են: Այնուհանդերձ, անտիպատմավեպն առթում է պատմության գեղարվեստական ընթացման, ըստ իս, միանդամայն կայացած հանգամանքի՝

Է. ԱՎԱՐՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆԳՆՈՒՄԻ. Երբ ստեղծագործական մեկնությունը (օրինակ՝ Հայկի առասպելի ընթերցումը վեպի կառուցվածքում) մատնանշում է գոյության «արքետիպային» շրջանակը՝ բացելով մեր տեսակի մեջ միւված Արշակ-ներին ու Դրաստամատ-ներին, մյուսներին (այս առումով հույժ բնութագրական են 208-210-րդ էջերը) և այսպիսով ամբողջացնում.

Ը. ԳՈՅՈՒԹԵՆՈՒԹՅԱՆ ԾԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻԿ պարտությունների հաղթանակ՝ պարագորսալ հակադարձականությամբ։ Մարի երեցը շպրտում է Շապուհի ավագանուն. «Իսկ մենք թագավոր ունենք», երբ նրան ցանկանում են գայթակղել, այպանելով նրա մերկությունը փորձում սասանել իր՝ թագավորի, արքա լինելու նախասկիզբ սուբստանցը։ Եվ որպես համընդհանուր, Աստծո տրվածք՝ ամրագրում թագավորին արքայավայել ներըմբոնելու ու նրա կողմից առավել՝ հպատակներին նույնակերպ ներըմբոնելու, այսպես է «ոչնչացնում» Լեռնը պատմավեպը և խոսքի սրբազնացմամբ մոտենում գրականության ազատության արվեստական նախնականությանը։

## ԱՐԴԻ ԱՐՁԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ

(1990-2000 թվականներ, ակնարկ-ուրվագիր)

Ույն զեկուցումը վերնագրել ենք «Արդի արձակի համապատկերը (1990-2000 թվականներ, ակնարկ-ուրվագիր)»: Ինչո՞ւ: Այս գիտաժողովին մասնակցելու համար նարեկացիի անվան հայագիտական ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Պիտեր Քառուին առաջարկել էր անդրադառնալ «արևելահայ և արևմտահայ արձակի ներկա գրությանը հրապարակայնության քաղաքականության հոչակումից մինչև այսօր»: Բավականին ծավալուն, բազմաշերտ, ամենատարբեր գեղարվեստական, ստեղծաբանական, մշակութաբանական խնդիրներով առկա թեմա: Բնական է, որ առարկայաբար գիտաժողովում մեկ զեկուցմամբ անհնարին է սպառիչ մեկնաբանել խնդիրներն ընդգրկող բոլոր հարցերն, իրողությունները: Ուստի, հարկ ենք համարել կոնկրետացնել ինչպես մեր զեկուցում-ելույթի առանցքը, այնպես էլ առաջարկված թեմայի ժամանակագրությունը: Փորձելու ենք վերհանել արդի հայ արձակի համապատկերը՝ ակնարկ-ուրվագրով: Ակսենք «Համապատկեր»-ից: Տվյալ պարագային համապատկեր եղրը, կարծում ենք, գործառնական դաշտով և տարողությամբ, ամենահարմարն է, քանի որ հնարավորություն է ընձեռում՝ վերհանել ժամանակակից արձակի խնդրագրության շրջանակն՝ առանց անդրադառնալու այն հեղինակների ստեղծագործություններին, որոնք խնդրու առարկա ժամանակաշրջանում դուրս են արդի արձակը պայմանավորող, հատկանշող չափորոշիչներից: Զեկուցման մեջ հիմնականում բավարարվելու ենք դրանց սոսկական թվարկմամբ՝ իրեւ գրապատմական փաստեր: Բնականաբար, ենելով զեկուցման ծավալա-ժամանակային սահմաններից, համապատկերը փորձելու ենք ներկայացնել դրույթներով, ամել է թե՝ մեր ելույթը բնույթով ակնարկ-ուրվագիր է:

Զեկուցման ժամանակագրական ընդգրկման շուրջ

Մեկնելով «Հրապարակայնության քաղաքականության հոչակման» տարեթվից՝ իբրև ժամանակակից արձակի սկզբնավորման շրջան, անխուսափելիորեն երկակի շփոթության ենք հանգում: Գորբաչովյան վերակառուցումն ու հրապարակայնությունը, ի տարբերություն ռուսական գրականության, հայաստանյան գրական գործընթացը չհարստացրեց որևէ ժամանակակից «արգելված տեքստով» (այսինքն՝ այնպիսի ստեղծագործությամբ, որն իր գեղագիտությամբ, բանարվեստով հարիր չէր համայնավարական գաղափարախոսությանը, սոցիալիստական ռեալիզմի հրամայականներին), որն իր արժեքով, առբերած գեղարվեստական և ստեղծագործական ազդակներով զորու լինել ներազելու ժամանակակից արձակի վրա: Պարզվեց, որ արտագրական պատճառներով գոյց մնացած ոչինչ չունենք, եթե չհաշվենք լուսահոգի Խաժակ Գյուղնազարյանի

«Զայլամ» վեպն, ինչը ուղիղ համեմատական է ոիբակովյան «Արքատի զավակներին», սակայն որևէցե ընթերում չունի ո՛չ Սոլժենիշինի «Առաջին պարունակի», ո՛չ, օրինակ, Գրոսմանի, Տենդրյակովի ստեղծագործությունների արժեքային համակարգին: Հրապարակայնության ժամանակաշրջանում, խիստ պատահական ընտրությամբ, տպագրվեցին, օրինակ, Օտյանի «Ընկեր Փանջունին», Լեռ-Կամսարի որոշ անտիպ երգիծական մանրապատումները, Ավետիս Ահարոնյանի ստեղծագործություններից, որոնք հայաստանյան ընթերցող հանրությանը իրազեկելու հասկանալի մտահոգությամբ էին պատճառաբանված, սակայն ժամանակակից արձակի վրա թողած ներազգման դերակատարությամբ սրանք նույնպես զրոյական արդյունք ունեցան: Նույնն է պարագան Ղարաբաղյան շարժման մինչ անկախացման շրջանը գրականության (արձակի) վրա թողած ներազգեցության տեսանկյունից: Հավանաբար արձակի անհաղորդ վերաբերմունքն առ հանրային-քաղաքական կյանքի այս, հիրավի, բախտորոշ փոփոխությունները պայմանավորված էին Հետպատերազմյան, մանավանդ 1960-1980-ական թվականների հայաստանյան արձակի իրապես արժեքավոր որակով. Գուրգեն Մահարիի, Վիգեն Խեչումյանի, Արիդ Ավագյանի, Կարպիս Սուրենյանի, Մուշեղ Գալոյանի, Հատկապես Աղասի Այվազյանի, Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությամբ: Եթե Հավելենք նաև Զորայր Խալափյանի, Վահագն և Վարդան Գրիգորյանների, Վանո Միրագեղյանի անուններն, ապա պետք է արձանագրենք, որ հայաստանյան արձակը մեզ հետպարզող շրջանի նախադուանն ուներ արժեքային բազմանիստ դաշտ, բարերար ստեղծաբանական կենսոլորտ: Հայաստանյան արձակը վերակառուցման ժամանակաշրջանում, ըստ էության, անկախ արժեքայնությունից, իներցիայով շարունակում էր 60-80-ականների արձակի փորձը: Խնդրու առարկա ժամանակահատվածի առումով նույնն էր պարագան սփյուռքյան գրական գործընթացում: Լավ թե վատ, քիչ թե շատ, ավելի վատ և քիչ, այդուհանդերձ նույն իներցիայով պատճեննվում էին սակագ՝ Օշական-Որբունի-ական, ավելի հաճախ՝ շահնուրյան, շուշանյանական-համաստեղյան ստեղծագործությունները՝ Պողոս Սնապյան, Պողոս Գուբելյան, Մովսես Փչաքչյան, Վրեժ-Արմեն, այլք: Արձակի բարեբար կենսոլորտը, հեռանկարն ապահովագրում էին լուսահոգի Հակոբ Կարապենցն ու Վահե Օշականը, մասնակիորեն վաղամեռիկ Պետիկ Հերկելյանն ու Մկրտիչ Մարկոսյանը: Սա՝ մի կողմից: Մյուս կողմից՝ ինքնին հասկանալի է, որ «Հրապարակայնության քաղաքականության հոչակումը» սփյուռքյան գրականության, ի մասնավորի արձակի արդի ժամանակահատվածը պարբերացնելու հիմք չունի և անշուշտ շփոփության տեղիք է տալիս: Իրականում արդի արձակի համապատկերը ժամանակագրորեն համապատասխանում է անկախացման, Հայաստանի հանրապետության հոչակման, հետանկախ ժամանակաշրջանի հետ ոչ միայն այն առարկայական աշխարհագործական, հոգեղորմագությունի հանձնառություններով և հակազգեցություններով, որ ունեցավ և շարունակում է ունենալ, այլև արձակի փոխաձեռություններով, ժանրային-հղացքային այն պատկերով, որն արդի շրջանի համապատկերը պայմանավորում և հատկանշում են, ինչը կիորդենք ցուցանել: Ուրեմն մեր այս համապատկերն ընդգրկում է 1991-1992-2000 թվականները:

Երկու խոսք «արդի» հասկացության սահմանների մասին: Մեր գեկուցման մեջ հասկացությունը կիրարկում ենք երկու նշանակությամբ: Արդին՝ իբրև ժամանակաշրջանն որոշարկող հասկացություն: Այսինքն՝ նկատի ենք առնում գրական գործընթացի տվյալ հատվածում երեամ եկած բոլոր արձակ ստեղծագործությունները: Եվ արդին՝ իբրև արձակի պատմության, գեղարվեստական համակարգի մեջ նոր որակի, նորարական դրսերումների արտահայտություն: Արդի արձակի համապատկերը, հետևաբար, ամբողջանում է մի կողմից՝ ավանդույթի իներցիայով նախորդ արժեքների սոսկական պատճենմամբ՝ Անահիտ Սահինյան, Նորայր Աղալյան, Վահան Սաղաթելյան, Ռաֆայել Նահապետյան, Վահան Թամարյան, Վահրամ Մարտիրոսյան, Ռոպեր Հատտեճյան, Խորեն Արամունի, ավանդականի և նորարարության հարադրելու առավել կամ նվազ ջանքերով՝ Զորայր Խալափյան, Գուրգեն Խանջյան, Ալեքսանդր Թոփչյան, Վարուժան Այվազյան, Վահե Պերպերյան, և մյուս կողմից՝ անթաքույց նորարարույթյամբ՝ Լևոն Խեչոյան, Գրիգոր Պլատյան, Իշխան Ճինապաշյան: Անշուշտ այսօրինակ տրոհությունը չի նշանակում, թե այս կամ այն խմբի սահմանները սկզբունքորեն տարորշված են, չեն գործում ընթերումներ, փոխներթափանցումներ: Տարբերակման ելակետը արձակի գեղարվեստական-կազմաբանական բնույթն է: Այս հարցը նույնպես կփորձենք ըստ կարելվույն մանրամասնել:

Վերջապես՝ արդի արձակի հայաստանյան և սփյուռքյան տրոհության շուրջ: Կարծում ենք, որ նմանօրինակ տարբաժանումն արդեն հնացած է, առարկայորեն չի արտացոլում ժամանակակից գեղարվեստական գործընթացը: Դրանց փոխարեն առաջարկում ենք կիրառել հայերեն գրաբանական դաշտ հասկացությունը: Կարծում ենք՝ արդի շրջանում գործում է արեկահայերեն և արևմտահայերեն միասնական գրաբանական դաշտ: Այս իրողությունը նույնպես ի տեղիվո՞յ մեր գեկուցման մեջ կփորձենք փաստարկել և մեկնաբանել:

Արդ, անդրադառնանք արդի արձակի ընդհանրական պատկերին: Այս պարագային կարևորում ենք հետևյալ իրողությունների մեկնաբանությունը. ա) արդի արձակի ժամանակին-հղացքային պատկերը, բ) արդի արձակը պատմական գործընթացի դաշտում և ընդհանուր մշակութաբանական խորքի մեջ, գ) արդի արձակի քննադատական հակագղեցությունները:

### Ա.) Արդի արձակի ժամանակին-հղացքային պատկերը

Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայերեն գրաբանական դաշտում արձակն արտահայտվում էր գերազանցորեն տակավին 19-րդ դարի վերջերից հայոց գրականության մեջ ամրագրված, ձևաբանորեն բյուրեղացած ժանրերով՝ գեղարվեստական փոքր արձակ՝ հիմնականում պատմվածք, պատկեր, ակնարկ, մանրապատում, ավելի սակավ՝ նորավեպ, փորձագրություն, Գուրգեն Խանջյան «Շարժասանդուղք», «Ստվերներ խամաճիկների փողոցում», Ռաֆայել Նահապետյան «Մեղեդի՝ երեակայական ջութակի համար», «Ագռավի աղջիկը», Խորեն Արամունի «Մի բուռ առօրյա», «Դարի ճանապարհը», Լևոն Խեչոյան «Խնկի ծառեր», Վահան Թամարյանի, Դավիթ Մուրադյանի, Լևոն Զավախյանի, ավագ սերնդի որոշ հեղինակների ժողովածուները, թվարկած և թվար-

կած ցանկից դուրս մնացած շատ գրողների փոքր արձակ ստեղծագործություններ՝ հայաստանյան և սփյուռքյան բազմաթիվ պարբերականներում, անթուղթիաներում և ժողովածուներում։ Արձակի փոքր ձևերի գաշտում կանոնիկ արտահայտությունների գերիշխանության ներքո այս շրջանում երևան են գալիս նաև ձևաբանական նոր կաղապարներ։ Անշուշտ նոր մեր գրականության համաձիրում։ Այս առումով ժամանակին նորոգության, որոնումների խորքին անպայմանորեն պիտի արձանագրել «Բաց նամակ»-ում տպագրված որոշ գործեր, Գուրգեն Խաչյանի դեռևս մամուլում սփոված յուրօրինակ «կոլլաժ»-ները, Լևոն Խեչոյանի, Աղասի Այվազյանի, Կարպիս Սուրենյանի խոհագրության, պատկերի, կարճ պատմության, զրուցաբանությունների, դիմանկարի հարակցությամբ ստեղծված գործերը, Խեչոյանի ժողովական հեքիաթների մշակումները։ Որոշակի աշխուժություն է նկատվում հուշագրության և գեղարվեստական ուղեգրության, հրապարակագրության ասպարեզում (Կապուտիկյան, Սահինյան, Զեյթունյան, այլք), որտեղ աներկքա է օրվա հասարակական, քաղաքական խնդիրների օպերատիկ անդրադարձի գերակայությունը՝ ի հաշիվ գեղարվեստական արժեքի։ Հատկապես արգասավոր է համապարփակ քննության և արժեկորման կարոտ խնդրո առարկա ժամանակաշրջանի վիպագրությունը, ինչին դեռ կանդրադառնանք։ Այժմ սոսկ նկատենք, որ ժամանակին պատկերի շրջարկում հատկապես վեպն է՝ իր ներժանրային տարբերակներով, արտահայտում արձակի մետաքնագրի կառուցվածքային-ձևաբանական հեղաբեկումները՝ միջժանրային դրսեռորումներ, ժամանակին կանոնիկ սահմանների քայլայում, ընագրի գեղարվեստական, գիտական, մշակութային, մտածական, մեկնողական և այլ շերտերի մեկտեղում՝ համադրական սկզբունքով։ Այսինքն՝ ի. դարի վերջի տասնամյակների համաշխարհային արձակին բնորոշ դրսեռորումներ, որոնք միաժամանակ ապահովագրում են և՝ հայ արձակի պատմական ընթացքի դիմաժիկան և թե՛ մեր գրականության արդիականությունը համաշխարհային գրականության ժամանակակից փուլում։ Այս արձանագրության հնարավորություն են ընձեռում, անկախ արժեքային սանդղակից և առքերած նորարարություններից, Լևոն Խեչոյանի «Արշակ արքա. Դրաստամատ ներքինի», «Սև գիրք, ծանր բզեզ», Գրիգոր Պըլտյանի «Սեմեր», «Հարվածը», հշխան ձինպաշյանի «Արխիկ հասնումի», Զորայր Խալափյանի «Վասիլ Մեծ, Հայ կայսր Բյուզանդիայի կամ կճուճների թագավորը», Վահե Պերպերյանի «Նամակներ Զաաթարեն» ստեղծագործությունները։

Ժամանակակից արձակի հղացքային պատկերը թեմատիկ դրսեռորումներով գրեթե կը կնում է վերջին քառորդ դարվա ստեղծագործական փորձը։ Շարունակվում էին նախորդ շրջանում ուղենշած թեմատիկ-հղացքային շրջանակների գեղարվեստական կիրարկումները։ Մաթեսոյանական բանարվեստը, նրա գրականության կենսուրութը՝ հաճախ զուգորդված գալշոյանական բանարվեստին և գրականության կենսուրութին՝ բնագրից և ստեղծագործությունից բնագիր և ստեղծագործություն էին փոխանցվում, Վահագն Գրիգորյանի «Տեղատվություն» և «Աղամամութին» վեպերի գոյության պայմանական, սահմանային, միզերաբիլիստական գեղարվեստական միջավայրով պայմանավորում էին հղացքային այս կաղապարի հոսքը, Պերճ Զեյթունյանի և Վարդան Գրիգորյա-

նի պատմական երկերն առաջին վեհերոտ անդրադարձներն էին ունենում գրական գործնթացում՝ որպես կանոն կառչած մնալով պատմական ստեղծագործությունների կաղապարներին, «կարոտի, կորսված երկրի առասպելի» Համաստեղ-Մնձուրի-ական, «նահանջի, ուժացման» շահնուրյան ստեղծաբանական շրջանակները չէին ենթարկվում գեղարվեստական որևէ փոխաձևության, մեծ հաշվով զարտուղություն էին մնում Վահե Օշականի, Հակոբ Կարապենցի սիյուռքացման գոյութենության, հետզոյապաշտական վկայությունները, Աղասի Այվազյանի, Կարպիս Սուրենյանի մտածական, «ինտելեկտուալ» արձակի դրսերումները։ Սրան զուգահեռ երևան էին գալիս անկախության, պատերազմի, էներգետիկ ճգնաժամի, շրջափակման, սիյուռքյան իրականության փոխաձևությունների գեղարվեստական անդրադարձները։ Եվ, այդուհանդերձ, մի կողմից՝ արդեն նախորդ շրջանում առկայված թեմատիկ-հղացքային շրջանակի հաջող շարունակությունը, ընդլայնումը, նորովի ստեղծաբանական դիտանկյունների առկայությունն, օրինակ, Գուրգեն Խանջյանի, Արարատ Գյուլբանդյանի, Վահե Պերպերյանի, Վարուժան Այվազյանի, Ալեքսանդր Թոփչյանի, Զորայր Խալափյանի ստեղծագործություններով, մյուս կողմից՝ Լևոն Խեչոյանի, Գրիգոր Պըլտյանի և Իշխան Ճինապաշայանի՝ գրական ընթացի համար շրջադաշտին ստեղծագործություններով, ցույց են տալիս, թե արձակի արդի համապատկերին բնորոշ է բնականոն, ստեղծագործական լիարյուն կյանքը։ Եվ եթե խիստ չափազանցված են գրականության մահվան մասին լուրերը հայերեն գրաբանական ընդհանուր դաշտի հայաստանյան հատվածում, ապա անտեղի ենք համարում ամեն տեսակի լալահառաչ եղերերգները արտերկրում հայերեն գրականության հարատե հոգեվարքի, ստեղծումի հատվածական, պատահական բնույթի մասին։ Ի մասնավորի՝ արձակի։ Ապացույցը՝ Պըլտյան, Ճինապաշտյան, Պերպերյան, Արամունի և հին ու նոր բազմաթիվ անուններ։

Ժամանակն է երկու խոսքով անդրադառնալ հայերեն ընդհանուր գրաբանական դաշտին։ Ինչպես ասացինք հայատանյան և սիյուռքյան տարբաժանումն այսօր արդեն պարագայական է և, կարծում ենք, ամբողջությամբ չի արտացոլում գրական համապատկերի բնույթը։ Հայաստանն ու Սփյուռքը ժամանակակից փուլում զորավոր երթուղարձի մեջ են, ինչը պայմանավորում է նաև մշակութաբանական հարակա երթուղարձ։ Հատկապես՝ Սփյուռք ուղղությամբ։ Կրավորական են «բաժանարար» գծերը ոչ միայն ներսփյուռքյան գրականության մեջ։ Որտե՞ղ զետեղենք, ասենք, Վահե Օշականին՝ լիբանանահա՞յ, ամերիկահա՞յ, թե՞ ավստրալիահայ գրականության մեջ, Խաչիկ Տեր-Ղուկասյանին՝ լիբանանահա՞յ, թե՞ արգենտինահայ, Վարդան Մաթելույանին՝ արգենտինահա՞յ, թե՞ ամերիկահայ գրականության մեջ։ Կրավորական են նաև «բաժանարար» գծերը հայաստանյան և սիյուռքյան գրականությունների միջև։ Ասացեք ինդրեմ, Խորեն Արամունին հայաստանահա՞յ (կներեք՝ այս գեղ բառի համար), թե՞ սիյուռքահայ գրող է։ Ո՞չ աշխարհագրական կեցությունը, ո՞չ առավել ևս գեղարվեստական դաշտը չունեն տարբաժանման այն հիմնարար հատկանիշները, որոնք բնորոշ էին 25-30 տարի առաջվա գրականությանը։ Երկար Զորջեր կամ գնչուացման, ընտանիքի, բարոյականի ընկալման հիմերի կազմաքանդման, գոյության անհեթեթի և ոչնչապատմումի, ներքին վտարանդիության, արտաքին

և ներքին ուժացման փնտրտուք չկա և հայաստանյան գրականության մեջ, մենք բոլորս չենք ապրում ներքին մեծ փոխարերությունը աշխարհաքաղաքական, մարդկային, հոգևոր առումներով, Կիրկե կղզի չէ՝ արդյոք Զաաթարը, Արշակը, Դրաստամատը և Օնանը չե՞ն միթե Հրայրն ու իր հայրը: Լուսաբանմ, որ միջդրային ազուցման օրինակները ձինպաշյանի, Պըլտյանի, Պերպերյանի, Թոփչյանի և Խեցյանի ստեղծագործություններն էին: Այսքանով առկախենք այս տեսակետն, ինչը, կարծում ենք, դեռևս լրացուցիչ փաստարկումների և մանրամասնումների կարիք է զգում:

**Բ) Արդի արձակը պատմական գործնթացի դաշտում և ընդհանուր մշակութաբանական խորքի մեջ**

Արդի արձակի համապատկերի ակնարկն ուրվագրելիս կարեոր ենք համարում այս փուլի արժեքայնության դիտարկումը մեր արձակի պատմական գործընթացի տիրույթներում: Մասնակիորեն խնդրին անդրադառնք արդեն ժանրային-հղացքային պատկերի մասին խոսելիս, սակայն կարևոր են նաև հետեւյալ հարցագրումները: Արդի արձակը կազմաբանական, ոճական, պատկերային ի՞նչ նորություններ է բերում, որքանո՞վ և ինչպե՞ս է պայմանավորում պատմական ընթացքի գեղագիտական-գեղարվեստական ստորոգելիների փոխանցման հրամայականը, նորոգության ենթարկո՞ւմ է արդյոք դրանք, թե՞ բավարարվում արձակի ավանդույթի ստեղծաբանական կրկնություններով, պայմանավորո՞ւմ է արդյոք դրանք, թե՞ գործում կտրված և ինքնաբավ, ինչպիսի՞ հարաբերակցության մեջ է արձակի նախորդած փուլերի հետ, ի՞նչ փոխառնչություններ և փոխաձևություններ են միավորում արձակի պատմական գործընթացը ժամանակակից փուլի հետ, ինչպիսի՞ն է արդի արձակի ընդհանուր մշակութաբանական խորքը, այս առումով նա բա՞ց, թե՞ մեկուսացած համակրգէ: Առաջադրած հարցերին դժվար է միանշանակ, կատեգորիկ պատասխանել: Եթե ժամանակակից արձակի ընթերումները ընդհանուր մշակութաբանական խորքի հետ հաճախ պայմանավորված են գրողների՝ համաշխարհային գրականության (արձակի) իմացությունների, գեղագիտական և ստեղծաբանական ընկալումների ու ըմբռնումների ենթակայական, երեմն ինտուիտիվ, ենթագիտակցական, բնագոյային, սակավ՝ իրենց գեղարվեստական համակարգում իրեր և ստեղծաբանական գիտակցված համակարգի ու հայեցության հանգամանքով, գերակշռող մեծամասնությամբ բնութագրելի են որպես պատահական արտահայտություններ, ապա հայ արձակի պատմական գործընթացի փոխակապակցությունների զուգահեռում արդի փուլի համապատկերը բնութագրելի է ընդգծված խզվածությամբ: «... Դժնի իրականության համարժեք բյուրեղացված ու ավարտուն պատկերն ստեղծելու համար» (արտահայտությունը՝ Ալ. Թոփչյան «Կիրկե կղզին») ժամանակակից արձակը հաճախ նավաբեկության ենթարկված անփորձ ճանապարհորդի նման «Նամակներ Զաաթարեն»-ի մադամ Վերոնիկի պես արձանագրում է անկարելիության դարձարձումները. «Կ'երևի հայերեն գրելը Զաաթարի մեջ հայկական հյուպատոսարան բանալու պես բան մըն է»: Սա է պատճառը, որ ժամանակակից արձակի մետաբնագրում հախուռն տեղայ-

նացման եղանակով պատճենվում են Ռաբլեից, Մետյուրինից ու Սադից մինչև Գոգոլ ու Դոստոևսկի, Բուրժեից մինչև Կաֆկա, Սուզիլ և Կանետտի, Զոյսից մինչև Ֆոլքներ ու Կորտասար բազմաթիվ կաղապարներ ու ստեղծաբանական կառույցներ՝ փորձելով վկայել կամ դրանց հայերեն տարբերակները, կամ իրենց մասնահատուկ բանարվեստը, կամ դրանք դարձնել սեփական գրականության ուղղորդիչ մեկնակետեր։ Այնպես որ չպետք է համաձայնենք այն տեսակետին, թե արդի գրականության մեջ շարունակվում է նախորդ շրջանից սկսված «Փոլքներացման, կաֆկայացման և բորխեսացման» («Գարուն», 2000, թիվ 8, էջ 23) ընթացքը։ Ինչպես «Գարուն»-ի հոդվածագրի, այնպես էլ այստեղ վերում նշված անունների գրականության այս կամ այն տարրի, բանարվեստի, ստեղծաբանական սկզբունքի ուղղակի կամ միջնորդավորված առկայությունը չի նշանակում ժամանակակից արձակի գեղարվեստական-գեղագիտական համապատկերը երևան հանող մողելավորումներ։ Ո՛չ, օրինակ, Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոցի» շրջարկում կաֆկայական, մուզիլյան բանարվեստի և կազմաբանության աղերսները, ո՛չ Վարուժան Այվազյանի «Ճանճի ամիսի» շրջարկում դոստուկիական, ֆառլզյան աղերսները նշված հեղինակների գեղարվեստական համակարգի մողելավորման սուբյեկտներ չեն, այլ ընդամենը ստեղծագործական զանազան խնդիրներ իրականացնող միջնորդավորված և բացահայտ փոխանցումներ։ Եվ ինչպես այս, այնպես էլ արդի փուլի շատ արձակագիրների համար (Սեակ Հովհաննիսյան, Ռաֆայել Նահապետյան, Արարատ Գյուլբանդյան, Վահրամ Մարտիրոսյան, Նորայր Արալյան, Ալեքսանդր Թոփչյան և այլք) ընդամենը վերստեղծման համաօրինակներ, իմստափառական ընտրությամբ իբրև «ուղղության մայրուղին» մատնանշող, որը նույն պատահականությամբ կարող էր դառնալ բոլորովին այլ հեղինակ ու բնագիր, եթե վերստեղծման համաօրինակի գործառնություն ունենար։ Հետեւաբար, այս իրողությունը մեզ իրավունք է վերապահում եղրակացնելու, թե արդի արձակի համապատկերում մշակութաբանական խորքը, համաշխարհային փորձը ընկալվում և փոխաձեռության է ենթարկվում ընդգծված էլեկտրիկ և կոմպիլացված կերպով, ցուցանում է ծայրաբեռային որոնումներ։ Որոշարկված չէ տակավին, ինչպես, ասենք, Հակոբ Օշականի, Զարեհ Որբունիի գեղարվեստական համակարգում, որոնց արձակի գեղարվեստական համակարգերում Դոստուկին, Մարսել Պրուստը և Զեյմս Ջոյսը ստեղծաբանորեն փաստարկված, որոշարկված վիպագրության մողելավորման սուբյեկտներ են, և այս հեղինակների ժառանգության մեջ փոխաձեռություններն ըստ ամենայնի ավարտաբանած են։ Ինչևէ. թե՛ պատահական բնույթը և թե՛ խնդրո առարկա հարցի շրջանակում այս ակտիվ որոնումները և գարձարձումները մեկ անգամ ևս փաստարկում են, որ արդի արձակի համապատկերը բավականին դիմամիկ, փորձարկումների գնացող, ընկալունակ երևույթ է։

Արդ՝ հայ արձակի պատմական գործընթացից խզվածության խնդրի շուրջ։ Այս խնդրի պարագրկումներում հատկապես սրվում են ստեղծումի գնահատման, արժեկորման և մեկնաբանման որոշիչները, գեղարվեստական չափանիշի հանդամանքը։ Մեկնելով արդի արձակի բազմաթիվ երկերից՝ հանգում ենք մի օրինաչափության։ Զարենցն, այստեղ նկատի ունենք «Երկիր Նախրին», Հակոբ

Օշականն ու Զարեհ Որբունին, Նիկողոս Սարաֆյանի և Գուրգեն Մահարիի արձակն արդիական են, իսկ օրվա շատ ստեղծագործություններ ժամանակավրեպ, բրածոյացված: Սա միայն արդի արձակի համապատկերում պատմական գործընթացի, փորձի անգիտությամբ կամ բացակայությամբ բացատրել չի կարելի, թեև դրանք աներկբայելիորեն առկա են: Իրողությունը հակված ենք գնահատել նաև խզվածության երևույթով: Վերը հիշատակված ամենակարևոր հեղինակների ժառանգությունն արդի արձակի ստեղծաբանական տիրույթներում հայտնվել է լուսանցքային կարգավիճակում, անկախ սոսկական ընթերցումից, իմացությունից, չի տարրալուծվել, համարվել ժամանակակից արձակի մետաբնագրում: Արդյունքում համապատկերը ցուցանում է կրկին «հեծանիվ հորինելու» ընթացք, որի արդյունքը որակով, ստեղծագործության գեղագիտական, ձևաբանական չափորոշիչներով առնվազն վթարված է: Այս պարագային մատնանշած «մեկուսացումը» վերածում է «գետտոյականության»: Նամանավանդ երբ դիտարկում ենք ժամանակակից արձակի գեղագիտական և թեմատիկ կոնյուկտուրան, նկատում ենք, որ այն շատ հաճախ վերածում է պարզ պատեհապաշտության: Մի քանի օրինակներ բերենք: Բնագրից բնագիր շրջող էրոտիկան, ինքնանպատակ էպատամը, սեռականության և բնագդների «անկապ» սեեռումները՝ դրանք իբրև նորարարություն հրամցնելու անթաքույց ճիգ ու ջանքով, ցույց են տալիս պատմական գործընթացից խզվածության հետաքրքիր պատկեր: Տակավին 20-րդ դարի 10-ական թվականներին հայոց գրականությունը նվաճել էր այս տիրույթը, անգամ «նոր վեպի» բանարվեստի հիմունքներով: Հիշատակենք Ղևոնդ Մելոյանի «Մայրը» վեպը, Ենովք Արմենի «Կինը» փոքր արձակ գործերի ժողովածուն, էլ չենք խոսում Օշականի, Որբունիի մասին: Եվ դա բոլորովին արդի արձակի համապատկերի նորարարությունը չէ: Եթե զանց առնենք հշխան ծինպաշյանի, Վաշէ Պերպերյանի, Ղևոնդոչոյանի և մասամբ Գուրգեն Խանջյանի՝ սեռականության, էպատամի ուշագրավ համադրությունը խնդրո առարկայի առումով, որոնք այս հեղինակների ստեղծագործություններում հստակ գործառնություններ ունեն և պատճառականացված են համապատասխան գեղարվեստական համակարգերով, ապա մյուս գեպքերում պիտի արձանագրենք սոսկական պատճենում և տեղապատույտ: Նույնն է պարագան աստվածաշնչյան հղացքների գեպքում, որոնք չեն մոտենում անգամ Նշան Պեշիկթաշյանի «Հրաշավեպերին» (օրինակ՝ «Խապալի», «Սիդոննա»): Էլ չենք խոսում այն ստեղծագործությունների մասին, որոնց առանցքը գիտակցական հոսքն է, գոյության անհեթեթն է, ընդհատակյա, սահմանային շերտերի էքզիստենցիալիստական պատկերումը, աղետի տրանսսերնդային վկայությունները և «ժամանակակից ոչնչապատումների» կենտրոնացումներն են:

Բարեբախտաբար, այս տարտամության և խուռներամության հորձանքում արդի արձակի համապատկերը և՛ պատմավիպասանության (Խեչոյան, Խալափյան), և անտիուտովիաների (Թոփչյան, Պերպերյան), և՛ համադրական վիպումի (Պըտյան, ծինպաշյան, Խեչոյան, մասամբ՝ Խանջյան, Այվազյան) բյուրեղացումներ է առբերում: Հետևաբար, նշված ընթացքը անշրջելի դարձնելու գործում հսկայական դերակատարություն ունի քննադատությունը:

#### Գ.) Արդակի քննադատական հակագությունները

Կարծում ենք, որ ժամանակակից արձակի համապատկերի անկապտելի արտահայտությունն է արդի քննադատությունը։ Վերջինիս անդրադարձում մեր բանավիճային պաթուր թերևս ավելի հետևողական է, կեցվածքը՝ առավել խստապահանչ։ Շատ հաճախ արդարացի դժգոհություններ են հնչում, թե ժամանակակից քննադատությունը պասիվ հայեցողական դիրքորոշում է որդեգրել արդի արձակի գնահատման և մեկնաբանության գործում։ Եթե հաշվի առնենք արձակ ստեղծագործությունների առատությունը, բազմազանությունը, պետք է ընդունենք դժգոհության իրավացիությունը։ Քննադատությունը, տեսական միտքը, ցավոք, շատ հաճախ հետ է մնում գրականությունից։ Այսինչ գեղարվեստական ընթացքը պիտի տեսական մտքին համապայլ շարժվի։ Քննադատության, տեսական գրությունների այս պասիվությունը պայմանավորված է նաև արդի գրական արտադրանքի հանդեպ օպոզիցիայով, ինչն, անկախ առարկայական ու ենթակայական պատճառներից, նույնպես չպետք է անտեսել։ Վերջիվերջութեամբ և ընթերցումը փոխապայմանավորված իրողություններ են, և միշտ չէ, որ կարող ենք կիրառել «չիք տեքստ՝ հետևաբար չիք ընթերցում» կամ «չիք ընթերցում՝ հետևաբար չիք տեքստ» սինեմաները, նամանավանդ որ ունենք տեքստեր, որոնց ընթերցումն է առկաին, և ունենք ակնկալված տեսական, վերլուծական դաշտ, որի համապատասխան տեքստը բացակայում է դեռ։ Ունենք նաև համարժեք տեքստ և ընթերցում, ինչպես Մարկ Նշանյանի «Զորբորդ Շախսավորությունը» գրությունը հշխան ձինպաշյանի «Արխիվ համումի» վեպի մասին, Գրիգոր Շահինյանի «Հառաջ»-ում լույս տեսած հոդվածները, Սերգեյ Սարինյանի, Սեյրան Գրիգորյանի, Ազատ Եղիազարյանի, Թագեսու Խաչատրյանի հոդվածներն ու անդրադարձները։ Կարծում ենք, համապատկերի մեկնաբանման արդյունավետ փորձ էր անցած տարի ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտի կազմակերպած գիտաժողովը՝ նվիրված ժամանակակից գրականության խնդիրներին։ Խորհում ենք, որ արձանագրածն այն բարերար հարթությունն է, որ հնարավորություն է ընձեռում մոտենալու արդի գրական համապատկերն իրապես համապարփակ ընդհանրացնելու գործին։ Սակայն շատ հաճախ քննադատական անդրադարձներում նկատում ենք նույն խզվածությունը, գնահատման հիպերտրոֆիան, իսկ երբեմն՝ անորոշ ու տարտամ կաղապարների կիրառությունները, որոնք կարելի է անուները փոխարինելով կցել, ասենք, և՝ Գուրգեն Խանջյանին, և՝ Ալեքսանդր Թոփչյանին և թե՛ ցանկացած այլ գրողի։ Գրախոսականից գրախոսական թեածող միևնույն հերթապահ բառերը, հաճախ ոչինչ չասող, անկարելի պարբերությունները քննադատության ջանքն ու որակը վերապահելի են դարձնում։ Մի քանի օրինակներ բերենք. կարիք կա՞ Վարուժան Այվազյանի «Ճանճի ամսվա» համար գրելու, թե նա համարձակվել է «... քանդել գրականության առկա ու հայտնի կառույցները և այդ «մասերով» կառուցել միանդամայն նոր իրողություն»։ Շատ չէ՞ արդյոք այս ժողովածուի համար. հիպերբոլն օգտագործելիս քննադատը չի մտածել, հապա ի՞նչ չափաբաժիններ պետք է օգտագործել Բակունցի և Փայ-

լակ Միքայելյանի, Հակոբ Օշականի և Շահան Շահնուրի, Մահարիի և Հրանտ Մաթևոսյանի, Գրիգոր Պըլայանի և Լևոն Խեցոյանի առիթով: Այվազյանի՝ անշուշտ հետաքրքիր էքսպերիմենտները և հատկապես դրանց ապագա բյուրեղացումները շահում են այսօրինակ ընթերցումից: Կամ նույն քննադատը «Գարունի» էջերում գրում է. «Աղասի Այվազյանը... հայ գրականությունը դուրս է բերել մի ոլորտ, որ կարելի է համարել Հայկական ինտելեկտուալիզմի սկիզբ...»: Անվերապահորեն Աղասի Այվազյանի փորձագրություններն արդի գրականության այցեքարտերից են, որակական նվաճումներից, սակայն քննավոչ նոր ոլորտ: Հայկական ինտելեկտուալիզմը, թեև քիչ, սակայն վաղուց անտի հայ արձակի նորմա դարձած արտահայտություններից է՝ Շահնուր, Հրաչ Զարդարյան, Հակոբ Օշական, Նիկողոս Սարաֆյան, Կոստան Զարյան և այլք, իսկ քննադատի՝ Այվազյանին արժելորելու և մեկնաբանելու մտահոգությունը պետք է լիներ գրողի փորձագրությունների արժեքի վերհանումն այս հարցույցում: Բոլորովին ցանկություն չունենք բացասելու քննադատի գործը, ինչն այդուհանդերձ միտում ունի արդի փուլի խնդրագրությունը մատնանշել: Շատ ավելի ցավալի են այնպիսի անդրադարձները, որոնք հավակնում են արդի արձակի ընդհանրական դիմանկարը կերտել, սակայն արդյունքում նկատում ենք զուտ ոչնչով չպատճառաբանված հավակնություն միայն: Ի դեպ, հենց այս պատճառով էլ ժամանակակից քննադատությունը արժանանում է, մեղմ սասած, ոչ միիթարական արձագանքների: «Նոր դարի» հոդվածագիրը (2001, թիվ 1, էջ 221-229) շրջանառության մեջ է մտցնում տարտամ, մանվածապատ դարավերջի հայ արձակի «գեղագիտական միասնության» կանխադրույթը և ջանում գրեթե ողջ համապատասխան գրական արտադրանքը հարմարեցնել այդպես էլ ողջ շարադրանքում անհասկանալի մնացած «գեղագիտական միասնություն» կոչվածին: Ավագ պարզվում է, որ այդ միասնությունը... միասնական չէ, ահավասիկ. «Գրողների այս համախմբում ամեն մեկը իր անհատականությամբ, ասելիքի ուրույն դիրքավորմամբ առանձին ուսումնասիրության խնդիր են պարտադրում»: Այդ կորսված գեղագիտական միասնությունն ուրեմն ո՛չ ասելիքն չէ, ո՛չ էլ, գուցե պիտի հասկանանք, չհատվող անհատականությունները և ո՛չ էլ, պարզվում է, «ժամանակի, լեզվի ու պոետիկայի բնագանցական նոր տիրույթները» (իր խոսքերն են): Մանվածապատ խրթնաբանությունների հաշիվն արդեն կորցնում ենք սույն շարադրանքում: Այնուամենայնիվ զորաշարժի ենք ենթարկում մեր համեստագույն ուժերը՝ ի խույզ արդի արձակի կորուսյալ գեղագիտական միասնության, և պարզվում է, որ գեղագիտական միասնությունը «գարաշընթանի փիլիսոփայական յուրացումներն» են և առանց մասնավորելու, թե ինչ յուրացումների մասին է խոսքը, ինչպես են այդ յուրացումները արտահայտվում, պարզվում է ձինպաշյանի, Սևակ Հովհաննիսյանի, Խանջյանի, Նահապետյանի, Թոփչյանի, գրական նախաֆորձեր անող որոշ տիկնանց, Այվազյանի, Խեցոյանի միասնությունը «ինքնաճանաչողության ներքին ձայնին»... «մերձեցումն» է: Ակամա ցանկանում ես բացականչել՝ իսկ իշխան Համլետը, Դոն Կիխոտը, Ռասկունիկովը, Ռուբեն Թուսյանն ու Հակոբիկը: Սակայն պարզվում է, որ սա էլ գեղագիտական միասնությունը չէ, որովհետեւ, օրինակ, Այվազյանի և Խեցոյանի տիպերն ապրում են

«տիեզերական մի հոլովույթում», որին անմիջապես հաջորդում է այն միտքը, որ Խեցոյանի տիպը «այլ տրամագծություն է կրում»: Սույն շարադրանքից պարզվում է, որ միասնությունը «Նոր դարի» շուրջ համախմբված հեղինակներն են, թեև, միմյանց հետ ինչպես արժեքով, այնպես նաև գեղարվեստական համակարգով ու բանարվեստով ոչ մի կապ չունեցող Նորայր Աղալյանի ու Լևոն Խեցոյանի, Իշխան Շինպաշյանի նման, որոնց համառորեն հոդվածագիրը «գեղագիտական միասնության» մեջ է ցանկանում լոցկել, միմյանց ներհակ են Գուրգեն Խանջյանն ու Վահան Թամարյան՝ օրինակ: Հոդվածագիրը շփոթում է համատեղ աշխատանքն ու գրական շարժումը: Ինչևէ, ցավ ի սիրտ արձանագրենք, որ նմանօրինակ աճպարարությունները, ինչն առանց դույզն-ինչ մենտորության և կեցվածքի ենք արձանագրում, մեզ հեռացնում են արդի արձակի համապատկերի առթած լրջագույն հարցերի և խնդիրների լուսաբանությունից:

Ժամանակակից արձակի համապատկերի ակնարկի ուրվագրում հատկապես կարևորում ենք վեպի կամ համեմատաբար ծավալուն միջժանրային իրագործումների անդրադարձը, քանի որ հատկապես վիպագրության շրջարկում է ըստ ամենայնի երկում ցանկացած ժամանակահատվածի արձակի առավել ընդհանրական պատկերը, ձեռքբերումները և ստեղծագործական, գեղարվեստական առանձնահատկությունները: Ուրեմն, ըստ կարելվույն, փորձենք խոսել այս մասին:

#### Վեպն արդի արձակի համապատկերում

Ժամանակին բազմագործառնությամբ և գեղարվեստական կուտակումներով վեպն անշուշտ արձակի ստեղծաբանական խտացումն է, արձակի տվյալ ժամանակաշրջանի ինքնությունը պայմանավորող հիմնական արտահայտությունը: Գրական վիճակագրությունն ուսանելի է ընդհանրապես գեղարվեստական ընթացի համապատկերը մեկնաբանելիս, առավել ևս համեմատական վիճակագրությունը, ինչը հետաքրքիր պատկեր է վերհանում: Ահավասիկ 1896-1900 և 1996-2000 թվականների վիպագրության համեմատական վիճակագրության պատկերը: 1896-1900 թվականներին լույս է տեսել երեսունվեց վեպ, ընդ որում ժանրի, առհասարակ գրականության պատմության այնպիսի հանգուցային ստեղծագործություններ, ինչպիսիք են Մուրացանի «Գևորգ Մարզպետունին», Շիրվանզադեի «Յարվագարը», «Քառոսը», Նար-Դոսի «Սպանված աղավնին», Միքայել Կյուրճյանի «Մարտիկ աղան», 1996-2000-ին մեր հաշվումներով հրատարակվել է ավելի քան հիսուն վեպ, ընդ որում Լևոն Խեցոյանի «Արշակ արքա», Դրաստամատ ներքինին», «Աւ գիրք. ծանր բգեզը», Գրիգոր Պըլայանի «Աւեմերը», «Հարվածը», «Նշանը», Իշխան Շինպաշյանի «Արխիվ հասնումին», Զորայր Խալափյանի «Վասիլ Մեծը...», «Արա Գեղեցիկ և Շամիրամը», Վահե Պերպերյանի «Նամակներ Զամաթարենը», «Հանուն հոր և որդիոն», Ալեքսանդր Թոփչյանի «Կիրկե կղզին», Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոցը», «Խրամատային գրառումները», «Ստվերներ խամաճիկների փողոցումը», Վարուժան Այվազյանի «Ճանձի ամիսը», Վահան Տեր-Ղազարյանի «Արքայագրամը», Խո-

ըեն Արամունիի «Մահվան պարը» և այլն: Թվարկեցինք արդի համապատկերը պայմանավորող, բնութագրող երկերն՝ անկախ արժեքայնությունից: Հարյուր տարի առաջ ստեղծված վիպագրության պես դրանցից շատերը գրականության համապատկերի համար զուտ գրապատմական փաստեր են, վիճակագրական միավորներ, սակայն, հուրախություն մեզ, ունենք վեպեր, որոնք անվերապահուեն մնալու են գրականության արժեքային հաշվեկշռում: Կրկնենք՝ Խեչոյանի «Արշակ արքան...», Ճինպաշյանի «Արսիվ հասնումին», Պըլտյանի «Սեմերը» վեպի տիրույթներում նաև հանգրվանային նախադուներ են նախանշում: Ինչն իրավես գոհացուցիչ է, վկայում է արդի արձակի ստեղծաբանական կառողությունը:

Սատնանշած հեղինակների ստեղծագործությունները յուրովսանն ապահովագրում են պոստինդուստրիալ ժամանակների սոցիալ-բարոյական կենսոլորտի գրեթե ամբողջական արտահայտությունների վիպումը՝ իրենց ստեղծագործություններում ընդհանրացնելով ժանրի գենետիկական շրջանակն ու ձևաբանական-կառուցվածքային երինագիրը: Շրջասեկով ժամանակակից ականավոր վիպասաններից Սալման Ռուշդիի «Իմ գոյությունը վեպում է» արտահայտությունը՝ կարող ենք արձանագրել, որ հայ արդի արձակի գոյությունը (տվյալ դեպքում ասել է թե՝ ինքնությունը, կազմաբանական մոդելների բյուրեղացված դրսերումները, ստեղծաբանական որոնումները, էքսպերիմենտները, գեղարվեստական առանցքային հայեցությունները) ավարտաբանվում է այս ժանրի տիրույթներում:

Ունենք ներժանրային գրեթե բոլոր կաղապարները, որոնք այսօր նորմատիվ են համաշխարհային վիպագրության շրջարկում՝ պատմավեպ, անտիուտովիաֆանտասմագորիս, վեպ-առակաբանություն, պոստհուշագրական վեպ, նոր դետեկտիվ-արկածախնդրական վեպ, համադրական վեպ: Գրիգոր Պըլտյանի ստեղծագործությունների շնորհիվ մեզանում հիմնվում է ցիլինդրիկ վեպերի նոր մշակույթ: Վիպագրությունն ընդգրկում է Վահե Պերպերյանի «Հանուն հոր և որդվո» վեպի հերոսի ստեղծած բառով (որը նշանակում է գիտակցաբար անընդունելի, սխալ, սակայն ճիշտն անելու, ճշմարտությունը հայտնաբերելու մղում) անընդհատ «լարգվող» անհատի և «լարգումի» ժամանակների վկայությունները: Սկսյալ, առաջին հայացքից խիստ տեղայնացված, գրողի սեփական գրքերը վաճառելու ջանքերի վավերագրական պատումից (Խորեն Արամունի, «Այն մասին, թե ինչպես եմ սպառում գրքերս»), միջավայրի և ժամանակի կամերային իրացումներից (Խաֆայել Նահապետյան) մինչև էքստերիտորիալ «Ծեշտ» ամսագրի շուրջ համախմբումի ենթարկվող ժամանակակից իրականություն և ճակատագրեր, ժամանակակից ֆառուստների ազմողեսյան փորձություններից (Վարուժան Այվազյան, «Ճանճի ամիսը»), իրականի և երեակայականի սահմանների կազմաքանդող վավերական մղձավանջներից (Ալեքսանդր Թոփչյան, «Կիրկե կղզին») մինչև անցյալի, ներկայի վերստեղծման էպիկական լայնահուն նվաճումներ (Լեոն Խեչոյան, «Արշակ արքա...», «Սև գիրք...», Պըլտյան, «Սեմեր»): Սրան զուգահեռ, ինչը կարծում ենք բնական է, ինքնանպատակ տեղապատույտներ, անհնարին տեքստեր, ժամանակավրեալ ընկալումներ և ըմբռնումներ, մի խոսքով՝ արդի արձակի ողջ պերճանքն ու թշվառությունը:

Ինչը նույնպես դրական ենք գնահատում, քանզի թեև զարտուղի ճանապարհով, սակայն կրկին ու կրկին վկայվում է, որ գործ ունենք շարժուն, հարակա արարող վիպումի դաշտի հետ: Միմիայն այս պարագային է, որ առկայանում է այն կանխատեսությունը, թե հայ արձակը անպայմանորեն առքերելու է Հակոբ Օշականի, Գուրգեն Մահարիի, Զարեհ Որբունիի, Ակսել Բակունցի, մեր մյուս վիպագիրների արժեքին համանուն արժեքներ:

Այս խորքին թեև հպանցիկ, սակայն մեկնելով մեզ ընձեռած ծավալից ու ժամանակից՝ կարելի բնութագրումներով փորձենք անդրադառնալ որոշ ստեղծագործությունների:

### Աղետի վիպում

Թերեւս պատմավիպասանության հետ մեր գրաբանական դաշտի ամենաշանգվածային արտահայտությունը և ամենահանրահաճոն: Սրանով իսկ խիստ պատասխանատու և անշուշտ նոր իրացումների համար «վտանգներով» լեցուն՝ նկատի ունենալով, օրինակ, Զապել Եսայանի, Շահնուրի, Օշականի փորձը մի կողմից, մյուս կողմից հայաստանյան և մանավանդ սիյուռքյան գրականության՝ և՛ քանակով, և՛ թե որակով հարուստ ժառանգությունը: Այս նկատի ունենալով՝ առնվազն տարակուսանք են հարուցում Ավետիս Ահարոնյան-Սուլրեն Պարթևյանի «զուլումի» վատ նմանակումները՝ ընդվզման, դիմակայման համապատասխան չափաբաժններով: Ասվածի վկայությունը, մտայնության պերճախոս օրինակը խորհում ենք Հայաստանում խիստ գերազնահատված Վահան Թամարյանի «Արյունաբանություն» հավակնոտ վերնագրով ստեղծագործությունն է՝ «Հիշի՛ր, որ ապրես, Վրիժառք, ոսկորները ծաղրելու համար դեռ պատասխան կտա» պարզունակ կող-արտահայտություններով, մերկապարանոց բառապաշտրով, վրեմի էժանագին տարփողմամբ: Ինչը գավառականությունից անդին չի անցնում: Սրա կողքին Վահան Տեր-Ղազարյանի «Արքայադրամը», որ թեև վիպումի ավանդական (որոշակիորեն գալչոյանական) կերպին, այնուհանդերձ բնորոշվում է պատումի, լեզվի մշակույթով:

Այսօրինակ ստեղծագործություններում էական է դիտել հետաքրքիր փոխաձեռությունը: Աղետն իր տրանսսերնդային ներկայությունը տարրալուծում է «Արիսիվ համառումիի» ժամանակակից գերիրապաշտական դրվագներում, «Սեմերի» Էլմոնի, Անթիքայի հետահայաց հովկերգական և դրամատիկ անդրադարձներում, «Հանուն հոր և որդի» վեպի սենյակներում՝ արկղերի մեջ կուտակված գրքերի անձեռնմխելիության վերջնական վճռի մեջ:

### Պատմության վիպում

Անբավելի հետաքրքրություն են հարուցում ժանրագիտության արդի ուսումնասիրությունների շրջանակում պատմավեպի մողելի մեկնաբանությունները, նամանավանդ որ ձեւաբանական այս կառույցը թե՛ հայ, թե՛ համաշխարհային վիպագրության ժամանակակից համապատկերում առավել ցցուն, համակողմանի է ենթարկվել ժանրի դասական մողելի «քայքայման», «ոչնչաց-

ման» (վերջին արտահայտությունները չակերտների մեջ ենք առել, որպեսզի շփոթություն չառաջնանա վախճան-ավարտ իմաստների հետ) ստեղծաբանական-գեղագիտական թելագրանքներին։ Ասել է թե՝ պատմավեպը վիպագրության այն տիրույթն է, ուր ակնդետ ցուցանվում է ժանրի փոխաձևությունների և փոխակերպությունների պատկերը, երևան են գալիս միևնույն բնագրի սահմաններում պարփակված ընթերցումի մեկից ավելի սեմիոտիկ դաշտեր։ Պարզապես արձանագրենք, որ արդի տեսաբանական միտքը պատմավեպի երեք մոդել է զանազանում։

1) «ռոմանսից» արտածված, «սև կամ գոթական» վեպի կազմաբանությամբ գրված երկեր, որտեղ կարեորն այն է, որ գործողությունը չի կատարվում «Հիմա», «այս պահին» և «այստեղ», այն կատարվել է անցյալում, ինչ-որ «պայմանական անցյալում»։ Արդի արձակի համապատկերում այսօրինակ կաղապարի բնորոշ արտահայտությունը Զորայր Խալափյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ»-ն է,

2) Հայր Դյումայի հանգույն ստեղծված «թիկնոցի և սուսերի» պատմավեպեր,

3) «Նորմատիվ» պատմավիպասանություն, այսինքն՝ դասական պատմավեպի կազմաբանությամբ և ավանդույթներով հեղինակած երկեր։

Խնդրո առարկա շրջանում ստեղծված պատմավեպերի գերակշռող մեծամասնությունը այս մոդելին են պատկանում։ Այս դասակարգումն, օրինակ, կիրառում է Ումբերտո Էկոն՝ մեկնելով համաշխարհային վիպագրության փորձից։ Կարծում ենք, սակայն, գոյություն ունի ժանրի չորրորդ մոդելը, որ անվանում ենք «ռելյատիվ պատմավիպասանություն»։ Արա արտահայտություններն են հայ արդի արձակի համապատկերում Խալափյանի «Վասիլ Մեծը...» և Խեչոյանի «Արշակ արքան...»։ Այս ստեղծագործություններում կազմաբանական-գեղագիտական համադրության մեջ՝ միևնույն բնագրի սահմաններում, պարփակված են ընթերցման մեկից ավելի սեմիոտիկ դաշտեր։ Այս երկերում առկա են և՝ արկածային, և՝ սիրային, և՝ սարսափի, և՝ նորմատիվ պատմավեպերի դաշտեր՝ ընթերցողին հնարավորություն ընձեռելով դրանք կարդալ մի գեպքում իբրև սիրավեպ, մի այլ գեպքում՝ իբրև սարսափի վեպ և այլն։ Ասել է թե՝ առթում են մեկից ավելի ընթերցումների դաշտ։ Այս իրողությունը հայ պատմավիպասանության նորարարությունն է արդի արձակի համապատկերում, որի հիմքը դրեց Լևոն Խեչոյանը։ Իսկ ի դեմս Խալափյանի «Վասիլ Մեծի...»՝ ժամանակակից գրականության մեջ առկայվեց ստեղծագործության մի տեսակ, որն անվանում ենք «պատմական սքեթչ»՝ նժդեհականների և նժդեհների վիպասքների, «մեռնող-հառնող» նախաձևերի կազմաբանական տարրերի միախառնումով, նոր Տելեմաքի արկածներով։

### Անտիոտոպիաներ

Բնական է, որ ժամանակակից կյանքի քաղաքական, տնտեսական, բարոյական մարտահրավերները, ես-ի լճացման համաշխարհային տագնապը արդի արձակի համապատկերում պետք է հակազդվեր անտիոտոպիաներով, որոնք

քաղաքական բոմնդի, առհասարակ արդի իրականության ուղղակի և բացահայտ ակնարկներով պետք է միաժամանակ վիպմամբ նվաճեին և վերաբերմունք արտահայտելին անցման ժամանակների քավարանային կենսոլորտին՝ սահմանային գոյության գերիրապաշտական սկեռումներով։ Հայ վիպագրությունն այս փորձն ուներ։ Ցանկանում ենք հիշատակել Սիմոն Սիմոնյանի («Անժամանդրոս»), Պետիկ Հերկիլյանի («Եռւհու») հաջող փորձերը։

Ի շարս այլ շերտերի՝ Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոցի» շրջարկում տեսնում ենք անտիուտոպիաներին բնորոշ արդիականության պայմանականացման, այն գրոտեսկային, ծայրագնա, «պաթոլոգիկ» արտահայտություններով ներկայացնող դաշտ, որը ենթադրում է պատումի, հերոսի խիստ որոշարկված գործառնություններ՝ հարակա խելահեղության հասնող տրամադրություններ, վիճակներ, արարքներ, ինքնառչացնող սկիզբների անընդհատական շրջապտույտ և այլն։ Կոնյուկտուրային առումով այս տիպի վեպերը օրախնդիր էին։ Եվ ահա սկսվում է անտիուտոպիաների չարչըկումը։ Աղբի, թափառական շների, հանդարտ ու բուռն հանուրին համակված դիվականության ու շիզոֆրենիայի, բաքոսացման, նորօրյա բաքոսների ու մենադների թափառումը բնագրից բնագիր գրաբանական դաշտում դառնում են նորմա։ Երևան են դալիս անկարելի բնագրեր՝ Նորայր Աղալյան, «Դավայաթաղ», «Ապոկալիպսիս», Վահրամ Մարտիրոսյան, «Սողանք»։ Եթե Մարտիրոսյանի վեպի լավ կազմակերպված, ուսանելի գովազդը այդ ստեղծագործության թերևս գրական ընթացի համար միակ ուշագրավ նախադեպի դրսերում էր, ապա Նորայր Աղալյանի՝ ժամանակակից վեպի մասին ըմբռնումները (ըստ գրողի՝ վեպը ճակատագիր է, Աստծո և սատանայի փորձություն, ահավասիկ ի. դարի վերջի արվեստագետի մակարդակ. մեկնարանություններն ավելորդ են), դատավորի բարձունքից բարոյական դասեր տալը, մերկապարանոց այլաբանությունները, լեզվի վթարները, դասական և ժամանակակից գրողների անթաքույց, բայց անհաջող նմանակումները տխուր խորհրդածությունների տեղիք են տալիս։

Բարեբախտաբար, այս տիպի գործերի դիմաց ունենք իրավես հաջողած, արժեքավոր անտիուտոպիաներ Ալեքսանդր Թոփչյանի «Կիրկե կղզին», որ իր մշակութային հագեցված խորքով, սատիրայի, պամֆլետի, ֆանտասմագորիայի՝ արդի արձակի շրջարկում քիչ գտանելի արտահայտություններով, Սեսիլի, Էվրիլորդի, Վուդիփոյի, ազատախոհ մտավորականի, Միակ երգչի ընդհանրական և արդիական տիպաժների, զուսպ պատումի և օրինակելի լեզվի չնորհիվ ժամանակակից վեպի նշանակալի ձեռքբերումներից է։ Նույն է պարագան Վահե Պեղոյանի «Նամակներ Զամաթարեն» ստեղծագործությունն արժեորելիս։ Այս վեպում իրականության պայմանականացումը հակադարձ երթուղարձուվ կարծես թե ամփոփում է արդի անտիուտոպիաների բանարվեստը։

### Համադրական վեպի արտահայտություններ

Պայմանականորեն այսպես ենք կոչում ժանրի այն արտահայտությունները, որոնք իրենց կառուցվածքում դրսերում են, օրինակ, վեպ-գաղտնիքի, գիտակցական հոսքի վիպագրության, վեպ-բարքագրության, այլ կաղապարների

ձևաբանական հատկանիշներ: Շարքի տակ ամփոփել ենք նաև այն ստեղծագործությունները, որոնք, ըստ Հության, ժամանական սահմաններն ու չափորոշիչները պայմանական են դարձնում, առավել ցցուն երևան բերում արդի վեպագրության առանձնահատկությունները: Անշուշտ ստեղծագործությունների այս համաբույլը թե՛ արժեքով, թե՛ դերակատարությամբ նույնական չէ:

Այսպես օրինակ՝ Խորեն Արամունիի «Մահվան պարը» ժողովածուում ամփոփված «Նստարան» և «Առավոտ լուսո» ստեղծագործություններում անթաքույց սխեմատիկ լուծմունք են ստացել ժամանակակից հայ իրականության օրախնդիր շատ հարցեր՝ ուժացում, արտագաղթ, ամերիկյան բարքերի ազգեցություններ և այլն, իսկ «Մահվան պարում» շեշտված հրապարակախոսական կեցվածքով դիմանկարում է արտագաղթի ձախավերությունները: Ի դեպ, «Մահվան պարը» պատումային-թեմատիկ առումով Վազգեն Շուշանյանի «Մահվան պարը» վեպի կառույցի պատճենումն է: Այս խորքում կրկին պիտի կարևորենք հշխան ձինպաշյանի «Արխիվ հասնումին», որ իր գործառնական դաշտով հար և նման է Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» և Զարեհ Որբունիի «Փորձը» վեպերին և, ինչպես նշանյանն է գրում, «Սիյուռքի չորրորդ սերունդի վեպն է»: Համադրական վեպի հետաքրքիր փորձ է Վարուժան Այվազյանի «Ճանճի ամիսը», որտեղ հեղինակը փորձում է արդիակերտել վեպաղտնիքի, վեպ-առակաբանության բանարվեստը:

Նոր վիպումն անշուշտ բյուրեղացած է Գրիգոր Պրլայանի «Սեմեր» և Խեչոյանի «Արշակ արքա. Դրաստամատ ներքինի» ստեղծագործություններում, որոնք իրենց գեղարվեստական, կազմաբանական ընդգրկումներով, ինչպես քանիցս սույն ելույթում նշեցինք, ժամանակակից արձակը հասցրել են հանգրվանի: Պրլայանի և Խեչոյանի նշված վեպերը խտացնում են արդի արձակի ստեղծաբանական որոնումները, գեղարվեստական նվաճումները: Այս հեղինակների մասին շատ է գրվել, գրել է նաև Զեր խոնարհ ծառան, ուստի խոսքս, որն առանց այն էլ անցավ մեզ վերապահված բոլոր սահմանները, առկախում ենք:

Անշուշտ այս զեկուցմամբ հավակնություն չունեինք մեկ ելույթով սպառել արդի արձակի համապատկերի խնդրագրությունը: Անշուշտ նաև չենք կարծում, որ մեր ելույթում վերհանված հարցերը սպառիչ պատասխաններ ունեցան: Եթե սույն զեկուցումը դույզն-ինչ սատարի ժամանակակից արձակի շուրջ ասուլիսին, ապա մեր փորձն ու ջանքը զուր չենք համարի:

Եվ իբրև ամփոփում թույլ տվեք կրկին ու կրկին չնորհակալություն հայտնել այս հրաշալի և կարևոր նախաձեռնության կազմակերպիչներին: Այս հավաքն ու գիտածողովը, վստահ ենք, որ բոլորիս հաղորդելու է աշխատելու, ստեղծագործելու նոր լիցեր և ազդակներ, որոնք այնքան կարևոր են գրականության համար այս դժվար ժամանակներում:

Երևան  
Մարտ, 2001 թ.



II

**ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ՆՈՐԱՎԵՊԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



## ԳՐԱԿԱՆԱԳԻՑԱԿԱՆ ԵԶՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

(Նորավեպի տեսության պատմությունից)

Ա.

**Գ**րականագիտության պատմական համապատկերում գիտական եզրաւանության (տերմինաբանության) խնդիրները անընդհատ հարուցել և հարուցում են սահմանումների և մեկնությունների շարունակական հոսք: Իրողություն, որ պատմական հետագծում գոյավորել է գրականագիտական եզրի բնույթի ինքնին զուգահեռականություն, միանշանակ (ճշգրիտ) եզրեր և բազմանշանակ (մոտավոր) եզրեր: Առաջինի պարագային եզրի սահմանումը ամրագրված է և՝ համաժամանակյա, և՝ տարժամանակյա մեկնություններում, և գրականագիտական ցանկացած ընթերցման ժամանակ այն անխոտոր է, կանոնիկ: Որևէ գրականագիտական բառարանում, տեղեկատուում, հանրագիտարանում, օրինակ, հնչյակը (սոնետ), տաղաչափական բազմաթիվ եզրեր (յամբ, անապեստ, քորեյ և այլն) սահմանման տարբերություն չունեն, սակայն նույնը չի կարելի ասել, ասենք, վեպ, վիպակ, նորավեպ (նովել) եզրերի համար: Այս դեպքում սահմանման հեղինակությունը, եզրի ընթերցման պարականությունը առթում են այն առաջադրությունը, թե գրականագիտական եզրի բնույթը պայմանական է, դինամիկ<sup>1</sup>: Նմանօրինակ եզրերի բնույթի որոշարկումը, մեկնությունը, գրականագիտական ընթերցումը հետապնդում է դրա սահմանների հատկականության, կազմաբանական հարացույցի վերհանում, կոնկրետ գրապատմական փուլում նկարագրի ամբողջականացում, ուր հստակ ուրվագծվում է նաև եզրի գենեգիսն առհասարակ:

«Նորավեպ» (նովել) եզրը գրականագիտության այն հասկացություններից է, որտեղ առարկայորեն ամրագրված են բազմանշանակ (մոտավոր), դինամիկ եզրերին բնորոշ մասնահատկությունները: Փոքր արձակի փաղանգի այս դրսեւորումը յուրաքանչյուր գրականության պատմության էպիկական հարթության, տարածքի բազմաքանակ, գերակշռող արտահայտությունն է, այլ ձեւերի ու տեսակների ծագումնակիրը: Ցանկացած գրականություն ինքնին պարունակում է փոքր արձակի և ի մասնավորի՝ նորավեպի տեսության պատմական հետագիծ՝ ընդհանրական հատկանիշների այնպիսի համակցությամբ,

1 Իրողությունը բազմից արձանագրվել է գրականագիտական ուսումնասիրությունների այն ծիրում, որը քննության առարկա է դարձել բազմանշանակ (մոտավոր) եզրը: Նորավեպի քննության պարագալի՛ արձակի հեղինակավոր տեսաբաններից Վիկտոր Օկլովսկին մեթոդաբանական եւլակետ է դիտում հետևյալ առաջադրությունը. «Գրականությունը մաթեմատիկա չէ և գրականագիտության եզրերը երբեք չեն ստանում մաթեմատիկական սահմանումների ճշգրտությունը: Այստեղ մենք գործ ունենք ընթացիկ գործնմթացների և գործողությունների եզրերի հետ, որոնք երբեք ամբողջովին չեն համընկնում»: **Վիկտոր Շկլովսկի**, Խудожественная проза. Размышления и разборы, М., 1959, ст. 140.

որ Վերածննդի ոստումից հետո գրականությունների համակարգ ներթափանցեց իբրև բնագրի (տեքստի) միանշանակ կառուցվածք:

Փաստորեն Վերածննդի նորավեպն էր այն մեկնակետը (բնականաբար, չենք անտեսում նախավերածնական գոյավորման շրջանն իր բոլոր դրսեորումներով), որ դարձավ «նորավեպ» եղրի տեսության և սահմանների գրականագիտական ընթերցման առարկա:

«Նորավեպ»ի սահմանումներից մտայնություն դարձածը և տարբեր (տեսական-գործնական, դիդակտիկ) կիրառականություն ունեցողն այս կաղապարն է, որ շրջանառության մեջ է դրել անգլիացի տեսաբան Բեննետը: «Նորավեպը արձակ ստեղծագործություն է, սովորաբար վեպից կարճ, մեկ բացառիկ իրադրություն, կոնֆլիկտ, իրադարձություն կամ բնավորության գիծ քննող, այն պատմում է ինչ-որ «նոր», այսինքն՝ անսովոր, զարմանալի բանի մասին»<sup>2</sup>: Սա կամ սրա նման սահմանումներն են հեղինակած տարբեր տեսական ձեռնարկներում և հանձնարարականներում: Նկատելի է վիճահարուցության ներուժն այսօրինակ կենտրոնացումներում: Արդեն «սովորաբար վեպից կարճ» արտահայտությունն առաջադրում է մի շարք տարակարձություններ, որոնք վկայում են և՛ ժամանակակից եղրի, և՛ եղրի պայմանականության հանգամանքները: Իրողություն, որ ժամարի անխառն գոյավորված առաջին բնագրերում՝ տակավին 1281 թվականից, երբ ստեղծվել կամ հավաքվել էր «նովելինո» նորավեպերի հավաքածուն, առկա էր: Եթե այստեղ ժամարի դեռևս ներքին ձևավորման ընթացքում էր՝ սահմանները «թափանցիկ» էին և, բնականաբար, եղրը կազմակերպող բաղկացուցիչների միավորները պայմանական էին, ապա նորավեպի ամրագրման և այնուհետև լիիրավ շրջանառության ժամանակ եղրը չթոթափեց պայմանականությունից, թեև մի շարք կազմակերպող բաղկացուցիչներ ամրակայեցին՝ անկախ ընթերցման ու մեկնության տարրութերումներից: Այնպես որ՝ այս պարագային ևս եղրի սահմանների պայմանականությունը չի խոտորվում: Տեսակետների և հայեցակետների բազմազանությունը և խայտաբղետությունը պայմանակարգված է առհասարակ նորավեպի ըմբռնման և ընթերցման հանգամանքներով: Հայտնի է, որ ընդհանրապես ժամարի ըմբռնման, ընթերցման և մեկնաբանման երեք մոտեցում գոյություն ունի՝ նորմատիվ, գենետիկ և կոնվենցիոնալ: Նորմատիվն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար է, քանի որ այն չի ուղարկում ժամարի նախորդած և առկա համակարգերի կապերն ու առնչությունները, ժամարի նոր մասնահատկությունների գործառնությունները. գենետիկը, որ Բախտինի «ժամարի հիշողության» կոնցեպցիայի արգասիքն է, սերտուրեն առնչվում է կոնվենցիոնալին: Ժամարի ըմբռնման այս տեսությունը ենթադրում է հատկանիշների այնպիսի համակարգ, որ ենթադրում է որոշակի պայմանակարգածությունների մի համակցություն գրողի և ընթերցողի գիտակցություններում, որը հնարավորություն է ընձեռում ընկալել և ընդունել որևէ գեղարվեստական ստեղծագործություն կամ բնագիր՝ իբրև այս կամ այն ժամարի արտահայտություն: Ուրեմն, «ժամարի հիշողության» գենետիկական առաջադր-

2 Մեջբերումներն ըստ՝ **Լ. Պ.**, Օ տիպոլոգիческих особенностях новеллы турецкой литературы: Сб. Проблемы зарубежной реалистической прозы XIX-XX века, Саратов, 1985, с. 90-91.

ըույթը մի կողմից և փոխպայմանավորվածությունը գրող-ընթերցող հարաբերության մյուս կողմից (ստեղծագործական գիտակցության տիրույթների սահմաններում՝) ամրագրում են ունիվերսալ և ընդունելի մի պայմանականություն, որը բավարարում է ժանրի ընկալման և ընթերցման բոլոր չափանիշները:

Ինչպես ժանրի, այնպես էլ ինքնին եզրի ընկալման և ընթերցման չափումները գրականության պատմության տարբեր ժամանակաշրջաններում փոփոխություններ են կրել, յուրաքանչյուր շրջանին ներհատուկ հոսք է կատարվել եղբարի տիրույթներում։ Այդ հոսքը արտածվել է շրջանի գրականության ընթացի, գեղագիտության բնույթային արժեքայնությամբ, ինչպես նաև համապատասխան մշակութային կենսոլորտի կազմաբանական էույթներով (սուբստանցներով)։ Պատահական չէ, որ Գյոթեի ժանրի քրեստոմատիկ սահմանումը՝ «Նորավեպը ոչ այլ ինչ է, եթե ոչ կատարված աննախադեպ իրադարձություն», և կամ Ֆրիդրիխ Շլեգելի նորավեպի տեսությունը<sup>3</sup> 19-րդ դարի իրավաշտություն-բնապաշտության գրականության մեջ հսկայական տեղաշարժեր էր կրել, փոփոխվել, և այս ու նմանօրինակ սահմանումները չեն համապատասխանում ժանրի առկա վիճակին։ Այնպես որ՝ եզրի պայմանական բնույթը յուրաքանչյուր ժամանակաշրջանում հանդերձվել է ժանրի պատմական կոնկրէտ դրսերման հատկացյալներով և փատորեն 19-րդ դարի երկրորդ կեսին ամրագրել եղի այն իմաստը, որ իր մեջ է ներառնում առհասարակ փոքր արձակի (short story) դրսերումները<sup>4</sup>։ «Փոքր արձակ» և «Նորավեպ» եզրերը, ըստ էության, գրական ընթացում միասնականացվում էին<sup>5</sup>։ Եվ նայած գեղարվեստական տարածության և դրսերումների՝ կիրառականություն էր ստանում որևէ մեկը (պատմվածք, վեպիկ, վեպակ, նորավեպ, պատկեր, մանրավեպ և այլն)։

«Նորավեպ» եզրի, առհասարակ նորավեպի տեսության ու պատմության յուրաքանչյուր քննություն և ուսումնասիրություն լրացնում է ժանրի հետագուտության առարկայական բացը, որ բնորոշ է ոչ միայն հայ գրականությանը, այլ նորավեպի, փոքր արձակի հսկայական ավանդ ունեցող այնպիսի գրականությունների, ինչպիսիք են ամերիկյանն ու անգլիականը<sup>6</sup>։ Թեպետ հարկ է արձանագրել, որ նորավեպին զուգահեռ ստեղծվել է հսկայական գրականություն նորավեպի մասին, հատկապես իրենց՝ գրողների կողմից (Հիշատակենք թեկուզ էղգար Պոյի, Հենրի Ջեյմսի, Բեննետի և այլոց աշխատանքները), սակայն ինչպես փոքր արձակի նորագույն շրջանի վարպետներից Սոմերսեթ Մոեմն է նշում, թե «Պատմվածքի մասին ավելի լավ է նա գրի, ով երբեք իր ուժերը չի փորձել նորավեպագրության ասպարեզում։ Նրան ոչ մի բան չի խանդարի լինել անկանխակալ դատավորի դերում»<sup>7</sup>։

3 Նկատի ունենք «Զովանի Բոկաչչոյի գեղարվեստական ստեղծագործությունները» ուսումնասիրությունը։ Տե՛ս՝ **Фридрих Шлегель**, Էստետիկա, Փիլոսոփիա, Կրիտիկա, Մ., 1983, տոմ I, ս. 418-423.

4 Այս և նետագա բոլոր ընդգծումները հեղինակիցն են։

5 Բորիս Տոմանակին գրում էր, որ պատմվածքը «նորավեպի որուերեն եզրն է»։ Տե՛ս **Б. Томашевский**, Տеория литературы, М.-Л., 1931, с. 191.

6 Անգլիացի գրականագետներն, օրինակ, անդադար շեշտում են փոքր արձակի տեսության պակասավորությունը, ուսումնասիրությունների և նետագործությունների անհրաժեշտությունը։ Տե՛ս I. Reid, “The short story”, The Critical Idiom, No 37, London, 1977.

7 **Сомерсет Моэм**, “Искусство рассказа”, в кн. “Искусство слова”, М., 1989, с. 244.

19-20-րդ դարերի հայ նորավեպի, ընդհանրապես հայ փոքր արձակի պատմության ուսումնասիրությունը մինչև քսաներորդ դարի տասական թվականները ներառնում է հսկայական նյութ և հարցուրավոր հեղինակներ: Ժանրի պատմության համակարգումն ու շարադրանքը վաղուց անտի հասունացել է: Գիտական պատմությանը զուգահեռ հրատապ և կարևոր է նաև հայ փոքր արձակի և մասնավորապես նորավեպի տեսության պատմության ստեղծումը:

## Բ.

Վիպապաշտական (ռոմանտիկական) շրջանի նորավեպը ժանրի կառուցվածքում ամրագրել էր բաղկացուցիչների այնպիսի հանրագումար, որը համապատասխանության կցումներ ուներ, այսպես կոչված, դասական շրջանի նորավիպագրության հետ: Գոյափորվել էր ժանրի բավականին կայուն (ստատիկ) վիճակ՝ ընկալման, թե՛ ըմբռնման և թե՛ ստեղծագործական ընթերցման տիրույթներում: Տասնիններորդ դարում փոքր արձակը դարձավ գրական ընթացի բնութագրականներից, տարածվեց իրեն գրականության մտայնություն. ուստի, բնականաբար, ժանրի բնութային ստատիզմը ներփոխաձևություն (ներտրանսֆորմացիա) էր ապրում՝ կառուցվածքը հատկանշելով դինամիկ (շարժունակ) բնույթով: Արդեն նորավեպի, ասենք, քեյստ-հոֆմանական կամ հոթորնական ստեղծագործական ընթերցումներին սկզբունքային հետևողականությունները՝ որպես տվյալ ժանրով ստեղծագործելու պարտադիր և բավարար ատրիբուտներ, ժանրի ըլբրոնման կոնվենցիոնալ (համաձայնական) առաջազրություններում փոխակերպվում էին: Ժանրի տեսությունը «Հարմարվում» էր ներփոխաձևության առարկայական դրսերումներին: Այս պատմական հատույթում է, որ տեղի է ունենում «նորավեպ» եզրի իմաստաբանական և գործառնական դաշտերի լայնացումը: Ժանրի բնույթի յուրօրինակ ազատականացումը քայլ առ քայլ կատարում է փոքր արձակի տարատեսակների միասնականացում: Հայ գրականության պատմական համապատկերում 19-րդ դարի հիմունական թվականներին սկսվեց փոքր արձակի կատարյալ ոստում: Գրվում էին բազմաթիվ և բազմաթիվ ստեղծագործություններ՝ «զրույց», «պատում», «պատկեր», «դրվագ», «պատմվածք», «վիպակ», «մանրավեպ», «նորավեպ» անվանումներով: Փոքր արձակին հատկական ներքին ժանրային «բաղմագիմությունը», ըստ ականավոր նորավիպագիր Ցոհան Բորգենի, եզրի ընթերցման և մեկնության ունիվերսալ սահմանումներից է ստանում. «Հանրահայտ է, որ նորավեպը մոտ է երաժշտությանը, սոնատին անշուշտ, այլ ոչ թե սիմֆոնիային: Գտնում են նաև, որ այն մոտ է դրամային: Երբեմն համեմատում են գեղանկարչական ստեղծագործությունների հետ... Այդ համեմատությունները իսարսիսում են նորավեպի՝ իրեկ համադրական պատումի սահմանման վրա»<sup>8</sup>: Եզրի կիրառականության այդօրինակ բազմազանությունը մեզանում հատկանշում է փոքր արձակի «բացարձակ ինքնիշխանությունը»<sup>9</sup>, հա-

8 Իօխան Բօրգեն, “Новелла”, в сб. “Писатели Скандинавии о литературе”, М., 1982, с. 258.

9 Այս իմաստով մեր փոքր արձակը գենետիկ զուգահեռման մեջ է եվրոպական և ամերիկական

կակրավորական բնույթը վեպից՝ իբրև գրականության հատկական երևույթ, այլ ոչ թե վեպի կազմավորման ընթացի անցումային արտահայտություն։ Հենց գրականության այդ ծիրի գոյաբանության մեջ ամրագրված «բացարձակ ինքնիշխանության» համապատասխան էր, որ հայ փոքր արձակով ստեղծագործող գրողներին վերապահում էր եզրերի առատություն և «բազմազանություն»։ Այս առումով ուշագրավ է և մեթոդաբանության տեսանկյունից անչափ կարևոր Հակոբ Օշականի այն նկատումը, ըստ որի՝ «նորավեպը» գրականության պատմության համակարգում «օրվա բառն» էր։ Սա նա շեշտում է բազմից։ Այսպես՝ Համապատկերի Տիգրան Կամսարականին նվիրված գլխում գրում է. «Վիպակներ, այդ օրերու բառով նորավեպեր։ Որոնք կը տարբերին թե իբր հղացք, թե իբր գործադրություն, ընթացիկ կաղապարեն»<sup>10</sup> (ընդգծումներն իրենն են)։ Իսկ Զապել Ասատուրի պարագային «այն օրերու» եզրը կցում է «բախտավոր» բնութագիրով. «Թիվով քսան այս կտորները, այն օրերու բախտավոր բառով մը վերտառված՝ նորավեպ, գարճայլ անձնական հորդ տարրերով շաղախուն փոքր հորինումներ են»<sup>11</sup> (ընդգծումն իրենն է)։ Սակայն մինչև Օշականյան «օրվա բառ» շեշտադրմանն անդրադառնալը փոքրինչ ծավալվենք՝ նշելով, որ փոքր արձակի առատ հոսքը 19-րդ դարի 50-ական թվականներից զուգահեռաբար առաջադրում էր ինչպես ժամրի, այնպես էլ եզրի ընկալման և գիտակցության բյուրեղացում։ Անվանումների, պատկերավոր ասած՝ «տարածությունների վերաբաժանումը», «գոյության կոփվը» միտում էր այնպիսի միակցում, որ ըստ ամենայնի կարտացոլեր ժամրի իմաստաբանական և գործառնական տիրույթները, դուրս կը գալի եզրի անթույլատրելի մոտավորականության շրջապտույտից։ Այստեղ է, որ Հակոբ Օշականի «օրվա բառ» մատնանշումը, նորավեպի առնչությամբ, գառնում է մոտավորականությունը հաղթահարող արտահայտություն, իբրև գյուտված իրողություն (ահա թե ինչու «բախտավոր») եզրի բնութագրման համար։ Այսպիսով՝ փոքր արձակի համապատկերում «նորավեպ» եզրի ծնունդն ու կիրառությունները հայ գրականության մեջ բյուրեղացնում էին ժամրի հատկանությունը։

#### Գ.

Տասնիններորդ դարի երեսնական թվականներից փոքր արձակի հոսքը հայ գրականություն (այստեղ նկատի ունենք համապատասխան թարգմանական արտահայտությունները նաև) առարկայաբար առաջադրում էր նաև տեսության և համապատասխան եզրաբանության գոյագորման անհրաժեշտություն։ Մովսես Զոհրապյան Արցախեցու, Սահակ Թոռոնյանի, Խաչատուր Աբովյանի, Խաչատուր Միսաքյանի, Ճանիկ Արամյանի, Ստեփանոս Նազարյանցի, Ստեփան

փոքր արձակի հետո՝ ի տարբերություն ոուսականի, որտեղ այն հանդես էր գալիս «... միայն ժամանակ ստամանակ, կարծես պատահականորեն և կարծես թե սուկ այն բանի համար, որպեսզի վեպի անցումը ատեղծի...»։ **Борис Эйхенбаум**, “О’Генри и теория новеллы”, Звезды, Л., 1925, № 6, с. 291.

10 Հակոբ Օշական, Համապատկեր Արևմտահայ Գրականության, հտ. Ե., Երուաղեմ, 1954, էջ 259։ Հետապու կնշվի որպես՝ Համապատկեր, Ե.։

11 Նույն տեղում, էջ 429։

Ուկանի ստեղծագործությունները թեև պոետիկական և կառուցվածքային բազմազանությունների, գեղագիտական սկզբունքների և հանգանակների տարրերության, արտագրական շերտի (նորմատիվ դիդակտիկա, հրապարակախոսություն և այլն), հայ փոքր արձակի նոր շրջանի կանոնակարգմանը և ներդաշնակությանն էին ուղղված: Այս հեղինակների համապատասխան ստեղծագործություններն ինքնին պարունակում էին փոքր արձակի բնագրի կազմակերպման սկզբունքների և միջոցների մի ամբողջություն (անշուշտ հպանցիկ, խաթարված), որ ստեղծում էր ժանրի նոր գիտակցություն գրական ընթացում: Բնականաբար, գեղարվեստական երկերի այդ տեսական «ներքին» ներուժը պետք էր որ արտածվեր՝ իբրև անխառն տեսություն, համապատասխան եզրաշինության տաներ: Եզրաշինության ընթացն էլ իր հերթին առարկայաբար ենթադրում էր տեսությունը: Այս փոխպայմանավորված շարժումը, զուգակցված ստեղծագործական համապատասխան ամրապնդումներով, առաջ էր բերում և՝ ժանրի նոր անվանումներ (պատկեր, դրվագ, մանրավեպ), և՝ հին անվանումների (վեպիկ, վիպակ, պատմվածք) անհրաժեշտ ճշգրտումներ և ընթերցումներ: Ավելի քան քառորդ դար փոքր արձակի եզրերի առատությունը կամայական գործնականության ոլորտում էր, մինչև 1880-ականները, երբ նախ՝ Արևելյան Մամուլում, այնուհետև՝ առանձին գրքով տպագրվեց Օրիորդ Մենիկի (Թագուհի Շիշմանյան) Գարնան Մի Ասուա ստեղծագործությունը՝ «նորավեպ» վերտառությամբ<sup>12</sup>: Այստեղ մեր ուշադրության կենտրոնում է ստեղծագործության ժանրի անվանումը, քանի որ Գարնան Մի Ասուայից հետո էր, որ փասորն սկսվեց «նորավեպ» եզրի կիրառությունները մի կողմից և «նորավեպի» ստեղծագործական առաջխաղացումը: Փոքր արձակի համար «նորավեպը» դարձավ գիտակցված մտապնություն, որը փաստարկվում և պատճառաբանվում էր ժանրի դրսնորումների առարկայական բնույթով: Ավելին, «նորավեպի» շրջանառությունը հստակությունը ընձեռեց քննելու և իմաստավորելու հայ փոքր արձակի ողջ անցած ուղին<sup>13</sup>, նախանշելու նրա հետագա ճանապարհը: Պատահական չէ Վահե Օշականի այն նկատումը, թե արևմտահայ պատմվածքը աննկարագիր, անկաղապար և անարհեստ էր, «մինչև որ Զոհրապ ձեռք կ'առնե զայն, ութսունական թվականներուն ու կուտա անոր գեղարվեստական ինքնություն մը, որ հակառակ իր մեծ թերություններուն՝ ոճի, կառույցի ու իմաստի տեսակետեն՝ լավագույն նմույն է այդ սեռին մինչև Սիյուռք»<sup>14</sup>: Հենց ութսունական թվականներն էին, որ հայ փոքր արձակի համար դարձան վիթխարի սստումի հենակետ, ընդ որում թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ հատվածներում: Ժանրի անվանման բազմաթիվ համանուններից առավելագույն կենսունակն ու ամբողջակա-

12 «Գարնան մի ասուա» առաջին անգամ տպագրվել է 1883 թվին Զմյունիայի Արևելյան Մամուլում (համար 8-12), այնուհետև առանձին գրքով: Տե՛ս Օր. Մենիկ, Գարնան Մի Ասուա, Զմյունիա, 1883:

13 Հարկ է նշել, որ խնդրի հետազոտության առումով կարևոր են երկու աշխատություններ՝ Վահե Օշականի «Արևմտահայ պատմվածքի ծագումը» և Գրիգոր Պըլտյանի «Հակոբ Օշական և արևմտահայ նորավեպը»:

14 Վահե Օշական, «Արևմտահայ պատմվածքի ծագումը», Հայկագլան հայագիտական հանդես, հոդ. Բ., Պեյրով, 1971, էջ 205:

նը դառնում էր նորավեպը: Այն ամբագրվում էր թե՛ օրվա՝ մեզանում արդեն հասկացություն դարձած «լրագրական գրականության» մեջ, իրողություն, որ շեշտվել է գրականության պատմության այդ շրջանին անդրագարձած տառացիորեն բոլոր հետազոտություններում, թե՛ առանձին հրատարակություններում, գրքերում: «Նորավեպը, – գրում է Հակոբ Օշականը, – տառացի արտահայտությունն է Փրանսացիներուն *ouvelle*-ին, առաջին անգամ կարծեմ գործածված Մասիսի հիմքագրապետեն (Կ. Ցությունյան): Զոհրապեն առաջ անիկա սանկ ու նանկ քանի մը էջնոց պատմություն մըն է, սրտառուչ հյուսքով, տիսուր կամ զգարթ վախճանով մը, առավելապես թարգմանածո: Լրագրին ընդհանրացումը, ոռմանթիք մեծ գործերու հայացումը անոր ճամբա կը հարդարեն: 1885-են քիչ առաջ են ինքնագիրները: Անկե հետո Ալֆոնս Տուտեռով և Սորբասանով անոր թափանցումը մեր մեջ կը զարգանա, հավանաբար նպաստ գտնելով քանի մը բացառիկ պայմաններե – գրաքննություն՝ որ կ'արգիլե մեծ վաստակը. ասպարեզի պակաս՝ որ մեր գրողները կը պարտագրեր պատահական ճիգի և արդյունքի. գրականության հղացքին իսկ նկարագիրը՝ որ կը շփոթվի մեր մեջ իմացական բովանդակ գործունեությանց հետ»<sup>15</sup>: Եզրի հայերեն տարբերակը անմիջապես ամրագրվեց գրական ընթացում: Գրվում էին բազմաթիվ ստեղծագործություններ՝ «նորավեպ» վերտառությամբ: Իրողությունն ավելի թանձրացավ 19-րդ դարավերջին և 20-ի սկզբին<sup>16</sup>, իբրև նորավեպի նոր ժամանակներում լիովին ձևավորված և ամբողջականացված սոստում: Մասիսը, Հայրենիքը, Ծաղիկը, Շարծումը, Ազատամարտի գրական հավելվածը, Շանթը, Լուսը, Հայ Գրականությունը, Բյուզանդիոնը, Նավասարդը, Արևելյան Մամուլը այն հանդեսներն ու պարբերականներն էին, որտեղ, ըստ էության, կայացվեց նոր շրջանի հայ նորավեպագրությունը: Ստեղծագործական ընթացին զուգահեռ գրականության համար անհրաժեշտություն էին գառնում նաև նորավեպագրության տեսության ստեղծումն ու ուսումնասիրությունը, որը պատճառաբանվում էր մի քանի առարկայական նկատառումներով: Նախ՝ արդեն ստեղծվել էր հսկայական գրականություն, որ առաջադրում էր դրա իմաստավորումը, ապա՝ մտայնություն դարձած փոքր արձակի տիրույթներում երևան էին գալիս այնպիսի գործեր, որոնք և՛ գեղարվեստական արժեքով, և՛ ընդհանրապես կառուցվածքի թերացումներով ստեղծել էին անհաջող նմանակությունների և սիրողական գրսերումների մի հեղեղ՝ գրականություն լինելու հավակնությամբ: Բնականաբար, այս պարագան պիտի ստեղծեր հակընդդիմություն, որ հաճախ ուղղվում էր ընդհանրապես նորավեպի և նորավեպագրության դեմ: Ժանրի կամայական կիրառությունները, կառուցվածքում քառոս, խուռներամություն ստեղծելը գոյավորել էր մի ընդդիմություն բուն գրական ընթացի հատկական արտահայտության դեմ: Այնպես որ լիովին հրատապ էր դարձել նորավեպի տեսական հիմնավորման անհրաժեշտությունը: Հարկ է նշել մի հանդամանք, որ կարեռվում է խնդրին անդրադառնալիս: Բանն այն է, որ այն գրագետները, ովքեր անդրադառնել են նորավեպի պատմության հարցերին, եզրը տեղայնացրել

15 Համապատկեր, Ե., էջ 151:

16 Դարանցումային (19-ից–20-րդ) շրջանն ընդհանրապես համաշխարհապին գրականության պատմության մեջ բնորոշ է նորավեպի ունեցած մեծ, նշանակալի դերով:

են այն պարագծում, որ «նորավեպը» իբրև փոքր արձակի ունիվերսալ անվանում, տեղաշարժեր է կրել իմաստի և ըմբռնման տիրույթներում՝ ներամփոփելով կամ որպես ութսունականների գրական շարժման հատկականություն, կամ վեպի ծագումնաբանությանը առնչվող իրողություն։ Անշուշտ այս երկու հանգամանքներն էլ առկա են, նամանավանդ առաջինը, սակայն ոչ տիրապետող, գերիշխող։ Ըստ իս՝ նման մտտեցումը փոքր-ինչ ծայրահեղ է։ Այսպես, Գրիգոր Պելտյանը իր «Հակոբ Օշական և արևմտահայ նորավեպը» արժեքավոր ուսումնասիրության մեջ գրում է. «Ով ալ ըլլա «նորավեպ» կառույցին առաջին կիրառողը, անիկա՝ այդ կառույցը իրապաշտության արտադրությունն է, իրապաշտ քիչ թե շատ տարտամ հղացքին հարմարեցումը Պոլսո պայմաններուն ու տիրող հակավիպապաշտ ձգտումներուն։ Ոչ մեկ հանգանակ, որ գրված ըլլա շարժումին շուկա հանած թերթերուն մեջ»<sup>17</sup>։ Որ նորավեպը իբրև փոքր արձակի ըստ ամենայնի կայացված դրսեորում իրապաշտության (նատուրալիզմ-ռեալիզմ) մեջ արտահայտվեց, անբեկանելի է։ Սակայն ոչ իբրև վիպապաշտության (ռոմանտիզմի) կամ որևէ այլ հոսանքի և ուղղության հակընդդիմություն։ Պարզապես նորավեպը իրապաշտության տարածության մեջ ստեղծեց ու ամրագրեց ժանրի ամբողջական կառուց և հղացք՝ իր օրինաչփություններով և գործառնությունների հարացուցով։ Այդ շրջանը ժանրի կերպի և բնույթի սինթեզում էր և ոչ թե հոսանքից կամ ուղղությունից պարտադրված իրողություն։ Ինչ վերաբերում է նորավեպի հանգանակի բացակայությանը, ապա, ըստ իս, գա գոյություն ուներ. այդ 1901 թվականի «Նորավեպի շուրջ» բանավեճն էր, որ միտում էր թե՝ ժանրի հանգանակը, թե՝ տեսական հիմնավորումը։ Հանգամանք, որ կը փորձենք փաստարկել այս գրության մեջ։ Մեկ նկատառում ես։ Բանն այն է, որ և՛ իրապաշտության, և՛ վեպ-նորավեպ հարաբերության առկայությունները բավարար չեն հայ նորավեպի բնույթն ու տեսությունը որոշարկելիս, քանի որ այն դիտում են լծորդական առնչություններում իբրև գրական ընթացի սատարողական արտահայտություն՝ մշուշելով և շատ ընդհանուր դարձնելով նորավեպի կերպը, նրա, այսպես կոչված, «բացարձակ, անխառն» բնույթը։

«Նորավեպի շուրջ» բանավեճի ուսումնասիրության խնդրագրությունը ենթադրում է ինչպես մատնանշված, այնպես էլ մի շարք հարակից խնդիրների լուսաբանություն, որ անհրաժեշտ է առհասարակ հայ նորավեպի տեսության և պատմության մեկնաբանության համար։

## Դ.

Հայ գրականության համար 1901 թվականը ուշագրավ էր ոչ միայն նորանոր ստեղծագործությունների առկայությամբ, հանդեսների, պարբերականների ու գրքերի հրատարակության աշխուժացմամբ, այլ նաև այն գեղարվեստական ու գեղագիտական կարգախոսների և խնդիրների արծարծմամբ, որոնք գոյափորում էին մշակութաբանական այն ելակետերը և համընդհանուր կենսոլորտը, որոնք պետք է ամրակայեին մեր գրականությունը, մշակույթը՝ որպես քսա-

17 Գրիգոր Պելտյան, «Հակոբ Օշական և արևմտահայ նորավեպը», Բագին, Սեպտեմբեր, 1980, էջ 38։

ներորդ գարին հարիր, ժամանակակից: Այս ընդհանուր շարժման բնորոշ դրսերումներից էր նաև Մասիս, Արևելք և ի մասնավորի Բյուրակն Հանդեսների էջերում սկսված բանավեճը նորավեպի տեսության խնդիրների վերաբերյալ, որ գրականության պատմության, բանասիրության մեջ հայտնի է «Նորավեպի շուրջ» ընդհանուր անունով: Պետք է ասել, որ ցարդ այս բանավեճը՝ որպես ժամանական առաջին լուրջ մշակման և ընդհանրացման արտահայտություն, ուշադրության չի արժանացել կամ անդրադարձվել է հպանցիկ: Քիչ թե շատ բանավեճը իբրև տեսություն դիտել է Կարլեն Դանիելյանն իր Գրական Մշակութային աշխատության մեջ, ուր պարզապես ակնարկվել է բանավեճի փաստը: Գրականագետն, անդրադառնալով խնդրին, գրում է, թե «...Նորավեպ բառի ստուգաբանությամբ տարված՝ ընդդիմախոսները չէին էլ կուահում, թե արծարծվող խնդիրը գրական-ռեալիստական շարժման բուն ակունքների հետ է առնչվում: Ճիշտ է, միայն լեզվաբանական ճշգրտումները և փաստարկները չէին, որ զբաղեցնում էին բանավիճողներին. Հոդվածից հոդված աճում ու թանձրանում էր նորավեպի բերած գրական ուղղության և գեղագիտական սկզբունքների որոշարկման, գնահատության և պաշտպանության միտքը: Բայց դա արվում էր շեղակի կամ հպանցիկ հարցադրությունների օգնությամբ՝ տարամիտվող կարծիքների բախման ոլորտներում, այնպես որ հարցը դարձյալ քննարկվում էր բանասիրական առաջադրությունների շրջանակներում և ոչ սրանից անկախ և լայն գրականագիտական հողի վրա»<sup>18</sup>: Դժվար չէ նկատել բնութագրման հակասականությունը: Եթե բանավեճը չէր կուահում իրապաշտության և ժամանակի սերտ փոխհարաբերությունները, ապա ինչպես էին այդ «բանասիրական ճշգրտումներով» աճում գրական ուղղության և գեղագիտական սկզբունքների տարբերակումն ու «պաշտպանությունը»: Եթե սա առկա էր, ապա նախորդ միտքը չի համապատասխանում իրողությանը և չէր էլ կարող համապատասխանել, քանզի խնդրո առարկա նորավեպի բանավեճը խարսխվում էր իրապաշտության պոետիկայի սկզբունքներին, իրողություն, որ Գրիգոր Պելտյանի մատնանշված ուսումնասիրության մեջ ըստ ամենայնի քննվել ու ապացուցվել է: Վերջապես, եթե գրականագետը մեկնաբաներ, ընթերցեր բանավեճի «տարամետ կարծիքները» և «բախման ոլորտները», ապա անվերապահութեն կնկատեր, որ այն ոչ թե ինչ-որ կրավորական արտահայտություն էր, այլ հենց «անկախ և լայն գրականագիտական հողի վրա» կատարված իրողություն: Միով բանիվ սա այն մտայնության կրողն է, որ նորավեպը չի ստեղծել թե՛ իր հանգանակը, թե՛ տեսությունը, այնինչ «Նորավեպի շուրջ» բանավեճը գրականության պատմության մեջ հանդիպած ժանրի տեսությունն էր, որտեղ զուգակցվել են և՛ ժանրի անցած ստեղծագործական փորձը, և տեսական-վերլուծական ընդհանրացումները, և թե՛ նորավեպի պոետիկայի ամբողջականացումը:

«Նորավեպի» առաջին կիրառությունը տակավին հանդիպում է Մեսրոպ Թաղիադյանի «Եվրոպա[Հայ] լրագիր» հոդվածում: Սակայն այդ կիրառությունը գեռևս չէր ընկալվում իբրև եզր, եզրի նշանակություն չուներ, թեպետ այդ բառն ամրագրվել էր մշակութային հիշողության սահմաններում և տարի-

18 Կարլեն Դանիելյան, Գրական Մշակութային առաջնախաղ, Երևան, 1977, էջ 346-347:

ներ հետո Մասիսի խմբագրապետ Կարապետ Յուլյուճյանի, այնուհետև Եղիա Տեմիրճիպաշյանի շնորհիվ պիտի վերակոչվեր, իսկ արդեն 19-րդ դարի ութսունականներից կիրառվեր իբրև «նովել» ձևի հայկական տարբերակ, որպես գրականգիտական եղր:

Ինչպես յուրաքանչյուր բանավեճ, այնպես էլ «Նորավեպի շուրջը» առարկայաբար հասունացել էր: Արդեն նշել ենք, որ եզրը չարչըկվում էր գրականության հավակնություն ունեցող գրամոնների կողմից, դարձել էր պատեհապաշտ դրսեորում՝ արտագրական անձանց և երևոյթների համար գրականություն մուտք գործելու, մտնելու պարագային: Գրականության սահմաններում ևս հանդիպում էին նորավեպի կամայական կիրառություններ և վերջապես ամենակարեւորը՝ հասունացել էր դրա տեսական ընդհանրացման, իմաստավորման անհրաժեշտությունը: Բանավեճին նախորդած տարիներին, բնականաբար, գրական ընթացում գոյություն ուներ ընդդիմություն թե՛ մերձգրական սպեկուլացիաների դեմ, թե՛ եզրի կանոնակարգման, ընդհանրացման համար: Այս առումով բնութագրական էր դեռևս Գ. Անդրեասյանի 1898-ին գրած «Բառերուն արժեքը որևէ գրվածքի մեջ» հոդվածը. «Շատերը թերևս ծայրահեղ գտնեն՝ եթե ըսեմ որ գրականությունն ալ պետք է «տնտեսական հաշիվներու վրա» հիմնված ըլլա: Ամեն գրող պետք է նախ հաշվի առնե իր սպառած ժամանակը և հետո կարդացողներու ժամանակը: Եթե գրողը շատ լայն ժամանակ ունի՝ պետք է գոնե խորհի անոնց վրա՝ որ իր գործը պիտի կարդան»<sup>19</sup>: Գրականությունը «տնտեսական հաշիվներով» խարսխելը գրողի տեսական պատրաստականության, պրոֆեսիոնալիզմի առաջարությունն էր, որ բնականաբար (նամանավանդ ժամանակի պարագայի շեշտադրմամբ) առնչվում էր նաև նորավիպագրությանը. այնպես որ՝ սոսկ առիթ էր պետք, որպեսզի ասուլիս սկսվեր գրական ընթացի դեռևս ամենահրատապ խնդրի վերաբերյալ: Եվ առիթը երկար սպասեցնել չտվեց: 1901 թվին Բյուրակն հանդեսին ուղղած իր նամակում ամերիկուհի հայագետ Վիվիըն Հոփթինզը խնդրում էր ստուգաբանել «նորավեպ» եզրը: Հատկանշական է այն հանգամանքը, որ ամերիկացի գրագետին էին հատկապես հուզում եզրի կազմաբանությունն ու սահմանները: Իրողությունը պատճառաբանվում էր նաև այն հանգամանքով, որ հար և նման հայ գրականությանը ամերիկյան գրականությանը ևս անհրաժեշտաբար հետաքրքրում էր փոքր արձակի տեսությունը ընդհանրապես, հանդամանք, որ պատճառաբանվում էր գրականության ընդհանուր ուղղվածությամբ, ժանրային կենտրոնացումներով: Հոփթինզի հարցումը անմիջապես աշխույժ ու տարրամետ արձագանքներ ունեցավ իբրև նորավեպի տեսության խնդիրների բանավեճ: Հոփհաննես Գաղանճյանը, անդրադառնալով հարցին, առաջարկում էր Կարապետ Յուլյուճյանին պարզաբանումներ անել՝ որպես ավագագույն խմբագիր. «Կ. Յուլյուճյանը իբրև հայ խմբագրության տարեցը՝ պետք է գիտնա այդ բառին ծագումն ու առաջին անգամ որմե գործածված ըլլալը...»<sup>20</sup>: Յուլյուճյանին առաջարկում են այս առիթով հրապարակավ հանդես գալ: 1901 թվին ««Նորավեպ»ին շուրջը» վերտառությամբ խորագրի ներքո Կ. Յուլյու-

19 Մասիս, Կ.Պոլիս, 1898, թիվ 113:

20 Մասիս, Կ. Պոլիս, 1901, թիվ 264:

ճյանը պատասխանում է Բյուրակն հանդեսի առաջադրած հարցերին, որն էլ հենց դառնում է բանավեճի սկիզբ: «Բյուրակնի վերջին թիվով, — գրում է Յուլյունյանը, — հրավեր մ'ուղղված էր ինձ՝ հաճելի անակնկալ մ'ընելու, այն է՝ Օրդ. Վիվիքն Հոփքինց անուն հայագետ ամերիկուհիի մը կողմե նույն շաբաթաթերթին ուղղված հարցման մը պատասխանել: Ազնիվ օրիորդը ինդրեր է «ստուգաբանել նորավեպ բառին նշանակությունն և որոշել անոր ծագման թվականն և որչափ ճիշդ ըլլալը»:

«Արդարեւ նշանակության արժանի է տեսնել օտարազգի օրիորդ մը, որ կը հետաքրքրվի այդ անիմաստ բառին ի՞նչ տեսակ խելապատկի ծնունդ ըլլալն և ինչպես և ե՛րբ հայ լեզվին մեջ մուտ գտած ըլլալն իմանալ, մինչ մեր լրագրաց պատ. խմբագրություններն՝ առանց այդ քննությունն ընելու՝ անմիջապես ընդունած են և զետեղած են իրենց բառացանկին մեջ»<sup>21</sup>: Հակառակ Յուլյունյանի կատեղորիկ բացասամանը՝ նկատելի է խնդրի առկայությունը: Փաստորեն նորավեպի ստեղծագործական հիմնավորումներին պետք է զուգորդվեին տեսական հիմնավորումները: Յուլյունյանը նշում է, որ եզրը ընդամենը տասնհինգ տարվա պատմություն ունի, հանգամանք, որ շեշտում է նաև Տիգրան Արփիարյանը Յուլյունյանի հոդվածից անմիջապես հետո՝ խմբագրականում: «Շատ շատ վկա մը կրնամ ըլլալ, տարտամ հիշողությամբ վկա մը, որ պիտի ըսեր թե, առանց որոշապես կարենալ ճշգելու նորավեպ բառին ծագումը, Սրբական հրատարակության (1884) գուգընթաց կը համարի զայն: Իր խանձարուը այդ օրաթերթին էջերուն մեջ կապվեցավ, եթե չեմ սխալիր, բայց շաբաթաթերթ Մասհիս մեջ էր, 1885-են իվեր իբր գրական հանդես հրատարակող այս թերթին մեջ, որ առավ իր առույզ քայլերը և մեր այսօրվան գրականության մեջ կուրծք կուտա շատ մը հին բառերու, — նույն իսկ Գարագաշյանեն կամ Այտընյանեն վավերացած բառերու — և մանավանդ Գ. Զոհրապ, Ե. Տեմիրճիպաշյան, Տ. Կամսարական և ուրիշ ծանոթ գրագետներ նախամեծարություն կ'ընծայեն անոր»<sup>22</sup>: Տիգրան Արփիարյանը շեշտում է, թե խնդրի մեկնաբանմանը լավագույնս կարող է օգնել Եղիա Տեմիրճիպաշյանը թե՛ իբրև ժամանակակից առաջին ստեղծագործական իրականացնողներից և թե՛ եզրի կիրառողներից՝ մասնավորապես ֆրանսերեն-հայերեն բառարանում: Այսպիսով՝ «մարտահրավերը» նետվել էր: Կարապետ Յուլյունյանի, Տիգրան Արփիարյանի հոդվածներում ուրվագծվել էր խնդրի նախապատմությունը և «Նորավեպի շուրջ» բանավեճը պատմական էքսկուրսներից տեղափոխվում էր եզրի տեսության և մեկնաբանման ընթերցումների ծիր:

Արդ՝ ուրվագծենք նորավեպի տեսության «աղբյուրագիտական» ակնարկը: Ինչպես արդեն նշել ենք, գաղափարը Բյուրակն հանդեսինն էր, նյութերը տպագրվում էին Մասհ հանդեսում և Սրբականում: «Նորավեպի շուրջ» բանավեճին մասնակցեցին ավելի քան մեկ տասնեակ գրագետներ, ընդ որում Կ. Յուլյունյանը, Ե. Տեմիրճիպաշյանը և Տ. Արփիարյանը հանդես եկան երկուական անդամ: Կարապետ Յուլյունյանը «նորավեպ» եզրի օգտագործման ընդդիմա-

21 Նույն տեղում:

22 Նույն տեղում, Էջ 265-266:

խոսներից էր, գերապատվությունը տալիս էր «վիպակ» եզրին։ Տիգրան Արփիարյանը «նորավեպի» թերևս ամենառողջափառ և սկզբունքային կողմնակիցն էր։ Եղիա Տեմիրճիպաշյանը, որ եզրը կապում էր իրապաշտ-բնապաշտական շարժմանը, «նորավեպը» դիտելով իբրև վիպապաշտական վեպի հակագդեցություն, սկզբունքորեն կողմ էր եզրի գործածությանը։ Հովհաննէս Գաղանձյանը, բանավիճելով Ռեթեռու Պերպերյանի հետ, պաշտպանում էր «նորավեպի» քաղաքացիության իրավունքը։ Եզրի ուղղափառ պաշտպաններն էին նաև Գրիգոր Զոհրապը, Ենովք Արմենը և Մկրտիչ Աճեմյանը, որն իր տեսակետները Մահիսում չափածո էր հայտնել։ Արևելքի էջերում հանդես եկած գրագետներից ևս (Գ. Էլոմեզյան, Հ. Տեր-Հակոբյան), բացառությամբ Գ. Շահինյանի, ընդունում էին «նորավեպ» եզրը։ Այսպիսով՝ բանավեճի մասնակիցների մեծամասնությունը (դեմ էին ընդամենը երեքը) «նորավեպի» համոզված կողմնակիցներն էին և դա փաստարկում էին ամենատարբեր տեսանկյուններով։ Սոսկ այս իրողության արձանագրումը վկայում է, որ գոյություն ուներ եզրի ընկալման և ընթերցման խորապես դիտակցված ու պատճառաբանված տեսություն։ Իրողություն, որ արդեն հնարավորություն է ընձեռում գրապատմական խնդրո առարկա իրողությունը դիտել իբրև ժանրի (փոքր արձակի) տեսական ամբողջական դրսերումներից մեկը։ Հար և նման յուրաքանչյուր գրական-գեղարվեստական մտայնության, հոսանքի, ժանրի քննաբեանության, «Նորավեպի շուրջ» բանավեճը ևս հատկանշում է ժանրի ուսումնասիրության տեսական դրույթների անհրաժեշտ համակցություններով։ Ուսումնասիրության առարկայի ընդհանրացված, ամբողջականացված առկայություն, պատկերացում, դիտակցություն, սահմանում, բաղկացուցիչ կազմակերպիչների և հատկանիշների արձանագրության, (ժանրի գոյավորությունը ընութագրող) հարացույց, փոխպայմանավորվածություն և առնչություն հարակից և մերձավոր առարկաների հետ (տվյալ դեպքում վեպի), կառուցվածքի (բանարվեստի) ընդհանրական հատկանիշների առկայում։ Թվարկված բոլոր մասնահատկությունները (տեսությանը հարիր պահանջները) «Նորավեպի շուրջ» բանավեճում գոյությունը ունեն։ Պատահական չէ, որ Հակոբ Օշականը, անդրադառնալով ություննառնականների փոքր արձակին, նշում է, թե «նորավեպը գրական կտոր մըն է և ատով իսկ ենթակա գիրքերու օրենսդրության մեծ ցուցմունքներուն»<sup>23</sup>։ Այս դիտողությունն ածանցում էր փոքր արձակի պատմական ընթացի ընդհանուր մտահոգությունից, որ առկա էր նորավեպի ստեղծագործական ոստումի տարիներին, ավելի քան քառորդ դար՝ 1885-ից մինչև 1910-ական թվականները, և դա ըստ ամենայնի դիտակցվում էր գեղարվեստական-գրական իրականության կողմից։ Այսպես որ, հատկապես 20-րդ դարասկզբին նորավեպի տեսության խնդիրներին անդրադառնալը գրականության, ժանրի պատմության հասունության արգասիքն էր և պայմանավորված էր գրականության պատմության առարկայական անհրաժեշտությամբ։ մի կողմից՝ անցած շրջանի իմաստավորում, մյուս կողմից էլ՝ ժանրի հեռանկարների և հնարավորությունների ցուցահանում, ահա մտահոգությունների այն շրջանակը, որն, ինչպես

23 Համապատկեր, Ե., էջ 163:

տարբեր տեսությունների գոյության, այնպես էլ այս պարագային, բանավեճի դրդապատճառն էր: Հանգամանք, որ բանավեճի մասնակիցներից ոմանք չէին պատկերացնում և եզրի բացաման փաստարկներ բերելիս հակագարձ շարժման սկզբունքով փաստորեն նորավեպի տեսությանը առաջադրում էին խնդիրներ, որոնք մեկնաբանման, ընթերցման անհրաժեշտությունն ունեին: Այսպես՝ Կարապետ Յությունյանն իր առաջին հոդվածում գրում է. «...Նոր բառը սովորաբար բայարմատներու հետ կը միանա կամ կը բարդվի, ինչպես՝ նորածին, նորահաս, նորաջնար, նորամուտ, նորաշեն, նորաստեղծ, նորատիպ, նորատունկ, նորեկ, նորուս և այլ բազում... Ամենեն հավանականը վիպակ նշանակելը կրնա ըլլալ, ինչպես գուշակած է նաև Պ. Հ. Գագանցյան»<sup>24</sup>: Դժվար չէ նկատել, որ այս պարագային լեզվական-լեզվաբանական հարթությունը կրագորական է գրական-գրականագիտականի հանդեպ, քանի որ տեսության առարկայական հարցերից էր եզրի միանշանակացումը և զուգադիր ձևերից ամենաճշգրիտը ընդունելու հանգամանքը: Յությունյանի հոդվածում, թեև սոսկ գեկլարատիվ, առկա է վիպակ-նորավեպ զուգադիրն իբրև հոմանիշ դիտելը՝ վերջինիս գերապատվություն տալով: Եվ ահա այս փաստը բանավեճում տեսականացված հերքում է ստանում, որն արդեն նորավեպի հարացույցի և կազմաբանության ընդհանրացված մեկնություն ու սահմանում էր: Պատահական չէ, որ Տիգրան Արփիարյանը նույն համարում, կուահելով, որ բանավեճը կայանալու է, հմտորեն այն ուղղում է ժանրի սահմանների և տեսության տիրույթներ. «Մասիսի հարգելի արտօնատիրոջ համակարծիք եմ, երբ կը հայտարարե թե քսանը հինգեն պակաս ըլլալու է տարիքը այդ շփացած աղջկան որ իր է՞ն թարմ հասակին մեջ կը գտնվի այսօր, տասնը վեցեն-տասնը յոթը տարեկան, գեղեցկացած, զարգացած ու ամենուն համակիր ուշադրությանը և ըղձանքին առարկա, – չի մոռնալով որ գրական նորավեպերու վրա է խոսքերնիս»<sup>25</sup>: Տեսության լինելությունը, կայացվածությունը գիտակցում էին իրենք՝ մասնակիցները: Երբ բանավեճն ավարտվել էր, Տիգրան Արփիարյանը, հետահայաց ամփոփելով այն, գրում էր. «այս տարվան մեջ ալ, ինչպես ամեն տարի պարբերաբար, շրջան մը ունեցանք – բարեբախտաբար կարճատե – որ առտուն արթընցողը քար մը ուներ արձակելիք նորավեպին դեմ, միևնույն ժամանակ ըղձալով, եթե լրագրապետ է կամ թերթի մը խմբագիր, նորավեպեր ունենալու և հրատարակելու: Եվ որովհետև մեր գրական սահմանափակ արտադրությանց մեջ ամենեն դժվարին բաներեն մեկն է զուտ գրական համով-հոտով նորավեպ մը ունենալ մեր կյանքեն՝ նորավեպի հալածիչները կը շատանային հնավեպեր դնել, և կամ վեպեր որոնք իրենց երկարությամբ կամ թարգմանված ըլլալովնին միայն կը տարբերեին նորավեպեն: Եվ միամիտ ընթերցողը, օրաթերթի մը միևնույն էջին վերի մասին մեջ բուռն հարձակողական մը կարգալե ետքը նորավեպին դեմ, կ'իշնե թերթոնի բաժին, ուր կը շարունակե կարդալ իր առօրյա վիպասանությունը որուն մեջ տարփանք, տոփանք, սիրային առեանգություն, ցոփ կյանքերու նկարագրություն, լիառատ կը մատուցվին իրեն: Բայց չի գայթակղիր,

24 Մասիս, Կ. Պոլիս, 1901, Էջ 265:

25 Նույն տեղում:

որովհետև ... պատմվածին վերնագիրը «Նորավեպ» չէ»<sup>26</sup>: Տիգրան Արփիարյանի պարագորս-ամփոփումը խարսխվում էր նորավեպի՝ իբրև տեսակի, հատկանության հանգամանքի և դրա տեսական ու ստեղծագործական ամրագրումներով և փաստարկներով: Նույն 1901 թվին նյու Յորքում լույս էր տեսել մի աշխատություն՝ Փոքր Արձակի Փիլիսոփայությունը վերտառությամբ, որի հեղինակ Բրանդեր Մեթիուզը աշխատության եզրակացություններում նշում էր, թե փոքր արձակը (նորավեպը) առանձին ժանր է, առանձին տեսակ և վեպի հետ համեմատած նրանց տարբերությունները ոչ միայն սոսկ ծավալային են: Հնդգծում է, որ short story-ն «կենսաբանական» տեսակ է՝ նկատի ունենալով նորավեպի «ինքնորոշված» գոյությունը, անկախությունը, հատկականությունը: Այնպես որ նորավեպի տեսության հայկական երակը «ուշացածներից» չէր (ևս մի հակափաստարկ հայ գրականությունը բարգությային համարողներին), առաջարկում և լուծում էր տեսական այնպիսի խնդիրներ, որոնք առարկայաբար հասունացել էին ժամանական, ընթերցման և մեկնության համաշխարհային գուգահեռներում:

Հարկ է նշել, որ հայ գրականության պատմական ընթացում նորավեպի տեսական արձարծումները անդրադարձվում էին նաև բնագրային (գեղարվեստական) մակարդակներում: Հատկանշական է, որ դրանք, որպես կանոն, «Հականորավեպային» մտայնության գեղարվեստական «ընդդիմություններ» էին՝ մի կողմից ժամանրի սպեկուլիատիվ կիրառությունների և մյուս կողմից՝ նորավեպի օրինագործ բացասողների դեմ: Տեսության այսօրինակ գուգահեռականությունը վկայում էր հայ փոքր արձակի համընդհանուր հղացքի կենսունակությունն ու այժմեականությունը իբրև գրականության դրսեորման հանգույց: Արանով է պայմանավորվում, այսպես կոչված, «նորավեպ-ծաղրանմանությունների» (պարողիաների)» առկայությունը, որոնք գուտ «տեսական», այսինքն՝ նորավեպի կառուցվածքի, բնույթի և կազմավորման ընթացի ու տիրապետող հատկանիշների հենքին էին խարսխված:

Հայ նորավեպի տեսության ու պատմության այս ընդդիմադիր արտահայտություններն անշուշտ առանձին մանրամասն ուսումնասիրության առարկա են, սակայն այստեղ, կարծում ենք, նպատակահարմար է սոսկ ուրվագծումը՝ որպես խնդրո առարկա գրապատմական իրողության օժանդակ արտահայտություն:

Նորավեպի ոստումի ժամանակաշրջանում գրված այդ փոքր արձակ ծաղրանմանությունները կենտրոնացել են ժամանրի բուն ստեղծագործական և տեսական-մեկնաբանական կոլիգիաների իրողության վրա՝ միաժամանակ շրջանառության մեջ գնելով տեսական և կազմաբանական այն առաջադրությունները, որոնց ստեղծագործական, գեղարվեստական ապահովման անկատարությունը, խաթարվածությունը առաջացրել էին նորավեպի անհարիր արտահայտություններ: Այս իմաստով ուշագրավ են Հարություն Ալփիարի «Առաջին և վերջին բառը», Օննիկ Զիֆթե-Սարաֆի «Նորավեպի նյութ» և Առանձարի «Նորավե-

26 Նույն տեղում, Տ. Ա., «Օրվան կյանքը», թիվ 34, 25 Օգոստոս 1901, էջ 530:

27 Brander Matthews, The Philosophy of the Short Story, New York, 1901, p. 77.

պին նորավեպ» ստեղծագործությունները։ Հ. Ալփիարի ծաղրանմանությունը ընդգիմություն է ժանրի ենթագրող կառուցվածքի, կաղապարների շահարկումներին, նորավեպի պատումի դինամիզմի խաթարումներին։ Պատահական չէ, որ նորավեպի բնույթի շեղումների իրողությունը նա արդեն շեշտում է ստեղծագործության խորագրում՝ այն որակելով իբր «վայրկյանավեպ»<sup>28</sup>։ Առանձարի «Նորավեպին նորավեպը» պարողիս էր ֆրանսիական նորավիպագրության անհարկի և ստրկամիտ կապկումների և ժանրի առաջադրույթների (մասնավորապես նորավեպի վերջաբանի) արհեստական գոյացումների դեմ։ Զիֆթե-Սարաֆի «Նորավեպի նյութի» Տիկին Էլիզ Փետուրյանը, գրագետից պահանջելով, որ իր մասին անպայման նորավեպ գրի, ասում է. «Պիտի ուզեի, որ նորավեպի մը նյութ ընեիր ինծի: Օ՛հ, ինչ չափ հաճույքով պիտի կարդայի զայն: Պիտի ուզեի ինքզինքս ցողացած տեսնել քո գրիչիդ գծած հայելիին մեջ: Ի՞նչ երջանկություն: Անմեղ քմահաճույք մըն է, որ չի պիտի մերժեն, թե՝, ըսե որ չես մերժեր...»։ Ինչո՞ւ էր գրասեր տիկինը այդքան համառորեն գրագետից խնդրում, որպեսզի նա հատկապես նորավեպ գրի, ոչ թե, ասենք, վեպ կամ քերթված, որովհետև «նորավեպ մը, սիրային վիպակ մըն է հաճախ, ուր ներքին փոթորիկներ, կիրքեր, բուռն զգացումներ երևան կու գան, որոնք նկարագրի մեծություններ, հոգիի գեղեցկություններ, հուզման խորություններ կը նկարեն»<sup>29</sup>: Դժվար չէ նկատել ընթերցողի գիտակցության մեջ ամրագրված ժանրի ըմբռնումը և նորավեպի «կոնյուկտուրային» նպատակներով «շահագործումը», որն առարկայորեն առաջցնում էր ընդդիմություն։ Հենց նորավեպի տեսության արտագրական գործնականության դեմ էին այսօրինակ ծաղրանմանությունները։ Պատահական չինք ընտրել այնպիսի ստեղծագործություններ, որոնք ժամանակագրական առումով «նորավեպի շուրջ» բանավեճից և՝ առաջ էին և՛ հետո, իրողություն, որ փաստարկվում է գրական ընթացում նորավեպի տեսական խնդիրների և հարցերի արդիականությունն իբրև գրականության պատմության այդ շրջանի կազմակերպող էամաս։ Այնպես որ բանավեճում «նորավեպ» եղրի սահմանների քննությունն ու որոշարկումը պատճառաբանվում էր հայ գրականության այդ շրջանի բնույթի անհրաժեշտությամբ։

«Նորավեպի շուրջ» բանավեճը որոշարկում էր եզրի սահմանները, մեկնաբանում ժանրի տեսությունը։ Բնական է, որ նման տեսություններում առաջադրվում էին նաև ներփակ, մասնավոր խնդիրներ։ Այս պարագային ներփակ բանավեճի արտահայտություն էր ժանրի անվանման, եզրի զուտ լեզվական, լեզվաբանական հարցը. թե որքանո՞վ է «նորավեպ» հասկացությունը հայերենին հարիր բարդություն, մեր տերմինաշխնությանը բնորոշ իրողություն։ Տեսության մեջ այդպիսի հարցերի վրա ծանրանալը ընդունելի է, բնական, քանի որ գրված էր ընդհանրապես եղրաշինության, եզրի կազմության, լեզվական կանոններից գոյավորված երևույթի ճշգրտման և տվյալ լեզվին ներդաշնակ լինելու հանգամանքը։ Պատահական չէ, որ բանավեճի մասնակիցների գերակշռող մեծամասնությունը անդրադառնում էր լեզվական խնդրին։ Հայոց լեզվին

28 Տե՛ս Մասիս, Կ.Պոլիս, 1898, էջ 54-55:

29 Օննիկ Զիֆթե-Սարաֆ, «Նորավեպի հյութ», Հայ Գրականություն, Զմյուտմիա, 1912, թիվ 7:

եղրի հարիր կամ անհարիր լինելու հարցը կենտրոնացել էր այն հանգույցում, ուր բանավիճողների մեծամասնությունը գտնում և փաստարկում էր, թե հայերենում «նոր» բառը կարող է ամեն տեսակ բառերի հետ անխափու միանալ, բարդություն ստեղծելով, և սրանով պաշտպանում էր «նորավեպի» գոյությունը, իսկ հակառակ կարծիքի կողմնակիցները, ենելով այն դրույթից, թե «նոր» բառը կարող է միանալ միայն և միայն բայարմատներին, մերժում էին եզրը: Կարապետ Յությունյանն իր երկրորդ հոդվածում ամբողջականացնում է այդ կարծիքը: «Մեր ընդդիմախոսներուն գլխավոր առարկությունն այս է թե այդ բառը մեր կարծիքին չափ անհմաստ չէ, ոչ ալ յուր կազմին մեջ անկանոն, թե «նոր» բառը կրնա ամեն տեսակ բառերուն հետ ձուլիլ անխտիր, մինչ մենք և մեզ հետ ուրիշ ծանոթ գրիչ մ'ալ ըսած էինք թե «սովորաբար բայարմատներու հետ կը միանա»: «Մեր կարծիքը դարձյալ նույնն է և այս մասին հայ լեզվի բառգիրքերն ալ համամիտ են մեզ. «նոր» բառը՝ հարյուրին իննսուն՝ բայարմատներուն հետ կը միանա. իսկ ուրիշ տեսակ բառերու հետ միացումը, զոր մենք ալ ճանչցած ենք՝ քանի մը տող վարի «նորատի» բառը գրելով, տեսակ մը բացառություն կամ զարտուղություն կրնա համարվիլ»<sup>30</sup>: Սա է եզրի վիճարկողների հիմնական կովանը: Այս տեսակետը սկզբունքային հետեղականությամբ պաշտպանում էր Ռեթեոս Պերպերյանը: Սակայն եզրի պաշտպանները բերում էին բազմաթիվ հակաֆաստարկներ, որոնք հակառակն էին ապացուցում՝ ընդգծելով, թե «նորավեպը» կազմավորվել է Հայերենի բարդություններին բնորոշ օրինաչափություններով: Այս իմաստով անչափ կարեոր էր Գ. Էոլմեզյանի Հոդվածը, ուր նա նախ արձանագրում է բարդության կազմավորման հայերենին բնորոշ լինելն առհասարակ՝ իբրև իսկական բարդություն (չեշտում է «և» Հոդվակապի գործառնություննը), ապա չեզոքացնում է ընդդիմախոսների հիմնական կովանը՝ ապացուցելով, որ տվյալ դեպքում բարդությունը գոյավորվել, կազմվել է ածականից ու բայարմատից: «Հայտնի է թե «նոր» ածական մըն է և կը նշանակե նոր, նորելուկ և մերթ նոր բան, նորություն, — գրում է նա, — իսկ վեպ բառը երկու առում ունի, մին կը գործածի իբրև գոյական, որով կը նշանակե հին պատմություն, զրույց, ճառ, ասացված, և մյուսը՝ իբր բայարմատ վիպել բայեն, որով ևս կը նշանակե վիպում, վիպել, զրուցել, ճառել...»<sup>31</sup>: Ընդդիմախոսների հիմնական կովանը վիճարկելով՝ Հովհաննես Գաղանցյանն իր Հոդվածում յուրօրինակ ամփոփում է եզրի լեզվաբանական բանավեճը՝ մեկ անգամ ևս ընդգծելով, թե «նորավեպն ըստ այնմ պետք է որ նշանակե կամ «նոր վիպված», կամ «նոր բաներ վիպող», ինչպես բազմավեպ որ «շատ բաներ վիպող պատմող» ըսել է: Կը հասկցվի ուրեմն թե վեպը հոս ավելի բայարմատ կրնա ըլլալ քան գոյական, և նորավեպն ալ ինքնին՝ ածական մը որ գոյականի մը ընկերակցության կը կարոտի ամբողջական իմաստ մը տալու համար...»<sup>32</sup>: Այսպիսով՝ եզրի լեզվական-լեզվաբանական գոյությունը հաստատված է, նրա կիրառական իրավունքը փաստարկված, սակայն դա սոսկ ա-

30 «Կարճ պատասխան մը», Մասիս, 1901, էջ 295:

31 «Ի նպաստ նորավեպին», Արևելք, Կ.Պոլիս, 1901, թիվ 4654, էջ 1:

32 «Նորավեպին շուրջը», Մասիս, 1901, էջ 316:

ուաջին քայլն էր, հարկավոր էր ամրագրել նաև ժանրի տեսությունը, հանդամանք, որ տարբեր շերտերով վկայված է խնդրո առարկա բանավեճում: Մկրտիչ Աճեմյանը բանավեճի իր ինքնատիպ անդրադարձում հետևյալ ձևով է արտահայտել լեզվաբանական խնդիրների արծարծումները:

Նորավեպին հեշտ ու համեստ պարտեզ  
Բառամուներու եղավ ասպարեզ  
Ուր գրչի ջոջեր դեմ առ դեմ ելամ՝  
Հեղեղանընան թափեցին ... մելան,  
Տարրալուծելով այդ բառին իմաստ  
Ամեն բանասեր գլուրուց իր փաստ  
Աս գոյական է ու աս՝ բայարմատ,  
Ըսավ ու վճռեց խելքին համեմատ<sup>33</sup>:

Աճեմյանի այս հեզնոտ տողերում ակնդետ շեշտվում է լեզվաբանական խնդիրների կրավորականությունը:

«Նորավեպի շուրջ» բանավեճի տեսության հատկականությունը պայմանավորող գործոնը եզրի փոխառության և սրանից ածանցված ժանրի տիրույթների սահմանումներն էին: Պարզ ու մեկին էր, որ նորավեպը ֆրանսերեն «nouvelle»-ի թարգմանությունն էր: Խնդիրը կենտրոնանում էր այն հանդամանքի վրա, թե որքանո՞վ է այդ թարգմանությունը համապատասխանում ժանրի բնութային հատկանիշներին: Այս հարցադրման մեջ է բյուրեղանում փոքր արձակի տեսական խնդիրների մեկնաբանությունը, և փաստորեն բանավեճում արծարծվող յուրաքանչյուր փաստարկ գոյավորում է նորավեպի հատկանիշների սահմանումներ, որոնց ընդհանրությունն էլ ժանրի տեսական ամրագրումն էր գրական ընթացում: «Նորավեպ թե վիպակ, որն ալ ըլլա, մեզի համար nouelle-ին իմաստը տառապես ցոլացնելու անբավական եղող բառեր են, մին իր անսովոր կազմությամբ և իմաստի ընդարձակությամբ, իսկ մյուսը ոչ հարազատ թարգմանությամբ»<sup>34</sup>: Այսեղ ուշադրության է արժանի այն հանդամանքը, որ եզրի ըմբռնման կիզակետում է հայտնվում ժանրի բնույթին համապատասխան գործոնը, որն անդրադարձվում է եզրի լինելիության փաստարկողների կողմից. «... ուրեմն nouelle բառը կը նշանակե Ա. պարզապես լուր, նոր ստացած տեղեկություն – նորալուր և Բ. կարճ և պարզ պատմություն:

Արդ՝ նորավեպ բառը իբրև նոր վեպ կամ պատմություն և կամ գրույց նշանակությամբ և նույնիսկ նոր բան պատմող իմաստով ըստ ամենայնի կրնա համապատասխանել nouelle ֆրանսիական բառին բաղադրյալ իմաստին, և տալ անոր վերագրված ընդհանուր գաղափարը»<sup>35</sup>: Այսպիսով՝ եզրի ընտրությունը համապատասխանում է ժանրի տեսությամբ սահմանված առանձնահատկություններին որպես փոքր արձակ՝ ընթերցման և ընկալման ամբողջականությամբ, պատումի հարաշարժությամբ<sup>36</sup>: Պատահական չէ Հակոբ Օշականի այն

33 Նույն տեղում, էջ 323: Մ. Աճեմյանը բանաստեղծությունը գրել է 1901 թվականի Մայիսի 22-ին:

34 Գ. Շահինյան, «Նորավեպին շուրջ», Արևելք, թիվ 4636, 29 Մայիս 1901:

35 Գ. Էղլմեզյան, «Ի նպաստ նորավեպին», նույն տեղում, թիվ 4654, 19 Յունիս 1901:

36 Այս պարագան նկատի ուներ Գրիգոր Պելտյանը՝ արձանագրելով, թե «Նորավեպը Կ'նճթաղրեն ընթերցումի ամբողջ ըմբռնում նը»: Տե՛ս Բագին, 1980, Սեպտեմբեր, էջ 40:

նկատումը, որ բնութագրելով իրապաշտների փոքր արձակը, գրում է, թե «արվեստը ազատություն է՝ ըսեր են: Կ'ավելացնեմ – արվեստը ամբողջություն է: Ու 1890-ին, 1900-ին մեր գրագետները երկաթե պահպանակի մը մեջ գերի էին տված իրենց հոգիներուն ամենեն ցավոտ, վիրավորված, նվաստացած մասերը»<sup>37</sup>: Օչականը, միանդամայն ճիշտ նշելով այն հանդամանքը, որ մշակութաբանական տարածության մեջ քաղաքական հանդամանքների առարկայական պատճաններից (գրաքննություն, լրագրային գրականություն և այլն) ելնելով, տևողության խնդրի բացակայությունը խտացրեց ըստ ամենայնի նորավեպի ծիրում, քանի որ փոքր արձակի հասրավորությունները, նորավեպը ընձեռում էին ընթերցման և ընկալման ամբողջականության լիովին բավարարումը, պատումի հարաշարժությունն ու գրականացման սուբյեկտի ընտրության՝ արվեստագետի ազատությամբ պայմանավորված, իրողությունը, այնպես որ Զոհրապի այն նկատումը, թե. « nouvelle՝ ֆրանսերենի մեջ, և այն առումով որով նորավեպ թարգմանված է մեր մեջ, կը նշանակե պատիկ պատմություն մը, որ միանդամայն իր ձևով նորություն մըն է. աս է բուն իմաստը»<sup>38</sup>: Ինչո՞վ էր պայմանավորված այդ նորույթը: Ժանրի գենետիկական բնույթով, կազմաբանությամբ, պոետիկայով և բնագիրը կազմակերպող սկզբունքների և բաղկացուցիչների գործառնություններով: Այստեղ է, որ սրվում է նաև նորավեպ-վիպակ հարաբերակցությունը, երբ առաջինը դիտվում է որպես վեպից ածանցված և վեպով պայմանավորվող իրողություն: Այս պարագային է, որ անհրաժեշտ է դառնում ժանրի հայ տեսաբաններին, խարսխվելով գեղարվեստական ստեղծագործությունների և հետազոտական տվյալների վրա, ապացուցել և փաստարկել նորավեպի, ընդհանրապես փոքր արձակի «ինքնիշխան», անկախ գոյությունը: Երիցս ճիշտ էր Գրիգոր Զոհրապը, երբ գրում էր, որ նվազումի գաղափարով եթե տունը կարող է տնակ դառնալ, ապա վեպը բնավ ոչ վեպիկ կամ վիպակ՝<sup>39</sup>:

Այսպիսով՝ խնդրո առարկա տեսությունը առաջադրում և հիմնավորում է նորավեպի բնույթի, սահմանման ևս մի կարևորագույն խնդիր՝ փաստարկելով ժանրի անկյունաքարային հատկանիշների այն խումբը, որ դիմորոշում և հատկանշում է նրան: Ժանրի տեսության համապատկերում այս խնդիրը զբաղեցնում էր ոչ միայն հայ գրականությանը, տեսական մտքին: «Ինչքան ակնդետ, ուշադիր ենք զննում արձակի պատմությունը, այնքան ավելի հստակ ենք գիտակցում, որ վեպն ու փոքր արձակը սկզբունքորեն տարբեր են, ընդ որում նրանց միջև եղած տարբերությունը սոսկ ծավալային չէ, այլ ֆունդամենտալ», – 1901 թվին գրում էր Բրանդեր Մեթիուզը<sup>40</sup>: Եղիա Տեմիրճիպաշյանը բանակեցի իր անդրագարձներում կենտրոնանում է վեպ-նորավեպ հարաբերակցության վրա<sup>41</sup>, իսկ իբրև եզրակացություն արձանագրում. «Իմ փափաքս

37 Համապատկեր, Ե., Էջ 153:

38 Գրիգոր Զոհրապ, «Նորավեպին շուրջ»: Տե՛ս Գր. Զոհրապ, Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1962, Էջ 448:

39 Նույն տեղում, Էջ 449:

40 Matthews, p. 73.

41 Տեմիրճիպաշյանն իր առաջին հոդվածում վեպ-նորավեպ հարաբերակցությունը դիտում է վիպապաշտության հարաբերակցության սահմաններում, նորավեպն արտածելով իրապաշտու-

այն է որ Մասիսի մեջ թե այլուր նորավեպ ավելի գրվի, նորավեպ ամենեն ավելի գրվի: Փափաքս այս է, քանզի համոզումս ալ այն է թե գրականության ծաղկման ու մտավոր զարդացման ամենեն ավելի նպաստող գրական սեռն է նորավեպը: Եվ նորավեպն ընթերցասիրության ամենեն ավելի կը նպաստէ»<sup>42</sup>: Ժանրի տեսական վիճակը ամրագրելուն զուգընթաց՝ մատնանշվում էր նաև նորավեպի գերակայությունը գրական, գեղարվեստական ընթացում:

«Նորավեպի շուրջ» բանավեճը ամփոփում էր ժանրի ստեղծագործական դրսերումների տեսական-հետազոտական հանդերձը՝ փաստարկելով ժանրի ինքնությունը, «անկախությունը», իրապաշտության շարժումով պայմանավորող մասնահատկությունները (այս պարագային շեշտելով նաև եզրի ունիվերսալիզմը), բնագիրը կազմակերպող տարրերի և բաղկացուցիչների բնութագրական, տիրապետող հատկանիշները: Հովհաննէս Գագանճյանը, ամփոփելով իր հոդվածը, շեշտում էր, թե նորավեպը հայ գեղարվեստական ընթացում այն աստիճան էր նվիրագործվել, որ անիմաստ էր այն փոփոխելը<sup>43</sup>: Այդ նվիրագործությունը պայմանավորվում էր այն հանգամանքով, որ «նորավեպն» իբրև եզր «... մրցակիցներ շատ ունեցավ, վիպակ, վեպիկ, տարփավեպ ու դեռ չեմ գիտեր ինչավեպ, բայց ո՛չ մեկը դիմացավ ու նորավեպը՝ գրասեր հասարակութենեն սիրված, փայփայված՝ կը ծիծաղի զինքը դատափետողներուն երեսին, ու չարածի տղու մը պես խույս տալով զինքը կաշկանդել, չեղոքացնել փորձող քերականական խստություններեն, մեկ օրեն մյուսը երևան կուգա նորեն՝ գրական էջի մը ճակատը»<sup>44</sup>:

Նորավեպի տեսական ընդհանրացման այս պատմական անդրադարձում անընդհատ երևան էր գալիս այն հանգամանքը, որ Շլեգելի կողմից քրեստոմատիկ սահմանում էր ստացել՝ իսկական արձակում ամեն ինչ պետք է ընդգծված լինի: Իսկ ժանրն՝ իր կառուցվածքային սահմաններով, կանխորշող հատկականություններով (կարճաբանություն, ինքնուրույնություն, բաղկացուցիչների ներդաշնակություն) և ստեղծագործական իրացումներով, ստեղծեց հայ արձակի ներկայանալի արժեքներ:

թյան գրականացման ակզբեռներից: Տե՛ս Ե. Տեմիրճիպաշլան, «Նորավիպակ», Մասիս, 1901, էջ 309-311, 324-325:

42 Ե. Տեմիրճիպաշլան, «Արվեստի ու բարոյականի խմբիրը (Աորավեպին շուրջը)», Մասիս, 1901, թիվ 24, էջ 370:

Բանավեճում Մկրտիչ Ա. Անտյանի չափածո անդրադարձի մեջ նորավեպի անկախությունը, ժամունի ինքնարհատկությունը շեշտվում է հետևյալ քառատողում.

«Նորավեպն ունի ճագուկ մը՝ վիպակ  
Ու թոռ մը՝ վեպիկ (երկուքն ալ տափակ),  
Դուք որդեգորեցիք վիպակ կամ վեպիկ,  
Բայց նորավեպին պատվուց մի՛ դըպի՛ք»:

Նույն տեղում, էջ 323:

43 Մասիս, 1901, էջ 316:

44 Տիգրան Արփիարյան, «Նորավեպին շուրջ», Մասիս, 1901, էջ 266:

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅ ՆՈՐԱՎԵՊԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ նոր գրականության պատմության համապատկերում գեղարվեստական փոքր արձակի զարգացման համար երևութական են 19-րդ դարի իննսունական և 20-րդ դարի տասական թվականները։ Փոքր արձակը (նորավեպ, պատմվածք, մանրագեպ, մանրավեպ, պատկեր, գեղարվեստական ակնարկ, քրոնիկոն և այլն) կենտրոնացման և բյուրեղացման շրջանի մեջ էր. մի կողմից՝ ամբողջանացվում էր ժանրի պատմական դիմագիծը, որ սկիզբ էր առել Մովսես Զոհրապյան-Արցախիցու, Սահակ Թոռնյանի, Ստեփանոս Նազարյանցի, Ժանիկ Արամյանի և Խաչատուր Աբովյանի համապատասխան ստեղծագործություններով, մյուս կողմից էլ՝ ժանրի թե՛ տեսության մեջ առհասարակ, թե՛ կոնկրետ ստեղծագործական իրացումներում հատկանշվում էին այն ուղիները, միջոցներն ու սկզբունքները, որոնք տիրապետող դարձան փոքր արձակի հետագա դրսերումներում՝ պայմանավորելով Հակոբ Օշականի, Հակոբ Մնձուրու, Շահան Շահնուրի, Ակսել Բակունցի և Համաստեղի ստեղծագործական հայտնությունը։

Գրական մժնողորտը հագեցած էր ժանրի ամենատարբեր դրսեորումներով<sup>1</sup>, իսկ երդվյալ բանաստեղծների արձակամետ դարձերը (նորավեպեր էին դրում թեքեյանն ու Մալեզյանը) տուրք էր օրվա մտայնությանը, այլ գրական ընթացի առարկայական պահանջների բավարարում, համապատասխան բարերար մժնողորտի գոյավորման արարք։

Հայ գեղարվեստական փոքր արձակի պատմության և տեսության մեջ անդահատելի է գրական «Մասիս» հանդեսի դերն ու նշանակությունը, որ Զոհրապյանաստուրյան շրջանից (1892 թ. հանդեսը տնօրինում էին Գրիգոր Զոհ-

1 Ժանրային բազմաթիվ ու բազմատեսակ ձևերը հեղեղել էին գրական պարբերականները։ Փոքր արձակը բուն ստեղծագործական փորձարարությունների հորդանուտում էր։ Տեսական ու բանավիճային հոդվածների, ստեղծագործությունների հետ զուգարիտ երևան էին գալիս տարբեր հումորեսկներ, պարողիաներ, որոնք ըստ ամենայնի բնորոշում են գրական ընթացում փոքր արձակի գերիշխանությունը։ Ժանրային կառուցվածքների բազմազանության ինքնատիպ անդրադարձ է «Ակնթարթավեպ» պարողիան։

Ա.

Զիրար

Բ.

Չեին ճանչնար

Գ.

ԵՎ

Դ.

Չը սիրած

Ե.

Մեռան,

Վա՞խ:

Արևելյան մամուլ, Զմյուռնիա, 1894 թ., թիվ 4, էջ 111։

բապն ու Հրանտ Ասատուրը, 1893-ին՝ Զոհրապը) դարձել էր ժանրի հեղինակավոր և լավագույն ներկայացնողներից մեկը հայ գեղարվեստական միջավայրում: Ավելին՝ սկսած 19-րդ դարի 90-ական թվականներից, «Մասիսը» կանխորշում էր ժանրի բնույթն ընդհանրապես թե՛ տեսական հոդվածներով ու հետազոտություններով և թե՛ ստեղծագործություններով: Հանդեսն իրավամբ դարձել էր հայ նորավիպագրության կենտրոն: «Մասիսի» շնորհիվ գրականության մեջ ամրագրված նորավեպի ժամանակաշրջանը ըստ ամենայնի ներդաշնակում էր գործնականը (բազմաթիվ ստեղծագործությունների տպագրություն) տեսական-հետազոտականին: 1901 թ. հանդեսում տպագրվեց մի ծավալուն բանավեճ նորավեպի վերաբերյալ, ուր հոդվածներով և ուսումնասիրություններով հանդես եկան ժամանակի մի շարք հեղինակավոր գրաքննադատներ, գրողներ: Հանգամանք, որ վկայում էր, թե ժանրի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը չէր նվազում ոչ թե նախորդ դարի վերջին տասնամյակի իներցիայի պատճառով, այլ այն իրողությամբ, որ նորավեպը առարկայորեն դարասկզբի հայ գրական ընթացը պայմանավորող, տիրապետող դրսերումներից էր: Սակայն նորավեպի (առհասարակ փոքր արձակի) ուղին չպետք է պատկերացնել հեշտ ու թեթև, առանց խոչընդուների, զի գրական ու մերձգրական շրջաններում առկա էր որոշակի ընդդիմություն, որը հաճախ գեղագիտական, գաղափարական, մեթոդաբանական տեսանկյունների շուրջ ունեցած հակամարտությունները, գրական հոսանքների և ուղղությունների պատկերացումների ներհակությունը ուղղամետ տեղափոխում էր ժանրային տարածություն՝ այստեղ ապագինելով «ուեանչի» հնարավորությանը: Ընդդիմության հիմնական պատճառները հայ բնապաշտության վերելքն էր, բարոյականի գաղափարաբանության նորերի «անպատշաճ ընթերցումները», հոգեբանության գրականացման սկզբունքների անհարիսությունը սեփական պատկերացումներին, համաելքոպական գրական ընթացին համապատասխանությունը և այլն: Այսօրինակ մտայնության կրողները, որ, բարեբախտաբար, թվով մեծ չէին, պարզապես չէին նկատում, որ հայ փոքր արձակում տեղի է ունենում բնական արդիականացում՝ առանց դույզն-ինչ գրականության ազգային հատկականությունը կորցնելու, ավելին՝ դա ամրակայվում էր, ստեղծվում էր գեղագիտական բնագրի ազգային փիլիսոփայություն, և մեր գրականությունը 20-րդ դար էր մտնում ու իրեն հաստատում իբրև ժամանակակից գրականություն: «Մասիս» ընդդիմախոսներին պատասխանում էր նորանոր ստեղծագործություններով ու հոդվածներով: Սակայն «Քրիզանթեմի» (Հարություն Ալփիարի նորավեպերից մեկի) տպագրությունից հետո մթնոլորտը շիկանում է: 1901 թվականի հունիսի 2-ին Տիգրան Արփիարյանը փոքրիկ խմբագրականում գրում է. «Մասիսի վերջընթեր թիւին մէջ հրատարակուած սիրուն ու սրամիտ նորավէպը առիթ տուած էր վարժապետի մը՝ գայթակղածի ձեւեր առնելու եւ բարոյախօսի դեր մը կեղծելու զոր իրմէ յաջողագոյնները չեն կրցած վայելցնել: Մեր մասին, ծիծաղիլ միայն կը մնար ասանկներուն վրայ որոնց պոռչտուքներուն վարժուած ենք մեր տասնըօթը տարուան խմբագրական կեանքին մէջ: Բայց երիտասարդ աշխատակից մը, ենովք Արմէն, այլապէս մտածելով, այս տեսութիւնը գրած է նորավէպին վրայ ընդհանուր կերպով, զոր սիրայօժար համեմատութեամբ կը

**Հրատարակենք»<sup>2</sup>:** Արան հաջորդում է Արմենի «Նորավեպները»<sup>3</sup> մանր հետազոտությունը, որտեղ վեր են հանվում ու քննարկվում նորավեպի տարբեր ըմբռումները, մատնանշվում ժամանակագույն հետագա զարգացման ու կենտրոնացման ուղիները: Արմենը ըստ ամենայնի պատասխանում է ընդդիմախոսներին, գրականության պատմության համապատասխան օրինակներով հերքում է գրական «վարժապետների» փաստարկները: Ըստ արժանվույն գնահատում է Գրիգոր Զոհրապի, Տիգրան Կամսարականի, Արամ Անտոնյանի, Օննիկ Զիգֆրե-Սարաֆի դերը պրոֆեսիոնալ ստեղծագործությունների և ընտիր թարգմանությունների համար: Միաժամանակ նշում է և՛ նոր անունների, և՛ թե նոր ստեղծագործությունների երևան գալու անհրաժեշտությունը, որոնք պետք է կենսունակ պահեն հայ նորավիպագրությունը: Թե՛ խմբագրականը, թե՛ Ենովք Արմենի հոդվածը ոչ մի կասկած չեն հարուցում, որ հատկապես այդ օրերին՝ 1901-ի հունիս-հուլիս ամիսներին է հղացվում հանդեսի կողմից նորավեպի գրական մրցույթ կազմակերպելու գաղափարը, որը միաժամանակ հիմնավոր պատասխան պիտի լիներ ընդդիմախոսներին և պետք է գտներ նոր հեղինակներ ու ստեղծագործություններ, որոնք կիրականացնեին նաև Արմենի ցանկություննառաջարկությունը, որ փաստորեն բոլորն էին գիտակցում: Սա է նախորդում հայ գրականության պատմության ինքնատիպ դրսերումներից մեկին՝ «Մասիս» հանդեսի գրական մրցույթին, որ հայ նորավիպագրության համար իմաստագեկան նշանակություն ունեցավ:

Այստեղ միջանկյալ, կարծում ենք, տեղին է մի քանի վիճակագրական տվյալներ հաղորդել: Եթե հանդեսում 1901 թ. հրատարակել էր տասնմեկ նորավեպ, ապա 1902-ին մրցույթի ամփոփումից և արդյունքների հրապարակումից հետո՝ տասնութ ստեղծագործություն: Ինչպես տեսնում ենք, 20-րդ դարի դարասկզբին (առաջին երկու տարում) «Մասիս» տպագրել է մոտ երեսուն նորավեպ, որ ցանկացած գրական պարբերականի համար բավականին մեծ թիվ է: Անպայման հրշատակության են արժանի Շ. Շավարշի «Խոռվթը», Մուշեղ Վարդապետի «Մեղքով ծնածը», Գ. Շահինյանի «Բարակ ցավը», Մ. Ուղուրյանի «Արտին սիրածը», Վ. Մալեկյանի «Աղոթքը», Ժ. Սայապալյանի «Տղու սերը»: Հեղինակներ ու ստեղծագործություններ, որոնք զարմանալիորեն սպրդել են ոչ միայն ընթերցողներից, այլ նաև՝ գրականության պատմության ուսումնասիրություններից, որոնց նորավեպերը, առկայն, հայ դասական նորավիպագրության ուրույն արտահայտություններից են:

Այսպես, ուրեմն, 1901 թ. հոկտեմբերի 14-ին «Մասիս» հանդեսը ծանուցում է, որ կազմակերպում է գրական մրցույթ. «Նորավէպի ճիւղին, որուն պիտի յաջորդեն ոտանաւորի, ընտանեկան նիւթերու, հեքիաթի, մանկական բաժինի եւ բանասիրութեան վերաբերեալ մրցումներ, ամենքն ալ ՊԱՐԳԵՒԱՀՈՐ»: Խմբագրությունը հանգամանորեն ներկայացնում է մրցույթի պայմանները. «Զեռուագրին ծաւալը առ առաւելն վեց էջն աւելի պէտք չէ ըլլայ (իւրաքանչիւրը Մասիսի էջին չափ) մէկ կողմի վրայ գրուած:

Մրցումի ենթարկուելիք ոչ մէկ նորավէպ պէտք չէ կրէ հեղինակին ստորա-

2 Մասիս, Կ. Պոլիս, 1901 թ., թիվ 22, էջ 337:

3 Նույն տեղում, էջ 337-340:

գրութիւնը, կասկած չարթնեցնելու համար թէ անձը կամ անունին հմայքը ազդած են քննիչներուն դատողութեանը վրայ: Կը բաւէ ծածկանուն մը դնել ձեռագրին ներքեւ...

Զեռագիրները պէտք է ղրկուին Մասիսի խմբագրութեան հասցէին, աւելցնելով միայն «Գրական մրցումին համար» բառերը: Նոյեմբեր 1 14էն առաջ եւ դեկտեմբերի 1 14էն ետքը որեւէ ձեռագիր չընդունուիր այս նպատակով: Մրցման արդիւնքը պիտի ծանուցուի դեկտեմբերի վերջին եօթնեկի Մասիսին մէջ ուր պիտի հրատարակուի նաեւ մրցանակ շահող նորավէպը:

Երկու սեռի գրողներ կրնան մասնակցիլ այս մրցումին:

Մասիսի խմբագրութեան հրաւէրով՝ երեք ծանօթ գրագէտներ ազնուաբար յանձն առած են ձեռագիրներու գնահատման եւ անոնց մէջէն լաւագոյնը նշանակելու հոգը: Մրցման ենթարկուելիք ձեռագիրները խմբագրութեան կողմէ առանց բացուելու պիտի յանձնուին քննիչներուն:

Այս գրական մրցման մէջ առաջին հանդիսացող նորավիապագրին արժէքաւոր ու ճաշակաւոր առարկայ մը պիտի նուիրուի իբր մրցանակ»<sup>4</sup>: Հոկտեմբերի 20-ին խմբագրությունը ներկայացնում է մրցույթի քննիչ հանձնախմբի անդամներին՝ Գրիգոր Զոհրապ, Աղեքսանդր Փանոսյան, Օննիկ Զիֆթե-Սարափ: Նշում են նաև, որ «մրցման մէջ առաջին հանդիսացող նորավիապագրին պիտի նուիրուի իբր մրցանակ ոսկի ժամացոյց մը հրատարակուելով իր անունը ու գրուածքը Մասիսի մէջ, ինչ որ գնահատումի ոչ նուազ նշանակալից ու քաջալրական արտահայտութիւն մը պիտի ըլլայ հրապարակաւ»<sup>5</sup>:

Դեկտեմբերի 8-ին ծանուցում են, թե խմբագրությունը ստացել է երեսուներկու նորավեպ, որոնք հանձնել է քննիչ հանձնախմբին, իսկ մրցույթի արդյունքները ամփոփվելու են դեկտեմբերի վերջին կամ հաջորդ տարվա սկզբին. «Հրատարակելով Մրցանակը ստացող նորավիապագրին անունը ինչպէս նաեւ մրցանակ շահող նորավէպը»<sup>6</sup>:

Յուրյանց խոստման համաձայն՝ «Մասիսի» 1902 թ. առաջին համարում՝ հունվարի 5-ին, «Մրցանակ շահող նորավեպը» վերտառությամբ հաղորդումով խմբագրությունը ամփոփում է մրցույթի արդյունքները. «Այս երեսուներկու նորավիապները նախնական քննութեան մը բովին անցուցին Տեարք Աղեքս. Փանոսեան և Օննիկ Զիֆթէ-Սարափ, խնամուտ կերպով, եւ քսան հատը բոլորովին տկար գտնելով թէ՝ գրուածքի եւ թէ նիւթի տեսակէտներով, մէկդի դրին. իսկ մնացեալ տասներկուքը դասաւորեցին իրենց գնահատման համաձայն: Գ. Զօհրապ էֆենտի, որուն հեղինակաւոր դատողութեանը յանձնեցինք նկատուած նորավիապները, ինքն ալ իր ընթերցումը կատարելով ու կարծիքը կազմելով, երեք քննիչները մէկանց համամիտ գտնուեցան առաջնութիւն տալու «Ասպար» ծածկանունը կրող նորավէպի մը որուն վերնագիրն էր «Ծերուկին խղճահարութիւնը» եւ «Տղոփուն» ծածկանունը կրող նորավէպի մը որուն վերնագիրն էր «Մերժումը»,՝ երկուքն ալ, քիչ տարբերութեամբ, յաջող գտնելով գրական ու

4 Նույն տեղում, թիվ 41, էջ 649:

5 Նույն տեղում, թիվ 42, էջ 661:

6 Նույն տեղում, թիվ 49, էջ 777:

վիպական տեսակէտներով միանգամայն: Բայց որովհետև «Մասիսի» խմբագրութիւնը միակ մրցանակ մը հաստատած էր այս առաջին անգամուան համար, եւ այդ մրցանակն ալ դրամական պարզեց մը չէր զոր կարելի ըլլար երկու մասի բաժնել, մեր յարգելի քննիչները համաձայնեցան մրցանակը նուիրելու «Ասպար»-ի նորավէպին, իրենց գնահատութեան բարենիշն ալ տալով հանդերձ «Տրոփուն»-ի նորավէպին»<sup>7</sup>: Այնուհետև Տիգրան Արփիարյանը այս խմբագրականում հայտնում է հաղթողների անունները: «Ասպարը» Վահան Հարությունյանն էր, իսկ «Տրոփունը»՝ Հովհաննես Սեթյանը: Համառոտակի բնութագրում է Հարությունյանի ստեղծագործությունը: Նույն համարում տպագրվում է «Ծերուկին խղճահարությունը», իսկ հաջորդում՝ «Մերժումը»: Հունվարի տասներկուսի համարը բացվում է մրցույթի հաղթողների սեղմ դիմանկարով, որ գրել էր Տիգրան Արփիարյանը<sup>8</sup>: Այնուհետև երրորդ և չորրորդ համարներում քննիչ հանձնախմբի անդամ Օննիկ Զիֆթե-Սարաֆը ծավալուն հոդվածով անդրադառնում է մրցույթի ներկայացված նորավեպերին, մատնանշում հաջող ստեղծագործությունների արժանիքները, վեր հանում այն թերությունների շրջանակը, որոնք առհասարակ բնորոշ էին խնդրո առարկա նորավեպերին, անում կարեւոր գործնական ու տեսական եզրահանգումներ<sup>9</sup>: Մրցույթին դրականորեն են անդրադարձում նաև ժամանակաշրջանի մյուս հանդեսներն ու պարբերականները: Այսպես՝ Տնտես-ի նյութերը: Թվում էր, թե արդեն մրցույթին առնչվող ամեն ինչ ասված է ու ամփոփված, սակայն մինչև տարեվերջ «Մասիսը» այս կամ այն կերպ անդրադառնում էր դրան: Այսպես, նախ՝ տպագրվում է Արամյան վարժարանի տնօրեն, Վահան Հարությունյանի ուսուցիչ Նշան Թորոսյանի հիացական խոսքը յուր սանի ստեղծագործությունների մասին<sup>10</sup>, ապա Փրանսիական «Ժուլիալ» լրագրի համանուն մրցման մասին է տեղեկացվում, որտեղ հաղթանակած նորավեպերից մեկը՝ «Կենսաթոշակ» վերնագրով, տպագրվում է Ռուգոլի Սամիկյանի թարգմանությամբ<sup>11</sup>, թարգմանիչն այն նվիրել էր Արտաշես և Վահան Հարությունյաններին:

Թե՛ Վահան Հարությունյանի և թե՛ Հովհաննես Սեթյանի համար նորավեպի մրցույթում հաղթանակը կարեւոր էր գրական անդաստանում սեփական եւսն ամրակայելու համար: Եթե Սեթյանին մրցույթը ստեղծագործական հնարավորությունների ընդլայնման հնարավորություն ընձեռեց, ապա Հարությունյանին ճանաչում բերեց:

Վահան Հարությունյանը (1877-1946) «Վաղվան գրականության» կամ «Գավառի գրականության» երկրորդ սերնդի ներկայացուցիչներից է, «Վաղվան գրականության» ականավոր տեսաբան, բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ ու քննադատ Արտաշես Հարությունյանի (Մալկարացի Կարո) կրտսեր եղբայրը:

7 Մասիս, 1902 թ., թիվ 1, էջ 1:

8 Տ. Արփիարյան, «Գրական մրցումին շուրջը», նույն տեղում, թիվ 2, էջ 17-18:

9 Օ. Զիֆթե-Սարաֆ, «Տեսություն մը գրական մրցումին վրա» և «Ամորթի»-ները, նույն տեղում, թիվ 3, էջ 33-38, թիվ 4, էջ 55-58:

10 Նույն տեղում, էջ 76:

11 Նույն տեղում, էջ 152-155:

Արտ. Հարությունյանը 1899 թ. հունվարի 3-ին Արամ Անտոնյանին գրած նամակում մասնափորապես նշում է. «Մտածեցի քերթվածներս, առաջիններեն սկսելով, հետզհետե հրատարակել Մասիսին մեջ: Առաջին տեսրակ մը կը դրկեմ կոր քեզի միայն թղթատարով, զուտ անվըլորի տակ, որ կը պարունակե նաև լուսանկարս, Վահանինն ալ»<sup>12</sup>: Անվանի գրողն ու խմբագիրն ամենայն հավանականությամբ ընթերցել էր կրտսեր Հարությունյանի ստեղծագործություններից, ծանոթ էր նրա գրական նախաքայլերին, ուստիև, բացի ճանաչում գտած երեց եղբոր լուսանկարից, ցանկանում էր ունենալ նաև Վահանինը, որպեսզի Պոլսի պարբերականներից մեկում ստեղծագործությունների հետ միասին տպագրի նաև երիտասարդ շնորհալի գրագետի լուսանկարը: Արդեն 1901 թ. Վ. Հարությունյանի նորավեպերից «Արհամարհանքը» տպագրվել էր «Մասիսում», որ գրողի ճանաչման լուրջ վկայություն էր: Իսկ հաջորդ տարի հանդեսում հրատարակվում են հաղթանակած «Ծերուկին խղճահարությունը» ստեղծագործությունից զատ «Երկու ծնունդներ», «Մորն անեծքը» (ձոնել է Գրիգոր Զոհրապին) նորավեպերը:

Վահան Հարությունյանի գեղարվեստական ստեղծագործությունը հայ գավառին նվիրված գրականության ինքնատիպ, հետաքրքրական դրսեորումներից է: Թեև մեծ չէ նրա ժառանգությունը, այսուհանդերձ, Ռուբեն Զարդարյանի, Թղամարդինցու, Գեղամ Բարսեղյանի, Գեղամ Տեր-Կարապետյանի, Մելքոն Կյուրծյանի, Արտաշես Հարությունյանի և «Վաղվան գրականության» մյուս ներկայացուցիչների նման նա անառարկելի երախտիք ունի հայ գրականությունը բնաշխարհում (բուն երկրում, Հայաստանում) զարգացնելու գործում:

Մըցույթում հաղթանակած «Ծերուկին խղճահարությունը»<sup>13</sup> նորավեպը, կենտրոնանալով բնապատկերի և հոգեբանության զուգորդումներին, գոյավորեց բնագրի որոշակի կառուցվածք, որտեղ կենտրոնի (Ստեփան աղբար) սեսանկյունների հարացույցի արձանագրությունը ամբողջացնում է գոյի-լնկալում-պատկերացում համակարգը: Գրիգոր Զոհրապը, անդրադառնալով մրցույթում հաղթանակած նորավեպերին, առանձնացնում է Հարությունյանի գործը՝ նշելով, որ. «...«Ծերուկին խղճահարությունը»... գաւառի կեանքը կը պատկերացնէ ու գաւառացի գրչի մը արտադրութիւն ըլլալը կը մատնէ իր բնատոհմիկ ոճովը»<sup>14</sup>:

1902 թ. հունվարի 12-ին «Մասիսը» տպագրեց Հովհաննես Սեթյանի նորավեպը: Մինչ այդ նա հայտնի էր գերազանցապես իբրև բանաստեղծ: Ակնհայտ է, որ մըցույթում աչքի ընկնելը խթանեց արձակ ստեղծագործություններ ավելի հաճախակի գրելուն: Այսպես, «Մերժումից» հետո «Մասիսում» այդ տարի տպագրվեցին նրա ևս երեք նորավեպ՝ «Շապիկճի Արթին», «Փոխարինությունը» և «Քմահաճույքի մը գործը»:

«Մերժումը» Գրիգոր Զոհրապի նշանափոր «Ճիտին պարտքը» նորավեպի յուրօրինակ գեղարվեստական մեկնություն է:

12 Արևմտահայ գրողԱնդրի նամականի, Ե. 1972 թ., էջ 220:

13 Նորավեպը հրատարակել ենք «Գարուն» ամսագրում: Տե՛ս Վ. Հարությունյան, «Ծերուկին խղճահարությունը», «Գարուն», 1991 թ., թիվ 1, էջ 54-58:

14 Մասիս, 1902 թ., թիվ 1, էջ 2:

Սեթյանը (1853-1930), այսպես կոչված, արևմտահայ կրտսեր ռոմանտիկներից է, թեև նրա արձակը հայ բնապաշտության երկրորդ հոսանքի անխառն արտահայտություններից է: Հրատարակել է «Գրական զբոսանք» (1882), «Հուզման ժամեր» (1888), «Բլուրն ի վեր» (1896), «Տարագրին քնարը» (1912) քերթվածների ժողովածուները և «Արշալույսեն վերջալույս» (1912) արձակ ստեղծագործունների գիրքը:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ «Մասիսի» գրական մրցույթը 20-րդ դարասկզբի հայ նորավեպի պատմության և տեսության մեջ արդյունավոր դեր ունեցավ: Պատահական չէ, որ 1903-ին Բյուտսերնը կազմակերպեց նմանօրինակ մրցույթ, իսկ 1911 թվականին «Շանթ» հանդեսը կազմակերպեց հերթական նորավեպի մրցույթ<sup>15</sup> հրավիրելով Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանին, Երուխանին և Օննիկ Զիֆթե-Սարաֆին իրեւ քննիչ հանձնախումբ, սակայն այս մրցույթին կանդրադառնանք մի այլ հոդվածով: Փաստը վկայում է, որ «Մասիսի» նախաձեռնությունը ժամանակի մեջ հաստատել էր իր կենսունակությունը և՝ իրեւ իսթան ժանրի զարգացման համար, և՝ թե առհասարակ գրական ընթացն աշխուժացնելու շոշափելի գործոն:

---

15 Ծանթ, Կ. Պոլիս, 1911 թ., թիվ 6, թիվ 8:

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ» (1880-1909)

Արևմտահայ գրականության պատմության մեջ պարբերականները, հանդեսները բացառիկ կարևորություն են ունեցել գեղարվեստական փոքր արձակի ձեւավորման ու զարգացման գործում։ Նրա պատմության և տեսության համապատկերում «լրագրային գրականության» իրողությունն առավելագույնս ընդգծվում է, քանի որ ժամանակակից կառուցվածքային, ձեւաբանական և պոետիկական հատկանիշներն ինքնին կրում են «մամուլամետ» ազդակներ։ Ժամանի առարկայական կերպը այս պարագային ենթակա է արտահայտման դաշտի հարմարվողականությանը, առանց որի անհնարին է նրա պատմության և տեսության ուսումնասիրությունը։ Ինքնին հասկանալի է, որ ժամանի գիտական համակարգությունը հնարավոր չէ դիտել այս իրողությունից գուրս, նամանավանդ որ արևմտահայ մի շարք պարբերականներ («Մասիս», «Արևելք», «Հայրենիք», «Արևելյան մամուլ», «Ծաղիկ» և այլն), ըստ էության, փոքր արձակի կազմակերպող բնօրաններն են եղել և իրենց ուղղությամբ, գեղագիտական առաջադրույթներով խթանել են ոչ միայն ժամանակակից գոյությունն ինքնին, այլև տարորոշել են փոքր արձակի պոետիկան ու փիլիսոփայությունը։

Ինչպես արևմտահայ գեղարվեստական փոքր արձակի, այնպես էլ ընդհանրապես արձակի (վիպագրության) ծագումնաբանությունն ու գոյագորումը խարսխվում են երեք կազմակորող կենտրոնների վրա՝ Կոստանդնուպոլիս-Զմյուռնիա-գավառ։ Վերջինս կիրառում ենք գրականության պատմության մեջ շրջանառություն ստացած հասկացության առումով՝ իրեն բնաշխարհիկ գրականություն։ Բևեռացման իրողությունը պայմանավորվում է այն հանգամանքով, որ արձակը (տվյալ դեպքում՝ գեղարվեստական փոքր արձակը)՝ իր ձեւաբանական-կառուցվածքային, նորմատիվ գեղագիտական համակարգի ամբողջականությամբ, արտածվում է այս երեք կենտրոններից, ոճերի, «հակադրական» հարաբերակցության մեջ՝ արտացոլելով ինչպես առանձին կենտրոնների ուրույնությունը, այնպես էլ ընդհանրականությունը։

Նոր գրականության պատմության մեջ Զմյուռնիայի գրական դպրոցը 1840-ական թթ. սկսած հատկանշվում է վեպի և առհասարակ արձակի ինքնուրույն և թարգմանության հարուստ ավանդույթներով, որոնք թե՛ քանակի և թե՛ ուրակի ընդգրկման չափանշումներով առավել արգասավորվում են 1860-70-ականներին։ Համաշխարհային արձակի (մանավանդ վիպասանության) գեղարվեստական փորձի յուրացմամբ ստեղծվում էր այն անհրաժեշտ հենքը, որի վրա պիտի ձեւավորվեր ազգային վեպը, ի մասնավորի նաև փոքր արձակը։ Բնականաբար, 1871-ին Մատթեոս Մամուրյանի հիմնադրած «Արևելյան մամուլ» ամսագիրը պետք է դառնար Զմյուռնիայի գեղարվեստական արձակի կենտրոնը։ Եվ իրոք, «Արևելյան մամուլի» բովով են անցել Զմյուռնիայի գրական դպրո-

ցի այնպիսի երախտավորներ, ինչպիսիք էին Մատթեոս Մամուրյանը, Գրիգոր Մսերյանը, Հովհաննես Շահումյանը՝ նախապատրաստելով ժանրի վերելքը ութ-սունական թվականներին։ Զմյուռնիայի գեղարվեստական փոքր արձակի ամ-րակայման և զարգացման գործում էական նշանակություն է ունեցել նաև Մեսրոպյան վարժարանում աշխարհաբարի ծրագրային պարտադիր առարկա դառնալը, իրողություն, որ խորապես նպաստեց աշխարհաբարի հարստաց-ման ու գեղարվեստական գործառության շրջանակների ընդլայնմանը։ 1883-ին «Արևելյան մամուլում» տպագրվեց օրիորդ Մենիկի (Թագուհի Շիշմանյան) «Գարնան մի ասուապ» նորավեպը։ Հետագա տարիներին հանդեսի էջերում տպագրվում են արձակի այնպիսի մշակներ, ինչպիսիք են Զապել Եսայանը, Ժագ Սայապալյանը, Օննիկ Զիփթե-Սարաֆը, Ռուբեն Զարդարյանը, Ենովը Արմենը, Հարություն Ալփիարը, ապա և Միհրան Վարպետյանը, Խոսրով Վար-պետյանը, Կարապետ Ստեփանյանը, որոնց փոքր արձակը էական նշանակություն ունի արևելյան թթ. նորավիպագրության տեսության և պատմության համապատելում։

Օրիորդ Մենիկի «Գարնան մի ասուապ» նորավեպը «Արևելյան մամուլում» տպագրված առաջին ստեղծագործությունն էր, որի թեմատիկան, բառապատ-կերային համակարգը, կառուցվածքը, խոսքի պոետիկան որոշ իմաստով նո-րույթ էին։ Հաղթահարելով ոռմանտիկ փոքր արձակի կառույցի բազմաթիվ հատկանիշներ՝ երիտասարդ գրագիտուհին պատկերում էր ժամանակակից մարդու հոգեբանությունը, արդիական կշռույթները։ Սաթենիկ-Գեղարդյանց հարաբերակիցությունների առանցքը, որի շուրջ, ըստ էության, համախմբված են պատումի գաղափարական ու պարագայական շերտերը (նոր սերնդի քաղաքային կենցաղի նկարագրություն, «ինտելեկտուալ» հոսք՝ ֆեմինիստական հայեցողության անթաքույց շեշտագրությամբ), պատկերագրում է հույզերի և բանականության բախման, բարոյականության ըմբռնման, պարտականության այն ոլորտը, ուր երիտասարդ մարդիկ պահպանում են իրենց անհատականությունը։ Ճիշտ է, կոլիզիայի արհեստականությունը, պատկերագրումներին փո-խարինող քարոզչականությունը տեղ-տեղ թուլացնում են նորավեպի ամբող-ջականությունը, սակայն իբրև մուտք «Գարնան մի ասուապ» ուշագրավ էր մի էական մտայնությամբ՝ ժամանակակից հայ կյանքի ու բարքերի անդրադարձը (մինչ ութսունականները դա ընդամենը կրավորական խոսք էր պատմական, լուսավորչական գաղափարաբանությունը շեշտելու համար) ոչ ծավալուն, պիրկ, դինամիկ գեղարվեստական չափումներում։ «Գարնան մի ասուապ» նշա-նավորում էր հանդեսի նորավիպագրական շրջանը նաև ժանրի բանարվեստի և ձևաբանության առումով (Մենիկը կիրառել էր նորավեպ-նամականու, ու-ղեգրական նորավեպի բազմաթիվ տարրեր)։ Այս ստեղծագործությամբ զյուռ-նիական գեղարվեստական փոքր արձակը, ըստ էության, միակցվեց ութսունա-կանների գրական շարժմանը, որը շարունակվեց մինչև XX դարի 10-ական թթ.։

\* \* \*

«Արևելյան մամուլը» արդեն 1900-ական թթ. սկզբից, երբ պարբերականի գրական-գեղարվեստական թեքումը դարձավ տիրապետող (լույս տեսան գուտ գրական-մշակութային բացառիկներ), արևմտահայ գրական շարժման մեջ դրսերեց նորավեպի, վիպակի և պատմվածքի մի ուրույն հոսք: Հատկանշական է, որ ժանրի դիմամիկան արտահայտում է պարբերականի տեսանկյան փոփոխությունը ևս: Օրիորդ Մենիկի ստեղծագործությունից հետո, երբ արևմտահայ այլ թերթեր ու հանդեսներ (Հատկապես «Արևելք» և «Հայրենիք») բավականաչափ թվով փոքր արձակ ստեղծագործություններ էին տպագրում, «Արևելյան մամուլը» գրեթե մեկ տասնամյակ ձեռնպահ էր մնում ժանրից: Դա հայեցակետի յուրատեսակ ճշգրտում էր և, որ պակաս կարեռ չէ, նաև հոգեբանական խոչընդոտի հաղթահարում՝ պայմանավորված ընթերցողին ինքնուրույն և թարգմանական վեպեր ընձեռելու այն ավանդույթով, որը սկսվել էր տակավին հանդեսի հիմնադրումից: Այս իրողությամբ է մեկնաբանելի այն հանդամանքը, որ 1885-1890 թթ. հավաքածուներում փոքր արձակի գործեր չկան, այլ կան բացառապես ինքնուրույն և թարգմանական վեպեր: XIX դարի 90-ական թթ. արդեն ժամանակակից հաճախականության մեծացման միտում է նկատվում, թեև ըստ տարիների դրանք համաչափ տեղաբաշխված չեն: Օրինակ՝ 1893-ին երկու ստեղծագործություն է տպագրվել, 1894-ին՝ չորս, 1895-ին՝ երկու, 1898-ին՝ մեկ, 1899-ին՝ կրկին երկու: 1900 թ. ժանրի հաճախականությունը արմատական վերընթաց է ապրում, իսկ մի քանի տարիներ հանդեսի էջերը դառնում են փոքր արձակի «միահեծանության ժամանակաշրջաններ» (1900, 1902, 1903, 1904 թթ.): Վեպը ստորագրապիտմ է նորավեպին, պատմվածքին, վիպակին, փոքր արձակի այլազան դրսերումներին, հանդամանք, որ կարելի է բացատրել ժանրի ձևաբանության, կառուցվածքի և գեղագիտական-գաղափարական առաջադրույթների առավելագույն հարմարությամբ, թերթոնային արձակի ընթերցողական առավել մատչելի առանձնահատկությամբ: 1890-ական թթ. արդեն ուրվագծում էր նաև «Արևելյան մամուլ» գեղարվեստական փոքր արձակի հեղինակային կազմը՝ Հրանտ Ասատուր, Տիգրան Հիրամ, Ղուկաս և Միհրան Վարպետյաններ, Զապել Եսայան, Հարություն Ալփիար, Կարապետ Ստեփանյան, Լևոն Մեսրոպ, Օննիկ Զրիթեն-Սարաֆ: Այստեղ էին տպագրվում նորավեպի ճանաչված հեղինակություններ Ռուբեն Զարդարյանն ու Արամ Անտոնյանը, Վահան Հարությունյանն ու Շավարշ Միսակյանը: Այսինքն՝ պարբերականը ստեղծել էր համապատասխան գեղարվեստական կենսոլորտ փոքր արձակի բոլոր տարբերակների համար: «Արևելյան մամուլը» անվերապահ էր ոչ միայն ավարտուն, ամբողջականացված ստեղծագործությունների տպագրության գործում, այլև զուտ կառուցվածքային որոնումների, ձևաբանական տեղաշարժերի, լաբորատոր-փորձնական փուլում գտնվող կառույցների հրապարակումներում, որը գիտակցված միտում էր ապահովելու ժամանակաշրջանի արևմտահայ գրականության առաջատար ժանրի արտահայտման տարածքը, ստեղծագործական որոնումների և փորձառության ազատությունը:

«Արևելյան մամուլի» 1880-1909 թթ. գեղարվեստական փոքր արձակի ընդհանրական դիմագիծը պայմանագործած էր արևմտահայ գեղարվեստական փորձի կենտրոնացումներով՝ գերազանցապես իրապաշտության շարժման տիրույթներում: Բնականաբար, ժանրի կառուցվածքային-թեմատիկ ընդգրկումները բևեռանում էին կյանքի առաջնային ու հրատապ հատվածներում՝ մի կողմից սոցիալ-բարոյաբանական խնդիրների արձարծումները, մյուս կողմից՝ հոգեբանական թափանցումների խոհափիլիսոփայական ոլորտները: Այսպես՝ ուժունականներին սկզբնավորված պանդխտության խնդիրը (Հրանդ) անմիջապես արձագանք է գտնում «Արևելյան մամուլի» փոքր արձակի ձևաբանական-գեղարվեստական կառուցյան սոցիալական, բարոյական, հոգեբանական ազդեցությունների գրանցումը դառնում է պարբերականի փոքր արձակի էական տարրերից մեկը: Այս պարագային ընդունված ժանրային կառուցյը պատկերն է: «Շուշան» ծածկանունով հեղինակի «Տոնիկ» ստեղծագործության մեջ հետաքրքիր փորձ է կատարվել մեկտեղելու սյուժետային կառուցյի և պանդխտության երեսութիւ ամբողջականացման սկզբունքները: Պատկերի հոգեբանական հանգույցում դրվում է օտարությունից վերադարձ մարդու (Տոնիկ) և կնոջ հանդիպման պահը: Գեղանի ու մանկամարդ Բուլբուլը հարսանիքից անմիջապես հետո հրաժեշտ է տալիս իր ամուսնուն՝ Տոնիկին, որը գնում էր օտար ափեր՝ դրամ վաստակելու: Բավականին ժամանակ էր անցել, իսկ Տոնիկը դեռ չէր վերադարձել: Հեղինակը զուգահեռ գծերով պատկերում է թե՛ Բուլբուլի, թե՛ Տոնիկի կարոտի և սպասման վիճակները: Վերջապես Տոնիկը վերադառնում է և կնոջը ներկայանում որպես ամուսնու ընկեր, որը նրանից լուր է բերել: Կինը չի ճանաչում ամուսնուն: Պատկերի պարտին անակնկալը բացահայտվում է, և ընդհատված կյանքը շարունակում է իր հովկերգական ընթացքը: Նմանատիպ մի սյուժե է ներկայացնում Թոռնիկ-Աղազարի «Կյանքի պատկերներ» նորավեպը, ուր մեկ գիշերվա նկարագրության սահմաններում (կինն ու զավակը ահավոր պայմաններում մեկ սենյակի մեջ մի կերպ ծվարած անընդհատ սպասում են պանդուխտ հոր վերադարձին) ամփոփված են պանդխտության սոցիալական չարիքները: Ուուբեն Զարդարյանի «Զավակը» վիպակում պանդուխտ որդուն գտնելու համար մայրը տառապանքի ուղիներով հասնում է քաղաք, վերջապես գտնում է զավակին, որը սակայն դարձել էր գինեմոլ և աղավաղվել հոգեպես:

Ժանրի դիմագծի կարեւորագույն հատկանիշներից են նաև բարոյականի անդրադարձումները՝ ամուսնություն-ապահարզան, համայնք-եկեղեցի, կրթություն, բարեգործություն և այլն: Այսօրինակ ստեղծագործություններում առավելագույնս ընդգծվում են գրական զանազան դպրոցների գեղագիտական և պոետիկական սկզբունքները՝ ոռմանտիկական տարերից և իդեալի բախումից մինչև հուգավառ սանտիմենտալ տողանցումները, պարզունակ արձանագրումներից մինչև հոգեվերլուծության նախաքայլեր:

Հստ ուղղվածության՝ բազմագանակ են նաև զուտ սոցիալական մոտիվի փոքր արձակ ստեղծագործությունները (օրինակ՝ Ղուկաս Վարպետյանի «Վերջին կամքը», Հակոբ Տեր-Հակոբյանի «Տղու հոգին»): Վերջապես, ժանրի գործնական-կիրառական բնույթը պետք է հագուրդ տար նաև զանդվածային ճա-

շակին, ունենար իր ժամանցային արտահայտությունները, որ «Արևելյան մամուլի» էջերում դրսելորվեց դետեկտիվ-արկածային և, այսպես կոչված, «քրեական-ոստիկանական» ստեղծագործությունների ձևով։ Այս առումով հանդեսի ուշագրավ հրապարակումներից է Գնելի «Հայրասպանը», որտեղ, սակայն, գրականության ուտիլիտար հեքը զուգադրվել է էդիպյան բարդույթի արքետիպին։

Ժամանակի ընդհանրական դիմագծի տիպաբանությունը համակարգվում էր քննական տեսություններում, որոնք «Արևելյան մամուլում» թեև չեն ունեցել բացարձակ և անխառն դրսելորւմներ (հոդված, ուսումնասիրություն, տեսական ակնարկ և այլն), սակայն բուն ժանրային ըմբռնումների սահմաններում գոյագորել են գրական որոշակի ըմբռնումների կանոնակարգված համակցություն։ Այս առումով անհրաժեշտ է նշել մի կարեոր առանձնահատկություն, որն ընդհանրապես բնորոշ է 1880-1910-ական թթ. արևմտահայ գեղարվեստական փոքր արձակին։ բազմաթիվ ստեղծագործություններ ունեն ժանրային տիպ ակնարկող ենթավերնագրեր։ Այս իրողությունը սոսկ լրագրային ոճի պարտադրանք չէր, այլ իր մեջ կրում է ժանրի (նրա տարատեսակների) ինքնորոշման իրողությունը։

Հստ ժամանակի գրական մտայնության՝ «Արևելյան մամուլը» ևս փոքր արձակը ստորաբաժանում է «վիպակների» և «նորավեպերի» («վիպակի» գդալի գերակշռությամբ՝ Ղեռնդ, Միհրան Վարպետյան, Գրիգոր Խանցյան, Տիգրան Հիրամ և այլք)՝ ըստ էության դրանց մեջ չղնելով որևիցե տարբերություն թե՛ ծավալի, թե՛ կառուցվածքի և թե՛ բնագիրը կազմակերպող սկզբունքների առումներով։ Որոշ ստեղծագործություններ, իբրև խորագիր, տարբեր ձևերով կիրառել են «պատմություն» ենթախորագիրը կամ դրա ածանցյալը՝ հիմնականում կոչելով դրանք «իրական»։ Հանդիպում են նաև «Կնոջ մը պատմություն», «Պարզ պատմություն» ձևերը, որ դրական նոր շարժման անմիջական ներազդեցության հետևանքն է՝ արդեն վերնագրի լրատվության մեջ թանձրացնելով օրվա կյանքի գեղարվեստականացման հայեցությունը։ Այսպիսով՝ «Արևելյան մամուլը», գեղարվեստական փոքր արձակի վերաբերյալ կիրառելով «նորավեպ», «վիպակ», «պատմություն» հասկացությունները, միաժամանակ տեղ էր տալիս նաև փոքր արձակի պարականոն ձևերին, հատկապես բանահյուսական ավանդույթներին՝ «Ավանդավեպ» (հանդիպում է նաև «Հովվական ավանդավեպ» տարբերակը) բնորոշմամբ՝ Հ. Փափազյան, Տ. Գասպարյան, Ղեռն Մեսրոպ։

Նորավեպ թե վիպակ՝ ժանրի գարգացման ժամանակաշրջանը հեշտ ու թեթև չեղավ ընդհանրապես արևմտահայ գրականության մեջ։ Մի որոշ տեսակետ փոքր արձակի նոր կերպը համարում էր անբարոյական գրականություն։ Ընդդիմախոսները ոչ միայն բարոյաբանական արժեքայնության տիրույթներում էին բացասում նորավեպի լինելիությունը, այլ նաև՝ զուտ ձևաբանական, կառուցվածքային առումով։ Փոքր արձակի արդիական կերպն ու բնույթը չէր ընդունվում, և այս պարագայում «Արևելյան մամուլը» անվարան նորավեպի պաշտպանության դիրքերում էր։

Այս առումով ինքնին ուշագրավ է պարբերականի նորավեպագիր հեղինակ-

ներից Հարություն Ալփիարի «Անոնց բարոյականը», որ նա նվիրել էր Գրիգոր Զոհրապին (պերճախոս ձոն, որ անմիջապես բացահայտում է դիրքորոշումը): Հողվածի շարժառիթը գեռևս 1893 թ. «Մասիս» հանդեսում հեղինակի հրատարակած «Վերոնիկին ծնրակապը» հումորախառն, սրամիտ նորավեպի շուրջ նորոգված կրքերն էին: Եվ ահա, ութ տարի անց, կրկին բարոյաբանական ծածկույթի ներքո արշավ էր սկսվել փոքր արձակի գեմ: Հենց սրանով է պայմանավորված Ալփիարի գրությունը: Հիշելով «Վերոնիկին ծնրակապի» բացասական անդրադարձները, ծաղրելով գրականության նկատմամբ ունեցած բրածո կաղապարները՝ երգիծաբաննը խտացնում է ընդդիմախոսների մտայնությունը. «Քանի որ, փառք Աստուծո, ասանկ գրելու հարմարություն ունիս, փոխանակ նորավեպ է ինչ խասախաթա է գրելու, վաճառականության վրա գրե, աշխարհագրության վրա գրե, աստվածաբանության վրա գրե, տնտեսագիտության վրա գրե, ես ի՞նչ գիտնամ, իշտե ասանկ բաներուն վրա գրե, որ կարդացողն ալ գոնե օգուտ մը տեսնա, բան սովորի, կը հասկանա՞ս: «Թայմզ»ը նայե, ատանկ նորավեպ բաներ կը դնե: Մեղք ենք, մեղք:

Զոհրապն է եղեր, Լևոնն է եղեր (նկատի ունի Լևոն Բաշալյանին – Գ. Հ.), դուն ես եղեր, գրիչը ձեռունիդ առնելուդ պես, հայտե պապամ նորավեպ, մութլախ քորթեզանություն, սիրահարություն կը քարոզեք, հիեռ-միեռ բաներ, վազ անցեք ախապար, կարդացողները մինակ մենք չենք, անդին՝ չոլախ-չոճուխ ալային կա, արյունին կը մտնաք կոր, անոնց ալ մեղք է»: Հանդեսում Ալփիարի սույն գրության տպագրությունը արդեն հստակ արտահայտված դիրքորոշում էր, նամանավանդ, եթե նկատի ունենանք այն հանդամանքը, որ XX դարասկզբից խմբագրությունը, որպես օրենք, առաջնորդվում էր նախ՝ տպագրվող նորավեպերի, վիպակների գեղարվեստական արժանիքներով, ապա նոր՝ արծարծած գաղափարների համակարգով:

Ներժանրային համակարգում փոքր արձակի տեսակների ենթակարգման սկզբունքները բավականին պայմանական էին և, ի մասնավորի, «նորավեպ» ու «վիպակ» սահմանումների նույնությունը: Պարբերականում առանց ձևաբանական տարբերությունների բազմաթիվ ստեղծագործություններ են տպագրվել մեկ այս, մեկ այն անվան տակ: Այս առումով ուշագրավ է Միհրան Վարպետյանի «Պապիկ» ստեղծագործությունը, որն ունի «վիպակ» ծանուցումը: Պապիկը հրաշալի, համբավագոր խոհարար էր, որ իր արհեստն ընկալում էր ստեղծագործության պես և ընդգծված քամահրական վերաբերմունք ուներ կանանց նկատմամբ: Սակայն էրինի հայացքը նրան գերում է, սիրահարվում է, սկսվում են տեսակցություններն ու ժամադրությունները: Մի առիթով Պապիկը նկատում է, որ օրիորդի տնից ինչ-որ երիտասարդներ են գուրս գալիս, սակայն էրինը կարողանում է միշտ նրա կասկածները փարատել՝ պատճառաբանելով, թե այդ երիտասարդները բարեկամներ են: Մի անգամ էլ, երբ Պապիկը գալիս է հերթական ժամադրության, որպեսզի արդեն կոնկրետ պայմանավորվեն նշանադրության համար, գուրը փակ է գտնում, հարևանուհուց իմանում է, որ այդ օրը իր սիրուհին ամուսնանում է ոմն դարբնի հետ: Դրանից հետո, երբ Պապիկը կնոջ մասին որեկցե բան է լսում, դեմքը խոժոռում է ու ասում, թե կինը «էրիկ մարդուն պատիժ մըն է»: Ծավալով փոքրիկ, անեկդոտանման

պատումով և անակնկալ հանգուցալուծմամբ այս գործը լիովին բավարարում է նորավեպի դասական ընկալումներն ու պահանջները, սակայն, ինչպես արդեն վկայեցինք, հրատարակվել է «վիպակ» խորագրի ներքո:

Պողիտիվիզմի, փորձարարական ու կլինիկական հոգեբանության ազդեցությունների գրական փոխաձեռումները ինչպես եվրոպական, այնպես էլ հայ գեղարվեստական արձակում բնապաշտության (նատուրալիզմ) իմացաբանական առաջադրույթների անդրադարձներ էին, որոնք փոքր արձակում ստեղծում էին, այսպես կոչված, «բժշկի պատմած» նորավիպային բավականին տարածված արտահայտչաձևերը (*Մոպասան, Բուրժե, Զոհրապ, Բաշալյան և այլք*): Այս բնույթի կատարյալ նորավեպերից է Զոհրապի «Տալիան»: Նորավեպի տպագրությունից վեց տարի անց Դևոնդը հանդեսում հրատարակում է «Լուիզ ինչո՞ւ չամուսնանար» վիպակը, որ գրեթե նույնությամբ կրկնում է Զոհրապի գործը: Տեղ-տեղ ազդեցությունն այնքան բացահայտ է, որ պատճենված են «Տալիայի» պատկերները, բառապաշարը: Բացի առարկայական ազդեցության իրողությունից՝ երևույթը մատնանշում է նաև այն հանգամանքը, որ «Արևելյան մամուլը» անմասն չէր արևմտահայ փոքր արձակի հիմնական կենտրոնացումներից, ժանրային այն կաղապարներից, որոնք հատկապես 1880-90-ական թթ. գեղարվեստականացման էական դրսեւորումներից էին:

Պարբերականում լայն տարածում ունեին նորավեպ-նամականիները (հատկապես մեծ է Հարություն Ալիքիարի երախտիքը), դիմանկար-նորավեպերը և, այսպես կոչված, խոհական նորավեպերը:

Ժանրի գեղարվեստական համակարգի տեսական դրույթներում էական տեղ էր հատկացվում լեզվի հարցերին՝ հայերենի անաղարտության պահպանում, ոճի ազգային ձևերի հարստություն և այլն, իրողություն, որ XX դարի սկզբին բուռն բանավեճի վերածվեց «Արևելյան մամուլ» և «Սասիս» հանդեսների միջև: 1900 թ. հունիսի 1-ի համարում «Արևելյան մամուլ» տպագրեց Կարապետ Ստեփանյանի «Գրիգոր Զոհրապ, Սարապետ-Փոթուրլըն» հոդվածը, որի շարժառիթը պոլսեցի գրողների լեզվական կուլտուրայի հարցն էր. «Համբերեցինք, մինչև իսկ քարանալու աստիճան համբերեցինք տեսնելու համար թե պոլսեցի հայ գրողներու ստվար մասը մինչև ո՞ւր պիտի հալածե հայ լեզուն: Պիտի համբերեինք տակավին, թերևս բնավ չպիտի խոսեինք, եթե իրենց այս ընթացքով հետզհետե փճացնելու չնկրտեին մեր լեզուն»: Ընդգծելով այն հանգամանքը, որ Զոհրապը «պարագլուխ նշանակված է հայ գրականության», Ստեփանյանը ջանում է փաստարկել գրողի լեզվական զարտուղությունները, ապա և անցնում գեղագիտական-գաղափարական խնդիրների: Սույն ուսումնասիրության շրջանակներից ելնելով՝ չենք մանրամասնում ո՛չ բանավեճի արծարծած խնդիրները, ո՛չ էլ անդրադարձները (հակառակ փաստարկներ էին բերում Տիգրան Արքիարյանը, Արամ Անտոնյանը) և ցանկանում ենք միայն նշել, որ Ստեփանյանի, ինչպես մատնանշած նորավեպերի պարագայական վերլուծությունները, այնպես էլ ընդդիմախոսների բացարձակ պաշտպանականները, այնուհանդերձ, ունեին մի ներքին միասնականություն և օբյեկտիվորեն նպաստում էին գեղարվեստական փոքր արձակի լեզվի կատարելագործման խնդրին: Ինչ վերաբերում է Կարապետ Ստեփանյանի գեղագիտական հարցադրումնե-

ըին, ապա այս պարագային էականը Ստեփանյան-Նորավիպագրի անհատական մոտեցումն էր, որ իրականության գրականացման ելակետը դիտում էր համընդհանուր բարոյականի տեսանկյունից: Բնորոշ է «Զարթնում» ստեղծագործությունը, ուր Փարոսյան ընտանիքի մարդկային հատկանիշների պահպանումը, թույլին օգնելու պատրաստակամությունը դառնում են հոգևոր և նյութական վերելքի տիրապետներ: «Արեելյան մամուլի» փոքր արձակի գեղարվեստական հղացումները, բնականաբար, կենտրոնանում էին զգացմունքների հոգեբանական անքննելի վիճակների արձանագրության, սիրո բավիղներում անհեթեթի վերհանման, բարքերի նկարագրության վրա: Այս առումով բնորոշ է Տ. Հիրամի «Սիրահա՞ր թե հիվանդ» վիպակը: Վարդը իր համար մի կատարյալ իրականություն է ստեղծել, Ալիսը և իրենց փոխադարձ սերը: Թեև նրա ընկեր Վուամը անընդհատ իրեն համոզում է, որ դա տեսիլք է, խաբկանք, Վարդը մնում է իր կարծիքին: Ավելին, երբ իմանում է, որ Ալիսը պատրաստվում է հոր հետ Եվրոպա մեկնել, կարծում է, թե իր նկատմամբ ունեցած զգացմունքն է նրան տկար դարձել, և օրիորդը մեկնում է կազդուրվելու: Վարդը վստահ է սիրո փոխադարձության մեջ, նրան ոչ մի փաստ, ոչ մի հորդոր զորու չէ վերադարձնել իրականություն: Գործի բերումով երիտասարդը մեկնում է Աթենք, վերադարձին իզմիրի ծովածոցում չոգենավից նկատում է, որ Ալիսը նավակով ամուսնու հետ մեղրալունի ճամփորդության է մեկնում, և օրիորդը, «անտեղյակ Վարդի նվազելու պատճառին, ինքն ալ ուրիշներու պես ըսավ. «Խեղճըն հիվանդ ըլլալ պետք է, ցավալի է»: Այսպես հանգուցալուծվում է Վարդի սիրո պատումը: Իրականությունը վիպակի սյուժեում ձև է առնում պատրանքառարկայություն շրջապտույտում, ուր կյանքի փորձառությունը դառնում է ապրված օրերի երանելի բաղձանք՝ հոգեբանական նոր որակ տալով: Նույն հեղինակի «Երկու զոհեր» ստեղծագործության Արամի և Սիրանույշի ողբերգական սիրահարության մելանխոլիկ-սեթեեթային պատումը ամուսնության նկատմամբ ունեցած պայմանագրական կեղծ արժեքներն այպանելու պաթետիկ քարոզչությամբ է համակված (Արամի ծնողները դեմ էին, որ իրենց որդին ամուսնանա ցածր խավի աղջկա հետ, և բոլոր միջոցներով նրանց կապը խափանում են): Հարկ է նշել, որ ընդհանրապես ամուսնության խնդիրը (խառն ամուսնություններ, ապահարզան և այլն) «Արեելյան մամուլի» բարքագրական փոքր արձակում բավականին մեծ տեղ է գրափում: Բանն այն է, որ պարբերականը, հրատապ համարելով ազգային կյանքի բարոյական հիմքերը, անդրադարձել է դրանց՝ հաճախ անտեսելով նյութի յուրացման գեղարվեստական որակը՝ մի դեպքում՝ գրեթե ստեղծագործական խմբագրումով չանցած դեպքերի նոթագրումներում (Գ. Տ. Մեսրոպյան, «Բարեկենդանի խաղը»), մի այլ դեպքում՝ բարբերի շրջադասության (ինվերսիայի) հանգույցում (Վահան Հարությունյան, «Նայվածք մը»), ես-ի բարոյական փոխակերպությունը արժեքների վայրիվերումների արձանագրություններում (Գնել, «Իրիցկինը») և այլն:

Հատկանշական է, որ հանդեսի ժամրային շրջանակը հատկապես 1900 թ. մեծ տեղ է տալիս գավառի գրականության ներկայացուցիչներին, որոնք նորավեպի, վիպակի և պատկերի ձևով փոքր արձակ են բերում բնաշխարհի մարդկանց կենսոլորտը՝ կենցաղ, հոգեբանություն, սովորություն և այլն:

«Արևելյան մամուլի» նորավիպագրության գեղարվեստական հղացումների կենտրոնացումն այնուհանդերձ երկակի ուղղվածություն ունի՝ անհատը նախախնամության, ճակատագրի փորձությունների հորձանուառում և ես-ի հոգեբանական դրսեորումների խորաքնին արձանագրությունը։ Այս առումով ներկայանալի ստեղծագործություններից են Հրանտ Ասատուրի «Վարդեփունջը» և Լեոն Մեսրոպի «Սեոր Մատենը»։

«Վարդեփունջը», որ Ասատուրի նորավիպագրության լավագույն արտահայտություններից է, նախախնամության և անհատի փոխհարաբերակցության սեեռումում պատկերագրում է մարդկային այն տիպը, որ ճակատագրին ընդառաջիկիս չունի կրավորական, սպասողական կեցվածքը։ Մնալով իր ինքնության ներդաշնակության մեջ՝ նա նպատակամղում, ուղղություն է տալիս նախախնամությանը։ Այս գեղագիտական-բարոյաբանական իդեալի տեսանկյունով է Ասատուրը կառուցել նորավեպի սյուժեն ու պատումային մակարդակը։ Վարդերի փնջի գործառությունները ոչ միայն ստեղծագործության կոլիզիաների ու հանգուցալուծման պարագայական անհրաժեշտություն են, այլ նաև՝ նախախնամության, ճակատագրի փոխարերություն, որն իր շրջապտույտում վերագտնում է նախնական ներդաշնակությունը։ Օրիորդ Ազնիվը մեծագույն դժվարությամբ խնամում է հիվանդ մորը, վերջինս որոշում է տեղափոխվել իդմիր եղբոր մոտ՝ վերջնականապես ապաքինվելու և աղջկան կագդուրելու նպատակով։ Շնորհալի երիտասարդ Վարդանը բուռն սիրահարված է պոլսեցի նշանավոր ընտանիքներից մեկի դստերը՝ Հայկանուշին, գնում է մի վարդեփունջ և տոմսակով ուղարկում օրիորդին։ Նալյանների միակ զավակ Հայկանուշը որոշում է ամուսնանալ մեծահարուստ Թուխիկյանի հետ և Վարդանի վարդեփունջը այդպես էլ հետ է վերադարձնում։ Երիտասարդը այն դեն է նետում, իսկ Ազնիվը, որ երազում էր մի այդպիսի փունջ մորը նվիրել, պատահականորեն գտնում է այն ու նվիրում մորը։ Անցնում է երեք տարի, Վարդան Հովհաննիսյանը հայտնվում է իզմիրում, այնտեղ էին նաև Ազնիվն ու մայրը։ Երբ օրիորդի մայրը մեկ անգամ իրեն վատ է զգում, պատահաբար ներկա գտնվող Վարդանը օգնում է աղջկան, նրանք մտերմանում են։ Երիտասարդը մի ուրիշ անգամ փրկում է Ազնիվին հրդեհից։ Մանոթությունը վերածվում է համակրանքի։ Ազնիվը երիտասարդին պատմում է իր գտած վարդեփնջի մասին, որը նրան պետք է երջանկություն բերեր, չեշտում է, թե ցարդ ժապավենը պահում է հուռութքի պես։ Մեկ շաբաթից նրանք ամուսնանում են։ Նախախնամության (վարդեփունջ) կերպը փոխաձեւվում է գոյության վիճակի։

Լեոն Մեսրոպի «Սեոր Մատենը» լույս է տեսել «հոգեբանական վիպակ» խորագրով։ Այս վիպակը XX դարի 900-ական թվ. արևմտահայ փոքր արձակի արժեքավոր ստեղծագործություններից է, որտեղ ըստ ամենայնի գրականացվել է թե՛ ես-ի հոգեբանական շրջադասությունը, թե՛ զգացմունքի փոխաձեւությունն իբրև անհատական ներաշխարհային երկփեղկվածություն։

«Արևելյան մամուլի» փոքր արձակում հատկապես առանձնանում են Միհրան Վարպետյանի, Ղուկաս Վարպետյանի, Կարապետ Ստեփանյանի, Հարություն Ալփիարի և Զապել Եսայանի համապատասխան գործերը։ Հանդեսի ժանրի պատմության ու տեսության անդրադարձը թերի կլինի, եթե, թեկուզ

Համառոտ, չանդրադառնանք այս հեղինակների նորավիպագրությանը:

Այս հնդյակից երեքը՝ Միհրան Վարպետյանը, Ղուկաս Վարպետյանը և Կարապետ Ստեփանյանը, գերազանցապես իրենց փոքր արձակի ստեղծագործություններով հանդես են եկել պարբերականում, և անվարան կարելի է նրանց անվանել «Արևելյան մամուլի» նորավիպագիրներ: Հարություն Ալփիարը հատկապես 1900-ական թթ. հանդես էր գալիս «Արևելյան մամուլում»: Որոշ իմաստով Եսայան գրողի կայացման ընթացքում էական նշանակություն է ունեցել «Արևելյան մամուլը», այստեղ է նա տպագրել իր առաջին ծավալուն ստեղծագործություններից «Կեղծ հանճարներ» վեպը և մի շարք նորավեպեր:

Ղուկաս Վարպետյանի նորավեպերի պատումը խարսխված է դրության կոմիզմի ընդգծման վրա և նկատելի է Օ՛Հենրիի աղղեցությունը նրա մի շարք գործերում: Արժե հիշատակել հատկապես «Մերժվա՞ծ թե ընդունված» և «Սուտ լուր» վիպակները:

Հարություն Ալփիարը, ինչպես իր «Ֆանթեզիներում», «Քմածին ստուգաբանություն» խորագիրը կրող շարքերում, քրոնիկներում և հոդվածներում, այնպես էլ նորավեպերում, վիպակներում և պատկերներում, շարունակում է բարքերի և սիրո խճանկարի երգիծական և տրագիկոմիկ պատկերագրումները (նշենք «Ապտուի խոստովանանքը», «Ժամադրությունը», «Մինկաբուրեն փեսացուն», «Ակն ընդ ական», «Գլխուս եկածներեն» ստեղծագործությունները):

«Արևելյան մամուլում» Զապել Եսայանի հրատարակած փոքր արձակ ստեղծագործությունները արևմտահայ նորավիպագրության համակարգում կարևորվում են պայմանականորեն ասած, «Փարիզյան» շարքով, որտեղ այս կամ այն հոգեվիճակի, դրության կենտրոնացումներում հեղինակը գրականացրել է այդ քաղաքի և մարդկանց, հատկապես ուսանողության առօրյան («Ժյուլի», «Սատարոֆ»):

Այսպիսով, 1880-1909 թվականներին «Արևելյան մամուլում» լույս տեսած գեղարվեստական փոքր արձակը բարերար աղղեցություն ունեցավ արևմտահայ նորավիպագրության պատմական համակարգում:

## ՆՈՎԵԼԱՅԻՆ ԶԵՎԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՊՈԵՏԻԿԱՅՈՒՄ

**Գ**րականության պատմությունը վաղուց արդեն ճշգրտել է «Անհետացած սերունդ մը» վեպի տեղն ու նշանակությունը ոչ միայն Զոհրապի ստեղծագործության, այլև արևմտահայ արձակի մեջ առհասարակ: Տվյալ դեպքում վեպը մեզ հետաքրքրում է որպես ստեղծագործական փորձարարության որոշակի փուլի արտահայտություն, որտեղ արդեն ըստ էության սկզբնավորվում են նովելային ձևերը, ընդգծվում է նովելային մտածողությունը: Այս տեսակետից «Անհետացած սերունդ մը» վեպը XIX դարի հայ վիպագրության եղակի օրինակներից է, և նրա դերը ինչպես գրական-պատմական, այնպես էլ տեսական առումով կարևորվում է:

«Պոլսական վեպ» ենթավերնագիրը ինքնորոշում է երիտասարդ արձակագրի առաջին ծավալուն ստեղծագործության գեղարվեստական աշխարհը: Զոհրապը Պոլսի տարածական սահմաններում քննում և հայտնաբերում է այն խնդիրները, որոնք հետագայում նրա գրական ժառանգության տիրապետող արժեքները պետք է դառնային: Վեպում գեղաձեելով Պոլիսը, պոլսական հոգեբանությունը՝ Զոհրապը կանխորոշում էր իր գրողական հետաքրքրությունների սահմանները, ճշգրտում նովելների պոետիկայի «աշխարհագրությունը»՝ մեծ քաղաքն իր արվարձաններով և այդ քաղաքի խայտաբղետ իրականության ամենատարբեր դրսերումները: Պոլիսն ինքնին վեպում ապրում է ստեղծագործական փորձարարական շրջան՝ նովելների պոետիկայում հստակ, տարրուշած սահմաններով գեղարվեստականացվելու համար:

Ճշգրտության և «գիտականության» պահանջները իրապաշտության պոետիկայի անհրաժեշտ առաջադրություններից են, ուստի վեպում գրողն ընդգծում է կենսական նյութի խոր ուսումնասիրության անհրաժեշտությունը, այնուհետև մեկ նախադասությամբ՝ «Ուսանողն՝ ամեն բանի փափագող ու ամեն բանե զուրկ՝ հեգնող ու դժգոհ անձնավորություն մ'է»<sup>1</sup>, որը վեպի համակարգում ունի հավաքագրող, բնութագրող գործառնություն, անցնում է դրա գեղարվեստական իրացմանը: Սակայն գործողությունները ուսանողական կյանքի շրջանակներում սահմանափակվում են միայն վեպի առաջին հատվածում, որը սոսկ նախադրական գործառնություն ունի:

Գրողն անդրադառնում է ուսումնական, հասարակական, սոցիալական, բարոյական, կրոնական, ազգային կյանքի բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրների, բարքերի, որոնք դեռևս պարզ հարցագրումներ են և գեղարվեստական ուրակ պիտի դառնան միայն նովելների պոետիկական համակարգում: Այսպես, նկարագրելով Սուրբիկի ուսումնառության շրջանը, գրում է. «Հայ-Հոռմեական բարեկամուհի մ'ունեցեր էր որ Փանկալթիի մեջ ֆրանսական գիշերօթիկ

1 Գրիգոր Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1962, էջ 8 (այսուհետև բոլոր հոդումները՝ տեքստին կից):

վարժարան մը կը հաճախեր, տեսակցություն մ'ունեցան օր մը և երկու աշակերտուհիները փոխադարձաբար իրենց առած ուսմանց վրա խոսեցան. Փերայի օրիորդն արդահատող կարեկցությամբ մը հարցուց Սուրբիկին առած դասերեն ու խրոխտ մեծամտությամբ մի առ մի թվեց այն կարեոր գիտելիքները զորս ինքը կ'ուսաներ», և ապա՝ «Ֆրանսայի հետին գետակը, սարն ու ձորը, ամենեն աննշան ավանը ծանոթ էին այս հայուհիվույն՝ որ իր հայրենան Արարատը և չէր ուզեր գիտնալ» (16-17): Արձանագրելով փաստը՝ Զոհրապն անմիջապես անցնում է բարոյական եզրակացության, ուր հրապարակախոսական մերկությամբ երևան է գալիս ութսունականների ազգային ու սոցիալական գաղափարաբանությունը: Պատահական չէ, որ Սուրբիկի ծանոթուհին գործողությունների ոլորտից դուրս է մղվում: Սակայն այս և այսօրինակ բազմաթիվ այլ փաստեր փորձարարական ճանապարհ են անցնում, զտվում և նովելների գեղարվեստական համակարգում ներդաշնակվում են տեքստի հետ, ձեռք բերում պոետիկական բոլորովին նոր որակ: Հիշենք «Արմենիսայի», «Սառայի» համանուն հերոսներին:

Նովելի պոետիկայում գեղարվեստական մեթոդի կանխադրույթները տեքստ են ներթափանցում ո՛չ թե պարտադրված, այլ գեղարվեստորեն իրացվում են հենց տեքստային մակարդակում՝ դառնալով «Խղճմտանքի ձայներ», «Կյանքը ինչպես որ է» և «Լուռ ցավեր» սահմանումներով արտահայտված գեղագիտական դիրքորոշումներ: Սուրբիկի ծանոթուհու գաղափարական ուրվագիծը նովելների համակարգում վերագոյափորում է ազդային նկարագիրը ամբողջովին կամ էլ մասամբ կորցրած, այդ ողբերգությունը չգիտակցող, աշխարհաքաղաքացի կնոջ լիարժեք նովելային կերպարում: Վեպի նմանատիպ ակտիվության «օջախներից» մյուսը կրոնական հարցերի անդրադարձներն են: Մեկ-երկու էջում խելագարեցնելով Սեղրակին, ընդգծելով նրա հոգեկան անմիթար վիճակը՝ Զոհրապը յոթ ու կես էջ է նվիրում նրա թաղման նկարագրությանը, այն էլ այն գեպքում, երբ վեպի առաջին հատվածը ընդամենը 38 ու կես էջ է, և թաղման մանրամասները ոչ մի գործառնություն չունեն վեպի հետագա զարգացման համար: Վավերական, իրական գույներով և հավաստիությամբ նկարագրելով Սեղրակի հուղարկավորություն՝ Զոհրապն ըստ էության հրապարակախոսական բանակուիվ է մղում կրոնական հարցերի վերաբերյալ, ընդգծելով իր անհանդուրժողականությունը կեղծավորության, պայմանականությունների նկատմամբ: «Երեսուն տարվան միջոցե վերջը միեւնույն աններող գաղափարները կը տիրեին, և Սեղրաքի թաղումը Սամաթիայեն, ետի Քուլեեն ու շրջանակներեն ժողված ու հավաքած էր ստորին անկիրթ ամբոխ մը, որ հաստատ կերպով դիմագրել որոշած էր անոր Հայոց Գերեզմանատան մեջ ամփոփելուն» (33): Անդրադառնալով այս հարցերին՝ Զոհրապը փաստորեն վեպի սահմաններում ճշտում էր նովելների համակարգում պատումի տիրապետող իրացումներից մեկի՝ մարդ-հավատ շղթայի համասերը: Ըստ էության վեպի համապատասխան հատվածը գեղարվեստական սկզբնաղբյուրի նշանակություն է ձեռք բերում նովելների պոետիկայի համար: Հիշենք «Մագդաղինե» նորավեպում հուղարկավորության տեսարանը, որը տառացիորեն համընկնում է վեպի համապատասխան հատվածին:

Ազգային-սոցիալական իրողությունների իրական պատկերներին զուգընթաց, Զոհրապը փորձեր է կատարում նաև գեղարվեստականացնելու մարդու, անհատի էությունը։ Այստեղ նրա ստեղծագործական հնարավորությունները անհամեմատ ընդլայնվում, մեծանում են, և պատահական չէ, որ այդ սկզբունքը նովելների պոետիկայում տիրապետող է դառնում, սոցիալականը ըստ ամենայնի տարրալուծվում է անհատի ես-ի մեջ։

Վեպում հասարակությունը դիտվում է որպես մի ամբողջական մեխանիզմ, որի բոլոր տարրերը փոխադարձաբար պատճառականացված են։ Բարոյական հեղաբեկումները քննվում են հենց այս տեսանկյունով։ Այս առումով հատկանշական է Տիգրանի և Սուրբիկի հարաբերությունների հետ կապված բամբասանքների և զրպարտությունների հանդեպ հեղինակի գնահատական վերաբերմունքը։ «Այս կերպ էին ահա խոսակցությունները հասարակության մեջ. այս բամբասողներեն գոնե մին՝ բան մը գիտե՞ր կամ թե ինքը կը հավատա՞ր իր ըսածներուն բնավ։ Նախանձը մեկ կողմէն, հետաքրքրությունը մյուսեն միացեր էին զրպարտությունը ու քսությունը ծավալելու այնպիսի անձերու դեմ զորս թերևս շիտկե շիտակ չէին ճանչնար» (106)։ Սակայն եթե վեպում օբյեկտիվ իրողությունն ու գրողական վերաբերմունքը հանդես են գալիս պարզ համադրությամբ, ապա նովելների պոետիկայում օբյեկտիվ և սուբյեկտիվ սկիզբները ձուլվում են, վերաճում պատկերի ներքին անբաժանելի հատկանշի։ Մյուս կողմից՝ եթե վերևում բերված օրինակի մեջ բամբասանքի և քսությունների անմիջական կապը վեպի գործողությունների հետ խիստ մեխանիկական և պատահական է, չի ենթադրվում վեպի ո՛չ էական և ո՛չ էլ երկրորդական որևէ հատկանշի, ապա նովելներում ներդաշնակվում է պատումին, կայուն փոխպայմանավորվածության մեջ է մտնում նովելի մնացած բաղկացուցիչների հետ։ Նկատի ունենք «Անդրշիրիմի սեր» նորավեպի համապատասխան հատվածները։

«Անհետացած սերունդ մը» վեպը Գրիգոր Զոհրապը բաժանել է երկու մասի։ Առաջին մասի վերնագիրը՝ «Սեղրաք», շատ բանով կանխորոշել է ստեղծագործությունը գլխավոր հերոսի անունով խորագրելու գրողի նախասիրությունը։ Այս մասում Սեղրակը սկսում և ավարտում է իր գործունեությունը։ Եթե Տիգրանի, Խոսրովի, Սուրբիկի պարագային դրվագայնությունն առկա է, ապա Սեղրակը ընձեռած սահմաններում ամբողջովին գեղարվեստականացվում է։ Սեղրակի պլանում, այսպիսով, վեպի առաջին մասը դրսկորում է նովելի կառուցվածքային հատկանիշներ և կարող է դիտվել իրեւ առանձին ստեղծագործություն։ Գրականագետ Զատոռնսկին, քնությագրելով այսպես կոչված նովելային վեպը, գրում է. «Նովելային վեպում կյանքի պատկերումը մասնատվում է։ Այն ո՛չ թե բուն գործողություն է, այլ լոկ դրա հնարավորության պոտենցիալ պայմանը։ Նովելային վեպն այնպիսի անշարժ իրավիճակների հանրագումար է, ինչպիսիք գոյանում են աչքի առաջ, եթե կինոժապավենը չի պտտվում ապարատում, այլ դիտվում է ձեռքով՝ յուրաքանչյուր «կագը» հրաշալի է, սրամիտ, հավաստի, դիպուկ կամ ոչնչացնող երգիծական, սակայն «կինոնկար» դեռչկա»<sup>2</sup>։ Զոհրապի մոտ ընդհակառակը, վեպի առաջին մասը ո՛չ թե ըմբռնվում

2. Д. Затонский, Искусство романа и XX век, М., 1973, с. 86.

է իբրև առանձին «կադր», այլ որպես ամբողջական ամփոփ «կինոնկար»՝ միաժամանակ ուրվագծելով զոհրապարան նովելների բազմաթիվ բաղկացուցիչներ՝ գեղարվեստական ինֆորմացիայի համառոտ սահմաններում առավելագույն խտացումներով և հագեցվածությամբ: Վեպի այս մասը թողնում է այսպես կոչված «ներդիր նովելի»<sup>3</sup> տպագորություն: Կարելի է ասել, որ ստեղծագործության քննվող հատվածը ոչ թե դասական վեպի մակարդակով ընկալելի մաս է, ինչպես Ֆլորենի, Դողերի, Կամսարականի, Երուխանի պարագային, այլ թե՛ տեքստային և թե՛ ընթերցողական մակարդակներում ընկալվում է իբրև առանձին ստեղծագործություն, որն իր ժամրային բնութագրով համապատասխանում է նորագեղին: Մոպասանի «Կյանքը» վեպի ստեղծման պատմությունից հայտնի է, որ այն նախապես գրվել է նովելների ձևով և այնուհետև միայն միակցվել, դարձել է վեպ: Մոպասանի հիմնարար խնդիրը վեպ ստեղծելն էր: Զոհրապի դեպքում իրողությունն այլ է. նրա վեպը փաստորեն նովելի ժամրային որոնումների արտահայտությունն էր: Հիշենք, որ գրողի բանաստեղծական և դրամատիկական փորձերը հաջողություն չէին բերել նրան:

Որոշակիորեն այլ կառուցվածք ունի վեպի երկրորդ՝ «Մոռացում» մասը: Այստեղ իբրև կենտրոն զարգանում է Տիգրան-Սուլբեկի գիծը՝ ինքնին տրոհվելով մի քանի հարաբերականորեն անկախ նովելային միավորների:

Վեպի առաջին մասում գործողությունները կապվում են կաֆե-շանտանի հետ, մի հաստատություն, որ մտնում է հերոսների տարածական գործունեության ոլորտը: Թշում է, թե գրողը այստեղ առավել մանրամասնությամբ պետք է ծավալվեր, ստեղծեր գործողությունների լայն շրջանակ: Սակայն հեղինակը այն բնութագրում է ընդամենը մեկ նախադասությամբ. «Ամեն ոք գիտե կամ չգիտե թե ինչ է Քաֆե շանթան մը. – Հոս՝ տեղը չէ բարոյականի տեսակետով քննել այս գըսսանաց վայրերը. սա չափ հարկ է ըսել միայն, որ այս սրահներուն մեջ ամբոխը երկու մասի կը բաժանվի, մին որ սրահին մեջ, պարզամիտ ու ապշած, կունկնդրե կիսամերկ ու հրապուրիչ աղջկան մը երգերուն. ասի հանդիսատեսներուն նորեկ, դեռավարժ ու աղքատ մասն է. մյուսն որ արհամարհելով պարզ ունկնդրումի համեստ դերն, իր ժամերը կանցունե դերասանուհյաց հատուկ սրահներուն մեջ, այս դիցուհյաց մոտ ու ոռլեթի սեղանին քով, իր կյանքը բաժանելով ցոփության ու խաղամոլության մեջ» (10): Այնուհետև վիպական հյուսվածքը տեղափոխում է բոլորովին այլ մակարդակ: Պատկերի այդ գիշամիզը ներհատուկ է արձակի կարճ ձևերին, մասնավորապես նովելին:

Սեղմությունը, հակիրճությունը, ինչպես բազմաթիվ այլ դեպքերում, այնպես էլ որոշակի իրողության, փաստի թողած տպագորությունն ուժեղացնելու համար, տեքստում ենթադրում է ոչ թե երկար, ծավալուն արտահայտչամիջոցներ, այլ որևէ էական մանրամասնի ընդգծում, ընդ որում այնպես, որպեսզի չխաթարվի ժամամասնությունը:

3 Ծկլովսկու, Ցոմաշևսկու, Էջմիենքառամի և այլոց աշխատություններում «Աերդիր նովելմերի» գործանության ամենատարբեր դրակորումները հետազոտվել են: Գրականագետ Կվյատկովսկին հետևյալ ձևով է այն բնութագրում. «Ներդիր նովելը թեմպով և պուժեավագանությամբ պատմվածք է՝ գետեղված վեպում, վիպակում կամ պոեմում» (Ա. Կվյատկովսկի, Պոэтический словарь, М., 1966, с. 82):

«Եվրոպացիներն իգուր ջանացին բառ մը հասկնալ այս անսովոր արտասահնութենեն, մինչդեռ աշագնալուր ու որոտաձայն ծափահարություն մը երգին առաջին տունը կողջուներ: Երգիչ մը չէր նա, այլ ներշնչյալ ու գերագույն ուգի մը որ կիշխեր բոլոր ներկայից վրա. խրահին մեջ գտնվող բոլոր հայերն ուղի ելեր էին միևնույն զսպանակեն մղյալ. գերասանուհին Մայր Արաքսիի առաջին տունը երգեր էր» (10): Ինչպես տեսնում ենք, գտնված է ամենահականը. ոտքի կանգնելու փաստն ընդգծելով՝ Զոհրապը կարողանում է իրացնել ցանկալի գեղարվեստական էֆեկտը՝ սլացիկ, համառոտ և միևնույն ժամանակ տարողունակ: Սակայն հաջորդ էջում երկար-բարակ դատողություններ է անում լեզվի, ազգային ինքնագիտակցության մասին (էջ 11): Կարծես դա էլ գեռքիչ է, հերոսին (Տիգրան) պարզապես ստիպում է, որպեսզի նա յդ թեմաներով բազմիցս Ղալաթիայի եկեղեցու բակում ճառեր ասի: Այս ամենը ցույց է տալիս, որ զոհրապյան պատումը ուժեղ է այնտեղ, ուր դրանորվում է նրա նովելային մտածողությունը, և անհամեմատ թուլանում է, երբ միտում է վիպական ծավալայնություն: Տեղին է հիշել Էդիթ Ուորթոնի միտքը. «Երբեմն ասում են, թե կարճ պատմվածքների համար «լավ սյուժեիկը», եթե այն զարգացվի, միշտ «կծիք» մինչև լիիրավ վեպ: Առանձին դեպքերում հնարավոր է, որ դա այդպես է, սակայն աներկեցյելի է, որ այդ արտասովոր սկզբունքով չի կարելի տեսություն կառուցել: Յուրաքանչյուր «սյուժեիկ» (հենց իր՝ պատմողի դիրքերից) իր մեջ արդեն պարունակում է որոշակի հանձնարարված շրջանակներ, և գրողի բնածին շնորհքը հենց այն է, որպեսզի կողմնորոշվի՝ համապատասխանում են արդյոք տվյալ մարմնավորում պահանջող սյուժեին վեպի թե կարճ պատմվածքի սահմանները»<sup>4</sup>: Նովելների գեղարվեստական համակարգում Զոհրապն արդեն, որպես կանոն, չի տեղակայում ոչ խտրական քարոզներ, ոչ հայտարարություններ-գատողություններ, իսկ անհրաժեշտության դեպքում հեղինակային դիրքորոշումը ըստ ամենայնի ներդաշնակում է պատումի ներքին օրինաչափությունների հետ: Հիշենք, օրինակ, «Մագդաղինե» նորավեպը:

Առաջին մասի երրորդ ենթահատվածում գրողը գործողությունների ոլորտ է մտցնում նաև Սուրբիկին և դրանով իսկ վեպում գոյավորում է հերթական նովելը, որը սակայն քրանգմենտար բնույթ ունի: Այս հատվածը Սեղրակ-Սուրբիկի գուգագրության նովելային նախերգանքն է, թեև իբրև այդպիսին բավականին ձգձգված, երկարացված է: Նովելների պոետիկայում արդեն նախերգանք-նախապատմությունը հակիրճանում է, որոշ դեպքերում էլ՝ տարրալուծում նովելի մեջ:

Վեպի առաջին մասի նովելային անկյունաքարը հինգերորդ ենթահատվածն է: Շատ կարեւոր է, որ Սեղրակի աշխատանքային ողջ գործունեությունը, բավականին երկար մի ժամանակահատված, Զոհրապը տեղակայել է ընդամենը մեկ ու կես էջում՝ ըստ որում ընդգծելով նրա վիթխարի աշխատասիրությունը և մասնագիտական հմտությունները: Այնուհետև հեղինակային ողջ ուշադրությունը բեկովում է հերթական նոցելային հատվածին՝ այսոեղ ևս պահպանելով բնորոշ դինամիզմը: Այնուամենայնիվ տիրապետող հանդարտ, հիմնավոր,

4 “Писатели США о литературе”, т. 1, М., 1982, с. 45.

մանրամասն նկարագրություններն են, որոնք այս դեպքում չեն խանգարում հատվածի նովելային բնութագրին, քանի որ անհրաժեշտ բեեռացումը Սեղրակի սիրո հանդամանքների վրա վեպի ամբողջ առաջին մասում արդեն իրականացվել էր, հավաքագրվել էր կոնֆլիկտային դրությունը։ Նովելային նախորդ հատվածների գերակշիռ մասը ներկայացնում էր հենց այդ հիմնական կոնֆլիկտային իրադրության տարբեր պահերը։ Առաջին մասի վերջին հատվածում Սեղրակի խելացարության, նրա փիզիկական և հոգևոր տանջանքների, մահվան, Տիգրանի առ Սեղրակ ունեցած գորովի և նվիրման մանրամասներն են։ Նովելային իրադրությունը գոյագործում է միմիայն Սուրբեկի դիրքորոշմամբ։ Նկատի ունենք գերեզմանատան դրվագը, որտեղ Զոհրապն իրականացրել է նովելի տեսաբանների մատնանշած անսպասելի վերջաբանի ըստ ամենայնի կիրառություն։ Կարող է հարց առաջանալ, թե ինչո՞ւ էր Զոհրապը վեպում կիրառում դասական նովելի թերևս ամենասկզբունքային պահանջներից մեկը։ Բանն այն է, որ Զոհրապի առաջին արձակ ստեղծագործությունը՝ «Անհետացած սերունդ մը» վեպը, ինքնորոշում է գրողի հետագա ստեղծագործական ճանապարհը միայն և միայն նովելի ժամանակակից ինքնորոշում։ Ստեղծագործությունն ըստ էության անկախ և հարաբերական ինքնորոշույնություն ունեցող նովելների և նովելային հատվածների հանրագումար է, այն իր ժանրային բնութագրով նորավեպին ներհատուկ տարրեր ունի։ Ի տարբերություն վեպի չյուսվածքում առհասարակ հանդիպող նովելատիպ հատվածների, որ տեսությանը հայտնի են և բավականաչափ հետազոտված, Զոհրապի վեպում առավել որոշակի է անսպասելի ավարտի իրողությունը, մի բան, որ որպես կանոն բացակայում է վեպերում ընդհանրապես հանդիպող նովելատիպ հատվածներում։

Վեպի երկրորդ մասը սկսվում է երեկույթի բավականին մանրամասն նկարագրությամբ։ Հավաքվել է գրեթե ողջ պոլսական ընտրանին։ Ժամանակակից քաղաքական անցքեր ամենակարևոր իրողությունները, ազգային կյանքի լուրջ և կնճոռտ պրոլեմներն են այդ խոսակցությունների առարկան։ Սակայն Զոհրապն ընդգծում է, որ բոլոր գրույցների առանցքը մի դատավարություն է, այդ դատավարության ընթացքում մի փաստաբանի գործունեություն։ Դրանից հետո անմիջապես անցում է կատարվում հերթական նովելային հատվածին, որն ըստ էության հենց այդ դատավարության պատմությունն է։ Այսպես հեղինակը լարում է ուշադրությունը թե՛ ընթերցողական, թե՛ տեքստային մակարդակներում, արդեն շարակարգում ստեղծագործաբար արդարացնում է պատումի կտրուկ փոփոխությունը և նովելի գոյությունն ինքնին, ապա հնարավորություն է ընձեռում կերպարներին՝ կրկին գործողությունների ոլորտ մտնելու։ Զոհրապը ոչ միայն կրկին գործողության մեջ ներգրավեց իր հերոսին, այլև պահպանեց ժամանակային բնութագրման կանոնները՝ ամբողջ չորս տարվա գործողությունը մեկ նախադասության մեջ տեղակայելով։ Այսօրինակ գեղարվեստական հնարանքը Զոհրապն իր հետագա ստեղծագործություններում կիրառել է մեծ վարպետությամբ։ Օրինակ՝ «Մամայիդ բարե ըրե» նովելի Սերվենազին վերաբերող համապատասխան հատվածը, որտեղ փոքրիկ պարբերությամբ վերհուշի պատումային ձևով ներկայացվում է աղջկա կյանքի բավականին մեծ հատվածը՝ մանկությունը և պատանեկությունը, միաժամանակ ուշադ-

ըությունը բեկովում է նրա հմայքի, գրավչության վրա՝ Սերվինազի կերպարը դարձնելով նովելի հիմնական կենտրոնը։ Վեպի այս հատվածում ուշադրության արժանի են նաև հաճախակի հանդիպող եսի երկփեղկվածության կրկնակի պլանները և դրանց համապատասխան կտրուկ հոգեբանական անցումները, որոնք շատ բանով պայմանավորում են թե՛ պատումն ընդհանրապես և թե՛ կերպավորման սկզբունքները։ Նովելային այս հատկանիշը ևս հետագայում պետք է դառնար Զոհրապի պոետիկայի բնորոշ մասնահատկություններից մեկը։

Ասվածից կարելի է եզրակացնել, որ «Անհետացած սերունդ մը» վեպը փաստորեն բաժանվում է տասը նովելների։ Անվանի տեսաբան Տոմաշևսկին գրում է. «Հարկավոր է խստիվ տարբերակել «նովել» բառի օգտագործումը այդ երկու նշանակությամբ։ Նովելն իբրև ինքնուրույն ժանր, ավարտված ստեղծագործություն է։ Վեպի մեջ դա քիչ թե շատ առանձնացված երկի սյուժետային մասն է՝ ընդ որում կարող է ավարտված չլինել։ Եթե վեպում մնում են լրիվ ավարտված նովելներ (այսինքն՝ այն նովելները, որոնք կարող են գոյություն ունենալ վեպից դուրս՝ համեմատիր գերու պատմություննը «Դոն Կիխոտում»), ապա այդպիսի նովելները կոչվում են «ներդիր նովելներ»։ Ներդիր նովելները ներհատուկ են վեպի հին տեխնիկային, որտեղ երբեմն վեպի հիմնական գործողությունը զարգանում է պատմությունների ձևով, որոնք փոխանակում են գործող անձինք՝ հանդիպումների ժամանակ։ Սակայն ներդիր նովելներ հանդիպում են նաև ժամանակակից վեպերում»<sup>5</sup>։

Նովելային երկրորդ հատվածում ըստ էության ուրվագծվում են «Զմարադտա» և «Կատակ» նորավեպերի առաջին անդրադարձները։ Տիգրանը սիրում է համալսարանի շուրջն ապրող հելենուհիներից մեկին, որն ի վերջո ամուսնանում է ուրիշի հետ։ Ինչպես երեսում է այս սյուժետային դիպվածը հեղինակի ստեղծագործության հիշողության մեջ շատ խորն է ամրակայվել և նոր որակով դրսեռքել «Զմարադտայում»։ Վեպում դեպքերը զարգանում են այլ հունով. «Կատակ մը, պարզ կատակ մընել կարծեր էր ժպտելով անոր երեսին ու անոր սրտին հաղորդելով յուր աչքերուն ավերիչ կրակը. վերջին Տիգրանի հաճույքը լուրջ բան մը չէր աղջկան համար, այլ մահացու կըրնար լինիլ՝ պատանվույն սրտին» (12)։ Վեպում հելենուհու կատակի պարագան «Կատակ» նորավեպի ակնհայտ գեղարվեստական սկզբնաղբյուրն է։

Նովելային հաջորդ երկու հատվածները ներկայացնում են Սեղրակ-Սուրբիկ պլանը։ Դրանց գուգակցումը ըստ էության ամբողջացնում է ևս մի անկախ և ավարտուն նովել։ Պետք է ասել, որ վեպի հյուսվածքում գտնվող բոլոր նովելային հատվածները ունեն այս հատկությունը, և եթե առանձնացնենք, բնակ կտրտված, ֆրագմենտար տպավորություն չեն թողնի։ Այսպես՝ եթե Մոպասանի «Կյանքը» վեպում նովելի կառուցվածքային-կոմպոզիցիոն հատկանիշներով օժտված որևէ միավոր առանձնացնենք, ապա այն այնուամենայնիվ չի ունենում խօստ համընկնոր ժանրային բնորոշ հատկանիշներ, քանի որ նրա ամբողջությունը պայմանավորված է վեպի այլ հատվածների կոմպոզիցիոն-կառուցվածքային տարրերի հետ սերտ կապվածությամբ։ Զոհրապի պարագային նովե-

5. Б. Томашевский, Теория литературы. Поэтика, М.-Л., 1928, с. 197.

լային ամբողջականությունը և ընդգծված անկախությունը տիրապետող է: Սա ևս խոսում է վիպասանի նովելային մտածողության մասին:

Արդեն նկատել ենք, որ Տիգրան-հելլենուհի պլանը տարածվում է նովելային հատվածներում, ուր կան «Զմարազտայի» բավականին հատկանշված անդրադարձները: Նմանատիպ տարրեր է պարունակում իր մեջ նաև խնդրո առարկա հատվածը, որտեղ աներկեցյելի են «Ճեյրանի» նախանշանները: Այնպես որ սա վեպի խտացված գեղարվեստական միավորներից է՝ իբրև նովելների գեղարվեստական սկզբնաղբյուր: Մի սիրունատես, երիտասարդ կնոջ բանտարկել են՝ ամուսնուն սպանելու մեղադրանքով: Տիգրանը դառնում է այդ դեռատի կնոջ փաստաբանը:

«Ճեյրանի» գուգաղբությունը ակամա առաջանում է հատկապես դատապաշտպանական պրոցեսի նկարագրությունից: Այդ հատվածը գրեթե նույնությամբ տեղափոխվել է նովել:

Զոհրապն արդեն վեպի սահմաններում, փաստորեն ուրվագծում է դեղեկտիվ նովելի բոլորովին նոր որակ: Ի տարբերություն էդգար Պոյի, Հոթորնի, Օչենրիի՝ նրա «դեղեկտիվ նովելի» հիմքում անհայտներ չկան, դեպքը, կատարված հանցանքի բոլոր մանրամասները հայտնի են, այսպես կոչված դեղեկտիվությունը Զոհրապնը մտցնում է կերպարների հոգեկան ոլորտ և դրանով իսկ ստանում գեղարվեստական վիթխարի էֆեկտ: Պատահական չէ, որ նրա այսօրինակ ստեղծագործությունները ընթերցողական մակարդակում հավասարագոր ազդեցություն են թողնում, ինչպես դեղեկտիվ նովելի դասական նմուշները<sup>6</sup>:

Նովելային հաջորդ երեք հատվածները, որոնք վեպի հյուսվածքում ամբողջացնում են մեկ նովել, կապված են Տիգրան-Սուրբիկի պլանի հետ և գոյավորում են սիրո շարժման գեղարվեստականացման մի որոշակի տիպ: Նովելն ունի բավականին հետաքրքրական և յուրօրինակ կառուցվածք. երկու հատվածները Զոհրապնը տեղադրել է մեկը մյուսի ետևից, իսկ երրորդ՝ հավաքագրողը ընդմիջել մի առանձին նովելով: Արամ էֆենդու հիվանդությունը երկալան զարգացում է տալիս գործողությունների ծավալմանը: Նախ՝ դա հնարավորություն է ընձեռում Սուրբիկի և Տիգրանի կամա թե ակամա ավելի շատ հանդիպելու, որն ամբողջացնում է նրանց փոխադարձ զգացմունքը և ապա՝ որպեսզի հոգեկան, բարոյական ապրումները ավելի ընդգծված ներկայանան, մեկ անգամ ևս հավաստում է թե՛ Տիգրանի և թե՛ Սուրբիկի բարոյական վսեմ նկարագիրը:

Վեպի երկրորդ մասի «ներդիր» նովելներից մեկը էմիլ Զոլայի «Նանթա» նորավեպի հայկականացված տարբերակն է<sup>7</sup>: Ի նկատի ունենք Խոսրով-Եվդինե պլանը:

Բացահայտ ընդհանրությունը դրական ուսումնառության արդյունքն էր: Զոհրապնը որոնում էր իր ասելիքը, սեփականը, ուստի բնականաբար այդ ճանապարհին պետք է լինեին թե՛ ազդեցություններ, թե՛ կրկնություններ:

6 Նկատի ունենք «Ճեյրան» և «Զարուղոն» նորավեպերը:

7 Տե՛ս Էմիլ Զոլա, Նանթա, Սիմոն Խորենի թարգմանությամբ, Պոլիս, 1911:

Ստեղծագործության հերոսները ընդգծված նովելային բնույթ ունեն: Վեպին ներհատուկ է հերոսների կերպավորման բազմապլանայնությունը: Սակայն Զոհրապը այստեղ անհետևողական է: Այսպես՝ Սեղբակը գործողությունների ոլորտից դուրս է մնում՝ սկսած երկրորդ մասից, Խոսրովն ըստ էության գործում է երկրորդ մասի մի կարճ հատվածում, և միայն Տիգրանն է, որ վեպի բոլոր մասերում քիչ թե շատ պահպանել է գործելու համամասնությունը:

Սեղբակի կերպարին զուգադրվում է Տիգրանը: Վեպում նրանք փոխադարձաբար լրացնում են միմյանց, որն արտահայտվում է ոչ միայն նրանց միանման արարքներով, հոգեբանությամբ և նկարագրով, այլև՝ պոետիկական գործառնություններով: Արդեն վեպի երկրորդ մասում Սեղբակի կերպարը Տիգրանին բացահայտելու, իբրև հերոս նրա ոլորտը ընդլայնելու (նկատի ունենք երկրորդ մասի այն հատվածը հատկապես, ուր Տիգրանը, հիշելով Սեղբակի վերաբերմունքը Սուլրբիկի նկատմամբ, հոգեկան երկություն է ապրում) հնարավորություններ է ընձեռում: Սեղբակին ներհատուկ տարրերը փոխանցվում են Տիգրանին, և հետագա գեղաձեռումը իրացվում է Տիգրանի կերպարով: Սեղբակին ինքնին Տիգրան-Սուլրբիկի նովելային հատվածի համար էական նշանակություն չունի: Վեպի առաջին մասի Սեղբակ-Սուլրբիկի պլանը գառնում է Սեղբակ=Տիգրան-Սուլրբիկ հիմնական պլանի նովելային նախադրություն: Այսպիսով կարող ենք ասել, որ Տիգրանի և Սեղբակի կերպարները վեպում համակցվում են՝ դառնալով մեկ իրողության երկակի գեղարվեստական իրացումներ: Զոհրապն այս գեպքում էլ որոնումների մեջ է:

Հերոսի կերպարման սկզբունքները նույնպես վեպում անցնում են փորձարարական շրջան, հստակվում, կայունանում՝ ընդգծելով իրենց նովելայնությունը: Գնահատելով վեպի կերպարները՝ Մինաս Հյուսյանը իրավացիորեն գրում է. «...Եվգինեն շատ տիպական, կենդանի կերպար է, սակայն նրա կերպարումը նովելիստական է»<sup>8</sup>: Սուլրբիկը և Եվգինեն, իրոք, իրենց գործառնությամբ շատ բանով են նախապատրաստել նովելների գեղարվեստական համակարգում կանանց կերպարների գրաւորումները: Հստ էության սրանց կերպարներից են մակածվել նովելների մի շարք հերոսուհիներ: Այսպես՝ Սուլրբիկի կերպարը վեպի առաջին մասում իր գործունեության անսպասելի տարութերումներով հիշեցնում է «Մամայիդ բարեւ ըրե», «Կարծեմ թե», «Զարուղոն», «Այնկա» նովելների հերոսուհիներին, իսկ երկրորդ մասում՝ «Մյուսը» նորավեպի հերոսուհուն: Ակնհայտ է, որ վեպի այս կերպարը գրողի հետագա մտահղացումներում բազում այլգոյացումներ է տվել: Սուլրբիկի ամուսնությունը Արամ էֆենդու հետ, օրինակ, մատնանշված նովելների համապատասխան իրադրությունների նախնական տարբերակն է: Ահա մի բնորոշ հատված երկրորդ մասից. «Իսկ Սուլրբիկ ի՞նչ կը մտածեր այս անակնկալ պատահարին առջե: Իր ամուսնույն գժեախտ կացության վրա կատարյալ ու խորին ցավակցությամբ մի հանդերձ չի կրցավ ակնարկ մը չի դարձնել նույնիսկ իր գոյության վրա, հազիվ 25 տարեկան էր գեռ, երբ իր ծերունի ամուսնույն հիվանդ վիճակը՝ նոր տկարությամբ ծանրանալով, ընտանեկան կյանքը բոլորովին կը վերջացներ: Ա-

8 Մինաս Հյուսյան, Գրիգոր Զոհրապ, Երևան, 1957, էջ 87:

պաքեն քանի տարիներե ի վեր հիվանդու էրիկը դարմանելով անցուցած էր կենաց ու երիտասարդության լավագույն օրերն այսուհետև այրի ու ծերացած կնոջ մը տիսուր ու մոայլ ապագան վերապահված էր իրեն» (62): Անտարակույս այս հատվածը «Մյուսը» նովելի գեղարվեստական իրադրության սկզբաղյուրներից է:

Մարեմյանի կերպարի ինչ-ինչ հատկություններ փոխանցվել են «Փոստալի» Օննիկին, Արամ էֆենդին իր հայրական և ամուսնական գործառնություններով ամբողջացել, կայունացել է մի շարք ստեղծագործություններում: Հիշենք «Մյուսի» էմմայի ամուսնուն, «Անդրշիրիմի սեր» նովելի Սերաֆիթայի հորը և այլն:

Թիֆլիսում կարգացած հրապարակային դասախոսության ժամանակ Զապել Եսայանը ընդգծում էր. «Զոհրապի գրականությունը նույնպես հարազատ արտահայտությունն էր իր խառնվածքին, «Անհետացող սերունդ մը» վեպին մեջ իր տաղանդը իր բոլոր գեղեցիկ գծերով կը հայտնվի, բայց դեռ տհաս է ու այն մասնավոր միամտությունը, որ կը տիրե հոն, թեև չի եղաներ գրքին արժանիքները, բայց արգելք կըլլա իր լրումին հայտնաբերելու այդ մեծ տաղանդը»<sup>9</sup>:

Սակայն չպետք է մոռանալ, որ ստեղծագործական որոնումները, գեղարվեստական փորձարարությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտել գրողի առաջին արձակ երկում, շատ բաներով պայմանավորեցին նրա հետագա գրական ճանապարհը:

9 Զապել Եսայան, Թրքարայ ժամանակակից գրողներ, Թիֆլիս, 1916, էջ 10:

## Կ. ՊՈԼԻՍԸ ԶՈՀՐԱՊԻ ՆՈՐԱՎԵՊԵՐԻ ՊՈԵՏԻԿԱՅՈՒՄ

**Գ**րիգոր Զոհրապի նորավեպերի պոետիկայի էական առանձնահատկություններից է Կ. Պոլսի գեղարվեստական արտացոլումը։ Նրա պատկերած աշխարհը, որպես կանոն, տեղայնացված է մեծ քաղաքի և նրա արվարձանների սահմաններում։

Տարբեր գրողների կապակցությամբ մի շարք հոդվածներում և ուսումնասիրություններում քննվել է պոետիկական համակարգի, այսպես կոչված, քաղաքամետությունը։ Դոստուեսկու առիթով, ակադեմիկոս Լիխաչովը, օրինակ, եղբակացնում է, որ քաղաքն իր փողոցներով ու տներով գրողի ստեղծագործությունների շարունակությունը կարծես լինի։

Զոհրապի Պոլիսն՝ իր ամենաբազմազան դրսելորումներով, նրա գեղարվեստական համակարգի յուրօրինակ շարունակությունն է։ Գրողի նորավեպերն ուսումնասիրողներն անվերապահորեն ընդգծել են, որ նրա ստեղծագործության տիրապետող աշխարհը քաղաքն է, նրան անվանել են Պոլսի տարեգիր, թեև քննության առարկա չեն դարձրել քաղաքն՝ իբրև գրողի պոետիկայի առանձնահատուկ միավոր։

Պոլիսը Զոհրապի բոլոր նորավեպերում էլ առկա է։ Այն, որպես կանոն, ընդգծված ակտիվությամբ է հանդես գալիս։ Նորավեպերի պոետիկական համակարգը տեղայնացված է աշխարհագրական միևնույն սահմաններում։ Պոլիսն իր արվարձաններով, թաղամասերով ու փողոցներով, գույներով և երանգներով, հոգեբանությամբ։

Քաղաքն ակտիվ երկխոսության մեջ է հերոսների հետ։ Գրողի հերոսները բանավիճում են, համոզում և չեն համոզում, ապացուցում, մեղադրում և օգնության են կանչում նրան։ Գրողը հաճախ ոչ այնքան նկարագրում է, որքան հիշատակում է այս կամ այն վայրը՝ իբրև իրեն և իր ընթերցողին ծանոթ վայր։ Եվ ընթերցողը բավականին բան է կորցնում, եթե լավ չգիտե այն վայրերը, որտեղ ծավալվում են գործողությունները։

Զոհրապի նորավեպերի պոետիկայում Փերան, Մեծ փողոցը, Լյուքսանպուրի սրճարանը և մի շարք այլ վայրեր որոշակի գեղարվեստական դերի կրողներ են։ Օրինակ, երբ Զոհրապը բազմիցս շրջանառության մեջ է առնում Փերան՝ որպես պերճանքի, վայելումի և խրախճանքի վայր, ըստ էության, այդ թաղամասի վրա միայն հղում է կատարում, որը ծանոթ է և՛ իրեն, և՛ ընթերցողին, թեև «պերճանք-վայելում-խրախճանք» ինֆորմացիան կարծես թե մնում է ստեղծագործության արտատեքստային մակարդակում։

Զոհրապի հերոսներին ձգում է այս թաղամասը։ «Փերան կը սիրեր իր մարդաշատ տուններուն, մեծ փողոցին, քարուկիր ու բազմահարկ շենքերուն աղմկալից կյանքին համար, — կարդում ենք նորավեպերից մեկում։— այս բազմութենեն ու ժխորեն կախորժեր, ու իրիկունները իր սովորությունն էր ելլել դուրս, եղեգնյա փոքրիկ գավազանը ձեռքը, իր բանաստեղծի լայն ճակատը բացած

Կալաթա-Սերայեն մինչև թաքսիմ շրջան մը ընելու, ման գալու, ինչպես կ'ըսեր ինք ու կիներու այս մեծ շուկային տեսքը, այս վաճառիկ հրապույրները վայելու»:

Փերան շույլություն է, պերճանք: Այստեղ են կենտրոնացած Զոհրապի նորավեպերի հմայիչ և առինքնող հերոսուհիները, սրանց ամենատարբեր տիպի ու բնույթի երկրպագուները:

Թաղամասն ունի առանձնահատուկ խոսելաձև: «Մամայիդ բարեւ ըրե» նորավեպում Սերվինազի կերպարային հատկանիշներն ամբողջացնելու համար հեղինակը գրում է. «Սերվինազ կը սկսեր ճանչութիւնը, հյուրեր կու գային. ինքը կը սորվեր Փերայի խոսելու հատուկ շեշտերը, վարվելու եղանակները»: Զոհրապը առանձին չի նկարագրում ոչ խոսելու «հատուկ շեշտերը», ոչ էլ «վարվելու եղանակները»: Այս դեպքում առավելագույնս ընդգծվում է այն հանգամանքը, որ հեղինակային խոսքը հասցեագրվում է նրանց, ովքեր գիտեն քաղաքը, ամեն մի թաղամասի առանձնահատկությունը: Փաստորեն այս դեպքում թաղի հատկանիշը վերագրվում է հերոսին:

Փերան Պոլսի պարահանդեսների, սալոնների կենտրոնն է, «Դիմակը», «Երջանիկ մահը», «Պարահանդեսին վաղորդայնը» նորավեպերի գործողության վայրը:

Զոհրապի նորավեպերում հիշատակվում է Լյուքսանպուրի սրճարանը, որը ժամանակին քաղաքի համբավավոր վայրերից է եղել՝ որպես մարդկանց ժամադրավայր: Այստեղի հանդիպումներն ու զրույցներն են ծնունդ տվել «Տալիլա», «Անդրշիրիմի սեր» նորավեպերի մտահղացումներին: Այս դեպքում էլ Զոհրապը տեքստում քաղաքի հատկանիշներից մեկի հղումով է միայն բավարարվում:

Պոլսի իրական հասցեները, հատկապես պոլսեցիների մոտ, նորավեպերի գործողությունների վավերականության այնպիսի տապավորություն էին թողնում, որ շատ հաճախ զոհրապյան Պոլիսը նրանց մոտ դիտվում էր իբրև իրական Պոլիս: Մի փաստ, որ արձանագրվել է Զոհրապին նվիրված հուշագրություններում:

Հստ էության, Գրիգոր Զոհրապը նորավեպերի բոլոր հերոսներին Պոլիս է բերում: Պոլսի ներկայությունը նկատելի է նաև այն դեպքում, երբ գործողության վայրը Պոլսից գուրս է:

«Ճեյրան» նորավեպը սկսվում է պոլսեցի փաստաբանի՝ իզմիտ ուղեկորվելու նկարագրությամբ: Փաստաբանը տագնապների մեջ է: Կարողանա՞՝ արդյոք, մահապարտի դատը շահել: Նրա տագնապները ճյուղավորված են մի քանի մակարդակներում: Նախ՝ մասնագիտական հեղինակությունը, ապա՝ մահապարտի փրկության միակ հույսը լինելու հանգամանքը: Այս երկու մակարդակներին ներդաշնակորեն միացված է Պոլսի հեղինակության խնդիրը. «Կը խորհիմ ինքնիրենս թե ի՞նչ պիտի ըսեն իզմիտցիները իմ անհաջողությանս վրա. ահավասիկ պոլսեցի փաստաբան մը որ իզմիտի մեջ չի կրնար հանցավոր մը փրկել. իրենց ծաղրող ծիծաղներու ձայնը կը լսեմ ականջիս մեջ»: Էական է դիտել, որ դատապարտյալի՝ Քրանտյուքի փրկությանը նախանձախնդիր էին ոչ միայն մերձավորները, այլև պաշտոնական անձինք. «Հարյուրապետն է որ դիմավորելու կուգա այս անգամ, հարյուրապետը որ իր տասնապետը փրկելու համար ջանք չի խնայեր»: Սակայն իզմիտցի փաստաբանը անկարող է փրկել, և միակ

ապավենը պոլսեցին է: Եթե մի պահ ընդունենք, որ փաստաբանը պոլսեցի չէր, ապա նորավեպը բացարձակապես ոչինչ չէր կորցնի: Սակայն հեղինակը այս գեպքում ևս շրջանառության մեջ է պահում Պոլիսը, որը երբեմն փրկիչ է, բարի, արդարամիտ, երբեմն էլ՝ դաժան, խիստ, անարդարացի:

«Պարահանդեսի վաղորդայնը» ստեղծագործության հերոսը՝ ուսուցիչ, բանաստեղծ Հակոբ Դավիթյանը, հեռանում է քաղաքից: Հատկանշական է, որ այս գեպքում ևս խարված, ծաղրված և գործազուրկ երիտասարդը Պոլսին հակակրելու փոխարեն քաղաքի նկատմամբ ընդգծված համակրանք է տածում: Նա սիրում է քաղաքը, և ոչ թե ինքը, այլ Պոլիսն է լքում նրան:

«Տալիլա» նորավեպի սիրո պատմությունը տեղի է ունեցել հեռավոր Դամակոսում, բայց պատմվում է Պոլսի Լյուքսանպուրի սրճարանում:

Քաղաքի այս կամ այն արվարձանի հիշատակումը լրացուցիչ երանգ է հաղորդում կերպարին կամ այուժետային գծի զարգացմանը: «Սառա» նորավեպում պատմողը կարեոր է համարում ասել, թե՝ «Փրինքիփոյի մեջ ճանչցա զիրենք...»: «Երջանիկ մահը» ստեղծագործությունում Քատրոյուղը նպաստում է բժիշկ Վահանյանի կերպարի բացահայտմանը: Ալեմտաղի փոքրիկ եկեղեցին առիթ է դառնում «Վերադարձը» նորավեպում Մաքրիկ-Գրիգոր հարաբերության ամբողջացման համար:

«Այրին» նորավեպում Պոլսի կերպավորումը սկսվում է գիշերային քաղաքի նկարագրությամբ. «Մարդ չկար ու այդ աղմկալից փողոցի ժխորեն ուրիշ բան չեր մնացեր բայց եթե առջի իրիկվնե ի վեր տեղացող անձրկին անընդհատ ձայնը իր հուսահատական միօրինակությամբը: Հեռվե հեռու, ուղիղ ու լայն ճամփուն բոլոր երկայնությամբը, մութին մեջ կը տեսնվեր շարք մը կարմիր ու արյունագույն կետերու՝ որոնք կազերուն տամուկ ու դողդոջուն լույսերն էին»:

Ապա. «Հիմա ա՛լ լուսանալու մոտ էր ու Փերայի տուները կը ճշտվեին ստվերամած հորիզոնին վրա. ճայները երթալով կը շատնային. խանութներու երկաթե գեղեցիքը կը շարժեին. կանուխ ելող սպասավորներ, պահապաններ, փեղկին մեջ բացված դռնակեն դուրս կելլեին...»:

Այստեղ է նաև Մարտիրոսը՝ գավառից վաստակելու եկած երիտասարդը, ուրի համար առաջին օրերի Պոլիսը լույսերի խաղով է բնութագրվում, բարի է և սատարող: Իսկ երբ Մարտիրոսը ֆիզիկապես և հոգեպես անջատվում է իր հայրենի եղերքից, Պոլսի նկարագրի մեջ հայտնվում են խալարի երանգները:

Քաղաքի նկատմամբ իր կերպերմունքն է ճշտում նաև «Փոստալը» նորավեպի հերոսուհին. «Տիգրանուհին հիմա այս մութեն գեպի լույս ուղեկորությունը, ժամանումը միտքը կը բերեր, բարի գուշակ մը կը համարեր իր կյանքին համար»: Սակայն Տիգրանուհին այդ «լույսի» մեջ տեսնում է նաև դեռևս անորոշ, տարտամ տագնապներ. «Այս Պոլսու մարդիկը, իրենց բոլոր քաղաքավար վարմունքին հակառակ, կնկան նայելու ձեեր մը ունեին, որ համբուրելու պես կը դպչեր իր երեսին և իր նոր հարսի, գրեթե կույսի ամչկոտությունը կը վիրավորեր ամեն վայրկյան»: Պոլիսը չի թաքցնում իր հակումները. «Հոս հոն, տեղ տեղ, կը կենային ու Տիգրանուհին կը կարծեր որ հոգնություն առնելու համար էր ասիկա. ոմանք կը ձգեին շողեկառքը, ոմանք նոր կը մտնեին, և անմիջապես ճամփա կիյային. հիմարական խոյացումը կը սկսեր դեպի Պոլիս: Ու կը հիշեր

վերջապես համնենին Հայտար Հաշա, Պոլիսը, Փերան, զորս Հաճի Տյուրիկը մատովը իրեն ցուցուց հեռվեն և ասդին՝ Քատարյուղ՝ իրենց գալիք տեղը, մաքուր փողոցներով, գեղեցիկ տուներով շինված քաղաքը որուն վրա հիացան»:

Տիգրանուհին շատ լավ զգում էր, որ ինչպես ամեն մի փրկություն (տվյալ դեպքում Պոլիսը նրա համար փրկություն էր) փրկագին է պահանջելու:

Պատահական չէ, որ Զոհրապը վերեւում մեջբերած Հատվածում ընդգծում է թաղամասի «մաքուր փողոցներով, գեղեցիկ տուներով» լինելու հանգամանքը: Այդ կոկիկ հանդարտ փողոցում իրար կողքի հանդիպադրված են Պոլսի մեծահոգությունը և ճղճիմությունը, հաշիվն ու զգացմունքը:

Պոլիսը նման է այլ կտրվածքներով Զոհրապի նորավեպերի պոետիկական համակարգում բազմից հակադրվում է ինքն իրեն: Նրա կերպարը երկփեղկվում է, ինչպես հերոսի ես-ը:

Պոլսի կերպարային յուրահատուկ դրսեորումների ենք հանդիպում «Փոթուղըն» նորավեպում: «Պոլս հայ հանըմներու կենցաղին վրա հիանալի բաներ պատմած էր իր աղջկան՝ այնչափ՝ որ ճոխություններով, վայելքներու առասպելախառն ավանդություններով լեցուցեր էր անոր հոգին: Զարուկ՝ իր պզտիկ դասընկերներու մեջ՝ բան գիտցողն էր ամեն ատեն, վճիռ արձակելու կարողը, որուն ետին իր Պոլիս ապրած մորը հեղինակությունը կար» (ընդգծումն իմն է՝ Գր. Հ.): Զարուկի մայրը հեղինակություն էր, որովհետև ապրել էր Պոլսում: Պոլիսն էր այդ ընձեռել, և քաղաքն էր հեղինակավոր:

Այսպիսի պատկերացումը հեղինակագրկվում է «Լուսահոգին» և «Մեղատեր» նորավեպերում: Իսկ Հուսեփի աղայի պարագային, «Ճիտին պարտքը» նորավեպում, քաղաքն անողոք է և հիշաչար. «...ու վայրկյանը կը մոտենար ահավոր արագությամբ մը խոյանալով իր վրա, ուր վերջին երեսուն փարան Քուղկունճուքեն Պոլիս իշնելու, հույսի մը ետեն վազելու ծախքը – վասն զի հիմա հույսի ետեն երթալն ալ ծախքով է – պիտի հատներ»: «Պոլիս գործ չկար» արտահայտությունը հիշեցնում է, որ Հուսեփի աղան աշխատանք գտնելու երկարատեև ապարդյուն ջանքեր էր գործադրել: Անասելի գժվար էր օրենքոր հասակ առնող աղջիկների տարրական պահանջներն իսկ բավարարելը: Գործ չլինելու փաստը Հուսեփի աղայի դատավճիռն էր: Պոլիսը անողոք էր:

«Մեղատեր» նորավեպի հերոսը «հայրենիքեն գրեթե բորբկ եկավ Պոլիս, նիշար ու վատուժ պատանի որ խաներու, քարուկիր սենյակներու խոնավության մեջ ծառայությամբ հավաքած հինգ հարյուր զրուցով բացավ իր սարաֆի տուլապը, ճշմարիտ «տոլապ» մը զոր մինչև այն օրը ոչ ոք իրեն չափ վարպետությամբ դարձուցած էր: Իր հայրենի քաղքին մեջ զոր Մարտիրոս մեր երկիրը կը կոչեր, տիրացություն ըրած ու ժամասիրություն ժառանգած էր աղկե»:

Այստեղ Պոլսի և երկրի հակադրությունն աներկբայելի է: Բայտ որում, քաղաքը կեղծ բարեպաշտության խորհրդանիշն է, իսկ հերոսը՝ կորցրած արժեքների կրողը:

Այսպիսով, Գրիգոր Զոհրապի նորավեպերի պոետիկայում մշտապես ներկա է Պոլիսն իր թաղամասերով և այդ թաղամասերին հատուկ հոգեբանությամբ, բարքերով և սովորություններով:

## ԱՂԵՏԻ ԵՎ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՈՐԱՎԻՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հյոց Եղեռնը քաղաքական, հասարակական, սոցիալական, պատմական, Հոգեբանական առանցքներով առարկայաբար պայմանավորում է ազգային կերտվածքի, ինքնության և մենթալիտետի բազմաթիվ էամսաներ ու բնականաբար ունի որոշարկված մշակութաբանական ներկայություն և վերապրոդների, մնացորդաց և թե այսօրվա ու գալիքի սերունդների հոգեսոր կենսագրության մեջ: Ավելին՝ ցեղասպանության մշակութաբանական ներկայությունն է, որ Հայաստանում ընձյուղեց պատմական հիշողությունը ամբողջատիրության ժամանակաշրջանում (Պարույր Սևակ և Հովհաննես Շիրազ), իսկ Սփյուռքում՝ դիմադարձել և հակագդվել ուժացմանը:

Ինքնին հասկանալի է, որ մշակութաբանական ներկայությունը, պատմական խորքին և գործընթացին զուգադիր, ունեցել և պետք է ունենա անհրաժեշտ փոխաձեւումներ, սակայն առաջին փաղանգի՝ վերապրոդների, ազգային ողբերգությունը գրականացրած անդրանիկ սերնդի գործը հար լինելու է Եղեռնի հոգեսոր գեղարվեստական պատմության կիզակետում: Այս առումով էական է դիտել, որ ուղիղ մեկ դար առաջ՝ 1895-ին, Կոստանդնուպոլիսի Բապտիստ Հրապարակի հակասութանական ցույցը դարձավ Եղեռնի մշակութաբանական ներկայության ելման կետը: Աղետի գրականությունը ժամանակագրությամբ համընկավ հայոց 1894-1896 թվականների ցեղասպանությանը: Արհավիրքը, մինչև իր ողբերգական ավարտը՝ Մեծ Եղեռնը, անցավ 1906-ի հայթուրքական ընդհարումներով, Կիլիկյան մղձավանջով, Աղանայի 1909-ի կոտորածով՝ հոգեսոր կյանքում ընդմիջարկվելով գեղարվեստական «արագ արձագանքմամբ» (իբրև խտացում փաստենք Ատոմ Յարճանյան-Սիամանթոյի քերթությունը), ուստի և Եղեռնի մշակութային ներկայության, ի մասնավորի Աղետի գրականության պարբերացման ժամանակ իբրև սկիզբ, ձեավորում պետք է ընդունել 1895 թվականը: Գրականության պարագծում ի հայտ եկան արհավիրքը պատկերագրող ստեղծագործություններ և եթե արևելահայ հատվածում որպես կանոն սկզբում էին 1906-ի իրադարձություններին<sup>1</sup>, միաժամանակ պայմանավորելով Աղետիս Աշարոնյանի<sup>2</sup> մենաշնորհն իբրև արևելահայ գրական ընթացում Աղետի գրականություն ներբերող ընդհանրականություն, ա-

1 Պարբերականներում և առանձին գրքով կնույնացներով լուս էին տեսնում զանազան ստեղծագործություններ, գերազանցապես պատկերներ, որտեղ անդադարձվում էին խնդրո առարկա իրադարձությունները: Արմանի «Խողճի խայլ» պատկերն անդրստանում էր Ծուշվա դրամատիկ իրադարձություններին, Արամայիսի «Փոքրիկ պատկերներ» գրքովկը՝ բայց հայությունների մարտական կանքին: Հատկանշական է, որ պատկերն առենագործություններն անմիջապես արձագանքվում էին քննադատության կողմից: Ալսպես, հիշատակված գործերից առաջինի մասին գրախտականը կցույց է տալիս անհայտ անձինչի կողմէ: Այսպէս, հիշատակված գործերից առաջինի մասին գրախտականը կցույց է տալիս անհայտ անձինչի կողմից:

2 Նկատի ունենք «Պատկերներ» (Վերջին տարիների Տաճկամալոց կյանքից), Սոսկվա, 1900, ժողովածուն:

պա արևմտահայ հատվածում գրականության այս դրսեռումը ձևավորվեց ու հաստատագրվեց, դարձավ գեղարվեստական ընթացի տիրապետող մտայնություններից: Պատահական չէ, որ այս ողբերգությունը արտացոլող եզրը՝ «Աղետ»-ն իր տարբերակներով՝ «Արհավիրք», «Զուլում» և այլն, գոյավորվեց, ստեղծագործական իրացումներով և գեղագիտական հանգանակներով ամրագրվեց արևմտահայ գրականության 1895-1910-ական թվականների շրջանակում: «Աղետ» եզրի, համարժեք մյուս անվանումների հանգուցումը գրականությանը և ըստ այդմ «Աղետի գրականության» գոյավորումն ու կանգնումը տեսական և գեղարվեստական փաստարկման ու հիմնավորման բովով անցան Սուրեն Պարթեյանի գրական ժառանգությամբ: «Քայքայում» ժողովածուի առաջաբանում նա բանաձևեց Աղետի գրականությունը: «Անոնք հայ կյանքի ճգնաժամային ու ճակատագրական մեկ վայրկյանը կ'արձանացնեն, հայկական իրականության մեկ փոթորկահույզ ու պատմական դիմահեղումը կ'ուրպագծեն, մեր ազգային հոգեբանության ամենեն տագնապալից փուլը կը խտացնեն:

Խելահեղ պատրանքներու հաջորդող անագորույն հիասթափությունը, սխրալի հույսերու խուճապական փախուստը, պերճափայլ իտեալներու հեղակարծ փլուզումը, դյուցազնական երազներու մահաշուք խավարումը... Հայությունը՝ փրկության իր երանավետ սպասումին մեջ՝ Աղետքեն հանկարծակի եղած, սահմանած...»<sup>3</sup>: «Աղետ»-ը տարբերակ-հոմանիշներով գրական ընթացում դարձավ ստեղծաբանական մետաֆոր, որի տարաբնույթ գեղարվեստական մեկնություններն ու ընթերցումները հայ գրականության նորագույն շրջանում (Հայաստանի, Սփյուռքի գրականությունների պատմության ծիրում) ամբողջականացրին և բյուրեղացրին արհավիրքի գրականությունը: Այս առումով ևս մատնանշված ժամանակահատվածը հիմքային, ելակետային նշանակություն ունի, նամանավանդ երբ նկատի ենք ունենում մետաֆորի այն այլագոյացումները, որոնք Աղետի գրականության պարագծերը ընդլայնում են, ցուցանում՝ գեղարվեստական բնագրի ընդհանրական արժեքայնության տեսակ: Այս պարագային նախ նկատի ունենք Առանձարի «Վշտի ծիծաղը» (թե՛ ժողովածուն և թե՛ համանուն ստեղծագործությունը իրեւ Աղետի գրականացում), ապա՝ Ռուբեն Զարդարյանի «Սև հավը կանչեց»-ը: Սրանք արտածվելով իրենց ստեղծագործական բուն տարբերքից (ստեղծագործություններից)՝ դարձան գրականության բնույթային հատկացուցիչներ, ամենատարբեր երկերում, ուստինասիրություններում և գրություններում կիրարկվեցին որպես երկերույթի մետաֆորային տարբերակներ: Այսպիսով՝ ինչպես այս, այնպես էլ վերեկում մատնանշած իրողությունները փաստարկում են, որ Աղետի գրականության պարագիծը ներառում է 1895-1914 թվականների ժամանակաշրջանը, կրկին ընդգծենք՝ իրեւ սկիզբ, ելակետ, գոյափոր: Խնդրի մեթոդաբանության առումով այս իրողությունը հրատապ է և կարևոր, նամանավանդ եթե նկատի ունենակք այն իրողությունը, որ հայ գրականագիտության համար վաղուց անտի հասու-

3 Ս. Պարթևական, «Քայքայում», Խզմիր, 1910 թ., «Հառաջաբան», էջ Է: «Արյունին մատյանը» ժողովածուում Պարթևականը շրջանառության մեջ է դնում եզրի ևս մեկ հոմանիշ՝ «Դեմք», որը «Դեպք» բառին գալառական պատկերապահ աղավաղումն է՝ որով կը հիշվի հայկական ընդհանուր կոտորածներու տարին...»: Տե՛ս «Արյունին մատյանը», Կամիրեն, 1915 թ., էջ 102:

նացել է Աղետի գրականության լիակատար պատմության ստեղծումը: Իսկ այս առումով, թեև ոչ բավարար, այնուհանդերձ անհրաժեշտ նախաքայլեր արդեն կատարվել են: Հայոց ցեղասպանության մշակութաբանական առումների քննությունը, գրականության մեջ անդրադարձների ուսումնասիրությունը, առավել կամ նվազ ընդգրկումներով և խնդրադրությամբ, դարձել է հետազոտության առարկա: Այս առումով շահեկան են Գրիգոր Պղլտյանի, Մարկ Նշանյանի, Էրվին Սթառլի, Ռուբինա Փիրումյանի այն հետազոտությունները, որտեղ հայոց ցեղասպանության մշակութաբանական և գեղարվեստական ընթերագրումները համեմատական քննության են ենթարկվել<sup>4</sup>, զուգագրվել և զուգահեռվել այս ժողովուրդների ողբերգություններին:

Այսպիսով՝ Աղետի գրականության ընձյուղումը թե՛ ժամանակագրությամբ, թե՛ գոյագորած մետաֆորների ստեղծաբանական մեկնություններով և թե՛ մետաժանրին դրսերումներով 19-րդ դարավերջի 20-րդի 10-ական թվականների արևմտահայ գրական կյանքի ընդհանրական ներկայություններից էր: Անդրադառնալով այս երեսույթին Հակոբ Օշականը մատնանշում է. «Պղլտյան այդ գաղթը մեր գրականության մեջ հազիվ անդրադարձ մը պիտի ունենար, հակառակ անոր, որ մեկե ափելի էին քանքարավոր գրողները այդ կարավաններուն մեջ»<sup>5</sup>: Դժվար չէ նկատել Վարպետի վերապահությունը, «հազիվ անդրադարձը» պայմանավորված էր Աղետի ցան ու ցիր գրականացմամբ, մետաժանրային տիրույթներում հպանցիկությամբ, այնինչ մշակութային-գրական ներկայությունը ենթարկում էր հետեւղական համակարգի առկայություն:

1894-1896-ի գանգվածային ջարդերի, անկումների և մղձավանջի, սարսափների, հակազդեցության գեղարվեստական արձանագրությունները, սովորական մահկանացուների բնագրային սևեռումները պատմավիպասանության առասպելացված գործող անձանց աշխարհի, հերոսների փոխարեն ըստ ամենայնի «նորավիպացվեցին», ձեռք բերեցին ժանրային գերակա հղացքի հանդերձ, փաստորեն ինքնորոշեցին Աղետի գրականությունն իրեւ գեղարվեստական համակարգ, և այս առումով ուրույն և առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեցին Աղետի գրականության պատմության մեջ:

4 Էրվին Սթառլի մասնավորապես իր «Հայերի ցեղասպանություն. Հոգեբանական և մշակութային ակունքներ և վերարդողների վրա թողած ազդեցություն» հոդվածում զարգացնում է տակավին իր հետեւակած «Զարդ ակունքները» մենագրության մեջ առաջարկած Եղեռնի մշակութային-հասարակական, հոգեբանական ակունքների հիմնադրույթը և, ի շարու այլ խնդիրների, անդրադառնում նաև Աղետի մշակութային հախաղողական թիմի գեղարվեստական համակարգ, և այս առումով ուրույն և առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեցին Աղետի գրականության պատմության մեջ:

5 Հիշատակենք Ռուբեն Փիրումյանի զեկուցումը հայոց Եղեռնի և հրեաների Ողջակիզման գրական անդրադառների մասին, որով առ հանդես եկավ 1991 թվականի հոկտեմբերի 8-ին Սփյուռքահայութան հետ մշակութային կապերի կոմիտեի հիմնադրույթը և, ի շարու այլ խնդիրների, անդրադառնում նաև Աղետի մշակութային հախաղողական թիմի գեղարվեստական համակարգի առաջարկած «Հայ գրականության և քննադատության հարցեր» գիտական հատաշրջանում: Նշենք նաև նրա Հ. Օշականի գեղարվեստական ժառանգության մեջ Սղեսի պուտիկային նվիրված «Հակոբ Օշականի Սղեսի գրականությունը. 1915-ի Եղեռնի դիմակայության պաքարը» ուսումնասիրությունը: Տես «Journal of the Society for Armenian Studies», Volume 4, 1988-1989, p. 105-142.

5 Հակոբ Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականության», Անթիլիաս, Լիբանան, 1979 թ., հ. 7-րդ, էջ 194:

\* \* \*

Արևմտահայ նորավիպագրության մեջ Աղետի գրականության՝ իբրև համակարգի և գերակա հղացքներից մեկի դրսելորումը պայմանավորվում էր ժանրի բնույթով և առարկայական հնարավորություններով, կառույցի և ձեւաբանության հարացույցի առանձնահատկություններով։ Հղացքի խնդրագրությանն ի տեղի մանրամասն կանդրագառնանք, այստեղ ծանրանանք ժանրի բնույթային և ձեւաբանական այն հատկանիշներին, որոնք Աղետի նորավիպագրացման (նովելիզացիայի) համար ունեցան կառուցողական-արարողական նշանակություն՝ գեղարվեստական համակարգ առկայի լիս։ Նախ՝ ժանրի ծագումնաբանական ակունքում ամրագրված նորոգության արքետիպը՝ «սոկրատյան երկխոսության նախահիմքը», որ անընդհատ ապահովում է պատկերագրման հարմարվողականություն, ապա՝ տակավին 1880-ականներին համաշխարհային նորավիպագրության հարգի, կիրարկվող կառույցներից այսպես կոչված «արձակ պոեմի» և «Հոգեբանական սկեթչի» ներժանրային մոդելները<sup>6</sup>, լիակատար հնարավորություն էին ընձեռում համակարգի ընձուղման և հաստատագրման համար։ Եթե ժանրի հարմարվողականության էույթը պայմանավորվում էր հատկապես իրականության արկած հանգույցներով, բախտորոշ ու գրամատիկ անցքերով, անցումայնությամբ, այս պարագային ըստ ամենայնի իրացնելով օպերատիվության, և դույզն-ինչ չխափարելով, չտարտղնելով գեղարվեստականությունը՝ վավերականի<sup>7</sup> տառացի տեղակայումների, գետեղումների անկրկնելի հնարավորությունները, ապա այսպես կոչված «արձակ պոեմի» և «Հոգեբանական սկեթչի» ներժանրային խայտարդես մոդելներն իրենց էպիկական ընդգրկումներով և ներաշխարհային սուզումների ընդարձակությամբ Աղետի համակարգված գեղաձևման հնարավորություն նորավեպին ընձեռում էին։ Աչա թե ինչու բացառապես այս ժանրը գոյավորեց գեղարվեստական համակարգ արհավիրքի գրականության համարնագրում։ Հատկապես նորավեպն ուներ համարժեք կշռութային, ոճական և կոմպոզիցիոն կարելիություններ ցուցանելու Աղետի գգայնության, ապրումի երփնագիրը։ Ռուբեն Զարդարյանի 1910-ին հրատարակած «Յայգալույս» ժողովածուն (Հատկապես՝ «Յեղին զավակը» և «Հայրենիքս կուզեմ ես» նորավեպերը) Աղետի ժանրային հանդերձման յուրօրինակ միջնարարն էին, որին նախորդել և հաջորդել էին ժանրային մանրամասն բազմաթիվ փաստեր, արդեն ապահովել համակարգի բոլորեքյանությունը՝ և արևմտահայ գրականության Պոլսու և Գավառի դրսեորումներում, ըստ այսմ դառնալով «համաձայնական»<sup>8</sup> (գեղագիտական, ստեղծաբանական առումներով) եղակի երևույթներից, և Աղետի արտաքին ու ներքին

6 Այսպես կոչված «արձակ պոեմի» և «հոգեբանական սկեթչի» թեմատիկ-հղացքային արտակարգ հարմարվողականությունը մատնանշում են նաև ժանրի անգիտագիր դրսեորումների ուսումնասիրությունը։ Տես՝ օրինակ Քեթը Հանտնի մեմագրությունը՝ “Short stories and short fictions, 1880-1980”, London, “The Macmillan Press LTD”, 1985, p. 34.

7 Նկատի ունենք “non fiction” եզրով բնորոշվող այն հնարանքը, երբ գեղարվեստական ստեղծագործությունը առանց «կորուստների» իր կառուցվածքում ներփակում և ներդաշնակում է վավերական լրատվությունը։

8 «Համաձայնական դրսեորման» պերճախոս վկայությունն էր, ի շարու բազմաթիվ գեղարվեստական ստեղծագործությունների հրատարակման, բանավեճերի և հոդվածների, Ռուբեն Զարդարյան

պատկերագրումներում՝ մղձավանջից, անկումների սարսափից մինչև արհավիրքի առտնին դրվագների վերհանում, փախուստից, տեղահանությունից մինչև բարոյահոգեբանական փոխածեռությունների, գյուղաթյան հեռանկարների դրվագում և թե վերլուծական մտքի մտահոգություններում<sup>9</sup>:

Արևմտահայ նորավիպագիրների գերակշռող մեծամասնությունն իրենց ստեղծագործություններում անդրադարձում էին Աղետի երփնագիրը: Պարբերականներում իրար էին հաջորդում ժանրով ստեղծված համապատասխան երկեր, լույս էին տեսնում բացառապես արհավիրքին նվիրված նորավեպերի ժողովածուներ և, ինչպես արձանագրեցինք, անմասն չէր մնում ողբերգության ոչ մի դրսեռորդում: Այսպես՝ Միքայել Նաթանյանի «Հեղնար (Հայ շինական կյանքե)» նորավեպը<sup>10</sup> կենտրոնանում էր Աղետին դիմադարձվելու քարոզարանային դրսեռորդումներում, Կարապետ Գալայճյանի «Եղեռնին զոհը» Աղանայի կոտորածի գրեթե վավերական պատկերագրումն էր<sup>11</sup>, Վահան Ամանյանի «Վրեժի գարեն»<sup>12</sup> նորավեպի երիտասարդ հերոս Գուրգենը թեև սպանում է լրտես Մելքոնին, որը շատ երիտասարդների էր մատնել արհավիրքի տարիներին, սակայն իր պատճառով բանտարկված հայ քաղղենուն ազատելու համար հանձնվում է, այնուհետև կախաղան հանվում, հեղինակը միանշանակ ընդգծում է մղձավանջներ ապրած մարդու վսեմ բարոյական նկարագրի սենտենցը և այլն: Բացառապես Աղետի նորավիպային անդրադարձներն էին 1900-ականներին լույս տեսած Տիգրան Աղճյանի, Մկրտիչ Պոտուրյանի, Սուրեն Պարթևյանի ժողովածուները<sup>13</sup>:

Հարկ է նշել, որ Աղետի արևմտահայ նորավեպում համակարգված անդրադարձը պայմանավորել է նաև վերնագրային կազմաբանության յուրօրինակ ընդհանրություն, խորագրերի, վերնագրերի լրատվության մեջ խորհրդանշանացնելով «սև» միավորը՝ «Սև պատկերներ», «Սև էջը», «Սև հարսանիք», «Յայգալույս» (իբրև տարբերակ): Գորշ տոների թանձրացականացումը մի կողմից նորավեպերի պոետիկայում ամրակցել է գործուն տպավորապաշտականություն, ինչպես ասենք Հակոբ Տեմիրճյանի «Սև գիշերներ» նորավեպում. «– Ճիշտ է, քույր ջան, ամեն կողմ սև լուրեր կան, ամեն կողմ սև դեպքեր տեղի կունենան... գյուղերը ամբողջ կրակի են տվեր, հազարներով մարդիկ են սպան-

յամի ստեղծագործությանը նվիրված գրական աստվիսը. «Մեզի համար,- շեշտում էր բանախտսներից Երուսաղմ.- գավառացի գրագետը ինքնատիպ անձ մըն է, վասնզի գավառը երանելի աշխարհն է ամեն տարածնակ Հայո համար, անհիկա սրբազն բան մը ունի իր մեջ: Անհիկա ոչ միայն մեր սրտին, նամանավանդ մեր զգայությանը վրա կը զորե խորապես» (Գրական ասուլիսներ Դ., Կ. Պոլիս, 1913 թ., էջ 14): Նախընթաց արհավիրքների և մոռալ ապագայի խորքին Երուսաղմի այս դատումը լիովին ներդաշնակվում է խնդրո առարկա համարնագրին, քանզի սրբագությունը գիտակցվում էր նաև Աղետից բնաշխարհին հասցված առավել հարվածներով, ժողովորդի պատմական հեռամելարի լինելիությամբ:

9 Արամ Անտոնյանն օրինակ «Դեպի նոր հորիզոններ» վերտառությամբ գրության մեջ ընդգծում էր «ցեղի առօրյային դարձվելու գրականության հրամայականը՝ ներառականությունը Աղետի ունենալով ապրված ողբերգությունը: Տես «Լուս», Կ. Պոլիս, 1908 թ., № 1, էջ 1-7:

10 «Ծիրակ», Կամիրե, 1906 թ., № 2, էջ 65-87:

11 Կ. Գալակնան, «Եղեռնին զոհը», Կ. Պոլիս, 1914 թ.:

12 Վահան Ապլան, «Վրեժի դարեն», Կ. Պոլիս, 1908 թ.:

13 Տե՛ս Տ. Աղճյան, «Սև պատկերներ», Կ. Պոլիս, 1910 թ.: Մ. Պոտուրյան, «Սև էջը», Վենետիկ-Ս. Ղազար, 1910 թ.: Ս. Պարթևյան, «Քայլայում», Առվենի «Հայութիմ», Կ. Պոլիս, 1911 թ.:

ներ, թալան կա... քաղաքը ամեն կողմերեն պաշարված է եղեր... որդեզուրկ մայրերն ու սեավոր ջահեները որքա՞ն արյուն-արցունք կը թափեն հիմա հարամիներուն ձեռքը, քո՛ւյր ջան...»<sup>14</sup>: Մյուս կողմից՝ սատարել ընթերցողական մակարդակում դիմակայության ոգու հառնումին, ինչպես Հմայակ Արամյանցի «Սև հարսանիք»<sup>15</sup> ստեղծագործության մեջ:

Արձանագրեցինք, որ աղետի անդրադարձումները 1890-1910-ական թվականների արևմտահայ նորավիպագրության գերակա հղացքներից է: Բացի ազգային ողբերգության ինքնին հասկանալի և պատճառականացված պատկերագրումից ի՞նչն էր էական-արարողական այն խթանիչը, որ ժանրին արհավիրքի գեղարվեստական համակարգ առթելու հնարավորություն էր ընձեռում: Անսովոր իրադարձությունների, անհատի նորմայից զարտուղված բարոյահոգերանական իրավիճակի, ես-ի երկիրկիվածության, գոյության խելահեղ, կատարածնային (ապօկալիպսիսյան), անհատի փորձության և երկրնտրանքի ծայրահեղ պրկավածության դրսելորումները: Թվարկածի տարերքը, գրականացման և գեղաձևման առավելագույն արգասավորությունը նորավեպի ժանրի պատմական պոետիկայում կազմավորող-բնույթային էույթ է: Վերածնդիր մինչև գերժամանակակից փոքր արձակ, այնպես որ ժանրի լիարժեք հանդերձումը խնդրո առարկա հղացքի պարագծով միանգամայն բնական էր և ենթադրելի: Այս պարագային հարկ է նշել Աղետի հղացքի մի կարևոր օրինաչափություն ևս. արևմտահայ նորավիպագրությունը արհավիրքի գեղարվեստականացման ընթացում համագրեց Աղետն ու դիմակայությունը, շատ հաճախ դրանք դարձնելով անկապտելի միակցում: Արդ, բազմաթիվ նորավեպերից մի քանի օրինակներով մանրամասնենք Աղետի հղացքի պարագիծը: 1890-ականներին արևմտահայ գրականության մեջ հայտնի վիպասան, նորավիպագիր Մարի Սվաճյանը 1896-ից կենտրոնացավ Աղետի հղացքի փոքր արձակ ստեղծագործություններին<sup>16</sup>, որոնցից լավագույնն անշուշտ «Արյունը» նորավեպն է<sup>17</sup>: Կոստանդնուպոլսում զանգվածային կոտորածների առաջին մայրամուտն է, ոչ գեղատեսիլ Վոսփորը, ոչ շրջակա կանաչ լեռները չեն գուժում վերահաս ողբերգությունը, գեղանի Արտեմը պատրաստվում է տուն վերադառնալ թուրք փաշյի ապարանքից, որտեղ ծառայում է, սակայն փաշյի Համտի որդին գույժը տեղ է հասցնում. «արտեմ, ըսավ երիտասարդը, քալե փախչինք, աս գիշեր Հայերը պիտի ջարդեն: Նորատի աղջիկը սարսուաց: «Սուլթանը, կրկնեց Համտի, հրաման ըրեր է և հայրս պալատեն դառնալուն մեզի իմացուց»: Կոլիզիան սրբնթաց հանգուցալուծվում է՝ չնայած Արտեմին հասնող աղաղակներին, հոր՝ ձկնորս Պողոսի եղեննամահ լինելը իմանալուն և հստակ սպանվելու հեռանկարին, նա չի անսում երիտասարդի հորդորներին ու սպանալիքներին և պահպանում է արժանապատիվ ու բարոյական նկարագիրը: Ստեղծագործության

14 «Ազդակ», Կ. Պոլիս, 1909 թ., համար 22, էջ 314:

15 Տէ՛ս Մ. Տ. Շվոտ, «Սև հարսանիք» (Պատկեր տաճկարայոց իրական կյանքեն), Որուչուք, 1904 թ.:

16 Ա. Արփիարյանը Մարի Սվաճյանի գրականությանն անդրադառնալիս առանձնահատուկ շեշտում է, որ «1896-ին Պոլտան Բարիզ փոխադրվելով մեր արդի կյանքեն վիպակներ գրեց, նյութը ընտրելով օրվան աղեսարշ դեպքերը»: «Գեղունի», 1905 թ., էջ 55:

17 Տէ՛ս «Նոր կյանք», Լոնդոն, 1898 թ., № 3, էջ 34-35:

մեջ ուշադրության է արժանի արհավիրքի հանկարծակիության, անսպասելիության շեշտագրությունը, ռեպորտաժային ուղղորդությունը: Գրեթե հար և նման կաղապարն է Վահրամ Սվաճյանի «Վարժուհին»<sup>18</sup> նորավեպում, որտեղ մանկապարտեզի դաստիարակը մղձավանջից մազապուրծ, հոգնաբեկ և հուսահատ փախստականներին պատմելով իր սանի՝ փոքրիկ Լեռնիկի արժանապատիվ արարքը (այս մանչուկն առանց երկնչելու դիմակայել էր արյունուշտ ելուզակներին և զոհվել), ոգեկոչում էր արժանապատվությունն ու դիմակայության կեցվածքը:

Հետաքրքրական է այն հանդամանքը, որ հատկապես հղացքի նորավեպային անդրադարձի հրատապությունն ու արդասավորությունը ամրակայվել էր նույնիսկ երդվալ բանաստեղծների ստեղծագործական գիտակցության մեջ: Այս իմաստով պերճախոս է «իրավ բանաստեղծների» համաստեղությունից ականավոր Վահան Թեքեյանի ժանրային իրագործումը: Նրա Վահան Տիրանյան կեղծանունով հեղինակած «Ճահիլը» նորավեպը<sup>19</sup> հղացքի պարագծում հավելագրում է հայ անհատի դարձումի հանգանակը: Հովիկին ճարպկության և կենսուրախ բնավորության համար համազուղացիները ճահիլ մականունն են տվել: Հարևան գյուղից փախցնում են Մարեին, սակայն ծնողները չեն ցանկանում նրան ամուսնացնել: Վիրավորվում է բոլորից և լքում գյուղը: Մի գնչուից լարախաղացություն է սովորում և մեծ համբավ ձեռք բերում: 1896-ին թուրքերից տեղեկանում է, որ իր գյուղն էլ են կոտորել, վերաարթնանում է հայը և մի ներկայացման ժամանակ իր ձողով գահավեժ է լինում ամբոխի ամենաստվար մասում:

Հղացքի պարագիծը ներառում է էլեգիական պատումների մի բույլ, ուր Աղետն ու գիմակայությունը ցուցանում են անբավելի դրամատիզմ և ողբերգականություն: Սա հատկապես բնորոշ է Մկրտիչ Պոտուրյանի «Սև էջը» ժողովածուին, որի լավագույն նորավեպերից «Հոգեվարքի բազուկներու մեջ»-ը<sup>20</sup> ուրվագրում է արհավիրքի հետևանքները: 1896-ին մանկամարդ կինը իր պատիվը պաշտպանելիս սպանում է թուրք ելուզակին: Կողջ ամուսինը՝ Ավետը, հանցանքն իր վրա է վերցնում: Կինը զօրուգիշեր աշխատում է որդու՝ Զաքարիկի համար: Նրա առողջական վիճակը վատթարանում է: Երիտթուրքական հեղափոխության ընդհանուր ներումից հետո Զաքարիկը գնում է Պոլիս՝ բանտում հորը տեսնելու: Հյուծված և լլկված Ավետը վախճանվում է: Զաքարի վերագարձին մահամերձ էր նաև մայրը:

Արևմտահայ նորավիպագրության անդաստանում Սուրեն Պարթևյանն առանձնանում է Աղետի և գիմակայության գեղարվեստական անդրադարձներում, քանի որ նրա այս ժանրով ստեղծված ժառանգությունը բացառապես սկեռված է հղացքի տիրույթներում: «...Սուրեն Պարթևյան այդ սարսափներու մեջ է, որ երկնած է իր գործը, որ այլամերժ, չըսելու համար կատաղի մասնավորմամբ մը նվիրված է այդ գգայնության սկեռումին», – բանաձեռում է Հակոբ

18 Նովմ տեղում, համար 23, էջ 354-355: Վ. Սվաճյանը և 1894-1896-ից հետո իր նորավիպագրության մեջ ծավալում տեղ հատկացրեց Աղետի անդրադարձներին:

19 Տե՛ս «Ծիրակ», Ալեքսանդրիա, 1905 թ., № 3, էջ 195-211:

20 «Սև էջը», էջ 95-117:

*Օշականը*<sup>21</sup>: Եվ իրոք թե՛ «Քայքայում», թե՛ «Հայուհին» ժողովածուներում Աղետը մանրամասնվում է բազմապլան կենտրոնացումներով. գաղթ, տառապանք, ցավի արժեքների շահարկում, ֆիլիստերություն և մարդորսություն, հոգեորսություն քաղաքակիրթ աշխարհի կողմից, ուժացում, միաժամանակ՝ հայ կնոջ բարոյական վսեմ նկարագիր, կենսունակության գերուժ, և այս բոլորը պաթետիկ-հոետորական շեշտադրությամբ, մարտնչող հրապարակախոսությամբ, անկումների սարսափի, մղձավանջի և հեղված արյուն, մարդկային գոյության բողլերյան «Զարի ծաղիկների» անթաքույց ալյուզիաներով պոետիկական համակարգում («Զապել», «Փրկության բանակը», «Մղձավանջը», «Աղուաները», «Գաղթականը»՝ «Քայքայում» ժողովածուից, «Սայքո», «Հացին ուժը», «Զավակը», «Պառավը», «Կարմիր Շուշանը»՝ «Հայուհին» հատորից և այլն)<sup>22</sup>:

Աղետը և արհավիրքն անխուսափելիորեն ներբերում էին հոգեոր-բարոյական արժեքների կորուստներ, յուրատեսակ ներքին աղետ, որի կենտրոնացմամբ արևմտահայ նորավիպագրությունն իր կարելիություններով փորձում էր դիմադարձիկել «Հոգեոր պարտություններին»: Այսօրինակ ստեղծագործություններից հիշատակության են արժանի Սուրբն Պարթևյանի «Պուտ մը ջուր»-ը, Մկրտիչ Պոտուրյանի «Ուրացիր»-ը և ենովք Արմենի «Տուրսեցին», որը մտայնության բյուրեղացումն է: Գավառացի Խաչոն ջարդերից մի կերպ փրկվում է, ընտանիքը կորցրած հայտնվում է Պոլսում և գոյությունը մուրալով քարշ տալիս: Մի հայ կնոջից հին, թունավոր հաց է իբրև ողորմություն ստանում, որից և մահանում է: «Խեղճ «Տուրսեցի» Խաչոն, որ հոգին ազատելե ետքը թուրքին սուրբն և կրակեն, կուգա եղեր մեռնելու «Պոլսեցի» հայ «հանըմին» թունավոր հացեն»<sup>23</sup>, – ամփոփագրում է պատմողը: Անտարբերությունը, դաժանությունը, կարեկցանքի չգոյությունը գուգադրվում են արտաքին աղետին և հղացքի պարագծում վերջնականապես ամբողջացնում (գաղթի, փախստականների վավերական սեեռումների հետ)<sup>24</sup> ներքին աղետը:

Հաշվարկը ցույց տվեց, որ 1894-1896-ի Դեպքերի (բառը կիրառում ենք եղրի գործառնությամբ) նորավեպային անդրադարձները արևմտահայ գրականության մեջ (պարբերականներում, առանձին գրքերով և ժողովածուներով հրատարակվածները ներառյալ) ունեն երկու հարյուր հիսունից ավելի դրսեորում: Այսինքն՝ Աղետի և դիմակայության հղացքով գրվել և լույս է տեսել ավելի քան երկու հարյուր հիսուն նորավեպ, ուստի բնական էր, որ ժանրը նման վիճակագրությամբ անխտիր պիտի ունենար իր հանգրվանները թե՛ կառուցվածքի և

21 «Համապատկեր», հու. 7, էջ 353-354:

22 Ս. Պարթևյանը հար և նման Արարունյանի «զուլումի երգիչ» համարում ուներ: Հատկանշական է, որ թե՛ իր ժամանակակիցները և թե՛ հետագա ուսումնակիրողները նրա գրական ժառանգության մեջ որպես բարձրակետ առանձնացնում են «Քայքայում» ժողովածուն, Արտաշես Հարությունյանը ի տարբերություն Պարթևյանի «Կիլիկան արհավիրքի», որը համարում էր «լրագրական աճապարու ու հնասպան հոդվածներու անկարեան հուշատետր», այս ժողովածուն գնահատում է իրեն «ցավալիորեն ճոխերանգ պատկերաշար», որը «անհրաժեշտաբար ճաշակելու են բոլոր ճշմարիտ գրասերները»: «Բյուլանդիոն», 1910 թ., № 4114:

23 Տե՛ս «Մեր տարեցուցը», Կ. Պոլին, 1910 թ., էջ 56:

24 Նշենք 1898-ին Վանայի «Ծարժում»-ում լուս տեսած Կարապետ Տողրամաճյանի «Արցունքը» և «Լուսնկա գիշերով» նորավեպերը:

ձևաբանության կատարելիությամբ և թե՛ գեղարվեստական արժեքայնությամբ։ Երեք ստեղծագործության համառոտ ճեպագրերով ներկայացնենք հղացքի հանդրվանային արժեքները։ Պարթևյանի «Հայուհին» ժողովածումը է գետեղված «Քույրը» նորավեպը<sup>25</sup>, որի մղձավանջային պատումը և կոլիզիայի սրբնթաց հանգուցալուծումը ցնցող է իր ահազնությամբ։ Փոքրիկ Զապելի աչքի առաջ սպանել են եղբորը՝ Արամին, որը մերկ ձեռքերով պաշտպանել է աղջնակին։ Շատերի նման նրան ևս պարուհի են գարձրել՝ խրախճանքների ժամանակ զվարճանալու համար։ Երեկույթներից մեկի ժամանակ Զապելը անակնկալ հանդիպում է մեծ եղբորը՝ Ավետիսին, որն իբրև թուրք էր իրեն ներկայացնում։ Քույրը թախանձում է իրեն դուրս հանել այդ որջից, եղբայրը հրաժարվում է։ Զապելը սկսում է մոլեգին պարել, խենթացել էր։ Աղետի և դիմակայության անդրադարձի կատարյալ նորավեպ է Երվանդ Օտյանի «Լևոն թագավորին սուրբ»<sup>26</sup>, որտեղ պատմության վերակոչումը ողբերգությունից բեկված, կորսված մարդուն կրկին դարձնում է լիարժեք անձնափորություն։ Զարդերից մազապուրծ մի խումբ հանգրվանել է Հունաստանի Պիրեյ քաղաքում։ Որոշում են այցելել տեղի թանգարանը, սակայն ոչ մի կերպ չեն կարողանում համոզել Գալուստին, որպեսզի իրենց ընկերակցի։ Նա կոտորածից հրաշքով էր փրկվել։ Թաքնվել էր անգլիացի Զոնսընի գրասենյակի սեղանի տակ և պարզապես ողջ մնացել եղբոր՝ Վարդանի չնորհիվ, որը Գալուստից ուշադրությունը շեղելու նպատակով դուրս էր եկել թաքստոցից և անհավասար մարտից հետո գոհվել։ Գալուստը դրանից հետո գրեթե չէր խոսում, վախի տագնապներ էր ունենում։ Երբ մի կերպ թանգարան են տանում և այնտեղ իբրև ուղմավար թուրքական դրոշն է տեսնում, իսկ իբրև ցուցանմուշ՝ Լևոն թագավորի սուրբ, կերպարանափոխում է, բալասանվում։ Աղետի հետևանքները շատ հաճախ ունենում են ֆանտասմագորիկ, աներևակայելի շրջադարձներ, իսկ անսովորի, «անհավանականի» տարեքը նորավեպն է։ Ի. Ն. ստորագրությամբ «Մահվան պես դառն»<sup>27</sup> ստեղծագործությունը բեկուացել է այս հանգամանքի վրա։ Երիտասարդները նոր-նոր են ամուսնացել, ամուսինը կնոջը պատմում է իր կյանքի դրաման։ Ապրում էր հրաշալի գյուղում՝ ավագ եղբայրների, քրոջ և ծնողների հետ։ Արհավիրքի տարիներին քրոգերը գյուղը կողոպտելիս սպանում են ծնողներին և եղբայրներին։ Ինքը վիրավոր և ուշագնաց հայտնվում է հիվանդանոցում և ահա որքան ժամանակ քրոջից որևէ տեղեկություն չունի։ Կինը հարցնում է քրոջ անունը և պատասխանը լսելիս բացականչում՝ եղբայր։

Արևմտահայ նորավեպի այս դրսեորումը ժամարի կառուցվածքին-ձևաբանական հարացույցում կիրարկում էր ինչպես 19-րդ դարի և 20-րդի սկզբի նորավիպագործությանը բնորոշ կաղապարները՝ նորավեպ-դիմանկար, ավանտուրիստական նորավեպ<sup>28</sup>, նորավեպ-քարոզարան, նորավեպ-միստերիա և այլն,

25 «Հայութին», էջ 47-62:

26 Օտյանը այն ստորագրել է Վահրամ Կեղծանունով։ Տե՛ս «Նոր կյանք», 1898 թ., համար 16, էջ 244-247։

27 Տե՛ս «Օավիդ», 1900 թ., համար 14, էջ 219-222։

28 Աղետի դիմակայության ավանտուրիստական նորավեպերից է Ռ. Ասապյանի (Եվդոկիա, 1911 թ.) «Փոքրիկ հերոսը», որտեղ զանազան արկածների բովում շնչառվում է ընդվզման և արժանապատիկ գոլության հանկերգը։

այնպես էլ փոխաձևում՝ ներժանրային կառույցները (օրինակ՝ կաղանդային նորավեպերը) և Աղետի ու դիմակայության գեղարվեստական հանգուցման համար գոյավորում ինքնատիպ ենթատեսակներ: Վերջինս արևմտահայ նորավեպագրության մեջ արտահայտվեց այսպես կոչված «բուլղարական պատումների» ժանրային հանգերձով: Բալկանյան ժողովուրդների, մասնավորաբար Բուլղարիայի ազատամարտի ստեղծագործական սկեռումները ներազգելու, ուղղղորդելու հրաշալի հնարավորություն էին ընձեռում<sup>29</sup>: Ավելացնենք նաև, որ հզացքով ստեղծված երկերին բնորոշ են պատումային զանազան մոդելները և սրանց զուգադրված՝ հրապարակախոսական միջարկությունները: Հմայակ Արամյանցի «Հերոսուհիներ»<sup>30</sup>, Տիգրան Աղճանի «Հեղափոխության զոհը»<sup>31</sup> և հատկապես Մինաս Չերազի «Վերջին պարը»<sup>32</sup> նորավեպերը Հռիփսիմյան կույսերի վկայաբանության ոճավորված միստերիաներն էին: Վերջապես՝ «կաղանդային նորավեպերում»<sup>33</sup> 1894-1896 թթ. իրադարձություններից հետո, տեղի է ունենում հստակ փոխաձևություն՝ հոգեսր ներդաշնակության սրբազնությունը տեղափոխվում է հայրենիքին նվիրաբերելու հարթություն:

1915 թվականին Կահիրենում «Զինվորական նպաստ հայ կամավոր գունդերուն» վերտառությամբ լույս տեսավ Ս. Պարթևյան «Արյունին մատյանը» ժողովածուն, Աղետի և դիմակայության արևմտահայ նորավեպագրության վերջին անդրադարձը, այս հատորը սահմանագիծն էր, որից անդին Հակոբ Օշականի սքանչելի «Կայսերական հաղթերգործություն» ժողովածուով ի սփյուռս և Հայաստան սկսվում էր նոր շրջափուլ՝ Հակոբ Օշական, Հակոբ Մնձուրի, Համաստեղ, Արամ Հայկազ, Շավարշ Նարգունի: Եվ այս առիթով կրկին վերհիշենք «Հայոց ոսկյա երազի»՝ հայ գրականության նորավեպագիրների այն համաստեղությանը, որոնք նահատակվեցին Մեծ եղեռնին. ԲԱՐՄԵԴՅԱՆ ԳԵՂԱՄ, ԲՅՈՒՐԱԾ ՍՄԲԱԾ, ԳԱԶԱՆՁՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ, ԵՐՈՒԽԱՆ, ԶԱՐԴԱՐՅԱՆ ՌՈՒԻՐԵՆ, ԶՈՂՐԱՊ ԳՐԻԳՈՐ, ԹԼԿԱՑԻՆՑԻ, ԹՈՐՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ, ԼԱՐԵՆՑ ԼԵՎՈՆ (ՔԻՐԻՇՇՅԱՆ), ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, ՀՐԱՆԴ (ՄԵԼՔՈՆ ԿՅՈՒՐԺՅԱՆ), ԸԱՀՊԱԶ ԲԱՐՄԵԴ, ՈՍԿԵՐՉՅԱՆ ԳԱԳԻԿ, ԶՅՈԿՅՈՒՐՅԱՆ ՑԻԳՐԱՆ, ՍԱՅԱՊԱԼՅԱՆ ԺԱԳ, ՓԱԾԱՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ, ՔԵԼԵԿՅԱՆ ՑԻՐԱՆ, ՕԶԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ, ՕՏՅԱՆ ՑԻԳՐԱՆ (ԱՍՈ):

29 «Բուլղարական պատումների» բյուրեղացումը վերապահված էր Հրանդին, որի «Բարի ճանապարհ» և մանավանդ՝ «Պսակը առանց հարսի» (Ծանթ, Կ. Պոլիս, 1913 թ., № 52-53, էջ 51-63) ստեղծագործությունները լիովին արդարացրին ժանրային այս տարատեսակի գոյությունը:

30 Տե՛ս Հ. Արամյանց, «Հերոսուհիներ», Կ. Պոլիս, 1909 թ.:

31 «Սև պատկերներ», էջ 15-17:

32 «Ամենուն տարեցուցը», Կ. Պոլիս, 1909 թ., էջ 64-67: Զերազը ստեղծագործությունը գրել է 1908-ին: Նշանավոր հայ պարուիները, որ իրենց արվեստով բոլորին գերել էին, 1895-ին մարտիրոսանուն են՝ իրենց գետը նետելով:

33 Այս շարքի լավագույն նորավեպերն են անշուշտ Կ. Տողորամանյանի և Երուխանուն «Կատնոշեք» ստեղծագործությունները: Եթե Տողորամանյանի (տե՛ս հրա «Նշխարներ» ժողովածուն, Ֆիլիպե, 1907 թ., էջ 122-134) պաթետիկ հերոսական պատումը «բոլոր հայ աքսորյալներու ալեգորիկ ուղերձն է արթնացման», ապա Երուխանունի (տե՛ս «Շավիդ», 1900 թ., № 3) Գ. Սուրմալյանը. որ իրու ազատամարտի նախանձախնիր դատապարտված էր կախաղանի, պատվախնդիր ոգու հավերժությունն է պատգամում իրու ամանորի և Սուրբ ծննդի նվեր:

## ԺԱՆՐԱՅԻՆ ՊԱՐԱԿԱՆՈՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՈՐԱՎԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**Կ**որ շրջանի գրականության պատմության համապատկերում արձակի ժամրերի ձևաբանությունն ու կառուցվածքը բնույթով հանգրվանային-ավարտուն են, որ արդյունք է պատմական նախորդած հսկայական ժամանակաշրջանի (Միթոս-բանահյուսություն-Անտիկ գրականություն-Վերածնունդ-Միջնադար փուլերի) գրապատմական, մշակութարանական, գեղագիտական, ստեղծաբանական, պոետիկական, ներժանքային փոխաձևություններից, առընթերազրումներից, տեղաշարժերից ածանցված ինքնորոշման: Արդեն ոռմանտիզմի բանարվեստում արձակի ժանրերը, լիակատար ամբարված ծագումնաբանական դաշտի համադրային հայտանիշներով, գրական գործընթացում ամրագրել էին վեպի և փոքր արձակի կառույցը, որի հետագա տեղաշարժերը (իրապաշտության, բնապաշտության, տպագորապաշտության, նեովիպապաշտության ու XX դարին բնորոշ հոսանքներում և ուղղություններում՝ գերիրապաշտություն, «մոդական» իրապաշտություն և այլն) ժանրակազմության հարցույցի տիրույթներում, ըստ էության, չեն հավելել ձևաբանական-կառուցվածքային գոյագորող էամասեր:

Եթե արևմտաեվրոպական և ոռուսական նոր շրջանի գեղարվեստական փոքր արձակի ծագումնաբանության մեջ վճռորոշ են ֆարլիոները, շվանկները, ֆացետաները և սկազ-ները (վերջինս հայերեն զուտ պայմանականորեն կարելի է անվանել «գրույց»), ապա հայ գրականության պարագային ժանրի ծագումնաբանության գոյագորող գործառնություններում պետք է նշենք հին և միջնադարյան գրականությունից պատմագրությունը, վարքերն ու վկայաբանությունները, ճառերը, քարոզները, թղթերը, առակներն ու խրատները, գրույցները, զանազան մանրապատումները և, անշուշտ, բանահյուսությունից արտածված հոսքը՝ առասպելներ, ավանդություններ, հեքիաթներ<sup>1</sup>: Շագումնաբանա-

1 Խնդիրը բազմաթիվ ուսումնաակրություններում հետազոտվել է այլայլ տեսանկյուններով: Հայ թին և միջնադարյան գրեարվեստական արձակին նվիրված Մանուկ Մքենյանի (Ալյատի ունենք հատկապես «Հայոց թին գրականության» համապատասխան բաժինները), Նկատս Ակիմյանի, Մկրտիչ Ավգերյանի, Գարեգին Զարբինալյանի, Նիկոլայոս Մանի («Ժողովածոյք առակաց Վարդանա» ուսումնաակրությունը), Կարաբեն Մելիք-Օհանջանյանի, Հովհաննես Օրբելյու, Արամ Ղանապանյանի, Մայիս Սվետաբերդանի, Արմեների Սրալյանի, Հասմիկ Մարգունու, այլոց հետազոտություններում, մենագրություններում և հոդվածներում մանրամասն քննվել են ինչպես փոքր արձակի ժանրային համակարգի, այնպես էլ ծագումնաբանությանն առնչվող բազմաթիվ հարցեր: Կ. Մելիք-Օհանջանյանը, օրինակ, միջնադարյան գրականության մեջ արձակ ստեղծագործությունների առևալությունը դասակարգում է հետևող ձևով. «1) Մանրապատումներ՝ առակ, պատմվածք, զույց, անեկորտ և այլն, 2) Վկայաբանություններ (գլխավորապես ազգայինները), 3) Հրաշապատումներ-հրաշագործություններ, 4) Տեսիլներ, 5) Ապոկրիֆներ-պարականն զովածքներ, 6) Ներորդյաններ, 7) Պերճախոտության հմուշներ, մասնավորապես դրամատիկականացված քարոզներ, 8) Միստերիաներ, 9) Խրատներ, խրախճանքներ և այլն, 10) «Պատմություն կտրիմին և աղջկան», 11) Կենաագրական տեղեկություններ մեր թին և միջնադարյան հետինակների մասին (երբեմն ֆարուղ ունեցող)» (Կ. Մելիք-Օհանջանյան, Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Երևան, 1957, էջ XII):

կան դաշտի խայտաբղետությամբ և առատությամբ հանդերձ՝ հանրահայտ է, որ ժամանակագրական տեսանկյունից նոր շրջանի ժանրի ավարտուն կառույցի գոյավորման ընթացքում վճռորոշ XII-XIII դարերն էին, ժանրակազմության առումով՝ առակները և, մասավանդ, զրույցներն ու մանրապատումները<sup>2</sup>: Մասնավորապես արևմտահայ փոքր արձակի համակարգում 1880-ական թվականներից նորավեպը (փոքր արձակի դրսեորման հիմնական կերպը) իր համանուն զուգադիրներով՝ պատկեր, պատմվածք, իրավեպ, իրական պատմություն, վիպակ, «ֆանթեզի», իբրև լիակատար հասունացած ու վերջնականապես ձևավորված ժանրային կառույց սկսեց գործել գրականության պատմության մեջ և դարձավ գեղարվեստական գործնթացի տիրապետող արտահայտություններից: Ժանրի հեղինակային ընկալման և մեկնաբանության, ստեղծագործական դրսեորման ծագումնաբանական կիզակետում ամրագրված էին գերազանցապես միջնադարյան զրույցի և մանրապատումի արխիտեկտոնիկ տարրերը: Բնականաբար, այս իրողությունը արևմտահայ նորավեպի գեղարվեստական համակարգում, երբ ժանրը բուռն վերելք էր ապրում, պետք է ցուցաներ նաև «Հիշողության» անխառն, մաքուր, բացարձակ արտահայտություններ՝ պատմական այսօրինակ հետահայացությամբ անմիջական «վերակենդանացման» շոշափելիության հասնելով, առավելագույնս մոտենալով կամ հանդիպադրվելով՝ ծագումնաբանական իր հիմքին: Այսպիսով՝ մեկ անգամ ևս փաստվում է «ժանրի հիշողության» առաջադրությունը, այս անգամ՝ «հակադարձ շարժման» մեթոդաբանությամբ: Երևույթը նոր և նորագույն շրջանի արևմտահայ նորավեպագրության համար, ժանրի նորմատիվ և համաձայնողական (կոնվենցիոնալ) ըմբռնումներում ժամանակաշրջանի համարնագրում «շեղում» էր, ժանրակազմության մեջ՝ «պարականոն» (ապոկրիֆ) դրսեորում: Տվյալ գեպքում «պարականոն» եղրը կիրառում ենք այն զրույցների համանունությամբ, որոնք չին և նոր կտակարանների, առհասարակ Սուրբ Գրոց կանոնիկ, օրինական բնագրերի սահմաններում չեն տեղակայվում, այստեղ՝ դրանք «դուրս» են ժանրի նորմատիվ-համաձայնողական կառուցվածքից և ձևաբանությունից: Հայտնի է, որ «պարականոն» եղրը ունեցել է նաև «անկանոն», «անվավեր» նշանակությունը և այս գեպքում՝ նկատի են առնված ժանրային համակարգի համար «անկանոն», չամրագրված («անվավեր») դրսեորումները, որոնք ծագումնաբանությամբ ուղղագծորեն կապվում են Հայ միջնադարյան զրույցների տարատեսակներին: Զրույցները կամ մանրապատումները նոր ժամանակների նորավեպի նախակարապետն են (իբրև պերճախոս օրինակ Հիշատակենք «Հայելի վարուց» ժողովածուն), որոնք իրենց կառուցվածքում ներառում են առակի, հեքիաթի, անեկտոտի բազագրատարրեր՝ մասսամբ կամ գերակա: Պատահական չէ, որ տակավին 1850-ական թվականներից, երբ նոր շրջանի նորավեպը ստեղծաբանական նախաշավիզում էր, ներժանրային համակարգում տիրապետող էին զանազան մանրապատումները (առակագրական, իրա-

2 **Ի. Օրբելի**, Բաշն սրբազնության պատմության ժամանակական ակունքները (Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը, Երևան, 1976, էջ 178, 179):

պատում հեքիաթների հանկերգներով) և անեկդոտները՝ մանրավեպ, մանրադեպ անվանումներով։ Այսպես՝ Մովսես Զոհրապյանց Արցախեցու «Վեպք զվարճալի անցից» ժողովածուում, որ հայ նոր գրականության պատմության մեջ նորավեպի ժանրի առաջին դրսերումներից է, մեծ տեղ է հատկացված մանրավեպերին կամ մանրադեպերին։ Բազմաթիվ օրինակներից բավարարվենք մեկի մեջբերմամբ։ «Երնական քահանայի մոտ բերին մի երեք տարեկան երեխա, որ հետ ծնվելույն սխալմամբ չէ՛ր գրված չափաբերական ցուցակի մեջ։ Գիտնական քահանայն (գուցե դժբախտաբար Հայոց ազգից էր), հետեւելով հավատարմապես սովորական ձևույն՝ գրեց ցուցակի մեջ այսպես՝ այս ինչ տարվու, ամսո օրին և այլն, այս ինչ գեղականի... և նրա ամուսնույն... ծնվել է երեք տարեկան արու զավակ Պետրոս անվամբ» («Զե»)<sup>3</sup>։ Մանրավեպի կամ մանրադեպի կառույցն ու բնույթը առավելագույնս կանխորոշում էին նորավեպի ձևաբանության և կառուցվածքի կերպը թե՛ ժանրակազմային բաղադրատարրերի և պահանջների (սրբնթաց պատում, կոմպոզիցիայի միագծություն, փոքր ծավալ, անսպասելի ավարտ) և թե՛ հղացքային իրագործումների առումներով։ Օպերատիվությունը և արտահայտման կերպի հարմարվողականությունը արդեն 70-ական թվականների արևմտահայ փոքր արձակում (Հակոբ Պարոնյան, Գևորգ Այվազյան) մանրավեպին կամ մանրադեպին առարկայական հնարավորություն էին ընձեռում գրականացնելու ազգային կյանքի, հասարակական-քաղաքական իրողությունների, կենցաղի և առտնին հարաբերությունների, բարքերի, անհատի էության և հոգեբանության բացառապես բոլոր դրսերումները։ Բնականաբար, այս գործընթացը նորավեպի գեղարվեստական համակարգում XIX դ. 80-ական թվականներից պետք է շարունակվեր՝ արդեն ժանրի ամբողջական, լիակատար չափագրումներով, «դասական» բնույթով։ Հարությունն Ալփիարի, Գիմմենի, Ղուկաս և Միհրան Վարպետյանների, Արամ Անտոնյանի, Հովհաննես Ասպետի և այլոց նորավեպերի գերակշռող մեծամասնությունը փաստորեն մանրադեպի կամ մանրավեպի ժանրային նոր շրջանի հանդերձն էին։

Ժանրի «պարականոն» դրսերումները, որոնք ուղղագծորեն ընթերագրվում են մանրավեպի կամ մանրադեպի ծագումնաբանական ելքին և անխառն բանարվեստին, 1890-ական թվականներից շրջանառության մեջ մտած «վայրկենավեպերն» էին։ Դժվար չէ նկատել, որ «վայրկենավեպ» անվանումը ժանրի պատմական համապատկերում գոյափորվել էր «նորավեպի» համանունությունից։ Սա, ի տարբերություն «իրավեպի», ժանրի գուգադիր անվանումներից չէր։ Վերջինս մատնանշում էր նորավեպի իրապաշտական և բնապաշտական (նատուրալիստական) ուղղության պատկանելությունը, նամանավանդ պիտի հաշվի առնենք, որ ժանրը հատկապես իրապաշտության բանարվեստում հասավ իր բարձրակետին։ Բնականաբար, արևմտահայ նորավեպը, իր ոստումի ժամանակաշրջանում, առավելագույնս դրսերում էր ծագումնաբանական դաշտի ամբարումները։ Գրիգոր Զոհրապի, Լեոն Բաշալյանի, Սիպիլի, Զապել

<sup>3</sup> Մ. Զոհրապյանց Արցախեցի, Վեպք զվարճալի անցից, շորս պարունակին խրատական և ինսատալից ասացվածք, Տիգրիս, 1858, էջ 22:

Եսայանի, Երուխսանի, Վահան Հարությունյանի, Երվանդ Օսյանի, Ժագապալյանի, Արշակ Զոպանյանի, Թեոդիկի, Մարի և Վահրամ Սվաճյանների, Ռուբեն Զարդարյանի, Թղկատինցու, Լևոն Շաթրյանի, այլոց նորավեպերի ծագումնաբանական դաշտը միջնադարյան զրույցների, մանրապատումների, միստերիաների, վկայաբանությունների, ներքոյանների և, իհարկե, մանրավեպերի կամ մանրագեպերի արքետիպային համադրությունը իր մեջ կրում էր: Պատահական չէ, որ արդի նորավեպի հեղինակություններից և տեսաբաններից Ձլաների Օ'Քոնորը կարծ պատմվածքը (նորավեպը) սահմանելիս մատնանշում է ժամանակակից համադրականությունը. «Հավագույն գեպքում կարող եմ ասել, թե ինչը կարծ պատմվածք չէ».

1. այն կատակ չէ,
2. անեկդոտ չէ,
3. քնարական արձակ ռապսոդ չէ,
4. գեպքի նկարագրություն չէ,
5. կատարվածի մասին հաղորդում (գրառում):

Այն թվարկածից որևիցե մեկը չէ, որովհետեւ կարճ պատմվածքը լրացուցիչ չափագում ունի, որը, ես կարծում եմ, երևան է գալիս այն ժամանակ, երբ հեղինակը մեզ տեղակայում է մարդու կատարած որևէ արարքի կիզակետում և ցուցադրում այն՝ գաղտնիքի սահմանների ուրվագրումով»<sup>4</sup>: Նորավեպի համակարգում գաղտնագերծումը ժամանի «պարականոն» դրսեորումների հիմնական գոյագորն է, երբ ծագումնաբանական բաղադրատարրերից մեկը («ժամանի հիշողության» բաղկացյալներից յուրաքանչյուրի գեպքում գերական) հանդես է գալիս բացարձակ անկախ, տարանջատված մյուսներից, իր նախնական «մաքուր» տեսքով: Տվյալ գեպքում, «վայրկենավեպը» մանրագեպ-մանրավեպի նախնական, «մաքուր» ձեռն է, արևմտահայ նորավիպագրության հիմնական պարականությունը:

1890-ական թվականներից, ի շարս ներժանրային բազմաթիվ տարբերակների, երևան էին եկել ստեղծագործություններ, որոնք ունեին «վայրկենավեպ» ենթավերնագիրը կամ խորագիրը<sup>5</sup>: Նմանօրինակ բնութագիրը մի կողմից մատնանշում էր նորավեպի «պարականոն» դրսեորումների գերհամառությունը, որը փաստորեն ժամանի ձեւաբանական-կառուցվածքային չափանշումների ինքնահատուկ ամփոփագրություն էր, մյուս կողմից մատնանշում անխոտորելի, ուրշարկված հղացք՝ մանրագեպ-մանրավեպի հեղինակային մեկնաբանություն: Եվ իրոք, բոլոր վայրկենավեպերը անխտիր կամ այսպես կոչված «թափառող մանրագեպերի» պատճենումների ոճականացրած գրականացումներ էին կամ հեղինակային երևակայության արգասիք:

Եթե Հարություն Ալիքիարի «Առաջին և վերջին բառը» և Թեոդոսի «Խպնդու» վայրկենավեպերի կոլիզիան հանգուցվում է սիրո և բարբերի ընկալում-

4 The process of fiction. Edited by Barbara Mckenzie, 1969 by Harcourt, p. 1.

5 Տե՛ս Հարություն Ալիքիար, Առաջին և վերջին բառը (Մասիս, Կ. Պոլիս, 1893, № 2, էջ 55), Թեոդոսի, Խպնդու (Արևելք, Կ. Պոլիս, 1893, № 2731), Լևոն Խանտանյան, Դյուրախար (Արևելք, № 2740), Թեոդիկ, Անգույք մղձավանշ (Հանրագիտակ, Կ. Պոլիս, 1900, № 77, էջ 1229):

ների ու իրականության սրամիտ, երգիծական բախումներում, ապա թեոդիկի և Լ. Խանտանյանի պարագային անխառն, մաքուր մանրադիպայինը (անեկդոտիկը) խարսխված է «անսպասելի ավարտի» տիրույթներում: «Անգութ մղձավանջս» ստեղծագործությունում այն գոյավորվում է երկույթի ընկալման անհամապատասխանության հղացքի արձանագրությամբ, «Դյուրաբախում»՝ երվանդի և Երանիկի ներփակ պլանների բախումով: Տեղին է հիշատակել նաև այն հանգամանքը, որ ժանրի «պարականոն» դրսեորումները ինչ-որ իմաստով նաև պարոդիայի գործառնություններ ունեին, ընդդիմություն էին պարբերականներում և հանդեսներում հեղեղված գրչի զբոսանքների և ձախողումների նկատմամբ, որոնք նորավեպի հավակնություններ ունեին: Այս առումով ուշագրավ է Ալիքիարի «Ակնթարթավեպը»<sup>6</sup>, որ ծեքծեքուն-տարտղնված կոլիգիաներ ունեցող նորավեպերի պերճախոս ծաղրանմանությունն էր:

---

6 Տե՛ս Արևելյան մամուլ, Զմյուռնիա, 1894, № 4, էջ 111: Ստեղծագործությունը Ալիքիարը ստորագրել է «Նույն» կեղծանունով:

## ԱՐԾԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԸ 1880-1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԵՎՄՏՍԱՀԱՅ ԱՐՁԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**Ա**րշակ Զոպանյանի մշակութաբանական գերակատարությունը՝ բազմագործառնակիր կենտրոնացումներով, գրական-գեղարվեստական ընթացքում եղակի ստեղծաբանական հանրագիտակությամբ, առարկայաբար ներբերել է նախադեպի, սկզբնավորության, գրականության պատմության համար կառուցողական ազդակներն ու վկայությունները։ Հարկ է միանշանակ արձանագրել, որ նրա ստեղծաբանական-գրական դաշտը ներառնում է նաև արևմտահայ արձակի տիրույթներում նորոգությունը, ընդ որում թե՛ ոճական-հղացքային, թե՛ գեղագիտական-կառուցվածքային և թե՛ գրական ընթացքում ներփակ բնագրից մասնահատուկ մետաբնագրի գոյավորման կառուցողականությամբ։ Նամանավանդ, հպանցիկ հայացքն անդամ նրա ժառանգության գենետիկական պոետիկային (1880-ականների և 1890-ականների առաջին կեսի վկայություններ) վկայում է արձակի, վիպագրության դաշտում գեղագիտական-ստեղծաբանական որշարկված երևույթի ամրագրումը, գերակայություն դարձնելու ձգտումն ու իրացումը։ Ֆլորերի, Դողերի, Զոլայի, Մոպասանի, Հատկապես վերջինի՝ «Մահվան պես զգոր» վեպի թարգմանությունները, ոչ այնքան գրողական նախասիրություններ էին, որքան արևմտահայ արձակի գեղարվեստական համակարգում վիպագրության նոր, ազգային գրականության համար ցարդ չվկայված կերպի նախադեպեր<sup>1</sup>։ Պատահական չէ, որ եթե այս թարգմանություններին զուգահեռ և դրանցից առաջ նա հրատարակեց նույնական հանձնառություն ունեցող նորավեպեր (գրական ընթացի համար, արձակի գեղարվեստական համակարգում նորոգությունը ամրակայելու նպատակով), ապա նոր մետաբնագրի ավարտաբանությունը բյուրեղացրեց վեպով։ Նկատի ունեմ «Թուղթի փառք» ստեղծագործությունը, որը ոչ միայն մեզանում, այսպես կոչված, հոգեբանական արձակի, վեպի առաջին փորձն էր<sup>2</sup>, այլև այն նախադեպը, որ շուտով պայմանավորելու էր արևմտահայ գրականության համակարգում նոր մետաբնագրի առկայություն, դառնալու էր գերակայություն՝ շուրջ քսանամյա ժամանակաշրջանի համար։

Այսպիսով՝ սույն գրության պարագիծը չուպանյանական վիպագրությամբ արևմտահայ գրականության մեջ արձակի գեղարվեստական համակարգ ներբե-

1 Սրա հանգամանալի անդրադարձը Կ. Դալլաքյանի՝ Զոպանյանական վիպագրության մեջ է։ Գրականագնահանդեպում հաշվումներում միայն 1890-ին գրողի թարգմանությամբ տպագրվել են քանի նինգ արձակ ստեղծագործություններ։ Տե՛ս Կ. Դալլաքյան, «Արշակ Զոպանյան», Երևան 1987 թ., էջ 15-16։

2 Գ. Զորիոսի «Անհետացած սերունդ մը», «Նարդիկ», Կամարականի «Վարժապետին աղջիկը», Արդիականի 80-90-ականների երկերում հոգեբանական արձակի բաղադրատարրերը տակավին չեին պայմանավորում վիպագրության կերպը հոգեբանականի ուղղորդությամբ։ Դրանք սույն լրացական-սատարողական գործառությունները ունեին համարնագրերում։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ արևմտահայ հատվածում նույնպես, գրեթե նույն ժամանակահատվածում, փորձ էր կատարվում նվաճել հոգեբանական արձակը։ Նկատի ունեմ Գր. Արծորունու «ՀՎելինա» երկը։

ըած այն համկանիշներն են, որոնք գեղարվեստական ընթացի համար դարձան նորմա: Չոպանյանի «Թուղթի փառք»ը նվաճեց հոգեբանական արձակի, վիպագրության կերպը, գարձավ այն մեկնակետը, որը հնարավորություն ընձեռեց արձակի համակարգում գոյափորել համապատասխան մետաքնագիր՝ Զոհրապ-Բաշալյան-Սիպիլ-Երուխան-Զյոկյուրյան-Միքայել Կյուրծյան-Թեոդիկ-Լևոն Քիրիչճյան-Ղևոնդ Մելոյան-Զապել Եսայան հետագծով: Նշեցի սոսկ հոգեբանական արձակը պայմանավորող ընդհանրական դրագետներին: Չոպանյանի արձակի խնդրագրությունը մակաբերում է նմանօրինակ Հիմնադրույթ: Ուստի, հարկ է անդրագառնալ նրա ժառանգության այս դրսեորմանը՝ սկսելով մեկ ճշգրտումից:

Հայտնի է, որ գրողի արձակ ժառանգությունը պարփակում է պատկերներ, էսքիզներ, հեքիաթներ, քնարական փոքրիկ պատումներ, նորավեպեր, վիպակ: Զանցառում եմ քնարական պատումները, տպագրապաշտական պատկերները, հանգանակային հեքիաթները, էսքիզները («Տղու հոգիներ», «Պատկերներ», «Զատկական պատկերներ» շարքերը և այլն), քերթվածակերպ արձակի բոլոր ալյուգիաները, որոնք խնդրում առարկա հիմնադրույթի հետ դույզն-ինչ չեն ընթերվում: Խնդրի առկայությունը պայմանավորում են նրա չորս ստեղծագործությունները՝ «Մեռելոց բարեկենդանը», «Գինո՞վ», «Ապաստանը» նորավեպերը՝ ժամուով հեղինակած ժառանգությունից և, ինքնին հասկանալի է, «Թուղթի փառք»ը:

Էական է դիտել, որ շրջանառու նորավեպերն իրենց հերթին սոսկ փոխկապակցող օղակներ են «Թուղթի փառք»ի նախա և ետքրության խորքին, որոնք մի պարագային հոգեբանական արձակի գոյափորման ստեղծաբանական-պոետիկական ազդակներ էին, նախադուռ, մյուս գեղագում՝ վիպակի «Հետցնցումային», «մնացորդային» արձագանքներ: Այսպես, «Մեռելոց բարեկենդանը»<sup>3</sup> նորավեպի կառուցյում իրավիճակի հոգեբանական սկեռումը գեռես ներփակ է և, «մահ» ու «բարեկենդան» հակոտնյաների միագիծ բախմամբ, փորձում է նվաճել ընդհատ-անընդհատ գուգաղիրի գեղագիտությունը, որը հատվածական է, ոճական առումով հոչակագրային և միայն «Թուղթի փառք»-ում պիտի ամբողջականանա՝ ընդհատ-անընդհատ գուգաղիրը գիտարկելով արվեստ-իրականություն հանգուցման կոլիգիաներով, բազմապլան գիտանկյուններով, որտեղ արդեն հոգեբանական արձակի հղացքային-ձևաբանական հարացույցը լիակատար է: Իսկ վիպակին հաջորդած գործերում «Գինո՞վ», «Ապաստանը» նորավեպերում<sup>4</sup>, արդեն բարքերի, ժառանգականության հոգեբանական արձակին բնորոշ կենտրոնացումներն էին, յուրօրինակ հոգեվերլուծություններ, որոնք արդեն «Թուղթ փառք»ի կիրարկման կրկնաբանություններն էին: Ինչո՞վ էր պայմանավորված այս իրողությունը: Բանն այն է, որ վիպակը ոչ միայն արևմտահայ արձակում հոգեբանական վիպագրության, մետաքնագրի առկա-

3 Տե՛ս «Արևելք», Կ.Պոլիս 1889 թ., թիվ 1538:

4 Համապատասխանաբար տես՝ «Հայրենակիք», Կ.Պոլիս 1898 թ., թիվ 373, այս նորավեպն ամենայն հավանականությանը իմբասակենագրական ակունք ունի, ըստ Կ. Դալլարբանի՝ «Արշակ Չոպանյանի կրտսեր հորեղբարյը՝ Ալեքսանը, գիւնեմոլ եր և շատ տառապանքներ եր պատճառել ընտանիքին» (Կ. Դալլարբան, «Արշակ Չոպանյան», Էջ 68) և «Ծաղիկ», Կ.Պոլիս, 1895 թ., Էջ 250-255:

յության պայմանավորողն էր, այլև Զոպանյանի ստեղծաբանական տարերքում՝ գերինդիրը: «Թուղթի փառք»ը նվաճել է գրական ընթացին այնքան անհրաժեշտ դաշտը. Հոգեբանական արձակը գրականության պատմության համար արդեն մտայնություն էր, բնականաբար, Զոպանյանը այլևս անելիք չուներ արձակի պարագրկումներում, և այդպես էլ նա հետագային չմոտեցավ վիպագրությանը:

1892 թվականին՝ փետրվարի 3-ից մինչև 10-ը, ընդամենը մեկ շաբաթվա ընթացքում Արշակ Զոպանյանը գրեց «Թուղթի փառք»ը, որը նույն տարվա մեջ տպագրվեց առանձին գրքույկով<sup>5</sup>: Միջին ծավալի ստեղծագործության բավականին արագ հեղինակելը փաստում է այն իրողությունը, որ գրողի ստեղծաբանական գիտակցութան մեջ հաստատունորեն կայունացել էր ինչպես երկի կոմպոզիցիոն-կառուցվածքային, այնպես էլ հղացքային-ոճական կերպը: Այս խորքին կրկին վերհիշենք «նախաթուղթյան» նորավիպագրական փորձը: Իսկ նույն տարում հրատարակելու իրողությունը, ի շարս արտագեղարվեստական հանդամանքների (տպագրության արագ հնարավորություն, գործը հրատարակված տեսնելու ցանկություն), ընդելուգում է ստեղծագործությունը հնարավորին արագ գրական ընթացում շրջանառու դարձնելու մտայնությամբ: Մյուս կողմից՝ պակաս կարևոր չէին ստեղծագործության կայացման անխառն, բացարձակ տեսական-հանդանակային հայեցությունները, որոնք «Թուղթի փառք»ի թանձրացականացման վճռորոշ-պայմանավորող ազդակներից չին: Այսպես՝ 1891-ին «Արևելք»ի և «Հայրենիք»ի էջերում լույս տեսած «Բանաստեղծության վախճանը» բանախոսությունը և «Մեր հասարակությունը» հոդվածը «Թուղթի փառք» ստեղծագործության գեղարվեստավիլիսոփայութան, գեղագիտության տեսական-մեթոդաբանական առաջադրություններն էին՝ հոգեբանական դաշտի պատկերագրմամբ, կյանքի գեղարվեստական նվաճմամբ վերջ-անվերջի սպեկուլյատիվ գեղաձևումների պատճեշումը, գրականության, արվեստի ազատագրումն ու ինքնորոշումը: Խնդիրներ, որոնք վիպակի կառուցում իրացվեցին ու փաստարկվեցին գեղարվեստական տարողությամբ: Ստեղծագործության «Հոգեբանական վիպակ» խորագիրը չոպանյանական տեսաբանության միակ արտաքրնագրային նշագրությունն էր, որը ընթերցման պարագրկումներում իմաստաբանական դաշտի ընկալումներն ու ըմբռնումները կենտրոնացնում էր վիպական գերխնդրին: Պատահական չէ, որ քննադատական-մեկնաբանական առաջին անդրագարձում Ալեքսանդր Շաբլյանը, արձանագրելով ստեղծագործության կառուցվածքում հեղինակի կենսագրությունով պայմանավորված հոգեբը, փաստորեն հաստատում էր կյանքային լրատվությամբ հոգեբանական գրականության լինելիությունը, պերսոնաժների հոգեբանական փաստարկումը<sup>6</sup>:

Անհատի ինքնադրսելորումն ու ինքնաբառահայտման եղանակը պարփակելով արվեստ-իրականություն բախման, երկվութան, դրանց ներդաշնակության

5 Տե՛ս Ա. Զոպանյան, «Թուղթի փառք. հոգեբանական վիպակ», Կ. Պոլիս, Տպագրություն թ. Սահագնյան, 1892 թ.: Գրության մեջ ստեղծագործությունից բոլոր հղումները այս հրատարակությունից են:

6 Ա. Շաբլյան, «Թուղթի փառք. Քննադատական ուսումնասիրություն», «Արևելյան մանուկ», Զմյունիա 1892 թ., համար 9, էջ 415-422:

և համադրության տիրույթներում՝ Զոպանյանը վիպակում մոնոֆոնիկ գիպաշարը հոգեբանական կենտրոնացումներով փոխակերպում է բազմապլանի։ Արվեստագետ Վահան Երամյանի, գետնին կառչած Արամ Քյուրեցյանի և սրանց պոետիկական հակագդեցությունը պայմանավորող Շավարշ Թյուլպետճյանի կոմպոզիցիոն-սյուժետային դերակատարություններով գրագետը ուժ գլուխ-ներում լրացականացնում ու հանգուցալուծում է և՝ Վահան-Վերժին-Արամ եռանկյունու արքետիպային սիրո պատմությունը, և՝ արվեստ-կյանք հարաբերակցությունը և թե վերջինիս փոխպայմանավորվածության եղանակը։ Վահան-Արամ մրցակցությունը, ախոյանությունը Վերժինին նվաճելու համար վերջիվերջո ոչ միայն արվեստի և արվեստագետի ապամիթոսականացումն էր, կյանքով սրբագործելն ու ապա կրկին գեղարվեստական գերիրականությանը մոտենալու տարփողումը, այլև այդ հետագծի հոգեբանական ցուցանությունը՝ տարրալուծված ոճական, լեզվական մակարդակներում, երբ յուրաքանչյուր դրվագ ու միավոր ունենում է միմիայն հոգեբանությունը (ապրումը, զգայնությունը, վիճակը) պայմանավորող տարրողություն։

«Թուղթի փառք»ը առաջինն էր արևմտահայ վիպագրության համակարգում, որ ստեղծագործաբար իրացրեց գերմանացի Էսթետ-հոգեբան, հոգեբանական արձակի տեսաբան Լիփսի այն դրույթը, ըստ որի որևից հոգեբանական իրողության գեղարվեստական համարժեքումը երկի կառուցվածքում պատնեշի բախվելն է։ Այսպիսով՝ բնականաբար ահագնանում, սաստկանում է գեղագիտական ունակցիան այնտեղ, որտեղ առկա է ինքնին բախումն ու պատնեշը, որն էլ հոգեբանական արձակի տարերքն է։ Այս սկզբունքն է վիպակի արխիտեկտոնիկ միջուկը՝ Վահանի ինքնության սեեռում, որտեղ գերակայելին հոգեբանական պատնեշին հանդիպադրվելն է (վերլուծում է իր սիրելը արգելակող հոգեպատճենները), Վերժինի գդայնությունների կենտրոնացում (ներքին մենախոսությամբ փաստարկում է Վահանին սիրել չկարողանալու հոգեբանությունը), արվեստագետի բախում իրականությանը, կրկին ներքին «ինքնառչացմամբ», ավարտով՝ նոր գոյակերպություն նախապատրաստելու համար։ «Պիտի ըսեն որ տաղանդ ունիս, բայց պիտի չխորհին որ թերեւս սիրտ ալ ունիս։ Բավ է որ հոգիդ տաղերու մեջ թափես, ու կյանքդ հատցնես գեղեցկին ի խնդիր։ պիտի ծափեն զքեզ ու անցնին երթան… զվարճացուր աշխարհը, ու հետո գնա պառկե գափնիներուդ ցուրտ շեղակույտին տակ…» (122)։ Անկախ այն հանգամանքից, որ Զոպանյանը առկահում է Վահանի դիպաշարային հանգուցումը, բնագրում միանշանակ է վերադարձումի, անցման շոշափելիությունը, որը նույնական կոլիգիայի լուծմունքի՝ հոգեբանական արձակին բնորոշ դրսելորում է։

«Թուղթի փառք»ը արևմտահայ գեղարվեստական համակարգը հարստացրեց հոգեբանական արձակի մի շարք մասնահատկություններով ևս, որոնք այն անհրաժեշտ իրացումներն էին, որ պիտի պայմանավորեին համապատասխան մետարնագրի առկայությունը բազմաթիվ ստեղծագործություններով ու հեղինակներով։ Բանաստեղծ, արվեստագետ Արամ Երեմյանի տիպը արձակ էր ներքերում լիակատար հոգեբանական կառուցվածք։ Հանրահայտ իրողություն է այն հանգամանքը, որ համաեվրոպական գրական ընթացում՝ 19-րդ դարի երես-

նական թվականներից, առկայվեց մարդու, անհատի գրականացման նոր սկզբունք, ըստ որի ոչ թե նորման, դրա շեղումներն են գրականության կիզակետում, այլ՝ արդյունքի, արտահայտման և գրելորման քննաբանությունը: Աս հոգեբանական արձակի նորոգությունն էր վիպաստեղծ տարածքում, և Զոպանյանը վիպակով մեզանում նախադեպ ստեղծեց<sup>7</sup>: Զպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ ստեղծագործության կոլիզիան բինարային հանգուցման փոխարեն առաջադրում և իրացնում է բազմաշերտը՝ Վահան-Վերժին, Վահան-Արամ-Վերժին, Վերժին-Արամ, արվեստ-իրականություն, վերջ-անվերջ պլաններով: Իսկ Դոդեկ և Բիզեի «Կարմեն»ը այն զուգահեռն է, որ բնագրային մակարդակում ուղղորդում է վերջ-ավարտի և սկիզբ-ելքի նոր միստերիան (Վահանը մետաֆորիկ գաշունահարում է պոեզիայի գոյակերպությունը՝ դրան վերադառնալու համար): Բախման կիրարկումը ապրումների, վիճակների տիրույթներում բացարձակ է (Վահանի տենդը՝ սեր, իրական կին հայտնաբերելիս, պերսոնաժների ներքին ընդդիմությունը և այլն):

Ստեղծագործությունն ունի «Անոնց որ տառապած են» ընծայականը, որ վիպակի կառուցվածքում ըստ ամենայնի մանրահատվում է՝ ցուցանելով փիլիսոփայական-գեղագիտական որոշակի հանգերգ: Ըստ Էության՝ Կյանքի փիլիսոփայության, չոպենհաուերյան բանաձևման հետագծի առկայությունը բնագրում հաստատագրում է կյանքին ներգորվելու ուղենիշները: Արամը, արվեստի տեսլականը տարածականացնելով իրականությանը, սկսում է տառապել, որ համարժեք է ապրելուն:

Վահան-Վերժին-Արամ եռանկյունին սկսովում է արվեստ-իրականություն զուգահեռի նախ հակազդեցության, այնուհետև միասնականացման տիրույթներում, և այստեղ է, որ ստեղծագործության վերնագրի կազմաբանությունը բնագրային մակարդակում անցնում է փառք-անփառնակություն-փառք շղթայով: Եթե վիպակի սկզբում «գեղագետը չքավեր կյանք մը լեցնելու» (19), ապա թղթի փառքի ընկալման կորդինատների համակարգի փոփոխությունը, թղթի ու թղթե փառքերի տարբերակումը մոտեցնում են կյանքի և արվեստի դաշնությունը: Իրավամբ այս ստեղծագործությամբ «...մեր վեպը կը մտնե հոգեբանական փորձարկություններու»<sup>8</sup> դաշտ և անհատի հոգեկերտվածքի գեղարվեստական ճանաչողությամբ՝ արևմտահայ արձակի գեղարվեստական համակարգում վերջնականապես հաստատագրում է հոգեբանական վիպագրության կիրարկումը:

7 Այս խորքին «Թուղթի փառք»ի ցանկացած արժեքաբանական գնահատում արդի չոպանյանագետը, ընդհանրացնելով կարծրատիպը, վիպակը թույլ ստեղծագործություն է համարում կրավորվում է, քանի որ արվեստի հրամականը հարակցված էր հենց նորոգության, նախադեպի հանձնառություններում:

8 Հ. Օշական, «Համապատկեր...», հատոր 5, էջ 821:

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼՓԻԱՐ

Մեծաքանակ գրական ժառանգության լոկ մի փոքր մասն էր հրատարակել՝ «Առաջին անգամը» նորավեպն ու երգիծական մանրապատումների և թարգմանական զավեշտախաղերի ժողովածուն: Մնացածն այդպես էլ տառացիորեն ցրված մնաց արևմտահայ պարբերականներում և հանդեսներամ: Ծայրահեղ զբաղվածությունը՝ Հ.Բ.Բ. Միության իզմիրի վարչության անդամ էր, Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի քարտուղար, բազմաթիվ ճանապարհորդությունները, լրագրողի հոգեմաշ աշխատանքը՝ եգիպտոսում խմբագրել և հրատարակել է «Փարոս» զավեշտաթերթը, և վերջապես՝ իր գրականության նկատմամբ խստապահանջ և ինչ-որ տեղ չմահավան լինելու հանգամանքը, հնարավորություն չտվեցին գրքերի մեջ մեկտեղելու բազմաթիվ և բազմաբնույթ նորավեպերը, պատմվածքները, մանրապատումները, ակնարկները, քրոնիկոնները, հողվածները, «Փանտեզիներն» ու բանաստեղծությունները: «Արևելյան մամուլի», «Մասիսի», «Սուրհանդակի», «Բյուզանդիոնի», այլ թերթերի և հանդեսների մեջ այդպես էլ ցիրուցան մնաց Հարություն Ալփիարի (1864-1919) գրական ժառանգությունը:

Սկսած 1891 թվականից, երբ տասնյոթամյա գրագետը Արփիար Արփիարյանի «Հայրենիք» օրաթերթում տպագրեց իր գրական երախայրիքը, մինչև 20-րդ դարի տասական թվականները՝ սկզբունքային հետևողականությամբ շարունակեց, այսպես կոչված, «բարքերի խճանկարի» գեղարվեստական կենտրոնացումները: Անշուշտ, Ալփիարի ստեղծագործությունը միարժեք և միանշանակ չի կարելի գնահատել, կան և՛ մեծարժեք, ընտիր գործեր, և՛ ձախողումներ, սակայն անհնարին է անտեսել այն գրական, կառուցողական ազդակները, որոնք նա հաղորդեց արևմտահայ գրական կյանքին: Նախ՝ Հակոբ Գարոնյանից հետո Ալփիարն էր, որ երգիծական գրականության կենսոլորտն էր ապահովում, Օտյանի, Գոչանյանի հետ պահպանում պարոնյանական ավանդները, ապա՝ նրա մի շարք նորավեպեր և մանրապատումներ արևմտահայ գրական ընթացում ասուլիսների, բանավեճերի, ստեղծագործական բախումների առիթ տվեցին, ուրոնք, ըստ էության, հարստացրին և ամբողջականացրին գեղարվեստական մթնոլորտը, և հետո՝ հայ գեղարվեստական փոքր արձակի պատմական համապատկերում երգիծաբանը կատարելագործեց ժանրային բազմաթիվ ձևեր (երգիծական նորավեպ-դիմանկար, նորավեպ-նամականի, ծաղրանմանություն, «Փանտեզիներ» և այլն): Էսական է դիմել ևս մի կարևոր իրողություն. Հարություն Ալփիարը անզուգական դիմանկարների ուրվագծերի հեղինակ էր: Նրա սրամիտ ու հեգնող պատկերագրումները, սլացիկ և աշխույժ ոճը գոյավորել էին «Ազգային ջոշերին» համարժեք դիմապատկերներ:

Հայ երգիծական գրականութեան մեջ Ալփիարի գրական ժառանգությունը հատկանշվում է թեմատիկ միասնականությամբ՝ սեր, կին, ընտանիք, ահա այն առանցքը, որի շուրջ խարսխվել է նրա ստեղծագործությունը: «Այն ազգերը որ

Սիրո վեհափառության առջև չեն խոնարհիր, չեն ճանաչեր անոր ամենակարողությունը և կ'անգիտանան անոր կատարած աստվածացուցիչ դերը, կը զրկեն իրենք զիրենք զարդացյալ ազգ մը կոչելու իրավունքեն»։ Աս է գրագետի ելակետը և ըմբռնումը, որի բոլոր շեղումներն անխտիր դարձել են երգիծանքի, հեգնանքի առարկա։ Ալփիարը ծաղրում էր բարոյականի քաղքենիական ու երսպաշտ ընկալումները, առանց դույզն-ինչ վերապահումների գրականացնում ազգային բարքերի հոռի կողմերը, վեր հանում կեղծ արժեքների այն հարացուցը, որ խոչընդոտում էին հասնելու «սիրո վեհափառության» ներդաշնակ գոյակցությանը։ Քսաներորդ դարասկզբին, երբ աջ ու ահյակ հանիրավի մեղադրանքներն ու դիտողությունները գրագետի հասցեին սաստկացան, նա գրեց իր եղակի «լուրջ» հոդվածներից մեկը, որը յուրահատուկ հանգանակ է։ «Եթե մինակ մեր որբերը ըլլային այսքան թախծաղեմ և տիրատեսիլ, անշուշտ այս հոդվածս գրելու միտումը չպիտի ունենայի, քանի որ կերպով մը ուրախ չըլլալու դատապարտված են անոնք՝ որ մոր մը գուրգուրանքը չեն ճանչցած և հոր մը սիրույն և պաշտպանությանը վրա կարենալ կոթնելու իրավունքը չունին։ Բայց չէ, դժբաղդություններ հոն է որ, մենք ամենքս ալ, հարուստ թե աղքատ, պզտիկ թե մեծ, տեսակ մը լրջություն, կախերեսություն ունինք զորս ի զուր կը փնտուեմ ուրիշ ազգերու քով։» Ալփիարը այս արձանագրությունը անում էր 1903 թվականին, երբ արևմտահայությունն անցել էր մղձավանջների և փորձությունների հայտնի շրջանից, իսկ ազգային կյանքի բոլոր դրսեորումների նկատմամբ ոստիկանական հսկողությունը բռնադատում էր հոգեոր վերընթացը։ Համընդհանուր հուսալքությանն ու հիասթափությանը անհրաժեշտ էր դիմակայել, որը, ըստ գրագետի, «զվարթ ըլլալու» կերպն էր (հոդվածն այդպէս էլ վերնագրված է՝ «Զվարթ ըլլանք»), մի վիճակ, որ հնարավորություն էր տալիս անկաշկանդ նայելու առարկայական և ենթակայական բոլոր դժվարություններին, վերընճյուղվելու, վերջապես կենսունակությունը հաստատելու, մասնավանդ։ «Կը հասկնամ թե լուրջ ըլլալը գեղեցիկ հատկություն մըն է, բայց լրջությունը, ճշմարիտ լրջությունը չի վաներ խինդը, ժամկետը ու զվարթությունը և այն մարդը որ շարունակ ուրախ է, կը երգե, կը խնդա, կընա միենույն ատեն ըլլալ ամենեն լուրջը մարդերուն։»

Ալփիարի ստեղծագործական կյանքի ամենաարգասավոր և նշանակալի շրջաններից է 1901-1906 թվականները, երբ նա հատկապես համագործակցում էր Զմյուռնիայի «Արևելյան մամուլի» հետ։ Այս տարիներին նա հանդեսում տպագրել է շուրջ հարյուր երգիծական մանրապատում, նորավեպ, «Փանտեղի», հոդված, քրոնիկոն, որոնցից շատերը նրա գրական ժառանգության ներկայանալի դրսեորումներից են։ <...><sup>\*</sup>

---

\* Սույն նախաբանին հաջորդում է Հ. Ալփիարի «Սրամտության ծաղիկներ» և «Ալպումի Էջերեն» վերնագրված մանրապատումների հրապարակումը, որոնք լուս են տեսել 1906 թ. «Արևելյան մամուլում»։ Տե՛ս Վարուժան, 1993, թիվ 7, փետրվար։ Այս հրապարակումից բացի Գ. Հակոբյանը երկու անգամ ևս անդրադարձել է Հ. Ալփիարի ստեղծագործությանը։ Տե՛ս Նորք, 1991, թիվ 10-12, Վարուժան, 1992, թիվ 4, նոյեմբեր (ծան. կազմողի)։

## ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԵՎ ԿԱՂԱՆԴԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՈՐԱՎԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**Ի**նչպես ազգային մշակույթի բոլոր դրակորումներում, այնպես էլ հայ գրականության համապատկերում քրիստոնեական վարդապետությունը և գոյաբանությունը այս կամ այն կերպ պայմանավորել է նրա բնույթը, անդրադարձվել և գեղարվեստական-գեղագիտական մեկնության ենթարկվել, փիլիսոփայությամբ և գաղափարաբանությամբ փոխածեվել իբրև արվեստ։ Սակայն հայ նոր և նորագույն գրականության պատմության զանազան խնդիրների ուսումնասիրության շրջագծում ազգային հավատքի գեղարվեստական, ստեղծագործական հղացքի առընթերադրումները հաճախ տեղակայվել են կամ գրականության պատմության խնդրագրության լուսանցքներին, կամ տարբեր (գերազանցապես՝ հասարակական կյանքի կոնյուկտուրայի) պատճառներով անտեսվել։

«Կաղանդային նորավեպերը», որ ներժանրային կառույցներից ամենամեծաքանակն են, առարկայական հնարավորություն են ընձեռում անդրագառնալ արևմտահայ նորավեպի գեղարվեստական համակարգում ազգային հավատքի գրական առընթերագրումներին՝ կենտրոնանալով Սուրբ Ծնունդի խորհրդի հղացքային սեեռումներին։ Ինչո՞ւ հատկապես Կաղանդի և Սուրբ Ծնունդի պատմումներին։ Բանն այն է, որ նորավեպի ժանրի վիճակագրական և հղացքային հարացույցում այդօրինակ դրակորումները շատ-շատ են, որը պայմանավորված է ժանրի բնույթի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հատկություններով, ժանրային կառույցի ստեղծաբանական հարմարվողականությամբ, երբ ինքնին թեման, կենտրոնացումը առավելագույն ներդաշնակությամբ և լիակատարությամբ է հանդերձվում ժանրային որևիցե կերպով։ Տեսական հատույթում փոքր-ինչ մանրամասնենք համաբնագրում կիրարկվող «արտաքին» և «ներքին» հատկություններ եզրերը։ Նորավեպն, առհասարակ գեղարվեստական փոքր արձակը, որ իր բնույթով «օպերատիվ անդրադարձվող» ստեղծագործություն է, առավելաբար ենթադրում է միանվագ, միասնական ընթերցում (ստեղծագործությունների գերակշռող մեծամասնությունը նախ տպագրվում էր պարբերականներում) և ներկրում է բացահայտ «պատվերայնության» գործառնություն՝ իրականության, կյանքի գանազան իրողություններին առնչվող գեղարվեստական անդրադարձումների, աշխարհիկ և մանավանդ հոգեոր, տոների առիթներով գրված երկեր և այլն, բնականաբար չէր կարող անմասն մնալ ազգային կյանքի թերևս ամենասիրելի, զանգվածային իրադարձություններից, տոներից՝ Կաղանդին և Սուրբ Ծնունդին, ու հասկանալի է, որ ժանրի բնույթի «արտաքին»՝ վերը թվարկած հատկությունները նպաստում էին «կաղանդային նորավեպագրության» բազմաքանակությանը, իսկ ինքնին Կաղանդի և Ծնունդի խորհրդի մեջ ինքնին պարփակված տոնի, նվիրաբերության էույթը նորա-

վեպի բնույթի «ներքին» հատկություններին առավելագույն տարածականացման հնարավորություններ էին ընձեռում՝ մեկնելու քրիստոնեական կենսոլորտի գերակա զաղափարներից մեկը։ Հավելենք նաև ընթերցողական մակարդակի լիակատար պատրաստակամությունն ու սիրահոժարությունը կառույցի անվարան ընկալման պարագային։ «Կաղանդային նորավեպերը» նոր ժամանակաշրջանի Ամանորի և Ծնունդի տոնացույցի, ծեսի անկապտելի բաղադրատարբերից էին, որը ներժանրային կառույցի դրսելորման տարածվածության առարկայական պատկերը ևս ընդգծում է։ Ուստի բնական է, որ նորավեպի ժամանակային համակարգում «կաղանդային» նորավեպերը 19-րդ դարի 80-ական թվականներից մինչև 20-րդ դարի 10-ական թվականները արտահայտման կերպով, հղացքով և կենտրոնացումներով արևմտահայ նորավեպագրության տիրապետող դրսելորումներից էին<sup>1</sup>:

Տակավին 1880-ականներից արևմտահայ գրականությունը, չնչին բացառություններով, յուրաքանչյուր նոր տարի սկսում էր «կաղանդային» նորավեպերով։ Առաջին գեղարվեստական ստեղծագործությունները, որ տպագրում էին ժամանակի օրաթերթերը, լրագիրները, ամսագրերն ու հանդեսները Ամանորի, Ծնունդի թեմաներով փոքր արձակ ստեղծագործություններ էին։ Ավելին, նորավեպերի շատ ժողովածուներ, գրքեր, որոնց հրատարակությունը համընկնում էր կաղանդին, ունենում էին համապատասխան լրճայականներ, ուր նշվում էր, թե գիրքը, ժողովածուն հեղինակն իրեւ ամանորյա նվեր մատուցում է ընթերցողներին։ Այսպես օրինակ՝ Վահրամ Բըուտյանը, որ գրականության պատմության մեջ հայտնի է «Շահնուր» ծածկանունով, իր «Շարժապատկեր» ժողովածուին կցել է հետեւյալ ընծայականը (կըկին մատնանշենք, որ գրքի տպագրությունը համընկել է Ամանորի և Սուրբ Ծնունդի տոնակատարության օրերին)։ «Կաղանդչեքս եգիպտահայ գաղութին»<sup>2</sup>։ Տվյալ պարագային պարտագիր չէր ժողովածուի կամ գրքի թեմատիկ բացարձակ համապատասխանությունը խնդրո առարկա իրողությանը։

Տասնամյակների ընթացքին Ծնունդին առնչվող փոքր արձակ ստեղծագործությունների հրատարակությունը համաշխարհային գրականության մեջ ստեղծել էր որոշարկված մշակույթ, գեղարվեստական ընթացի մտանություն, որը, բնականաբար, չէր կարող շրջանցել նաև հայ գրական կյանքը։ Պարբերականների խմբագիրներն ու պատասխանատունները նախօրոք խնդրում, հորդում, պատվիրում էին ժամանակի հանրահայտ նորավեպագիրներին իրենց

1 Ժամանակագրական մատնանշած պարփակվածությունը ենթադրում է մեթոդաբանական և զուտ հետազոտական Ակատառումներ։ Ակիզբը՝ 19-րդ դարի 80-ական թվականներ, պատճառականացված է գրականության պատմության առարկական իրողությամբ, արևմտահայ նորավեպն իրու լիովին ձևավորված, ինքնորոշված և ինքնորոշված ժամը, համակարգ այդպիսին է ուժունականներից։ Ավարտը՝ 20-րդ դարի 10-ական թվականներ, պատճառականացվում է ժամանակաշրջանի հետազոտական ընդգրկունությամբ, ապա և արևմտահայ գրականության պատմական փոլի փոփոխության հանգամանքով (այլուոքի գրականության շրջան), թեև «կաղանդային նորավեպերի» ավանդները շարունակվում էին 10-ականների երկրորդ կեսի, 20-30-ական թվականների փոքր արձակի համակարգում։

2 Վ. Գ. Բրուտյան, «Շարժապատկերներ (կյանքի տեսարաններեն)», Աղեքսանդրիա, Տպագրություն Գասպարյան, 1914 թ., էջ 2:

թերթերի և հանդեսների ամանորյա համարներում կաղանդի և Սուրբ Ծնունդի թեմաներով ստեղծագործություններ տպագրելու համար։ Վերջիններս, չնչին բացառությամբ, սիրահոժար համաձայնում էին ոչ այնքան բարձր հոնորարի ակնկալիքով, որքան տոնին և ծեսին ստեղծագործական մասնակցության «վայելքն» ըմբոշիներու գիտակցությամբ, խնդրանքով կամ հրավերքով արդեն արհեստավարժ ճանաչված և ընդունելի դարձած գրողի կարգավիճակի հերթական հաստատմամբ և, անշուշտ, Սուրբ Ծնունդի անսպառ գեղարվեստականացման հնարավորությունների փորձարկումով։ Ակսնակների և ինքնահաստատման բովում գտնվող գրագետների համար ստեղծագործական մասնակցությունը այդ ծեսին ու տոնին կատարյալ դպրոց էր, լուրջ փորձություն, ճանաչում և համբավ ձեռք բերելու հստակ կարելիության։ Պատահական չէր, որ Ծնունդին նախորդող օրերին խմբագրությունները հեղեղվում էին այդպիսի նորավեպերի հարյուրավոր նմուշներով<sup>3</sup>։ Հար և նման համաշխարհային նորավեպագրության այնպիսի վարպետների, ինչպիսիք էին Տիկը, Հոֆմանը, Զեխովը, Հարթը, Մոպասանը, Ժանրի արևմտահայ փաղանգի նշանագոր ներկայացուցիչները՝ Եղիա Տեմիրճիպաշյան, Լևոն Բաշլյան, Հրանդ, Երուխան, Հովհաննես Ասպետ, Երվանդ Օտյան, Տիգրան Զյոկյուրյան, Սուրեն Պարթեյան, Գեղամ Բարսեղյան, Սիմեոն Երեմյան, Մարի Սվաճյան, Թեոդիկ, Սիպիլ, Տիգրան Արքիմարյան, Լևոն Շաթրյան և այլք։

Եթե 1880-ական թվականներին կաղանդի թեմաներով և Սուրբ Ծնունդի խորհրդին առնչվող նորավեպերը հատվածական էին (Տեմիրճիպաշյան, Անայիս), ապա 1890-ական թվականներից մինչև 20-րդ դարի տասական թվականները այդօրինակ ստեղծագործությունների քանակը աճում է պարզապես երկրաչափական հավելումով<sup>4</sup>, լույս են տեսնում նորավեպագիրների գրքեր, ժողո-

3 Ուշագրավ է, որ Արշակ Չոպանյանը իր գրական նախաքայլերը սկսել է հան կաղանդային թեմաներով նորավեպեր գրելու փորձերով։ Նա 1888-ի վերջերին «Կաղանդ» վերնագրով մի նորավեպ է գրել և ուղարկել «Արևելք» թերթին՝ տպագրելու։ Ստեղծագրությունն ընթերցել էր Լևոն Բաշլյանը և 1889-ի հունվարի 10-ին երիտասարդ Չոպանյանին հասցեազարձ նամակում նշել, թե խմբագրությունն ներագետ տպագրություն՝ ընդգնելով։ «...մենք իրավունք ունինք պահանջելու, որ այնքան նախասավոր պայմանա մեջ սեած միտք մը առաջին անգամնեն ուշադրություն հրավիրել իր վրա, իր գրույանցն անակնալ գեղեցկութափական»։ Տես «Արևմտահայ գրողների նամականի», պարակ 1, Երևան, Համալսարանի հրատարակչություն, 1972 թ., էջ 966։ Վաստահաբար կարելի է մատնաշել, որ ինչպատճեն պահանջանակված նորավեպը, այնպես էլ խմբագրության կեցվածքը բարերար ազդեցություն թողեցին, որպեսի արդեն 1890-ական թվականների սկզբից հանդես գա ևս մի շնորհալի և հետաքրքիր նորավեպագիր։

4 Ստորև բերված փոքրիկ ժամանակագրական ցանկը հաստատում է իրողությունը։

|  |  |  |  |
|--|--|--|--|
| 1890 թ. – Անային, «Ծննդյան պատմություն»  | 1899 թ. – Վ. Մանկելյան, «Կապանի պատմություն»                 | 1901 թ. – Հ. Չաթրյան, «Ակնարդաշենի բը» | 1907 թ. – Թեոդիկ, «Մարվան դեմ համերինան»   |
| 1893 թ. – Թեոդիկ, «Տանջվածների բանակնեն»   | 1900 թ. – Երուխան, «Կաղանդչեն»                               | 1902 թ. – Թեոդիկ, «Սարդութ»            | 1909 թ. – Թեոդիկ, «Մեծ այցելուն»           |
| 1894 թ. – Լ. Բաշլյան, «Կաղանդչեն»  | 1901 թ. – Վ. Մարտիրոսյան, «Ծննդյան պատմություն»              | 1903 թ. – Թեոդիկ, «Օումի սիրտ»         | 1911 թ. – Թեոդիկ, «Ծակին վրա»              |
| 1895 թ. – Ե. Օտյան, «Կաղանդի վիպակ»  | 1900 թ. – Թեոդիկ, «Սաման մերժումը»                           | 1904 թ. – Թեոդիկ, «Ապուրութենով»       | 1912 թ. – Թեոդիկ, «Արյունության պարագանար» |
| 1898 թ. – Գիմմեն, «Կաղանդչեն», Ատրուշան, «Կաղանդի երեկո», Վ. Մանկելյան, «Կաղանդչեն», Կաղանդի պահանդի | 1903 թ. – Լ. Քիրիշենյան, «Թուան սեր», Թեոդիկ, «Դեափի կաղանդ» | 1904 թ. – Թեոդիկ, «Նեղ օրերիդ»         | 1913 թ. – Օ. Զիֆթեն-Սարաֆ, «Կուգիկը»       |
|  |  |  | 1914 թ. – Վ. Բրուտյան, «Պուանիկը»          |

վածուներ բացառապես «կաղանդային նորավեպերից» բաղկացած<sup>5</sup>, իսկ որոշ գրողներ իրենց նորավեպերի ժողովածուներում զետեղում են հետաքրքրող թեմայով գրված ստեղծագործություններ<sup>6</sup>:

Սուրբ Ծնունդի խորհրդի նորավիպային արտահայտման կերպն ու տիրապետող եղանակները որպես կանոն խարսխվում էին բարեգթության, կարեկցանքի, եղբայրավարության, գլխարտության հանգանակների գրականացումներին, թշվառության շրջապատույտի մեջ պարփակված խեղճերի և օտարացածների քրիստոնեական ուղղուց չխոտորվելու անդրադարձումներին, զղջումի և դարձի անհատական հասանելիության կենտրոնացումներին: Ծնունդը նորավեպի կառույցում իբրև հղացք ենթադրում է սկիզբ, նորոգություն, կեցության և ճակատագրի, վարքի և պահպանի նոր ժամանակագրություն. այս բեկվածքում են տեղայնացված պատումների տիրապետող եղանակները, բնագրային մակարդակում ծեսի ու տոնի խորհրդանշներն ու արքետիպային միավորները զուգակցում են կառուցվածքային-իմաստաբանական գործառնություններ, ավետարանական կոսմոսի հանգանակներն ու առաջադրությունները փոխանցվում են բնագիր՝ որպես նորավեպի կառույցի անկապտելի միավոր, զանազան միաստերիաների, կոլիզիաների, վարդապետության դրսեորումների ստեղծաբանական տարբնթերցումները գոյապորում են ծեսի, տոնի միասնականացումը. «Կաղանդը... կաղանդները կանցնին ու ըստ հիման իրարու կնմանին», – ամփոփագրում է Եղիա Տեմիրճիպաշյանը նորավեպերի այս դրսեորման «միաբնակությունը» «Հորեղբոր կաղանդչեքը» պատմումում<sup>7</sup>: Նորավեպերի այս փաղանդում իրենց նշանային-իմաստային, փիլիսոփայական-գեղագիտական դաշտերի ամբողջ հզորությամբ գործում են և՛ ծեսին ու տոնին առնչվող խորհրդանշներն և թե՛ ընդհանրապես աստվածաշնչյան առարկաների և գաղափարների գոյացումները (միթոսներ, սյուժեներ, մոտիվներ, թեմաներ և այլն), աղավնու, Ղազարոսի, երեկոյի խորհրդի, ճրագալույցի ու այլ գործառնությունների կիրարկումը<sup>8</sup>: Ավելացնենք նաև, որ այսօրինակ ստեղծագործությունների արտահայտման կերպում և տիրապետող եղանակներում ամրագրված են նաև խնդրո առարկա ծեսի, տոնակատարության սովորույթների, առանձնահատկությունների նկարագրությունները<sup>9</sup>:

Արևմտահայ նորավեպի «Աստվածահայտնության/Ծննդի» կառույցի մշակութաբանական կենտրոնացումների լինելիությունը պատճառականացվում է հետեւյալ առարկայական իրողություններով.

ա) Ծնունդն ու Կաղանդը (սրանք համապատասխան բնագրերում, ինչպես

5 Տե՛ս Վահան Մանվելյան (Կարապետ Տողրամաճյան), «Կաղանդեք», Փարիզ 1898թ.: Թեոդիկ, «Կաղանդ», Ա. Բատոր, Կ. Պոլիս, «Տաղագրություն Օ. Արգուման», 1914թ.:

6 Տիգրան Չյուլյույանը Կ. Պոլյսում հրատարակած «Հայրենի ձայներ» ժողովածուում գետեղեկ է «Կատընտին զոհը» և «Ի մարդիկ հանություն» նորավեպերը: Տե՛ս Աշված ժողովածուն, 1910թ. Էջ 37-51 և 67-74:

7 Եղիա Տեմիրճիպաշյան, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986թ., Էջ 191:

8 Տե՛ս օրինակ Աւտրուշանի «Կաղանդի երեկո», «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1898թ., թիվ 364), Լուս Քիրիշճյանի «Թոռան սեր» («Բյուզանդիոն», 1903թ., թիվ 1911) նորավեպերը:

9 Այս իմաստով բնորոշ է Թեոդիկի «Կաղանդ» ժողովածուն, որ ի թիվս հավատարմության, կարեկցանքի, գթարտության անդրադառների («Ծան սիրտ», «Մահվան դեմ հանդիման», տե՛ս Աշված ժողովածուն, Էջ 7-30 և 55-61) գրականացվել են նաև ծիսականգության, տոնի սովորույթներն ու առանձնահատկությունները («Դեպի Կաղանդ», Էջ 63-69, «Սիսակ մերժումը», Էջ 70-80):

քիչ հետո կտեսնենք, երբեմն միասնական են ընկալվում, նորավեպի կառույցում նույնական են) ունեն միևնույն գործառնություններն իբրև քրիստոնեական-ազգային կարևորագույն ծեսի և տոնակատարության գեղարվեստական մեկնաբանություն-այլասացություն,

բ) Ծնունդի թեոսոփիկ-գոյաբանական խորհուրդը, Տիրոջ հայտնության գործառնական դաշտը պարտադիր՝ զանազան պլաններով անդրադարձվում է նորավեպերի գեղարվեստական համակարգում,

գ) բնագրային մակարդակի վարդապետությունը քրիստոնեական հանգանակների և գաղափարաբանության գեղարվեստական հանկերգն է,

դ) տոնի և ծեսի կարգավորությունը փոխաձևվում է գեղարվեստական բնագրում իբրև ծիսակարգության դրսեորում՝ դրա խորհրդանիշների, առարկաների և ընթացակարգի խստիվ պահպանությամբ:

Այսօրինակ ստեղծագործությունների հպանցիկ դիտարկումն արդեն մատնամշում է մի օրինաչափություն, արդեն «կաղանդային» նորավեպերի<sup>10</sup> վերնագրային լրատվության մեջ մատնանշած է Ամանորի, Սուրբ Ծնունդի պարագան, իսկ այն դեպքում, երբ վերնագիրը չի ներառում պատկանելիությունը, «կաղանդային» նորավեպերը անվերապահորեն ունենում են ենթավերնագրեր (խորագրեր)` պատկանելիության ցուցումով: Արևմտահայ նորավեպի գեղարվեստական համակարգում առկա են «կաղանդային» հետևյալ ենթավերնագրերը (խորագրերը). «Կաղանդի պատմություն», «Կաղանդի պատկեր», «Կաղանդչեք» (սա նաև նվիրաբերության գործառնակիր է), «Կաղանդի վիպակ», «Ծննդյան պատմություն», «Ծնունդի պատմություն», «Կաղանդի առթիվ»: Նշեցինք ամենատարածվածները:

Նորավեպերի այս փաղանդի խնդրագրությունը խարսխվում է անհատի, հանրության և ժողովրդի՝ հոգեսոր ներդաշնակության հասնելու ներբմբոնողությանը, Տիրոջ հետ հաղորդակից լինելու գերիրականությանը. «Եվ մեծ ձայն լսեցի երկնքիցը, որ ասում էր. Ահա Աստուծոյ խորանը մարդկանց հետ, եւ նա կ'բնակէ նորանց հետ, եւ նրանք կ'լինին ժողովուրդ, եւ ինքն Աստուած նորանց հետ կ'լինի նորանց Աստուած: Եւ կ'ջնջէ Աստուած բոլոր արտասուրը նորանց աչքերիցը. Եւ մահն այլեւս չի լինիլ, ոչ սուգ եւ ոչ աղաղակ, եւ ոչ ցավ այլեւս չի լինիլ, որովհետև առաջիններս անցան»<sup>11</sup>: Եվ յուրաքանչյուր Ծննդյան ստեղծագործություն սատարում է այս հանգրվանին հասնելու համար: Այս համատեքստում Կաղանդը այն ելակետն է, որ ստիպում է դարձի գալ, և պատահական չէ, որ Լևոն Բաշալյանի «Կաղանդ» նորավեպում այս մտայնությունն առհասարակ չեշտված է. «Մեծ դադարն է ասիկա, անհետացնելով հոգնություններն ու զրկանքները, գալիք օրերուն համար նոր ուժեր պատրաստելով, ամրապնդելով արի հավատքը որ դարերե ի վեր այդ հողին կը կապէ զիրենք՝ վհատիլ չգիտցող վատահությամբ մը, տկարանալ չգիտցող կորովով

10 Հարկ կա՞ Աշելու, որ սուն գրության մեջ «կաղանդային նորավեպ», «կաղանդի պատմում» և այդորինակ ձևակերպումները պալմանական եզրեր են նորավեպի կառուցի տեսակը կարճառու նկարագրելու համար:

11 Յալտանութիւն Յովհաննես Առաքեալի, ԽԱ, 4:

**մը»<sup>12</sup>:** Եթե Բաշալյանը նորավեպում տոնակատարության բանահյուսական բառ ու բանի գուգահեռումներով պատկերագրում է Հայրենիքի անեղծ, ներդաշնակ տեսլականը, ապա Վ. Բրուտյանի և նամանավանդ Թեոդիկի համապատասխան նորավեպերում ուրվագրվում է զրկյալների և կարոտյալների, «Հոգով աղքատների» իրականությունը՝ Տիրոջը ներդաշնակվելու գաղափարը կիզակետ ունենալով՝ որպես գերիրականության հանգրվանին հասնելու գործնական և շոշափելի կերպ: Մանկամարդ այրի Մարթան իր երեք զավակների հետ դիմաւորում է Կաղանդը և միջոց չունի ոչ միայն ամանորյա միրգ ու անուշեղներ գնելու, այլև՝ հիվանդ դատերը վաղուց խոստացած ամանորյա տիկնիկը: Զուր են ջանքերն ու հորդորները՝ ապահով պատվիրատուները (Մարթան լվացարարուհի էր) ժամանակ չունեն տոնին նախորդող եռուղեռի մեջ լսել նրան, կարեկցել: Միայն վանեցի թումոն է ձեռք մեկնում, օգնում այրուն իր և երեխաների Ամանորը դույզն-ինչ տոնելու: Գնված են և՛ անուշեղներն, և՛ տիկնիկ, սակայն դրանք բավ չեն ամոքելու որբուկին: Սա է Բրուտյանի ստեղծագործության դիպաշարը, կարեկցող և գթասիրտ հանրության տեսլականում է նա հանգուցում ներդաշնակության հանգրվանը: Ի դեպ, այստեղ հեղինակը մանրամասն շարադրում է Ամանորի ազգային սովորույթներից նպատակամիտելով նաև տոնակատարության, ծեսի ազգային առանձնահատկությունների պահպանումը: Ահավասիկ. «Հայաստանի սովորության համեմատ, Կաղանդի առտուն ամեն տուն կանուխ կ'արթննա, և ծոմ բերնով կ'երթա փողոցին անկյունը կամ եկեղեցի դրան կից հաստատված աղբյուրն լվացվելու, ապա կը մտնե եկեղեցի և երկու ծունկ աղոթք ընելով, կերթա ընտանիքին հետ նոր Տարվա բաղդի կաթան կտրելու...»<sup>13</sup>:

Թեոդիկի «կաղանդային» նորավեպերում որոշակիորեն ընդնշմարված է թշվառության, օտարվածության մեջ ճակատագրով հայտնված մարդկանց, «Հոգով աղքատների» մաքրագործող, ներդաշնակության հանգրվանին ներբերող ոստումը: Այս առումով բնորոշ են «Կաղանդ» ժողովածուի «Ապուրոտ բերնով», «Չամիչները», «Նեղ օրիդ համար» ստեղծագործությունները<sup>14</sup>: Շրջմոլիկ գեռահասներն իրենց բարեկեցիկ հասակակիցներին փոխադարձ ուշադրության, գորովանքի օրինակ են ցույց տալիս («Ապուրոտ բերնով»), Միհրանը, որ Կաղանդի առիթով հնարավորություն ուներ ճաշակելու հին տարվա մեջ առաջին և նոր տարում վերջին անուշեղները, նվիրում է այն իր մեծ քրոջը («Չամիչները»), Տիրանը, որ ապրում էր խորթ մոր և եղբօր հետ (մայրը չէր կարողանում նրան հարազատ զավակի պես ընդունել, Տիրանը մահացած ամուսնու առաջին կնոջից էր) իր վերջին կոպեկները տալիս է մայրացուին՝ հիվանդ եղբօր համար Ամանորի նվիր գնելու: Այս անտեսվածներն ու կարոտյալները, «Հոգով աղքատները» նախանշում են դարձի, մաքրագործության և ներդաշնակության ճանապարհը, այս կիզակետում է հանգուցվում Թեոդիկի «կաղանդային» նորավեպերի հղացքային իրագործումը:

12 Տե՛ս «Նոր կյանք», Լոնդոն, 1898 թ., հունվարի 1:

13 Վ. Բրուտյան, «Ծարժապատկեր» նորավեպերի ժողովածու, «Պուարիկը», Էջ 25:

14 Տե՛ս Թեոդիկ, «Կաղանդ», Էջ 31-38, 39-47 և 48-53:

Արդեն ակնարկեցինք, որ նորավեպերը ներառում են նաև Սուրբ Ծնունդի խորհրդի, տոնի և ծիսակատարության անդրադարձները, ժանրի կառուցվածքում նույնական են և ուղղորդված վարդապետության հանգանակների, նորմի ստեղծագործական մեկնաբանությանը, կամ Ծնունդի խորհրդի գեղարվեստական այլասացություններ են:

Այս նորավեպերից շատերը տպագրվել են Ծնունդին նախորդող և հաջորդող օրերին՝ հունվար 4-10, իսկ մի ստվար խումբ թե՛ վերնագրային լրատվությամբ և թե՛ թեմատիկայով խարսխված են Ծնունդի գեղարվեստական գործառնության տիրույթներում:

Ծնունդի խորհրդի հիմնական գործառնությունը նորավեպերում դարձն է դեպի Տերը՝ վարքով, արարքով, գոյության կերպի քրիստոնեական համապատասխանացումով, փորձության խոչընդուները հաղթահարելով: Տիրոջ ծնունդը սատարում է հոգևոր-բարոյական մաքրագործությանը, խթանում ներդաշնակության հասնելուն, ուղենչում ոգու ինքնակատարելագործման մղումը. միմիայն այս պարագային է հասարակությունը, ազգային մասնահատկությունը վերելք ապրում, այս կարգախոսն էր Ծննդյան նորավեպերի գեղագիտական հանկերգը: Անայիսի (Եվգիմե Ավետիսյան) «Ծննդյան պատմություն»<sup>15</sup> նորավեպում տոնի քնարական նկարագրությանը հաջորդում է լրյալ կնոջ և երեխայի հոգեկան տվյալտանքների արձանագրությանը. ահա մեկ տարի է, ինչ Արամը հեռացել է տնից և նվարդին ու արու զավակին մենակ թողել: Ծննդյան երեկոն է. Նվարդը ջանում է տոկալ, մանկիկին զվարթ պահել, իսկ Արամը, չերթական թղթախաղից սպառված, որոշում է եկեղեցի մտնել: Ծնունդի խորհուրդը նրան սթափեցնում է, և մոլորյալ ամուսինը գարձի է գալիս, տուն վերադարձնում: Սա Սուրբ Ծնունդի հրաշքն է, որ պայմանագործած է թե՛ Նվարդի տոկալու բարոյաբանական վարքագծով և թե՛ Արամի կրկին եկեղեցի գալու հանդամանքով՝ պատճառաբանված մաքրագործության ցանկությամբ: Աստվածահայտնության խորհուրդը վերընճյուղում է ընտանիքը:

Տիգրան Զյոկյուրյանի «Ի մարդիկ հաճություն»<sup>16</sup> նորավեպի Օհանջանը գժուվել է իր դրկից Գոգորի հետ: Օհանջանենց տանը բոլորը Սուրբ Ծնունդի տոնակատարությունը նախապատրաստելու մեջ են: Հստ ամենայնի պաշտպանվում են տոնի, ծիսակարգության բոլոր սովորութները, սակայն տնեցիները լարված են. Աստվածահայտնության խորհուրդը անհարիր է դրկիցների պրկված հարաբերություններով և երկուստեք հաշտության հորդորները համատեղվում են. «Անզգալի շարժումով երկու հարսեր հրեցին իրենց մարդիկը: Օհանջան և Գոգոր գահավիժեցան իրարու: Լայնորեն բացված հուժկու բազուկներ զիրար գրկեցին: Հեշտանքի, գոհության երջանիկ շունչ մը թռավ զսպված կուրծքերե»: Տոնը միմյանց ներելով, հաշտությամբ է բերում հոգու խաղաղություն:

1890-ական թվականների երկրորդ կեսից, պատմական հայտնի փաստերի

15 Տե՛ս «Արևելք», Կ. Պոլիս, 1890 թ., թիվ 1795:

16 Տե՛ս Տ. Կամսարական, Տ. Զյոկյուրյան, «Երկեր», Ե. «Սովետական գրող» հրատարակչություն, 1984 թ., էջ 482-488: Նորավեպն ունի «Ծնունդի պատմություն» ենթավերնագիրը:

պատճառով (համիդյան ջարդերի և հալածանքների քաղաքականության) «կաղանդային» նորավեպերում հստակորեն ընդնշմարվում է Հոգևոր ներդաշնակության սրբազնության հղացքում ազատամարտային գուգակցումները. հայրենիքին նվիրաբերվելը համահունչ է Ծնունդի խորհրդի մաքրագործությանը: Սա է այդօրինակ նորավեպերի գեղագիտական առաջադրությունը: Այս առումով ուշագրավ ստեղծագործություններից են ազգային-ազատագրական շարժման երախտափորներից Վահան Մանվելյանի (բուն անվամբ՝ Կարապետ Տողրամաճյան) «Կաղանդչեքը»<sup>17</sup> և Երուխանի համանուն նորավեպը<sup>18</sup>: Եթե Մանվելյանի պաթետիկ-հերոսական պատումը «բոլոր հայ տառապյալներուն» ալեգորիկ արթնացումի ինքնատիպ ուղերձ էր, ապա Երուխանի Գարեգին Սուրմալյանը անմահանալուց (իբրև հայկական դատի նախանձախնդիր կախաղանի էր դատապարտված) ազգային պատվախնդրության ոգու հավերժությունն է տարփում՝ իբրև Ծնունդի աստվածահաճու նվեր:

Ժանրային այս կառույցն ունի հստակ, անխոտոր ձևաբանական կերպ՝ պատումային մակարդակի որոշարկված կաղապարով և կառուցվածքային մողելով: Նորավեպերի այս փաղանդը պարտադիր ունենում է Ծնունդի տոնի ծիսակարգությունից փոխանցված արտահայտություններ, գործառնությունների կիրառություններ, կողիզիաները գերազանցապես հանգուցալուծվում են Ծննդյան գիշերը: Բնականաբար, քրիստոնեության ծիսակարգության, արքետիպների, խորհրդանիշների բազմաթիվ դրսեորումներ բնագրային մակարդակում փոխաձևվում են իբրև կառուցվածքային բաղադրատարեր, առարկայացնում պատումը (օրինակ, Ղազարոսի միստերիան՝ արծարծված Երվանդ Օտյանի «Կաղանդի վիպակ» ստեղծագործությունում, ճրագալույցի խորհուրդը, նվիրաբերության հանգանակը, աղավնու խորհրդանիշը և այլն):

Նվիրաբերության գեղարվեստական զանազան գործառնությունները հիմնականն են պատումի ընթացականության, կենտրոնացման և հանգուցալուծման գործում: Լևոն Բաշալյանի «Կաղանդչեքը» նորավեպում<sup>19</sup> երիտասարդ Հակոբի երախտագիտությունը դարբին Գևորգի ընտանիքի հանդեպ (Գևորգը տասնհինգ օր հիվանդ պառկած էր և կաղանդին տանը բան չկար) փոխադարձվում է նվիրաբերության ալեգորիկ դրսեորմամբ. ի պատասխան Հակոբի բերած նվերների՝ Գևորգի աղջկը իր վարսերից մի փնջիկ՝ իբրև կաղանդչեր, նվիրում է երիտասարդին: Գիմմենի «Կաղանդչեքը» նորավեպում<sup>20</sup> երիտասարդ Արսենի համար Կաղանդի երեկոն և նվերը դառնում են փորձություն, ինքնաճանաշման դրական ճանապարհ: Հարկ է նշել, որ նորավեպերի այս համակարգում առհասարակ նվիրաբերության հղացքը ստեղծագործությունների պարտադիր նախապայմաններից է (Երուխան, Լևոն Շաթրյան, Օննիկ Զիֆթեսարաֆ, Վահան Մանվելյան) անպայման գուգահեռված գիշերվա խորհրդին

17 Վ. Մանվելյանն այս ստեղծագործությունը գրել է 1898-ին, որն առաջին անգամ նույն տարում տպագրվել է Վառնապում, ապա Փարիզում՝ առանձին, այնուհետև լույս է տեսել նորա «Նշանադրեր» ժողովածուում, Ֆիլիպե, Տպարան «Մազմիկի» 1907 թ., էջ 122-134:

18 Տե՛ս Երուխան, «Կաղանդչեքը», «Ծավիլ», Վառնա, 1900 թ., ապրիլի 15:

19 Տե՛ս «Հայրենիք», Կ. Պոլիս, 1894 թ., հունվարի 1:

20 Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1898 թ. թիվ 17:

կամ ճրագալույցին: Եթե Զիֆթե-Սարաֆի կուզիկը համանուն նորավեպից<sup>21</sup> գոյության իմաստը կենտրոնացնում է խնայած դրամով հայրենի գյուղի մարդկանց կաղանդչեք առնելու, այսինքն՝ օգնելով, սատարելով, ապա Վ. Մանվելյանի Տիգրան աղան իր տիկնոջը՝ Աննային, հիրավի, ինքնատիպ կաղանդչեք է տալիս. որդեգրում է մի որբուկի՝ նրան պարգևելով ծնողներ, իսկ իրենց՝ զավակ<sup>22</sup>:

Այսպիսով՝ միանշանակ է, որ Սբ. Ծնունդի նորավեպերի համակարգում թշվառության, կարիքի, անտեսման տարուբերումների պատկերագրումը, «Հոգով աղքատների», «սգավորների», «քաղցածների և ծարավների», «ողորմածների», «խաղաղարարների», «արդարության համար հալածյալների» հոգեբանության դրվագումը հավատքին ներդաշնակվելու, մաքրագործության գեղարվեստական համարժեքումն էր:

21 Տե՛ս «Օանթ», Կ. Պոլիս, 1913 թ., թիվ 52-53, էջ 65, 68:

22 Տե՛ս Վ. Մանվելյան, «Նշխարներ» ժողովածու, «Կաղանդի պարզ պատմություն», էջ 140-146:

## ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՈՐԱՎԵՊԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐՈՒՄ

**Բ**ացառապես նորավեպին էր վերապահված 1880-1910-ական թվականների արևմտահայ գրականության կենսաթրթիռներն ու ստեղծաբանական ներուժը պահպանելն ու գրական ընթացքը չգոյությունից, դադարներից անջրաբետելը. ժանրը գրականության կենսունակության նախապայման էր թե՛ գեղարվեստական, գրական ընթացքի առարկայական տիրույթներում և թե՛ գրողների ստեղծագործական մղումների, տարերքի, գգայնությանների ներքին ամբարումներում: Ուժսունականների սերնդից սկսյալ մինչև արևմտահայ գրականության դարափակումը՝ շատ քիչ գրագետներ կային, որոնք չէին գրել ու հրատարակել նորավեպեր: Սովորաբար այսօրինակ արձանագրությունները գրականության պատմությունների ընթերցումների խորապատկերներում միմիայն բանաստեղծության մենաշնորհն են, սակայն պատմական նման հակադարձությունը հաստատում է արևմտահայ նորավեպի առանձնահատուկ կերպը: Հակադարձ շարժման պերճախոս վկայություն է նաև արևմտահայ երդվյալ բանաստեղծների նորավիպային դարձումները: Այս ժանրով ստեղծագործել են Ռուբեն Ռբերյանը, Եփիմիմ Ավետիսյանը (Անայիս), Զարուհի Գալեմքերյանը (Եվտերպե), Արտաշես Հարությունյանը (Մալկարացի Կարո), Կարապետ Ռմկյանը, Լևոն Քիրճյանը (Լարենց), Էղուարդ Գոլանցյանը, Մերուժան Պարսամյանը. Հայկանուշ Մառքը, Հովհաննես Սելյանը, Զապել Ասատուրը (Սիպիլ). Վահան Թեքեյանը, Մաննիկ Գերպերյանը, Վահան Մալեզյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, այլոք<sup>1</sup>: Հարկ է շեշտել, որ այս հեղինակների համար նորավեպի գրելն ու հրապարակելը գրական ժամանց չէր. նրանց համար նորավեպը ստեղծագործական կյանքի հարակա ներկայություն էր, և այս առումով դժվար թե գտնվի մի այլ գրականություն, որտեղ մի ամբողջ գարաշրջանի գրականության բանաստեղծների գերակշռող մեծամասնություն արգասավոր հետևողականությամբ ամրակայի նորավեպի ժանրը: Անշուշտ, այս իրողությունը պատճառաբանվում է ինչպես նորավեպի ձևաբանական-բանարվեստային հատկանությամբ, այնպես էլ արևմտահայ գրականության առարկայական և ենթակայական պատմական, տեսական հարացույցի բաղադրատարրերով, որոնց մանրամասն քննությունն ու մեկնաբանությունը այս գրության խնդրագրությունից գուրս են: Մատնանշած մի քանի հատկանիշներին սոսկ ավելացնենք նաև այն հանգամանքը, որ 1880-1910-ական թվականների արևմտահայ նորավեպը ներժանրային կառույցների մեծաքանակությամբ լիակատարացնում էր ցանկացած հղացքի գրականացումն ու գեղաձևումը: Պատահական չէ, որ բա-

1 Զանցառում ենք Եղիա Տեմիրճիպաշլանի, Ռուբեն Զարդարյանի, Կարապետ Տողրամաճյանի, Արշակ Չոպանյանի, Ժագ Սպասալյանի, Բարսեղ Ծախպազի և սրբանց պետ Մի շարք այլ գրողների, որոնց ստեղծագործական խառնվածքն ու բնույթը, ստեղծաբանական կերպը կամ համադրական է և կամ՝ բացահայտ արձակագրի:

նաստեղծների նորավեպային դարձումները ներգորվեցին ժանրի ձևաբանական անխտիր բոլոր դրսեորումներին, և այստեղ է, որ Ռուբեն Սևակը ընթերագրվում է նորավեպի պատմական համապատկերին՝ ուրույն ներփակությամբ, սկզբունքային «միաբնակությամբ»: Ինչո՞ւ կիրարկվեց «միաբնակություն» արտահայտությունը: Ի տարբերություն մյուս բանաստեղծների նորավեպերի՝ Ռուբեն Սևակի ստեղծագործությունները կենարոնացան, սեռովեցին և այսպիսով բյուրեղացրեցին արևմտահայ նորավեպի ներժանրային կառույցներից, ձևաբանական տարբերակներից միայն մեկի սահմաններում՝ այսպես կոչված «Բժշկի պատմած» նորավեպերում: Այս պարագային, անշուշտ, նրա մասնագիտությունը՝ արհեստավարժ բժիշկ լինելու հանգամանքը, որոշարկող-սատարող նշանակություն է ունեցել, սակայն սրան անպայմանորեն հանգուցվում է առհասարակ Սևակի գրականությանը բնորոշ գոյության պրկված, սահմանային իրավիճակների, զգայնությունների, ընկալումների գրականացումը: Նրա ստեղծագործություններում մի կողմից աներկեա են «Կարմիր գիրքը» (1910թ.) քերթվածների ժողովածուի ռեմինիսցենցները, մյուս կողմից՝ «Բժշկի պատմած» նորավեպերը կազմակերպող բաղկացուցիչների ըստ ամենայնի իմացությունն ու բնագրային գործնականացումը, որը հնարավորություն էր ընձեռնում ներժանրային այս կառույցի թեմատիկ-ոճական սահմանների ընդլայնմանը: Պակաս կարեոր չէ նաև այն հանգամանքը, որ Սևակի բնագրերում ներդաշնակվում էին Ֆլորերի այն առաջադրույթները, որը «ամեն մեծ գրագետի համար, մասսամբ մը պայման կը դներ բժշկական պատրաստություն մը» և «մասնահատուկ նկարագիր»<sup>2</sup>, որն արտահայտվում էր նյութի մատուցման նորույթով, գետալների վարպետ միասնականացմամբ: Ինքնին հասկանալի է, որ Ռուբեն Սևակի նորավիպագրության շուրջ ցանկացած խոսք կամ դատում խարիսսվում է «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» խորագրով մեկտեղված ստեղծագործություններին<sup>3</sup>, սակայն այս պարագային անհրաժեշտ են մի քանի ճշգրտումներ: Նախ՝ 1913-1914 թվականներին գրված (առավելաբար Լոզանում, մի փոքրիկ մասը Պոլսում է ստեղծվել) այս ստեղծագործությունների ժամանակային պատկանելության խնդիրը: Այն հանգամանքը, որ սրանք մեկտեղվել են «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» խորագրի ներքո՝ իբրև թեմատիկ միասնականությունը մատնանշող գործեր, միանգամայն տեղին է և իրավացի, սակայն վերապահելի է բոլոր երկերը կամ շարքն ամբողջությամբ պատմվածքներ կամ պատմվածքների ժողովածու անվանելը: Ռուբեն Սևակի՝ այս խորագրի տակ հավաքված գործերն արձակ քերթվածների, մանրապատումների, քրոնիկոնների, կարճ խո-

2 Հակոբ Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականության», հ. 9, Անթիլիաս 1980 թ., էջ 30-31: Ուշագրավ է, որ Օշականը, Սևակի ստեղծագործությանն անդրադառնապիս, սկսում է «Բժշկին գիրքեն փրցված էջեր»-ով՝ իբրև 1910-ականներին արևմտահայ նորավեպի «զառածումը» պատմեշող եռույթի:

3 «Բժիշկին գիրքեն փրցված էջեր»-ը առաջին անգամ 1925-ին Սալոնիկում տպագրվեցին առանձին գրքով՝ տասներին ստեղծագործություն: Ռուբեն Սևակի ծննդյան 100-ամյակի առիթով՝ 1985-ին Երևանում, Ալեքսանդր Թոփչյանի աշխատասիրությամբ հրատարակված հատորում շարքը տպագրվեց ամբողջությամբ՝ քսանութ ստեղծագործություն:

Սույն գրության մեջ բոլոր հղումները 1985-ի երևանյան հրատարակություններից են, բնագրին կից, փակագծերում:

հազրությունների, գեղարվեստական ակնարկների, հրապարակագրության և նորավեպերի յուրօրինակ հավաքածու են՝ դիտված բժշկի տեսանկյունով, մասնագիտական գործունեության կիզակետում։ Տվյալ գեպքում սույն գրության մեջ մեզ հետաքրքրում են «Բժշկին գիրքեն փրցված էջեր»-ի նորավեպերը, որոնք յոթն են. «Կես խենթը», «Մանչերուն գերեզմանը», «Հարսներուն գաղտնիքը», «Տեր ողորմյա», «Գինովին աղջիկը», «Անիծված գանձը», «Մեռցնելու իրավունքը»։ Այս ստեղծագործություններն իրենց ժանրային հանդերձով, կազմաբանությամբ անխառն նորավեպեր են, սրանք են Ռուբեն Սեակի հավելումները ժանրի շրջագում և, ինչպես արդեն նկատեցինք, արևմտահայ նորավիպագրության մեջ բանաստեղծը ընթերագրվում է «Բժշկի պատմած» անվանումով ներժանարային կառույցի կիրարկումներում։

1880-1910-ական թվականների արևմտահայ նորավեպը, բնականաբար, անմասն չէր ժանրի համաեվրոպական բանարվեստին և ձևաբանությանը բնորոշ իրողություններից և ժամանակաշրջանի ներժանրային բոլոր կառույցները կիրառվում էին նաև ազգային գրական ընթացքում։ Հարկ է նշել, որ արևմտահայ նորավեպի պատմությունն ու ընթացականությանը միշտ էլ, պահպանելով ինքնությունը, համարայլ էին ժամարի համապատասխան պատմական դրսեորմանը։ Խնդրո առարկա շրջանում, հար և նման եվրոպականի, արևմտահայ նորավիպագրության մեջ գործում էին այնպիսի ներժանրային կառույցներ, ինչպիսիք էին գինամիկ նորավեպը, կաղանդային նորավեպերը, պատմական նորավեպը, նորավեպ-նամականին, նորավեպ-գաղտնիքը և այլն։ 1890-ականներից այս ամենին ավելացավ նաև, այսպես կոչված, «Բժշկի պատմած» նորավեպերը։ Պոլ Բուրժեի, Գոնկուր եղբայրների, Մոպասանի, Զոլայի, Զեխովի գեղարվեստական փորձը՝ գիտականության, ճշգրտության, բնախոսության և փորձարարական հոգեբանության կարգախոսներով, ժանրի կառույցվածքում հաստատագրում էին «Բժշկի պատմած» նորավեպերի կառույցը, որտեղ գրականացվող առարկայի ընդհանրական դիտողականությունը, պատումի սկզբունքային առարկայականությունը, բացառիկ, պրկված իրադարձության կենտրոնացումը և ըստ այդմ ոչ նորմատիվ հանգուցալուծումը (ընդգծենք, որ իրենց բնույթով կուլիշիաները նույնպես ստանդարտ չեն) նորավիպային տարերքում բացառիկ արդյունավորություն էին ունենում։ Նամանավանդ որ ըստ ժանրի քրեստոմատիկ բնութագրման՝ «...նորավեպի ամենալնդգծված հատկանիշները՝ կարճությունը, սեղմությունը, խտությունը և միասնականությունն են»<sup>4</sup>, որոնք «Բժշկի պատմած» նորավեպերում առավելագույնս շեշտված են։

Տակավին 1890-ականներից սկսած մինչև 1910-ականները «Բժշկի պատմած» նորավեպի ներժանրային կառույցը արևմտահայ գրականության մեջ անընդհատ ստեղծագործական կիզակետում էր՝ գրսեռորելով հայեցակետերի և կենտրոնացման խայտաբղետ մոտեցումներ։ Լևոն Բաշալյանի «Վերջին համբույց»

4 Տե՛ս «The dimensions of the short story. A criptrical anthology» New York-Toronto 1965, p. 509.

5 Հիշատակենք առավել ամբողջականներն ու հաջողվածները, որոնք նորավեպի այս կառույցը ամրակացին արևմտահայ գրականության մեջ։ Ռուբեն Սեակի ատեղծագործությունների հետ անպայմանորեն արձանագրելի են Լևոն Բաշալյանի «Վերջին համբույց», Գրիգոր Զոհրաբի «Տալիլա», «Երջանիկ մահը», Զապել Ասատորի «Վրիպանքը», «Սիսակ» կեղծանունով հրատա-

բը»<sup>6</sup> այս տարբերակի առաջին ստեղծագործությունն էր, որ ժանրի պատմության համապատկերում ունեցավ ամենատարածված ռեմինիսցենցները: 1890-ականներին Բաշալյանի նորավեպերի հղանցքի անհատականացրած մեկնություններն էին Զոհրապի «Տալիլա»-ն, Սիպիլի «Վրիպանքը»: Բացառապես նույն կոլիզիայի և իրադրության ստեղծագործական տարամեկնությունները արևմտահայ նորավիպագրության մեջ բյուրեղացրեցին «Տալիլայի» կանգնումը՝ շրջանակելով աստվածաշնչային միստերիայի ապամիթոսականացումից մինչև ժամանակաշրջանի անհատի կենսոլորտի շերտերի խորաքնին արձանագրություն: Ժամանակաշրջանի կառույցի այս դրսերումներում առաջին անգամ ստեղծաքանական լիարժեք մանրամասնման ենթարկվեց նախամահմահ գուգաղը բությունը, որ պիտի բյուրեղանար Ռուբեն Սևակի նորավեպերում իբրև անհատի անցումային գոյավիճակի սկզբում:

«Բժշկի պատմած» նորավեպերում, որպես կանոն, կիրարկվում է հետեւյալ պատումային կաղապարը՝ պասիվ գործող անձերից մեկը ծանոթանում, այնուհետև մտերմանում է բժշկի հետ, որից հետո արդեն բժշկը ներկայացնում է սեղմ, իրադարձությունների սրբնթաց հանգուցմամբ, որեւէցե պատմություն: Ասել է թե՝ պատմումը մակարերկում է արտաքին-միջնորդավորված կերպով: Այս սկզբունքով են գրված Զերապի «Մեղքին պատիմը»<sup>8</sup>, Պարսամյանի «Տոքթ. Արամ Մակարյանը»<sup>9</sup>, Սիսակի «Անակնկալը»<sup>10</sup>, կառույցի գրեթե բոլոր նորավեպերը: Ռուբեն Սևակի «Բժշկի պատմած» նորավեպերը ժամանակին կառույց ներբերեցին բոլորովին նոր պատումային կառուցվածք: Իրողություն, որ ոչ միայն մասնագիտական պատկանելության մենաշնորհով է պատճառաբանվում, այլ նաև գրականացվող առարկայի և ենթակայի ներքին-անմիջնորդավոր առաջարձրմամբ<sup>11</sup>, որն արդեն, ի տարբերություն մյուսների<sup>12</sup>, նորավեպի բանարկեստում ընձյուղում էր նեռուումանտիզմի գեղագիտությունը: Ռուբեն Սևակի նորավեպերում նախադրային մասը կարճված է, ամենաանհրաժեշտ, սեղմ միջոցներով նա անցնում է գործողության, արարքի էությանը, քանի որ դրանք արդեն գերհագեցած են և ցուցանում են. «Ուրիշ ահավոր տագնապ ճամբան, այսինքն դեպի մահ տանող այն բյուրավոր քովնտի անցքերը, հիվանդութենեն առաջ, զայն պարտագրող խուլ ու խոր ազդակները, արյունեն, մի-

րակված «Անակնկալը», Կարապետ Ոսկյանի «Հիվանդին ձպնը», Մինաս Չերազի «Մեղքին պատիմը» և Մերուժան Պարսամյանի «Տոքթ. Արամ Մակարյան»-ը:

6 Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1890 թ., 15 մայիսի:

7 «Տալիլա» նորավեպի ազդեցությունն ալեքսան հզոր էր, որ ստեղծագործության տպագրությունից վեց տարի անց՝ «Տալիլա»-ն առաջին անգամ հրատարակվել էր «Մասիս»-ում 1893-ին՝ Զմուռնիայի «Արևելյան մասով»-ում լուս է տեսնում Ղևոնդի «Լուիզմ ինչո՞ւ չանուանար»-ը՝ 1899 թ., էջ 604-610:

Այս նորավեպը Զոհրապի նշված գործի բացարձակ կրկնությունն է՝ տեղ-տեղ «Տալիլայի» պատկերների, արտահայտությունների բառացի մեջբերումներով:

8 Տե՛ս «Մասիս» 1904 թ., էջ 87-89: Զերապը նորավեպը հրատարակել է «Արաքսի» կեղծանունով:

9 Տե՛ս «Ծանթ», Կ. Պոլիս, 1911 թ., թիվ 15, էջ 233-234:

10 Տե՛ս «Սուրբանդակ», Կ. Ժոլիս, 1899 թ., թիվ 33:

11 Միակ պայմանական բացառությունը «Մեոցներու իրավունքը» նորավեպն է, որտեղ բուլղար ծերունի զինվորը պարզապես արձանագրում է բժշկի պատմությունը:

12 Ներքին-անմիջնորդավոր կերպի կիրարկումը առկա է նաև Կարապետ Ոսկյանի «Հիվանդին ձպնը» նորավեպում՝ տե՛ս «Արևելք», Կ. Պոլիս, 1900 թ., թիվ 4304:

սեն, ուղեղեն-ներսեն ու գուրսեն, որոնք բոլորը մեկ կը կազմեն աղետը, իր վերջին վարագույրին համար դիմելու ստիպված դեպի ցավին տունը»<sup>13</sup>:

Ոութեն Սևակի «Բժշկի պատմած» նորավեպերը համադրեցին և ներդաշնակեցին ժամանակի արևմտահայ փաղանգի երկու տիրապետող հատկանիշներ՝ ուտիլիտարն (օգտապաշտական) ու անխառն արվեստականը<sup>14</sup> և այս իմաստով նրա արձակը որակական միևնույն հարթության վրա է, ինչ քերթությունը: Հանգամանք, որ Սևակի գրական ժառանգության հատկականությունը պայմանավորող երևույթներից է: Ընթերցողին մատուցել նորավեպ, խոհագրություն թե քրոնիկոն՝ միշտ տպավորիչ իրադարձություններով՝ անհրաժեշտ նախագիտելիք զանազան ախտերի մասին, բնագրային մակարդակում աննկատելիացնելով «դիդակտիկ-ուսուցողական» հոսքը, անջրպետելով ցանկացած բժշկի բնորոշ պատմումի շրջանակից, հիվանդությունների արձանագրություններից, և նյութը դարձնել ընտիր գեղարվեստական ստեղծագործություն, միայն վարպետ արվեստագետի կարելիություն էր, որը Սևակն ըստ ամենայնի առարկայացրեց: Այսպես՝ «Կես խենթը», «Մանչերուն գերեզմանը», «Հարսներուն գաղտնիքը», «Տեր ողորմյա», «Գինովին աղջիկը» նորավեպերի ճակատագրական հիվանդությունների խորքը, ախտավորների վիճակների սուզումները ներդաշնակվում են ընդհանրապես մարդու նախամահ՝ մահվան հանգամանքի դեմ մենակ, օտարի հայտնության գրականացմանը: Այստեղ է նաև Սևակի նորավեպերի առինքնողությունը, ժանրային խնդրո առարկա կառուցյի ընդգրկունությունը գործնականացնելու հանգամանքը: Նրա ելակետը յուրահատուկ բանաձեռում է ստացել «Անիծքած գանձը» նորավեպում. «Վա՛յ մարմնի բժիշկ, որ հոգին չի հասկնար: Ի՞նչ հոգեկան ցավեր կան, որ հիվանդին ցավեր կբյուրապատկեն, մահացու կդարձնեն, այլև կբացատրե՞ն այդ ցավերը» (278): Սևակի նորավեպերի հերոսների և գործողությունների աշխարհը սևեռված էր հենց հիվանդների հոգու ընթերցումներում: Այս պարագային ծավալային և կառուցվածքային սեղմ միջոցները մի կողմից, սրընթաց և ծայրահեղորեն պրկված պատումը մյուս կողմից գրողին պարզապես պարտադրում են ոճական, բառապատկերային համակարգի գյուտված կիրարկումներ, և Սևակը յուրաքանչուր կոնկրետ գեպքում հայտնաբերում է միակ անհրաժեշտ եղակի բառը, փոխաբերությունը, առհասարակ:

Սատանային իրավիճակների կենտրոնացումը, նախամահվան և մահվան գեղարվեստական շրջապտույտը արևմտահայ նորավիպագրության մեջ 1890-ականների վերջերին 1900-ական թվականներին, հասկանալի պատճառներով, ստեղծաբանական իրացումների հորձանքում էր՝ 1894-1896-ի Աղետը «Եվրոպայի մայրամուտի» զգայնությունների և գիտակցության գոյավորումը և այլն, և բնական էր այս ամենի անդրադարձը ժանրի գարգացման վրա՝ Զարուհի Գա-

13 Հ. Օշական, «Համապատկեր...», հոտ. 9, էջ 31:

14 Սևակի նախադեպը արևելաբայ գրականության մեջ, գրեթե նույն ժամանակաշրջանում, փորձեց իրականացնել Վարումին: Նրա՝ հատուկ համերժան համար գրված բժշկական հոդվածներն ու ակնարկները հրաշալի էին, սակայն երբ փորձեց համադրել մասնագիտությունը գրականության թետ, կատարելապես ձախողվեց: Նկատի ունենք «Պատրանք», «Մատնիշը» վեպերը:

լեմքերյան, Կարապետ Ոսկյան, Մերուժան Պարսամյան, Հայկանուշ Մառք<sup>15</sup>: Այդօրինակ դրսեորումները հոչակագրի արժեք ձեռք բերած յարճանյանական «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ»-ի ինքնատիպ «ալյուզիաներն» էին, և աչա Ռուբեն Սևակը կիլիկիայի արհավիրքից հետո, «Կարմիր գրքից» չորս տարի անց, առանց դույյոն-ինչ չափազանցության, ծրագրային խմբագրում է մտցնում հղացքի գեղարվեստական իրագործումներում: «Մեռցնելու իրավունքը» նորավեպի բժիշկը շեշտում է. «Եթե գուք ազատվիլ կ'ուզեք, կ'ըսեր, ո՞վ կ'արգիւլե զձեզ մեկնելե. ես իր քով պիտի մնամ մինչև իր վերջին շունչը, բայց ես չունիմ մեռցնելու իրավունքը ես կյանքին պաշտոնյան եմ... (297): Այսպիսով՝ Սևակը, որ անկումների սարսափներում դիտարկում և փոխանցում էր ընթերցողին «թշվառության տեսարանները», որոնք «այնքան արագ կհաջորդեն իրարու» («Գինովին աղջիկը») անակնկալներով սկսված և անակնկալներով ավարտվող պատմումներում՝ ինչպես նկատում է «Կես խենթը» նորավեպի եղբափակիչ հատվածում և միանշանակ բյուրեղացնում նորավեպի հիշողության մեջ միված ժանրի բնույթը, «բժշկի պատմած» նորավեպերի ձևաբանական հարացույցում հայտնաբերում է անկրկնելի աշխարհ, և սա է նրա, օշականյան բնութագրումով՝ «մինչև ոսկորներուն ծուծը գրագետի», հավելումը արևմտահայ նորավեպի համաստեղության մեջ:

---

15 Հիշատակենք Բյացքով լավագույն նորավեպեր գրած հեղինակներին և ստեղծագործություններ՝ «Հուսաբեկ Բյուծախտավորն»՝ Գալեմքերյան, «Արևելք», 1893 թ., թիվ 2702, 2703, «Մինչև մահ»՝ Ոսկյան, «Արևելք», 1899 թ., թիվ 4203, «Բոլերան»՝ Պարսամյան, «Արևելք», 1902 թ., թիվ 4892, «Մեռլապաղող»՝ Մառք, «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1904 թ., թիվ 2346:

## ՎԱՀԱՆ ԹԵՔԵՑԱՆԻ ՆՈՐԱՎԵՊԵՐԸ

Վահան Թեքեյանը հայ գրականության այն գյուտված երևույթներից է, որի գեղարվեստական ժառանգությունն, առհասարակ կյանքն ու գործը, բյուրեղացնում են մեր մշակութաբանական տեսակը, պայմանավորում՝ ազգային հոգեւոր պատմության ներկայությունը, և այս անպարագծելի Վարպետի՝ ավելի քան կեսդարյա ստեղծագործության յուրաքանչյուր գրսեորում, ցանկացած հյուլե անհրաժեշտ է, կարեւոր։ Նրա գրականության մեջ չի կարելի ընդունելի-նորմատիվ համանունությամբ տարբերակել, առանձնացնել գրապատմական, այսպես կոչված, երկրորդական, ուղեկցային դրսեորումներ, քանի որ Թեքեյանը ամբարում է հայ գրականության հիմնամյա ժամանակաշրջանի կենսոլորտն ու զգայնությունը, ճակատագրի կամոք հանձնառու լինում պատմական հաջորդականությունն ապահովելուն, իր գրականությամբ մեկտեղում ավարտի և սկզբի արարողականությունը։ Հետևաբար նրա գեղարվեստական ժառանգության որևից բաղադրատարր չպետք է ընթերցման և մեկնության լուսանցքներին մնա, կամ՝ սահմանափակի հպանցիկ, սոսկ իբրև խորք վերլուծություններով։ Այս առումով իրավ բանաստեղծի գրական ժառանգությունն՝ իբրև ամբողջություն, մետաբնագրի ենթադրում է ստեղծաբանական կիզակետի՝ քերթության, այլասացությունների հոսքեր, դրսեորումներ՝ արձակ երկեր, թատերգությունն, հուշագրությունն, թարգմանությունն, տեսական-քննադատական հոդվածներ և գրություններ, հրապարակախոսությունն, որոնց քննությունը հրատապ և էական է երկու առումով։

ա) իբրև քերթության այլասացություններ՝ ժառանգության մատնանշած դրսեորումները սատարում և ամբողջականացնում են Թեքեյանի գեղարվեստական մետաբնագրի լիակատար ընթերցումը (նամանավանդ նկատենք, որ բանաստեղծության շուքի տակ կամ անտեսվել են, կամ պարզապես թվարկվել),

բ) դրանց հետազոտությունն առարկայաբար զուգահեռում է բնագրագիտական ծզգրտումների մանրակրկիտ գործընթաց, որն էլ օրախնդիր դարձած Թեքեյանի լիակատար գիտական հրատարակության համար անուրանալի է, այնպես որ համաձայնելով Ավետիս Սանճյանի այն արձանագրությանը, թե «Թեքեյան» ֆոնդի հանձնախմբի ձեռնարկած «Ամբողջական երկերի» անկատար հրատարակությունը «գիտական ու բանասիրական լուրջ թերություններ» ունի, անհրաժեշտ է կենտրոնանալ ոչ միայն «ցարդ գոյութիւն չունեցող անոր քերթողական ստեղծագործության լիակատար ժողովածուի» հանգամանքին, այլ ընդհանրապես Վահան Թեքեյանի ամբողջական գործին<sup>2</sup>:

Իրավ բանաստեղծի գեղարվեստական ժառանգության այլասացության գերակա արտահայտությունն անշուշտ թե՛ քանակով և թե՛ ստեղծագործական

1 Թեքեյանի օշականական ապա բնութագրում տարողունակ ազն արտահայտությունն է, որն անվերապահ ընդունվեց գրական կյանքում և դարձավ բանաստեղծի ընդհանրական հատկանությունը ցուցանող արտահայտություն:

2 Տե՛ս Վահան Թեքեյան, Նամականի, Հրատարակութիւն Թեքեյան Մշակութային Միութեան, 1983 թ., էջ 1:

կյանքի ուղեկցական գործառնությամբ արձակն է, պատահական չէ, որ 1950-ականներին ձեռնարկած լիսկատարի լույս տեսած վեց հատորներից երեքը ներփակում էին այն. յոթերորդ հատորում՝ «Եթե Տերը կամենա» վեպը, ութերորդում՝ փոքր արձակը թատերգությունների հետ և իններորդում՝ երգիծական գործերը՝ համապատասխան չափածոյին կցված: Ակնհայտ է, որ այդ ստորաբաժանումը կրավորական է և խիստ պայմանական: Նախ՝ այսպես կոչված, երգիծական արձակի համատեղադրությունը համապատասխան չափածոյի հետ: Ժանրային առումով դրանք ոչ թե գեղարվեստական երկեր են, այլ՝ հրապարակախոսական: Ապա՝ գեղարվեստական արձակի առանձնացումն ու տարրերակումը: Հատորում ներփակված են ինը ստեղծագործություն, որոնց մեկտեղումը կրկին պարագայական է և թերի: Այսպես՝ մաքուր, անխառն գեղարվեստական ստեղծագործություններ «Մարք Ֆուրթունի արկածը» անավարտ վեպի (Ա, Բ, Գ հատվածները լույս էին տեսել տակավին 1922-ին կ. Պոլսի «Բարձրավաճառում», Դ հատվածը կցվել էր ձեռագրերից), «Ճաշիլը» և «Մեկենասը» նորավեպերի հետ հատորում ամփոփված են «Խարույկը», «Կտրված թևեր» ճեպագիր-հրապարակախոսականները, «Տեսթանը» և «Բանտեղբայրները» հուշագրականները, «Հպարտները» արձակ քերթվածը (հեղինակային ասք-հեքիաթի բնորոշ արտահայտություններից) և «Կաղանդը Կեսարիո մեջ» քրոնիկոնը: Ինչպես նկատում ենք, ստորաբաժանումը խիստ պայմանական է, և թեքեյանի ապագա լիսկատար բազմահատորյակում գեղարվեստական արձակը պետք է ամփոփվի հետեւյալ ստեղծագործություններով՝ «Եթե Տերը կամենա» – վեպ, «Մարք Ֆուրթունի արկածը» – անավարտ վեպ և «Ճաշիլը», «Մեկենասը» – նորավեպեր, իսկ մնացյալը, համապատասխանաբար, պիտի զետեղվին հոդվածների, հրապարակախոսության, հուշագրության և արձակ բանաստեղծությունների հատորներում:

Արդ, երբ իրավ բանաստեղծի գրական ժառանգության պարագծում ծշգրտեցինք գեղարվեստական արձակը, քիչ ավելի մանրամասն անդրադառնանք մետաքնագրի այս դրսեռման ընդհանրական կերպին: Հայտնի է, որ Վահան Թեքեյանի առաջին տպագիր գործը եղել է 1894-ին «Հայրենիք» օրաթերթում տպագրած «Կաղանդը Կեսարիո մեջ» քրոնիկոնը: Այս փաստն ուշագրավ է այն առումով, որ երգվյալ բանաստեղծի «չնորհանդեսը» գրական ընթացում հակադարձ շարժման սկզբունքով է տեղի ունեցել, որ պատճառաբանվում է ոչ միայն արևմտահայ գրականության պատմության մեջ 1890-ական թվականներին արձակի գերակշռությամբ, այլև ամենից առաջ հենց իր՝ թեքեյանի համար ստեղծաբանական տարերքի փորձագրության և ծշգրտման ջանքով: Եվ պատահական չէ, որ վեց տարի անց նա ինքն է տալիս իր արձակի ինքնադատականը՝ Արշակ Չոպանյանին 1900-ի հունվարի 22-ին հասցեագրած նամակում գրելով. «Իմ ախտավոր արձակիս համար, իրոք շատ բարի եք եղեր այնչափ հոգնիլ ու բացատրություն տալու համար»<sup>3</sup>: Սա արվեստագետի հայ քերթության ամենախստավահանն՝ նախ իր բանաստեղծության հանդեպ, երևույթներից մեկի վերջնական և սկզբունքային ծշգրտումն էր, և հատկանշական է, որ նրա ստեղծագործական կենսագրության մեջ արձակին վերապահվեց սոսկ լրացուցիչ-

3 Նույն տեղում, էջ 93:

սատարողական գերակատարություն, այլասացության դրսեորման տարերք, գրական-մշակութային անհրաժեշտ, սակայն ոչ երբեք պարտադիր աքսեսուար: Այնուհանդեռձ Վահան Թեքեյանի մետարնագրում «ախտավոր արձակ» բանաձևումը բացատրության կարիք ունի և այս պարագային ելակետային են հետեւյալ իրողությունները.

ա) արձակի «ախտավորությունը» պատճառաբանվում է Թեքեյանի ստեղծաբանական ինքնության մեջ քերթվածի վերջնական հստակությամբ (երբեք չպետք է զանցառել արդեն 1901 թվականին «Հոգեր» ժողովածուի կանգնումը), բանաստեղծումը հստակվել և ազատագրվել էր իրբե գեղարվեստական ինքնարտահայտման կերպ, կենսաձև,

բ) ստեղծագործական գիտակցության և ոգեխառնության շրջանակում արձակը հաստատագրվել էր քերթվածի մանրամասնման, ծավալման, ներքին մեկնության, «բացատրման» տիրույթներում:

Ի տարբերություն այլասացության մյուս դրսեորումների (թատերգություն, հրապարակագրություն, խոհագրություն)` արձակին էր տրված քերթվածի ծավալման և ներքին մեկնության տարբերակումների լիակատարությունը, որն ըստ ամենայնի դրսեորվեց «Մարկ Ֆուրթունի արկածը» անավարտ մնացած վեպում: Այս ստեղծագործությունը «Մեկ-հատիկա» բանաստեղծության գերակա ազգակից արտածված արձակ այլասացությունն է, որը կրկին «Ան ոչ ողջ մնացած աչքն է, որ մեռածին կը պատմէ ապրելուն անհուն եղերականութիւնը»<sup>4</sup>:

Երկրորդենք՝ Վահան Թեքեյանի արձակը դիտելի է այլասացության շրջագծում, որն ինքնին ենթադրում է զուգահեռ պատմություն իրավ բանաստեղծի գրական գործունեության համապատկերում: Այս պարագային նրա արձակը ցուցանում է ձախողման, պարտության, բյուրեղացման և հաղթանակի ուշագրավ հակոտնյայություն: Եվ եթե տակավին 1910-ական թվականներից հետապնդող վիպագրության փորձությունը նախ՝ «Արևում» իրբե թերթոն, ապա և առանձին լույս տեսած «Եթե Տերը կամենա» վեպը թեքեյանական արձակի ձախողումն ու պարտությունն էր, ապա «Ճահիլը» և «Մեկենասը»՝ բյուրեղացումն ու հաղթանակը, որովհետև իրավ բանաստեղծը, որ «բարիքն է ըրած այդ տղոց տողերը ազատելու ձևեն, փայլեն, գրական ջնարակեն ու մղած զանոնք իրենց հոգեկան մույնքին»<sup>5</sup>, այս ստեղծագործություններով հավելել է արևմտահայ նորավիպագրության պատմությունը, օշականյան առանձնացումներով՝ «Հոգեկիճակի և ճակատագրի» և «մթնշաղային մտավիճակի» կենտրոնացմամբ: Սա է, որ Թեքեյանի նորավիպագրության ուսումնասիրությունը խնդրադիր և կարևոր է դարձնում նրա գեղարվեստական մետարնագրի պարագածում:

1880-ականների երկրորդ կեսից մինչև արևմտահայ գրականության դարափակումը գրական ընթացում նորավեպի ժանրը տիրապետող դրսեորումներից էր: Իրողություն, որ պատճառաբանվում է ինչպես ժանրի բնույթային և ձևաբանական հատկանիշներով, այնպես էլ գրապատմական առարկայական հանգամանքներով: Ժանրի դինամիզմն ու սրբնթաց հարմարվողականությունը,

4 Հակոբ Օշական, Նամականի, Ա, հատոր, Պեղութ, 1983 թ., էջ 54:

5 Հակոբ Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականության», Անթիլիաս, 1980 թ., հտ. 9, էջ 437:

ներժանրային կառույցների անվերջավոր հնարավորությունները, փոքր ծավալն ու արագ արձագանքման կարելիությունները մի կողմից, արևմտահայ գրականության «լրագրային» հանդերձը (պատմական, քաղաքական դրդապատճառների հանգուցմամբ) մյուս կողմից, նորավեպի արգասավորության բարերար բաղադրիչներն էին: Պատահական չէ, որ նորավեպային դարձումներ էին անում այնպիսի երդվալ բանաստեղծներ, ինչպիսիք էին Ռուբեն Որբերյանը, Զարուհի Գալեմքերյանը, Կարապետ Ռոկյանը, Մերուժան Պարսամյանը, Էդուարդ Գոլանցյանը, Հայկանուշ Մառքը, Զապել Ասատուրը, Հովհաննես Սեթյանը, Մանուկ Պերպերյանը, Վահան Մալեզյանը, Ռուբեն Սևակը, այլոք: Թերևս դժվար է գտնել մի այլ գրականություն, որտեղ մի ամբողջ դարաշրջանի բանաստեղծների գերակշռող մեծամասնություն նման «թուլություն» ունենա նորավեպի ժանրի հանդեպ: Բնականաբար, այսօրինակ դարձումից անմասն չէր կարող մնալ Վահան Թեքեյանի նման արվեստագետը՝ առթելով ինչպես ժանրի տեսությանը վերաբերող խնդիրներ, այնպես էլ ստեղծագործական վկայություններ:

Վահան Թեքեյանի գիտական կենսագրության մեջ անպայմանորեն պիտի վավերացվի նրա և Գրիգոր Զոհրապի առընթերազրումների ամբողջական երկնագիրը: Խնդրո առարկա հարցի շրջագծում դրա արտահայտության դրվագներից է Զոհրապի նորավեպերին նվիրված դրական ասուլիսը 1913 թվականին, երբ Հակոբ Սիրունու, Շավարշ Միսաքյանի, Զապել Ասատուրի, Գրիգոր Մալխասի, Գուրգեն Խաժակի պես բանախոսությամբ հանդես եկավ նաև Վահան Թեքեյանը: Նրա «Զոհրապի իր նորավեպագիր» տեսապատմական քննության ազդակները ոչ միայն բանաստեղծի՝ Ութսունականների սերնդի նկատմամբ ունեցած սիրո, համակրանքի, գրական նոր շարժման նախակարապետների հանդեպ տածած երախտիքի դրսելորում էր, Զոհրապի 1909-ին «Շիրակի» վերահրատարակությունը Պոլսում ապահովելով միջնորդության, երաշխավորության և ջանքերի յուրօրինակ փոխադրձում, այլ նաև Հիացումից և երախտագիտությունից անդին՝ արվեստի հրամայականի կայացման արձանագրություն, որ արևմտահայ գրական կյանքում հաստատագրվեց նորավեպի ժանրի շնորհիվ նաև. «Երկրաչափ Զոհրապը իր հետքը թողած է գրագետ Զոհրապին մեջ, որ անշուշտ մասսամբ ատոր կը պարտի չափի և հստակության այն հզոր դրոշմը, որ կը հատկանշե իր գրականությունը»<sup>6</sup>: Թեքեյանն իրավացիորեն ժանրի բանարվեստում և կառուցվածքում ելակետային էր համարում նորավեպի արխիտեկտոնիկայի ներդաշնակ-համամասնական միասնականությունը: Տեսական այս դիտարկումը նա ըստ ամենայնի գործնականացրեց նաև իր նորավեպագրության մեջ: Հարկ է նշել, որ Թեքեյանի նորավեպերը բևեռվեցին արևմտահայ գրականության պատմության մեջ ժանրի տիրապետող հղացքների կիզակետերում՝ փաստելով իրավ բանաստեղծի ստեղծագործական այլասացության ևս մեկ կարևոր առանձնահատկություն. Թեքեյանի նորավեպային դարձումները բացառապես ժանրի գերհագեցած խոտացումների բովում էին: Այս սկզբունքը գալիս էր տակավին «Կաղանդը Կեսարի մեջ» քրոնիկոնի գոյավորման ագ-

6 «Գրական ասուլիսներ. Բ.», «Գրիգոր Զոհրապի նորավեպերը», Կ. Պոլիս, 1913 թ., էջ 26: Ի դեպ, տարիներ մետք, երբ կրկին անդրադարձավ Զոհրապի ստեղծագործություններին, գրեթե տառացիորեն կրկնեց իր բանախոսությունը: Տես Վահան Թեքեյանի «Գրիգոր Զոհրապ» հոդվածը, «Նավահարդ», Պուբլիկ, 1924 թ., Ա, հատոր, Ժ-ԺԲ պրակ, էջ 313:

դակներից: Արևմտահայ գրականության մեջ, այսպես կոչված, «կաղանդային նորավեպերը» ժամրի այցեքարտերից էին՝ Եղիս Տեմիրճիպաշյան, Լևոն Բաշալյան, Հրանդ, Հովհաննես Ասպետ, Երվանդ Օսյան, Գեղամ Բարսեղյան, Տիգրան Զյոկյուրյան, Միմեռն Երեմյան, Գիմմեն, Երուժան, Անայիս՝ հեղինակներ, որոնք ներժանրային այս կառույցը բազմիցս հաջողությամբ կիրարկել էին: Իսկ արդեն «Ճահիլը» ու «Մեկենասը» Աղետ-դիմադրարձություն, ազգային հեղափոխություն և բարքեր նորավիպային գերակա հղացքների ուրույն և խտացված դրսեորումներից էին:

Հակոբ Օշականը, հիշելով 1914-ին «Մեհյանականների» հետ «Հրաշալի հարութեան» քննարկումը, գրում է. «Վ. Թ. ամենեն պարզ ու նույնքան սիրտ գտնող տողերով կ'արտահայտեր մեր ողբերգությունը, մեր ազատագրութեան աննված երազը: Ասիկա այնքան հստակ էր, որ լրջացանք ամենքս»<sup>7</sup>: Անպաճույն պատմումով էլ նա անդրադարձավ 1894-1896 թվականների աղետին, որ նրա արձակում և հուշագրության մեջ քանիցս արձանագրվեց (հրապարակախոսական պաթոսով, վավերականի թանձրացմամբ): «Խարույկը», «Կտրված թերը», «Տեսթանը», «Բանտեղբայրները», և բյուրեղացած «Ճահիլը» նորավեպով:

Կ. Պոլսից տարագրված Վահան Թեքեյանը 1904-ին, վերջնականապես հիասթափելով Գերմանիայից, Համբուրգից անցնում է Ալեքսանդրիա, ուր 1905 թվականին իր գրչեղբայր և մտերիմ Միքայել Կյուրցյանի հետ ձեռնարկում է «Շիրակի» հրատարակությունը: Հատկանշական է, որ «Շիրակ» հանդեսի եղիպատական (Ալեքսանդրիա, Կահիրե) շրջանում լույս տեսան Աղետի նորավիպային մի շարք անդրադարձումներ, հիշատակենք, օրինակ, 1906-ին Միքայել Նաթանյանի «Հեղնարը» (թիվ 2-րդ): Անշուշտ, բարձրակետը վերապահված էր Վահան Թեքեյանին, որ 1905 թվականի երրորդ համարում Վահան Տիրանյան կեղծանունով տպագրեց «Ճահիլը» նորավեպը: Ստեղծագործությունն ունի «Լարախաղացի մը պատմություն» ենթախորագիրը: Նորավեպի՝ հատորում գետեղված բնագիրը համեմատել ենք ինչպես ԳԱԹ-ի թողոններում պահպանվող մեքենագիր ինքնագրի, այնպես էլ հանդեսի տպագրածի հետ<sup>8</sup>:

Այս ստեղծագործությունը Աղետի հղացքի արևմտահայ նորավեպի անդրադարձումներում ներքերում է արտաքին և ներքին աղետներից ազատագրվող անհատի հոգեբանական սկեթչի արհեստավարժ ըրսեորում: Հովիկին ճարպեկության և կենսուրախ բնավորության համար համագյուղացիները ճահիլ մականունն էին տվել: Հովիկը բնաշխարհի անկապտելի տարրն էր, բնության շարունակությունը: Հարեւան գյուղից փախցնում է Մարեին, սակայն ծնողները գեմ էին այդ ամուսնությանը: Երիտասարդը ստիպված հետ է տանում օրիորդին և բոլորից վիրաբորված՝ ընդմիշտ լքում գյուղը: Մի գնչուից լարախաղացություն է սովորում և մեծ համբավ ձեռք բերում: Գինաբուքների և կանանց հորձանքում փորձում է բթացնել, մոռացության տալ ծննդավայրի և Մարեի պատկերը: 1896-ին թուրքերից տեղեկանում է, որ իր գյուղն էլ են ավերել, Ա-

7 Հակոբ Օշական, Նամականի, էջ 76:

8 Այս եռանամեմատությունը հնարավորություն ընձեռնեց ճշգրտել ինչպես այս, այնպես էլ «Մեկնասի» բնագրերը: Կամիրեկի հրատարակությունում կան վրիպակներ, բայթողումներ: Եվս մի վկայություն, որ կենսականորեն հրատապ է Թեքեյանի ստեղծագործությունների բնագրագիտական անհաթար տեսքով հրատարակելու անհրաժեշտությունը:

կել Մարեին. վիրավորվածության և ինքնասաստման նշույլները անդամ վիրանում են, վերագարթնում է հայը, մարդն առհասարակ և ներկայացումներից մեկի ժամանակ իր ձողով գահավիժում է ամբոխի ամենաստվար մասում։ Սա էր «Հրաշալի հարության» այլասացությունը, որ երվանդ Օտյանի, Կարապետ Տողրամաճյանի, Մինսա Զերազի, Ենովք Արմենի, Հմայակ Արամյանցի, Ռուբեն Զարդարյանի, Սուրեն Պարթևյանի, Առանձարի և այլոց Աղետի և դիմադարձության նորավիպային անդրադարձումներին հավելում էր դարձի, հարության հոգեբանական պատմումը։

Եթե «Ճահիլը» ստեղծագործության ազդակները բաղհյուսվում էին հայ իրականության ցայդալուսային ժամանակագրությանը, ապա «Մեկենասը» նորավեպը ժամրի գերակա մի այլ հղացքի՝ հայ կյանքի, մենթալիտետի հեղափոխական բեկվածքի յուրօրինակ արտահայտություններից էր։

1900 թվականներից սկսած՝ Թեքեյանը արևմտահայ պարբերականներում հանդես էր գալիս երգիծական քրոնիկոններով և հոդվածներով («Պատրիարքին աշխարհականը», «Շիրակ», 1909 թ., թիվ 7, «Բառի մը առթիվ», նույն տեղում, թիվ 9, «Շոգենավին մեջ», «Բյուլանդիոն», 1911 թ. և այլն), ուր ծաղրում էր ազգային քաղաքական կյանքի զարտուղությունները։ «Մեկենասի» գոյությունը պայմանավորված էր 1908-ի հայտնի իրադարձություններից հետո հայ կյանքը պարուրած հեղափոխական հեղձուկով, հեղափոխության մակարույծների շահարկումներով։ Անպայման պիտի արձանագրել, որ «Մեկենասը» յուրովսանն այն փոքրիկ և համեստ հավելումն էր, որ Օտյանի անգերազանցելի և անկրկնելի Փանջունու հետ, ընդամենը երկու տասնամյակում քաղաքական երգիծաներում հաստատագրեցին Նշան Պեշիկթաշլյանի Շահազարին, ընկեր Փարոսին, Մալխասի և Լեռ Կամսարի կերպարներին։ Իրագործումն արդեն կար, գրական կյանքում խարսխվել էին երվանդ Օտյանի «Հեղափոխության մակարույծները», «Պատերազմ և խաղաղությունը», Տիգրան Զյոկյուրյանի «Հերոսը»։ Եվ ահա, 1912-ին արևմտահայ նորավեպի կենտրոններից «Շանթ» հանդեսի 26-րդ համարում լույս է տեսնում 994 բառանոց «Մեկենասը» նորավեպը, որտեղ ծաղրվում են և՛ Հակոբ աղա Ճենկեճյանի նման նորաթուխ ազգային բարերարները, և՛ Հայկ Լափիկյանի նման հեղափոխականները և թե Քերթիկյանի պես նորօրյա մեծապատիվ մուրացկանները։ Ճենկեճյան աղան, որպեսզի բարերարի համբավ ճեռք բերի և չվատացնի հարաբերությունները Լափիկյանի հետ, համաձայնվում է նկարիչ Քերթիկյանին Փարիզ՝ ուսման ուղարկել՝ կանխավ գրավ վերցնելով այս տարաբախտ արհեստավորի (պատճենող էր և լուսանկարիչ) տունը։ Նորօրյա մեկենասը սնանկանում է և իբրև մասնակի հատուցում՝ սեփականացնում Քերթիկյանի ունեցվածքը։ Դժվար չէ նկատել, որ այս պարագային ևս նորավիպային այլասացությունը պատնշում էր տեսակի ուժացումը, որ Թեքեյանի գրական ժառանգության մեջ աներկըա է և շարունակական։

Այսպիսով՝ իր ժամանակի <տրտում տեսանողի և ուրացված մարդարեի> (Օշականի բնորոշումն է) նորավեպերը մեկ անգամ ևս վկայում են իրավ բանաստեղծի գրական ժառանգության սկզբունքային ամբողջականությունն ու միասնականությունը, գեղարվեստական մետաբնագրի ներդաշնակությունը։

## ՀԱՄԱՍՏԵՂԸ ԵՎ ՀԱՅ ՆՈՐԱՎԻՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ա.

*XIX դարի 80-ական թվականներից արձակի կարճ ձևերի խայտաբղետ և բազմաքանակ դրսեորումները հայ գրական ընթացում, ժանրի պատմական զարգացման տեսանկյունից, վճռորոշ և էական նշանակություն ունեցան։ Միևնույն ժամանակ, առարկայորեն, դրանք գրական զարգացման տիրապետող դրսեորումներն էին։ Ստեղծագործական մթնոլորտը հագեցած էր գեղարվեստական ակնարկի (այսպես կոչված, ֆիզիոգիական ակնարկ, ակնարկ-երկինություն, քրոնիկոն), պատմվածքի, նորավեպի անընդհատ հոսքով։ Եթե տարաբնույթ մրցույթները նորավեպի, պատմվածքի համար ապահովաբար հոսքի կարգավորիչներն էին, ապա երգվալ բանաստեղծների արձակամետ դարձերը կարճ ձևերի գերիշխանության համաձայնությունն ու լիովին ընդունման իրականությունն էին։ Թովմաս թերզյանի՝ նորավեպեր գրելու փաստը ասվածի անբեկանելի վկայություններից է։ Դա տուրք չէր օրվա մտայնությանը, առավելապես ոչ «սպառվող» գրական արտադրանքին ընդառաջելու ստիպողական արարք։ Արձանագրենք սոսկ, որ երկույթը պայմանավորված էր գեղարվեստական-գեղագիտական զարգացման օրինաչափություններով, ստեղծագործական որոնումների անհրաժեշտությամբ, լեզվի, պատկերային համակարգի արդիականացմամբ՝ լայն առումով։*

*Միաժամանակ որակական փոխաձևումները, ամենատարբեր կաղապարների և ձևերի կիրառությունները և հատկապես նորավեպի՝ տառացիորեն բոլոր հնարավոր ժանրային ձևերի արտահայտությունները կանխորոշեցին արձակի կարճ ձևերի հետագա զարգացման ուղին։ Բնականաբար, ժանրի ապագան պայմանավորվում էր այն հանգամանքով, թե որքանով է պահպանվում դասական շրջանի (նկատի ունենք XIX դարի 80–XX-ի 900-ական թվականները) որակական ձեռքբերումների մթնոլորտը, որը ենթադրում էր նախ՝ առկա, ստեղծված մակարդակի պահպանում, ապա՝ արժեքների գիտակցված ընկալում և հետո՝ ժանրի վերլութացն ապահովող նախորդի ստեղծագործական հաղթահարում և նոր որակական շարունակություն։ Այս հեշտ տեսանելի, արտաքուստ ընդհանրապես ծիշտ իրողության արձանագրումը առարկայորեն վեր է հանում հարցագրումներ, որոնք անպայման երևան են գալիս ժանրի քննության տարբեր և ծայրաբեռնային խնդիրներին անդրադառնալիս։*

*Այսպես՝ գրականագիտության կողմից պայմանականորեն ընդունված «գյուղագրություն» եզրով բնորոշվող Համաստեղի, Մնձուրու, Շուշանյանի, Արամ Հայկազի գեղարվեստական մտածողության տիպը, պոետիկան առհասարակ, խարսխվում է Զարդարյանի, Թլկատինցու, Մշո Գեղամի, մասամբ Արտաշես Հարությունյանի կողմից ստեղծված, մշակված սկզբունքներին (հերոսի*

ընտրություն, նկարագրվող և գրականացվող առարկա, կենտրոնացման շրջանակ և այլն): Համաստեղը հատկապես զբաղվել է «Գավառի գրականության» խնդիրներով, տեսական ընդհանրացումներ արել. «Ամեն անդամ, որ Թղկատինցին ու Զարդարյանի ձևերի բաղդատությունը կ'ուզեմ ընել, մտքիս առջև կ'ունենամ երկու տեսակ ստեղծագործություն: Զարդարյան մետաքսե նուրբ թելերով, գույներու մանրամասնություններով ասեղնագործող մըն է: Զգույշ է պետք ըլլալ, որ չմաղվին իր թելերը: Զարդարանքի համար կարելի է գործածել միայն և կամ սկիզներու վրա ձգել: Իսկ Թղկատինցին թելերը սովորած և առնացի կազմով ու ուժով տեղյահին առջև նստած, կտավ կը գործե, դիմացկուն կտավ: Իր կտավին վրա ձգված նախշերը հայկական ձևի ավանդական նախշերն են: Իր գործածած գույնը դիմացկուն ներկե շինված տեղական ապրանք է, այնքան դիմացկուն, որ ոչ արել կհանե և ոչ լվացքը»<sup>1</sup>: Գրողի նորավեպերում և պատմվածքներում «գյուղագրության», «Գավառի գրականության» այս երկու շերտերը անպայմանորեն միացվել են, փոխկապակցվել, դարձել խիստ միասնական՝ պայմանավորելով նորավիպագրության նոր որակ, սակայն սրանք ներդաշնակված են մեկ շերտի հետ ևս. գավառի, գյուղի գրականացման ժամանակ բանահյուսական տարերքի ներթափանցում բնագիր՝ ելլորպական գրական ընթացի կողմից ընդունելի կիրարկման ստեղծագործական-կազմակերպող առանձնահատուկ մտայնությամբ: Արշակ Չոպանյանը, իր հիմնարար «Համաստեղ և գյուղը հայ գրականության մեջ» ուսումնասիրությունում քննելով «Գավառի գրականության» գոյագորման պատճառները, բնույթն ու որպիսությունը, վերջին հանդամանքի վրա հատուկ ուշադրություն է հրավիրել և միանդամայն իրավացիորեն հայ գրականության այս ինքնատիպ արտահայտությունը դիտել իբրև համաելլորպական գեղարվեստական զարգացման ինքնին հասկանալի երևույթ՝ միանգամից թոթափելով այն թյուր կարծիքները, թե իբրև հայ «գյուղագրությունը» գրականություն էր կանխակալ կաղապարներով, ընթացից դուրս առաջադրված կարգախոսներով: Էսկանը ագգային դեմք ու դիմագիծ գրականացնելն էր, որն ի պատիվ, այսպես կոչված, «գյուղագիրների» ըստ ամենայնի արտացոլվեց թե՛ պոետիկական համակարգում, թե՛ լեզվագոճական դրսերումներում և թե՛ թեմատիկայի բազմազան ու տարասեռ ոստումներում:

Այսպես կոչված, «գյուղագրության» անդաստանում Համաստեղը միայն ու միայն առանձնանում է իր արձակ կարծ ստեղծագործություններով, որովհետև բացարձակապես այդտեղ նա ոչ միայն, ինչպես արդեն ասացինք, հրաշալի գուրգորդեց մատնանշված շերտերը, այլև առավելագույնս կենտրոնացրեց ասելիքը, ստեղծեց որակ, դրանով իսկ «գյուղագրության» տարածական սահմանները ընդլայնեց: «Համաստեղի ինքնահատկությունը կը կայանա անոր մեջ, – գրում է Գրիգոր Շահինյանը, – որ կը մոտեցնե այս երկու բներները իրարու, կուտա միաժամանակ խորքով ու ձևով հաջող պատմվածքներ, որոնք այլևս գավառական նեղ շրջանակի մը մեջ չեն բանտվիր, այլ ընդհանրական գրակա-

1 Համաստեղ, Գավառը և Թղկատինցին, «Հայրենիք», Բոստոն, 1928 թ., ապրիլ, թիվ 6, էջ 49-50:

նության մը լայն պողոտան կը հանեն, իր ստեղծագործությունը»<sup>2</sup>: Շնորհիվ Համաստեղի այս եզրը գրականագիտությունը կիրառում է խիստ պայմանականորեն:

Այնուհանդերձ, ինչպես Համաստեղը, այնպես էլ սփյուռքահայ գրականության, այսպես կոչված, «գյուղագիր» թերը, զուտ գործառական տեսակետից, շարունակում էին «Գավառի գրականության» ավանդները: Սակայն սա խնդրի սուկ ներփակ հայեցակետ է, տեղայնացված, մասնավոր իրողություն: Էական է դիտել թվարկված հեղինակների (առանձնապես՝ Համաստեղի) պոետիկայի առնչությունները Զոհրապի, երուխանի, ավելի սակավ Նար-Դոսի նորավիպագրության հետ (նորավեպի կառուցվածք, պատումային կաղապարներ, ոճական տարբեր շերտերի գործառությունների շրջանակ, կոմպոզիցիոն մասնահատկություններ, բառապատկերային համակարգ և այլն): Եվ վերջապես՝ խնդիրն ամբողջական և համապարփակ դիտելի է Հովհաննես Թումանյանի և Նրանց գեղարվեստական, գաղափարական-գեղագիտական հարաբերակցության համապատկերում:

Համաստեղի «Գյուղը», «Անձրև» և «Քաջ Նազար և 13 պատմվածքներ» ժողովածուները ապահովաբար ընձեռում են այնպիսի գեղարվեստական ինֆորմացիա, որ խնդրո առարկա ուսումնասիրության խնդրագրությունը կարևորվում է ոչ միայն գրողի ստեղծագործական հետագծի վերլուծության սահմաններում, այլև ներառնում է ժանրի պատմությունը որոշարկող առանձնահատկություններ, նամանավանդ, երբ քննության առարկա են ոչ միայն ստեղծագործությունները, այլև՝ գրողի, խնդրի համար կարևոր, էական աղբյուրագիտական նշանակություն ունեցող հոդվածները: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է Համաստեղի «Գրիգոր Զոհրապ» հոդվածը:

## Բ.

Համաստեղի տեսական-գեղագիտական դատումների, կարծիքների, կովանների համապատկերում ութսունականների գրական շարժումը, 80-90-ական և հետագա տասնամյակի հայ արձակի խնդիրները միշտ էլ անհրաժեշտ ուշադրության են արժանացել: «Զոհրապներու, Արփիարյաններու, այն շրջանը անտարակույս, – գրում է նա, – որ շատ հետաքրքրական շրջան էր: Մեր լեզուն, մեր գրականությունը, Ալիշանի, Պեշիկթաշլյանի, Թերզյանի տեսակ մը պառնասական, հին դասական շրջանէն կ'անցներ ու ավելի կյանքին, ժողովուրդին կը մոտենար»<sup>3</sup>: Այս կամ այն առիթով նա անդրադարձել է այդ «Հետաքրքրական շրջանին», ընդհանրացրել գրական ընթացի տարբեր օրինաչափություններ: Այս պարագային նույնպես նրա դատումները ի վերջո խիստ միասնական են, հավաք, կենտրոնացված:

Գրականագիտությունը տարբեր առիթներով անդրադարձել է Համաստեղի «Գավառի գրականությանը», ութսունականներին, հետագա շրջանի գրական

2 Գրիգոր Շահինյան, «Համաստեղ», Պեյրով, 1961 թ., էջ 143-144:

3 Համաստեղ, «Գավառը և Թղկատինցին», «Հայրենիք», Բոստոն, 1958 թ., ապրիլ, թիվ 6, էջ 56:

երևույթներին ու առանձին հեղինակներին (օրինակ՝ Շիրվանզադեի մասին նրա դատումներին) նվիրված հոդվածներին, ելույթներին, դասախոսություններին, հպանցիկ ակնարկներին, խոհերին, սակայն ցարդ զարմանալիորեն հետազոտողների ուշադրությունից անտեսվել է նրա «Գրիգոր Զոհրապ» ծավալուն հոդվածը, որը տպագրվել է Բեյրութում 1961 թվականին, Անդրանիկ Ծառուկյանի «Նաիրի» շաբաթաթերթում<sup>4</sup>: Ավելին՝ ո՞չ 1966 թ. հրատարակված «Հայնամյակ Համաստեղի գրական գործունեության 1895-1965» գրքում և ո՞չ էլ գրողին նվիրված մեզ հայտնի միակ մենագրության՝ Գրիգոր Շահնյանի «Համաստեղում», հոդվածի մասին որևէ ակնարկ չկա: Տարակուսելի է այն հանդամանքը, որ մենագրության վերջում կցված մատենագիտության մեջ ևս հոդվածը նշված չէ<sup>5</sup>:

Վաթունական թվականներին սփյուռքահայ գրականագիտական միտքը առավել հաճախակի ու շահախնդրությամբ է անդրադառնում Գրիգոր Զոհրապի գեղարվեստական ժառանգությանը և առանձնապես՝ նորավիպագրությանը (Նուլպար Չարխուայան, Կարո Սասունի, Վահե Օշական, Էդուարդ Պոյանան, Ստեփան Շահպազ, Հրաչ Զարդարյան): Պատճառը ոչ միայն 1961 թ. գրողի 100-ամյակի հավուր պատշաճի տուրքն էր, ցեղասպանության հիսնամյակի շարժառիթը, այլև՝ գրողի նորավիպագրության ավանդների պարտադիր յուրացման հրատապ պահանջը, որ անհրաժեշտաբար և առարկայորեն սփյուռքահայ գրական ընթացի հրամայականներից էր, պայմանավորվում էր արձակի կարծ ձևերի մեծ ակտիվությամբ: Բնականաբար, Համաստեղը չէր կարող անմասն մնալ այս պարտադիր մտայնությունից, նամանավանդ, տակավին քսանական թվականներից Զոհրապը նրա ոչ միայն տեսական-պատմական հետաքրքրությունների կենտրոնում էր, այլև գրողի ստեղծագործությունը, ասել է թե՝ նորավիպագրությունը նրա համար ստեղծագործական անհրաժեշտ ընկալման, յուրացման, սեփական ասելիքը գտնելու, հստակեցնելու, կայունացնելու, Զոհրապ-նորավիպագրից պոկվելու, «օտարվելու» հույժ հրատապ առարկա էր: Մի ցցուն, անբեկանելի իրողություն, որ հետապնդում էր Համաստեղին բնագիրը կազմակերպելու, գրելու ընթացի բոլոր փուլերում՝ համառոտելու, գերխտացնելու տարրերը՝ համատեքստում ապահովելիս, ոճական տարաբնույթ դրսերումները ամրակայելիս, կառուցվածքային մասնահատկություններ մշակելիս և այլն: Սա, իսկապես, նույնական տարերքի, ստեղծագործական հոգեհարազատության վկայությունն էր, որը անպայման պետք է ստանար իր արտահայտությունը՝ արդեն ավարտուն, վերջնական ստեղծագործական ձերբագատումից հետո, որն արդեն գրականության պատմությանը ընձեռում է տեսական ավարտուն հայեցակետ, և որը ընդգծում է ժառանգորդության ակնկալելի որակ, որտեղ խիստ տեսանելի ընդգծվում է գրական զարգացումը: Կարծում ենք, այս է պատճառը, որ Զոհրապին նվիրված Համաստեղի ոտումնասիրությունը, որն իր տիպով, բնույթով, ոճով խիստ համաստեղյան է, միաժամանակ ներդաշնակ է զոհրապյանին՝ սեղմ, կենտրոնացված, հագեցած, երևան եկավ գրողի ստեղ-

4 Համաստեղ, «Գրիգոր Զոհրապ», «Նաիրի», Բեյրութ, 1961 թ., թիվ 29, էջ 4-5, 8:

5 Գրիգոր Շահնալան, «Համաստեղ», Բեյրութ, 1961 թ., էջ 187:

ծագործական վերջին փուլում, երբ Համաստեղն արդեն լիովին և համապարփակ դրսեռքել էր, կայացել: Թերևս ոչ ոք (մասսմբ՝ թլկատինցին, ավելի սակավ՝ Զարդարյանը) Համաստեղի համար նման հաստատուն և առանձնակի ուղեկից չեն եղել ստեղծագործական ողջ ճանապարհի ընթացքում: Այս իմաստով հատկանշական է քառասնական թվականներին դրված մի հոդված, որտեղ, անդրադառնալով պոլսական գրականության ճգնաժամին և ֆրանսիական գրականության անհաջող նմանակումներին, գրում է. «Այդ արգահատելի շրջանին էր, որ ներս մտավ գավառը չարոխով և տան մեջ գործված շալվարով: Թլկատինցին շատ բան կը պարտինք: Լևոն Բաշալյանը, Զարդարյանը, Հրանդը մեջտեղ ելան՝ փրկելու համար կացությունը: Անոնց արմատը գավառն էր: Տաղանդավոր Զոհրապն էր, որ միևնույն ատեն կրցավ շատ կարեռը չափ մը պահել՝ ստեղծելու համար տեղական գրականություն մը»<sup>6</sup>:

Հոդվածների և մանր հետազոտությունների այդ շրջանակում Համաստեղի «Գրիգոր Զոհրապ» հոդվածն առանձնահատուկ դիրք է գրավում: Եթե թվարկված հեղինակներն անդրադառնում են այս կամ այն մասնավոր հարցին, ապա նա դիտում և արժեքավորում է գրողի նորավիպագրությունը թե՛ հայ գրականության պատմության համապատկերում, թե՛ գրական զարգացման իր ժամանակի հանգույցներում:

1939 թվականին Րաֆֆուն նվիրված իր «Ծրջանը և Րաֆֆին» հոդվածում Համաստեղը հատուկ ներկայացնում է իր սկզբունքային կարգախոսներից մեկը. «Ըսված է հաճախ, որ կեղծ է այն գրականությունը, որ կյանքին հետ չէ, և որուն մեջ չկան ժողովուրդն ու շրջանը»<sup>7</sup>: Համաստեղի այս կարգախոսի անհրաժեշտ, կարեռագույն բաղկացուցիչն է լեզվի խնդիրը, թե որքանով է գրական լեզուն առարկայորեն ներկայացնում ժողովրդին ու կոնկրետ ժամանակաշրջանը, որովհետև ցանկացած գրողի լեզուն, լեզվական մտածողությունն ու հանդերձանքը լայն առումով նրա համար առաջնային-գնահատողական նշանակություն ունեն: Եվ ահա ինդրո առարկա հոդվածի սկզբում, որը յուրաստեսակ նախաբան-ներածություն է, Համաստեղը շեշտում է աշխարհաբարի գրականացման, գրական լեզու դառնալու ընթացի կարեռությունը՝ գրանից մակաբերելով թե՛ ոճական նոր գրսելորումները, թե՛ իրականության գեղաձևման նոր չափումները և թե՛ թեմատիկան: Ավելին՝ սրանից է ածանցվում, ըստ նրա, արևմտահայ գրական զարթոնքը, սա է պայմանավորում ութսունականների երևան գալը: Այս համատեքստում Պարոնյանին համարում է օրինաչափ և սպասելի երևույթ, որը նաև ութսունականների գրսելորման անհրաժեշտ նախապայմանն էր. «Արևմտահայ գրական վերածնունդը շատ բան կը պարտի անմահն Պարոնյանին: Ան մեծ հայտնություն եղավ որպես առաջին իրապաշտը և գեղարկեստական գրողը և մանավանդ առաջինն էր, որ ուզեց բարենորոգումներ կիրարկել մեր ազգային կյանքին մեջ իր բարձր ու դժվարին արվեստով: Հակառակ իր քաշքշված կյանքին՝ ան ուժեղ լավատես մըն էր փրկելու համար

6 Համաստեղ, «Ն. Աղբալյանի և Հ. Օշկանի մասին իրենց մահվան տարելիցի առթիվ», «Հայրենիք», Բոստոն, 1949 թ., դեկտեմբեր, թիվ 2, էջ 25:

7 Համաստեղ, «Ծրջանը և Րաֆֆին», «Հայրենիք», Բոստոն, 1939 թ., հունվար, թիվ 3, էջ 49:

լավը, ինչպես, իրմե հետո եղավ Զոհրապը»<sup>8</sup>: Այստեղ էականը ոչ այնքան այն ընդհանուր-վերացական բարդի՝ լավի գրական միանշանակության ընդգծումն է, որքան ընթացի տրամաբանական հաջորդականության երրորդումը, նամանավանդ գեղարվեստական մեթոդի, ստեղծագործական սկզբունքների մշակման և գործնական կիրառականության տեսանկյունից: Եվ, իրոք, աներկեայելի է Պարոնյանի պոետիկայի նախադուռ լինելը ութսունականների գրական շարժման համար, ու այս իմաստով Զոհրապին առանձնացնելը ոչ թե սոսկ այն բանի համար է արված, որ հոդվածը նրան է նվիրված, այլ հատկապես՝ այն իրողության գիտակցության, որ Զոհրապի գեղարվեստական համակարգում գեղարվեստական նոր մեթոդի առաջարկություններն ու կարգախոսները իրացվեցին, բնագրային մակարդակում տարրալուծվեցին գրականացվող առարկայից ըստ ամենայնի՝ առանց սերնդին բնորոշ օգտապաշտական, ուտիւնքար ոստումների, հրապարակախոսական շեղումների, սատարողական տարբերակումների, որ Զոհրապի գեղարվեստական համակարգը գրա (գեղարվեստական մեթոդի) ամենասպարտուն, կատարյալ, համապարփակ արտահայտությունն էր, հանգրվանը: Ուշագրավ է, որ հանգրվանությունն՝ իրեւ տարբերակիչ հատկանիշ, առանձնացնում էր նաև Զապել Եսայանը: Համաստեղն այս պարագային բնավ չափազանցության մեջ չի ընկնում՝ միանգամայն իրավացիութեն արժանին մատուցելով Արփիար Արփիարյանին, միաժամանակ արձանագրելով, թե «Արփիարյանին մեջ կը պակսեր ոճը: Այդ պակասն էր, որ լրացուց Գրիգոր Զոհրապի իր ինքնուրուցյն ոճով և արվեստի հզոր տաղանդով» (4):

Ինքնուրուցյն ոճն ու նուրբը տաղանդը Համաստեղը կենտրոնացնում է Զոհրապի նորավեպերի գեղարվեստական համակարգում Կոստանդնուպոլսի գրականացման սահմաններում՝ միաժամանակ շեշտելով, որ դա Զոհրապի տարերքն էր, նրա խառնվածքն ու տիպը. «Զոհրապը միշտ ալ Պոլսեցին մնաց իր բոլոր ձգտումներով: Պոլիսն էր իր գործունեության դաշտը: Պոլիսը թանձր խեցիի մը ներքեւ ապաստան գտած, գաղութահայ ինքնուրուցյն բարքերով: Հայկական ավանդության հետ խառնված էր թրքականն ու եվրոպականը» (4): Վերջինների մատնանշումը Համաստեղի համար սկզբունքային նշանակություն ուներ: Բանն այն է, որ եվրոպականի ու թրքականի պոլսական դրսենորումների գրականացումը ըստ ամենայնի շատ հայեցի էր. սա շատ կարեոր հանգամանք է, որ Համաստեղի անբավելի դիտողականությունը միանգամից որսացել է (Հատկանշական է այն հանգամանքը, որ հայեցի գրականացման զոհրապյան ավանդների ինքնատիպ շարունակողն էր Հակոբ Օշականը՝ անզուգական «Սուլիմյան էֆենդի» վեպում): Այսպիսով՝ Համաստեղը երրորդում է Արշակ Զոպանյանի՝ «քաղաքի հայ գրականության» հայտնի գրույթը, որ ժամանակին առաջադրվել էր և միանգամայն հատու ապացուցվել Զոհրապի և պոլսական մնացյալ հեղինակներին ազգային նկարագրից օտարման, աշխարհագրագացիական պաճուճանքներին մեջ մեղադրողներին: Ճիշտ է, այստեղ չենք կարող չանդրագառնալ Համաստեղի մեկ այլ դատումին. «Զոհրապին մեջ Հայաստանը ա-

8 Համաստեղ, «Գրիգոր Զոհրապ», «Նախրի», Բեյրութ, 1961 թ., թիվ 29, էջ 4: Հետաքար հոդվածից թերված բոլոր նորմների էջերը տեքստին կից, փակագծերի մեջ:

ուավելապես գաղափար էր ու միայն հեռավոր երազ, իր աշխարհը սահմանափակված էր Պոլսո հայ գաղութով, հայ քրիստոնյա համայնքով, լեզվով, դպրոցներով և տեղական ազգային պայքարներով» (4): Եթե տարանջատվենք գրողից, ապա Համաստեղն անտարակույս նեղացնում է Զոհրապի ազգային գործունեության սահմանները: Կարծում ենք, կարիք չկա թեկուզ թվարկել քաջածանոթ փաստերը: Ինչ վերաբերում է նրա գրականությանը, մասնավորապես՝ նորավեպերին, ապա «Թեֆարիկն» ու «Փոթորիկը», մանավանդ «Այրին» վկայում են, որ այդ «գաղափարն» ու «հեռավոր երազը» շատ կոնկրետ և միանգամայն գիտակ, ներսի մարդու գործ են, այլ բան է հայեցակետը, և կարծում ենք, որ այս գեղքում Համաստեղը միայն և հատկապես հայեցակետն ի նկատի ունի: Սրա լավագույն փաստարկը նրա այն եզրակացությունն է, որ Զոհրապը «մեր գրականության մեջ բերավ հանդգնություն, անկեղծություն և իրավ աշխարհաբարը: Աչա ինչ որ կ'ակնկալի իրավ արվեստագետն մը» (4): Ի՞նչից էին ածանցվում այս որակումները: «Փոխանակ ինք նպատակ դառնալու լեզվին, – գրում է Համաստեղը, – իշխանի մը պես լեզուն իր արվեստի ըմբռնումներուն հպատակեցուց և բառերը առավ նյութեն ու իր նկարագիրներեն» (5): Սա մեկ կողմն է, որի հանդերձված իրացումը Համաստեղը տեսնում է գրողի ոճի մեջ. «Զոհրապի ոճին չնորհիվ էր, որ անոր մեջ գրականություն ընելու ճիգը չենք տեսներ: Ըսելիք ուներ և այդ ըսելիքին հետ է, որ կը ստեղծվի ոճը: Անոր բառերը գույն ունին, կը մտածեն, կը քալեն կիրթ զինվորներու պես առանց ավելորդ ու սխալ քայլելու» (5): Նորավիպագրի անհրաժեշտ նախապայմանները անկողմնակալ և դիպուկ վերհանված են: Անհրաժեշտ է ունենալ համանման դիստողականություն և անպայման ստեղծագործական խառնվածք, որպեսզի միանգամից էականը հայտնաբերեն և ներկայացնեն: Համաստեղի պատմվածքներն ու նորավեպերը մատնանշված մասնահատկությունները ունեն, և դժվար չէ պրոֆեսիոնալ նորավիպագրի համար նկատել իր նախորդի կարևորագույն հատկանիշները, որ միով բանիվ կոչվում են «առավելագույն կենտրոնացում»՝ սկսած սաելիքից մինչեւ հատկապես բառի կիրառության սահմանները: Էական է դիտել, որ նորավեպ կազմակերպող բաղկացուցիչների հանրագումարը ոչ միայն սոսկ այսպես կոչված տեխնիկական անխաթար պատրաստվածության արդյունքն է, այլ նաև ստեղծագործողի խառնվածքը: Սա է պատճառը, որ Համաստեղը շեշտում է, որ Զոհրապի նորավեպերը ոչ թե գրականություն, գեղարվեստ սարքեն է կամ անելու պահանջը, այլ այն, որ ժամրի ասպարեզում նա, իրոք, այն եզակի հեղինակներից է, որ Հրաշալի գուգակցում է իր բնագրերում նորավեպի մասնահատուկ չափումները գրականացվող նյութին՝ արդյունքում ստեղծելով մի ներդաշնակ համակցություն: Արձակի կարճ ձևերում, որոնք այս իմաստով բավականին քմահաճ են, սա, անշուշտ, ոչ միայն վարպետ նորավիպագրի վկայությունն է, այլև ՏԱՂԱՆԴԱՎՈՐ նորավիպագրի՝ տաղանդավոր հատկապես և բացառապես նորավիպագրի: Եվ այս իմաստով Զոհրապը, ինչպես էդգար Պոն, համաշխարհային նորավիպագրության մեջ առանձնանում է նույնիսկ Հոթորնի, Մոպասանի, Դողեի և Բուրժեի նման նորավիպագիրներից: Տեղին է Համաստեղի այն հաստատ համոզումը, թե «Հայ գրականությունը շատ բան շահեցավ, երբ Զոհրապ կանուխեն

դադրեցավ ոտանավորներ գրելեն: Մենք պիտի ունենայինք միջակ բանաստեղծ մը, բայց ոչ մեր օրվան Զոհրապը» (5):

Հոդվածում Համաստեղը հպանցիկ բնութագրումներ է անում «Ուեհան», «Կարծեմ թե», «Այինկա», «Անդրշիրիմի սեր» ստեղծագործությունների առիթով: Դրանք գերազանցապես վերաբերում են նորավիպագրի հերոսուհիներին: Նա, մեր խորին համոզմամբ, այստեղ գիտակցաբար է մանրամասնվում, քանի որ խնդիրը զոհրապագիտության ամենաշահարկված, իրարամերժ, ծայրահեղ կարծիքների հիմնական արտահայտությունն էր: Համաստեղի բնութագրումները, որակումները, ի տարբերություն Կարապետ Ստեփանյանի, Հովհաննես Ավագյանի, Մեսրոպ Ճանաշյանի և այլոց դատումների, համատեքստից դուրս չեն, պատճառականացվում են Զոհրապի գեղարվեստական համակարգով: Այս իմաստով բնութագրական է նրա մեկնակետը. «Առանձին վերլուծում է մոտենալ Զոհրապին, թե կիները ինչքան ուժեղ գեր կատարած են անոր հոգիին, մարմնին, անոր աշխույժ պայքարին ու խոյանքին, իր ոճին, լեզվին ու գրական աշխատանքներուն մեջ. կյանքն է որ կը շնչե: Արդեն կը զգաս, կը լսես բարձրութիւններին» (4): Այստեղ ևս Համաստեղի համար կարեորը կերպարումի միայն ու միայն նորավիպագրական բնույթի առաջադրության հաստատումն է, որը տարածվում է բոլոր բաղկացուցիչների վրա անխտիր. «Երբ պատմվածք մը կը սկսի արդեն բոնած, պաշարած է ընթերցողը: Վարպետ է, երբ նկարագրի դիմանկարի ուժեղ գիծեր կու տա. և նույն կոկիկ ոճը կը տեսնենք խորհրդածություններու մեջ և դժվար թե կարելի է վերցնել բառ մը: Անոր ոճը ավելի կը գեղեցկանա, երբ կը նկարագրե շատ զուսպ գծերով ու գույններով, երբ կը նկարագրե փոթորիկը ծովուն վրա, «Ժամին բակ»ի բնությունը, երբ գիշերը շատ ուշ պատուհանեն դուրս կ'ելլեն ու դուրսը ձյուն կա» (5): Համաստեղը Զոհրապի նորավեպերին ներհատուկ հեղինակային ընդմիջարկումները, իր գործածած եզրով՝ «խորհրդածությունները», միանդամայն իրավացիորեն համարում է ստեղծագործությունների անհրաժեշտ բաղկացուցիչներ, որովհետև դրանցից ամեն մեկը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հանդես է գալիս այս կամ այն գործառությամբ (սատրապական, վերաբերողական, պատումը կենտրոնացնող, տեսանկյունների բախումն ապահովող, կերպարվորման և այլն), որը կա՛մ նորավեպի կառուցվածքում և կա՛մ որեւէ կոմպոզիցիոն միավորում համատեքստի «միասնականացման», ամբողջացման համար կազմակերպող նշանակություն ունի: Միաժամանակ նորավեպերի, այսպես կոչված, մուտք-ներածությունների հագեցվածության իրողության արձանագրումը նրան հանգեցնում է այն առանձնահատկությունների ընդգծմանը, որոնք Զոհրապի նորավեպերի սկզբունքային հատկանիշներից են. առաջին՝ համատեքստում անհրաժեշտ լարվածության ապահովում, երկրորդ՝ նկարագրությունների խտացումներ, երրորդ՝ դետալային կենտրոնացումներ:

Հատկանշական է, որ հոդվածում մատնանշված առանձնահատկությունները իրենց արտահայտություններն են ստացել, յուրօրինակ ստեղծագործական հիմնավորումն են ունեցել նրա պատմվածքներում, նորավեպերում առհասարակ:

## Գ.

Համաստեղի պատմվածքներն ու նորավեպերը հայ արձակի կարճ ձևերի զարգացման համար էական նշանակություն ունեցան. «Եթե Համաստեղը հարազատությամբ հիները հիշեցուց, իր արվեստով ավելի անթերի պատմվածքներ հորինեց, և գերազանցեց իր ուսուցիչները Գ. Զոհրապի պատմվածքներեն հետո, Համաստեղն եղավ անվիճելի վարպետը գրական այս սեռին իր Գյուղը և Անձրւ հատորներով»<sup>9</sup>, – գրում է Կարո Սասունին: Սա գրողի պատմվածքների մասին արտահայտված բազմաթիվ կարծիքներից մեկն է, որտեղ ընդհանուրացված է ընդհանուր մտայնությունը: Բոլոր դեպքերում էլ հատուկ շեշտվում են «Անձրւ» և «Գյուղը» ժողովածուները: «Միջոն» ստեղծագործությունը «Գյուղը» ժողովածուից, օրինակ, միանգամայն հստակ ընդգծում է Համաստեղ նորավիպագրի կարևորագույն հատկանիշներից մեկը՝ գրականացվող առարկայի, իրողության այնպիսի դրսեորումների նկատումը, որոնք հատկապես լիարժեք դրսեորգում են նորավեպի կառուցվածքում՝ միաժամանակ մնալով սկզբունքային, առարկայական: «Իր տեսողության նորությունը, – գրում է Արշակ Չոպանյանը, – կկայանա բացարձակ առարկայականության մը մեջ...»<sup>10</sup>: Բնորոշ է ստեղծագործության պատումի երկշերտվածության հանգամանքը: Պարմանին տարերքի անկապտելի բաղկացուցիչն է: Նա գյուղի, բնաշխարհի հետ խստիվ միացված է, մի տեսակ դուրս առօրյա, կենցաղային կշռույթներից, հասկանալի պարտականությունների շրջանակից: Միջոն անպատկերացնելի է իր բնական վիճակից գուրս, դա է իր ներդաշնակությունը: Հայ նորավեպում դրա գրականացման փաստը մինչ Համաստեղն արդեն կար: Նկատի ունենք Գրիգոր Զոհրապի «Հակոբիկը»: Միջոն Հակոբիկի տեսակն է՝ արդեն բոլորովին այլ պայմաններում: Պատումի մյուս բաղկացուցիչը Միջոն-Լուսիկ պլանն է, որն անչափ կարևոր կենտրոնացնող-հավաքագրող գործառություն ունի: Բանն այն է, որ Միջոյի հրապուրանքը, զգացումը միանշանակ դրսեորվում է իր եզերքը, տարերքը կազմակերպող բաղկացուցիչների միջոցով, որովհետեւ Լուսիկը նրա համար ընկալելի է միմիրայն որպես այդ տարերքի անձնավորված արտահայտություն: Սա անչափ հետաքրքիր իրողություն է: Հիշենք Հակոբիկ՝ հարաբերությունը Պետրոսյանների ընտանիքի հետ: Անթաքույց հակադրությունը զոհրապյան համատեքստում «փաստարկում» էր Հակոբիկի իր ներդաշնակության սահմաններից դուրս հանելու անպատող ջանքերը, այստեղ Լուսիկը «փաստարկում» է Միջոյի հայրենի գյուղի, բնության, հանդի ու դաշտի տարրը լինելը:

Համաստեղի նորավեպի կառուցվածքում մատնանշված իրողությունը ունեցել է ամենաբազմազան գրականացումներ. «Փիլիկ աղբար» ստեղծագործության համանուն հերոսը հար և նման է Միջոյին, նրա այլ դիտանկյունով քնն-

9 Կարո Սասունի, «Պատմություն Արևանտարակ արդի գրականության», Բեյրութ, 1951 թ., էջ 367:

10 Արշակ Չոպանյան, «Համաստեղը և գյուղը հայ գրականության մեջ», Երևան, էջ 760:

ված, գեղաձևված տեսակն է: Նա ևս հայրենի եզերքի, ծննդավայրի, երկրի համընդհանուրը, անբաժանելի արտահայտություններից է, այստեղ սակայն նորավիպագիրը կիրառում է ժանրի թերևս ամենազժվարին պահանջներից մեկը՝ համատեքստում ելակետ դարձնելով կենտրոնացման շրջանակի գործառությունների առավելագույն ընդլայնումը: Այս պարագային պետք է դիտելու և թափանցելու անհրաժեշտ նախապայմանները սկզբունքային համամասնության մեջ լինեն, որպեսզի ծանրության կենտրոնը մնա հիմնական հանդույցում, չտարածվի: Նորավեպում սա կիրառելը միագծորեն կապվում է դիտողականության գործածման, չափումների կիրառման հետ: Այդ նորավեպից երկու օրինակով քննենք դա: «Ինչպես որ աշխարհ կուգան եզը կամ ծառը, ճիշտ այնպես ալ աշխարհ եկած էր Փիլիկ աղբարը, եզան պես չարքաշ ու ծառին պես բարի: Ծառը անգիտակ իր անսահման բարության՝ իր հովանին կը տարածե հոգնած ճամբորդին, և թույլ կուտա, որ թռչուններ վերք բանան իր մարմնույն վրա, բույն շինեն, ձագեր մեծցնեն, օր մըն ալ թե առնեն ու թիո գան: Փիլիկ աղբոր բարությունը անսահման էր ճիշդ այն մենավոր ծառին պես»: Այս հատվածը ստեղծագործության մուտքն է, կենտրոնացման շրջանակը խիստ ամփոփ ու հակիրճ բնութագրում է Փիլիկի թե՛ գոյության կերպը, թե՛ հոգեբանությունը, թե՛ ճակատագիրը՝ միանշանակ հավասարելով հայրենին: Սա ելակետային հանգամանք է ստեղծագործության համար: Միասնականացման տիրապետող գործառությունը իր տարբեր բնագրային մեկնությունների մակարդակներում մասնավորեցնում է Փիլիկի կերպը՝ միեւնույն ժամանակ խստագույնս մնալով մատնաշած կենտրոնացման շրջանակի սահմաններում: «Փիլիկ աղբար երք ախոռեն ներս մտներ, ջորին իր գլուխը անոր կը դարձներ, ճիերը կը իրխնջեին ծիծաղի պես թեթե ու հնչուն, ոմանք իրենց վերջին երկու սրունքներու վրա կը փորձեին կանգնիլ ի նշան իրենց անսահման ուրախության»: Հատկանշական է, որ այս պարագային համաստեղը կիրառում է արտահայտչամիջոցների մինիմալ քանակ, սոսկ արձանագրումներ, որոնք պատումը դարձնում են խիստ շարժուն, լարված: Ոճական այս եղանակը՝ համատեքստի կոնկրետ բաղկացուցիչներում տոտալ արձանագրումը, Զոհրապի, Թղկատինցու նորավեպերում ևս առաջնային նշանակություն ունեին: Համաստեղն այս դեպքում ևս ստեղծագործաբար ժանրի խթանիչ է<sup>11</sup>:

Դասական շրջանի հայ նորավիպագրությունը բազմիցս դիմել է դիմանկար նորավեպին (Զոհրապ, Երուխան, Բաշալյան, Թղկատինցի, Սիպիլ): Համաստեղը ժանրի այդ տիպը ևս ըստ ամենայնի մշակել է տարբեր զուգակցումներով: Մասնավորապես, այսպես կոչված, օրագրություն նորավեպերում, ինչպես «Նապաստակի մը օրագիրը» ստեղծագործությունն է:

Նույն կերպ կարելի է առանց վարանելու բնութագրել նորավեպերի շեշտված երկխոսական տիպի համար: Արժե հիշատակել «Անձրև» ժողովածուից «Աղջի Եղմիկ» ստեղծագործությունը: Այստեղ հեղինակային «մեկնաբանական» շեշտը չնչին է, իսկ բևեռացումները կոնկրետ դետալների վրա նորավե-

11 Սասունին իրավացիորեն գտնում է, որ Համաստեղի լեզուն Զարդարյանի, Թղկատինցու և Զոհրապի լեզուների համադրությունն է: Տե՛ս Կ. Սասունի, «Պատմություն...», էջ 368:

պերի և՝ բովանդակային, և՝ թե ձեւական պլանների ընդհանուր համամասնությունը բավարարելու հետ մեկտեղ թողնում են տպավորական հսկայական ազգեցություն:

Էական է դիտել, որ հար և նման Զոհրապի նորավեպերի շարքերին («Խղճմտանքի ձայներ», «Կյանքը ինչպես որ է», «Լուռ ցավեր») Համաստեղի «Գյուղը» և «Անձրե» ժողովածուներում ամփոփված ստեղծագործությունները միասնական են, ամբողջական և իրենց ինդրադրությամբ ընդհանրություն են կազմում. ««Գյուղը», «Անձրե» և «Քաջ Նազար և 13 պատմվածքներ» երեք առանձին հատորներուն մեջ,— գրում է Մինաս Թեոլեոլյանը,— Համաստեղի գրականությունը միաձույլ ինքնաշխղություն (ընդգծումը իրենն է) մը և գյուղագրական ամբողջական նվաճում մըն է»<sup>12</sup>: Մատնանշված ինքնատիպությունը նախ՝ պայմանավորվում է նշված հանգամանքով: Անշուշտ, սա բնավ չի ստվերում յուրաքանչյուր առանձին նորավեպի ամբողջականության, ավարտունության փաստը:

---

12 Հուշամատյան, Եջ 23:

### III

ԶԱՆԱԶԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԵՐ  
ԵՎ  
ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԵՐ



## ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԲԱՆ

Ա.

**Գ**րականության պատմության համապատկերում կան գրագետներ, որոնք որքան էլ այս կամ այն շրջանի, հոսանքի, գեղարվեստական շարժման սահմաններում են ուսումնասիրվում, այնուհանդերձ անպարագիծ են, գրական ընթացքի հատկանշական ամփոփ դրսեռումների սահմաններում չպարփակվող, որովհետև նրանց գործը, գեղարվեստական, գիտական ժառանգությունը, լինելով շարժման, հոսանքի, մշակութաբանական որևէ կանոնակարգված-ամբողջականացված արտահայտության դրսեռում, ներառնում է նաև, այսպես կոչված, «արտաժամանակային» բնույթ և ուղղվածություն գրականության պատմության համար: Նման գեմքերից է բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, լեզվաբան, քննադատ, գրականության պատմաբան և տեսաբան, թատերագետ, պատմաբան, աղբյուրագետ, մանկավարժ, խմբագիր, հրապարակախոս, ազգային գործիչ Հրանտ Ասատուրը (1862-1928): Նրա գործունեությունը բնութագրող թվարկումների այս հարացույցն արգեն, առարկայարար, մատնանշում է գրագետի հանրագիտակ տեսակը, և տվյալ պարագային էական չէ, թե որ բնագավառն է արժեքայնությամբ գերակայելի հայ հոգեոր մշակույթի համարնագրում, սակայն փաստ է, որ ուժունականների գրական շարժման այս ներկայացուցչի գործը, ինքնին ներառնելով շարժման բյուրեղացումը, միաժամանակ չի պարփակվում այդ տիրույթներում, և պատահական չէ, որ Հակոբ Օշականը շրջանի հաշվեկշիռն ամփոփելիս պիտի արձանագրեր, թե «ամեննեն կարկառունը, ապահովաբար, ինչպես անզետեղելին Հրանտ Ասատուրն է»<sup>1</sup>: «Անզետեղելի»<sup>2</sup> բնութագիրը պայմանավորվում է նշված հանգամանքներով, առանձնահատկություններով:

Հայ գրականության, քննադատության պատմության ուսումնասիրությունների շրջանակում գիտական փաստարկման և հաստատագրման առարկա է դարձել Ասատուր՝ շարժման տեսաբան և քննադատ, ինչպես նաև Ասատուր՝ դիմանկարիչ, հուշագիր իրողությունները: Այսինքն՝ հետազոտական կիզակետում առկային է զուտ գրագետի հրապարակված ու տպագրված ժառանգությունը, և դուրս է մնացել անտիպը, ձեռագիր ժառանգությունը, թեև տարբեր առիթներով արձանագրվել է, որ այս պարագային առկա են համապատասխան արտակարգ հարուստ տեղեկություն և բազմաթիվ նյութեր<sup>3</sup>:

1 Հակոբ Օշական, Համապատկեր Արևմտահայ Գրականության, հԽ. Ե., Երուաղէմ, 1952, էջ 159: Այսուհետև՝ Համապատկեր:

2 Ընդգծումը իման է:

3 Հարկ է փոքր-ինչ վերապահել իրողությունը՝ անպալման նշելով Սրբութի Հայրապետյանին, որի Հրանտ Ասատուր մենագրության մեջ շրջանառության մեջ են դրվել գրագետի արխիվալին ժա-

Ասատուրի հասանելի<sup>4</sup> անտիպ գիտական ժառանգությունը ցայսօր ոչ միայն չի ուսումնասիրվել ամբողջությամբ, այլև չի քննվել իրեւ որևէց բնագավառի «ներփակ» արտահայտություն։ Տվյալ գեպքում այս գրության խնդիրն է Ասատուր գրականության տեսաբանի և պատմաբանի վերլուծությունը։ Անմիջապես արձանագրենք, որ գրականագիտությունը տարբեր առիթներով (հոդվածներում, մենագրություններում) անդրադարձել է հարցին, սակայն քննության առարկա չի դարձել նշված խնդիրներին առնչվող գրագետի անտիպ ժառանգությունը թե՛ ներփակ՝ իրեւ մասնավոր իրողություն, և թե՛ տարբեր համարնագրերում։

Երից Մանկանց դպրոցը և Մեզպուրյան Վարժարան հաճախելուց սկսած՝ Հրանտ Ասատուրի հումանիտար հետաքրքրությունները աներկրա էին, այնուհետև Ռոպերթ Գոլեճի և 1881 թվից Փարիզի իրավագիտական ուսումնարանում անցկացրած տարիները վերջնականապես գրականության նկատմամբ ունեցած հրապուրանքը փոխակերպեցին պրոֆեսիոնալ զբաղմունքի, դարձան մտավոր գործունեության անբաժան ուղեկից։ Եվ եթե տակավին 1874-ին հրատարակած Պատմություն Մալվինային թարգմանությունը, 1879-ին լույս ընծայած Պատանեկան Ներշնչումներ բանաստեղծությունների ժողովածուն, տարբեր պարբերականներում տպագրված Հոդվածներն ու քրոնիկները ստեղծագործական և գիտական աշխատանքի որոնումներ և փորձություններ էին, ապա 1892ին Գրիգոր Զոհրապի Ընկերակցությամբ սկսած ձեռնարկումը՝ գրական Մասիսի հրատարակությունը, գրագետի համար դարձավ գիտական, վերլուծական, հավաքչական գործունեության ելակետ։ Արաքս կեղծանունով հատուկենտ նորավեպ, փոքր արձակ գեղարվեստական ստեղծագործություն գրելուց և տպագրելուց հետո Ասատուրը վերջնականապես կենտրոնացավ իրեն ներհատուկ տարերքում՝ պատմություն, բանասիրություն և գրականության տեսություն։ Հայ մշակույթի չլուսաբանված դեպքերի և դեմքերի, բազմաթիվ նորահայտ փաստերի, աղբյուրների գիտական շրջանառության մեջ մտցնելը դարձավ նրա հետազոտական աշխատանքի գերինդիրը։ Պոլսում, Փարիզում, այլուր հանդիպում ու գրի էր առնում երեցներից և կրտսերներից անցյալի, ժամանակակից գրողների, մտավորականների, հայ հոգևոր կյանքին առնչվող իրողությունների մասին վկայություններ, վավերագրեր, հուշեր, մատենադարաններից, գրալարաններից, այս ու այն ձեռագրերից և մամուլի հավաքածուներից, պատրիարքական դիվանից, մշակութային, բարեգործական, հոգևոր զանազան հաստատությունների չափաբերականներից, արխիվներից մեկիկ-մեկի հանում, արտագրում, դասդասում, նկարագրում էր իր գիտական-հետազոտական հետաքրքրություններին առնչվող աղբյուրները, կատարում էր վիթխարի հավաքչական «սե» աշխատանք, որի կարևորության և էականության մասին հարկ չկա խոսել։ Նմանօրինակ խառնարանում են, ի թիվս այլ ուսումնասիրությունների, հղացվել և գոյավորվել նրա գրականության տեսությանը

ուանգությունից, իբրև լրացուցիչ սատարողական փաստեր՝ Ասատուր հրապարակախոսին, քննադատին և դիմանկարիչին բնութագրելիս։

<sup>4</sup> Նկատի ունենք Հայաստանի Հանրապետության Եղիշե Զարենցի անվան գրականության և արուեստի թանգարանում գտնվող Հրանտ Ասատուրի արխիվային ձեռագիր և անտիպ ֆոնդերը։

և պատմությանը նվիրված աշխատությունները։ Ասատուրի «անգետեղելիության» պարագան հատկանշվում էր գրադատական գործունեության հավասարակշռված ներդաշնակությամբ։ Պատմական կնճիռների, լեզվական խնդրի, անհայտ մատենագրի և տաղասացի որևէցե ստեղծագործության, կենսագրության լուսաբանությանը զուգահեռ՝ ընթացիկ գրական կյանքի քննություն, ժամանակակից «անտեսվածների և մոռացվածների» վերջանում, գեղարվեստական արժեքն անմիջապես նկատելու կարողություն, առկա գեղարվեստական ընթացիկ միտումները ճշգրիտ ընթերցելու, կողմնորոշվելու ունակություն։ Որոշարկելով իր քննադատական հանգանակը, որ լավագույնս արտահայտվել է «Դյուրագգածություն» հոդվածում<sup>5</sup>, մեկնաբանում և արմեորում էր ժամանակի գրական ընթացը, փաստարկում իր տեսակետերը գրական ուղղությունների, հոսանքների, գեղարվեստական մեթոդների մասին։ Հիշենք թեկուղ նրա հոդվածները Տ. Կամսարականի Վարժապետին Աղջիկը վեպի, Գյոթեի, Պ. Պոչյանի ստեղծագործությունների, եվրոպական գրական-մշակութային իրադարձությունների մասին<sup>6</sup>։

Հատկապես 1800-ականներից Ասատուրը տպագրում է այնպիսի հոդվածներ, որոնք բանասիրական նորույթներ էին, ցարդ գրականության պատմությանն անհայտ հրապարակումներ։ Ահավասիկ, Մասիս հանդեսում, 1898-ին, նա «Մեր կյանքեն» վերտառությամբ քրոնիկներից մեկում առաջին անգամ գրական հանրությանն է ծանոթացնում Գարեգին Պեշկովյուրյանին և տպագրում հանրահայտ «Սրինդ» քերթվածը։ «Մեր Խարբերդի թղթակցին ձեռքն անցեր են վերջերս անոր գրածներեն հատակոտորներ, որոնցմենք Սրինգը զրկած է մեզի հրատարակության համար։ Այդ ոտանավորին մեջ ճշմարիտ բանաստեղծության դրոշմը կրող հատվածներ գտանք. հեռու թոքախտավորը, իր վիճակին գիտակից, թախծագին սրտառուչ շեշտեր ունի, որոնք բռնազբոսիկ տողերու մեջ չեն գար ի հայտ, այլ հեղասահ, մեղմիկ, ձորակի մը խորը թաքուն դրդչող առվակի մը պես, որուն անցքին վրա խութեր ու ժայռեր չի կան»...<sup>7</sup>։

Ասատուրի հայ գրականության պատմության և առհասարակ գրականության տեսության խնդիրներին նվիրված ուսումնասիրությունների ծագումնաբանությունը պայմանավորված է երկու զուգահեռ իրողություններով. ա) քննադատի, գրադատի գործունեություն, ընթացիկ գրականության մասին տարեկան տեսություններով և ամփոփ, ընդհանրացնող գործյուններով հանդես դալու հակում, բ) մանկավարժական, դասախոսական աշխատանք։ Երկումն էլ հավասարապես այն ազդակներն էին, որոնք խթանեցին տեսական ուսումնա-

5 Մասնավորապես շեշտում է. «Ամէն ամեկեղծ դիտողություն իր օգուտը ունի, նույնիսկ երբ ցավ պատճառելու հանգամանք ունենա, Վիրահատ գործիքն պես որ կը տանջե բայց կը բուժե, ուստի քննադատությունները, որքան ալ սուր ու խիստ, պեսք չէ Վիրավորն զմեզ. բավական է որ ամեկեղության շեշտը և օգտակար ըլլալու ձգտումը գտնեն անոնց մեջ»։ Տես Մասիս, թիվ 9, Կ. Պոլիս, 23 Փետրվար 1898։

6 Տես «Վարժապետին Աղջիկը», Արևելք, թիվ 1500, Կ. Պոլիս, 31 Դեկտեմբեր 1888. «Արվեստի աշխարհն - Վերթեր և Ֆաստաֆ», Մասիս, թիվ 3978, Կ. Պոլիս, 13 Փետրվար 1893. «Հոբելյանի մը առթիվ» [անդրադարձել է արևմտահայ և արևելահայ վեպերի՝ Պողյանի 10-ամյա հոբելյանի առթիվ], Արևելք, թիվ 4009, Կ. Պոլիս, 8 Մայիս 1899։

7 «Մեր կյանքեն», Մասիս, թիվ 199-200, Կ. Պոլիս, 1892։

սիրություններ և հայ գրականության պատմություն դրելու հղացքներ:

Տակավին 1887-ին գրած «Արդի Հայ գրականությունն ի Թուրքիա»<sup>8</sup> հոդվածում, այնուհետև մի շարք տարեկան տեսություններում, մասնավորապես «Գրականությունը թրքահայոց մեջ 1898ին»<sup>9</sup> ակնարկում, նկատվում էր գրապատմական փաստերը կանոնակարգելու, դասդասելու, պարբերացնելու, գրական ընթացը կազմակերպող հիմնական բաղկացուցիչները վեր հանելու, դրանք փաստարկելու և հիմնավորելու, գրականության պատմության հատկանշական արտահայտությունների վրա կենտրոնանալու գրականության պատմաբանի Հայեցակետը: Նույնիսկ ուրվագրային, հպանցիկ, համառոտ մատենախոսականներում, գրախոսականներում Ասատուրի պարագային առաջնային էր ոչ այնքան օրվա գրական ինդիրներին հետամուտ քննադատը, որքան գեղարվեստական, գրական փաստերն ու իրողությունները պատմահայեցողությամբ հետազոտողը:

Հրանտ Ասատուրը 1898 թվի վերջերին գրականություն և աշխարհաբար է դասավանդում Կեղրոնական Վարժարանի բարձր կարգերում: Մանկավարժական աշխատանքն իր հերթին ստիպում է, որպեսզի գրագետը գրականության տեսության, մասնավորապես գրական սեռերի, ժանրերի, գեղարվեստական ոճի, տաղաչափության, հայ և համաշխարհային գրականության պատմության ինդիրների շուրջ կատարած իր ուսումնասիրությունները մեկտեղի, ամբողջականացնի: Դրանցից մի քանիսը սոսկ դասախոսական նոթեր էին, իսկ մի մասը՝ հիմնարար, ծավալուն գիտական ուսումնասիրություններ: Նրա արխիվում պահպանվում են «Ոճը», «Գրագիտության դասեր», «Նոթեր իտալական գրականության», «Նոթեր պատմության անգլիական գրականության»<sup>10</sup> դասախոսությունների ձեռագիր-ինքնագրերը: Հարկ է նշել, որ Գրականության և արուեստի թանգարանում պահպանվող Հրանտ Ասատուրի արխիվը ներառնում է հարուստ և բազմազան նյութեր՝ հուշեր, հրապարակախոսական էջեր, դիմանկարների ուրվագծեր, դիմաստվերներ, նամակներ<sup>11</sup> և այլն, սակայն գրագետի անտիպ, ձեռագիր ժառանգության մեջ մեծ արժեք և կարեռ նշանակություն ունեն «Գրական սեռեր» ընդհանուր վերնագրի տակ ամփոփված ուսումնասիրություններն ու «Աշխարհաբար մատենագրության պատմություն» աշխատությունը:

## Բ.

Գրականության տեսության հարցերից Ասատուրի հետազոտական կիզակետում, գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել գեղարվեստա-

8 Տե՛ս *Մասիս*, թիվ 3872, Կ. Պոլիս, 1887: Հարկ է նշել, որ այս հոդվածը արձագանքներ ունեցավ արևելահայ կյանքում: Թիֆլիսի *Մշակում* լուս տեսավ «Պահանջ գրականությունից» հոդվածը (տե՛ս *Մշակ*, թիվ 72, Թիֆլիս, 30 Հունիս 1887), որի առիթը Ասատուրի խնդրու առարկա գրությունն էր:

9 Տե՛ս *Արևելք*, թիվ 3900 և 3907, Կ. Պոլիս, 5 և 7 Հունվար 1899:

10 Տե՛ս ԳԱ.Թ, Թ. Ազատյանի փոնդ, բաժին 1, թիվ 9, 13, 14, 15, 16 հաջորդաբար:

11 Տե՛ս նույն, թիվ 137, 138, 139 հաջորդաբար:

կան ոճի, գրական սեռերի և տաղաչափության խնդիրները: 1880-1900-ական թվականների հայ գրականագիտական մտքի խորքին թերևս գժվար է գտնել մի այլ գիտնականի, որ այսօրինակ ընդգրկուն ուսումնասիրական սահմաններ ունենար: Համապատասխան ինքնագիր ձեռագրերի առարկայական վերլուծությունը կրկին փաստում է Ասատուրի երկասիրությունների մանրազնին, ամբողջական, առավելագույն նյութերի ընդգրկման, շրջանառության մեջ դնելու ընույթը:

Այսօր գժվար է ճշգրիտ նշել Ասատուրի գրականագիտական աշխատասիրությունների հղացման և գրման տարեթվերը: Դժբախտաբար, գրագետը ձեռագրերում չի նշել գրությունների ժամանակը առհասարակ, նման սովորություն չի ունեցել: Զուգահեռելով նրա կենսագրական փաստերին՝ կարող ենք ուրվագծել մոտավոր ժամանակաշրջանը: Ամենայն հավանականությամբ դրանք հղացվել են ԺԹ. դարի 90-ական թվականների սկզբին, իսկ գրվել կեսերին և ի. դարի սկզբին:

Հրանտ Ասատուրի գրականության տեսությանը նվիրված ուսումնասիրություններն ու աշխատությունները ցարդ անձանոթ են մեր գրականագիտությանը: Անշուշտ, այս պարագային էական նշանակություն է ունեցել դրանց անտիպ լինելու հանգամանքը, որը, սակայն, միաժամանակ մատնանշում է մեղանում գիտական ընթերցման արատավոր կաղապարներից մեկը: Բանն այն է, որ հայ գրականության պատմության ուսումնասիրությունն այսօր, ավելի քան երեք, անհրաժեշտ է դիտել, հետազոտել այդ պատմությունը կազմակերպող, պայմանավորող բոլոր տարրերով և բաղկացուցիչներով, որոնցից առաջնայինը գրողների, գրականագետների անտիպ ժառանգությունն է, որովհետև միմիայն դրա հանգամանալի վերլուծությամբ ու ընթերցմամբ է հնարավոր գրականության պատմության ամբողջական իմացությունը:

Հրանտ Ասատուրի գրականագիտական, տեսական աշխատությունները ամփոփված են «Գրագիտություն»: Գրական սեռեր» ընդհանուր վերտառությամբ երեք ձեռագիր ուսումնասիրություններում և պահպանվում են ԳԱԹ-ի Թորոս Ազատյանի ֆոնդի առաջին բաժնում, դրանցից առաջինն ունի «Գրագիտություն» և բանաստեղծություն – Գրական սեռեր»<sup>12</sup> վերնագիրը, բաղկացած է երկու տետրից, վերջում պակասավոր է և ընդօրինակություն. Երկրորդը՝ «Գրագիտություն – Գրական սեռեր»<sup>13</sup>, սևագրություն է, նույնպես պակասավոր է. չկան 11-14-րդ և 91-րդ հջերը, և, վերջապես, երրորդ ձեռագիր մաքրագիրը՝ «Բանաստեղծական սեռեր»<sup>14</sup>, ուր ամփոփված է նաև «Թատերական սեռ»<sup>15</sup> ուսումնասիրությունը:

Այս աշխատանքներին հպանցիկ անդրադարձել է Սրբուհի Հայրապետյանը գրագետին նվիրված իր աշխատության մեջ<sup>16</sup>: Առաջմ չանդրադառնալով

12 Տե՛ս Նույն, թիվ 9, 117 էջ:

13 Նույն, թիվ 10, 100 թերթ:

14 Նույն, թիվ 11, 93 էջ:

15 Նույն, էջ 53-93:

16 Տե՛ս Ս.Դ. Հայրապետյան, Հրանտ Ասատուր – կլանքը և գործը, Լոս Անձելը, 1979, 238 էջ: Այսուհետև՝ Հայրապետյան:

գրականագետի մեկնաբանություններին և գնահատականներին՝ նշենք, որ Հայրապետյանը հաճախ ընթերցողին թյուրիմացության մեջ է գցել «Գրական սեռեր» ընդհանուր վերտառությամբ աշխատանքները միմյանցից չզատելով, մեկից բերված մեջբերումները վերագրելով մեկ ուրիշին<sup>17</sup>:

Հրանտ Ասատուրի տեսական քննությունների ելակետը գրական սեռերի հատկանիշների, սրանց ժամանակին համակարգերի մեկնաբանությունն ու գրականության պատմական հետագծում զարգացման, բարեշրջության և դրսեռումների ձևերին, եղանակներին հետեւելն ու վերլուծելն է: Եթե հուշագրության մեջ նա զուգորդում է գրականագիտական և քննադատական կուլտուրապատմական և տպագորապաշտական մեթոդների սկզբունքները, ապա տեսական և պատմական ուսումնասիրություններում բացառապես առաջնորդվում է գասական բանասիրության և կուլտուրապատմական մեթոդի սկզբունքներով: Այնպես որ այն տեսակետը, թե «Գրականության տեսաբանը ընդհանրապես գրական ժանրերի բաժանումն ու ուսումնասիրությունը չի հենում գրական դպրոցների վրա, թեև մերթ ընդ մերթ անդրադառնում է իրականության գեղարվեստական ընկալման գլխավոր սկզբունքներին: Հեղինակը տվյալ ժանրի բնորոշումը տալուց հետո, քննելով ժանրի կոնկրետ բովանդակության և դրսեռման ձևերը, ներկայացնում է դրա ծագումնաբանական արմատները, հետևում ժանրի զարգացման եվրոպական ուղղուն»<sup>18</sup>, ենթակայական և կամայական է ու չի պատճառաբանվում Ասատուրի դավանած գրականագիտական դպրոցի սկզբունքներով: Բանն այն է, որ տվյալ պարագային, նախ գրագետի քննության առարկան է եղել ինքնին գրական ժանրը, նրա ներփակ արտահայտությունը, ոչ թե ռոմանտիկ, սանտիմենտալ, իրապաշտ-բնապաշտական վեպը, ոչ թե ռոմանտիկ, խորհրդապաշտ գեղոնը, այլ առհասարակ վեպի և գեղոնի կառուցվածքի, ժանրը կազմակերպող հատկանիշների հարացույցի ուսումնասիրությունը, ապա՝ ժանրային կազմաբանությունը ըստ գրական դպրոցների իրողությունը յուրաքանչյուր գեպքի համար իբրև ժանրի բարեշրջության պատմության փաստարկումներ ձուլվել են ուսումնասիրության կենտրոններին:

Տեսական այս աշխատություններում գրագետը խարսխվում է ինչպես հայ, այնպես էլ եվրոպական գրականության ստեղծագործություններին, շրջանառության մեջ մտցնելով ոչ միայն այս կամ այն խնդիրը լուսաբանելիս հանրահայտ գործերը, այլև, այսպես կոչված, երկրորդականներն ու մոռացվածները, Գրական Սեռեր ընդհանուր խորագրի ներքո մեկտեղված երեք աշխատանքներից միայն «Բանաստեղծական սեռն» է հեղինակը վերջնականապես սրբագրել (միայն մի փոքրիկ կրծատում է արել 28-29-րդ էջերում), խմբագրել և մաքրագ-

17 Այսպես՝ իր մենագրության 100-րդ էջում ան մի մեջբերում է անուն Ասատուրի խնդրո առարկա ուսումնասիրություններից, որտեղ բնութագրվում է իրապաշտ վեպը՝ իրև աղբյուր նշելով թիվ 11 ձեռագիր 85-րդ էջը: Իրականում այդտեղ գրագետն անդրադարձել է Եվրիականին: Հայրապետյանի մեջբերումը թիվ 10 ձեռագիր աշխատությունից է: Նույն է պարագան նաև գրքի 122-րդ էջում գետեղված առաջին և երկրորդ հղումներին, որոնք կրկին վեաի մասին են, իսկ իրականուն Ասատուրը մեկնաբանում է ողբերգությունը: Տե՛ս Հայրապետյան, էջ 122, ծանոթ. թիվ 1 և 2:

18 Նույն, էջ 122:

**ըել:** Այսինքն՝ այս բաժինը լիովին պատրաստ է եղել հրատարակության: Առհասարակ համագրելով նրա գրականության տեսությանը առնչվող անտիպ ժառանգությունից մեզ հասած այս երեք ձեռագրերը՝ կարող ենք միանշանակ արձանագրել, որ նա նպատակ է ունեցել այդ բոլորը մեկտեղել, անհրաժեշտ լրացումներ, ճշգրտումներ և խմբագրումներ կատարելուց հետո լույս ընծայել մի ծավալուն և հիմնարար մենագրություն գրականության տեսության խնդիրների, ի մասնավորի ժանրերի տեսության և պատմության մասին: Բայց քանի որ մյուս երկուսը չի հասցը և խմբագրել, ճշտել և մաքրագրել, գիրքը չի հրատարակել: Նկատի ունենալով այն հանդամանքը, որ սեւագիր ուսումնասիրություններն, անկախ պարունակած գիտահետազոտական տեղեկատվությունից, այնուհանդերձ հեղինակի ստեղծագործական խոհանոցի, լաբորատորիայի արտահայտություններից են, իսկ մաքրագիրը հեղինակի կողմից վերջնականապես պատրաստ, գիտակցված իրողություն, տեսական աշխատությունների յուրօրինակ այցեքարտ, արդ՝ մանրամասնենք «Բանաստեղծական սեռ» գրությունը:

Աշխատությունն ըստ էության բաղկացած է երեք մասերից: Մուտքում, որ, փաստորեն, համառոտ ներածական է, սահմանվում է բանաստեղծությունը: Ելակետ ընդունելով Քվինտոս Հորաթիուս Փլակուսի «Պոեզիայի գիտության» բանաստեղծության քրեստոմատիկ սահմանումը՝ «Բանաստեղծությունը մարդկային կյանքի ոչ թե ճգրիտ պատմությունը, այլ անոր նմանությունը և նկարագրությունն է, ըսած է Որաթիոս»<sup>19</sup>, առաջադրում է բանաստեղծական տարերքի անհրաժեշտ և պարտադիր պայմանները. «Մարդկային մտքի արտադրությանց էական պայմաններն զատ (հանձար, երևակայություն, տաղանդ, սրամություն, ճաշակ) բանաստեղծության անհրաժեշտ պայմաններն են»<sup>20</sup>. –

«1. – ներշնչում, 2. – խանդակառություն, 3. – զգայնություն: Ասոնց ամբողջությունը կը կազմե թանաստեղծական հանճարը»: (Տե՛ս ԳԱ, 1): Այնուհետև անդրադառնում է լիրիկայի բնույթին. «Բանաստեղծությունը երեք գլխավոր նկարագիր ունի.

«Ա. – կը ներկայացնե իրական աշխարհը ազատելով զայն գիպվածական և անցավոր թերություններե, նկատելով ոչ միայն ինչ որ է, այլ ինչ որ կրնար ըլլալ:

19 Հրանտ Ասատոր, «Բանաստեղծական սեռ», ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին 1, թիվ 11, էջ 1: Հետապուտ աշխատությունից բերված բոլոր հոդվածներն այստեղից են, եթեստին կից փակագծերում ԳԱ համառոտագրությամբ, համապատասխան էշով:

Ի դեպք Ա. Հայրապետյանն իր գրքում այս ուստիմնակիրությունից երկու մեջքերում է արեւ և դժբախտար երկուսն եւ աղապաղված, ոչ ճշգրիտ: Նաև՝ այս անգամ եւ սխալ եւ նշել հոդվածի Եշերը. 36-ի փոխարեն պետք է Եշեր 36-37, ապա բերված հատվածում «բարքերու» բարի փոխարեն կարդացել է «խորքերու» (Տասոյի Ազատագրված Երուսաղեմի քննությունն է), բաց է թողել «մոգության հրաշքները» դարձվածից հետո մի բառակապակցություն: Տե՛ս Հայրապետյանի աշխատության 123-րդ էշի առաջին մեջքերումը: Նոյնը նաև երկրորդ հոդվածի ժամանակ (Բագրատունիի Հայկ Դյուցազնի անդրադարձ) «ուր կան» արտահպատությունից հետո բաց է թողել «նմանաձայնություններ» բառը: Տե՛ս նոյնը, երկրորդ մեջքերում:

20 Ասատորի ոճի առանձնահատկություններն ընթեցողին առարկայական ներկայացնելու պատճառով չենք փոփոխել նաև ձեռագրի կետադրության յուրահատկություններն ու գարտուղությունները:

«Բ.- կը նյութականացնե բարոյական աշխարհը տեսանելի ձևեր տալով մտավոր էակներու:

«Գ.- կը ներկայացնե ֆիզիքական աշխարհը որսալով բնության մտածում, զգացում և կյանք» (Տե՛ս ԳԱ, 1-2): Արձանագրելով, որ լիրիկան ենթադրում է «երաժշտական ներդաշնակ գրեթե միշտ չափական լեզու մը» (Տե՛ս ԳԱ, 2), բանաստեղծությունը ստորաբաժանում է հինգ տեսակների, իր եզրով՝ սեռերի. 1) քնարերգական, 2) դյուցազներգական, 3) ողբերգական, 4) վարդապետական և իմաստափրական, 5) հովկերգական: Հստ էության՝ այսօրինակ թեմատիկ ստորաբաժանումից հետո հանգամանորեն լուսաբանում է յուրաքանչյուր բաժնի ժանրային համակարգը, կառուցվածքի, արգեստի խնդիրները՝ միշտ հայ և համաշխարհային գրականության պատմության փորձի խորքին: Տվյալ պարագային գործում է հետազոտական հետեյալ մոտեցումը. Աստուրը նախ սահմանում և բնութագրում է «սեռերից» մեկը, ապա մեկնաբանում ժանրային համակարգը և հետո մանրամասնում համապատասխան ամենանշանակալի ստեղծագործությունները:

Դիցուք մի հատված «Քնարական սեռ» բաժնից. «Քնարական են բոլոր այն ստանավորները որոնք իրենց չափականությամբը և կազմվածքովը երգվելու կը հարմարին» (Տե՛ս ԳԱ, 2-3): «Քնարական քերթվածներեն են. Օրհներգը, Գեղոնը, Եղերեգը, Երգը ևն:

«1.- Օրհներգ.- Օրհներգը եկեղեցվո մեջ գրված սրբազն քերթվածներեն են որոնք զանազան ձևերով կը ներկայանան մեր հին գրականության մեջ և կը կոչվին Յարական, Գանձ, Մեղենի, Կցորդ և այլն» (Տե՛ս ԳԱ, 3):

«2.- Գեղոն.- Գեղոնը ընդհանրապես հավասար տուներով տաղ մըն է որ բարձր ու խանդավառ զգացումներ և վսեմ մտածումներ կը պարունակե, ինչպես, Ուռսահայ Նալպանայանի «Ազատ Աստված»ը (Տե՛ս ԳԱ, 4) և այսպես նաև եղերերգի, օրորի, «Հայրենասիրական տաղեր» հատվածում ամփոփված ստեղծագործությունների մասին:

Հար և նման սրան՝ այս բաժնում անդրադառնում է նաև «Դյուցազնական տաղեր»-ին, ուր ամփոփված ստեղծագործությունները նախ՝ թեմատիկ ստորաբաժանման է ենթարկում, այնուհետև՝ ըստ ժանրային համակարգի («Սիրո», «Ուրախության» տաղեր, ությակ, ոռնդո):

Աշխատության երկրորդ ամենածավալուն բաժինը «Դյուցազներգական սեռն» է. «Դյուցազներգությունը հրաշալի իրողություններով խառնված դյուցազնական արկածներու ոտանավոր պատմվածքն է:

«Դյուցազներգության մեջ պետք է նկատի առնել գործողությունը, անձերը, ձևը և ոճը» (Տե՛ս ԳԱ, 11): Այստեղ Աստուրի քննության հիմնական կենտրոնը էպոսն ու պոեմի ժանրն է: Անդրադարձել է Մահաբհարատա, Խլիական, Էնեական, Աստվածային կատակերգություն, Ազատագրված Երուսաղեմը, Թրախտ կորուպալ և վերջապես Հայկ Դյուցազն ստեղծագործություններին: Ամենայն մանրամասնությամբ վերաշարադրելով դրանց գիպաշարերը՝ անդրադառնում է կառուցվածքի, հերոսների և գործողությունների համակարգերի խնդիրներին (զբաղեցնում է ձեռագիր ինքնագրի 11-53-րդ էջերը):

Աշխատության վերջին մասը նվիրված է գրամատուրդիային՝ «Թատերական սեոփն», որ դժբախտաբար անավարտ է:

Այս պարագային ևս առաջնորդվել է նույն սկզբունքով. «Թատերական սեոփն կը ներկայացնե թատերաբեմին վրա իրական կյանքը, պատմական կամ երևակայական դեպք մը պատկերագրելով» (ԳԱ, 53), դասդասել է երեք խմբի. 1) ողբերգություն, 2) կատակերգություն, 3) տրամ, սակայն վերջին երկուսը չեն գրել: Այնուհանդերձ խնդրո առարկա աշխատությունը հայ գրականագիտական, տեսական մտքի կարեռագույն ձեռքբերումներից է, Ասատուրի անտիպ ժառանգության նշանակալի դրսեռումներից մեկը:

## Գ.

Ասատուրի կենսագրության համապատկերում ԺԹ. դարի 90-ական թվականները հատկանշվում են գրական-գրականագիտական բեղուն գործունեությամբ: Այդ տասնամյակին էր, որ գրեց մի շարք գեղարվեստական քրոնիկոններ, նորագեղիք, իսկ արդեն 1892-ից վերջնականապես անցավ գրականության պատմության ուսումնասիրության: Այդ թվականին հրատարակված երկու հոդված հատկապես մատնանշում են գրագետի գիտական հետաքրքրությունների ուղղվածությունը: «Ուսումնասիրության պակասը մեր նոր գրականության մեջ»<sup>21</sup> գրությունը թեև անդրագառնում է ընթացիկ գրականության խնդիրներին, սակայն անթաքույց մատնանշում է հեղինակի՝ հայ գրականության պատմությունը ամբողջությամբ ուսումնասիրելու, ընթերցելու տեսանկյունը, առհասարակ այդ խնդրի հրատապությունը: Իսկ «Մեղուն Պարոնյանի խմբագրության օրով»<sup>22</sup> հոդվածն արդեն մտահոգությունների գործնականությունը վկայող առաջին անդրագարձներից էր: Հենց այս տարիներին էլ հղացավ հայ գրականության պատմություն գրելու գաղափարը: Նամանավանդ գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ աշխարհաբարի տեսություն և պատմություն<sup>23</sup>, բանսասիրություն և պատմագրություն, յուրովսանն սատարում էին խնդրո առարկա աշխատանքի իրագործմանը անհրաժեշտ փաստագրական հավաքչություն, նյութերի դասդասում և ընտրություն կատարելիս: Այս գործընթացն իր հերթին նպաստում էր հակայական նյութի ընդհանրացմանը, աշխատության բյուրեղացմանն առհասարակ, որի արդյունքը եղավ Աշխարհաբար Մատնագրության Պատմություն վերնագրով հայ գրականության պատմության ուսումնասիրությունը:

21 Տե՛ս Արևելյան մամուլ, Զմյուռնիա, 1892, էջ 564-568:

22 Տե՛ս Մասիս, Կ. Պոլիս 1892, էջ 275-279: Ի դեպք այս հոդվածը Պարոնյանին նվիրված մի շարք գրությունների հետ հետազայում դարձավ Դիմաստուերների համապատասխան դիմանկարի հենքը:

23 Այս ասպարեզում Ասատուրի գործի կարևորությունը արձանագրում էին նաև ժամանակակիցները. «Հրանդ Ասատուր շատ երախտիք ունի մեր նոր աշխարհաբարին վրա, – գրում էր Արփիար Արփիարյանը, – որ վերջին քսան տարվան ժամանակամիջոցին կամաց կամաց բարեշրջվեցավ ու իր առաջնադաշտությունը կը շարունակե: Հրանդ Ասատուր այն սակավաթիվ գրողներն է, որոնք կը տքնին – և կը հաջողին – ճշգրիտ քերականությամբ աշխարհաբար գրելու»: Տե՛ս Ա. Արփիարյան, «Գրական Հուշեր», Երևան, 1987, էջ 483:

Ե՞րբ է գրել այս պատմությունը Հրանտ Ասատուրը: Արդեն ասել ենք, որ նա սովորություն չի ունեցել իր ձեռագրերում նշել գրության թվականը, սակայն, բարեբախտաբար, այս պարագային ունենք հավաստի վավերագիր, ապացույց ձեռագիր ինքնագրում: Առհասարակ այս անտիպ աշխատությունը գրականագիտական շրջանառության մեջ է մտցրել Սրբուհի Հայրապետյանը Ասատուրին նվիրված մենագրության մեջ և ի թիվս որոշ հարցերի՝ անդրադարձել է նաև գրության ժամանակին. «Դիմանկարիչ-կենսագիրը 1890-ական թվականների սկզբներին գրել է «Աշխարհաբար մատենագրության պատմություն» ընդարձակ աշխատությունը, որը նա հետագայում հրաժարվեց հրատարակելու մտքից: Բանն այն է, որ այս գործը թեև վերնագրված է որպես աշխարհաբար մատենագրության պատմություն, բայց ի վերջո չի յուրացնում համանման աշխատություններին ներհատուկ բովանդակություն: Սա կենսագրականների շարք է, որը ձգվում է հին ժամանակներից մինչև մեր օրերը»<sup>24</sup>: Ուրեմն Հայրապետյանը միանշանակ գրության ժամանակ է համարում ժԹ. դարի 80-ական թվականները, այնինչ ձեռագիր ինքնագրի քննությունը և ամբողջական ընթերցումը ցույց է տալիս բոլորովին այլ բան: Աշխարհաբար Մատենագրության Պատմությունը գրվել է 1901 թվականից հետո: Անդրադառնալով Սարգիս Գպիր Հովհաննիսյանին՝ Ասատուրը գրում է. «Այս գրողը որուն գոյությունը գրեթե անծանոթ մնացած էր մինչև 1901՝<sup>25</sup> ծնած է 1750ին ատենները և մեռած 1810են վերջը Կ.Պոլիս»<sup>26</sup>: Հետեաբար Ասատուրը պատմությունը գրել է 1901 թվականից հետո: Հիմա՝ ինչ վերաբերում է հետագայում հրատարակելու մտքից հրաժարվելուն, նախ այսօրինակ փաստ չկա, այնպես որ չենք կարող վստահությամբ ասել, որ Ասատուրը տպագրվելու մտքից լիովին հրաժարվել էր<sup>27</sup>: Զպետք է մոռանալ, որ սա սեագիր, նախնական տարբերակ էր: Վերջապես՝ Հայրապետյանը կատեգորիկ է, երբ գրում է, որ Ասատուրի այս պատմությունը չի յուրացնում համանուն աշխատանքների բովանդակությունը: Անտեսելով, որ այդ կենսագրականների երկար շարանը փաստորեն աշխարհաբար գրականության պատմական ընթացքի քննությունն էր, որովհետև յուրաքանչյուր դեպքում կենսագրականներից զատ մեկնարանված, գնահատված են ստեղծագործությունները:

Աշխատանքի իննդրադրությունը պայմանագորել է շարադրանքի կերպը, աշխարհաբարի զարգացման խորքին՝ ուսումնասիրել մեր գրականության պատմությունը:

Ինչպես Ասատուրի մյուս ձեռագրերը, այնպես էլ Աշխարհաբար Մատենագ-

24 Հայրապետյան, էջ 216-217:

25 Ընդգծումն իմն է:

26 Հրանտ Ասատուր, Աշխարհաբար Մատենագրության Պատմություն, ԳԱ.Թ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին 1, թիվ 17, էջ 69: Հետայսու աշխատությունից բերված բոլոր նյումները այստեղից են՝ փակագծերում Ա.ՄՊ համառոտագրությամբ և համապատասխան էջով:

27 1904 թվականին Ասատուրը տպագրեց «Մողված բանատեղծ մը՝ Պետրոս Եպիսկոպոս Ղափանցի» խորագրված հոդվածը: Տե՛ս Արևելյան մամոլ, Զմյուռնիա, 1904, էջ 16-20: Այս հոդվածը Պատմության մի շարք հատվածների և Ղափանցուն նվիրված բաժնի խմբագրված, խտացրած տարբերակն է ըստ Էռլթյան:

րության Պատմությունը<sup>28</sup> պահպանվում է ԳԱԹ-ի Թորոս Ազատյանի ֆոնդերում: Այս ձեռագիրը ինքնագիրը գրագետի արխիվի ամենածավալուն գրությունն է: Ձեռագիրը սևագրություն է բազում հավելումներով, կրճատումներով, զանազան շտկումներով: Գրված է սև մելանով,  $30 \times 21$  սմ չափսերով չտողատած թղթի վրա: Աշխատությունը 337 էջ է. ձեռագիրը մեծավ մասամբ վերծանելի է, թեև կան էջեր, որտեղ հեղինակը բազմաթիվ ջնջումներ է կատարել, խիստ մանր տառերով է շարադրված և վերծանության տեսակետից ստեղծվել են առարկայական դժվարություններ:

Պատմությունը բաղկացած է չորս գլուխներից: Դժբախտաբար ձեռագրից պակասում են առաջին և երկրորդ էջերը: Առաջին գլուխը մինչև ութերորդ էջն է և չնայած հայտնի չէ գլխի վերնագիրը, այնուհանդերձ, դատելով պահպանված վեցուկես էջերից, կարելի է ասել, որ առաջին գլուխը եղել է մենագրության ներածությունը, որտեղ Ասատուրն անդրադարձել է աշխարհաբար մատենագրության տարրերին հայ հին և վաղ միջնադարյան գրականության մեջ: Երկրորդ գլուխը՝ «Նախնյաց ռամկորենը» (էջ 8-58), բաղկացած է երկու բաժնից՝ «Արձակ» և «Ռոտանավոր», և ներառնում երեսունվեց հեղինակ: Այստեղ «Ավետիք Եվդոկիացի» բաժինը կիսատ է թողել, չի ավարտել: Երրորդ գլուխը բնույթով միջանկյալ է, ծավալով փոքր, վերնագրված է «Մեր նոր լեզվին գավառբարբառները» (էջ 58-65): Պատմության վերջին գլուխը կոչվում է «Արևմտյան հայոց աշխարհիկ գրականությունը» (էջ 64-337), ներառնում է ութսունինը հեղինակ և թեմա: Ունի «Կ. Պոլսո հայ գրագետները 1846էն ետքը» ենթավերնագիրը, որն իր հերթին ունեցել է հետեւյալ տարրերակները. ա) «Թուրքիո հայ գրագետները», թ) «Կ. Պոլսո հայ գրագետները 1846էն մինչև 1890»: Սակայն զրանք ջնջել է: Այս գլխում «Ղեռնդ Ալիշան» բաժինը գրված չէ, նշել է գրողի անունը, սակայն չի շարադրել: Հավանաբար ցանկացել է ինչինչ լրացումներ անել և հետո գրել, սակայն անհայտ պատճառներով այլևս չի անդրադարձել: Գրված չէ նաև «Կարապետ Վարդապետ Շահնազարյան» բաժինը. ձեռագրից պակասում են նաև 225-240-րդ էջերը. այդ պատճառով կիսատ է մնացել «Նահապետ Ռուսինյան» բաժինը, և, ցավոք, հայտնի չէ, թե ի՞նչ թեմաներ և հեղինակներ են զետեղված եղել այդտեղ:

Աշխարհաբար Մատենագրության Պատմությունը Ասատուրի գրական նոր հայերենի համապարփակ ուսումնասիրությունների հատկանշական ամբողջացում էր լայն առումով: Բանն այն է, որ երկար տարիներ գրական աշխարհաբարի զարգացման, ուսումնասիրության հետևողական աշխատանքը բյուրեղանում էր սույն Պատմությամ՝ այս անգամ հետեւյով աշխարհաբարի բարեշրջությանը հայ մատենագրության պատմական համարնագրում: Պատմության յուրօրինակ խտացում էր նրա 1908-ին հրատարակած «Աշխարհաբարը Ժ. դարեն առաջ»<sup>29</sup> ուսումնասիրությունը, որի բնագրագիտական մանրազնին վերլուծությունը միանշանակ նման համոզման է բերում: Զոհրապի բնութագր-

28 Աշխարհաբար Մատենագրության Պատմության բովանդակության մանրամասն Ակարագրությունը տե՛ս սույն ուսումնասիրության առաջին հավելվածում:

29 Տե՛ս Թեոդիկ, Ամենուն Տարեցուցը, Կ. Պոլսո, 1908, էջ 51-63:

մամբ «Մեր աշխարհաբարին դայակը ու ստնտուն»<sup>30</sup>, որ հայոց լեզվի մասին բազմաթիվ հոդվածների և դասագրքերի հեղինակ էր, հայ գրականության պատմության մեջ հետևում է աշխարհաբարի յուրաքանչյուր գրսկորման՝ անկախ դրա գեղարվեստական արժեքից և այնուհետև մատնանշում գրականության պատմությունը պայմանավորող էամասերը: Աշխարհաբար Մատենագրության Պատմության մեջ, հար և նման լեզվի մասին գրած հոդվածների և վերլուծությունների, լեզուն և գրականությունը միացված են, այստեղ սակայն լեզուն գրականության պատմական հետագիծն ընթերցելու և մեկնաբանելու հետազոտական «միջոցն» է:

Պատմությունը բնույթով և ուղղվածությամբ մատենագիտական, աղբյուրագիտական և տեղեկատվական է: Ասատուր հանրագիտակի հակումները այստեղ ևս հստակորեն արտահայտվել են: Շրջանառության մեջ է մտցրել հազարավոր նոր փաստեր, ճշգրտել տարեթվեր, առհասարակ ներկայացրել այս կամ այն հեղինակին, մշակութային-հոգեսոր իրադարձությունները շրջապատող ողջ կենսոլորտը<sup>31</sup>, նկարագրել բազմաթիվ արխիվներ և ձեռագրեր:

Հակոբ Օշականը, բնութագրելով Հրանտ Ասատուրին, գրում է. «...որքան դժվար է ժումկալ ու խոր ըլլալ. շատ տեսնել՝ բայց քիչ, խիտ տողերու մեջ արձանակերպ սեեռել մեր մտածումները, մեր զգացումները»<sup>32</sup>:

Հստ էության՝ սա Աշխարհաբար Մատենագրության Պատմության պերճախոս գնահատականն է, ուսումնասիրության մեթոդաբանության ամփոփ սահմանումը: Հիրավի, գրագետը առավելագույն սեղմ, հակիրճ շարադրանքով, տեղտեղ վերլուծական լակոնիզմներով ընդհանրացրել է հսկայական նյութ և աղբյուրներ: Աշխարհաբարի պատմագործառական, մշակութաբանական խորքին արժեկորվել են հայ գրականության գրեթե բոլոր գրսկորումները մինչև ԺԹ. դարի 70-80-ական թվականները, գրականության պատմության յուրաքանչյուր ժամանակաշրջան անունների և երևույթների արտաքուստ «ներփակ» վերլուծություններով գոյափորել են հետազոտական գումարելի համադրություն կուլտուր-պատմական, տպագորապաշտական, հոգեբանական և դասական բանասիրության դպրոցների սկզբունքների փոխներթափանցված կիրառականությամբ: Այս աշխատությունում, ինչպես Ասատուրի մնացյալ գիտական գրություններում, հստակ առկայվել է հետազոտական նորություններով հանդես գալու անվերապահ սկզբունքը: Ասատուրի շնորհիվ են գրականության պատմության ուսումնասիրության ծիր ներթափանցել Ասար Սեբաստացին, Հակոբ Պատրիարք Նալյանը, Խասպետ Երեցը, Գալուստ Կայծակ Ամասիացին, Հովսեփ Թավուքճյանը, Հակոբ Կրծիկյանը, Գրիգոր Աղաթոնը, Մատթեոս Չուխանցյանը, Հարություն Ավաճյանը, Հովսեփ Վարդանյանը (նա էր, որ պարզեց և փաստարկեց Ագաաի վեպի հեղինակային պատկանելիությունը),

30 Գ. Զոհրապ, «Հրանտ Ասատուր», Երկեր, հտ. I, Երևան, 1962, էջ 148:

31 Մատենանշած բնութագրականը ներհատուկ է աշխատության մեջ ընդգրկված տառացիորեն բոլոր հեղինակներին և թեմաներին: Ընթերցողին համեմատաբար ամբողջական պատկերացում տպու համար սովոր գորությանը կցել ենք Պատմության «Անդրեաս Փափազյան» և «Ղուկաս Պալտագարյան և Իօմիրի Արշալույս» հատվածները: Տե՛ս Երկրորդ և երրորդ հավելվածները:

32 Համապատկեր, Ե., էջ 460:

Ֆիզիկա Պողոս Պատվելին, Արմենակ Հայկունին, Հովսեփ Մալեզյանը և այլք: Մատնանշված առուների հպանցիկ թվարկումն արդեն ինքնին չափանշում է խնդրո առարկա ուսումնասիրության կարևորությունը:

Աշխարհաբար Մատենագրության Պատմություն անտիպ մենագրությունն ունի մեկ հետաքրքրական առանձնահատկություն և՝ անմիջականորեն կապված Ասատուրի ամենաներկայանալի գործի՝ Դիմաստվերների թե՛ ծագումնաբանության, թե՛ ստեղծագործական պատմության խնդիրներին: Գրականության պատմությունը վաղուց անտի փաստել և վավերացրել է այն տեսակետը, որ Հրանտ Ասատուրը և՛ Դիմաստվերներով, և՛ գրքից դուրս մնացած դիմանկարներով, դիմանկարների էսքիզներով կորստից և մոռացումից փրկել ու պահպանել է ոչ միայն գրապատմական անգնահատելի նշանակություն ունեցող հավաստի վկայություններ ու փաստեր, այլև արտահայտել է տեսակետեր, որոնք ցայսօր չեն կորցրել իրենց հրատապությունը: Հարկ է նշել, որ ժամանակակից առաջնային մեծամասնության յուրատեսակ փորձասենյակը եղել է խնդրո առարկա ձեռագիր ինքնագիրը: Բացի Դիմաստվերների «Հակոբ Պարոնյան», «Եղիա Տեմիրճիպաշյան», «Գրիգոր Զոհրապ», «Տիգրան Կամսարական» և «Զապել Ասատուր» գլուխներից՝ մնացած հեղինակները զետեղված են Պատմության մեջ և խիստ հետաքրքրական է դրանց համեմատությունը<sup>33</sup>: Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ Դիմաստվերներ հուշագրության ժողովածուի «Ներածությունը» փաստորեն Պատմության խտացված երկրորդ հրատարակված տարբերակն է: Վերջապես մեկ նկատառում ևս, Օշականը Համապատկերում վկայում է, թե Ասատուրը գրել է Դիմաստվերների երկրորդ շարքը. «Դիմաստուերներ (Բ. շարք) ձեռագիր վիճակի մեջ, նվիրված Մ. Պեշիկթաշլյանի, Գ. Կոստանյանի, Խ. Միսաքյանի, Տերոյենցի, Ռ. Պերպերյանի, Արփիարյանի, Զերազի, Քեչյանի, Ծերենցի, Օրմանյանի, Պարոնյանի (1877-1891), Մ. Գարագալի, Թերզյանի, Հ. Սվաճյանի, Ս. Փափազյանի, Ճեճիզյանի, Հ. Նալյանի, Գրիգոր Փեշտիմալճյանի, Պաղտասար Դալիրի, Անդրեաս Փափազյանի: Այս ցանկը պերճախոս է ինքնին: Ու աղաղակող պահանջը՝ անոր շուտափույթ հրատարակումին»<sup>34</sup>: Դժբախտաբար, ԳԱԹ-ի արխիվներում այս ձեռագրերը չկան, սակայն մատնանշված հեղինակների գերակշռող մեծամասնությունը զետեղված են Աշխարհաբար Մատենագրության Պատմություն ուսումնասիրության ձեռագիր ինքնագրում:

Պատմության յուրաքանչյուր գլուխ, ցանկացած բաժին այս կամ այն գրողին, գրական-մշակութային իրադարձությանն անդրադառնալիս կենտրոնանում է գրականության պատմությունը պայմանավորող դրսևորումների վրա: Ահավասիկ «Մաղաքիա աբեղա» հատվածը. «Իր անձի վրա մասնավոր տեղեկություններ չկան. հայտնի է միայն թե Վարդան Արևելցիի և Կիրակոս Գանձակեցիի հետ աշակերտած է Վանական Վարդապետին: Գրած է Թաթարաց Պատմություն մը, որ 1870ին տպված է Բեթրսպուրկ և Երուսաղեմ միանգամայն.

33 Այս նպատակով, իրուն նինգերորդ հավելված, այս ուսումնասիրության կցել ենք Պատմության «Մեսրոպ Նուպարյան» բաժինը:

34 Համապատկեր, Ե., Էջ 467:

այս վերջին տպագրության մեջ գործը վերագրված է Վարդան Վարդապետին։ Այս գրքին լեզուն մասամբ գրաբար է, շատ տեղ ուամկախառն և մասամբ ալ գրաբարախառն ուամկորեն։ Այս երկը գրված է ԺԳ. դարուն» (ԱՄՊ 16)։ Հատկանշական է այն իրողությունը, որ Ասատուրը աշխարհաբար գրականության հյուկեները քաղում է ամենատարբեր նյութերից՝ վավերագիր և պատմություն, փաստաթուղթ և ուղեգրություն։ «Ճ. Զվար Ճիյերճի օղլի. – Այս Կ. Պոլսեցի քահանան, որ 1711ին այցելած է Երուսաղեմ։ գրած է իր ճամբորդության նկարագրությունը թուրքերեն բառերով և գրաբարախառն ուամկորենով։ Այս շահեկան գրվածքը զոր հրատարակեց Բազմավեա 1867ին (Էջ 129, 130 ևն.) իր ժամանակի Երուսաղեմի վրա չատ հետաքրքրական տեղեկություններ կը հաղորդե զվարթ խոհերով» (ԱՄՊ 29)։

«Նախնեաց ուամկորեն» գլխի արժեքն անհամեմատ մեծացնում է այն հանգամանքը, որ Ասատուրն օգտագործում է Հնարավոր բոլոր կարելիությունները՝ գեղարվեստական ամբողջական ստեղծագործություններ կամ հատվածներ զետեղելով։ Այս առումով բնորոշ է «Գալուստ Կայծակ Ամասիացի» բաժինը։ «Այս բանաստեղծ վարդապետը Կ. Պոլսո Հայոց Պատրիարք եղավ 1703 Սեպտեմբերին, և պաշտոնավարեց մինչև 1704 Ապրիլ։ Երբ թողուց պատրիարքությունը, դարձավ դարձյալ Ամասիա։ Իր կենսագրության վրա ասկե ավելի տեղեկություն չունինք։ Բայց անիկա թողած է գրքույկ մը, Գիրք Որ Անվանեալ Կոչի Լուսաշալիդ, որուն տպագրությունը սկսած է պատրիարք ընտրվելե ետքը և ավարտած 1704 Մարտ 30ին։ Այդ գործը 220 էջե բաղկացած է, 150 էջ արձակ հատվածներ, ուռուցիկ ոճով, որոնք կը պարունակեն խորհրդածություններ, խրատներ, աղոթքներ, ևն. 151երորդ էջեն կը սկսին տաղերը, որոնք 67 հատ են։ մասամբ թուրքերենով խառն։ Այդ քերթվածներեն մեծ մասը միստիք ուղերձներ են առ Աստվածածին, կամ Ս. Հարության հոգեգալստյան առթիվ գրված տաղեր։ Ահա նմույշ մը Աստվածածնի ուղղված իր ներբողանքներ։

Աստվածածին պայծառ շուշան,  
Աստվածածին ի քեզ հուսան...  
Մորենի քո անկեզական,  
Աստվածածին զարդ աննան...» (ԱՄՊ 49-50)։

Պատմության մեջ ըստ էության ամփոփված են այն բոլոր բժիշկների կենսագրականները, որոնք գույզն-ինչ հոգեկորմշակութային կյանքում, գրական աշխարհաբարի զարգացման գործում դեր են ունեցել։ «Տոքթոր Հովակիմ Օղուլյուխյան. – Այս բժիշկը, որ վկայված էր Վիեննայի համալսարանեն, 1783ին գրած է լատիներեն *Materia Medica* (Նյութ Բժշկական) և 1785ին *Pathologia* (Ախտաբանություն), որոնց ձեռագիրները պահպաժ են Վենետիկի վանքը, և որոնց առաջինը ընտիր աշխարհաբարի վերածված է նույն ինքն հեղինակին կողմե և 1806ին Վենետիկ հրատարակված։ Տոքթոր Հովակիմ Օղուլյուխյանի եղբայրն է Գեորգ Օղուլյուխյան, որ գրած է 1807-1809ի Կ. Պոլսո անցքերը, ձեռագիր Վիեննայի Միջիթարյան մատենադարանին»։

Պատմության ուշագրավ հատվածներից են «Բողոքականները և աշխարհա-

բարը», «Հովհաննես Տեր Կարապետ Զամուրճյան Պրուսացի», «Տոք-թոր Սերվիչեն», «Արմենակ Հայկունի», «Տոքթոր Հովսեփ Շիշմանյան (Ծերենց)» բաժինները:

Ասատուրն առաջինն էր, որ անդրադարձավ երգիծական հայ փոքր գեղարվեստական արձակի կարևորագույն գործերից ձանիկ Արամյանի Ընդունելություն Ընծայի ստեղծագործությանը<sup>35</sup>: Մանրամասն քննարկել է նաև արևմտահայ պարբերականների պատմությունը աշխարհաբար գրականության զուգահեռներում: Բնականաբար անմասն չեն մնացել զանազան լուսավորական, մշակութային, ուսումնական ընկերությունները. «1841 Մարտ 1ին Կ. Պոլսո մեջ կը հիմնվի Ուսումնական ընկերությունը, – գրում է «1841ի Ուսումնական ընկերությունը» բաժնում, – որուն նպատակն էր գիրք տպել զուտ աշխարհաբար կամ գրաբառ: Ընկերությունը կազմված է վեց տարվան համար, որմե ետքը բաժնվող ընկերը իրավունք ունի առնել ինչ որ կ'իյնա իր բաժինին գույք և դրամ:

Ընկերության վարիչ կ'ընտրվի Գէորգ աղա Փեշտիմալճյան, հայտարարության մեջ ըսկած է թե «տեղ տեղ քանի մը անկանոն աշխարհաբար ու զուտ տաճկերենով գիրքեր» շարադրած են, և «ամեն երկիր, ամեն քաղաք և կրնամ ըսել ամեն գյուղ մեկզմեկե տարբեր լեզուներ կ'արտադրեն» (ԱՄՊ 109-110):

Կարծում ենք, որ այս բանաքաղությունը Հրանտ Ասատուրի Սշխարհաբար Մատենագրության Պատմություն ուսումնասիրությունից ընթերցողին փոքրինչ պատկերացում տվեց հայ գրականության պատմության խնդրո առարկա անտիպ աշխատության մասին\*:

35 Տե՛ս Հանունելություն Հնձայի Թ. Կրկոհիկառէ, Փարիզ, 1856, 14 էջ: Արամյանին նվիրված բաժինն ամբողջությամբ կցել ենք սուն գրությանը: Տե՛ս Չորրորդ Յավելված:

\* Գրիգոր Հակոբյանի հրապարակումները՝ չորս հավելվածներով տե՛ս «Հայկազյան Հայագիտական Համեն», Պեղութ, 1997, էջ 408-418 (ծան.՝ կազմողի):

## ՑՊԱՀԱՆՁ

(Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրությունը)

Այսօց նոր գրականության պատմության քիչ թե շատ նշանակալի հուշարձանները (գեղարվեստական ստեղծագործություն, քննադատական փորձագրություն և տեսական գրություն, խոհագրություն, ակնարկ, օրագրություն, հուշագրություն, ուղեգրություն, նամականի) արդեն վաղուց թե՛ գիտական-հետազոտական, թե՛ ընթերցողական շրջանառության մեջ են: Այժմ գրեթե քիչ հավանական կամ նույնիսկ անհավանական են գրական այնպիսի հուշարձանների երևան հանելն ու լույս ընծայելը, որոնք արմատականորեն կարող են հավելել առավել ևս փոխել գրողի, նրա ժառանգության մասին պատկերացումները, վերանայել տարիների և տասնամյակների ընթացքում ստեղծված արժեքաբանական-մեկնաբանական հիմնային տեսակետները: Անշուշտ խոսքն ընթերցման (վերլուծություն-մեկնություն-արժեկորում) սահմանափակությունների, «վախճանային» որակների, տեսական-քննադատական դաշտում, պատմական գործընթացում գեղարվեստական ստեղծագործության քննության անընդհատ նորոգության բացասման կամ անտեսման մասին չէ:

Հանրահայտ իրողություն է յուրաքանչյուր ժամանակաշրջանում, հաճախ նաև նույն ժամանակահատվածում գրական երկի մեկնաբանությունների առատությունը, բազմազանությունը: Սակայն հազվադեպ են, նամանավանդ դասական գրականության համաձիրից, այնպիսի նոր աղբյուրների, գեղարվեստական ստեղծագործությունների շրջանառության մեջ մտցնելը, որոնք միաժամանակ առթեն և՝ հեղինակի կամ հեղինակների գրական ժառանգության մասին իրապես նոր պատկերացում, և թե՛ տրամագծորեն, արմատականորեն փոխեն գրողի կամ գրողների մասին մեր ունեցած պատկերացումները: Ավելին՝ լինեն հեղինակի կամ հեղինակների, ընդ որում հանրածանոթ, բազմաթիվ տպագրությունների բովով անցած գրողների լավագույն երկերը:

Այս պարագային հարկ է մեկ իրողություն մանրամասնել: Ինչպես նկատվեց, տվյալ գեպքում գրողի ստեղծագործության մեջ առանց մասնավորեցման ներառնում ենք նաև, այսպես կոչված, «երկրորդային», «ածանցյալ» գրականությունը (ոռուսերենը կիրառում է «Յորոշական լուսաւորություն»), նամականի, հուշագրություն, ուղեգրություն, օրագրություն և այլն: Հայտնի, վաղուց անտի փաստված, մեկնաբանված իրողություն է, թե այդօրինակ տեքստերը որպիսի գեղարվեստական, ստեղծաբանական նշանակություն և գերակատարություն ունեն հեղինակի գեղագիտական-ստեղծագործական համակարգում: Եթե հավելենք այս իրողությունը (այսինքն՝ երբ, այսպես կոչված, «երկրորդային», «ածանցյալ» գրականությունը որևէ հեղինակի կամ հեղինակների պարագային առարկայաբար նրա կամ նրանց գրական ժառանգության լավագույն արժեքն է) պետք է արձանագրենք երևոյթի բացառիկությունը: Գյոթեի, Շիլ-

լերի, Ֆլոբերի, Ռիլկեի, Զեխովի, Աբովյանի, Նար-Դոսի, Վարուժանի, Կոստանդյանի նամակներն օրինակ, էպիստոլյար ժառանգությունն առհասարակ այս հեղինակների ժառանգության կարևոր բաղադրատարրերից են, գեղարվեստական մեծարժեք ստեղծագործություններ են, սակայն ոչ նրանց ստեղծումի բարձրակետը։ Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրությունը նրանց գրական ժառանգության լավագույն արժեքն է, բարձրակետը, ինչը ցարդ հրատարակված չէր, այսինքն որոշակի առումով անհայտ էր թե՛ գրականության պատմության, թե՛ ընթերցող շրջանակների համար։ Իրոք, այս իրողությունը մեր նոր գրականության պատմության մեջ հազվագյուտ, եթե չասենք՝ եպակի փաստ է։

Այս առումով Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրությունը հրատարակելը անհրաժեշտ և կարևոր ձեռնարկում է։ Այս նամակագրությունն իր տեսակի մեջ բացառիկ է մի քանի այլ հանգամանքներով և չափանիշներով նույնպես, որոնց գեռ ի տեղի՝ սույն ուսումնասիրության մեջ կանդրադառնանք։ Սուկ արձանագրենք, որ ԳԱԹ-ի ֆոնդերում պահպանվող խնդրո առարկա նամակագրության լույսընծայումը ոչ միայն հավելում և իրավամբ հարստացնում է հայ նոր գրականությունը, այլև՝ արմատականորեն փոխում Զապել և Հրանտ Ասատուրների գրականության մասին տեսակետներն ու պատկերացումները։

Զապել և Հրանտ Ասատուրները թողել են հարուստ էպիստոլյար ժառանգություն։ Հանգամանք, որ պայմանավորված է ինչպես նրանց ստեղծաբանական խառնվածքով, այնպես էլ 1880-1910-ական թվականներին ունեցած գրական-մշակություն, ազգային-հասարակական, մանկավարժական գործունեությամբ։ Բարեբախտաբար նրանց նամակագրությունը մեծավ մասամբ պահպանվել է։ Ուշագրավ է, որ իրենք գեռ կենդանության օրոք գիտակցել են նամակների կարևորությունն իրենց ստեղծումի, գործի համածիրի մեջ, և դրանք ի պահ հանձնել զանազան պահոցների ու մատենադարանների։ Զապել և Հրանտ Ասատուրների առաջին կենսագիր և հետազոտող Թորոս Ազատյանը գրողներին նվիրված իր «Ժամանակակից դեմքեր» ուսումնասիրության մեջ, կարևորելով նրանց անտիպ էջերը, «խիստ շահեկան նամակներ»-ը<sup>1</sup>, Զապելի առաջին ամուսնությունից ունեցած դատեր՝ Աղրինե Տոնելյանի հոգածու վերաբերմունքը ծնողների անտիպ ժառանգության, արխիվի նկատմամբ, մի դիտարկում է անում, որ խիստ կարևոր է ինչպես այս հատորի լույսընծայման, այնպես էլ Ասատուրների առ նամակագրությունն ունեցած վերաբերմունքի, կեցվածքի պարագային։ Ազատյանը գրում է. «Սիպիլի և մասնավորաբար Հրանտ Ասատուրի վերաբերյալ նամակագրություններուն կարևոր մեկ մասը դրկված է Փարիզի «Նուպարյան» մատենադարանը, ի կենդանության, անոնց գրադարանին փոխադրության առիթով»<sup>2</sup>։ Այն հանգամանքը, որ նրանք իրենք են նամակագրությունը, անկախ դրա մեկ մասի պարագայի, հանձնել մատենադարանի, արդեն նշանակում է հեղինակների համաձայնությունը դրանք ընթերցելու,

1 Թորոս Ազատյան, «Ժամանակակից դեմքեր», Ա., Զապել և Հրանտ Ասատուր», Սթամբուլ, 1937, Էջ 75:

2 Նույն տեղում, Էջ 76:

գիտական շրջանառության մեջ մտցնելու, հրատարակելու մասին։ Կարծում ենք՝ պակաս կարևոր չէ այն իրողությունը, որ Ասատուրների մոտ, թեկուզ ինտուիտիվ կերպով առկա էր, ենթադիտակցության մեջ ամրագրված էր նամակների՝ իբրև իրենց ստեղծումի կարևոր արտահայտության զգայությունը։ Չենք կարող բացառել դրա գիտակցումը։ Հետևաբար չենք կարող բացառել նաև նամակները երեկից հրատարակված տեսնելու ցանկությունը, կամ իրենց մահվանից հետո անվերապահ տպագրելու պատգամը ապագա ուսումնասիրողներին։ Միանգամից զանց ենք առնում «անձնական նամակների» մտացածին վերապահությունը, քանի որ երբ անդրադառնում, հետազոտում և գնահատում ենք գրողի, գրողների էպիստոլյար ժառանգությունը, ոչ «անձնական» նամակներ չեն լինում։

Զապել և Հրանտ Ասատուրների անտիպ ժառանգությունը ցուցանում է հետաքրքիր պատկեր։ Եթե Հրանտի պարագային գերակշռում են զանազան պատմական, բանասիրական, լեզվաբանական, գրականագիտական ուսումնասիրությունները<sup>3</sup>, հուշերը, ապա Զապելի պարագային՝ գեղարվեստական ստեղծագործությունները (վեպ, թատերգություն, բանաստեղծություն, տպավորապաշտ էջեր)՝։ Ինչ վերաբերում է նամակագրությանը, ապա այստեղ կարելի է արձանագրել մոտավոր համամասնություն։ Հարկ է նշել նաև, որ երկուսի մոտ դրանց ջախջախիչ մեծամասնությունը տակավին անտիպ են։ Թեև պետք է նշել, որ Զապելը տարբեր մարդկանց հետ երկարատև նամակագրություն ունենալու առումով գերազանցում է Հրանտին։ Ասենք՝ ավելի քան տասնհինգ տարվա նամակագրություն է ունեցել Արտաշես Հարությունյանի հետ<sup>5</sup>, ինչին ի տեղի անպայման կանդրագառնանք, հիմա միայն նկատենք, որ Զապելը մյուս Զապելի հետ, նկատի ունենք եսայանին, գրական միջավայրի, կենսոլորտի, սալոնների թագուհիներն էին, և բնական էր համակ ուշադրությունը, միշտ կիզակետում գտնվելը, նամակների հորձանքը։ Հատկանշական է, որ նույն Արտաշես Հարությունյանը երկարատև նամակագրություն է ունեցել Զապել եսայանի հետ նաև։

Զապել և Հրանտ Ասատուրների ծավալուն նամականուց, հաշվի առնելով գեղարվեստական արժեքաբանությունը, նախ լույսընծայման են կարոտ միմյանց ուղղված նամակները։ Հետևաբար սույն հատորը ներփակում է միայն նրանց նամակագրությունը։ Ավելին՝ այդ նամակագրությունից ԳԱԹ-ում պահպանվող մասը՝ կազմաբանական-գեղարվեստական-բովանդակային նույն դաշտում գտնվող օրագրության պատառիկներով։ Ինչո՞վ է պայմանավորված այս մասնավորումը։ Որոշ նամակների ինչ-որ մասերի, հատվածների բացակայությունը, ինչպես նաև արտատեքստային մակարդակում մնացած, սակայն նա-

3 Հրանտ Ասատուրի խնդրո առարկա երկերից գրականագիտական, տեսական ուսումնասիրությունների, գրությունների մասին հետազոտություն է գրել տողերիս հեղինակը։ Տե՛ս Գրիգոր Հակոբյան, «Հրանտ Ասատուրը գրականության տեսաբան և պատմաբան», Հայկագիտական համականության, Պեյրութ, 1997, հու. ԺԷ, էջ 393-422։

4 Նկատի ունենք օրինակ նրա «Դրամ և դիրք» վեպը, «Պատվավոր ընտանիք» թատերախաղը։ Տե՛ս Ազատյան..., էջ 29։

5 Այս մասին տե՛ս Ա. Մինասյան, «Միպիլ», Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1980, էջ 159-160։

մակագրության շրջարկում ակնհայտորեն առկա հանդամանքների, իրողությունների մեկ մասը թույլ են տալիս կարծել, թե բացառված չեն ինչպես նաև մակագրությունից որոշ մասերի զանազան թողոններում լինելու հանդամանքը, այնպես էլ իրենց կողմից հետագային ոչնչացված լինելու պարագան։ Անմիջապես արձանագրենք, թե այս իրողությունը դույքն-ինչ չի ստվերում նաև մակագրության ո՛չ կազմաբանական-կոմպոզիցիոն, ո՛չ գեղարվեստական-ստեղծագործական ամբողջականությունը, քանի որ այն բնույթով գեղարվեստական բաց համակարգ է, և ենթադրելի պակասող տարրերը սկզբունքային խաթարումներ չեն առաջացնում և չեն կարող առաջացնել։ Եեշտենք նաև, որ այս նամակագրությունը հետագոտողին թելադրում է այն իբրև ամբողջականություն, միասնականություն դիտարկելու ելակետ։ Այն բնույթով մեկ տեքստ է, այսինքն՝ միասնական գերբնագիր, ստեղծագործություն, հար և նման համահեղինակությամբ գրված երկերի, ինչը բնականաբար պարտադրում է համապատասխան վերլուծական դիտակետ։ Այս միասնականության խնդիրն էլ գեռ կփաստարկվի, կմեկնաբանվի սույն ուսումնասիրության մեջ, հիմա ժամանակն է պարզապես թվարկել Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրության տպագրության գերակա մղումները։ Մի իրողություն, ինչը միաժամանակ դյուրինացնում է սույն նամակագրության բացառիկությունը, եզակիությունը ըմբռնելը.

- նամակագրությունը երկուսի գրական ժառանգության բարձրակետն է, լավագույն երկը, գրականության այցեքարտը,
- նամակագրությունը 1890-ական թվականների հայոց դասական գրականության հանգուցային հուշարձաններից է, այդ ժամանակաշրջանի գրականության պատմությունը հավելող կարևոր մանրամասնություններով,
- հայոց նոր գրականության համապատկերում նամակագրությունը բնույթով միակն է, համանունը չունենք,
- նամակագրությունը կազմաբանական-կառուցվածքային, կոմպոզիցիոն միասնություն ունի և այս առումով նույնպես միակն է նոր գրականության պատմության մեջ,
- նամակի «դուալիզմը»՝ նամակ նորմատիվ հասկացությամբ, ընկալումով և նամակ՝ իբրև գրական ժանր, որպես էպիստոլյար գրականության արդյունք (սրանք երկու շատ հաճախ միմյանց ներհակ, բացասող «սկիզբներ» են) սույն նամակագրության մեջ համադրված են,
- նամակագրությունն իբրև համահեղինակությամբ գրված ստեղծագործություն։

Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրությունն առաջին հայացքից հղացքային-բովանդակային պարագրկումով նորություն չէ համաշխարհային և հայ նամակագրության անդաստանում։ Լայն առումով սիրային նամակները (լայն առումով՝ որովհետև այս տեսակի նամակները, առանցք ունենալով զգացմունքը, ներառնում են կոնկրետ կենսագրական փաստից մինչև ժամանակի անդրադարձները, մշակութաբանական, գեղագիտական, ստեղծաբանական, իմաստափառական խնդիրները, միջանձնային հարաբերություններն ընդգրկող անդրադարձներ) գրականության պատմության հոլովույթում ստեղծել են գե-

զարվեստական բարձրարժեք կոթողներ: Հիշատակենք թեկուղ Ալֆրեդ ԴըՄուսե – էմի դ'Ալթօն, Բերնարդ Շոռ – Քեմբպել, Ջեյմս Ջոյս – Նորա Բարնաքլ, Տուրգենև – Սավինա նամակագրությունները, մեր գրականությունից՝ Գրիգոր Զոհրապ – Կլարա Զոհրապ, Ռուբեն Սևակ – Յանի Սևակ, Արտաշես Հարությունյան – Զապել Եսայան նամակագրությունները, Եղիա Տեմիրճիպաշյանի նամակները Արբուչուն, Մուրացանինը՝ Ռուբեն, Ինտրայինը՝ Վերժինին, Վահան Տերյանի նամակները Սոնա Օտարյանին, Անժառամ Միսկարյանին, Նվարդ Թումանյանին: Հարկ է նշել սակայն, որ հայոց նոր գրականության պատմությունից հայտնի սիրային նամակների գերակշռող մեծամասնությունը միակողմանի են: Այսինքն գրվել են միայն մեկի, որպես կանոն՝ գրողի, արվեստագետի կողմից, ապա և՝ նամակագրությունների գեպքում գեղարվեստական արժեք ունեն միայն գրողների հեղինակած նամակները: Այս պարագային, Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրությունը բնորոշվում է թե՛ երկկողմնայնությամբ սիրային նամակագրության շրջարկում և թե՛ երկկողմանի գեղարվեստական արժեքով:

Արդյոք սա<sup>6</sup> չէ պատճառը, որ այնպիսի նրբազգաց և ներթափանցող հայցը ունեցող արվեստագետ, ինչպիսին Հակոբ Օշականն է, Սիպիլի գործին անդրադառնալիս իբրև ելակետ առանձնացնում է նրա զույգ ամուսնությունները. «Ամուսնութիւն: Զայն չենք հիշեր այր գրագետի մը գործին ինչպես կյանքին հեղումին ընթացքին: Բայց կը կենամ Օրիորդ Խանճյանի (այս է ծննդյան մականունը) որոշումին առջե...»<sup>6</sup>:

Էական է դիտել, որ Ասատուրների բոլոր ժամանակակիցները, ուսումնասիրողները միաբերան առանձնացնում են Զապելի զույգ ամուսնությունների, Զապելի և Հրանտի ամուսնության փաստերն իբրև նրանց ստեղծագործության օրգանական շարունակություն և խթան: Սակայն ամուսնության և ստեղծումի պայմանավորող զուգորդումը մնում է առկախ, թերասաց և քիչ հասկանալի: Մի տեսակ գաղտնածածուկ: Ի՞նչն էր պատճառը: Բոլորն էլ նկատում և կոահում էին այս զույգի մարդկային մտերմությունով պայմանավոր, շատ հաճախ թելադրվող նրանց ստեղծագործությունը, հավելեք նաև հոգեբանական խառնվածքին բնորոշ ներամփոփածությունը, որ երեխն հասնում էր ընդգծված սակավապետության, ինչն ի դեպ Օշականից սկզբունքորեն տարբեր, սակայն մարդկային էությունն ըստ ամենայնի տեսանելու չնորհ ունեցող մեկ ուրիշ արվեստագետի՝ Երվանդ Օտյանին, Հրանտի առիթով տակապին 1914-ին հետեւյալ նկատման հնարավորությունն է ընձեռել. «Հակառակ իր խոսելու կարողության՝ ամեն վայրկյան խոսք չ'առներ և կը խոսի միայն այն պարագային, ուր ուրիշներու խոսածեն տարբեր և լավագույն բան մը ունի ըսելիք»<sup>7</sup>:

Հարցումի պատասխանը Զապելի և Հրանտի նամակագրությունն է: Ահա թե ինչու ժամանակակիցները Ասատուրների անձնական կյանքը, մարդկային հարաբերությունները, ամուսնական զույգ լինելն ուղղագծորեն գուգորդում

6 Հակոբ Օշական, «Համապատկեր արևմտահայ գրականության», հատ. 5-րդ, Երուսաղեմ, Տպարան Ս. Հակոբյանց, 1952, էջ 419:

7 Երվանդ Օտյան, «Մեր երեսփոխանակները, մեր ազգային ժողովը», Երևան, «Մագաղաթ» հրատարակչություն, 1999, էջ 125:

էին նրանց ստեղծագործություններին: Օշականը Զապելի կյանքը համարում է նրա գրականության մեկնության ելակետը, Օտյանը Հրանտի լոռության մեջ նկատում հազվագեղ արտաքրվող հարուստ, լեցուն խոսքը: Նրանց նամակագրությունն այն պակասող օղակն էր, որ ժամանակակիցների դատումները դարձնում էր առկախ, թերասաց, գաղտնածածուկ: Նամակագրության առկայությամբ, հրատարակությունով ուրեմն անհայտը հայտնի է դառնում, բացում ենք նրանց ստեղծումի էությունը նաև: Հետեաբար չպիտի համաձայննք Վահան Տերյանի հետեյալ կարծիքի հետ, որ ավանդույթի ուժ է ստացել, դարձել «անձնական» նամակագրության հանդեպ կեցվածքի դեֆինիցիա: Մեզ իրավունք վերապահնենք հաղթահարելու էթիկական տարբուն. «Բանն այն է, որ նամակ գրելը ես համարում եմ մի զրույց, – գրում է Տերյանը 1914 թվականի հունիսի քսանչորսին նվարդ Թումանյանին հասցեագրած նամակում, – իսկ ընկերական և մտերմական զրույցի ժամանակ խոսքեր չես ընտրում և չես աշխատում խոսել տրամարեանորեն ու «խելոք», այլ զրուցում ես անբռնազբոսիկ, ազատ, առանց վախենալու և քաշվելու: Աչա թե ինչու ես ասում եմ, որ նամակը պետք է միայն այն մարդը կարդա, ում գրված է նա: Նամակում գրածիս համար ոչ ոք իրավունք չունի ինձ պատասխանատվության կոչելու, ինչպես և իմ մտերիմին ասած մասնավոր, ինտիմ խոսակցության համար – ինչին էլ վերաբերվի այդ զրույցը: Աչա այսպիսի ինտիմ նամակագրություն եմ սիրում ես: Ուրիշ տեսակ ոչ»<sup>8</sup>: Աներկրա է այն հանգամանքը, որ ազատ, անկաշկանդ նամակն է անցնում նամակի նորմատիվ-հաղորդակցական գործառություններից, մոտենում ստեղծագործությանը, դառնում գրականություն, իսկ նամակային գրականությունն արդեն գուրս է քաղքենու հետաքրքրասիրության պարփակումներից, ուրիշի անձնականը քչփորելու հոռի սովորությունից, հետեաբար իբրև գեղարվեստական տեքստ այդ մասնավորը, ինտիմը ընթերցման առարկա է, անշուշտ միշտ պահպանելով արվեստի բարոյական հրամայականի զգոնությունը: Կարծում ենք ինտրայի նամակի ուրույն և տարողունակ սահմանումը հատկանշում է հենց նամակագրության արվեստի տիրույթը, ուր արդեն որևէ տարբու չի գործում: «Նամակը պահպան մը ունի. գոց տուփի մըն է. խորհրդավոր բան մըն է, արդյո՞ք... մըն է: ...

Ես կը սիրեմ այն անորոշությունը, հարցական լոռությունը զոր գոց նամակ մը կը ծնի...»<sup>9</sup>: Զրաքյանը խորհրդավորի շրջարկում ներառնում է խորհուրդը, իսկ Հրանտ Ասատուրը իր ինքնակենսագրականներից մեկում ընդամենը արձանագրում է. «1901ին ես ամուսնացա Զապելին հետ, և հաստատվեցա Բերա, Բանկալթի, Զենկելիի աբարթմանը, ուր մնացինք մինչև 1904ի վերջը»<sup>10</sup>: Ընդամենը այսքանը, այսպես չոր ու ցամաք, իբրև հերթական մի փաստ կյանքի գնացքում: Իսկ փաստի մարդկային և ստեղծաբանական խորհուրդը պարփակած է Զապելի հետ մինչամուսնական հարաբերություններն ընդգրկող 1895-

8 Վահան Տերյան, «Երկերի ժողովածու երեք հատորով», հտ. Երրորդ, Երևան, Հայպետհրատ, 1963, էջ 348:

9 Տե՛ս Ինտրայի 1896 թվականի հոկտեմբերի 31-ի նամակը Միքայել Կյուրճյանին: ԳԱ.Թ, Մ. Կյուրճյանի փոնդ, թիվ 236:

10 Տե՛ս «Կենագրական նոթեր», ԳԱ.Թ, Հրանտ Ասատուրի փոնդ, թիվ 12:

1898 թվականների նամակագրության մեջ, որը վեպ-նամականու պոետիկայով համահեղինակած հայ գրականության պատմությանը հայտնի լավագույն ստեղծագործություններից է:

Բոլորովին պատահական չէր ժամանակակիցների՝ Զապել և Հրանտ Ասատրուների ստեղծագործության ընդհանրական տեսակետի հիշեցումը սույն գրության մեջ: Հիմա ժամանակն է հիշեցնելու նրանց ժամանակակիցներից մեկի դիմասրբումը նույնպես: Զոհրապը համապատասխանաբար Զապելի և Հրանտի դիմաստվերները կերտելիս «Ծանոթ դեմքեր»-ում գրում է. «Սիպի՞լ ինչո՞ւ այս պատրվակը. ներելի չէ՞ անունիդ տալ. և ի՞նչպես ծանոթներու կարգը դասել այս գեմքը, որ անձանոթ մնալ կը փափաքի», ..., «Այս երիտասարդը ուրեմն, կարգի ու կանոնի սիրահար մըն է ամեն բանի մեջ»<sup>11</sup>: Այս ծանոթանձանոթությունը, արտաքուստ կարգի ու կանոնի անշեղ հետագիծն իր թիկունքին ուներ զոհրապյան «Համակ զարտուղության» կենսոլորտ և ստեղծում՝ նամակագրության մեջ իդեալի և իդեալականի բրտացումով<sup>12</sup>, միայն արվեստի հրամայականով պայմանավոր գերակյանքի վկայությամբ, որի ուղղակի խոստովանությունը նամակագրության մեջ զանազան առիթներով արվում է: Մեջբերենք դրանցից մեկը. «Այս մեկ տարվան մեջ ավելի ապրած կը զգամ ինքողինքս քան կյանքիս բազմաթիվ տարիները, որնց մեջ ոչ վիշտը և ոչ ուրախությունը ճանչցած էի», – գրում է Զապելը<sup>13</sup>: Գոյության այսօրինակ տարածուն փոխակերպությունը հետևաբար պետք է պայմանավորեր ապրումի, զգացումի, կենսակերպի և կենսական փաստերի վերաբերության ծայրագնա հեղում, ինչի վերստեղծումը նամակագրության տիրույթներում գրելու ակտը, գրաբանական ընթացքը դարձնում է բացարձակ էույթ (սուբստանց). «Ա՛խ, Հրանտս, Հրանտս, ի՞նչ անսահման աշխարհք մըն ես գուն հրապույրներու, և ի՞նչպես կը շփոթես զիս իմ անբավ հիացողությանս մեջ, երբ քեզի գրելու տենչանքով կսկսիմ, և հափշտակությանս սաստկությանը մեջ կը կորսվիմ» (149): Գրելը այս անսահմանության մոլորանքի կոլիզիան հանգուցալուծելու փորձ է, փրկչություն «...այս անտանելի վիճակին վերջ մը տալու համար...» (157), այն «Սրտի անբավ ըղձանք մըն է որ կը գրգե զիս գրել քեզ...» (173): Գրելը գերակյանքը անվերջավոր դարձնելու մղումն է՝ «Եթե դա օր մը, որ չկարենամ քեզի հանձնել գրածներս, նորեն պիտի գրեմ քեզի...» (203), հեռացումը մոտեցման այլակերպելը. «...քանի մը անգամներ ծայրե ծայր կարդացի գրածներդ, զքեզ սրտիս մոտիկ զգալով, կարծելով թե կը խոսիս հետո...» (219), կամ «...ամեն անգամ... կը կարդամ, կը կարդամ զանոնք միշտ նոր հաճույքով, հեշտությամբ մը որ ըոլոր էությունս կը գրավէ» (139-140):

Այս նամակագրությունն առերում է վիպական կենսոլորտ՝ միջավայր, հարաբերություններ, բախումներ, զգայնություններ, – ոգեկորության, ուրախու-

11 Գրիգոր Զոհրապ, «Երկերի ժողովածու երկու հատորով», Խո. 2-րդ, Երևան, Հայպետհրատ, 1962, էջ 414 և 449:

12 Ուշագրավ է, որ 1898-ին գրված և «Յոլքեր»-ում գետեղված «Խտեալլ» քերթվածը (տե՛ս Հրանտ և Զապել Ասատուրներ, Սիրապին նամակներ, Երևան, 2001, էջ 282-283) նամակագրության չափանի ալյուգիան է, որոշակի իմաստով ածանցյալը:

13 Տե՛ս Հրանտ և Զապել Ասատուրներ, Սիրապին նամակներ, Երևան, 2001, էջ 227: Հետայսու բնագրերից կատարված բոլոր հոլովները տեքստում, փակագծերի մեջ:

թյան, սփոփանքի, դառնության, հիասթափության, մենության, ափսոսանքի, անձնասպանության, բազմաթիվ այլ ապրումների, վիճակների, մտածումների հարահոս: Առանց վարանելու կարող ենք արձանագրել՝ գոյության լիարժեք վկայություն, ուր պարզապես անհնար է զանազանել՝ որտեղ է ավարտվում կյանքը և սկսվում գրականությունը, որտեղ՝ ավարտվում գրականությունը և սկսվում կյանքը: Ուրեմն որևէ տարու զորու չէ այս տեքստը հանել արվեստի տարածությունից:

Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրության քննություն-մեկնաբանությունն իբրև սկիզբ անշուշտ թելադրում է անդրադառնալ այս գերբնագրի ստեղծագործական նախապատմությանը, սիրո պատմությանը: Զապել-Հրանտ հարաբերությունների խորապատկերին, իբրև անհրաժեշտ սկիզբ փորձել պատկերացում կազմել, թե ինչո՞ւ էին նրանք միմյանց նամակներ գրում և ինչպե՞ս էին փոխանակում այդ նամակները:

Հայոց նոր գրականության պատմական համապատկերում Զապել և Հրանտ Ասատուրները անուրանալի դերակատարություն ունեն ինչպես հետվիպապաշտական (պոստոմանտիզմի) շրջանի արևմտահայ գրականության սկզբնավորման և զարգացման, իրապաշտության գեղագիտության և գեղարվեստական գործընթացի ձևավորման, զարգացման պատմության մեջ, այնպես էլ 1880-1910-ական թվականների արևմտահայ հոգևոր-մշակութաբանական, ազգային-հասարակական, մանկավարժական կյանքում: Բազմազան և ընդգրկուն է նրանց ստեղծագործական, գիտական-մանկավարժական, ազգային-հասարակական, խմբագրական ժառանգությունն ու գործունեությունը:

Բանաստեղծ, նորավիպագիր, վիպասան, մանկավարժ, դասագրքերի հեղինակ, թարգմանիչ, լեզվաբան, թատերագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ Զապել Ասատուրը (օրիորդական ազգանունը Խանճյան) ծնվել է 1863-ին Կոստանդնուպոլսի Սկյուտար թաղամասում: Նախակրթությունը ստանում է նախ Մադամ Կառյուսի Փրանսիական (1870-1872) ապա Ա. Խաչ վարժարանում (1872-1873), այնուհետև երկրորդական կրթությունը ստանում է Սկյուտարի ճեմարանում, որը հաջողությամբ ավարտում է 1880-ին: Տակավին ուսումնառության տարիներից Զապելը սկսում է իր բուռն հասարակական գործունեությունը: Հիշատակենք, որ մեզանում բավականին ուրույն (այսինքն՝ ոչ համաելքոպական ուղղակի անալոգի) ֆեմինիստական շարժման սկզբնավորողներից էր, հար և նման Արքուհի Տյուսարի, Մարի Սվաճյանի, այլոց: Ըստ կենսագիրների՝ Զապելը մոր և հորաքրոջ աջակցությամբ և հովանավորությամբ 1879 թվականի ապրիլի 11-ին, մի քանի համախոհ ընկերուհիների հետ հիմնադրում է «Ազգանվեր Հայուհյաց ընկերություն»-ը, որի նպատակը ազգային վարժարանների ցանցի տարածումն էր նամանավանդ օտարախոս (հիմնականում թրքախոս և քրդախոս) հայաբնակ բնակավայրերում, լուսավորական, մշակութային գործունեությունը, հասարակական կյանքին հայ կանանց ակտիվ մասնակցության աջակցությունը<sup>14</sup>: 1881-ին Զապելն ամուսնա-

14 Զապել և Հրանտ Ասատուրների համեմատաբար ամբողջական կենսագրությունները տե՛ս Մ. Պոտուրյան և ուրիշներ, «Հայ հանրագիտակ», Պուբլիկ, Եջ 220-221, թորոս Ազատյանի և Սրբիկ

նում է փաստաբան Կարապետ Տոնելյանի հետ: Ամուսնական ամոլը գործի բերումով մինչև 1889 թվականը անց է կացնում գավառում (Պիլեճիկ, Պրուսա, Գաղատիա, Էնկյուրի): Զապելն ըստ էության այսուել էլ սկսում է իր երկարատև և արդասավոր մանկավարժական գործունեությունը, միաժամանակ զանազան հոգվածներով ու գրություններով թղթակցում կ. Պոլսի մամուլին: Գավառական կյանքի դիտարկումներն ու տպագորությունները հետագային դառնում են նրա «Աղջկան մը սիրտը» վեպի հղացքի և կազմաբանության կարևորագույն ազդակներից:

Նրա կյանքում վերադարձը մայրաքաղաք նշանավորվեց գրական-մանկավարժական գործունեության, ինչպես նաև ստեղծագործական, անձնական կյանքի նոր՝ բավականին բուռն, իրադարձություններով, դեմքերով ու դեպքերով հարուստ և, ինչու թե, ստեղծաբանական-զգացմունքային հարակա պրկվածության փուլով, – աշխատակցություն «Հայրենիք», «Մասիս» պարբերականներին, գեղարվեստական երկեր, հրապարակախոսական և գրականագիտական հոգվածներ, ուսուցչություն էսայան և կեղոնական վարժարաններում, գրական-մշակութային սալոնների կազմակերպում, վերջապես այրիություն և վերամուսնություն 1901-ին Հրանտ Ասատուրի հետ: Լիարժեք ստեղծագործական կյանքը շարունակվեց մինչև 1933 թվականը: Այդ տարի շուրջով տոնվեց նրա գրական և հանրային գործունեության հիմնամյա հորելյանը<sup>15</sup>: Զապել Ասատուրը վախճանվել է 1934-ի հունիսի 19-ին: Շուրջ կեսդարյա ժամանակահատված ընդգրկող նրա հարուստ ժառանգությունից հիշատակենք «Աղջկան մը սիրտը» վեպը, «Յոլքեր» քերթվածների, «Կնոջ հոգիներ» նորավեպերի ժողովածուները, Հրանտ Ասատուրի համահեղինակությամբ ստեղծված «Քերականություն» դասագրքերի շարքը, «Թանգարան» ընթերցանության քրեստոմատիաները, Անատոլ Ֆրանսի «Սիլվեստր Բոնարի ոճիրը» երկի թարգմանությունը:

Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, լեզվաբան, քննադատ, գրականության պատմաբան և տեսաբան, թատերագետ, աղյուրագետ, խմբագիր, մանկավարժ, հրապարակախոս, ազգային-հասարակական գործիչ, փաստաբան Հրանտ Ասատուրը ծնվել է 1862-ին կ. Պոլսի Պոյաճիգյուղ թաղամասում: Ասատուրը պատկանում է նոր շրջանի այն բացառիկ մտավորականների փաղանգին, որոնք հիմնավոր և հիմնարար կրթություն են ստացել: Նախակրթությունը ստացել է Պոյաճիգյուղի երկի Մանկանց և Հիսարտիպի Մեզպուրյան դպրոցներում (1866-1871): 1871-1873 թվականներին ուսանել է Ռոպերտ Քոլենում: 1875-1876-ին աշակերտել է Մինաս Չերազին և Բյուզանդ Քեչյանին՝ հմտանալով Քրանսերենի և թուրքերենի մեջ: Բարձրագույն իրավաբանական կրթություն է ստացել 1881-1884 թվականներին Փարիզում: Երիտասարդ տարիքից էական գերակատարություն է ունեցել ազգային-հասարակական կյան-

Մինապանի համապատասխան ուսումնասիրությունների համապատասխան հատվածներն ու գլուխները:

15 Ազատյանը հորելյանի ասիթով հիշում է, որ հանդիպումներից մեկի ժամանակ, անդրադառնալով իրեն ուղղված գնահատանքներին, հանդիսություններին, Զապելն ասում է. «Հրանդը արժագի էր այս մեծարանքներուն»: (Ազատյան..., էջ 12):

քում: 1879-ից մինչև 1905-ը ընկած ժամանակահատվածում եղել է Կիլիկյան Հնկերության ատենադպիրը (1879), անդամակցել է Փարիզում գործող Ուսումնասիրաց Հնկերությանը: Եղել է Կոտակաց Հոգաբարձության (1888), Ուսումնական Խորհրդի (1900), Սանասարյան խնամակալության, իզմիրյանց Հանձնաժողովի Գրական մասնախմբի անդամ (1905), Կերպոնական վարժարանի խնամակալ (1889), ազգային երեսփոխան է ընտրվել Պոյաճիգյուղից (1890):

1885-1898-ին զբաղվել է փաստաբանական գործունեությամբ, 1895-ից դասավանդել է զանազան ուսումնական հաստատություններում, մասնավորապես 1898-1908 թվականներին Կերպոնական վարժարանում: 1892-1898 թվականներին նաև՝ Զոհրապի, ապա նաև Զոհրապի և Սիպիլի հետ հրատարակել և խմբագրել է գրական «Սամփոր»: 1909-ից մինչև 1915-ը վարել է բարձր պետական պաշտոններ: Առողջության վատթարացման պատճառով 1915-ից հաստատվում է Գնալը կղզում: 1919-1920-ին հիվանդության սաստկացման պատճառով տեղափոխվում է Շիշլիի հիվանդանոց, այնուհետև կրկին Գնալը կղզի, որտեղ էլ կնքում է իր մահկանացուն 1928-ի հունիսի 5-ին: Հրանտի հարուստ և արժեքավոր ժառանգությունից հիշատակենք «Սահմանադրությունը և հայ ժողովուրդը» բանախոսությունը, «Պարահանդեսը», «Վարդեկիունը» նորավեպերը, «Դիմաստվերներ» ժողովածուն, հայ և արտասահմանյան գրականությանը նվիրված ուսումնասիրությունները, ճարտասահմանության ձեռնարկը, «Մեր վանքերը», «Մեր կյանքեն» բանասիրական-աղբյուրագիտական հոդվածաշարերը<sup>16</sup>:

16 Կարծում ենք՝ ավելորչէ այստեղ մեջբերել Թորոս Ազատյանի կազմած Զապել և Հրանտ Ասատրյանի կենացրության ժամանակական տախտակը մասնակի կրծատումներով, ինչը ևս մեկ հնարապետություն կը նետեղի ընթերցողին հետևելու հրանց կյանքի գնացքին.

#### «Կենսագրական գիծեր Սիպիլի

- 1863ին Զապել Խանճյան ծնած է Սկյուտար:
- 1870ին կը հաճախեն Մատամ Կաղուսի Ֆերանս. Վարժարանը:
- 1872ին Ս. Խաչ Վարժարանը կ'ուսան:
- 1873ին Շեմարանի ուսանող, որին շրջանավարտ 1880ին:
- 1879ին կը նիմնան «Ազգանկեր Հայունաց» ընկերությունը:
- 1881ին Կ'ամուսնանա փատարան Կարապետ Տոմելյանի հետ: Կ'ուղարի գավառները, որին կ'աշխատակցի Պոլս մամուխն:
- 1889ին կը դառնան Պոլս և կը նվիրվի գրական ու հանրապին գործունեության:
- 1891ին կը հրատարակե «Աղջկան մը սիրու» Ալիս ծածկանուով:
- 1896են սկսալ Պոլս կարևոր կրթական հաստատություններուն (Էպայան, Կեդրոնական և այլ մասնակից աշխատակցի Պոլս մամուխն:
- 1889ին կը դառնան Պոլս և կը նվիրվի գրական ու հանրապին գործունեության:
- 1902ին լուս կ'ընծայէ «Ցոլքեր» բանատեղծությանը հատորը:
- 1926ին լուս կը տեսան «Կնոջ ճոգիմեր» պատմվածքներու հավաքածուն:
- 1933ին իր գրական ու հանրապին գործունեության հիմնամասն հորելյան կը տոնվի:
- 1934 Հունիսի 19ին տեղի կ'ունենա իր մահը:

#### Կենսագրական գիծեր Հ. Ասատորիի

- 1862ին Հրանտ Ասատոր ծնած է Պոյաճըգուր:
- 1866են սկսալ կը հաճախեն ամառը տեղվույն Երից Մամկանց դպրոցը, իսկ ձմեռը՝ Հիսարտիաի Մեզապուրյան վարժարանը:
- 1871ին կ'աշակերտի Ռուպերթ Գոլենի, որը կը մնա մինչև 1873:
- 1874ին կը թարգմանէ «Պատմություն Մալվինայի» որ լուս կը տեսնէ հատուկ տետրակով:
- 1875ին կ'աշակերտի Մինաս Չերազի, որ կը դասախոսն հավերեն ու ֆրանսերեն:
- 1876ին կ'աշակերտի նաև Բյուզանդ Քեչչանի, թուրքերենի և ուսողության դասեր առնելով:
- 1879ին կը հրատարակե «Պատամեկան ներշնչումներ»-ը: Նույն տարին խոսած իր մեկ ճառը

Զապել և Հրանտ Ասատուրների կենսագրության համառօտ անդրագարձում այս պարագային կարեոր են 1890-ից մինչև 1901-ի փաստերը, իրադարձությունները, այն հասկանալի պատճառաբանությամբ, որ ինդրո առարկա նամակագրության ժամանակագրական-իրադարձային շրջարկն են, կենսագրական այն համաձիրը, որը դարձել է վեպ, փոխակերպվել արվեստի: Այս պարագային նամակագրության համար գենեզիսային առաջնային և գերակա գործառնություններ ունեն հետևյալ հանգամանքներն ու փաստերը՝ Զապելի և Հրանտի մանկավարժական համատեղ գործունեությունը, երկուսի աշխատանքը «Մասիս»-ում, առհասարակ մշակութային-հասարակական գրադումները, Զապելի սալոնները, Հրանտ Ասատուրի ճանապարհորդությունը գավառներ: Այս խորքին միշտ պետք է նկատի ունենանք 1896-1898-ի Աղետը՝ այն առումով, որ հոգեկոր Պոլիսը Ասատուրներն ու Զոհրապն էին ըստ էության (մյուսները, ջախջախիչ մեծամասնությամբ կամ վտարանդպել էին, կամ խցարգելված էին բանտերում): Աղետի խորապատճերում, ի շարս հետաքրքրող ստեղծագործության մշակութաբանական, ստեղծաբանական, եթե կուզեք քաղաքացիական խիզախման բացառիկ օրինակի, բացառիկ է սույն նամակագրության երևույթն իբրև Աղետի կենսոլորտում ստեղծումի արտահայտություն և որակ: Արդյոք դա գոխայնությանը դիմակայելու, անհատական ողբերգությունը հաղթահարելու հոգեբանական, գիտակցական, ֆիզիկական և բնագանցական դիմադրողականությունը չէ՞ր: Հարկա՞վ: Սակայն դա դույզն-ինչ պարագայական չի դարձնում նամակագրության երևութականությունը (Փենոմենը): Ինչո՞ւ: Եզակիությունն այնուհանդերձ ո՛չ սիրային նամակագրությունը, ո՛չ մարդկային, հոգեկոր մտերմությունը, ո՛չ էլ սիրո խոչընդոտները հաղթահարող գործողությունների, արարքների սոսկական շրջանակն է: Այլ՝ նամակագրությունն իբրև մարդկային, հոգեկոր մտերմության արտահայտության, իբրև սիրո խոչընդոտները հաղթահարող գործողությունների այնպիսի ամբողջական շրջանակ

«Սահմանադրությունը և հայ ժողովուրդը» լուս կը տեսնե մասնավոր պրակով:  
1879ին ատենապարությունը կը վարե Կիլիկան ընկերության և կ'անդամակցի Դարոցասիրաց  
Արևելյան ընկերության:

1881ին կը մեկնի Բարիգ, որ կը մնա երեք տարի, իբր աշակերտ իրավագիտական վարժարանին:  
Հոն կ'անդամակցի Ուսումնասիրաց ընկերության:

1884ին կը դառնա Պոլիս:

1885ին հաստաբանական գրասենյակ կը բանա ընկերակցաբար:

1888ին կ'անդամակցի Կոտակա հոգաբարձության:

1889ին Խնամական կ'ընտրվի Կենտրոնական վարժարանին:

1890ին Ազգ Երեսփոխան կ'ընտրվի Պոյաճճօվուրեն, հետո ալ Ֆերիգյուրեն:

1892ին «Մասիս»-ը կը հրատարակե Զոհրապի հետ:

1895ին մկպալ կ'ավանե իրավագիտական մասնավոր դասեր:

1898ի վերջերը կ'ստանձնե Կեդրոնական բարձր կարգերու գրականության և աշխարհաբարի դասախոսությունը, որո կը վարե 10 տարի անընդհատ:

1900ին Ուսումն. Խորհրդութի անդամակցության կը կոչվի: Կ'անդամակցի Սանասարյան Խնամակալության:

1905ին Կ'անդամակցի Խզմիլյանց Հանձնաժողովի Գրական մասնախումբին:

1909ին անդամ կ'ընտրվի Սոլոտր. Ծովային դաստարանին:

1914ին Պետական Խորհրդութի անդամակցության կը կոչվի:

1915ին կը հաստատվի Գնալլ կղզի, առողջական պատճառներով:

1920ին սկսալ մեռու այլս հանրապին ու պետական պաշտոնավարություններե, կը նվիրվի գրական, բանապիրական ու մատենագրական աշխատությանց:

1928 հունիս 5ին տեղի կ'ունենա Հ. Ասատուրի մահը»:

(Ազատյան..., Էջ 27, 57-59):

լինելը, որը դառնում է ստեղծագործություն, փոխանցվում գրականության, իբրև արվեստ, հանգրվանում:

Վարքնթաց էջերում դեռ կանգրադառնանք նրանց հարաբերությունների պատմությանը կարելի մանրամասնություններով: Այստեղ պարզապես արձանագրենք, որ Զապելի և Հրանտի համագործակցությունը, բարեկամությունն ու մտերմությունը, սերը վերջապես ձևավորվել ու ընձյուղվել էր Սիպիլ-Զապելի սալոններում, ինչի մասին տեղեկացնում են օրինակ Վահրամ Փափազյանը, Աղավնի Մեսրոպյանը, Արփիկ Մինասյանը<sup>17</sup>: Այդ սալոններում էր հավաքվում ժամանակի մտավորական բոմնդը: Շատ կարևոր դեր է ունեցել նրանց բարեկամության և մտերմության ձևավորման գործում 1892-ի Զոհրապ-Հրանտ Ասատուր-յան գրական «Մասիս»-ը, որի հեղինակներից էր Զապելը:

Զապելի և Հրանտի հարաբերությունները Հրանտի բառով դարձան «անխարխար» և այլևս նրանց գոյությունը անտրոհելի 1895-ին, երբ, նախ՝ Հրանտը թողեց փաստաբանական գործը, ազատվեց Ասատուր փաստաբանական գրասենեակից և Զապելի պես ամբողջովին նվիրվեց գրական-մշակութային կյանքին:

1898-ին Զոհրապի հետ երեքով շարունակեցին գրական «Մասիս»-ի տպագրությունը, ապա՝ Հրանտը 1898-ի վերջերին, վերադառնալով գավառից, Կեդրոնականում սկսեց գասավանդել աշխարհաբար, հայ, արտասահմանյան գրականություն, գրականության տեսություն, ճարտասանական արվեստ<sup>18</sup>: Մի վարժարան, ուր դասավանդում էր նաև Զապելը: Վերջինիս այրիանալուց հետո 1901-ին Բերայի նույն եղբորգության եկեղեցում, որտեղ տեղի էր ունեցել նրա առաջին ամուսնությունը<sup>19</sup>, Զապելն ու Հրանտը ամուսնացան՝ անցնելով իրենց կյանքի նոր հանգրվանին: Այս փաստի հանգրվան լինելն ըստ ամենայնի գիտակցել է Ասատուրների ժամանակակից Արփիար Արփիարյանը, որն իր «Գրական գեմքեր» հուշ-դիմանկարների շարքում Հրանտ Ասատուրի մասին գրում է. «Հրանտ Ասատուր առանձնաշնորհյալ վիճակ մը ունի: Հիմա ինքն է թրքահայ միակ գրողը, որ դյուրություն կը վայելե ամբողջ ժամանակը գրականության նվիրելով լուրջ երկասիրություն մը ստեղծելու երկարատև աշխատությամբ: Միանգամայն իր կյանքն ալ միացուցած է ճշմարիտ գրագիտուհիի մը, Սիպիլի. Երբեմն օրիորդ Զապել Խանճյան, և այժմ տիկին Հրանտ Ասատուր: Կյանքի ու նաև գրականության լուծը մեկտեղ կրելու գրական ու սիրական ամոլ մը: Իր տեսակին մեջ եղական նորություն մը մեր գրականության համար»<sup>20</sup>: Ուրեմն 1901-ը Զապելի և Հրանտի համար նոր հանգրվանի մուտք էր

17 Տե՛ս Վահրամ Փափազյան, «Մասիս պարտքը», Երևան, Հայպետրատ, 1959, Էջ 56-69, Ա. Մինայան,..., Էջ 26-27:

18 Տե՛ս «Ինքնակենսագրություն Հրանտ Ասատուրի», Ընդարձակ տարեցուց Ս. Փ. Ազգային Հիմնադրոցի, 1929, Էջ 33:

19 Տեղեկությունը հաղորդում է Վահրամ Փափազյանը, նա գրում է. «Այդ աղջիկները... (Ակատի ուղի Զապելի Աղջիկները Տուելլան և Էնմա Ասատուր դատրերին՝ Գր. Հ.) ապացուցներն էին կրկնակ հանդիսավոր «այրմերին», որ Սիպիլն արտասանել էր բարձրաձայն Պերապի Երրորդության նկեղեցվող խորամի առջև»: (Փափազյան,..., Էջ 57):

20 Արփիար Արփիարյան, «Երկեր», Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1987, Էջ 504-505:

և ավարտ կենսագրական բախտորոշ շրջանի (անշուշտ պայմանական ու հարաբերական ավարտ, զի նրանց գոյությունը մինչև ֆիզիկական մեկնում հարատե սիրատենչիկ վիճակ էր), ինչը սույն նամակագրության, համահեղինակությամբ ստեղծված այս գերբնագրի ստեղծագործական նախապատմությունն է։ Կարծում ենք՝ հետաքրքիր կլինի հետևել դրա ընթացքին։

Գեղարվեստական այս նամակագրություն-գերբնագրի ստեղծագործական պատմությունը ներառնում է Զրանտի կենսագրության այն հատվածը, երբ նրանք միմյանց հետ ծանոթանում, միմյանց համակրում, բարեկամանում են։ Յայտնաբերում միմյանց հանդեպ տածած զգացմունքը, խոստովանում սերը։ Վերջապես սիրո փոխադարձումից հետո սկսվում են սիրային յարաբերություններն իրենց մաժորային-մինորային ընթացքով, զիգզագածե տարրութերումներով, վայրիվերումներով։

Էական է դիտել, որ տվյալ պարագային գործ ունենք երկու անհատականությունների հետ թե՛ հոգեկերտվածքով, թե՛ մտավոր-ստեղծագործ-զգացմունքային խառնվածքով։ Յոյժ կարեոր է նաև նրանց մարդկային առինքնողության, հմայքի հանգամանքը։ Երկուսն էլ զարմանալի էտալոն էին ժամանակակիցների համար թե՛ արտաքին բարեմասնություններով, թե՛ ներաշխարհով։ Եվ բոլորովին պատահական թեր, որ անընդհատ գտնվում էին ուշագրության կիզակետում։ Անպայմանորեն հետները ծանոթանալու, մտերմանալու ժամանակակիցների ջանքն ու գործողությունները նրանց առօրեայի հանգերգն էին։ Միաժամանակ նրանք ցանկացած միջավայրի կենտրոնն էին, ավելին՝ միջավայր, տրամադրություն և եղանակ պայմանագորողները։ Յավելէք գրական, առհասարակ ընկերային-մտավոր կյանքում նրանց ճանաչումը, անգամ հոչակը, և պատկերացնելի կլինի, թե որքա՞ն շատ էին նրանց ընկերությունն ու բարեկամությունն ըստ ամենայնի վայելել ցանկացողների լեզէոնները։ Այս շրջարկում բնականաբար բանակ պիտի կազմեցն նաև Զապելի ու Հրանտի երկրպագուներն ու երկրպագուները, անհույս և յուսախանձ սիրահարներն ու սիրահետողները։ Ահա մի քանի ակնհայտ վկայություն՝ քաղված ժամանակակիցներից։ Նախ՝ Զապելի շուրջ. «Այնպես՝ ինչպես հասկանում ենք մենք ընդունված ձևով «գեղեցիկ» բառը... գեղեցիկ չէր նա։ Եվ մի գաղափար տալու համար նրանից, ոչինչ չեմ գտնում ավելի հարմար, ավելի դիպուկ, քան ձմռան տանձը... Անողորկ, անձև, կարծես ձմրթված, սակայն մինչև խոր ձմեռ յավերժ թարմ-կանաչ, հյութեղ ու անուշ քաղցրահոտ տանձը, որի համն ու հոտը, զգլխիչ բոյրը, հյութեղ զովությունն ու կանաչ գույնը ունենալու համար, մրգաստանների հպարտ դշխուհի դյուշեսն անգամ ուրախությամբ կտար իր ողորկությունն ու հպարտ տեսքը և, համոզված եմ, մի բան էլ ավելի... եթե ունենար»։ Հետևաբար «...անթիվ էին, իրօք անհամար, դաստիարակչուհու հրապոյրներին հետամուտ սիրաբաղձ սրտերը, որոնք բանտարկված մնացին նրա սրտի բավիղների մեջ, ինչպես խեղճ ճանճը մամուկի ցանցում... մինչև որ մեռան»<sup>21</sup>։ Այժմ Հրանտի մասին. «Ահա ամենագեղեցիկ գլուխներից մեկը, որ երբեկից տեսած լինեմ ես։

21 Վ. Փափազյան..., էջ 67-68, 66-67:

Ուղիղ սանրված, դեպի յօնքերը իջնող մագերը սահման դնելով կարծես իր լայն ճակատին, մի արտասովոր գեղեցկություն էին տալիս այդ դեմքին... հարյուր տոկոսով ուլտրա-բյուրոկրատ այդ կերպարանքին տալիս էին նույնպես հարյուր տոկոսով առինքնող հմայքը ինչ-որ բարձրորակ ինտելիգենտի»<sup>22</sup>: Եվ ինքնին ենթադրելի է, որ այս «աղուոր տղայի» համար «...աղջիկները հոգի կուտային...»<sup>23</sup>: Ինչպես բնորոշ է անհատականություններին, նամանավանդ արվեստագետ անհատականություններին, Զապելն ու Հրանտը այնքան դյուրին «մարսելի» չէին: Զապելի «տարրեն դյուրազգած ու հպարտ»<sup>24</sup> խառնվածքը, ծայրագնա դրսեորումներ ունեցող արժանապատության զգացումն ու ըմբռնումը, հախուռն ու պրագմատիկ սկիզբների շարունակական ներքին բախումները, Հրանտի արտաքուստ Փլեգմատիկությունը, ամէն ինչում պրագմատիզմի տիրապետությունը, միաժամանակ կոմունիկաբելության երբեմնի հրավառությունները, որքան շփումները, յարաբերությունները անհրաժեշտ ու փնտրելի էին դարձնում նրանց հետ տարրեր մակարդակներով յարաբերուողների, միջավայրի համար, նույնքան էլ դժվար, երբեմն բարդ: Այս միշտ կիզակետում գտնուող կամ ակնկալուող անհատականությունները, միշտ շրջապատի կողմից համակ ուշադրության արժանացողներն այնուհանդերձ, հակառակ իրենց առինքնողության, հմայքի, մարդկանց հետ շփվելու, մտերմություն հաստատելու, մարդկանց մտերմացնելու չնորհի, հաճախ էին ապրում մենության, միայնակության, մենակ լինելու անձկությունը, որը ձգվում էր մինչև դրամա (ինչպես իրենք են արձանագրում նամակագրության մեջ իրենց ինքնադիմանկարներում), կանխազգալով այդ դրամայի այնպիսի հանգուցալուծում, ինչն արմատականորեն պիտի փոխեր իրենց գոյությունը: Այս դրաման ստատիկ վիճակից դուրս է գալիս Զապել-Հրանտ սիրո պատմությամբ: Ուրեմն նրանց սիրո պատմությունը, կրկնենք, այս ստեղծագործական գերբնագրի նախապատմությունն է, ստեղծաբանական առանցքը: Ասատուրների սիրոյ, յարաբերությունների պատմությունը տվյալ պարագային սահմանափակում ենք ժամանակագրական այն խորապատկերում, որը ներառնում է նրանց ծանոթությունը, փոխադարձ համակրանքը, զգացմունքի հայտնաբերումը, սիրո խոստովանությունը, զգացմունքի փոխադարձումը, յարաբերությունների զիգզագաձև ընթացքը: Այսինքն, բնականաբար, սահմանափակվում ենք նամակագրության, ընթացքի և յանգուցալուծման տիրույթներում:

Հետեւնք այդ պատմությանը: Զապել-Հրանտ ծանոթությունը սկսվել է 1879-ից: Հրանտը «Դիմաստուերներ»-ում հիշում է. «Զապել Խանճյանի անունը 1879էն ի վեր լսած էի հաճախ: Իր պերճախոսության և հանրօգուտ գործունէության համբաւը ծանոթ էր ինձի»<sup>25</sup>: Բնական է, որ Զապելի պես գրագետ կանայք սակավ էին արևմտահայ միջավայրում ու հետաքրքրության, ուշադրության կենտրոնում պիտի լինէին: Այս հեռակա ծանոթությունը տակազին չէր հուշում յարաբերությունների որևէ մերձեցում, մանավանդ որ Զապելը ա-

22 Նովն տեղում, Էջ 63-64:

23 Գր. Զօրիսապ..., հոտ. 2-րդ, Էջ 453:

24 Թ. Ազատյան..., Էջ 9:

25 Տե՛ս Հրանտ Ասատուր, «Դիմաստվերներ», Կ. Պոլիս 1921, Էջ 265:

մուսնությունից հետո երկար ժամանակ ապրում է գավառում: Թեև Հրանտը հետեւ կում է նրա գործունչությանը, սակայն սա ընդամենը մտավորականի գործին տեղեակ լինելու հասկանալի հանդամանքով էր պատճառաբանվում, որևէ առանձնակի, հատուկ վերաբերմութիւն արտահայտություն թեր: Դիպվածը, նախախնամությունը այս հեռակա ծանոթությունը պիտի փոխէին անմիջական յարաբերությունների տաս տարի անց՝ 1889-ին, երբ Զապելը գավառից Պոլիս է վերադառնում: Աւելին, դիպվածը Զապելին ի մոտո ճանաչելու բուռն ցանկություն, ըղձանք է առաջանում. «Այդ տարին, (նկատի ունի 1889-ը՝ Գր. Հ.) Օրիորդ Եվա Հազարյան, գիշեր մը, Պոյաճի գյուղի մեր տունը քըոջս այցելության եկավ, Օրիորդ Մառի Մյուհենտիսյանի հետ: Հետո, ամենքս միասին, լուսնի լույսին, պտույտ մը ըրինք... Եվա Հափշտակումով խոսեցավ իր սրտակից բարեկամուհիին Զապելի մասին... այնքան անսպառ եռանդով գովեց իր բարեկամուհիին մտքի ու սրտի հատկությունները որ արծարծեց իմ մեջս ալ զինքը ճանչնալու ջերմ ըղձանք մը»<sup>26</sup>: Հիրավի վիպապաշտ հանդամանքներում հեռակա ևս մեկ ծանոթություն, այս անդամ արդեն անվերապահորեն հանդիպելու, շփվելու որոշումով: Առիթը չի ուշանում, տեղի է ունենում նրանց առաջին հանդիպումը<sup>27</sup>. «Ճշմարիտ հուզումով մըն էր ուրեմն որ ներս մտա իր տան սրահեն... Սկսանք խոսիլ, իբր թե հին բարեկամներ ըլլայինք, տարիներու բացակայութենէ ետքը գիրար նորեն գտնող հին բարեկամներ: ...Եվ երբ հեռացա այդ սրահեն, անկեղծ հարգանքով համակված էի հանդեպ այդ հայ կնոջ, որ իբր գրագիտուհի արդեն հանրածանոթ էր ազգին մեջ»<sup>28</sup>: Ակնհայտ է, որ միանդամից փոխադարձ հասկացողությունը, հարգանքը, անմիջապես բարեկամության հաստատումը, համակրանքը միմյանց նկատմամբ պիտի շարունակվեր: Շատ էին նրանց ընդհանրությունները՝ նույն հետաքրքրությունները, նույն մտածումները, հոգևոր-մտավորական կյանքի նույն մտահոգությունները, նույն գեղարվեստական ընկալումները, գեղագիտական հայացքները, սակայն նրանց երկրորդ հանդիպումը տեղի է ունենում բավականին ուշ: 1891-ի դեկտեմբերին ի նպաստ «Ազգանվեր Հայուհյաց ընկերության» տրվելիք պարահանդեսի կազմակերպելուն աջակցելու համար Հրանտը Հրավիրվում է Մյուհենտիսյանենց տուն. «Հոն էր նաև Սիպիլ, զոր երկրորդ անդամ կը տեսնեի»<sup>29</sup>: Ի դեպ այս փաստը հետաքրքիր է նաև այն առումով, որ դարձել է Հրանտ Ասատուրի նորավեպերից «Պարահանդես»-ի, ճիշտ է ոչ ուղղակի, անմիջական, խթաններից, ազգակներից մեկը<sup>30</sup>: Այնուհետև հանդիպումների հաճախականությունը մեծանում է՝ Տիգրան Կամսարականի առաջարկու-

26 Նույն տեղում, Էջ 265-266:

27 Զապելի և Հրանտի առաջին համադիպման տարեթիվն ուրեմն 1889-ն է, թեև Հրանտը «Դիմաստուերմեր»-ում հիշում է, թե իրեն առաջին անգամ Զապելին ներկապարել է Լևոն Բաշվալար 1890-ի հունիսան մի որբաք օր Հոմ Սքովի տարեկիցի հանդեսին (Դիմաստուերմեր..., Էջ 265), որին հաջորդում է հիշողությունը Եվս Հազարյանի իրենց այլի գալու, Զապելից խոսելու մասին, ինչը տեղի է ունեցել 1889-ին: Այս այցելությունից հետո են նրանք առաջին անգամ հանդիպել: Հավանաբար 1890-ը կամ Վրիփակ է, կամ Հրանտը հետագայն տարեթիվը շիշոթել է:

28 Նույն տեղում, Էջ 266-267:

29 Նույն տեղում, Էջ 275-276:

30 Տե՛ս Արաքս, «Պարահանդես», Մասիս, Կ. Պոլիս 1892, Էջ 95-103:

թյամբ Զապելը դառնում է Զոհրապ-Հրանտ Ասատուր-յան գրական «Մասիս»-ի առաջին աշխատակիցը 1892-ին: Մեկնելով վերջին երկու փաստերից (Զապելի հետ երկրորդ հանդիպում և համատեղ աշխատանք «Մասիս»-ում) կարող ենք եզրակացնել, որ Հրանտը 1891-ի վերջերին 1892-ի սկզբներին արդեն սիրահարվել էր Զապելին, ինչի վկայությունը գտնում ենք նրա առաջին նամակում (թվագրված 1895-ի մարտի 23): «...չորս տարի թաքուն պահված սեր մը...» (81), սա նաև նրանց սիրո պատմության մեջ առաջին խոստովանությունն է, զգացմունքի հայտնաբերումը և ավետումը փոխադարձաբար: Ահավասիկ. «...երեք չորս տարվան թաքուն լոիկ պաշտումիս մեջ կը խոստովանեի ես ինձի թե դուն էիր այդ էակը, ամենեն բարձրը, ամենեն գերագույնը», – գրում է Հրանտը (83): «Այնքան վարժված եմ շուրջս անսիրտ, անձնասեր, բիրտ մարդիկ տեսնելու որ կը մտածեմ թե երա՞զ մըն ես դուն արդյոք, այն երազներեն մին, զոր մարդ իր սրտին մեջ կը ստեղծե ու մինչև գերեզման չկրնար բաժնվիլ անկե», – կարծես փոխադարձում է Հրանտին Զապելը (91): Զապելն ու Հրանտը ծանոթության, համակրանքի, համագործակցության բովով անցնելուց, զգացմունքը հայտնաբերելուց հետո մարդկայնորեն ունենում են նախ իրենցից դա թաքցնելու, թուլացնելու, չեզոքացնելու երկարատև շրջան: Խնդիրը պարզ էր, – կար հասարակական կարծիք, զոհրապյան բնորոշումով՝ պայմանագրական արգելք, կար նաև բարոյական լրջագույն պատնեշ երկուսի համար: Զապելն ամուսնացած էր, երեխա, ամուսին ուներ, մեկը չէր կարող թողնել ընտանիքը, մյուսը չէր կարող ընտանիք քայլայելու առիթ գառնալ, ուրովհետև երկուսն էլ բարոյական վիթխարի պատասխանատվության, առաքինության կրողներն էին: Սա նրանց կյանքի, գոյության անբեկանելի սկզբունքն էր: Բնական է, որ այսպիսի պատնեշը, արգելքը ծայրահեղ պրկման պիտի հասցներ նրանց հուզագիտարհն ու ներաշխարհը: Սա նրանց սիրո պատմության, միաժամանակ այս նամակագրություն-գեղարվեստական գերբնագրի վիպական դրաման էր, սակայն հարաբերությունների նախադրությունը պիտի հորձանք ունենար սիրո խոստովանության և զգացմունքի փոխադարձման երկարատև և բավականին բուռն արտահայտություններով, ինչը սկսվում է 1895-ի մարտ ամսից: «Երեք ամիս է որ իրարու խոստովանած ենք մեր սերը...», – գրում է Հրանտը մայիս 24-ին (190), – «Կյանքիս ամենեն տիսուր, ամենեն անհրապույր ու ամենեն ձանձրալի թվականին հանդիպած էիր, այն ժամանակին, ուր կին մը ամեն բանե հուսահատած, ինքզինքեն զզված, աշխարհի գեմ գառնացած՝ ոչ սիրվելու հավատքը կրնա ունենալ ոչ ալ սիրելու քաջությունը: Եվ դուն Հրանտս, քու անկեղծ և անշահախնդիր սրտովդ իմ սիրոս տաքցուցիր, հուսահատություններուս հաղթեցիր, և կը կենդանացնես այսօր իմ մեջս հավատքը ամեն ազնիվ ամեն անկեղծ բաներու նկատմամբ», – ընդհանրացնում է Զապելն իր նամակներից մեկում (233):

Արդեն նշեցինք, որ ժամանակագրորեն սույն նամակագրությունը ընդգրկում է 1895-1898 թվականները: Ստեղծագործական նախապատմության, ստեղծաբանական ազդակների քննության առումով կարևոր էին Զապել-Հրանտ ծանոթության, համակրանքի, զգացմունքի հայտնաբերման, սիրո խոստովանության և փոխադարձման վավերական իրողությունները, որոնց անդ-

**բաղարձանք:** Սակայն սույն գեղարվեստական գերբնագրի համար ստեղծագործական պատմության տեսանկյունից պակաս կարեոր չեն նաև այս սիրահար զույգի 1895-1898 թվականների ստեղծագործական համագործակցության այն փաստերը, որոնք իրենց անդրադարձն են ունեցել նամակագրության մեջ։ Դրանք երկուսն են՝ 1898-ին «Մասիս» օրաթերթի Հրատարակությունը Զոհրապի հետ, ինչը ինքնին Աղետի շրջանում քաղաքացիական-մշակութային կեցվածքի բացառիկ օրինակ է հայ նոր գրականության պատմության համապատկերում, ինչպես նաև վարժարանների համար համահեղինակությամբ ստեղծված նրանց աշխարհաբարի և գրականության դասագրքերը։ Այս երկու փաստերի զանազան արտահայտություններ նամակագրության շրջարկում առկա են և թերևս այն եզակի իրողություններից են, որոնք մի տեսակ արտածվում են նրանց հարաբերությունների, փոխադարձ գնահատում-մեկնությունների, վիճակների պատումային շերտից։ Այս խորքին, կարծում ենք, տեղին է անդրադառնալ նրանց սիրային հարաբերությունների զիգզագաձև ընթացքի խորապատկերին՝ ընդհանուր գծերով։

Փոխադարձ բավականին բուռն զգացմունքը պիտի տարածվեր, սաստկանար։ Սիրային այս հարաբերությունը երկուստեղ ֆիզիկական, հոգեկան ուժերի հարություն էր, ինչը քանից Զապելն ու Հրանտը իրենց նամակներում շեշտում էին։ Բնականաբար արագանում էր նրանց ժամադրությունների, տեսակցությունների հաճախականությունը, մտերմությունն ու սերը ձեռք էին բերում նոր որակ ու բովանդակությունն, համնում այն հանգրվանին, երբ հատուկ ժամադրությունները, հանդիպում որոնելու առիթները, միմյանց անդամ հեռվից տեսնելու ակնկալիքով պատրվակներն այլևս զորու չէին փարատելու նրանց անընդհատ քով-քովի, միասին լինելու չէ թե բաղձանքը, այլ գոյակերպությունը։ «Ալ այսուհետև բնավ ժամադրություն մը չպիտի տամ քեզի, դուն ինքզինք եկո՛ւր երբ որ կ'ուզես, ապահով ըլլալով որ միշտ սիրալիր ընդունելություն մը պիտի գտնես ամուսնուս կողմանե» (156)։ Բուռն սիրային հարաբերությունները տարուբերվում են տեսլականի, երազի և իրականության, վարանումների և համոզումների, հուսահատության և ոգեստության, մեկի և մյուսի կյանքի գժվարությունների, թնջուկների, միջավայրի հետ ունեցած առնչությունների առիթով առաջ եկած նյարդայնության, տագնապի, անհանգստության միջև։ Նրանք իրենց համար անընդհատ կրկին ու կրկին հայտնաբերում էին, որ զգացմունքի ուժը, թափը ոչ մի պարագայի պատճառով չի թուլացել, նվազել, դարձել առօրեական, սովորական ինչ-որ բան։ «...իմ անուշ Զապելս, ես միշտ առջի օրվան պես հրայրքով կապված եմ քեզի...» (246)։

Ստեղծագործական պատմությունն ամփոփելիս հարկ է անդրադառնալ, թե ինչո՞ւ էին նրանք միմյանց նամակներ գրում և ինչպէ՞ս էին փոխանակում այդ նամակները։

Սկսենք առաջին հարցումից։ Զապելի և Հրանտի հաճախակի, կարելի է առել պարբերական հանդիպումները չէին բավարարում միմյանց հետ անընդհատ հատ հաղորդակցվելու նրանց կարիքը, միասին լինելու նրանց մղումները։ Միաժամանակ նամակներ գրելը հարաբերությունների խորքում ստեղծում էր միասին լինելու անընդհատություն, շարունակելիություն, ինչն այնքան անհ-

բաժեշտ էր երկուսի համար: Մյուս կողմից՝ նամակները հնարավորություն էին ընձեռում ասելու այն, ինչը, որպես կանոն, չէին հասցնում միմյանց հաղորդել: Սա ոչ այնքան ուղղակի իմաստով պետք է հասկանալ, որքան իրենց ապրումները, խոհերը, մտածումները, զգացումները փոխանցելիս հարակա անբավարարվածությամբ, — թե կրկին չկարողացան ասել, բացատրել, ցույց տալ այն, ինչ ցանկանում էին, ինչ նախօրոք մտմտացել էին, թե կրկին բաց թողեցին մի շատ էական, կարևոր բան, թե նորից «...չկրցա պարզել քեզ բոլոր այն խանդաղատանքը որ քեզ համար կա ներսս...», թե շատ բան մոռացա ասել, թե «...տղու պես կը խոսեի...» (84), թե հանդիպումների ժամանակ նրանք դյութված են լինում միմյանցով և նամակներն են միայն ճշմարիտ ու ըստ ամենայնի բացահայտում իրենց ապրումներն ու վիճակները: Նույնն է պարագան Մուրացանի մոտ, ահա ինչ է գրում նա Ոսկիին (հիշեցնենք սոսկ, որ Մուրացանի դեպքում իրողությունը միակողմանի է, այսինքն՝ գործ ունենք նամակի, ոչ թե նամակագրության հետ). «Ես հո քեզ նամակ չեմ գրում. ես փորձում եմ գրի վրա առնել իմ սիրատանջ հոգու զեղմունքը...»<sup>31</sup>: Ապա և՝ միմյանց նամակներ գրելը, նամակագրությունը ապրված պահերի, հանդիպումների, միմյանց հետ անցկացրած ժամանակի վերստեղծում էր, իրարից հեռու գտնվելու ժամերի, օրերի տառապանքը մեղմել էր: Եվ վերջապես՝ միակ զբաղումը, որ լցնում էր նրանց ժամանակը հանդիպումից հանդիպում: «Միակ զբաղումը ուրուն կարող կզգամ ինքզինքս, քեզի հետ խոսիլն է գոնե գրով...»<sup>32</sup>:

Զապելն ու Հրանտը այս նամակագրությունը ներփակող նամակները փոխանակում էին երկք ձևով: Առաջին ձևը ուղղագծորեն առնչվում է՝ ինչո՞ւ էին նրանք նամակներ գրում հարցումին, որին արդեն վերևում անդրագարձանք:

Նամակները փոխանակում էին հանդիպումների, ժամագրությունների ժամանակ, այսպես ասած, առձեռն միմյանց էին հանձնում: Նամակներ փոխանակելու երկրորդ, տարածված եղանակը Աղրինե Տոնելյանի՝ Զապելի դստեր և կամ հավատարիմ սպասուհու միջոցով էր: Փոխանակման երրորդ եղանակը հետաքրքրաշարժ դիպաշար ունեցող սիրավեպերին է նմանվում: Զապելն ու Հրանտը «մշակել էին» պայմանական նշանների մի համակարգ (օրինակ պատշգամբի վարագույրի գոց կամ բաց լինելը), որի միջոցով հաճախ Հրանտը Զապելի տան շեմից սպասուհու կամ նույն Աղրինեի միջոցով փոխանակում էր նամակները:

Առաջին նամակներից մեկում Հրանտը, ընդհանրացնելով իր և Զապելի զգացմունքները, ապրումներն ու հարաբերությունները, գրում է, թե այդ սերը տալիս է «...աննյութական հեշտություն...» (82): Անշուշտ այս հանգամանքը պայմանավորված էր կենսական վիճակի շարունակական փոխակերպմամբ ստեղծագործական ակտի: Սերը, նրանց ինտիմ հարաբերությունները զուգահեռ ընթացք ունեին՝ յուրաքանչյուր հանդիպում, ցանկացած հարաբերու-

31 Մուրացան, «Երկերի ժողովածու լոր հատորով», Բան. 7-րդ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1965, էջ 358:

32 Կրկին նույն պարագան է Մուրացանի մոտ: Ոսկիին հասցեագրած նամակներից մեկում նա գրում է. «Երբ պարապա ժամեր եմ գտնում մտածում եմ քեզ վրա, իսկ երբ դադարում եմ մտածելուց, այն ժամանակ սկսում եմ նամակ գրել քեզ»: Նույն տեղում, էջ 169:

թյուն միաժամանակյա տեքստային, այսինքն՝ գեղարվեստական լուծում էր ստանում: Տեղի էր ունենում անընդհատ փոխաձևություն՝ այդ հարաբերությունները արվեստի տիրույթներում ավարտաբանելով: Իրենց զգացումները, ապրումները, հանդիպումները, ներաշխարհային վիճակները նամակներով պատմելու մղումը սոսկական արձանագրություն չէր, այլ դրանց ստեղծաբանական հորինումը: Աչա այս հորինման սուբստանցը նամակագրությունն իր սոսկական արտահայտությունից փոխաձևում է գեղարվեստական համակարգի: Հետևաբար Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրությունը ոչ թե գրականության պատմության մեջ հայտնի շատ ու շատ նամականիների կամ նամակագրությունների նման ունի գեղարվեստական հատվածներ (անկախ ծավալից), դրաւերումներ, արտահայտություններ, այլ՝ ամբողջական գեղարվեստական համակարգ է:

Զապելի և Հրանտի նամակների տեսքով գրաբանական ակտը իրապես նիրկեի ընտիր բնորոշմամբ՝ «...չնչել է գրելու միջոցով»<sup>33</sup>: Նույնն է պարագան Զապել-Հրանտ նամակագրության բովանդակյին պլանին համանման Մուրացանի, Տերյանի, Ռուբեն Սևակի, Արտաշես Հարությունյանի շատ նամակներում, Եղիայի և Ինտրայի բոլոր նամակներում:

Հորինման սուբստանցն ունի գրաբանական ակտի միմյանց պայմանավորող, միյանց փոխլրացնող երկու պարտադիր մակարդակ՝ տեքստ և ընթերցում: Հետևաբար նամակագրությունն իբրև գերբնագիր, մետատեքստ իրենից ներկայացնում է տեքստ-ընթերցում անտրոհելի ամբողջություն, տվյալ դեպքում՝ խնդրո առարկա գեղարվեստական համակարգի պայմանավոր: Զապելի նամակ-տեքստն օրինակ ամբողջանում, «Ներփակ» ավարտվում է Հրանտի ընթերցումով (այսինքն՝ մեկնությամբ, դիտանկյունների, տեսանկյունների վերլուծություններով): Հրանտի նամակ-տեքստը՝ ամբողջանում, ավարտվում է Զապելի ընթերցումով: Այսպիսով յուրաքանչյուր նամակ կազմաբանորեն տեքստընթերցում է թե՛ ինքնին գրաբանական ակտի անմիջական մասնակիցների, թե՛ միջնորդավոր մասնակիցների՝ լայն առողջությունների համար: Այսօրինակ նամակագրության համար սա թերևս պարտադիր կանոն է: Պատահական չէ, որ և՛ Զապելը, և՛ Հրանտը նամակագրության մեջ քանից շեշտում են, թե նամակները կարդում են բազմիցս, ինչը միայն հարաբերություններից արտածված «հագուրդ առնելու» թելադրանքը չէ անշուշտ, այլ՝ նամակ-տեքստը նամակ-ընթերցմամբ ավարտաբանելը: Տեսեք թե այս հանգամանքը ինչպես է նկատել և ինչպես է սրան անդրադարձել Արտաշես Հարությունյանը Զապել Եսայանին ուղած նամակներից մեկում: «Եթե քիչ մը ուշացա այս անգամ ձեզի գրելու, պատճառն այն էր որ ուզեցի... զայն ավելի շատ անգամներ կարդացած ու ձեր վրա ավելի հաճախ խորհած ըլլալու համար... ահա կը գրեմ ձեզի նորեն... հարցումներով, կրկնություններով, գրաբանություններով լեցուն»<sup>34</sup>: Ակնհայտ է ուրեմն, որ հորինման ակտը դառնում է այդպիսին, երբ առկա են նամակ-տեքստը և նամակ-ընթերցումը միասին:

33 Տե՛ս Ռайнեր Մարիա Ռիլե «Письмо к другу (A une amie)», գրողի «Записки Мальте Лаурисда Бригге» (Москва, Изд. «Известия» 1988, Էջ 211).

34 Տե՛ս «Բագին», Պելոտք, 1962, սեպտեմբեր, Էջ 31-32:

Նամակագրությունն իբրև գեղարվեստական համակարգ պայմանավոր է նաև այն հանգամանքով, որ հարաբերությունների ընդմեջից արարվում է եղիայի բառով «վերակենցաղությունը»<sup>35</sup>: ԶԵ՞ որ ինչպես Եղիան էր պարբերաբար հանդիպում Սրբուհուն, այնպես էլ Զապելն ու Հրանտն էին միմյանց հանդիպում: Եվ իրենց բնորոշ «անկեղծության շեշտ»-ով<sup>36</sup> բազմիցս արձանագրվում է, թե՝ «Քու քովդ գտնված վայրկյաններուս մեջ՝ Հրանտս, կը հավատամ թե կյանքը կարծվածին չափ անարդար չէ. որովհետև ի՞նչ տառապանք կրած եմ ես որ արժանի ըլլամ այսքան մեծ երանության» (106): Ուրեմն արդյոք ի՞նչն է խթանում այս շոշափելի երջանկությունը, այս «այլասեր գգացումը», «Հզոր գգացողությունը» (Հրանտի բնորոշումներն են (120)) դարձնել գրաբանական ակտ: Անշուշտ հարաբերությունների «վերակենցաղությունը» հայտնաբերելը: Ինչն էլ նամակի նորմատիվ գրաբանական ակտը փոխաձեռում և դարձնում է գեղարվեստական գրաբանական ակտ<sup>37</sup>:

Համահեղինակությամբ ստեղծված այս ստեղծագործության մեջ գգացմունքի անընդհատ սաստկացման, թեժացման լեյտմոտիվային շրջապտույտը նույնական հանգում է «վերակենցաղությանը»:

Ինչպես նկատելի է շարադրանքից՝ նամակագրության զանազան խնդիրներին անդրադառնալիս հաճախ կիրարկում ենք գեղարվեստական ստեղծագործությունն, երկ, գերբնագիր արտահայտությունները, ասել է թե՝ բնավ զանց չառնելով նամակի, նամակագրության նորմատիվ գործառությունները, այս դեպքում կարեւորում ենք՝ մեկնելով նյութի առարկայական բնույթից, նամակագրության գեղարվեստական ստեղծագործություն լինելը: Ավելին՝ ոչ թե նամակագրության գեղարվեստական արժեքը մատնանշելու, արվեստական որակներն ընդգծելու համար, այլ միշտ նկատի ունենալով, որ Զապել-Հրանտ նամակագրությունը գեղարվեստական ամբողջական, ավարտուն, միասնական, մեկ երկ է:

Այս նամակագրությունը կազմաբանությամբ, կառուցվածքով, պոետիկայով հարև և նման է վեպի, վեպ-նամակագրություն է, ինչին ի տեղի ամենայն մանրամասնությամբ կանդրադառնանք: Առայժմ հարկ ենք համարում արձանագրել, որ սույն գերբնագիրն այս առումով առանձնանում է մեզանում ստեղծված էպիստոլյար ժառանգության համածիրում, որոնք ունեն գեղարվեստական արժեք: Եվրոպական էպիստոլյար ժառանգության մեջ, որոնք գեղագիտական-գերարվեստական հսկայական արժեք ունեն<sup>38</sup>, Զապել-Հրանտ նամակագրության անալոգը մենք չգտանք: Մեր գրականության համապատկերում, ինչպես ար-

35 Տե՛ս Հրանտ Նազարյանց, «Եղիա Տեմիրճիպաշլանի սիրային նամակները», Կ. Պոլիս, Տպագրություն Տեր-Ներսեսյան, 1910, էջ 16:

36 Գր. Զոհրապատի, «Սիպիլ», էջ 416:

37 Պատահական չե, որ նամակագրության շրջարկում սիրելու իբրև «տարօրինակ հանգամանք»-ի, «անձնապաշտպանական բնագդը», «անձնապատության զգացումը» «հզոր զգացում»-ով փոխելը «վերակենցաղություն» է դատմում երկուսի կողմից գրաբանական ակտի բույն պահանջի համախակի մոդումներով:

38 Խորը այստեղ չի վերաբերվում օրինակ Գյոթե-Շիլլեր կամ Ռիլկեի «Մի երիտասարդ բանաստեղծի» վերտառությամբ նամակագրություններին, որոնք արվեստի, գեղագիտության, գրականության բազմազան խնդիրներ արձարժող գեղարվեստական բարձրարժեք հուշարձաններ են:

գեն նշվեց, համանման գործերը միակողմանի են, այսինքն ունենք նամակներ, բայց ո՞չ նամակագրություն։ Եվ այս առումով միանգամայն իրավացի է Հրանտ Նազարյանցը, երբ Եղիայի նամակների առիթով գրում է, թե Եղիան «...կը սիրեր Կինը իր բացակայության մեջ... Հեռավորությունն էր որ կ'ստեղծէր գեղեցկությունը իրեն համար»<sup>39</sup>։ Ըստ էության նույնն է պարագան Տերյանի, Մուրացանի, Սևակի, Ինտրայի գեպքում։ Այստեղ իրեւ նույնական շարքի արդյունք չենք կարող դիմել Եսայան-Հարությունյան նամակագրությունը, որն իր անուրանալի գեղարվեստական արժեքով այնուհանդերձ միասնական ստեղծագործության, համահեղինակությամբ գրված երկի կազմաբանություն չունի։ Ապա և իր բովանդակությամբ, Հղացքային շրջանակով այլ արտահայտություն է՝ ավելի մոտ Ոիլկեի նշված նամակներին, Հարությունյան-Բարգեն Պոտոսյան նամակագրությանն օրինակ։ Վերջապես թվարկված հեղինակների, նամանավանդ Եղիայի նամակներում, գերակշռող է նամակագիրներից մեկի «Եսակենտրոնությունը»։ Դրանք ավելի շատ մենախոսություններ են, որ մի գեպքում հանգում է Նիրվանային (Եղիա), մի գեպքում՝ Իռենային (Ինտրա), մի գեպքում, տարանջատվելով հասցեատիրոջից, օրհներգում կնոջը, սերն առհասարակ (Տերյան, Սևակ, ավելի սակավ՝ Մուրացան)։

Զապել-Հրանտ նամակագրությունը պարտադիր հանգում է կոնկրետ հասցեատիրոջը։ Դրանք երկխոսություն են և չեն պատմում ուրիշ ոչինչ, բացի կոնկրետ Զապելի ու Հրանտի մասին։ Եթե Եղիայի համար Արքուհին ընդամենը միջոց է սերն առ Նիրվանա արտահայտելու և տվյալ գեպքում հասցեատերը պարագայական է, ըստ էության այդ նամակներն ուղղված են Նիրվանային, այս համանունությամբ Ինտրայինը՝ Իռենային, ընդհանրապես կնոջ և սիրոտարփողում են, ապա Հրանտի համար նամակը միջոց է սերն առ Զապել արտահայտելու, այն ուղղված է միայն ու միայն Զապելի հակ Զապելին, իսկ Զապելի համար միջոց է սերն առ Հրանտ արտահայտելու, նամակն ուղղված է միայն ու միայն Հրանտին։ Կարծում ենք, որ այս հանգամանքը կարեւորներից է համահեղինակությամբ վեպ-նամակագրություն ստեղծելու առումով։ Զմուանանք, որ Զապելի «Աղջկան մը սիրոտը» վեպը զուտ անձնական կյանքի փորձառության գեղարվեստական անդրադարձն էր (այս գործին անդրադառնալիս Օշականը «Համապատկեր»-ում խնդիրը չափազանց կարեւորում է<sup>40</sup>), Հրանտի սակավաթիվ նորավեպերը նույնպես բացառապես անձնական կյանքի գրականացումներն են։

Մինչ նամակագրություն-գեղարվեստական գերբնագրին կամ վեպին անդրադառնալը հարկ է մանրամասնել այս հուշարձանի կառուցվածքային, ժամանակագրական առանձնահատկությունները, ինչպես նաև ներկայացնել նամակների ժամանակագրական հաճախականությունը։

Հրանտ Ասատուր-Զապել Ասատուր նամակագրությունը ներառնում է 1895, 1896 և 1898 թվականներին գրված նամակները։ Մի ժամանակաշրջան երկուսի կյանքում, որը վերջնականորեն ծջրտեց և ուղղորդեց ոչ միայն նրանց

39 Նազարյանց..., Էջ 10:

40 Տե՛ս Օշական..., Էջ 428-429:

ապագա կյանքը, այլև ստեղծագործական, գիտական, մանկավարժական, հանրային գործունեությունը: Մի ժամանակաշրջան, որը նրանց սիրային հարաբերությունների բարձրակետն էր: Ինչպես երկում է, այս շրջանում կա ակտիվ նամակագրության մի ամբողջ տարվա բացակայություն՝ 1897 թվականը: Ինչը մենք հակված ենք բացատրել նախ պատմաքաղաքական իրողություններով, միշտ նկատի ունենալով Աղետը: Ի դեպ կողմնակիորեն այս հանգամանքը հուշում է նաև նամակագրության ժամանակագրական հաճախականությունը: Այսպես՝ 1895-ին առկա է երեսունինը նամակ, որից քսանմեկը Հրանտից, տասնութը Զապելից, 1896-ին՝ ութ նամակ, երկուսը Հրանտից, վեցը Զապելից և 1898-ին՝ երեքը, բոլորն էլ Հրանտից: Ընդհանուր առմամբ ունենք հիսուներեք նամակ, որոնցից քսանվեցը Հրանտից, քսանչորսը Զապելից: Նամակագրության մեջ կան երեք անթվակիր նամակներ՝ երկուսը Զապելից, մեկը Հրանտից:

Այսպիսին է նամակագրության վիճակագրությունը, այս գերբնագրի կառուցվածքային պատկերը: Իհարկե 1895-ի առաստությունը բացատրելի է նաև նրանց հարաբերությունների ճշգրտման, միյմանց ամբողջականորեն հասկանալու, իրենց զգացմունքները ինքնադատելու հանգամանքներով: Եթե երկու խոսքով բնութագրենք յուրաքանչյուր տարվա նամակագրության հիմերը, ապա պետք է արձանագրենք, որ 1895-ը բնորոշ է սիրո փոխադարձ խոստովանություններով, սերն անընդհատ արտահայտելու մղումներով, սիրատենչիկ վիճակների արձանագրություններով, սիրո ապրումի վերստեղծումներով, զգացմունքի ելեջումներով՝ ահազանդ, վերահստատում, իրենց սիրո բացարձակացմամբ, զգացմունքի փոխադարձության շարունակական վերահստատումներով, ոգեսորության, կասկածների, հարաբերությունների պարզաբանման, ապա կրկին ոգեսորության, տագնապների, տարբեր վիճաբանությունների, նորից ոգեսորությունների շրջապույտով: Տարեկերջին նամակները ավելի հանդարտ, վերլուծական են դառնում, ինչը փոխանցվում է 1896-ի նամակագրությանը, որտեղ առկա են նաև գործնական, առօրեական շերտերը՝ միշտ առանցք ունենալով զգացմունքի ելեջումների խորքը: Հրանտ Ասատուրի կենսագրությունից գիտենք, որ 1898-ին նա երկար ժամանակով բացակայում է Պոլսից, ճանապարհորդում գավառներով, հատկապես երկար ժամանակ լինում Պրուսայի շրջանում, ահա և այս տարվա նամակների հիմքը նրա տպագրություններն են, կարուն առ Զապել, ինչպես նաև «ակամա բաժանմամբ» սիրո վերահստատումը:

Կառուցվածքային առումով սույն նամակագրությանը լրացնում են Զապելի օրագրերի պատառեկները, որոնք այս ստեղծագործության հետ միջդրային ուղղակի առնչակցություններ ունեն, ուստի դրանք գետեղված են նամակագրության վերջում:

Հայ և համաշխարհային գրականությունների պատմական ընթացքին ստեղծվել են բազում հիրավի բարձրարժեք էպիստոլյար հուշարձաններ: Ավելին՝ նամակը լայն առումով (նամակ, նամականի, նամակագրություն) իբրև արտահայտման և հաղորդակցության ձև, եղանակ համագրվել է, սերտածել բազմաթիվ ժանրերի՝ վեպ-նամականի, նորավեպ-նամակ, նամակ-պոեմ, դիմանկար-

նամակ և այլն<sup>41</sup>: Ավելին՝ իբրև հղացք, ինչպես բնորոշ է նամակի նախնական բնույթին, էռությանը, միայն արտահայտման և հաղորդակցության գործառությամբ գրված նամակագրությունը ստեղծմանը զուգահեռ, հընթացս ընթերցման տիրույթներում կորցնում է իր նորմատիվ գործառությունը՝ դառնալով ավարտուն գեղարվեստական համակարգ, փոխակերպվում է, ինչպես Զապել և Հրանտ Ասատուրների պարագային, վեպ-նամակագրության: Եվ բացառիկ դեպքերում, ինչպես է կրկին Զապել և Հրանտ Ասատուրների պարագային, նամակագրության առերած գեղարվեստական համակարգը, գրական ստեղծագործությունը, առարկայորեն դառնում է գրողի կամ գրողների ժառանգության լավագույն դրսերումը, ստեղծագործության գագաթնակետը:

Այս առումով անհրաժեշտ է մանրամասնությամբ մեկնաբանել Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրության գեղարվեստական համակարգը: Ստորև կըննարկեն նաև վեպ-նամակագրության ինդրագրության առանցքային մյուս հարցերը, կարծարձվեն միջդրային հարաբերությունները, ինչպես նաև երկի պատկերային միջոցներն ու ձևերը:

Պատահական չէ, որ Զոհրապը, Միպիլի դիմանկարում գնահատելով «Աղջկան մը սիրտը» վեպը, առանձնահատուկ մատնանշում է Զապելի արձակի քնարական շունչը, բանաստեղծական տարերքը, ըստ այդմ՝ կարեռելով անխառն «վեպ-զգացմունքի» գոյությունը մեզանում<sup>42</sup> բացառապես նրա չնորհիվ: Հստ էռության Զոհրապին երկրորդում է Արփիար Արփիարյանը «Գրական հուշքեր»-ում՝ նկատելով, որ Զապելն անուրանալի վիպասանի շնորհ ունի, ինչը սակայն դեռ չի գտել իր լիարժեք դրսերումը<sup>43</sup>: Նոյն «Գրական հուշքեր»-ում Հրանտի քընիկներին անդրադառնալիս երբեմն նկատում է «տրտում բանաստեղծ մը»<sup>44</sup>, այսինքն՝ արվեստագետի, գրողի ներուժ: Այնուհանդերձ թե՛ Զոհրապի, թե՛ Արփիարյանի դատումներում առկա են թեկուզ հպանցիկ, տողերի արանքում թաքնված, բայց նկատելի վերապահություններ Զապելի և Հրանտի գրականության հանդեպ: Եթե Զապելի բանաստեղծությունները հաճախ արձակունակ էին՝ ճապաղ, բռնի, խաթարված, իսկ արձակը հաճախ հիպերտրոֆիկ «չափածոյացված»՝ անհարկի հուզավառություններ, պոետիկական խաթարումներ, ապա Հրանտը բացի «Պատանեկան ներշնչումներ» ուսանավորների միամիտ գրքույկից, մեկ-երկու նորավեպից անդին չէր անցել: Ինչոր պակասող օղակ կար, որը, կարծես, կաշկանդում էր ըստ ամենայնի դրսերելու իրենց ստեղծագործական ունակությունները: Պետք է հանդիպեին նրանք, մտերմանային, սիրահարվելին, այս ընթացքին դառնային համահեղինակներ և համահեղինակությամբ ստեղծեին իրենց լավագույն երկը: Ուրեմն նրանց հարաբերությունները ոչ միայն կենսագրական, այո՛ կարեռ, ճակա-

41 Այս մասին տե՛ս օրինակ՝ “Зарубежная мемуарная и эпистолярная литература”, Ленинград, Изд. Ленинградского университета, 1987, ժողովածում, “A handbook to literature” (Macmillan publishing company, New York, 1986) տեղեկատուի “Epistle”, “Epistolary novel” բառահոդվածը (էջ 181-182):

42 Տե՛ս Զոհրապ..., էջ 415:

43 Տե՛ս Արփիարյան..., էջ 481:

44 Նույն տեղում, էջ 483:

տագրական նշանակություն ունեցան նրանց կյանքում, այլև ճակատագրական էին նաև գրական ժառանգության համար, որովհետեւ նրանց ստեղծաբանական խառնվածքը, եթե կարելի է այսպես ասել, «Համահեղինակային» էր, միայն համահեղինակի հետ նրանք պետք է լրացնեին իրենց ստեղծումի պակասող օղակը, ամբողջությամբ դրսեորեին իրենց գրողական ներուժն ու կարողությունները: Ինչո՞ւ չէ, հավանաբար համապատասխան հեղինակի փնտրությն էր պատճառը, որ նրանք համեմատաբար ուշ հասան ստեղծագործական ճեղքմանը՝ հայ գրականությանը առթելով տեսակի մեջ եղակի վեպ-նամակագրություն:

Զապել-Հրանտ խնդրո առարկա նամակագրությունն ուրեմն դիտարկելի է իրեւ վեպ, վեպ-նամակագրություն, ինչը նշանակում է, թե այս գերբնագիրն ունի ժանրի կազմաբանական-կառուցվածքային խիստ բնորոշ հատկանիշներ, կոմպոզիցիա, արխիտեկտոնիկ կուռ համակարգ: Ընդ որում երկն իր ներժանրային բանարկեսառով հարում է դասական վիպագրության դրսեորումներին, նկատի ունենք 18-ի վերջ-19-րդ դար ժամանակաշրջանն ընդգրկող ստեղծագործությունները: Այս ժամանակաշրջանի վեպին հար և նման սույն երկն ունի իր խիստ որոշակի նախագրությունը, հանգույցը, կոնֆլիկտը, գագաթնակետը, հանգուցալուծումը: Այսինքն՝ դասական վեպի գեղարվեստական համակարգի բոլոր տարրերը:

Զապել-Հրանտ նամակագրություն-վեպը ձևաբանական-հղացքային կառույցով սիրավեպ է հիշեցնում, որի դիպաշարը ներառնում է բազմաթիվ ներքին և արտաքին պատճենների հաղթահարումներ, արկածներ, բաժանումներ, բանսարկությունների, դավերի, կասկածանքների շարք, բարքերի և տարբեր հոգեբանությունների վկայություններ: Այս համարույլը նամակագրության տիրույթներում ագուցված է պատումային փոխկապակցված և փոխլրացնող հոսքերով, զուգահեռ ընթացող սյուժեներով, որոնք կոմպոզիցիոն միևնույն շրջանակի մեջ են հավաքվում, ամբողջական դասնում: Տեղին է այստեղ հիշատակել Ռուբեն Սևակի մեկ կարևոր նկատումներից, որ գտնում ենք Յանիին հասցեագրած նամակում: «Եվ կարելի՞ է երազել սեր մը ավելի սիրատոչոր, քան մերը, վեպ մը ավելի վիպային, քան մերը...»<sup>45</sup>: Հիրավի, հար և նման Ռուբենի և Յանիի սիրո, Զապելի ու Հրանտի սերն ավելի վիպային է, քան վեպը, նրանց սիրային հարաբերությունները, սիրո պատմությունը հրաշալի սիրավեպի է նմանվում: Սակայն ե՞րբ է այդ սերը, սիրո պատմությունը դառնում գեղարվեստական ստեղծագործություն, վեպ: Արդյոք միայն ապրելով, գոյությամբ է կյանքի վեպն ավելի վիպային, թե՞ վերստեղծումով իրեւ արվեստ, իրեւ գրականություն: Անշուշտ երբ անցնում է գրությամբ, փոխակերպվում գեղարվեստական տեքստի: Զապելը և Հրանտը նամակագրությամբ ըստ էության իրենց սերը, սիրո վիպական պատմությունը դարձրին գեղարվեստական ստեղծագործություն, փոխաձևեցին գրականության, վեպի: Նամակագրության նորմատիվ ընկալումներով, ըմբռնումներով Զապել-Հրանտ նամակագրության շրջարկում նամակագրությունը փոխաձևվում է վեպ-նամակագրության սիրո

45 Ռուբեն Սևակ, «Երկեր», Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1985, էջ 431:

Հայտնաբերման, փոխադարձման, անընդհատական սաստկացման, ինքնանորոգման, տագնապների և դրանց փարատման, հարաբերությունների կենսոլորտի անդրադարձման վիպաստեղծ մղիչներով։ Հատ այսմ նախադրությունը՝ զգացմունքի խոստովանությունն է, հանգույցը՝ փոխադարձումը, կոնֆլիկտը՝ արտաքին և ներքին պատճեշները, խոչընդուները, գագաթնակետը՝ միմյանց հանդեպ տածած զգացմունքի անվերապահ հաղթանակը, հանգուցալուծումը՝ կենտրոն-հերոսների հոգեկան անտրոհելիությունը։ Պատումային մակարդակների հիմնական կոլիզիան նույնպես սերը պահպանելն է՝ անկախ բոլոր հակագեցությունների, ահազանգերի և տագնապների։

Վեպ-նամակագրության պատումային մակարդակների ներքնագրային ծավալման համար էական գերակատարություն ունեն Զապելի և Հրանտի պումները, քանի որ այդ հանդիպումներն են պայմանավորում նրանց ապրումների, խոհերի, զգացումների, մտածումների «դիպաշարը» նամակների տեսքով։ Նրանց հեռակա և անմիջական երկխոսությունները, վեճերը, զանազան անցքերի, իրադարձությունների շուրջ, վեպի շրջարկում գործող պերսոնաժների հետ հարաբերությունները նույնպես ածանցվում էին այդ հանդիպումներից։ Հանդիպումները (ժամադրությունները) տեղի էին ունենում Զապելի տանը, հաճախ Գատը-Գյուղ երթևեկող շոգենավում, փողոցներում։ Գատը-Գյուղի շոգենավն, օրինակ, ստեղծագործության կառույցում այն վայրն է, որը նամակագրության հերոսների համար նվիրական և խորհրդանշական գեր ունի. «Ալ նվիրական է ինձի Գատը-Գյուղի այն շոգենավը. չպիտի կարենամ ալ հոն մտնել առանց սրտի անսահման սեղմումի մը, և միշտ պիտի երթամ նստիմ հոն...» (107)։ Զապելին կարծես երկրորդում է Հրանտը. «...կմտածեի ես ալ այն երջանիկ վայրկյաններուն զորս անցուցինք չորեքշաբթի Գատըգյուղի շոգենավին մեջ։ Առաջին անգամ էր որ զուրաց կը տեսնվեինք մեր փոխադարձ սիրույն խոստովանութենե ի վեր» (112)։ Առաջին հանդիպման դրվագը վեպ-նամակագրության դիպաշարային մակարդակում անմիջապես շոշափելիացնում է այս սիրու պատմության խորհրդագոր, գաղտնածածուկ ընթացքը, միաժամանակ միանդիմից ապահովում արկածային սիրավեպերին ներհատուկ ընթերցման հետաքրքաշարժությունն ու լարվածությունը։ Ինչո՞ւ էին թաքուն հանդիպում, ի՞նչ շարժառիթներից դրդված, ինչպէ՞ս էին կարողանում գաղտնի պահել իրենց հարաբերությունները։ Բնականաբար գաղտնիքը այս կառույցի վեպերում միշտ ենթադրում ու պահանջում է գաղտնազերծման բազմաթիվ միջոցներ սերը խափանելու համար սիրահարներին ներհակ ուժերի կողմից։ Եվ ահա դիպաշարը ձեռք է բերում անհրաժեշտ լարվածություն՝ մրցակցության դրվագների (սիրահարներ-նրանց ախոյաններ) շարունակական արտահայտություններով ստեղծագործության շրջարկում։ Գործողության դինամիզմը հավելվում է նաև կենտրոն-հերոսների ներքին հարաբերությունների արտակարգ սրվածությամբ։ Արդյունքում կոլիզիաների այնպիսի հարահոս, ինչը թերևս կարելի է զուգահեռել համաշխարհային էպիստոլյար վիպագրության այնպիսի հուշարձանի հետ, ինչպիսին Շողեր դը Լակլոյի «Վատանգավոր կապեր»-ն է։

Ստեղծագործության շրջարկում և՝ առանձին, գաղտնի հանդիպումները դրսում թե ներսում, և՝ հանդիպումները հասարակության մեջ՝ տարբեր առիթնե-

ըով կազմակերպված հավաքույթների, միջոցառումների ժամանակ և թե՛ մեկմեկու երթուղուն լուս հետեւելը, առանց որևէ բառ փոխանակելու, պարզապես ևս մեկ, իսկ երբեմն գոնե մեկ անդամ տեսնելու համար՝ պատումի լարվածությունն ու դրամատիզմը սաստկացնում են: Ահավասիկ մեկ օրինակ. «Առավոտն՝ կես ժամու չափ թերայի մեծ ճամբուն վրա սպասեցի՝ զքեզ տեսնելու ակնկալությամբ, և չեկար. ծարավ էի անուշ դեմքիդ և աչքերուդ. և ամբողջ օրը զքեզ տեսնելու հույսովը միայն ապրեցա: Հիմա, երկար ատեն դեգերելեն ետքը, վերջապես տեսա քեզի, Զապելս, և սարսուռ մը անցավ բոլոր ջիղերուս մեջն: Հետևեցա արագ քայլերուդ, սրտիս մեջ զգալով խանդադատանքի այն բուռն անձկությունը, զոր ճանչցուցիր ինծի: Լյուքսամպուռ գացի անցնելդ տեսնելու համար և երբ պայիկի մը պես թուար առջեւս, պաշտելի քու սև հագուստներիդ մեջ, խորունկ ցնցում մը բոլոր մարմինս վրդովեց» (139): Պատումային մակարդակների դիպաշարային դինամիզմը ապահովագրվում է նաև կենտրոն-հերոսների ամենատարբեր գործողություններով, զանազան մտադրությունների իրականացման ընթացքի նկարագրություններով: Կրկին խորհրդավորության, գաղտնիի, երբեմն-երբեմն միայն կես ակնարկներով արտահայտված նշագրությունների ձեռք: Այսպես Հրանտը պարբերաբար ակնարկում է ինչ-որ ծրագրի գործադրության, իսկ Զապելն՝ իր ծրագրից անշեղորեն չշեղվելու անհրաժեշտության մասին: Ծովանտիկ-ավանայուրիստական էպիստոլյար վիպագրության այս խիստ բնորոշ հնարանքը ընդելուզվում է հոգեբանական, տպագրապաշտական վեպերի, վիպումի ընդգծված քնարական եղանակի կազմաբանական բաղադրիչներին: Մի կողմից՝ անհայտի, գաղտնիի, խորհրդավորի, մյուս կողմից՝ հույզերի, մտածումների, վերլուծությունների, հոգեվիճակների, տպագրությունների հոսքերը սյուժեն դարձնում են արտակարգ հագեցած, նախապատրաստում հանգուցալուծումը, տվյալ պարագային նշված զոյգի ծրագրերը միավորելով երկի եղրափակիչ հատվածում: Միայն այստեղ է լուծվում «առեղծվածը»: Հրանտը Զապելի և Զապելի դստեր համար տուն է վարձում, ինչը սիրահար զոյգի միմյանց հետ լինելու նախադուռն է, միավորվելու գործականացումը: Նպատակի վերջնական իրագործումն այս վեպնամակագրության համար կրավորական է, քանի որ ընթերցման տիրույթներում սիրավեպի դիպաշարը հանգում է բազմաթիվ պատնեշներ, արգելքներ անցած զոյգի նպատակին: Եվ միայն այս պարագային է բացահայտվում ծրագրերի գաղտնիքը: Պարզվում է, որ Հրանտի ծրագիրը տուն վարձելն էր ու այդպիսով իրեն և Զապելին ամենակարեւոր խոչընդունակ ազատելը (Զապելի ամուսնուն չեղոքացնել, գաղտնի հարաբերությունները լեզալացնել, ձեռնոց նետել հասարակական կարծիքին, այն վերջնականապես հաղթահարել, և սկսել «կրքերի» հանդարտեցման գործընթացը), իսկ Զապելի ծրագիրը՝ Հրանտի ծրագիրը ճիշտ ժամանակին իրագործելը: Այնպես որ պատահականորեն չնշեցինք, թե այս նամակագրությունն ընթերցվում է ամենահետաքրթաշարժ վեպերի նման:

Ընթերցման տիրույթներում հետաքրթությունը պայմանավորվում է ստեղծագործության կոնֆլիկտների, կոլիզիաների հարակա առկայությամբ: Վեպնամակագրության բոլոր կառուցվածքային ներփակ միավորները հագեցած են կոնֆլիկտներով, կոլիզիաներով, չեք գտնի անդամ մեկ էջ, ուր դիպաշարը

Հանդարտ, ստատիկ ձևով ընթանա: Այս առումով նույնպես Զապել-Հրանտ Հարաբերությունների ստեղծագործական-գեղարվեստական անդրադարձը եղակի հուշարձան է:

Կոնֆլիկտներ-կոլիզիաները բնույթով կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ այսպես կոչված արտաքին կոնֆլիկտներ-կոլիզիաներ, որոնք երկի կենտրոնները (Զապելը և Հրանտը) ունենում են միջավայրի, շրջապատի հետ: Դրանք պայմանավորված են հասարակական կարծիքի հետ բախումներով, ընդհարումներով: Եվ, այսպես կոչված, ներքին կոնֆլիկտներ-կոլիզիաներ, որոնք պայմանավորված են կենտրոնների ներանձնային և միջանձնային հարաբերություններով, ներաշխարհի, հոգեբանության վայրիվերումներով, անձնական մտածումների, միմյանց գնահատումների արդյունք են: Ինչպես նկատում ենք, կոնֆլիկտներ-կոլիզիաները ստեղծագործության մեջ ընդգրկուն շառավիղ ունեն, մեծ է նաև նրանց կազմաբանական գործառությունները: Էական է դիտել, որ, այսպես կոչված, արտաքին և ներքին կոնֆլիկտներ-կոլիզիաները հաճախ միացված են հանդես գալիս: Երբեմն հանդես են գալիս փոխներթափանցված՝ շրջարկում գոյավորելով համադրական դրսերումներ:

Առաջին նամակում Հրանտի հռետորական հարցում-արձանագրության մեջ անմիջապես երևան է գալիս վեպ-նամակագրության հիմնական կոնֆլիկտը, կոլիզիան. «Ու կը մտածեի թե ի՞նչու մեր անձերն ալ, մեր գորովին պես, չէին կրնար խառնվիլ իրարու անբաժան, այնպես որ իրարու հետ մնայինք միշտ, իրարմով սփոփված, իրարմով երջանիկ» (79): Հետևաբար երկու անձանց գոյության ներդաշնակ, բնական կերպը միասին ապրելն է, թե ինչո՞ւ և ինչպե՞ս, կենտրոն հերոսները վարընթաց էջերում ըստ ամենայնի մանրամասնում են: Սակայն կա պարտադրված բաժանում, միմյանցից հեռանալու հանգամանք: Հերոսների հակագոեցությունները սրանց գեմ են, ինչն ինքնին երկի կոլիզիաներ-կոնֆլիկտները սաստկացնում է, բախումնային վիճակները դարձնում պատումի հանկերգ: Սա արտաքին կոնֆլիկտների, կոլիզիաների հստակ գիտակցությունն է: Հեռացումի, բաժանման իրենց համար անբնական գոյակերպության պատճառը երկու հասարակական միավայրի համար անհանդապ է: Կինն ու տղամարդը երկրպագուների լեզեռն ունեն, բնական է, որ կա դաժան մրցակցություն, որի յուրաքանչյուր դրսերում ուղղագծորեն ալեկոծելու է նրանց ներդաշնակությունը, փորձելու է դիսունանսել նրանց հարաբերությունները, նրանց առանց այդ էլ պրկված նյարդերը պահելու է պայմանական գոտիներում: Բնականաբար նախանձը, բանսարկությունը, չարությունը միմյանցից հերոսներին հեռացնել, նրանց բաժանումն անշրջելի դարձնել: Գործողության մեջ մտցնելով բոլոր միջոցներն ու կարելիությունները՝ սիրո արգելքներն ու պատնեշները (հասարակական, սոցիալական, բարոյական) անդառնալի դարձնեն: Այս գեղքախումնային իրավիճակում մեր հերոսները պիտի անցնեն փորձությունների, արկածների բովով, փորձությունով պի-

տի անցնի նաև նրանց զգացմունքը: Լուրջ խոչընդուռ է հասարակական կարծիքն իր բարոյական դատաստանով, միջավայրի վերաբերմունքը, գործողությունները. «Ի՞նչ կ'ուզեն մեզմե Զապելս, և ի՞նչու ասանկ կը հալածեն զմեզ: ...կը մտածեմ միշտ, իմ անուշ Զապելս, թե զմեզ շրջապատողները կը նախանձին մեր բարեկամության վրա, մեր երջանկությունն կապտել կ'ուզեն, զմեզ իրարմե բաժնել կ'ուզեն» (121): Դրաման սաստկանում է, քանի որ գործի է դրվում անվանարկությունը. «Բայց բան մը կա որ կը տառապեցնե զիս. քու անաղարտ համբավիդ պիտի վնասեն անոնք և ես պիտի ըլլամ պատճառ...» (122): Սկսվում է հասարակական կարծիքի կարծրատիպերի, բարոյական ձեւապաշտական ըմբռնումների հաղթահարման դժվարին ճանապարհը. «Կը մտածեի թե մեզի պես սիրողներու համար ա՛լ հյուլելի չափ կարևորություն պետք չէ ունենան ընկերության օրենքները, պատշաճության անիմաստ կանոնները, որոնք այնչափ անգութ են շատ անգամ՝ երջանիկներուն նկատմամբ» (136): Մարդկայնորեն անսասելի դժվար մարտահրավերն այլևս նետված է: Ստեղծագործության շրջարկում կոլիզիաները ավելի ուժգին են դառնում: Միջավայրն ամեն ինչ պիտի անի նրանց բաժանելու համար: Գործի են դրվում բանսարկությունները, զրպարտանքները, դավերը, չարախոսությունները: Մեկ նրանց բաժանելու համար, հաճախ, իբր թե մտերիմ մարդիկ, տարածում են, թե Հրանտի հարազատները անվանարկում են Զապելին, մեկ այդ «սև հոգիները» (123), Զապելի մոտ փորձում են անվանարկել Հրանտին՝ նրան վերագրելով հազար ու մեկ մեղք: Այդ «անգութ ավերիչները» (144) չեն խորշում ոչնչնից: Վեպի շրջարկում առկա է հարատե պայքար, հակազդեցություն միջավայրի կողմից նրանց հեռացնելու, բաժանելու դեմ: Կենտրոն-հերոսների հաղթանակը կայանում է բարոյական ուժերի արտակարգ զորաշարժով: Այս հաղթության զորավոր միջոցն էր արհամարհանքն իրենց երջանկությունը խափանել փորձողների նկատմամբ<sup>46</sup>:

Վեպ-նամակագրության կոլիզիաների մի առանձին խումբ էլ պայմանագործ է, այսպես կոչված, սիրային հարաբերությունների եռանկյունու արքետիպով: Եռանկյունու առկայությունը վեպի շրջարկում անհրաժեշտություն է պայմանավորված ժանրի այս տարատեսակի բովանդակային-ձևաբանական թերզրանքներով: Մյուս կողմից մրցակիցների պարագան մեծացնում է ստեղծագործության դիպաշարում արկածների, փորձությունների շառավիղը:

Այստեղ տեսնում ենք երկու ներփակ եռանկյունիներ՝ Զապել-Հրանտ/ոմն Պ., որի գարպասումները որևէ արդյունք չեն ունենում բացի իրավիճակի լարվածությունը սաստկացնելուց և Զապել-Հրանտ/Զապելի ամուսին, որը հավելում է, մանավանդ Զապելի ներաշխարհի, հոգեվիճակի դրաման. «...ամուսինս ինծի համար հայր մըն է կամ եղբայր մը, ինչպես որ կ'ուզես, միայն թե անոնց գորովն ալ չունի» (158), «Ան՝ որ իրավունք ունի տերս ըլլալու՝ առջի օրեն

46 Միջավայրի հանդեպ տածած արհամարհանքը հակազդման զորավոր միջոց է այսօրինակ վիճակներում: Նույնն է պարագան Մոլոցանի նամակներում: Նա Ուկուն գրում է. «Այս, ես երդվել եմ արհամարհնել, բայց գիտե՞ս որդոնց... մեր երջանկությունը հափշտակողներին, և ես կպահեմ իմ երդումը անաղարտ...»: (Մոլոցան..., Էջ 180):

չբաղձաց սրտիս, միշտ խոշտանգեց, ոտնակոխ ըրավ, և հետո մեկդի նետեց անպետ բանի մը պես» (163):

Այնուհանգերձ, ինչպե՞ս են հաղթում, այսպես կոչված, արտաքին կոնֆլիկտներ-կոլիզիաները մեր վեպի կենտրոն-հերոսները: Անշուշտ իրենց հզոր, ուժեղ սիրով. «Եվ հիմա, Զապելս, — գրում է Հրանտը, — հիմա որ ա՛լ չարիքը կատարյալ է, ա՛լ իմս ես դուն և ես ալ քուկդ եմ: Թող սոսկան անոնք որոնք խանգարել կ'ուզեն մեր հոգիներուն այս միացումը: Զես գիտեր ի՛նչ խենդ բաներ ընելու կարող կը զգամ ինքզինքս հիմա, ես որ բովանդակ կյանքիս մեջ բնավ խենդ գործ մը ըրած չըլլալու գիտակցությունը ունիմ, ես որ բոլոր քայլերս հաշվելով առած եմ միշտ, դողարով համբավիս համար, պետք եղածեն ավելի կարևորություն տալով հանրային կարծիքին և բարեկամներուս ու ծանոթներուս համարմանը: Ես իմ մեջս կը զգամ հիմա անանկ կորով մը քու սիրույդ մասին, զոր ոչ երբեք զգացած էր...» (138): Այս ակնհայտ տարերքը զորու էր տապալել ցանկացած խոչընդոտ, սակայն արտաքին մարտահրավերները չեղոքացնելը անհամեմատ դիւրին են ներքին, միջանձնային կոնֆլիկտներ-կոլիզաները հաղթահարելու հետ համեմատած: Ուրեմն հետևենք դրանց:

Վեպ-նամակագրության շրջարկում ներքին կոլիզիաներ-կոնֆլիկտները պայմանավորված են կենտրոն-հերոսների ներաշխարհում ընթացող բախումներով, հոգեբանական վիճակների կտրուկ, հաճախ ծայրագնա փոփոխություններով: Նրանց գոյությունը ներքին բախումների, տվայտանքի, անձկության, անվերջանալի շարք է առթում: Զապելի ես-ը, հոգեվիճակն ընդհանրապես երկ-փեղկում է զավակի, պարտականության և սիրո մեջ: Ինչը հասնում է մինչև կյանքը բնական, ներդաշնակ, ճշմարիտ ապրելու ներքին տարակույսների և հաստատումների խուռներամ հոսքի նրա ինքնության մեջ: Ի դեպ այս հանգամանքն ուշագրավ միջգրութենական արտահայտություն է ստացել Սիպիլի գրականության մեջ: Նկատի ունենք նրա «Մանկիկին քունը» բանաստեղծությունը<sup>47</sup>:

Արտաքին կյանքի հեղձամաղձուկը ուղղակիորեն ներազդում է հերոսների հարաբերությունների վրա: Հավելեք ուղղակի իմաստով բաժանման փաստը, երբ Հրանտը նամակներ է գրում գավառից: Հավելեք նաև անուղղակի իմաստով բաժանման փաստը, երբ հանգամանքների բերմամբ նրանք չեն կարող միշտ միասին լինել: Մյուս կողմից՝ անչափ կարեոր է Զապելի, Հրանտի իրենց հանդեպ ծայրահեղ խիստ, պահանջկոտ լինելու հանգամանքը, երբեմն հիպերտրոֆիկ չափերի հասնող արժանապատվության, պատվի գիտակցությունն ու զգացումը: Զպետք է մոռանալ նաև, որ ստեղծագործության կենտրոն-հերոսներն ընդգծված անհատականություններ են, որոնց հարաբերությունները անխուսափելիորեն պարբերաբար անցնում են վեճերի, դիտանկունների և կարծիքների բախումների բովով: Ներդաշնակ հանգրվանի հայտնաբերումը, սիրո ամենօրյա նորոգությունը առլեցուն է ինքնակեղեքման հասնող հոգեկան տարութերումներով, զգացմունքի ուժգնությամբ պայմանավոր «մասնավոր»

47 Տե՛ս Հրանտ և Զապել Ասատուրներ, Սիրային նամակներ, Երևան, 2001, հավելված բաժինը:

**ընդհարումներով:** Անմիջապես հարկ է արձանագրել, որ ներքին կոլիզիաներ-կոնֆլիկտների հաղթահարման և չեզոքացման պարագային վեպ-նամակագրության մեջ կենտրոն-հերոսների համար կա բացարձակ, անբեկանելի արժեք: Դա իրենց սերն է, ինչն էլ բնականաբար արագորեն հարթում է խանդի նոպաները, մեկի կամ մյուսի համարումին, արժանապատվությանը առնչվող խայտաբղետ թյուրիմացությունները: Կարծում ենք, դիպաշարի կոլիզիաներ-կոնֆլիկտների շարքն ամբողջացնելու համար, կարիք կա փոքր-ինչ մանրամասնել այս իրողությունը:

Սիրահարների բուռն վերաբերմունքը միմյանց հանդեպ, ծայրագնա ուշադրությունը ամենաչնչին իրողություններին, սիրո պահպանության բացարձակ մղումը և մարդկայնորեն հասկանալի, իսկ երբեմն անխմանալի տագնապը, ահազանգը միմյանցից հեռանալու, միմյանց կորցնելու, բաժանվելու սարսափը չէր կարող խանդի արտահայտություններ չունենալ: Հարկ է շեշտել, որ խանդի դրսեորումները բավականին յուրահատուկ են. «...կ'ուզեի Զապել, մանկութենեդ ի վեր կենակցած ըլլալ քեզի. Ես եղած ըլլայի քու միակ մտերիմդ, ինծի միայն հաղորդած ըլլայիր քու վիշտերդ, քու մտածումներդ, քու զգայնություններդ. Ես քու արյունդ եղած ըլլայի, երակներեղ անբաժան... Բայց այս նախանձն վայրկյան մը թե աղարտած այն հավատքը զոր ունիմ անկեղծությանդ վրա...» (98-99): Սիրված էակի ժամանակի և տարածության մեջ իր եսից դուրս, հետեւբար իր սիրուց դուրս լինելը ճակատագրի դեմ է: Սափոյին կամ Բիլիտիսին բնորոշ այս ըղձափոր ընդգումը նամակագրություն-վեպի կենտրոն հերոսների հիմնական հատկանիշներից է<sup>48</sup>: Եվ կամ՝ Հրանտը քանից Զապելից ներողություն խնդրելով, արդարանալով խանդի արտահայտությունների համար, գրում է, թե «Հիմա սրտովս միայն կը մտածեմ... և սիրտս խենդքաներ տոն կուտա կոր ինծի» (191), ինչը նշված անխմանալի տագնապի, ահազանգի արդյունքն է: Սա նաև իրենց սիրո ուժգնությունը, զգացմունքի սաստկացումը պահպանելու համար է: Այս վեպ-նամակագրության շրջարկում խանդի, թյուրիմացություն ունեն՝ յուրաքանչյուր խանդի, թյուրիմացության միջադեպ զգացմունքը հասցնում է վախճանի և անմիջապես նորից ծնվում՝ ավելի ուժգին, ավելի հզոր:

Ներքին կոլիզիաներ-կոնֆլիկտների համարույլում, արդեն ինչպես արձանագրել ենք, դիպաշարի համար կարևոր նշանակություն ունեն կենտրոն-հերոսների բարոյական նկարագրի, արժեքների, արժանապատվության իրենց համար անխոտոր սկզբունքները, որոնք դույզն-ինչ չեն դիսոնանսվում միմյանց հանդեպ տածած զգացմունքի հետ: Երբեք և ոչ մի պարագային սերը բարոյական արժեքի կամ արժանապատվության հաշվին չի լինում: Այս խորքին հատկապես առավել ակտիվ է Զապելի կերպարը, ինչն ինքնին հասկանալի է՝ ելնելով «մեկնարկային» պայմաններից (ընտանիք, երեխա, կնոջ հասարակական

48 Հրանտից մեջբերված հատվածը ամբողջականանում է Զապելի «Ա.Դ, Հրանտ, ի՞նչու առաջին սիրած կինդ ես չեմ եղած...» նախադասությամբ սկսվող հատվածով: Տե՛ս Հրանտ և Զապել Աստուրներ, Սիրապին նամակներ, Երևան, 2001, 132-րդ էջից մինչև նամակի վերջը:

գերի կրավորականություն): Եվ բնական է, որ ինքնակեղեքման հասնող բացում ներքին ինքնադատականներից հետո միայն նա պիտի հասներ հոգեկան-հուզական-հոգեբանական այն խաղաղությանն ու հանդարտությանը, որպեսզի Հրանտին վստահաբար գրեր հետեւյալ տողերը. «Նույնիսկ զքեզ այնքան խորունկ կերպով սիրելովն՝ հոգիիս բոլոր հակումներուն դեմ մաքառած, սրտես դուրս պոռթկացող բոլոր արյունը կուլ տփած եմ, վարմունքիս մեջ ինձի անարժան բան մը չգնելու համար»(102) և կամ «...և անշան հոգիիս մեկ անկյունին մեջ քնացող պզտիկ, շատ պզտիկ հպարտություն մը ունիմ, որ տղայությունես ի վեր միակ առաջնորդս եղած է, և որ կ'արթննա ամեն անդամ երբ կը դպչեն իրեն» (151): Եվ այս պարագային դրամա ապրող կնոջ կեցվածքը, որ ապրում է իրապես լքման ու հուսահատության ողբերգություն, և ինքնասպան չի լինում միայն ու միայն զավակի պատվի, սիրելի Հրանտի համար, պըչրանք չէ իր Հրանտի նյութական աջակցությունից հրաժարելը. «Կ'աղաշեմ քեզի որ կյանքիս նյութական մասին բնավ միջամտություն չընես, ոչ իսկ հարցումներ ընելով ինձի այնպիսի խնդիրներուն վրա որոնք վիրավորիչ են ինձի համար» (205):

Կենտրոն-Հերոսներն անհատականություններ են, բնականաբար իրենց հարաբերությունները ապրում և դիտարկում են քննական հայացքով: Նրանք զգացմունքն անընդհատ ջանում են դարձնել ստեղծագործություն՝ մերժելով «սիրո վարժապետությունը», «կասկածությունավորության» ձախավերությունները, իրենց սերը բովանդակելով ընկերությամբ, բարեկամությամբ: Այսպես բրացնելով իրենց գոյության ոգեղենիկ անտրոհելիությունն ամենից առաջ: Եվ այսպես մոտեցնելով այս՝ իր տեսակի մեջ բացառիկ վեպ-նամակագրության հանգուցալուծումը: Նրանք մոտեցրել էին «վերակյանքը»՝ երազայինը դարձնելով իրականություն, իսկ իրականությունը երազային գոյություն:

Նամակները կազմաբանությամբ երկպան են: Յուրաքանչյուր միավոր ներառնում է ինչպես պարտադիր երկխոսության շերտ (նամակագրությունն ինքնին երկխոսություն է նամակագիրների միջև, այդ պատճառով երկխոսությունը պարտադիր է), այնպես էլ՝ նամակների մեծամասնությունում հստակ արտահայտված մենախոսության շերտ: Եթե երկխոսությունները գեղարվեստական այս գերբնագրում գոյագորում և ապահովագրում են վիպումի համակարգը լայն առումով, փաստարկներ-հակասատարկներ-համադրություն, հարցումներ-պատասխաններ շրջանակով պայմանագորում են սյուժեի միասնականությունը, ապա մենախոսությունները որոշակիորեն պատումային մակարդակին ագուցված ներփակ և ներդիր կազմաբանական միավորներն են, որոնք արձանագրում են կենտրոն-Հերոսների ներաշխարհային վիճակների ինքնավար հեղումները: Այս պարագային օրինակ հերոսների անձկության, երազների, սիրատենչիկ կարոտախտի հեղումները թեև ուղղակիորեն չեն հատվում դիպաշարի մայրուղուն, սակայն պայմանագորում են կերպարների լիարժեքությունը. «Սենեկիս ցուրտ մթությանը մեջ, կը զգամ թե համբերությունը ա՛լ կը լքե զիս, և քեզ հետ առանձին մնալու, սիրոս սրտիդ մեջ թափելու անդիմագրելի բաղձանքովն կը մաշիմ» (96), «...այս կարոտը. կը հալեցնե, կը մեռցնե զիս, և եթե քիչ մըն ալ տես չեմ գիտեր թե ինչ պիտի ըլլամ» (156): Կարծում ենք՝ այս

Հանդամանքն է Էպիստոլյար գրականության տեսությանը հիմք ընձեռել խուսելու նամակից օրագրության սերտածման մասին:

Երկխոսությունների բնույթին անդրադառնալիս սկսենք, այսպես կոչված, փաստարկ-հակափաստարկ-համադրությունների, հարցում-պատասխանների շրջանակներից: Այսպես՝ Զապելը բերում է հետեւյալ փաստարկը. «Զեմ ուզեր որ չափես սրտիս խորունկ զգացումը, որովհետև պիտի սոսկաս անկե, ինչպես ես սարսափած եմ, երբ այսքան տարիներե ի վեր դեմ առ դեմ մենակ մնացած եմ անոր հետ գիշերվան լոիկ ժամերուն մեջ» (85-86), որին անմիջապես հաջորդում է Հրանտի հակափաստարկը. «Զէ, Զապելս, կ'ուզեմ որ անձնատուր ըլլաս ինձի հոգիիդ բոլոր մերկությամբը, անոր ոչ մեկ խորքը ծածկելով ինձմե, կ'ուզեմ որ սոսկում, սարսափ, արհավիրք ազգես ինձի, կ'ուզեմ որ ըսես թե ինձի համար ունեցած սերդ հավիտենապես կաշկանդած է սիրտս, ազատությունս, կյանքս» (89): Արդյունքում երևան է գալիս համադրությունը, իբրև սիրո իրենց գոյութենության բացարձակ արժեք, ելակետ: Այս հանդամանքը ուրոշակիորեն ներազգել է միայնաց նամակներ գրելու վրա, դարձել պահանջ: Հնարավորություն ընձեռել երբեմն դանդաղ, երբեմն միանդամից հասցեատիրոջ առջև բացվել, մեկ անգամ ևս վերապրել ամեն հանդիպում, հայացք, ժեստ, արարք, խոսք, լուսություն: Մտովի, երևակայությամբ միասին լինել, վերստեղծել անցած և ապագա հանդիպումները. «Ժամ մը ետքը պիտի տեսնեմ զքեզ, իմ Զապելս, և չես գիտեր ինչ սրտի անձկությամբ կը սպասեմ այն վայրկյանին ուր նորեն պիտի վայելեմ քու անուշ ընկերակցությունդ: Այդ ժամը, Զապել, քեզի խորհելով պիտի անցունեի, ինչպես բոլոր ժամերս...» (181):

Գեղարվեստական համակարգում կարենոր կազմաբանական գերակատարություն ունեն նաև նամակները որպես հանդիպումների արձագանք-վերլուծություններ: Ըստ այսմ՝ դրանք բաժանման տեսողությունը կարճելու, բաժանումը հանդիպման, զեւացումը մոտեցման փոխաձեւու արտահայտություններ են: Առհասարակ ապրած վիճակների վերստեղծումը հանգրվանում է սիրո այնպիսի դրսեորումների, որտեղ առաջնային է դառնում տածած զգացմունքի անդենական (տրանսցենդենտ) ըմբռնումն ու ընկալումը. «Եվ երբ գրկիս մեջ կը սեղմեմ քու գերանուրբ զգայնությամբ օժտված մարմինդ, կը զգամ թե հոգիդ է որ կ'ողջագուրեմ, քու մեծ հոգիդ, որուն բոլոր ծալքերը կը ճանչնամ, որուն վրա անսպառ հիացումով կը հիանամ, որուն առջև ծունը եկած կրնամ իմ բոլոր կյանքս անցունել, միստիքական պաշտումով մը, համակ հոգի ես ալ: Ասանկ զգացում երբեք ունեցած չեմ ես...» (111) և կամ «...ինձի այնպես կուգա որ եթե աչքերս գոց ըլլան, դարձյալ քու մերձավորությունդ պիտի զգամ...» (152):

Կազմաբանական առումով կարենոր են նաև նամակագրության շրջարկում եղած գոհաբանությունները, ներբողյանները: Զարկ է արձանագրել, որ գոհաբանականները, ներբողյանները սիրային նամակների էական բաղադրատարբերից են: Ըստ էության Ռուբեն Սևակի, Մուրացանի նամակների գերակշռող մոտիվը գոհաբանականն է առ Յանի և Ոսկի: Զապել-Հրանտ նամակագրության մեջ գոհաբանականները, ներբողյանները նախ առանձնանում են իրենց փոխադարձ բնույթով, ապա և՝ միայնաց ուղղած ներբողյանները իրենց սիրո գո-

Հաբանականը դարձնելու իրողությամբ։ Էական է դիտել, որ ներբողյանները նամակագրության հիմնական լեյտոպահիվներից են։ Եվ ինչպես այսօրինակ ցանկացած ներբողյանում, գոհաբանական ստեղծագործության մեջ, այստեղ ևս սիրահարը երկրպագում է սիրած էակի արտաքին բարեմասնությունները, մարդկային արժանիքներն ու նկարագիրը. «Դուն ոսկին ես բոլոր ոսկեզօծումներուն քով և որչափ ավելի կը ճանչնամ զքեզ այնչափ ավելի կը համոզվիմ ասոր» (110), «Դուն անհաս բարձրությունը, անսպաս թովչությունն ես տիեզերքին...» (149)։ Մեկը մյուսին միշտ բացարձակացնում է։ Երկուսն էլ հարակա հիացած են մեկմեկով։

Նամակագրության իրեւ գեղարվեստական համակարգ դիտարկելու պարագային կարեոր է անդրադառնալ նաև այս գերենագրի առանցքային հերոսների՝ Զապելի և Հրանտի կերպավորման խնդրագրությանը։ Փորձել մեկնաբանել, թե ի՞նչպես են տեքստում ընդելուզվում իրականը, վավերականը և գեղարվեստականը։ Ի՞նչպես է կենսական փաստը արտահայտվում գեղարվեստականորեն։ Նախ հարկ է կրկնել այն ելակետային հանգամանքը, որ թե՛ Զապելը, թե՛ Հրանտը իրենց սիրային հարաբերությունների նամակագրությամբ վերստեղծումն ըմբռնում, ընկալում և արտահայտում էին որպես ստեղծաբանություն, հետևաբար իրենց իսկ ինքնությունը նամակագրության շրջարկում դրսեղանում, արտահայտվում էր իրեւ գրական կերպարների համարժեքներ։ Թե նրանք արդյոք գիտակցում էին այս հանգամանքը՝ տվյալ պարագային էական չէ, որովհետեւ յուրաքանչյուր նամակը գրելիս տեղի էր ունենում նամակագրության բնույթով պայմանավորված առարկայական փոխաձեռություն գեղարվեստական ստեղծագործության հերոսների։

Երկուսի համար էլ կերպարումի գործընթացը սկսվում է նոր, տակավին անհայտ գոյավիճակի ծանոթության, ճանաչման, հետևաբար հայտնի դարձնելու հանգամանքով։ Ինչն առքերում է ժամանակի արմատականորեն նոր զգացողություն։ «Ժամերը կը համրեմ, ու ժամերը չեն անցնիր, ու ժամանակը որ կը սուրա երբ քու մոտդ եմ, հուսահատիչ դանդաղությամբ կը քալե երբ հեռու եմ քեզմե» (82)։ Նույն այս բանաձև դարձած միտքը տարբեր առիթներով կրկնում է Զապելը, ում գոյությունը, կենսակերպը արմատական հեղաշրջման է ենթարկվել։ Տեսեք, թե իր ժամանակի թերեւս ամենանշանավոր կանանց դատի պաշտպանը, ֆեմինիստը, որն իր հողվածներում տարփողում էր կնոջ ազատագրության վարդապետությունը<sup>49</sup>, ինքնության ինչ կերպ է ցուցանում նամակագրության մեջ։ Ամենից առաջ սերը Զապելի համար գոյության բացարձակ արտահայտությունն է, ամբողջ կյանքը, և երբ ներաշխարհում փայփայած, հորինած իդեալը հանդիպում է իրականության մեջ, ֆեմինիստ Զապելից բան չի մնում։ Նրա գոյության միակ ձեւը «Արտի անզուսպ բերումով» սիրելն է, միայն դրանով ապրելը, միմիայն այդ հարաբերության մեջ իրեն արժելուը. «Միակ արժանիքս է, Հրանտս, անհամար արժանիքներուդ փոխարեն զքեզ ա-

49 Սիպիի աս շարքի գոյություններից հիշատակենք «Մայտա և իրավունք կանանց» (Մանզումիվ Լքքար, Կ. Պոլիս, 1883, 20 օգոստոսի), «Կիմերը ի՞նչու կը գրեն» (Մայտա, 1898, թիվ 5), «Դրամօժիտոր կանանց տեսակետով» (Արևելք, Կ. Պոլիս, 1898, թիվ 3815), «Միշտ կիմերուն դեմ» (Արևելք, 1898, թիվ 3883) հոդվածները։

մեն մարդեւ ավելի աղեկ հասկնալու կարողությունս... (91): Նրա սերը, ինչպես ինքն է բնութագրում «տրամաբանական» է, քանի որ այդպես նա հաղորդակից է լինում տիեզերքի «ամենեն գերազանց բաներուն»: Անգամ իր սիրո տագնապների ժամանակ գույզն-ինչ չի սասանվում գոյության իր գերակայությունը, որովհետեւ այն մարդկային ազատության համարժեքն է, «ապրելու երանությունը»: Էական է դիտել, որ նամակներում ամփոփված ուրույն ինքնադատականների հոսքում Զապելը նկատում է իր վերափոխությունը, պարբերաբար պատասխանելով իր իսկ հոետորական հարցումին, թե ի՞նքն էր արդյոք այն դրական կինը, որ ֆեմինիստական պրագմատիզմով էր գործում, ապրում: Այս վերափոխությունը հնարավորություն է ընձեռում նրան ամբողջապես դրսեորվելու, ինքնարտահայտվելու, մոտենալու «անվախճանին», ունենալու աշխարհում միայն իրեն վերապահված հավատքը. «Զքեզ այնքան պիտի սիրեմ, Հրանտս, այնքան պիտի սիրեմ որ ինքինքդ մարդեւ վեր բան մը պիտի զգաս, քիչ մը հրեշտակ, քիչ մը աստված, և շա՛տ մը Հրանտ» (259): Եվ սա առանց ճիգի, «պչրանքի», բնականորեն իբրև իրեն վերապահված գոյություն, կյանք, ճակատագիր:

Նույն վերափոխությունն ապրում է նաև Հրանտը. «Իմ դրական միտքս, որուն համար սերը մարմնական վայելքին մեջ կը կուրանար, դուն առիր վերացուցիր, Զապելս, ջնջելով իր մեջ հաշիվն ու սկեպտությունը ու հավատքով լցուցիր զայն... Դուն ազնվացուցիր, սրբացուցիր, մեծցուցիր զիս» (119-120): Հստակ արտահայտած այս փոխադարձումը պայմանավորված էր ներդաշնակ գոյությանը հասնելու, իրեն գտնելու, հետեւաբար ըստ ամենայնի բացահայտվելու, ինքնարտահայտվելու հանդամանքով: Սա է պատճառը, որ գրելու, Զապելին գրելու ակտը «սրտի անբավ ըղձանք» է, ստեղծագործություն, իսկ ինքը՝ ստեղծագործության հերոս: Այլևս նրանց անկապտելիությունը հորդում է՝ պատմելով մեկ «գերէության» վեպը: Հրանտը ինտրայի պես<sup>50</sup> իր գոյությունն ընկալում է սիրած էակից անբաժան՝ համոզված հոռետեսից դառնալով անշրջելի լավատես: Այս ընթացքին վերացնելով «չափազանց հոռետեսությունը, կասկածությանը բնավորությունը, վարանումները»: Միանում են հերոսները, որպես մեկ «գերէերպար», միանում են նաև գոյությունները: Այս անկապտելիությունն անցնում է վեպ-նամակագրության բոլոր գրվագներով, պատումային մակարդակներով, ընթերցումն ավարտաբանում սիրատենչիկ և միայն սիրով լցված հանգրվանում:

Բնականաբար գեղարվեստական այս գերբնագիրը ունի բառապատկերային բավականին հարուստ, բազմագործառակիր արտահայտություններ, պոետիկական միջոցների բազմազան կիրարկումներ: Նամակագրության ոճը ընդգծված քնարական է, կան հատվածներ, որ հիշեցնում են արձակ քերթվածներ: Համաշխարհային սիրերգության լավագույն երկերին հարիր գրվագները նորովի են ցուցանում Զապելի, Հրանտի լիրիզմի հնարավորությունները: Առանձին ծա-

50 Վերժինին ուղած նամակներում Չրաբլանը քանից շեշտում է, թե իրենց էություններն ամկապտելի են. «...ալ խառնված ես ինքզինքիս, և առանց քեզի ամբողջ չեմ...», «...չեմ կրնար իրաւան հնուանալ քենե, որովհետև չեմ կրնար ես իմ էութենես մեռանալ»: (Տե՛ս Տիրան Չրաբլան, «Երկեր», Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1981, էջ 394, 395):

վալուն ուսումնասիրության առարկա է նրանց համեմատությունների, փոխաբերությունների, շրջասությունների, այլաբերությունների, մյուս պոետիկական միջոցների քննությունը։ Զապելի կամ Հրանտի յուրաքանչյուր անդրադարձ գողտրիկ պատկեր է, որը ապրումը, վիճակը, պահը դարձնում է բանաստեղծական՝ «...մարմնիդ բույրովն ինկված, շրթունքս...» (87), կամ «Քու շուշան հոգիդ ունեցած է միշտ ինծի համար անբժության բոլոր հրապույրներն. զքեզ տեսած եմ միշտ վեր, շատ վեր, բարձրագույն խավերու մեջ ուր չեն հասնիր տղմուտ ճահիճներուն ժահըր» (99-100) և կամ. «Կրնա՞ս երևակայել... մութ շատ մութ կյանք մը... գետնափոր անձավի մը խորը նետված, լքված տունկի մը պես, մոայլ ստվերներով փաթթված, զոր օր մը արևու չքնաղ շող մը կուգա լուսավորել։ Փոթորիկեն ծեծված՝ շանթերեն տապալած ու խորշակեն խանձած՝ տարեր հոն այդ անդունդին մեջ նետեր են որ կորսվի. և արևուն շողը այցելության կուգա անոր։ Տունկը մեռնելու մոտ՝ գլուխը վեր կը վերցնե անոր զվարթ ցոլքեն սթափած, կը նայի անոր, և ապրելու բնագդը՝ իր մեջը արդեն թմրած՝ կարթնա հանկարծ։ Իր ցամքած երակներուն մեջ արյունի կաթիլ մը կը պլաւայ, և ջիղերը կը դողդողեն կը սարսան կյանքի զգայությունը վերստացած» (148)։ Կարծում ենք՝ պերճախոս օրինակներ բերեցինք, որոնց քանակն, ինչպես սացինք, մեծ է։

Ապրումի, զգացումի, վիճակի բանաստեղծականացումը նամակագրության շրջարկում հաճախ կենտրոնանում է սիրերգության «Լինեի» լեյտմոտիվի միջոցով։ Վերջինիս պարբերական վարիացիաները ապահովագրում են նամակագրության ընդգծված քնարական կենսոլորտը։ Աչափահիլ մեկ օրինակ. «Այս գիշեր պիտի գաս, պիտի նստիս այս սեղանին առջին, դիմացս, պիտի նայիս ինձի, և ես զքեզ պիտի տեսնեմ, զքեզ պիտի համբուրե՛մ, ա՛խ, Հրանտս, այս գաղափարը կը խենդեցնե զիս, ինքզինքս երկրեն վեր, երկնքեն ալ վեր անմատույց երանություններու մեջ կը գտնեմ, Աստված իմ, և ալ չեմ ուզեր մեռնիլ, չեմ ուզեր բաժնվիլ այն տեղեն ուր գուն կ'ապրիս, կ'ուզեմ քեզի կապվիլ հոգիիս բոլոր ույժովը և անմահ ըլլալ սիրույս նման։ Վասնզի անկեղծորեն խոստովանիմ թե հիմակ անմահությունը կ'ըմբռնեմ, սրտովս կը հասկնամ զայն, Հրանտս, և գուն ես որ այս հավատքը կուտաս ինձի, գուն՝ աշխարհիս ամենեն պաշտելի էակը, իմ միակ սերս, իմ միակ պաշտելությունս բոլոր տիեզերքին մեջ, գուն մեկ նայվածքովդ կուտաս ինձի այն հավատքը, զոր ոչինչ կրցած է տալ։ Իմ մեջս վառած կրակդ չպիտի մարի, Հրանտ, ատիկա կզգամ հիմա, և մեռնելես ետքն ալ պիտի գա շուրջդ դառնա շրջմոլիկ հուրի նման ու պիտի կրկնե քեզի կայծակե ձայներով այն անհուն սերը զոր նվիրած եմ քեզի։ Ա՛խ, իմ Հրանտս, այս գիշեր, բերնովս ալ պիտի ըսեմ ասոնք քեզի շրթունքս շրթունքներուդ վրա դրած, և այնքան պիտի գգվիմ, այնքան պիտի միրեմ որ քիչ մը կարոտս կարենամ առնել. որովհետեւ կարոտցած, ծարաված եմ քեզի, ա՛խ ե՞րբ իրիկուն պիտի ըլլա» (116-118)։ Նշենք նաև, որ նամակագրության լեզուն գրական արևմտահայերենի նոր որակ և ձեռքբերում է 1890-ականների շրջագծում։ Ի դեպ բարբառային, խոսակցական ձևերի սակավությունը նամակագրության շրջարկում իբրև լրացուցիչ, միջնորդավորված փաստարկ վկայում է, որ տվյալ պարագային գործ ունենք ոչ միայն և ոչ այնքան նորմատիվ նամակագրու-

թյան, որքան գեղարվեստական ստեղծագործության, երկի հետ:

Ամփոփելով նամակագրություն-գերբնագրի գեղարվեստական համակարգի քննությունը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այս տեքստի միջգրութենական առնչակցությունների հարցերին:

Սույն ուսումնասիրության մեջ արդեն արձանագրվել է այն իրողությունը, որ Զապելի և Հրանտի նամակագրությունը նրանց գրական ժառանգության բարձրակետն է, ստեղծագործական հնարավորությունների այցեքարտը: Այս խորքին էական է դիտել, որ հատորիս «Յավելված»-ում զետեղվել են Զապելի և Հրանտի մի քանի ստեղծագործություններ, որոնք միջգրութենական առանչակցություններ ունեն այս գերբնագրի հետ: Արդեն, ինչպես երեաց ի տեղի, այս առնչակցությունները արձանագրվել են, այստեղ հարկ է սկսել միջգրութենական առնչակցությունների բնույթից: Նամակագրության հետ հղացքային-բովանդակային միևնույն դաշտում, գենետիկական միևնույն շրջարկում գտնվող երկերը Զապելի և Հրանտի դրսերում են միջգրութենական հարաբերությունների հետեւյալ արտահայտությունները՝

— նամակագրության գեղարվեստական համակարգի տարժամանական ստեղծաբանական ուեմինիսցենցներ,

— նամակագրության գեղարվեստական համակարգը որոշակիորեն նախապատրաստող, ծագումնաբանությունն ապահովագրող ստեղծաբանական արտահայտություններ:

Անշուշտ պետք է նկատի ունենալ, որ այս արտահայտությունները միմյանցից բացարձակ տարանջատված չեն, շատ հաճախ փոխկապակցված են հանդես դալիս միջգրութենական հարաբերություններում:

Տարժամանակայա ստեղծաբանական ուեմինիսցենցներից հիշատակենք միքանիսը: Վեպ-նամակագրության մեջ կարեոր կոլիզիաներից է հերոսների հոգեբանական երկվությունները: Այսպես՝ Զապելի պարագային դրամատիզմը մեծանում էր երեխայի հանգամանքով, ինչը արտածվելով նամակագրությունից արտահայտվել է «Օրորումներ»<sup>51</sup> բանաստեղծությամբ.

«Խորհուրդներու լուս հըմաքովն ակաղձուն,  
Թողած կյանքի վիշտն ու հրճվաճքն անհամար  
Մեր սիրտերը կը վերանան օրորուն:  
Թողած կյանքի վիշտն ու հրճնունաքն անհամար  
Կապված հովին և երկինքի բոցերուն,  
Երազի մեջ կը մոռնանք կյանքն ու աշխարհ»:

Ինչպես երեսում է, մեջբերված հատվածը հերոսուհու նամակագրության շրջարկում պարբերաբար արտահայտված ապրումների, հոգեվիճակի չափածուեմինիսցենցն է:

Վեպ-նամակագրության մեջ պարբերաբար արձանագրվում են հերոսների ապրումները՝ հուզում, անհամբեր սպասում և այլն, միմյանց նամակներին սպասելիս: Հար և նման է Զապելի «Սպասված նամակը» նորավեպում<sup>52</sup>, որը

51 Տե՛ս Հրանտ և Զապել Ասատորիներ, Սիրային նամակներ, Երևան, 2001, «Հավելված», Էջ 283-284:

52 Նույն տեղում, Էջ 286-288:

նույնպես նամակագրության բացահայտ ռեմինիսցենցն է: Նույնը Հրանտ Ասատուրի «Վարդեփունջը» նորավեպի պարագային<sup>53</sup>, որտեղ բացի սիրային հարաբերությունների ուրվագրման կենսոլորտի ընդհանրությունից վեպնամակագրության հետ, առկա են նաև թե՛ իր, թե՛ Զապելի կենսագրական որոշ դրվագների գեղարվեստական անդրադարձներ:

Անդրադառնանք միջգրութենական հարաբերությունների այն արտահայտություններին, որոնք պայմանավորված են նամակագրության գեղարվեստական համակարգը որոշակիորեն նախապատրաստող, ծագումնաբանությունն ապահովագրող երկերով:

Զապելն իր նամակներից մեկում Հրանտին գրում է. «...բայց երբ օր մը պարագաները ներեն, և ես միջոց ունենամ երկարորեն գրի առնելու ինչ որ ներշնչած ես ինծի, աշխարհք պիտի ճանչնա վեպերուս դյուցագունը...» (230): Իսկ դյուցագունի ստեղծագործական փնտրութը սկսվել էր տակավին 1891-ից, երբ Զապելը Օրիորդ Ալիս կեղծանունով լույս ընծայեց «Աղջկան մը սիրտը» վեպը: Վատահաբար նաև անձնական կյանքի դրամայի, բոլոր առումներով ոչ համարժեք ամուսնության հակագեցությունն էր այս ստեղծագործությունը<sup>54</sup>. «Անցյալին մեջ իրավ է թե շատ կարեռություն տված եմ հասարակաց կարծիքին, սակայն չէ թե անոնց հարգանքին պետք ունենալու՝ այլ սոսկալուս, նողկալուս համար այն չարախոսություններեն, որոնց կարելի ըլլար պահ մը ենթակա կարծել ինքզինքս... և անձիս արժանապատությունը ինքն իր մեջ կը տառապեր ասոր համար: Եթե գիտնայիր, Հրանտ, թե ի՞նչ կյանք երազած էի ես ինծի համար: Երբեք պերճանքի, հուապուրանքի տեսիները չէին որ կը խռովեին մատղաշ երևակայությունս: Միրտս էր որ խանդով, հափշտակությամբ կը վագեր ամենեն անբիծ, ամենեն ազնիվ, ամենեն անկեղծ և բարձր բաներուն համար» (163-164): «Աղջկան մը սիրտը» վեպի Բուբուլը, որ նամակագրության նույն Զապելն է, ամեն ինչ արեց, որպեսզի Գառնիկը դառնա և մնա իր դյուցագունը, սակայն բազմաթիվ պատնեշներ և հանգամանքներ (Բուբուլի մանուկ հասակում նշանվելը Տիգրանի հետ, Գեղամոֆի մահը, Բուբուլի ստիպված Պիլեճիք մեկնելը և այլն), Գառնիկի կողմից բաժանման, հեռացումի փորձությունը չհաղթահարելը այդպես էլ չիրականացրին Բուբուլ-Զապելի բաղձանքը: Պիտի նրա կյանքում հայտնվեր Հրանտը և դառնար ու մնար այս վեպնամակագրության դյուցագնը. «Կացությո՞նդ. բայց միթե դո՞ւն ես հանցավորը եթե անկարեկան բախտին պարագաները նետեր են զքեզ անանկ թևերու մեջ որոնք չեն կրցեր սեղմել կուրծքդ սիրող կուրծքի մը վրա: Արդարացո՞ւմդ. բայց հանցա՞նք է միթե, տարիներով մարտնչելե ետքը, տեղի տալ տաք զգացումի

53 Նույն տեղում, Էջ 289-309:

54 Հետաքրքիր է, որ միջգրութենական հստակ հարաբերությունների մեջ են «Աղջկան մը սիրտը» վեպն ու բանաստեղծությունները: «Խունկը» քերթվածում ամբողջամում է վեպի հերոսունի Բուբուլի հոգեվիճակը.

«Հեք կը նոց սիրտն ալ, որ հոգ կը մըխա,  
Պիտի չագատի իր պատյանեն կոտ,  
Մինչև որ հայի, լուծվի, տարրանա  
Լափելով բոցեն տեսչերուն մաքուր»:

մը որ երկարատև զրկանքներու վրեժը կուգա լուծել, որ գուրգուրանքի ծարավի հոգիիդ մեջ կուգա հեղուլ անհուն խանդաղատանք, սիրող ու սիրված էակին գգվանքներուն տակ, և եթե հանցանք իսկ է, ի՞նչ ավելի պերճախոս արդարացում քան սերդ իսկ, Զապելս, իմ սիրովս օծված, նվիրագործված, մեր փոխադարձ անձնվիրությունը, այն գիտակցությունն թե մենք իրարու համար ծնած ենք, իրարու հանդիպելու նախասահմանված, և թե աշխարհի մեջ չկան թերեւս ուրիշ երկու էակներ որոնք զիրար այնչափ հասկնան որչափ մենք կը հասկնանք զիրար» (88-89):

Զապելս և Հրանտ Ասատուրների նամակագրությունը հայոց նոր գրականության պատմությունից մեզ առաքված այն գեղարվեստական հուշարձանն է, որ այսօր ընթերցման հասցեատիրոջն է հանձնվում նույն նոր գրականության ամբողջական համապատկերի, Զապելի և Հրանտի լավագույն գրական ստեղծագործությունը մատչելի դարձնելու պահանջով:

## ԳՐԱԿԱՆ «ԱԶԱՏԱՄԱՐՏԸ»-Ը 1910-1911 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

**Բ**սաներորդ դարի տասական թվականներին, չնայած հայտնի քաղաքական խոչընդուներին և դժվարություններին, պոլսահայ հասարակական, մշակութային կյանքը վերելք էր ապրում: Հայ գրականությունը կամաց կամաց թոթափում էր պարտադրված «լրագրային գրականության» կարգավիճակը, որ թուրքական անասելի գրաքննության և արգելքների արդյունքն էր: Հրատարակում էին բազմաթիվ գրքեր, պարբերականներ, տեղի էին ունենում գրական ասուլիսներ, կազմակերպվում էին համերգներ, ցուցահանդեսներ, ազգային կյանքի այլեայլ խնդիրներին նվիրված հրապարակային բանախոսություններ: Ազգային-մշակութային կյանքի աշխուժացման յուրօրինակ այցեքարտն էր ժամանակի մամուլը: Իննհարյուրական, տասական թվականներին կոստանդնուպոլիսում տպագրվում էին երկու տասնյակից ավելի հայերեն թերթեր, հանդեսներ՝ Շավարշ Միսաքյանի, Գեղամ Բարսեղյանի «Ազգակ» գրական, հասարակական, քաղաքական շաբաթաթերթը, Բյուզանդ Քեչյանի «Բյուզանդիոն» ազատ, ամենօրյա հայաթերթը, Սմբատ Բյուրատի «Գաղափար» օրաթերթը, Միսաք Գոչունյանի (Քասիմ) «Ժամանակ» ազգային քաղաքական և գրական-ժողովրդական օրաթերթը, Ավետիս Սուլրենյանի «Ծիածան» կիրակնօրյա թերթը, Երգանդ Թողոլյանի «Կավուշ» երգիծական օրաթերթը, Գրիգոր Թորոսյանի «Կիկո» ազգային, քաղաքական, տնտեսական և գրական շաբաթաթերթը և այլն: Թերթերի, պարբերականների և հանդեսների այդ փաղանգում անգնահատելի էր «Ազատամարտ» լրագրի գերն ու նշանակությունը թե՛ ազգային-քաղաքական և թե՛ մշակութային համապատկերում: Իր նշանակությամբ, ազգեցությամբ «Ազատամարտ»-ը, հար և նման «Արևելք», «Հայրենիք», «Մասիս», «Բյուզանդիոն» և «Արևելյան մամուլ» պարբերականների, ըստ էռթյան, եղել է արևմտյան ազգային, մշակութային կյանքը կանխորոշող, բյուրեղացնող կենտրոններից մեկը: Հարկ է նշել, որ արևմտահայ իրականության մեջ տասական թվականներին Հ.Յ.Դ. բազմաբնույթ պարբերականների էին տպագրվում. «1905-1915, Պոլսո, Իզմիրի և Գավառին (Արևմտահայաստանի) մեջ, գրում է Արտաշես Տեր-Խաչատուրյանը, - կ'ունենանք հետեւյալ թերթերը - «Գեղջուկ» (Տրապիզոն), «Արոր», (Երգնկա), «Խարիսիս» (Տրապիզոն), «Մունետիկ» (Իզմիր), «Պարտիզակ» (Պարտիզակ), «Ուսանող» (Պոլիս), «Շանթ» (Պոլիս), «Մտրակ» (Շապին Գարահիսար), «Բյութանիա» (Իզմիր), «Շեփոր» (Կեսարիա), «Հող-դար» (Սեբաստիա), «Պոնտոս» (Տրապիզոն), «Երկունք» (Պոլիս), «Մեղու» (Պոլիս), «Մեղու» (Պարտիզակ), «Փեթակ» (Տրապիզոն), «Մեր տարեցույցը» (Պոլիս), «Մելչյան» (Պոլիս), «Նավասարդ» տարեգիրք (Պոլիս), «Կովածաղիկ» (Մուշ) և այլն: Դեռ կան ուրիշներ»<sup>1</sup>: Լրագիրների և պարբերականների այս հարուստ և բազմազան շարքում բացառիկ է «Ազատամարտ» օրաթերթ

1 Արտաշես Տեր Խաչատուրյան, Հ.Յ. Դաշնակցության 100-ամյա մամուլը 1890-1990, Պելոտք, 1990 թ., էջ 11):

թը, որն իր հրապարակումներով, հոդվածներով, անդրադարձներով զուգահեռ փում է այսօրվա պատկերացումներով կենտրոնական, այսպես կոչված, Հիմնական, մայր թերթերի լավագույն չափանիշների հետ:

«Ազատամարտ»-ը սկսել է հրատարակվել 1909 թվականի հունիսի 10-ից՝ իբրև առավոտյան օրաթերթ: Արտօնատեր խմբագրապետն էր գրող, գրադատ, ազգային գործիչ Ռուբեն Զարդարյանը, պատասխանատու տնօրենը՝ Հակոբ Միրունին, խմբագիրները՝ Գեղամ Բարսեղյանը, Տիգրան Զավենը, Գասպար Իփեքյանը, Ժիրայրը (Բարթող Զորյան): Միայն խմբագրության ստեղծագործական կազմի և թերթին աշխատակցած մտավորականների անունները (Ե. Ակնունի, Ա. Յարճանյան, Դ. Վարուժան, Գր. Զոհրապ, Ս. Վրացյան, Մ. Վարանդյան, Ռ. Սևակ, Մ. Կուրճյան, Ռ. Դարբինյան, Գ. Մալիսաս, Ս. Երեմյան և այլոք) վկայում է, որ «Ազատամարտ»-ի շուրջ հավաքվել էին հայ մշակույթի, մտավորական և քաղաքական կյանքի տառացիորեն բոլոր ներկայանալի դեմքերը: Այն ժամանակա համար թերթն ուներ մեծ տպաքանակ՝ մոտ տասներկու հազար: Հրատարակում էր Կ. Պոլսի Բերա թաղամասում գտնվող «Ատոմ Շահեն» տպարանում (Ենի Զարշի փողոց, թիվ 32): Օրաթերթը, բացի ազգային, քաղաքական, հասարակական խնդիրներից, անդրագառնում էր նաև մշակույթին, գրականությանը, սակայն արդեն 1909-ի վերջին հղացավ զուտ գրական, մշակութային հավելված ունենալու գաղափարը, որը հնարավորություն կտար ավելի հանգամանալից և անհամեմատ մեծ ծավալով լուսաբանել հայ և համաշխարհային մշակութային կյանքը, տպագրել ազգային և օտար գրականություններ, գրախոսություններ, քննադատականներ, արվեստագիտական գրություններ: Գաղափարն իրականացավ 1910 թվականին, երբ Ռուբեն Զարդարյանի խմբագրությամբ (նա «Ազատամարտ»-ի հավելվածի արտօնատեր-Հիմնադիրն էր նաև) մինչև 1911-ը լույս տեսավ «Ազատամարտ» գրական-գեղարվեստական-գիտական շաբաթաթերթը, որ մեր գրականության պատմության մեջ սովորաբար անվանում են գրական «Ազատամարտ»: Այսեղ ավելացնենք, որ օրաթերթի այս հավելվածը 1912-ին լույս է տեսել «Բագին» անվանումով (յոթ համար):

«Ազատամարտ»-ի հավելվածը ընթերցողին էր ներկայացնում գրականության, գեղարվեստի անցյալ և ժամանակակից ձեռքբերումները, սատարում և կանոնակարգում ընդհանրապես հայ հոգեսոր կյանքը: Տակավին 1898-ին հայ գրական ընթացքում լուրջ մտահոգություն էր արտահայտվում գրական կյանքի իրավիճակի, ազգային մշակույթի կրավորական մտայնությունների վերաբերյալ. «Քիչ մը ֆրանսերեն կը սորվինք, և ահա կու տանք ինքզինքնիս գեղեցիկ հատվածի մը թարգմանության, ասոր կամ անոր օգնությամբ աղեկ գեշ այդ մասին հաջողելե վերջ, հրատարակության կու տանք զայն, կը գովինք, կը փառավորվինք, ալ կը կարծենք թե մեր պարտքը բոլորովին կատարեցինք: Ֆրանսիական և անգլիական գրականությունը շատ ավելի աղեկ գիտենք քան մերը. և անձուկ իմաստով էն մոտավոր ժամանակակիցներեն քանի մը ազգային գրիչներ կը ճանչնանք...», – նշում էր իր «Արդի գրական սեռերը» հոդվածում Եր. Տ. Անդրեասյանը<sup>2</sup>: Եվ իրոք, նախ՝ գրական «Մասիս»-ի և ապա՝ «Ազատամարտ»-ի

2 Բյուզանդիոն, Կ. Պոլիս, 1898 թ., 5 սեպտեմբերի, թիվ 571:

Հավելվածի ու այլ մշակութային հանդեսների շնորհիվ ստեղծվեց մի ներդաշնակ իրավիճակ, որտեղ ազգային գրականության հաշվին չէր ներկայացվում եվրոպականը, այլ նյութերի ճաշակով և համամասնական ընտրությունը հնարավորություն էր ընձեռում ընթերցողին ճանաչելու, կարդալու և՝ ազգային, և՝ համաշխարհային գրականության հեղինակներին։ Այս ներդաշնակ, համամասնական սկզբունքով էր առաջնորդվում նաև «Ազատամարտ»-ի գրական հավելվածը։ Անդրանիկ համարում Ռուբեն Զարդարյանը «Մտավորական հերկը» առաջնորդողում փաստորեն արձանագրում էր գրական «Ազատամարտ»-ի հանգանակը։ «Ազատամարտ»-ի շաբաթական այս հավելվածը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ նախաքայլ մը գեափի գրական նոր աշխատանքը, որուն համար իրենց գործակցությունը պիտի բերեն արևմտյան և արևելյան հայերու հայտնի գրողներեն մեծ մասը, ինչպես նաև նորահաս սերունդի բոլոր լավագույն ներկայացուցիչները։

Իսկ Արվեստն ու Գիտությունը, կոչված են հետզհետե տիրապետելու հոգիներուն, ավելի հզոր՝ քան որևէ մարդկային բարոյական ուժ, և դառնալու ապագայի միակ բարձրագույն կրոնքը»<sup>3</sup>։ Սա էր այն նպատակը, որին ծառայում էր գրական շաբաթաթերթը՝ թե՛ այս կամ այն մշակութային խնդրի հրատապ արձարծումներով, թե՛ զանազան լրատվություններով և տեղեկատվական ընույթի նյութերով։ Շաբաթաթերթի հրապարակումների տիրապետող հոսքերը կարելի է բաժանել հինգ հիմնական խմբերի. ա) հասարակագիտությանը, փիլիսոփայությանը, հոգեբանությանը, պատմությանը, կրոնին և ազգային կյանքին վերաբերող զանազան հրապարակումներ, բ) արվեստ, արվեստագիտություն, գ) հայոց լեզվի խնդիրներ, դ) գրականություն, ե) գրականագիտություն և քննադատություն։ Տարբեր գիտություններին և փիլիսոփայական հոսանքներին, ուղղություններին նվիրված հոդվածներում, հրապարակումներում, ծավալուն գրություններում «Ազատամարտ»-ը ներկայացնում էր ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային հոգեոր և գիտական մտքի ամենատարբեր էջեր։ Ուշագրավ է Նիցշել «Այսպես խոսեց Զրադաշտ»-ը երկի «Հին ու նոր տախտակներու մասին» գլխի Հայկ Բաթաբանյանի՝ բնագրից կատարած թարգմանությունը։ Շավարշ Միսաքյանը հանդես էր գալիս մշակույթի, գիտության զանազան խնդիրներին նվիրված վերլուծումներով։ Այստեղ է տպագրվել (1911 թ., թիվ 62) Միքայել Վարանդյանի «Հայ մտավորականությունը, իր գործը ներկային և անցյալին մեջ» հոդվածը, որ Ալյուտարում 1911-ի սեպտեմբերի 11-ին կարդացած դասախոսության համառոտ տարբերակն էր։

Արվեստին, արվեստագիտությանը վերաբերող հրապարակումներում խմբագրությունը ընթերցողին էր ներկայացնում ինչպես դասական, այնպես էլ ժամանակի հանրահայտ արվեստագետներին (գեղանկարիչներ, քանդակագործներ, երգահաններ և այլն)։ Հիշատակության է արժանի Փիդիասի և Միքայելանջելոյի ստեղծագործությունների բազդատականը, «Իբսենի կյանքը» հոդվածը, Օգյուստ Ռոդենի արվեստին նվիրված հոդվածաշարը, Ա. Երկանյանի «Ռաֆայել» (կենսագրությունը, արվեստը և գործերը) ուսումնասիրությունը։

Ինչպես յուրաքանչյուր գրական, մշակութային հանդես, շաբաթաթերթ-հա-

3 Ազատամարտ, շաբաթաթերթ-հավելված, Կ. Պոլիս, 1910 թ., թիվ 1, էջ 1:

վելվածը անմասն չէր նաև հայոց լեզվի խնդիրներին անդրադառնալուց։ Մտահոգությունն այս պարագային միանշանակ էր՝ սկսել գրական լեզվի վիճակի, հեռանկարների շուրջ շահագրգիռ ասուլիս։ 1911-ի 37-րդ համարում տպագրվում է Ա. Խաչատրյանի «Հայ գրական լեզվի խնդիրը» հոդվածաշարի առաջին մասը, որտեղ գրագետը մասնավորապես նշում է. «Նոր բառերու, դարձվածքներու և ոճերու իբր սրտաբուխ աղբյուր են մեր գավառաբարբառները, որոնց լեզվի նյութը ցարդ շատ քիչ օգտագործված են այս ուղղությամբ»։ Սրանից հետո խմբագրությունը տպագրում է մի հարցաթերթիկ, որ նպատակամիտում էր գրական լեզվի ամենատարբեր խնդիրների անդրադարձներ։ Հավելվածի հարցաթերթիկին պատասխանում են Հ. Շահրիկյանը, Մ. Վարանդյանը, Դ. Վարուժանը, Հ. Քյուֆեճյանը (*Օշական*), Ա. Չոպանյանը, Շիրվանզադեն, Վ. Թ. Փափազյանը։

«Ազատամարտ»-ի հավելվածի հրապարակումների գերակշռող մեծամասնությունը, բնականաբար, գրական ստեղծագործություններ էին, գեղարվեստական թարգմանություններ, հայ և համաշխարհային գրականությանը, առանձին գրողներին նվիրված ուսումնասիրություններ, դիմանկարներ, գրական ընթացքը մեկնաբանող և արժեքագորող քննադատականներ, հոդվածներ ու ծավալուն գրություններ։

Հավելված-շաբաթաթերթը սկզբունքային հետևողականությամբ տպագրում էր ինչպես հայտնի, այնպես էլ ստեղծագործական ճանապարհը նոր սկսած բազմաթիվ հեղինակների, ծանոթացնում արտասահմանյան գրականության ներկայանալի, հոչակավոր գրողներին։ Հրատարակվել են Օ. Ուայլի, Լ. Տուստոյի, Ա. Չեխովի, Է. Զոլայի, Ա. Ֆրանսի, Մ. Նորգառուի, Ռ. Ռիտմենի, Ստ. Պշերիկսկու, Է. Վերհանի, Է. Պոյի, Ի. Վազովի, Օ. Միրաբոյի և այլոց ստեղծագործություններից։ Սրան զուգահեռ տպագրվում էին նաև համառոտ ակնարկներ, հոդվածներ օտար գրականությունների պատմության, այս կամ այն հեղինակի մասին (բավարարվենք երկու օրինակով՝ Ս. Վրացյանը այդօրինակ հոդվածներից մեկում անդրադարձել էր Լ. Անդրեևի, Մ. Գորկու, Կուլպրինի ստեղծագործություններին, իսկ Շահան Նաթալիին «Գրական տիտաններ» խորագրով նյութերում՝ թումաս Քարլայլի դիմանկարին)։

Հավելված-շաբաթաթերթի էջերում իրենց ստեղծագործություններն էին տպագրում հանրահայտ գրողներ, խմբագրությունը պլոտինալ հեռատեսությամբ տեղ էր տալիս նաև նորերին, որ Դանիել Վարուժանի, Լևոն Շանթի, Հրանդի (Մելքոն Կյուրճյանի), Արտաշես Հարությունյանի, Հակոբ Արունու, Հրանտ Նազարյանցի նման մոտ ապագայում պիտի հարստացնեին հայ գրականության անմահների համաստեղությունը՝ Հակոբ Օշական, Կոստան Զարյան։ Այստեղ էին հրատարակել իրենց առաջին ստեղծագործություններից արտերկրի գրականության այնպիսի վարպետներ, ինչպիսիք էին Մաննիկ Պերպերյանն ու Լևոնդ Մելոյանը։ Գրական «Ազատամարտ»-ի նախընտրելի բանաստեղծներն էին Դանիել Վարուժանը (տպագրվել են մասնավորապես «Գրգանք», «Բարձունքն ի վեր» քերթվածները), Էդուարդ Գոլանճյանը, Լևոն Էսահանյանը, Ահարոննը։ Սիրունի բանաստեղծը լիովին կայացավ շաբաթաթերթի էջերում, անվանի գրագետը հավելվածում է տպագրել իր «Քմայքներ»

**շարքը:** Ահավասիկ մի քառասող շարքի «Թաշկինակը» բանաստեղծությունից.

Մերթ բուրմունքու, մերթ մետաքսե, մերթ ալ համակ սնածիր,

Մեր ցավերուն ու հրճվանքին դնենք է անքածան.

Մեր սերերուն, մեր հուշերուն թարգմանն է ան ուշադիր,

Ու մեր կյանքի վայրկյաններուն կարգախոսն է դարձած ան<sup>4</sup>:

**Բանաստեղծություններով հանդես է եկել նաև հայ ապագայապաշտության (փուտուրիզմ) ներկայացուցիչ Հրանտ Նազարյանցը.**

Թավշութակի հնձք մ'անհո՛ւն

— Ով Տրտմությունս, ունկնդրե՛...—

Լուսնակ ցագով աստղերուն

Կը բարձրանա արծաթե:

Ծերմակ օրիասն լուսնին

Զոր կ'ավետվ հնձքն այս թավ

Կը նմանի հոգիին

Ու ձանձրութիս քաղցրանբա՛վ...

Թավշութակի հնձքն այս թա՛վ

Լուսնան մութ քերթվածն է,

Զոր լուսատառ տարիանքով

Լուսնակ գիշերն կ'արծաթե<sup>5</sup>:

Արձակ ստեղծագործություններով «Ազատամատ»-ում հանդես են եկել Զապել Եսայանը, Ղևոնդ Մելոյանը, Հրանտը, Մաննիկ Պերպերյանը: Այստեղ են տպագրվել Հակոբ Օշականի մի շարք փոքր արձակ ստեղծագործություններ («Ինչո՞ւ կը մեռնինք», «Մատմազել Եվա», «Տոգսանը», «Պաղտո»): «Մեր բանաստեղծները» խորագրով Օշականը հավելվածում առաջին անգամ հրատարակել է Եղիշե Դուրյանի և Լևոն Էսաճանյանի դիմանկարները: Նշենք նաև, որ 1912-ին շաբաթաթերթում լույս է տեսել մեր արձակի ամենաինքնատիպ գրություններից Լևոն Շանթի «Կինը» (շարունակաբար առաջինից վեցերորդ համարներում):

Գրականագիտական, քննադատական հոդվածներով հանդես են եկել Ա. Նաբաթյանը («Զոհրապի ստեղծագործության ընդհանուր գծերը»), Զապել Եսայանը («Տիկին Մարի Սվաճյան»), Մերուժան Պարսամյանը («Գրական ակնարկներ») և այլոք: «Ազատամարտ»-ում լավագույնս դրսեռվեց Արտաշես Հարությունյանի քննադատական ձիքը: Հիշատակության է արժանի Սիամանթո-Յարճանյանի 1910 թ. Բոստոնում հրատարակած «Ամբողջական գործի» առաջին հատորի, Կ. Պոլսում 1911-ին լույս տեսած Լևոն Շանթի «Վերժին» գրքի գրադատականները, Ռուբեն Զարդարյանի «Ցայդալույս» ժողովածուի գրախոսականը, ուր դիպուկ ու նուրբ բնութագրումներով ներկայացրել է մեր արվեստագետ սերնդի ինքնատիպ ներկայացուցիչներից մեկի գրականությունը. «Ամենեն առաջ՝ ինք բանաստեղծ մըն է: Քնարերգու արձակագիր մը: Քնքուշ, դյուքազգաց և երազատենչ հոգի, որ եթե ունի իրականության զգացումը,

4 Ազատամարտ, 1910 թ., թիվ 13, էջ 201:

5 «Աստեղաթև մենականություններ», Ազատամարտ, 1911 թ., թիվ 66:

բայց որուն մեջ երևակայական տարրը գերազոր է, – ստեղծիչ տարրը մեծ գեղիկ անուրջներուն, որոնց հայրենաբաղձութենեն պիտի տառապի միշտ, որոնց դյուլթական հեռապատկերը կը խուսափին տարտամ այլ մոգիչ գեղեցկությամբ հեռավորություններու խորը»<sup>6</sup>:

Այս համառոտ ակնարկ-ուրվագծով փորձեցինք ընթերցողին ընդհանուր պատկերացում կազմելու հնարավորություն ընձեռել 1910-1911 թթ.. գրական «Ազատամարտ»-ի մասին: Ուրախալի է, որ ուժուն երկու տարի հետո «Ազատամարտ»-ը կրկին ունենում է իր գրական-մշակութային հավելվածը, որն իր նախորդի պես ընթերցողին հաղորդակցելու է արվեստի՝ զարդարյանական ընուրոշումով՝ «բարձրագույն կրոնքի» հետ:

---

6 Ազատամարտ, 1911 թ., թիվ 46:

## ԻՆՏՐԱՅԻ ԳԻՐՔԸ

**Պ**արասկերի արևմտահայ գրական պրոցեսի քննությունն անկարելի է առանց Տիրան Զրաքյանի գրական վաստակի հիմնավոր ուսումնասիրության: Եվ ահա այս մտահոգությունների միջնորդում հաճելի անակնկալ էր Տ. Զրաքյանի<sup>1</sup> երկերի հրատարակությունը:

Տիրան Զրաքյանը ծնվել է 1875 թվականին Սկյուտարում: Տեղի նախակրթարանում սովորելուց հետո հաճախում է Պերպերյան վարժարան: Ուեթեսու Պերպերյանը մեծ ազդեցություն է թողնում Զրաքյանի վրա, և ամբողջ կյանքում նրանք մնում են լավագույն բարեկամներ: Իզուր չէ, որ նա «Ներաշխարհը» նվիրել է Պերպերյանին: Մտեղծագործության առաջին հրատարակության մեջ (Պոլիս, 1906 թ.) Պերպերյանը գրել է մի փոքրիկ առաջաբան՝ «Նամակ առ ինտրա», որը հետաքրքրական է ստեղծագործության գնահատման տեսանկյունից:

Պատանեկան տարիների ամենապայծառ հուշերից մեկը Ալեմտաղ ճամփորդելն է: 1892 թվականին Պերպերյան վարժարանի աշակերտներ Տիրան Զրաքյանը և Թեոդիկ Լապձինճյանը այդ ճանապարհորդության ժամանակ ընկերակցել էին տասնչորսամյա Զապել Եսայանին: 1900 թվականին ամուսնացել է Վերժին Պեյազյանի հետ: Հետաքրքրական են Եսայանի հուշերը Պեյազյան քույրերի մասին. «Անոցմե մեկը՝ իոժենի, ամեն իրիկուն տուն կդառնար գլխիկոր, փարախը մտնող ոչխարի պես և կենթարկվեր անտրտունջ բարբարոս հոր զայրույթներուն: Մյուսը՝ Վերգինեն, որ մի քանի տարի հետո դարձավ Զրաքյանի կինը, ավելի ըմբոստ էր և իր անկախությունը ապացուցելու համար կդիմեր արտասովոր միջոցներու»:

Սկսած 1895 թվականից մինչև 1915 թիվը զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Մահացել է 1921 թվականի հունիսի 6-ին, աքսորի ճանապարհին:

Տ. Զրաքյանը արևմտահայ քննարական արձակի ինքնատիպ ներկայացուցիչներից մեկն է: Նրա կարճատև ստեղծագործական կյանքը մեզ թողել է բավականին հարուստ գրական ժառանգություն: «Ներաշխարհ», սոնետների «Նոճաստան» ժողովածու, բազմաթիվ ու բազմաբնույթ հոդվածներ, ուղեգրություններ, ակնարկներ, հետաքրքրական նամականի, ոգեհարցության հետ կապված ուսումնամիջություն՝ «Հայտնությունը անդրաշխարհեն» վերնագործություն:

1900 թվականին Զրաքյանը գրեց, վերջացրեց «Ներաշխարհը», որն առանձին գրքով տպագրվեց միայն 1906 թվականին: 1902 թ. «Արևելյան մամուլի» էջերում երևում է հաղորդագրություն, որը հաստատում է «Ներաշխարհի» գոյությունը: Հաղորդագրության հեղինակին հատկապես գուր էր եկել ծերունու հետ անտառում հանդիպման կտորը: Սակայն տպագրված «Ներաշխարհում»

1 Տիրան Զրաքյան, (Ինտրա), Երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1981:

նման հատված չկա: Այս փաստը հիմք է տալիս մտածելու, որ Զրաբյանը շուրջ վեց տարի մշակել է ստեղծագործությունը, սեփական երկի նկատմամբ եղել է բավականին խստապահանջ: «Այդ կտորը զոր հոդվածագիրը կճանչնար ձեռագիրը՝ շնորհ չգտավ հեղինակին քով, որմե վտարվեցավ, զի բոլորովին ճշմարիտ պատմություն մը չէր. չափազանց տեսականացած ու մասամբ հերյուրված պղտիկ իրողություն մ'էր» (Բյուզանդիոն, 1906 թ., թիվ 3115):

«Ներաշխարհը» ժանրային առումով իր մեջ խտացրել է էսսեի, վերհուշի ու քնարական արձակի տարրեր: Հատկապես քնարականությունը խիստ ընդգծված է «Ներաշխարհում»:

Տիրան Զրաբյանը իր բոլոր հոդվածները ստորագրել է ոչ թե ինտրա անունով, այլ՝ Զրաբյան: Ինտրան վերաբերում է միայն «Ներաշխարհին» և «Նոճաստան» բանաստեղծությունների ժողովածուին: Համամիտ ենք գրքի առաջաբանի հեղինակ Ստ. Թոփչյանի այն կարծիքի հետ, որ ծածկանունն, ի միջի այլոց, կապվում է «Ներաշխարհի» էության հետ. իզուր չէ բանաստեղծը գրում, թե այդ էությունը լույսն է, լույսն ապրելն է: Լույսի ձգտումը, միստիկական երանգագործումը, իհարկե, հեռավոր և որպես կանոն միջնորդագորված շփման եղբեր ունեն ինդրա աստվածության հետ:

«Ներաշխարհի» առաջին քննադատներից Տ. Էլքենճյանը գտնում էր, որ ինտրայի իմաստասիրական սկզբունքները վայրկյանի տպագորության տակ փոխվում են և գրքի մեջ ամենուրեք միաբան չեն: Այս պարագան նկատել է նաև հեղինակը՝ ինքնադատականում: Զրաբյանը «Ներաշխարհում» անդրադառնություն է կեցության գեղագիտական ըմբռնմանը, որ ստեղծագործության անկյունաքարն է:

Ստեղծագործության կառուցվածքը ամբողջական է: «Ներաշխարհի» ութ հատվածներն էլ տեքստի զարգացման, ընդհանուր գաղափարի արծարծման, կոմպոզիցիոն տեսակետից ընդհանրություն են կազմում: «Ներաշխարհն» ունի բառապատկերային հարուստ համակարգ: Պատկերների հաճախականությունը երբեմն չի բավականացնում հեղինակին, և նա շատ հաճախ արդեն ավարտուն պատկերը հարստացնում է նորանոր երանգներով: Էլքենճյանը գրում է: «Ուշագրության է արժանի ինտրայի քով առատությունը փոխաբերությանց, զորս գիտե ճարտարորեն պատշաճեցնել բանաստեղծական ոճին: Առատ են վերադիրները այլ որք փայլ ու կորով կուտան իր խոսքերուն»: (Բյուզանդիոն, 1906 թ., թիվ 3053):

«Ներաշխարհը» մարդու ներքին վիճակների, ապրումների, հոգեկան աշխարհի պատմություն է: «Բնականին, ճշմարիտին սիրահար և ակնածու այս հեղինակն ոչինչ գրած է չապրված»: (Բյուզանդիոն, 1906 թ., թիվ 3115): Այսպես է բնութագրում «Ներաշխարհը» հեղինակն իր ինքնադատականում: Հուշ, հիշողություն, երևակայություն՝ ահա վիճակներ, որոնք «Ներաշխարհի» հետ ամենաանմիջական շփման եղբեր ունեն:

«Երևակայությունս կպտտի հուշքներուն մեջ», — գրում է Տ. Զրաբյանը: Պարզ ու մեկեն է ինտրայի միտումը՝ անհունի, անսահմանի մեջ մարդու, մարդկային կատարելության ձգտումը: Քնարական հերոսի ներքին վիճակների բացահայտումը տանում է գեպի բնութագրաշության և հումանիզմի գաղափա-

ըը, կատարելության փնտրառուքի և կարոտախտի հաստատում, որն ունի իր երևէջումները, վերելքներն ու վայրէջքները: Այդ հաստատումը առաջացնում է բախումներ, երկվություն, ճնշող և ոգևորող ապրումներ: Հատկանշական է, որ «Ներաշխարհի» վերջնամասը իոենայի փառաբանությունն է: Աստծո և գերերկրայինի, լույսի և ստվերի երանգները թանձրանում են, ի մի բերվում, դառնում գեղեցիկի և վեհի քնարական հաստատում և հավատամք:

Հետաքրքրական նախապատմություն ունի Զրաքյանի ինքնադատականի ծնունդը: «Ներաշխարհի» հրատարակությունը մեծ աշխուժություն առաջցրեց գրական շրջաններում: Արձագանքեցին արևմտահայ բազմաթիվ պարբերականներ, գրականության և արվեստի շատ գործիչներ: Պետք է նշել, որ գրախոսները բաժանվել էին երկու խմբի: Մի կողմը անվերապահորեն չէր ընդունում, իսկ մյուս բանակը «Ներաշխարհը» համարում էր երևույթ:

Բուռն վիճաբանությունների այդ խայտարդես մթնոլորտում պթափ հայացքով առանձնանում էր Տիգրան Էլքենճյանը: Քննադատը գրում է. «Պ. Զրաքյանի գործն առաջին անգամ տաժանալից տպագորություն մը կիթողու ընթերցողին մտքին վրա իր անսովոր լեզվին պատճառով: Սակայն ընթերցման կրկնություն մը կամ ընտելացում մը հեղինակին արվեստախառն լեզվին և ուրույն սովորությանց կբառնան տակավ հոռի տպագորությունը, թաքուն արժանիքներ ի վեր հանելով հետզգեստե» (Բյուզանդիոն, 1906 թ., թիվ 3052): Հակամետ կարծիքները առիթ տվեցին հեղինակին «Բյուզանդիոնում» հանդես գալու ծավալուն քննադատականով: Հողվածաշարը ներառում է երկի լեզվի, ոճի, ոգու և իմաստափրության շրջանակները: Գրական երկը, ըստ Զրաքյանի, պետք է համապատասխանի արվեստի ամենաբարձր պահանջներին: Այս մտայնությամբ է հեղինակը գնահատում սեփական ստեղծագործությունը: Այս եզակի գրական փաստաթղթի պարագան հար և նման է Մեծարենցի նշանավոր հողվածի ծննդյան պարագային:

Գրքի «Նամակներ Վերմինին» բաժինը ոչ միայն հաճելի հանդիպում է Զրաքյանի գրական ժառանգության հետաքրքրական էջերից մեկի հետ, այլև անգնահատելի փաստ հետազողների համար (հիշենք, որ գեռես 1910 թ. Հրանտ Նազարյանցը Պոլսում հրատարակեց Եղիշ Տեմիրճիպաշյանի, այսպես կոչված, սիրային նամակները):

Տիգրան Զրաքյանի գրական ժառանգությունը և հատկապես «Ներաշխարհն» ու «Նոճաստանը» մեր գրականության հետաքրքրական գործերից են: Նրա ստեղծագործությունները շատ բարձր են գնահատել մեր մշակույթի նշանավոր գործիչները: Սակայն ցանկանում ենք հիշել Եղիշե Զարենցի գնահատականը, որ մեզ է հասել Մահարու «Զարենց-Նամեի» շնորհիվ, «Դու գիտե՞ս, որ ես եղել եմ Վանում: Իմ «Դանթեականում» էն, որ տեսել եմ «մեռած քաղաք», քո վանն է, որ կա: Մտա տները, վայ թե ձեր տունն էլ եմ մտել... գրքեր շատ կային, հարուստ գրադարաններ: Էնտեղ առաջին անգամ տեսա ու կարդացի ինտրայի գրքերը: Ամենի տպագորություն թողեցին»:

## ԸՆԹԵՐՑՄԱՆ ԱՂՈԹՔ

Աղօթքի զօրութիւնը

«Եւ ես ասում եմ՝ ձեզ. ուզեցէ՛ք, եւ կը տրուի ձեզ, փառուցէ՛ք, եւ կը գտնէք, բախեցէ՛ք, եւ կրացի ձեզ [համար], որովհետեւ ով որ ուզում է, առնում է, ով որ փառում է, գտնում է, եւ ով որ բախում է, բացում է [հրա առաջ]»:

Ավետարան ըստ Ղուկասի, գլուխ ԺԱ. 9-11

Հյ գրքի պատմության ընդհանուր համապատկերում անթաքույց է բազմաթիվ և բազմաբնույթ ուսումնասիրությունների, մատենագիտական զանազան հետազոտությունների, ցանկերի, ցուցակների առատությունը. Հանգամանք, որ միանշանակ առկայում է մեր մշակույթի «լիությունը»՝ իբրև կենսունակ, ամբողջական, առողջ մշակույթ, որը վստահ, առանց դույզն-ինչ կասկածանքների անցնում է դեպի 21-րդ դար՝ արդիական բնույթով և սեփական առաքելությամբ:

Եվ գիրքն՝ իբրև մշակույթից ածանցված շշափելի, թանձրացական երևույթ, իբրև «իմպերատիվ» մեր մշակութաբանության պատմական հետազծում, հարունեցել է յուր վկայված արձանագրությունները մտքի ներդաշնակ կշռույթներում թե՛ իբրև գիտություն (Գարեգին Զարպհանալյան, Արսեն Ղազիկյան, Թեոդիկ, Հակոբ Անասյան ու բազմաթիվ նվիրյալ այրեր), թե՛ որպես «գրքի մասին գրականություն», որ զուգահեռ է հյ գրականության պատմությանը:

Այս զուգահեռական վկայությունները նաև յուրովսանն իրականացնում էին հյ գրքի հոգևոր նկարագրությունը, որը, դարերի ու տարիների ընթացքում հավաքվելով, այսօր ստեղծել է մեր գրքի հոգևոր նկարագրության ուրույն մի մասյան՝ Գարեգին Բ կաթողիկոսի «Հյ մարդը՝ հյ գիրքին գիմաց..»<sup>1</sup> վերտառությամբ աշխատությունը: «Աշխատությունը» կիրառում եմ իբրև ընդլայնված հասկացողություն, որովհետև այս գիրքը և՛ ընտիր գրականություն է, և՛ ներբողյան, և՛ ինքնուսույց՝ հյ գրքի այբուբենը սովորելու, և՛ ուսումնասիրություն, և՛ դասագիրք, և՛ թե, ինչպես վեհափառն է նշել, «Փորձ մը՝ Հյ Գիրքի Փիլիսոփայության»: Այսօրինակ հավաքականությունն է պատճառաբանում գրքի ուրույնությունը, եզակիությունը:

Գարեգին Բ կաթողիկոսը ըստ ամենայնի շարունակում է նոր շրջանի մեր եկեղեցու հայրերի բեղուն ստեղծագործական ավանդները: Այսպես՝ սկսած 1977 թվականից (մայիսի 29-ին օծվել է Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս) Բեյրութում լույս են տեսել տասնհինգից ավելի գրքեր, ուսումնասիրություններ: Յանկանում եմ Հիշատակել 1979 թ. տպագրված «Մեծ Պահքը երերակ իմաստով», «Ծանի՛ր զքեզ...» (1983 և 1984), «Խորհի՛ եւ Մտիր... Խոհեր եւ Հայեացք-

1 Գարեգին Բ կաթողիկոս, Հյ մարդը՝ Հյ գիրքին դիմաց..., Անթիլիաս, 1991 թ., 150 էջ:

ներ՝ Դպրեվանքի մասին» (1984), «Հրաշք Տաթեւի. Թափոր լերան լանջերուն...» (1989) և հատկապես 1983 թվականին հրատարակած «Հող, մարդ եւ գիր» մեծարժեք գիրքը, որ արժանացել է Հայկ Սերենկուլյան գրական մրցանակի: Պետք է ասել, որ այս գրքում առաջին անգամ «Քառաձայն խոսք՝ բյուրաձայն հայ գիրքի մասին» խորագրով լույս էին տեսել խնդրո առարկա մատյանից չորս գլուխ (տե՛ս «Հող, մարդ և գիր», էջ 329-372): Բեղուն ստեղծագործական գործունեության հետ Վեհափառը, սկսած 1977 թվականից, կազմակերպել է հայ գրքի ցուցահանդեսներ, որոնք, բացառությամբ 1978 թ., տասներկու տարի շարունակ բացվել են: Այս հանդամանքը կարևոր է, որովհետեւ, փաստորեն, այդ ցուցահանդեսներն են գրքի և՝ նախապատմությունը, և՝ թե յուրատեսակ հղացումը. «Շատեր պիտի յիշեն, որ ամէն մէկ ցուցահանդէսի բացման առիթով գրաւոր խօսք մը կ'արտասանէի, ներկաներուն եւ առհասարակ հայ ժողովուրդի զաւակներուն ուշադրութիւնը սեւեռելով Գիրքի, Հայ՝ Գիրքի արժէքներուն, պատմական անցեալին, այսօրուան պատկերին, հայ մարդու կողմէ գիրքին հանդէպ վերաբերումի լուսաւոր եւ ստուերոտ կողմերուն, գրական ու ժխտական մօտեցումներուն վրայ:

Տասներկու թիւին հասած Ցուցահանդէսներու այս հանդրվանի, խորհեցայ մէկ հատորի տակ խմբել բոլոր այդ «Խօսք»-երը, որոնք սրտիս եւ միտքիս, սիրոյս եւ նախանձախնդրութեանս, ընթերցումներուս եւ պրատումներուս արգասիք եղան Հայ Գիրքի աշխարհի ի՞մ ըմբռնումիս եւ անոր տարածման, ժողովուրդի կեանքին մէջ շաղախման ի խնդիր տարած աշխատանքիս ծիրին մէջ»:

Ահա այսպես տասներկու տարի (գերազանցապես հոկտեմբեր ամսին) երեան են եկել այս անզուգական խոհերն ու դատումները հայ գրքի մասին: Ցուրաքանչյուր տարի մի առանձնահատուկ տեսանկյունով, հայեցակետով, հայ գրքի փիլիսոփայության տարբեր կարգադրությունների քննությամբ, որոնց նախորդել է Հոգեոր նկարագրության ելակետը՝ «Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց», իբրև առաջաբան, քանի որ այս հանդիպադրումն է այն անհրաժեշտ ու բավարար պայմանը, որը հնարավորություն է ընձեռում հետազարդու մասնավորեցումներին: Նամանավանդ գրքի «մեկնարկային» խտացումը ըստ ամենայնի մատնանշում է, որ սա «Հայ նորատիպ գրքերի համատեղյալ պատկեր» է և կոչված է լինելու «նախագրգիռ հայ գրքի տարածման» համար: Ուրեմն այսօր Հայաստան և ի սփյուռք Հոգեոր ուժացումից ազատագրվելու ապագենը գիրքն է, որին դիմակայում են ժամանակակից աշխարհի բազմաթիվ հնարներ ու զբաղմունքներ, ավելի հեշտ լրատվության ու իրազեկման միջոցներ, այնպես որ գրքի Հոգեոր վկայությունները պիտի ցուցանեն յուրյանց հզորությունն ու հարազատությունը, քանի որ հայ անհատի ես-ը և հայ գրքի Հոգեոր բնույթը բոլոր չափումներով փոխաձեւ են, ներթափանցվել:

Ահավասիկ գրանց մասնավորեցումները:

Ա.- «Հայ Գիրքը՝ Պատիվն Հայուն»: Գրքի առաջին գլուխն է, որտեղ մշակույթի հատկանության ընդհանրացած գիտարկումը գրքի և հավատքի միասնականացումն է շեշտում. «Գիրը եղայրացացաւ Խաչին հետ: Գիրքը դարեր շարունակ եղաւ Աւետարան: Վանքը՝ դպրոց: Վարդապետը՝ վարժապետ:

Վանականը՝ գրիչ։ Վանատունը՝ մատենադարան։ Գանձատունը՝ ձեռագրատուն։

Բ.՝ «Հայ Գիրքը՝ Պարտքը Հայուն»։ Գրքի պատմության համառոտ, սակայն ամբողջական պատմությունն է այս գլխում, ուր հանդրվանում է այսօրվա համար առաջնահերթ հարցումը։ «Ո՞ւր է հայ մարդը այսօր՝ հայ գիրքին դիմաց։ Անտե՞ս, հանդիսատե՞ս, անտարքե՞ր, անհաղո՞րդ,

թէ՝

Սիրախոյզ ու հետախոյզ, ընթերցող ու որոնող, սպասարկու եւ տարածող»։ Վեհափառի համար այս պարագային անբեկանելի միանշանակ է պատասխանը։ «Ով որ հայ գիրք կը կարդայ՝ աւելի հարազատօրէն հայ կը զգայ, նման այն մարդուն որ ջուրը ակէն կը խմէ, զով ու զուլալ»։

Գ.՝ «Հայ Գիրքը՝ Տագնապը Հայուն»։ Հայ գրքի անընդհատ վերակոչման, այն միշտ գոյավորման ընթացքի մէջ տեսնելու մտահոգություններն են այստեղ ամփոփված։ Դուրս գրապահեստներից ու գրադարակներից, միշտ ընթերցողի հետ, քանի որ միայնությունը մարդուց զատ տառապանք է նաև գրքի համար։

Դ.՝ «Հայ Գիրքը՝ Ճանապարհ Հայուն»։ Գիրքը նաև պատմություն է, սեփական պատմություն և նաև ապագան, որ արդեն վկայված է։ Կյանքի այդ ճանապարհը նախ սեփական գրականությունն է, նամանավանդ։ «Ուր կը գտնէք հայ կեանքը ի խորութեան, ի լայնութեան եւ ի բարձրութեան։ Օշականը իր սիրտը պատռելու աստիճան եւ գրչին մելանը սպառելու գնով կ'ըսէր, — գրականութեան մէջ կը փրկուի կեանքը...»։

Ե.՝ «Հայ Գիրքը՝ Ընկերը Հայուն»։ Բնականաբար մեր հատկականութեան մէջ վաղուց անտի ամրակայված անբաժանելիությունը գրքի հետ պետք է ստանար յուր արտացոլումը։ «Հայ Գիրքը, այդ մշակոյթին ամենագօր կորիզը, եղաւ հայ մարդուն ընկերը ամէն տեղ եւ ամէն ժամանակ։ Հո՛ն ուր հայութիւնը օտար աշխարհներէ եկող օտարացնող ազդեցություններու տակ տժգունեցաւ եւ աղօտեցաւ՝ Հայ Գիրքը դարձաւ գոյն եւ լոյս։ Հո՛ն ուր հայութեան շունչը շիջելու աստիճան տկարացաւ ու բարկացաւ՝ Հայ Գիրքը փչեց «շունչ կենդանի» եւ դարձաւ ձայն պայծառաշեշտ։ Հո՛ն ուր հայութիւնը խոտորեցաւ ներքին անհաւատարմութեան, ուծացումի փորձութենէն այցելուած՝ Հայ Գիրքը դարձաւ շեփորաձայն յուշարար եւ խղճի զարթնումի եւ ուղղումի մշտահունչ զօղանց»։ Գրքի և անհատի շարունակական ներդաշնակ զուգակցության մէջ պահելու տրվածքը հավանաբար եղել է տիեզերքից հաղորդված այն ուժը, որ մեր տեսակին հասցրել է հանդրվանից հանդրվան։

Զ.՝ «Հայ Գիրքը՝ Հանգոյց Յաւերժութեան և Ժամանակի» օրգանական շարունակությունն ու զարգացումն է նախորդ գլխի կոսմոգոնիական չափումների, իբրև անվերջավորի և հավիտենականի վկայություն։

Է.՝ «Հայ Գիրքը՝ Զրահանդերձը Հայուն» գլուխը 1985 թվականի հոկտեմբերի 12-ին է թվագրված, բնականաբար Մեծ եղեռնի 70-ամյակի հանդամանքն է հիմնական գրդիչը այս խոհերի ու զատումների, ուր հայ գիրքը «ցավի արժեքների» համակարգում դիմադրում է կորատյանը «Հացին երգի» հարանվագ հանկերգով, ավելացող «Հայ տներով և հայ սրտերով»։

Ը.՝ «Հայ Գիրքը՝ «Օճանասփիւռ» Հայութեան»։ Վեհափառը հայ գրքի

Հոգևոր ասքը կենտրոնացնում է դասական մատենագրության մեջ կիրառված և այժմ մոռացության մատնված մի բառի սահմաններում, որ նրա մեկնաբանությունից հետո արդեն «օճանասպիյուռը» ընկալում ես որպես մեր գրքի փիլիսոփայական «կարգավիճակն» ըստ ամենայնի արտացոլող եզր. «Բառագիրքի սահմանումով կը նշանակէ բարիք, երախտիք, օգնութիւն: Այս բառին սեւեռեալ, շեշտեալ իմաստով գործածութիւնը կը պարտինք հեռավոր Հնդկաստանի Պոմպէյ քաղաքին մէջ ասկէ 170 տարիներ առաջ ապրած եւ գործած խումբ մը հայ երիտասարդներու, որոնք ընկերակցութիւն մը կազմած էին 1815-ին իրենց անդամներու ինքնազարդացման եւ ժողովուրդի լուսաւորութեան համար եւ զայն կոչած էին «Օճանասպիյուռեան»...»:

Թ.- «Հայ Գիրքը՝ «Սպեղանիք Զօրաւորք» գլխում հայ գրքի օճանասպիյուռյան պատմությունը Գրիգոր Նարեկացու «Մատյանի» շնորհիվ դառնում է մեր հոգու զորավոր սպեղանին:

Ժ.- «Հայ Գիրքը՝ Բալասանը Հայուն». ասել է թե՝ հնար, միջոց ձիգ մեջքներս ուղիղ կանգնելու համար մեր պարտքերը գրքին վերադարձնելու ապրելու կերպ, նամանավանդ, որ գրքի վերջին գլուխը՝ «Հայ Գիրքը՝ Այգեստան Հայուն», վեհափառը ձոնել է Արցախին, այսինքն՝ մեր ուղիղ քայլելու, ուղիղ ապրելու ճանապարհին, մեր անկախության ու ազատության հավերժությանը:

Սա Գարեգին Բ կաթողիկոսի «Հայ մարգը՝ հայ գիրքին դիմաց...» գրքի համառոտ ներկայացման փորձ է: Վեհափառի գրքի յուրաքանչյուր էջ, հատված, ամեն մի պարբերություն ու գլուխ ընթերցման խորհրդի առհավատչյա է, որ մատյանում իրացվում է «Ընթերցո՛ւմն է միակ ճամբան դէպի «Աղբեւը լոյս»-ին կարգախոսով: Ընթերցում հասու լինելու էույթին, ներդաշնակվելու սեփական ես-ին, դուրս գալու ընկեցիկի վիճակից: «Ընթերցումն է որ ողբը կը վերածէ որդիի», հայ անհատի փրկությունը.

Ընթերցո՛ւմ, ընթերցո՛ւմ, ընթերցո՛ւմ...

Ահա՝ փրկութիւնը հայ գիրքին, ահա բուն իսկ կեանքը հայկական մատեաններուն: Ահա՝ նաեւ փրկութեան ու կեանքի ճամբան հայ մարդուն»:

Սա է Վեհափառի գրքի բնույթը: Այս են երրորդում այն բազմաթիվ քաղվածքները (թվարկենք սոսկ մի մասը հեղինակների՝ Նիկոլ Աղբալյան, Հովհաննես Գառնեցի, Հակոբ Օշական, Պլատոն, Համաստեղ, Մորիս Վեսթ, Ներսես Շնորհալի, Հելեն Քելլըր, Խրիմյան Հայրիկ, Հակոբ Նալյան), որոնք հմտությամբ և ճաշակով մերվել են բնագրին, իբրև հայ գրքի հոգևոր պատմության ընտիր վկայություններ: Շատ կցանկանայի, որ այս գիրքը անպայման կարգացվի հայկական բոլոր գպրոցներում, վարժարաններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում:

... Գարեգին Բ կաթողիկոսի այս մատյանը աղոթք է գրքի և ընթերցման, որ փնտրողներին գտնելու հնարավորություն է տալիս:

## ԾՐՋԱՆԱԿՎԱԾ ՏԱՊ

Խոսք նահատակ գրողների ոգեկոչման

Երբ համառունությամբ կենսագրությունը զուգահեռում եմ պատմությանը, ապա հաճախ եմ խոստովանում, որ պատմության նկատմամբ անբավարարվածությունն ու պրկվածությունը այնքան են ահագնանում, որ փորձում ես գուրս գալ կենսագրությանդ շրջանակից, բազմել պատմության հիմքին, շտկել ու սրբագրել ներապելով ցավդ. սակայն քեզ մնում է ցավը և հարակա պրկվածությունը... ահա թե ինչու սկսում եմ կամաց-կամաց ներզորվել Հակոբ Օշականից մինչև Հրանտ Մաթևոսյան հասած այն գոյակերպությունը (բառը յուրաքանչյուրն այստեղ թող կիրարկի սեփական փորձառնությունից), որ Աղետը արվեստի հրամայականով սրբազնացնելը վեր է ցավն անցնելու, ինքնաօտարվելու, խիզախելու, արկածախնդիր ազատագրության, պարտությունների, հաղթանակների և էլի ու էլի հնարավոր ու աներևակայելի բույլերից... Այնպես որ, օրվա առիթով փորձեմ ձեզ հետ միասին և մեկ անգամ հիշել քսանհինդ հայ գրողներին, որոնք եղեռնամահ եղան ութսուն տարի առաջ:

Գեղամ Բարսեղյան, Սմբատ Բյուրատ, Հովհաննես Գագանջյան, Ներսես Նախակոպոս Դանիելյան, Երուժան, Ռուբեն Զարդարյան, Գրիգոր Զոհրապ, Թլկատինցի, Գրիգոր Թորոսյան, Գեղամ Վարդապետ Թեքելյան, Մելքոն Կյուրճյան (Հրանդ), Արտաշես Հարությունյան, Սիհամանթը (Ատոռ Յարճանյան), Բարսեղ Շահպազ, Գագիկ Ոսկերչյան, Տիգրան Չյոկուրյան, Ժագ Սայապալյան, Ռուբեն Սևակ, Դանիել Վարուժան, Հայր Կարապետ Տեր-Ստեփանյան, Կարապետ Փաշայան, Տիրան Քելեկյան, Լևոն Քիրիշյան (Լարենց), Գագիկ Օզանյան, Տիգրան Օտյան (Ասո)՝ ահա հայ գրականության հարկը Մեծ Եղեռնին ու եթե հավելենք 1915-ին դրանից առաջ և հետո զոհված ու վախճանված Կարապետ Տողրամաննյանին, Տիրան Չրաքյանին, Մարի Պելերյանին և Գեղամ Տեր-Կարապետյանին, ապա պիտի կրկին հիշենք այս համաստեղության ժամանակակից և միակ, անփոխարինելի ոգեկոչող Հակոբ Օշականի «հայ կյանքի ոսկյա երազի» արևմտահայ գրականության լրումը: Անուններ, որ կիզակետում են գրականության պատմությունը, ամեն մեկը յուրովսանն, անուններ, որ հանգանակներ են և գրականության իրագործումի կանգնումներ, անուններ, որ մեր տեսակին, առանց դույզն-ինչ վերապահության, նոր շրջանում մշակութային, հոգևոր, վերջապես գրական ժողովուրդ լինելու իրավունքն են նվաճել: Այս համաստեղության գերակշռող մեծամասնությունը ծանոթ է ընթերցող հանրությանը՝ առավել կամ նվազ, մի մասը՝ գրեթե անծանոթ և այսօր պիտի երրորդենք նրանց հուշարձանի կառուցման անհրաժեշտությունը՝ գրական ժառանգության հրատարակությամբ (բացառյալ Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի, տակավին չունենք Զոհրապի, Ցարծանյա-

նի, Հրանդի, Երուխանի, Զարդարյանի, Թլկատինցու, Զյոկյուրյանի լիակատարները, մյուսներից՝ մեծ մասի ընտիր երկերն անդամ), ուսումնասիրություններով այսպիսով փոխաձևելով մեր հուշարձանամոլությունը, անջրպետվելով բրածոյացումից, ներդաշնակվելով գրականության ստեղծումին, արվեստի ինքնությանը՝ միմիայն հայ գրականության և մտքի նախանձախնդրությամբ։ Սա է եղեռնված գրականության դատը, այսպես ենք սպիտականը նրանց կորուստը։ Եվ այսօր, վստահաբար պետք է ասեմ, որ ցանկացած ելույթ կամ ճառ տարտղնվելու է, քանի որ դժվար, անբավելի է գտնել խոսքի այն կառույցը, ուր կներամփոփկեն քսանհինդ գրագետները։ Խոսե՞լ նրանց գրականության ընդհանրական բնույթի մասին։ Անկարելի է, վաղուց անտի գնահատել ու մեկնաբանել են, թեև հատորներ են պետք պարպելու համար այդ գրականության ընդհանրական պատմությունը։ Պատմե՞լ նրանց կենսագրությունը, ընդհանուր առմամբ ծանոթ է և հայտնի, թեև վեպեր ու խոհագրություններ են ամբարում նրանց կյանքի երփնագրի ելեհումները։ Զգիտես ինչու՝ այս պահին սեեռուն հետապնդում է Ատոմ Յարճանյանի և Մաննիկ Պերպերյանի, Արտաշես Հարությունյանի և Զապել Եսայանի սիրո հրաշապատումները, Գրիգոր Զոհրապի 1910-ականների ստեղծագործական ճգնաժամի քրոնիկոնը, Մեծարենցի մահվանից հետո գրականության պատմաբանների կողմից բանդագուշանքի ենթարկված ժագակ Սայապալյանը, պարմանի Գեղամ Բարսեղյանի մտահղացումները, Ռուբեն Զարդարյանի այդպես էլ քաղաքականությունից չազատագրվելը և բազմաթիվ ու խայտաբղետ զգայնություններ, ազդակներ, կյանքի ու ճակատագրի հանդեսներ Դանիել Վարուժանի, Երուխանի, Թլկատինցու, Լեռն Քիրիչճյանի, բոլորի զուգահեռներում... Եվ միշտ ներքին ծավալումներ իբրև գիրք ու մենագրություն, որպես ուսումնասիրություն և վեպ։ Ուրեմն ևս մեկ անդամ այսօր վերակոչենք նրանց, հիշենք՝ ապրելու համար։

Գագիկ Ոսկերչյան, Գագիկ Օզանյան, Տիգրան Օտյան

Գագիկ Ոսկերչյանն ու Գագիկ Օզանյանը Գագառի գրականության նվիրյալներից էին և 1890-ականներից սկսած «Արևելք»-ում, «Հայրենիք»-ում, «Պոլսու մյուս պարբերականներում գողտրիկ պատկերներով, մանրապատումներով, Ուրֆայի և Շապին Գարահիսարի բանահյուսության մշակումներով Վաղվան գրականության արարողականությանը հավելում էին հայ բարքի և կենսուրութիւն արձանագրությունները։ Տիգրան Օտյանն իր Աղետի և դիմակայության գեղարվեստական անդրադարձումներով («Կարմիր օրեր», «Դատաստան», «Դյուցազնութիւն») մարտնչող Հրապարակագրի շեշտագրումներով, Զուլումի յուրօրինակ երգիչ էր, իր տեսակի Ահարոնյան և Պարթևյան։

Եվ երեքն էլ՝ ուսուցիչ, խմբագիր, բնաշխարհի մտավորական սերուցքից։

Ներսես Եպիսկոպոս Դանիելյան, Գեղամ Վարդապետ Թեքելյան, հայր Կարապետ Տեր-Ստեփանյան

Հայ գրականության պատմության համապատկերում ուշագրավ է այն իրողությունը, որ տակավին 18-րդ դարավերջից հոգեռորականները, Հայ Առաքելական Սուլբեկեցին դերակատարություն ունեին գրական նոր ընթացքում։ Հակոբ Նալյանի, Մեսրոպ Թաղիկաղյանի, Հովհաննես Տերոյենցի, Խորեն Գալֆայանի, Խորեն Միհթարյանի, Խրիմյան Հայրիկի, Եղիշե Դուրյանի և մյուս

Հոգևորական գրական մշակների հարացույցին պիտի հավելել Գեղամ Թեքելյանի և Ներսես Դանիելյանի պայքարի և քնարական բանաստեղծությունները. պետք է արձանագրենք նաև միսիթարյան Կարապետ Տեր-Սահակյանի քերթողական տարրոնապատումը:

Սմբատ Բյուրատ, Գրիգոր Թորոսյան, Կարապետ Փաշայան, Բարսեղ Շահպազ, Տիրան Քելեկյան

Անուններ, որ 1890-1910-ական թվականների արևմտահայ գրականության բարեխառնությունների կիզակետում ապահովեցին և հաստատագրեցին գրական կյանքի, գեղարվեստի լիակատարությունը, հանձնառու եղան փորձագրելու ժամանակը, մտայնություններ:

Բյուրատն իր արկածային-պատմական վեպերով՝ հիշատակենք առավել հաջողվածները՝ «Յըլտըզե Սասուն», «Զեյթունի վրեժը», «Բանտե բանտ», «Իննսունվեց», Կարապետ Փաշայանը՝ «Մարիա թի՞ Հայկանուշ», լույս տեսած դեռ 1889-ին, այնուհետև 90-ականներին հեղինակած «Վառո», «Աղջկա մը հիշատակարանը» ստեղծագործություններով արևմտահայ արձակ ներբերեցին կենցաղային վեպի և գավառի բարքագրության ուրույն որակներ: Իսկ Բարսեղ Շահպազն ու Տիրան Քելեկյանը, անցնելով հրապարակախոսության, թարգմանության և լրագրության, ժամանակ առ ժամանակ գրական կյանքում հանդես էին գալիս այնպիսի ստեղծագործություններով, որ չեզոքացնում էին ուղեկից լինելու հանգամանքը: Այսպիսի զարմանալի ընդմիջարկում է Քելեկյանի 1911-ին հրատարակած «Պայրաքտարի վերջին օրը», որն առանց վերապահության գետեղելի է համաշխարհային գրականության լավագույն պատմական նորավեպերի շարքում: Գրիգոր Թորոսյանը՝ շրջանի համբավագոր Կիկոն, ձանիկ Արամյանի Գեորգ Այվազյանի, Հակոբ Պարոնյանի ավանդների շարունակողն էր, երգիծանքի արհեստավարժներ Երվանդ Օսյանի, Միքայել Կյուրծյանի, Երվանդ Թոլոլյանի գործընկերը:

Ժագ Սայապալյան, Լևոն Քիրիշճյան

Այս գրագետների ստեղծագործությունների պատմական և ընթերցման խորքի ճակատագիրն է ետաքրքրական տեղաշարժ ունեցավ: Երկուսն էլ փոքր արձակն իրենց համար դիտարկում էին իրեն պարագայական, ժամանցային արտահայտություն, գրականության ածանցյալ դրսեղում, կենտրոնանալով վեպի, բանաստեղծության և թարգմանության տիրույթներում, սակայն ոչ Սայապալյանի «Առաջին սերը», ոչ Լարենցի «Դրախտի երգեր» բանաստեղծությունների հատորյակը չգարձան ներկայություն և մնացին գրականության լուսանցքներին, իսկ առաջինի «Մասիս»-ում հրատարակած «Տղու սերը» և երկրորդի «Բյուզանդիոն»-ում տպագրած «Թոռան սերը» արվեստի հրամայականի գողտրիկ բեենացումներ էին:

Գեղամ Բարսեղյան, Տիգրան Զյուկուրյան, Երուխյան

Հետայսու խոսքս դիտելի է գրականության հանգրվանի տարողությամբ, որովհետև զուգահեռվում են «Մեջյանը», «Ոստանը», «Աղդակը», արևմտահայ գրական կյանքի խտացումները՝ Երուխյանով հաստատագրվում է հայ արձակի հրաշքը՝ «Ամիրային աղջիկը» արևմտահայ վեպի հաղթանակով, հայերենով գրված ամենակատարյալ և ամենապլոփեսիոնալ նորավեպերով, կրկին շոշափե-

լիորեն կանգնում է Զյոկյուրյանի «Տերտերին ոճիրը», «Վանքը» և նամանավանդ՝ «Հերոսը» ազգային մենթալիտետի, նահանջի մասին գրված ամենակատարյալ ստեղծագործությունը։ Այս «պատումի բարիքները» Գեղամ Բարսեղյանի «Պատիկ Մակար»-ից, «Նազլու»-ից մինչև Երուխանի «Ձկնորսին սերը» հայ արձակի ազատագրության առաջին վավերացնողներն են։

Հովհաննես Գազանճյան, Արտաշես Հարությունյան, Ռուբեն Զարդարյան, Թուկատինցի

Անուններ, որոնք անպարագծելի և անզետեղելի են, գեղագիտական հանգանակներ և աներևակայելի իրագործումներ գրականության անդաստանում։ Այս համաստեղությունը գրական շարժմանն ընձեռել է Հղացք՝ Վաղվան գրականության կանգնումը, տեսաբան, քննադատ, պատմաբան, գեղագետ, թարգմանիչ, դասագրքերի հեղինակ, դպրոցի հիմնադիր (նկատի ունեմ գրական մտայնությունը)։ Այս փաղանգը ստեղծաբանական հունձքը պայմանավորողներից էր և պիտի երախտագիտությամբ երկրորդենք, որ նա ճամփա էր բացում Համաստեղի և Թոթովենցի, Արամ Հայկազի և Վահե Հայկի, Մնձուրու և Նարդունու, Բակունցի, Օշականի կազմակորսան համար։ Հիշենք սրանց ստեղծագործական կենսագրության ցանկացած բաղադրատարր, լինի «Յայգալույս», թե «Գեղի նամակներ», «Մեղրագետ», թե «Գավառ մի միայն», «Եվդոկիո Հայոց գավառաբարբառ», թե «Լքված քնար» և բազում երկեր, գրախոսականներ, տեսական-քննադատական երկեր՝ կատարյալ ներդաշնակ, լրիվ, ամբողջական ճակատագիր, որ և գրականություն է, և անցում արվեստից, իրեւ հայ կյանքի խորապետկեր։

Նույնն է Գրիգոր Զոհրապի և Մելքոն Կյուրճյանի պարագային։ Ութսունականների «Հայրենիք»-ի և «Մասիս»-ի սերնդի այս առաջամարտիկները՝ «Պանդուխտի կյանք»-ով, բուլղարական շենշող պատումներով «Լուռ ցավեր»-ի, «Խղճմտանքի ձայներ»-ի կրկնակ վերակոչումներով իրենց կյանքը նվիրագործեցին իրեւ գրականություն և գրականությունից դուրս գործունեություն։ Կրկնենք՝ հատորներ չեն բավարարի տարագրելու այս մարդկանց գործը, էությունը, ընտրությունը, անհատականությունը։

Եվ ներփակելով վերակոչության այս ուրվագիրը, բոլորս մտովի վերհիշենք բանաստեղծության սրբազնություն՝ Ռուբեն Սևակ, Ատոմ Յարճանյան, Գանիել Վարուժան, Հավելենք լռության խորհուրդը իրեւ «Կարմիր գիրք», «Երգ երգոց», «Ինչո՞ւ», «Սիրո մրմունջ», իրեւ «Սուրբ Մեսրոպ», «Հայորդիներ», «Հայրենի հրավեր», իրեւ «Ցեղին սիրտ», «Հեթանոս երգեր» և «Հացին երգ»…

Հիշենք նրանց, հիշենք մեր հոգևոր ինքնություններիս տարրալուծած, Դանիել Վարուժանի, Երուխանի, Ռուբեն Սևակի, Թուկատինցու, բոլորի ստեղծագործությունները՝ ապրելու համար և ապրենք նրանց Ստեղծումով՝ հիշողություններս չկորցնելու համար, և բոլորին համակած ու համակող շրջանակված տապը մեղմենք հայ գրականության այս լուսավոր տիեզերքի հորիզոնականներում…

## IV

# ՍՓՅՈՒՐՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



## ԴԱՐՁ

**Ք**սաներորդ դարի հայ գրականությունը, պատմական առարկայական իրողությունների պատճառով, նախ՝ արտահայտվեց իբրև տարաշխարհիկ ու բնաշխարհիկ (արևելահայ-արևմտահայ զուգահեռներով, ներառյալ մեր առաջին հանրապետության փուլը), ապա՝ խորհրդահայ և սփյուռքահայ (արտերկրի) գրականություն։ Արդի շրջանում գոյավորվում է հայ գրականության 20-րդ դարի պատճեն երրորդ զուգահեռը՝ Հայաստանի Հանրապետության գրականություն-Սփյուռքի գրականություն։

Նոր գրականության սկզբնավորման շրջանից արդեն երկատված արևմտահայ և արևելահայ հատվածների, գրական ընթացքի պատմական հետագծում տիրապետողը, անկախ գեղարվեստական-գեղագիտական ըմբռնումների, հոսանքների, ոճի, գրականացման առարկայի, փոխազդեցությունների, ներգրական բախումների, մեկ ժողովուրդ, մեկ միասնական գրականություն՝ երկու իրավահավասար գրական լեզուներով, մտայնությունն էր։ Զնայած առարկայական ու ենթակայական տարբեր խոչընդոտների, գեղագիտական-գաղափարաբանական սկզբունքային բանավեճերի, փոխադարձ ճանաչման խայտարղետ երանդապնակի՝ արևելահայ և արևմտահայ գրական հատվածներում առկա էր ներդաշնակություն, պատկերավոր ասած՝ կար, գործում էր այն կամուրջը, որը նույն մշակութարանական տարածքը կապում էր միմյանց։ Առաջին հանրապետության կարճ կյանքը պարզապես չհասցրեց ամրագրել այդ ներդաշնակությունը արդեն պետականություն կրող մշակույթով, թեև նրանք, ովքեր հայտնվել էին «գետի այս ափին», իրենց մեջ կրում էին հայ գրականության ներկայանալի բոլոր դրսեորումները՝ անկախ արևելահայ կամ արևմտահայ լինելու հանդամանքից։ Պատահական չէր Զարենցի՝ արևմտահայ և Սփյուռքի գրականությունը ըստ ամենայնի հրատարակելու ծրագրերը՝ արևելահային զուգահեռ։ Սակայն քաղաքական հայտնի կոյնունկտուրան, արգելափակման, պատնեշելու երևակայելի ու աներևակայելի սահմանների հասավ (թեև արգելանքի երևակայելի սահմանն արդեն անհեթեթ է, սակայն ինչ կարող ես անել, երբ տակավին տասնամյակ ու կես առաջ գրադարանների արգելված գզրոցներում էին պահպում նույնիսկ Արշակ Զոպանյանի ուսումնասիրությունը Պետրոս Դուրյանի մասին, որ գրական կյանքի ոստիկանների թույլտվությամբ արդեն հրատարակվել էր)։ Ի բարեբախտություն ետպատերազմյան ընթերցողների, գրագետների ու գրադատների սերնդի՝ կամաց-կամաց շատ անուններ պարտադրված մոռացումից թոթափվեցին լիովին կամ մասսամբ։

Հայ ընթերցողը Եղիշե Զարենցի, Ակսել Բակունցի, Գուրգեն Մահարու, Վահան Թոթովինցի ստեղծագործություններին հավելեց Շահան Շահնուրի, Վագդեն Շուշանյանի, Մատթեոս Զարիֆյանի, Հակոբ Մնձուրու, Հարութ Կոստանդյանի, Նիկողոս Սարաֆյանի, Զարեհ Ողբունու երկերը։ Ինքնին հասկանալի է, որ այս հավելման գործընթացը չէր կարող ստեղծել հայ գրականության այն

ներդաշնակությունը, որ առկա էր գասական (ժամանակի առումով) շրջանում, չէր կարող վերականգնել կամուրջը։ Դույզն-ինչ չստվերելով այն նախորդների շնորհակալ աշխատանքը, որ ձեռնամուխ էին եղել այս գործին, պատկերացնելով, հասկանալով այն դժվարությունները (սոց. ռեալիզմի քուրմերի դիմադրություն, գրական միջակությունների հասկանալի խոչընդոտներ, հանուն գաղափարախոսությանը անհաճո Սփյուռքի գրագետի մեկ բանաստեղծության կամ նվազ գրքույկի տպագրության՝ փոխզիջման մարդկային դրամա և այլն), որ առկա էին կամուրջների նորոգման, վերահաստատման փորձերի ժամանակ, այնուհանդերձ ավերիչ-սահմանափակ բարդույյիները, կանխակալ պիտակները իրենց ներուժը լիովին դրսեռքցին և այսօր Հայաստանյան ընթերցողը գրեթե ոչինչ չգիտի ոչ միայն Սփյուռքի դասական (կրկին կիրառում ենք ժամանակային իմաստով), այլև՝ արդի գրականության մասին (օտարագիրներին նույնիսկ չենք ակնարկում)։ Գաղտնիք չէ, որ խորհրդային շրջանում Սփյուռքի գրականության հրատարակության չափանիշը միշտ թե, որ արվեստի հրամայականն էր, բազմաթիվ հեղինակներ ու գրքեր էին տպագրվում արտագեղարվեստական պատճառներով և դեռ փորձում էին հրամցնել իրեւ ներկայանալի գրականություն, արտերկրի մշակույթի այցեքարտ։ Սիտալները տարբեր դահլիճներում փառաբանվում էին, իսկ Հակոբ Օշականն ու Նիկողոս Սարաֆյանը, Շավարշ Նարգունին ու Կոստան Զարյանը, Արամ Հայկազն ու Էդուարդ Պոյաճյանը, Նշան Պեշիկթաշլյանը, Ղևոնդ Մելոյանը, Կարապետ Փոլատյանը, Ահարոն Տատուրյանը և շատ շատերը արգելված էին, մոռացված, և, որ ամենահավորն ու նողկալին է, ընթերցողի փոխարեն որոշել էին, որ կարդալու, հրատարակելու չեն։ Այս իներցիայով չէ, որ ցայսօր որոշ գրագետներ, գրադատներ առանց կարդալու (կամ շատ քիչ ծանոթ լինելով) դատողություններ են անում, կարծիք հայտնում և գնահատում Սփյուռքի շատ գրողների, ստեղծագործությունների մասին։ Միջանկյալ նկատենք, որ գերազանցապես արտերկրի գրականության ներկայանալի գրագետների գործերից շատ քիչ բան է տպագրվել (օրինակ՝ Կոստան Զարյան, Զարեհ Որբունի, Վագգեն Շուշանյան և այլն), իսկ ոմանց հատորյակները կարծես թե հատուկ դիտավորությամբ անխնա, անփույթ են տպագրվել՝ ընթերցողին վերջնականապես օտարելու համար (Հակոբ Օշական)։

Բոլորովին հավակնություն չունեմ մի փոքրիկ հանրամատչելի հոդվածով անդրադառնալ հայ նոր և նորագույն գրականության ընթերցման և իմացության (ենթադրում է նամի՝ հրապարակում, հրատարակություն), ըստ իս, հրատապ բոլոր խնդիրներին։ Զար և նման մեր պատմության թե՛ ճանաչման, թե՛ գիտական մեկնաբանության և ընթերցման, հույժ արդիական է նաև հայ գրականության (ի մասնավորի՝ նոր և նորագույն շրջանների) և՛ իմացությունը, և՛ քննությունն ու ուսումնասիրությունը, ինչպես պատկերացնելի չէ կենսագրություն (պատմություն) համառոտելն ու խմբագրելը՝ դուրս նետելով ինչ-ինչ փաստեր, իրադարձություններ, այնպես էլ անհեթեթ է, թերի, կիսատ գրականության համառոտած ընկալումը։ Միանշանակ է այն իրողությունը, որ մեր նոր և նորագույն գրականության բազմաթիվ գործեր և հեղինակներ անվերապահորեն պետք է հրատարակվեն, դուրս գան արխիվներից,

պարբերականներից, մատենագիտական հազվագյուտ նմուշներ լինելու կարգավիճակից: Ժամանակակից ոռուս, ֆրանսիացի, ամերիկացի ընթերցողը, որ գրականություն ընտրելու հսկայական հնարավորություն ունի, ապրում է գրական ամենաճոխ շուկայի պայմաններում, պարբերաբար հանդիպագրվում է իր դասական, «Հնաբույր» գրականությանը՝ անկախ այդ գրականության առարկայական պահանջարկից: Այս՝ արտաքուստ հակադարձ, պարագուսալ շարժումը ածանցվում է այն տարրական թվաբանությունից, որ կենսունակ, ուժեղ գրականություն ապահովելու համար ընթերցողին տվյալ գրականության համապատերի հետ հաղորդակցվելու լիակատար հնարավորություն պիտի ընձեռն ընտրությունը թողնելով իրեն, նաև հաշվի առնելով «չհասկացվելու», չգնվելու, չկարդացվելու հնարավորությունը: Մեր պարագային այս իրողությունը առավելագույնս ընդգծվում է՝ նամանավանդ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հզոր գրականության վիթխարի ժառանգությունը տակավին գոյ է ընթերցողի համար և անհրաժեշտ է առկայել ներդաշնակությունը հայաստանյան և սփյուռքյան գրականությունների մեջ, հաստատել միասնականացման կամուրջը: Այսօր, երբ հայ գրականությունը կրկին դարձել է «լրագրային», տպագրական-հրատարակչական լայնածավալ գործունեության մասին խոսելը կարող է ժամանակավրեակ թվալ, սակայն, իմ խորին համոզմամբ, սա անցողիկ երևույթ է, և իրավունք չունենք ժամանակ կորցնելու. Հսկայական աշխատանք կա անելու թե՛ բնագրագիտական նախապատրաստության, թե՛ ներկայացման, ծանոթացման և թե՛ վերլուծության ուրատներում:

Ուրեմն դարձ դեպի սփյուռքի գրականություն, որն, ըստ իս, պայմանավորվում է երեք հիմնական գուգադիր գործնականություն ենթադրող կողմերով.

ա) իմացական, ճանաչման անհրաժեշտություն՝ սփյուռքի ներկայանալի գրողների երերի լիակատար հրատարակություն, տպագրություն, գրական, գեղարվեստական վավերագրերի, արխիվների հավաքչություն,

բ) արժեքավորման ընթաց՝ ընդհանուր մշակութային համապատկերի ձևակորումը կանխորշող էամասերից մեկի ապահովում,

գ) վերլուծական-մեկնաբանական ընթաց՝ քննադատական գրություններ, բնագրերի (տեքստերի) գիտական ընթերցումներ: Թվարկենք Սփյուռքի գրականության հեղինակների սոսկ մի փոքր խմբին, որոնց ստեղծագործություններն ըստ էության հայտնի չեն հայաստանյան ընթերցողին. Հակոբ Օշական, Նիկողոս Սարաֆյան, Շավարշ Նարդունի, Զարեհ Որբունի, Ղեոնդ Մելոյան, Կարապետ Փոլատյան, Նշան Պետրի Մաթամալյան, Ահարոն Տատուլյան, Կոստան Զարյան, Արամ Հայկազ, Էդուարդ Պոյաճյան, կարելի է շարունակել մինչև մեր ժամանակակիցները...

Եվ որպեսզի վերևում ասվածը դիմորոշվի, փոքր-ինչ մանրամասնենք՝ Հակոբ Օշականի վիպագրության օգնությամբ: Նույնիսկ մասնագետների շրջանում 20-րդ դարի հայ գրականության այս բացառիկ երևույթը ճանաչվում է գերազանցապես իբրև գրադատ և գրականության պատմաբան, տարբեր վերլուծականներում, ուսումնասիրություններում և մենագրություններում զարմանալիորեն անտեսվել է Հակոբ Օշականի գեղարվեստական ժառան-

գությունը, և փաստորեն հայ գրականության քսաներորդ դարի գիտական մեկնություններն ու ընթերցումները եղել են թերի, կիսատ, որովհետև միայն Օշականի վեպերը տաս հատոր են, Վահե Օշականի հաշվումներով, կազմում են մեկ միլիոն հարյուր հազար բառ, իսկ այդ բառերը գուտ մեծածավալության և արգասավորության դրսեորումներ չեն, այլ հայ վեպի նոր բանարվեստի արտահայտություն, հայ արձակի ոստում, համադրություն, որակական նոր հանդերձ, որ վերջապես մեր վիպասանությունը (առհասարակ արձակը) հասցրեց համաշխարհային գրականության ներկայանալի հանգրվանի: Վեց տարվա ընթացքում՝ 1928-1934 թթ., Օշականը գրեց «Ծակ պտուկը», «Հաճի Մուրատ»-ը «Հաճի Ապտուլլահ»-ը, «Սուլեյման էֆենտի»-ն, «Սահակ Պարգևյան»-ը, «Սաթիկ Մելիքխանյան»-ը, վերջապես՝ «Մնացորդաց»-ը, առանց որի առհասարակ հայ գրականությունը պատկերացնելի չէ: 1937-ին հիվանդ Օշականը (սրտի տագնապ էր ունեցել), որ իր հավերժությունն ու մշակույթի համապատկերում անանց լինելը վաղուց անտի նվաճել էր, շարունակում էր ստեղծագործել. «Գիտեմ որ վտանգի հետ կը խաղամ,— գրում էր նա իր նամակներից մեկում,— բայց մտքիս մեջ նաբուգողոնսորի արձանին պես կանգնած է Պալզաքը, որ իմ հիվանդությունս ուներ: Մտիկ չըրավ բժիշկներուն: Կ'ապրի անսակայն այսօր: Կը տառապիմ ընելիքիս ահավոր ընդարձակությանը պատկերին դիմաց: Կարդաս պիտի անշուշտ «Համապատկեր»-ները, պիտի զգաս թե ի՞նչ հզոր կիրք է այդ էջերը քշողը. ա՛լ առողջություն, հանգիստ, մարդու պես ապրիլ իմ բառարանէս չնշված բաներ են. կան տակավին «Մնացորդաց»-ի հատորները, որոնք պիտի գրվին քանի մը հազար էջ, կամ «Իմ վեպը», որ դարձյալ քանի մը հազար էջ կը լեցնե: Այս ահավոր ճնշումին տակ օրերը կ'անցնին: Ժամ մը, ժամուկես միայն աշխատանք կը նետեմ իմ ուղեղին, որ կը տքաբեռին տակ, ինծի կ'իմացնե վտանգը: Սեղանս վերածված է պտուղի, խոտի և ջուրի. կյանքը իմ շուրջս տղոցս կերպարանքներուն վրա է. անոնց ապրիլ ինծի կը բավե: 1948-ին սրտի կաթվածից վախճանվեց Հակոբ Օշականը, և արդեն շուրջ կես դար, հաղթահարելով հազարավոր խոչընդոտներ, նրա գրականությունը մուտք է գործել Հայաստան, դարձել հայտնություն սակավ գրագետների, գրադատների, գրասերների համար, սակայն մնացել է անջրպետված ընթերցողից: Այսօր արդեն, երբ վերացել են արտաքին արգելքները, մենք պիտի դառնանք դեպի Հակոբ Օշական, մեր մշակույթի անխտիր բոլոր ներկայանալի դեմքերին՝ ամբողջական, կենսունակ մշակույթի տիրոջ մտահոգությամբ և գիտակցությամբ:

## ՄՐՏԱԿԻԶՅԱԼ ԱԶԱՏՈՒՄ

(Ծահան Ծահնուրի «Սիրտ սրտի» ժողովածուն)

«**առաջ»-ի մատենաշարով լույս է տեսել Շահան Շահնուրի «Սիրտ սրտի» ժողովածուն և ինչպես նշված է խմբագրության ծանուցման մեջ. «Հատորը կհրատարակվի Շահան Շահնուրի մահվան քառասնամյակին առթիվ ակամա հապաղումով»: Հետմահու հրատարակության պատճառը «Նահանջ»-ի հեղինակի կամքն ու ցանկությունն էր՝ հատորը ներփակող որոշ ստեղծագործություններ, հոդվածներ և գրություններ չպետք է հրատարակեին, թեև դրանք պահպանվում էին նրա թողոններում և ի վերջո գրողի ժառանգության անկապտելի բաղադրատարրերից էին: Տպագրության գայթակղությունը և պատասխանատվությունն անկասկած հսկայական էին, որովհետև մի կողմից՝ Շահնուրի կամքը, մյուս կողմից՝ նրա գրականության, մտքի վերադարձումի անհրաժեշտությունը, առաջադրում էին ինքնաբացառող մի վիճակ, երբ ընթերցման ամբողջությունն ու լիակատարությունն այս կամ այն պարագային արդեն ներկրում էր անցման հատկականություններ, տվյալ գետքում հրատարակչի սկզբունքային կեցվածքը՝ երբ պատասխանատվությունն ամբողջությամբ պարագրկում է իր ուսերին, նախ ի՞ր համար է լուծում անցումի կամքամի հարցը, սակայն «Սիրտ սրտի»-ի մետաքայիրն առարկայորեն առթում է հայ գրականության պատմության պատասխանատվությունը «Նահանջ»-ի հեղինակի հանդեպ և այստեղ է, որ կամ-կամը փոխածևվում է և-և-ի, որովհետև վավերաթղթի (բառը կիրարկվում է շահնուրյան համատեքստով) էույթը գործնականացրած գրողի ժառանգության որևէ հյուլեի անտեսումն արդեն նահանջ է գրականության պատմության ընթերցման համար, որտեղ անցումն ընդհանրապես անհանում է, և կրկնակ ընթերցման զուգահեռներում գոյավորում և առկայացնում շահնուրյան ստեղծումի ու մտքի վկայությունը, որտեղ ըստ ամենայնի տեսանելի է դառնում հետնահանջյան Շահնուրը, Արմեն Լյուպենի և Շահան Շահնուրի միակցումը: Գրիգոր Պլայանի հեղինակած «Բանտարկված թուչունը» ներածությունում ի շարս այս ժողովածուի տպագրության փաստարկման, խնդրագրության, ստեղծագործական պատմության և ագդակների, մեկնաբանվում է նաև գրողը բոլորեքյանությամբ «Նահանջ»-ից հետո: Այս հատորն, ամենից առաջ, ամբողջացնում է Հայոց պատկերագարդ պատմության հեղինակին՝ հասցնելով այն հանգրվանին, ուր ի՞նքը Շահնուրն է: Ժողովածուում ամփոփված հոդվածներից, գրություններից տասներեքը տակավին զետեղվել էին երևանյան հրատարակության երկրորդ հատորում (Շ. Շահնուր, երկեր երկու գրքով, գիրք 2-րդ, Ե., 1985 թ.), սակայն, հասկանալի պատճառներով, չունեին ամբողջականացնող ընթերցման դերակատարություն առանց «Վավերաթուղթ»-ի, «Ավագ Ուրբաթ»-ի, «Սիրտ սրտի»-ի: Այնպես որ, նույնիսկ ծանոթ, հայտնի գործերի վերահրատարակությունն այս ժողովածուով,**

ներբերում է Շահնուրի ժառանգության, նրա գործի, մետաքնագրի նոր բաղադրատարեր:

Շահնուրյան ըմբոստությունը՝ գերակա և համապարփակ, հայ կյանքի, իրականության, բնույթի, մշակույթի և գրականության մասին առաջադրած տեսակետներն ու կարծիքները հայտնի է, որ հոգեոր-իմացական կենսոլորտում ընկալվել և մեկնաբանվել են որպես կանոն զանազան վերապահություններով. երբեմն դրանք տեղադրելով ինքնատպության, երբեմն՝ զարտուղության, երբեմն՝ մոլորության, երբեմն տարտամ հակագդեցության (գնահատող մեկնիչների դիտանկյամբ) տիրույթներում: Այս պարագային անտեսվել է հիմնականը՝ ո՞րն էր Շահնուրի ելակետը, թեև միշտ էլ չոշափելի է թաքուն և անթաքույց հիացմունքը նրա ստեղծաբանական անհատականության, տաղանդի հանդեպ, ինչո՞ւ տասնութ տարի նա «իր գրիչը ձգած է Արմեն Լյուպենի», «լրած է հայ գրագետը»: Այս հարցումների ընդհանրական պատասխանը պարփակված է «Սիրտ սրտի» հատորում, որն, ըստ էության, ժողովածուի ամենակարևոր մշակութաբանական երևութականությունը ցուցանող, կարևորությունն ընդգծող իրողություններից է: Փաստ է, որ Շահնուրն է հետաղեայան հայ գրականության սթափեցնողը և՝ գեղարվեստական իրագործություններով և թե մտքի աշխատանքով: Նա էր, որ համարձակորեն գնաց, առաջին հայացքից խելահեղ արկածախնդրության՝ միթուների քանդման, հայկականության տարուների հաղթահարման, սրբացված և անքննելի հիմերի վերանայման, քննադատման ուղիով: Ցարդ չլսված ու չտեսնված ճանապարհ, թեև առարկայաբար վաղուց անտի, հասունացած: Գնաց և իրագործեց՝ «Վավերաթուղթը», «Դրախտ կորուսյալ», «Վեպի շուրջ», «Վերջին խոսքս՝ չափազանցություն է», «Մենք»: Սա հսկայական գերլարում էր, ջանք, հարակա պրկվածություն, ներքին ուժացման բախումն անընդհատ ապրելն ու անընդհատ ցուցանելը, երբ շուրջըլորը գրեթե անտարբերություն էր և կամ՝ մանրախնդիր հակագդեցություն: Երբ նկատվում էր սոսկ «մեր պառավության» հանկերգը և զարմանալիորեն անտեսվում «Ավի՛շ, ավիշ է պետք մեզի»-ի իրագործումը, երբ ինքնապարփակման աղետն անընդհատ անտարբեր էր մնում, երբ չէր ուրվագրվում երիտասարդանալու գոնե մտահոգությունը, երբ անհաղորդ էր դառնում նույնիսկ միտք ունենալու և հաջողելու կենսական անհրաժեշտությունը, Շահնուրը պետք է որ շարունակվեր իբրև Արմեն Լյուպեն և հետո պիտի կրկին վերադառնար Շահան Շահնուր, որովհետեւ «պարտվեցանք նաև անոր համար որ մենք չէինք կրնար մեր մեջը իջնել: Այդ իսկ պատճառավ այսօր սկսած է ինքնաճանաչման շրջան մը: Բան մը՝ որ եթե ավելի կանուխ եղած ըլլար, թերևս այս վիճակին չհասնեինք»: Վերագարձավ, որովհետեւ «Նահանջն» ու «Հարալեզներու դափաճանությունը» շարունակվում էր զղասպառությամբ, երբ «սրտին տեղ մտքին գերակշռությունը ընդունելով կը զսպենք մենք մեղ գիտնելով որ թույն մըն էր ան: Ավելին կա՝ կը պայքարինք անոր գեմ»: Վերագարձավ, որպեսզի արդեն իր գրականությամբ իրագործած վերաստեղծումը կրկին երրորդի. «Գրականության մեջ, ուր կյանքը պիտի վերստեղծվի, կյանքեն առնված ծշմարիտը կը թվի անծմարտանման, երբոր վերստեղծումը չի հաջողիր»: Իսկ որի և ինչուի համապարփակ պատասխանը գտնում ենք «Վավերա-

թուղթ»-ից անմիջապես հետո զետեղված Արփիկ Միսաքյանի «Որպես վկայություն» շահնուրագիտության համար շատ կարևոր հրապարակման մեջ, որ հատորի տեղադասությամբ ոչ միայն խորհրդանշական է (այդ գրությանը հաջորդում են Շահնուրի 1957-ից սկսյալ գործերը, այսինքն՝ այսպես կոչված դարձի շրջանը), այլև՝ բնորոշ։ Հարկ է նշել, որ այդօրինակ կառուցվածքը դասականների ժառանգության հրատարակության ասպարեզում մեր դեպքում նորույթ է և միանգամայն ընդունելի, նամանավանդ նկատենք, որ թե՛ Պըլտյանի, թե՛ Միսաքյանի գրությունները դիտելի են իբրև գրքի ամբողջական կառույցին ներդաշնակած բաղադրատարեր։

Ժողովածուի գրական էջեր բաժինը ներառող երկու ստեղծագործությունները՝ «Ավագ Ուրբաթ» և «Պույնուղղըները», կրկին վեր են հանում շահնուրյան գեղարվեստական համակարգի «Երկբնակ» ներդաշնակությունն ու կենտրոնացումը։ Նրա գրականությունը՝ ներփակ թե համակցված, ընթերցումների զուգահեռներում, բնագրային ինքնաստեղծաբանություն է, արվեստի հայտնության համամասնակցություն (ընթերցող/հեղինակ/բնագիր/համաբնագիր/ենթաբնագիր), բաց հոսք։ «Պույնուղղըները» պատմվածքը Աղետ/դիմադարձության հղացքի բյուրեղացումն է, միաժամանակ Ավետիս Ահարոնյան-Սուրեն Պարթևյան-ական գրական մտայնության ստեղծագործական պատճենումը (Հիշենք «Վավերաթուղթ»-ում Պարթևյանի «Սայքո»-ի անգուգական վերլուծությունը), «Ավագ Ուրբաթը»՝ ինքնին «Նահանջ»-ի միկրոտիեզերք է և նույն «Նահանջ»-ի իրագործության մակրոաշխարհ, անցում և նորահայտնություն։ Վերջին իմաստով, ըստ իս, առավել կարևոր ու արժեքավոր, որովհետև միայն ստեղծումի սրբազնությամբ էր հնարավոր «Նահանջ»-ի բացահայտ հիշողությամբ անցնել վեպից։ «Եվ եղավ Հայը որ պարտվեցավ և որ թերևս անհետանա, որովհետև ծույլ էր ան, որովհետև մեծ ճամբուն եզերքը նստավ համրիչ քաշելու և թողուց որ ժամանակը անցնի։ Աստված իմ, ինչ անխնա վատնում, ի՞նչ անխնա սպառում ժամանակի, ինչ ոճրային մեղկություն»։ «Ավագ Ուրբաթ»-ը «Նահանջ»-ի ժամանակային-պատմական խորքը լիովին վերացնում է, այն ոչ միայն անհետացումի վկայությունն է, այլև համընդհանուր ահազանգը, դուրս երեկովա պարագծից, այսօրեական, խիստ հրատապ, ուղղորդված ապագային, որովհետև «Ավագ Ուրբաթ»-ի իրացումն ու հղացքը պարփակող ասելիքը հայ հոգևոր-իմացական, հոգեբանական, առհասարակ հայկական ինքնության անխտիր բոլոր դրսենորումների ներկայությունն է, բյուրեղացրած ու հավաքականացրած։ Սա ըստ էության նահանջները (բառը դիտելի է շահնուրյան խորքով) ահազանգող կահնարդելող գրություն է, զգոնություն, անցումի և իրագործության ամբողջություն, որը թե՛ անցյալում, թե՛ արդ և թե՛ ապագայում կենսական անհրաժեշտություն է։ Այս առումով ևս «Հառաջ»-ի ձեռնարկումը կարևոր է, շահեկան, պարտադիր։

«Սիրտ սրտի» ժողովածուն, կրկին օգտվենք շահնուրյան հասկացությունից, իգացման պատճենումն է։ Հեղինակն արձանագրել-հայտարարելով, թե խորշում է իգացյալ զգայնոտությունից, միաժամանակ և՛ ցուցանում է համատարած իգությունը, և՛ պատճենում այն («Թեոդիկ», «Մենք», «Վեպին շուրջ», «Վերջին խոսք»՝ չափազանցություն է), «Դրախտ կորուսյալ», «Վավերաթուղ-

թը», «Սիրտ սրտի», «Խորհրդածություններ»): Շահնուրյան համարնագրում «իգություն» հասկացությունը տարօղում է հայ գրականությունը միաժամանակ պատնեշում՝ մշակութային համատարած զառածումից, ընդգծում՝ ինքնաազատագրության կարելիությունները: Առողջ, հեռանկարային գրականություն և միտք ունենալու համար հարկ է կազմաքանդել, կործանել բոլոր տարբուներն ու կուռքերը, անհրաժեշտ է առնականանալ, գոյավորել հայրական արվեստ, պետք է անցնել «կնիկային գրականությունից»՝ ծեքծեքուն, շահարկող հայրենասիրությունից, հայրենաբաղձությունից, հրաժարվել մարդը պատկերագրելուց և անցնել մարդու մը գեղարվեստական սկզբումին, ընդունել, որ «գրականությունը չապրիր միայն դիտումով, այլ նաև իրագործմամբ», ընդօրինակման և կրավորականության վատնումների փոխարեն երկնքից իջնել և ամուր կանգնել հողին, որովհետեւ «Հրեշտակը պետք է որ իյնա երկրի վրա և կոչվի սատանա, որպեսզի ապրի գրականությունը», պետք է հեղաբեկվի հայ գրականության հեքիաթագրությունը, չաղճատվի հայ վավերաթուղթը և այսպես կարելի է էլի թվարկել, բերել բազմաթիվ օրինակներ այս ժողովածուից, որտեղ Շահնուրն ամբողջացնում է իդական գրականությունը և ցուցանում դրանից պատնեշումն ու ազատագրությունը:

Անշուշտ կարելի է վիճարկել ինչ-ինչ տեսակետներ և դատումներ (օրինակ՝ Օշականի պարագային, որ իմ խորին համոզմամբ հայ գրականությունը պատնեշեց և ազատագրեց այդ նույն «իգացումից» և Շահնուրի նման մնաց մենակ), սակայն էությունը, շահնուրյան հարցադրումը միանդամայն տեղին է և իրավացի: Ավելին՝ նույնակերպ հրատապ ու այժմեական այսօր: Որովհետեւ Հայաստան և ի Սփյուռս նույն հաջողությամբ շարունակվում է գրականության «իգացումը»: Կրկին բանադրվում են նրանք, ովքեր փորձում են հակազդել ծերուկ Արարատին պատսպարված, այսպես կոչված, «հայրենասիրերգությանը», ավանդների մեջ իրենց տարտամությունը փրկող «լրագրային գրագետներին», լավագույն դեպքում Արմեն Շիտանյանի կամ Բագրատ Այվազյանին կապկող պատմավիպասաններին, քաղաքացիական ոտանավորներով պահանջատիրություն տարփողող նախանձախնդիրներին: Կրկին բանդագուշանքի է ենթարկվում այն գործն ու իրացումը, որ գրականությունը դիտում է զանգվածային քիմքից ու ճաշակից անդին, կրկին հերձվածող են նրանք, ովքեր վերանայում են հայ ժողովրդի՝ իրրե գրական ազգ լինելու միթունը: Այնպես որ Շահնուրի այս հատորը հրաշալի առիթ է դժբախտաբար մտայնություն «իգական» գրականություն իրականացնողների և դժբախտաբար պատահական պատնեշողների համար՝ կրկին խորհելու, ինքնադիտման:

Շահնուրի այս հատորի հոդվածների խորքը ընդգրկում է ևս մի կարևոր առանձնահատկություն. անմիջապես հառնում է մտավորականը, հիմնավոր և հիմնարար իմացականության տեր անհատականությունը, անգուգական բանավիճողն ու հրապարակագիրը, հումորի ընտիր զգացողություն ունեցող մարդը, որը քեզ չի ճնշում, խորտակում յուր հեղինակության պարունակներում, պարզապահ երկխոսում է, առանց սխալվելուց, թյուրիմացությունից սարսափելու, սատարում ընթերցողին ակտիվ, արգասավոր ստեղծագործական աշխատանքի: Սա առողջ, բարդույթներից ազատ հայ գրագետի բացառիկ որակ է և

այդ պատճառով նույն ընթերցողի համար միշտ սպասվող, պարբերաբար նրա հետ մնալու վերջնական զգայնությամբ։ Այս առումով ո՞ւմ կարող ենք դնել Շահնուրի կողքին։ Դասականներին չեմ ասում, որովհետև չկան, չակոր Օշականին, Նիկողոս Սարաֆյանին և թերևս ուրիշ ոչ մեկի։ «Սիրտ սրտի»-ն փաստեց շահնուրյան գործի ներկայության մեկ որակը ևս։

Ավարտելով իր «Սիրտ սրտի» գրությունը՝ վարպետը շեշտում է. «Եվ սիրտը որ կը կարծրանա ամեն անդամ ծնունդ կու տա սրտապինդ սերունդի մը որ ոտքի կը կանգնի անպայման...»։ Ժողովածուն կարդալու, վերընթերցելու ժամանակ, պարբերությունների ընդմիջարկումներում, գիրքը ըմբոշինելուց հետո ըմբռնում ես, որ շահնուրյան այս ընթերցումը սրտակիզյալ է և եթե անցնում ես այդ կրակից, ուրեմն մոտենում ես ազատումին։ Սա է Շահան Շահնուրի այս հատորի ընթերցումի դադարը՝ առանց դույզնինչ գրականության պահունաքի և պարուրվածության, որովհետև սրտապնդվելն արդեն (սրտապնդումը կրկին շահնուրյան տարողությամբ նկատի ունեմ) վերստեղծման գյուտվածությունն է։

Երևան, մայիս 1995

## ԽՈՐՀԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Նիկողոս Սարաֆյան «Տեսարանները, մարդիկ և ես»

**Չ**ափազանց հրատապ ու կարևոր են հայոց նորագույն այն գրական երեսույթների հրատարակությունները, որոնք մի կողմից արժեքների վերագրձում են ընթերցման և ներլուկալման տիրույթներ, մյուս կողմից՝ գրական նիրհը թոթափող, գավառամտության բարդույթները կազմաքանդող պատեհություններ։ Արդեն իսկ այդօրինակ գրքերի լույսընծայման կեցվածքը «սրբացված հանդարատությունը» անցել է, «գրական ժողովուրդ» միթոսի ապաստասպելականացումը, մշակութաբանական անհրաժեշտությունը, որ, հակադդելով կաղապարավոր բրածոյացմանը, պետք է հայ գրականության ընթացքը ներդաշնակի իր անցած ու անցնելիք ճանապարհին, նամանավանդ երբ հրատարակում է մտքի ստեղծաբանությունը՝ մտածողական գրականությունը, մեզանում քիչ գտանելի մի իրողություն։ 1994 թվականին նիկողոս Սարաֆյանի խոհագրությունների, քննադատական, վերլուծական հոդվածների ժողովածուով ազդարարվեց «Երկ» մատենաշարի գոյությունը (մատենաշարի գլխավոր խմբագիր՝ Գրիգոր Պըլտյան) և ենելով այս «Տեսարանները, մարդիկ և ես» հատորի երեսույթից, կարող եմ վստահաբար արձանագրել, որ մշակութաբանական ներդաշնակությունն ու հեռանկարայնություն ապահովող հայաստանյան առաջին շոշափելի ձեռքբերումն է ու հուսանք, որ մատենաշարը կունենա իր շարունակականությունը։ Այն հանդամանքը, որ նիկողոս Սարաֆյանն է դառնում արդի շրջանի լրջագույն հրատարակությունների, մատենաշարերի առաջին հեղինակը (հիշենք 1988-ին Փարիզում «Արդ» մատենաշարով և կրկին Գրիգոր Պըլտյանի աշխատամիջությամբ լույս տեսած «Վենսենի անտառը») օրինաչափ և միանդամայն ճշգրիտ ընտրություն է, քանի որ այս անզետեղելի բանաստեղծը, արձակագիրը, խոհագրողն ու մտավորականը հայոց նորագույն շրջանի գրականության, առհասարակ մշակութաբանական կենսոլորտի գերխտացումներից է, ստեղծումի նոր ազդակները պայմանավորող, հեռանկարը ուղղորդող հեղինակներից մեկը։ Հավելենք սրան, որ Սարաֆյանը գրեթե անծանոթ գրագետ է հայաստանյան գրական համապատկերում և կամբողջանա սույն հրատարակության բացառիկ արժեքը։ Ցանկանում եմ ևս մի օրինաչափություն ընդգծել։ «Տեսարանները, մարդիկ և ես» ժողովածուն համընկավ շրջափակման և էներգետիկ ճնաժամամի մեջ հաստատագրվող մի սերնդի ստեղծաբանական ամրապնդմանը ու լավ է, որ այդպես է, քանի որ Սարաֆյանի ժողովածուի ընդհանուր խնդրագրությունը համահունչ է նորերի գրական ըմբռնումներին, մտահոգություններին, արվեստը ազատագրելու ընձյուղվող գրույթներին։ Ուրեմն կարելի է փաստել, որ հատորը արդի գրական ընթացում հազվադեպ երևացող, սակայն այնքան անհրաժեշտ մշակութաբանական սատարումներից է։

Ժողովածուն հրատարակության է պատրաստել Արթուր Անդրանիկյանը, խմբագրել, ծանոթագրել և «Փյունիկը» վերտառությամբ առաջաբանը հեղինակել Գրիգոր Պլայանը, որը, պետք է ասել, սարաֆյանագիտության մեջ շահեկան հետազոտական-բնագրագիտական աշխատանք է կատարում: Գիրքը ներառնում է Սարաֆյանի 1927-1961 թվականներին գրած քառասուն քննադատականներ, խոհագրություններ, գրախոսականներ, տեսաբանական գրություններ և բանագիճային հոդվածներ, որոնք ներկայացված են ժամանակագրական հերթագայությամբ և, իրավամբ, գրողի ժառանգության այս դրսեորման ընտրանին է: Խմբագիրը գետեղել է այնպիսի գործեր, որոնք գրքի սոսկ ժողովածուի գործառնություններով չեն ավարտվում, այլև պահանջում են ամբողջական ընթերցում, այսպիսով առթում նմանատիպ հրատարակությունների մեջանում հազվագյուտ միասնականությունը, ընտրված նյութերի բնույթն ու ուղղվածությունը չեն պարփակվում գրապատմական իրողություններ լինելով միայն, ցանկացած հոդված ու գրություն ընդգծված ժամանակակից է, հրատապ, իսկ «Փյունիկը» համառոտ, սակայն խտացված առաջաբանը Սարաֆյանի «մտածողական գրականության» խորքային մեկնություններով՝ ստեղծագործական ազդակներից մինչև կենսագրական փաստերի համադրում, մշակության համընդհանուր մասնահատկություններից մինչև գրողի խոհագրություններում գերակա Ղովտի կնոջ և Փյունիկի միթուների քննություն և այլն, յուրաքանչյուր գրությանը կցած ծանոթագրություններով՝ սույն հատորը գրական ժառանգությունների հրատարակման համապատկերում վերապահում է լավագույնների շարքին: Առկայանում է Սարաֆյանի հայացքն ու դիտանյունը բոլորեքյանությամբ, հիրավի «տեսարանները կ'երևան նույն ատեն համաձայն մեր նայվածքին: Կախում ունին մեր տրամադրութենեն և մեր զգայական ու իմացական կարողութենեն», – ինչպես ինքն է նշում «Տեսարանները, մարդիկ և ես» խոհագրության մեջ, որը լավագույնս ցուցանում է նաև ժողովածուի կառուցվածքն ու բաղադրատարրերի միասնականությունը, ինչպես նկատում է Գրիգոր Պլայանն իր առաջաբանում: «Տեսարանները, մարդիկ և ես» սովորական խոհագրե մը անդին կը կազմե այս արտադրության ներքին կառուցվածքին երեք բևեռները. դուրսի աշխարհը՝ որուն հանդեպ Սարաֆյան երբեք անտարբեր չէր եղած, իր պատկերի ու տեսողության անհուն շտեմարանով. ապա մարդիկը, անոնց հարցերը, ժամանակն ու շրջանը, շարժումներն ու գիրքերը, վերջապես այս բոլորը գիտող, կշոռղ ու խորհող եսը գրողը, իր մտահոգություններով ու սեեռումներով»:

Նիկողոս Սարաֆյանը սույն ժողովածուով ներբերում է հայկական ինքնությանը միշտ դժվար տրվող մշակութացման ելակետայնության ըստ ամենայնի պատճառականացված ու համակարգված համադրությ՝ պատմական հեռանկարով և իմացական վիթխարի ամբարված ներուժով: «Անջրպետի մը գրավումը», «14», «Տեղատվություն և մակընթացություն», «Միջերկրական» բանաստեղծական շարքերի ու գրքերի հեղինակը, որն իր քերթությամբ հայ գրականության 20-րդ դարի բնույթը պայմանավորողներից է, ստեղծաբանական զուգորդություններում ձեռնամուխ է եղել խորհեղու, մտքի արարողականության խորհրդին՝ իմաստին, նշանակությանն ու գերակատարությանը: Սա է «Տեսա-

բանները, մարդիկ և ես» գրքի բացառիկությունն ու ուրույնությունը: Մշակութացման իրագործումի թանձրացականացումը և Սարաֆյան երևույթի այժմեականությունն ու արդիականությունն հավասարապես անհրաժեշտ են Հայստանի և Սփյուռքի հոգեսորմշակութաբանական կենսոլորտին, այս ժողովածուն համահայկական դրսեորում է, որովհետեւ խորհենն իբրև տիեզերքի «ամենեն հազվագյուտ առաքինություն» առավել է, վերապրելու, զգալու և հիշելու կարողությունից, իսկ անձնականությունը շեշտագրող էութենականությունը միշտ պակասել է մեր ոգեղենիկ կյանքին, նամանավանդ գրականությանը: Սարաֆյանը սկզբունքային հետեղականությամբ, հիրավի հանգանակ-հորդորակի մանրամասնությամբ և մատչելիությամբ, ափով հրամցնում է դա՝ «Հիշե՞լ թե խորհիլ», որի խորքին տեսանելի են դառնում մեր նոր և նորագույն գրականության ինքնաբար պարփակվածությունը, ստեղծագործական պարտությունների ողջ շարանը, տիրացուական արքետիպներին կառչած մնալը, գրողի կրավորականությունը, որը չի կարողացել, թե՝ չի ցանկացել հոսանքին դեմ գնալ՝ հունը վերագտնելու համար, հոտից տարանջատվել և վճռական մենակությամբ ստեղծել ազատագրված արվեստ: «Մեր ժողովուրդը ամեննեն մեծ բունակալն է մեր գրողներու գլխուն, պահանջելով անոնցմե իր մտավոր խեղճության հավասար ու հաճելի գրությունները»՝ մարգարեական նկատում, որ այսօրվա բարդույթավոր գրականության համար էլ խնդրագիր ու հրատապ է: Ի՞նչ անեղրական թափանցումներ է ամբարում սարաֆյանական խորհելու խորհուրդը, իսկ երեկվա ու այսօրվա հայաստանյան դասականները կամ եղերամայրական նվիզոցներով փարփած են «հայրենասիրական» տարուին, կամ հեռուստատեսությամբ դժգոհում են, որ հալածական էին սովետական տարիներին, որովհետեւ... ՀԱՀ պետական մրցանակ չեն ստացել, իսկ իր ստեղծումի փղոսկրե աշտարակում, հեգնելով քաղաքականության մեջ իրենց գրականությունը անողներին, գրաշար Նիկողոս Սարաֆյանը մատուցանում էր մտքի հեռանկար, հայ գրականության տիրույթներում հաստատագրում իր հոգին «դեպի քառս ու ամլություն տանող», սակայն «առավելագույն ապրող ու հաղթող» խորհուրդագետին, իր անզուգական «Գրական բնանկար» խոհագրությամբ երրորդում ներաշխարհի գերակայությունը, որպեսզի ինտրան այդպես էլ հայ գրականության համար չմնա արտեֆակտ, «Մտածումներ»-ում ընդունում «քալելու» առաջնայնությունն իբրև մեր փնթի մտքի հեղձուկում, «ազգային հաշավոր անկարգության մեջ» անհատների գոյավորման նախապայման, «Սերունդի մը դառնությունը» գրության մեջ շեշտում, որ ցանկացած քաղաքական ըմբռնում ու ազգակ պարագայական է. «Կմնա գրողը, առանձին հաջորդական սերունդներուն ու մտածումի հեղաշրջումներուն առջե» և միայն գրականության դատաստանին հաղորդակից, տեսնելով մեր գրականության կիսատպատության բանդագուշանքը, նույնիսկ գաղտնագերծում է գրականությունը՝ «գրականության գաղտնիքն է քամել տիպարները ներսեն ու դուրսեն» («Մեր կյանքը» Հրաչ Զարդարյանի), այս ամենը հանգուցելով ստեղծումի անվերջավորությամբ, որ Սարաֆյանի համարնագրում բանաստեղծություն իմաստային դաշտի անբավելի խորությամբ է հատկանշվում. «Բանաստեղծություն ամեն բանե առաջ քերթվածին և վեպին մեջ: Մնացյալը անշուշտ, վեպ

թե քերթված, առանց այդ բանաստեղծության, արհամարհելի են», «Բանաստեղծություն ամեն բանե առաջ»։ Ահա թե ինչու Սարաֆյանի այս ժողովածունը ընդելուզվում է հայաստանյան նորագույն սերնդի գեղարվեստական-ստեղծաբանական ոգորումներին, որովհետև, բարեբախտաբար, նորերի մեջ կան «քայլու» հանգանակը առկայացողներ՝ մշակութացման ելակետայնության նախանձախնդրությամբ։

Նիկողոս Սարաֆյանի «Տեսարանները, մարդիկ և ես» ժողովածուի մատնանշած ներքին միասնականությունը խարսխվում է, պայմանականորեն ստորաբաժանենք, հինգ հանգուցային հիմների՝ գրականության բնույթային փոխակերպության անհրաժեշտությունը և կենտրոնացումը, արվեստական ստեղծումի գերակայությունը, սա պարտադիր բաղհուսված անհատականությունների թանձրացականացմամբ, արդիականության հարակա շեշտադրումը, Հակոբ Օշականի ու Վահան Թեքեյանի անդրադարձումները և վերջապես հինգերորդը՝ «ներփակ ընթերցումները», անխառն գրախոսականներ, «նարդունիական» հուք։ Անշուշտ գրանցից ոչ մեկը ժողովածուում «բացարձակ մաքուր» տեսքով չի արտահայտվում, բնագրային մակարդակում բազմաթիվ շերտերով ընթերադրված են, որը հենց Սարաֆյանի մշակութաբանական ժառանգության համագրական-բազմաձայն մասնահատկությունն է։ Գրականության բնույթային փոխակերպությունը պայմանավորված էր արդիական արվեստական ստեղծումի անհրաժեշտությամբ, որ իր առարկայական հարցադրումներով հրատապ է նաև այսօր, քանի որ Սփյուռքի գրական տագնապի բաղկացյալների ցուցանումը («Սփյուռքը և իր գրականությունը») և «վաթսունամյա բայց չափահասության չեկած մեր առաքյալների» լոռությունը, այսինքն՝ գրական իրադորձումի արմատական շրջադարձը, արդ նույնպես կենսական անհրաժեշտություն է, իսկ դա իրագործելի է հատկապես «Հեղափոխական տաղանդների» առկայությամբ, տեսող արվեստի և արվեստագետի տեսակով («Բացարձություն մը»), անհատականություններով, որոնք ինքնին տաղանդավոր են և ցեղի անկապտելի բաղադրատարերը՝ պետականությունն ու մտավորականությունը պայմանավորողները, իսկ այս հանգրվանին մենք պետք է գոյավորենք ավանդություն ու միջավայր, որ միայն «Հայկական հագուստներով, լեռներով, գյուղերով, վանքերով չէ» («Փոխակած են դարերը»), այլ գրականության ազատագրությամբ «արտաքին ամեն ճնշումն և թելադրանքներե» («Ազգայինն ու միջազգայինը գրականության մեջ») և պարտադիր տարանջատված հավաքական ցանկացած գրսևորումներից, երբ «Որոշ կետե մը անդին բանաստեղծին արտահայտությունը ոչ մեկ կապ ունի միջավայրին ու քաղաքականության հետ» («Սերունդի մը դառնությունը»)։

Այս խնդիրների յուրօրինակ բյուրեղացումն են ժողովածուի այսպես կոչված Հակոբ Օշական-Վահան Թեքեյան-ական հոսքը։ Առհասարակ հարկ է շեշտել Սարաֆյանի առանձնահատուկ բենուացումը այս հեղինակների գործի, էության և նկարագրի պարագրկումներում, որ ինքնին բնական ու հասկանալի է, իրենց ստեղծագործական խառնվածքով միմյանց «զարտուղի» այս հսկաները, որոնք հայ նոր գրականությունը 20-րդ դարի նորագույն դրսեորումներին կամրջողներն էին և ընդհանրական բույլերը, անհնարին էր, որպեսզի չլի-

նեին սարաֆյանական տեսադաշտի մշտամնա հանգույցներում: Այս խորքին «Հառաջաղիմություն թե ձուլում» ծավալուն գրությունը Օշական-թեքեյան զուգադիրի տարողունակ ընթերցումներից է, հիշատակենք անպայմանորեն «Իրավ բանաստեղծություն»-ը, «Վահան Թեքեյան», «Ողջույն մը ուսուցչիս՝ Հ. Օշականին», «Ճառը», «Մեր գրականության թշնամիները» հոդվածները, խոհագրությունները:

Ժողովածուի մաս կազմող գրախոսականները և մանավանդ Շավարշ Նարդունուն (գերազանցապես) հասցեագրած «Էպիստոլյար»-բանավիճային հոդվածները («Գեղամ Բարսեղյան», «Շահան Շահնուր», «Նամակ առ Նարդունի», «Մեկ ժամ Նարդունիին Հետ» և այլն) քաղաքական չեզոքության տիրույթներում փաստարկում են մեր գրականության մանկական շրջանի բոլոր ձախողությունները (արվեստի զգայացունց-վիպապաշտ ըմբռնողություն, հայրենասիրության հղացքի արխայիկ տաղտղնում, գրողին անպայման ուտիլիտար-ազգային կյանքին կապելու գերլարում), ուղենչում արվեստն երկմտությունից տարանջատելու կարելիությունները:

«Տեսարանները, մարդիկ և ես» հատորում մի կատարյալ պայծառատեսկանխատեսող գրություն կա՝ «Դեպի Երևան» վերտառությամբ, գրված 1950-ին: Խորհելու խորհուրդն իր գրականությամբ ու ինմացականությամբ վկայած նիկողոս Սարաֆյանը այսպես է պատկերացնում իր մուտքը Երևան. «Պիտի ուզեի, որ երբ ձիս կանգ առներ Արարատյան դաշտին մեջ, հեռվեն, մայրաքաղաքը, Երևանը՝ տեսած ավերակներուս և տեսած մեռելներուս հարության պես: Լսեի հայ զորքերուն տողանցքը, հայ արձանագործներուն մրճահարումը և մեր բանվորներուն թիերուն, բահերուն աղմուկը և տոնական զանգահարումը մեր եկեղեցիներուն»: Եվ այժմ այդպես է լինում ու լինում է նաև իր փղոսկրյա աշտարակում մշակութացման ելակետայնությունը սեփական գրականությամբ ու մտքի գործունեությամբ փաստած ու այսօրվան հասցրած նիկողոս Սարաֆյանի շնորհիվ:

## ՆՅԱՆ ՊԵՇԻԿԹԱԾԼՅԱՆ

Հայ գրականության համապատկերում կան գրողներ, որոնք երկար ժամանակ հանիրավի անտեսվել են, թեև նրանց ստեղծագործությունները, առարկայորեն, պայմանավորել են մեր գրականության պատմության այս կամ այն կոնկրետ ժամանակաշրջանի մասնահատկությունները։ Պարտադրված մոռացության, անտեսման և զանազան արգելքների պատճառով ընթերցողը հնարավորություն չի ունեցել ծանոթանալու սեփական գրականության բազմաթիվ արժեքների։ Արգելման և անտեսման գոհ են դարձել նաև սփյուռքահայ շատ գրողներ, որոնց ստեղծագործությունները հայ դասական գրականության ընտիր դրսելորումներից են։

Ահա այս մտահոգությամբ է պատճառաբանվում նորագույն շրջանի հայ գրականության ակնառու ներկայացուցիչ նշան Պեշիկթաշլյանի «Ընկեր Փարոս» վիպակի տպագրությունն՝ իբրև Հայաստանում մեծանուն գրողի ստեղծագործությունների հրատարակման մի համեստ սկիզբ։ Նշան Պեշիկթաշլյանը բացառիկ տեղ ունի ոչ միայն սփյուռքի, այլև ընդհանրապես հայ գրականության պատմության մեջ։ Նրա հարուստ և բազմակողմանի գեղարվեստական ժառանգությունը ավելի քան կեսդարյա հայ իրականության (XX դարի 20-ական թվականներից մինչև 70-ականների սկիզբը) ուշագրավ ու ինքնատիպ գրական անդրադարձումներից է։

...Կյանքի մի ստվար մասը Փարիզի մերձական արվարձաններից մեկում անցկացրած գրողը՝ Վենսենի Ստրաբուրգի փողոցի թիվ 52 տնից, անխտիր անդրադանում էր հայ իրականության բոլոր դրսելորումներին։ Նա սփյուռքի ամենաճանաչված ու սիրված գրագետներից էր, որի ստեղծագործությունները նաև ուժացման հզոր ընդդիմություն էին։ Հայաստանում նրա գրքերը պահպանվում էին գրադարանների հատուկ Փոնդերում՝ ընթերցողների աչքից հեռու, նրա մասին չէր գրվում գեթ մեկ տող, սակայն պարտադրյալ մոռացությունը չէր կարող գեմ գնալ հզոր տաղանդին։

Նշան Պեշիկթաշլյանի (1896-1972) հարուստ ու բազմազան գեղարվեստական ժառանգությունը գրականության յուրօրինակ հանրագիտարան է։ Ստեղծագործել է տառացիորեն գրական բոլոր ժանրերով։ Գրել է վեպեր, վիպակներ, նորավեպեր, պատմվածքներ, բանաստեղծություններ, պոեմներ, առակներ, արձակ մանրապատումներ, տրամախոսություններ, թատերգություններ, դիմանկարներ, ինչպես նաև թատերագիտական ուսումնասիրություններ։

Հատկապես մեծ է գրողի երախտիքը հայ երգիծական գրականության մեջ։ Հայ գրականության պատմության համապատկերում նշան Պեշիկթաշլյանը հակոբ Պարոնյանի և երգանդ Օտյանի հետ կազմում են մեր երգիծական գրականության անհասանելի և անգերազանցելի երրորդությունը։

Ծնկել է Կ.Պոլսում, որտեղ և ստացել է նախնական կրթությունը։ Գրական նախափորձերը կատարել է քսանական թվականների սկզբներին։ 1922-ին՝

Ֆրանսիայում հաստատվելուց հետո, վերջնականապես նվիրվել է գրականությանը և տարիներ շարունակ առանձին գրքերով ու սփյուռքահայ բազմաթիվ պարբերականներում տպագրված ստեղծագործություններով ու հոդվածներով մասնակցել արտերկրի գրական կյանքին:

Համառոտ անդրադառնանք գրողի գրական ժառանգության հիմնական դրսերումներին: Պեշիկթաշլյանը իր լավագույն քերթվածները գետեղել է 1939 թվականին Փարիզում հրատարակած «Ծիրանի գոտի» ժողովածուում: «Մեղքերս» ընդհանուր խորագրով «Աև վարդերու գիրք» և «Կարմիր վարդերու գիրք» շարքերի տաղերն ու քերթվածները սիրո, սպասման, անանց հիշատակների գողտրիկ գրականացումներ են: Գրողի չափածո ժառանգության կարևոր մասն են 1946-ին «Զեն ու զարդ» գրքի մեջ «Թեկորներ» ընդհանուր վերնագրի տակ ամփոփված ստեղծագործությունները, հատկապես «Արծիվներ» քերթվածը և «Շարա» պոեմը:

Գրողի երգիծանքի ինքնատիպ դրսերումներից են նրա բազմաթիվ չափածո և արձակ առակները: Մի ամբողջ ուսումնասիրություն կարելի է գրել ժանրի արդի շրջանի պատմության մեջ նրա առակների դերի և նշանակության մասին: Լավագույն առակները գետեղել է «Առյուծագիրք» և «Արգադյան սուսակներ» շարքերում:

Անգնահատելի է գրողի երախտիքը սփյուռքահայ դրամատուրգիայի զարգացման գործում: Պեշիկթաշլյանը չնորհալի գերասան էր, նշանակոր թատերագիր և հեղինակավոր թատերագետ: Պատանեկան տարիներից հրապուրվել է թատրոնով: 1919-1921 թվականներին խաղացել է Կոստանդնուպոլսի հայ դրամատիկ թատերախմբում: 1937-ին Փարիզում առանձին գրքով հրատարակել է «Հիվանդտես» մեկ արարով կատակերգությունը: 1944-ին գրել է «Ծնավ նոր արքա» պիեսը: Անպայման հիշատակման է արժանի 1950-ին Փարիզում հրատարակած «Գրիգոր Նարեկացի և Սմբատ Բ» ութ պատկերով պատմական թատերգությունը, որ Նարեկացու երեսույթի դրամատիկական եզակի մեկնաբանություններից է: Զբաղվել է նաև հայ թատրոնի պատմության ու տեսության խնդիրների ուսումնասիրությամբ: 1969-ին Անթիլիասում տպագրել է «Թատերական դեմքեր» հիմնարար աշխատությունը:

Պեշիկթաշլյանի գրականության հետաքրքրական դրսերումներից են քնարական արձակ ստեղծագործությունները, ուրույն խոհական ուրվագծերը, մանրապատումներն ու զանազան դիմանկարները: Հատկանշական է այն հանգամանքը, որ գրողը միևնույն վարպետությամբ գրում է թե՛ երգիծական դիմանկարներ ու մանրապատումներ, թե՛ խոհական ուրվագծեր, թե՛ հումորեսկներ և թե՛ վերլուծական ներհուն էջեր: Հանգամանք, որ գրողի համապարփակ գեղարվեստական հնարավորությունների շոշափելի վկայությունն է: Ավելին՝ իրողությունը մատնանշում է գրողի ստեղծագործական ընթացի օրինաչափություններից մեկը. պարբերական անցումներ մի ժանրից մեկ այլ ժանր, ոճական, պատկերային համակարգի անհրաժեշտ տեղափոխությունները յուրատեսակ «հսկողական» գործառնություն էին, որ հնարավորություն էին ընձեռում միշտ պահպանել գեղարվեստականի մակարդակը, խուսափել թույլ, անհաջող գործերից, ստեղծագործական ետընթացից: Գրողի դիմանկարները, երգիծական ու

քնարական մանրապատումները, խոհագրումները զետեղվել են և՝ ժողովածուներում, և՝ տպագրվել առանձին գրքերով։ Մասնավորապես՝ «Մեր պարտեզեն» (Փարիզ, 1947), «Մեր դրախտեն» (Փարիզ, 1948), «Նոր ծաղրանկարներ» (Փարիզ, 1952), «Մոմիաներ» (Փարիզ, 1954)։

Գրողի արձակը, որ նրա գրական ժառանգության հիմնական և նշանակալի դրսերումն է, կարելի է բաժանել երկու հիմնական խմբ՝ պատմական թեմաներով գրված ստեղծագործություններ և քաղաքական-երգիծական վեպեր և վիպակներ։

1920-ական թվականների վերջերին, 30-ականների սկզբներին Նշան Պեշիկթաշլյանը տպագրում է արձակ մի քանի ուշագրավ ստեղծագործություններ Բոստոնի «Հայրենիք» ամսագրում («Լուսին և նշխար», «Փարավոն Սեմ-Անտոն», «Իշխան Արշակունի», «Նարդու», «Զիթենի», «Տեսիլներ»), որոնք նրան ճանաչում են բերում։ Այնուհետև նա արդի հայ վիպասանության մեջ ստեղծում է Ավետարանի և բյուզանդական շրջանի պատմությանը վերաբերող թեմաներով, այսպես կոչված, հրաշավեպերի և քնարավեպերի մի շարք։ 1942-ին Փարիզում տպագրում է «Լուլուտի» ստեղծագործությունը, որ գրել է 1940-ին։ Վեպը Բյուզանդիոնին նվիրված ստեղծագործությունների շարքից էր («Կաաքա», «Պատմություն Ասավուտներու»)։ Գրքի ներածականում վեպը բնորոշվում է իբրև ի նպաստ խաղաղության մի խճագրություն բյուզանդական շրջանից։ 1928-32 թթ. Ավետարանի թեմաներով գրում է «Միդոննա», «Ծապալի» և «Մարիամ Մագդաղինացի» եռագրությունը։

1927-ին կրկին Փարիզում հրատարակում է «Ընկեր Շահազար» երգիծագիրը, որ նրա քաղաքական երգիծանքի առաջին ծավալուն ստեղծագործություններից է։ Շահազարը Պեշիկթաշլյանի քաղաքական գործչի առաջին երգիծական հերոսն էր, իր տեսակի մեջ մի ինքնատիպ Փանջունի, որին պիտի հաջորդին Փարոսը «Ընկեր Փարոս» վիպակից, Տոմփազյանը և Զեթինյանը «Մագալին պոչին տակ ու շուքին» վեպից։ Այս կերպարներով գրողը հայ ընթերցողին ներկայացրեց քաղաքական գործչի մի անմահ տիպ, որ հար և նման Օտյանի համապատասխան հերոսներին, գրականությունից արագ կյանք մտավ՝ դառնալով երկույթի, մտայնության հավաքական ու դիպուկ ընդհանրական անուն։

## ԿԱՐԱՊԵՏ ՓՈԼԱՏՅԱՆԻ «ԶՐՈՒՅՑ»-ՆԵՐԸ

**Գ**րականության պատմության տարբեր ժամանակաշրջաններում հանդես են եկել, ստեղծագործական բեղուն և երկար կյանք ունեցել այնպիսի գրագետներ, որոնք այնուհետև ինչ-ինչ առարկայական և ենթակայական պատճառներով «դուրս են մղվել» գրական-գեղարվեստական արդի կենսոլորտից, տեղակայվել զուտ արհեստավարժների մասնագիտական գրություններում, զրկվել ընթերցման լայն շրջանակներից: «Երկրորդական», «ընթացիկ գրողներ» կաղապարներով հորջորջվող այդ գրագետներից շատ-շատերը, սակայն, իրենց գործով և ժառանգությամբ անվերապահելի են այս կամ այն շրջանի գրականության հաշվեկշիռն ըմբռնելու և ընկալելու համար: Մանավանդ հայ գրականության պարագային, եթե արձանագրենք այն հանրահայտ ճշմարտությունը, թե մեր գրականության ընթերցումն ու մեկնաբանությունը ենթադրում է բազմաթիվ անունների և գրական իրողությունների վերականգնում գրականության պատմության մեջ:

Սփյուռքի գրականության հայաստանյան ընկալումներում և պատկերացումներում սա առավելագույնս ընդգծված է: Իրավացիորեն սևեռվելով մեր գրականության այդ դրսեորման կենտրոնին՝ չպետք է մոռանանք և կամ շրջանցենք այն գրական մշակներին, որոնց կյանքն ու գործը տառացիորեն մեր գրականության բաղհյուսված դրսեորումն է, նրա կենսագրությունը: Շուրջ երկու տասնյակ ժողովածուների, գրքերի հեղինակ և, փաստորեն, արտերկրի գրականության, մշակույթի խանձարուրից մինչև արդի շրջանի գրական կյանքի ականատես և մասնակից: Եվ նաև հայաստանյան գրագետի ու ընթերցողի համար Հայրենիք-Սփյուռք մշակութային կամուրջը գործնականացնող բնութագրական և պարտավորեցնող օրինակ: Կարապետ Փոլատյանն այն մտավորականներից էր, որ սկզբունքային հետեղականությամբ հայկական գաղթօջախներում ներկայացնում, ծանոթացնում էր հայաստանյան գրականությունը, անդրադառնում մեր գրական կյանքի բոլոր ելեկջումներին: Այս առումով ուներ փորձառություն անցած ավանդներ, որոնք այսօր շարունակվում են, իսկ մե՞նք, պիտի ունենա՞նք վերադարձի մեր ավանդները...

Սեփական ստեղծագործական, գրական կյանքն ընդհանրացնելիս, երբ հասել էր «իր հաշիվն ալ նայելու» ժամանակը, այսպես է բնութագրում իր գրականությունը. «Երկրաչափին վրա կրնաս խաչ մը քաշել... գալով գրագետին՝ ի՞նչ ըսեմ: Ճիշտ բառը չէ թերևս... գրագետ չեմ, բայց գրականություն կ'ընեմ, աղեկ գեշ, և ինչպես կ'ըսեի՝ ավելի գեշ քան աղեկ: Մեծերը, տաղանդավորները նրբահյուս, գունագեղ կարկանդակներ կը շինեն: Իմ՞ հաց ու պանիր է, փոր կշտացնելիք հաց ու պանիր: Ժողովուրդին համար՝ որպեսզի անոթի չմնա ան: Կրցա՞ հասկցնել միտքս, հաց ու պանիր: Որքան «աշխատված», նրբաճաշակ են եփած կերակուրներս, այնքան պարզ են գրածներս: Ես կը գրեմ իբրև առաքելություն: Ճիշտ այնպես ինչպես քրիստոնյա միսիոնարները կը մեկնին հեթանոս ժողովուրդներու մեջ քարոզելու:

— Իսկ դու ի՞նչ կը քարոզես:

— Հայությո՛ւն»:

Իրավամբ, Փոլատյանի այս յուրահաստուկ ինքնադատականը գրագետի գործի առարկայական բնութագրական է: «Արևելքի տղաքը», «Կը հրաժարիմ հայութենե», «Արծիվները անապատին մեջ», «Կրակե շապիկը» վեպերը, քերթվածները, արձակ խոհագրություններն ու մանրապատումները, պատմվածքները կոչված էին ուժացման ընդդիմությանը և իրենց գեղարվեստական համակարգով, գրականացման սկզբունքներով, գաղափարամիտությամբ ընդամենը այն անհրաժեշտ ստեղծագործական տարածության ապահովողներից էին, որտեղ պիտի բյուրեղանար սփյուռքյան գրականության ոստումը՝ Նիկողոս Սարաֆյան, Հարությ Կոստանդյան, Ահարոն Տատուրյան...

Կարապետ Փոլատյանը, հար և նման Բյուզանդ Թոփալյանի, Դերենիկ Ճիզմեցյանի, Բաբեն Պոտոսյանի և շատ ու շատ ուրիշների, արտերկրում պահպանում էր հայ գրական կենսոլորտը «Հաց ու պանրի» նման գործերով, մշակութային կյանքը, թերթ ու հանդես հրապարակում, գոյավորում մթնոլորտ գրականության թոփչքի համար:

Փոլատյանի գրականությունն ինչ-որ իմաստով վնատրությ էր, ստեղծագործական անընդհատ որոնում, որն անպայմանորեն պետք է մեկտեղվեր, գտներ ինքնարտահայտման լավագույն և ներդաշնակ ձևը: Արդեն հասուն գրագետը գտավ այն՝ գրական զրույցի, երկխոսության ժանրի միջոցով: Այստեղ է, որ լիովին կայացավ գրող Կարապետ Փոլատյանը: Նրա «Զրույց»-ները թե՛ իրեւ հղացք, թե՛ որպես իրագործում ոչ միայն նորություն էին, այլև՝ ժանրի կատարյալ, լիարժեք դրսելորումներից:

Ինչպես Սփյուռքի, այնպես էլ Հայաստանի գրական-մշակութային կյանքի քաջատեղյակությունը, իրազեկությունը, բազմաթիվ գրողների հետ ունեցած մտերմիկ, բարեկամական հարաբերությունները, զրուցակցին հետաքրքրելու անուրանալի ձիրքը, երկխոսություն կառուցելու մշակույթը, զրուցակցին ամբողջովին բացելու, երկխոսության ժամանակ այս կամ այն թեմայի շուրջ կենտրոնանալիս աննկատ, տեղին ռեալիզմերով զրուցակցին «մտասկեռելու» կարողությունը, ճիշտ ժամանակին ընդմիջելու, բանավիճելու և կամ լրացնելու ունակությունը «Զրույց»-ները դարձրել են արտակարգ հագեցած, սլացիկ: Պակաս կարեռը չի եղել նաև այն հանգամանքը, որ Փոլատյանը գրական շրջանակներում ուներ անզուգական խոհարարի համբավ: Ինչպես ինքն է նշում Ու. Սարոյանի հետ կայացած երկխոսության մեջ, այդ հանգամանքի շնորհիվ էր, որ տեղի ունեցավ իր «Զրույցը» (նշանավոր գրողը խնդրել էր նաև Բիթլիսի քյուֆթա պատրաստել):

Փոլատյանը «Զրույց»-ների հինգերորդ հատորում գրում է. «Գրական այս սեռը կը մշակեմ տարիներե ի վեր, պարզապես օգտակար ըլլալու համար հայ գրականության: Հոն ոչ անձնական փառք կը փնտոեմ և ոչ ալ շահ: Ոչ իսկ ստեղծագործական երկե մը սպասված հոգեկան գոհացումը»: Անշուշտ այս խոստովանանքը մատնանշում է «Զրույց»-ների ստեղծման և կայացման դժվար ընթացք, ստեղծագործական կերպից արտածված անանձնականությունը և նաև վկայում է այն հակադարձ շարժումը, երբ ընթերցողը «հոգեկան գոհա-

*ցում» է ստանում գրագետի այս երկխոսություններից իբրև ստեղծագործություն, իբրև գրականություն։ Ասվածի պերճախոս հավաստումներն են զրույցները Բենիամին Թաշյանի, Նիկողոս Սարաֆյանի, Հարութ Կոստանդյանի, Վահագ Օշականի, Գուրգեն Մահարու, Խաչիկ Դաշտենցի և այլոց հետ։ <...><sup>\*</sup>*

---

\* Հոդվածին հաջորդում է հրապարակում «Մի ծաղկաքաղ Կարապետ Փոլատյանի «Զրույց»-ից Ուիլյամ Սարոյանի հետ» (տե՛ս Վարուժան, 1993, թիվ 6, հունվար)։

## ԷԴՈՒԱՐԴ ՊՈՅԱՇՅԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Հայաստանի «Մուսալեռ» հայրենակցական միության նախաձեռնությամբ և հովանավորությամբ հանրապետության Գրապալատի հրատարակչությունը լույս է ընծայել սփյուռքի նշանավոր, ուրույն գրագետներից էղուարդ Պոյածյանի ստեղծագործությունների ընտրանին։ Գրական, առհասարակ մշակութային կյանքում այս կարևոր իրադարձությունը առավել ևս հուսադրող է, քանի որ «լրագրային գրականության», գիրք տպագրելու անհնարինության այս օրերին հայաստանյան ընթերցողին է վերադարձվում սփյուռքյան գրականության ճշմարիտ, իրական արժեքներից մեկը, որի գեղարվեստական ժառանգությունը տարիներ շարունակ արգելափակվել էր, պարտադրված «մոռացման» դատապարտվել։ Սակայն հար և նման Հակոբ Օշականի, Վազգեն Շուշանյանի, Նիկողոս Սարաֆյանի ու Զարեհ Որբունու, Շավարշ Նարդունիի և Սմբատ Փանոսյանի, սփյուռքյան գրականության բոլոր իրական արժեքների, էղուարդ Պոյածյանի ընտիր գրականությունը անմասն չէր հայաստանյան ընթերցողների մի փոքր շրջանակի համար, որոնք վստահ էին, որ ուշ թե շուտ այս լուսավոր փաղանգը անցնելու է պարտադրված «մոռացման» խոչընդոտները, դառնալու է հայաստանյան գրական-մշակությային կյանքի ներկայությունից։ Ուրեմն Պոյածյանի այս ընտրանու առկայությամբ կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում սկսվում է մեր գրականության իրական արժեքները վերադարձնելու կարևոր ու հրատապ գործընթացը։ Սա մասնաւետների և հրատարակիչների համար պարտականություն է։

Սփյուռքի գրականության համապատերում էղուարդ Պոյածյանը հատկանշվում է գեղարվեստական կայուն-ավանդված հղացքների ուրույն, և որ առավել բնութագրական է, գրական ընթացում նոր ստեղծագործական ընթերցումներով։ Սա բնորոշ է և՝ նրա փոքր արձակ ստեղծագործություններին, և՝ բանաստեղծություններին և թե՛ զանազան խոհագրություններին։ Դեռևս Գավառի կամ Վազգան գրականության բանարվեստում և գեղագիտության մեջ ամրագրված և Թղթատինցիով ու Ռուբեն Զարդարյանի գրականությամբ ըստ ամենայնի կիրարկված, ապա Հակոբ Օշականի եղակի «Խոնարհներ» շարքով լիակատար ամբողջականացրած ու, այսպես կոչված, «Կարոտի գրականության» տիրույթներում Մնձուրիի և Համաստեղի բյուրեղացրած հայրենապատումը՝ կորսված հայրենիքի մարդկանց, կենսոլորտի, իրերի և առարկաների աշխարհի գեղարվեստական յուրօրինակ տարեգրությունը, 20-րդ դարի 40-ական թվականների վերջերին 50-ականների սկզբներին միանշանակ տեղապատույտ էր տալիս։ Գրական պարբերական համարեականներում, հանդեսներում, առանձին գրքերով ու ժողովածուներով հրատարակվում էին բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք կամ մատնանշած հեղինակների (Հատկապես՝ Մնձուրի, Համաստեղ) առավել կամ նվազ կրկնություններն էին, կամ գեղարվեստական այդ հետագծի անթաքույց ձախողումները։ Միակ բացառությունը Շավարշ Նար-

գունին էր, որի հեղինակային հեքիաթները, քնարական պատկերներն ու արձակ մանր ստեղծագործությունները կարոտի գրականություն էին ներբեռում կորսված հայրենիքի կենսոլորտի մոգական երփնագիրը, միթոսների ճաշակավոր ոճավորումները: Եվ ահա 1948-ին լույս է տեսնում էդուարդ Պոյաճյանի «Հողը» փոքր արձակ ստեղծագործությունների ժողովածուն, որտեղ զետեղված տասնհինգ պատմվածքներն ու պատկերները Մնձուրի-Համաստեղյան հղացքների և գեղարվեստական իրագործումների հաղթահարումն էին, կարոտի գրականության տեղապտույտի ազատագրումը: Իր ականավոր նախորդների գեղարվեստական փորձը լիովին տարրալուծերով իրեն բնագիրը կազմակերպող հատկանիշ՝ Պոյաճյանը գոյագորեց ծննդավայրի, կորսված հայրենիքի գեղարվեստական բոլորովին նոր կերպ՝ լեզվական և հղացքային այնպիսի իրադորմներով և գեղագիտական տեսանկյունով, որոնք սկյուռքի գրականության համապատկերում մինչ այդ չէին կիրառվել: Նրա դիմանկար-պատմվածքները («Փոր-Մկո», «Դանի», «Նկար Ղուկաս», «Այնձարի մեկ տղան», «Սանդիկը» և այլն), առարկայական արձանագրություն-պատկերները («Մեր հողին կարոտով», «Իր տեսարակին մեջ», «Մեռել մը և հուղարկավորություն», «Ինք և ծխամորճ») ընթերցման տիրույթներում հանդիպաղրում են ներքին տարագրության բախումները, մոտեցում-հեռացում-ների անընդհատ պատկերագրումներով ցուցանում պանդուխտի գոյաբանության ընդհանրական բյուրեղացումները՝ բարքով, պահպանով, հողի «խառնվածքի ցայտուն գիծերով»: 1963 թվականին հրատարակած «Տոմար տարագրի» ժողովածուն (ներառում է երկու շարք՝ «Տոմար տարագրի» և «Սիսակ և Միսաք») ստեղծագործական միևնույն կերպի շարունակությունն էր:

Էդուարդ Պոյաճյանի բանաստեղծությունները, որոնց մեկ մասը մեկտեղված է «Սեր և վիշտ» (1944 թ.) և «Ծննդավայր կորուսյալ» (1984 թ.) ժողովածուներում, իսկ շատերը, գրագետի մյուս երկերի պես, ցան ու ցիր՝ «Հայրենիք», «Ազգարար», «Բագին», «Նաիրի», «Հասկ», «Ակոս», «Հառաջ», «Ազգակ» և այլ պարբերականներում, ի տարբերություն, ասենք, Արշամ Տատրյանի, Վահրամ Սոֆյանի, Արսեն Աճեմյանի, Ռաֆայել Զարդարյանի, Շեմսի, այլոց ստեղծագործությունների, որոնք սոսկ գրապատմական գործառնություններ ունեն, ստեղծագործական իրացման ու նախադեպի իմաստով (հար և նման Վահե Օշականի, Կոստանդնուպոլսի բանաստեղծական փաղանգի Կ. Ճանձիկյան, Հ. Գալուստյան, Զահրատ, Զ. Խրամունի) բարերար պայմաններ գոյագորեցին բանաստեղծական նորագույն ուղղության համար (Գր. Պըլտյան, Հ. Պերպերյան, Ս. Կիրակոսյան, Շ. Տանապետյան, Վ. Թերեյյան, այլք):

Էդուարդ Պոյաճյանը ծնվել է 1915-ին Մուսա լեռան հոտըր-Պեկ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Հայրենիքում, այնուհետև հաճախել է Բեյրութի Հայ ճեմարանը: 1935 թվականից մինչև կյանքի վերջը (վախճանվել է 1966-ի հոկտեմբերի 13-ին) զբաղվել է ուսուցչությամբ, եղել է «Բագին» հանդեսի առաջին աշխատակիցներից: Հանդես է եկել Վազգեն Տիրանյան, Ե. Ծովիկյան, Ե. Սարյան, Ալպաթրոս ծածկանուններով:

Մինչ այս «Ընտրանու» լույս ընծայումը նրա արձակը, բանաստեղծությունները, քննադատական գրություններն ու հրապարակագրական, խոհագրական

էջերը հրատարակվել են «Սեր և վիշտ», «Հողը», «Պայքարողներ», պայքարողներ՝ դուք գազազած», «Թուղթ զավակներուս», «Երկու նամակներ», «Դեմքեր», «Տոմար տարագրի», «Ծննդավայր կորուսյալ» հատորներով։ 1972-ին Բեյրութում, Համազգային «Հայ գրողներ» մատենաշարով լույս է տեսել գրողի երկերի առաջին հատորը, ուր ամփոփված են «Հողը», «Տոմար տարագրի» եւ «Միսակ և Միսաք» շարքերը։

Երևանյան այս ժողովածուում գետեղված են անվանի գրողի այն արձակ և չափածո ստեղծագործությունները, որոնք, ինչպես նշում է «Ընտրանին» ամենայն բարեխղճությամբ կազմած և հակիրճ առաջաբանը գրած Ասողիկ Բեքմեղյանը, «Լավագույնս արտացոլում են գրողի գեղագիտական սկզբունքները, մտածողության ու պատկերավորման ուրույն համակարգը»։

## ՀԱՐՈՒԹ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Այ նոր և արդի գրականության պատմությունն ամբողջովին պատկերացնելու և ճանաչելու գործում գրական ժառանգություններ հրատարակելու մտահոգությունն ու գործը կենսական անհրաժեշտությունն են: Հատկապես, երբ արխիվներում ու զանազան հավաքածուներում գոց են մնում այն գեղարվեստական վավերագրերն ու վկայություններն, առանց որոնց գրականության պատմությունը ոչ միայն անկատար է, այլև՝ հատկականությունը խաթարած, առանց «այցեքարտի»: Սա մի վիճակ է, որը կարելի է մշակութային, գրական ընկեցիկություն համարել, վտանգավոր ու ստեղծ, քանի որ գրականության պատմության ճանաչողությունը խարսխվում է բարգույթներով: Ուրեմն, գրական ժառանգության յուրաքանչյուր հրապարակում, շրջանառության մեջ մտցնելու իրողություն, գրականության պատմությունը, գրական ընթացի կենսագրությունը սատարում է ազատվելու թերի լինելու բարգույթներից, իսկ ներկայանալի, հզոր ստեղծագործությունների վերակոչումը անհաղորդակից լինելու հարցագրույցը դարձնում է սնանկ (անհաղորդակից բոլոր առումներով, համաշխարհային գրականության հետ անվարան բաղդատվելու, իբրև արժեք, մեծ գրականություն): Վերջիվերջո, այս պարագային, գրականության պատմությունը ազատագրվում է պարտադրված բարգույթներից, և հայ գրականությունը ստանում է իր նորմալ, կենսունակ, ներկայանալի տեսքը: Այս իմաստով իրողության պերճախոս վկայությունն են «Արդ» մատենաշարի հղացումն ու գործունեությունը, որն արդեն երեք գիրք է հրատարակել՝ նիկողոս Սարաֆյանի «Վենսենի անտառը» (Փարիզ, 1988), Հարութ Կոստանդյանի «Օրերի իմաստությունը» (Փարիզ, 1989 թ.) և «Նամակները»: Մատենաշարի գոյությունը և նպատակամիտությունը միմիայն երախտագիտություն ու հիացմունք են առաջացնում արտերկրի այն գրագետների նկատմամբ, որոնք իրականացնում են այս գործը և իրենց անձը գուգահեռվում է հրատարակած անունների հետ, իբրև գրագետ, գրական անհատ:

Հրապարակումների այս ծիրում շրջանառության մեջ են դրվում նաև էպիստոլյար ժառանգության այն գրսերումները, որոնք գեղարվեստական-գեղագիտական կարևորագույն հուշարձաններ են, գրականության պատմության անկապտելի գրսերումներ: Այսպես՝ 1986 թվականին «Կամ» վերլուծական հանդեսում հրապարակվեց Հակոբ Օշական-Նիկողոս Սարաֆյան նամականին (թիվ 3-4, էջ 109-143)՝ թվով տասներկու՝ չորսը՝ Սարաֆյանից, ութը Օշականից: 1988-ին Երևանում, Ալեքսանդր Թոփչյանի աշխատասիրությամբ, լույս տեսավ Հարութ Կոստանդյանի «Օրերի իմաստությունը» ժողովածուն, ուր գետեղվել էին գրողի նամակների մի փունջ: Գրականագետը Կոստանդյանի այդ հատորյակը կազմելիս, ինչպես ինքն է գրում. «... ծանօթագրությունների վրա աշխատելիս մեծապես օգտվել ենք Գրանսահայ գրողներ Զուլալ Գաղանցյանի և Գրիգոր Պըլտյանի անշահախնդիր աջակցությունից, որի համար հայտնում

ենք մեր խորին շնորհակալությունը»: Հարութ Կոստանդյանի երևանյան հրատարակության մեջ առաջին անգամ տպագրվել են Բաբկեն Պոտոսյանին և Բյուզանդ Թոփալյանին ուղղված նամակներից, որոնցից առաջինին հասցեագրված նամակների պատճենները ստացվել էին բանաստեղծ և բանասեր Զուլալ Գազանճյանից: Եվ ահա 1990 թվականին «Արդ» մատենաշարով Զուլալ Գազանճյանը հրատարակում է Հարութ Կոստանդյանի քառասունությ նամակ, որոնցից 36-ը հասցեագրված են Բաբկեն Պոտոսյանին և տասնութին առաջին անգամ են հրատարակվում, իսկ տասներկուսը՝ Բյուզանդ Թոփալյանին: Հետաքրքրական է այն իրողությունը, որ Զուլալ Գազանճյանն իր «Շարունակելի» բանաստեղծությունների ժողովածուում «Բաժակ ի ձեռին» քերթվածը ձոնել է Բ. Պոտոսյանին՝ «Կատակի պես, փոխան նամակի՝ Բաբկեն Պոտոսյանին» մակագրով, իսկ «Հոգիով և մարմնով» բանաստեղծությունը՝ Կոստանդյանին՝ «Նամակի պես, սիրելի Հարութ Կոստանդյանին» մակագրով: Հարկ է նշել նաև, որ Գազանճյան բանաստեղծի «կուռքերը» Մեծարենցն ու Կոստանդյանն են, այնպես որ սույն նամականու հրատարակիչը Կոստանդյանի հեղինակավոր գիտակն է: Իր մեծ ժամանակակցին մոտիկից ճանաչելը, մտերմությունը՝ մի կողմից և բնագրագիտական պրոֆեսիոնալ աշխատանքը՝ մյուս կողմից հայ գրականությունը հարստացրել են մի կատարյալ գրական հուշարձանի ընտիր, ըստ ամենայնի, հրատարակությամբ: Զուլալ Գազանճյանի հմուտ և համառոտ ներածականը («Երկու խոսք» վերտառությամբ) Հարութ Կոստանդյանի նամակների ուշագրավ մեկնություն է:

20-րդ դարի հայ մեծանուն բանաստեղծ, գեղագետ Հարութ Կոստանդյանը (1909-1978), որ մեր գրականության ամենաառինքնող, ինքնատիպ երկույթներից է, ճակատագրի քմահաճույքով իր անզուգական նախորդի՝ Տիրան Զրաքյանի նման բավականին ժամանակ օտարված մնաց՝ մոռացության, չհասկացվածության, անտեսման և այլ պատճառներով: Նախախնամությամբ առանձնաշնորհյաներից միշտ շատ է պահանջվում: Արդեն իր գրականությամբ փորձություն անցածը ևս մի անգամ դաժան, անարդարացի փորձություն կրեց՝ խայտարղետ անտեսումների իրականության մեջ, մինչև իր երկրորդ ներկայությունը: Միայն զգոր ստեղծագործողը, արվեստագետը կարող է լրջացնել անհանդանության մեջ իրականությունը հաղթահարել գրելու, գրականության աստվածային վիճակում. «Գրե՛լ, այսինքն ընդհատել մի լուսություն, որ վանակնյա գունդի պես պարփակել է գոյությունս, շրջապատի ձանձրալի ժխորը և աղմուկը խափանել: Որի վճիտ թափանցիկությունը սակայն՝ նորանոր ու հայտնական տեսիլքով է ցուցաբերել, արտաքին կյանքի շարժումն անլուր՝ որպես ականակիտ զուրերի հատակին, խայտարդետ խճաքարերի անշարժության վրա սողացող, գունագեղ ձուկերի անշշուկ անցուգարձն ուրվականային: Ընդհատել մի լուսություն, այսինքն թողնել բնակության հարկն ապահով ու հեռանալ:

Խոսքերով, խոհերով հառաջանալ» (Բացարձակ էջեր): Այս տողերը Հարութ Կոստանդյանը գրել է իր կյանքի ամենագրամատիկ, դժվարին օրերին (1943-1944 թթ.)՝ կանխորոշելով չափազանց խստապահանջ նախապայմաններ, որոնց բավարարումն իսկ արդեն ստեղծագործ կարելիությունների անասելի

պրկում և լարվածություն է պահանջում: Ուրեմն գրելը, բանաստեղծությունը վիճակից դուրս գալու համար անկյուն չի, ոչ էլ փոխարկելիություն, այլ գոյաբանական անհրաժեշտություն, նամանավանդ. «... արուեստը միշտ տանձանք է, յարեաւ կոիւ մղուած մեր իսկ տկարութիւնների դէմ ուր յաղթողը եւ պարտուողը մի եւ նոյն էութիւնն է, եւ նա ինչպէ՞ս է կարող յաղթանակ տօնել, առանց զգալու պարտուողի տանջանքը..., ...բանաստեղծութիւնը՝ գերագոյն գիտակցութիւնն է մարդկութեան-մարդկային վիճակին», – գրում է նա իր նամակներում: Այսօրինակ կերպը, արվեստագետի բնույթը անհնար է, որ հանդուրժեր դույզն-ինչ փոխգիծում: Ավելի շուտ, առհասարակ կդադարեր գրելուց: Հար և նման են Կոստանդյանի գրականությանը նաև խնդրո առարկա նամակները, որոնք ուղղված են իր մտերիմ ընկերներ Բարեկեն Պոտոսյանին և Բյուզանդ Թոփալյանին: Ինչպես տեղեկանում ենք Զուլալ Գազանճյանի «Երկու խոսք»-ից, Պոտոսյանը արհեստով շենքի ներկարար էր, արվեստասեր անձ, գրում էր, նկարում, «իրապէս սրտակից Յ. Կոստանդեանի, զայն կը համարէր իր մեծ եղբայրը»: Պոտոսյանին հասցեագրած նամակները բանաստեղծի համար մտածումների, խոհերի, տեսակետների արտահանման, մինչև վերջ բացվելու հնարավորություն էին. «Ինչքան լաւ կը լինէր, եթէ մենք մեր նամակներով փորձէինք հաղորդել մեր իսկական երազները, մեր գաղափարներն ու մեր յոյսերը պարզել մէկը միւսին, անկեղծութիւնը՝ ինքնին համոզիչ լինելով՝ պիտի ստեղծէ ներդաշնակ խօսակցութիւն», – գրում է Կոստանդյանն իր նամակներից մեկում Բարեկեն Պոտոսյանին: Բանաստեղծ, հրատարակիչ, նկարիչ, «Անդաստան»-ի խմբագիր Բյուզանդ Թոփալյանը Կոտանդյանի մտերմագույն գործնկերներից էր, գրական համախոհներից, ուստի պատահական չէ, որ նրան հասցեագրված նամակներում ևս բանաստեղծը դուրս էր գալիս «անհունօրէն մենակ»-ությունից:

Հարութ Կոստանդյանի այս նամականին կատարյալ գրական հուշարձան է: Միանգամայն ճիշտ է Զուլալ Գազանճյանը, երբ սա զուգահեռում է Ռիլկեի «Մի երիտասարդ բանաստեղծի» գործի հետ, և եղրակացնում, որ բանաստեղծն «այս նամակներով գրականութիւն կը մաշէ. եւ բա՛րձր գրականութիւն»: Հատկանշականն այն է, որ նամակներում անդրադարձված բազմաթիվ խնդիրներն ու տեսանկյունները գրականության, մշակույթի, գեղագիտության, ստեղծագործական ընթացի բնույթի և առանձնահատկությունների մասին, փիլիսոփայական ընդհանրացումները միասնականացված են և նամականին (առանձնապես Բ. Պոտոսյանին հասցեագրվածները) ընկալվում է իրքև ամբողջություն, քանի որ դրա յուրաքանչյուր միավոր փոխպայմանավորված է Կոստանդյանի՝ մշակույթի, գրականության սկզբունքային, հետևողական հանգանակներով և անկախ այն հանդամանքից, թե ինչի մասին է գրում՝ Նշան Պեշիկթաշլյանի թե Կարապետ Փոլատյանի, Հենրի Միլլերի թե ոստիկանական վեպի: Ի դեպ, ինչպես մատնանշված անունների և երևույթների, այնպես էլ նամակներում հանդիպող այն բոլոր անուններն ու երևույթները, որոնց անդրադարձել է Հարութ Կոստանդյանը, հատկանշվում են նյութի կատարյալ իմացությամբ, հիմնավոր նկատումներով: Նամակների ներքին ընդհանրության լավագույն վկայություններից է դրանց լեզուն առհասարակ, խաղացկուն ոճը, ամեն բառ, արտա-

Հայտություն, յուրաքանչյուր պարբերություն պատկերագրել է դիպուկ, բնութագրական շեշտերով, ներհատուկ գույներով:

Հարութ Կոստանդյանի նամականին բանաստեղծության տեսություն է և ստեղծագործական ընթացի վկայություն: Փաստորեն նրա նկատումները, գնահատականները ընթերցողին են մատուցանում քերթվածի գոյավորման ճանապարհը. «Ես համոզված եմ, որ երեք պէտք չէ մտածել ընթերցողի մասին. նրա գոյութիւնը չպէտք է մեզ զբաղեցնէ, այլ ընդհակառակը՝ ընթերցողն է որ պետք է հետաքրքրուի, զբաղուի մեր գոյութեամբ՝ այսինքն մեր գործով՝ որը համայն մարդկութեան դէպի գեղեցկութեան ու կատարելութեան ձգտումների փաստն ու վաւերացումն է - միակ իրողութիւնը որ բնագդական կարիքներից, անասնական ախորժակներից դուրս, տալիս է մարդկութեան մի գերագոյն ու վսեմ ճակատագիր»: Այս իմպերատիվով է պատճառաբանվում քերթության, արվեստի առհասարակ առաքելությունը, որ նպատակամիտում է, ինչպես ինքն է բնորոշում նամակներից մեկում, հայկական «քաղաքակրթությունը» գեղջկական մշակութից ձերբագատելու և քաղաքակրթության հասնելու համար: Իսկ այս պարագային Կոստանդյանը մեր ինքնության, բնույթի համարձակ և ազնվագույն գնահատականն է տալիս իբրև պայծառատես տեսանող. «... Ես հաւատում եմ որ Հայը, Արտաւազդի պէս, իր «ներքին Արարատի» անդունդների մէջ դեգերելուց վերջ, պիտի նուաճի նաեւ գագաթն իր ներքին մենութեան: Կան ժողովուրդներ որոնց խորութիւնը հազիւ մի փոս է, եւ բարձրութիւնը՝ մի բլուր: Եւ երջանիկ են: Մենք ապերջանիկ ենք, յաճախ գոռող ու միամիտ: - Աւազ որ մեր տգիտութիւնն իսկ՝ խորունկ է. - Մեր ներքին վիճերի չափ անյատակ: Այս՝ այսպես է, եւ հայ գրագետը, մտաւորականն ու արուեստագէտը՝ բիւրեղացումն, եւ կամ ծաղրանկարն են հայկական առաքինութեանց ու թերութիւնների»: Իսկ ինքն իր բնութագրած այն «ալքիմիագէտն» էր, որ «տարրալուծում» էր և «կապարը դարձյալ ոսկի դարձնում»:

## ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՅ

(Դիմանկարի ուրվագիր)

**Գ**րեթե քառորդ դար առաջ լույս տեսավ Հակոբ Կարապենցի ստեղծաներ նրա գրական գործունեության քսան հնդամյակը, որն արդեն վկայված գործով՝ լիիրավ ենթադրում էր արդի հայ գրականության կենտրոններից մեկի՝ տարի լինելու իրողությունը՝ արժանի ընթերցումներով և գնահատականներով, սակայն նույն բոստոնից, համարյա միաժամանակ երևան հասան նրա վերջին «Մի մարդ ու մի երկիր և այլ պատմվածքներ» ժողովածուն ու մահվան բոթը: Կարծես թե կանխազգալով մոտալուտ վախճանը՝ գրողն իր վերջին գրքի առաջաբանում գրում է. «Ոմանք որոշ հանգրվանի հասնելուց հետո երկար շունչ են առնում, մի տեղ հաստատվում և, լավագույն դեպքում, շարունակում կառույցը այն շինության, որի հիմքերը գրել էին տարիներ առաջ: Ես տակավին որոշակի հանգրվանի չեմ հասել, որևէ տեղ չեմ հաստատվել, և, մնայուն կառույցի չեմ ձեռնարկել՝ թե աշխարհագրական և թե գրական իմաստով: Մնացել եմ նույն փորձնապաշտ որոնողը, մտածելով, որ լեռան թիկունքում պիտի գտնեմ զմբուխտյա հուռթի հովիտը: Այս իսկ պատճառով է, որ գրական իմ ամեն մի նոր գործում ես ջանում եմ վերստեղծել ինձ: Իսկ նման ամեն մի փորձից հետո գտնում եմ, որ եղածը անբավարար է»: Կարապենցի այս անչափ կարևոր ինքնադատական նշագրումը այս կամ այն չափով առկա է նրա գեղարվեստական բնագրերի զուգահեռներում, և՝ զանազան վերլուծականներում, սակայն այսքան բյուրեղացված, բանաձևի հասցված վկայակոչման կերպարանք ունի վերջին գրքում: Այստեղ է գրողի կանխազգայնության և տեսանողության այն հանգույցը, որ ընկալման և ընթերցման շրջանակում կարապենցյան «ինքնավերստեղծման» էգոցենտրիկ անկատարությունը՝ գրողի ժառանգության մեջ բարձրակետի խարսխված «Անկատար» ժողովածուով, որ արդի հայ արձակի այցեքարտային արժեքներից է, գոյագորել և ամրագրել է առինքնող և հանգրվանային մի աշխարհ, որ ընթերցողի համար սեփական ես-ի «վերստեղծման», կանգնումի բոլոր հնարավորությունները ընձեռում է: Սա է իրենից «անբավարար» գրագետի ընթերցողին հար գոհացնելու հետևանքը:

Եվ այսօր, գրողի ֆիզիկական մեկնումի ցավին զուգադիր, կարող ենք գոնեուրվագրել Հակոբ Կարապենց երևույթը՝ ծավալուն և առավել համամասնական վերլուծությունը առլինով մոտ ապագային: Միանշանակ է, որ Կարապենցը արդի սվյուռքահայ գրականության համապատկերում հատկանշվում է առաջնային երկու իրողություններով, նրա գրականությունը Սփյուռքի գեղարվեստական արձակի պատմական ձեռքբերումների (Հ. Օշական, Մնձուրի, Համաստեղ, Հայկազ, Շուշանյան, Որբունի) ուրույնացրած համադրությունն է, Կարապենցի արևելահայերենը Սփյուռքում հայերենի այս դրսեորման նվաճումն ու հանգր-

վանն է միաժամանակ, ավելին՝ ընդհանրապես սփյուռքահայ գրականության պատմության մեջ գրողի արևելահայերենն է, որ փարատեց արտերկրում արևելահայերենով ընտիր գրականության ստեղծման տարակոյաբ։ Արձակի տարածքում այս ներհակ ակունքներից արտածված համադրություն գոյավորելն ու հաստատագրելն ի սկզբանե միտում են արկածախնդիր փորձնականության, որ միմիայն հաղթահարելի է տաղանդ և կոչում ունեցող արվեստագետին։ Բնագիր ներբերել Հակոբ Օշականի կոսմոգոնիկ արձակի տարրերը, Մնձուրու, Համաստեղի և Հայկազի ազգաբանական արձակի հենքը, Շուշանյանի անձում՝ քավարանային երակը և Որբունու՝ քսաներորդ դարի վիպասանությանն ու պատմվածքին բնորոշ կառույցը և սրանց համասերի համադրումով հաղթահարել արհեստավարդ կոմպիլացիայի իրագործումը և հաստատագրել գրականության ուրույն ենթահող, կարող էր միայն ու միայն գրականության սրբազնությունը էության հետ տարրալուծած արձակագիրը։ Հավելեք սրան Կարապենցի բառի «անմիջական անտաշությունը» (իր բնորոշումն է) և խոսքի նախնականության հետևողական, սկզբունքային կիրարկումը, և կամբողջանա Հակոբ Կարապենց գրագետի դիմանկարի շրջանակը։ Ահա թե ինչու նա արդի սփյուռքահայ արձակի նշանավոր դեմքերից է, հայաստանյան ընթերցողի ամենասիրելի գրողներից մեկը։ Այս պարագային հարկ է շեշտել, որ Հատկապես Կարապենցի ստեղծագործություններն են աններելիորեն այստեղ քիչ տպագրված, էլ չեմ ասում, որ շարունակում ենք մեր արժանավորներին կենդանության ժամանակ գեթ մեկ հատընտիրով չհրատարակելու խարազանը։ Հուսանք, որ Կարապենցի պարագային հասցնենք գոնե մահվան տարելիցին մի ժողովածու հրատարակել՝ հայաստանյան ընթերցողի համար այն կենսականորեն անհրաժեշտ խաչմերուկը, որը միացնում և ներդաշնակում է Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի գրականությունները, նրա գիտակցության մեջ և ընկալումներում իրագործելի դարձնում ժամանակակից հայ գրականությունը։

Հակոբ Կարապենցը շուրջ քսանհինգ տարվա հրապարակային (նկատի ունենք ստեղծագործությունները Հանրությանը ցուցանելու հանդամանքը) ստեղծագործական շրջանում հրատարակեց ինը գիրք. «Անձանոթ Հոգիներ» (Բեյրութ, «Ալլաս» հրատ., 1970 թ.), «Նոր աշխարհի Հին սերմնացանները» (Բեյրութ, «Ալլաս» հրատ., 1975 թ.), «Միջնարար» (Եյու Յորք, «Ոսկետառ» հրատ., 1981 թ.), «Ամերիկան շուրջպար» (Եյու Յորք, «Ոսկետառ» հրատ., 1986 թ.), «Անկատար» (Եյու Յորք, «Ոսկետառ» հրատ., 1987 թ.), «Մի մարդ ու մի երկիր և այլ պատմվածքներ» (Բոստոն, «Բլու Քրեյն Բուքս» հրատ., 1994 թ.) պատմվածքների և նորավեպերի ժողովածուները, «Կարթագենի դուստրը» (Բեյրութ, «Ալլաս» հրատ., 1972 թ.), «Աղամի գիրքը» (Եյու Յորք, «Ոսկետառ» հրատ., 1983 թ.) վեպերը և «Երկու աշխարհ» (Բոստոն, «Բլու Քրեյն Բուքս» հրատ., 1992 թ.) հոդվածների, ուսումնասիրությունների ու խոհագրությունների ժողովածուն։ Դժվար է միանշանակ պատասխանել, թե գրողին որքանով հաջողվեց ընթերցողին ներկայացնել իր գրականության ողջ ստեղծումը բոլորեքյանությամբ։ Ինչը կիսատ, անավարտ մնաց, ինչը՝ մնաց լոկ գրառումներում, ներաշխարհում և երևակայության մեջ։ Այս բոլորին դույզնինչ պատասխանելու համար հարկավոր է ուշագիր զննել նրա թողոնները, նա-

մակներն ու զանազան գրությունները, որոնք գրքերում չեն մեկտեղվել: Դրանք անպայմանորեն կլրացնեն Հակոբ Կարապենցի դիմանկարը, թեպետ նրա գործի ընդհանրական բնութագիրը հրատարակած գրքերն ու ժողովածուներն են: Նախ՝ պետք է շեշտել, որ Կարապենցը ստեղծագործական խառնվածքով պատմվածքագիր-նորավիպագիր էր, արդի եզրով՝ «փոքր արձակի» վարպետ: Ե՛վ «Կարթագենի դուստրը»՝ Վիետնամի պատերազմի գոյաքանական, հոգեբանական, ընկերվարական խորքով, ե՛ւ «Աղամի գիրքը»՝ Աղամ Նուրյանի հայկական և ամերիկյան գոյաստեղծ կշռույթների տարուբերումներով, իրենց վիպական կառույցներում, որ հեղինակի բնորոշմամբ «ժամանակակից վեպեր» էին կամ «պատմվածքավեպ», ընդամենը փոքր արձակից կրավորված միջարկություններ էին, անհրաժեշտ «հաճախանքներ»՝ արդի պատմվածքին ու նորավեպին վերադառնալիս: Դեպքի, իրադարձության և մանրամասնի ներքին վիճակների սկեռումները Կարապենցի փոքր արձակում, օշականյան սահմանմամբ՝ պատմումներում, ժամանակակից հայ նորավիպագրության մեջ, ի սկիուս և Հայաստան, մի քանի արձակագիրների հետ գրական ընթաց ներբերեցին և հաստատագրեցին արդի մարդու կենսոլորտի, ժամանակակից աշխարհի գոյութենական, մշակութաբանական, ոգեբանական հոգեբերի դրսեորումները՝ գրականությանը առթելով փրկչության հրամայականը, քառուից՝ անհեթեթի շրջապատույտ, մենություն ու ինքնաօտարում, հոգու «բնապահպանություն», կյանքի աբսուրդ և ապրելն «իմաստավորելու» հիշողություն, ներդաշնակություն թանձրացականացնելու կանգնում. «Ասել եմ: Կրկնում եմ: Գրում եմ, որովհետև կյանքը ոչ արդար է, ոչ կատարյալ: Գրելով փորձում եմ կերպարանք տալ իմ ներքին քառուին, ապա իմ շրջապատի քառուին: Արդեն այդ է արվեստի նպատակը – առնել մի հատված կյանքի ժամանակից՝ ձեւ ու կարգ պարզեցնել նրան», – անընդհատ շեշտում է Կարապենցը: Նրա ստեղծագործության, առհասարակ գեղարվեստական համակարգի և գեղագիտական ըմբռնումների կիզակետը «չափավոր» էկզիստենցիալիզմն է, յուրովսանն գոյապաշտությունը, ո՛չ Մուզիլի այպանող սատիրայի նման, այլ՝ թեթև, կարեկից հումորով, ո՛չ Մարսել Պրուստի և Սարտրի օտարված ու խորթացած, անտեսված, չփոթված մարդու, անհեթեթ գոյության աշագնությունը խորաքննող, այլ՝ ընդամենը դրվագ վերհանող, ներքին կղզյակում իր գոյությունը մանրահատող մեր ժամանակակիցի իրականության «գաղտնազերծման» դիպաշարն է Կարապենցի գրականության տարածքը, որի կերպարներն իրենց ներքին տարագրությանը զուգագրում են Հայութրավոր անհանգրվանների, մենակների և շփոթվածների գոյությունը: Եվ արդի մարդու, ժամանակի և իրականության տրագիկոմիկական երփնագիրը Կարապենցի ստեղծագործություններում հավասարագործեցնում է սկիզբն ու վերջը. «Կյանքը շարունակական քառու է, – շեշտում է նա, – մինչ գրականությունը փորձում է կանոնավորություն պարզեցնել այդ քառուին: Ուրեմն հասա այնտեղ, որտեղից սկսել էի»: Այս «չափավոր» էկզիստենցիալիզմի տիրույթներում է գրողը հետևում սփյուռքացման բարդ, իրարամերժ ընթացքին, մարդու (անցորդի) և հանգրվանի (ճանապարհի) բախումներին ու դիմադարձությանը՝ երբեմն՝ քնարականությամբ, երբեմն՝ էպիկական գրամատիզմով, իսկ ավելի հաճախ՝ իրականի ու տեսլականի

համադրմամբ, իր նախընտրած «համանվագայնության» ստեղծաբանական իրագործումով։ Պատահական չէ, որ նրա բազմաթիվ ստեղծագործություններ, հատկապես «Ամերիկյան շուրջպար», «Միջնարար» և «Մի մարդ ու մի երկիր» ժողովածուներում, գեղարվեստական ֆանտազիաներ են՝ իրականի և անիրականի համակցումներով, բախումներով, ինքնառչացումներով և հաստատագրումներով։

Տակավին «Անձանոթ հոգիներ» ժողովածուի մեջ մենության, մահվան անդինությունը անցնելու, օտարացման, վերջապես անձանոթ հոգուն հանդիպագրվելով սեփական ես-ի խորխորատների թափանցումը գեղաձևելու հանկերգը, սփյուռքացման, արտերկրի գոյութենական և էութենական իրողությունները Կարապենցի մյուս ժողովածուներում առավելագույնս բյուրեղացան։ Թերևս բացառություն է «Նոր աշխարհի հին սերմնացանները»՝ հայապատումի բացարձակ սևեռմամբ։ «Անձանոթ հոգիների», օրինակ, «Փայտե նժույգի», «Վերջերս ով է գնացել Հալիֆաքս» պատմվածքներից մինչև «Մի մարդ ու մի երկիր» ժողովածուի «Մի մարդ ու մի երկիր», «Արցախի Ժաննան», «Սոնա», «Ամերիկյան շուրջպարի»՝ «Ժամադրություն», «Միջնարար» գրքի «Եվ ևս խաղաղություն գտեր աղաչեսցուք» ստեղծագործություններում, առհասարակ գրողի գրեթե բոլոր պատմվածքներում հայ մարդիկ իրենց տեսակի, պատմական ճակատագրի, կերպի բաղկացյալները, գոյությունները չեն տեղայնացնում, նրանք առհասարակ մարդ են՝ ժամանակի անհատի գոյութենական բոլոր բաղադրատարրերով, փոքր ու մեծ խնդիրներով ու թնջուկներով, հաղորդակից արդիականության հուզող, հրատապ իրողություններին, ապրում են աշխարհի և տիեզերքի կշռույթներով, տագնապում ոչ միայն սեփական մենությամբ, գոյության անհեթեթությամբ, այլև արտաքին ու ներքին էկոլոգիական պատուհաններով (այս իմաստով հայ գրականության համար ցարդ աննվաճ տարածք են «Միջնարարում» ամփոփված «Աթալյա», «Անտառում» ստեղծագործությունները), ընդհանրապես աշխարհի և մարդկության հոգերով։ Կարապենցի գեղարվեստական համակարգի հայ հերոսներն՝ իբրև արդի աշխարհի լիարժեք անհատականություններ, որ իրենց գոյության մեջ ներկրում են տեսակի և ընդհանուրի ցավն ու ապրումը, ընթերցման մակարդակում համարժեքվում են «արվեստի հրամայական» կոչվածին։

Հեղինակի դիմանկարի ուրվագիրը գույզն-ինչ ամբողջացնելու համար հարկ է երկու խոսքով անդրագառնալ նրա խոհագրությունների, հոգվածների և վերլուծական գրությունների «Երկու աշխարհ» ժողովածուին։ Կարապենցն այս գիրքը անվանել է «Գրական փորձագրություններ»՝ ամփոփելով տասնամյակների ընթացքում գրված զանազան գրախոսությունները, ինքնադատականները, համաշխարհային և հայ գրականության, մշակույթի և փիլիսոփայության ակնառու դեմքերին նվիրված գրությունները։ Այս գրքի մասին խաչիկ թեոլեոլյանը միանգամայն իրավացի գրում է. «Փորձագրություն մշակող արվեստագետին անհրաժեշտ են արկածախնդիր փորձառություն, մանուկի թարմատես աչքեր, բանասերի լայնապարփակ ընթերցում, բանաստեղծի սիրտ և վերլուծողի իմացականություն։ Եվ այս բաղադրիները հավասարակուված»։ Եվ, իրոք, գրքում գետեղված բոլոր նյութերը վկայում են, որ Հակոբ Կարապեն-

*ցը ոչ միայն տաղանդավոր գրող է, այլև գրականությանը, մշակույթին լավատեղյակ անձնավորություն:* Հրաշալի գիտի Պարույր Սևակին ու Դանիել Վարուժանին, Ջեյմս Ջոյսին և Ունամունոյին, Հրանտ Մաթևոսյանին ու Վահե Օշականին, Զարենցին ու Բակունցին, Սարոյանին ու Միհթար Սեբաստացուն, Ժլնուին, Ֆոլկներին ու Նիկոս Կազանձակիսին... թվարկումը կարելի է դեռ երկար շարունակել:

*Ընտիր գրող ու մտավորական Հակոբ Կարապենցը հար ներկա է հայ գրականության սստանում:*

## ՎԱՀԵ ՕՇԱԿԱՆԻ ԱՐՁԱԿԸ

**Վ**ահե Օշականի գրականությունը խարսխվեց լիովին մետաժանրային գրականության տիրույթներում՝ կենտրոնացնելով բնագրի բնույթային տեղափոխությունը։ Իրողությունը չի պարփակվում քերթվածից արձակ և հակադարձ շարժման ուղղամետ և միանշանակ պատկերացումներով, այլ ենթադրում է գրականության տեսակի նորագոյացումներ, որ մինչ իր երեան գալը մեր, ի մասնավորի արտերկրի գրականության մեջ, բացակայում էր, պետք է նաև հաշվի առնել այն հանդամանքը, որ խնդրո առարկա գործընթացը հսկայական վերլուծական, ստեղծագործական ընդհանրացման արգասիք էր։ Նկատի ունենք և՝ Վահե Օշականի հայ արձակի տեսական, և՝ թե պատմական ուսումնասիրությունները ներփակ և համաշխարհային արձակի զուգահեռներում, և՝ թե նրա գեղարվեստական համակարգում հանդիպադրվող արձակամետությունը։ Եվ հենց Վահե Օշականի գրականության (մասնավորապես՝ արձակի) գոյությամբ են պայմանավորվում այսօրվա և վաղվա գրական-գեղարվեստական ընթացքի գրսեղորումները (անշուշտ, անհատականացված) արտահայտման նոր եղանակներով և գեղաձևման կերպերով։

Սա հաստատող փաստերը բավականին շատ են, բավարարվենք մի քանիսով։ Վահե Օշականն էր, որ ստեղծագործական գործնականությամբ հաղթահարեց մեր գրականության ավանդական թեմաների վկայությունները, դրանք դիտեց ցայսօր չարձանագրված նոր չափումներով, ընդդիմացավ, «սրբացված», «լուսապսակային» կանխադրված ստերիոտիպ մտայնությունների, նոր հայացքով դիտեց պատմության, հայրենիքի և հատկականության ըմբռնումները, գրականացրեց ժամանակակից հայ մարդու գոյությունը՝ նրան թոթափելով արխայիկ քննադատությունից և թմբիրից, հայ գրականությունը արդիական դարձնելու ստեղծագործական լուրջ ձեռքբերումների հասավ։ Եվ Վահե Օշականի գործով է նաև առնչվում ու պայմանավորվում նորերի գոյությունը հայ մշակութաբանական տարրածքում։

Արձակի փոքր ձևերը սփյուռքահայ գրականության պատմության մեջ միշտ եղել են գեղարվեստական զարգացման, ընթացքի հիմնական և գերակշռող արտահայտություններից։

Երկիր-ճակատագիր-պատմություն-օտարում-վերադարձ-անհատականություն արժեքային շղթան տարբեր առիթներով, այս կամ այն կերպ գեղարվեստական շրջանառության միջուկն էր, թե՝ «Նահանջի գրականություն» (Շահնուր-Որբունի-Հրաչ Զարդարյան), թե՝ «Կարոսի գրականություն» (Մնձուրի-Համաստեղ-Նարդունի-Ա. Հայկազ) բնորոշումներով պայմանավորող գեղարվեստական հետագիծը ենթադրում էր կանոնակարգված կառուցվածք, բնագիրը կազմակերպող տարրերի գործառնությունների ոլորտ, անհատ-պատմություն-ափյուռք-հայրենիք համակարգի հրատապ գրականացումներ։

Անշուշտ չենք անտեսում ո՞չ ոճական բազմաձայնությունը և ո՞չ էլ գրակա-

նացման շրջանակի անհատականացված իրողությունները։ Սակայն, առարկայաբար, ստեղծագործական անջրպետման իրողությունը, ընդհանրապես փոքր արձակի, զրա տեսակների ու ձևերի կոորդինատների համակարգի տեղաշարժերը հասունացել էին, որ ապահովաբար դրսեորվեցին նախ Վահե Օշականի արձակում։ Գրագետի համապատասխան ստեղծագործություններում բնագիրն արդեն նախորդի պես անթաքույց չէ գեղագիտական ուսակցիաները, բովանդակային պլանի գոյավորումն ապահովելիս։ Եթե Համաստեղ-Մնձուրի-Նարդունի-Հայկազ ստեղծագործական հետագծում կորսված երկրի հիշողությունների անդրադարձներում, ստեղծաբանական մոտեցում-հեռացում գուգադրության տարափոխիկ անցումներում բնագրերը հատկանշվում էին հայրենիքի, երկրի հետ ունեցած կապերի, հարաբերակցությունների կենտրոնացումներով, տեսակի պահպանության գաղափարը և պահպանը իր մեջ կրելու շեշտադրումներով, իսկ Շահնուր-Որբունի-Հ Զարդարյան հետագծում՝ ուժացման ազդեցությունների մանրաքնին, համապարփակ գրականացումներով, որոնք պայմանավորում էին ժամանրի խիստ կայուն կառուցվածքներ ու ձևեր, բառապատկերային համակարգի կայուն գործառնություններ, ապա Վահե Օշականի արձակում, առարկայաբար, տեղի է ունենում թե՛ փոքր արձակի մատնանշված ձևերի կենտրոնների և բնույթի տեղափոխություն, թե՛ ոճի, պատկերային համակարգի անցումներ, որակական տեղաշարժեր՝ կանխորոշելով առհասարակ հայ արձակի ժամանակակից կերպը։ Երկու հատոր արձակ գրությունների («Փախստականը», Բեյրութ, 1987 թ. և «Թակարդին շուրջ», Նյու Յորք, 1988 թ.) տասնյոթ փոքր արձակ ստեղծագործությունները վկայում են գեղարվեստական լրատվության նոր հոսպը հայ գրականություն։

Վահե Օշականի խնդրո առարկա ժողովածումներում հայ արձակի ներփակած կությունն իրականացվեց գրականացման սուբյեկտների արդիականացման, գեղարվեստական ընթերցման և մեկնաբանությունների նոր հատկանիշների և պոետիկական հանդերձի հնարավորությունների ընդլայնման կենտրոնացումներով։ Օշականի փոքր արձակ գրություններում տեղի է ունենում ցավի արժեքների՝ անհատականացված և հույժ անձնական անցյալ-անցավոր-անանցի, պատմության, կենսագրության, պահպանի և բնույթի վերաբերքավորում։ Եթե ցարդ գրականացվող սուբյեկտը հեղինակային հղացքով արդեն պարտադրված հայկականության ոլորտներից էր արտածում, արտաբերում աշխարհը, իրականությունը, և կայացվող գրականությունը վերջիվերջո խարսխվում էր հայի տեսակի և տիպի, ճակատագրով նախասահմանված առաքելության և կոչումի առաջադրություններին, ապա Վահե Օշականի պատմվածքներում գրականացվող սուբյեկտի ես-ը բացարձակ ազատագրված է կանխակալ որևէ առաջադրությունից, այն դիտված ու արձանագրված է արտերկրի բազմերանդ կշռույթներում՝ առանց դույգն-ինչ սրբագրումների և ուղղություն հաղորդելու, տեքստում գրականացվող սուբյեկտը ամբողջովին արձակված է, հատկականությունը արտաքին ատրիբուտ չէ, տարրալուծված է անհատի մեջ և հաճախ դրսեորվում է ամենաաներևակայելի, անակնկալ հանգույցներում՝ անշուշտ սփյուռքի ավանդական արձակի տեսանկյունով։ Գրականացվող սուբյեկտները, գործող անձինք գործողությունների ոլորտը կրավորում են ընդ-

Հանրացումներին, գիտակցական հոսքի արձանագրություններին: Օշականի փոքր արձակում գործողությունների նկարագրությունը երկրորդական է, բացահայտ սատարողական գործառնություններ ունի, որ պայմանավորում, լրացականացնում է հերոսի վիճակների գրականացումը, արձանագրությունը: Նույնանման ձևով է հատկանշվում նաև այուժետային կազմաբանությունը՝ վիճակների, գիտակցական հոսքերի, տեքստի փիլիսոփայական շերտը ապահովելու համար:

Վահե Օշականի պատմվածքների առինքնողությունը, արդի համաշխարհային գրականության խորքին ներկայանալի լինելը պայմանավորվում է արձակի ստեղծագործական ընթերցումների հատկանիշների համակցությամբ, որը նույնպես մեր էպիկայի պատմության մեջ կիրարկվում է լիարժեք, ամբողջությամբ և իբրև համակարգ՝ առաջին անգամ: Գրողը, հաշվի չառնելով և ոչ մի պայմանականություն, պարզապես քարուքանդ է առում հին գաղափարաբանության շատ ու շատ հիմքեր, վեր հանում այն խանգարող մտայնությունները, որ մեզ պահում են 19-րդ դարի մտածողության և հոգեբանության տիրույթներում, նրա տեքստերում դրանք պատկերագրվում են հաճախ դաժան ու ճնշող մերկությամբ, սակայն մտացածին չեն, կյանքի, իրականության առարկայական պատկերներ են՝ ըստ ամենայնի դիտված և վկայված: Օշականը, հաղթահարելով հոգեբանական, կոնյունկտուրային բոլոր խոչընդուները, ապամիթոսականացնում է պատմության, ճակատագրի, ինքնության ավանդվածքագմաթիվ արժեքներ:

Վահե Օշականի փոքր արձակ ստեղծագործությունները ենթադրում են ժանրի կառուցվածքային և պոետիկական հանդերձի կիրառականության նոր ոլորտ, արդիականացում, որը հատկապես դրսեռորվում է պատումային կրկնակների, ապակենտրոնացված դիմանկարների, փոխաբերության «գաղտնագրերի» տարածական շառավիղի, իմաստային կենտրոնների ներքնագրային գոյագորման ընթացի գործառնություններում: Գրողը ստեղծագործության կառուցվածքում վավերականի և գեղարվեստականի հարակցության նոր որակ է առաջադրում: Օրինակ՝ «Թուրք շոփեռի մը օրագրեն» պատմվածքում՝ երկարական ուղղվածությամբ, այլախոհների դատավարության և մահապատժի արձանագրում, Կանադայում թուրք գեսպանի ահարեկում: Բոլոր պարագաներում Օշականը գտել է այն ձևերը, որոնք, ըստ ամենայնի, համապատասխանում են այսօրվա «սփյուռքյան ավանդության» գրականացմանը:

Գրողի պատմվածքներում սփյուռքի իրականությունը տարանջատված չէ աշխարհի, ժամանակի կշռությունից, չի դիտված իբրև ինքնաբավարարություն:

Պայմանականորեն կարելի է Վահե Օշականի փոքր արձակը երեք տիրապետող կենտրոնացումների բաժանել:

Ա) Ահարեկչությունը՝ սփյուռքյան իրականության և մեր պատմության մեկնաբանության հանգույցներում: Հարկ է նշել, որ ահարեկչության թեման («Ածու», «Անկարելի հանդիպումը»), «Թելեփոնը», «Թուրք շոփեռի մը օրագրեն», «Ահարեկիչ») մինչ Օշականը, որքանով ինձ հայտնի է, չէր դարձել գրականության առարկա: Հատկանշական է այն հանգամանքը, որ այս պարագա-

յին ևս *Oշականի* ստեղծագործությունը քանդում է մեր «Փիդայական ազատամարտի» գրականության կանխակալ կաղապարները: Ահաբեկչության երևույթը չտեղայնացնելով պատմական էքսկուրսի փաստարկներում, նա այն դիտում է և վկայում է իրականության բազմապլան դրսերումներում՝ բնագրերում ամրագրելով տեսանկյունների առատություն, իրողության ծայրաբեկություն մեկնություններ: Այս ստեղծագործություններում հատկապես հսկայական երկխոսությունների հոսք կա, ինքնատիպ երկխոսություն-պատմվածքներ են, որտեղ բնագիրը գոյավորող (երկխոսություններով) պլանների հակադրությունը և միակցումը առաջադրում է պատմության և ներկայի, ապրելու կերպի հայացք: Օրինակ՝ «Անկարելի հանդիպումը» ստեղծագործության մեջ հղացքը խարսխվում է Սագո-Գառնիկ, Գառնիկ-Զուլֆա պլանների վրա, «Ահաբեկիչում»՝ Տորիս-Արթըր պլանի, Արթըր-ահաբեկիչ բախման և Սիրվարդի պատումային ճեպագրի կանոնակարգման հիմքին:

Բ) Պատմվածների մի մեծ խումբ («Փախստականը», «Դեկտեմբեր 31», «Ժամադրություն», «Կաղանդի ծառ», «Երեք վայրկան», «Աքսոր», «Վիպային հերոսի ծնունդն ու մահը», «Եղբայր», «Փարոս», «Ֆերնհայթ») անհատի, ես-ի գրականացումներն են տարբեր վիճակների, խոհերի, իրադրությունների կենտրոնացումներով, սերունդների բախումները՝ որպես տարբեր մշակույթներ և սիյուռքի «կոսմոգոնիայի» առաջադրումներ, հանգրվանի հասած անհատի օտարման խտացումներ, առկա-պահ-անցողիկ-անցյալ-պատմություն-միթոս-պատմություն-հավաքագրում անանց հարաբերակցության գրականացումներ, ես-ի անկումների խաղերի գեղարվեստական անդրադարձներ: Այս պարագային գերազանցապես հեղինակային միջարկությունները ներդաշնակվում են գրականացվող սուբյեկտի պատճառաբանված բյուրեղացումներն ապահովելիս:

Գ) Վերջապես նրա փոքր արձակում առարկայանում է իրականության «Հրաշապատման շրջապտույտի» բոլորովին նոր ոստում («Կղզի», «Սիրահարը»):

Իրականություն-փախուստ-այլամերժություն-մաքրագործում շղթան՝ հեքիաթի արդիական գեղարվեստական մեկնարեանությամբ, իրականացվել է «Սիրահարը (ժամանակակից հեքիաթ)» ստեղծագործությունում Ավետիս Սուքիայանի, Մեսրոպ-Շուշան պլանների, սրանց հակադրություն-կենտրոնացման, ինչպես նաև «Կրակ» գեղարվեստական լրատվության ա) խորհրդանիշ-փոխարերություն, բ) կանոնակարգիչ լինելու գործառնությունների միջոցով:

Վահե Օշականի փոքր արձակ ստեղծագործությունները աներկբա ունեն հղացքի և գրականացման մի ներքին միասնականություն, և, բնական է, որ պատմվածքների այդ ժողովածուներն ընկալվում են իրեւ միասնական ամբողջություն, նամանավանդ «Օծումը» գրության առկայությամբ: Մի ստեղծագործություն, որ առանց վերապահության կարելի է համարել հայ արձակի վերջին տասնամյակի ամենանշանակալի գրություններից մեկը: Եվ պատահական չէ, որ պատմվածքների գեղարվեստական, փիլիսոփայական առաջադրությունները գալիս մեկտեղվում, ամբողջանում են «Օծում»-ում: Այստեղ ինձ թույլ եմ տալիս, ելնելով պատմվածքների և հատկապես այս ստեղծագործության բնագրի

քննությունից, մի կանխատեսում անել. Վահե Օշականի ստեղծագործական խառնարանում նախապատրաստվում է վեպի գրությունը, հավանաբար շուտով ընթերցողը կունենա Վահե Օշական գրողի վեպը, որը հար և նման մյուս գործերի, հայ գրականության համար ունենալու է հանգրվանային նշանակություն:

«Օծումը» գեղարվեստական հայտնություն է: Երկի դինամիկ կառուցվածքը բաղկացած է երեք մասերից՝ մուտք, եկեղեցու գործողություններ, Տեր Ավետիսի «Հետօծումյան» կյանքի արձանագրություն և Ժագ-Սոնա-Պրուս գործողության վեց ներդիր պատումային հատվածներ, վերջինը՝ իբրրեւ գործողության ընդհանրացում:

Այն տասնվեց հոգին, որ եկեղեցում ներկայացնում էին «համայն հայությունը», և երեքը, որ եկել էին միթոսները կազմաքանդելու, ներդաշնակվում են ստեղծագործության եզրափակիչ հատվածում, ժագի այն նկատումով՝ թե. «Մեր միությունը արյունով օծեցավ, մեզ հետ հայ եկեղեցի մըն ալ օծեցինք: Պրուսին արյունով, մեր տառապանքով: Պատիկ բան չէ աննիկա»: Եվ հետո Տեր Ավետիսը հար պիտի զգար, որ «Ճան պաղ և խրտուն լության մեջ իրեն այնպես թվեցավ որ իր առանձնության ետին երեք սևագեստ երիտասարդներ միշտ պիտի ընկերանային իրեն ու ապահովեին իր թոռնիկին ընթացքը սերունդե սերունդ: Այն ատեն իրեն հասավ Մհերին լացին մեղմ ձայնը ու այդ վայրկյան քահանան գիտեր թե խորհրդավոր, անթիվ ճամբաներով, լեռներեն դաշտերեն ու անմարդկային հսկա մայրաքաղաքներու արվարձաններեն՝ իր ցեղը կը շարունակեր քալել վտանգավոր իր ուղին ապագայի մեջ»:

«Երեցկինը լույսը վառեց»:

Լուսավորվում է նաև ընթերցողը, որովհետև այդ լույսը տեսանող գրագետին է՝ փորձառությամբ, փիլիսոփայությամբ, տաղանդով:

## ՎԱՀԵ ՕՇԱԿԱՆ

**Գ**ոյություն ունի մտավորականի, գրագետի մի տեսակ, որի մշակութային ներկայությունը անընդհատ առկա է ժամանակիդ, ապրած օրերիդ հորձանուտում: Անկախ այն հանգամանքից, թե ինչն է քեզ մտահոգում կամ ուրախացնում, հիամթափեցնում կամ սատարում, այդօրինակ մտավորականի վկայություններում միշտ գտնում ես այն, ինչի կարիքը, պատասխանն ու հարցումը արդիական է, ելք է: Եվ գոյավորվում է ժամանակակից կոչվածի առարկայական, շոշափելի արտահայտություն, ում դիմում ես վստահությամբ, ապահովաբար: Քո հարցումը հանդիպաղը վուգահեռվում, զուգահեռվում է նրա հարցմանը (եթե ունես, եթե չունես՝ թոթափում է թմբիրից)՝ դիմորոշելով ինքնահատուկ ելքը: Նամանավանդ այդ ժամանակակից գրագետը, մտավորականը երբեք չի թողնում, որ հանդիսաւ հանդարտ պարփակվես օրերիդ ու ժամանակիդ շրջապատույթում, հար անհանգստացնում է, ստիպում լարվել, պրկվել, բանավիճել և առանց այն էլ հագեցած օրդ ու ժամանակիդ ապրել անմնացորդ, ամբողջությամբ: Եթե սրան հավելենք նաև այն աներկը իրողությունը, որ այդ մտավորականը ժամանակակից ամենաներկայանալի, ճանաչված գրողներից է, սփյուռքի հոգեորդմացական կյանքի նահապետներից մեկը, սփյուռքացման փիլիսոփայությունը, սփյուռքացում երեսույթը հանդամանորեն մեկնաբանած այն անհատականությունը, որ սեփական կյանքով և փորձառությամբ է դա ապրում, ապա նրա մշակութային ներկայությունը նախախնամության տրվածք է: Եվ քանի որ հանրահայտ է, թե ճակատագրից չես փախչի, ուրեմն, անկախ երկար ու ծիգ տարիներ տևած արգելանքների ու պատնեշների, ահա արդեն կես դար է, որ Վահե Օշական երեսույթը առկա է մեր մշակութային համապատկերում:

1992-ին լրացավ Վահե Օշականի ծննդյան յոթանասուն և գրական գործունեության հիսուն ամյակը: Արգասափոր և հետևողական ստեղծագործական, գիտական, մանկավարժական, հասարակական գործունեության մի ժամանակաշրջան՝ անմնացորդ լծված սփյուռքի բարօրությանը և հայ գրականության, մշակույթի զարգացմանը:

1918 թվականի մարտին մեծանուն գրող, հայ վեպի անգերազանցելի վարպետ Հակոբ Օշականը ինչ իմանար, որ եղիշե Դուրյան սրբազնի տրամադրած գումարով և Հարություն Մկրտչյանի միջոցով թուրք բարձրաստիճան ոստիկանին կաշառած, գերմանացի սպայի տարագով Պոլսից Բուլղարիա հեռանալը մեկ անգամ էլ պետք է կրկնվի՝ 1922-ին, վերջնականապես:

Բուլղարիայի Ֆիլիպե քաղաքում 1922-ի հոկտեմբերի 9-ին ծնվեց Վահե Օշականը: 1923 թվականին Հակոբ Օշականի ընտանիքը տեղափոխվում է Կիպրոս: Վահե Օշականը նախնական կրթությունը ստանում է Մելքոնյան կրթական հաստատությունում: 1934-ին Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը Հակոբ Օշականին հրավիրում է վարժարան՝ հայ և օտար գրականություն դասավանդելու: Այստեղ էլ, Սեն Ջորջ քոլեջում, Վահե

*Օշականը ստանում է երկրորդական ուսումը:* «Ես սկսա հաճախել անգլիական դպրոց, — Կարապետ Փոլայանի հետ անցկացրած «Զրույց»-ում տարիներ հետո վերջիում է նա, — 1940-ին ավարտեցի Հայ Աքուլը: Երկու տարի անգլիական բանակի մեջ ծառայեցի իբրև ոստիկան, սերժանտի աստիճանով»: Այնուհետև գնում է Հայֆա և շարունակում ծառայությունը: «1945-ին վերադարձա երուսաղեմ: Էլեկտրական ընկերության մեջ մտա, իբրև մեքենագետ: Բավական դրամ խնայած էի և 1946-ին անցա Փարիզ: Մեկ տարի Փրանսերեն սորվեցա: Մտա գիտական համալսարան: Երկրաչափ կուգեի ըլլալ: Շուտով տեսա, թե այդ գլուխը չունեի: Հակառակ հորս անեծքներուն, մտա գրականության համալսարանը»: 1951 թվականին ավարտում է Փարիզի Սորբոնի համալսարանը՝ համեմատական գրականագիտություն մասնագիտությամբ: Այդ համալսարանում էլ 1967-ին պաշտպանում է դոկտորական թեզ՝ «Արևմտահայ վեպը 1845 են 1930 և իր կրած օտար ազգեցությունները» թեմայով: 1952-ին գալիս է Բեյրութ և սկսում աշխատել տարբեր ուսումնական հաստատություններում: 1960-1975 թվականներին հոգեբանություն և փիլիսոփայություն է դասախոսում Բեյրութի Ամերիկյան քոլեջում, 1962-1975-ին Բեյրութի Ամերիկյան համալսարանում դասավանդում է արևմտյան մշակույթի պատմություն և եվրոպական արդի գրականություն, զուգահեռաբար՝ 1969-ից մինչև 1971-ը, եվրոպական մշակույթի պատմություն է կարդում Բեյրութի Համալսարանական քոլեջում: Աշխատել է նաև տեղի Հայկազյան քոլեջում, ուր մասնավորապես 1972-1975 թվականներին եղել է Հայագիտական բաժնի տնօրենը: Եղել է «Բագին» գրական ամսագրի խմբագրական կազմի անդամ:

1975-ին տեղափոխվել է Միացյալ Նահանգներ: Հայոց լեզու, գրականություն և պատմություն է դասախոսել Կալիֆորնիայի և Փենսիլվանիայի համալսարաններում:

Սկյուռոքի մտավորականի կյանքը յուրօրինակ շարունակական ճանապարհ է: 1991-ի վերջին Վահե Օշականը տիկնոջ հետ տեղափոխվում է Ավստրալիա: Սիդնեյի համալսարանում կարդում է «Հայ մշակույթի պատմություն» դասընթացը, շարունակում իր արգասավոր գրական, թարգմանական, գիտական գործունեությունը:

Անգնահատելի է Վահե Օշականի երախտիքը Հայ գրականությունը օտար ընթերցողին պատշաճ ներկայացնելու գործում: Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ ԱՄՆ-ում 1987-ից լույս է տեսնում «Rapt» (Լաստ) բնույթով եղակի բանաստեղծական և քննադատական տարեգիրքը, որը անգլերենով աշխարհին հաղորդակից է դարձնում մեր գրականությանը: Նահանգներում լույս տեսնող անգլերեն հայագիտական, բանասիրական հանդեսների խմբագրակազմի անդամ է («Armenian Review», «Journal of the Society for Armenian Studies»): Բազմաթիվ հրապարակային դասախոսություններով հանդես է եկել սփյուռքահայ գաղթօջախներում: Նրա ստեղծագործությունները, գրականագիտական, մշակութաբանական գրություններն ու հոդվածները տպագրվել են և շարունակում են լույս տեսնել արտերկրի, Հայաստանի պարբերականներում:

Հայերեն, անգլերեն, ֆրանսերեն բազում ուսումնասիրությունները, մենագրությունները նվիրված են սփյուռքի և Հայաստանի արդի գրական ընթացի

խնդիրներին, հայ գրականության պատմության զանազան հարցերին, ժամրերի տեսությանը: Գրականության պատմաբան և տեսաբան Օշականը նորովի վերընթերցում, սկզբունքային մեկնաբանություններով արժևորում է մեր գրականության բազմաթիվ խնդիրներ: Բացի յոթ հարյուր էջանոց ֆրանսերենով գրված (ցավոք, առայժմ անտիպ) հայ վեպի պատմությանը նվիրված հիմնարար ուսումնասիրությունից, գրել է նաև «Անգլիական ազգեցությունը Արևմտահայ գրականության վրա» մենագրությունը, որ 1982-ին հրատարակեց Քլիվլենդի համալսարանը: Քննադատ Օշականի կարծիքներն ու գնահատականները բնույթով կանխատեսող են: Նրա տասը, քսան տարի առաջ արտահայտած տեսակետները, գնահատականները այս կամ այն ստեղծագործության, հեղինակի, գեղարվեստական մտայնության, գեղագիտական ըմբռնման մասին ցայսօր պահպանել են իրենց այժմեականությունը, անցել ժամանակի փորձառությամբ:

Դժվար է Վահե Օշական արվեստագետ-գիտնական երեսույթի մեջ գերապատվություն տալ նրա վաստակի, գործի որևէ դրսևորմանը՝ բանաստեղծը, արձակագիրը, գեղագետը, տեսաբանը, խոհագրողը, քննադատը այնքա՞ն փոխներթափանցված են, միմյանց պայմանավորող:

Վահե Օշականի գրականությունն այն կիզակետերից է, որը պայմանավորում է արդի հայ գրականության որակական տեղաշարժերից մեկը: Նրա յուրաքանչյուր բանաստեղծական և արձակ ստեղծագործությունների ժողովածու հարուցել և հարուցում է աշխույժ ասուլիսներ, բանավեճեր: Ժամանակակից հայ գրականության հակասականությունը պայմանավորող ակնառու դրսեռումներից է նրա գեղարվեստական ստեղծագործությունը: «Մարդկային գոյության ներքին հակասությունները, անհեթեթի մնայուն ներկայությունը կյանքի մեջ և հայ ժողովրդի ժամանակակից տագնապները խորքը կը կազմեն իր չափած թե արձակ գրություններուն», – այսպես է բնութագրում իր գրականությունը հեղինակը:

Կահիրեի «Հուսաբեր» գրական ամսագրում 1942-ին լույս է տեսել նրա առաջին գեղարվեստական ստեղծագործությունը: Կես դարի ընթացքին հրատարակել է բանաստեղծությունների վեց ժողովածու՝ «Պատուհան (1956թ.), «Քաղաք» (1963թ.), «Քառուղի» (1971թ.) բոլորն էլ Բեյրութում, «Ահազանգ» (Ֆիլադելֆիա, 1980թ.), «Խուճապ» (Եյու Յորք, 1983թ.), «Արվարձաններ» (Լոս Անջելես, 1991թ.) և երկու հատոր արձակ՝ «Փախստականը» պատմվածքների ժողովածուն (Անթիլի, 1987թ.), որ 1986-ին արժանացել է Գեորգ Մելիտինեցի գրական մրցանակին, և «Թակարդին չուրջ» (Եյու Յորք, 1988թ.) գիրքը:

«Քաղաք»-ը առհասարակ շրջադարձային երեսույթ էր ոչ միայն Վահե Օշականի գրականության, այլև՝ սփյուռքի բանաստեղծության համապատկերում: Այս գրքով էր, որ սկսվեց և լիակատար դրսեռով վեց «բառերի այնպիսի դասավորությունը, որ հանկարծական մտերմություններ են ստեղծում» (իր բնորոշումն է).

«ու ամեն գիրք ի՞՞նչ է եթե ոչ դամբանագիր

միայն թե գրավաճառը չի գիտեր այս

մանրամասնությունը...»:

Բանաստեղծությունը լիարժեք կյանքով ապրված մի ամբողջություն է, որն ունի իր անունը՝ կայացած կենսագրությամբ, տիեզերքով։ Եվ յուրաքանչյուր գրքի հետ մեռնող-հառնող հեղինակի համար, որ քերթվածը համարում է ներանձնական տրվածք, սարսափելի դժվար է հեռացումը, ինչ-որ իմաստով օտարացումը գրքից, ժողովածուից, իր խակ տառապանքներից, տագնապներից, ահազանգերից և խուճապներից, ինքն իրենից, մանավանդ մենք՝ «գրավաճառներս», երբեք այդ մասին չենք իմանալու և անկախ սրանից հանդիպադրվելու ենք օշականյան բանաստեղծության նորանոր իրականություններին։

«Այսպես ենք մենք,

Ժամանակի ու Տարածության շերտերու մեջ սանտվիչ եղած

կույր ու գիրուկ որդերու պես՝

որ կը սողան տառապանքի միսին մեջեն

ու կը դիմեն դեպի աղբյուրը լուսին...

Ոչ լուս է ան, ոչ ալ աղբյուր,

այլ լապտերը միտու, լքված անելի մը խորքին

որ մեզ ու աղը կը հոտի, խոտերու մեջ»։

«Քաղաք» գրքի այս ուրվագրած ճանապարհը պիտի բեկվեր «Ահազանգ» և «Խուճապ» բանաստեղծությունների ժողովածուներում և բյուրեղանար «Արվարձաններ» հատորում՝ անհամեմատ սրելով գոյության աբսուրդի տագնապը։

Տակավին 1952-ին Փարիզի «Անդաստան» եռամյայում տպագրվել էր Վահկե Օշականի արձակ ստեղծագործություններից «Մարդոց կյանքեն» («Փորձ», թիվ 7)։ Գրեթե 40 տարի անց, 1991-ի ապրիլի 7-ին «Հառաջ»-ի թղթակցի հարցումին, թե ինչո՞ւ բանաստեղծական ժողովածուներից հետո լույս տեսան արձակ երկերի գրքերը, նա պատասխանում է. «Առաջին սերս, առաջին սիրուհիս արձակն էր. տունեն կը փախեի, լեռները կերթայի, երուսաղեմ, գաղտնի բաներ մը կը գրեի. հայրս արգիլած էր. «Մեկ գրող մեկ ընտանիքի մեջ, կը բավե ու կ'ավելա» ըսած էր։ Ուրեմն կը գրեի, տուն կը բերեի, տեղ մը կը պահեի, ատիկա տարիներով...։ Գրելը հանցանքի առիթ մըն էր, հորս հեղինակության դեմ ելլելու պես բան մը։ Պաշտամունք էր հայրս ինձի համար, Աստծո տեղ։ Ամեն անգամ երբ գրածներուս մեջ Աստված կը հիշեմ, կամ երբ հայրս կը հիշեմ, կարելի է ատոնք միշտ փոխանակել։

Պատանությանս, մինակ ապրող, կյանքին չխառնվող թիփ էի, դասընկերներս խաղի կ'ելլեին, կը կռվեին, ես անկյուն մը քաշված կը մնայի, քաֆքայական բան մըն էի։

Առանձնության այդ առաջին ապրումներս արձակով եղան. հետո տեսա, որ արձակը գանդաղ է, արագ չի շարժիր, ներքին շունչը դանդաղ է, բանաստեղծության անցա ու հոն ավելի արագ, ավելի ուժով, ավելի խիտ թափառի. բայց միշտ արձակներ կը գրեի։ Հորս գործն ալ վրաս շատ ազդած է. իր վեպերը մեծ հափշտակությամբ կարդացած եմ։ Հորս նմանիլ կյանքիս իտեալներ են մեկը եղած էր։

Երբ հոս եկա վերջը, արձակը հոս սկսա գրել, տեսակ մը ամբողջություն ստեղծելու համար։ Գրագետը իր գործեն դուրս չապրիր. ես չեմ խոսիր իմ մասիս։ Որքան ատեն որ արձակներս ցրված էին, կյանքս կես բան մը ուներ, գոր-

ծես բացակայություն մը կար: Ես հոն պիտի ապրիմ, արձակով ալ, բանաստեղծությամբ ալ: Ուրեմն, անցումը դեպի արձակ, իմ ներքին անձս ամբողջացնելու կը ծառայե»:

Գրողի արձակ ստեղծագործություններում սփյուռքի իրականությունը տարանջատված չէ աշխարհի, ժամանակի կշռույթներ, չի դիտված իբրև ինքնարավ գոյակցություն: Այն պայմանականորեն կարելի է բաժանել երեք տիրապետող կենտրոնացումների՝ 1. (ահարեկչության խորքին՝ սփյուռքյան իրականության, թուրքի, մեր պատմության մեկնաբանության հանգույցները («Ածու», «Անկարելի հանդիպումը», «Թելեֆոնը», «Թուրք շոփերի մը օրագրեն», «Ահարեկիչը»), 2. (պատմվածքների մի մեծ խումբ) «Փախստականը», «Դեկտեմբեր 31», «Ժամադրություն», «Կաղանդի ծառ», «Երեք վայրկյան», «Աքսոր», «Վիպային հերոսի ծնունդն ու մահը», «Եղբայր», «Փարոս», «Սերունդներ») անհատի, ես-ի գրականացումներն են տարբեր վիճակների, խոհերի, իրադրությունների կենտրոնացումներով՝ սերունդների բախումն իբրև տարբեր մշակույթների, մտածական համակարգերի և սփյուռքի «կոսմոզոնիայի» ընկալման արդյունք, հանգրվանի հասած անհատի օտարացման խտացումներ, 3. (վերջապես նրա արձակում առարկայանում է իրականության «Հրաշապատման շրջապտույտի» բոլորովին նոր որակ («Կղզի», «Սիրահարը», որ մասնավորապես իրականություն-փախուստ-այլամերժություն-մաքրագործում շղթան իրականացվել է հեքիաթի արդիական գեղարվեստական մեկնությամբ): Եվ անպայման պիտի հիշատակենք վերջին տասնամյակի հայ արձակի ամենանշանակալի ստեղծագործություններից՝ «Օծումը»:

1991 թ. ապրիլ 15-ին թվագրած «Գրական մանիֆեստ» տեսական, որոց իմաստով հանգանակային գրության մեջ Վահե Օշականը շեշտում է. «Կը կարծենք թե 20-րդ դարու վերջին քառորդը անդամ մը ևս ընտրության մը առջեկը դնե մեր ազգն ու իր մշակույթը: Հայաստանի ժամանակակից դեպքերը և Սփյուռք-Հայաստան միացումից մը կարելիությունը կը ստիպեն մեզ վերարժենորեն մեր մշակույթի սկզբունքները: Մեկ կողմեն՝ ժխտական ու դրական բուռն զգացումները որ կը ճնշեն մեր ազգի դատումին վրա, և մյուս կողմեն Մարքսիսմ վարդապետության սնանկությունն ու Արևմուտքեն մեր կրած ծանր հուսախաբությունը՝ կը ստիպեն ամեն հայու վերաքննել մեր մշակույթին այժմու արժեքներն ու կոչումը, – հատկապես որ Հայաստանի և սփյուռքի մեջ տիրող անցման վիճակը, – մեզ կը մղե զորակոչի ենթարկել մեր մտավորական ուժերը, ստուգել ու բացահայտել մեր սկզբունքները, և փորձել արդիական, կենսունակ գրականություն մը զարգացնել: Եվ նաև նոր կորովով և հստակատեսությամբ օժանդակել մեր ազգին՝ գտնելու շիտակ ուղին և հետեւելու անոր: Բայց մեր գլխավոր մտավորությունը է ու կը մնա հայ իմացականությունը կենդանի, բարձրորակ և անկորնչելի վիճակի մը հասցնել, կարող մասնակցելու մարդկության լավագույն իրագործումներուն»:

Այս նախանձախնդրությամբ ու մտահոգությամբ է ապրում, ստեղծագործում մեր սիրելի գրողը:

## ԳՐԻԳՈՐ ՊԵՂԱՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ<sup>1</sup> ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Հյաստանում առաջին անգամ հրատարակվեց սփյուռքի ամենաներկաշանալի գրագետներից՝ բանաստեղծ, գրականության պատմաբան և տեսաբան, քննադատ ու բնագրագետ Գրիգոր Պըլտյանի քերթվածների մի փունչ՝ «Էր» վերտառությամբ։ Հատկանշական է, որ գիրքը «Սփյուռք» հրատարակչության առաջին տպագրությունն է, որը Գրիգոր Պըլտյան պրոֆեսիոնալի երախտիքն ընդգծելու մի յուրօրինակ ձեռնարկում է։ Ցարդ բանաստեղծի ստեղծագործությունները և վերլուծական գրությունները հայաստանյան գրական շրջանակներին ծանոթ էին պարբերականներից ու հանդեսներից («Սփյուռքահայ գրականություն 89» տարեգրում զետեղվել էին նրա մի քանի գրականագիտական ուսումնասիրություններ)։ Նշենք, որ գրագետը տասը գրքի հեղինակ է, որոնցից յոթը բանաստեղծական ժողովածուներ են, իսկ երեքը՝ գրականագիտական ուսումնասիրություններ։ Այս վերջին ժողովածուն բանաստեղծի՝ տարբեր տարիներին գրված քերթվածների հավաքածու է։

Ավելի քան քսանհինգ տարվա լարված, արգասավոր և սկզբունքային ստեղծագործական ու գիտական աշխատանքն այսօր առարկայական հնարավորություն է ընձեռում մատնանշելու, որ Գրիգոր Պըլտյանը ոչ միայն սփյուռքի, այլ ընդհանրապես մեր ժամանակաշրջանի հայ գրականության կենտրոններից է թե՛ իբրև ստեղծագործող, թե՛ հատկականություն։ Պըլտյանի բանաստեղծությունների տիպն ու կառուցվածքը արդի հայ պոեզիայի հանգրվանային արտահայտություններից են։ Նա գրագետների այն համաստեղությունից է, որ հետևողականորեն շարունակում է հայ բանաստեղծության արդիականացումը, ուղենչում պոեզիայի լեզվի գործառնությունների նոր կիրարկումներ։ Միմիայն պրոֆեսիոնալին ներհատուկ պահանջկոտությամբ և խստապահանջությամբ Գրիգոր Պըլտյանը, 1976 թվականից սկսած, գրում և տպագրում է գրքեր ու ժողովածուներ, որոնք արժեկորվում են ամենից առաջ որպես հանգրվանային իրողություններ։ Դեռ կորպեն ծավալուն ուսումնասիրություններ և հետազոտություններ գրագետի գրականության և քննադատության մասին, այս փոքրիկ հանձնարարականում նշենք սոսկ, որ «Մանտրաներ»-ի, արձակ քերթվածների, տեսական, վերլուծական բազմաթիվ գրությունների հեղինակի, հայ գրականության պատմության հիմնավոր իմացությունների տեր այս մտագորականի ներկա ժողովածուում զետեղված ստեղծագործությունները նրա բանաստեղծության բնույթի ընդհանրությունը ըստ ամենայնի ցույց են տալիս։

«Էր» ժողովածուում ամփոփված են 1980-1991 թվականներին գրված տասնմեկ բանաստեղծություններ՝ «Անանուն», «Ճրպում», «Հակադիր ժամանակներ» խորագրերի ներքո։ Իրերի, երևույթների բանաստեղծական էության վերհա-

1 Գրիգոր Պըլտյան, Էր, Երևան, «Սփյուռք» հրատ., 1992 թ., 88 էջ։

նումը գոյավորում է ստեղծաբանական ընթացի վիճակների արձանագրություններ՝ անթաքույց «խոստովանական» շերտով, որը «փորել» բանաստեղծական մեկնակետ գործառնությամբ պեղում, քննադատում է ստեղծագործության «այնկողմնային» տարածությունը՝ վերջիվերջո ամբողջացնելով նկատումի էռթյունը.

«Կը խօսիմ կը խրիմ  
բեւեռի պէս աչքին մէջ  
կը փորեմ»  
(Անդաստան)

Պոետական «մոտեցում-հեռացում» զուգադրության տիրույթներում մանրամասնվում են գոյի էռթենական վիճակների հերթագայություններն ու փոփոխականությունները («Եր», «Տոնական խզում») բյուրեղացում անդրադարձումների ոլորտները. «դիպուածներն ենք դէպքին որ կը զրկէ մեզ իրմէ. ինչ որ կոտրեցաւ անդարձ. հերձ մը քեզ կ'ապրի, կը ստեղծէ քեզ իբրեւ հակադիր ժամանակ» (Հոն, վերը)

Գրիգոր Պըլտյանի ժողովածուն հատկանշվում է նաև այն հանգամանքով, որ մի շարք բանաստեղծություններ («Ուսմունք պարտեզի», «Զիթենիին վիճակները», «Լուծմունք կշռույթի») կենտրոնանում են քերթվածաստեղծության ընթացի ներընկալումների, բանաստեղծության կազմավորման մեկնությունների վրա՝ ընթերցման պարագային գոյավորելով քերթվածի տեսության ընագրային սահմաններ. «մի՛ տենչալ դաշնութիւնը պարտէզին ու խօսքին. դաշնաւորէ՛ անոնց անհամաձայնութիւնը որ կ'ուղղուի քեզի»: «Այգի», «ծառեր» խորհրդանիշ-փոխաբերությունները հագեցվում են միջնորդավոր և ուղղակի բանաստեղծական լրատվություններով և հաղթահարելով դիմակայությունը՝ «ծառ՝ որ չ'ուգեր ըլլալ քերթուած», ձիթենու կենսոլորտի մանրազնին քննություններում, հայտնաբերվում է բանաստեղծության բացարձակ տիրապետության կերպը, այն դիմորոշելով՝ «Քերթուածը մեր արցախն է, գիտնա» համադրությամբ, որն ավելի քան տարողունակ է դարձնում Պըլտյանի քերթվածի տեսությունը: Հարկ է նշել, որ «Զիթենիին վիճակները» բանաստեղծությունը ժողովածուի ամենասպավորիչ ստեղծագործությունն է և, ըստ իս, վերջին տասնամյակի հայ լավագույն քերթվածներից մեկը: Եվ արդեն «Լուծմունք կշռույթի» ստեղծագործության մեջ քերթվածաստեղծ փոխակերպության ողջ ընթացը, որն ինքնին ստեղծագործական վիճակի, գոյության հանրագումար է, լիովին ամբողջականանում է. «ծառեր կան որոնք պրկումը դարձուած են ոճ, աւելի ու աւելի խիստ, գրեթէ անմարմին»: Եվ ապա. «Լեզուն կշռոյթին մէջ է բայց ամէն կշռույթ լեզուին մէջ չէ: Կշռոյթը լեզու մըն է: Լեզուն իսկ»:

«Պոեզիայի մասին» մատնանշված բանաստեղծություններում, ժամանակակից անհատի հոգեվերլուծությունների և բնագանցական վիճակների զուգագրված առկայումներում («Ան», «Հողեր շրջվլած», «Ճրագալույց») ամրագրվում է քերթվածի ընթերցման անընդհատության իրողությունը.

«Կը գրկեմ կը կրեմ փրելի  
քու մարմինդ հոգեղէն կը հսկեմ  
կը խորանաս կը ժայթքես դէպի սիհում  
կը մօտենաս մօտիկութեան սրբազան  
խզիչ կը խլես զիս ինձմէ  
կը հաստատես կը պատռես կը հաստատես  
կայութեան կը մոռնաս կը մոռնամ  
– ելայ աշխարհէն  
կ'արարես խորտակումը անխօս»

*Գրիգոր Պըլտյանի բանաստեղծությունների «Եր» ժողովածուի այս հպանցիկ ուրվագիրն անվերապահորեն կունենա իր շարունակությունը և՝ իբրև անվերջավոր ընթերցում, և թե՛ որպես հայ բանաստեղծության նոր դար մտնելու վկայություն:*

## ԳՐԻԳՈՐ ՊԵՂՋՅԱՆ

Միշտուքի արդի հոգեսորմծակությային շարժումը, գրականությունը պայմանավորող և հատկանշող ակնառու դեմքերից է Գրիգոր Պլտյանը, որի գեղարվեստական և գիտական ժառանգությունը, առհասարակ մտավորականի առաքելությունն ու կեցվածքը հանգրվանային են հայ գրականության համապատկերում։ Բանաստեղծ, գրականության պատմաբան և տեսաբան, քննադատ, գեղագետ, բնագրագետ, խմբագիր, թարգմանիչ, մանկավարժ՝ ահա նրա գործունեության շրջանակը։ Ինչ որ արել և անում է՝ ուսանելի արհեստավարժությամբ, պըլտյանական անկրկնելի ոճով, հիմնավորությամբ և հիմնարարությամբ։ Եթե ժամանակակից հայ բանաստեղծությունը անվարան և հետեղականորեն համաքայլ է համաշխարհային պոեզիայի 21-րդ դարի նախաքայլերը հատկանշող միտումներին, ապա պետք է միանշանակ արձանագրել Գրիգոր Պլտյանի երախտիքը՝ ընթացը փաստող բազմաթիվ ստեղծագործություններով, եթե մեր գրականագիտությունը և քննադատությունը ներկայանալի է համաեվրոպական չափումներով, ապա աներկբան նրա ուսումնասիրություններով ու վերլուծություններով։

Ծնվել է 1945 թվականին Բեյրութում, ուր և ստացել է նախնական և երկրորդական կրթությունը («Թորգոմյան» վարժարան, «Նշան Փալանճյան» ճեմարան), այնուհետև ուսանել է Փարիզի Սորբոնի համալսարանում։ 1973-ին դոկտորական թեզ է պաշտպանել՝ նվիրված Մարտին Հայդեգերի գեղագիտական հայացքներին։ Բեյրութում հրատարակված «ԱՀեկան» հանդեսի հիմնադիրներից էր։ Երկար տարիներ է, ինչ ապրում է Փարիզում, խմբագրել է «Կայք» գրականության տարեգիրքը, աշխատակցում է սփյուռքի բազմաթիվ պարբերականների («Հառաջ», «Հորիզոն», «Բագին» և այլն)։

1976-ին լույս տեսավ նրա բանաստեղծությունների առաջին՝ «Տեղագրություն քանդվող քաղաքի մը համար» ժողովածուն, որն անմիջապես հավաստեց, թե սփյուռքի գրական ընթացում լինիրավ տեղ են գրավում ժամանակակից բանաստեղծական չափումները, ընկալումները, պոեզիայի արդիական հնարավորությունների ու ձևերի կառույցները։ Պլտյանի ստեղծագործության նորարարությունը ներդաշնակ համադրված է ինչպես հայկական, այնպես էլ համաշխարհային բանաստեղծության փորձով և այս առումով նրա ոճն ու բառապատկերային համակարգը նախանշում են մողեռն արվեստի հնարավորություններն ու կարելիությունները մեր գրական-գեղարվեստական կյանքում։ Իրողության բյուրեղացումն ու ստեղծագործական փաստումն էլին բանաստեղծի հաջորդ գրքերն ու ժողովածուները՝ հատվածներ «Սենյակ»-ի մասին (1978 թ.), «Հակաբերթված» (1979 թ.), «Վայրել» (1983 թ.), «Հատվածներ հոր» շարքն ամբողջությամբ («Կամ» հանդես, թիվ 3-4, էջ 49-80, «Էր» (1992 թ.)։ Իսկ 1986-ին Փարիզում լույս տեսած «Մանտրաներ» գիրքը անվերապահորեն վերջին տասնամյակի հայ բանաստեղծության նշանակալի երևոյթներից է։

Գրիգոր Պլտյան բանաստեղծի և գիտնականի ցանկացած ձեռնարկում,

յուրաքանչյուր ստեղծագործություն և ուսումնասիրություն հատկանշվում է գործի նկատմամբ ունեցած կատարյալ բարեխղճությամբ և արհեստավարժությամբ։ Նա ըստ ամենայնի հետազոտել և քննել է հայ նոր և նորագոյն, սկյուռքի գրականության պատմության բազմաթիվ խնդիրներ։ Գեղարվեստական ստեղծագործության բազմագործառական, համակցված վերլուծության եղանակը, բնագրի մեկնաբանության, ընթերցումի բազմատեսանկյուն քննությունը՝ Պըլտյանի հետազոտական եղանակը շահեկանորեն առանձնացնում է։ Նրա հեղինակած «Տրամ» (ներառում է տեսական գրություններ ու Տիրան Չըրպյանի, Միսաք Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Ահարոնի, Նիկողոս Սարաֆյանի գրական ժառանգությանը նվիրված ուսումնասիրություններ) գիրքը և «Գրիգոր Նարեկացի լեզվի սահմաններուն մեջ», «Կրակե շրջանակը Դ. Վարուժանի շուրջը» մենագրությունները արդի հայ գրականագիտության արժեքավոր ձեռքբերումներից են։ Գրականագետի գիտական հիմնարար աշխատություններից թվարկենք նաև Հայկական ապագայապաշտության («Հայկական ապագայապաշտություն» և «Հրանտ Նազարյանց»), Հակոբ Օշականին («Հակոբ Օշական և արևմտահայ նորավեպը»), սկյուռքահայ գրական ընթացին («Մենք»-ի առթիվ) նվիրված ուսումնասիրությունները։ Նրա անմիջական նախաձեռնությամբ 1988-ին Հիմնվեց «Արդ» մատենաշարը, որի առաջին գիրքը Նիկողոս Սարաֆյանի «Վենսենի անտառը» հատորն էր։ Պըլտյանի հմուտ բնագրագիտական աշխատանքի ու մանրամասն, ընտիր ծանոթագրությունների շնորհիվ Սարաֆյանի այդ հատորը դարձել է վերջին տարիների դասական հեղինակների լավագույն հրատարակություններից մեկը։

Այսօր Էլ նա լարված ու բուռն ստեղծագործական կյանքով է ապրում, պատրաստում նորանոր բանաստեղծական ժողովածուներ և ուսումնասիրություններ՝ ամբողջովին պարփակված հայ մշակույթի և գրականության կենսուրայում։

## ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ

Արդի սկյուռքահայ գրականությունը, ուրախությամբ հարկ է արձական բնույթով մշակութաբանական տարածքում վաղուց անտի հաստատագրված արդիական անունները՝ վերջին հինգ տարվա իրենց գեղարվեստական ժառանգությամբ, Սփյուռքի ժամանակակից գրականության հատվածականությունը, պատճառականության տարրությամբ (ստեղծումի ընդհանրականությունը կողմնորոշող պատճառականության տարրությամբ) գարձնում են կարծրատիպ, որ գրական կյանքի սոսկ մակերեսային դիմադրձության ենթակայելի դրսեռումն է: Նորագույն և վերջին գեղարվեստական լրատվությունը, ստեղծաբանական մտահոգություններն ու դրանց իրացումների բազմադիտանկյուն վկայությունները ցուցանում են բավական բազմաշերտ և բազմանիստ (ժանրային, գեղագիտական, հղացքային, ոճական առումներով) գրական ընթացի (պրոցեսի) առարկայական թանձրացականացում: Այնպես որ անտեղի ու ծիծաղելի են ամեն տեսակի լալահառաչ եղերերգերը՝ սփյուռքահայ գրականության, հատկապես ընթացի գոյության և ապագայի պարագայի: Որ այդ գրականությունը պատնեշում է «Հարատև Հոգեվարքի» տեսությունը (այսինքն՝ ստեղծումի զարտուղության՝ հատվածականի, պատճառականի), դրա ալիտանիշները, գոյագորում բավական հետաքրքրական ապակենտրոն գեղարվեստական ընթացք, ընդորում՝ լիարժեք շրջանակված վեպ ու փոքր արձակ, պոեզիա ու խոհագրություն, գրամատուրգիա և քննադատություն, գրական կենսոլորտ վերջապես, հաստատում են, բարեբախտաբար, սակավաթիվ, սակայն գրականություն պայմանավորող երկեր: Բարեբախտաբար, սակավաթիվը առանձնացրեցի, որովհետև հայաստանյան գրական կյանքի պես Սփյուռքում ևս ստեղծվում, հրատարակվում, այնուհետև ճարպկությամբ ու ձեռներեցությամբ տարփուվում են չնորհանդեսներով, գագետեճիների «գրախոսականներով», զգայացունց հարցազրույցներով, հանդիպումներով, բաժակաճառային-կենցաղային քննարկումներով (հիբավի հավերժական սյուժե հայկական պարագծում): Անցել է մատնանշված կերպը գրական ընթացքում ներառնելը (թեկուզ բոլորովին չբացառելով նմանատիպ դրսեռումներում արվեստի հրամայականով գրականությանը մոտենալու ջանքերը<sup>1</sup>), նամանավանդ, ջախջախիչ մեծամասնությանը բնորոշ օրինակ է Սեղա Շաղիկյան-Տեմիրճյանի կազմած ավյուղյան արդի գրականության երկու մեծադիր հատորները՝ ավելի քան հազար երեք հարյուր էշ: (Տե՛ս «Սփյուռքահայ արդի գրականութիւն. Վերջին կես դարու հատընտիր բանաստեղծութիւններ և պատմուածքներ», հատոր Ա, Պոլսահայ գրականութիւն, հատոր Բ, Սփյուռքահայ գրողներ, Ռոյզլ Օք, Միշիկըն, 1994 թ.): Այս ձեռնարկումը ստվերվում է գրականություն պայմանավորող անունների հանդիրավի բացակայությամբ, անկախ տիկին Շաղիկյան-Տեմիրճյանի հատորներին կցած – նամանավանդ երկրորդ, վիճաբարուց ու պարողական բացատրությունների ու պատճառաբանությունների, որովհետև շուրջ հարյուր հիսուն հետինակ մեկտեղող ժողովածուից, որը հավակնում է «որակաւոր

1 Մտայնության բնորոշ օրինակ է Սեղա Շաղիկյան-Տեմիրճյանի կազմած ավյուղյան արդի գրականության երկու մեծադիր հատորները՝ ավելի քան հազար երեք հարյուր էշ: (Տե՛ս «Սփյուռքահայ արդի գրականութիւն. Վերջին կես դարու հատընտիր բանաստեղծութիւններ և պատմուածքներ», հատոր Ա, Պոլսահայ գրականութիւն, հատոր Բ, Սփյուռքահայ գրողներ, Ռոյզլ Օք, Միշիկըն, 1994 թ.): Այս ձեռնարկումը ստվերվում է գրականություն պայմանավորող անունների հանդիրավի բացակայությամբ, անկախ տիկին Շաղիկյան-Տեմիրճյանի հատորներին կցած – նամանավանդ երկրորդ, վիճաբարուց ու պարողական բացատրությունների ու պատճառաբանությունների, որովհետև շուրջ հարյուր հիսուն հետինակ մեկտեղող ժողովածուից, որը հավակնում է «որակաւոր

թյամք դրանք ո՞չ ուղեկցային, ո՞չ գրապատմական իրողություններ են: XX դարավերջին, կարծում եմ, գեղարվեստական ընթաց երևույթը (Փենոմենը) գրականության չափանիշ պայմանավորող ստեղծագործություններն են:

Առայժմ մեկդի թողնելով բանաստեղծության մատնանշածս ընթացը պայմանավորող ստեղծագործությունները, ընդհանրապես ժամանակակից մետաբնագիրն ու անունները՝ ընդգծում եմ սփյուռքահայ արդի արձակի գերբնագրային (մշակութաբանական-գրական զուգորդությամբ) ուղղորդվածությունը: Մի առանձին գրություն է թելադրում սրա ընթացային քննաբանությունը, մյուս կողմից՝ առանձնացրածս երկերի ներփակ ուսումնասիրությունը: Որովհետեւ (թվարկում եմ տպագրության ժամանակագրությամբ) հշխան ձինպաշյանի, Վահե Պերպերյանի, Գրիգոր Պըլտյանի վերջին երկերը<sup>2</sup> սփյուռքյան արձակի գերբնագրային տիրույթներ ներբերեցին առհասարակ հայ գրականության նորագույն, արդի համակարգում վեպի ժանրի նորագոյացումներ՝ դուրս դասական «թմբիրից», կաղապարներից, իսկ Պըլտյանի ստեղծագործությամբ պայմանավորեցին նաև արձակի հետագծի նոր կերպ, որտեղ ժանրային և միջժանրային սահմանները վերջնականապես ավարտաբանում են իրենց պայմանականությունը, ածանցյալությունը: «Արխիվ հասնումին», «Նամակներ Զամաթարենը» և «Սեմերը» կերպընկալությամբ, խոսքային կենսոլորտով, մշակութաբանական խտացումներով ոչ միայն մեր ժամանակի և կյանքի համարժեք գեղարվեստական վկայություններն են, այլև հայ արձակի XXI դարը պայմանավորող իրացումային շերտերի նյութականացումը:

Իշխան ձինպաշյանը, գոնե իմ իրագեկության սահմաններում, այս պայմանականություն-վեպով<sup>3</sup> խուժեց գրականություն և ամրագրվեց այնտեղ: Ինձ թույլ եմ տալիս ենթագրել, որ «Արխիվ հասնումին» հղացքը բավական ժամանակ է բլուրեղացել նրա ստեղծագործական գիտակցության, երևակայության և ենթաշխարհի բավիրներում: Մանրազնին բնագրային դիտարկումները ցուցանում են անխտիր յուրաքանչյուր բառի, ցանկացած շարույթի, արխիտեկտոնիկ միավորի, պատկերի լիակատարությունը, ամբողջականությունը՝ լոկալ տեղային, համաբնագրերում գործառնական ճշգրտությամբ, բնագրից արտածված՝ ասոցիատիվ-մեկնական հարացույցի իսպառ բացակայությամբ:

Գիտեմ, որ լուսանջելեսյան գրական նոր շարժումի (նոր՝ ոչ տարիքի իմաստով, այլ արվեստի ըմբռնման, ընկալման, գերակատարության), «80-ական» հանդեսի կազմակերպիչներից, մեկտեղողներից էր, խմբագիրներից: Այս հանդեսի շուրջ էին հավաքվել ութերիտասարդներ (հշխան ձինպաշյան, Ռաֆֆի

գործ մը երեւան բերելու» (Բա. 2-րդ, Էջ 3) մտահոգություն, անհասկանալի է դասական անունների, ոչ միայն ափյուռքյան գրականության դիմագիծը այժմ պայմանավորող Գրիգոր Պըլտյանի, Վահե Օշականի, Հարութ Պերպերյանի, այլոց զանցառությը, այլև՝ երիտասարդ, շնորհալի անունների անտեսումը: Փոխարենը Ծահնուրի, Ծանծիկանի, Զարդարի, Պիպեռյանի, Կարապետի, Սիմոն Սիմոնյանի, Նշան Պեշիկյանը կողքին մեկտեղվել են ոտանավոր և շարադրություն թխած տասնյակներով անուններ: Հետո ինչ, որ հրանցից ոմանք գրքերի, ժողովածուների հեղինակներ են, հատկապես հայաստանյան գրական (իրականում՝ մերձգրական) քորմերի ներքոյաններով պարուղված:

2 Տե՛ս Վահե Պերպերյան, «Նամակներ Զամաթարէն», Լոս Անձելըս, 1996 թ., Գրիգոր Պըլտյան, «Սեմեր», «Մաշտոց» մատենաշար, թիւ Գ, Փա:րիզ, 1997 թ.:

3 «Արխիվ հասնումի», Լոս Անձելըս, Քալիֆորնիա, 1995 թ.:

Շբուքյան, Անահիտ Արամունի, Վաչիկ Տեր-Սարգսյան և այլք), որոնք ամերիկահայ գեղարվեստական բրածոյացված ստերջության մեջ լսում էին միմյանց, կերտում գրական մթնոլորտ<sup>4</sup>: Թե՛ ինքնին հանդեսի գոյությունը, թե՛ խմբի առկայությունը անպայմանորեն վեպի կայացման, լինելիության ազդակներ էին, ստեղծագործական մեկնարկ: Ճինապաշտանի «Շփոթ» գրության մեջ ուշագրավ նշագրություն կա, որ, ըստ իս, ընթերվում է «Արխիվ հասնումիի» ստեղծագործական պատմությանը. «Բան մը կը փնտռեմ, բան մը, եւ կը փնտռեմ այնպիսի մոլեգին յուսահատութեամբ, որ քաղաքը կը դառնայ ստորերկրեայ քաղաք, աշխարհը ստորերկրեայ աշխարհ առնէտներու արքայութեան մէջ, ուր իրականութիւնը, յիշատակ, պատմութիւն եւ նախապատմութիւն իրար կը տապկեն երեխայական թափթփվածութեամբ եւ ուր, ընական է, տեսողութիւնը կը պղտորի անճանաչելիօրէն»<sup>5</sup>: Այս գոյաբանական շփոթից պրկված փնտրտուքը, ընդուսնող փոխարկերպություններով և բախումնային միասնականությամբ, բաղհյուսվում է իրականության, հիշատակի, պատմության և նախապատմության հասողությամբ, որ հայկական արդիականության գեղարվեստական ժամանումն ու կարողականությունն է, դրան տիրանալը, հավասարվելը, այնտեղ թափանցելն ու հանգելը, վերջապես հանդիպելն ու հավասարվելն է «Շեշտ» ամսագրի կենսոլորտով, Երկար Զորջով ու Անահիտ Մուրատյանով, հայ մեխանիկների համբարությամբ, առհասարակ «Արխիվ հասնումի» վեպի կառույցը պայմանավորող բոլոր պարագրկություններով: Վեպի երեսութականությունը համահայկական գրական համապատկերում հատկապես այս իմաստով է առանձնանում:

— Պատկերազարդ պատմությունից անցում պատմության պատկերամարտության, — իշխան Ճինապաշտանի «Արխիվ հասնումի» վեպն ունի հար ու նման գերակատարություն հայ (սփյուռքահայ) գրականության պատմության մեջ, ինչ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի. Պատկերազարդ պատմություն Հայոցը» (1929թ., Փարիզ): Վաթսունվեց տարի շահնուրյան ստեղծագործությունը գեղարվեստական կերպնկալման կիզակետում էր՝ սփյուռք-ուժացում զուգաբանությունից մինչև սփյուռքացման գոյաբանական հոլովույթի թելադրանք. իր ժամանակին հարիք՝ գիտակցորեն սրված էպատաժայնությամբ, պարզապես կյանքի հորձանքից ստեղծագործության կառույցում ամրակցված խոսքով, առաջացրած և առաջարկած իրարանցումով գրական ընթացքի շրջագծում, կուռքամոլ «տիրացուական հավատամքը» կրողների բուռն հակազդեցությամբ (չշփոթել ու չխառնել Շահնուր-Օշական հակազդեցության հետ), գրական հանգրվանայնությամբ, որ ենթադրում էր (և այդպես էլ եղավ) ստեղծաբանական կիրարկման բազմաթիվ մեկնություններ: Միանգամայն ճշգրիտ և ընդհանրական է Մարկ Նշանյանի, իմ կարծիքով, իշխանի ստեղծագործության

4 Ծինապաշտանը, անդրադառնալով իրենց մեկտեղման դրդապատճառերին, մասնավորապես կարևորում է գրողական հաստինության, պրոֆեսիոնալիզմի կերտման իրողությունը. «...Կը սնանինք իրարու բառերը ծծելով. և մինչ այդ կը մեծնանք ավելի քան երբեք», «80-ական», 1987թ., №4, էջ 21:

5 Տես «80-ական», 1987թ., սնանինքեր, թիվ 4, էջ 14:

հիմերն ըստ ամենայնի բացած, գրության դատողությունը. «Եթէ աւելի սովորական ձևով նայինք իրերու ընթացքին, ենթադրելով որ կայ մեզ բոլորս պարփակող ժամանակ մը, «Արխիւ հասնումի» Ափիւռքի չորրորդ սերունդին վէպնէ, մէկը՝ վէպերէն, ինչպէս՝ Շահնուրի «Նահանջը» եւ Որբունիի «Փորձը» սահմանուած էին ըլլալու ի սկզբանէ ժամանակաց անտի և ընդ յաւիտեան՝ առաջին սերունդին վէպերը»<sup>6</sup>: Սակայն շահնուրյան գեղարվեստական, վիպական ավանդն արդեն լիովին հարստահարված է, մաշված, վերջիվերջո շահնուրյան Հայոց պատմության պատկերազարդ, զարդասիրիկ, պատկերակցություն և կերպարանակցություն արարող խոսքն արդեն զուգահեռվում է արդի գրական-գեղարվեստական կոռրդինատների համակարգին (արդիական վեպի տեսության և իրացման պահանջմունքներին) և իր ժամանակից շատ երկար ձգվելով, ահազանգում է պատմությունից (կյանքից) օտարվելու դատապարտվածությունը:

Առարկայաբար հարկ էր փոխարկել «պատկերազարդ հայոց պատմության» ստեղծաբանական կերպը, սակայն ինչպէ՞ս: Սփյուռքյան գրականության մեջ առկա էր թե՛ մտահոգությունը, թե՛ ձգտումը, բայց գեղարվեստական արարքն անընդհատ (բառն օգտագործում եմ մշակութաբանական նորարարության խորքով, տարողությամբ) առկախվում էր, որովհետև բնագրային, ենթաբնագրային մակարդակն էր խուժում շահնուրյան պատկերակցության, կերպարանակցության գեղարվեստական երկ և գեղագիտություն կազմակերպող սկզբունքը: Հասկանալիորեն գործում էր գրական արարքի ձգողականության օրենքը (սրա առավել հաջող օրինակը Մովսես Պճաքչյանի «Լուսավոր աչքերով օտարականը» վեպն է, որը նույնպես շահնուրյան պատկերազարդության արբանյակներից է): Իսկ արբանյակային գոյակերպումներից ազատագրվելը ենթադրում էր պայթյուն և բոլորովին նոր ստեղծաբանական կենսակերպություն: Հենց սա իրականացրեց ձինպաշյանը: Եվ «Արխիվ հասնումին» դարձավ նոր հանգրվանի արարողական-պայմանափորող ստեղծագործությունը:

Խնդրո առարկա երկը պատմության պատկերազարդությունը փոխարինեց պատկերամարտությամբ՝ պատկերի մերժմամբ, խորտակմամբ, գեղարվեստական կերպընկալումը հարակցելով սփյուռքէութենության բրտացման վկայությամբ, կրկին գիտակցված էպատաժայնությամբ, կյանքի խոսքային հորձանքով: Արդեն շահնուրյան ախտանիշին հարմարված կուռքամոլները վեպը պիտի բանագրեն իբրև հերետիկոսություն, սակայն զարդասիրիկ սուրենները, հրաշները, միսաքներն ու լոխումները, միննույն է, արդեն անհետացող և անհետացած սերունդ են, կյանքը, սփյուռքէութենությունը ներբերում է երկար ձորջին, Սոնիկի Դումանյանին ու Հովհաննես Թութիկյան-Հովհթուկին, Անահիտ Մուրաստյանին ու Սիմոն Քաշքաշյանին, Նորա Ռշտունուն ու նախկին երևանցի տատիկին, պատկերամարտի մի անվերջանալի պատկերասրահ: Զիք կարոտաբաղձության տեսանելի և ենթահողային տենդերին, կորուսյալ երկրի և կայսրության սահմանին ծվարած տարտամ հայրենիքի միջև պատեպատվելուն, փարիզյան «պոռնկաբարո» (համաբնագրային արժեքաբանության մեջ) սար-

6 Մարկ Նշանեան, «Չորրորդ Ծախսաւորութիւնը», «Յառաջ. Միտք եւ Արուեստ», 1996 թ., թիվ 215:

գոստայններում հյուսելու և հյուսվելու տարուբերումներին, արդ պատկերամարտության շքահանդես է ինտերնետ պետականություն ունեցող հայրենիքի հետ. ֆրանսահայ, լիբանանահայ, պոլսեցի և քեսապցի, հունահայ ու իրանահայ, հին ու նոր հայեր, հայաստանցիներ-ամերիկահայեր, մեքսիկացիներ, թիսամորթներ, անբռնադատ այլուրություն և ներքին բանտում, հայրենաբաղձություն և ծննդավայրի ու սննդավայրի խուռներամություն: Միով բանիվ, այժմեական, կատարվող, հանգող իրադարձություններ, վկայություններ, որոնք հասցնում են արխիվի (գոյութենության շրջապտույտի արքետիպը). «Փաստինայի Հին թաղամասը գեգերելու ընթացքին կը հանդիպէիր Հայշախսօններու, որոնք դիմացդ կելէին զոյդ զոյդ, խմբով, և սաստիկ մղում մը կունենայիր ողջագուրուելու, հայհոյելու իրենց, մէկ կողմ քաշելու զիրենք մայթին վրայ ու սաստելու՝ ծո հէյ, ո՞ւր կը շտապէք այդպէս առանց ձեր պատմութիւնը պատմելու մեզի, հա»<sup>7</sup>:

Միեւնոյն վախճանային քաղաքները, միեւնոյն անհանդարտութիւնը, նոյն հիւանդակախ կուռքերն ու միեւնոյն լուռ, ինքնատեաց ծառացումը կուռքերուն դէմ, սակայն ոչ ոք որուն հետ կարելի ըլլար պարկեշտօրէն ու լիովին ապրիլ անկումը, կամ ինչ անիծեալ ժամանակաշրջան էր որուն մէջէն հիմա կը լուսնոտէինք բաղձալով իրար ու խուսափելով իրարմէ դարձային ակնթարթին՝ անասելի ժանտախտ մը շրջանցելու պէս»<sup>7</sup>: Վեպի արարողական խնդրագությունը պայմանավորում է համատարած գնչուացման հարակցությունը՝ ֆիզիկական և ոգեբեր սկիզբների խուռներամությամբ, տեղափոխություններով, անջրպետումով և էական է դիտել՝ սրա գիտակցությամբ. «...չեմ գիտեր երբուշնէ ի վեր, կորսնցուցեր էի յարաբերութիւնս մարմնիս ֆիզիքականութեան հետ» (62): Այսօրինակ կորուստը նույնպես հասնում է, ժամանում, որ դառնում է թողոն, արխիվ, և այս հանգույցում է բնագրային մակարդակում երեան գալիս վեպ-հակավեպ ժանրային ներբախությունը:

Ստեղծագործությունը, վերնագրի կազմաբանական լրատվության մեջ ունի «վեպ մը» նշագրությունը, որը համարնագրում որոշարկվում է ժանրի արդիական կերպին բնորոշ, թերևս ամենասակզբունքային առաջադրության լուծմունքով, վեպ-հակա(անտի)վեպ բախումայնությամբ, ժանրի «ընդհատակյա» ճգնաժամի, «ոչնչացման» ստեղծաբանական առկայացմամբ: «Արխիվ հասնումիի» կառույցի անթաքույց «մերկացումները», որոնք արդեն անդին են հետեղական և գիտակցված սոսկական էպատաժայնություն լինելուց, նամանավանդ խոսքային հոսքում՝ սիրուց մինչեւ սեռական ակտ պատկերագրելը, կերպարների դիմանկարներ գոյագրելը, ընդհանրապես հոգեվիճակ և մտածություն կենտրոնացնելը, լուսանջելեայան կենցաղագրություն վկայելը նշանային համակարգում հրապարակավ հայտարարում են վիպային հագեցվածության թոթափում, որն արդիական վեպի որակն ու հատկությունն է: Տարտղնվում են fiction-ի և non fiction-ի սահմանները, շարույթի գեղարվեստականացումը, առանց դույզն-ինչ պրկվածության ներառում է հաշիշի առևտրով զբաղվողների, ավտոմեքենա նորոգող հայ համբարության նորմատիվ, գրական

7 «Արխիվ հասնումի», Եջ 26: Այսուհետ վեպից հղումները բնագրում՝ փակագծերի մեջ:

լեզվին անհարիբ «լպիրշաբանությունները», իսկ «Շեշտի» շուրջ համախմբված մտավորական սերուցքի խառնափնթոր ամերիկա-հայկական party-ն բարձրաշխարհիկ առնայնությունը ընդամենը վարագուրում է, քանի որ դիտանկյունների հոսքը շոշափելիանում է խոսքի «հակագեղարվեստականությամբ» (գնահատանք-տեսանկյուններում, հատկապես՝ ներքին մենախոսություններում «անպատճաճ», «ունկին անհարիբ» բառերով ու դարձվածներով), քանի որ, ի հեճուկս հայկական մաքրամոլների, խստաբարոյություն կապկողների, «Արխիվ համումիի» իրականությունը, առօրյան ինքնին էպատաժային է:

Իշխան Ճինպաշյանն այս երկով «բգկտում է ընտանիք և սրբություն» (Մարկ Նշանյանի խոսքերն են), սակայն «բգկտում է» բնավ ոչ դիտավորությամբ, իր մասին անպայման հայտարարելու, իրեն զգալ տալու, տեսանելի դարձնելու, երևալու համար, ոչ, արվեստագետի նրա հավակնությունը բոլորովին այդտեղ է, ինչպես մերձգրական խոսք ու զրույցներում կարծում են ումանք, նա «բգկտում է ընտանիք ու սրբություն», որովհետև տեսնում է, որ բգկտված են ընտանիքն ու սրբությունը, բգկտված է կյանքը, հայկական ժամանակը և, հակագարձ կապի օրինադրությամբ, դա չնկատելն է էպատաճ: Իշխանի՝ արվեստագետ լինելու հավակնությունը, անպայմանորեն նվաճվածը, իրացվածը դրա տեսանողությունն ու գրականության, գրականությունից անդին (այս պարագային անվանեք ինչպես կուզեք՝ գուեհկաբանություն, կեղտ...) իրողությունների սահմանային վիճի պոնկին միակ, ճշգրիտ, ֆիլիգրան ստեղծաբանական քելքով, գրականության, արվեստի անեղծության մեջ մնալու կարողությունն է: Սա չէ<sup>8</sup> արդյոք պատճառը, որ Ճինպաշյանի ստեղծագործությունը, «չարիքի գրականության» հոգեմաշությունը ըմբռնելով, ընթերցման զուգորդությունները հասցնում է հեքիաթի պատումային շրջագծին: Ծանոթ հանկերգ է. «Այս վէպին հեղինակը, ձեզ այսպէս կանխապատրաստելէ վերջ, ձեզի կը ձգէ զայն, իբր ազատութիւնը, ներկայ գիրքէն ու յաջորդներէն. որոնց թիւը յստակ չէ անշուշտ, բայց կը տանջէ վաղածանօթ կաղապարներու, չափերու ձեր վարժութիւնները «ձեր ուզած մասերը որակելու հեքիաթ», սակայն փոյթն ունի նոյն ատեն ձեզի թելադրելու ուրիշ ալ կարեւոր իրողութիւն մը. թէ ինչ որ պիտի գտնաք այս շարքին մէջ «կեանքն է», աւելի քան իրաւ», – գրում է Հակոբ Օշականն իր «Կեանքին պէս» վեպում<sup>8</sup>: Ճինպաշյանի այս նոր հեքիաթաստեղծությունը հենց կյանքի, այս ժամանակի մարդկանց, այսօրվա Սփյուռքի նվաճումն է արդեն վեպին ընդդիմադիր հակահեքիաթ-վավերականություն-հեքիաթ արքետիպային շրջագծով: Իսկ այս կյանք-հեքիաթը բրտանում է հղացքի լիազործման դիպաշարային պլանների ուրույն դրսեորումներով:

Վեպի կառույցը, կոմպոզիցիոն շրջանակը խարսխված է «Շեշտ» միջազգային ամսագրի կենսուրորտի վկայության տիրույթներում: Այս երևակայական հանդեսի պարագրկումներում մանրամասնվում են սփյուռքյան նոր կենտրոնի՝ լուսանջելեսահայության իրականության դրսեորումները, պարբերականի շուրջ գտնվող մարդկանց ինքնություն և փոխհարաբերություններ, ամսագրից

8 Յակոբ Օշական, «Կեանքին պէս», Բա. 1-ին, Լոս Անձելը, 1995 թ., էջ 2:

արտածված նրանց առօրյայի բնույթը պայմանավորող իրադարձային ազդակների ակնարկներ: Այս ամենը բաղհյուսված է տարտամ գետեկտիվով՝ «Շեշտի» կարևոր, պատասխանատու պաշտոնյաների միջև կոնֆլիկտը ինչ-ինչ պատճառներով սպանությամբ ավարտված (խմբագիրը սպանել էր խմբագրապետին) դեպքի բացահայտման փորձ՝ պատումն իրականացնող կենտրոն-հերոսի կողմից: Նմանօրինակ պատումային կենտրոնաձգությանը հարակցվում են առաջին հայացքից ներփակ մի քանի պլաններ՝ «Երկար Ճորճի», «Հայ ավտոնորոգողների», «Հոսպիտալային» և «անանուն-կենտրոնի ես-ի ներքին վտարանդիության», որոնք, սակայն, տարրալուծված են «Շեշտ»-յան կենսոլորտին, իբրև վերջինիս բինարայնությունը պայմանավորող բաղադրիչներ, որովհետև վեպի քսաներեք հատվածներ-գլուխները ուղղորդված են այլուրության գոյաբանության պատկերագրությանը: Այս իմաստով ուշագրավ են առաջին և վերջին գլուխ-հատվածների կոնցեպտուալ վերնագրերը՝ «Քնչու» և «Նկարագիր», որոնք «Արխիվ Համառումիի» տիրույթներում հավասարագորեցնում, համարժեքում և միասնականացնում են գնչուությունն ու նկարագիրը՝ առաջինն իբրև գոյաբանական կերպ, իսկ վերջինը՝ ինքնացման ավարտաբանություն, որպես համընդհանուր, իմպերատիվ այլուրություն: Երկար Ճորճի պլանում (սա ինչոր իմաստով անանուն-կենտրոնի ներքին վտարանդիությունը հատկանշող գեղագիտական կարգագորիչներից է) նրա ընտանեկան տարրուն՝ Ալին քրոջ անձնասպանության պատմությունը, Զորջի Հոր՝ Հակոբ Մահպույյանի պարագային պայմանավորել էր թեև հակընդդեմ, սակայն էությամբ միանշանակ ջանք և կենսածե, մի իսկական գոյության թողոնացում, արխիվացնելու մղում, որտեղ և՛ Հակոբի ծիսային ոեժիմը (որը դարձել էր ապրելածե), և՛ Ճորճի տեղափոխությունների տենդը այլուրության գոյութենություն են. «Եւ հեռուն կը փոխուէր ըստ գալարուող տարիներու աշխարհիկ նախասիրութեանց ու ոգեկան ընդհանուր կլիմային, այնպէս որ Ճորճ դարձեր էր նաև մոլեգին ընթերցող մը ճամփորդական գրականութեան, իր ներքին խաղաղութեան համար կառուցելով ու փայփայելով այն երազախայթ վայրերը որոնք պիտի հայթայթէին բարի գետինը իր առկախ վերածնունդին: Ընթացքին, Ճորճ կը սարսափէր իր երկակայած սրբատեղիները Փիգիքապէս այցելելու փորձութենէն, կարծելով որ սպաննած պիտի ըլլար դիւթանքը» (20): Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ այլուրության «Ճահճացում», այս նոր միստերիայի դյութանքն է, որ Լոս Անջելեսի հայմեխանիկները, այս «իւղի կապիկները» (72)՝ անզուգական Հովհաննես Թութիկյանը, Արա Խաչատրյանը, Ժան-Ժաք Օտապաշյանը, մյուսները, պատկերագրդ պատմությունը դարձնում են պատկերամարտ պատմություն:

Այլուրության արխիվացումն ակնդետ է անանուն-կենտրոնի օտարացման, ներքին վտարանդիության պլանում, որտեղ արդեն իրողությունը դառնում է ստեղծագործության ընթացային հանկերգ՝ անընդհատ կերպարանափոխություններով. «Գտնելու համար այլուրը ժամանակներս պիտի յանձնէի փախուստի եղանակին...» (12), Անահիտ Մուրատյանի հետ դարպասելու, սիրո թեքիողգիական ժամանակը ձգելու անհասկանալի բախումներով, մեկնելու, հեռանալու, ավարտելու անմեկնելի պատեպատումներով, շուրջանակվելու գիտակցության ահազանգով՝ ձգված վեպի առաջինից մինչև վերջին էջը (այս ա-

ռումով ուշագրավ է անանուն-կենտրոնի և Կասիա Մելքոնյանի միմյանց սիրելու դրվագը). «Կը մնար սիրել զիրար, ինչպէս միայն որբերը կրնան» (190): Այսպես է նաև պատկերազարդ պատմությունը փոխարկերպվում, դառնում պատկերամարտ պատմություն՝ վեպի տիրույթներում արարելով սփյուռքացման ավարտն ու սփյուռքէութենության բրտացումը: Իշխան ծինպաշյանի «Արխիվ հասնումին» հանգրվանային ստեղծագործություն է հատկապես այս առումով, որովհետև «Շեշտ»-աղբման տրոհություններով (միջազգային հայկական այս հանդեսին առնչվող մարդկանց ու մտայնությունների վավերական հեքիաթը պատմելով, այդ աշխարհի վերստեղծումով. Թալինի ու բաղդատցի Վազգենի, Մարալ Զիլյանի, Սոնիկ Դումանյանի, Կարո Ռշտունու և Ռաֆֆի Սահինյանի, մյուսների առօրյայի ոգեբեր մեկնումը, ամսագրի վերածումը «Սփիւռքի չորրորդ քաղաքական կուսակցութեան, իր ծնունդէն հազիւ կալ մը ետք» (153), բոլորի փախուստ-մեկնումի այլուրությամբ) առկայվում է սփյուռքյան արդի սերնդի գրական մետաքնագիրը, սկսվում է սփյուռքէութենության գեղարվեստական ժամանակաշրջանը. «Արեւմտահայ երիտասարդները հիմայեղափոխականներ էին առանց մասնաւոր ուղղութեան, արարիչներ էին առանց դաշտի կամ նշելի արմատներու, մինակ, զորկ արձագանգէ կամ վերադրական կարկինչն: Արեւմտահայ տղամարդոց վիճակուեր էր հաշտութիւն կնքել իրենց հայրերուն հետ մահուան մէջ միայն: Յետոյ թերեւս կարելի ըլլար ընականոն դառնալ» (24): Իսկ գոյութենության այսօրինակ որակն՝ այլուրության և արխիվացման բաղհյուսմամբ, միտում է աշխարհի տարբեր անկյուններում գտնվող օդանավակայաններում հայկական եղբայրավարության արդի վիճակը, որն ավարտաբանվում է անձը հաստատող փաստաթղթերն ըստ պահանջի ներկայացմամբ, հերթական անցակետն անցնելով, որպեսզի հետո կրկին տարրալուծվեն, խառնվեն ամբոխին, աշխարհի աղմուկին:

---



## ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

1982

1. Խնտրայի գիրքը, Սովետական գրականություն, 1982, թիվ 7, էջ 143-144:

1983

2. Անվանի գրականագետն ու մանկավարժը (Արսեն Տերտերյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), Տնտեսագետ, 17 փետրվարի, 1983:

1986

2. Գրքերի տեսություն, Ֆրանսիական պոեզիա, Երևանի համալսարանի հրատարակչություն (գրախոսություն), 1984, 478 էջ, Բանքեր Երևանի համալսարանի, Երևան, 1986, թիվ 1 (58), էջ 252-253:
3. Նովելային ձևերի սկզբնավորումը Գրիգոր Չոհրանի պոետիկայում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թիվ 9, էջ 39-47:
4. Վ. Պոլիսը Չոհրանի նորավեպերի պոետիկայում, Սով. գրակ., 1986, թիվ 12, էջ 133-136:

1987

5. Անվանի գրականագետի հիշատակին (գրականագետ Սուրեն Աղարաբյանի մահվան տարելիցի առթիվ), Գրական թերթ, 1987, 17 ապրիլի, էջ 2:
6. Ինքնահաստատում», Գարուն, 1987, թիվ 7:

1988

7. Սովետահայ պոեզիայի կեսդարյա ուղին, Երեկոյան Երևան, 1988, 27 սեպտեմբերի, էջ 3:

1989

8. Ժամանակի բանաստեղծական անդրադարձումները (Է. Սիլիտոմյան, «Արևի ժամացույց»), Գարուն, 1989, թիվ 3, էջ 51-54:
9. Համաստեղը և հայ նորավիապարության հարցերը, Գրական յաւելուած, Հորիզոն, 1989, թիվ 8, էջ 13-14:

1990

10. Ծուշիկ Տասնապետյանի «Քերպուածները», Գրական յաւելուած, Հորիզոն, մայիս, 1990, էջ 3-7:
11. <Վահե Օշական>, Վերջաբանի փոխարեն, Հայաստան, 1990, 15 օգոստոսի, թիվ 29-30:
12. Գրական Արցախ, Մունետիկ, 1990, հոկտեմբեր 13, թիվ 19-20:
13. «Սեր», Բեյրութ, 1988, Գարուն, 1990, թիվ 11-12, էջ 68-70 (հրապարակում):
14. Ծուշիկ Տասնապետյանի «Քերպուածները», Նորք, 1990, թիվ 9, էջ 130-133:
15. Գրական լրատու հայրենիքն (գրախոսություն «Գրական Նարարադ» (Երևան, «Նախիք», 1988) ժողովածուի մասին, Bulletin de l'ACAM (= Association culturelle arménienne de Marne-La-Vallée, Սառն-լա-Վալեի հայկական մշակութային միություն) 1990, № 10, p. 6.

1991

16. Վահան Հարությունյան, Ծերուկին խղճահարությունը (հրապարակում, նախարանը Գրիգոր Հակոբյանի), Գարուն, 1991, թիվ 1, էջ 54-57:
17. Ժագ Սայապալյան, Տղու սեր (հրապարակում, նախարանը Գրիգոր Հակոբյանի), Գարուն, 1991, թիվ 4, էջ 30-32:

18. Հայր Սկրտիչ վրդ. Պոտուրյան, Հոգեվարքի բազուկներուն մեջ (հրապարակում, նախարար՝ Գրիգոր Հակոբյանի), Գարուն, 1991, թիվ 5, էջ 69-72:
19. Արմեն Շելոյանի «Թուղթ ու գիրը», Նորք, 1991, թիվ 5, էջ 118-121:
20. Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, Նորք, 1991, թիվ 5, էջ 122-125:
21. Շարունակվող իրականություն (Տանյա Հովհաննիսյան, Բաց իրապարակ), Նորք, 1991, թիվ 5, էջ 125-127:
22. (Ժազ Յակոբեան, Ոգին Ապրիլեան), Նորք, 1991, թիվ 5, էջ 127-128:
23. Հանդէս ամսօրեայի յօդուածներու 100 տարուան Մատենագիտական ցանկ, Նորք, 1991, թիվ 5, էջ 128:
24. «Դի հորենը» ներկայացնում է Հայաստանը, Նորք, 1991, թիվ 5, էջ 128-129:
25. Զարեհ Խորախունին գերմաներեն, Նորք, 1991, թիվ 5, էջ 129:
26. 20-րդ դարասկզբի հայ նորավեպի պատմությունից, Նորք, 1991, թիվ 6-7, էջ 131-135:
27. Անիրածեց վերահրատարակություն, Նորք, 1991, թիվ 6-7, էջ 135-136:
28. Նոր ուսումնասիրություն Արփիար Արփիարյանի մասին, Նորք, 1991, թիվ 6-7, էջ 136-138:
29. Արմատների ապավեն, Նորք, 1991, թիվ 8-9, էջ 131-133:
30. Անահիտ Քոչարյանի բանաստեղծությունների ժողովածուն, Նորք, 1991, թիվ 8-9, էջ 133-136:
31. (Թամար Տասնապետյան, Մարիամ Աստվածամայր), Նորք, 1991, թիվ 8-9, էջ 136-137:
32. Ավագ Եփրեմյան, «Ես իմ լեռան դեմ», Նորք, 1991, թիվ 8-9, էջ 137-138:
33. Համաստեղը և հայ նորավագրության հարցերը, Նորք, 1991, թիվ 8-9, էջ 139-146:
34. Ընթերցման աղորք, Նորք, 1991, թիվ 10-12:
35. Հարություն Ալփիար (հրապարակում), Նորք, 1991, թիվ 10-12:
36. Գեղամ Տեր-Կարապետյան, Bulletin de l'ACAM (= Association culturelle arménienne de Marne-La-Vallée, Մարն-լա-Վալեի հայկական մշակութային միություն) 1991, № 11, p. 8.
37. Վահե Օշական, Լճակ (հրապարակում, նախարար՝ Գրիգոր Հակոբյանի), Անդրադարձ, 1991, 19 դեկտեմբերի, թիվ 38:

#### 1992

38. Կարա-Դարվիշ, Նորք, 1992, թիվ 1-2:
39. Գրիգոր Պըլտյան, Ազատություն (հրապարակում, նախարար՝ Գրիգոր Հակոբյանի), Անդրադարձ, 1992, 20-27 փետրվարի, թիվ 5:
40. Էդուարդ Պոյաճյան, Կը սպասեմ (հրապարակում, նախարար՝ Գրիգոր Հակոբյանի, անստորագիր), Անդրադարձ, 1992, թիվ 6, 28 փետրվարի-9 մարտի:
41. Հարություն Կոստանդյանն ինքն իր մեջ, Անդրադարձ, 1992, 20-27 փետրվարի, թիվ 5:
42. Ժազ Հակոբյան, Հողաշնչում, Ուրկի՞..., Թեկը (հրապարակում, նախարար՝ Գրիգոր Հակոբյանի), Անդրադարձ, 1992, 9 մարտի, թիվ 6:
43. Նշան Պեշիկբաշլյան («Ընկեր Փարոս», հրապարակում), Նորք, 1992, թիվ 3-4, էջ 67-98:
44. «Կայր» տարեգրի նոր համարը, Նորք, 1992, թիվ 3-4:
45. Վահե Օշականի նոր գիրքը, Նորք, 1992, թիվ 5-6, էջ 110-114:
46. Վիլեն Գրիգորյանի բանաստեղծությունների ժողովածուն, Նորք, 1992, թիվ 5-6, էջ 115-116:
47. Հրաշյա Թամրազյանի «Զայների կղզի» ժողովածուն, Նորք, 1992, թիվ 5-6, էջ 117-120:
48. Հարություն Կոստանդյանն նամակները, Նորք, 1992, թիվ 5-6, էջ 121-123:
49. Նշան Պեշիկբաշլյան, Տարոնցին (հրապարակում, նախարար՝ Գրիգոր Հակոբյանի), Երկիր ավետյաց, 1992, թիվ 6:
50. Գրական «Ազատամարտը» 1910-11 թթ., Վարուժան, 1992, թիվ 1, հուլիս:
51. Ուութեն Զարդարյան, Երգչուիին (կոյր աղջկան մը պատմութիւն) (հրապարակում, նախարար՝ Գրիգոր Հակոբյանի, անստորագիր), Վարուժան, 1992, թիվ 1, հուլիս:

52. Հակոբ Օշական, Հրաշքը (հրապարակում, նախարանը՝ Գրիգոր Հակոբյանի, անստորագիր), Վարուժան, 1992, թիվ 1, հուլիս:
53. «Հորդորակի» երկրորդ լյանքը, Նորք, 1992, թիվ 7-8, էջ 115-116:
54. Գրիգոր Պղևոյանի բանաստեղծությունների նոր ժողովածուն, Նորք, 1992, թիվ 7-8, էջ 116-119:
55. «Բանք մեծաց» մատենաշարի առաջին գիրքը, Նորք, 1992, թիվ 7-8, էջ 117-119:
56. Հայ նոր գրականության ժամանակագրությունը, Նորք, 1992, թիվ 7-8, էջ 119-120:
57. «Բագինի» նոր համարը, Նորք, 1992, թիվ 7-8, էջ 120:
58. «Սի մարդ կար, մի իսկական մարդ», Նորք, 1992, թիվ 7-8, էջ 121-124:
59. Դարձ, Վարուժան, 1992, թիվ 2, օգոստոս:
60. Մի դրվագ հայոց ազատամարտի գրական անդրադարձումների պատմությունից, Վարուժան, 1992, թիվ 3, սեպտեմբեր:
61. Գերգ Այվազեան, Զենորսոնիի, (հրապարակում, նախարանը՝ Գրիգոր Հակոբյանի, անստորագիր), Վարուժան, 1992, թիվ 2, սեպտեմբեր:
62. Վահե Օշականի արձակը, Վարուժան, 1992, թիվ 4, նոյեմբեր:
63. Հարություն Ալփիար, Առաջին և երրորդ բառը (վայրկենավեպ) (հրապարակում, նախարան՝ Գրիգոր Հակոբյանի, անստորագիր), Վարուժան, 1992, թիվ 4, նոյեմբեր:
64. Ռիարն Տատուրեան, Բանաստեղծը նախ բան Աստուած, Սեկնում (հրապարակում, նախարան՝ Գրիգոր Հակոբյանի, անստորագիր), Վարուժան, 1992, թիվ 5, դեկտեմբեր:
65. Շավարշ Նարությունի, Հեքիափներ, հրապարակում, Վարուժան, թիվ 5, դեկտեմբեր, 1992:
66. Խոսք Ռուբեն Ե. Մաշոյանի մասին, Նորք, 1992, թիվ 9-12, էջ :
67. (Կարպիս Շանճիկյանի ամքողական երկերի մասին), Նորք, 1992, թիվ 9-12, էջ 98-99:
68. Նոր ուսումնասիրություն Վահան Թորովենցի մասին, Նորք, 1992, թիվ 9-12, էջ 100:
69. Վիզեն Ղազարյանի բանաստեղծությունները, Նորք, 1992, թիվ 9-12, էջ 100-101:
70. Խաչիկ Մանուկյանի «Վիրավոր խաչ» ժողովածուն, Նորք, 1992, թիվ 9-12, էջ 101-102:
71. Ավագ Եփրեմյանի բանաստեղծությունների երկրորդ գիրքը, Նորք, 1992, թիվ 9-12, էջ 102:
72. Հարություն Պերպերյանի «Անցման եղանակ» ժողովածուն, Նորք, 1992, թիվ 9-12, էջ 102-106:

### 1993

73. Մի դրվագ հայոց ազատամարտի գրական անդրադարձումների պատմությունից, Ազդակ, 1993, 28 յունիարի (արտատպություն «Վարուժանից») (1992, թիվ 3, սեպտեմբեր):
74. Կարապետ Փոլատյանի «Զրոյցները», Վարուժան, 1993, թիվ 6, հունվար:
75. Անվանի գրականագետն ու մանկավարժը (Արսեն Տերտերյանի ծննդյան 100 ամյակի առթիվ), Տնտեսագետ, 1993, 17 փետրվարի:
76. Հարություն Ալփիար, Վարուժան, 1993, թիվ 7, փետրվար:
77. Հպանցիկ պատասխան, Ար, 1993, թիվ 7, 1-7 մարտի:
78. Մի դրուագ հայ պատմավիպասանութեան պատմութիւնից <Մատթեոս Մամուրյան, «Սև լեռին մարդը»>, Վարուժան, 1993, թիվ 8, մարտ:
79. Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծությունների նոր գիրքը, Հայաստանի Հանրապետություն, 1993, 9 հունիս, էջ 7:
80. <Վահե Օշական. արվեստագետ ու հայրենիք>, հրապարակում, Ար, 1993, թիվ 22, 24-30 օգոստոս:
81. Գրիգոր Պղևոյան, ՀՀ, 1993, 15 հոկտեմբերի:

### 1994

82. Գրականագիտական եզրի սահմանները (Նորավեպի տեսության պատմությունից), Նորք, 1994, թիվ 1, էջ 79-85:
83. Վահե Օշական, ՀՀ, 1994, 21 հունվար:
84. Մանկական Աճեմյանի «Ինը երգ և սեր» գիրքը, Նորք, 1994, թիվ 1, էջ 95:

85. Սուրբ ծնունդի և կաղանդի անդրադարձները արևմտահայ նորավեպի գեղարուեստական համակարգում, Արծի, 1994, 15 դեկտեմբեր, թի 20, էջ 5, 1995, 5 յունիար, թի 21, էջ 7-8:
86. Չորրորդ «Լրագիրը», Լրագիր, թիվ 1, 1994, 25 հունվար:
87. Հայ վեպի ձևաբանությունը և Հակոբ Օշականը, Հայաստանի Հանրապետություն, 3 փետրվարի, 1994, թիվ 21:
88. <Գրիգոր Պլոյանի «Ելք» ժողովածուն>, Լրագիր, 1994, մարտ 22:
89. Գրական սուրհանդակ (Թամար Տասնապետյանի «Գրիգոր Նարեկացիի «Ողբերգության Մատյանը» (Անթիլիս, 1991) ուսումնասիրության մասին), Լրագիր, 1994, մարտ 22, թիվ 39, էջ 6:
90. Նշան Պեշիկբաշյան, Դժվար է հային ճանաչել ներսից (հրապարակում, նախարանը ստորագրված է Գր. Հ.), Լրագիր, 1994, 23 մարտի:
91. Գրական սուրհանդակ, Լրագիր, թիվ 66, 1994, ապրիլ 29:
92. Շուշիկ Տասնապետյանի «Նոր քերուածներ» ժողովածուն, Բագին, 1994, թիվ 4-5-6, էջ 143-145:
93. Էրվարդ Պոյաճյանի վերադարձը, ՀՀ, 21 հունիս 1994
94. Հակոբ Կարապետից վերջին ժողովածուն, Լրագիր, 16 նոյեմբեր, 1994
95. Սոցիոլոգիայից մինչև առասպեկտաբանում. վերլուծություն և համադրում գիտական 50ամյա մարարոն (Ս. Ասրինյանի ծննդյան 70 ամյակի առթիվ, համահեղինակությամբ Ա. Ալեքսանյանի), Լրագիր, 1994, 17 նոյեմբեր:
96. Սարգիս Սարգսյանի հավաքածուն, ՀՀ, 15 դեկտեմբեր, 1994,
97. Մի դրվագ հայ վեպի պատմությունից, Վարուժան, 1994, թիվ 8, դեկտեմբեր, էջ 14-15:
98. Գրականագիտական եզրի սահմանները (նորավեպի տեսության պատմութիւնից), Հայկագետան Հայագիտական Հանդէս, Պեյրութ, 1994, հատոր ԺԴ:
99. Վահան Թեքեյանի նորավեպերը, Վահան Թեքեյան (հոդվածների ժողովածու), Երևան, 1995, էջ 43-51:

1995

100. Աղետի և դիմակայության անդրադարձները արևմտահայ նորավիպագրության մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1995, թիվ 1, էջ :
101. Սուրբ Ծննդյանի և Կաղանդի անդրադարձները արևմտահայ նորավեպի գեղարվեստական համակարգում, Էջմիածին, 1995, թիվ 1, էջ :
102. Շրջանակված տապ (Խոսք նահատակ զրողների ոգեկոչման), Պայքար, 1995, ապրիլ, էջ 49-51:
103. Քանաստեղծության ողբերգությունը, Ուորեն Սևակի վերջին հրատարակությունները, Լրագիր, 18 ապրիլ, 1995:
104. Գրականությունը պետք է փրկել իգությունից, Լրագիր, 1995, 2 հունիսի:
105. Անտիոքոպիայից դեպի ոչնչապատում, ԳԹ, 1995, հունիս 9, թիվ 9 (Գորգեն Խանջյանի «Հիվանդանոց» վեպի մասին), ստորագրված է՝ Գրիգոր Հակոբյան:
106. Սրտակիցնեալ ազատում, (Ը. Շահնուրի «Սիրտ սրտի» ժողովածուն), Յառաջ, թի 18611, 1995, յունիս 13, էջ 2, թի 18612, 1995, յունիս 14, էջ 2, ստորագրված է՝ Գրիգոր Հակոբյան, Երևան, Մայիս, 1995:
107. Հակոբ Կարապետն. Ուրվագիր՝ մահվան տարելիցի առթիվ, Լրագիր, 31 օգոստոսի, 1995:
108. Հող և գրականություն, Հիշատակի խոսք Էրվարդ Պոյաճյանի 80-ամյակի առթիվ, Առավոտ, 1995, 15 սեպտեմբերի:
109. Պատմավեպի «ոչնչացում» գրականություն ապրեցնելու համար, ըստ Լևոն Խեչոյանի «Արշակ արքա Դրաստամատ ներքինի» ստեղծագործության, Լրագիր, 1995, 10 հոկտեմբերի:
110. Անուն, որ հուսադրում է սփյուռքի արդի պոեզիայում, Գարուն, 1995, թիվ 10, հոկտեմբեր, էջ 72:

111. Գրական երկխոսություն (Սերգեյ Սարինյան-Գրիգոր Հակոբյան), Եղիշի լույս, 1995, հուլիս-օգոստոս, թիվ 5-6, սեպտեմբեր-հոկտեմբեր, թիվ 7-8:
112. Անվերջավորի հանգուցումը (Հովհ. Այվազյանի «Ձննիչի վերջին գործը» վեպի մասին), Գրքերի աշխարհ, 1995, էջ 5:

1996

113. Գեղարվեստական փոքր արձակը «արևելյան մամուլում» (1880-1909), Պատմա-բանասիրական հանդես, 1996, թիվ 1-2, էջ 57-64:
114. Ժանրային «պարականոն» դրսերումներ արևմտահայ նորավեպի գեղարվեստական համակարգում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1996, թիվ 3, էջ :
115. Ռուբեն Սևակն արևմտահայ նորավեպի անդրադարձներում, Պայքար, 1996, մայիսինին:
116. Խորհելու խորհուրդը (Երևանեան հրատարակութիւններ. Նկողոս Սարաֆեան, «Տեսարանները, մարդիկ և ես», Յառաջ, Սիստ և արուեստ, 1996, մարտ 3, թիւ 213, (18802), էջ 1 և 4, ստորագրված է՝ Գրիգոր Հակոբյան:
117. Հակոբ Կարապետն (Դիմանկարի ուրվագիր, հրապարակում), Նորք, 1996 թիվ 4:
118. Խորհելու խորհուրդը. Նկողոս Սարաֆեան «Տեսարաններ, մարդիկ և ես», Առավոտ մշակութային, 1996, 2 հունիս, էջ 6, 13:

1997

119. «Կոշտ» ժամանակների «Կոշտ ու կոպիտ» բանաստեղծության մասին, Մոլորակ, 1997, 6 մարտ:
120. Հրանտ Ասատուրը գրականության տեսաբան և պատմաբան, Հայկազյան հայագիտական հանդես, հատոր ԺԷ, Բեյրութ, 1997:

1998

121. Արձակի ընթերցման վայրը. Գրիգոր Պղտյան. «Մարտ», Հայք, 1998, հուվար 24:
122. Պատկերամարտ շարունակականություն՝ պատկերազարդ պատմության հայոց, Գառուն, 1998, թիվ 2, էջ 81-84:
123. Փետրվարի իմաստությունը (Վազգեն Շուշանյանի ծննդյան 95 և Հ. Օշականի մահվան 50 ամյակի առիթով), ՀՀ, 1998, 13 մարտ, էջ 5:
124. Հայ գրականության ուղեցույց երեցը, Գարուն, 1998, թիվ 4, էջ 40-45:
125. Համազաղտնիքի ընդառաջումը, ՀՀ, 1998, հունիս 22, թիվ 2333 (Վարուժան Այվազյանի «Ծանծի ամիսը» ժողովածուի մասին), ստորագրված է՝ Գրիգոր Հակոբյան / Բան. գիտ. դոկտոր:
126. Նոր, անհրաժեշտ ձեռնարկ. Զավեն Ավետիսյանի «Գրականության տեսություն դասագրի առիթով», ՀՀ, 1998, հուլիս 10, էջ 8:
127. «...Միայն այսօր ու միայն մի անգամ», Գարուն, 1998, օգոստոս, էջ 69-78:
128. Արքուր Անդրանիկյանի «Սերկասառոյց» գիրքը, Յառաջ, 1998, հոկտեմբեր 4, էջ 3-4:
129. Ի խոյզ ստեղծանող տրցակի (նորեր Գրիգոր Պղտյանի «Սեմեր» գրքի լուսանցքներին), Յառաջ, 1998, թիւ 19500, նոյեմբեր 1, էջ 3-4:
130. Ինքնության գեղարվեստական կերպընկալման ուրվագրերից, (Նշան Պեշիկբաշյանի Դիմաստվերների առիթով, Գարուն, 1998, թիվ 11, 12, էջ 50

1999

131. Սիսար Գոշունյանի վիպագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1999, № 1, էջ 133-154:

2000

132. Ակադեմիկոս Սերգեյ Սարինյան (Ծննդյան 75-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, 2000, թիվ 1, էջ 254-255:

133. Ի խոյզ ստեղծանող տրցակի (Անքեր Գրիգոր Պլըտեանի «Սեմեր» գրքի լուսանցքներին), Ուուֆիկոն, 2000, թիվ 1-2, էջ 50-55:

2001

134. Ցպահանջ («Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրությունը»), Զապել և Հրանտ Ասատուրներ, Սիրային նամականեր, Երևան, ԳԱԹ, 2001, էջ 7-66:

2003

135. «Կամ» վերլուծական հանդեսի նոր համարը, Գարուն, 2003, թիվ 5, էջ 84:

136. Վարքապատում բարձրնկերոց (Մի դրվագ Երվանդ Օսյանի գրական ժառանգությունից), Երվանդ Օսյան, Լևոն Շաբրյան. «Խմորը և խորհողը» (հրապարակում), Գարուն, 2003, թիվ 6, էջ 58-61:

137. Նորեկ Հենրիկ Էղոյանի «Հետզբություն» գրքի առիթով, Ազգ, 6 նոյեմբերի, 2003, էջ 6:

2004

138. «Գրական սկանդալից» մինչև «սիրո հաշվեփակ» ըստ Զապել Եսայանի, «Գրականագիտական և բանասիրական ուսումնասիրություններ» գրքում, Երևան, 2004, էջ 145-168, նաև՝ Գրականագիտական հանդես, 2004, Ա, էջ 237-255:

139. Հակոբ Օշականի նամակագրական ժառանգությունից (նամակներ Արամ Անտոնյանին), ԳՀ, 2004, Ա, էջ 209-236:

140. Տեսական մտքի պատմությունից (Ն. Աղոնց, Դեկադանս և սիմվոլիզմ), Գրականագիտական հանդես, 2004, Ա, էջ 209-236:

141. Երվանդ Օսյանի վեպը (պատմատեսական ուրվագիր), Հառաջ, 2004, ապրիլ 3, էջ 2:

142. Գոյութենական ողբերգության վկայագրությունը (Նորեկ Երվանդ Օսյանի «Անիծյալ տարիների» մասին), Երևան, Նաիրի, 2004, էջ 7-65, նաև հատվածաբար ԳՀ, 2004, Բ, էջ 78-89:

2005

143. Հպանցիկ նկատառումներ Հովհաննես Գրիգորյանի «Կես ժամանակ» ժողովածուի մասին, Գրական թերթ, 28 հունվարի 2005:

144. Հայտնին և նորահայտը. Խաչատոր Աբովյանի «Վերը Հայաստանի» վեպի նոր հրատարակությունը, ԳՀ, 2005, էջ 18-28:

145. «Արդի արձակի համապատկերը (1990-2000 թվականներ. ակնարկ-ուրվագիր)», Գարուն, 2005, թիվ 5:

### Ընդդիմախոսություններ և կարծիքներ

146. Կարծիք Սիրայել Հայրապետյանի «Գեղարվեստական հուշագրությունը 1920-30-ական թթ. հայ արձակում (Զարենց, Մահարի, Թորովենց, Եսայան)» թեկնածուական ատենախոսության մասին, 1994 թ., Գրականության ինստիտուտ:

147. Կարծիք Սարենիկ Ավետիսյանի «Ակսել Բակունցը և հայ նորագոյն արձակը» թեկնածուական աստենախոսության մասին, 1995 թ., Գրականության ինստիտուտ:

148. Կարծիք Վեհանուշ Թերեյանի «Հարցեր քաններորդ դարու արևմտահայ գրականության» թեկնածուական ատենախոսության մասին, 1995 թ., Գրականության ինստիտուտ:

149. Կարծիք Սեդա Գապրանյան-Սելյոնյանի «1960-80-ական թվականներու լիբանանահայ արձակը» թեկնածուական ատենախոսության մասին, 1995 թ., ԵՊՀ:

150. Կարծիք Կարապետ Վարդանյանի «Խաչիկ Դաշտենցի ստեղծագործությունը» թեկնածուական ատենախոսության մասին, 1998 թ., Գրականության ինստիտուտ:

151. Կարծիք Սիրանուշ Մարգարյանի «Արդի հայ պատմավեպի պոետիկան» թեկնածուական ատենախոսության մասին, 2000 թ., Գրականության ինստիտուտ:

152. Կարծիք Ալբերտ Մակարյանի «Արևմտահայ գրական դիմանկարը» դոկտորական ա-տեսնախոսության մասին, 2002 թ., ԵՊՀ:
153. Կարծիք Մարտի Նահիս Երամյանի «Սփյուռքահայ բանաստեղծությունը 1965-1995 թվականներին» թեկնածուական ատեսնախոսության մասին, 2002 թ., Գրականության ինստիտուտ:
154. Կարծիք Սեղա Քիլեճյանի «Նիկողոս Սարաֆյան (կյանքը և գործը» թեկնածուական ատեսնախոսության մասին, 2002 թ., ԵՊՀ:
155. Կարծիք Վիկտոր Սողոմոնյանի «Վահան Տերյանի սիմվոլիզմը» թեկնածուական ատե-սնախոսության մասին, 2004 թ., Գրականության ինստիտուտ:
156. Կարծիք Հրաչյա Սարիբեկյանի «Մարդու օտարման պրոբլեմը ժամանակակից հայ արձակում (1970-2003 թթ.)» թեկնածուական ատեսնախոսության մասին, 2004 թ., Գրա-կանության ինստիտուտ:

#### **Գրքեր**

157. Գրիգոր Հակոբյան, Արևմտահայ նորավեպը. 1890-1910-ական թվականներ. Ժանրի պատմություն և տեսություն, Երևան, 1996, 256 էջ:
158. Յակոբ Օշական, Գրականութեան համար, Գրիգոր Յակոբեանի աշխատասիրու-թեամբ, Հայաստանի ազգային գրապալատի հրատարակչութիւն, Երևան, 1997, 96 էջ:
159. Յակոբ Օշական, Հաճի Ապառուլահ, աշխատասիրութեամբ Գրիգոր Յակոբեանի, Երևան, Ապոլոն, 2000, Խ.Գ. + 298 էջ:
160. Չապել և Հրանտ Ասատորներ, Սիրային նամակներ, աշխատասիրութեամբ Գրիգոր Յակոբեանի, Գրականութեան և արուեստի թանգարանի հրատարակչութիւն, Երևան, 2001, 312 էջ:
161. Գրիգոր Հակոբյան, Թերքոն վեպի տեսությունը. Երվանդ Օսյան, Գրականության եւ արվեստի թանգարանի հրատարակչություն, Երևան, 2002, 184 էջ:
162. Երվանդ Օսյան, Անիծյալ տարիներ. 1914-1919 (անձնական յիշատակներ), աշխա-տասիրութեամբ Գրիգոր Յակոբեանի, Երևան, «Նախրի», 2004, 584 էջ:
163. Գրականագիտական և բանասիրական ուսումնասիրություններ, «Մուղնի» հրատա-րակչություն, Երևան, 2004, 184 էջ: Գրիգոր Հակոբյան, «Գրական սկանդալից» մինչև «սիրո հաշվեպակ» ըստ Չապել Եսայանի, էջ 145-167:
164. Հայ վեպի պատմություն (19-րդ դար), ՀՀ ԱՍ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2005, 594 էջ: Գրիգոր Հակոբյան, Մատթեոս Մամուրյան, էջ 159-173, Գրիգոր Զոհրապ, էջ 273-278, Տիգրան Կամսարական, էջ 424-432, Գրիգոր Արծունի, էջ 541-549, Գրիգոր Սարաֆյան, էջ 562-565:

#### **Գրիգոր Հակոբյանի մասին**

165. Սերգեյ Սարինյան, Խմբագրի խոսքը (գրախոսություն Գրիգոր Հակոբյանի «Արևմտա-հայ նորավեպը. 1890-1910-ական թվականներ. Ժանրի պատմություն և տեսություն» մենագրության մասին), Նոր Դար, 1996, թիվ 18, էջ 4:
166. Վլադիմիր Կիրակոսյան, Ժանրին արժանի ուսումնասիրություն (գրախոսություն Գրի-գոր Հակոբյանի «Արևմտահայ նորավեպը. 1890-1910-ական թվականներ. Ժանրի պատմություն և տեսություն» մենագրության մասին), Գրական թերթ, 1996, թիվ 14, էջ 4:
167. Յակոբ Օշականի ժառանգութեան աննախընթաց հրատարակութիւն մը, Յառաջ, 2001, յունուար 3. ստորագրված է. Վ. Մ.:
168. Սևան Տէյիրմենճեան, Գր. Յակոբեան «Թերքոն վեպի տեսութիւնը, Երուանդ Օտեան», Ժամանակ, քաղաքական, ժողովրդական օրաթերթ, 4 յուլիս, 2002:
169. Իրնեշյան Արմեն, Թերքոն վեպի տեսութիւնը, Երուանդ Օտեան, Հայկական Հայագի-տական Հանդէս, Բեյրութ, 2002, էջ 370-377:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Հակոբյան – Գուրգեն Գասպարյան ..... 5

## I. ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

|  |     |
|--|-----|
| Հայտնին և նորահաջող. Խաչատուր Աբովյանի «Վերք Հալաստանի» վեպի նոր<br>հրատարակությունը ..... | 11  |
| Գրիգոր Արծորունու վիպագրությունը .....   | 21  |
| Մատթեոս Մամուրյանի վիպագրությունը .....  | 41  |
| Տիգրան Կամսարականի վիպագրությունը .....  | 67  |
| Միսաք Գոչումյանի վիպագրությունը .....  | 84  |
| Գրիգոր Սարաֆյան .....  | 95  |
| Գոյութենական ողբերգության վկայագրությունը .....  | 100 |
| Հայ վեպի ձևաբանությունը և Հակոբ Օշականը .....  | 138 |
| Հաղթաբան Բերբում .....   | 144 |
| Ընթերցնան Աերփակությունը .....   | 156 |
| Վեպի ժամանակակից մետատեսությունը .....   | 171 |
| Թերթոն վեպի տեսությունը. Երվանդ Օսյան .....  | 189 |
| Պատմավեպի «ոչնչացում» գրականություն ապրեցմելու համար .....                                 | 289 |
| Արդի արձակի համապատկերը .....  | 294 |

## II. ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ՆՈՐԱՎԵՊԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

|   |     |
|---|-----|
| Գրականագիտական եզրի սահմանները .....  | 313 |
| Քամերորդ դարակզբի հայ նորավեպի պատմությունից .....                                      | 332 |
| Գեղարվեստական փոքր արձակը «Արևելյան մամուլ»-ում (1880-1909) .....                       | 339 |
| Նովելայի ձևերի սկզբանավորումը Գրիգոր Զոհրապի պոետիկայում .....                          | 349 |
| Կ. Պոլիսը Զոհրապի նորավեպերի պոետիկայում .....  | 359 |
| Աղետի և դիմակայության անդրադարձները արևմտահայ նորավիպագրության մեջ .....                | 363 |
| Ժամանակին պարականոն դրսնորումները արևմտահայ նորավեպի գեղարվեստական<br>համակարգում ..... | 373 |
| Արշակ Չոպանյանը 1880-1890-ական թվականների արևմտահայ արձակի<br>համակարգում .....         | 378 |
| Հարություն Ալիխար .....   | 383 |

|  |     |
|--|-----|
| Սուրբ ծնունդի և Կաղամդի ամերակարգումները արևմտահայ նորավեափի գեղարվեստական |     |
| համակարգում .....  | 385 |
| Ուրբեն Սևակն արևմտահայ նորավեափի ամերակարգներում .....                     | 394 |
| Վահան Թեքեյանի նորավեափերը .....   | 400 |
| Համաստեղը և հայ նորավիպագրության հարցերը .....                             | 406 |

### **III. ԶԱՆԱԶԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

|  |     |
|--|-----|
| Հրանտ Ասատուրը գրականության տեսաբան և պատմաբան .....       | 419 |
| Ցպահանջ (Զապել և Հրանտ Ասատուրների նամակագրությունը) ..... | 434 |
| Գրական «Ազատամարտը»-ը 1910-1911 թուականներին .....         | 472 |
| Խնորակի գիրքը .....  | 478 |
| Ընթերցման աղոթք .....                                      | 481 |
| Ծրչանակված տապ .....                                       | 485 |

### **IV. ՍՓՅՈՒՌԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

|   |            |
|---|------------|
| Դարձ .....  | 491        |
| Մրտակիզակ ազատում (Շահան Շահնուրի «Սիրտ սրտի» ժողովածում) .....       | 495        |
| Խորհելու խորհուրդը. Նիկողոս Սարաֆյան «Ձեսարանները, մարդիկ և ես» ..... | 500        |
| Նշան Պեշիկթաշլյան .....   | 503        |
| Կարապետ Փոլատյանի «Զրուց»-ները .....                                  | 508        |
| Էդուարդ Պոյաճյանի վերադարձը .....                                     | 511        |
| Հարութ Կոստանդյանի նամակները .....                                    | 514        |
| Հակոբ Կարապեմց .....  | 518        |
| Վահե Օշականի արձակը .....   | 523        |
| Վահե Օշական .....   | 528        |
| Գրիգոր Պըլտյանի բանաստեղծությունների նոր ժողովածում .....             | 533        |
| Գրիգոր Պըլտյան .....  | 536        |
| Պատկերամարտ շարունակականություն՝ պատկերագարդ պատմության հայոց .....   | 538        |
| <b>ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ</b> .....                                       | <b>547</b> |

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Համակարգչային շարվածքը և սրբագրությունը՝  
Սաթենիկ Մանուկյանի, Լաուրա Վիրաբյանի

Ս. Էջմիածին - 2007